Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Հ· ՂԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՄԱՏՐ ԴԻՒԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՑ Ի Ս· ՂԱԶԱՐ

1707 - 1773

Ի ԾԱԳՄԱՆԷ ՈՒԽՏԻՒ ՄԻՆՉԵՒ ՅՐԱՒԱՆՈՒՄՆ ԹՐԻՍՏԵԱՆ ՀԱՐՑ



ՎԵՆԵՏԻԿ
ՄԽԻԹ· ՏՊԱՐԱՆ
1930

9(47.925)1.32
493

Հ· ՂԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՑ Ի Ս· ՂԱԶԱՐ

1707 – 1773

Ի ԾԱԳՄԱՆԷ ՈՒԽՏԻՍ ՄԻՆՉԵՒ ՅՐԱՒԱՆՈՒՄՆ ԹՐԻՍՏԵԱՆ ՀԱՐՑ

Դպրոց
960



ՎԵՆԵՏԻԿ
ՄԽԻԹ· ՏՊԱՐԱՆ
1930



Նուէր

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան

Հիմնարկութեան կողմէ

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների

Ակադեմիայի Մատենադարանին

1966

ՅԻՇԱՏԱԿ

ԱՍՏՈՒԱԾԱԲԵԱԼ ԱՌՆ

Վ. Հ. ԱԻԵՏԻՔ ՎԻ ԳԱԶԻԶԵԱՆ

ԸՆԴՀ. ԱԹՈՌԱԿԱԼԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՐՑ

(Ծն. ի Կ-ոլիս, 1864 Օգ. 9 † ի Բ-ոստ-ն 1930 Նոյ. 8)

Գաբրիէլեան փողրն գոլէ,
Սուրբք ամենայն անդր հաւաքին,
Այսարոց դասքրն բերկրին...։
(ժամագրք. Հաց եկ.)

Հրեշտակապետաց տօնն էր։

Եւ հոգի մը վաղայարոյց՝ փութկոտ կը վերաթևէր երկրէս ղէպի երկինք, ձայնակցելու հրեշտակային փառաբանութեան։

Մխիթարայ Ուխտին կը պատկանէր այդ հոգին։ Մկրտութեան անունը՝ հրեշտակային ու քաղցրախօսիկ երկու մեծ Սուրբերու անունովը՝ Փրանկիսկոս, որոնցմէ կ՚երևի թէ ընդունած էր սրբարար ցոլքեր։

Աքեմաւորուելով ըստ կրօնին՝ կը կոչուի Փրանկիսկոսը Աւետիք։ Ապա հետև ի մի կը ձուլուին իր մէջ անուններու ճառագայթած իմաստները՝ շնորհիւ ոսկեքանդակ խօսքերուն իր սրբակենցաղ դաստիարակ Հ. Գարեգին Վ. Զարբհանալեանի. և յետ կատարելու մշանջենաւոր Ուխտը՝ օր մ՚ալ (1887 Ապրիլ 10) կը կերտուի Մխիթարեան կրօնաւորը աստուածային խորանին պաշտօնեայ, Ալիշաններու կենդանի շունչովն արդէն տաքցած Ս. Ղազարու կղզեկին մէջ։ Ուխտաղրութեան հետ վճռական հաստատութիւն մ՚առած ըլլալու է հանգուցեալ Հօր առ Տիրամայրն ունեցած անպայման սէրն ու վստահութիւնն ալ, նախապէս իւրացուած ու զուգադիպած անշուշտ իր փիլոնառութեան օրը՝ Աւետիք կոչումին։

Արդէն բոլոր Մխիթարեաններուս ծանօթ է իր այդ ջերմեռանդական նախասիրութիւնը։ Ան կը դաւանէր կորովի հաւատքով ու շնորհապարտ զգացումով թէ Ս. կոյսն եղած էր բովանդակ կենացը մէջ իր միակ յոյսն ու ապաւէնը՝ յաջողութեանց ու ձախորդութեանց պահերուն, ինչ որ ըստ առթին կը պատմէր ժամանակին ալ մեզ աշակերտներուս և հոգևոր որդւոց՝ իբր աւանդ և խրախոյս, և զուտ բարիքներուն ալ ինքզինքը անարժան կը սեպէր՝ խոր և անկեղծ համոզմամբ մը։ Եւ իրօք, գրեթէ չէ լսուած մեր հանգուցեալ Հօր բերնէն հոգեշահ խօսք մը՝ առանց Տիրամօր հանդէպ իր սիրոյն և հաւատքին նշանները զգացնելու։

Հ. Աւետիք վ.ի ամբողջ կեանքը նկատի ունենալով՝ կարելի է այր Աստուծոյ որակել զինքը։ Իր հոգեկան ներքին եռուզեռը չէր կրնար ծածկել, և յաճախ կը մատնուէր նոյն իսկ փութկոտ քայլերէն, կարծես թէ մրցանքի ելած էին իր մէջ ձիրք և առաքինութիւնք։ Գրած նամակները կրօնաւորական և քահանայական հոգւոյն ջինջ հայելիներն են։

Շատ ցայտուն էին անոր արբշհամեան հաւատքն ու հնազանդութիւնը, ինչպէս նաև զարմանալի խոնարհութիւն մը. միով կը դաւանէր անթերի համակերպութեամբ մը աստուածային ձայնը հեղինակութեան մէջ՝ ուսկից ալ որ բխէր ան, միւսով կը դասէր ինքզինքը քան զամենքն յետնագոյն ու կարօտ։ Խոնարհութեան մէջ գտեր էր իր ամենասիրելի գանձը՝ սրտի ուրախութիւն և գոհութիւն, այս պատճառաւ նոյն իսկ առտնին ծառայական գործերն իր առանձին ուշադրութեան առարկայ էին։ Կրօնաւորական աղքատութիւնը սիրելու և գործադրելու կերպէն պիտի ուզէինք ըսել թէ կարծես մկրտութեան անուանակից Սուրբէն հոգեպէս դաս կ՚առնէր։

Իսկ իր ծայր աստիճան հասարակասիրութեան վկայ են բոլոր վանականք ու զինքը մօտէն ճանչցող ազգայինք։ Այդ ոգւով՝ նախանձախնդիր էր Մխիթարայ Տան ներքին և արտաքին փայլին ու բարեզարդութեան, անոր վաղեմի սովորոյթներուն, օրինապահութեանց և աւանդութեան, անոր բարոյական և գրական զարգացումին. ան երբեք կասիլ չէր գիտեր Միաբանութեան սիրոյն առջև, որուն համար զոհուելն իսկ ոչինչ էր իրեն համար։

Սոյն եռանդէն մղուած՝ ամէն կողմ կը հասնէր, մինչև իսկ վանական պարտէզին ներքին խորշերն ու անկիւնները։ Շատ կը սիրէր ծաղկաղարմանութիւն, և յիրաւի՝ ծաղիկի մը կեանքին հետ այլաբանական մտքով և հիացումով կը զիտէր ու կը համեմատէր բարոյական կեանքի մը աճումն ու արտադրութիւնները։ Ծաղիկ հասցնելու ինքնահնար միջոցներ ունէր, ու երբ կը յաջողէր – ինչպէս ատէպ – գոհ և անմեղ ժպիտով մը կը բերէր ու կը յանձնէր բուրաստաններու ազատ տրամադրութեան, առանց ո և է փոքրիկ նախապատուութեան մը ակնկալութեան, ո՛ր հասակէ ալ ըլլար ծաղկադարման եղբայրակիցը, ինչ որ ինքնին ցոյց կու տար անոր խոնարհ հոգին։ Իր մէկ փափաքն էր, ինչպէս կ՝ըսէր, օրին մէկը բազմագոյն վարդերէ կազմուած գօտիի մը մէջ տեսնել ամբողջ կղզեակը՝ իբրև ի վարդապսակ շրջանակի, տալով անոր խորհրդաւոր նշանակութիւն մը. և այդ դիտաւորութեամբ լռիկ ինչիկ բազմաթիւ արմատներ ու ճղիկներ անծանօթ անկիւններու մէջ կը մշակէր։ Երկիւղած յարգանք և յատուկ բարեպաշտ հոգածութիւն մ՝ունէր մայրավանքիս «Աստուածածնայ բլրակ»ի ածուներուն և անոր մերձակայ Մխիթարեան Գերեզմաննոցի պարտէզին հանդէպ։ Հոս տնկեր էր աստիճանական կարգերով՝ ըստ եղանակին բացուող բազմատեսակ ծաղիկներ, որպէս զի ասոնք միշտ զարդարուած պահեն ոսկրերը երկար Մխիթարայ երջանկայիշատակ զաւակաց, որոնց հոգիէն շատ բան ամբարած էր իր մէջ մեր Հանգուցեալը։ Գերեզմանատան կեդրոնը շինած էր նաև արտաձև աւազանիկ մը, որուն տուած խորհրդական իմաստը գուշակել դժուար չէ։ Իր զգացած անհուն երախտագիտութիւնը ատէպ զինքը հոն կը մղէր. ուստի շատ անգամ զինքը հոն գտնելն աւելի ապահով էր։

Սակայն Հ. Աւետիք Վ.ի մեծագոյն արժանիքը կը կազմեն անոր բազմամեայ առաքելութիւնը և հոգւոյ հայրութիւնը իբր դաստիարակ, և այս կրկնակ մարզերուն մէջ ալ հոգւոյ փրկութեան իր եռանդն ու անձնանուիրութիւնը ամէն գովասանքէ վեր եղած է։ Տէրունական այգւոյն մէջ տիպար հովիւ մ՝էր հայրազորով հոգածութեամբ. գութ և կարեկցութիւն կը սփռէր ամէն տեղ և ամենքին հանդէպ անխտիր։

Քահանայ ձեռնադրուելէն անմիջապէս ետքն է որ կը ղրկուի ի Պարտիզակ (1888–1892) իբր օգնական՝ ժողովրդապետ Հ. Ներսէս Վ. Ճնտոյեանի (յետոյ Եպս. Մշոյ և Վասպուրականի)։ Ապա կը տեսնենք զինքը ժողովրդապետ ԹՂ՝ի Պարտիզակ և ԹՂ ի Նիկոմիդիա (1894–1899)։ Նոյն միջոցին Ս. Հնազանդութիւնը ուրիշ կարևոր առաքելութեան մը կը կոչէ արդիւնազարդ և աստուածասէր հովիւը. այն էր՝ վանական աշակերտաց Լ՚Դ. դասուն վերակացութեան։ Եւ Հ. Աւետիք Վ. հապատակելով Մեծաւորաց կամքին՝ կու գայ ի Ս. Ղազար ու կը ստանձնէ նոր փափուկ պաշտօնը, զոր ամբողջ 6 տարի վարելով անձնանուէր ու հայրագութ սիրով և եռանդով՝ կու տայ 1906–ին Ուխտիս 7 նոր Մխիթարեան քահանաներ։ Այս ժամանակամիջոցիս՝ իրեն կը յանձնուի նաև վարչական ժողովի անդամակցութեան պաշտօնը որ կը տևէ մինչև ընդհ. ժողով (1903–1909)։ Յետոյ կը կարգուի դարձեալ ժողովրդապետ Նիկոմիդիոյ կաթ. Հայոց, ճանչցուելով հոն թուրք իշխանութեան առջև՝ նաև իբր մուրախաս։ Հոս՝ առաջնորդարանին հին շէնքը այլ ևս անբաւական

նկատելով իր նպատակին, Գերպ. Աբրահոր հրամանով կը գնէ հոգ կայարանին մօտիկ, և իր անխոնջ աշխատութեամբը և անմիջական հսկողութեամբը կանգնել կու տայ Միաբանութեանս ծախքով եկեղեցի և առաջնորդարան դպրոցով միասին։ Եւ մինչ նոր աւարտած՝ կը սկսէր տեսնել այլևս եկեղեցւոյ օծման պատրաստութիւնները, յորում իր յոգնութեանց պտուղը պիտի քաղէր ուրախութիւն և մխիթարութիւն, ահա վերահաս համազգային սարսափելի աղէտը, տարագրութիւնը... ու անձնանուէր Հովիւը համակերպելով Նախախնամութեան անքնին կամքին կը սկսի իր սիրելի հօտին հետ անկոխ ճամբայ մը կտրել դէպ ի նոր Գողգոթայ։ Հ. Աւետիք Վ. ըլլալով «այր հաւատոց»՝ այդ տառապանքի կեանքը նկատեց իրեն առաքելական կանխորոշեալ մարտադաշտ մը. աստուածաճաւատ եռանդով ու չարքաշ՝ նետուեցաւ ամէն կողմ, թէ՛ իր տարաբախտ հօտին և թէ բախտակից բազմաթիւ հայորդիներու բարոյական և այլ ամէն կերպ աջակցութիւն մատուցանելու՝ ճշմարիտ հովուի մը գիտակցութեամբ. երբեք չնայելով որ իր այդ անձնանուիրութիւնը և համարձակ վերաբերումը օրուան թուրք վարիչներու հետ, ահաւոր նեղութեանց ու չարատանջ մահուան կրնային յանգիլ։

Տարի մը Գոնիայի կողմերը խոստովանողի կեանք անցընելէ վերջ՝ աստուածային յատուկ ողորմութեամբ, վեր. Հ. Մեսրոպ Վ. Պահակեանի մահէն ետք կը վերադառնայ ի Պոլիս և կը ստանձնէ Միաբանութենէս յանձնուած Մեծաւորութեան պաշտօնը (1917–1920)։ Բայց քիչ յետոյ դարձեալ ընտրուելով անդամ Ուխտիս վարչական ժողովին՝ կը թողու Պոլիսն ալ ու կուգայ Ս. Ղազար, ուր կը մնայ մինչև վերջ։ Այս շրջանիս կ'ունենայ ի վանս նորագոյն կարևոր ծառայութիւններ։ Առաջիկայութեան հետ կը վարէ բաւական ժամանակ վանքին Գործակալութիւնը։ Այլ և յոյժ թանկագին եղան մատուցած բարոյական ծառայութիւնները։ Յատկապէս ճանչցուած և ընդհանրութենէն յարգուած ըլլալով իբրև խղճամիտ, ներանձնասէր և կրօնաւորական ողջ սկզբունքներու տէր, ամենքը կը նկատէին զինքը իբրև հայր։ Իր վայելած այս հանգամանքովը հզաւ ընտիր խորհրդատու իրեն դիմողներուն և տարիներով վարեց Թոստովանահայրութեան և Հոգ. Հայրութեան պաշտօնը՝ վանքի քահանայից և աշակերտաց, ինչպէս նաև Մ. Ռափայելեան սաներու համար։

Հ. Աւետիք Վ.ի այս բարեմասնութիւնները գնահատուած են նաև արտաքին անձերէ։ Եւ յիրաւի իր ուղիղ, ողջամիտ և բարեացակամ վարմունքին ու գործերուն համար արժանացած էր ժամանակակից Հայ. կաթ. Գերերջ. Պատրիարքներու, Գերպ. Թեմականներու, ընդհանուր կղերին և ժողովուրդին մասնաւոր համարման և յարգանքին։ Նոյն իսկ Հայութեան միւս հատուածները, ըլլայ կղեր կամ ժողովուրդ՝ որոնց հետ շփում ունեցած էր, մեծապէս կ'ակնածէին իրմէ՝ ծանրախոհ վարմունքին և աստիճանին վայել ձիրքերուն համար։

1929–ի Ընդհ. ժողովը, յորում կ'ունենայինք Միաբանութեանս նորընտիր Ընդհանրական Աբբահայր Գերպ. Տ. Տ. Ծովհան Վ. Աւգեր, կ'ընտրուէր նաև Վ. Հ. Աւետիք Վ. Գազէզեան Ընդհ. Ատենակալ և Առաջնակայ։ Սակայն չկրցաւ Ուխտս այս անգամ վայելել անոր թանկագին աջակցութիւնը և օգտուիլ այնքան միաբանասէր խորհուրդներէն՝ վերահաս անողոք հիւանդութեանը պատճառաւ, որ և հուսկ խլեց զինք մեզմէ դժբախտաբար վախճան դնելով անոր աստուածանուէր քայլերուն ու վշտահար թողլով զՄիաբանութիւնս։

Հանգուցեալը որքան որ կեանքէն կարևորագոյն մաս մը նուիրեց առաքելական գործունէութեան և վարչական գործերու, սակայն գիտցաւ միանգամայն օգտագործել պարագաները ուսումնական աշխատութեամբ ալ ըստ կարելւոյն պարապելու։ Իր նախասիրած նիւթերն էին Հայ Եկեղ. Պատմութիւն և Հայ Հնախօսութիւն։ Գրած

է Բազմավէպի մէջ շատ յօդուածներ. վերջին ժամանակներս՝ նաև Ո. Կ. ատարագրութեամբ։ Դեռ նորերս հրատարակած էր նաև Թուռնըպիզի «Հայաստան և Հայ Եկեղց. Պատմութիւն»։

Հ. Ալեմիք Վ. է կը Թան այժմ աւելի հետաքրքրական՝ իրը ձեռագիր անտիպ երկասիրութիւն՝ Համառօտ Հայ Եկեղ. պատմութիւն մը ի սկզբանէ մինչև մեր օրերը, ինչպէս նաև Քրիստոնէական վարդապետութիւն մը։ Բաց ատոր ուշադրութեան արժանի է համեմատական աշխատութիւն մը Հայ պատարագի աղօթից վրայ, ուր նշանակած է զանազան ճաշոցներու տարբերութիւնները։ Ակսած էր պատրաստել նաև Մայրավանքիս Ձեռագրաց Նոր Ցուցակ մը Հ. Բ. Սարգիսեանի Մայր Ցուցակէն տարբեր կարգով և ոճով։ Հոն ամփոփուած էին 300–է աւելի զրչագիրներ՝ սեղմ պարունակութեամբ և յարակից կարևոր ծանօթութիւններով, ինչ որ կիսաւարտ կը Թայ այսօր։ Պատրաստ ունէր նաև Ընդհ. Եկ. Հայրախօսութիւն մը (յետոյ կորսուած՝ աքսորի միջոց), ուր կային Հայ Եկեղեցւոյ նախկին Հայրերէն ալ։ Իր այս երկասիրութեան վրայէն դասախօսած էր մեզ առենօք՝ երբ կը վայելէինք միաժամանակ իր հայրագորով վերակացութիւնը։

Ահա ուրեմն Առաքինին, ահա բազմերախտ Մխիթարեանը՝ Լուսահոգի Վ. Հ. Ալեմիք Վ. Գազէզեան, որուն անմոռանալի յիշատակին ի սրտէ կը նուիրուի այս համեստ աշխատութիւնը «ՄԱՑՐ ԴԻՒԱՆ»ը՝ իբրև դոյզն նշան սիրոյ և երախտագիտութեան։

Հ. Գ. Տ.

Ց Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մատեանիս մէջ ամփոփուած Մխիթարեան Միաբանութեանս դիւանական վաւերագրերուն առաջին մասն սկսաւ նախ հրատարակուիլ *Բազմավէպի* մէջ[1]. յետոյ առանձին պրակներ հանուեցան՝ միանգամայն ամփոփ հատոր մը կազմելու դիտաւորութեամբ ի դիւրութիւն ընդհանուր ուսումնասիրաց եւ ի գոհացումն փափագողաց։

1926 թուականէն ասդին՝ այլ եւս լուսագոյն համարեցինք շարունակութիւնը ուղղակի տպագրել, ինչ որ դժբախտաբար ընդհատումներ ունեցաւ ստիպողական գործերու պատճառաւ. եւ այսպէս՝ հրատարակութեանս լրումը վիճակեցաւ այս տարուան։

Գործիս կազմութեան ու նպատակին շուրջ կարեւոր կը համարինք կարգ մը բացատրութիւններ տալ։

ա. «ՄԱՅՐ ԴԻՒԱՆ»ին թղթերը կը ներկայանան Հայ Բանասիրութեան՝ սկսեալ 1707–է մինչեւ 1773։ Ցայսմայր եղած ժամանակամիջոցը Մխիթարեան Միաբանութեանս պատմութեան մէջ առանձին շրջան մը նկատելով՝ յարմար դատուեցաւ ուրոյն հատոր մը կազմել։

բ. Դիւանական վաւերաթուղթերէն – որոնք թուականներու կարգաւ Մայրավանքիս Դիւանատան մէջ առանձին տուփերու մէջ էին – առած ենք *մի միայն* հայերէն գրուածները, որովհետեւ մեր սկզբնական նպատակն էր ծանօթացնել *Բազմավէպի* ընթերցողաց՝ երբ անոր խմբագրութեամբ կը զբաղէինք։ Հետեւաբար հրատարակութենէս դուրս կը մնան այլալեզու վաւերաթուղթեր, որոնք սակայն օրին մէկը՝ ընտրանօք՝ կրնան ուրիշ շատ կարեւոր հաւաքածոյ մը կազմել միեւնոյն կամ մերինէն լուսագոյն ծրագրով եւ ուղղութեամբ։

գ. Իւրաքանչիւր վաւերագրէ առած ենք մի միայն ազգային եւ օտար դէպքերու եւ տեղեկութիւններու վերաբերեալ մասերը, որոնք միջազգային՝ եւ մասնաւորապէս՝ ժամանակակից հայ քաղաքական վիճակի, եկեղեցական պատմութեան, ծէսի, սովորոյթի եւ մտաւորական կեանքի շուրջ կու տան կամ նոր մանրամասնութիւններ, եւ կամ են նոյն իսկ իբր նախանիւթ կամ աղբիւրներ, ցարդ եղածներուն վրայ նորութիւններ աւելցնելնուն համար։ Աստի կ'իմացուի ինքնին ամփոփուած վաւերագրերուն ստոյգ արժանիքը։

դ. Ջանց ըրած ենք հրատարակել ընկերային եւ առտնին պարզ թղթակցութիւններ, ինչպէս նաեւ այն ամէն մասեր՝ որոց հրատարակութիւնը կրնայ այսօր իսկ կարգ մը վէճերու աւելորդ պատճառ տալ եւ օգուտէ աւելի վնասակար դառնալ։

ե. Հրատարակուած թուղթերուն մէջ կը բացակային Ովսեփ Հեղինակ Երանաշնորհ Մխիթար Աբբահօր կողմանէ գրուած նամակները, մեր վաւերաթուղթերը պարունակող տուփերուն մաս չկազմելնուն համար։

զ. Իւրաքանչիւր վաւերագրի ուղղագրութիւնը պահած ենք ինչպէս որ է. բայց հարկադրուած ենք երբեմն նոտրագիր նշանակել տառ մը կամ բառ մը՝ ծանուցանելու

1. Տես 1921 Դեկտ.

համար ըստ քնագրին ըլլալը կամ ոչ, որպէս զի չկարծուի որեւէ շփոթութեան կամ տպագրական սխալի մը արդիւնք։

է. Կարեւագիծի [ ] մէջ առած ենք այն ամէն տառ կամ բառ՝ որ մեր կողմանէ դրուած է։ Նոյնպէս շատ անգամներ վաւերագրերու ներքեւ պակսած քաղաքի անունը կամ անձի մը մականունը՝ յետ ստուգելու՝ դրած ենք կարեւագիծի մէջ։

ը. Ի դիւրութիւն քանասէր ազգայնոց կարեւոր համարեցինք վաւերագրերէն առաջ հակիրճ ծանօթութիւններ դնել՝ իբր լուսաբանութիւն յաջորդող գրութեան մէկ նիւթին կամ անուան կամ թուականին նկատմամբ. եւ կամ անով իբր բացատրութիւն մը՝ գոյութիւն ունեցող տպագրեալ կամ անտիպ մատենագրական տեղեկութեանց։

թ. «ՄԱՑՐ ԴԻՒԱՆ»ի ետեւը դրած ենք *ցուցակ* մը եւս, ուր ամփոփուած են կարգաւ՝ վաւերագրական համառօտ տեղեկութիւններ, եւ ընթացքին մէջ աչքէ վրիպած թուղթերէ մասեր. այս անգամ էջին ներքեւ նշանակելով երբեմն պահանջուած ծանօթութիւնը։

ժ. Ըստ կարելւոյն լաւագոյն ծառայութիւն մը մատուցանելու դիտաւորութեամբ՝ ամենէն վերջը դրած ենք՝ յօգուտ հայ մանուկներուն՝ «ՄԱՑՐ ԴԻՒԱՆ»ի ընդհանուր ցանկէն զատ՝ հոն յիշատակուած որոշ անձերու յատուկ ցանկ մը եւս. նաեւ մի քանի մանական բաժիններով դասաւորած ենք նոյն վաւերաթղթոց պարունակած ամբողջ նիւթերը, դէպքերն ու տեղեկութիւնները։

Գալով «ՄԱՑՐ ԴԻՒԱՆ»իս կազմութեան, թերեւս ցանկալի էր զայն աւելի ընդարձակ եւ նախընտրելի ծրագրով մը ներկայացնել, մինչ որ ժամանակին պահանջն ու պատգամները կարող չէին թոյլատրել։ Այս պատճառաւ կը յուսանք որ ներողամիտ կ'ըլլան մեզ պատուական ուսումնասէրք, նկատելով մեր այս մատեանը սոսկ իբր փոքրիկ լուսոյ մը հայ բանասիրութեան գանձանակին մէջ։

Հ. Գ. Տ.

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ-Ի Ս. ՂԱԶԱՐ

Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ ու հետաքրքրական թուղթերու անտիպ շարքը՝ զոր հրատարակել կը սկսինք՝ անշուշտ հաճելի ընդունելութիւն մը պիտի գտնէ մեր ընթերցասիրաց կողմանէ, նկատելով անոր բազմազան օգուտները՝ որ կրնան յառաջ գալ ու լուսաբանել թերևս մութ կէտեր՝ ազգային ընդհանուր կամ մասնական պատմութեան մէջ։

կը դնենք նախ նամակ մը, գրուած՝ 1707ին և ուղղուած առ մեր եր. Հայրը Մխիթար Աբբայ. նամակագրին ստորագրութիւնն է «վարպետ Գրիգոս. Լէհոպոլսի», այսպէս՝ առանց մականուան. կ'ուղղէ իր աքսորավայրէն։ Յայտնի է որ ծունանանն է, որ վարած է Լէհոպոլսի թեմը 1681էն[1] մինչև իր մահը, այսինքն մինչև 1715։ Ըստ կարելւոյն ամփոփ ծանօթութիւն մը տալու համար Մխիթար Աբբայի հետ թղթակցող այդ բարձրաստիճան եկեղեցականին վրայ՝ հետևեալ գլխաւոր ժամանակագրական տեղեկութիւնները կը քաղենք զանազան աղբիւրներէ։

Հ. Ալիշանի կաւևհիլին մէջ կը գտնենք.

«վարդանս այս էր որդի ծունանու քահանայի, ուստի ծունանեան կոչեցաւ, «ի ձազու գեղջէն մերձ Թօխաթու. էր ճարտար գրագիր, ուշիմ և հմուտ բառիցն «Հայոց։ երթեալ յԷջմիածին, և անտի ընդ նուիրակի գայ ի Լեհաստան. ուր «զբարեկարգութիւն և զուղղափառութիւն Հայոց տեսեալ՝ մտանէ ի Դպրատունն «Հայոց. ուստի զկնի ուսանելոյն ինչ լատիներէն՝ գնայ ի Հռոմ, և ի դպրատանն «Ուրբանեան ուսեալ կատարելապէս զլատին լեզու, թարգմանէ (զԱռաջնորդ?) «յերկինս, յամի Տեառն 1671. տպի գեղեցիկ ոճով, բայց խրթին և նոր բառիւք։

---

1. Հ. Ալիշան՝ Գրիգոր Ա.էն սկսեալ Լեմպերկի եպիսկոպոսաց շարքը ցուցուցած առեն՝ այդ թուականը կը դնէ, կանխապէս ըսելով սակայն, որ ասոնց յաջորդութիւնը և թուականք դեռ քննութեան և սուզութեան կը կարօտին (Կամենից. էջ ե), Հայ – Վենետ. մէջ կը դնէ 1677 (էջ 342)։ Զամչեան ալ կը նշանակէ 1686 (տես Պատմ. Հայոց Հա. Գ. էջ 643)։ Իսկ Հ. Մինաս Բժշկեան (տես Ճանապարհորդութիւն ի Լեհաստան. Վենետիկ 1830. էջ 108) և Ըստահարեան Հ. Վ. (տես նկեղ. Պատմ. 1872 էջ 382) կը դնեն 1686։

« Զկնի արքեպիսկոպոսին Նիկողայոսի[1] ոչ շատ յամեցեալ և ինքն ի Հռովմ, դառնայ « ի Լէսպոլիս. բայց զի Նիկողայոս առոյգ էր և առողջ, առեալ զհրաման ի Ս. « Ժողովոյն երթայ ի Հայաստան քարոզելոյ աղագաւ. ուր ընդ ամս իբր տասն « տեւէ » (էջ 143)։ Սոյն Նիկողայոս արքեպիսկոպոսն է որ Ս. Ժողովոյն թոյլատուութեամբ իբրեն յաջորդ կ'ընտրէ և կը ձեռնադրէ իւր աշակերտը[2] զՏէր Վարդան Բովնանեան, իբր տիեզերաւոր Եպիփանիոյ « և առեալ զիշխանութիւն ի Սրբազան « Փափէն, զպարգևս զանազանս և զմակագրութիւն ընտանի և առընթերակաց Եպէլադի « և Գալլացւոց Ս. Միքայէլի, դառնայ ի Լէսպոլիս։ Առնէ բազում ուղղութիւնս, « զայցարարութիւնս եկեղեցեաց, զեղբայրակցութիւն Ս. Գրիգորի Լուսաւորչին և զԱ- « տուածածնին սահմանէ և հաստատէ ի Լէսպոլիս ». (Անդ). Յաջորդ բացատրութենէն ինքնին կը հասկցուի որ Վարդան եպիսկոպոս դարձեալ Հայաստան դարձած է, ու միայն « Լուռեալ զվնասանելն Նիկողայոսի արքեպիսկոպոսին Լէսպոլսի, հնարիւք նենգալ ի Հայաստանեաց՝ գայ ի Լէսպոլիս և տիրէ արեռոյն, զոր ընդ ամս 29 կառավարէ յարի վարուք »։ Նոյն տարւոյն մէջ Իննովկենտիոս ԺԱ.էն կ'ընդունի արքեպիսկոպոսութեան տիեզերս և եմիփորոն (էջ 144)։

Իր առաջնորդական գլխաւոր գործերէն մին պէտք է համարիլ 1689 հոկտ. 10ին գումարած զաւառական ժողովը Լօվնի մէջ, « ու քաշվեցան, կ'ըսէ, [անշուշտ « եկան, ամփոփուեցան, կ'ուզէ ըսել] յամէն քաղաքէ քահանայք. ուր Գեր. Նուն- « յիւան Գանդէլմի բրէգիանէս կ'ըսէ։ Այս ժողովքին մէջ արարին, որ Պատարագատեառ « արքագրվի ու տպվի ի Հռոմ, և Տօնացոյցն այլ, և ուրիշ բաներ. և այսպէս խրկեցին « զասոնք ի Հռոմ. ու խնդրեցին զՍուրբ Ժողովն, որ զՏէր Աստուածատուր եպիսկոպոսն « ձէնէ [այսինքն ձայնէ] ի Հռոմ, արքագրէ զայս գրքերս, ու տալ տայ» (էջ 129)։ Ինչ մը վարը յուսախաբութիւնը կը կարդանք. « Աստուածատուր եպիսկոպոսն յայս « տարի եկաւ ի Հռոմ, ինայ ի հոն 8 տարի. դարձաւ ի Լօվն 1698ին. չի կարցաւ « իր մ'ալ հաստատելու. զերամ, սուրբ Ժողովքն չուզաց փոփոխութիւն անելու « վասն արևելեան Հայերուն, որ ալիժօվ չխռուին, ու ալիժօվ, զի Բաղէր Պօնէզանայ « Բրէքէֆդն (ինչպէս որ լսեմ ամ,) զամեն այն բանը կ'աւիրէր »։

Իր վերջին տարիներու գործունէութեան մասին յիշատակագիրը կ'ըսէ։

1698ին « Աստուածատուր եպիսկոպոսն յայս տարի ի Հռոմայ դարձաւ ի Լօվն, « սուրբ Ժողովին հրամանաւն զօտեւուզօր (օգնական) ու սուգցէսօր (յաջորդ) արքե- « պիսկոպոսութեան Լօվայ. կ'երամ վարդան արքեպիսկոպոսն շատ սուրբիքօվազ « արավ, պատճառ դնելով վիրէն ծերութիւնն ու զտկարութիւնն։ Բայց շիտակն « ասելով, ինքն՝ օտար երկրի ըլլալով, ու զամենայն բան Բաղերնէրուն (լատին « կլօնաւորք) խրերովն անելով, շատ անգամ ժողովրդին սիրտն ազրեց. յետքը ոչ « ժողովուրն, ոչ քահանայք աչք (պատիւ, յարգանք) չէին դնել. ասոր համար « հնարքով զԱստուածատուր եպիսկոպոսն ի հոս երթ, և զամենայն իշխանութիւնն « ձեռքն եղիր. զատ (զատ, բացի) վիրէն աթոռն ու զարհիեպիսկոպոսութեան « դիզուէն (titre) (էջ 130)»։

Յատկապէս կ'ընծայուի վարդան արքեպիսկոպոսին փաղաքերական թուղթ մը առ Լեւոն ԺԱ ուղղուած, որմէ Հ. Ալիշան կը քաղէ իր «Կաւանիից»ին մէջ ժամանակագրական դէպքերն ու ազգային եկեղեցական անցուդարձը, յորս էն գլխաւորն է որ 1626ին Մելքիսէթ Էչմիածնի կաթողիկոսը Լէսպոլիս կ'երթայ, ըստ ժամանակա-

---

1. Աւելի ծանօթ՝ Նիկոլ անուամբ։
2. Ջամչեան. պատմ. Հայոց Գ. էջ 630։

գրին՝ անկից Հռոմի անցնելու դիտումով։ Այս միտքը չի յիշուիր Առաքել Դաւրիժեցւոյ Պատմութեան մէջ։ Սա կաթողիկոսին քաղքէ քաղաք շրջելուն պատճառ կը դնէ՝ հակառակորդներուն և պարտատէրներուն երեսէն խուսափիլ, հանգիստ վայր մը գտնելու համար[1]։ Լէօպոլսոյ մէջ Մելքիսէթ անհովիւ մնացած ժողովրդեան վրայ կը ձեռնադրէ եպիսկոպոս զՆիկոլ[2]. և այլն։

Գալով «կամենից»ի ցիշատակարաններէն միոյն՝ կը գտնենք 1683 թուականաւ այսպէս. «Որ ինչ ի գրքի աստ պարունակին՝ ժողովեցան յինէն ի զանազանից «գրոց և ի տեառակաց հնացելոց, մինչ պանդխտանալի ի վերին Հայս, և ի մի «պարիսակեցան ևն...։ Ես (վարդան Ծունանեան) ոչ հեղինակ սորին՝ այլ հաւաքող «միայն եմ. որպէս և զբազումս զայլս գրեանս ընդօրինակեցի ի Հայոց երկրէն, «որք չէին աստ յերկրի լեհաց, վասն չատագովութեան կաթուղիկէ հաւատոյ «ընդդէմ ոմանց հակառակասիրաց մերազնեայց» [ի Ս. Ղազար]։ «կամենից» էջ 197։

Հ. Տաշեան «թուղթ քաւչիրական»ը ցանկագրած առեն աւելի պայծառօրէն հետևեալ ամփոփ տեղեկութիւնները կը հաւաքէ, վարդանայ կենաց և գործոց մասին. (տես Մայր ցուցակ Հայ Ձեռ. Մի. վիճնայի. էջ 116) «Հեղինակն արդէն ինքզինք կը յայտնէ գրութեան մէջ իբրև արքեպիսկոպոսն Լէօպոլսոյ Ժէ. դարուն վերջերն ու ԺԲ. սկիզբն, որ երկար առեն ճամբորդած է Հայաստան ևն։ Եւ է վարդան Ծունանեան, որուն գրութեանց վրայ հետևեալը կը գրէ Ստեփանոս Ռոշքա իր ժամանակագրութեան մէջ Ծունանեանի մահուան առթիւ յամին 1715 (Ձեռ. 266, թղ. 427.[3]) «Վարդան Ծունանեան... էր խոհեմ, խորագէտ, աղքատասէր և անպարապ ի գրելոյ և ի թարգմանելոյ. թարգմանեաց գրարէխիզմն և գիտանանայպետականն հռոմէական, կնդրակոյր քահանայից, Աստուած [արանութիւն?]. Պակասութիւնք Պատարագին, Ծիսարանն (մաշտոց), Դանճարան աղաւթից և այլն։ Գրեաց գիտաչափական բուղրն առ եվդոկիացիս, որ է գիրք լի վկայութեամբ Հայոց ժողովոցն, կաթողիկոսաց և վարդապետաց, մինչև ցիւր ժամանակն։ Ձեռնադրեաց եպիսկոպոս միայն զՕգսէնտիոս վարդապետն, իսկ զքահանայս բազումս. Նորոգեաց զընակարանն Արքեպիսկոպոսականն, և այլն։ վարդան Ծունանեան արքեպիսկոպոսն մեր Լէօպոլսի ամաց 81, արքեպիսկոպոսութեանն յամի 29, յունիսի 15 մեծաւ ջերմեռանդութեամբ հանգեաւ ի Քրիստոս ևն[3]. »։

Ահա այս արքեպիսկոպոսն է, որուն մէկ նամակը, որ մահէն 8 տարի առաջ գրուած է, կը հրատարակենք հոս։ Մակայն կանխենք ըսելու. թէ մնացեալ ուրիշներ ևս կան, որոնք ցարդ անհետացած է Շուէտացիներէն՝ այդ կը յիշատակուի. բայց թէ՝ այդ թուականներուն իր

---

1. Պատմ. Առաքել Դաւրիժեցւոյ. Վ. դրշպտ. 1884 էջ 173–174 և 339։

2. Մելքիսէթ կաթողիկոսի Իւլվովի Հայութեան ուղղած իսկական ձեռագիր մեծագիր կոնդակը՝ որ պաշտօնապէս կը հաղորդէ ընկերիլ իրենց եպիսկոպոս ձեռնադրած ըլլալը՝ կը գտնուի Ս. Ղազարու Գիւանին մէջ։ Ահա կարևոր մասը. «Զի եկաք ի յայսոսեզս ահնեալ մայրաքաղաքն իւլով. իբրև ի յաթոռակալ տեղ. և տեսաք որ առջրդ «չունէին. և բազում ժամանակս առանց առջրի վարչին վկեանս իւրց. բազում անգամ մնգնէ առջրդ խնդրէին. «յիմ եկեսցն. բայց ոչ կամեցայ զիմ եկեսցն այս տեղս առջր դնել. վասն որոյ ըստ խնդրոյ նց քննութի «արարաք ի մէջի մերում, եկեսիւք. և մեաբանիւք. Եւ ձեռնադրեցաք Զար Նիկողոսն. Այս տեղացի. Պըն «Եագուպի որդին, Թորոսենց. Եւ աշնեցաք եկես. մեր բարձր հայրապետական իշխանութեամբս Լուսաբուխ սը «մեռնաւս և սը յաշոնն Տն սը Գրիգոր Լուսաւորչին. վկայութեամբ». և այլն... «Աշնեցաք զհոգևոր որդին մեր «զար Նիկողոսն Արքեպկս Լվով քղքին». և այլն։ «Գրեցաւ. թվ. ռճե. Դեկտ. ամսոյ իԹ. Ձեռամբ. մնգաւոր «զրչի բիւր քանքարոյ Պարսկան. Սիմոն լոհանուն իրիցուիս»։ Չուակ բուն առորագրութիւնը. «ՏՆ ՏՐ ՄԵԼԿԻՒ- «ՍԷԴ ԿԹՂԿՍ ԱՄ ՀԱՑՈՑ ԾՈՑ ՑԻ ՔԻ ՏՎԻ ԶԱՑՍ ԳԻՐՍ· ԶՆՈՒԳԻՐ ԱՑՍ Է»։

3. Վարդան արքեպս. վրայ տես անցողակի համառօտ ծանօթութիւն մ՛ալ ի «Պատմ. Հայերէն Դպրութեան. Բ. Նոր Մատենագրութիւն» Հ. Ջարբհանալեանի. Վիեննուկ 1905. էջ 297–298։

ի կամենից զտնուիլը Շուէտացւոց բռնութեան արդիւնքն է, ոչ մէկ տեղ չհանդիպեցանք յիշատակութեան, մինչ իր նամակը կ'ըսէ զայս։ Այդ տեսակէտով՝ յայտնի է՝ իր կենաց ջուրջ նոր լուսաբանուած ծանօթութիւն մ'է այդ։ Նամակն ուղղուած է առ Մխիթար Աբբայ՝ երբ դեռ նա Մեծոն էր։

Ա հատասիկ.

Ամենապատիւ Տէր և Հղբայր ի Քրիստոս

1707 Յունվ. ի. ի Կամենից

Զգրեալսդ Յունիսի ժե. յամի Տն ոչե [1705] ընկալայ յամին Տն (ռ)չզ [1706] ի փետր. ժզ. և զի յայնժամ ոչ պատասխանեցի, առբասրել կարէին զիս առ Ամենապատուութիւնդ նախ անբախտն դիպուած Ավէտացւոց բռնութեանն[1]. յորմէ խուսել հարկեցայ մինչև ցփօսօլիայ, ուր ոչ դիւրապէս տրէին առիթք յայնժամ սուրհանդակաց. նաև գիրք բնականք ծերութեան. տկարութեան բնածնի, նուազութեան աչաց և այլք անդրադարձութիւնք ներքնոց և արտաքնոց զգայութեանց, արտագործութիւնք այսր տիոյ։ Ի մի սակայն բծիւ տմարդութեան փաղանչանիցէի յանծանօթիցդ իմոց բարուց, յօժարեցայ արդ սակաւուք պատասխանել, թէ և անագան։

Ի գրեցելոցդ, վերաքաղեցի... զերկու ինչ։ Նախ զնախանձ գովելի, և զգովելագոյն դիտաւորութիւն Եղբայրութեանդ, իսկ և զեզերեցումն կամի ամենախոհեմ և լի Առաքելականաւ Սիրով, զոր սկզբնաւորեալդ է նայդմ Պղեկոջ. առ ի լինել զօրավիգ ճշդութեան և նպաստ նորին սերեցման ի մերազնեայս, աշխատասիրութեամբ Աշակերտեցելոցդ։ Զորս նախապետաբար հիմնես քաջ յԱտաքինութիւնս աստուածայրականս, զի զովելաբար զարգանայցեն յոգիս, և զարտագործութիւնս պտղաւէտս Առաջադրութեանդ բարւոյ՝ բողբոջեսցեն, և մարգես զնոսա, զի զառս ամենեսին ուղղաւորիցեն ի փառս Աստուծոյ, և ի փրկութիւն հոգւոց մերձաւորաց. և ապա երկրորդաբար զգիտութիւնս խմաստից վսեմագունից ջամբել վարանիս նոցին. իսկապէս ճանաչելով թէ յոգիս աւագինասէրս չեշտակի ներամտեն հանճարք պէսպիսեաց գիտութեանց, և նոյնք ինքեանք յարմարագոյնք լինին յընդունակութիւն նոցա. իսկ և խոկալով բարւոք, թէ գիտութիւնք Սխօլաստականք, թարց ներհմտութեան ոգեկանաց իմաստից, համեմատիցին մարմնոյ՝ առանց հոգւոյ, կամ Պատկերի նկարեցելոյ, որ ապացուցանէ արդեօք զնախատիպն՝ ըստ նիւթոյ, այլ զներգործութիւն իմն կենդանական ոչ կարէ վարժել, նկրտիս ամենևին. զի երկաքանչիւրն չարունակեցեալք համանգամայն յոգիս Աշակերտեցելոցդ՝ առնիցեն զնոսա կրկնապատկի պատուոյ և հետևապէս նոյնքանոյ պսակի՝ համարժանս, ըստ Առաքելոյն զգացման, որպէս զի բանիւ գիտութեան, և օրինակաւ Առաքինութեանց՝ յառաջադէմք լինիցին ժողովրդեանն Աստուծոյ։ Ընտրողաբար ուրեմն նախադասես զիմաստն ոգեւոր՝ նիւթականին, ըստ Առածին այնմ հռչակավիպի. Աւաւել ուսուցանէ վարուց բարիօրինակութիւն քան բանից վարդապետութիւն։ Զայսսոսիկ և զայլս յոգունս Առաջադրութեանդ զգացմունս ներազնելով՝ ոչ միայն դրուատեցի զարարդ, այլ և փաղաքացուցի յիս նինքեան առաւել քան զսովորականն, չերմպէս և անդուլ աղօթել վասն Եղբայրութեանդ, և Աշակերտելոցդ, որ և առնեմ իսկ ներգործապէս, զի ի դմին յամիցեք և օր ըստ օրէ աճիցէք ի զօրութենէ ի զօրութիւն։

---

1. Որ ամէն կողոպուտ և չարիք հասցնելէ վերջ ի Լէօպլիս՝ յափշտակեր էին նաև իր գրքերը, զորս կազմեր էր Ս. Ժողովէն առացած հազար սկուտով, ինչ որ առած տարեէ ի վեր իբր նպիսկոպոս դեռ չէր առած, Որովք (այսինքն հազար սկուտով) գոիպ (գրոց) դեղեցիկ կազմեաց. զոր յափշտակելով տպտ Շվետացն, խափանեցան գործ նորա («Կամենից» էջ 144)։

երկրորդ՝ զխնդիրդ համեստ և Աստուածահաճոյ, զոր բաղձայ եղբայրութիւնդ ինձ լնանիլ, այս է. զի թարգմանիցեմ զընթացն Աստուածաբանական, ի վճռաբղխից աղբերց վարդապետացն Հռոմէականաց, որով մարթայցէ ներհմտացուցանել զիւրս ստորադրեցեալս առ լաւագոյն ընձեռումն Առաքելականի Պաշտաման։ Արդարև խնդիր սուրբ և ամենագովելի, բայց անհանգչտ իմոցս ուսոց՝ բեռն։ Նախ, զի իրականութիւնդ այդ, պահանջէ զգիտութիւն և զծանօթութիւն մեծ երկոցունց լեզուաց, զոր ես չունիմ բաւականապէս։ Երկ. զառողջութիւն և զամբողջութիւն, որք այժմ ոչ գտանին յիս, գոլով իմ արդ պակասեցեալ յուժոյ և ի լուսոյ, և գրեթէ ծիւրեցեալ ի ծերութենէ և գործառնաքս անպիտանացեալք. խնդրելի է ուրեմն ի գիանագունից և մանկագունից քան զիս։ Այլ ընդէ՞ր և այս. ո՛չ ապաքէն խմաստասիրութիւն և Աստուածաբանութիւն Հրեչտակական վարդապետին Ագուինացւոյ վաղ ուրեմն թարգմանեցեալք գտանին այժմ ի մէջ Ուղղափառացն ձահկեցւոց։ խնդրեսցէ եղբայրութիւնդ ի նոցանէ և նոքա (որպէս են թարգմանք) չեն զլանալոցք. մանաւանդ մինչ լսիցեն հանդերձեալ գոլ տպագրութեամբ ի յոյս ածիլ, որպէս խոստանաստ։ Գտանի առ իս ընդօրինակեցեալ Բնաբանութիւն, այսինքն Ֆիզիքա, մասն ինչ ի կղէմայ, բարւոյ յիշատակի վարդապետէն, և մասն յԱիօզէ արարեցելոցն. եթէ յօժարիցի եղբայրութիւնդ՝ յղեցից, յորժամ դարձայց յաքսորանաց աստի ի Էօպօլիս։...

Մնամ խոնարհագունեղ ծառայ
վարդան Արքեպս. Էօպօլսոյ

Բ.

Յաջորդ թուղթը որուն աշխարհաբար թարգմանութիւնը կայ Հ. Յ. Թորոսեանի վարք Մխիթար Աբբայի գրոց մէջ, գրուած է ի վէնետիկ ի չորրորդում օգոստոսի 1708 ձեռամբ Թաչատուր վարդապետի երզրումեցիի։ Ի մէջ այլոց կը հաղորդէ Մխիթար Աբբայի որ ինք (Թաչատուր վ.) առաքելական քարոզիչ կարգուեր է Ս. Թողովէն։ Ահա ամբողջութեամբ.

Սիրելագունեղ եղբայր իմ ի Տէր.

Սիրելագունեղ մայր մեր հանդերձ երկու թոռամբք եկեալ էհաս ի մայրաքաղաքս վէնետիկ, և պատմեաց մեզ զամենայն մարդասիրութիւն ձեր, զոր ցուցեալ էր նմա եղբայրութիւն ձեր. և աստ ի վէնէտիկ բնակի հանդերձ թոռամբք և այլովք անձամբք. և է աստ Տնալոց...։ Եւ ես ինացի աստ, և ստեղծայ ի Սուրբ Թողովոյն Առաքելական միաստնոյ Հայոց աստ եղելոց, ըստ խնդրոյ սիրելագունեղի եղբօր Գրիգոր վարդապետի Թախաթեցւոյ, որ այլ ուրեք սահմանեաց գնալ։ Ի յեկեղեցւոջ Հայոց ի չաբաթին երից քարոզեմ...

Եղբայրութեան ձերոյ
ջերմեռանդագունեղ ծառայ
Թաչատուր վարդապետ Էրզրումեցի

ի վէնէտիկ ի չորրորդում օգոստոսի 1708

Գ.

Հետաքրքրական է նաև հետևեալ անտիպ գիրը, ո՛չ միայն իր մէկ երկու ազգային պատմական անցքերուն, այլ նոյն իսկ նամակագրին առ Մխիթար և իր

Միաբանութիւնն տածած սիրազեղ համարման և յարգանքին գողտրիկ բայատրութեան համար.

Գերապատուելի Աբբա Տէր Մխիթար Ճշմարտատուրիկ Ուժաբանութեան վարդապետի.

Ցսաւանդ ողջոյն բազմաւ սիրով մատուցանեմ Սրբասնունդ անձին քում, և որք ընդ քե հնազանդեալք բարձոք խաչին և հետևողք խաչելոյն են, ի Տէր յայժ խնդալ։ Արդ սէրն քո որ ունէիր ի վաղուց հետէ ընդ մեզ, որպէս որ մինք ունէաք նոյն սէրն ընդ քեզ որպէս որդի, և յայժմ որպէս եղբայր հոգևոր։ Սիրալրական քարտէզն քո ընկալայ զոր գրեալ էիր թուին Փի ո էճ ժգ, և մարտի ժա, ուրախացայ յոյժ, և միշտ պաղատեմք առ ամենակարօղն զի տացէ յաջողութիւն հոգևոր գործոյդ, աղօթիւք ամէնօրհնեալ կուսին, և հոգևոր հօրն մերում Սրբոյն Գրիգորի. զի աճեալ բուսանիցի և լինի ծառ մեծ, և արձակեսցէ ոստս ընդ ամենայն Հայաստան, որպէս որ եղև ի նախնումն Եգիպտոս միջնորդութեամբ Սուրբ հօրն Անտոնի. քանզի վերջինս այս առաւել հարկաւոր թուի քան զառաջինն, որպէս որ ի հարսանիս կանա գալիլիացւոց վերջին գինին ախորժ եղև քան զառաջինն, խնդրեմք զի այնպէս արասցէ և այժմ բարեգութն ցս մաղթանօք բազմեցելովք ընդ նմա ի հարսանիսն Ամէն։ Արդ՝ յայտ առնեմ զքաղձանս սրտի իմոյ որ ի դառնալն իմ հանդիպիմ տեսութեան միմեանց, քանզի հրաման եղև վեհապետէն և սր ժողովոյն, աստ ի Հռօմ եղեալ ուղղափառ եպիսկոպոսաց հայոց և ասորոց, զկնի յարութեան զատկին գնալ իւրաքանչիւր ուր և կամեսցի, որպէս առաքեալք ի Սուրբ եկեղեցւոյն. և գազտաբար չըշխել և քարոզել զբանն կենաց։ Վասն որոյ յօժարութեամբ կամիմ հանդիպիլ Տէրութեան քում և չահիլ յաղօթից ձերում։ Ողջ լեր ի Տէր։

Թուին Փի 1713 դեկտեմբերի 10 ի մեծն Հռօմ յեկեղեցին հայոց.

Տէր Գրիգոր Թափիչեան եղեսացի
հետևող ճշմարտութեան

Գերապատութեան քում խոնարհագունեղք ծառայք տէր Յակիանոս և տէր Թոմաս աբեղայքն իմ Սրբասնունդ աղջ համբուրեն և խնդրեն ի Տէրութենէ քումմէ զի յանձն արասցես աղօթիւք զնոսա կամացն Ա. նոյնպէս ծերունի մերոնցի ասլան տէր Թադէոսն խնդրէ։

Դ.

Հետևեալ նամակը գրուած է Հ. Պօղոս ծառայ կրօնաւոր քահանայի. սա Հ. Պօղոս Սիմոնեանն է, Մխիթար Աբբայի առաջին աշակերտներէն, այս ժամանակներս Հ. Գէորգ Այնթապցիի հետ առաքելութեան մէջ էր արևելք[1]։ Սոյն երկու Հայրերն են որ յետոյ ի Պոլիս 450 դահեկանի գնելով կ'ազատեն Մեթոնի մեր երկու հայ վարդապետները զՀ. Ղազար և զՀ. Յակոբ, որ Օսմանցւոց ու Վենետկեան Հասարակապետութեան պատերազմի պահուն՝ Մեթոն ալ ոտնակոխ ըլլալով՝ գերի տարուեր էին և հայ վաճառականներ զանոնք գնած էին։

---

1. Վարք Մխ. Աբբայի Հ. Ց. Թորոսեան էջ 255։

Ե. Պօղոս Ներկայ Նամակաւս նաև կը հաղորդէ Աբրահօր ի Մեթոն՝ Պոլսոյ և գաւառներու մէջ տեղի ունեցած դէպքերն ու անցուդարձը։

... Ուլահ պէկն որ էր ի Կոստանդիոնիպօլիս ի բանտն, յետ բազմաց չարչարանաց, զոր ետուն նմա, որպէս զի զոր ինչ ունիցի առնուցուն ի նմանէ, և յետ առնլոյ զտասն և եօթն հազար քսան դրամս ի յօգոստոսի ամսոյ 17ին սպանին և ընդ նմա հինգ արք ևս, որոց ոմանք լեալք են որդիք իւր. և ոմանք խորհրդականք իւր և զդիս վեցեցունս ևս եղին առաջի դրան թագաւորին։ Տակաւին կին նորա և դստերքն ի ձեռն պօստանճի պաշոյն են. և ոչ յայտնի զինչ արարելոց են և նոցա։... Միանգամ այսպէս լուր ել թէ ի յանատօլի բազում տաճկունք ժողովեցեալք իցեն. և կարդացմամբ գիրաւունս՝ եկեալք ի ստամպօլ զթագաւորն և զայլս ոմանս փոխելոցք իցեն. բայց սուտ էել։ Ի յուլիսի ամսոյն ի Թօխատ կրակ անկեալ է, և այրեալ է զերկոտասան հազար կրպակ, զեօթն բաղանիկ, և զչորս խան։ Երկու անգամ կրակ անկաւ ի ստամպօլ. մինն ի սարայն թագաւորին, նորում այրեցան երկու և երեք հացի բուռք. և միւսն ի սուլթան պայազըն, նորում քսան և երեսուն կրպակ այրեցան մերձ այնր տեղի, ուր վաճառին հաւք։ Սկսեալ է թագաւորն գչորս և զհինգ մաւունայ չինել տալ. և զայլս բազումս պատրաստութիւնս առնէ օրըստօրէ. բայց առ որ կողմ գնալն ոչ է յայտնի։ Զղալադա սարայն, որ վաղուց հետէ աւերեցեալ էր, այս վէզիրս չինել ետ այնու վախճանաւ, որոյ վախճանի նախապէս չինեցեալ է և յետոյ խանգարեալ է, վախճան՝ որոյ վասն չինեցեալ է, այս լեալ իցէ, զի սահմանեալ ժամանակօք թուով այսքան և այնքան ի յուռումելի զորդիս քրիստոնէից ժողովեալ, բերեալ և դրեալ իցեն հանդերձ տաճկացուցմամբք ի կալաղա սարայն, և անդէն ուսուցեալ և կրթեալ զնոսա ի պաշտօն արքունական կարգեալ իցեն։ Նմանապէս և այժմ առնելոցն են։ Ի ժամանակի թագաւորիս այսորիկ ամենայն էսնաւ ասեն, թէ ոչ զոն առք և տուք։ Ի յամիս այսորիկ ոչ եղեն մինչև ցայս վայր գրեթէ մահք. այսինքն եումուրճախք։

Ի թուին Հայոց ռճկգ [1714] և ի սեպտեմբերի 2
գրեցաւ թուղթս ի Հայր Պօղոս ծառայ
կրօնաւոր քահանայէ

Նամակիս ներքև բացի այս թուականէն կը գտնուի քիչ մը հեռուն՝ նաև ուրիշ մը, այսպէս «իսկ վիւռն գրեցաւ ի թուին Հայոց ռճկգ և ի յօգոստոսի 30ին»։ Մենք ուրիշ գիր չտեսանք. թերևս ատիկայ ակնարկութիւն մ'է նոյն նամակին՝ տարբեր անձի ձեռքով ղրկած նախընթաց օրինակի մը՝ ինչպէս նոյն ժամանակի սովորութիւն էր, ապահով ըլլալու համար։

Ե.

Այս նամակը ոչ մի նշան չունի թէ ո՛ր քաղաքէն ղրկուած է առ Մխիթար։

Առ վերապատուելի Աբբայի տէր Մխիթար աստուածաբան վարդապետի

Գիտացջ տէրութիւնն քո վերոյ գրեցելոյդ իմոյ։ Գանզի բազում ժամանակ է որ վարդապետէն գիր առած չեմ. քանզի գրեր էր ի մատուռդ քաղաքէն, որ է ըսպանեայու, թէ կուգեմ որ յետ դառնամ, զերբէ ըսպանեայու անուն է ճնացեր, խարճէրնիս չի հաներ, ուր տեղ կերթանք ամենէքեան կուլան, թէ աղքատացանք վասն երկար պատե-

բազմին...։ Վերապատուելի իմ, գիտենաս որ ունիմ խնդրուած ի քէն որ լուեալ եմ՝ թէ ձեր հրամանքնիդ Ջահկըցոց խորհրդատեարով կասէք պարգ. խիստ լաւ կանէք, զերբէ մեր խորհրդատեարը ճաշոց գիրքն է, ամա չենք կարեր ի գործածել, և ոչ գտանի ասա զճաշոց գիրքն և ոչ կարեմք տանել եկեղեցին վասն ծանրութեանն։ Բայց մեք ունիմք խորհրդատեարը որ տէր Թայթէոսն է գրեր, և իւր խորհրդատեարին օրինակն է, և ոչ գտանէ զամէնն աւուր պատշաճի, և ես ասեմ պատարագ լաթինացւոց եկեղեցին և կու պատահի տարակուսի և խղճմտանաց բան։ Բայց լուեալ եմ թէ ունիք պասմա խորհրդատեարը հայ գրով, լաթին օրինակով, խնդրեմ որ շնորհ անես....

Թվին Փրկչին 1717
Մայիսի ի։

Ընկալչիք յոհաննէս քահանայէ, պատրաստական ծառայ. միամ աղօթից ձերոց

Զ.

Անկեղծութեան ցոլացում մ'է հետագայ գիրը՝ առորագրող պատանւոյն կողմէ առ իւր նախկին հայրը Մխիթար։ Դիտելի է միանգամայն սա կէտը, որ մինչ կաթոլիկցութիւն կը շարժէ ան, դուրս կը ճառագայթէ միանգամայն ներ. Հոր գեղեցիկ սկզբունքները և իր փոքրիկ Միսքանութեան ներքին յարգն ու բարձրութիւնը. հոգ չէ որ քաջարթուն ու փորձ Հիմնադիրը այդ վիճակին անյարմար դատելով սուիպուեր է ետ առաքել զպատանին, անոր իսկ բարւոյն համար։

Ձեռնագրութիւն տեառն արդոյ հօրն իմոյ ապստամբն խոնարհական ողջոյնս մատուցանեմ

Եւ յետ ողջունի, իմ սիրելի հայր իմ, եթէ հարցանես զիմ զորպիսութիւնը գոհութիւն Քրիստոսի ողջ և առո(ղ)ջ եկանք հասանք ի քաղաքն Վենետիկ, տասն և եօթն օրն, յետ հասանելուն քիչ մը տկարութիւն եկաւ ինձ. 33 օր ի սպիդալն պառկեցա, գոհութիւն Քրիստոսի հիմի առողջանալու կողմն դառայ։ Դարձեալ, հայր իմ եթէ հարցանես զինչ տկարութին էր տէյի, երանի էր աւուրն այն որ ձեր մէջն մտայ ուրախութեամբ խնդութեամբ։ Դարձեալ, հայր իմ, դուս որ հանէցիք զիս մահս ձեռքս տվիք այսպէս հանէցիք դուս. ախով վախով վերէմ էղա հալեցա հիլալ դառցա, քէչկէ այդ չափ ալ մէջերնիդ մտած չի պիտէի. եթէ այսպէս ինամ, 2 ամիս կամ 3 ամիս չեմ քըշէր կը մեռանիմ։ Դարձեալ, հայր իմ, կաղաչեմ ձեզ որ աղօթէք զինձ համար, որ Աստուած իմ մտացս բառնա Միսքանութիւն եօքսա քանի միտքս է ախախ ընելով կը մեռանիմ։

Դարձեալ, հայր իմ, եթէ հարցանես տէր Պետրոսն, զահիր ինձ ըսպասելու չէ, ելաւ գնաց, հիմի ինամի մինակ հիւանդութեամբ ելած, տէրման չունիմ. փչես կըչնիմ. մեռելի երես քուն [գոյն] կա իմը չիքա հիմի մինակ ճանապարհ ելա, օգոստոսի 20ին, ուքալով բէքալով պիտի երթամ կամաց կամաց։ Ճանապարհ ալ չէմ գիտէր, չի մեռանիմ լաւ է, պարէ մէկ մարդ մալ ընկեր չունիմ քովս որ զիս մխիթարէ, անմխիթար եմ ինամցէր. միայն Այ եմ ապաւիներ. իբրև հայր և մայր ձեզ ճանաչեցի, ձեզմով կը մխիթարէյի. դուք ալ ելաք ձեռացս, ախախ ընելով պիտի մեռնիմ, կաղաչեմ ձեզ աղօթեք վասն ինձ ամէն։

Դարձեալ իմ սիրելի հայր իմ, եթէ հարցանես պատերազմի կողմն, գոհութիւն քրիստոսի, օգոստոսի տասն և ինին խաղար եկաւ թէ տաճկին ճակատն աւերեցինք, մեծ ուրախութիւն եղաւ քաղաքին մէջ։ Ցոյս ունինք թէ յետ երից աւուրց պելիրղատ ալ կառնեն Ամէն...։

Ես տիրացու Գրիգորս ողջոյնս մատուցանեմ և առ ամենեսե միաբանից ձերոց

Ամի Տեառն 1717. օգոստոսի 20 ի Վենետիկ։

Է.

Սերաստիոյ Ցուվնան եպիսկոպոսին նկատմամբ արդէն բաւական տեղեկութիւններ տուած են մեզ Մխիթարայ հին և նոր կենսագիրները։ Առանձին գլուխ մ'ալ կը գտնենք Հ. Գ. Գալեմքեարեանի «կենսագրութիւններ երկու Հայ Պատրիարքներու և Տասն Եպիսկոպոսներու և ժամանակին Հայ կարողիկոսաց» անուն հատորիկին մէջ, ուր ժամանակագրական կարգաւ կը յիշատակուին Ցուվնանու կենաց և գործոց գլխաւոր կէտերը՝ ընտիր ուսումնասիրութեամբ մը։ Մեր հոս ներկայացուցած նամակը ունի փոքրիկ նորութիւն մը սա տեսակէտով, որ մինչ Հ. Գալեմքեարեան կը գրէ որ այս միջոցին (այսինքն առաքելութեան շրջանէն) մհայն ժամօր է որ 1706ին Սպահիայեն 58 դաւնական ողորմութիւն դրկած է չքաւոր Ազբահօր, Ցուվնան եպս. ինքնագիր թղթէն կ'իմանանք, ի մէջ ուրիշ տեղեկութեանց, որ Հռովմէն առ Մխիթար ղրկեր է նաև ողորմութիւն 1717ին « տասն և մին տօպլի և կէս և բ (երկու) սիվիլա »։

Վերապատուելի տիդ Մխիթարի Ազբայի և Ջծապահուբեան վրդպտի.

Ջգիր վերապատուելութե քո զգրեալն ի յգստսի իը. ընկալայ ի սպտմբրի ա. որով ծանեա զողորմութին այն հրկւոր գոլ այժմ յղելն առ վերապատուելութիդ. և յոյժ ուրախ եղէ ազդ առնելն իմ զնա փութով, նա ևս գրեալ էիր թէ լաւ է փոստիւ ուղարկել, զի է սիկուռ, ահաւասիկ, տասն և մին տօպլի և կէս և բ սիվիլիայ, եդի ներ փոքրիկ ղուդին ներ պահարանի կնքեալ. և ի վերան գրեալ է. հասցէ ի ձեռն Մխիթար ապբային, մերձ ի սան մարթին, ի վէնէտիկ, և ունի նշան զայս ՅԽՅ ։ Իբրև ընդունիցիս զնա ամբողջ, յիշեսցես զմեզ ի յաղօթս. և հայցիցես ի տնէ վս մեր, պարգևել մեզ զնորհ իւր սբ երկիւղի ի սիրոյ, որ է յոյժ հրկւր։ Եւ դու լիջիր ողջ ընդ յամերամ ժմկս, ի բարձրութիւն սբ եկղցւ, ի պայծառութիւն ազգի. և ցնծութի սրտից մերոց. քիւ տբ ամէն։ Ջւրն այն աւետեաց զոր գրեալ էիր, այսինքն, զխրտկւմն տճկց, զկանգնւմն սբ խաչին ի հրապարակին Պէլէկռատու, և զբարձրացումն սբ եկղցւյն կթղկէի, կարի յոյժ հաճոյական ցնծութի էր սրտից մերոց, և իրաւի, զի գեղեցիկ և վայելուչ է ստէպ կրկնելն զցանկալի յաղթութիս այս, առ ունկս փափաքողաց, սակս որոյ բիւր գոհութիս և շնորհակալութիս պարտիմք մատուցանել այ, որ պարգևեաց զուրախութիս այս մեծ. մայրն իմ և եղբայրն իմ քո հբամանաց աչն համբուրելով ողջոյն տան, եղիայ վրդպտի և այլոց եղբցն իմոց ընդ հովանեաւ թևոյ քոյ եղելոցն ողջոյն տամ սիրով

գրբ. 1717 ի սպտմբրի գ. ի թաղն սանթ օնօֆրիոյ ի Հռոմ

վերապատուելութե քում նուաստագունեղ ծոյ Ցունան Եպս. Սեպաստիոյ

Մեր թարգման ղալաղացի տր յակոբի եղբօրորդի յարութին եկն ի Հռոմ. կամէր տօմՀնիկականի կարգն մտանել, որ թէպէտ ընկալան, սակայն ինքն ոչ հաճեցաւ ասելով, թէ ես կամիմ պտրգիչ լինիլ. նք պատճառեցին զքերկնութի չգիտենալն. սակս որոյ հրժրցւ ի նոցանէն. արդ կամի գալ ի վէնէտիկ. ես կամէի ընդունել զնա, բայց երկեա, մի՛ գուցէ խռովութի լիցի պատճու այսու ի մէջ իմ և եղեսցուն։ Ցանիր ևս. որ մէջն եղեալ գիրն խնդրեմ որ փութով հւտրմ անձի հետ յղիցես ի ձեռն պատրի վէրծօյին կամ ընկերի նորին. ողջ լեր։

Ը.

Ահա Պաշտօնագիր մը, զոր կ՚ուղղէ Խաչատուր Էրզրումեցի լուսամիտ և աստուածաբան վարդապետը, իբր Առաքելական Քարոզիչ, Ամիկոնայի Հայ ժողովրդին, անոնց հիւրասիրութեան ու մասնաւոր խնամքին յանձնարարելով իր մեծանուն բարեկամին Մխիթարայ աշակերտ Հ. Մանուէլը (Խուպիարեան Կ. Պոլսեցի), որ բժշկին խորհրդով և հրամանաւ մեծաւորին հոն կ՚առաքուի՝ վերագանգնելու համար իր առողջութիւնը։

Յիսուսի Քրիստոսի Ծառայ ի Տէր Խաչատուր Վարդապետէս հասցէ Յիսուսաւանդ ողջոյն, և բազմազան օրհնութիւն ի վերայ մերազնեաց ի Ամիկունա քաղաքի եղելոց Քրիստոսասէր հաւատացելոց։ Ցանուցումն լիցի սիրելեացդ իմոց ի Տէր, զի փրկիչն մեր ասէ ի սրբում Աւետարանի. Ցայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ Ապա ուրեմն որք սիրեն զեղբայր վասն սիրոյն Քրիստոսի, նոքա աշակերտք են Քրիստոսի և որդիք ալքայութեան։ Սիրելն է առնել զգործս սիրոյ։ Մինն ի գործոց սիրոյ է, ժողովել զօտարս և ընդունիլ զհիւրս։ Ցանուցումն լիցի բարեպաշտասիրութեան ձերում, զի այս թղթաբեր Տէր Մանուէլս է մինն ի պատուագունից Աբեղայից Մխիթարայ Աստուածաբան վարդապետի Սեբաստացւոյ, որ վասն իւրոյ մեծի գերազանցութեան, է պարծանք ազգիս մերոյ։ Այս Տէր Էմանուէլ Աբեղայս անկեալ է ի խօթութիւն, առ որոյ փարատումն հարկաւոր համարեցաւ փոփոխումն օդոյ ի բժշկաց։ Ուստի մեծաւոր սորին յիշեցեալ Մխիթար Աստուածաբան բարձրն վարդապետն ի խորհրդոյ բժշկաց առ փոփոխումն օդոյ, հարկադրեցաւ զյիշեցեալ Տէր Մանուէլ Աբեղայն առաքել այդր առ ստացումն ապաքինութեան։ Ազերսանօք հայցեմ ի բարեպաշտութենէ ձերմէ, զի յիշեցեալ Տէր Մանուէլի Աբեղայի, յայնմհկ, յորում կարօտանայցէ օգնականութեան ձերում, չարժեցեալք ի սիրոյ յօժարաբար ի թիկունս հասանիցէք, որպէս վայելէ բարեպաշտութեան ձերում, զմեծամեծ վարձս ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ ընդունելոցք։ Այդ յանձն արարեալ զձեզ Աստուծոյ և շնորհի նորին, և զիս աստուածընկալ և աստուածահաճոյ աղօթից ձերոց, ինամ

Աստուածահաճոյ բարեպաշտասիրութեան ձերոյ.

Ի վենետիկ
1717 սեպտեմբերի 22

Պատրաստական յամենայնի
Խաչատուր վարդապետ Էրզրումեցի
Առաքելական Միսսիոնար առ Հայս

Թ.

Բարդուղիմէոս վարդապետ այս առաջին նամակով կը սկսի թղթակցութեան մտնել Մխիթարայ հետ։ Աւելի կը հրատարակենք զայս՝ գրութեան ձևին համար՝ որ եզականութիւն մ՚ունի։

Ա. Հռչակալոյ և գերապատուելոյ տեառն Մխիթար վարդապետի և վանահօրեղբարն Ամենդարձեանցն սիրոյ և հաղորդակցութեան եկեալ ձօնեացի ողջոյն

Առաքինասէր վարդապետութիւն և բարեկրօն վանապետութիւն քո, թէպէտ ի տեսութենէ զգայականի ոչ էր ինձ երբէք պատկեր առ պատկեր ծանօթացեալ, թէև կարօտիւ ախորժականաւ ի վաղուց հետէ ականատես նորա լինիլ, և ընդ նովիմբ հոգևորապէս խրախճանալ մերթ առ մերթ փափաքիցէի, սակայն ի համբաւունակ հռչակմանէ ի ձեզայնոց վարուց բարեկրօնից, ի պաղոց քոց վաղահասից ի վերայ անդիտապատում արմատոյն առաքինութեան և գիտութեան պատուաստեցելոց, ի յաչխատանաց քոց յարատևեցելոց, որք ի ուղղութիւն նկրտին ազգին մերոյ, ի հոգեշահից գրեանցն Ալպերթի ի քէն մեծաւ չանիւ կերպաւորեցելոց, նոյն ինքն լեալ էր ինձ արդէն իսկ յայտնի, և մանաւանդ ի քաղցրաբարբառոյ տրամաբանութենէ ներկայականիս, զոր ի չորեքտասան ընթացելոյն ձեռնամուխ լեալ ժառանգեցի, նորում վաղնջականի բարեկամութեան, անստգտանելի վարդապետութեան, անբամբասելի մեծաւորութեան, ամբաստիրի վերակացութեան, և սիրալիրականի վանապետութեան քո, և բնաւից քոյոց կրկնակաբար եղէ վերահասու։ Ուստի թողլով զարտաքին արարողութիւնն, վանապետական գերապատուելութիւն քո, զոր ի ներքինայնոյ համբարանէ սրտի իմոյ սիրեալ էի, և նոյնոյ իւրայնօքն հանդերձ իսկոյն սիրահարեալ սիրահարիմ, իրազեկ լեալ, խելամուտ լինի հաւաստեաւ, զի զոր ինչ լուեալ է՝ զինէն, այն ամենայն ճանաչի եկեալ ի բազմազեղից չնորհացն ոգւոյն սրբոյ, որ ըստ հաղորդակցականի բարութեան իւրոյ ուր կամի աննախանձ չնչէ, և բաչխէ առատապէս զգանձս անհոսելի իմաստութեան անձանձրիւ երկայնմտութեամբ հայցողաց։ Վասն որոյ այն ամենայն եկեալ ի պարգևաց ոգւոյն սրբոյ ի պատիւ երանեցելոյ կուսին ի վայելչութիւն վհհաբարձրութեանց սրբոյ ժողովին, և ի համբաւ արամեան ազգին առընչացաւ, մինչ զի ածմոյս ձեր սիրելութեան այլ ոչինչ մնաց, եթէ ոչ ես իմովս բոլորովիմբ. որ թէպէտ ի մեծէն հռօմայ այդր գալ կամ եղև ինձ ախորժանօք և բազմիցս և ընդ ձեօք հաղորդակցիլ բանիւ Տեառն, և զանդրադարձական կարօտութեան փափաքն համաբաստանալ, սակայն, կամք տեառն օրհնեալ եղիցի, վասն բազմից պատճառաց և մանաւանդ վասն ծանրութեան բեռին իմոյ, որոյ խարճն չատ էր և պատչաճաւորի նաւին, որոյ այդր գտանելն աներկբայ ոչ լինէր, հարկ եղև հրամանաւ մեծաւորաց աստի անցանել. բայց աստ ևս մինչև ցայս վայր արգիլեալ մնացի, զվաղճան սուրբ տեսցուք ի բարին։ Ջբազում զեկուցումն կարէի գերապատուելութեան քո աստի ծանուցանել, բայց գիտեմ, որ յեղբօրէն մերմէ թէ ոչ է տեղեկացեալ, կարող է մտերիմ լինիլ, զի ես նմա, ասեմ խաչատուր Աստուածաբանութեան վարդապետին մի ըստ միոջէ ծանուցեալ եմ։ Տէր լմանուէլն աստ եկեալ էհաս, որ է՝ բազմաժամանակեայ բարեկամ և առաջին խոստովանահայր իմ, և ինձ յոյժ սիրելի, սակայն, աւաղ խառնակ ժամանակիս, ոչ կարեմ նմա ըստ ըղձանաց իմոց ձեռնտու լինիլ, բայց հոգևորապէս ոչ պակասիմ ըստ կարեաց իմոց մինչև անցէ բարկութիւն Տեառն. ես ամենևին ձեր եմ։ Մեծաւ սիրով ողջոյն ընձեռեմ բնաւից միաբանութեան քո եղբարց ճանաչողաց, և զիս անճանաչողաց և մանաւանդ քաղաքակցաց իմոց։ Դարձեալ որդիականաւ սիրով և կարօտիւ զբազմազան ողջոյն մատուցանեմ գերապայծառութեան Չօր իմոյ Արութիւն Եպիսկոպոսին։ Արդ հայցեալ ի Ցիսուսէն իմմէ վանապետականի վերապատուելութեան քո զամենայն առողջութիւն և խոհեմական արիութիւն, և յանձն արարեալ զիս բարեկրօնից աղօթից և սրբազանից պատարագաց քոց, և քոյոցն քրկախառն համբուրիւ մնամ պարաւանտեալ ամենայնի.

Վանապետականի գերապատուելութեան քո

Ի Ալիկօռնա թուին փրկչին
1717 *յոկտեմբերի 15 ի տան*
պարոն ուռուստամի

Անպիտան ծառայ Բարդուղիմէոս
վարդապետ յերկրէն Եւդոկիոյ անարժան
Նուիրակ Առաքելական

Ժ.

Հ. Գ. Գալեմքեարեան իւր «ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԿՈՒ ՀԱՑ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐՈՒ ԵՒ ՏԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ» գրքին մէջ յատուկ գլխով մը կը խօսի մանրամասն՝ հետագայ նամակիս առարագրողին՝ Յարութիւն եպիսկոպոսի վրայ, այս վերնագրով. «Յարութիւն Վ. Լեհենաց Կ. Պոլսոյ, Արք. կեսարիոյ Պաղեստինացւոյ (1670–1738)։ Հ. Ալիշան Հայ Վենետիկ մէջ 1716ին ի Վենետիկ կը յիշէ զանիկայ։ Սա արդէն Պոլսեցի կաթողիկէ հայերու հետ 1718 մայիս 6ին՝ Վենետկէն գրած է Մխիթարայ և անոր միաբանութեան կաթողիկէութեան մասին վկայական թուղթ մը՝ որ յետոյ հրատարակուած ալ է։ Ահկէ երկու ամիս վերջն է որ կը գրէ մեր հրատարակած նամակը, որուն մէջ ի Հռովմ երբեմն անցուցած իր օրերուն յիշատակութիւնը անշուշտ կը հայի 1712 թուականին, յորում կատարուած է Պիոս Ե.ի սրբացուցման ժողովը. «Սոյն Համագումարին մէջ, որ երեք Նիստ ունեցած է, բազմած էին Հռոմայ բոլոր կարդինալները, լատին, յոյն, սաորի, քաղդէացի կաթողիկեայ Հայրապետներ։ Այս բազմականաց մէջ էին նաև հետևեալ հայ կաթողիկէ բարձրաստիճան եկեղեցականներ՝ Մատթէոս Յարի, երբեմն կաթողիկոս Սսոյ և պատրիարք Կ. Պոլսոյ. Գրիգոր Աբգեպ. Եղեսիոյ. Գէորգ Բենիամին, Եպիսկոպոս Եղեսիոյ, Յովակիմ Ջուղայեցի Արքեպիսկոպոս Էջմիածնի և Յարութիւն Անտիոսաց, Արքեպ. Կեսարիոյ Պաղեստինոյ» (կենս. երկու Հայ Պատրիարքներու. էջ 137)։

Ինքն ալ, միւսներուն պէս, ըստ կանոնական սովորութեան իր չորս վկայութիւնները կարդացած է առ Ս. Պապն՝ ներկայացուած խնդրոյն վրայ (Անդ)։

Յարութիւն արքեպիսկոպոս կու տայ նաև առ Մխիթար ինչ ինչ պատմական տեղեկութիւններ Պոլսոյ անցուդարձերուն շուրջ։

Գերաւնծարի և առնելապատուելոյ Տն Տն Մխիթար

Աբբայի և Ծերաբնութեան Վարդապետի

Գերարգելի Վեհանձնութեդ Ցսպարգև ողջոյնն բազմաւ կա(ր)օտիւ և սխրատարած սիրով մատուցանեմ. և յայտ առնեմ վերոյ գրեցեալ տնդ. զսիրաբեր գիրն ընկալայ չնորհակալ եմ. բայց խնդրեմ զի ներիցես ինձ որ այսքան ժամանակ ծուլացա գրել. և ևս ուրախ եմ որ մեծաւորք տեղոյդ այնքան սիրով ընկալեալ են զտրուիդ. մանաւանդ սրբազան Հայրապետի մեծամեծ սէրն. լուեալ բերկրեցայ յոյժ և յուսամ թէ ամ ինչ ըստ կամաց տնդ լինելոց է. նայև տրուի քո գրեալ էր կոշտութեան քարանց և գիհոչին մեծի քղքիտ. այն փոքր ինչ է սիրելի բայց խնդրեմ. եթէ մին տեղ գնաս մի ըշտապիցիս ի ճանապարհին զի մի քրտնիցիս. ինձ մին քանի անգամ պատահեր է ի տեղւոյ. մին անգամ յովաննէս վարդապին հետ մինէրվայ գնացինք ևս չուտով քալեցուց չապիքս դրջեցաւ ետոյ քանի մի օր տկարացայ. վս այն յիշեցուցանեմ. և ոչ գանկատիմ. եթէ տեղոյս և զմեր որպէսն հարցանես քոյին սբ աղօթիւքն այժմոյս ևս լաւ եմք. բայց եկեղեցուն խցէն վաղուց ելա այն կրակէն յետոյ մին ահ անկաւ սիրտս. քանի մի օր տկարացայ. յետոյ տէր ղուկասն հառի հետս միատեղ կու կենամք. նայև պատեբազմէն մին ըստուգ խօսի չի կայ ոմանք պարըշ կասեն և ոմանք կռիւ է կասեն. որն եզերելոց է չեմք գիտեր. նահապետն եկաւ ըստամպօլու. ասաց թէ ինը նաւ թագաւորական և երկու մսրայ ընդուեր է. ը դալաֆաթ անելն այրեր է և մինն ճէպէխանան նետեր է երկուսն դումդաբուին առաջևն կոտրեր է. և մինն պօղազն կոտրեր է. մինն սէլա-

նիկու ճանապարհն. և մինն սախզու առջևն. երեքն մսրա ճանապարհն։ Այլև սպանեօլի կողմէն կարծեմ ձեր հրամանքն այլ լաւ տեղեակ էք։ Այս բանս բաւեսցի։ Եւ յանձնեմ զանարժանութիս իմ ի մաքրափայլ յաղօթս ձեր. ողջ լերուք տը յիւ։

Գերապայծառ Տեառն
յունան եպիսկ հարազատի
սիրով ողջոյն մատուցանեմ

Գերյարգոյուե ձերոյ ծառայ
Ցարութիւն եպիսկոպոս
գրցւ 1718 յուլիսի 23 ի վէնէցիայ

ԺԱ.

Պատմութիւնը մեզ կ՝ասանդէ որ 1718 յուլիս 21–ին Օսմանցւոց և Գերմանացւոց միջև հաշտութիւն կը կնքուի Փասսարովիչի մէջ։ Վենետկեն կը ղրկուի Թալմանի կոմսը և վիրմոնտ իշխանը. իսկ վենետկէն Ռուցցինի ասպետը՝ իբր պատուիրակներ ժողովոյն՝ որ կը սկսի յունիս 5–ին և տասներկու նիստերէ վերջ հաշտութեան պայմանները կը հաստատուին։

Արդ, ատոր հրատարակածնիս, որ առանձին թղթի մը վրայ նոտրագիր կը գտնուէր մեր Դիւանի 1718–ի հաւաքածոյին մէջ, ծանօթութիւններ են սոյն ժողովի՝ վենետկոյ Հասարակապետութեան հետ առընչութիւն ունեցող յօդուածներու մի քանի մասերուն։ Թէ ինչո՛ւ մասնաւոր ուշադրութեան առնուած են այն կէտերը. մեզ կը թուի որ նոյն ժամանակի վենետկոյ կամ հոնկից անցնող Հայ վաճառականներու գործոց դիւրութեան ու ձեռնտուութեան համար եղած ըլլայ։ Թուղթս ատոր ցուցմունք չունի, բայց հաւանօրէն Մխիթարեան աշակերտներէն միոյն գործն է։

Ծանօթութիւնք ի վերայ յօդուածոց ինչ հաշտութեան (այսինքն պարըշի) եղելոյ ի բոզարովիչ ի 21 յուլիսի 1718 ընդ մէջ սուլթան ահմէտի և վէնէտիկեան Հասարակապետութեան, յորս ճառի յաղագս տուրհառուութեան և վաճառականութեան հպատակաց (այսինքն ռայէից) երկոցունց կողմանց, որք առնեն վաճառս յերկրի տէրութեան երկուց կողմանց, որպէս երևի ի յօդուածն ԺԳ. ԺԵ. ԻԵ։

ա. Ապացուցութեամբ գործոյ յայտնի ցուցանի, զի վէնէտիկեցի վաճառականք, ոչ միայն բնակեցեալքն (այսինքն սափին օլանլար) ի բազում ամաց հետէ յերկրի տէրութեան օսմանցւոց. այլ նաև որդիք նոցա ծնեալք ի նմին երկրի տէրութեան օսմանցւոց, ոչ երբէք ստորադրեցան, և չեն իսկ ստորադրեալ իմիք հարկատուութեան (այսինքն խարաճի կամ վէրկիի) ի 1718 թուականէ անտի և այսր։ Եւ թէպէտ դաշնագիրն (այսինքն ահտնամէն բոզարովիչու ի յօդուածն ԺԳ. ենթարկէ խարաճի (որ է հարկ ինչ դուզնաքեայ) զայնոսիկ, որք բնակացեալ են (այսինքն սափին օլանլարը) ընդ օսմանցւոց տէրութեամբ. սակայն այս հարկ ոչ երբէք պահանջեցաւ ի նոցանէ։

բ. Ետաներորդ յօդուածն բացայայտ դնէ, թէ հպատակք (այսինքն ռայէք) երկոցունց կողմանց որք տուրհառիկ լինիին յերկրի տէրութեան երկոցունց կողմանց՝ կարող լիցին տուրհառաւ և վաճառս առնել անդորրութեամբ և ապահովապէս, առանց ուրուք արգել լինելոյ նոցա*։ Եւ քանզի սովորութիւն անընդհատ հանապազորդեալ՝ ստանայ զուժգնութիւն օրինաց և դաշնադրութեան, սմին իրի օսմանցիի ըռայէ վաճառականաց՝ անաղարտելի իրաւունք ի ճահ պատկանին՝ պահանջելոյ փոխադարձ արդարութեամբ և իրաւամբ, զի հաւասար օրինակաւ վարեսցի ընդ նոսա։

---

* Ընդդէնալք բնագրին կողմանէ են։

գ. Իբրև կամ եղև երբեմն անցեալ տէրութեանն վէնէտկոյ դնել ի վերայ յօհաննէս աղայի սեղբոսեանց զհարկ վաճառականաց 30 արծաթ տուգաթիից ի տարւոջ. ի բողոքել նորա՝ առժամայն ազատ կացուցաւ և ոչ երբէք վճարեաց զայնպիսի հարկ մինչև ցայսօր։

դ. Եթէ դէպ լիցի այսմ նորոյ տէրութեան վէնէտկոյ բռնի մուծանել զայս նորութիւն, դնելոյ արտաքոյ կարգի զհարկ ի վերայ հպատակաց օսմանցւոց, հաւանական է յոյժ, թէ և օսմանցւոց տէրութիւնն ըստ նմին օրինակի ծանրաբեռնեսցէ հարկօք զվէնէտիկեցի վաճառականս զբնակացեալս յընդարձակ տէրութեան իւրում, որք անհամեմատ առաւելութեամբ են բազմաթիւ. յորմէ զհետ գայր և այս, զի վէնէտիկեան տէրութիւնն յառնուլն ասէին զգուշար ինչ հարկի եդելոյ ի վերայ օսմանցի հպատակաց՝ պարտաւորեսցէ զվէնէտիկեցիս զբնակացեալս ի տէրութեան օսմանցւոց վճարել մեծամեծ առժամնօք իւրեանց ազգին՝ զևս առաւելն, որովհետև դիւրին է օսմանցւոց տէրութեանն պահանջել ի վէնէտիկեան ազգի զի սկսեալ ի 1718 թուականէ և այսր՝ վճարեսցի ինքեան ոչ միայն խարաճն, այլ և ամենայն այլ հարկք ըստ օրինակին՝ որով վճարեալ եղեն յիւրոց հպատակաց։

ե. Նոր տէրութիւնն վէնէտկեան ի պահանջելն զայսպիսի տարակոյսն հարկս ի հպատակաց օսմանցւոց՝ առիթ տայր Տէրութեանն (այսինքն Թէվլէթին) համարելոյ զայն ինքեան ի նախատինս՝ և վասն այնր չարժելոյ ի ցասումն. մանաւանդ զի ի Իե.րդ յօդուածն Ահմատէին յայտնապէս ասի. թէ մի ևնդհանրին պահանջմունք պատուհասցին տրոց, և այլոց ևորոգ սահմանեալ հարկաց*. և յայսմանէ զհետ գային նմա անդք դժկամակք՝ ոչ միայն ընդ օսմանցւոց տէրութեանն, այլ նաև ընդ այլ ամենայն ազգս եւրոպէացւոց. որոց մարդիկ ոչ միայն ի բազում ամաց հետէ բնակացեալ են յերկրի օսմանցւոց տէրութեանն, այլ և ըստ մեծի մասին ծնեալք անդէն, և սակայն ընդ երկայն ամս յաջորդական սերնդոց համարեալ են ընդ փրանկս, և վայելեն ի բազում ապահարկութիւնս։ Եւ ևս տուեալ լինէր առիթ դեսպանաց և մինիսթրոյից այլոց ազգաց եւրոպէացւոց՝ նախանձաւորաց վենետկեան տէրութեանն՝ առեալ առնելոյ զնա յաչս օսմանցւոց տէրութեանն։

ԺԲ.

Հ. Եղիա Մխիթարայ աշակերտ և Ա.Թոռականը՝ հետագայ գիրը Աբբահօր կը ղրկէ ի Հռոմ, ուր մայիսէն ի վեր կը գտնուէր՝ արդարացնելու համար Միսթանութիւնը։ Ինչպէս այս, նոյնպէս ամէն նամակներու մէջ Հ. Եղիա շատ խղճամիտ կերպով մանրամասն կը տեղեկագրէ Միսթանութեան անցուկացը, և ամէն անգամուն կը հաղորդէ ինչ լուր որ արևելքի դէպքերու և խնդիրներու շուրջ առանայ ուրիշներէ։

Գերյարգելոյ Տն Մխիթարայ Աբբայ Հօրն

1718 յուլիս 23

... Նահապետն պատմեաց, թէ մեռաւան նաւ տաճկի, թէ թգւրկն և թէ պազիրկեանի, ումանք կոտորեցան և ումանք այրեցեալ ի վրաւուզ եղեն, որոց զհինկն աչօք իւրովք տեսեալ է, և զայլսն լուեալ։ Տեսելոց մին այս է, զի մի պէյլիկ նաւ առաջի Թերսխանայիին այրեցեալ է, և միւս ևս որ էր մերձ նորա, մինչև Ջանացեալ է կարել զչուանն և փախչիլ, զնոյնն ևս հողմն տարեալ հպպեցուցեալ է ի յառաջնոյ հրդեհեցեալ նաւուն. վերակացուք իբրև տեսեալ են, մի սայլով 400 մարդ յղեալ են առ նոսա երթալ մարել. վասն որոյ նոքա ևս հրդեհեցեալք են, և յա(յ)նցանէ հուր անկեալ է ևս ի տեղին,

ուր քերեստէ նաւուց կուտեալ են, զնոսին ևս հրդեհեալ է: Դարձեալ և պատմէ՝ թէ բազումք ի յերևելի անձանց փախեան ի ստամպօլու և ցրուեցան ի կողմանսն անատօլու վասն երկիւղի զօրացն էքրատորի, իբրև տեսեալ զայս իշխանաց մեծաց, որ յօր(ը)ստօրէ դատարկանայ քաղաքն, սկսեալ են հռչակել թէ խաղաղութիւն է, նա և իսկ հրամանաւ արգելեալ են:...

... գիր եկն առ մեզ ի սօփրամանաստրիցն, և գրեալք են, թէ աստի մինչև ցութ օր, գրեցէք մեզ զթիւ անձանց ձերոց, զանուանս իւրաքանչիւրոցն յատուկ յատուկ տանն անուամբք, քանի են կարգաւորքն, այսինքն քահանայքն, և որքան են եղբարքն, այսինք(ն) ֆռաթքն և թէ ինչ քարիքայի վերայ էք, և ըստ ոմանց հմտագունից, կամին զապա-թուն իշխանութիւնն իմանալ արդեօք յաւիտենական է, թէ ժամանակաւոր: Եւ ևս թէ որով եղանակաւ տրեցեալ եղև ձեզ մենաստանս այս: Եւ իբրև ընկալաք զայս, գնացաք առ նանին...: Այս բան ոչ է նոր ինչ, և ոչ վասն մեր միայն, որովհետև վասն կարգաւորաց կարգեցեալք են, իբրու քննիչ և տէր, կամին այժմ տեղեկանալ զմէնջ, թէ ովք են և որքանք են, որպէս զի ընդ այլ եկեղեցականս անցուցանիցեն ի յարցանագիրս իւրեանց, որպէս օրէն է տեղւոյս վերակացուաց վանորէից, թէպէտ նախապէս դոյ(զ)ն ինչ երկեայ, բայց յետոյ տեղեկացեալ, սրտադիւր եղէ...:

Նուաստագունեղ ծառայ
Եղիա վարդապետ
ծառայ ծառայիցդ

ԺԳ.

Մխիթարայ աթոռակալին մէկ ուրիշ նամակէն, զոր Հռովմ ղրկած է, կը քաղենք երեք հետաքրքրական պատառիկները, յորս դիտելի է թէ 1718ի չորութիւնը ո՛րքան աւելի զգալի և սարսափելի եղած է ի վենետիկ, քան վերջին տարուանս (1921–ի) սաստիկ չորութիւնը:

Կը տեսնենք նաև որ անմարդաբնակ և անտես թողուած Ս. Ղազար կղզին, ինչպիսի՛ մեծ հռչակ կը ստանայ՝ այն ինչ Մխիթար իրեններովին հանդերձ հոն կը մտնէ ու կը սկսի ամէն տեսակէտով բարեզարդել:

Գերապատուելոյ տեառն տեառն Մխիթարայ՝ Հօրն մերոյ Աբբայի

... դժուարաւ գտանի այժմ չուրն, այնքան սաստիկ և չատ բերին չրաբերքն ի քաղաքն, մինչ զի փաուայու զետն նուազեցուցին, այժմ յայլմէ զետէ բերեն, և մեծ նաւ չի բանիր, վասն սակաւութեան և նուազման չրոյն: Ցերեկեան օրն հիւր ունէաք, և լաւ չուր ոչ. այսօր երկու երեք պարխաճ հազիւ գտաք, ես միշտ ի կասկածի է(ի), թէ յաւուր միում ընտանիքն սանմառթինու փիօվանին բաց ասեն, և ոչ տայցեն զչուր մերայնոց, որ միշտ անտի առնուն. այսօր լուայ որ նա ևս բաց ասացեալ է, և այս ոչ է մեղադրելի, սոքա գնեն մի սօլտի զալարխաճն...: Այսքան աղօթք, և աղաչանք՝ չեղև որ մին լաւ անձրևէր. և թէ յայս ամ ոչ տկարանամք և անվնաս անցուցանեմք, գիտասջիք, զի այլ ոչ եմք տկարանալոցք:...

... Վերափոխման Աստուածածնայ օրն մին պսակ եղև յեկեղեցւոջ մերում, սեպուհ էր փեսայն, նախապէս հարցաք սանճիպինեանի փիօվանին, և ապա թոյլ տուաք գալ, ասաց փիօվանն, մակարի թէ յամենայնում կիրակէի գային, զի աստ սովորութիւն է, և ոչ է դէմ պատրիա(ր)գին կամ փիօվանին, ազատ է այս գործ, ուր կամին գնան, մանաւանդ ըստ մեծի մասին կարգաւորաց եկեղեցին գնան և անդէն պսակին, բայց հարկաւոր է զի քահանայն լիցի հարսին քոնդրատէն, եկեղեցոյն չահ այս լինի, որ բերած մոմն անդէն թողու, հայոց ժամն ևս գնան, նա և քափուճոջ, և այլոց կարգաւորաց եկեղե-

ցիսն, մանաւանդ այնց որք են հեռի ի քաղաքէն։ Կնքահարք մեծամեծք անձինք էին...։ ...եկող գնացող, թէ հայք և թէ Ֆռանկք բազումք են, ոչ անցանի օր, որ ոչ գայցեն օտարականք, յանցեալ կիրակի կանուխ եկին ոմանք ղաբանցիք առ ի լսելոյ զպաշտօնն, այսինքն զգիշերաժամն և զձայնաւոր պատարագն...։

Նուաստագունեղ ծառայ
Եղիա վարդապետ

Թուին փրկչին 1718
Օգս. 20 ի Վէնէտիկ

ԺԴ.

Աբբահօր կը գրէ ղարձեալ Հ. Եղիա ազգային շահեկան տեղեկութիւններ։ «Օգէնտ եպիսկոպոս Մաճարու» ակնարկութիւնը անշուշտ կերլա հայաքաղքին հիմնադիրը Օգէնտ վրդպտ. Վրզարեանն է, որ Դրանսիլվանիոյ Հայոց եպիսկոպոսն էր. (տես Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ Հ. Գրիգոր Վ. Գոլվրիկեանի, այժմու Աբբ. և Ընդհ. Աբբահօր Մխիթարեանց Վիեննայի)։

Գերապարգևելոյ տեառն տեառն Մխիթարայ վարդապետի
Աբբայ Հօր մերոյ

... իմա զայս, զի ի մաճարոյ ոմն քահանայ եկն աստ (զայս յօնան եպիսկոպոսն չիմանայ), ընդ նմա գոլով եղբօրորդի օգսէնտ եպիսկոպոսին մաճարու, ինքն է իբրև չորեքտասան ամաց և կամ հնգետասան ամաց, և եկեալ է ընդ քահանային գալ ի հռօմ մտանել ի գուլէճն, իսկ քահանայն է յայն քաղաքէ մաճարոյ, որ է բուն հայոց՝ սրեցեալ ի կայսերէն[1] նոցա, իշխանութիւն դատելոյ, այսինքն ունին իշխանութիւն դատաստան առնելոյ։ Գոն աւելի քան զերեք հարիւր տունք, և բարւոք մեծ քաղաք իմն է դաշտաւոր, և ի սմին նահանգիս գտանին աւելի քան զութ հարիւր տունք հայոց. բայց զի ժողովուրդ այսորիկ քաղաքիս, թէպէտ ի ժամանակս օգսէնտին լեալք են ուղղափառք, սակայն այժմ ոչ են այնպիսի որպէս էին երեկն և եռանդն. և այս թէ մեծամեծք և թէ ռամիկք. միայն զշուր խառնելն ունին ի պատարագ, և համբաւեն զինքեանս գոլ ուղղափառ առ պետութիւնս քրիստոնէից, թէ առ հռոմայեցս և թէ առ մարմնաւորս, այսինքն թէ առ եպիսկոպոսս և թէ առ իշխանս ենթ որոց են, բայց ի ժողովս և ի յեկեղեցիս իւրեանց վարին, գրէթէ այնպէս ամենևիմբ որպէս հերձուածող հայսն, թէ ըստ ոտնին և թէ ի յայլս բնաւս ծէս և ի յաւանդութիւնս։ Եւ այժմ ոչ ունին զեպիսկոպոս կամ զհովիւ ոք. իսկ այս քահանայս գոլով բարեպաշտ՝ տեսեալ թէ ոչ կարէ նոցա օգտել, դիմեալ է աստ գալ, և տանիլ գնաչաւուր վարդապետն ի քաղաքն այն, առ ի ուղղել զնոսին քարոզութեամբ և խրատիւ. և կամ թէ սա ոչ երթիցէ, դիտէ գալ ի հռոմ, և խնդրել զմի ի տղայոց դպրատանն և տանիլ անդ։ Իսկ խաչաւուր վ. ընկալեալ զսոյն քահանայս, ասաց նմա, թէ քեզ ոչ տան զոք ի տղայոց դպրատան, կացջիր աստ, և գայ աբբայ հայրն, և նա տացէ քեզ զմի ոմն ի վարդապետաց, և տարցես անդ. և այսպէս գքահանայն իմով թոյլատուութեամբս արգելեաց աստ մինչև ի գալ քոյ։...

Ի Հռմի տեառն 1718. հոկտեմբերի 12
ի քաղաքն Վէնէտիկու

Փոյոյ գերազանցութեանն
Նուաստագունեղ ծառայ
Եղիա վարդապետ

---

1. Որ է Լէոպոլտաս կայսր

ԺԵ.

Բարդողիմէոս վարդապետ այս գրով համառօտիւ կը ներկայացնէ՝ ի մէջ այլոց՝ Լիվոռնոյի մէջ Նոր Տոմարը մտցնելու իր ջանքերը, անոնց շուրջ ծագած հրատապ հարցերն ու հետևանքները։

Գևրասպատուելոյ և սիրելագունեղի տեր տեր Միխիթար վարդապետի և Աբբայի.

... Թէպէտ ըստ հրամանի Աղքեպիսկոպոսին փիզոյ զծնունդն փրկչին ըստ լաթինացւոց կատարեցի մեծաւ ցնծութեամբ, սակայն չար և անօրէն ռուստաճն խռովեցուցանելով զղափանցիսն և զայլս ոմանս, սկսան աղմկել թէ և մեք այսուհետև չեմք իտար ըստրլաճ եկեղեցւոյ, և չեմք ուզեր զեկեղեցին Հայոց, որ գոլով դժուար կռիւ, հարկ եղև քէչէնթերին, որ կամէր միատեղ լինիլն զծնունդն, առաքել զպարոն յոհաննանն առ Աբհի եալիսկոպոսն, որ տեսեալ զայսպիսի խաժամուժ մարդկան զաղմուկն, և զտարաձայնութիւնն, կամ վասն աներևոյթ պատճառի, կամ վասն ոչ առնելոյ յանձն զայսպիսի խռովութիւնս չիջուցանելոյ, զի առանց հրամանի կռանտուգային զոչինչ առնէ, գրեաց ինձ, թէ թոյլ տուր, և զանց արա զոր ինչ խնդրեն Հայք, զի ժամանակն ոչ է դիպուկ, միայն թէ զմասունս Հաւատոյ, և զկանոնադրութիւնս սուրբ ժողովին պահպանել և ի կիր արկանել ջանա, և այլն։ Վասն որոյ կրկին հարկ եղև զհին տոմարն բանեցնել, և զՋուրօրհնէքն Հայոց նայսմիկ երեք շաբաթոցն կատարել։

Իմացանք աստ յալիկոռնայ թէ մեծ հալածում է եղեալ յարևելս, այսպէս գրեալ էր ինձ մինաս վարդապետն սեբաստիոյ հանդերձ բազմաւ բանիւ, նաև լուաք ի բերանոյ Ղափուճին պատրիներոյն, որք եկին աստ ի Թիֆլիզոյ, և ասացին թէ հայք հրամանաւ կաթողիկոսին մերոյ Աստուածատուրին քանտեցին զեկեղեցին մեր նոր ի Թիֆլիզ, և զսրբութիւնն մեր կոխան ոտից արարին և զմենաստանն մեր այրեցին, այս լուր գրիւ ևս հաւաստեցաւ, որ առ սուրբ ժողովն, առաւել ևս կամեցեալ է կաթողիկոսն հայոց զբոլոր Ջահկոց եկեղեցիսն բլցնել, որք դէմ կալով Լօթիներուն վրացոց Հայոց, դիմեր են աղաղակաւ առ Շահն, և միշնորդութեամբ Իչէիին Ֆռանչայոյ ծանուցեր են թագաւորին զչարիսն, զոր գործէ կաթողիկոսն Հայոց, և թագաւորն հրաման արած լինի ֆէրմանով, թէ ուր ուրեք գտանիցի կաթուղիկոսն Հայոց, ճղեսցեն զփորն նորա, և զկաշին գլխոյ նորա բերցեն առ ինքն, և նա վրաստան ի քաղաքն Կորի փախած լինի...։

յԱլիկուռնայ թուին փրկչին
1719 յունվարի 23

Նուաստագունեղ ծառայ
Բարդուղիմէոս վարդապետ
միսիոնար առաքելական

ԺԶ.

Այս նամակը ղրկուած է Հռովմայ Ուրբանեան վարժարանի Յակոբանոս անուն աշակերտէ մը, որ Աստուածաբանութեան դասընթացքը լմնցնելու վրայ էր, ինչպէս կը կարդանք իր մէկ յաջորդ նամակին մէջ (տես Schiar. Documenti)։

Մանաւոր ուշադրութեան արժանի են նամակագրին խօսքերը ուղղուած առ Մեծ Սեբաստացին։

Մայր Դիւան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Գերյարգելոյ Աբբայ Մխիթարի բաղձալոյ Հօրդ իմոյ
ի տէր բազմաւ սիրով հանգերձ ողջոյն

Առաջին գիրն գերյարգելութեանդ, զոր յղեցեր ի ձեռն մաճառցի քահանային, եհաս առ մեզ հազիւ ի 12 ամսոյս փետրվարի՝ իսկ և յետ երկք չորս աւուրց ժամանեաց ևս միւսն, զոր գրեալ էիր ի 11 փետր.՝ եւ արդ առ երկոսինն ի միասին պարտ է ինձ այժմ այսու պատասխանել՝ Բայց նախ ծանուցանեմ գերյարգելութեանդ զայս, թէ եղեալ անջատութիւնն և տարակացութիւնն մեր յիրերաց ոչ թէ երարց, այլ ոչ ևս նուազեցոյց զսէրն և զմիաբանութիւնն, որ վերահաստեցաւ ի յանդրադարձականաց ճառնաչմանց սրտից իրերաց սիրով զգածեցելոց՝ մինչ ներկայիդ էիք մեզ. նա՝ ևս առաւել հաստատի օր ըստ օրէ սակս կարօտութեանս չերմագունի վերստին տեսանելոյ զայս տուականութիւն ձեր՝ եւ զի վկայ է տէրն բանիս այսորիկ, զի յետ որ փորձեալ ճաչակեցաք զքաղցրութիւն ձեր, և այժմ վրխպեցեալք եմք ի ներկայութենէ ձերմէ, թուի մեզ թէ կորուսեալ եմք զամենայն մխիթարութիւն. մինչ մանաւանդ զոչ ոք ունիմք աստէն ձեզ համանման՝ ուստի և բազմիցս ձանձրացեալ մեր ի զգուելի բնութեանց կամ կենցաղավարութեանցն յոգունց մարդկանց, սովորք եմ ասել զայս, թէ չիկայ աստէն այլ մարդ մի նման աբբայ Մխիթարին, և աշակերտացն նորին. ո՜հ զի կորուսաք զարս այնպիսիսս! և այլ. և զի ոչ կարեմ զբանս զայսոսիկ ընդ երկար և պայծառագոյն ճառել, վասն որոյ և ինձ սոյնս լռել պարտ է. մինչ մանաւանդ սրամտութիւն քո՝ խոթագէտ բարուք ըմբռնէ զայս ամենայն ինչ՝ Ապա յետ այսորիկ չնորհակալ եմ զի արժանի համարեցեր ծանուցանել ինձ զփափագեցեալ բացորոշումն որ յաղագս ժամոյն հայոց. քանզի արդարև ոչ յայլմէ ումեքէ զայս իմանալոց էի, եթէ ոչ ի գերյարգելութենէդ, մինչ ոչ գիտէի ումբ հարցանել զիրէ այսպիսւոյ՝ Նա ևս իբրու յուսահատեալ էի թէ յառաջանայցէ, և կամ թէ ելանիցէ այսպիսի օգտակար, համեմատ բացորոշումն. գոհութիւն Քրիստոսի, որ վասն սուրբ արդեանց և քրտանց քոց, թոյլ ոչ ետ գնալ ընդ վայր և փճանալ. կամ ամենևին գոլ անարդիւնաւոր սակաւագոյն աշխատանաց՝...

Իսկ արդ ամենեքին որք աստէն ճանաչեալ են զքեզ, և որոց անդէն առաքեալ ես զգիրս, միշտ յիշատակեն զքեզ, և մեծարեալ գովեն զամենադրուատելի, և հերոիքական գործս գերյարգելութեանդ՝...

Գերյարգելութեան քոմ

Նուաստ և չերմեռանդ
ծառայ Ստեփաննոս

Թուին Քրիստոսի 1719 փետր. 18
ի Հռոմ

ԺԷ.

Ամենափայլուն ապացոյց մ՝է անկեղծ ու մտերիմ բարեկամութեան, զոր ցոյց կու տայ Ներքանեան վարժարանի ամենապայծառ հայ դէմքը Թաչատուր վ. Ղրզրումեցի՝ առ իւր սրտակից փարելին Մխիթար՝ Նա իւր վերջին կամքին գործադիր, ու միանգամայն (բացի քանի մը կէտերէ) գլխաւոր ժառանգորդ կը կարգէ «Մխիթար Աբբահայրն, կամ զնորա զո՛ որ և իցէ յաջորդսն, որ զկնի մահուան գտանիցի կենդանի». յետին անգամ մ՝ալ կարծես գաղափարակից ու պաշտպան կանգնելով Մեծ Աբբային հեռատես ու գեղեցիկ ղիտաւորութեանց ու ծրագիրներուն, որոնց դիւրացման մասին այնքան աջակցութիւն ընծայած էր իւր կենդանութեանը՝

Ներակին սկիզբը՝ յետ անուան՝ պարապ թողուած է. յայտնի է՝ Հաւատով դաւանութեան՝ յատկացուած՝

Ապա կը սկսի անմիջապէս մի առ մի նշանակել իր արտայայտութիւնները՝

Յաւուր ի տորդի Ապրիլի 1719, ի վենետիկ

Ես խաչատուր Առաքել վարդապետ

Արդ՝ կամիմ ամենևին, զի իսկոյն յետ մահուան իմոյ ամենայն կամեցեալքն յինէն ի կատար հասուսցին, թողլով զհոգւոյս հոգն գերիմաստ ենթադատութեանն Գօմմիսարին իմոյ աստ յինէն կացուցելոյ։ Ցայտ առնեմ ի սմին տեղւոջ, թէ ունիմ առ Գերապայծառ Պարոն Աստուածատրոյ Շահրիմանենց Գօնթին, որդ(ւ)ոց հանգուցեալ Պարոն Մարգարին, ութ հարիւր գօռւէնթ տուգաթս. և առ Գերապայծառ Պարոն Յովսէփ Յակոբեան Գօնթին Շահրիմանենց, չորս հարիւր գօռւէնթ տուգաթս. իսկ զոչինչ պարտս ունիմ։

Ձամենայն գրեանսն իմ յինէն չարադրեալս աստ ի վենետիկ տպեալս թողում Մեսրոպեան Միաձանց Հայոց, որ կայ ի կղզւոջն Սրբոյն Ղազարու։

Ձամենայն գրեանսն իմ լատինականս և իտալականս, և համանգամայն երկլեզուս, այսինքն՝ Լատինս և Հայկականս ի միասին, և զուտ Հայկականս յինէն ոչ չարադրեալս, թողում Մարիամու, դստեր Գէորգայ Յոհաննիսեան Կոստանդնուպոլսեցւոյ Հայկազնոյ։

Թողում եկեղեցւոյ իմում Սրբոյ Խաչի Հայոց, որ է ի վենետիկ, Ին գօռւէնթ տուգաթս մի անգամ ևեթ։

Թողում բուն քեռ իմում, որ է յԱրզրում, Նոյեմ Սաոայի, Ին գօռւէնթ տուգաթս մի անգամ ևեթ։

Թողում Տիրուհւոյ Լուսիայ Հալաճճենց Հայկազնոյ՝ Կոստանդնուպոլսեցւոյ Ին գօռւէնթ տուգաթս մի անգամ ևեթ, ի նշան երախտագիտութեան։

Կացուցանեմ և յայտ առնեմ օրինաւոր ժառանգ ամենից պատրաստ դրամոց իմոց, (որոց ութ հարիւր գօռւէնթ տուգաթքն, որպէս ասացաւ, են առ Գերապայծառ Պարոն Աստուածատրոյ Շահրիմանենց Գօնթին, որդւոյ հանգուցեալ Պարոն Մարգարին, և չորս հարիւր գօռւէնթ տուգաթքն են առ Գերապայծառ Պարոն Յովսէփ Յակոբեան Գօնթին Շահրիմանենց, որպէս ցուցանեն մուրհակքն.) զգերապատիւ Տէր Մխիթար Պետրոսի Աբբահայրն Միաձանց Արամազնեայց Կարգին Սրբոյն Անտոնիոսի Աբբային, և զամենայն յաջորդս նորա. որպէս զի լիցին յաւէժաբար Տեարք ասացելոց Ն. Մ. գօռւէնթ տուգաթիցն, և պաղոց նոցին, այսու պարտականութեամբ ի վերայ նորա և նոցա դրեցելով, զի ի պաղոցն նոցին տպագրել տացեն զաշխատասիրութիւնսն յինէն չարադրեալս. բայց այնպէս, մինչ զի գրեանքն տպագրեցեալք ի նոյն պաղոցն, լիցին բացարձակապէս նորա և նոցա. որպէս զի զգրեանսն և զգինսն նոցին վաճառեցելոց, նա և նոքա արասցեն որպէս ինքեանց հաճոյ իցէ։

Գօմմիսար այսորիկ վերջին կամաց իմոց կացուցանեմ զնոյն վերոյիշեալ Մխիթար Աբբահայրն, կամ զնորա զո՛ր ոք և իցէ յաջորդսն, որ զկնի մահուան զառանիցի կենդանի։

Հուսկ ապա՝ զվերոյասացեալ Գերապատիւ Տէր Մխիթար Աբբահայրն, օրինաւոր ժառանգ իմ, և միանգամայն Գօմմիսար իմ աղաչեմ, զի ուղղապէս զբնաւսն յինէն աստ յայտ արարեալս լցուսցէ յիւրում ժամանակի ի փառս Ամենակարողին Աստուծոյ, և ի պատիւ Ամենափառաւոր միշտ կուսին Մարիամու և Սրբոցն Աստուծոյ, գիտելով, թէ յիրաւի ընդունելոց է զառատաձեռն վարձս ի պարգևատուէն ամենայն բարեաց, յորմէ և ես հայցեմ նմա զամենայն բարեյաջողութիւն, և զայս զի յերկինս ի միասին կենակից լինիլ մարթասցուք, զերջանիկ և զերանական կեանս վայելելով։ Այսպէս եղիցի, ի գովութիւն Աստուծոյ Ամենաբարւոյ և Ամենամեծի, և ի պատիւ Ամեներանուհւոյ միշտ կուսին Մարիամու և Սրբոցն Աստուծոյ. Ամէն։

Ես նոյնս խաչատուր Առաքել, յատուկ ձեռամբ հաստատեմ.

ԺԸ.

Դե՛ռ աւելի մանրամասն և որոշ տեղեկագրութիւն մը կ՛ընէ Բարդողիմէոս վարդապետ Հին Ցոմարի փոփոխութեան շուրջ՝ իր հետևեալ նամակով։ Ունի երբորդ

Թուղթ մ՚ալ նոյն տարւոյ յուլիս 14–ին գրուած առ Մխիթար, յորում կրկին կը դառնայ մի և նոյն հարցերուն շուրջ. զայն աւելորդ կը նկատեինք հրատարակել։

Գերապատուելոյ և առաքինասիրելոյ տեառն տեառն
Մխիթար վարդապետի և Աբբայի

.... Լուեալ իմ և ի միասին ուրախացեալ թէ գերապատուելի խաչատուր աստուածաբանութեան վարդապետն հրամանաւ սուրբ ժողովին գնացեալ դէպ ի վիէննայ առ ի ձեռնադրիլ ի նունցիէն Եպիսկոպոս մաճառի յերկրին ի վերայ Հայոց ի տեղի Օգոէնտիոս ի տէր հանգուցեալ Եպս.ին, բայց ոչ գիտելով հաւաստին, երկբայացեալ կամ[1]. ուստի աղաչեմ զէրութիւնդ, զի զեշմարիտն ծանուսցես, զի ուրախութիւն իմ կատարեալ լիցի, և զայլ ինչ նորագոյն բան հանդիպիցի այդր խնդրեմ իմանալ։ Ինձ թուի թէ նանցեալ գրին իմոյ գրեալ եմ եղբայրութեանդ շուրջ զէգզէթօխն, զոր ընկալայք ի սուրբ ժողովոյն. բայց բազմիցս խնդրեցի. և տէրութիւնդ խոստացար կատարել։ Գրեալ էի սիրելութեանդ թէ ոմանք հակառակելով արգիլեցին առ ի կատարել զսովնախմբութիւնսն ընդ լաթինացւոց, և մանաւանդ զյայտնութիւն տեառն, զոր պարտէաք առնել ի գ. յունվարի ըստ նոր տօմարին. այլ հայք խռովիչք դիմեցին առ արքեպիսկոպոսն փիւոյ, թէ մեք բոիվիլէճիօ ունիմք ի Հռոմայ գնալ ըստ Հին տօմարին, և թէ ոչ, մեք ալ չեմք իտար ըստըղալճ եկեղեցւոյ. և տեսեալ եպիսկոպոսին խռովութիւնսն Հայոց, և ինքն ոչ կամելով խռովութեան զձայն լսել, գրեաց ինձ թէ որպէս յառաջուց թուղթ տուութիւն կայր Հայոց, այսպէս թուղթ տուր այժմ գնալ ըստ Հին տօմարին, ուստի հարկադրեալ կրկին կատարեցի զսովնախմբութիւնսն։ Բայց ըստ պարտականութեան իմոյ ծանուցի սուրբ ժողովին, որ և գրեաց Արքեպիսկոպոսին, և ինձ գովաբանելով զհնազանդութիւն իմ և զխոհեմութիւնն Արքեպիսկոպոսական և հրամայեաց նմա օգնել ինձ, զի և ես կարիցեմ այսուհետև ի միասին ըստ լաթինացւոց կատարել զսօնս։ Եւ ելեալ գնացի փիզայ, և գկնի բազում խօսակցութեան, առի հրաման ի նմանէ ձեռագրով իւրով, զի այսուհետև, որպէս սուրբ ժողովն հրամայեալ է՝ առնիցեմ. և եպիսկոպոսն հրամայեաց կատարել, և հայոց հնազանդիլ. արդ այժմ սկսեալ ի գիւտ խաչին միաւեղ կու կատարեմ զամենայն տօնսն տէրունական, աստուածածնայ, առաքելոց, և զամենայն հրամայեցեալ տօներն, և զայլ օրերն ըստ Հայոց տօմարին, կամ Հայրապետաց, կամ մարտիրոսաց։...

Թուին փրկչին 1719 մայիսի 22
յալիկուռնայ

տէրութեան քո
ծառայ Բարդողիմէոս վարդապետ
միսիօնար առաքելական

ԺԹ.

Յոհաննես Աստուածատուրի մէկ ուրիշ նամակին մէջ հետևեալ հետաքրքրական ու պատմական տեղեկութիւնները կը գտնենք։

Գերյարգելոյ Հօրդ իմում ի Քրիստոս Աբբա Մխիթար
Աստուածաբանութեան վարդապետի ողջոյն յիսուսաւանդ

... Ցետ այսորիկ յայտ լիցի գերյարգելութեանդ նաև դիպուածս այս որ յաղագս ապպաթի պինչինին (քանզի կարծեմ թէ չէք դեռ ևս իմացեալ). սա ուրեմն լռելեայն եղեալ ի Հռոմայ նամսեանն սեպտեմբերի և իբրու փախեալ գնացեալ է ի քաղաքն դուբինոյ

1. Խաչատուր վարդապետ 1719ին Ս. Աթոռն կոդմանէ այցելու զրկուած էր ի Դրանսիլվանիա. այս ժամանակներս է որ կը ծագի ժողովրդեան մէջ այդ շփոթութիւնը (տես Հ. Յ. Թորոսեանի Վարք Մխիթարայ)։

առ Դաւթն Սաւօյիու, որ և երբեմն կոչիւր թագաւոր սիչիլիու (քանզի ի սմանէ յառաջմէ ազգեցեալ էր առ ի զալ առ ինքն) և ընդունեցեալ ի նմանէ մեծաւ պատուով և փառօք, եղեալ է նորին աստուածաբանապահ և գլուխ այնորիկ քաղաքին ազգատէմիու նորակերտեցելոյ ի նոյնոյ իշխանէն. յորմէ և ունի ամենայն ամիս զմուտ և զոռճիկս բազմաց դահեկանաց: Եւ սակս նորին չուման յոյժ ցաւեցաւ Սուրբ Հայրապետն և սուրբ ժողովն, նա և գօլէճն մեր և գրեթէ բոլոր Հռօմ իսկ, զի կորոյս զայնպիսի նշանաւոր վարդապետն, որոյ հմտութիւնն որ ի վերայ սրբոց ժողովոց և խորհուրդն գիտութեանց այնչափ ծաւալեալ և հռչակեալ է ամենեցուն, մինչ զի համբաւն նորին հասեալ էր ոչ միայն առ վերոյասացեալ իշխանն, այլ և առ յազգատէմիայսն անդրալերինս, այսինքն Ֆրանչիու: Եւ զի թէպէտ նա փախեալ է, զի ոչ է ելեալ ի Հռօմայ հրամանաւ մնծաւորաց (որք և ոչ տային հրաման եթէ գիտանայցէին) սակայն ոչ է ելեալ իբրու ապստամբ և կամ դիտաւորութեամբ ուսուցանելոյ անդէն զիմն ընդ(դ)էմ սուրբ աթոռոյն, կամ զայլ ինչ նման (քաւ լիցի) այլ միայն վասն այսր պատճառի, զի վասն այնքան իւրոց աշղաւանաց և քրտանցն զոր թափեալ է ընդ ամս բազումս ներ չարաչրութիւնս գրեանց և յայլ կրթմունս ի յօգուտ սրբոյ եկեղեցւոյն, ոչ էին տուեալ նմա մնծաւորք և գիմն հատուցումն արժանի արդեանց նորին, այսինքն ոչ ևս գոնեայ մին պէնէֆիցիո. և մանաւանդ զի այլք բազումք օր ըստ օրէ առաջի իբրու աչաց իւրոց առնուն մեծամեծ պէնէֆիցիս թարց ուրուք արդեանց: Եւ արդ վասն չուման սորին եղև ի գօլէճն մեր յոյժ մեծ փոփոխումն վարպետաց, յորմէ և երկնչիմ թէ մի գուցէ լինիցի ինձ վնասակար. քանզի ապաւթի պնչինն միայն էր յոյժ օգտակար և չատագով որդւոցն Հայոց...: Յայլուստ նաև լուաք զայս թէ ի կոստանդինուպոլսոյ եկեալ է գիր մի ի դեսպանէն Ֆրանչիու առ ոմն Կարտինալ, զի և նա ընթեռնուցու ի մէջ մեր սուրբ ժողովոյն. և ի գրոջն այնորիկ նաև զայս ծանուցանէ, թէ մօնսիւնյոր վիքարն վասն բազմաց աշղաւանացն և վասն մեծի իւրոյ ծերութեան յոյժ զգուեալ է, և ցանկայ ի բաց թողուլ զպաշտօնն վիքարութեան: Վասն որոյ և էլչին այն իբր ի գութ նմա շարժեալ (և կամ մանաւանդ ինքն հանդերց լաթինական ևս ժողովրդեամբ զգուեալ ի մօնսինօր վիքարէն) խնդրէ իբրև միշնորդ և աղաչէ զսուրբ ժողովն զի հաճիցի ազատել զնայ յայն նեղութենէ, և վերակոչիցէ զնա ի կոստանդինուպոլսոյ ի Հռօմ...:

Գերյարգելութեանդ

Գրեցաւ յամի 1719
յերկրորդումն դեկտ. ի Հռօմ

Նուաստ ծառայ
Ստեփաննոս Աստուածատուր

Ի·

Յովնան եպս. կը տեղեկագրէ թէ ինչպէս եղած է իր մուտքը (Հ. Մանուելի հետ միասին) ի կեղա՝ քարոզչական պաշտօնով: Ակնարկուած սահաթչի Գրիգորը՝ Մխիթարայ վրայ զմայլող, բարեպաշտ ու կենդանի հաւատքով լի անձ մը կը թուի իր մէկ նամակէն, զոր տառապանքի մը ժամուն լալագին աչօք կը գրէ առ Աբբահայր, ըսելով այսպէս. «Ակն ունիմ ընդունիլ ի ձէնջ օրհնութեան գիրս փոքրիկս «առ ի մխիթարութեան ի ժամ ծերութեանս սովացելոյս, ըստ ձայնի մարգարէի որ «ասէ. Յո՛վ տամ, ոչ հացի, այլ լսելոյ բանի տեառն՝ վա՛յ ինձ, այս ամենայն եկն ի «վերայ իմ վասն մեղաց իմոց»: (գրեալ 1719. Հոկտ. 3):

Գերյարգելոյ տեառնդ Մխիթարայ Աբբայի

Ցայտ լիցի սիրով, զի նախախնամութեամբն Աստուծոյ ի ԺԶ օրն հասաք ի վե(ն)նա խաղաղութեամբ, և օթևանս կալաք ի տան սահաթչի Գրիգորին. և գնացեալ առ նունցն, մատուցաք զգիր սրբոյ ժողովոյն, և նա յետ երկուց աւուրց ետ մեզ զերիս գիրս, զմիոնն

ի վերայ Թրանսիլվանու եպիսկոպոսին, և զմիւսն դատաւորացն Հայոց: Իսկ երրորդն էր փաստիօնթ՝ որ գեղէ ի գեղ և քաղաքէ ի քաղաք տացին մեզ կառ, մինչ ի ժամանել ի կէրլա: Եւ պատճառն է զի ոչ գտանի կալէս ի վարձու որ միանգամայն գնայցաք ի կէռլայ: Նաև ոչ իշևանս ի ճանապարհի որպէս խոստևայ. զի վաճառականքն որք գան և գնան իւրեանց ձիու կառօքն են և պաշարօքն. զկնի Զ աւուրց պարտայով գնացաք ի պատիմու դիմացն Փէստ անուն զաստապա մի, և անտի առաք ընդ մեզ Թարգման մի Թուրքէվար գնացօղ որ էր մաճար, և այնպէս գեղէ ի գեղ գնացեալ ժամանեցաք ի կէռլա. բայց ի ճանապարհին կրեցաք զնեղութիւնս ոչ սակաւս մինչ ի մերձենալ հիւանդութեան, զի կառն ոչ ունէր զծածկոցս...: Երբ հասաք ի կէռլայ մատուցաք իշխանացն զգիր նուիրին և զձերն, զոր առեալ սիրով ընկալան և պատուով: Ապա յետ բազում աւուրց տէր Մինասն որ այժմ է փիօվան ընդ միոյ աղայի ընկերակցեալք ընդ մեզ գնացաք առ ի յարգել զեպիսկոպոսն և մատուցաք նմա զգիր նօնցին որ ըստ դիտման սրբոյ ժողովոյն գրեալ էր նմա, զոր ընդ[ունե]րեցեալ յոյժ սիրով ընկալաւ զմեզ, և գրով իւրով կնքեցելով արար զմեզ ինքեան փոխանորդս ի վերայ եկեղեցեացն հայոց, որք են ընդ տէրութեամբ իւրով, և ետ հրաման տալ զգրուշմ մանկանցն հայոց զկնի մկրտութեան այսուհետև, որպէս առնէ սուրբ եկեղեցին. և առնել զեռնադրութիւնս յեկեղեցիս հայոց և կառավարել զնոսա ուղղափառապէս, և այլն: Ցետ այսորիկ արձակեալք ի նմանէ դարձաք ի կէռլայ, և բնաւք իշխանք տեղւոյս և ամենայն ժողովուրդք հաճեալ հաւանեցան, և ընկալան մեծաւ պատուով հանդերձ ուրախութեամբ, որ և այնուհետև սկիզբն արարեալ քարոզութեան ըստ կարի մերում, և բնաւք ունկնդիր լինին սիրով...:

Գերյարգելութեան քում

Թուին քրիստոսի 1720
յուլիսի 10
ի սումուշոյվար

Նուաստագունեղ ծառայ
Յօնան եպիսկոպոս սեբաստեան
որ արդ վերատեսուչ Թրանսիլվանիոյ եկեղեցոյն Հայոց

ԻԱ·

Այս նամակը Հայ հնագէտներուն կը ներկայացնէ հետաքրքրական և օգտակար տեղեկութիւն մը:

Պապերու քաղքին մէջ 1720–ի հոկտեմբերին ձուլուեր է մասնաւոր մետալ մը երջանիկ Հօր Ս. Լուսաւորչայ, որու մանրամասն նկարագիրը կը դնէ Ուրբանեան վարժարանի նախկին աշակերտ Յոհաննես վարդապետ: Հետևեալ բացատրութիւնները՝ որ են, «բեկտ գոյ նորին պատկեր գառն Աստուծոյ և իւր տիպն», լինչպէս նաև «որոյ և պատկերին նման է ամենևին տիպս այս», յայտնապէս կը ցուցնեն որ եղած է հոն սակայն անկէ առաջ՝ Հայրապետիս առանձին պատկերի տպագրութիւնը, լինչպէս որ անշուշտ կ'ուզենք հասկնալ այսօր ուրիշ սրբազան փոքր պատկերներու մասին:

Գերյարգելի Հայր և Տէր վեհապատուելագունեղ

... Ցետ այսորիկ և զայս ծանիր գերյարգելի, զի այն երզրումեցի մարմնաւոր աչօք կոյր յոլսէփն ի վաղնջուց եհաս ի Հռոմ և նախ հանդիպեալ էր յալիկօռնայ. այժմ սակայն ոչ է աստ, քանզի ելեալ գնաց յանապօլի վասն ուխտի որ ի պատիւ սուրբ Նչխարացս Լուսաւորչին մերոյ, և անտի չուտով վերստին յայսր դառնալոց է. և ես իսկ ըն բազումս տեսեալ ծանեայ որ իրաւի յոյժ լաւ անձն էր: Ապա և թօխաթեցի այն ուխտաւորն, որ չուեալ է անդէն, դեռ ևս ոչ եհաս յայսր, և յորժամ հասանիցի և տեսանիցեմ զառաքեցեալ մետալն, յօժարագոյն ծառայեցից գերյարգելութեանդ առբերելով

ընդ իս զերկու հազար նոյնով տալով տպեցեալ մեռալս, զորս խնդրեալ էիր։ Բայց որով-հետև զրոյց եղև ի վերայ մեռալի, ծանուցանեմ գերյարգելութեանդ ևս զայս, թէ տեսեալ մեր զի մինչև ցայժմ ի բովանդակ հռօմ ոչ գոյր և ոչ է եղեալ տիպ և մեռալ սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին, թէպէտ գոյ նորին պատկերաւ գառն Աստուծոյ և իւր տիպն. վասն որոյ և յայժ ջանացաք ևս և մեր եղբայր տէր Մինասն զի գառանիցի ևս մեռալ նոյնոյ սրբոյն, և արդէն իսկ ահա հասաք ըղձից մերոց։ Զանազի ի պատիւ սրբոյն կա-մաքն Աստուծոյ ներ այսմ ամսոջ չինեցաւ կարի լաւ և գեղեցիկ տիպ մի մեռալի նոյնոյ սրբոյն գրիգորի, և շուրջ զնովաւ երևի հայկական տառիւք գրեցեալ անուն սրբոյն այսպէս.

Սր. Գրիգ. Լուս. Հյ։

Ըստ որում և կայ գրեցեալ ի վերայ ասացեալ գառն աստուածային, որոյ և պատ-կերին նման է ամենևին տիպս այս, որոյ և ձևն բոլորակ է, և մեծութիւնն չափաւոր և հասարակ. ի մի կողմն ուրեմն մեռալիս այսպիսւոյ լինի պատկեր սուրբ գրիգորի։ Իսկ ի միւս կողմն լինելոց է՝ Աստուածածնին հանդերձ Քրիստոսիւ ի գիրկս իւր և կամ խաչելութիւնն Քրիստոսի. գինն սոյնոյ մեռալիս, չինօղն կու խնդրէ հարիւրին տասը ճիւղի և պակաս չիտար։ Ինչևիցէ զայգան կարճառօտաբար յօժարեցայ ծանուցանել հայրութեանդ գերյարգելւոյ, զի եթէ հաճոյ թուիցի ձեզ ևս գնել յայսպիսի մեռալացս, թարց յապաղման և չուտով ծանուցէք ինձ, զորքան կամիք. և մանաւանդ եթէ փոխա-նակ վերոյասացեալ երկու հազար մեռալին կամիցիք առնուլ ըստ մասին և յայսպիսի մեռալ, ձեր կամքն է։ Դարձեալ ի միասին ծանուցէք ինձ և զայս թէ արդեօք ձեր մե-տաղներն օրհնել տամ փափին թէ ոչ կամ թէ այնպէս բերից չօրհնած։...

Գերյարգելութեանդ

Ի Հռօմ
Հոկտեմբ. 19
1720

Պատրաստական ծառայ
Յակոբիանոս վարդապետ

ԻԲ.

Նամակագիրս է Յարութիւն արքեպս. Լեւոնեան[1]։ Իր այս ներկայ գիրը կարելի է անուանել ինքնակենսագրութեան մը հետաքրքրական մասը, ինչ որ պիտի ծառայէ մեզ քիչ մ'աւելի ծանօթանալու իր անձին շուրջ։

Պատուհասագունեղ և գերարգելի Տէառն Միխիթար աբբայի և ամենաառաքելական վրդպի բազմաւ սիրով ողջոյն ի քրս։

Յայտարարութիւն լիցի վերոյ գրեցեալ տեառնդ, որ այժմ ԻԱ. ամիս եղև որ ի տեղոյտ զատուեր եմ. քնաւ մին բան չի լուայ զորկենութենէ ձերմէ և տեղոյտ. մին քանի անգամ սարգսին գրեցի ոչ մին պատասխանի չի ընկալայ։ Նաև մատրիտ երկու ուխտաւոր պատահեցաւ մինն թօխաթցի և միւսն արզրումցի. թօխաթցուն մին գիր տուի ձեր հրամնուցն, չեմ գիտեր հասաւ թէ ոչ. յետ որոյ եկի կատիս մին գիր ևս գրեցի և մին երևանցի կու գնար ի ճէնուայ եաու նր և ասացի թէ վէնէտիկու փոստն գցէ, չեմ գիտեր հասաւ թէ ոչ։ Մին քանի օրէն եաոյ սահակն եկաւ ալիզալօնայէն և ի միւսում աւուրն ելայ մին ֆռանսզի նաւով դէպ լիզալօնայ։ Ը օրն գնացինք, քամի

1. Տես մեր ծանօթութիւնը Բազմավէպ 1922, թ. 3, էջ 94։

չունէինք. և յորժամ հասինք ի տեղն, ներս չի թողին վս ահի մարսիլեաւս մահին։ Մնացի ՚ր օր ևս նաւի միջումն. ետոյ հրաման եղև թէ ճանապարհորդքն ելանեն առանց քրբի։ Նայև ելա(յ) մին պարքաով գնացի ի քաղաքն. և ի միւսում օրն արգուհալ տուի թագաւորին. հրաման տուաւ թէ եպսին պաւուէն միայն թող հանեն ի նաւարէթն. և ի միւս կողմանէ նաւաւարին զօռ թէ ել գնայ։ Մինչ մնք յորս ցամաքով և որ ծովով գնացինք, նաև ելաւ գնաց. և ես մնացի միայն վերայիս չորերովն։ Ետոյ մին մէմօռհալ տուի թագաւորին թէ ինձ մին տեղ տուր պատկելու. չուտով օղարկեց զիս երուսղմ պտրց վ՚անքն և կերակուր ևս թային արաւ. ետոյ Ս ոսկի ևս ետուր չորեր չինելու և չինեցին լաթինացոց ձևն. ըուռքէթիս մէղլին միայն Ս՚ն տուգաթ է։ Եւ յորժամ չորերն եղև, հագայ և գնացի առ թագաւոր. մին կէս ժամու չափ հետս խօսեցաւ ինձ համար. ինձ համար աղօթք արաչ. և մին պակասութիւն ունիս ինձ ծանոյ ասելով ուրախ դիմօք. և ևս յունվարի առաչի օրն թատէօ լաւտամօ կարդացին ճիզուիթի եկեղեցին պատրիարգն. թգւրն և թագուհին մեծամեծ ալայով. ևս վեց ձիով կառօցա եկաւ սարայէն. ելա գնացի. նայև եպիֆանի[1] էին ևս գնացի թագաւորին գափէլն մեծ օֆիցիօն արարին. այս այսպէս....

Տէր Ցարութիւն
Եպիսկոպոսէ գրեցաւ

1721. թուին յունվարի 10
Ալիզպօնայ քաղաքի

ԻԳ.

Նոյնը կրնանք ըսել հետևեալ թղթոյ նամակագրին համար, որ մինչ տեղեկութիւններ կը հաղորդէ Դրանսիլուանիոյ Հայոց ազգային գործերուն և եկեղեցական սովորոյթներուն շուրջ՝ կու տայ նաև այդ ժամանակի իր գործունէութեան ալ մէկ պարագան, ինչ որ այլուր յիշատակուած չենք գտներ։

Վ՚երապատուելոյ Տեառն Մխիթարայ Աբբայի
և Ամենաժառանգաւորեալ Վարդապետի

Ցայտ առնեմ տէրութեան քում, զի զգիրն որ գրեալ էիր Ունիսի քսանն, առընկալայ, և վասն գրոյն զոր յղեցին ի Հռոմ և խնդրեցին Միսօնար ի սուրբ ժողովէն, կարի քաջ տեղեակ եմ և ոչ է ընդդէմ մեր։ Իսկ զայն որ ես գրեցի, այնու գրօվն ծանուցի սրբոյ ժողովոյն թէ յոյժ հարկավոր է առաքումն Միսօնարի ի Դրանսիլվանիայ ի մէջ հայոց, վասն լեզուին՝ լատինականի, որ ընդ եպիսկոպոսին Լադինի բերան առ բերան խօսելով լինի բազում օգուտ պարզամիտ ժողովրդեանն, և այլն։

... վասն Ննդեան պահոցն ծանիք, զի է հաստատուն և կամին ամենեքին պահել յօժարութեամբ, սակայն հին սովորութիւնն ոչ բառնի առժամայն, այլ սակաւ սակաւ տեսանելով և լսելով ընտելանան չնորհիւ Տեառն, վասն զի են յօժարամիտք առ օգտակարսն։...

Ցանիր ևս, Սուրբ ժողովն որ գրեալ էր մաճարու եպիսկոպոսին թէ. Ընդէր թոյլ տաս որ տէր Մինասն խարնակէ զպահն Հայոց, ըստ սովորութեան եկեղեցւոյն իւրեանց զոր ունին. որովհետև են միացեալք հաւատով ընդ մեզ. և այլն։ Ձօրութեամբ նոյն գրոյն կոչեաց զչորս եկեղեցւոյն զգլխաւորսն Հայոց. ընդ նոսին և զտէր Մինասն. կամեցաւ զի և ես լինիցիմ անդ ներկայ և ապա առաջի ամենեցուն արար քննութիւն վարուց

---

1. Ցայտնութիւն Քրիստոսի։

և արարմանց Տէր Մինասին. և եգիտ այնպէս, որպէս ամբաստանեցեալն էր ի Հռոմ. և յետ ստուգելոյ, էառ զվիճակաւորութեան և վիճարութեան զգիրն, զոր տուեալ էր. և այսպէս լռեցոյց զնա ասելով. Թէ ուրեմն պատրեցեալ իմ ի բանից քով և խափեցեալ. զոր եթէ ճանաչէի գրեզ նախ, որպէս այժմ ճանաչեցի, ոչ երբէք տայի քեզ իշխանութիւն, վասն զի ամօթ արարեր ինձ, և այլն։ Եւ զկնի այսոցիկ էհարց իշխանացն հայոց, Թէ զով կամիք՝ զի արարից վիճակ ի վերայ ձեր, որ կարաւարեսցէ զձեզ. ամենեքին միաբան ասացին. Թէ կամիմք տալ զվիճարութիւնն Ձեր. Ցօնան եպիսկոպոսին։ Իբրև լուաւ, առժամայն մատոյց զվիճարութիւնն Մեզ. արդ ես նախ չնորհակալ եղէ, և ապա պատճառանօք հիւանդութեան և չգիտելոյ զլադինի լեզուն, հրաժարեցայ ասելով, Թէ Սուրբ ժողովն Միսօնար առաքելոց է աստ. նմա վայելէ այս գործակալութիւնս...։

գրեցաւ 1721 ի կեռլէ Յունիսի 16 — Ցօնան եղիա եպս. Սեպաստեայ

ԻԴ.

Թուղթիս առորագրողը Ց. Ա. Արիպ. պէտք է որ ըլլայ Լէոպոլսոյ Յովհաննէս Աւգոստինովիչ արքեպիսկոպոսը։ Իր վրայօք միակ և որոշ ծանօթութիւն մը կու տայ մեզ իր իսկ մէկ փոքր պաշտօնաթուղթը (Հ. Ալիշան «Կամենից» էջ 199), ուր եղած ակնարկները կու գան նաև հաստատել մեր հրատարակած նամակին բովանդակութիւնը։ Այն թուղթը այսպէս կը սկսի.

«Յովհաննէս Տօբիայ Ավկուստինովիչ՝ Աստուծոյ և առաքելական աթոռոյն (շը-
«նորհիւ) արհիեպիսկոպոս Լէօբօլսի, և ընդ բոլոր թագաւորութեանն Լեհաց և
«մեծի դքսութեան Լիթուանիոյ, Հայոց եպիսկոպոս Մոլտավիոյ նոյն ազգին Հայոց,
«սրբազան փափին մերոյ Բրեվադ ընտանի և Ներսէսեբակայ. յորմէ հետէ աստուա-
«ծային զթութեամբ յարհիական աստիճան բարձրացաք.. զբարեկարգութենէ եկեղե-
«ցեացս մերոց բուռն արկանէաք...» և այլն։

Յովհաննէս արքեպս.ի անունը ծանօթ է նաև Գալեմքեարեանի «Կենսագրու-
թիւններ երկու հայ պատրիարքներու..» անուն հատորիկին. (Վիեննա 1915. էջ 130)։

Գնուապայծառ և Ամենապատուական Տէր Աբրահամայ
Եղբօրդ իմ ի Քրիստոս Սիրելի

Ընկալայ զթուղթն ի Ք. և Ա. Տէրութենէդ, զոր բերեաց ինձ մի ուխտաւոր Հայոց։ Լի եղև սիրտ իմ ուրախութեամբ լսելով վասն առողջութեան Գեղապայծառութեան, մանաւանդ զի ժամ և եկեղեցի աշխատամբ Տէրութեան գեղեցկապէս կատարեցաւ ի փառս Աստուծոյ[1]։...

Աստուծոյ գոհութիւն, զի մեր մէջ թագաւորութեան խաղաղութիւն է, և ես, ընդ մեր ֆահանայից և ժողովրդեան առողջ մնամք։ Մեծաւոր Բրէվէզդ Դալրատան փափին ի Լէօպօլիս մեր Ազգին, Դէպդին մեռաւ, այժմ նորա տեղ ընտրեաց զմեծ իմ բարեկամ, Թէ գայցէ ի Լէօպօլիս, զբադէր Բատանասքի, կարծեմ Թէ յայսմ ժամանակի լինի ի Վենետիկ, լաւ և իմաստուն մարդ ես խնդրեցի վասն նորա, և գրեցի առ Սուրբ ժողով. ունիմք այժմ խաղաղութիւն...։

---

1. Ս. Ղազարու եկեղեցին կ'ակնարկէ։

Ծանուցանեմ Տէրութեան, զի սեր Տօնացոյց, ըստ իմոյ դիտաւորութեան այժմ սրբագրի ի Հռոմ, ըստ Ամսոց, ինչպէս օրինակ տուի սրբոյ Ժողովոյն։ Զայն հինը պաս, այսինքն Սրբոյ Հոգւոյն, Աշակերտութեան, Սուրբ Խաչի ի Վառախաչ, Սրբոյն Յակոբայ և Սարկսի՝ Ս. Փափն այժմ, առ ի խնդրուածս մեր վերացոյց, զի ոչ պահիցեմք, զի ծանր յոյժ է զայսքան պաղս պահել, և խոստացաւ զմեր Տօնացոյց ստամբել [1] իւր խարճով ի Վէնէտիկ...

Այժմ Ձեամ և միշտ անփուխոխելի և ճշմարիտ Գեհապատժութեան.

Բարեկամ և եղբայր

Ի Լէօպօլիս 1723 Մայիսի ԻԴ.

Ց(ովհաննէս). Ա(ղոստինովիչ). Արհպս Լեհաց Երկրի Հայոց

ԻԵ.

Ցոլշան եպիսկոպոս հետեւեալ թուղթին մէջ Յարութիւն եպս.ին Հռոմ մտնելու լուրը առ Մխիթար հաղորդած առեն՝ թէ և ուրիշ բան չ'ըսեր այդ մասին, սակայն անոր շարժառիթն եղած է յաջորդ տարւոյն մէջ կատարուելիք քահանայապետական մեծ Յորելեանը (Գալեմք. « կենսագրութիւններ երկու Հայ Պատրիարքներու...» էջ 143)։

Ամենէն դիտելին սակայն այն է՝ որ թուղթս ուրիշ խիստ հետաքրքրական խնդիր մը երեւան կը բերէ յանձին Մխիթարայ։ Անոր մասին Յաւիտենական Փաղքին մէջ խորհուածն ու ձեռնարկները՝ ոչ լոկ ազգային բարձրաստիճան եկեղեցականներու, այլ մինչև իսկ գերագոյն Իշխանութեան կողմանէ՝ կու գայ ինքնին անգամ մ'ալ հաստատել Ուխտիս Հեղինակին հոյակապ և ոսկեշող ձիրքերը, որոնք՝ զոր օրինակ՝ սքանչացող հոգիներու սիրակէզ գոչել տուած են՝ նամակիս թուականէն 13 տարիներ առաջ՝ այսպէս. « Ո՛վ ալուսեակդ և պայծառ աստղդ պատուական։ « Ո՛վ լուսինդ լրացեալ լուսատու գիշերոյ և երեկոյացեալ ժամանակիս։ Ո՛վ աղբիւրդ « գիտութեան և ակդ քաղցրահամ և առատաբուխ՝ որպէս անհուն գետոց. առատա« նալով գնացք գետոց քոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ։ Ո՛վ իմաստութեան « աղբիւր ուղիղ գնացք ընդ հետոցն Աստուծոյ։ Ո՛վ հիմնարկող հաւատոյս մերոյ « հայկազնեացս ». (« Schiarimenti e Documenti » էջ 11). և այլն, և այլն։

Գնարարգելոյ աբբահօր տեառն տեառն
Մխիթարայ վարդապետի եղբօր մերոյ ի Քրիստոս

Ցայտ առնեմ սիրով, Յարութիւն եպիսկոպոսն ի ԺԹ դեկտեմբերի եմուտ ի Հռոմ, և եղբայր Մարկոսն ընդ նմա...։ Նկն և տէր Յակոբն և երեր զչափ պատկերի միոյ, թարց գրոյ և ծանուցման՝ թէ զինչ պատկեր իցէ այն, որ պարտիմ տալ նկարել, կարծեցի թէ ընդ մօնսինեօրին, եղբայր Մարկոսին յղիցես և ծանուսցես ինձ, իբրեւ հարց՝ ցնոսա, ասացին ոչ գիտեմք։ Եւ մնաց որ հրամանդդ անձամբ եկեալ տայցես զնա նկարել, քանզի միշտ խորհէաք ընդ Սուգիաս եպիսկոպոսին, և նա ընդ տօն ձիւզէփին գտանել զկերպ և զեղանակ իմն՝ բերելոյ զքեզ ի Հռոմ, լինիլ հոգաբարձու ազգին մերոյ ողորմելոյ և այլն։ Իսկ Աստուած տնօրինեաց այսպէս, զի սուրբ ժողովն կոչիցէ զքեզ այժմ քարոզութեան աղագաւ, որ եկեալ ուսուցանիցես զուխտաւորսն Հայոց, որք են բազումք

1. stampare = տպագրել։

այժմ, և զալոց են ևս։ Եւ այսու յուսամ թէ բաղձանք մեր կատարիցին. այսինքն գոլ և լինիլ ի Հռոմ փրօգուռաթօր ոմն ազգին հայոց. գիտուն և տեղեակ ամենից իրողութեանց նոցին, և ծանօթագոյն ամենամեծ գիտութեանն գործականի մօր մերոյ սրբոյ եկեղեցւոյն կաթողիկէի, ոչ խնդրօղ փառաց և պատուոյ, և կամ սիրօղ շահուց յատկականաց և այլն, զոր տէր պարգեւեալ առաջացուսցէ ամէն։ Սուրբ ժողովի գիրն ևս՝ կարծեմ այս փոսթին ժամանել առ քեզ, և վասն ապրելեացն տալոց իցեն քեզ ամիսն ԹԵ սկուտ, որ մի կամ Բ կրօնաւորաց նուագիս ի Հռոմ։ Զայս ամենայն որ գրեցի, ոչ ոք գիտէ, բաց ի տօն Ձիւզէփէն, Սուգիաս եպիսկոպոսէն և Պադրէմիզէնց Ցօհաննէն՝ որ է Թարգման նորին։ Բարի է Տէրն ի ծածուկ, մինչ ի ժամանումն քո ի Հռոմ. յայսմանէ բարութիւնք մեծ ծնանին՝ եթէ գայցես վաղվաղակի...։

Գերարգելութեան քոյոյ նուաստ ծառայ

Ցօհան Եպիսկոպոս Սեբաստիոյ

գրեցաւ 1724 դեկտ. 23
ի սուրբ Ծնօֆրին ի Հռոմ

ԻԶ.

Կը հանենք հետևեալ պատառիկը Մխիթարայ աշակերտներէն՝ Հ. Միքայէլ վարդապետ Պարզերեանեան Սերաստացւոյ նամակէն, զոր Ալբահօր ղրկած է։

Վերապատուելագունեղի տեառն տեառն Ալբայ Հօրդ իմոյ
Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի

... ի 23ն սեպտեմբերի եկն լուրն առման կէնճէյու, հինկ օր ոտնանմայ արարին թօփից, և ի վերջի գիշերն զարմանալի պայծառութիւն լապտերաց ի վերայ ծովու ի վերայ նաւուց և նաւակաց Ըսկուտարու մինչև ի կէմբրիւկն Ստամպօլու պայծառութիւն և այլք արհեստական հուրք և որոտմունք, բերդից և դղեկաց այրեցմունք, յորոց հուր արհեստական իբրև զօօս և իբրև զԶրմուխ բարձրանայր յերկինս, և անթիւ թօփից արձակմունք, աւելի քան զհինի ժամ տեւեաց։ Բազում աղջկունք փոքունք գերիք, հազիւ գառանի գնօղ ի քրիստոնէից, աղէտ նոցին է յոյժ։ Ցոմանց լուաք թէ խաբէաբար գունտք հայոց ի ձեռս անկեալք սրախո(ղ)խողք եղեալք են. և յոմա(ն)ց թէ տաճկունք բազումք անկեալք են ի նոցանէ։...

Մնամ պատրաստական ամենայնի ես նուաստ ծառայ
Հայր Միքայէլ Վարդապետ

գրեցաւ գիրս ի Թուին Քրիստոսի 1725ին
հոկտեմբերի 5

ԻԷ.

Շահաւէտ թղթակցութեանց շարքը առաջ կը տանի Յովնան եպիսկոպոս՝ իր մտերմական նամակներովը Հռովմէն առ Մխիթար՝ ստէպ ազգային — եկեղեցական հարցերու շուրջ տեղեկութիւններ հասցնելով, անոնց կարգէն է և հետևեալը։

Գերարգելոյ Հօր տեառն տեառն
Մխիթարայ Այրարատի

... Ներ հոկտեմբերին խռովութիւն մեծ անկաւ ի մէջ խաչատուր վարդապետին և տէր Յակոբին։ Պատճառն է, զի մուրհակ չարախօսութեան ունեալ են ի սանթուխիցն հինգ փունթով ի վերայ կարգաւորացն արեւելականաց, թէ փոխեալք են զսովորական արարողութիւնս եկեղեցւոյն իւրեանց, մանաւանդ ի պատարագն։ Դիրն տուաւ Սաքրիպանդին, և նա խաչատուր վարդապետին, զի ցուցցէ կարգաւորացն և գրեսցէ զպատասխան։ Գրեաց նա զպատասխանն և տարեալ եղոյց կարտինալին, որ ասաց. Լաւ է, բայց պիտոյ է զի ստորագրիցին եպիսկոպոսք և քահանայք գտեցեալքն ի Հռոմ։ Եւ նորա առեալ զգիրն մինչ դարձաւ ի ժամն, էգիտ զտէր Յակիանն, որ եկեալ էր ի եայլայէն։ Պատմեալ նմա զիրն և ցուցեալ զգիրն՝ ասացեալ էր թէ պարտի ստորագրել։ Եւ նա ձգեալ էր առ վաղիւն։ Եւ ի վաղիւն ընդ առաջադրելն լաւ թէ ինչ կարծորաս, կամաց կամաց։ Միւսն ևս զայրացեալ ելանէ առ վրդանէս եպիսկոպոսն, զի ասացէ նմա ստորագրել. ևս նա հրաժարեալ է ի ստորագրելոյն, թէ ստութեան ես ոչ վկայեմ, զի ներ հայոց ոչ գոյ թիւ պատարագ։ Ընդ բորբոքիլն լուեալ է ի տէր Յակիանէն զնախատինս ոչ թեթեւս։ Գնաց առ կարտինալն և ասաց, թէ են ոմանք, որք ոչ կամին ստորագրել. և նա հրամայեալ էր առաջադրել ամենեցուն, զի ծանիցէ թէ ովք իցեն ստորագրողքն և ոչ կամեցօղքն։ Նա մինչ առեալ զթուխտն և դարձաւ, վրդանէս եպիսկոպոսն, տէր Յակիանն և տէր Պաղտասարն գնացին առ կարտինալն տալ զպատասխան թարց գրի և զանկատեալք գնմանէ թէ ամենայնում իրի ներ խառնէ զինքն, և զփոքր իրն մեծացուցանէ ազաղակաւ, մինթէ ոչ գտանի ոք՝ որ պատասխանիցէր առաւել բարեալէս։...

Գերարգելութեան քոյոյ նուաստ ծառայ

գրեցաւ 1725 Նոյեմբերի
ի սուրբ Ննոփրին

Յօհան Եպս. Սեբաստիոյ

ԻԸ.

«Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ» համալից հատորին մէջ[1] նամակագրիս գործունէութեան վրայ բաւական բան կը գտնենք։ Հեղինակը զանիկայ առաքելական ոգւով վառուած, ազգասէր, գործունեայ ու յաչողակ կ'անուանէ իրաւամբ, վասն զի «ամենայն զօրութեամբ, ճարտարութեամբն ու ճարտարապանութեամբը «կը ջանայ որ թէ՛ զկնեքլա ու թէ՛ զՊաշտպալով ազատ քաղաքաց կարգը բարձրա«ցընէ։ Ջինքը – կ'ըսէ – մէյ մը վիեննա, մէյ մը Էրմանշդատ կը գտնենք, խօսելու, «գործելու, արտօնութիւններ ընդունելու, մէկ խօսքով իւր ազգը բարձրացնելու ու «երջանիկ ընելու համար»։

Այս հակիրճ տեղեկութեանց հետ՝ հետևեալ տողերն ալ անոր արդիւնաշատ կենաց մէկ քանի կենսագրական գիծերը կը ներկայացնեն. «Որչափ յարակցեալ պա«րագաներէն կրնանք հետևցնել, տարիներէ ի վեր կայսերական արտօնութեանց «հրովարտակի մը խնդիրն կար Եղիսաբեթուպոլսեցւոց մէջ։ Այս միջոցին է որ «(իբր 1724–ին) Հռոմէն կը խրկուի Դրանսիլուանիա առաքելական քարոզիչ մը։ «Այս գիտնական ու գործունեայ անձն Պաշտպալովցւոց քով միայն «միսօնար»

---

1. Գովրիկան. տպ. Վիեննա 1893 էջ 60։

« անունով ծանօթ է. — որ Թևրեւս Մինաս Թորոսեան վարդապետն ըլլայ. — բայց « վիճնայի արքունեաց մէջ ճանչցուած ու կայսրէն մեծապէս գովուած անձ մըն է։ « կարդալոս Ջ. գինք « եռանդուն ու հաւատարիմ հպատակ, գեղեցիկ արուեստից ու « փիլիսոփայութեան, ինչպէս նաև աստուածաբանութեան վարդապետ կ'անուանէ. « ու քանի մը տարի ետքը հրատարակուած կայսերական արտօնագրին մէջ Պ ա ր ո ն « Ն ա ն (Barun) անունով նշանակուած է »։

Գրչարգիի Հայր իմ ի տէր

... սկսբանէ Նօննիոսն ըստ ասացելոյն իմոյ և խնդրուածոց իմովք իմիենիս էառ բարեխօս լինիլ, և եղեւ, մինչ Ի տարի Օգոստոս եպիսկ. ոչ կարաց կէտն այն տալեց չինել, և հաստատեալ Ե զօլաթա տան գլուխ տալ տարոց տարի երկրին, որ միայն կամեր զհայս գոլ միաբան ոչ դնելով քանականութիւնն տալեց, այժմ մեծ դժվարութեամբ եղև, այսինքն ամառնա(յ)ին ժամանակն. լսելով ես զայս լցեալ մեծաւ ուրախութեամբ պատրաստեցայ ի ճանապարհն, զի այս էր մեծ արգելմունք։ Հայք լուեալ զայս զարմացան թէ որպիսի հեշտ բան եղեալ է, և այսչափ տարի յամեցեալ է. սկսեցին քարշել զտեղիս և զագարակս Օլախ եպիսկոպոսի, որ անհամբեր և ի բնութենէ բարկասիրտ չարախօսեաց յայտնի ընդ(դ)էմ Հայոց (և ոչ եղև չարագոյն) ընդդէմ Կայսերական իշխանաց։ Հայք չուտով գրեցին ինձ մնալ աստ, զի և զայս հաստատիցեմ, և իշխանք բարկացեալք գրեցին աստ, ուստի վասն բազում հպարտութեան նորա յափշտակեցին գտեալ առիթ զագարակս, և եւին Հայոց։ Մինչև զայս յաղթեցին հայք, սկսեցին և զայլս պահանջել, այսինքն ոչ կամին պահել և օգնութիւնն տալ կայսերական զինուորաց, ի ժամանակի նեղութեան և պատերազմոյն, որ է անգէտ և անկարելի խնդիր. քանզի ի նմին ժամանակի ոչ եկեղեցիք և ոչ եկեղեցականք ազատ կին։ Կարես աստի իմանալ թէ որչափ վիշտ և նեղութիւն քաշեցի. նուաղեցաւ զօրութիւն իմ և մաշեցայ։ Ուստի խնդիր գրեցի իշխանի միոյ կայսերականի, որ զհայս խրատիցէ առնուլ զայսմիկ չնորհս և ոչ երբեք յամեցուցանէ զփրիվիլեկումն, քանզի այսմիկ կերպիւ կորուսանիցէ զնա, մինչ երկիրն լուեալ զպարգեւեալ չնորհս Հայոց օր ըստ օրէ ոչ դադարի գանգատ գրել աստ կայսերի, թէ որպէս կարէ և կամի զբոլոր երկիրն ոտնակոխ առնել և զփոքրիկ ազգն բարձր(ա)ցուցանել. և զայս խրատեալ նոցա հանգան հայք և լուեցին ի խնդրոյ, և թէ սակաւ ինչ ժամանակ թողեալ իցէին՝ սուգասցէս կորուսանէին զչնորհս. այժմիկ գրեցին հայք, զի առեալ զփրիվիլեկն երթիցեմ ի տուն, բայց աստ մնալոց եմ մինչեւ մեծ պաք։...

Պատրաստական ծառայ

ի Վիէննայ 29 սեպտեմբ 1725 Տէր Մինաս Պարոնեան աստուածաբանութեան վրդպտ.

ԻԹ.

Հետագայ նամակը պատմական տեսակէտով կարևոր կը դատենք, նկատի ունենալով նամակագրին անձը՝ որ ոչ միայն կը զբաղեցնէ ցարդ մեր բանասէրները իր շահեկան թղթերով՝ այլ որովհետեւ ինքն իսկ իր բաժինը բերած է մեր ազգային մատենագրութեան մէջ, (տես աևոր երկարուն ցանկը ԳԱԼԵՄԿԵԱՐԵԱՆ « Պատմ. Երկու Պատրիարքներու... » էջ 289-32)։ Յովնան Եպս.ի այս թուղթը իր կենսագրութեան մէկ պակաս կէտը պիտի լրացնէ այնու՝ որ երևան կը բերէ իր մօրը մահուան պարագաները և թէ անոր ուր թաղուած ըլլալը։

Գերարգելոյ և գերիմաստի տեառն տեառն

Մխիթարայ Աբբայի

Ցայտ առնեմ բազմաւ սիրով, ի փետրուարի 13, մայրն իմ անկաւ ի մահիճս ծանր ցաւագնութեամբ և տագնապիւն յոյժ՝ ոչ ունելով զհանգիստ։ Ի չորրորդում առաւօտոյն՝ մինչ հայցէի ներ պատարագին այցելութիւն իմն ի Տեառնէ, իսկոյն եկն ի միտ իմ արա- գահաս օգնութիւն սրբոյն Փիլիպոսի Ներէի և աւարտեալ զպատարագն՝ դարձայ փութով ի տուն, և պատմեցի համառօտաբար մօր իմոյ զերիս կամ զչորս հրաշս բժշկականս ի նոյնոյ սրբոյն արարեցեալս, որովք բորբոքեցաւ դէպ առ նա ջերմեռանդութեամբ։ Ցետ յայսմիկ ծարաւեցեալ խնդրեաց զջուր, առ ժամայն բերեալ զմանիկ սրբոյն՝ զոր ունէի, չօշափեցի նովաւ զջուրն բաժակին, և մատուցի ասելով. Նախ ասա զմի հայր մեր և ողջոյն, և ապա յանձն արա զքեզ հոգաբարձութեան սրբոյն, հայցելով զի լինիցի վե- րակացու քեզ ի նեղութեան քում և օգնական, զի թէ օգտակար իցէ քեզ ապրիլն ժա- մանակ ինչ և հաճոյ կամացն Աստուծոյ՝ ընկալցի միշնորդութեամբ իւրով վասն քո՝ զշնորհն առողջութեան փութով. բայց թէ հաճոյ իցէ տեառն՝ կոչել այժմ զքեզ առ ինքն, ընկալցի նոյնպէս միշնորդութեամբ իւրով՝ զշնորհն այն փութով։ Ցայս լուեալ՝ կալաւ զբաժակն ի ձեռին, արար զայն ամենայն՝ ջերմեռանդ սրտիւ և էարբ հաւատով։ Իբր էանց ժամ մի, սկսաւ քրտնիլ, որով եղև դիւրութիւն մեծ և հանդարտեցաւ փոքր ինչ ի վշտալի տառապանացն, և յուսով առողջութեան էկաց աւուրս ե, և երեկոյին այնորիկ եկն Սուգիաս նայեն. այց առնել զնա, և խոստովանեցուցեալ մխիթարեաց բանիւք ոգևո- րականօք և գնաց։ Արդ ի գիշերին այնմիկ կացի ես առ նմա ի ծառայել, և ի չորրորդ պահու գիշերոյն ասէ ցիս. Տուր ինձ զկաչն՝ յորում իցէ մասն սրբոյն։ Իբրև մատուցի կալաւ երկոքումբք ձեռօքն, համբուրեաց երիցս, եդ ի վերայ աչացն և երեսացն ասելով. Սուրբդ Աստուծոյ հաս ինձ օգնութիւն ի նեղութեան իմում, և տուր ինձ հանգչիլ սակաւ մի քնով, զի ոչ կարեմ այլևս դիմանալ։ Ցայս ասացեալ ետ ինձ զկաչն և ընկողմանե- ցաւ։ Ի մէջ գիշերին էկաց առ նմա տէր Օհանն ի ծառայել, և ես գնացի ի ննջել։ Իններորդ ժամուն խնդրեալ զսակաւ մի ապուր և կերեալ է ձեռամբ տէր Օհանին։ Մե- տասանին՝ հայցեալ է զանօթ օրհնեալ ջրոյն, համբուրեալ մեծաւ ջերմեռանդութեամբ և մատամբ իւրով սրսկեալ է զդէմն, զկոկորդն և զկուրծն, և տուեալ զանօթն՝ ընկողմա- նեալ է ասելով. Ցիսուս, Մարիա, և այլն, քանի մի անգամ։ Ցետ պահու միոյ աղա- ղակեալ է. Հասի՛ր տէր Օհան, զի մեռանիմ աւասիկ։ Եւ նա դիմեալ առ նա ասելով. Ցի՞նչ խնդրես. ասացեալ է թէ կալ զծածկոցն զի դառնայցեմ ընկողմանիլ առ միւս կողմն. զկնի դառնալոյն կացեալ սակաւ ինչ՝ աւանդեալ է զհոգին իւր ընդ լուսանալ շաբաթին, խաղաղական մահուամբ ի ձեռն ստեղծողին իւրոյ։ Եւ ընդ լուսանալ միա- շաբաթին՝ բարձին զնա և տարան յեկեղեցի Հոգւոյն Սրբոյ, ուր զկնի պատարագացն՝ թաղեցին առաջի սեղանոյ երանեցեալ կուսին։ ...

Գերարգելութեան քում Նուաստ ծառայ

Գրեցաւ 1726
Ի Մարտի 9

Ցօնան Եպս. Սեպաստիոյ

Լ.

Թէ՛ քաղաքական և թէ հայ եկեղեցական պատմութեան մասին հետաքրքրական անցքեր կը պարունակէ վ. արդ. Ներսէսեան Հ. Միքայէլ վ. Ներսոսացւոյ հետևեալ նամակը։

Վերապատուելագունեղի տեառն տեառն Աբբայ Հօրդ իմոյ Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի որդիական պատկառանօք և համբուրմամբ սուրբ աջոյդ, ողջոյն։

. . . աղայ Մանուէլն Շէհրիմանեան.. խնդրեաց զոմանս գրեանս, որ է եղբայր աղայ Աստուածատրին, որ եկեալ է աստ ընդ հրեչտակի աղուանից իշխանին, որ է իբր խորհրդական և առաջնորդ նորին, որդին ևս ընդ իւր է՝ աղայ սահրատ կոչեցեալ։ Ունէր զդիտաւորութիւն ուղարկել զնա այդր առ եղբայրն իւր, բայց տակաւին անորոշ է վասն ումանց նկատմանց ի կողմանէ տաճկին, թերևս զհրաման առեալ ուղարկիցէ։ Եւսաև ճիով չրջի հետիոտս. բնաւն չորս հինկ հայ կան ընդ հրեչտակին. մինն իբրև թարգման, միւսն իբրև խորհրդական, և այլք իբրև ստորագրեալք նոցին. Գ կամ Դ անգամ աղայ Մանուէլն պուլուչմիշ եղաւ մատանւոյն, կարի ծանր թուեցաւ տաճկաց վասն հայոց այսոցիկ. և ի մէջ նամէին զմեծամեծս բարբառեալ էր տիրոջն չօշ քաղաքի. կայսր անուանեալ է զինքն. ճշմարիտ թուրք զինքն անուանեալ է. ի բաց կալ ստիպէ ի թագաւորութենէն յայնմանէ և զառեցեալն թողուլ։ Ասացեալ է թէ տէր յայժմ ինձ կամեցեալ է թագաւորել այնմ բովանդակ աշխարհի, որովհետև առի զթաղթն և ունի կենդանի առ ինքն զշահն. և զայլս բազումս ասեն։ վասն որոց սգաւ խորհուրդ արարեալք՝ կարգացօղքն վճիռ ետուն պատերազմիլ ընդ նմա. յաղագս որոյ սկսան զզօրս առաքել օր ըստ օրէ, սկսեալ յօրէ բարեկենդանի կիրակէին։ Անատոլու զմեծ նեղութիւն ունին ստորագրեալքն։...

. . Կարապետ վ. Գաղատիու առաջնորդն եղև կաթուղիկոս յառաջին կիրակի աղուհացից ի յերկոտասան եպիսկոպոսաց յեկեղեցին Աստուածածնայ, յերեք ժամու գիշերուն սկսան, մինչև էանց կէս գիշեր։ Հրամայեցաւ ծոմարձակ լինել և գինի ըմպել, և բաց պատարագ առնել ի նոյն եկեղեցի, և այս ինն օր։ Ցետ երից աւուրց զպատրիարգն արար եպիսկոպոս, և այլք եպիսկոպոսունք յայլս եկեղեցիս՝ զքահանայս, զսարկաւագունս, և զդպիրս յոլովս ձեռնադրեցին։ Եւ ի յիւրաքանչիւրս զնզովս արտաբերեցին ընդդէմ առիծ[1] հայրապետին և ժողովու նորին. բայց ի ձեռնադրութեան կաթուղիկոսութեան երկպառակէ բանն։ Նաեւ պատրիարգն յաւուր ձեռնադրութեան կաթողիկոսին ծանուցումն արար, թէ ով ոք յաւուր այսմիկ խոստովանի և հաղորդի՝ ամենից մեղաց թողութիւն առնու, թերևս գիտակ է, որպէս ի կացուցման ծայրագոյն քահանայապետի՝ լինի լիակատար ներողութիւն։ Նաև երկու հայ գերի ախչկունք անկեալ առ ոտս կաթուղիկոսին վասն ազատութեան՝ ծանուցումն արար ասելով. Ով ոք ազատէ զսոսա և արասցէ իւր կին՝ տաց հրաման զի ի չաբաթու աղուհացիցս պսակեսցեն զնոսա։ . . .

Մնամ պատրաստական, Նուաստ ծառայ ամենայնի
Գերյարգութեան քում

Գրեցաւ ի Թուրս Փրկչին 1726ին։
Մարտի 23, ըստ նորոյ հաշուին.
գիր վեցերորդ ի Կոստանդինուպօլսոյ

Հայր Մխայէլ Վ. Սեբաստացի

ԼԱ.

Բաց ի նորագոյն տեղեկութենէ մը՝ զոր կու տայ իր մասին Ցովնան եպիսկոպոս՝ խորհրդաւոր հարցումներ մ'ունի այս անգամ առ Մխիթար Աբբահայր։

---

1. Léon = առիծ։

Գերարգելոյ և գերիմաստի տեառն տեառն
Մխիթարայ Աբբայի

. . . արդ սուրբ Ընծիրիսոի թաղէն չուեալ, եկի առ գօլէճն փօնթէսխսթու՝ հանդերձ տէր Յհանիւն, և փոքրաւորիւ միով, այսօր ի օր է, որ բնակիմ աստ ընդ հասարակութեան: Գիտեմ որ այժմ գոանիս ներ զբաղմանց չինաածոյն, ասացէ տէր զերջանիկ վերջաւորումն, սակայն չնորհ առնես, և միջնորդիւ միով տեղեկանայցես թէ յոյնք՝ նոր ձեռնադրեալ եպիսկոպոսացն զորպիսի վկայականս տան, ի վերայ թղթի գրեն, թէ մագաղաթի. ինձէն ի վերայ նորա՞ է իբրև զմերն, թէ ի վերայ գուշունի հանգոյն լաթինացւոց. Տէկիրմէն առասին, որ կոչի միլոյ, լոկ եպիսկոպոսարան է՝ թէ մէթրոփօլիթան է: Փութով տեղեկացեալ գիսին՝ գրեսցես ինձ, զի ներ խօսակցութեան վիճաբանողաց մինն՝ խնդրեաց յինէն խորհրդաբար իմանալ զվերոգրեալն և յոյժ թախանձեաց, որ հարկաւորեցայ գրել, զայս առաւել կարես իմանալ ի ուղղափառ եպիսկոպոսէ նոցին՝ որ ի վանքն մեր պատարագեաց. կամ ի այլոց՝ որպէս և հաճիս, վասն զի են և գոն բազումք ի տեղւոջդ՝ որք գիտեն յոյժ բարեպէս : . . .

Գերարգելութեան քում նուաստ ծառայ

1736 ի գօլէճն
փօնթէսխսթու
Մայիսի 18

Յօհան Եպս. Սեբաստիոյ

ԼԲ.

Կարգալով հետևեալը՝ միակ խորհրդածութիւննիս պիտի ըլլայ՝ թէ անցեալը իրական ապացոյց մ՚է որ կը յորդորէ չհաւատալ բնաւ ամուլ խոստումներու՝ մինչև անոնց իրականութիւնը։

Վեհապատուելագունեղի տեառն տեառն Աբբայ Հօրն վերոյ
Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի
և այլոց վերայնոց բնաւիցն

1726 Յուլիսի 1. ի Կոստանդնուպոլիս

. . . Մեծ վրէժխնդրութիւն գոյ աստ ի Ստամպօլ Էֆէնտիսուն վասն զգետուց և մուճակաց հայոց և յունաց և կանանց, զի բազմաց կանանց հրապարակաբար ի ճանապարհի գթարփոչն հատին, և զօձիս վերարկուացն, զդեղին մուճակ հագանիլն արգիլեցին, թէև իցէին ի ներքոյ դրօշակի այլոց ազգաց. և այս ամենայն վարկանի պատճառեցեալ գոլ ի յաւերմանէ զօրաց տաճկաց ի հայոց, թէպէտ ոչ գոյ ձայն և խօսք զայսմանէ յայտնի: Նաև արար ի վերայ ձիանց բեռնակրաց զօլագունս ի վերայ սէմէրից, զի մի նստիցին յետոյ տեարք ի վերայ նոցին, մինչ թափիցեն զբեռինս, այլ հանգիցին, և տեարք հետիոտս գնայցեն: Նաև օր աւուր նոր լինէ արտակայանայ, և գոյ ձայն թէ կանայք հայոց և յունաց զսեաւ մազէ փէրէճէ զգեցուցանելոց են, Աստուած վերջ բարի տայցէ: ի յանատօլու մեծ խառնակութիւն և աւերումն գոյ ի բազում տեղիս, թէ պատճառաւ քննութեան ուղղափառութեան և թէ պատճառաւ զօրաց անօրինաց անցաւորաց:...

Հայր Մխայէլ Վ. Սեբաստացի

ԼԳ.

Ժանտամահի մը անգութ հունձքն է՝ զոր կը նկարագրէ Հ. Միքայէլ Վ. Սեբաստացի այսպէս.

Վերապատուելագունեղի տեառն տեառն Միխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի, Աբբայ Հօրդ մերում

. . . լուաք թէ նաւերն հասեալ են ի Պօղչա ատան. թուի թէ ոչ զայ ի ներս հրեշատակն վասն երկիւղի մահուան. բարւոք լինէր թէ մերայինք ևս ոչ զայցէին. զի կարի սաստիկ է և երկարատև եղև մահն. և խեղճ բազումք են. և բաց ի մահուան՝ նաև պէսպէս հիւանդութիւնք գոն. են տունք՝ յորս չորս, են՝ յորս հինգ, մեռանօղք ի մէջ երկուց կամ երից կամ չորից աւուրց: Գրեթէ իւրաքանչիւրում աւուր նորապէս չահիմք զմեզ և զամենայն բարեկամս մեր ի ձեռն ուժոյ աղօթից և պաղատանաց, թէպէտ նաև ի մէջ ամանց բարեկամաց մերոց անկաւ մահն: Նաև վերապատուելի Պօղոս Վ.ն ևս ընկղմեցեալ եղև, անկաւ ի մահիճ ի Սամաթիա ի տան Պօյաճոցն, տնեցիք հանդերձ մանրբ փախեան յայլուր. միայն Ծնաց Եղիա Վ.ի քոյրն և փեսայն և պառաւ մայրն, կալով ի հեռուստ ի հին տանն. և Հայր Պօղոսն ի նորաշէն տանն եդեալ ի մահիճ, և վերապատուելի Պօղոս Վ. կոչեալ զմայրն իւր ծերունի առ ինքն, որպէս մերձ առ ինքն լիցի և ծառայիցէ... Նաև զհրեայ բժիշկ մի կոչեալ էր, զի դարմանիցէր, եդեալ ի վերայ մահավիրին (որ էր ի յաճուկն) զեախու, զի կամ ծակիցէ, կամ փարատիցէ, որպէս յայժմ երևի թէ փարատի... : Նաև ի մէջ տանկաց ծածկապէս աւերութիւն ըլոյ. ասեն թէ մերձակայ ժամանակիս ֆէսատ մի ելանէ. խոշտանկէ գքրիստոնեայս: Մեծ պարոնին վասն ասեն թէ բանավարութիւնն կորուսեալ է, զի մի պսակ գալոց է ի գլուխն, զի յոմանս պալատս չրջեալ, ի գիշերի յաներևութից քարկոծիւր պալատն, զբազում պահապանս եդեալ, ոչ կարաց վերահասու լինել թէ ուստի իցէ. վասն որոյ երկուցեալ՝ ի միոյն առ միւսն գնայր. և անդ ևս գնոյն զգացեալ, վասն որոյ զամենայն գէտս և զմոգս կալեալ եդ ի բանտի: Նաև զօրք սոցին ի յարևելս աւերեցեալք և կոտորեցեալք ասին, բայց թէ ուստի, ոչ լսի: Նաև գերեզմանատեղ սուտ մարգարէին առեցեալ գոլ ասի: Նաև ի Մարաց աշխարհն գլուխ մի բարձրացեալ խմբօք, աւերեալ և գերեալ զայն աշխարհն: Եւ բազում նեղութիւն ունին անատօլցիք և արևելեանք ենթ տէրութեան սոցին եղեալքն:...

Գերյարգութեան քում, ծնամ պատրաստական ծառայ ամենայնի

Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1726 Սեպ. 1. ի Կոստանդնուպոլիս
գիր — 12

ԼԴ.

Մայրավանքիս դիւանին մէջ հետագայ նամակին հետ միասին կը գտնուի հայ թարգմանութիւնը ուրիշ ընդարձակ պաշտօնական վաւերաթուղթի մը՝ որ Ս. Աթոռին կողմանէ տրուած է առ Յովհան Եպիսկոպոս:

Նկատելով որ սերտ առնչութիւն ունի մեր հրատարակած նամակին պարունա-

կութեան հետ, և բնականաբար ամենէն առելի շահագրգռուողը յիշեալ անձնաւորութիւնն է, ուստի անտարակոյս՝ եթէ նոյն իսկ ինքը չէ թարգմանիչը՝ սակայն ինքը ուղղակի թարգմանել տուած ու ղրկած ըլլալու է առ Մխիթար։ Թուական չունի, բայց ինքնին կը հասկցուի որ Յովհաննու Նամակէն վերջն է կարգով։

Այդ վաւերաթուղթին մէջ քան և եօթն համարներով արտօնութիւններ կը շնորհուին առաքելութեան փափագով վառուած Յովհան եպիսկոպոսի։

Կոնդակին խորագիրն է հետեւեալը. Հրամանատուութիւնք ի սրբազան Տեառնէն մերմէ տէր Բենեդիկտոսէ խնամօքն Աստուծոյ Պապէ երկրորդասանեկերորդէ շնորհնկալացը Գերյարգելոյ Հօր Տեառն Յովհաննու Եղիայեան Հայկազնոյ եպիսկոպոսի Ակռատիոյ, վիսիօնարի Առաքելականի վասն հայոց որք ի տեղիս Լիւստրա Գաւառին անտիոքացոց ի փոքր Հայաստան ըստ ուղղաւորութեանցմէ Սրբոյ Ժողովոյն տարածմանեն Հաւատոյ»։ Ստորագրած են «Պետրոս կարդ. Ապոլինոյ Կարտինալ Օրթօսօճի» և «Ալեսանդրոս Լանչիսի սրբոյ Հռոմէականի Քրնեոյրանեն Նօտար, այսինքն Առեղագրիր»։

Այս հակիրճ տեղեկութենէն վերջ դնենք Յովհան եպս.ի մեկնումին գլխաւոր շարժառիթները։

Գերարգելոյ և գերիմաստի տեառն տեառն Մխիթարայ Այբրահոր

....եթէ տէր աջողեսցէ, մայիսի Դ կամ Ե, չիմ ասեմ պարքայով։ Իրաւի զայսպիսի միտ բնաւ իս չունէի՝ զոլով յուսահատ ի դաղարմանէ հալածանացն։ Բայց Յակոբ եպիսկոպոսն ստամպոլցի, որ այժմ առ Աստուած փոխեցաւ, ետ ինձ տեղեկութիւն եօթնից գիւղիցն Անտիոքու, զոր իբրև լուայ, եկն առ իս բաղձանն իմն գնալոյ ի կողմն այն, և ասաց այս բաղձանն ներ սրտի իմում, և ստիպէր օրստօրէ՝ յայտնել Սրբոյ Ժողովոյն։ Ջկնի հնկից ասեմ՝ մինչ տեսի թէ տակաւին կայ և ստիպէ զիս յանախաբար, գրեալ ծանուցի Ժողովոյն սրբոյ այսու մտօք. եթէ իցէ յաստուածակոյս կողմանէ, Ժողովն հրամայէ, և զապրելիսն իմ հոգացեալ առաքէ. ապա թէ իցէ դրդումն իմն բնութեան, կամ պատրանք իմն դիւաց՝ խափանէ զանց առնելով։ Իսկ ես կայի ամենևիմբ անզանազան։ Ջկնի ծանուցմանն էանց եօթն ամիս՝ և ոչ գոյր պատասխան, մինչ զի ես ևս մոռացայ և ոչ ունէի այնքան փոյթ. և ապա յաւուր միում կարտինալ Պէթրէն ձայնեաց զիս և քննեաց զմիտս իմ. իբրև տեղեկացաւ, ասաց ինձ, թէ Ժողովն ինձ յանձնեաց զիրողութիւնս այս, տայ քեզ միայն ճանապարհի խարճէ՝ և ոչ այլ ինչ, բայց ես ծանուցի զայս սրբազանի հայրապետին, և նա յանձն էառ տալ քեզ ապրելիս, այսինքն՝ ամիսն վեց սկսեալ՝ ներ առաքելականի պանդխտութեան քում։ Լեալ ի նմանէ զայս, իսկոյն մատուցի զշնորհակալութիւնս, և յայնմ օրէ սկսայ տեսանել զպատրաստութիւնս։...

Գերարգելութեան քոյոյ

Նուաստ ծառայ
Յովհան եպս. Սեբաստիոյ

1728, ապրիլի 24
ի սուրբ Մ. Եգիպտացին
[Հռոմ]

ԼԵ.

Առաջին անգամն է որ կը ներկայանայ մեր այս հրատարակած թղթերուն մէջ Հ. Յակոբ Բուզայեանի անունը։ Ներկայ գրով կը հաղորդէ առ Մխիթար շահեկան

լուրերու շարք մը։ Ժանտամահին նկատմամբ առատօրէն տուած բազմամասն տեղեկութիւնները՝ որ յոյժ հետաքրքրական են՝ արժանի են պատմութեան բաժնին անցնելու։

Գերդաստանիդ տեսաւ մերոյ հառաւիծի արբայի Հօր Հոգևորի մերոյս Մխիթարեանէ

Կարօտալի յղցիւ և սիրալի տենչանօք, իբրու ներկայ եղեալ երջանիկ Հօրդ՝ զխանդաղան համբոյր հանդերձ յիսուսաւանդ ողջունիւ մատուցանեմ. և ընդ ողջունիս զգործոց իմոց և գրկպուածոց համառօտակի ծանուցանեմ։ Եւ զի յետ կելոյս իբրև զչորս ամիս Տրապիզոն մնծաւ մխիթարանօք պատմելոյ զբան տեառն, լիալիր սիրով ուղարկե[ց]այ յեղբարց ի Կումուշխանայ։ Եւ զայլ ինչ գիտելիս Տրապիզոնու նախ քան զայս գիրս գրեցի, զոր յուսամ ժամանեալ գոլ առ ձեզ։ Եւ ի Կումուշխանայ սակաւ գոլոյ վասն ուղղափառաց՝ ոչ յամեցի անդէն աւելի քան զամիս մի, զի մի դատարկասցի բան քարոզութեան, և ի նմին եղեալ զիրակութիւնն գրեցի նախ քան զայս. ուստի չուտով ուղարկեցայ ի նոցունց ի կարնի։ Ի նմին գտեալ զցանկալին իմ վերապատուելի Հայր Յակոբն՝ ոչ սակաւ լիացաք մխիթարանօք իրերաց . . . ։ . . . Եւ ի կարնոյ յունվարի ելի ի ճանապարհ, և հասի ի վ. աւուրն՝ ի գիւղ մի մերձ Ախսխոյ. և անդէն մինչ զտեղի առեալ էի յաւուրս երիս՝ ահա եկին իշխանք քաղաքին տէր Յով(հ)աննէսիւն, և մնծաւ ընդունելութեամբ ածին ի քաղաքն։ Եւ ի նմին յետ ի գործ ածելոյս զանպիռնն չորս ամսեայ ժամանակաւ՝ յարեաւ կոտորիչ ժանտամահ մի հանգոյն Մարսիլիոյ ժանտամահին. մինչ զի հազիւ գտանիւր մարդ կենդանի՝ որ թաղիցէր զմեռեալն. ուստի ձայն եառաւ ժողովրդ(ե)ան մի փորձել զտէր ասելով. Որոյ վախճանն հասեալ է՝ մեռանի, և որոյ ոչ՝ ապրի։ Ապա որք լուանն ինձ՝ ելին ինև հանդերձ ի լերինս, թողեալ զկահ և զկարասին ի քաղաքն. և որք ոչ ելին ընդ մեզ ի լեառն՝ կամ յաղագս աղքատութեան և կամ յաղագս անհոգութեան՝ կոտորեաց զնոսա մահն անխնայ. և որք ի լերինս էին՝ զոհանայինն զԱստուծոյ և օրհնէին զծառայդ և ասէին. Եղեր առիթ հոգևոր և մարմնաւոր կենաց մերոց, յորժամ լսէին զանհամար մահացեալս զիւղից և քաղաքաց։ Եւ թէ որպէս ապրէաք ի լերինս՝ ոչ պատմեցից, զի մի առաւել ցաւեսջիք։ Եւ այս ահարկու մահն սկսաւ ի Շօշ քաղաքէ պարսից և տարածեցաւ ի բոլոր Պարսկաստան. և անտի եհաս ի Վրաստան. և մինչ կարծէի թէ ի տաճիկս չիցէ եղեալ՝ ահա եհաս գիր մի ի կարնոյ ի լեառն ուր էաք, գրեցեալ ի հօրէ մերմէ, նորում յետ ծանուցանելոյ զիրս հարկաւորս՝ մաղթէ զաղօթս ի մէնջ, աղագս սաստիկ ժանտամահին որ ընթանայ ի քաղաքն և ի գաւառս չուրջ գիւրև։ Եւ ոչ գիտէր հայրն մեր թէ և մեք ի լերինս ցրուեալ եմք յայնր աղագաւ։ Եւ մինչ ի լեառն էաք՝ ահա երևեցաւ ոմն մեծամորուս ի լեռնակողմէն, առ որ առաքեցաք ոմն իմանալ թէ ով իցէ. առ որ հարցեալ է այրն, թէ աստ իցէ քարոզիչն Ախսխոյու։ Իբրև ասացեալ է այր, ասէ ցմերայինն. Երթ և ասա նմա, թէ պատրի մի եկեալ է և խնդրէ զքեզ. և իբրև գնացի և տեսի՝ ահա էր վենէտիկցի պատրի մի գաբուչին ի ըէտէնթօր վանգէ և էր փախուցեալ ի կօրի քաղաքէ յաղագս ժանտամահին. և իբրև երկնչէաք զի մի գուցէ մահոտ իցէ, ասէ, մի հոգայք բնաւ, զի բազում օր է յորմէ հետէ ելեալ եմ, և ոչ բնաւ ի չէնս մտեալ իմ. որ և կեցեալ ընդ մեզ աւուրս երկուս՝ եկեալ ի ըէտէնթօրն. ուստի զայս գիրս ի լեառն գրեցի, և եառ նմա բերել. և գրիս մելանն է ի ծխոյ մախրի, գրիչն՝ եղէգն չանթից, իսկ թուղթն տաճկի. և երկընչիմ գուցէ մինչև եկեսցէ թուղթս՝ մելանն թափիցի. և լինիցի բանն աննշան . . . ։ . . . Եւ արդ լուարուք և զայլս հիշանալիս, զի յաւուր հսկման մարմնոյ և արեան տեառն՝ եկն եհաս ի քաղաքն նուիրակ մի Էջմիածնէ, որ էր Պաղեան. և մինչ չրջաբերէաք զսրբազնութիւնն մեծաւ հանդիսիւ՝ ծալեալ ծնկամբ նստեալ ի դասի՝ մումայր ինքն ընդ ինքեան և ասէր. Այդ ձեր արածդ՝ խռով եղնի իմ գլխիս. զոր իմանայք թէ զինչ կամի

ասել. և մինչև ի խաչանիշել զսրբազնութիւնն յաւագ սեղանէ՝ գրեթէ պայթեցաւ ամանջանօք ի փառացն Աստուծոյ, որպէս զդևն զերգեսացւոց որ ի դիւահարութեն էր մինչ եւես ի հեռաստանէ՝ զփառազարդ գալուստն Քրիստոսի բազում ժողովրդոց, ի սաստիկ նախանձոյն աղաղակել սկսաւ և ասել Ջի՛ կայ, և այլն։ Եւ յետ այնորիկ բսկսաւ ուր ուրեք զհակառակութիւնս խօսիլ գաղտ ի դէմ մասանց հաւատոյ (քանզի ոչ կարէր յայտ խօսիլ) և ես լուեցուցի զբարոզն մինչև ի ծոյն գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։ Եւ ի նմին աւուր յարեայ գրեթէ յաւելուն երկու հազար ժողովրդեանն, և ի ներկայութեան նուիրակին ջրել զամենայն հերձուածս գրեամբ հայոց և աստուածաշնչին. և դարձեալ նօքօք հաստատել զամենայն ճշմարտութիւնս հաւատոյ. և ինքն արձանացեալ ի դասի լսէր զամենայն. և ժողովուրդն լցաւ ամենայն ուրախութեամբ յաղագս աբիբերան լինելոյ հերձուածին. և բազումք զբարոզն զայն գրեցին, որպէս զի նաև այլոց հանդիպողաց՝ նովաւ պատասխանեսցեն։ Ապա յետ աւուրց ոմանց հարաւ ժանտամահն ի յոսկերս իւր և աշակերտին զոր ունէր և բարձան ի միջոյ. ուստի կատարեցաւ անէծն զոր ինքնին ասէր. խոով եղիր իմ գլխին։ Ահա ի սոցանէ եղև սկիզբն ժանտամահին, և յետ այսորիկ փախաք ի լերինս, զոր ի վերայ գրեցի։ . . .

Ընտրուկ ծառայ Տեառնդ
Հայր Յակոբ Բուզայեան(ն)

1728 սեպտեմբերի վերջն
և սոյն աւուրս եկի՝ ի քաղաքն [Ախլցխա]
առողջութեամբ և տէր պահեսցէ

ԼՋ.

Ակս թուղթը՝ իր պարունակութեան տեսակէտով՝ կրնայ շարունակութիւն և իբր լրացուցիչ մաս ծառայել նախընթաց ԼԳ. վաւերաթղթին մէկ գլխաւոր նիւթին։

Գերյարգելոյ Տեառն Տեառն Միխթարայ Հոգեւորի Հօրն իմոյ Աբբայի և Աստուածաբանութեան վարդապետի, ճանաչութեամբ սրբաւանակ ասլոյդ. ողջոյն ի տէր Քրիստոս

1728 Սեպտ. 25ին

. . . . կարի սաստկացաւ մահն ասացին ի Սահատ նոր եկօղքն. բնաւք վաճառականքն, որք էին աստ՝ նախապէս փախեան ի Սահատ ի յերկիւղէ մահուան. և մինչ անդ ևս սաստկացաւ, ոչ աստ կարեն գալ, զի եկեալքն ըմբռնին ի մահուանէ և մեռանին, և ոչ անդ ի քաղաքն կարեն ագանիլ, այլ կամ ի բացօթեայ տեղիս և կամ ի սուրբ նշան։ Թանկութիւն անկաւ աստ, զի ոչ ոք համարձակի բերել զցորեան բաց ի Սեբաստացոց։ Լուայ թէ ի Պարահիսար հուր յերկնից անկեալ հրդեհեալ է զքաղաքն բաց ի սաստկութենէ մահուան. ասեն թէ ընդ ամենայն երկիրն առաքաց զոյ սաստիկ մահ։ Յամասիա չորրորդ մասն մարդկանց հազիւ մնացեալ է. նմանապէս չրջակայ գիւղօրէքս այսորիկ քաղաքի։ . . .

Ընտրուկ ամենայնի նուաստագունեղ ծառայ
Գերապայծառութեանդ

Ի թուին Հայոց ՌՃՀԻ
Հոկտեմբերի 2
գրեցաւ ի Թոխաթ

Հ. Ս[տեփան] Վ. Թոխ[աթցի Պետրոսեան]։

ԼԷ.

Առօրեայ գործերու խղճամիտ համարատուութենէ մը և ծանօթներու և պարագաներու շուրջ լուրեր հաղորդելէ վերջը՝ Հ. Միքայէլ Վ. կու տայ առ Մխ. Աբրահայր հետևեալ հետաքրքրաշարժ տեղեկութիւնները։

Գերյարգելոյ Աբբայ Վրդ. Մերոյ, տևառն տևառն Միխիթարայ
Ասուածաբանութեան Վարդապետի

... ութ ինն ամիս է, որ ի մէջ ակնոցոց մեծ չփոթ և մտանութիւն և անիրաւութիւն և կռիւ գոյ վասն էյալէթի պարտուց և գործելու ըստկի վճարելու վասն մատենից։ Զի-բեարս մատենն մինչև 150, տարէն ի վեր եկողաց ազգականացն, առանց դատի և դատաստանի տուգանք առնուն, յառաջ սիւրկիւնի ձայն հանեցին, բայց մեծամեծ սառաֆք դադարեցուցին. բայց յայժմ կռիւ, անիրաւութիւն և մատնութիւնք լինին. ի մահտեսի Սահակէն 300 ղուշ առին. և զկնի սակաւուց ժամանակաց, գայլ ևս խնդրեցին, նա ևս յայժմ արգուհալ արարեալ վէզիրին, ի դատաստան մտանելոց է, յետոյ թէ զինչ լինելոց է ոչ գիտեմք։ Մինչև ի սահաթճի Պետրոսին տղէն, 20 ղուշ առին. որ սահաթճի Պետրոսն ի Ստամպօլ է ծներ. և այս ևս մեծ պատիժ մի է ազգին մերոյ, վասն զուման նոր հրահալելեաց որով հարստահայ տաճիկն, ազգն մեր այրի, կարծեմ թէ նեռն մերձ է գալու...։ Նաև հալածանք ոչ պակասին. ևս առաւել ի մեծ պահուցս կասկածիմք լինիլ վասն ծռազատկին, մի գուցէ ուղղափառքն ընդ լաթինացւոց և ընդ յունաց առնիցեն, որք են ի միասին, այլ զիւրեանց ծուռն, յոր և մեծ գտանեցաք առնել ընդ Հայոց, զի եպիսկոպոս այնպէս հրամայեաց։ Նաև յունաց և հայոց պատրիարքն միմեանց խօսք և զրոյց արարին առաջի իշխանաց տաճկաց մատնիչ լինեն միմեանց, և յերուսաղէմ երկոքեանն ևս առնիցեն զիւրեանց սովորութիւնն ուրոյն, և երկոքեանն ևս յեկեղեցիս իւրեանց ծանուցումն և բանադրանք կարգեալ, զի մի ազգ միւսոյն վատ ոչ ասիցէ. բարի և մեծ իմն է, թէ այսպէս լինիցի. և այսպէս ասեն թէ հայք ֆէրման առեալ և ուղղարկեալ յերուսաղէմ, զի յոյնք ի յիւրեանց զատկի չորեքշաբթի չուեցին յերուսաղէմայ։ Ի վերայ այսր ամենայնի յունաց կանայքն զտանաւոր չինեալ՝ ի բաղանիս զկանայս հայոց ծաղր արարեալ ասեն։...

1729 *մարտ 2ին*
ի տօնի մոխրոց ձեր
[Թօխաթ]

Գերյարգութեան քում
Միամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մխքայէլ Վ. Սեբաստացի

ԼԸ.

Հետևեալ նիւթը հետաքրքրական ըլլալէ աւելի՝ պատմական տեսակէտով կարևորութիւն ունի։ Ահմէտ Գ.ի սուլթանութեան ժամանակն է՝ որ տեղի ունեցած են մէջ բերուած դէպքերը։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ Մերոյ տևառն տևառն Միխիթարայ
Ասուածաբանութեան վարդապետի

... ասէն բուռն արկանեմ զերկուց իրաց համառօտապէս ճառել. զի իբրու երկու ամիս յառաջ մատանին զազանիս այսորիկ հրամայեաց, թէ զորմունս տանց թէ փողո-

ցաց, թէ չուկայիցն և թէ զպարիսպս քաղաքին ըստ տեղւոյն, կամ բոամբ սպիտակացուցանիցեն, կամ կարմիր դեղօք ներկիցեն, որպէս արարին իսկ, վասն պատուելոյ զեկող հրեչտակն Աղուանից իշխանին, տիրոջն չոչ քաղաքին։ Մինչ մերձեցաւ ժամանակն մտման նորին ի քաղաքս, հրամանն սաստկանայր հանդերձ տուգանօք թէ որ ոչ արասցէ ըստ հրամանացն, և կարի փութացուցանէին։ Ի Թերսհանան եղեալ նաւերն և կալերքն ներկեցան երանգօք, զարդարեալք անտի մինչև ի տօլմա պաղչան կարգեցան, ուրեք նաւք, ուրեք կալերք, երկու կալերք ի յիւսկիւտար գնացին առ ի բերել զեկոյն. ի յաւուր մտման նորին դղրդեցաւ քաղաքն, մեծ հանդէս եղև, և բազմութիւն ժողովրդեան և նաւակաց անթուելեաց, ի մէջ անկեալ ծովակն ստամպօլու և զալաթիու՝ սկսեալ էր մինչև ի զղխիւէն և ի տօլմապաղչան։ Աստի սկսեալ մինչև ի Թէրսխանան 1400 հրացանք արձակեցան. և մինչ հանին ի ցամաքի բազում կարգօք և զարդարանօք չրջեցուցանելով՝ 7 ժամ ի քաղաքն տարեալ բազմեցուցին ի պատրաստեալ պալատն՝ ի ծայրն քաղաքին ի բարձրագոյն տեղւոջ ի քամակն էյիպու։ Բայց մինչ զայսքան փառս և զբարձրութիւնս ցոյց եառն՝ տեսէք թէ զինչ եղև առ յապայ. զկնի չորից աւուրց՝ յորում աւուր եմուտ և հայր Պողոս վ. մեր, մեծ հրակիզութիւն եղև. ի՛ր ժամու աւուրն սկսաւ, տեւեց մինչև ի յութ ժամ գիշերոյն, ասեն թէ այսպիսի հրակիզութիւնք չեն տեսեր. հողմն էր սաստիկ, սկսեալ ի ծովեզերէ պալաթոյն՝ գերիս լերինս քաղաքիս հանդերձ իւրօք ծորօքն այրեաց. բոցն 20 և այլ աւելի ճեղս բաժանեալ. չորս ազգին ևս մեծապէս վնասեաց, հայոց, յունաց, հրէից և տաճ[կ]աց։ Աստն 50, 60, 1000 և այլ աւելի տուն և պալատ այրեալ. 60 վճարելու տեղիք այրեցան։ Չաճի մահոսենց քարէ տունն ևս ոչ կարէ բնակիլ 13 եկեղեցի այրեցեալ, որոց մինն է հայոց, և այլն՝ յունաց. փաթրիքն յաւելի քան զձ քսակ բոլոր ճաղապեալ[1], զի չրաջակայ եղեալ տանց գինն վճարեալ, կանխապէս փլուզեալ, որով ապրեցոյց զպատրիարգական եկեղեցին, որ է Ֆէներն, բազում և ինչ և ապրանք և անձինք այրեցան. խ[ե]ղճութիւնք, անբնակութիւնք և ողորմելութիւնք բազումք...։

Դերյարգութեան քում
պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մխայէլ վ. Սեբաստացի

1729 Օգոստոսի 23
ի 26 ելանէ [կ. Պոլիս]

ԼԹ.

«Յեփաննոս Յոեփաննեան» կամէնցացի՝ մեր ազգային մատենագրութեան մէջ աւելի ծանօթ է Յոեփաննոս Ռոշքայ անուամբ (1690–1739)։ Ա. Մխիթար Աբբայ կը հաղորդէ շատ կարևոր ու մանրամասն տեղեկութիւնները՝ նոյն առենի ազգային անցուդարձի և ծէսի շուրջ։ Այն կէտը՝ զոր հոս նամակին մէջն ալ կը շօշափէ՝ թէ կազմած ու սահմանած է ի կեռլայ «զեղբայրութիւնս ոմանս Աշխարհականաց.. ամենեցուն հաւանութեամբ թէ կղերց և թէ ժողովրդականաց»՝ կը հայի իր հաստատած երեք եղբայրութիւններուն, որ են. ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՅՈՎԱԿԻՄԱՑ ԵՒ ԱՆՆԱՅԻ. ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԵՒ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐԲՈՐԴՈՒԹԵԱՆ. զամէնքն ալ հաստատած է 1729 թուականին՝ միշտ հետևեալ սկզբնաւորութեամբ. «Յեփաննոս Ռոշքայ Սրբազանի Աստուածաբանութեան վարդապետ, վիգարիոս և Բրերոզիտոս Յոանիսլաւօվու, աստանօր այցարար եկեղեցեացս Հայոց

1. Ճապղեալ անշուշտ։

Դրանգիվլանիոյ»[2]։ Իր «այցարարութեան» նօտարն է Տէր Յօհաննէս Մխիթար Յօհաննեան, զոր մեր հրատարակած թուղթին սկիզբը իբրեն աշակերտ կ'անուանէ։ Դրանգիվլուանիա գալուն պատճառը կ'ըսէ վերջապէս՝ «ի տես բարեկամացս և յայց առնել ևկեղեցւոյս Հայոց»։ Մխիթոյն ակնարկութեան կը հանդիպինք արդէն վերոյիշեալ երեք եղբայրութեանց մասին տուած կոնդակներուն սկիզբները՝ ուր կ'ըսէ, «գալով մեր այսր ի տես սիրելի ազգականաց և բարեկամաց մերոց» (ԳՈՎՐԻԿԵԱՆ. «Դրանգիվրուանիոյ Հայոց մետրապոլիտը կամ Նկարագիր կերպու Հայաքաղաքի». Վիեննա 1896. էջ 50 – 91)։

Ամենապատիւ Հայր ի Քրիստոս, և Տէր վարդապետ

Գալով իմ այսր ի Դրանգիվլանիայ ի տես բարեկամացս, և յայց առնել եկեղեցեացս Հայոց, գտի զաշակերտն իմ զՏէր Յօհաննէսն դարձեալ ի Հռոմայ՝ բերելով զյոգնափափագելի պատասխանիդ իմոյս Տրակի։ Որով անասելաբար զուարճացայ, և ևս առաւել ի ջերմեռանդութիւն և ի պատուելութիւն վեհանձնութեանդ բորբոքեցայ։ Եւ ապաչեմ զի և առ ապա չարունակել զՀայրախնամ իղձդ առ իս մի՛ ծանրասցիս։ Շնորհակալ գոլով յաղագս ամենայնի շնորհի, զոր Գերարգելի Հայրութիւնդ ցուցանես ի վերայ իմ։ Ահա ես շնորհիւ Տեառն աւարտեցի զԱյցարարութիւն իմ աստ ի Հայաքաղաքն կեալս, և զկնի սակաւ աւուրց չուէլոց եմ յիսկիվալօվն, և անտի նախ ձմեռն սաստկանալ սկսցի, յերկիրն իմ դարձայց։ Սահմանելով իմ զեղբայրութիւնս ոմանս Աչխարհականաց, և տրամադրելով զեկեղեցական իրս, ամենեցուն հաւանութեամբն ի յերկրիս՝ թէ կղերց և թէ ժողովրդականաց՝ հաստատեցաւ նոր Տօմարն Հռոմէական, որպէս զի ոչ միայն Զատիկն, այլ և այլք հանդիսաւորագոյն տօնքն, ևս առաւել Սրբոց Առաքելոցն միշտ ըստ Հռոմէական չրջեսցին, զոր ինքնին չարագրեցի (թէպէտ [յ]առաջագոյն ունէի զբազում ինչ ի պատրաստի) զնրատս, այսինքն Թուղրիգաս, զաղիւսակս և զտօնացոյցն ինքն, բայց անխախտ պահելով զկէսն մեր։ Զի անհնարին է ազգիս մերոյս, այլ՝ աստանօր այլապէս պահել, մանաւանդ զի և բոլոր Ազգն Մաճառաց թէ ի հոգևոր և թէ յաչխարհական կարգէն զայս Տօմարս ամենևին կամին։ Եւ ի սոցանէ, նաև յիմբէբրատօրէն ինստանցեալէս առ Սուրբ Առաքելական Աթոռն մերայինքս, և սոքա ևս ընդունելոց են, վասն որոյ յուսամք զերջանիկ ելս նորին։ Հոգացայց, զի այդանօր ի վէնէտիկ ծախիւք ժողովրդեանս այսորիկ տպեսցի, միայն թէ Սուրբ Աթոռն ակն արկցէ։ Զորմէ ես յետոյ ոչ հեղգացայց Գերանձնութեանդ զեկուցանել յերկրէ իմմէ, քանզի և մեք լեհացիքս ոգւով չափ բաղձամք տեսանել զայսպիսի տօմարն։ Փոստայիւ յղեալ ոչ էհաս առ իս, թերևս ի դառնալն իմում ի տեղի իմ, գտից։ Ամենապատիւ Տեառն խաչատուր վարդապետին զհպատակութիւն իմ բացատրեմ։ Աղաչեմ զվերոյ գրեալսն յայտնել նմա, և ասել նմա, թէ հնար իցէ զՏօմարն իմ գայն, զոր Սուրբ Ժողովն յղեալ է նմա ի տեսանել և ի քննել, տարածել չանասցի, զի մի՛ պատճառ ինչ խափանեսցի այս նոր տօմարս, զոր առաքելոց եմք։ Հուսկ յետոյ խնդրեմք անմեղադիր լիցի ինքն և Գերարգելութիւնդ, զի ոչ յատուկ ձեռամբ իմով կարացի գրել, վասն զի սակաւ ինչ զախտ չերման կրելով մատունք իմ դողդոջան։ Արդէն զիս սրբափայլ Աղօթիցդ յանձնելով զԱդ խոնարհաբար համբուրեմ. Ձնալով

Գերապատիւ վեհանձնութեանդ

ի Հայաքաղաքն
1729 Յունուար. 28

Ամենախոնարհ ծառայ
Ստեփաննոս Ստեփանեան
վարդապետ և Օֆիցեալ Ստանիսլաւօվա

---

2. Կը գտնենք իր մասին նաև հետևեալ տիտղոսները. «Աւագն Հոգաբարձուաց գաւառին», «տէդան կամենիցու, Ստանիսլաւու և այլոց քաղաքաց» (Ղ. Ալիշան. կամենից. էջ 156, 150)։

Խ.

Ուլթան Ահմէտ Գ.ի թագաւորութեան վերջին օրերն են, զորս Հ. Միքայէլ վարդապետ կը յիշատակէ իր նամակին մէջ։ Հոն՝ ուր պատմութիւնը կ'աւանդէ՝ թէ Ումվապետին՝ այս է Քափիտան փաշայի մարմինը Հորհոր չէշմէսիի առջև կը նետեն, մեր նամակագիրը կը յաւելու, թէ «Քափուտան փաշայի մայրը 30 քսակ ետ և (բառնալով հոնկից) բայկուց գիւրև»։

Ահմէտ Գ.ի կը յաջորդէ Ուլթան Մահմուտ Ա.։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ Վենոյ
Տեառն տեառն Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի

.... մեծ գազանս այս հանդերձ ամենայն նախարարօքն և զօրօք անցաւ իւսկիւտար վասն գնալոյ ի պատերազմ յարևելս. և աւելի քան զերկու ամիս մնացին անդ ինքեանք և օրտուն իւրեանց. այսօր վաղն ասելով գնանք, և յաւուր միում, իբրու 20 կամ 30 էնկիչէրիք դրօշակ բարձրացուցեալ ի Պտամպօլ՝ զբնաւ չուկայս փակել ետուն, և ի մէջ երկուց երից աւուրց իբրու 100,000 եղեն. նաև ի յանատօլէն թափեցան, սասանումն և դողումն պաշարեաց զամենեսին. թագաւորն, մատնին քէչեան, զայմաքան, որ է քափիտան փաշան կալելով փախեան, գիշերով եկին մտին ի սարայն, և ի միւսում աւուր թագաւորն զբեսեան ևս խեխթեաց և ետ յարտաքս բռնաւորաց. զմարմինսն կտարատեցին հայհոյեցին և քանի մի օր թողին ի հրապարակս. զմարմինսն մատանոյն չունք կերին։ Քափուտան փաշայի մայրն 30 քսակ ետ և թաղեաց գիւրն, զթագաւորն իջուցին, և եդին ի տեղի զեղբօրորդին Մահմուտ անուն, և զայլս մեծամեծս՝ զորս կալան, զորս ոչ գտին, զտունն կողոպտեցին։ Եւ քրիստոնէից միաս չատ տուին։... Հրեշտակն վկնէցիու ի 27 սեպտեմբերի եմուտ կալերով աստ մերձ յերեկոյին, և առաւօտն մերձ ճաշուն՝ սկսաւ ապստամբութիւնն գազանաց...։

Գերյարգութեան քում ծառայ
Հայր Միքայէլ Վ.

1730 Հոկտեմբերի 13
[Կ. Պոլիս]

ԽԱ.

Ահա Ստեփանոս Ռոշքայի մէկ ուրիշ թուղթը՝ որ գլխաւորապէս կը ներկայացնէ ա. իր սրբագրած Մաշտոցին առ ի փորձ գործադրութեան լուրը. բ. նոր տոմարը հաստատուելու հարցն ու կանքերը. գ. սոյն երկուքին տպագրութեանց առաջարկներն առ Մխիթար։

Սակայն Մխսարանի այդ փոփոխութիւնները տարբեր աչքով կը դիտուին Մինաս Վ. Պարոնեանէ առ Մխիթար գրուած նամակի մը մէջ, ուր կ'ըսէ. «Լուայ թէ տէր «Ստեփանն լեհացին եկեալ ի Դրանսիլվանիայ բազում ինչ փոփոխութիւն եկեղեցական «(որպէս է սովորութիւնն Հայոց վարդապետաց) եղեալ իցէ, մինչ զի և չուտեն «մսոյ ի շաբաթի՝ ի ներքոյ բանադրանաց հրամայեալ իցէ, և այլն, ժողովելով

« զդրամս չունայց ի օթևանս իւր։ իսկ ասի թէ Հ. Մանուէլն ամենայնիւ լռեալ իցէ[1] »։

Այսուհիւ նշանակութենէ զուրկ չէ վերջնոյս այդ լռութիւնը. մանաւանդ թէ թագուն նպատակ մը կ՚երևի այն հարցման մէջ՝ զոր ինքն իսկ Հ. Մանուէլ [խուսեաբեան] առ Մխիթար կ՚ուղղէ ըսելով. «խնդրեմ թէ Լեհացի տէր Յակոբին խնդրեալն « զորս խնդրէր զինչ պատասխանեցիք նմա գրով վասն տօմարին և տօնացոյցին և « այլոց, ծանուցանս ինձ »[2]։

Ռուշքայի թուղթին մէջ մասնաւորապէս դիտելի կէտ մ՚է՝ ընտիր հրատարակութիւններ ձեռք բերելու դիտմամբ իր տածած յարգանքն ու համարումը հանդէպ Խաչատուր Վ.ի և Մխիթարեայ լուսամիտ տեսութեանց և հմտութեանց։ Բայց այդ ամէնը մի միայն ձեռնարկներ ու դիմումներ են՝ անոնց պաշտօնական հաստատութիւն մը տալու և ընդունելի դարձնելու մտքով։ Իւ ճիշտ ասոր համար է՝ որ նամակս նոր փաստաթուղթ մը կ՚երևի մեզ, քանի որ ցարդ Լղիսաբեթպոլսոյ դիւանական գրութեանց համաձայն՝ նկատուած էր թէ « նոր տումար մտցնելու համար առաչին քայլերն եղած են 1757ին քպտաբային ժողովոյն մէջ[3] »։

Ալենապատիւ Հայր ի Քրիստոս և Տէր Վարպետ

Ջբազմավաստակ գիրդ յԱպրիլի Ա ծրեցեալն առի ի Լիբսիայէ, զոր էպիշֆալովցի Հայն այդի բերեալն էր. (զայլ բաց ի սմանէ ոչ ընկալայ)։ ԵՒսի, ասեմ, մեծաւ խանդաղատութեամբ սրտիս, բայց մեծագոյն չնորհակալութեամբ Ամենապատուդդ, որ այդքան հոգածութեամբդ ոչ մոռանայ զծառայ իւր։ փօստն առ մեզ ոչ է ստոյգ, սակս ընդ Պրանսիլվանիա առ ձեռն Պատ. Հօրն Մանուէլի հասուցանելով, որպէս և ես այժմիկ առնեմ։ Միայն թէ ի վէննայ չկոչեցէք զք թղթաբացող, որպէս յոյժ կասկածեմ զումեծնէ։ ԵՒս ձեռս ուրեմն նորին Հօր Մանուէլի (զոր ինքն յետոյ ընդ վաճառականաց հասուսցէ Պերանձնութեանդ) առաքեմ զՄաշտոցն մեր սրբագրեալ և տրամադրեալ, և իշխանութեամբ Գեր. Տեառն Ակրեպս.ին մերոյ առիթոցեալ, որով մեք ի Լեհաստան և ի Պրանսիլվանի վարիմք։ ԵՒս պարոն Պետրոսն Գելեան բուն բարեկամն իմ գրեմ, զի որպէս ինձ՝ մինչ անդէն էի՝ բերանով խոստացաւ զծախս սորին տպելոյն հոգալ՝ նոյնպէս գործով կատարեսցէ, որպէս զի ի ձեռն Գեր. Հայրութեանդ ըստ գովելի երկասիրութեանդ՝ որով ի նմանիս պայծառանաս՝ ի հրապարականն եկեսցէ լոյս։ Ընդ սմին յղեմ և զնոր տօմարն տօնացուցիւն ի միասին կարգաւորեալ, ոչ գնորայն օրինակն, զոր Սուրբ ժողովոյն յառաջ ընդ տէր Յօհաննին ի տիպ տալ յանձնեցի վասն Ղուազատկին Հայոց, այլ՝ զայլ, որ ինքն զինքն՝ թէ զինչ իցէ՝ ցուցանէ։ Ջտօմարէս, զայցարարութեան իմոյ, որ ի Պրանսիլվանիա, համարն տալով սուրբ ժողովոյն մանրամասնաբար ծանուցի, և յոլովիւք մաղթեցի զաւուրս նորին և զթոյլ, զի այդր ի վէննէտիկ ծախիւք Մեծաւորելի Պատուոյացն կեալացուց՝ որպէս ինձ խոստացան՝ տպեսցի։ Ջնոյնն արարի և առ Գեր. Տէր Նունցիոն վէննայու կրիմալտին, որ նոյս.ին Պրանսիլվանիոյ (յորմէ առեալ էր զգիր վասն Ցօմարին ընդ իմոցս) ուրախութեամբ խոստացաւ հոգալ զսորին հաստատումն ի Ս. ժողովոյն. և այժմ առաւել ևս կարող է՝ գոլով կարտինալ։ Բայց ընդ վախճանիլ Սրբազան Հայրապետին[4], կարտինալացն գոլով զբազմօք զբաղեալք, տակաւին ոչ եւտն զպատասխան վերոյգրեալ Եպս.ին կամ ինձ։ ԵՒսացի ի վէննէտիկ, որպէս զի հոգաբար-

---

1. Թուղթ առ Մխիթար. գր. յամին 1730 յունուար 18, ի Վէննա.
2. Թուղթ առ Մխիթար. գր. յամին 1730 Նոյեմբ. 19 ի Պաշուալօֆ.
3. Կովրիկեան, «Հայք յեգիսաբեթպոլիս Պրանսիլուանիոյ» էջ 231.
4. Բենեդիկտոս ԺԳ. (1724–1730).

ձուխեամբ և վկայութեամբ Ամենապատիւ Տ. Խաչատրոյ վարդապետին և Գերանձնուխեանդ՝ թարց տարակուսութեան և սխալութեան տպեսցի։ Ունի գխիղճ ինչ նոյն Տէր վարդապետն ի վերայ Արբոց ոմանց, որք in Martyrologio Romano ոչ գտանին, բայց Գեր. Արքեպիսկոպոսն մեր և այլք՝ թողումք ի բարեհաճութիւն կամաց ձերոց, զի եթէ զոմանս ի Տօնացուցէս յայսմանէ հանել, և զայլս, որպէս զնախահարսն կրօնաւորաց, զՍուրբ Տօմինկոս, զՖրանցիսկոս, և զայլս, որպէս փոխանակ հանելոցն դնել, պահելով զկարգն և զկրաւն, ձեզ թուեսցի, մեք սիրով ընդունելոց եմք։ Միայն թէ այս հարկաւոր գիրքս հաստատեսցի, և այսքան ժամանակաց անկարգութիւն եկեղեցւոյս մերոյ ի բաց բարձցի, և նախահինք մեր վերասցին հանդերձ անիծիւք ժողովոցն մերոց Սսոյ և Ատանայ։ Գեր. Արքեպս.ն մեր խնդրէ, զի Մաչտոցն ի մեծագոյն թերթի վասն դիւրութեան ընթերցողաց տպեսցի։ Ջքառարանն իմ Ատուածոյ ձեռնտուխեամբ յուսամ ի նորագայ ամին չուրջ զՈւլիսիւն ուարտել, զորմէ յայլում առթի յեռոյ զեկուցից։ Եւ յանձնեալ զիս մաքուր աղօթիդ, զաջդ Գերապատիւ Հայրութեանդ ջերմեռանդապէս համբուրեմ։

ի Ատանիսլաւօվ, 6 դեկտ. 1730

Ամենանուաստ և Պարտ. ծառայ
Ստեփ. Յոհաննեան վարդապետ
և Օֆիցեալ Ատանիսլաւօվու

ԽԲ.

Նկարագրուած կրակը՝ որ տեղի ունեցած է ի Պոլիս՝ շատ աւելի համառօտ կը յիշատակուի նաեւ առ Մխիթար հասած ուրիշ չորս թղթերու մէջ։ Եւ որովհետեւ ասոնք ամբողջացումն են մեր հրատարակածին՝ զանց չենք ըներ մէջ բերել հոս։

Ընտորագիր նամակ մը այսպէս կ'ըսէ. « Այրեցաւ Ղալաթիայ սկսեալ ի Թօփ-« խանաէն մինչև ի Լանի խափուն, այսինքն ի Ս. Պետրոսն. հայոց ժամն, 4 յունաց « ժամ, ճէզուիթաց, քափուչինից, տօմինիքանից, այրեցան յուլիսի 10։ Բայց բերքէն « ի դուրս ոչ կարաց ելանել կրակն, ուստի Ճացին տունք.. և այլոց ամենայն « հրէից մինչև ի եաղ խափանին զրսոյն և անդէն շիջան։ Եւ այսքանս այրեցաւ « ի 6 ժամն ի սաստիկ բռնութենէ հողմոյն » (գր. 1731 յուլիս 10)։

Հ. Թովմաս վարդապետ կը գրէ. « Ի Թօփխանային կողմէն սկսաւ հրդեհումն « ի յուլիս 10, եւ այնքան տարածեցաւ՝ զի բոլոր Ղալաթիա գրեթէ ի մոխիր դար-« ձաւ.. բոլոր եալուն զերծաւ...։ Բայց ի մէջ Ղալաթիու... ճէզվիթաց վանքն և « ժամն, հայոց ժամն, Ս. Գեւորքայ ժամն, Ս. Պետրոսի ժամն և այլք բնաւք տունք « կիզեցան (բաց ի փէրշէմպէ պազարիէն) մինչև ի Ղուլէղաբուն պարիսպն » (գր. 1731 յուլիս 21)։

Իսկ Հ. Պ(օղոս) վարդապետ երկու նամակներ ունի, ուր կը յիշուի այդ հրդեհը։ Առաջնոյն մէջ (անտարակոյս՝ վրիպմամբ) կը նշանակէ տարբեր թուական մը կրակի օրուան, այսպէս. « Ի յուլիսի 26, ի յարտաքոյ զրանէ Թօփխանու եմուտ « ի Ղալաթեաց հուր մի մեծ, որ հրդեհեաց զամենայն եկեղեցիքն եւ զամենայն տունս « եւ արտաքոյ պարսպի եղեալքն, այսինքն ի սիրքէճի իսկէէն մինչև ի Գալըք « պազարին, ոչ այրեցան, (գր. 1731 օգոստոս 3 ի Մամաթեայ)։

Երկրորդ թուղթը հետեւեալ երկուողն ունի՝ ինչ որ այլք չունին. « Ի հրկիզութեան Ղալաթեայու՝ եկեղեցին իւրեանց [Դոմինիկեանց] աւերեցեալ էր ի զինուորաց տաճկաց,

այժմ բովանդակ բլուցեալը ինքեանը զեկեղեցին և զմենաբանն իւրեանց նորոգապէս սկսան շինել. (գր. 1731 նոյեմբեր 1)։

Հ. Թովմասի և Հ. Պօղոսի յիշհալ նամակները Պոլսէն ղրկուած են։

Գնթամիծարկի ի սրտէ սիրեցեալ Հօր մերում
և սիրելի եղբօրս իմում տեառն տեառն
Պետրոս Աստուածաբանութեան վարդապետիս
առնենքեանս մեծ և փոքրը։

... Թվին Հայոց 1180 յուլիսի 9 ուրբաթ գիշեր սահաթը 6 ու կէսին կրակ եղաւ Թօփխանայի դրսըդին էրէցաւ. խանէկին մէջի տէյիրմէններուն դիմացի տներն, խանութներն, սալախանաները էրեցաւ. քամին սաստկացաւ, տէյիրմէններուն վրայէն կրակն ներս մտաւ. չուխուր օտալարն վարը քովի խաֆաֆներն ըսկըսեց այրել, քամին ևս առաւել սաստկացաւ. եռո հայոց ժամն, քրիզճ խափուն, էյրի խափուն, հոռմներուն չորս ժամն հանդերձ տներովն, տայիրին տուն, ֆռանկաց եկեղեցին, քէմէրալթին մոմխանան խուռչուլու մադազային տկերովն սիմայ քվերցա նստած տունը... եռո մեր խեղճ ողորմելի տունն... – ասուածոյ ողորմութեամբ վնաս մի չեղաւ խառաբօյէն մինչեւ պալխպարը. վերի կողմը սուրբ Գեվորգա եկեղեցի էրեցաւ. Ս. Պետրոս եկեղեցին քաչքայեցին, կրակն մարեցաւ, խանութին ալնաս չէղաւ, չափսէթ լուս սահաթը 6ին մարեցաւ. դուրսի կողմը եալընեներուն ալնաս մի չէղաւ. հէնի ճամիին քովէն մինչև Թօփխանայի դուռը պարիսպին տկերովն մէկ տուն մի չմնաց այսպէս իմանաս։... Յուլիսի 6էն մինչև գիր գրեալ ժամանակս էրկու իրէք հարուր տուն խանութ չինվեցաւ անթիվ....

Նվաստ ծառայ քո

Տիրացու Վարդան և որդի իմ

Պետրոս

Գրեցաւ գիրս Հայոց թվին
1180 [=1731] սեպտեմբեր 9 [կ. Պոլիս]

ԽԳ.

Աննշան տեղեկութիւններ չէ որ կը հաղորդուին հետևեալ բազմանիւթ նամակին մէջ։ Հիմնադրիս պատմութենէն ծանօթ է որ 1718էն ի վեր՝ Աւստրիացւոց զրաւած այսօրուան Պելկրատ քաղաքը՝ Մխիթարայ աշակերտաց առաքելական գործունէութեան գլխաւոր կեդրոններէն մին դարձած էր։ Հ. Ղեւիա կը յաջորդէր Յակինթոս և Բարդուղիմէոս անուամբ երկու հայ վարդապետներու, որոնցմէ գոհ չէր եղած ո՛չ ժողովուրդը, ոչ Ս. Աթոռը։

Շատ հետաքրքրական են թղթիս մէջ նկարագրուած ազգային սովորոյթներն ու բարքերը։

Գնթայարգելոյ և վսեմագունի տեառն տեառն
Մխիթարայ Աբբայ Հօրն մերում

Ցիսուսաւանդ ողջունիւ և բազմաւ կարօտիւ յայտ լիցի, զի յամսեանն յուլիսի 31երորդի աւուրն չուեալ ի վէնայու, ի օգոստոսի ամսոյն 11, բարւոք և խաղաղութեամբ հասաք ի Պէլկրատ և ի հասանելն իմ ասա՝ «Ընդ ումեմն անձի ազգ արարի ձանազիզին, զի եկեսցէ աստ առ իս, այսինքն՝ ի նաւն։ Եւ իբրև եհաս լուրն առ նոսա, իսկոյն եկին ոմանք, և իբրև զծարաւիս առ աղբիւրս հոգևորի ջրոյ՝ սիրով մեծաւ վերընկալան

զնուաստութիւնն իմ, և վաղվաղակի վերոգրեալ անձն պատրաստեաց ի տան իւրում զխուց մի, և յոյժ ուրախ եղև ժողովուրդն վասն գալստեան իմոյ ասելով, թէ ահաւասիկ ի վաղուց հետէ սպասէաք այցելութեանց բազմաց գնացաք ընդ տէր Մանուէլին առ վիգարն տեղւոյս, և մատուցաք նմա զգիրն սրբոյ ժողովոյն, նուընցին և եպիսկոպոսին. և մինչ նա ընթերցաւ զգիրն եպիսկոպոսին՝ ասաց ազդ առնել հայոց, զի յեկեղեցիս իւրեանց հաւաքեսցին, և ես փութով եկեալ ծանուցից ժողովրդեանն և յանձնեցից քեզ զեկեղեցին, և արար այնպէս ըստ որում ասաց, և յորժամ նա եկն ի յեկեղեցին հայոց՝ ունէր ընդ իւր զմի քանոնիք[1] և զսէկրիթարն եպիսկոպոսին, և զգրեանս իմ առաջի ժողովրդեանն ընթերցաւ, և ասաց նոցա թէ սա է հովիւն ձեր և պարտիք նմա հպատակիլ...: Իսկ ի յերկրորդում աւուրն գնացաք առ մարքէզ փօթան, որ է յոյժ անուանի և է փոխանորդ բրինձին և ճէնռալին, զի սոքա ոչ են ասա այլ ի վէնա..: Եւ յետ այսորիկ գնացեալ գտաք զՁովհաննէս եպիսկոպոսն, որ է մեր և առողջ, և ոչ նստի ի տան իւրում, այլ չրջի այսր և անդր, և ըստ մեծն մասին ուտէ ի տան մեծամեծաց, թէ ի մէջ հայոց և թէ ի մէջ ֆռանկաց, ոչ ունի զկեղտ անուն...: Իզմիրցի տէր Մանուէլն ասաց ինձ. լաւ է որ յաւուր վերափոխ(մ)ան Աստուածածնայ պօնսինեօրն թագիւ պատարագիցէ.. նա և մի տիրացու եցոյց ինձ զտետրակ մի ասելով, թէ զսոյն երգս եպիսկոպոսն է չարադրեալ՝ փոխանակ Առաւօտ լուսոյին, գնա ևս արգիլեցի: 3, 4 տիրացու ունին, որոց մինն աճէմ և մնացեալքն են տեղացի, սոքա ամենեքեան լաւ ձայն ունին, սակայն այնպէս պոռան, որ ոչ երբէք ուրէք տեսեալ էի... զձայնաւոր պատարագն և փառք ի բարձունն ծնծղայիւք և զանկակօք առնեն, աստ է համբերելի և տանելի, երկայն չուրջառով, երկայն չապկով առնեն թէ զթիւ պատարագն և թէ զձայնաւորն...: Ժողովուրդն միայն յաւուր կիրակէի և տօնի գան յեկեղեցին, այն ևս յառաւօտն և ոչ յերեկոյին, երբեմն լացք առաւօտուէն սկսին, երբեմն փառք ի բարձունէն, և երբեմն Տէր զի բազումքն...: 35 տուն հայք գոն աստ, 25 ևս պէքեառ.. Հայոց տունն ոմն այս ինչ և ոմն այն ինչ տեղի, ումանք կարի յոյժ հեռի են ի յեկեղեցւոյ. ամառն թօզ, և ձմեռն սաստիկ չամուռ լինի..... տեղւոյս կանայք խիստ բաց են, թէ արք և թէ կանայք խիստ գինեսէր են, նա և առանց ջրոյ ըմպեն զգինին, դառբուզով, լոկ սեխով, պոռկով, խըյարով, և ոչ հացով գինի և ռախի խմեն: Պատրոց վանքն գնացաք և խըյարէ թուռչի տեսաք, պարզ գինի տուին և մէզէյի տեղ հաց տուին, հացն մանտրեն և ի վերայ հացին աղ ձանեն և իբրև մեզէ մատուցանեն. խիստ բանադատեն զմարդն, ջրով խմել չեն գիտեր, խըյարէ սալաթն կուտեն և ապայ ռախին խմեն: Ձկերակուրն ևս չատ կուտեն, ես միայն ըստ մարգարէին ջրով խմեմ, 3 մարդոյ ուսուցի ջրով խմել, որոց մինն կարի յոյժ տկար էր, հազիւ ի գիչերի 1 սահաթ ննջէր, կերակուրն և գինին կարգադրեցի, թէ այսպէս կեր և այնպէս խմէ, այժմ ուտէ և բարւոք ննջէ. կերակուր ուտել ևս չեն գիտեր, այս չորոյս ի մէջ կերակրին ահագին աղ, պիպէր, սղտոր, սոխ դնեն.....:

Նուաստագոյն ծառայ
Եղիա վարդապետ

Յամի տեառն 1732
յօգոստոսի 23
[Պելկրատ]

1. Հէյմաճառս անուամբ, ինչպէս այլուր յիշատակուած է։

ԽԴ

Հետաքրքրաշարժ նիւթերով լի է հետևեալ նամակը։ Անոնք գլխաւորապէս վանական կարգերու, ինչպէս նաև առուծախի շուրջ տրուած մանրամասն տեղեկութիւններ են, ինչ որ կը ցուցնեն՝ թէ ժամանակը դարերու շրջանին մէջ ինչպիսի հսկայ փոփոխութեանց կ՝ենթարկուի։

Գերապարգևելոյ և վսեմագունիդի տեառն տեառն
Մխիթարայ Աբբայ Հօրն մերոյ

. . . . Թագաւորին[1] (Վիեննայի) խոստովանահայրն ճէզուիթ է, և կայսրն զնա ընդհանրական փարուքեա[2] է հաստատեալ, վասն որոյ սեղւոյս ճէզուիթքն փարուքայութիւն[3] առնեն, և թէպէտ կայսրն տուեալ է զժողովուրդն եպիսկոպոսին զի վասն նոցա արասցէ զփարուքայութիւն, բայց ոչ զինուորսն, զի վասն զինուորաց կայսրն ի տարւոջ Ի զօրաթայ տայ ճէզուիթաց. նոյնքան ևս ասեն ի զինուորաց գայ..։ Սկսա սկսեալ են վերակերտել զվանս իւրեանց. նիւթքն սորին ի թագաւորէն տրի, իսկ վարձքն աշխատողաց ինքեանք վճարեն. 10 աւրին հազիւ եզերի ասեն. բաց ի նիւթիցն ասեն թէ եօթանասուն Ի զօրաթայով հազիւ եզերի։ Կափուճինաց նիւթն և աշխատողաց վարձն, թագաւորն և Լվճէնիոսն[4] տան. սոցին վանքն փութով եզերի քան զայլս վանս կարգաւորաց։ Աստ գտանին 6, 7 կարգ, բնաւն սկսեալ են չինել, թող գքաղաքացիս, որք ի բազում տեղիս սկսեալ են չ[ի]նել զտունս և զխանութս մեծածախս, և վասն չինման Աւէքսանդր բրինձին միլիօն է գնացեալ ասեն։ Քաղաքս այս զկնի հնգետասանից ամաց այնքան բազմանալոց է մարդկամբք, մինչ զի անդր անցանելոց է ամրութեամբ և մարդկամբք քան զվէնա, թէպէտ այժմ լի է մարդկամբ և օր ըստ օրէ աւելանայ, բազմից առ ի չգոյէ նիւթոց վարպետքն պարապ մնան, և վասն թուվլայի և քիրէճի 40, 50 տեղ փուռ վառի, և վասն միոյ փռան 24 օրն 160 արապայ փայտ գնայ. և ըստ այսմ հաշուեայ, թէ բնաւիցն ի բոլոր տարւոջ որքան փայտ գնայ, նաև որքան մարդիկք ի պատճառս սոցա դատին և աշխատին։ Այսքան փռան Չերմութիւնն և քիրէճի հոտն՝ քաղաքիս դոյն ինչ ապականեն զօդն։ Ջբոլոր և զահագին քաղաքս այս պարսպաւորեալ են, թէպէտ ոչ է եզերեալ։ Նաև յետ եզերման պարսպիս այսորիկ չ[ի]նելոց են զոմանս բերդորայս արտաքոյ պարսպին։ Վերջապէս սմին նման ի ներքոյ արեզական անկարելի է գտանելն..։ Պարսպաց և բերդից փռռան[5] է ինկիլիզ, տարին ունի ի թագաւորէն աւելի քան 15000 օրաթայ..։ Ասեն թէ յամենայնում տարւոջ վասն չինման քաղաքիս ի թագաւորէն միլեօններ գայ աստ. պարսպին 1 թուվլան խարճովն՝ 10 սօլտի լինի. և խարճն պարսպին ըստ ումանց փափն վճարէ ասեն։ Տեղւոյս մուռերքն[6] և մանուալքն[7] նէմսէյ են, և խիստ յամր բանին, և յաւուրն 3 ժամ հանգչին և ոչ

---

1. Կարոլոս Ջ.։
2. Parroco = ժողովրդապետ։
3. ժողովրդապետութիւն։
4. Լեզնիոս սովոյացի իշխան։
5. Պետ։
6. Որմնադիր։
7. Գործաւոր։

բանին. եթէ ասիցես վարպետին և կամ մանուալին թէ ընդէ՞ր յամր չարժիս. և ընդ լսելն զայսպիսիս՝ իսկոյն թողու զբանն անկատար և գնայ ի յայլ տեղիս. թէ մուռերքն և թէ տիւրկէրքն աւուրչէքն 3, 3 լիտրէ է. ոչ դրամ պահել գիտեն և ոչ ջուր խմել, այլ և իբրև զանասուն գրէթէ անդադար ուտեն և ըմպեն... : .. Աստ խանութի և տան քիրան խիստ թանկ է 100 զօլաթայ, 120, 150. բժիշկն ևս. գոն ոմանք որք մի անգամ գալով՝ զսի ոսկի առնուն և ոմանք 1 զօլաթայ: Կովու մսի սխան 8 սոլտի է, հորթու միսն 16, ոչխարին 8, ճիչէրն 3, 4 սօլտի: Հացն լաւ է, պաղեղէնն սակաւ է, պարտախ էրիզին աժան է, խնծորն ևս: Ձմերուկն առատ է և սեղն նուազ: Դոյ գինի որ օխան 10 սոլտի է, գոյ գինի որ 15, 20 սոլտի է, սալաթան պակաս չէ:.. սակայի ջուրն խիստ վատ է, թունայուն միջակ, և ճչնուալի աղբեր ջուրն լաւ է ասեն...:

Նուաստագոյն ծառայ
Եղիա վարդապետ

Ցամի Տեառն 1732
Յօգոստոս 30 [Պելկրատ]

ԽԵ.

Պատմական բաժնին դասելի ահա վոքը նամակ մը, զոր Պոլսէն կը ղրկէ Հ. Պօղոս Վ. Սիմոնեան:

Գերապայծառելոյ տեառն տեառն Մխիթարայ Աբբայի
Հօր մերոյ և Ազատուածաբանութեան վարդապետի

... Վեց նաւք վէնէտիկու գոն ասէին, ասեն թէ յետ մեծ բարեկենդանին չուեն աստի ի յիզմիր. բայց թուի ինձ, թէ յամեն աստէն մինչև ի Զատիկ. քանզի ձէզայրցւոց եօթն նաւք եկեալք ի Ֆօչայ, որոց չորք նաւքն մտեալք են ի ներքս պօղաս հիզարու առ ի բերել զընծայս թագաւորին տաճկաց, և առնուլ ի նմանէ զօգնութիւն և դառնալ գնալ յերկիրն իւրեանց. ուստի ոչքան սոքա յամին աստ, և այնքան յամեն նաւքն վէնէտիկցւոց հանդերձ ամենայն պատրաստութեամբ. քանզի ձէզայրցւոց մուֆտին յետ առեցման վարհանին ի յըսպանեացւոց եկն ի ստամպօլ ցամաքաւ զայն վերոյ գրեցեալ չնորհսն էառ ի թագաւորէն տաճկաց:.. Ցաւուր միում գնացի ի սուրբ Անդոնի վանքն առ ի տեսանել զՅօհան վարդապետն, և գտի զնա արարեալ զմեծ խրախճան վասն այցելուին և կարգաւորացն սուրբ Անդոնի վասն չինութեան նորակերտ բնակարանին իւրոյ, զոր չինեաց վասն բնակութեան իւրոյ մինչ ինքն կենդանի է, յետ մահուան ետալ մենաստանի սուրբ Անդոնին...:

Գերյարգութեան ձերում

Նուաստ ծառայ ս. տ. ս
Հ. Պ[օղոս] Վ[արդապետ]

(ի Գալաթեայ)
Ցամի Տեառն 1733
և փետրուարի 6

ԽԶ.

Պարսիկ–Օսմանեան ճակատամարտի մը մէկ ընդհարումն է որ կը ներկայացուի մեր հետագայ նամակին մէջ՝ մանրամասն պարագաներով: Այս նամակը զրուած ըլլալով նշանակուած տարւոյն մայիս 9ին՝ նամակագիրը բնականաբար կը հասցնէ մինչև Օսմանցւոց վերջընթեր պարտութեան վախճանը: Վճռական համարուածը տեղի կ՚ունե-

նայ ճիշդ յիշեալ թուականէն վերջ՝ յետ յուլիս 19ի, երբ յիշատակուած Թօփալ Օսման – թէև շատ տեղէ վիրաւոր – արիացած՝ գլուխ կ՚անցնի բանակին ու խորտակելով պարսիկները՝ մեծ հանդէսով Պաղտատ կը մտնէ։ Վակայն պատմութիւնը կ՚ըսէ որ ցնծութիւնը կարճատև կ՚ըլլայ, վասն զի երեք ամիս վերջ յաղթութիւնը պարսիկներուն կողմը կը դառնայ։

Անդրադարձնենք նաև, որ մեր հետևեալ թուղթին մէջ բերուած Թօփալ Հասան և Օսման անուննները միևնոյն անձը կը ներկայացնեն։

Գերայարգելոյ և վսեմագունի տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի և Աբբայ Հօրն մերում

. . . Նա և զայս ծանիր, զի զօրքն պարսից մեծաւ պատրաստութեամբ կանխաչարժութեամբ չուեալ ի յիսպահանու գնացեալ և պաշարեալ են նախատութեամբ քրտից և արապից զՊաղտատ, և յետ ոմանց ամսոց պատճառաւ սովու առանց մարտի առեալ են զնա։ Եւ մինչ լուան ոմանք զայսպիսի լուրս, զմեծագոյն խելագարութիւն վարկեցին գնալն նոցին ի Պաղտատ ասելով, թէ այսքան երկրներն թողեալ են ի ձեռն տաճկաց, և գնացեալ են առնուլ զանառիկ քաղաքն այն։ Իսկ այլք ոմանք իմաստակք զներհակն նոցին կալնլով, առաւել զմեծ իմն խոհեմութիւն վարկեսցին գնալն նոցին ի Պաղտատ, քան թէ իրէվան, և առ այս բերեն զերկուս պատճառս, որոց մինն է այս, ասեն, թէ յոյժ առաւել դիւրին է զօրացն պարսից գնալ ի Պաղտատ, քան թէ ի Նախչէվան և իրէվան, և այս ի կողմանէ նախաչարժութեան, և թէ ի կողմանէ նպաստից, որք կարեն դիւրաբար օգնել։ Երկրորդն է զի զսոյն քաղաքն առնլով, թերևս այսու ընկճեալ զօրքն տաճկաց հաճեալ կամիցին ըստ առաջնոյ նուագին տալ զնչրէվան և զայլս քաղաքս, զորս ունին սորա փոխանակ Պաղտատու, ըստ որում նախապէս եղեալ է, այսինքն ի ժամանակս սուլթան Մուրատին և չահապասին։ Նա և ոմանք աստ ի մեծամեծաց ասացին, թէ Թօփալ հասան փաշան ի Տեառնէքրու չուեալ երեսուն հազար արամբք զինուք վառեցելովք կամեցեալ է գնալ ի Պաղտատ առ ի վանել զզօրսն պարսից. իսկ գիտելով զայս զօրուն պարսից իմիք դժուարին տեղւոջ, հուպ Նինուէի յանկարծակի ի դրանէ անտի յարուցեալ են ի վերայ տաճկաց զօրուն, և գրէթէ զբոլորն ի սուր սուսերի մաշեալք են. և Ոսման փաշա 500 անձամբք հազիւ կարացեալ է փախչիլ և գալ ի Տեառնէքիր։ Եւ սոյն յաղթութիւնս և կամ առումս որ եղև, ոչ սոսկ զօրութեամբ և քաջութեամբ պարսից լեալ իցէ, այլ և քրտից և արապից, զի մասն քրտից Պարսկաց հակեալ են ի կողմն պարսից։ Եւ վասն այնորիկ զօրքն տաճկաց մասն ինչ ի կողմն Պաղտատու գնան, և մասն ինչ ի վերայ քրտից . . . . ։

Գերայարգութեան քում
Նուաստագոյն ծառայ
Եղիա վարդապետ

Ցամի փրկութեան մերոյ
1733 Մայիսի 9
(Պելկրատ)

ԽԷ.

Ընդհանրապէս Բարդողիմէոս վարդապետի առ Մխիթար Աբրահայր ունեցած թղթակցութիւնը ցարդ հետաքրքրական եղաւ մեզ՝ իր պարունակած զանազան օգտակար նիւթերուն համար։ Այժմ իր առաքելական գործունէութեան շուրջ նոր տեղեկութիւն մը կու տայ. այսպէս.

Ամենապրկելոյ և պատուելոյ տեառն տեառն
Մխիթար աստուածաբանութեան վարդապետի և Աբբայ Հօր

. . . գիտենաս, վեհապատուելի Հայր, թէ արդէն պատրաստ եմ, և այժմ գնամ ի գոյովայ, վաղուքի երկիրն, որ է՝ ի ներքոյ տէրութեանն կայսերին մերոյ վասն միսսեոնարութեան և հոգաբարձութեան Հայոց ազգին, և ետ ինձ կայսրն որքան բաւական է՝ ապրելոյ և զպատուն իմ առաւել ըստացայ քան զառաջինն, և եմ ի ներքոյ ազնուի և պատուական եպիսկոպոսի միոյ, և յոյժ յոյժ ուրախ եմ։ Ձեր հրամանքն միաբանութեամբ աղօթս արարէք վասն իմ անարժանիս, որ եմ միշտ աղօթող վասն ձեր, զի ոչ գիտենաք թէ ունիմ ի սրտի իմոյ զխէթ ինչ, այլ եմ և առաւել ևս քան զառաջինն, զի ես ճանաչեմ և զտկարութիւնն իմ և զթշնամիս իմ. կամք տեառն օրհնեալ եղիցի...։

Մնամ պատրաստական տէրութեան ձերում

վիեննայ 23 Յունիսին
1733

Խոնարհագոյն ծառայ
Բարդողիմէոս վարդապետ
Միսսիօն. Ազաքելական

ԽԸ.

Գրուած է Հ. Եղիայի թուղթը Պելկրատէն։ Սակայն այդ գրէն որոշ բան մը չի հասկցուիր կատարուած ծիսին հանդիսավարին նկատմամբ. ինչ որ կ՝երևի՝ Հայոց եկեղեցին է այն։

Պատմուած դէպքը Հ. Եղիայի զոյգ նախորդներուն՝ Յակոբոսի և Բարդողիմէոսի շրջաններէն ծնացած սովորութեանց արդիւնք է անշուշտ։ Հոս կը գտեղենք այդ մասը՝ ծիսական սովորութեանց հետաքրքրուողներուն համար։

Գերապայծառելոյ և վսեմագունեղի տեառն տեառն
Մխիթարայ աստուածաբանութեան վարդապետի և Աբբայ Հօրն վերում

. . . Նա և յաւուր ուրբաթու խաչելոյ ոչ միայն դնեն զխաչելութիւնն, այլ և հանդիսապէս բազմեցուցանեն զս[ր]բազնութիւնն ներ բիւրաւոր մոմեղինացն վառեցելոց. իսկ մեք յայնմիկ գիշերին հուպ արշալուսին սկսաք ներ այնքան խառնիխուռն ժողովրդեանն հանդէպ սրբազնութեան ժամ ասել ըստ հայկականի կերպին, և ի [«]տէր երկնից[»]ին ոմն ի դարաց սկսաւ մարել զամենայն մոմեղէնսն, իսկ ես յայնժամ արգելեցի զնա ասելով, թէ այն երկուս մոմն որք են հուպ սրբութեան՝ մնասցեն այնպէս վառեալ, և նա սկսաւ ըն[դ]դիմանալ թէ է խաւարումն, և մինչ ետես թէ ոչ եղև այնպէս, ըստ որում ինքն կամէր, իսկոյն ելեալ յեկեղեցւոյն վրդովելով գնաց ի տուն իւր։ Եւս և զսոյնս երբէք տեսեալ և լուեալ իցես, թէ ոք ի դարաց ճիզմէով կամ ճերն բաց ոտիք սպասաւորել պատարագին, և մանաւանդ զսոյնս որ բոկ ոտիք, այսինքն առանց ճիզմէի և բապճի չապիք հագանիլ և ներ այսքան բազմաց ազանց սպասաւորել ի ձայնաւոր պատարագին։...

Եղիա Վարդապետ

1733
յունիսի 27 [Պելկրատ]

ԽԹ.

Հայկական խորհրդաժեռերին ինչ ինչ մասերուն շուրջ յարուցուած յոյժ կարևոր և հետաքրքրական հարցեր կը պարունակէ հետևեալ յարգի վաւերաթուղթը։

Գերապայծառի Տեառն Տեառն Մխիթարայ Աբրոյ Հօրդ վերոյ գերագանցի Աստուածաբանութեան վարդապետիդ

վ[եհագունիւ յարգութեամբ և բազմաւ սիրով և ողջունիւ յայտ լիցի, զի յայսմ ամի եկն աստ ի կոստանդնուպոլիս ոմն Թիֆլիզցի ուղղափառ քահանայ Տէր Գաբրիէլ անուամբ, որ գնացեալ ի յերկիրն լէհաց ի քաղաքն ըստանիսլաւ (ուր նստի Ստեփաննոս վարդապետն լէհացի) դիպեալ է ոմանց նորագունից կարգաւորաց ուսելոց ի լաթին դպրատան անդ եղելոյ. որոց տեսեալ զխորհրդատետրն՝ վերոյասացելոյ քահանային (զսրբագրեցեալ խորհրդատետրն ի սրբոյ ժողովոյն ասեմ զոր մեք ի կիր առնումք) ասացեալ են, թէ զայս խորհրդատետրս սրբագրողն ոչ գիտելով բարեպէս զլաթին լեզուն, չէ բարեպէս սրբագրեալ և թիւր հասկացուցեալ է սրբոյ ժողովոյն. ուստի սղալ է ասացեալ են այն բան [«]որ աղբիւրդ ես կենաց[»] աղօթին, ուր ասէ (Տպաւորեա յոգւոջ սոցա զձև մարմնոյ յուցակի), այլ ասելի է այսպէս (տպաւորեա յոգւոջ սոցա զայս գոլ ճշմարիտ մարմին և արիւն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի) տարածելով ի վերայ մարմնոյն Քրիստոսի զզօրութիւն բանին. և այսու կերպիւ սրբագրեալ են զխորհրդատետրն այսմիկ քահանայի որ այժմ բնակի աստ. և բաց յայսմանէ ներմուծեալ են զերկու աղօթս ի յերկու տեղիս ասելով թէ պակասէ այս խորհրդատետրս և ի մեր կատարեալ խորհրդատետրէն լրացուցանեմք զսա. արդ առաջին աղօթն այս է. Զքեզ ուրեմն ամենագթած հայր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի որդւոյ քոյ տեառն մերոյ, խոնարհեալք աղաչեմք և խնդրեմք, զի ընկալցիս և օրհնեսցես զնուէրս ✠ զայս, և զսուրս ✠, և զսուրբ ✠ պատարագս ամբիծ, զոր քեզ մատուցանեմք. վասն զի սուրբ սուրբ սուրբ ես։ Զայս աղօթս գրեալ են զկնի աղօթին [«] արժան է ստուգապէս և իրաւ [»] և այլն։ Երկրորդ աղօթն այս է. Երկիր պագանեմք քեզ Քրիստոս փրկութիւն աշխարհի, բան Հօր պատարագ կենդանի ճշմարիտ մարմին, անարատ Աստուած, և կատարեալ մարդ. որպէս բերանովս խոստովանիմք, նոյնպէս և հոգւովս դաւանիմք և հաւատամ. աղաչեմ զքեզ որդի սուրբ Աստուած տէր ամենակալ, չնորհել մեղաց իմոց զթողութիւն, և տալ ծառայիս քում զոգի զգաստութեան, որ և փրկեցայց քև ի յաւիտենական հրոյն վասն կամաւոր չարչարանաց քոց. զի դու ես ճշմարիտ Գառն Աստուծոյ, որ բաչխիս ի փրկութիւն ազգի մարդկան և բառնաս զմեղս աշխարհի։ Զայս աղօթս գրեալ են յառաջ քան զաղօթն. Նայեաց տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնից, և այլն։ Բաւ է ողջ լերուք։

1733 *յունիսի* 29
[Կ. Պոլիս]

Ն. Ս[էրուխեան] Հ. Թոմաս Վ[արդապետ]

Ծ.

Ցառաջ կը վարէ Հ. Եղիա մանրամասն տեղեկութիւնները իր պաշտօնավայրի առօրեայ կեանքին՝ ինչպէս նաև քաղաքական ինչ ինչ դէպքերու շուրջ, որոնք շահրունակութիւն են մեր խՋ վաւերաթուղթին պարունակութեան։

Գերայարգելոյ և. վսեմագունեղի տեառն տեառն
Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի և Աբբայ Հօրն մերում

. . . . Առաքելոցի դերձակ Ղազարն որ կամէր ծառայել մեզ, եկն ասա ի սէլանիկու . . . ի մսրայ եկեալ է ի սէլանիկ, ասէ թէ ի մսրը հացի օխան 6 փարայ տային, այժմ սակաւ ինչ աժնցաւ. իզմիր, հացն խիստ թանկ է, մսի օխան 8 փարայ, նմանապէս հալէպ և բոլոր անատոլի և ռումէլի և սէլանիկու պ (?) քաղաքն 60 տրամ սեաւ հացն 1 ստակ է. ասա ևս փոքրացուցին: Ցանծին ֆունթն, այսինքն 180 տրամ տանծն 15 սօլտի է, նմանապէս սերն և ձմերուկն. վերջապէս յէմէի հասրէդ եմ, նաև պանրի.. այսօր մին սեղ առնուլ ետու, բայց յոյժ սարչացայ, զի կարի թանկ գնեալ էին, այսինքն 12 սօլտի, և յետ հացին գնալոց բարկանալոց եմ գնողին . . . . : . . ի ներքոյ արեգական ոչ գոյ սոցին [ժողովրդեան Պելկրատու] նման, զի կարի տարբերք են ի հայական կացութենէ: Համանգամայն հայ են և համանգամայն փառնկք, համանգամայն ուղափառ են և համանգամայն արտուղի...: .. եկեղեցւոյ տեղն չափեցին և զէքթէօն առին, և այժմ ոչ սկսին, այլ ի գալնան...: .. քանի մի օր կայ, որ ստամպօլու գիր եկն ասա, յորում ծանուցանէ թէ զօրքն թուրքաց խորտակեալ և փախուցեալ են զզօրս պարսից, ի վիտին? ուրախութիւն ևս արարեալ են, նաև սոյնս ճշմարիտ է, զի քառասուն հազար թաթարք բռամբք և ընդդէմ կամաց մոսկովին անցեալ և գնացեալ ի զզկպաշու հողն, տակաւին ոչ է յայտ, թէ ի կողմն ի սպահանու գնան և թէ ի պաղտատու . . . : . . . վերոգրեալ ղազարոսն ասաց թէ ճէզայիրցիք խնդրեցին ի թագաւորէն 2 պէյլիք նաւ և նա յօժարութեամբ չնորհեաց նոցա և ի ճանապարհին պատճառաւ մրրկան նոյն 2 նավքն, նաև իւրեանց նավուքն խորասոյզ եղեալ են, չորսն ևս անյայտ է, չեն գիտեր իսկապէս թէ նոքա ևս խորասոյզ եղեն թէ ոչ, այլ միայն զչորսն նաւն տեսաք ի միում նաւահանգստի, վերջապէս 12 նաւուց չորս կան, նոքա ևս երկնչէին ելանել անտի, զի ի մոռայու չրերն 12 նավք սպանեալու չրչին և որոնեն զսոսա: Նաև զայս ևս ասաց, 3 փոք[ր] նաւ մալթէզի մերձ ռէզիտու առին զոեալթանովն տաճկին, տումշէնն և սէրէնն կոտորելով, զնաւարարքն, նաև յետ առնլոյ զկահն և կարասին նոյնոյ նաւուն չրասոյզ արարեալ են գնա: Նա և առեալ են զմի պատուական չէքտիրի, և զմի փոքր թագաւորական նաւ, որ է մեծագոյն քան զքափուէթան, և վասն այսր պատճառի այժմ ղազատան փաշան բազմօք նաւուք չրչի ի սպիտակ ծովն . . . . :

Գերայարգութեան քում ծառայ
Եղիա վարդապետ

Ցամի փրկութեան մերոյ
1733 Օգոստոսի 29
[Պելկրատ]

ԾԱ.

Եկեղեցին՝ որուն կառուցման մասին կը խօսի Հ. Եղիա՝ Պելկրատու Հայոց կը պատկանի:

Ասկ կը նկարագրէ Լեհաց քաղաքական շփոթութեան մէկ հետաքրքրական դրուագը, որ տեղի կ'ունենայ՝ ինչ որ կ'երևի՝ իրենց Սաքսոն Օգոստոս Գ.ի թագաւորութեան սկզբնաւորութեան շրջանին (1733-63):

Դևրաշարգևցւոյ և վանտագունի տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի և Աբբայ Հօրն մերում

Յիսուսաւանդ ողջունիւ ծանիր, զի սոյն եկեղեցիս հազիւ եզերի ժի ո [15000] ֆորինթով, սոքա ունին իւ [2000]. ֆորինթ, ո [1000] ֆորինթ թէ ևս աճ[ե]մներն որ տալոյ լինին, կամ հազարհինգհարիւր մեծ բան է, յերլիյիցն սակաւ օգնութիւն լինի, զի ի գարնան զանիւրանելոց և աւերելոց են զբնակութիւնս նոցա վասն մերձ գոլոյ ներքնաբերդին, և ի սոցանէ 5 մարդ հազիւ կարէ աղքատօրէն զբնակութիւն ինչ չինել վասն ինքեանց. ասն քիրան ևս խիստ թանկ է, և ոչ ունին զկարողութիւն ինչ օգնելոյ, թէ և ոմանք ի սոցանէ օգնել կարիցեն, կարի սակաւ լինի։ Ուստի մտածելով զայս ոմանց յառաջագայից աճ[ե]մներուն, այսինքն պարոն Յովանէ, Կիւլեաձին, Ճանազիզին և այլոց ոմանց, խորհուրդ արարեալ են ներ ինքեանց, թէ ես ի դիմաց նոցին գրիցեմ առ քեզ, այսինքն զերկուս խնդիրս, որոց մինն է այս, զի դու այդր գրիցես առ սուրբ ժողովն, զի նոքա գրիցեն առ կայսրն և կամ առ այլ ոք, զի ինքեանք ևս օգնիցեն վասն չինման եկեղեցւոյս մերոյ, չնորհելով զիրս նուիրեդէնս, այսինքն թուվլայ և քիրէճ, զի աստ առատապէս գտանի այսպիսի նուիրք թագաւորական, և այսպիսի խնդիրքս կարծեմ ոչ է դէմ սրբոյ ժողովոյն, նաև թագաւորին, զի աստ ոմանց վանորէից չնորհեաց զայսպիսի նուիրս. ոմանց ի սոցունց ըստ մասին և ոմանց ըստ բոլորին։ Արդ և իմ մտածելով զսոյնս թերևս վասն սրբոյ ժողովոյն մեզ ևս չնորհիցեն, որպէս չնորհեաց այլոց կարգաւորաց։ Երկրորդ խնդիր սոցին է այս, որ է կարի խելագառական, նաև ըստ ինքեան է անկարելի, որ է այս, զի սոքա խնդրեն ի քէն, թէ դու այդր վասն սոյնոյ եկեղեցւոյս զոմանս զոմանս դրամս հաւաքիցես այդր եղեալ ի մեծամեծաց. և չուրջ զայսու ոչ է պարտ աստէն երկարել, զի է եզական խնդիր։ Կարի նեղութեան մէջ եմ, նաև տկար, վասն չինման սոյնոյ եկեղեցւոյս, զի յառաջակայք գոլով դրամասէրք և գաղջք, նաև անհամաձայնք ցրտապէս չարժին, և մանաւանդ երեցփոխանն որ է բարկացող և կամապաշտ։ Մինաս վ. եղև քանոնիկ Թմկվարու, միշնորդութեամբ Թմկվարու ճէնռալին, 600 ֆորենս ի տարւոջն բաց ի պատարագէն, նաև յայլոց եկամտից եկեղեցականաց, և այժմ ի վէնա երկոքումբք սպասաւորօք չրջի . . . . լէհացիք առաքեալ են ի սամպոլ զմի դեսպան, խոստանալով տալ նոցա զգամանիցան, որպէս զի այնու օգնիցէ ինքեանց։ Մեծագոյն խռովութիւն գոյ ի միջի սոցա։ Կայսրն առ սոսա դեսպան յղեաց ասելով թէ զո ոք ի ձէնջ կամիցիք թագաւորեցուցանել՝ ինձ հաճոյ է բաց ի յիստանիսլավէն, սոյն գունակ մօսկոֆուն էլչին ասացեալ է, նա և ինկիլիզին և ֆուչէմէնկին և պուռանուէլուռքին, և գարտինալն որ է բերան մեծամեծաց լէհացւոց՝ իւրաքանչիւրոյ դեսպանաց պատասխանեալ է ասելով, թէ դուք չունիք իրաւունք առ այս ներախարնել զձեզ, զի դուք ի վերայ թագաւորութեանց ձերոց կարէք իշխել և ոչ ի վերայ մեր, զի զորն հաճիմք և զնոյնն ընտրեմք մեզ թագաւոր։ Եւ ներ դեսպանացս այսոցիկ առաւել գայրացեալ է պլռանուէբուռքին դեսպանն և հարկանեալ զսուրն իւր ի վերայ սեղանին, և նա հեգնելով սկսեալ է ուշաթափիլ առաջի դեսպանին և ասէ զի լինի թէ առանց փաստփոռթի գնաս. և դեսպանն ասէ[«]ես փաստփոռդ ոչ առնում, ինձ ոչ է պիտոյ[»], բայց զկնի սակաւուց պիտոյանայ քեզ և այլն։ Սոքա կամէին զընտրումն թագաւորին իւրեանց երկարացուցանել, սակայն զօրքն մոսկոֆու, զօրքն կայսերն, զօրքն սակսոնին և պռանդէլուռքին, որք այժմ են ի լէհաստան՝ սոքեքն զսոսա չուռով կացուցանել, և եթէ լէհացիք ընդդէմ կամաց սոցին առնիցեն, յայնժամ սոքա տիրելոց են բոլոր ի քաղաքս նոցին։ Թէպէտ սոքա նախասէր ունէին զսոյն խորհուրդս։ Նալղրանին որդին 8 միլիոն դրամ պահանջէ ի լէհացւոց, և ասէ թէ հայր իմ տուեալ է ձեզ այսքան դրամ։ Ցետ երկուց և երից աւուրց յայտնի կու լինի, թէ ով եղեալ իցէ թագաւոր...։ Պռանուէլուռքն 4000 մարդով ինքն գնացեալ

է ընդդէմ ֆրանսցի զօրացն. նմանապէս զօրքն կայսեր և այլոց, և թէ սոցին աւելաւ քան զնորին...։

Դերայարգութեան քում
նուաստագոյն ծառայ
եղիա վարդապետ

1733 Սեպտեմբերի 5
[Պելկրատ]

ԾԲ.

Սուքիաս եպիսկոպոսէ առ Մխիթար՝ ցարդ ամենաքիչ թուղթերու հանդիպած էինք Մայրավանքիս Դիւանին մէջ։

Թէ ո՞վ էր այդ եկեղեցականը. — ինձ կը թուի որ անիկա Պուրսայի նախկին Եպիսկոպոսն ըլլայ, որ «ուղղահաւն և յուսամիտ աճեմ մ՚ևր, խաղաղասէր, բաւական հրամուտ եկեղեցական ուսմանց և քաջ քարոզիչ». ունէր նաև մեծ բարեկամութիւն ընդ. Տէր կոմիտասայ հետ[1]։ Հաւանօրէն Հռովմ կը գտնուէր՝ փախչելով արևելքէն, ինչպէս ուրիշներ, նոյն ժամանակի հալածանաց պատճառաւ։

Առաջին անգամն է ուրեմն, որ մեր վաւերաթուղթերու շարքին մէջ կը գտնենք իրմէ հետևեալը՝ որ կը հայի ծխական խնդրոյ։

Գերապատուելի Մխիթար Աբբայի
Յիսուսաւանդ ողջոյն. ողջ լեր։

Ցայտ առնեմ վերոգրեալ տէրութեանդ, Հայոց մաշտոց թարգմանեալ որոնեցինք փրօբականթեան, գտանք ոչ. մէկ քանի տեառ գտանք գրեալ է [«]պակասութիւն մաշտոցին օրինակեցինք[»] առաքեցի սրբութեանդ, հայիս ինչ բան յաւելորդ են գրեալ ընդէս, մէկ քանի վարսխ թուղտ այլ լուսաւորեալ հոգի Ոսկան վարդապետի ըստամբայ եղեալ Աստուածաշնչին յաւել կամ պակաս բաներն է գրեալ. խորհրդատետր մի այլ գտա ձեռացագիր թէ պատարագի. յառաջ Հռոմա Հայրապետն կու յիշէ յետո կաթողիկոսն. սուրբ տարին մեծ հակառակութիւն եղաւ սանթօֆիցն թէ դուք թէ պատարագ չունիք. ոմանք ձերայինք կարգաւորաց պատասխանեցին թէ 2 տարի է լէհ ըսկսեցին թէ պատարագ, վերջապէս հաստատեցինք վաղուց Սիս թէ պատարագ կայր, խորհրդատետրն տեսած ենք. այժմ գտանք, մեր խօսքն հաստատ եղաւ. խնդրեմ ներումն չնորհես համարձակութեանս, գիտեմ որ ձանձրութիւն է, ինչպէս անեմ հարկաւոր է յայժմ, փոխիփիքրալն տվի սանթօֆիցն, հայեցան, այժմ մաշտոցն կուգեն, պատճառը բարուքեան է. կասեն թէ հայոց ըռիթը մերձ է լաթինացոց, գիրքն որ տեսան տեղեկացան որ մերձ չէ, այսչափս բաւ է խոհեմութեանդ, տրուտ Սուքիաս եպս. յանձնեմ զիս ի մաքրափայլ յաղօթս ձեր։

Թվին փրկչին ՌՉԼԴ [1734]
յուլիսի օրն առաջին
[Հռովմ]

[Սուքիաս Եպիսկոպոս]

Ցարութիւն արհիեպիսկոպոսին ողջոյն տամ, խնդրեմ որ աղօթէ վասն իմ։

---

1. Թորոսեան. Վարք Մխիթարայ. Վենետիկ. էջ 221.

ԾԳ.

Առաջ կը տանի Հ. Եղիա՝ ժամանակակից պատերազմական խնդիրներու շուրջ ունեցած իր մանրամասնութիւնները։

Գերայարգելոյ և վսեմագունի տեառն տեառն
Մխիթարայ Աստուածարանութեան վարդապետի և Աբբայ Հօրն մերոյ

... ի բանակն Ֆրանսզու կարի թանկութիւն է և վասն այսորիկ և վասն այլոց պատճառաց բազումք ի զինուորացն նոցունց դիմեն առ բանակս սոցին. սոքա ևս ոչ թողուն ի բանակս իւրեանց, այլ զոմանս այսր և անդր ցրուեն, և ոմանք ի նոցունց աստ եկեալ են զինուորութիւն առնեն։ Բայց բանակն կայսերական ամենուստ կողմանց առատութիւն է, նաև են յոյժ առողջք և պատրաստք։ կայսերական կառանայքն, այսինքն մաճառք, ոսկք և խովատք, կարի յոյժ աւերուեն տան նոցունց զիւղօրէիցն և զօրացն, և վասն այսոցիկ յոյժ նեղեալք և խռովեալք են այժմ, զի ոչ կարեն զընդդէմ ունել կառանայից սոցին, պատճառաւ սրնթացութեան և ուժեղութեան նոցին։ Նախ քան զժամանելն գրոյս այսորիկ լսելոց ես այդր զլուր յաղթութեան, զի զօրքն կայսերական յունիսի 17 անցեալ են զՋուրն և են այժմ ի հողս նոցին, և սպասեն զօրացն պառնէպուռքին, թէպէտ զոյ այժմ ընդ էվճէնեօյին 12 անուանի իշխանք և զինուորք իննսուն հազար և տակաւին օրսաօրէ գնան այլք զինուորք և կառանայք։ Տանծկացիք այժմ յուսահատաբար մարտնչին զիտելով զայս թէ յետ առնման քաղաքին զմնծազոյն մասն կրելոց են պատճառաւ ստանիսլավին։ Վերջապէս սոյն քաղաքս ևս հանգոյն թէվրուզու ի խորին պատժոյ և չքաւորութեան ժամանելոց է պատճառաւ Ֆրանսզոյին։... Աստ այսպէս համբաւեն թէ կարմիր գտակն առեալ է զՊաղտատ, շատ չար խորհուրդ ունէր թուրքի թագաւորն, բայց չեղև պատճառաւ կարմիր գըտակին....

Գերայարգելութեան ծառայ

Եղիա վարդապետ

Ցամի տեառն 1734
Յուլիսի 3

[Պելկրատ]

ԾԴ.

Ազգային տեսակէտներով բաւական հետաքրքրական նիւթեր կը պարունակէ Հ. Մանուէլի հետեւեալ նամակը։

Ան կը ներկայացնէ միևնոյն ատեն նամակագրին մէկ քանի կարևոր ինքնակենսագրական գիծերը՝ օգտակար ծանօթութիւններով։

Գերայարգելոյ տեառնէդ տեառնդ Աբրահիմ Հայր
յաշտարտուբիւն

... աստ եղեալքն բնաւք զախս և զկարասիս իւրեանց բաժանեցին ուր ուրէք իմացեալ թէ գուցէ բերդօրայք հաստատք, մինչի ի գլխարկս կանանց ոսկեայ փուլէրովք

և մարգարտեա զարդարուն քակեցին զբնաւսն և այնպէս փախուցին. այժմ միայն ա ա [մէկ մէկ] փեչկիր ծածկոցով փաթաթեալք գգլու[խ]ս իւրեանց գան յեկեղեցին ահիւ և դողութեամբ միայն քարոզի և պատարագի։ . . . Աղաչայ Պետրոսն ևս այժմ թողեալ զքարաշէն տունն իւր, հանդերձ կնաւն, ծառայիւքն գնացեալ է որպէս թէ ի տեղի ապաստանի, ի սպիին կոչեցեալ քաղաքն, և միայն զծերունի մայրն իւր թողեալ է ի տան, և յօրաժամ զբօթալի նովէլլայք լուանալ, ի ահի երկիւղի և ի կասկա[ծա]նաց կան զցայգ և զցերեկ . . . ։ Ի կողմանէ աչացն Հ. Յակոբեան բաղձալոյս յոյժ մեծապէս ցաւիմ, և յուսամ թէ էնկսէին եախուն օգտիցէ նմա . . . ։ Ջցաւալի լուր գրեմ, Հ. Թէոդորոսի փեսին՝ սակս գրիգորին որ առ Աստուած փոխեցաւ ի յուլիսի 17ին, և եղև սոյնպէս։ Նոյն սապատութիւնն որ վերայ եկեալ էր զնոյն հրաշալի բարձրագոյն հասակն, որ կարեմ ասել քան զմեր Հ. Գրիգորի պօյն այլ աւելի բարձրագոյն էր, յորժամ կտրիճն էր նախ քան զամուսնանալն, և յետ ամուսնութեան իբրև զմի ամ յետոյ, նոյն սապատութիւնն որ պատահեալ էր նմա՝ եղեալ էր այնքան կարճ՝ որպէս թէ զնոյն Բոէթին որ ի սուրբ Մարթին . . . ։ . . . Եւ վասն վկայութեան կենցաղավարելոյս աստ, ոչ միայն զմի գիր, այլ թէ զի կամիցիմ՝ յօժարութեամբ տան. և մեծաւ արտասուանօք, ոչ միայն իշխանք, այլ և ռամկունք, զորոց Աստուծոյ գիտելի թէ որքան օգտութիւնս հասուցեալ եմ, մանաւանդ հիւանդաց և աղքատաց, և սոցին զրուցատրութիւնք միայն բերան առ բերան հազիւ կարեմ մեկնել, և ոչ գրով։ Կարծեմ թէ Հայր Գրիգորն ոչ է կարացեալ լաւապէս իմացնել սան Մարթինի զիմացի եղեալ պոյաճուն զայն հողն միայն՝ որ թախանձէ զիս այն բարեկամ ոմն որ աստ է։ Միայն այսպէս ասէր ներկարարին, (թէ ասֆուր ծաղկամբ ներկ որ բռնեն՝ և Բ Գ օր տօպրակով պահեն և միշտ զջուրն դուրս ածեն, և յետոյ Ա հողի պէս թօզ կայ նովաւ այն տօպրակի մէջ մնացեալ ասֆուրն՝ ցանելով զնոյն հողն ափով չփեին, մանաւանդ զայս խօսքն թող ասէ (յետ ամենեցուն իլիմոնի ջրով ևս չփեն) և զայն ևս գիտեմ, միայն զայն հողի անունն գրիցէ թէ զինչ անուանի, և ոչ այլ ինչ)։

Ցամի տեառն 1734
օգոստոսի 6
[կէօլա]

Հ. Իմմանուէլ [Թումպեարեան]
կրօնաւորս

ԾԵ.

Այս անգամ Հ. Եղիա՝ բաց ի տեղական քաղաքային լուրերէ՝ մէջ կը բերէ հայ գաւառներու կեանքէն զանազան տեղեկութիւններ, յորս գլխաւորն է Տիգրանակերտի մասին զրածը։

Գնդապարգեւոյ և վանահագունեղի տեառն տեառն
Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի և Աբբայ Հօրն մերում

. . . Քալէացւոց պատրիարգի քոյրն ի տիարպէքրէն վասն եղբօրն իւրոյ եկն աստ, բայց այժմ ոչ գիտէ, թէ ուր իցէ նա, արդեօք իցէ ի վէնէտիկ, և կամ ի Հռոմ, գրելի է զսոյն ևս, և ես զկնի բազմաց խօսակցութեանց հարցի ցնա, թէ տիարպէքրիր այժմ յորում կացութեան իցէ, նա և սկսաւ ասել [“]հիչ սօրմայ[”] հացին 1 օխան նախապէս 1 ստակ էր ասէ, բայց այժմ 5 փարայ, մսին օխան 8 փարայ. կանայք չունին հրաման ի տանէ իւրեանց ելանել ի դուրս, հազիւ կարեն յամիսն մի անգամ գնալ ի բաղանիս, 20 հազար չէնիչէրի բնակին ի տիարպէքրիր, առուծախին ինքեանք առնեն,

փաթթամբք աղքատացան, և ազգաւք բոլորովիմբ չքաւորեցան։ Մուսուլու գիւղօրէքն ոչնչացան. պաղտատու եղեալ ժողովուրդն, ոմանք ի սովու և ոմանք ի ջրոյ մեռան ասէ, և այլն։ Յանցելումբ աւուրն եկն աստ թագաւորական հրաման, զի իւրաքանչիւր քաղաքացի զիւր ցորեանն այլոց ոչ վաճառիցէ, այլ իւրաքանչիւր քաղաքացի վաճառես֊ցէ իւրեանց քաղաքացւոյն։ Այսու յայտ է, թէ ի թմլվարու և ի վարատինու ցորենն ի խրուտալիի երկիրն տանելոց են։ Թուրքն եթէ կամիցի պատերազմ առնել ընդ կայ֊սերն, ոչ գայ ի պելկրատ, այլ ի յերկուս յառաջս բաժանելով, ոմանք ի նոցունց ի կողմն խուվալիու գնան և ոմանք ի մաճառու. Թուրքի թագաւորն եթէ կամիցի պատե֊րազմ առնել ընդդէմ քրիստոնէից, նախապէս ոչ առնէ ընդ սմա, այսինքն ընդ կայ֊սերն, այլ ընդդէմ մոսկոֆին, ըստ որում ոմանք աստանօր ի մեծամեծաց այսպէս տրա֊մաբանեն։ Ազգս ի կողմն խուվա[տ]լիէն չատ ազգեր ունին։ Աստ հարկաւորապէս թա[ն]֊կանայ հացն և միսն, զի ըստ մեծի մասին քաղաքիս միսն և ալիւրն յայլմէ երկրէ գայր ասա, զի պելկրատու հողն թմլվարու պէս չէ . . . ։

Գերայարգելիեան քումբ
Նուաստագոյն ծառայ
Եղիա վարդապետ

Ցամի տեառն 1734
Նոյեմբերի 4
[Պելկրատ]

ԾԶ.

Հայ ծխական հարցերու շուրջ իբր նոր վաւերաթուղթ մը կը ներկայացնենք հետեւեալ գիրը։ Ամենէն առաջի ուշագրաւն է՝ պատարագի ճաշակումէն առաջ ներ֊մուծուած Սրբութեան ի բազմոցի հանդէսը։

Գերապայծառի Տեառն Տեառն Մխիթարի Սրբոյ Հոգւոյն վերոյ գերազանցի Աստուածաբանութեան վարդապետիդ, ողջոյն սիրոյ և յարգութեան

. . . Թուղթ ոչէր մեզ իմիջոցէն եկեալ ձգեաց զայս դուշդուշէս ի կոստանդնուպոլիս, թէ սուրբ ժողովն տէստուր ետ Չահկցոց խորհրդատեարսըն պատարագել և պաթաղ եղեւ հայոցն։ Դաւ ասէ. ոմանք ուսան զփիլիսոփայութիւն, և ոմանք զչաթաղանութիւն[1]. իսկ ես ստացայ ասել զժամերգութիւնն և զխորհրդատեարն Չահկցոց. նաև ի վերջն նախ քան զճաշակելն սրբութեան ի պատարագին դնէ զսրբութիւնն ի ճառագայթին և այնու խա֊չակնքէ զժողովուրդն, և ապա ճաշակէ, յորմէ ոմանք տգէտք տեսեալ զարմանան և ոմանք զայթակղին.... յանցելումբ տարւոջ մինչ պուռսացի յովսէփ վ.ն և տիրկէր յակոբ վ.ն զծնունդ տեառն Դոր տումարովն արարին, յօհան վ.ն թազիր անել ետ վէքարին և Ծն ական ղոչ. փէնա[2]. բայց յայս տարւոջ զեպիսկոպոսի միան դարձոյց և նոր տումարով Ծնունդ արար ի սուրբ անդօն եկեղեցւոջ ձայնաւոր պատարագաւ և հարիւր հայ տիրա֊ցուներով։ Եթէ այսպէս է՝ մեզ ևս թող տէստուր տան Դոր տօմարով անել, քանզի և ժողովրդեան մեծ մասն ևս նոր տօմարով վարին, հայելով ի հայ կարգաւորաց վարիլն Նոր տօմարով. եթէ կամիք գրեցից զայս բանս սուրբ ժողովին. բաւ է. ողջ լերուք ի տէր։

1734
դեկտ. 27
[Կ. Պոլիս]

Ն. Ծ.ոյ. Տ[էրութեան] Զ[երոյ]
Թոմաս վ. Թէոդոսեան,

---

1. Ճարտասանութիւն։
2. Pena = պաճի, տուգանք։

ԾԷ.

Հետևեալ կոնդակին հեղինակն է Աբրահամ Բ. կաթողիկոս Էջմիածնի «ի գեղջէ Թոշաբայ յերկրէն Վանայ». կը կոչուի նաև մխեցի և բիւրտխստանցի, Մշոյ Ս. կա-
րապետին առաջնորդ եղած ըլլալուն համար[1]*։*

Աբրահամու կաթողիկոսութիւնը տևած է չորս տարի (1730–1734)։

Ի.

Ցիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Աբրահամ յօգնաթախիծ կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարգ Վաղարշապատու Լուսակառոյց և Տիրանկար Սրբոյ և մեծի երջանկազարդ Աթոռոյս Էջմիածնի։

Ցոր մեզ հոգևորական միաբար սէրն և գկուսածնաւանդ ողջոյնն և զաստուած սուրբ հոգւոյն զձեր և զսուրբ գահիս զպարգևսն և զլուսատուին մերոյ չնորհաբաշխ սուրբ Աջոյն զչնորհն, հանդերձ եռանդնոտ կաթոգին ըղձիւ և խանդակաթ բաղձանօք ընծայեալ նուիրեմ ի վերայ երջանկապատիւ սիրելւոյդ իմոյ, և հարազատ նազելի զաւակիդ մօրս լուսոյ, օրհնեալ բազմաժողով քաղաքիդ Եւդոկիոյ Հեղինակ Մխինաս Աստուածաբանութեանն վարդապետիդ և Արհիապանծ եպիսկոպոսիդ ի տէր խնդալ մեծաւ արգահատութեամբ և քնաւին խաղաղութեամբ, ի լրումն երկնաւորին խնդութեան. նաև հարցազրնեմ զիարդն և զորպէսն քոյոյ բարեպէս կելոյդ, զոր տէր անփորձ պահեսցէ և փրկեալ ազատեսցէ ներքնոց և յարտաքնոց ձախողակի կրից ի փառս եկեղեցւոյ իւրոյ. ամէն։

Եւ ընդ սիրառաքի ողջունանուիրի քարտենիւս ծանիցէ յօգնիմաստ գիտութիւն վ.սեմազարդիդ, զի ծիր սիրոյ սիրելւոյդ իմոյ ժամանեալ եհաս առ իս՝ և ընթերցեալ ծանեա[յ] զհամայնսն զոր ինչ ի նմա բացերևոց էր մելանատրակիւ. վասն որոյ սիրելի նախ ասեմ Լուսահոգի փիլիպպոս վարդապետի կողմանէ գլուխդ ողջ լինի. հոգւով սրբով միխթարիս. աստուած իւր հոգին լուսաւորէ, և Ր.ժ.ան վարդապետացն սրբոց դասակից և պսակակից արասցէ. ամէն։ Նա ևս սիրելի իմմիրու առաջնորդական կելուրի կողմանէ զոր գրեալ էիր, իբր թէ տարինն Իղ քէսայ կելուր կը լինի. զի այս վասն նախանձու գրեալ են իմմիրոցիքն, գիտեմ նազելի և լուեալ եմ ի քնէ անտի Հայրապետ Սիմէոն և Մանուէլ լուսահոգի վարդապետաց յիմմիրու ի սուրբ գահս հասուցեալ կելուրն. և քոյդ եւս գիտեմ որ քան զնոցա առաւել է, մանաւանդ գեղեցիկ չուրջառն և գաւազանն հանդերձ և այլ պատուական իրօքն և ընծայիւքն զոր յղեալ էիր առ իս. սոքա եւս յաւելորդութեանն յաւելորդն է, և գիտէ տէր որ ճշմարիտ քոյն քան զնոցա աւելի, բայց իմմիրոցիքն զայն նախանձու գրեալ են առ իս. վասն որոյ յետ քանից աւուրց նոցա գիր հասարակ գրելոց եմ ըստ գրոցելոյ քում, և կոչելով զնոսա ի սուրբ գահս դատաստան վասն միոյ ամեան Իե քէսայի կողմանէ. և դու սիրագունդ իմ լեր այսու ամենայնիւ անհոգ և միամիտ. զի զբապեղքն անկանելոց են ի խորխորատ՝ ըստ սաղմոսին. ողջ լեր տերամբ յիսուսիւ, ի չնորհ տեառն հանդերձ պաշտական մանուէլիդ. և ընդ քեզ հովանաւորեալ ժողովրդական երամովդ. Ամէն։ Գրեցաւ ՌՃՁԳ թվին յուլիսի ԻԳ, առ դրան մեծի վեհարանիս սուրբ Էջմիածնի։

[1734] [Աբրահամ կթղկս, ամենայն Հայոց]

Պարձեալ զայս եւս ծանիր սիրելի. զի լուսահոգի փիլիպպոս վարդապետի զամենայն ինչսն եթէ զգեստն, թէ չորեղէնն և թէ նաղտն և թէ վէճն ի քեզ է յանձին. նաեւս

1. Ձամչեան. Պատ. Հայոց. Գ. էջ 805։

սուրբ հրեւումի վանքն հանդերձ միաբանիւքն ես ի քեզ յանձին, տեսնում գրո հարազատ սիրելութիւնդ թէ որպիսի հոգսունակութեամբ տիրութիւն անելոց ես վերոյ գրելոցս. զի յետ քանից աւուրց նոցա ես մխիթարական գիր գրելոց եմ. որպէս որ հասարակ ակնայ քաղաքի ժողովրդեանն գրեցի և յղեցի ընդ մեր յովսէփ վարդապետիւն. կրկին լեր ողջ քրիստոսիւ տերամբ մերոյ. Ամէն։

ԾԸ.

Ակնարկութիւնը՝ որով կը սկսի մեր հետագայ նամակը՝ Ռուսիոյ Աննա Գուրլանտիոյ կայսրուհւոյն մասին է (1730–1740)։ Այս դուստր էր Մեծն Պետրոսի եղբօր Իվան Հինգերորդի։ Իր ամուսինը Փրեդերիկ–Գուլիէլմոս դուքս Գուրլանտիոյ տարի մը վերջ կը մեռնի։ Աղրունի թագը Աննայի կ'ընծայուի՝ գաղտնի գերագոյն խորհուրդին կողմանէ, փոխանակ ըստ օրինի Մեծն Պետրոսի դատեր տալու։

Վաւերաթուղթիս թուականի շրջանին մէջ տեղի կ'ունենայ Լեհաստանի յաջորդութեան կռիւը. ճիշդ այդ է որ կ'ակնարկուի նամակին մէջ։

Հ. Եղիա կը նշանակէ նաեւ զանազան նորալուրեր ժամանակակից կեանքէն՝ առևտրական խնդիրներու և ուրիշ քաղաքական դէպքերու շուրջ։

Գերապայծառ եւ վսեմագունեղի տեառն տեառն Մխիթարայ վարդապետի Աստուածաբանութեան, և Աբբայ Հօրն մերոյ

. . . Մոսկոֆու ռէճինան, որ այժմ անկախ յումեքէ թագաւորէ, յղեալ է նա կայսերն[1] իբր նշան սիրոյ գերիս սամուր քիւրքս, նաև վասն վեցից տանց զարդարանք, և սոյն զարդարանքն խաթայու է, այսինքն չինիմաչիու, նաև այլք իրք մեծագինք, և գինք սոցին արժեն չորս միլեօն։ Եւ ի վերայ այսր ամենայնի Ա[50,000][2] զինուորք ևս յղեալ է ի ռէնեօ ընդդէմ ֆրանսըզի զօրուն։ Կ'ալուանի որդւոյն խոստացեալ է պահել զլէհէստան, և զօրքն սակսոնի գնասցեն ի ըռէնեօ, և այժմ ի լէհէստան ի խաղաղութեան է, զի այնք որք էին ապստամ[բ]ք, նոքա ևս գներումն խնդրելով ի թագաւորէն հնազանդեցան նմա։ Մեն վաճառական եկն ասա ի յիզմիրու, և պատմեաց թէ ներ առաքաց գոյ մեծ իւն խռովութիւն պատճառաւ կարմիր գառակին. յենիչէրքն ոչ կամին գնալ ի յարևելս ընդդէմ պարսից։ Ի յիզմիր 40 տրամ հաց 1 ստակ, և մսի օխան 2 փարայ, այն ևս է լաւ։ Ի պաղտատ աւուրի քիլէն 500 ղուշ ելեր է, քիլէն 90 ոխայ է։ Բազումք ի սովէ և ի չրոյ մեռեալ են։ Մեծագոյն յոյս գոյ հաշտութեան, և ի բերանս բոլորից անձանց, թէ ասա իցէ և թէ ի վէնա սոյնս է, ապա թէ ոչ, մեծագոյն արիւնահեղութիւն լինելոց է յերկոցունց կողմանց։ Ի վէնա 34 տեղ սօլտատ գրեն, իսկ ասա և ի յայլ տեղիս ձիաւոր գառանայ։ Զօրքն թագաւորին մերոյ նպաստութեամբ այլոց իշխանաց կարի յոյժ բազմաթիւք եղեն յայս անգամ ըստ որում համբաւեն...

Ն. Ս. Ե[ղիա] վ[արդապետ]

1735 ապրիլի 1
[Պելկրատ]

---

1. կարդալոս Ջ. կայսր Աւստրիոյ։
2. Պատմութիւնը կը նշանակէ 20,000։

ԾԹ.

Մամառ անօրէն յարձակում մ'է որ կը տեղեկագրուի Հ. Մանուէլի հետագայ նամակին մէջ։

Այդ մասին՝ շաբաթ մը վերջ համառօտիւ Հ. Եղիա ևս գրած է այսպէս. « Ամանք « մամառք ապստամբեցան և զմեծագոյն վնաս հասուցին գիւղօրէից, և մանաւանդ « կեռլեցւոց, ոչ թէ զքաղաքս նոցին աւերեալ կողոպտեցին զինչսն, այլ զոմանս ի « վաճառականաց նոցին ըմբռնեալ կողոպտեցին, և զեզինս իւրեանց կերին, և որքան « զբազմութենէ նոցին համբաւեն, ոչ են այնքան, և ոչ գոյ երկիւղ, զի բազումք « տրակօն, նաև ռացի կատանայք գնացին ընդդէմ նոցա, և զմանն ինչ ի նոցանէ « սպաննեն և զոմանս ըմբռնեալ բերին ի թմշուարու բերդն » (Դր. 1735 Մայիս 19 [Պկղրատ])։

Գնդյարգեցկոյ ձօրդ իմոյ քաղցրագունելդ սրտիս
գնկուցմունք տրտմախառնունք

. . . . մեր հայոց մէջէն գոն բազումք [զրամատեարք որք ձ[հարիւր]աւորք եղինք գնեն և հայր Թէոդորոսն լաւ գիտէ որ ի մեծ մաճարիստան խոտաւէտ տեղեանք գոն, անդ պահեն և գիրացնեն զեզինքն. և այս մայիսի ԻՍն կամ Գն ոչ գիտեմ, թէ զինչ լուեալք անհաւատ մաճարք և թշնամիք հայոց՝ յանկարծ սրտապնդեալ բազումք որպէս թէ ապստամբք կայսերն համարձակեալ մտեալք են բազումք հնծելօք ի փուստան և արձակեալք ի վերայ հայոց, մանաւանդ կէոլէցոց. զբնաւ ձիանքն և եզինք բազումք, այլ և զբովանդակաց զդրամքն, զհանդերձն և զայլ ամենայն ինչ գկահս և գկարասիս թողեալք գնոսին մօրէ մերկ\ և գնացեալք։ Եկ և տես քաղաքիս լացն և երկիւղն, և այժմ նոյն Պէչ գնացօղք ևս՝ ի յերկիւղէ դադարեցան ի գալն։ Վերջապէս ոմ գիտէ թէ որ զօրանայցէ տէր գաւառացս, կարէ լինիլ թէ Թերևս....[1], և թէ ոչ գիտութիւն լիցի, զի ոչ Ասայ ազգն մեր Թարց գերութեան և սպանեցման բազումք, տեսցէ տէր և ողորմեսցի։ . . . Նաևս ի կէոլէյու առեալ եմ ի տէր մինասէն հաստատ վկայութիւն, զի նա տարին Ա անգամ կամ Բ տարին մի անգամ կու գայ աստ հրամանաւ եպիսկոպոսին վիզիթացիա, առ ի քննել զքահանայս և զժողովուրդս...

Մնամ պատրաստական ծառայ

Հ. Մանուէլ [Թուպեսէրեան] կրօնաւորս

1735 մայիսի ԻԹն գրեցի

[Կէոլա]

Կ.

Պկղրատի մէջ Հ. Եղիայի առաքելական պաշտօնը իր վախճանին կը հասնի՝ հասակին ծանրութեան և խանգարուած առողջութեան պատճառաւ։ Ահա այս՝ կ'արժէ իրրև ապացոյց մէջ բերել առ Աբրահայրն ուղղած Մայիս 19 թուակիր մէկ թուղթէն՝

---

1. Անբնեռնելի է բառս, ցեցակեր ըլլալով կիսով չափ։

հետևեալ սրտաշարժ տողերը։ Իր տկար վիճակին մէջ՝ անգամ մը կը կանչուի մահուընթի մը քով. Հ. Եղիա անձնանուէր հովուի մը եռանդով կը փութայ իսկոյն. կը խոստովանցնէ, կը հաղորդէ հիւանդը ու ժամ մը կը սիրպուի անոր քով մնալ. «և յետ այսմ – կ'ըսէ – եկին ոմանք անձինք հանդերձ նոտարիւն, և մինչ սկսաւ «նոտարն գրել՝ ես վերստին տկարացայ, և մինչ տեսին զիս ի յայսպիսի տկարու«թեան՝ հարկադրեցին զիս ընկողմանիլ ի վերայ միոյ մահճի, և այսպէս առնելով «ընդ երկար ժամանակ, հազիւ կարաց խելս ի գլուխս գալ»։

Աշրիւնազարդ հովիւը նկատի առնելով ժողովուրդին բարիքը՝ դեռ չմեկնած իր սիրելի պաշտօնատեղիէն՝ հարկ կը համարի իր յաջորդին համար գծել հետեւելիք կարևոր կէտեր – որոնք արդիւնք են իր իմաստուն և փորձ պաշտօնավարութեան – յաջող և արդիւնաբեր ընելու անոր գործունէութիւնը։

Իր ամրողջ նամակին ընթացքէն կ'երևի սակայն, որ այդ խրատները կու տայ՝ առանց որոշապես տեղեակ ըլլալու թէ ո՛վ յաջորդ պիտի կարգուի իրեն։

Կը տեղեկագրէ նաև սոյն նամակով բաւական լուրջ քաղաքական դէպքեր։

Գերապարգևելոյ և վսեմագունեղի տեառն տեառն
Մխիթարայ Ալտուժաբանուրեան վարդապետի և Աբբայ Հօրն մերում

. . . . Նաև յետ յայսմ յայտ առնեմ զայս՝ առ քոյդ խոհեմութիւն, զի եթէ տէրն կամիցի ի գալն աստ նոյնով համանչանեցելոյ[1] անձին, նախապէս զոմանս խրատս տալի է նմա, որպէս զի այնու թերևս զգուշասցի այնպիսեաց անպատեհից չարժմանց, որով հետև ըստ ինքեան ներ յայսպիսւում պաշտօնի այնպիսաբար վարիլն ոչ է բարի, որք և են այսոքիկ։ Նախկին է այս, զի ի մէջ քարոզին, նաև ի սեղանոջ ուրուք ոչ է լաւ յիշել թարց իմիք հարկաւորութեան զարհեստական հուրն, նաև զարիւսեկն դժոխոց։ Երկրորդ, զի որքան կարելի է ջանայցէ ընդ ժողովրդեանն սիրով և հեզութեամբ վարիլ։ Երրորդ՝ զի ի մէջ քարոզին, նաև յարտաքոյ նորին ոչ է հարկ ներ այսքան ազանց, զազգն իւր պախարակել, զի յայսպիսեաց բանից ժողովուրդն կարի յոյժ խորչին, նաև զմեծագոյն պատկառանս կրեն։ Չորրորդ, զի զեղանակ ընթերցման աւետարանին ուղղելի է, զի ոչ է լաւ գյունական եղանակաւն ընթեռնուլ զաւետարանն։ Հինգերորդն է, զի ներ սրբոյ պատարագին ոչ է հարկ այնքան տարածմամբ ձեռօք ասել զաղօթն, լաւ է բազմաց հետևիլ, քան թէ միոյն։ Վեցերորդ, զի ի մէջ քարոզին ոչ է այնքան հարկ ի վեր քան զչափն պօռալ։ Եօթներորդ, զի ներ խոստովանութեանն ոչ է լաւ և ոչ է բարի, զի գխոստովանօղն զայրացմամբ յանդիմանել, և թարց արձակման այսու պատճառաւ յետս դարձուցանել, թէ ոչ գիտեն զհաւատաքն, . . . և այլն։

Ութներորդ, չանալի է հոգևնականաբար զգուշանալ ի սնափառութենէ և ի բարդաբանութենէ, զի ի յայսպիսւոյ խոսակցութենէ՝ ոչ երբէք հետևին բարիք, այլ մանաւանդ չարիք։ Իններորդ, զի զբարկութիւնն իւր սակաւ ինչ չանայցէ մեղմացուցանել, և ընդ տիրացու յակոբին մեղմաբար վարիլ, զի նա ինքեան պիտոյ է։ Տասներորդ, զի յոյժ բարի լինէր ինքեան, եթէ յաւուր առաջ զաւետարանն, զգիրքն, և զչարականն տես արասցէ քանի մի անգամ ընթեռնլով, մանաւանդ զյաւետարանն։ Այլ և զբարեկենդանն պարտի ըստ լաթինացւոց առնել, այսինքն յերեքշաբթի աւուրն, նաև ի չորեքշաբթի աւուրն կերիցէ զմիս, զի աստ բաց ի յոմանց սակաւուց անձանց պէքեաւոից, թէ տեղացիք իցեն, և թէ վաճառականք, ամենեքին ըստ լաթինացւոց առնեն. և այնք որք ոչ ուտեն, չեն ի համարի։ . . . Ես յառաջնում տարւոյն զչորեքշաբթին պահէի, նաև

---

1. Անձին ընտրութեան դեռ հաստատապէս ծանօթ չէ Հ. Եղիա վարդապետ, ինչպէս որ ըսինք։

զբարեկենդանն ի կիրակէի աւուրն առնէի, բայց մինչ տեսի, զի այնպիսաբար վարիլս զոչ իմն բարութիւն առբերէ՝ հաւատոյս կամ անուանս, այլ միայն ՝ինայթակղութիւն, վասն այսորիկ ես ևս այժմ ըստ լաթինացւոց առնեմ զպասն և զուտիսն։... զսրբազնութեան դնելոյ կերպն ուսցի, և ոչ միայն զերեկոյեանն, այլ և զառաւօտեանն, զի զսոյն կերպն Է. Այսօրինն լաւ գիտէ, զի լէհացւոց հայքն ըստ մեծի մասին այսպէս առնեն....։ Պարոն ճանազիզին գիր եկն ի թօխադու, և ի նմին թղթոջ ծանուցանեն՝ թէ ի յերզրումայ ի թօխադ ոչ կարէ քէվրանն գալ. նաև ոչ իսկ ի թօխաթու կարէ գնալ յերզրում, և մանաւանդ ի յերզրումայ ի յաճէմստան, զի բաց իրէվանա՝ վերստին տիրեալ է զզլպաչն այնց գաւառաց, որ օսմանցին տիրապետեալ էր նախապէս, և այլն։ Նաև յայս չաբաթ իլօվցի հայ մի եկն աստ, և նա ըստ որում պատմէ, լէհացիք այժմ ըն մեծի վշտի կան, մսկօֆն ասէ՝ հարիւր հազար զինուորաք նստեալ է ի լէհէստան, ճէնռալիսիմօն բազմաք զօրովք նստեալ է ի յիլով քաղաքն, և քաղաքացիքն վասն ծախից սեղանոյ նորին յաւուրս ձ թալէր վճարեն բաց ի պահարեղինաց և չէքէրիցն, զի այսպիսեաց ծախքն հրէայքն հոգան, և խիստ հակառակ է հրէից ազգն մսկօֆաց։ Ի գաւառն ոէնիու ֆիլիպուռքին ջուրն սոքա կտրեցին, և զմասն ինչ ի զօրացն կայսերական անդէն եղին, զմասն ինչ ևս հանդէպ զօրու ֆրանսըզին, իսկ և զմնացեալ հեծելազօրսն հանդերձ զառանայիւք գնալոց են ի հողն ֆրանսըզու[1]. և զայս այսպէս գիտելով, ընդդէմ նորա այսքան զինուոր ևս միշտ ի պատրաստի կայ։ փօրթուքալու թագաւորն Ցի զինուորս յղեալ է ի սպանիա, և այժմ կայսրն զմի ճէնռալ յղեաց առ նոսա։ Ասանք ասեն, թէ հաշտութիւն լինի, իսկ այլք զընդդէմն ասեն....։

Ի Պէլկրատ Գ. ցունիս
1735

Պատրաստական ծառայ ամենայնի
Եղիա վարդապետ կոստանդնուպոլսեցի

ԿԱ.

Հ. Յակոբ Բուզայեան յաջորդելով Հ. Եղիայի՝ կը սահանձնէ հովուութեան պաշտօնը Պելկրատի Հայ ժողովուրդին՝ որ կը համակրի իրեն, ծանօթ ըլլալով մանաւանդ տեղական լեզուին. թէև միւս կողմանէ հօտը կը զժուարի յոյժ նախորդէն զրկուելուն, մինչև իսկ փափագելով որ ինքն ալ քովերնին ձեայ. — ահա ինչ որ ուրեմն կարդացած ենք Հ. Եղիայի մէկ ուրիշ նամակին մէջ։

Բուզայեան մին է Մխիթարայ այն աշակերտներէն՝ որոնք քաղաքական վերաբերմունքներու պատճառաւ՝ Մեթոնի Մենաստանին մէջ իրը պահապան ձեացին, և ապա գերի բռնուելով Պոլիս տարուեցան ու փրկանքով միայն ազատեցան։ Եւ որովհետև այժմ իր մասին է մեր խօսքը՝ յօգուտ իր կենսագրութեան կը դնենք շատ փոքրիկ տեղեկութիւն մ'ալ, թէ յիշեալ վարդապետը Մխիթարայ Միաբանութեան կը նուիրուի՝ տնէն փախչելով, ինչպէս ինքն իսկ կը յիշատակէ ազգականներուն, ըսելով ծնողաց մասին՝ թէ « տնէն փախչելոյս կսկիծն քաշեցին »։ Աւելորդ չենք նկատեր յիշատակելու նաև Մխիթարայ մէկ հայրենի գողտրիկ բացատրութիւնը՝ զոր Հ. Յակոբ իրր համեմատական եզր մէջ կը բերէ այսպէս. « Մեր Գեղյարգելի աբբայ « հայրն երբ որ զիս պէլլրատ խրկեց, ասաց թէ քո կարօտ կոմիտասէն և ստէ- « փանէն կառնեմ. ուրեմն դու ալ ոխ սրբուհի, զիմ կարօտս սիմաէն և չէչիլիաէն « առնես, զի որպէս զիտես որ սիման քոյր իմ է և հօր քուր քո, իսկ չէչիլեան « դուստր եղբօրս է և քոյր քո (Գր. 1735 Պէլրատ. Դեկտ. 2)։

1. Կը հետևի հաս տող մը ծածկագրութիւն։

Իբրև կարևոր կէտ մը կը նշանակեմ և այն, որ նոր առաքեալը ըստ հետագայ նամակին՝ իր պաշտօնին կը ձեռնարկէ 1735 Հոկտ. 8ին. այսպէս ինքնին կ՝ուղղուի ուրեմն վանքիս ժամանակագրութեան այն անցքը՝ որ փոխանակ 1735ի՝ ըլլուր է 1736[1]։

Նամակագիրս յետ նշանակելու Պելկրատի մէջ կրած իր առաջին տպաւորութիւնները՝ կը տեղեկագրէ նաև Ռուսիոյ և Աւստրիոյ միջև տեղի ունեցած պատերազմական դէպքեր։

Դէպ յարգուրևան քում և ձօր մերոյ արքսի

Ողջունիւ սիրոյ յայտ լիցի ամենապատիւ հօր մերոյ, զի յութնում հոկտեմբերի հազիւ հասի ի պէլղրատ։ Եւ յաւուր ուրբաթոյ սրբոյն պետրոսի ալգանթարա եկեալ վիգարն որ աստ էր, յանձնեաց ինձ զեկեղեցին և զժողովուրդն, որք ներկայք էին այնորիկ հանդիսութեան, համառօտութեամբ բանից ոմանց չուրջ զհնազանդութեամբ առ նորա զոյն հովիւս իւրեանց։ Բայց նախ քան զայս իրակութիւնս արարեալ էաք զամենայն այցելութիւնս, թէ՛ իշխանաց քաղաքիս և թէ մեծաւորաց վանորէից, ներկայացուցանել զ[ը]նծայս, բաց ի յեպիսկոպոսէ, որ չէ տակաւին եկեալ ի վիննայու։

Իսկ հայ ժողովուրդն երևեցաւ ինձ յուժ բարի. և յուսամ թէ այնպէս երևեսցին միշտ։... 5 ոսկի խարշլըխէն յաւելաւ ինձ իբրու ոսկի և կէս, վասն զի յայն 14 աւուրս յորս ի վիէննա կացի՝ զոչ ինչ ծախեցի սակս կերակրոյ. յորս հայքն ի ճաշ կոչեցին զիս կարգաւ...։ և եթէ յաւելի ևս մնայի ի վիէննա, զնոյն առնէին ինձ. հատուսցէ տէր ըստ արդեանց իւրեանց զվարձս։...

... Նորագոյն լուր ի կողմանս մեր այս է, զի ի թիւրօլու բանակէ կայսերն հայ մի անդ գոլով, գրեաց աստ եղեալ հայոց զգիր, և ասէ, թէ ճերմակ լաթն ընդ սաւօեարտի բանակին յանդգնեցան մտանել ընդ նեղ կիրճն թիրօլ զաւառին։ Եւ բնակիչք երկրին պատրաս[տ]ք և վառեալք գոլով ի կիրճն, տուեալք իցեն զմեծ ջարդ, և կոտորում ճերմակ լաթից, ևս առաւել սաւօից. և այնպէս ամօթով և մեծաւ վնասու իւրեանց յետս դարձեալ։ Եւ ասեն իշխանք քաղաքիս, թէ թիրօլցիքն բազմիցս տուեալք իցեն նոցա զնման սմին սուր ի յանցեալ և ի հին պատերազմունս, որպէս և մեք լսեաք զայս յայդրէն։ Իսկ Ֆիլիզալօրիու այս ինչ գրեցաւ. թէ մինչ քառասուն հազար զօրքն մոսկովու հեռի իբրու ժամաւ միով ճանապարհի ի բանակէ կայսերն բանակեալ իցէ, յանկարծ ֆռանսուզն զօրու մեծաւ դիմեալ գոլ ի վերայ մոսկովու։ Իսկ մոսկովի ճէնէրալն նախապէս գիտակ գոլով նոցին անկարծ գալստեանն, վառեալ իցէ զզօրս իւր մեծաւ պատրաստութեամբ և սպասեալ գալստեան նոցին։ Ապա ֆռանսուզն ի գիշերային և անշշնչիւ եկեալ կարի մերձեցեալ իցէ բանակի մոսկովին, զի յարշալոյսն յանկարծ կալեալ չարդեսցէ։ Այլ մոսկովն, մինչ նոքա սպասեն այն լուսոյն, կանխագոյն քան զնոսա, դիմէ ի վերայ նոցա, և տայ անխնայ չարդ մի, և տևէ մարտն մինչև 3 ժամ աւուրն և առեալ զամենայն կահ և կարասի դառնայ ի բանակ իւր։ Եւ սոյն յաղթանակօղ մոսկովքս յայժմ ցրուեալ ի զաւառս ֆռանսու, ուր 5,1000 և ուր 10,1000 անհնարինս նեղեն զնոսա և կողոպտեն զգիւղս և զքաղաքս անպարիսպս։...

1735 հոկտեմբերի 20
[Պելկրատ]

Սարուկ ծառայ տէրութեան քոյ
Հայր Յակոբ [Ռուզայեան]

---

2. Թորոսեան. Վարք Մխիթարայ. էջ 342։

ԿԲ.

Ամբողջ հետագայ վաւերաթուղթը միակ պատմական դէպքով մը կը զբաղի՝ երուսաղեմի Յ. Յակոբեայ մասին Յունաց և Հայոց մէջ եռացող մեծ խռովութիւնն է։ Հայք ձեռք ձգել կ'ուզեն՝ «պատճառելով բէ այն տեղի նուագ՝ հայոց անկանի, որովհետև հոգևչք և դպտիք՝ ըստ որս և ասորիք՝ համարեալ յիւրեանս իբր ի մասնէ հայոց»[1]։ Սոյն պատճառաբանութեամբ է որ կ'ըսէ Հ. Պօղոս վարդապետ, թէ «հա-պչին, որպես և ասորիք ի ներքոյ հայոց իցեն լեալք»։

Ադ կնճռոտ խնդիրներն ու կռիւները ինչ ինչ մանրամասնութիւններ կը գտնեն Հ. Պօղոս վարդապետի նամակին մէջ, որոնց մասին Զամչեանի Պատմութիւնը կը լռէ. թէև փոխադարձաբար հոն ալ գանազան անցքեր դուրս թողուած են. բան մը՝ որ չի պահանջուիր անշուշտ նամակէ մը։

Յոյները առաջին անգամ 1655ին գրաւել սկսած են հայոց վանքը, Ջատկի խառնման կամ ծռազատկի շփոթութեան վրէժը լուծելու համար[2]։

Գերյարգելոյ տեառն տեառն Մխիթարայ Աբբայի Հօր մերոյ

. . . . Զորպիսութեանց տեղւոյս ծանիք, զի ի Նոյեմբերի ամսոջ եղև յունաց ընդ հայոց դատախազութիւն ի վերայ սուրբ յակոբու, որ յերուսաղէմ. քանզի հայք ի յանցեալ ամի ձեռամբ սեղբոսին, (որ էր յայնժամ պազիրկեան պաշի) առին ի ձեռաց յունաց զփոքրիկ տեղ մի, որ այն տեղն հապէչին իցէ եղեալ և հապէչն, որպէս և ասորիք ի ի ներքոյ հայոց իցեն լեալք, որպէս մոսգովն, ուռուսն և ալպանիացիքն ի ներքոյ յունաց դաւանութեան. իսկ յոյնք այժմ գնացեալք առ դատաւորս տաճկաց ի ձեռն դրամոց բազմաց առնուլ ի ձեռաց հայոց զսուրբ յակօբն բովանդակ. և իմացեալք հայոց զայս՝ անկան և նոքա առ դրունս դատաւորաց՝ տալով նոցա զդրամս բազումս և ցոյց տալով նոցա զայն հաստատութիւնն, որոց տուեալ է սմերն, մինչ տուեալ է հայոց զսուրբ յակօբ. կոխելով զձեռն իւր ի վերայ այնր հաստատութեան թղթոյն՝ արարին զի բանն յունաց ոչ առաջացաւ, այլ հայոց պատրիարգն հակառակ գկալայ։ Բայց ասեն թէ մինչև 300 քսակ դրամ գնաց հայոց, մինչև ի յայս աստիճան ժամանեաց բանն։ Եւ յետ բանիս այսորիկ յանց 3 օր [..][3]եալ է մատնին զպատրիարգն հայոց՝ և նմա ասացեալ է, թէ յոյնք եկեալ ասա [..] թէ խաբէութեամբ էառ ի ձեռաց մերոց զայն հապէչին տեղն՝ սեղբոսն [..] փաշային իւրոյ՝ ուստի խնդրեմք, զի իրաւամբ զատ արարեալ հա [..] մեզ զտեղն մեր՝ ցոյց ինձ զհաստատութիւն ձեր վասն այնր տեղւոյն [..]րգն առ մատնին ասացեալ թէ հաստատութեան գիրն այնորիկ տեղւոյն ոչ է աստ, այլ յերուսաղէմ. և լուեալ զայս մատնին՝ հրամայեալ պատրիարգին յղել զոք ի յերուսաղէմ և բերել զայն հաստատութեան թուղթն. և ընդ այն մարդոյ յղեալ է մատնին զմի չուխատար ևս. և ի վերջն բանիս այսորիկ ուր կայանայ ոչ գիտի։ Քանզի ասեն թէ յոյնք վասն այսորիկ իրի մինչ 1000 քսակի դրամ բացորոշեալք են առ ի խարճել, և զբանն իւրեանց յառաջացուցանել։ Եւ ի յայսմիկ միջոցի զսեղբոս սատաճն և նորին զեղբայրն ըմբռնեալ ի

---

1. Զամչեան Պատմ. Հայոց. Հատ. Գ. էջ 809։
2. Անդ՝ էջ 665։
3. Վաւերաթուղթիս մէկ ծայրը պատռած բլլալով՝ կը պակսին ինչ ինչ կէտեր, զորս անկարելի փակագծով ցոյց կու տանք։

բանտի եղին։ Եւ ստոյգ ոչ գիտի պատճառն։ Քանզի ոմանք ասեն, թէ սեղբոսն խափեաց գիր կալեալ իցէ վասն տեղւոյ հապչին. և ոմանք զայլ ինչ ասեն՝ վասն այնորիկ է ի բանտի։ Եւ հայոց ազգն յետ մեծի ուրախութեան՝ ունին այժմ զտրտմութիւն վասն տեղւոյն հապչին։ Եւ մինչ զառաջին յաղթութիւնն արարին հայքն՝ առ Քռանսէզ էլչին ևս դիմեցին, և նա նոցա ասացեալ է, թէ ես ընդ ձեզ եմ և ոչ յունաց, և թէ ձեզ պիտոյ լինի դրամ՝ ես ձեզ զտանեմ մինչև ցերկու հարիւր քսակ դրամոց. և յետ այսց իրողութեանցս ի հրապարակի ժողովըրդեան ասացեալ է պատրիարգն զբարերարութիւն էլչւոյն, թէ գմեզ սիրէ, և ի մեր կողմանէ է. իսկ մեք մեղաստէր եղաք, մինչ ըմբռնեցիք զոմանս և բերիք մեզ թէ Քռանկք եղեալք են և մեք յղեցաք զնոսա... և մինն ևս ի նոցունց մեռաւ և աբեան տէր եղաք, և այլք նմանք բանք յորմէ արտաբերեցեալք են։ ....

Գերյարգելութեան ձերում

Նուաստա[գունեղ ծառայ]
ս. տ. ս [Հ. Պօղոս Վարդապետ]

տաճիկքն հոչակեն հաշտիլ ինքեանց ընդ կարմիր գլխոյն. և ինձ հաւատալի ոչ երևի։

յամի տեառն 1735
և Դեկ. 5։
[Կ. Պոլիս]

ԿԳ.

Կը հրատարակենք հետևեալ նամակը՝ ինքն իր մէջ նորութիւն մը պարունակելուն համար յանձին Մեծ Ներաստայուին։

Գերապարգևելոյ Տեառն Տեառն Հօր վերում Աբբայի

Ցայտ լիցի զի ի դէկտեմբերի Զ-ին Ա բօղալից և խաւարամած լուր իմն լուայ որ բոլորովին անձամբս յուշաթափեալ անկայ ի գետնի, ծաւալեալ աստևանդ իբրև զխելաթափ, մինչ զի հազիւ յետ ժամ և կիսոյ Հուր սրսկեալ յերեսս իմ խելաբերեցայ որպէս զանասուն իմն. և այնպէս որ նորագոյն հիւանդութենէ ելեալ էի զտկարութիւնս դարձ եկեալ պատեաց զիս, և ոչ գիտեմն զվերջն թէ որպէս դիպելոց է վասն իմ, մինչև տէր տացէ զի լուեալ զառողջութենէ Աբբահօրն մերոյ քաղցրագունեղի, դարձցի սուգ իմ ի յուրախութիւն։ Այսպէս եղև դիպուածքն, զի ի գայլօվայու բարդուղիմէոս վարդապետն ի սիպլին հանդիպեալ Ա ճիզվիդ պատրի, ասացեալ լինի իւրն թէ լուայ յումեմնէ կարգաւորէ, որ վէնէտիկ եղեալ սուրբ ղազարու վանքին Աբբահայրն առ Աստուած փոխեցեալ է։ Եւ լուեալ զայս ի նմանէ Բարդողիմէոս Վ.ն գրեալ էր աստ եղեալ Մ. Վ.ին Խնկանոսեանին. և նա բերեալ զգիրն ընծերցաւ առաջի իմ. վասն որոյ վերոյգրեալ պատահումն հանդիպեցաւ ինձ. վասն որոյ աստուծոյ սիրոյն և քրիստոսի արեան գնոյն փութասչի[ր] գրել Ա մատգիր թէ այս լուրս արդեօ՞ք որպիսի իցէ, զի բաւական է ինձ ցաւն իմ որ կրեցի, լինի թէ ձեր սուրբ աղօթիւքն մի ընասիցիմ տկարութեամբս։....

Պատրաստական ծառայ
Հ. Մ[անուէլ] Աբեղայ

Ցամի փրկչին 1735
դեկտեմբերի 8

ԿԴ.

Երուսաղեմի Ս. Յակոբայ կինճոտ խնդրով կը զրպղի դարձեալ Հ. Պօղոս վարդապետ, տալով նոր մանրամասնութիւններ։

Մի և նոյն նիւթին շուրջ կը գտնենք հակիրճ ծանօթութիւն մ'ալ Թովմաս վ. Սեբաստացւոյ մէկ անտիպ թուղթին մէջ (1735 դեկտ. 25). « *Յունաց ազգն – կ'ըսէ « նա – մեծաւ հանդիսիւ էել յատեան թագաւորին տաճկաց առ ի խնդրել զսուրբ « յակորն երուսաղեմի, թէ իւր եղեալ իցէր ի վաղուց ժամանակաց ի ձեռն հնագունի « եղելոյ հէտուիշէրիֆի. և է Ի ոք վասն այսորիկ ի նեղն եկեալ դիմեցին առ դէս- « պանն սպիտակ լաթին զի օգնիցէ նոցա. այլ նա արտաքսեալ յերեսաց իւրոց « ասաց. Այժմ պիտոյ եղէ ձեզ որք յառաջագոյն եպերեցիք զխրատս իմ* » (Գր. 1735, դեկտ. 25)։

Գնդապետական տեառն տեառն Միխիթարայ Աբբայի Հօր մերոյ

Ցիսուսաւանդ ողջունիւ և բազմաւ յարգութեամբ յայտ լիցի, զի նախ քան զայս գիրս գրեցի զբանէ երուսաղէմայ ըստ որում լուայ յայնժամ, բայց այժմ այլապէս եղև բանն, քան[զի] յոյնք 500 քսակ տուեալք են մատնւոյն, նաև խորհրդով նորա իբրև 4000 յոյնք գնացեալք արզուհալ տուեալք են թագաւորին. և զամենայն գրունս մեծաւ- բաց ի կողմն իւրեանց դարձուցեալք են, և հայոց զամենայն կողմն ի ծով դարձուցեալք են. այլ և զսեղբոսն և նորա զեղբայրն ի բանտ արկեալ է մատնին, որպէս զի մի նոքա ի գրունս դառաւորաց գնալով աւերիցեն զբանն յունաց, և ևս մատնին ի ձեռաց հայոց առեալ ի յինքն պահեալ է զայն հաթթիչերիֆին, զոր առեալք էին ի յայս թագաւորէն ի ժամանակի փոխեցեալ մատնւոյն ձեռամբ սեղբոսին, և ասեն թէ անհնարին է յոյք թէ յոյ[ն]քն չառնուցուն ի ձեռաց հայոց զայն հապէչին տեղն, զորոյ հայքն հաթթի չէրիֆ ի յանցեալ ամի առին յայսմանէ թագաւորէ։ Եւ հայքն մինչ անկան յայսմիկ նեղութեան՝ դիմեցին առ բեսպանն ֆրանգըզու, և նա ոչ կանկնեցաւ նոցա տէր։ Եւ երևի, թէ ի յերկուց կողմանց ևս բազումք և բազումք քսակք մատնեն ի գանձարան անհաւատից։...

Նուաստագունեղ ծառայ
ս. տ. տ. Հ. Պօղոս վարդապետ

յամի տեառն 1735 և դեկ. 23
[կ. Պոլիս]

ԿԵ.

Կարևորագոյն վաւերագրերու մէջ դասելի անտիպ թուղթ մ'է որ կը ներկայանայ հետեւեալը։ Ո՛չ մէկ տեղ յիշատակութիւն չկրցանք գտնել այդ հայ կուսանին, այսինքն « Էմիզ Մարխամու քաղաքաւ Հնկուրկյոյ » և անոր կենսագրութեան մասին։ Ինտեղեակ կը թուին հրատարակուած կենսագրութիւններ սուրբերու և այլ երևելի անձանց. բաւ մ'իսկ չենք գտներ Հ. Ալիշանի գործոց մէջն ալ։

Հետաքրքրաշարժ թուղթիս ճակատը գրուած է. « Ի ձեռն տեառն մերոյ աւե- ետարանի Միխիթարայ աբբայի ձօնեցաւ աստուծով ». մեզ կը թուի որ գրուած է ան՝ Եկեղեցական Բարձրագոյն Իշխանութեան ներկայացնելու համար։

Օրինակ թարւէզին գրեցելոյն ի քաղաքն էս, որ է գլխաւորն բռօվէնցայու յուլիսի 25, 1735 [1736 ?], ի յաղնւական տեառնէ պարոն առնայու առ մարքէզի այսինքն գերազանցագունեղ թագաւորիկ Վիլլանօվայու գեսպանի քրիստոնէագունեղ արքային կալլիացւոց ի դուռն օսմանցոց։

Գերազանցագունեղ տէր իմ իշխան

Զի որպէս եղև ինձ ունիլ զգործառնութիւն ի յոմանց արարիցն հայ էզիզ մարիամու քաղաքաւ Լենկուբեցւոյ, որ է գլխաւորն գաղաւիոյ, պարտական վարկայ զիս համառօտաբար գրել զայսցանէ զոր ինչ եղեն գերազանցութեան ձերոյ, որ էք պատճառ և հեղինակ սոցայ։ 1734 սեպտեմբերի ամսոյն եմուտ այս աղէկս ի վանքն սրբոյն օռօզլայու, նորում գերազանցութիւն ձեր ունի գքոյրս և զդստերս։ Ես նսկսբան մտանելոյն իւր կրեաց զբազում նեղութիւնս մինչ ոչ ունէր զոք, զի խոստովանիցէր նմա զմեղս իւրս վասն պակասութեան լեզուին, զի ոչ գիտէր զլեզու։ Ես ինքնին եղէ սմա թարգմանիչ առ ոսս վերապատուեցեալ հօրն պօվիթէր, որ է յիսուսեան կարգէն. մինչեւ ցայն ժամանակին, նորում եղև կարող մեկնել ինքն յինքենէ։ Կրօնաւորուհիքն նոյնոյ վանից աղաչեցին զիս օգնել, և ընկերակցել նմա մինչև ուսանիցէր զլեզուն։ Մէկ տարի սա կրթեաց զինքն, և ուսաւ զամենայն ընդ զարմացմամբ բօլանդակ վանիցն։ Պարոնտէր արհի եպիսկոպոսն, ոչ գիտեմ վասն ոյր պատճառաց օրէ օր ձգեաց, և երկարեաց զմխիթարելն զնայ։ Անձր զգժուարութիւն ևս վասն խորհրդոյն զրոշմի, մինչ աղէկն հաստատէր թէ առեալ իցէ զնայ անմիջապէս յետ սուրբ մկրտութեանն։ Ժամանեաց աստ ի քաղաքս եպիսկոպոսն վիվերսին։ Խօսեցաւ ընդ մեր արհի եպիսկոպոսին, զի հաճեսցի մխիթարել զմանկուհին, զոր համընկերակցութեամբ ընդ տիկին մատամային պակաւուլթ, որ է քոյր եպիսկոպոսին, եւ բերել զնայ ի պալատն իւր, ուր համայնից հարցաքննութեանցն աղէկն պատասխանեաց ամենայնիւ համարձակութեամբ և արագութեամբ։ Ցայնժամ եպիսկոպոսն խոստացաւ նմայ թէ ի մերձակայ ժամանակին կատարեցեալ լինելոց է խնդրուածքն նորին։ Որպէս եղև իսկ և կատարեցաւ։ Մինչ ի 14 մայիսի թվին փրկչին 1735 մտաւ ի փորձութիւնն կրօնաւորական հաճութեամբ և զուարճութեամբ բօլանդակ վանից միաբանիցն։ Մինչ վերջացաւ փորձութիւնն կրօնաւորական եղև լիապէս հաւանութեամբ ընդունեցեալ ի կարգս քերցն։ Իսկ ի 12 յուլիսի 1736 եղև ի գործածեցեալ արարողութիւն ի յեպիսկոպոսէն վիվերսին հայրապետական զգեստիւն։ Եւ քանզի կամեցան կրօնաւորուհիքն զի լինիցիւր ցուցակութիւն սորայ արևելականիւ զգեստիւ, սակս որոյ փութապէս յղեցին ի վանքն զգեստս ոսկեղէնս, զակունս, զմարգարիտս, և այնքան լիապէս զարդարեցեալ էր, մինչ զի թուէր որպէս զմի թագուհի։ Ա[ր]արողութիւնն եղև ամենամեծ փառաւորութեամբ։ Ոչ կարէին ընթանալ ի քաղաքումն ի բազմութենեն մարդկանց, որք զային ի տեսանել զարարողութիւնս զայս. ոչ լսիւր այլ ինչ եթէ ոչ օրհնութիւնք վասն գերազանցութեան ձերոյ սակս մանկուհւոյն։ Ա[ր]այ ոմն գերապատիւ հայր յիսուսեան կարգէն զներբողեանն, որով մեծապէս վերաբարձրացոյց զգթութիւնն և զպաշտպանութիւնն գերազանցութեան ձերոյ, զոր առնէ ազգին հայոց, ի յերկիրն օսմանցոց։ Ղախախնամութիւնն առածեաց զմանկուհիս զայս առ ճշմարիտ նաւահանգիստն։ Նոյն նախախնամութիւնն պատճառեաց և ետ գերազանցութեան ձերոյ զմի մեծ բարեխօսիչ։ Ձշմարտապէս զարմանալի իմն է տեսանելն զնորատունկս զայս ընձիւղեալ և վերաբուսեալ յարմար առ ամենայն գործս և ի կրթութիւնս հասարակութեան միաբանից, այնքան վասն վանքին, որքան վասն եկեղեցւոյն։ Ա[յ]ս ի կարգն չաբաթական առնէ զպաշտօնն. Ա[յ]ս երգէ որպէս իսկապէս զմի կալլիացի։ Եւ հասարակօրէն կոչեցեալ է սուրբ ոմն։

ԿԶ.

Պէտք է ըսենք, որ մի և նոյն հայ կուսանով զբաղող հետևեալ շահեկան թուղթը ուղղակի լուսաբանութիւն մ'է նախընթաց կարևոր վաւերագրոյն։

Ամենապատուհասիոյ և ի սրտէ սիրելեաց տեառն մերոյ Մխիթարայ ատտուածաբանութեան վարդապետի, և արբայ ձօր ձանհսոյ ողջոյն սիրալիրական բազմաւ խունարձութեամբ և գրկախառն համբուրիւ։

. . . . Ընդ սմին և յայտարարութիւն լիցի թէ քանի մի տարի եղև, որ եկն աստ ի գաղատիոյ էնկուրիէն կոյս ոմն էզիզ կոչեցեալ, և մինչ ժամանակ ինչ եկաց աստ, մեր գերազանցագունեղ դեսպանն քրիստոնէագունեղ արքային յղեաց զնա ի յերկիրն իւր առ կալլիայ ի վանքն կուսանաց։ Ցետ այսորիկ մինչ ես առնէի ըստ վաղեմի սովորութեան իմոյ երթ և եկցութիւն առ այս գերազանցագունեղ դեսպանս, նայ բազմիցս վիպէր ուրախօրէն զլուրս նորին, և զքարտէզս որք գային ի նմանէ ցուցանէր զովաբանելով։ Բայց մերձակայ ժամանակիս յաւուր միում մինչ եղէ առ այս գերազանցագունեղս, նա եցոյց, և ընթերցաւ առաջի իմ զքարտէզ իմն յոյժ երկար, որ պարունակէր զպատմութիւնն այն էզիզին։ Որպէս տեսանելոց էք զհամառօտութիւնն նորին ընդ այսմիկ, զոր գրեալ էր ոմն ազնուական կալլիացի առ դեսպանն, զոր հրամայեաց ինձ թարգմանել զնա, և ուղարկել առ Էնկուրի ծնօղի, և ազգականաց էզիզին։ Իսկ մեք մինչ ընդ դեսպանին էաք նայսմիկ զբաղեան՝ եկն ոմն վանատիկցի ծանօթ նոյնոյ դեսպանին, և վաղեմի բարեկամ իմ։ Ա՛ա յորդորեաց զիս, զի ուղարկիցէի ես զմինն ի յօրինակացն պատմութեան մեծութեան ձերոյ, և ես խոստացայ առաջի դեսպանին առնել յօժարօրէն։ Վասն որոյ զմինն ի յօրինակաց եղի նայսմիկ քարտիզի, զի ընթեռնելով զսայ տեսանիցէք թէ այս գերազանցագունեղս մեր որքան բարութեանց պատճառ եղև այսմիկ աղչկան։ Շնորհ արա՛ ծանուցանել մեզ զժամանելն սոցայ ընդ որպիսութեանց ձերոց, զոր բաղձամ իմանալ, քանզի սիրեմ ճշմարտութեամբ։ Եղբայրն ձեր տիրացու Յովսէփն վաղուց տեղս է։ Եւ մերձակայ աւուրս եկն ի սեփաստիոյ տիրացու պապ աղան քվեր որդին ձեր, որք ողջունեն զձեզ մեծաւ խոնարհութեամբ և սիրով, և համբուրեն զսրբասնեալ աչն ձեր...։

Պատրաստական և ջերմեռանդ ծառայ
Մինաս վարդապետ
միսսիօնար առաքելական

Պէկ Օղլուն Բուզանդիոյ
1737 Ապրիլի 16

ԿԷ.

Վերնագիր չունի վաւերաթուղթս. կը հասկցուի սակայն առ Մխիթար գրուած ըլլալը։

«Գրիգոր երուսաղէմայ պատրիարք» (1717–1749) և «Յովհաննէս վարդապետ», յետոյ նաև պատրիարգ Կ. Պոլսոյ (1715–1741), մեր ազգային պատմութեան մէջ կարևոր դէմքեր են. առաջինը Շղթայակիր և երկրորդը կոտտ կը կոչուի. երկուքն ալ կարևոր դերեր ունեցած են ազգիս մէջ։ Մեր նամակին մէջ անհարկի շեշտուած չէ այն մտերմական կապը՝ զոր կ'արտայայտէ Գրիգոր Յովհաննու մասին. «Երկոքին սոքա Գրիգոր և Յովհաննէս էին աշակերտեալք վարդանայ վարդապետի՝ առաջնորդի վանացն ամրդոլու՝ որ ի Բաղէշ. յորմէ երկոքեան ևս կոչեցան բաղիշեցի[1]»։

Յովհաննու մասին յատկապէս մէջ կը բերենք յիշատակութիւն մը. սա տեսնելով Մխիթարայ Մատթէի մեկնութիւնը, որ դեռ նոր հրատարակուեր էր, մեծապէս կ'ուրախանայ, ու մինչև անգամ եկեղեցւոյ բեմէն իր քարոզին մէջ գովաստանքով կ'ըսէ. «Լոյս մեծ ծագեաց այսօր եկեղեցւոյս հայոց. գանձ տուաւ յԱստուծոյ գիրքս այս»[2]։

Հ. Պողոս կը նկարագրէ յետոյ շքեղ թափօր մը, որուն կը մասնակցին հայք,

1. Ջամչեան, Պատմ. Հայոց. Հատ. Գ. էջ 770.
2. Անդ, էջ 775.

լաւինք և յոյնք։ Այրոյ և խաղաղութեան նշան մը ցոյց կ՚ուզէին տալ պաշտօնապէս՝ Դաղղիոյ դեսպանին թէլաղրութեամբ։

Նամակս կը ներկայացնէ հուսկ պատառիկ մը Օսմանեան պատմութենէն. հոն միջնորդութիւն կատարողն է Գերմանացւոց Թալման դեսպանը։

. . . Գրիզոզը Կրուսաղէմայ պատրիարգն արար զԱիւնհադոս յեկեղեցւոջ աստուածածնայ կոչեալ գամենայն եկեղեցեացն՝ զգլխաւորս էսնաֆից՝ և զառաջիկայ քահանայս՝ առ յորս ասացեալ է, թէ ես և յոհաննէս վարդապետն այսքան ժամանակ է, զի եղաք ձեզ առաջնորդք. ես յհրուսաղէմ վճարեցի 800 քսակ պարսս սուրբ յակօբայ. և յոհաննէս վարդապետն չինեաց զայնքան եկեղեցիս յետ այրմանց նոցին, և եկեղեցեաց զբազումս պակասութիւնս լցոյց, և զառաջնորդութիւնս արար. իսկ դուք, լուայ, զի ոչ իցէք կամեցեալ այժմ գյոհաննէս վարդապետն ձեզ առաջնորդ լինել։ Տեսէք որդեակք իմ, զի ես ոչ թողում գնա միայնակ, զի ուր է նա և ես անդ. և ուր նա և ես անդ[1], զի նա է իմ որդի, և ես նորա հայր ըստ աստուածարարութեան վանահայրին մերոյ, որ էր ուսուցիչ մեր։ Վասն որոյ եթէ ոչ կամիք գնա, ինձ և նմա տուք զհրամանն, զի երթիցեմք հանդերձ փոքրաւորօք մերովք յերկիրն մեր և ի վենաստանի մերում վճարիցուք զկեանն մեր։ Եւ լուեալք զբանս զայս ժողովրդեան զկական բարձեալք՝ ասացեալք են, թէ մեք բաց ի ձէնջ զառաջնորդ ոք ոչ կամիմք։ Եւ նորա պատասխանեալ այսպէս, թէ որովհետև այնպէս է, ուրեմն ամենեքինդ կնքեցէք կնքով ձերովք զթուղթ մի, որպէս զի զայն թուղթն յղեսցուք ի յօրտուն զրեցեալ այնր թղթին, և ի ձեռին մերում գտանիցի. որպէս զի և մեք ապահով եղանիցիմք ի յառաջնորդելն և կացուցեալ եղիցի ի մէնջ չորս անձինք իմաստունք առ իւրաքանչիւր եկեղեցիս, որպէս զի նոքա զայնպիսիս անձինս ըմբռնեալք տարցեն առ դատաւորս. և եղիցին նոքա պատժեցեալք ի նոցունց...։ Դարձեալ՝ աւազ չաբթի զիշերն եղև մեծահռչակ հլումն թափօրից ի զալաթեայ։ Եկին բազումք հրեշտակք, այսինքն փռանգզղու, լէհին, և ինկիլիզու հին էլչին. բայց հրեշտակն փռանգզղու, որ է մեր նախնամիչ եկեալ հանդերձ մատամայիւն ի գեմերա[լ]դէն՝ նստեալ ի տան գեմբրին՝ հրամայեաց՝ նախ հայք լուսաւորչայ ժամուն ելանել ի թափօր. ապայ լաթինք և յետոյ յոյնք, և այնպէս եղև։ Բայց յոյնք չիմարեցան վասն հայոց, զի տրեցաւ նոցա այնպիսի պատիւ։ Եւ այնքան բազմութիւնք արանց և կանանց գոյին հայոց ուղափառաց և արտուղեաց ի ճանապարհս և ի տունս ընդ որովք անցաւ թափօրն, մինչ զի զրէթէ այլք եկեղեցիք հայոց ըստ բաւականին ոչ ունեցան գոհրացուս և զժողովուրդս։ Զզգեստս և զշապիկս, զորս ունէին հայք՝ այնքան մեծածախք և ազնիւք էին, զորս զրով ծանուցանէին լսողաց անհաւատալի կարէր երևիլ։ Եւ ի մէջ այնց զգեստուց գոյին երկոտասան շապիկ, զորս յղեալ էր պատրիարգն՝ որոց իւրաքանչիւրն էր հինկ հարիւր զուռչի։ Ելեալք այնքանիւք բազմութեամբք ի լուսաւորչայ ժամուն եկին ի զուռն ճիզվիթաց ժամուն, և ընթերցեալ անդ զսուրբ աւետարանն, ուր ներկայ գտան ամենայն պատրիք հանդերձ զարզուք. և լինիւր հնչեցմունք թոափէթայից ըստ հրամանի հրեշտակին. և յետ որոյ անցեալք գնացին հայքն յեկեղեցին իւրեանց։ Եւ յետ այսորիկ լաթինքն ելեալք թափօրիւ գնացին ի զուռն լուսաւորչայ ժամուն և նոքա որպէս արարին հայքն՝ նոյնպէս ընթերցեալք զաւետարան գնացին ի ժամն իւրեանց . . . .։

. . . Ի կողմանէ պատերազմին ի մէջ մեծ պահուց լուաք ասա, զի ի պալատն արքունի տուայ և սէնէ եղեալ է վասն հաշտելոյ ընդ մուշտակին, և այս միջնորդութեամբ նեմցէ էլչուն։ Եւ պատճառ գլխաւորական տաճկաց ընդ մուշտակին հաշտեցութեան ասեն կամեցօղ զոլ սպիտակ լաթն այնու, զի ինքն զհաշտութիւն իւր ընդ նէմցէու ընդ թէութեան հաշտութեան տաճկաց ընդ մուշտակին եղեալ իցէ. այսինքն եթէ նեմցէն հաշտեցուցանիցէ զսոսա ընդ մուշտակին և ինքն ընդ նեմցէու հաշտեալ է. ապա թէ ոչ՝ ևս ինքն չէ հաշտեալ ընդ նմա։ Բայց թէ տաճկունք և թէ մուշտակքն ամենայն պատրաստութեամբ ի տեղի պատերազմի գտանելոցք են, և հրեշտակքն, թէ նեմցէու, թէ ինկիլիզու

1. Շփոթութեան արդիւնք է այս. պէտք է ըլլար «ես ուր ես ես նա անդ»։

և թէ ֆիլէմէնի զվէճ նոցին կտրելոցք են։ Եւ յետ զատկին լուաք, զի զատկի հետևեալ հինկշաբթին ասացեալ հրեշտակքն ելեալք են յօրտայու գնացեալք են ի կողմն լէհու՝ առ ի խօսակցիլ ընդ սպարապետին մուշտակու։ Վասն մտակերին ասացին՝ զի գնացեալ ի յախն և բերեալ է զբազում գերիս. նա և գնացեալ է այլ ոմն ոչ դադարխան. և նոքա յետս մինչև ցայժմ ոչ են եկեալք...։

Գերյարգութեան ձերում
Նուաստագունեղ ծառայ
ս. ւ. ս. Հայր Պօղոս վարդապետ

Ցամի տեառն 1737 և յապրիլի 30
[կ. Պոլիս]

ԿԸ.

Իպրահիմ փաշա անուամբ տաճկի մը քրիստոնեայ զառնալուն շուրջ կը գտնենք հետաքրքրական նկարագրութիւնը։

Գերապայծառի և. Գերյարգելոյ Հօրդ վերուստ Միհիթարայ Աբբայի
վերընծայեմ գորդիական ողջոյն

... Ցառաջ քան զտարի մի տաճիկ ոմն որոյ անունն էր ապրահամ, որ եմուտ ի գաթէգումնոն վէնէցիոյ, և մկրտեցաւ, զոր և ուսուցանէր խաչատուր վարդապետն, գիտեմ զի առեալ զգրամս բազմաց՝ փախեաւ ի վէնէտիկոյ ընդ այլոց տաճկաց. սա հանդիպեալ է ի ճանապարհի կնոջ Ղեմչէի էչչին կոստանդինուպոլսոյ ընդ զոն նորա անտի աստ. և խնդրեալ է զնա ածել զինքն ի վէննա առ ի լինել քրիստոնեայ և մկրտիլ. և ես տեսի զնա աստ ի վէննայ և ճանաչեցի. և չանայ մկրտիլ, որպէս ասեն հայք։ ԵՒա յորժամ եւես զիս՝ փախեաւ յաչաց իմոց. և ես յայլ անգամ ևս տեսի զնա, բայց ոչ ցուցի զծանօթութիւն։ Իսկ ես ասացի Հայոց թէ ես գիտեմ զսա մկրտեցեալ գոլ. վասն որոյ ասացին ինձ ծանուցանել եպիսկոպոսին։ Եւ ես պարաւանդեալ ի խղճէ մտաց՝ գնացի և ծանուցի նմա. և նա առաքեաց զիս առ գաբէչանն գաբտինալին. իսկ սա ասաց զի գրիցեմ զվկայութիւն թէ որպէս գիտեմ զնա մկրտեցեալ գոլ, և ուստի՞ ճանաչեմ զնա։ Իսկ ես պատասխանեցի բանիւ, և ոչ կամեցայ գրով զի մի՛ ընկղմիցեմ զիս ի ապազմունս։ Գնացի և առ էչչին վէնէցիոյ, և սէգրէթարն ասաց թէ ոչ կարէ տալ պատասխանի, զի պարաւանդեցեալ է այսօր գրել զգիրս փօստի, և այլն։...

Ցամի Տեառն 1737
Յունիսի 1 վ[ենն]ա

Նուաստագունեղ Ծառայ
Հ. Թ[էոդորոս] Ց[ովհաննէսեան] ի կ. Պոլսէն

ԿԹ.

Այս երկրորդ նամակաւ, մէկ քանի ուրիշ տեղեկութիւններէ զատ, նոր մանրամասնութիւններ կու տայ նոյն Հ. Թ. Յովհաննէսեան՝ Իպրահիմի կրօնափոխութեան շուրջ։

Գերապայծառի և գերյարգելոյ Տեառն Տեառն Միհիթարայ
Աբբայի Հօրդ վերուստ մատուցանեմ գիտունարհական ողջոյն

.... տրամեցայ իմանալով զիջուածոյ բազկաց Գերյարգելութեանդ. Տէր Յիսուս ինքն առողջացուսցէ։.... որքան առ Իպրահիմ պաշան, գիտելի է, զի ճշմարտեցաւ ասացեալն իմ, բայց իբր ի ծածուկ, զի պատրի դաւիթն քննեալ է զնա, և գտեալ է

զնա որպէս և ես ասացեալ էի նմա։ Եւ նա ասացեալ էր, թէ վասն այն ասացեալ է զինքն զոյ տաճիկ, և կամիլ մկրտիլ, որպէս զի էլչին կինն տիրուհիւն առնիցէ նմա, և բերցէ ի պէչն, առ ի դնել զնա ի պաշտօնի իմիք, և այլն։ Իսկ պատրի Դաւիթն ասաց ինձ, ոչ ումիք ասել զնմանէ, թէ իսկապէս այն տաճիկն իցէ, և այժմ նա կրթէ զնա յիւրս հաւատոյ, և զգեցեալ է նա զզգեստս նէմչէի։... Մինչ եկն [պաշպալովցի Տէր Մինասն] ի վ.ննա՝ պարծէր և ասէր, թէ Աղաչայ Պետրոսն 240,000 զօլաթայ դնէ, որպէս զի ինքն լինիցի այսինքն Տէր Մինասն Թոխանոսեան եպիսկոպոս ի վերայ պաշֆալովին. զի ինքեանք ոչ կամին ընդունիլ զգերապատուելի Տէր Մինասն կեղացին եպիսկոպոս ...։... իրակութիւնք գերապատուելի տէր Մինասին արդէն իսկ կատարեցան, միայն սպասէ տիրօմային, և գալստեան թագաւորին ի լաքսէմպուրքէն, որպէս զի գնացեալ առաջի նորա՝ ընկալցի ի ձեռանէ նորա ի պարանոց իւր զխաչն եպիսկոպոսական, և զթագն հայրապետական, զոր տացէ Աստուած մեր։...

Մնամ պատրաստական յամենայնի
ղուաստագունել ծառայ
Հ. Թ. Յովաննէսեան ի կար. Անդօնեան

Ցամի Տեառն 1737
Յունիսի 15 ի վ.ննա

P. S. Դարձեալ մեծ պատրաստութիւն գոյ պատերազմի ասէին. և այնքան ստիպով գործեն զնաւսն, մինչ զի գի նաւսն արդէն իջուցին ի ջուրն, և զի կալերսն ևս յուսամ զկնի ոմանց աւուրց իջուցանելոց, և զբազում մեծամեծ թօփս մերձ նաւուցն պատրաստ տեսի ...։

Հ.

կը վախճանի Հ. Յ. Բուզայեան Պելկրատու մէջ և իրեն կը յաջորդէ Հ. Մկր. Վ. Սեբաստացի։

Այս կը զրկէ այս շահեկան նամակը ճանապարհէն, զոր իր պաշտօնատեղին չհասած։

Գերյարգելոյ Տեառն Տեառն Մխիթարայ Աբբայի
գործակատար Հռոմ իմոյ

..... ի վաղուն Թերևս գնայցեմ ի սուրբ սեռեփանոս՝ տակաւին ոչ տեսի վասն սրազմանցս, նաև կայսրն մեծ հանդիսիւ զայ յեկեղեցին, լինին Թափուռք, արձակմունք հրացանից, զի է տարեդարձական օրն ազատութեան վենայու ի տաճկաց, որ է 15 սեպ. և Թէ հարցանէք ի կողմանէ պատերազմի, ոչ գոյ նոր ինչ, և ոչ ինչ զրոյց, այլ այս միայն, զի սէտիօն վիտինու յետս քաշչեալ, զի փոխնչիփէ Լօրէնայոյ եկեալ է աստ, որ է փեսայ կայսերն. և եղբայրն նորին անկեալ ի մեծ հիւանդութեան ի ճանապարհին մնացեալ է և ի կողմն պօսնայու զոչ ինչ գործ գործեալ են, այլ անդ եղեալ կոտորմունք ի մեծագոյն Թուոյ ասեն. ԺԴՌ [14,000], վասն առման օզուու մօսկօֆու աստ ասնանմայ արարեալ են. իբրու մի ամիս է։ Նաև ասեն Թէ Թագաւորն տաճկաց զգիր ուղարկեալ կայսերն խնդրել առնել զխաղաղութիւն ի մէջ երիցն։ Նաև գոյ աստ սուտ զրոյց, Թէ վենետիկցին ևս առնէ պատերազմ ընդդէմ տաճկաց զի զ40 նաւ զինուորեալ ուղարկեալ է ընդդէմ տաճկաց։ — ... վասն իսլահհիմին, այսինքն մարգօլին. մարգօլ եկաւ մեր լայիքօին հետ մեր վանգն, ինձ կամէր խոստովանել զիւր որպիսութիւնն, Հայր Թէոդոսոն ինձ ծանոյց զորպիսութիւն նորին.....։

Գերյարգութեան քում
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մկրտիչ վ. Սեբաստացի

Գրեցաւ յամի Տեառն 1737ին
Սեպտեմբերի 14ին
1 գիր ի վ.ննայու

ՀԱ.

Վերնագիրը չկայ հետագայ թուղթին վրայ, ուստի զի մասն է կորսուած նամակի մը. սակայն, յայտնի է, գրուած է առ Մխիթար։

Հ. Միքայէլ Վ. քաղաքական դէպքերու խղճամիտ շարունակութիւնն է որ կը հաղորդէ Վենետիկ։

... Դարձեալ եթէ կամիք իմանալ զլուր ինչ ի կողմանէ պատերազմի, հաւաստի և ճշմարիտ լուր ոչ գոյ. ի լաւ անդր ամենևին ոչ գոյ. բայց ի վատթար կողմ պէսպէս զրոյցք գոն. մերքուի տղան ասաց թէ 30,000 չափ զօրք հիւանդ կայ, վիճինու տկէն քաշուեր են, անդէն անկեալ է հիւանդութիւնն, վասն այսորիկ քաշուեր են ի կողմն դմչվարայ։ Եւ յայլմէ ասացեալ ի նիշու կողմէ խմբիցն 16,000 զօրք ուղարկեալ ի կողմն պօսնայու. տաճիկքն գոլով բազումք, ի մէջ առեալ զնոսա և կոտորեալք։ Եւ յայլոց, թէ զօրք տաճկաց ի կողմունս գոայովու եկեալ բանակեալ, ի ձմեռանս կամ զդմչվար, կամ զպէլկրատ պաշարէ։ Եւ յայլմէ, թէ ի մէջ զօրաց մօսկօֆու ևս հիւանդութիւն անկեալ, յետս քարշեալ, պէնտէրի առնուլն ոչ է ճշմարիտ, ասէն աւելի չարիք լսենք, քան թէ ի վէնէտիկ։ Այս զապրանս տաճկաց և յունաց ոտք են ստորագրեալք տաճկաց կնքեալ և իբր յարգելանոցի եղեալ էին. երկու օր է, որ բացին և թոյլ ետուն։ Կայսր ոչ է աստ, այլ արտաքոյ քաղաքին, ի յանտառս յամննայնում աւուր որս գնայ. ոմանք ասեն թէ առ ի փարատել զվարանմունս իւր առնէ զայս, ասեն թէ ուր զտանիցի արդեօք փրինչիփէ ևճէնիոսին պէս, որ զպատերազմ կառավարիցէ։ Յորժամ մեռեալ է Եւճէնիոսն, տաճիկքն ասացեալ են աստ, կէթուի կառնալըն պիր գանատը։... Նաև լուայ թէ ի նիշու հայեր եկեալ են ի պէլղրատ, ևս մի քահանայ իրիցկնով. լուայ ևս թէ ի ստամպօլ հայսախճի են եղեալ ի դրունս եկեղեցւոց հռոմոց և հայոց, զի տուայ արասցեն վասն պատերազմին։...

Գերայարգութեան քում
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

Գրեցաւ յամի Տեառն 1737ին
սեպտեմբերի 21ին
2 գիր ի վենայու

ՀԲ.

Պաշպալովի կամ Եղիսաբեթուպոլսի առաքելութիւնը մշակողներէն մին է Հ. Թէոդորոս վարդապետ Յովհաննէսեան Պաշպալովցի, որուն երկրորդ թուղթն է որ կը հրատարակենք հոս։

Նա իւր քաղաքէն առ Մխիթար կը ղրկէ պատմական տեղեկագրութիւնս։

Ո[րմնեալ]։ Ե[ղիցի]։ Յ[իսուս]։ Ք[րիստոս]։

Գերապայծառի և Գերյարգելոյ Տեառն Մխիթարայ Աբբայի
Հօրդ մերում արժանաւորապատուելոյ՝ մեծաւ խոնարհութեամբ զոտս համբուրելով
մատուցանեմ զորդիական ողջոյն, և այլն։

..... բոլոր զրանսիլվանիայ յոգւոց հանեն սակս մեծի երկիւղի, և ի ահացուցիչ կարծեաց եկելոց ի վերայ տիեզերաց, մինչ զի գրեթէ ամենեքեան զամենայն զոյս իւրեանց փախուցին ի սիալին, ոչ միայն հայք, այլ նաև մահմատք. և զոյ ձայն թէ Պօնա-

վալ ուրացօղն, և Ղազօցիին որդին բազմութեամբ զօրաց տաճկականաց մտանելոց են ի գրանսիլվանիա, և եկեալ՝ հրաման եհան, զի ամենայն մաճառք զինուորիցին. ենթ պատրուակի, թէ ընդդէմ տաճկաց մարտնչիցին, բայց վախճան նորա էր, զի ի գալ տաճկին և Ղազօցիին՝ սոքա պատրաստք լիցին առ ի մարտնչիլ ընդդէմ կայսերն: Բայց իբրև իմացաւ կայսրն՝ հրաման եհան, զի մի ոք մաճառ զինուորիցի: Եւ այս յոյժ բարի եղև վասն հայոց. քանզի առաւել երկնչիմք ի ընտանի թշնամեաց, այսինքն ի մաճառաց, քան թէ ի տաճկաց: Իսկ վերոյասացեալ ձէնրալն իբրև իմացաւ, թէ ի յայտ եկին զաւաճանութիւնք նորա՝ էառ զթունալի ըմպելի, և այնպէս սատակեցաւ: Դարձեալ լուաք թէ մօսզոլն առեալ իցէ զՊէնտէր, և տաճիկքն տուեալք իցեն նմա զերկիրն մինչև ի սահմանս թունային. բայց այսու պայմանաւ, զի յայսմիկ ձմեռան մնասցեն տաճիկքն յերկիրն յայն մինչև ի գարուն, իսկ ի գարնան ելցեն ինքեանք, և ոչխէն մնասցէ անդ ի ներքոյ մօսզին: Ոչ գոյ չարաթթ, յորում ոչ լսիցեմք զնորազոյն լուրս երկիւղալիցս. ուստի եմք ի մեծի նեղութեան և ի կասկածանս: Դարձեալ ի յանցեալ թղթոջ աղաչեալ էի թէ զրիցէք ինձ, եթէ վէնէտիկցիք առեալ իցեն զմօռայ թէ ոչ. քանզի այսպէս լուեալ էի ի կեղայ, թէ զկէսն Մօռայի առեալ իցեն....: Իսկ ես մեծաւ բաղձանօք տեղեկանալ կամիմ զայսգրութենէ Մեկնութեան Աւետարանին և գյառաջացմանէ վանիցն, զոր կամէիք առնել ի Խաւուա.....

Մնամ պատրաստական յամենայնի
Նուաստագունեղ ծառայ
Հ. Թէոդորոս Ջովհաննիսեան
կրօն. ի կարգէ Անզօնեան

Գրեցաւ յՅլիզաւէթ քաղաքն
1737 Նոյեմբերի 1

ՀԳ.

Բուզայեանի մահուան շուրջ կը գտնենք՝ Հ. Մխիթարի հետագայ նամակին մէջ՝ կարևոր մանրամասնութիւններ, որոնք կը ծառայեն միանգամայն անոր կենսագրութեան իբրև նորագոյն ազբիւրներ: Բայց աստի՝ մեր նամակագիրը կու տայ ինչ ինչ ժամանակակից լուրեր:

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ իմոյ, տեառն տեառն Մխիթարայ Ամենաժառանգաւորեալ վարդապետի

Բազմաւ կարօտիւ և սիրալիր ողջունիւ յայտ լիցի գերյարգութեան քումդ, զի ահա հազիւ զկնի ութից աւուրց գալստեան իմոյ աստ, եղեալ եղէ ի վերայ պաշտօնի իմոյ յեպիսկոպոսէ տեղւոյս, և նախ վասն ստանցայ[1] գրել տալոյ և առնլոյ երկու ֆիօրին ծախս գնաց գափէլանի եպիսկոպոսի. այս այն է զոր զհայր յակոբն խոստովանեցուցեալ և զվերջի օծում տուեալ է նմա, և սա զամենայն ինչ գրեալ է թէ զգրեանս և թէ զլաթեղէնս, եղեալ ի մէջ տապանակի կնքեալ, հրամանաւ եպիսկոպոսին ոչ եռուն ինձ, այլ զբանալիս առեալ տարան և պահեն մնրձ ինքեանց, և ասացին թէ տէկռէթօ գոյ, զի մխսիճնարաց ինչն են սրբոյ ժողովոյն փռօփականտաֆիտոյ և ասացին թէ գրեա մեծաւորին քոյ, զի ծանուսցէ սրբոյ ժողովոյն, որ տայցեն զհրաման, տալ քեզ զայսոսիկ իրս....: Խիստ վարանման և տրտմութեան մէջ եմ վասն պատերազմի թէ զինչ հետևելոց է, մինչ ի սոսա ուժ ինչ ոչ երևի այժմ. և տաճիկն զազանացեալ, ի կողմունս զռովայու ամայացուցեալ է, գերելով, սպանանելով և քանրելով: Աստ ասեն թէ ի հե-

1. Ադաչանք, խնդիր։

տեսեալ զարնանս վէնէտիկցին ևս ելանէ ի պատերազմ. բայց թուի թէ սուտ իցէ...։ Թանկութիւն կերլեաց և դժուարագիւտ... ի նիշու բազումք եկեալ են աստ խուժադուժք, հիւանդութիւնք բազումք ի մէջ քաղաքիս, ևս ի մէջ հայոց... ... Այս ևսայի տղաս [ծառայն Հ. Մխայելի], զբազում և զարմանալի աշխատութիւնս և զծառայութիւնս արարեալ է հայր յակոբին ի ժամանակս հիւանդութեան նորին, ինքն միայնակ մինչև ի յաւանդումն հոգւոյ նորին. ցաւն հայր յակոբին խիստ դառնագոյն և ազետալի, ինքն ասեր է բերանովն թէ եօթ ցաւ ունիմ, ոտից մինչև ի լանջն ուռուցեալ, ի մի կողմն վէրք բացեալ, երկար ժամ ի նոյն կողմն կալով... ապա թէ զակաւ կերակուր ընդունիլ կարէր ի մէջ գիշերի, այն ևս ծնայր ի կոկորդն, և ասացեալ է. այս ի՞նչ պինդ հոգի ունիմ....։

Գերյարգութեան քում
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մխայէլ Վ. Սեբաստացի

Գրեցաւ յամի Տեառն 1737
Նոյեմբերի 12ին
2 գիր, ի Պէլրղատու

ՀԴ.

Զուարակաև կեանքի ու բաղաքական դէպքերու անցեալ յիշատակները մը ահա։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ իմոյ, և Տեառն Տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

... ... Թէ ի կողմանէ ապրուստի և պատերազմի հարցանէք, Թանկ և դժուարագիւտ. զհացն խլելով առնուն, զձէթն և զարդար եղն ֆունթին 30 ստակ, հաւկիթն երկրն հինգ ստակ, և ոչ գտանի. աստ մեծ խումբ մի երկու աւուր հեռի ի կողմն պօսնայու ձմեռնեն. և այլք փոքր խումբք աստ և անդ. փոխանորդ և հրամայօղ և կառավարօղ է ձէննալ Ֆիլիպօն. ասեն թէ ի զարնան գալոց է ձէննալ Մալֆին, Սեռական կառավար, թէպէտ ինքն հրաժարեալ վասն ծերութեան որ 60 ամաց է ասեն։ Իսկ առաքինքն սիրտ առեալ զօրացեալ զազանացեալ յաւուրս յայսոսիկ ասպատակիչք հասեալ մինչև ի կողմունս օսմովայու, աւար հարկանէ, բանքէ, գերէ, սպանանէ, այժմիկ լուռ զայսոսիկ. երկիւղն պատերազմին ապագայի ամի հալէ զոսկերս իմ...։

Գերյարգութեան ձերում
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մխայէլ Վ. Սեբաստացի

Գրեցաւ յամի Տեառն 1737ին
Նոյեմբերի 22ին
ի տօնի Ջէչիլեայ կուսին
3 գիր, ի Պելրղատ

ՀԵ.

Պարունակութեան տեսակէտով՝ առաջ, բազմատեսակ ու միանգամայն կարևոր է Հ. Մխայէլի հեռագայ թուղթը, զոր իր պաշտօնավայրէն կը գրէ։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ իմոյ
Տէառն Տէառն Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի

... ... Թշնամիքն խաչին զօրացեալք խումբ խումբ չրջեալ, զաշխարհ սոցին ի կողմն զոզովայու Ըզ տաճիկս տապաստ արկեր են սրով, և զմնացեալս ի փախուստ դարձուցեալ են: Աստ այժմ է Թանկութիւն, ձիանց խոտ ոչ գտանի, հացն քան զվէնէտիկ Թանկ, և խլելով առնեն ի ձեռաց իրերաց. ձուն, երկուքն Թրայի մ'է և ոչ գտանի. արդար եղն, 7 Թրայի ֆունթն, ձէթն 6. այդ տեղի մէկ ստկի չօխագամն և խնծորն, աստ 4 և 5 ստակ, բայց միսն աժան, այսինքն ֆունթն մէկ Թրայի: Գինին մէկ պօղան 6 և 7 Թրայի: Այս ամենայն ոչ է յաղագս այսր, Թէ բազմութիւն զօրաց կամ մարդկանց զոն աստ, զի ի ժամանակս խաղաղութեան, այլ աւելի լեալ են: Այլ ասեն Թէ իչխանք և վերակացուք քաղաքիս վասն ազահութեան իւրեանց և կաշառառութեանց Թոյլ տուեալ են այս Թանկութեանս ... զօրապետքն սոցին տիւ և գիշեր ի զահվէչխանայսն կոյտ ոսկւոյ եդեալ խազան նարտ, տանին և տարուին, և այլոյ իրի ոչ պարապին: Նաև ահա աստ են ոմանք խեղճ և ողորմելի հայք, աստի և անտի մազապուրծ փախստեայք անկեալք աստ. ոմանք յառաջ և ոմանք այժմ, են ուխտաւորք գնալ ի հռօմ, են չգաւորք, մերթ վասն միոյն և մերթ վասն միւսոյն ծանուցումն առնեմ յեկեղեցւոջ: Ոչ ունին զբնակութիւն, այսպէս և ծերունի ոմն ազգիրմանցի ի ցրտութենէ կալեալ, փունթօ եղեալ, չունելով զտեղի և զապրուստ, Թէպէտ զոմանս աւուրս ես զարմանեցի, բայց մեռաւ: Ուխտաւորաց մինն է մարզուանեցի, սա երկու ամիս յառաջ ելեալ է աստի գնալ ի Հռօմ. զկնի երից և չորից աւուրց ճանապարհի, ասպատակօգք մերկացուցեալ են զինքն, որ իբրու զի ոսկի ունեալ իցէ վասն ապրուստի իւրոյ. վերստին դարձեալ այսր, զի աչխատութեամբ գոնեայ չահեսցի ինչ, որով կարիցէ գալ այդր կողմն...: Մի ևս էմիրէ դարձած նոր քրիստոնեայ մի, մկրտեցեալ ի Բարդողիմէոս վ.է ի գալյովայ. մի ևս Թօխաթցի երիտասարդ մի, տաճկացած ի Սուքիաս վ.ի քովէն ելեալն, զոր մինաս վ. եպիսկոպոսն կամեցեալ էր առնուլ մերձ իւր...: Եւ վասն Թազման հայր յակոբին գնացեալ է 46 ֆիօրին...: Նաև լուաք աստ, Թէ ի ստամպօլ զԹագաւորն փոխեր են. զգալով ինքն, նախապէս փախեալ և Թագեալ է, և անյայտացուցեալ զինքն: Նաև զի մեծամեծ հօռօմ կախեալ են. ի սէլանիկ ևս ի տունս մտեալ զգործիք պատերազմի որոնել:...

Գերյարգութեան քումդ
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մխայէլ վ. Սեբաստացի

Յամի Տեառն 1737ին
դեկտեմբերի 7ին
4 գիր ի Պելրդատ

ՀԶ.

Գլխատուած «Ձ'էնըալ»ը, որ կը յիշատակուի հետագայ և յաջորդ նամակներուն մէջ առանց անուան՝ Ֆօշադ զօրավարն է:

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ վերոյ տէառն տէառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

.... ահա նաև ի 20 մարտի հատին աստ զգլուխն նիշու զօրքին տուօղ Ձէնըալին, որ ի յայսգան ժամանակ ի քննութեան էր ի բանտի աստ, և վճիռն գլխատման ի կայսերական իչխանութենէն եկն. չորիցս բախմամբ ապա հատեցեալ եղև. ոմանք ասացին

թէ գկախարդութիւն ինչ արարեալ են զի մի մեռցի. բայց վերջապէս մնաւ։ Որ և էր Լօթերական կրօնիւ. կարգաւորք, նաև եպիսկոպոսն իսկ անձամբ խնդրեցին ի նմանէ զընդունումն ուղղափառ հաւատոյ, բայց նա ոչ ընդունեալ, այլ ասացեալ թէ ի յայսմիկ կրօնի մեռանիմ յորում ծնեալ եմ և սնեալ։ Իսկ զահիճն եդին ի բանտի, թէ ընդէր բազմիցս բախմամբ էհատ զգլուխն և վերջապէս մորթեաց։ Նաև զոմանս ովֆիցիալս ևս որք ընդ սա էին ի նիշն, ձգեալ ի պաշտօնից, վատահամբաւ արարին և տարագիր։ Ասեն ևս թէ զսեռական ձէնտաղն Ակքինատօ, որ նա ևս Լօթերական է և անհաւատարիմ, կայսերն, որ այսքան ժամանակ ի բանտի է ի Վիէննա և ի քննութեան, զնա ևս բերելոց են աստ, և հատանելոց են զգլուխն...։

Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ վրդպտ. Սեբաստացի

Ցամի տեառն 1738ին
ի մարտի 22ին
Տերորդ գիր ի սոյն ամի
ի Պէլրղատու

ՀԷ.

Պելկրատու քաղաքական կեանքի և դէպքերու շուրջ Հ. Միքայէլ շատ աւելի մանրամասնութեանց կ'իջնէ։ Բանը սակայն, որ եթէ իր նպատակն է — ինչպէս կը տեսնենք — միշտ տեղեակ ընել զՀայրապետը իր Միաբանութեան այդ ստանձնած առաքելութեան մասին, շարժառիթ մ'ալ ունի անկեղծօրէն ու խղճմտիւք կերպով անդրադարձնելու, որ սոյն պարագաներուն տակ իր յառաջացեալ տարիքն ու տկարութիւնները չեն նպաստեր գործերու յաջողութեան և յառաջացման։

Գերյարգելոյ Հայրապետ հօրդ մերոյ, տեառն տեառն Միխիթարայ
Ամենաժաքանութիւնեան վարդապետի

.... ահն և երկիւղն տաճկին հալէ և ցամաքեցուցանէ զոսկերս իմ, զի ի չաբաթօջն երկու և երեք անգամ վայնասուն ելանէ ի գիշերի թէ եկն տաճիկն։ Ցաւագ ուրբաթու ի մէջ գիշերի, յորում ժամուն սկսանելոց էաք զժամն, տեսաք արտաքոյ պարսպին ձայն աղաղակի և լալոյ, և արձակմանց հրացանից. բազմաց թուեցաւ հաւաստիւք թէ տաճիկք իցեն եկեալ. երևակերպեցէք, թէ զինչ սիրտ Մեզ կատարել զպաշտօն չարչարանաց տեառն. բայց որ ինչ և իցէ զկնի հանդարտմանն կատարեցաք արենախառն սրտիւ. և յետ ոմանց ժամուց նոյն զունակ աղաղակ և ձայն հրացանից յայլ կողմանէ, և յայս աւուրս սիրտս ի փորիս տրտրեալ եղև, ոչ քուն և ոչ հանդարտութիւն, մինչեւ լուսացաւ. իմացաք թէ ոացք աւազակք և ասպատակօղք են եկեալ, ասպատակեալ, և կալեալ զանձինս տարեալք։ Զկնի երկուց աւուրց ի գիշերի երկրորդում զատկի, նոյնպէս յայլ կողմանէ վայնասուն եղեալ, մինչև հաւաստալ վերակացուաց քաղաքիս թէ տաճիկք եկեալ են, վասն այսորիկ գաղտ գրամբ գիշերով զհիւանդս ի հիւանդանոցէ որ է արտաքոյ պարսպին, ի ներքս ածին։ Բայց ի ցերեկեան և այս ստեցաւ։ Սակայն պէսպէս գրոյց գմեզ վշտացուցանեն, մերթ ընկղմեն ի ջուր և մերթ մուծանեն ի հուր, մեծ սրբատաբեկութիւն գոյ աստ. զինու[ո]րք բաւական ոչ գոյ, պատրաստութիւն ոչ գոյ, կերակուր ոչ գոյ, ասեն գալոց է։ Երբ գրոյց լինի ընդ ոմանց ովիցլալից, կամ ընդ այլոց լէմսէից, ասեն, թուրքն ոչ է կարող գալ ի ներքոյ այսր, որպէս ասէին վասն փալամիտին նախկոյ. մօթօն համեմատութեամբ առ սա զաւելի պատրաստութիւն և զգօրս ունէր քան զսա։ Պատրաստութիւն սոցա ի բոլոր ձմեռանս մինչև ցայժմ զգալիօրէս տեսկել, և

զուտս հիւսել, և ի բոլոր չրջապատն պարսպին վից և հօթն սեղ, զչորս, զերեք, և զերկու հրացանս տեղաւորել։ Եւ այնքան լայնատարած է չրջանակ պարսպին, թէ իցեն ի[10,000] զօրք մէկ մէկ կալով ապա լցուցանեն. և այժմ երրորդ մաս ասացելոյս հազիւ զտանի զօրք։ Ձարտարապետն չինուածոյն պարսպի քաղաքիս այսորիկ լեալ է ճէնրալն այն, որոյ զգլուխն հատին ասե, որ զնիչն տուեալ էր, ի մօտակայ օրերս եկն ճէնրալ մի, որ վասն դիմիչվարու կարգեցեալ էր, քանի մի օր ի տան պարոն ովանիսին օթևանս կալաւ, և գնաց ի դմչվար։ Նա ասացեալ է թէ ես գտանեցեալ էի ասե, վասն նոյն ճէնրալին, զայլ դատաստան առնել տայի, այսինքն ի 40 կտոր բաժանել գնա, որ այսպիսի լայնատարած պարիսպ չրջապատեալ է, և այն ևս անկատար։ Միայն փալիֆիքատ գոյ, և ի ներքս կոյս այսքան դատարկ ընդարձակ տեղի թողեալ, որ սորա բազումք զօրք պիտոյք են. եթէ ի յայս կացութեան մնալով, եթէ 30 ի, տաճիկք գան, երեք օր ոչ տևէ այս քաղաքս։ ... Նաև տաճիկքն ի մօտակայ տեղիս փալասանք տան. ահա այն բերթային, որ ուժիցայ կոչի, զոր սոքա ի հերու առեալ են, ի սահմանս պօսնայու, զոր անտառիկ հոչակէին, ի մէջ որոյ 300 զօրք սոցա կային, զկնի 23ից աւուրց եւտուն տաճկին և եկին ասե. և ի՛ զինուորք ի սոցանէ թուրքացեալ միացեալ են անդ, որք էին ի գնդէ ճէնրալի քաղաքիս այսորիկ։ Ճէնրալն քաղաքիս որ վաղուց ասե է, ծեր և չոր և տրտմական անձ մի է.....։

Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մկրտիչ Վ. Սեբաստացի

1738ին ապրիլի 12
Յերկրդ գիր ի սոյն թուիս
ի Պէլրղատու

Մինչ գրեցի գիր մի և ի պատրաստի էի տալ զայն ի փոստն, լուայ զայլ իմն վայնասուն. ասեն կի՛ տաճիկ անցեալ զգետն ի հողն ուլահու, կամի ի վեր անցանիլ, զի արգելցէ զօգնութիւնն թէ կերակրոյ և թէ մանկանց ի վայր եղելոցն 50,000 ևս այսր քան զբարաքին, քստմնեալ են ասե բնաւքն, ուր ոչ գոյ մարդ և կերակուր։... այսօր և վաղիւ 5 և 6 տուն հայոց չուեն աստի գնալ ի պուտիմ....։

ՀԸ.

Ինչ որ լսած ու տեսած է նամակագիրը պատերազմական վիճակին շուրջ՝ մանրամասն կերպով կը նկարագրէ նաև հետևեալ թուղթին մէջ։

Գերյարգելիոյ Աբրոյ Հօրդ վերոյ, տեսաւ տեսաւ Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի

.... ի յաշխարհամատրան կիրակէի հետևեալ Բշ.ի գիշերն, զփայտեայ ճաղն պատուհանի եկեղեցւոյն բեկոտեալ և մտեալ գող, բացեալ զտօլապն, յորում պահի սկիհն, արծաթեղ խաչ մի, և թա|ս| մի, նաև բուրվառն, ևս զգեստեղէնք. զոչ ինչ առեալ, փախեալ է. ի յառաւօտուն տեսեալ մեր զպատուհանն բեկոտեալ, և զտօլապն ի բաց ձգեալ, և ի տապանակն սրբութեան ոչ հպեալ, զարմացաք... ահն տաճկին օրըստօրէ զօրանայ, զի այսր քան զբարաքին ի յեզր մօռանայ գետոյն գոն տաճիկք. Ըն. ասեն. սոքա անդ զհազար վեց հարիւր ֆչի ալիւրն ամբարեալն անդ յափշտակեցին և ուղարկեցին ի նիչ։ Եւ ի գիւղօրէս խարաջ առնուն, ի կողմանէ վ.իտինու ևս ի՛ր ի տաճիկք ընդ նոսին նաև ֆրխաթաներ և հրացանք լուաք թէ սոքա մերձեցան օսմովայու, որ գոչօվայ ասի, երեք ժամու հեռի. ունին զդիտումն զի զանտառն այն տեղւոյն հատանել տայցեն բնակչաց

տեղւոյն. և զհրացանսն զառիվեր լերանն հանցեն, յորմէ մարտիցեն ընդ գուշևայս. և յայլմէ լուաք թէ սոքա, այսինքն քրիստոնեայք, զմին ի տաճակ կալեալ, և զայս դիտումս նոցին իմացեալ, վասն որոյ ինքեանք զյետուստ տաճկին առեալ, մարտ եղեալ են. ի քրիստոնէից 240 անկեալ, իսկ ի տաճկաց 1000. և փախեալ ասեն, և լուաք թէ զօրք սոցա ի՛ են, ևս ի՛ զատանայ են: Այս տակաւին ի նոյն կացութեան է ի կողմանէ զօրաց ասեն գոյ. հրէից մեսիայն դարձաւ: Միայն 500 զինու[ո]ր ժամանեաց ի զէմին, որ է սէմլէին, աստի հեռու մի ժամ. նաև չորս նաւն Թուճէլ մանր հրացանք իբրու 40. Ես աչօք համարեցի, այսոքիկ թուի թէ ի ցամաքի չկրնցուցանելի են: Ասեն թէ ամենեքեան զօրքն մինչև ի վերջն ամսոյս գալոց և հաւաքելոց են: Բայց ի վերայ այսր ամենայնի տակաւին չունիմք զազահովութիւն. տաճիկն այս անգամ կարի զլրբութիւն ստացաւ, յաղագս անցելոյ ամի անկարգութեան սոցին, որ գործեցաւ: Դևս ափշեցուցանէ զիս թուլութիւն սոցին, ոչ գիտեմ արդեօք զդարան ինչ ունին գործելոյ: Եւ կամ թէ մի գուցէ (զոր Տէր մի արասցէ) թէ ձերմակ լաքն խափեալ իցէ զսա, և դարան ինչ ունի գործել տալոյ. խազաղութեան նշան ոչ երևի, զի թշնամիք սոցա ոչ դադարին ի յաշնանէ մինչև ցայժմ ի ընասելոյ:....

Պատրաստական ծառայ
Հայր Մխայէլ Վ. Սեբաստացի

1738 Մայիս 10
12 գիր սոյն թուիս,
ի Պէլրղատու

ՀԹ.

Յաջորդիւ կ՝ամբողջացնէ Հ. Միքայէլ իր նախորդ նամակը:

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերում, անառն առառն Միխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի

.... յանցելում գրոջ ծանուցի թէ տաճիկք եկեալ են ի վերայ գուշևայս. զօրք սոցին որ անդ ղէմ ելեալ պատերազմեալ են, հազար և երկու հարիւր ի տաճկաց ձգել, յինքեանց չորս հարիւր և մի ճէնրալ, տաճիկքն փախեալ. բայց մինչ ըմբռնեալք են տաճիկքն զկնոս, իմացեալ թէ սակաւ զօրք գոն ի գուշևայ, բազմացեալ վերստին, դարձեալ այժմ պաշարեալ են զգուշևայ այն հինգ հարիւր զինու[ո]րքն, որք նոր եկեալ ասացաք յանցելում, ուղարկեալ ասեն զնոսա անդ ի յօգնութիւն. եթէ գգուշևայ առնուն, ճանապարհն է դիվար, գուշևայ բանալիքն է նորին. ի մաճարստան ի յապականութիւն գնեն, զի ի նոսա ևս ապստամբութիւն բազում գոյ: Այսոքիկ տակաւին տաճկին ցնցուխքն են, եթէ մեծ զօրք գայ զինչ լինիցի ոչ գիտեմ, զի ասեն թէ, որպէս և նոյն քահանայն որ ի ստամպօլու եկն ընդ զօսէրի ֆռանցկզու, ասաց. վէզիրն մարայ զուլումն և ուռումէլու բոլոր էսկէրովն ի վերայ սոցա, և թազաւորն անատօլու բոլոր զօրօքն ի վերայ մոսկովին գնալոց են....:

Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մխայէլ Վ. Սեբաստացի

1738 Մայիսի 17ին
13 երորդ գիր թուիս
ի Պէլրղատու:

Ջ.

կատարեալ ու խղճամիտ օրագրող մ՝է Հ. Միքայէլ. այնքան աւելի մանրամասն, բազմազան ու խիտ են անոր հետաքրքրական ու պատմական տեղեկութիւնները՝

որքան մեծ է իր երկիւղն ու կ՝ազդուի հասակին տկարութիւնը, որոնք կը մղեն գինքը դէպքերուն դիմաց աչալուրջ հսկել, ինչպէս կը տեսնենք երեք յաջորդ նամակներուն մէջ։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ վերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Ազատաժաքանութեան վարդապետի

... կասկածն և դողն պատերազմին տակաւին տևէ ի յիս, թէպէտև թուլացաւ սակաւ ինչ, զի սկսան զօրք կայսերն քայլել և գալ այս կողմս. ի մայիսի 16 եկն աստ Ֆիրզ մարշալ Վալիսն, հրամայօղն հետևակաց զօրաց. ի 23ին չուեցին երկու նաւք զինուորեալք Ձ.ական զինուորօք բաց ի մատինաբաց, 30ական Թօփ քաշօղ, ոմանք ասեն ի գազօվայ գնան, ոմանք ի վու փալանգան, և ոմանք յայլուր առ ի չինել զկամուրջ վասն անցման զօրաց և լինիլ պահպան նմա։ Ի 28ին եկն եհաս մեծագոյն մարշալն զինիզէք, որ է խորհրդական պատերազմի, և աստ մնալոց է։ Կայսերն փեսայն փոխնիփոխ լութիրնն գալոց է, իւր կահն և սպասաւորք եկեալ են աստ և այլ մարշալ գալոց է, ոմանք ասեն թէ փալֆին ևս գալոց է. և ոմանք ասեն ոչ, այսօր տասն հազարի չափ զօրք հետևակ և հեծեալ ի սէմլինու և աստի հանդիսասլէս անցեալ գնացին ի վայրս վրանաբնակիլ, մինչև յայժմ թէ աստի թէ գետով թէ ցամաքաւ, և թէ հանդիսական ցամաքաւն Թուրնայի երեսուն հազարի չափ զօրք անցեալ են, բայց թէ ուր կամին գնալ, անյայտ է այժմ, մինչ սպասեն նաև այլոց զօրացն գալ։ Ի գազօվայ եկեալ տաճկացն վասն, յայտնի զրոյց ոչ գոյ թէ ինչ եղեն։ Զրոյց գոյ թէ ի մաճարաստան ապստամբութիւն գոյ, թէպէտ զբազումս կալեալք են։ Ոմանք ասեն թէ ի ձմերանս ռագօցին տղայն ի տաճկաստանէ գաղտ և գծուծ ձևով եկեալ մտեալք ի յունկարիայ, զի զմեծամեծս զրպեսզ, յորժամ տաճիկ զօրքն գան, ինքեանք ևս զգլուխ բարձին ի վերայ կայսերն, այս իմանեցեալ է, վասն այսորիկ որոնեն և ըմբռնեն զայնպիսին, և ռագօցին տղայն փախեալ ասեն վերստին ի տաճկաստան։ Աստ վասն նորա գերաման մի ընթերցան թամպուռով երկու և երեք տեղ, թէ ով ոք որ գնա կենդանի կալցէ և բերցէ, 40 հազար ֆիօրին չնորհեսցի նմա. նաև ազատ լիցի ի հարկաց ինք և ազգ իւր. իսկ եթէ զգլուխն բերցէ, 20 հազար։ Եւ յայլոց լուաք, թէ գնա թուրքն ուղարկեալ է ի վիէնն կազմել զընտիր զօրս մինչև յիսուն հազար իբրև իւր, երբ գայցեն զօրք տաճկաց, ինքն ևս մտցէ նոյն զօրօքն ի ի մաճարստան։ Եւ ոմանք ասեն, թէ ի պուդուէչ ուլահու քաղաքն կազմեալ է զզօրս։ Չայք որք ի պէլրղատս, ի չորս և հինգ առաջս բաժանեցան, ոմանք վասն ահին փախեան, ոմանք վասն վաճառականութեան աստ և անդ գնացին, ոմանք փէրէքէնտէ անձինք ի թափուռն երթան, մինչև ցայս վայր 26 անձինք ևս մեռան։ Ցորմէ հետէ եկեալ եմ, թուի թէ այսքան ևս մնաց....։

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1738ին. Մայիսի 31ին
14.երորդ գիր ի սոյն թուիս
ի Պէլրղատս

ԶԱ.

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ վերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Ազատաժաքանութեան վարդապետի

.... թշնամեաց ընասն և յառաջանալն միշտ երևի, բայց ի սոցանէ ոչ իմն գործ երևեցաւ մինչև ցարդ օգտակար. ահա զօրքն անցան ի կողմն դմշուվարու, զի այն կողմն օսմովայու երկու և երեք տեղ տաճիկքն տիրապետեալ էին, լմ.ի չափ. մինչ սորա անցին

այն կողմն, ասեն նոքա փախուստ եառուն, և ոմանք ասեն թէ գտեալ յուրեք պատեբազմեալ են, 300 ի սոցանէ անկեալ, Դի ի նոցանէ։ վ֊երջապէս այն կողմն ձայն տաճկին մարեցաւ ասեն. բայց այս կողմն յերեկեանն զարդեաւ ասեն լ֊ի տաճիկք տասն ժամ հեռու աստի, ի ներքոյ այսր կամին գալ ասեն, և ութսուն հազարով ֆէզիրն ի Սօֆիայ ժամանեալ, տաճիկքն ինքն որպէս աղուէս և կապիկ, խաղայ և խաղցնէ զսոսա, աստ զօրք ոչ գոն, նաև 2 հազար, զի աստ եղեալն ևս տարին [...] աւուր միոյ ճանապարհ գնացին, կամ ոչ, հարիւր հիւանդացան, բերին աստ։ կայսեր փեսան երկու օր է որ ի վարատինու էանց յայնկոյս գինիզէք գլխաւոր հրամայօղն Ը զօրացն էանց... լուայ թէ յիսուն հազար են տաճիկքն, որք մերձ են, նաև լուայ թէ սոքա ևս յայսկոյս քարշելոց են զզուրս իւրեանց, տաճիկքն սոցա հետ տամայ կու խաղայ. այն երկու նաւքն որք գնացին, գրեցի յայլում գրի, գնացեալ պահապան կեցան չինեցեալ կամուրջին, մինչև զօրքն անցան. բյցիւ զկամուրջն, նաւքն վերստին դարձան այսր։... զայս գիր մինչ կամէի եզերել, լուայ զբօթալից լուր, թէ տաճիկն մերձեցեալ է իբրու կէս աւուր ճանապարհ, ահարկութիւն և երկիւղ մի անկաւ ի սիրտս բազմաց, և լուայ թէ գդրունս քաղաքիս փակելոց են...։

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մխայէլ վ. Սերաստացի

1738 յունիսի 21
15.երորդ գիր ի Պէլրատաւ

ՁԲ.

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերոյ տեառն տեառն Մխիթարայ Աստուածաբանութեան վարպապետի

... Հասարակ երեք պատիժն աչխարհիս, այս քաղաքիս վրայ կայ. այսինքն պատերազմ և ահ թշնամեաց, սով և թանկութիւն, և ժանտամահ, որ առաւել կասկածելին որ յայժմ այս է, որ եթէ ոք չրջիցի ի քաղաքիս, տեսցէ զբազում մեռեալս. ի փողոցս և յանկիւնս անկեալ զնին բազում օր. սայլով կրեն ի դուրս, առանց քահանայի, զի չեն բաւական. առաջի գրան եկեղեցւոյն մերոյ վեց օր մեռեալ մի Մացեր էր, մեր ննջեցելոյն հետ զնա ևս թաղեցաք։ Ջօրք սոցա լսելով թէ խումբ կապեալ քայլէ տաճիկն առ դմչվար, վերստին անցան յայն կողմն, առ ի բնդդէմ ելանել նոցա. բայց լուեալ նոքա փախեան։ ի մօտակայ տեղիս տաճիկքն երևին և չրջագային, մի անգամ ակներև վեց և հօթն ձ տաճիկքն եկին, որ այն ժամ բոլոր զօրք սոցա աստ էին, սակաւ մի ձիաւոր զօրք և գառանայք ուղարկեցին, գառանայքն միայն պատերազմեցան, ուր ինն թուրք անկանոն, և երկու երեք ի սոցանէ. յետոյ ապա թէ տրակօներն սկսան ի մէջ առնուլ, բայց տաճիկն իմացեալ փախեաւ։ Այս ամաց պատերազմ սոցա քան զհերուին աւելի ծաղրական և խարդախական, որ թուրքն այնքան մեծ ուժով և բազմութեամբ չեկաւ, թողին որ գերկիրն մինչև ցայսր ի յատկանութիւն դրաւ. և զանառիկ բերդն այնքան թօփերով և այլովք իրովք թոյլ եառուն թշնամւոյն առնուլ, այսինք զօսոսմայ։ Այս օրերս լուաք թէ փաչամ մի ձ և այլ աւելի անձամբ եկեալ աստ որպէս հրեշտակ բանակեալ արտաքոյ քաղաքիս, զի ոչ թողին ի ներքս մտանել, բերեալ է զգրեր և այլ մի գիր ի զումաչ քսակի առ կայսերական առեանն հասանել, այսու հուչակեն զի խաղաղութիւն լինի... ։.. Ձէնրալ վիգարիօն որ գիս քաշալերեալ յորդորեաց մնալ աստ, եթէ տաճիկն առնէ զքաղաքս այս, զափիթօլացիօն ի լինելն, քեզ տիրութիւն առնեմ առ ի ազատել. բայց սա մինչ այն սակաւ տաճիկն երևեցաւ և պատերազմեցան ակներև ի քաղաքիս, յերկիւղն առժամայն նստաւ ի կատս իւր և փախեաւ ի վ֊իէնա, այժմ աւազ քանօնիքն է փոխանորդ։...

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մխայէլ վ. Սեբաստացի

1738, հոկտեմբերի 25
ի Պէլրատաւ

ԶԳ.

Մեր հրատարակած վաւերագրերու շարքին մէջ ընթերցողը ստուգիւ եզական նորութեան մը հանդիպած էին։ Մոռացութեան մատնուած պատուարեր դէմք մ'էր ան, որ իբրև ծաղիկ մը ծլած հայրենի յարկին մէջ՝ փոխադրուած էր օտար երկնքի տակ, օտար ընկերութեան մը ծոցը, ուր իր սրբութեան գեղով զմայլեցուցած էր ոչ միայն գինքը շրջապատող ընկերութիւնը՝ այլ նոյն իսկ գինքն հիւրընկալող միջավայրը։

Կ'ակնարկենք այն հայ « էզնիզ » կուսանը՝ որուն գոյութեան նորագիւտ պատմութիւնը տուին մեզ մեր կէ և կԶ վաւերաթուղթերը։ Անոնց մէջ կը պակսէր սակայն էական ծանօթութիւն մը՝ ինչ ինչ կարևոր պարագաներու շուրջ։

Ուրախ ենք այժմ, որ հետևեալ թուղթը այդ մասին նոր լոյս մը պիտի սփռէ և այդպէս լիով գոհացում պիտի պատճառէ։

Գերապայծառի Տեառն Տեառն Մխիթարի Աբբայ Հօրդ մերոյ
Գերագանցի վարդապետիդ Աստուածաբանութեան

. . . Կոյս ոմն գաղատացի ի ձեռն ֆրանցուզ Լչչիին ի վաղուց ժամանակաց յղեցեալ էր ի Ֆռանցայ կուսանաց վանքն. սոյն կոյսս ստացեալ է զգերազանց վարս առաքինութեան, այնքան մինչ զի զարմացեալք սքանչելի վարուց նորա կուսանքն այնմ վանքի գրեալք են զպատմութիւն վարուց նորա առ հրեչտակն ֆռանցուզի. և նա կոչեալ զսբասացի մինաս վարդապետն առեալ է զպատմութիւն վարուց այնմիկ կուսին, և ասացեալ է նմա յղել առ գերյարգութիւն ձեր. և մինաս վ.ն եւս գրեալ զողջունագիր մի առ ձեզ և ընդ այնմ գրոյ յղեալ է և զպատմութիւնն այնմիկ կուսին ի միւս անցելում գաւակի, և մինչև ցայժմ ոչ է ընկալեալ զպատասխանի գրոյն. արդ վասն այսորիկ աղաչեաց զիս մինաս վ.ն վերոյգրեալ, և ասաց թէ գրեա՛ զողջոյն յարգութեան ի միաց իմոց առ գերյարգութիւն Աբբայ հօրն, և հարց թէ արդեօ՞ք այսպիսի գիր եհաս առ ձեզ թէ ոչ. եթէ ոչ, գրեսցէ ինձ՝ զի կրկին գրեցից զպատմութիւն կուսին և զողջագիրս առ Տէրութիւն իւր. և զպատասխանի գրոյս չուտով յղեսցէ ինձ, որպէս զի մի յամօթ եղէց միւթ հրեշտակին վերոյգրեցելոյ երբ կրկին հարցանէ զիս։.... Այս եղեալ միսիօնարքն ոչ ունին զհամաձայնութիւն ընդ մեզ ի տօնելն զտօնս հանդիսաւորս, և ասեն թէ սուրբ ժողովն միայն զհինկ տօնս պատուիրեալ է առնել հին տօմարով և ոչ զայլսն ...։ ... յայսմ ամի յոյժ սաստիկ ժանտամահ, մինչև ցհինկ ամիս տևեաց....։

Ցամի Տեառն 1738
Նոյեմբերի 24
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ Տ. Զ.
Հայր Թոմաս վարդապետ Թէոդոսեան

ԶԴ.

Կարդաց Զ.ի թագաւորութեան գրեթէ մայրամուտի (1711 † 1740) պահերն կը կատարուին Հ. Թ. Յովհաննիսեանի յիշատակած պատմական դէպքերը։

Նամակագիրս կը հետաքրքրէ նաև Կերլայի Հայութեան կրած ճախորդութեանց շուրջ՝ տուած որոշ բացատրութեամբ ու ծանօթութիւններով։

Գերապայծառի և Գերյարգելոյ Տեառն Մխիթարայ Աբբայի, Ազատաժաբանութեան վարդապետի, և Հօրդ մերում մեծաւ խանդաղութեամբ, և բազմաւ կարօտիւ մատուցանեմ գորովական ողջոյն, և գնպատակութիւն։

. . . . յանկարծակի եհաս լուր թէ տաճիկք ելեալ ի Օրշովայէն՝ սպառնան մտանել ի դրանսիլվանիայ, և առաքուր առնել զամենայն բնակիչս։ Յայնժամ յերկիւղէ և ի կարծեաց եկելոց՝ սկսան[1] զինչս իւրեանց կեալացիք մինն ի Գլուժ, միսն ի Պիստրիցայ, և այլք յայլ ուրեք, իբր փախստականք։ Եւ այսու պատճառաւ մոռացան զրել առ Գերյարգելութիւնդ։... վերջապէս լուաք թէ յետս ընկրկեալ են կայսերական զօրքն գմահմետականս։ Բայց յետ ոչ բազմաց աւուրց մերձեցաւ ժանտամահն կերլայի քաղաքին, և սկսան չուրջանակի մեռանել կարի սաստկաբար, մինչև վերջապէս եհաս ի կեալայ, և մեռան ի միում տան երկու տղայք մինն զկնի միւսոյն, և ոչ ոք մերձեցաւ առ նոսա, այլ թաղեցին ծնօղքն գնոսա ի բակս իւրեանց, և դառաւորքն փակեցին զտունն զայն զամիս մի, որպէս զի փորձեցեն արդեօք ի ժանտամահէ իցեն մեռեալք թէ յայլմէ պատճառէ, և ևս որպէս զի մի ընանիցին այլք, եթէ գուցէ ի ժանտացաւէ իցեն տղայքն մեռեալք։ Եւ քանզի ասացին ծնողաց տղայոց դառաւորքն ոչ թաղել գնոսա ի տուընչեան այլ ի գիշերի, որպէս զի այլազգիքն մի իմանայցեն, և համբաւ չար զքաղաքէն հանիցեն։ Բայց քանզի ոչինչ է ի ծածուկ (ըստ Տեառն բանի) որ ոչ յայտնիցի, ուստի գիւղականք տեսանելով գնոսա լուսով ճրագի փորել գիտս ի պարտիզի՝ գնացին, արշաւեցին, թռեան և հասին առ չրջակայ այլազգի իշխանսն, և համբաւեցին, թէ այնքան սաստկաբար մեռանին հայք՝ մինչ զի ի տուընչեան ոչ կարեն ունիլ զժամանակ զամենայն մեռեալսն թաղելոյ, վասն այսորիկ նաև ի գիշերի թաղեն։ Եւ այսպէս ել վաստ համբաւ զքաղաքէն, թէ այաքուր տապաստ անկեալ մեռանին։ վասն որոյ եկեալ փակեցին զքաղաքն չուրջանակի, և ասացին հայոց չելանել ի քաղաքէն, զի ուր և գտանիցեն գնոսա հրացանով սպանցեն։ Եւ այսպէս աւելի քան զվեց շաբաթ ոչ ոք ել անտի, և ոչ ոք մտանէր անդ. մինչև վերջապէս իմացան զճշմարիտն, թէ ոչ ի ժանտացաւէ, այլ ի նշդիկէ մեռեալք էն տղայքն։ Եւ ես յայսմ ժամանակի բնակէի ի տան քեռ իմոյ, և չեկեղեցւոջ լսէի պնոստովանութիւն, ըստ խնդրոյ Տէր Մինասին աւագերէցին, մինչև փակեցաւ քաղաքն։ . . . վաճառականքն առուկաս եղեալ էն, և ոչ կարեն գնալ ուրեք...։

Նուաստագունեղ ծառայ
Հ. Թ. Յովհաննիսեան կ. ի կ. Պոլսոյ

Յամի Տեառն 1739
Յունվարի 3 ի Կեալայ

ՁԵ.

Կը շարունակէ Հ. Մխքայէլ իւր օրագրական լուրերը ժամանակակից պատերազմին և անոր ընթացքին շուրջ հետևեալ թուղթերուն մէջ։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ Ազատաժաբանութեան վարդապետի

. . . Յաւուրս յայսոսիկ լուաք, թէ ի յէտուէլու նահանգն մերձ սիպինու, ժամանեալ են քանի մի ի տաճիկք. այն կողմն եղեալ զամանատանքէն փոխնչիփէ լօգովիցն, լուեալ, ի մէջ առեալ են զտաճիկսն, 1500 չափ տապաստ արկեալ են, և գայլս փախստական արարեալ։ Նաև բազում գիւղօրէք ուլահաց ապստամբեալ ի կայսերէն, ի կողմն տաճկի

1. Հոս բնագրին մէջ բայ մը կը պակսի. պէտք է յաւելուլ փոխագրել կամ տանել և այլն։

են, իւրեանց մի մեծ եպիսկոպոս մէթրօփօլիտ գնացեալ յորդորեալ է զի հնազանդիցին կայսերն, ասացեալ են ընդ. Որպէս այս ձևովս եկիր գնայ բարով, քեզ չնորհենք: եթէ այլ անգամ գաս այսու ձևով, գքեզ կախենք մինչ ի 7 տարուանիս հասնի, երբեմն ևս լուաք թէ զմի եպիսկոպոս իւրեանց մատնեալ են ի ձեռս տաճկաց: վասն այսորիկ ի կոտմանէ կայսերն ելեալ է հրաման զի ի 7 ամաց ի վեր կուտուհսցեն զամենայն ապըստամբ ուլահսն. այս գործս առնօղքն, եօթն ուխ [illegible] զօրք և զատանայք են, որք չրջին և առնեն:...

Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ վ.րդ. Սեբաստացի

1739 Յունվարի 31
ի Պէլրդատ

ՁԶ.

Դեղյարգելցելոյ Աբբայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

.... զպատսաւորս ուղարկեցի մերձ ի ժամ ճաշուն, գնացեալ եկն, թէ ոչ գոյ գիր. նաև երեր զչար լուր ինչ, թէ այս կէս գիշերուն յետ, լուեալ են թէ թուրք զան աւարել, գերել և հրձիգ զվարուշն. ուխ հարիւրի չափ են եղեալ նոքա, այստի երկու հազարի չափ հեծե[ա]լ և հետևակ գիշերով գնացեալ ի դուրս, զի դարման կայցեն և ի մէջ առցեն զտաճիկսն. սոքա խմացեալ փախեալ են, և զօրք սոցին ի դէմ լոյս վերստին ի ներքս եկեալ են. և յայլմէ լուաք թէ ոչ ինչ գոյր, և սուտ էր, աստ ամենևքեան յերկիւղ են, զօրք սակաւք են, չորս հազար հազիւ, սոցա բանն և նշմարանք այնչափ է. բազում և զանազան զրոյցք կասկածանք գոն, թէ սուտ և թէ ճշմարիտք իցեն:... Աստ գոյ մի ալպանիացի լաթին եպիսկոպոս իսպէֆէու նահանգին, տաճկի ռայէ, սա զնիչն առեալ տարին, փախեալ ընդ բազմաց ժողովրդոց իւրոց եկեալ է աստ, մկրտչէլ անուամբ, այր տառապեալ և ցաւագնեալ սրտիւ վասն արարմանց սոցին այսպէս դիպեցելոց: Ընակի ի վանս Ֆռանչիսկանաց, լաւ գիտէ զլեզու տաճկի, զպալիան և զլաթին և զայլս լեզուս: Երիտասարդ հասակի, վեց ամիս է, սա է խոստովանահայրն իմ...: Չերու ի մեծ պատուոյն Ջուպիլչօ և թափուրք վասն պատերազմի եղեն, այս ամ ոչինչ: Ցչարժէ որ յառաջ գրեցի, յետ նորա այլ մի անգամ ևս հանդիպեցաւ, և այլ ոչ տեսաք. այժմ արտաքին չարժն տաճկին երևի, ի սէմնոտր եկեալ ասեն տաճիկք: Ան տօղրամաճին որ գնաց ընտանեօքն ի նիշ, ընդ որոյ և այլք բազումք էին, զնա և զայլս զումանս կախեալ, զումանս ի ցիցն հարեալ զումանս սպանեալ, փաշան տեղւոյն, և զզաւակսն, զկանայսն, մերթ լուաք թէ թուրքացուցեալ են, և մերթ թէ գերի արարեալք են:...

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ վ. Սեբաստացի

1739 մարտի 7, յօր տօնի
սրբոյն Թովմայի ազուինացւոյ
ի չաքաթու քառասուն մանկանց
ի Պէլրդատ

ՁԷ.

Դեղյարգելցելոյ Աբբայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

.... չուէլն իմ աստի ևս քան զևս դժուարին և դժուարին է, զի բնաւք ճանապարհք փակեալք են վասն երկիւղի մահուն. ի վիէննա ևս ասեն չոչորթն տեսանի, և ձայնն լսի: ի պէէշպուրկ, որ նաև Բօժուն կոչի, միոյ աւուր ճանապարհ հեռի ի վիէն-

նայու, երեք և չորս հայք, չորս հինգ ամիս որք աստի գնացեալ, որք թէպէտ և յայլ ուր գնազարէթ պահեցին, տակաւին անդ արգելեալ կան, ոչ թողուն գնալ ի վիճնա։ Այս քաղաքս, բնակողացս մի լաւերինդոս դարձաւ, որք ոչ ի տաճկաստան, և ոչ ի քրիստոնէաստան կարեմք գնալ. Աստուած այց արասցէ, բայց միայն պատերազմողքն գան և երթան, մինչև ցարդ նշմարանք զօրաց սոցա ի մօտակայ տեղիս երևեցան, վեց նաւ աստ ի պատրաստի են, վեց ևս երեք շաբաթն որ ի վէնայու ելեալ են գալ այսր։ Նաև իբրու 40 օր է 350 մարինար և ժդ. զավալէր մալթէզ եկին աստ ի դրէստու օգնութիւն սոցա, զերկու նաւն սոցա եառուն, ասեն թէ յետի եկող նաւերուն մէջ գոն մալթէզք այլ աւելի քան զայս. նաև ճէնուէզք, ալիկօռէզք, փափականք, և ըշկաւօնք։ Լինին ժբ նաւք քառասնական և երեսնական թօփ կրօղք, նաև զօրաց ընթացք բազումք լսին, ոչ գիտեմք թէ զինչ առնելոց են, և առ ինչ եզերելոց է իրակութիւնն, եէր մի արասցէ որպէս ի հերու հուչակն մեծ էր, և կատարածն եղև վատթար։ Նմանապէս և թշնամին ի վերայ մօռաւայ գետոյ ի վաղուց զկամուրճս կապեալ պահեն զօրքն, սպասեն գալստեան մեծ զօրուն իւրեանց, և յամենայն աւուր զգալստեանէ նոցին աստ, լսեմք. գուցէ լինիցի սուտ։ . . . . .

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մկրտիչ վրդ. Սերաստացի

1739 յունիսի 13
ի Պէլրդատ

ՁԸ.

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ վերոյ տեառն տեառն Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի

. . . Զօրք սոցա երևի թէ խռ իցեն, և ասեն թէ գալոց են ևս փառիչի և փոխնչիփէ նայինպէդաքի զօրքն իբրու իմ, հասանելոց են այսոցիկ զարմացման։ Նմանապէս ի կողմն դմչուվարու գոն զօրք, թէ և ոչ այսքանք, որոց գլուխն է փոխնչիփէ լօզովիցին, և ասեն թէ մօսկովի զօրք գոն ևս անդ։ Ու զինչ եզերելոց է, ոչ գիտեմք։ Նմանապէս վեց նորաշէն նաւքն ի յունիսի 21 եկին աստ ի վէնայու, 500 ճէնիվիզ մարինարով և նաւապետով. բնաւ նաւքն 13.9 սոցա հանդէպ բանակին ի վերայ թունային նստեալ, և 4 աստ մերձ պարսպաց քաղաքիս որ ի վերայ թունայի, պահապանք կարմնջոց, երկու կարմունջ ի վերայ սավայու, և մի ի վերայ թունայու։ . . .

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մկրտիչ Սերաստացի

1739 յուլիսի 4
ի Պէլրդատ

ՁԹ.

Պելկրատու Մխիթարեան առաքելութեան երրորդ առաջնորդն է — յետ Հ. Մկրտիչ Սերաստացւոյ — Հ. Յակոբ Կարնեցի, որ կը ձեռնարկէ իւր պաշտօնին՝ 1739 *Յուլիսին։*

Ինքն ևս կը սկսի մտնել մեր նամակագիրներու կարգին մէջ՝ տալով հետևեալ երկու թուղթերը, որոնք կարևոր տեղեկութիւններ են Օսմանցւոց և Աւստրիացւոց միջև տեղի ունեցած պատերազմին շուրջ։

Գերապայծառ և գերայարգ Աբբահօրդ վերուստ
տեառն տեառն Մխիթարայ վարդապետի

. . . . յուլիսի երկուսն յելինք ի վենայու։ 12 զօրօթայ խոստացանք նաւավարին. զի պատահմամբ մին փոքրաւոր հետս գտաւ, որ նամսային լեզուն և տաճկվար լաւ գիտէր. այլ ևս ճանապարհին աւազակք եկին ի նաւն մեր ահացուցանելով զմեզ, բայց ինաս ոչ եւտուն. միայն հացերս և գինին առին. ապա զկնի մեր եկող նաւին ինաս չորս ձ դուռչ հասուցին, և միջի մարդկանց նեղութիւն եւտուն. յուլիսի 21 հազիւ հասաք բելըրղատ.. երկշաբթի մտի ի բելըրղատ. հետևեալ չորեքշաբթին սկսան պատերազմիլ ընդ տաճկաց. բայց յաջողումն ոչ եղև սոցա. այսօր երեք օր է որ այսքան հարիւրաւոր վիրաւորեալ գան ի քաղաք. տեսանելով զսոսա ողորմելի գալարի զաղիս մեր. բայց թէ որքան մնեալ են ներ պատերազմին ոչ է յայտ. այլ ևս երեք սէհէթ մերձեցեալ է քաղաքիս, այսինքն տաճիկն. վասն այսորիկ մեծ ահ և երկիւղ միջի է քաղաքս...։

Գերյարգութեան քում միամ
պատրաստական նուաստագունեղ ծառայ
Հայր Յակոբ

Յամի տեառն 1739
յուլիսի 24
[Պելկրատ]

Ղ.

Գերապայծառի և գերայարգ Աբբա Հօրդ վերուստ
տեառն տեառն Մխիթարայ վրդ.ի

. . . . տեղիս ահարկութիւնն օր ըստ օրէ բազմանայ, զի ցերեկ և գիշեր անդադար չանան թէ բերդն պաշարել այնքան սաստիկ թօփին գուլիլուէն, և զումպարան թափեն ներ բերդին, որ ոչ կարեմք մերձ եղեալ եկեղեցին գնալ, կամ դրսի դուռն նայիլ։... Յարձեալ քաղաքապետն հրամայեաց թէ որքան կին կայ ներ քաղաքիս՝ բոլորն թող ելանեն, վասն այն բազմութեամբ գնացին վարատին. ևս բազում այր մարդիկք գնացին. մին քանի մարդ մնաց մեր ազգէն, այնք զոյս տուն ունին, զի քաղաքապետն ասաց. Ով որ գնա, տունն և ապրանքն ոչընչանալոց է, այլ իւրեան ոչ տանք։ Յարձեալ երկիւղ ունիմք թէ վարիչն առնեն այլազգն, յայնժամ ժողովին ներսի բերդն. բայց ներսի բերդն բնակիչն առաւել դժուար է, քանզի այնքան կրակ թափելոց են անհաւատքն. ով է որ ապրելոց է...։

Նուաստագունեղ ծառայ
Հայր Յակոբ ողորմելի

1739
Օգոստոսի 7
[Պելկրատ]

ՂԱ.

Պոլսոյ հրեայք հրաման առանալով կը մասնակցին Օսմանեան ցոյցերու՝ անոնց յաջողութեանց ի նպաստ։

Նամակագիրս է Մխիթարայ Միաբանութենէն Ջուղայեցի Հ. Պետրոս Մարտիկենց։

Աղեուսանիժապայժառի և գերյարգելագուհիի
Հօրդ իմում Աբբայի

Բազմաւ կարօտական սիրով և ողջունիւ յայտ լիցի վերոյ գրեցելւոյ վ.հանձնու-
թեանդ... ուրախա[ցա]յ վասն առողջութեան վհանձնութեանդ, ես այլոց անձանց միա-
բանից, և վասն աջողութեանց չինուածոց եգերեցմանց...: Նոր էլչին յուլիսի 30 գնաց
ի սարայն, և հինն ի յայլ տեղիս. ոմանք ասեն չուտով ելանէ և ոմանք ասեն մէկ ամ-
սոյն ետ ելանէ.... :... ահա ծանիր ի կողմանէ պատերազմին, զի տաճիկքն հրաման
հանեալ հրէշիցն, զի ելեալ բազմութեամբ զամին ասասցեն չրջագայելով յաստ և յանդ.
նաև երբեմն երբեմն ի ռուլմա պաղճան և ի յօթ մէյտանն գնացեալ բազմութիւնք տաճ-
կաց և հրէշից ի գիշերին մինչև ի լոյս աղաղակէին, և խնդրէին զյաղթութիւն ինքեանց,
և զկործանումն քրիստոնէից, և մինչև ցայսօր անդադար առնեն. այլ և մին անգամ
ասելով թէ զթաբուրն նէմցէին առաք, և գինքեանս ձարթեցաք, և բազումս գերեցաք,
վասն որոյ այնմ աւուր զբազումս ուրախութիւնս արարին, և զբազումս թօփս արձա-
կեցին երեք անգամ, և ի միւսում աւուր լռեցին, որ պարտ էր երեք օր առնել..., և
յայժմ ես անդադար խօսին, և ասեն թէ յայսօր և կամ ի վաղիւն գալէլրզաս ֆէթ կա-
նեմք, և կամ զբանալիքն առնումք, և ապա զդըմչվարն, և այսպէս զզանազան բազումս
բանս... ասեն...:

Նուաստագունեղ ծառայ
Հայր Պետրոս վարդապետ

1739 յօգոստոսի 14
[կ. Պոլիս]

ՂԲ.

Թուրք – Ալսատրիական պատերազմը հետզհետէ ամենալուրջ երեսյթ մը կ'առնէ: Մեր նամակագիրը համառօտիւ կը նկարագրէ Պելկրատի ազեխարշ պարպումը հայերէ և «ֆռանկ»ներէ, ինչպէս նաև Հայոց Նաւուն մէջ պատահած խժդժութիւնը:

Գերապայծառ և գերայարգ Աբբա Հօրդ մերում
տեառն տեառն Մխիթարայ վարդապետի

Բազմաւ յարգութեամբ յիսուսեան ողջունիւ յայտ լիցի ձերոյ քէրութեան քում, զի բէլըր-
զատու եղեալ հայերն մեծ և փոքր, իւրեանց ապրանքն և կանայքն եդին ի նաւն, վասն
գնալոյ ի վարատին. ես ֆռանկաց կանայքն. քանզի քաղաքապետն այնպէս հրամայեաց,
նաւերն գնացին գետով, անկարծակի զողք և աւազակ մտանեն մեր հայոց նաւն, մին
մարդ կը սպանանեն, մին քանի մարդ այլ չափէն ի դուրս հարկանեն. կանանցն ես
հարկանեն, ասելով թէ փողերդ ինչ տեղ է բերէք յառաջ. վերջապէս թէ փող թէ ապ-
րանք երեսուն քէսի ձրաս եղև հայոց. ի կողմանէ պատերազմին, օր ըստ օրէ սաստկանայ,
սկսան մեր հայերն և ֆռանկներն չուել. ես ու ճանէզիզն խորհուրդ արարինք. առի վա-
չուչ ինձի և փոքրաւորն հետս. գնացինք զէմին. մին սայլ բռնեցինք. ճանապարհին մեծ
երկիւղ կրեցինք՝ ի կողմանէ աւազակաց. բայց գոհանամ զաստուծոյ, ամենայնէ փրկեաց
զմեզ. գնի երկու աւուր ճէնէզիզն եկաւ. յոյժ սակաւ մարդ մնաց քաղաքին. կարծեմ
եթէ հնար գտանեն՝ նոքա այլ գալոց են. վարատին մեծ դալապալըխ եղև. մին օտայ որ
հազիւ երկու մարդ նստի, ամիսն երեք ոսկի փրաս. նա այլ զժուարաւ գտաւի: Այլ ես
թէ հայք և թէ լաթինք վարիչն բնակին. ոմանք չատբրով. այլ ես մեծ կասկած գոյ թէ
տաճիկն պաշարելոց է զքաղաքն. միայն ի ձեռին աստուծոյ մնացեալ է. տեղս քափու-

ճիներուն եկեղեցին պատարագեմ. խնդրեցի ի նոցանէ թէ միայն գիշերն մին տեղ տուէք ինձ վասն ննջելոյ. ասացին ոչ գոյ. ահ մին օտար նստած ենք ես և փոքրաւորն. ամիսն երեք օսկի. աստուած օրհնէ այս տղան. եթէ սա ոչ լինէր, չափէն ի դուրս ողորմելի լինէի։ Ձայագան անօ՛ք անձին ի գլուխս մեր. բայց զաղագայն ոչ գիտեմք թէ ինչ լինելոց է. քանզի ասեն թէ եթէ բէլըրդատ տաճիկն առնու, վարատին կենալն հնար չէ...։

Գերյարգելութեան քում միամ պատրաստական յամենայնի

Նուաստագունեղ ծառայ
Հայր Յակոբ ողորմելի

1739 Օգոստոսի ժԵ
Ծրեցաւ ի վարատին

ՂԳ.

Այլեա Թուրք – Ազատրիական պատերազմի վերջաբանն է, որ խնամքով կը նկարագրուի Հ. Թ. Յովհաննիսեանի նամակին մէջ։

Պատմութիւնը կ՝ազանդէ որ մեր նամակագրին յիշատակած երկու ազատրիացի զօրավարները՝ Վալլիս և կոմս Նայպէրկ՝ կը բանտարկուին կայսեր հրամանաւ, որովհետև անմիջապէս զիջաններ էին Պելկրատու հաշտութեան համար Օսմանցւոց կողմանէ ղրուած անարգ պայմաններուն։

Նամակագիրս կու տայ նաև ուրիշ հետաքրքրական տեղեկութիւններ։

Օ[րենեակ]։ Բ[իսուս]։ Բ[րիստոս]։

Գերապայծառ և գերյարգելոյ Տէառն Մխիթարայ Աբբայի Հօրդ վերուստ ընդհանրապահի մեծաւ խոնարհութեամբ մատուցանեմ զօրիսկան ողջոյն և գնունդեան իւրեանց։

*... ի 7 սեպտեմբերի թազեցաք զկոստանդնուպոլսոն ի պէլիկրատան, (որ այլով անուամբ Գարօլինայ կոչի) և անդ էր վերոգրեալ [Լիքտենշտէյնացի] Տէր Մինասն ևս... Ես թերևս զկնի սակաւուց խնդրելոց եմ զներակոյն, զի զվկայութիւն գրիցեն վասն իմ, բայց այժմ ոչ իշխեմ, զի են ի մեծի ալէկոծութեան չուրջ զDominiumին, քանզի որպէս ըստ առակին, Chi compra terra, compra guerra. այսպէս սոքա յորմէհետէ գնեցին զՏօմինիումն 101000 տուգաթով, ոչ ունին զխաղաղութիւն և զհանգիստ, այլ միշտ են ի խռովութիւնս և յաղմուկս։ Եւ ինքեանք վկայեն, թէ յառաջ քան զտիրանալ նոցա տօմինիումին, հանգիստ, ուրախ, և խաղաղ և միաբանք էին քաղաքացիքն, բայց այժմ ներհակն։ Այլ նորագոյն լուր ոչ գոյ ասա վասն անցելոց պատերազմաց, քանզի ասեն թէ խաղաղութիւն է. այսու դաշամբ, զի զպէլիկրատան աւերիցեն, և աւերեալ տայցեն ի ձեռս տաճկաց, և այսու պայմանաւ, զի զբերդն յաւիտեան ոչ չինիցեն տաճիկք, այլ այնպէս աւերեալ թողցեն. և այս զամս 26. ըստ ոմանց զամս 24, և ըստ այլոց զամս 28։ Եթէ այսպէս իցէ՝ ընտսակար խաղաղութիւն է, և մանաւանդ քայքայումն է քրիստոնէութեան քան թէ խաղաղութիւն։ Լուաք թէ Սրբազան փաթին և ամենայն եկեղեցականք, նաև ամենայն Elector.ք ոչ կամին ընդունիլ զորոգայթաւոր խաղաղութիւնս զայս, և ասեն թէ 2 կենէրալք, այսինքն վալիսն և Նայպէրկն են ի բանտի ի վիննա, վասն կաշառակուծութեան. նաև 6 կենէրալք են ի կոստանդնուպոլիս ի պահեստի առ տաճիկն, որպէս զի եթէ կայսրն մեր եղծիցէ զդաշինս կռեցեալս՝ հատցեն զգլուխս նոցա. յանցեալ չաբաթու ասէին թէ զ6000 տաճիկս սրախողխող արարեալք իցեն ի Պէլկրատն, և զայլ անթիւ սուտս ասեն իբրև զճմարիտս, և յետ սակաւուց այլք ստեն զյառաջագոյն ասացեալսն։ ... նաև ճանապարհքն փակք են ղեռ ևս։ 7 ամիս է, յորմէ հետէ վաճառական ոմն Ովանէս Վասիլեան կոչեցեալ, յղեաց զկրոսեր եղբայրն

իմ զկրբուլն (որ է Զատիկն) ի վիննա մոմով, և ի հոկտեմբերի ամսոյն հազիւ կարաց մտանել ի վիննա բազմաւ նեղութեամբ, և չատ ծախսիւք։ Միայն 5 անգամ և ի 5 տեղիս պահեալ է զգօնդումաձիա, այսինքն գնազարէթ, թող գայլ աշխատանս և զծախս. և որպէս լուեալ եմ, միայն սակս մտանելոյ ի ներքս տուեալ է գ30 ոսկիս ունկարիս։ Եւ պատճառն է, զի դեռևս երկնչին ի մահտարաժամէ, զի տակաւին մեռանին ի տեղիս տեղիս ի դրանսիլվանիա, նաև ի սիպին 12 տունս փակեալք են. բայց ի մեծ մասնէրք ի բազում տեղիս մեռանին. Տէր Յիսուս զերծուսցէ զամենեսին։ ...

Մնամ պատրաստական ամենայնի
Նուաստագունեղ ծառայ
Հ. Թէոդորոս Ցով[հ]աննիսեան
Կրօնաւոր ի կարգէ Ս. Ա. Աբբայի

Ցամի Տեառն 1739
Նոյեմբերի 1
ի Կեռլայ

ՂԴ.

Համառօտ թուարկութիւն մը կը գտնենք՝ Պելկրատի ձախորդութեամբ Հայ ժողովըրդի գլխուն հասած փորձանքներուն։

Գերապայծառի և գերայարգ Աբբա Հօրդ վերուստ
տեառն տեառն Մխիթարայ վարդապետի

... արդ Պէլրղատու որպիսութիւնն այսպէս եղև. այսինքն որքան եկեղեցւոյ անօթք գոյին թէ արծաթեղէնք [արծաթեղէնք] և թէ գրեանք բոլոր ազատեցաւ. ևս մեր խցին եղեալ գրեանքն բոլորն բերին վարատին. ապա զոմանս արտարոց իրքն մնացին, այսինքն սօչկները, բարձեր, վասն այնորիկ այժմ վարատին ոչ ունելով զմահիճս, մին զատի մէջ չերդ լցինք վասն ննջելոյ։ Այլ ևս մին փաւուլի մէջ եդինք զոմանս իրս, այսինքն մի քանի փոքր գրեանք, և արտարոց բաներ. եղբայր Յանէզիզն ասաց բերէք մեր մաղազան. և եդինք անդ. մին քանի անձինք իրքն իւրեանց եղին անդ թէ ապահով տեղ է։ Եւ մեք որքան իր որ կարէինք տարանք վարատին. զկնի 15 աւուր մեծ նեղութեան միջի որ անկաւ բէլըրղատ, սօլտաններն մաղազային երկաթէ դուռն կոտորեն որ ինչ մէջ գոյր թալանեն, և այսմ ժամանակի ես ծանր նեղութեան մէջ էի, որ ոչ կարացի փոքրաւորն յղել, վասն այն՝ այն իրքն կորեան. զարձեալ ոմանք անձինք հայոց մնացին բէլրղատ և ոմանք տնով գնացին դմըշվար, և ոմանք պիւտին, և ոմանք զիւղօրէք. բայց մեծ մասն հայոց վարատին է...։

Գերյարգելութեան քում մնամ պատրաստական յամենայնի։
Նուաստագունեղ ծառայ
Հայր Ցակոբ

1739
Նոյեմբերի 7
[վարատին]

ՂԵ.

Երուսաղեմի Ս. Ցակոբայ վանքին նկատմամբ վիճուած հարցին շուրջ, յետ երկու տարուոյ, այս անգամ նորութեամբ մ'է որ կը զբաղի Հ. Պօղոս վարդապետ։

Յիշատակուած Գրիգոր վարդապետը՝ Գրիգոր «Շղթայակիր» կոչուող Երուսաղեմի պատրիարքն է. իսկ «հրեշտակ»ը՝ Գաղղիացւոց դեսպանը։

Նամակին այն կէտերը՝ որոնք կը շօշափեն ակնարկուած խնդիրը՝ իրենց համապատասխանը մեր ազգային պատմութեան մէջ հետևեալ կերպով կը գտնեն. «ի նոյն « աւուրս տակաւին ի կոստանդնուպոլիս էր Գրիգոր Պատրիարգ Երուսաղէմի, և « սպասէր դիպող առթի՝ առնուլ արքունուստ գիր հաստատութեան վասն տեղւոյ « սրբոյն Յակոբայ. քանզի հանապազ կասկածէր ի գրգռութենէ յունաց։ Ապա նա « ինքն Գրիգոր և Յովհաննէս պատրիարգ և այլ մեծամեծք հայոց ընդ նոսա՝ միաբանեալ դիմեցին առ սեսպանն գաղղիացւոց. և ի միջնորդելոյ նորա եւ նոր հրովարտակ (կամ հատոիշէրիֆ) ի սուլտան Մահմուտայ վասն երից ազգաց եւս. « այսինքն հայոց, յունաց և լատինացւոց. յորում հրովարտակի հրամայիւր, զի որ « ինչ կայր ցայնժամ ի ձեռս հայոց յԵրուսաղէմ, և որ ինչ ի ձեռս յունաց և « լատինացւոց, նոյնպէս մնասցէ ի ձեռս նոցա, և մի՛ փոխեսցի, և մի՛ եւս լիցի վէճ « ի վերայ այսր »[1]։

Գևրապայծառի Տեառն Տեառն Մխիթարայ Աբբայիդ Հօր մերոյ

.... Ընթերցեալ զթուղթն՝ յորում ծանուցեալ էիր յազատութենէ տկարութեանդ՝ մեծապէս զփառս տուաք աստուծոյ, զի վասն մեր և վասն ազգին մերոյ տէրն մեր պահպանեալ է զգերյարգելիդ մեր։... ուրախացաք ի վերայ գեղեցկութեանց նորակերտ չինուածոց մենաստանին մերոյ, զորոց գրեալ էիր։ Տացէ տէր, զի ի կենդանութեան քում զբազում այլս մենաստանս նորակերտս տայցես կերտել, և զորիս քոյս ի նոսա զետեղել։... զմի գիր գրեցէք առ տուզօղլու յօհաննէս աղայն վասն հաստման առ ձեզ հարիւր զռուշնոց միոյ կանդեղի, զոր յղեցի ընդ մի[նի]ստրօ տի գազայի հրեշտակին մերոյ....։ Դիտելի է, զի երեք ամ յառաջ սուրբ յակոբայ թուղթքն առնանեցեալք եղեն յազգէն հայոց, և տրեցան ֆռանգըզ թագաւորին. յայսմիկ ամի ձեռամբ հրեշտակին տրեցաւ հայոց մի հաթթիշերիֆ ի գրանէ տաճկաց՝ որպէս զի այնու որպէս առաջն տիրիցեն սուրբ յակոբայ. բայց առաջինք հաթթիշերիֆք մնաց ասեն մօտ ֆռանգիզ թագաւորին. և վասն այսորիկ մնացեալ ասեն ի հայոց 4000 ղրչ. և յայսմիկ ամի ասեն գրիգոր վարդապետն գնալ յերուսաղէմ։ Եւ զհրեշտակէն յոյժ զոհք են հայք. և վասն մեր ուղղափառացս ասի արարեալ զմեծ բարերարութիւնս. բայց տակաւին առ արտաքս չէ՛ բացայայտ եղեալ. և լինի թէ ըստ որում ասի՝ ի մերձակայ ժամանակի յայտնեսցի. նաև ասի թէ հրեշտակն սպասէ թղթոց թէ ի հռովմայու, և թէ ի ֆռանսայ թագաւորէն ....։ Ցետևեալ գրիգորի տուննն այրեցաւ. և պատճառ այրեցման եղեւ այս. զի տաճկաց զարավէլքն յորժամ եկին ի ճերմակ ծովէն՝ մին ի նոցունց այրեցեալ եղև, և գնացեալ անկաւ ի յայեայ զաբուն, և անտի մինչև ի յենի զաշուի իսկէլէն այրեաց. և նախ քան այրեցումն տան նորա փախեաւ ևս աղախին նորա։ վասն օրսօվայ առային ասի, թէ յետս դարձուցանելոցք իցեն տաճկունք. և պէլկռատն ևս Վենետից է իմիրաթօրին...։ Ընդ կարմիր գլխոյն ևս սոքա հաշտութիւն արարին...։

Գերյարգութեան ձերում

Նուաստագունեղ ծառայ

ս. տ. ս. Հայր Պօղոս վարդապետ

Ցամի Տեառն 1740
և յունվարի 29
[կ. Պոլիս]

ՂԶ.

Շահեկան ծանօթութիւններով կը նկարագրուի հետագայ թուղթին մէջ Պելկրատու Միխիթարեան անբախտ քարոզչին և անոր հօտին աստանդական կեանքը։

---

1. Ջամչեան, Պատմ. Հայոց. Հատոր Գ. էջ 823։

Գերապայծառ և Գերայարգ Աբբա Հօրդ մերում
Տեառն Տեառն Մխիթարայ Աստուածաբան վարդապետի

Բազմաւ յարգութեամբ և ըղձալից փափագանօք ի հեռաստանէ աստի իբրև ի մօտոյ զքեզանցս սրբազանից զգեստուց տեառնդ իմոյ վերոյ գրեցելոյ համբուրեմ. յայտ լիցի, զի մարտի 19. գրեալ տէրութեանդ գիրն ժամանեաց ինձ, և ես գրեցի պատասխանին, ապրիլի 15. արդ այժմ բնակութիւնս փոխեցինք. մին յարմար Կամսէի տուն քիրայեցի. ամիսն մին ոսկի. յեսայի սպասաւորն քովս է, ոչ կամեցաւ ուրեք գնալ. միայն ուտելիքն տամ և ոչ այլ ինչ, զի չանաս թէ զբան ինչ ուսանիլ. ևս հինգ տղայ այլ հայոց քով կարդան. մեր ժողովուրդքն առաջնակաքն և մեծ մասն տեղս բնակին. նշան երևա թէ տեղս Աստոյց են. զի չան էգիզն ունի կամք իւր ընտանիքն վենաւ բերել ասա. աստուածոյ գոհութիւն, ընդ ժողովրդեան սիրով վարինք. և ոչ գոյ այլ և այլ բան. այլևս զկնի գաւակիս տեղոյս եկեղեցւոյ ֆօտն ունիր մեծ հարկաւորութիւն գնալոյ առ եպիսկոպոսն տեղւոյս, քանզի նոր եկեղեցի սկսեցին շինել. ասեն մեզ թէ փոքր եկեղեցին ձեզ կուտանք. ևս ինձ սոսկաց թէ գթեզ հետս տանիմ առ եպիսկոպոսն. վասն այնորիկ գնացինք ի միաբին. գոյր ընդ մեզ վալկօն, որ տաճկէվար լաւ գիտէր, եւս նոցա լուզուն։ Եւ երբ տեսաւ զիս յոյժ սիրով ընդունեաց. երիք օր մնացինք. հացի ժամանակն հանապազ տարաւ ի սեղան իւր. ևս առաւօտն տանիր զահվայ խմելու. եւս իմ վկայականներս կարդաց ևս ինքն. մին լաւ վկայական գիր տուաւ ոչ թէ միայն վարաւինու վերայ այլ և բոլոր մաճառիստանու։ Քանզի ինքն մեծ նշանաւոր արհի եպիսկոպոս է նաև, վարատինու մինչև եպիսկոպոսին քաղաքն. երկու աւուր փոստի ճանապարհ է. մին փող ես ոչ խարճեցի, այլ ֆօտն տարաւ զիս. բայց մին փոքր ընծայ ես տարայ եպիսկոպոսին. ևս յոյժ մարմնաւոր հարուստ է. ևս այլոց եպիսկոպոսաց վերայ իշխէ։ Դարձեալ մեր հայր մկրտչէչն գիր ոչ ունիմ. կարծեմ թէ գնացեալ է անտի. այլ ևս մերայնոց սիրով ողջոյն մատուցանեմ և յաղօթս խնդրեմ։

Գերյարգութեան քում պատրաստական ամենայնի
Նուաստագունեղ ծառայ
Հայր Յակոբ

1740
մայիսի 20
ի վարատին

ՂԷ.

Եր. Տէր կոմիտաս Քահանային մասին կը ներկայացնենք հոս հետաքրքրական թուղթ մը, զոր ժամանակին գրեր է Մխիթարեան նորընծայ քահանայ մը առ իւր ծնողքը, որոնք ժամանակակից են ու ծանօթութիւն ունին եղեր վկային հետ։ Այս կայն մեր նամակագրէն պիտի չսպասենք նորութիւն. այնու հանդերձ մենք կը համարինք որ պարունակուած հարցումներու շարակարգութիւնը ինչ ինչ տեսակէտով ընթերցողաց մասնաւոր ուշադրութիւնը պիտի գրգռէ։

Բարեպաշտօն և յարեկիրօն ծնողաց իմոց տիրացու Ալեանիայիի և Կրբուհի խաթունին և քրիստոսասէր ձաւշոյ իմոյ՝ իսճանայ խաթուն տանտիկնոջն

... Իսկ թէ զուստանէ մերմէ գիտել կամիցիք, աւասիկ ողորմութեամբ տեառն աւարտեալ զփիլիսոփայութիւնն, ի պատրաստի եմք յետ չարաչեաւ միոյ՝ հակաճառիլ ընդ ուսումնակից եղբարս մեր զփիլիսոփայութենէ. և ապա եթէ տեառն կամք իցեն, մտանեմք յուսումն աստուածաբանութեան...։ Այլ ի թղթի ասա զայլ ինչ խնդրեմք, որոյ կատարումն մեզ ցնծութիւն, և երանելոյն տեառն կոմիտասայ վկային՝ պատիւ. վասն

զի հայցեմք գրել առ մեզ՝ եթէ հնար է, զնահատակութիւն երանելւոյ նահատակին այնմիկ. թէ որպէս հալածեցաւ, և կալեալ եղև. թէ որպէս ի բանտ արկաւ. և զինչ էին անուանք նոցա: թէ որպէս յատենի կացուցաւ. և զինչ խօսեցաւ, և որպէս ամբաստանեցաւ և ի մահ վճռեցաւ. ոյք էին դատախազք նորա. և զինչ անուանք նոցա. և թէ որպէս պատուհասեցան և կորեան: թէ որպէս զլխատեցաւ. և զինչ խօսեցաւ ի ճանապարհին. և զինչ ընդ գլխատիլն. և թէ զինչ հանդիպեցաւ զկնի մահուան նորա. և որպէս թաղումն նորա, և այլն ամենայն: Եւ զայս վասն այնորիկ խնդրեմք ի ձէնջ, զի դուք ժամանակակից էք նորա, և կենցաղավարեալ ընդ նմա. մանաւանդ խոստովանահայր ևս էր հանուդ իմոյ խօնճայ խաթունին, որ զբազում ինչ գիտէ զնմանէ, թէ նախ քան զնահատակութիւն նորա և թէ զկնի, յորմէ կարէք տեղեկանալ. և ոչ միայն ի նմանէ, այլ և յայլոց բազմաց, որք են ժամանակակիցք նորա: Ուստի հարցէք ի նոցանէ. և տեղեկացեալ բարւոք ստուգեալ, գրեցէք առ մեզ, որպէս զի յօգուտ մեր և ի պատիւ երանելւոյ նահատակին՝ բարւոք գրեալ՝ պահեսցի. զի և զկնի մեր եկեալքն ընթերցեալ օգտեսցին, և զԱստուած օրհնեսցեն, որ ետ նմա զայնպիսի յաղթութիւն, և մի յանծանօթս ամիսիսցի հրաշալի նահատակութիւն երանելւոյն կոմիտասայ վկային:....

Ազնուամծարութեան ձերում միամ
Ցամենայնի պատրաստական
Նուաստ ծառայ Հայր Մկրտիչ

Ցամի Տեառն 1740
Ցուլիս 19
[Ս. Ղազար]

ՂԸ.

Ջմմառեան Հայ վանքին պատմութեան մասին յոյժ շահեկան վաւերաթուղթ մը կը հրատարակենք ստորև:

Կը գտնենք նախ և առաջ Թաչատուր վարդապետի մահուան լուրը: Նամակագիրը Նիկողայոս վարդապետ՝ իր ժամանակի կրօնական վէճերու շրջանէն մէջ բերելով կ'ըսէ, թէ «տէրն մեր Աբրահամ վարդապետ էջ ի լեռնէն ի հալապ» և այլն, և կը վիճակագրէ նոյն առենի մէկ շրջանը: Աբրահամ Հալէպի եպիսկոպոսն էր, բայց հալածանաց պատճառաւ Լիբանան քաշուած էր և անկէ կը կառավարէր իր թեմը, ապա կ'ընտրուի Ուղղափառ Հայոց Առաջին Դիտապետ «Աբրահամ Պետրոս Ա. Պատրիարք Տանն Կիլիկիոյ» տիտղոսով:

կարևորագոյնը սակայն վաւերաթուղթիս այն առաջին մասն է՝ ուր յիշեալ նամակագիրը – Ջմմառեան Ուխտին Առաջնակաց վարդապետներէն մին – կը ներկայացնէ իր Միաբանութեան սկզբնական կազմակերպութեան շրջանը: Թուղթը գրուած և ուղղուած է ի Ս. Ղազար առ Մխիթարեան վարդապետ մը, որպէս զի սա միջնորդէ Մխիթար Աբբայի առջև, յանձն առնելու անոնց ևս ըլլալու «Ընդհանրական Մեծաւորը», և բաց աստի՝ «զով ոք յիւրոց կրօնաւորաց վարդապետաց տեսցէ, արասցէ.. մեծաւորը» Ջմմառու վանքին, խոստանալով նաև՝ որ այդպարագային պիտի կատարեն անոր առջեւ իրենց ուխտը, որուն պատճէնը հետագայ նամակին կցուած է: կը հաղորդէ միանգամայն, որ եթէ Մխիթար Աբբահայր չվիճանի անոնց աղերսին՝ վախ կայ որ առանց կարծեաց իւրաքանչիւր ոք երթայ «յայլ կրօն: Ոմանք առ կրօնս հռոմոց, ոմանք առ հայոց. ոմանք առ Ֆռանկաց. և ոմանք առ Մարոնոց»:

Թէ ինչո՞ւ Մխիթար յանձն չէ առած: Սոյն առաջարկին ահա այս է իր պատասխանը. «Ցաւիմք զի ոչ կարեմք կատարել... Քանզի կանոն և կացութիւն մեր «հրաման տայ մեզ ի կրօնս մեր ընդունել զայնոսիկ, որք ի պատշաճաւոր հասակի

« իւրաքանչիւր առանձին զան մտանել ի կրօնս մեր. և մեք տեսանելով և փորձելով « զնոսա, յորժամ զտանեմք զնոսա ընդունակս կրօնի և պաշտօնի մերում, առնումք. « և զորս տեսանեմք անընդունակս՝ ոչ առնումք։ Այսու կերպիւ առնուլ հրաման տայ « մեզ կրօնն մեր։ Այլ ո՛չ հրաման տայ մեզ միանգամայն զբոլոր վանք մի ի կրօ« նաւորաց ի կրօնս մեր մուծանել և ընդ իշխանութեամբ մերով առնուլ...» (Թուղթ Մխիթարայ առ Յակոբ Եպիսկոպոս, 1742 փետր. 9)։ Եր. Հիմնադիրս իրրեւ «պատշաճաւոր հասակ» կը դնէ կանոնաց համաձայն՝ իբր տարիք ընդունելութեան՝ «վերնատասան կամ զչորեքտասաներամեայ մանկունս», ու կը նշանակէ յետոյ մի առ մի սոյն սահմանումին պատճառները։

Օրինաւորիւն, շնորհք և ողջոյն յատկապէս մատուցանելով պատուելի եղբօր մերում Պողոսին։ Պաշտպանեսցի զնա Աստուած բարձրեալն։

Ջկնի յոյժ փափաքման մերոյ տեսանելոյ զքեզ ի յամենայն բարւոջ և յառողջութեան շնորհօքն Աստուծոյ մերոյ, երկիւղդ՝ ծանուցանեմք ձերում վերապատուութեան, զի առաքեցաք առ ձեզ յառաջմէ զերկուս ողջունագիրս, այսինքն է միով ամաւ յառաջ քան զայս թուղթս. և ծանուցաք ձեզ վասն եղբօր ձերոյ Աւետիսին, թէ գալոց է առ ձեզ։ Եւ մինչև ցայսօր զպատասխանի ինչ ոչ ընկալաք, ոչ ի ձէնջ, և ոչ ի նմանէ վասն խաղաղութեամբ հասանելոյ իւրոյ. և ի տարակուսութեան մնաց յոյժ միտք մեր վասն նորա, մանաւանդ յորժամ եկն առ մեզ նաւ մի ի վենետկոյ. և էր ի նմա Տէր Դաւիթ մըսըրցին։ Եւ իբրև եկն նա ասա, հարցաք զնա վասն ձեր, այլ նա ոչ ծանօթացեալ գոլով ձեզ, ոչինչ պատմեաց մեզ վասն ձեր։ Եւ լուաք վասն հայր Խաչատուր վարդապետին, թէ փոխեցեալ է առ ողորմութիւնն աստուծոյ բարձրելոյն, և այս մեզ կարի վիշտ եղև։ Այլ տէրն մեր հաղորդս արասցէ զնա հարցն սրբոց, և դուք լիջիք բարիք փոխանորդք նորա։ Գանգի իրաւի պակասեցաւ սիւնն և խարիսխն Հայոց։ Տէր փոխանակ նորա տացէ մեզ զձեր առողջութիւնն և զերկար կեանս։

Դարձեալ ծանուցանեմք ձեզ վասն իրակութեանն հալէպու։ Ամաւ միով յառաջ քան զայս թուղթս՝ տէրն մեր Աբրահամ վարդապետն էջ ի լեռնէն ի հալապ. և ուղղափառքն առին զԱստուածածնի եկեղեցին ի ձեռաց հերձուածողաց, և է այժմ ի ձեռս նոցա յայտնապէս. և հռչակեցեալ է սուրբ հաւատն։ Եւ զկնի վեց ամսոց ժամանակի յետ գնալոյ Աբրահամ վարդապետին ի հալապ, օրհնեաց նա առաջնորդ նոր ի վերայ անթէպու փոխանակ իւր։ Իսկ եթէ հարցանիցէք վասն հաւատոյ, գոհանամք զբարութենէն յիսուսի, է յայտնի. և յամենայնում աւուր երկոտասան պատարագք լինին յեկեղեցւոջ սրբոյ Աստուածածնին. և քարոզ յամենայնում կիրակէի, և տօնի։ Բայց վասն իրակութեանց քաղաքին ծանիք, զի աւերեցեալ է զրկողութենէ խստաբարոյ դառաւորաց. և բազումք մուրացիկ եղեն. բազումք ևս փախեան։ Գանգի եղեալ է աստ նուազութիւն առեւտրոյ, և զրկումն և չփոթումն ի փաշայէն. վասն զի յոյժ բազում առգանս ետուն ի վեր քան զոր միտք հաւատալ կարէ. և կարի թանգութիւն է իրաց։ Ոչ ունին զհանգիստ յիրի իմիք, եթէ ոչ յիրակութեան եկեղեցւոյն միայն. իսկ այլ մնացեալ իրքն՝ զրկումն մեծ։ Տէրն մեր օգնական լիցի նոցա։

Դարձեալ ծանուցանեմք ձեզ վասն մօր քոյ և եղբարց քոց և քրոց քոց։ Ամենեքեան ողջ և առողջ են...։ Խնդրեմք ի բարութենէ ձերմէ, զի ծանուցանիցէք մեզ վասն եղբօր ձերոյ, թէ արդեօք ճար եղև՞ նմա մնալ առ ձեզ՝ թէ ոչ։ Բայց զճշմարիտն ասեմ, կարի մեծ բարիս առնես նմա՝ եթէ չանայցես վասն նորա՝ զի մնասցէ առ ձեզ, և փրկեսցէ զանձն իւր։ Գանգի ի ժամանակիս մերում յայսմիկ ի կողմանէ արևելից բարձաւ ի միջոյ բանս այս՝ Աստ կաց։ Վասն այսորիկ ասեմ ձեզ՝ մի անխնամ թողուցուք զնա ի ձէնջ. և չանացողութիւնն ձեր ունի զբաւականութիւն վասն այնորիկ։

---

1. Թորոսեան, Վաթ Մխիթարայ (Կարեւոր բուղթք եւ նամակներ) էջ 470։

եւ մեք նախապէս գրեցաք առ ձեզ վասն ոմանց իրաց հարկաւորաց. և է այս, զի խնդրիցես ի յաբբայ հօրէն փոխանակ մեր, եթէ կարելի է, վասն եղբարց մերոց կրօնաւորաց, զի միասցուք ընդ ինքեան: Քանզի զոհանամք զաստուածոյ բարձրելոյն, այժմ եղեալ է մեծ վանք ի լերինն լիբանանու, և ունիմք զբաւական ապրուստ. սակայն ոչ գոյ առ մեզ ոք, որ գիտասցէ կառավարել զհոգևոր իրակութիւնս, որ պատկանի առ պահպանութիւն կրօնի. և ոչ գոյ առ մեզ կանոն, եթէ ոչ Մարօնի կրօնաւորացն լիբանանացւոց, և յայտնի ևս ի բաց ձգեալ եմք զոմանս իրս: Եայց քանզի պիտոյ է մեզ զի պահիցեմք զարարողութիւնս և զկացութիւնս մեր, թէև իցեմք ի լերին, վասն զի բազումք ի քահանայից մերոց միշտ չլինին ի քաղաքս և ի գաւառս հայոց յառաքելութիւն, վասն այսորիկ պարտ է մեզ զի պահիցեմք զարարողութիւնս մեր: Ուստի ես գրեցի քեզ վասն իրիս այսորիկ երկու անգամ, զի խնդրիցես ի յաբբայէն, եթէ կարելի իցէ, կամք իւր տալ մեզ զի ներկայացուցանիցեմք նմա զերկուս քահանայս ի մէնջ, և ուխտիցեմք նմա զսուրբ ուխտս, և կեայցեմք ի պահպանութեան կանոնին, որ հաստատեալ է. և օգնականութեամբ աբբային ընթանայցեմք յառաջ յամենայն իրս, մանաւանդ ի հոգևորաց: Զի գոն առ մեզ այժմ աւելի քան զքսան եղբայր նորընծայ. կացեալք են և են ընդունակք ուսման, և սիրեն զայն, եթէ աբբայն առաքիցէ առ մեզ զքահանայ մի, կամ զերկուս, առ ի խրատել զմեզ, և ուսուցանել մեզ զոր ինչ պիտոյ է առ պահպանութիւն կանոնի: Քանզի եղբարքն որ գտանին ի մենաստանի, միամիտք են, և մանաւանդ ի ժամանակէն յորմէ հետէ էլ գնաց տէրն մեր Աբրահամ վարդապետն յաթոռ իւր. ոչ ևս մեզ գլուխ: Ուստի եթէ չանայցես յայսմիկ իրի, և առաքիցես մեզ զբժշկարար պատասխանի ի կողմանէ Աբբային, առնես զմեծ բարի. միայն տայցէ մեզ գկամեցողութիւն իւր՝ զի ներկայացուցանիցեմք ինքեան զերկուս քահանայս. կամ զքահանայ և զաբեղայ մի, որպէս զի կարգադրիցիմք ի նմանէ, և միանայցեմք ընդ նմա: Եւ զով ոք ի յիւրոց կրօնաւորաց վարդապետաց տեսցէ, արասցէ ի վերայ մեր մեծաւոր ի վանս մեր, որ է վանք փրկչին աշխարհի: Եւ եթէ կատարեսցի այս, եղիցի ձեզ վարձ և հատուցումն յաստուածոյ. և եղիցիք չահեալ զմեզ և փրկեալ զանձինս մեր ի յամենայն որոգայթէ: Քանզի յիրաւի ով եղբայր իմ, ունիմք ի յայս վանս իւրաքանչիւր որն զքսան աւր, որն աւելի, և որ նուազ. և ոչ գիտեմք, թէ յորո՞յ իրի վերայ եմք: Միայն ուխտեմք զմեծ ուխտ վարդապետին՝ յեկեղեցւոջ. և բաց յայսմանէ զայլ ինչ ոչ գիտեմք: Եւ այս է պատճէն ուխտին մերոյ որ արդ հասանի առ ձեզ. ներկայացուցէք զնա աբբային, և տեսանիցէք թէ զինչ է բան նորա: Եւ եթէ ոչ եղիցի մեզ ճար ի կողմանէ ձերմէ, առանց կարծեաց իւրաքանչիւր ոք ի մէնջ երթայ յայլ կրօն: Իմանք առ կրօնս հռոմոց, ոմանք առ հայոց, ոմանք առ Ֆռանկաց, և ոմանք առ Մարօնոց: Եայց մեք քահանայքս որք եմք առաջակայք, բաղձանք մեր է միանալ ընդ կանոնաւ հայոց և ազգի մերոյ. զի լիցի բարին ազգին մերում, և ձեզ մշտնջենական անուն՝ զի հոգացիք զմէնջ: Եւ եթէ Մխիթար աբբայն դիցէ զձեռն իւր ի վերայ մեր, ոչ լինի նմա ծախել ինչ ի մարմնաւոր գոյից. բայց միայն ի հոգևորաց. և լինի ընդ հնազանդութեամբ նորա. և ինքն լինի ընդհանրական մեծաւոր մեր, և ոչ ոք ի մէնջ հակառակի նմա յիրի իմիք. և որ հակառակ կացցէ և ոչ ընդունելսցի զդատիլն իւր ի նմանէ, խսկայն ի բաց ընկենումք զնա ի մէնջ: Եւ արդ մեք ակն ունիմք ի ձէնջ՝ թէ առաքիցէք մեզ զբժշկական պատասխանի վասն այսորիկ: Եւ մի մոռանայք զմեզ յաղօթից. Տէրն մեր երկարեսցէ զկեանս ձեր, և տացէ ձեզ զարքայութիւնն երկնից, որք հրաժարեալք էք յաշխարհէ վասն նորա: Եւ ընծայեսջիք ի մէնջ զհամբոյր ձեռաց Մխիթար աբբային, և ասասջիք նմա, թէ մեք եմք որս մեծ՝ և է ի սմա փրկութիւն անձանց. ուստի մի՛ զանց արասցէ զմեօք. մինչ ինքն է հայ յազգէ մերմէ, պարտաւորեցեալ է առաւել զմէնջ, քան թէ զայլոց: Եւ մատո ի մէնջ զբազում ողջոյն մնացեալ հարցն մերոց քահանայից, և եղբարց պատուելեաց. նաև եղբօր քում Աւետիսին:

Ցեգիլաոս

Ցամի տեառն 1740

ի յուլիսի 25

Եղբայր ձեր

Նիկողայոս վարդապետ [Գրիգորեան]

Պատճէն և օրինակ ուխտին

Ցանուն հօր և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. Ամէն։

Լուր ինձ Հայր սուրբ, անարժան ծառայիդ, որ եմ տկար ամենայնի, բայց չնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ուխտեմ յօժար կամօք իմովք առաջի Աստուծոյ, և Սրբուհւոյ կուսին Մարիամու. և սրբոց հրեշտակապետաց. և ամենայն սրբոց և սրբուհեաց, մանաւանդ առաջի պահապան հրեշտակի իմոյ և յատուկ Աստուածամօր միշտ կուսի, որ է պաշտպան իմ։ Եւ եւս առաջի Գերապայծառ Տէրութեանդ, և առաջի վեր բապատուելի հարց և եղբարց ներկայից յանձնեմ և նուիրեմ զիս աստուծոյ, Նախ ուխտեմ զողջախոհութիւն առ ամենայն զգայարան իմ ներքոյ և արտաքոյ։ Երկրորդ՝ ուխտեմ զհնազանդութիւն յատուկ եպիսկոպոսիդ իմոյ յամենայն գործութենէ հոգւոյ և մարմնոյ։ Երրորդ՝ ուխտեմ զաղքատութիւն կամաւոր զամենայն կեանս իմ։ Եւ դարձեալ, խոստանամ ուխտեմ և երդնում պահել զհաւատն սրբոյ Եկեղեցւոյն Հռոմայ, որ է կաթուղիկէ և առաքելական. և ըստ կարողութեան իմում ուսուցանեմ։ Յօժար կամօք հաճեցայ զայսոսիկ. Օգնեսցէ ինձ Աստուած. Ամէն։

Ցամի տեառն, 1731 ի սեպտեմբերի 8

Ի Տօնի Ծննդեան կուսին մարիամու աստուածամօրն։

ՂԹ.

Կարճառօտ նամակ մը, որ բայց ի զորովանքի գեղեցիկ արտայայտութենէ մը առ Մխիթար, կը ներկայացնէ մէկ երկու դէպքերու հետ ազգային սովորութիւն մը Գլուժի հայ գաղութին մէջ։

Ո· Ց· Ք·

Գերապայծառի և Գերյարգելոյ տեառն Մխիթարայ Աբբայի Հօրդ մերում մեծաւ խանութիւնբեամբ մատուցանեմ գողչոյն, և այլն.

Որպէս մեղուն փափաքի զարնանային և ամառնային ծաղկանց, զի անտի ծծիցէ գթաղցրութիւն մեղրն, նոյնպէս և ես տառապեալս փափաքիմ գարնանային և ամառնային քարոզից Գերյարգելութեանդ, որպէս զի անտի ծծիցեմ գթաղցրութիւն մխիթարութենեան...։ .. մի քարէզն Գերյարգելութեանդ (թէպէտ և իցէ կշռամբողական) արժէ ինձ աւելի քան զհազար Աստիճսպօլիս և Իլիզապէթպօլիս։... այժմ վերստին սկսեալ է ժանտամահն ի հունկարիայ, և առաւել քան զառաջինն արգելեալք են ճանապարհքն։ Ի պէջէն կարեն անցանել առ մեզ առանց զօնդօմացիայի. բայց ասի ոչ կարեն անդր անցանել։ Իսկ Հայք բազմիցս գնան ի պէջն Բօշդայով...։ Վեր տէր Նիկօլն վաղճանեալ է...։ Աստ թանկութիւն հացի է, և սիրոյ և միաբանութենեան մանաւանդ ի մէջ հայոց...։

Պատրաստական ամենայնի
Նուաստագունեղ ծառայ
Հ. Թէոդորոս Յովհաննիսեան
Կրօնաւոր ի կարգէ Ս. Ա. Աբ.

Ցամի Տեառն 1740
Օգոստոսի 7
Ի Գլուժին սէմինարն

P: S: Ց։ Գ։ Ցայսմիկ ամսոյ 15ին ի տօնի Վերափոխման սովորք են գալ ի գլուժն հայք Թափօրիւ ի Կեղայէն և ի Պաշֆալովէն, և լիակատար ներողութիւն չեկեղեցին Ճէզվիթեաներուն. վասն որոյ Ճէզվիթայքն ամսով յառաջ խնդրեցին զիս նախապատրաստիլ առ ի հայնակ գթարոզ ասել ի նմին աւուր. և սկսեալ էի նախապատրաստել գթարոզ։ Բայց ասի եւս եհաս նախանձ բանսարկուին. քանզի դրդեաց զՏէր Նիկօլն զօտէրաշեան գալ ի գլուժն, և խնդրել վասն քարոզութեան, զի մի այլ ոք քարոզեսցէ, այլ ինքն։

Ճ.

Շատ մը տեղեկութիւններ կու տայ Հ. Թէոդորոս զանազան նիւթերու շուրջ, որոնց կարգին կը գտնենք նաեւ Մեսրոպեան վարդապետ Լեհացւոյ (Ռոշքայի) մահուան գուժը։ Եթէ ստուգիւ հետագայ նամակին գրութեան թուականին (1740ին) վախճանած համարինք՝ դեռ տարի մը երկարած կ'ըլլայ անոր արդիւնաշատ կեանքը[1].

0։ Ց։ Բ։

Գերյարգելոյ, և. Գերիմաստի Տեառն Միխրտայ Աստուածաբանութեան վարդապետի, և. սրբազնեղի Հօրդ վերուստ ընդհանրապետի, արարուր անկեալ՝ գոտս ճանապարհով մատուցանեմ գողչոյն, և. այլն։

. . . . մինչ ես էի կեղայ՝ եկն բարդուղիմէոս վարդապետն ի կեղայ յանձնարարական գրով Նունցիոսին, և կամի բնակիլ անդ, ոչ որպէս հոգաբարձ քահանայ, այլ իբրև զնկն, որում կայսրն վճարէ յամէ ամ զ100 տուգաթ, և այժմ վճարեալ է նմա զհաչիւ երից ամաց զ300 տուգաթ։ Աստէն մեծ նուազութիւն գոյ հացի և գինւոյ, զի եղեամն և հեղեղք անձրևաց տապականեալք են զարտերայս և զայգիս։ Գանգի 16 օխայ ցորեանն, որ լատիներէն ասի Metreta, այժմ յաւուրս հնձոց, յորժամ ցորեանն է առատ՝ 16 օխան կամ մի metretaն վաճառի 6 լիտրէ, այսինքն 24 թռայըր.։ Ի կողմանէ խաղաղութեան, ոչինչ հաւաստի լուր գոյ, քանզի ինքեանք իսկ զինուորական պաշտօնատարք տարաձայնին ի միմեանց. քանզի ոմանք ասեն. Լինի հաւաստի խաղաղութիւն ի մէջ ալամանին և տաճկին. իսկ ոմանք ոգեն զհակառակն...։ Բազումք մաճարք սեպուհք խնդրեն զիս գնալ առ նոսա առ ի լինիլ զաբէլլան. բայց ես պահելով զերբաստս և զկանոնս Գերյարգելութեանդ՝ ոչ կամիմ գնալ առ նոսա։ ... Մեսրոպեանս վարդապետն Լէհացին վախճանեցաւ։ Եւ Տէր սիմէոնն կամի գնալ անդ, և ասաց ինձ, զի եթէ կամիցիմ՝ գնայցեմ և ես ընդ նմա։ Ես իբրև յօժարութեամբ գնայցէի, թէ ունիցէի զհրաման ի Գերյարգելութենէդ...։ Ցոյժ ուրախացայ յորժամ լուայ զաւարտումն չինուածոց մենաստանին...։ Վեր. Տէր Մինաս Աւագէրէցն կեղայու իբրև լուաւ յինէն, թէ վախճանեալ իցէ խաչատուր վարդապետն, հրամայեաց հնչեցուցանել զզանգակս, և զձայնաւոր պատարագ ասաց վասն հոգւոյ նորա. նաև եղբայրն իւր Վեր. Տէր Սիմէոնն։...

Նուաստագունեղ կրաւոյ
Հ. Թէոդորոս Յովաննիսեան
Կրօնաւոր ի կարգէ Սրբոյն Անտոնի Աբբայի

Յամի Տեառն 1740
Հոկտեմբերի 25
ի կեղայ

ՃԱ.

Մեսրոպեան Ռոշքայի երկասիրութիւններէն ամենէն կարևորն ու յարգին կրնանք համարիլ Հայ–Լատին և Լատին–Հայ իր ընդարձակ երկհատորեան Բառարանը։ Անոր կազմութեան նկատմամբ հետեւեալ վաւերաթուղթը մասնաւոր արժէք և կարևորութիւն մ'ունի, որովհետեւ մեր նամակագիրը յոյժ շահեկան ու մանրամասն տեղեկութիւններ կու տայ։

---

1. Ջարպհանալեան՝ մահուան թուական նշանակած է 31 հոկտ. 1739 (տե՛ս Բ. Նոր Մատենագրութիւն, 1905, էջ 337)։

Հրատարակութեան առաջարկը որ եղած է առ Մխիթար՝ արդիւնքի մը չէ յանգած, ու պատճառը ծանուցանող որ և է թուղթ մ՚ալ չունինք ձեռքերնուս տակ։ Մեր Մատենագրութեան ծանօթ է սակայն, որ Ռուքքայի այդ երկասիրութիւնը ցայսօր անտիպ կը մնայ. իսկ բուն բնագիրը կը գտնուի Վիեննայի Մխիթարեանց Մատենադարանին մէջ «Գանձ Հայոց Լեզուի կամ Բառարան Յաեփանեան» տիտղոսով[1], իսկ Ս. Ղազարու Ձեռագրատան մէջ կայ ուղղակի անոր վրայէն 1840ին կատարուած օրինակութիւն մը մեր Հարց կողմանէ։

Ո։ Ց։ Բ։

Գերապայծառի և գերյարգելոյ Տեառնդ Մխիթարայ Աբբայի Հօրդ մերոյ ճատարակի՝ մեծաւ իմաստասիրութեամբ մատուցանեմ զոյդիսական ողջոյն, և այլն։

Ցայտ առնեմ Գերյարգելութեանդ, զի Հոկտեմբերի 25ին յղեցի զգիր մի աստի ի Կեղայէն առ Գերյարգելութիւնդ, և ծանուցի ի նմին զորպիսութենէ իմմէ, և թէ գնալոց եմ ի Պաչքալով։ Բայց մինչեւ ցայս վայր ոչ կարացի չուել աստի, ոչ վասն այլոյ պատճառի, քան վասն դժուարահոծ և անհնարին և անպատում ցեխալից ճանապարհաց, որք զարհուրեցուցանեն զմարդն ի յելանելն ի տանէն. և այս ոչ միայն ի քաղաքս և ի գիւղս, ի դաշտս և յանդաստանս, այլ նաեւ յանապատս և ի լերինս, և յամենայն ուրեք լիք են ճանապարհքն ցեխիւ և չաղախով։ Եւ պատճառ սորին է, զի 3 ամիք են, յորմէ հետէ գրեթէ յամենայնում աւուր անձրեւեաց յառաւօտէ մինչեւ ցերեկոյ, և յերեկոյէ մինչեւ ցառաւօտ. և այսպէս՝ հաշուեա թէ փտեցաւ գետինն, և պատառեցաւ երկիր։ Եւ վասն այսորիկ ամենայն ինչ տասնապատիկ թանկ է քան յառաջն, զի ցորեանն ի դէզսն ծլեալ է և փտեցեալ, և այլն... ...։ Գերյարգելի Տէր Աւագէրէցն Ամենօպօլսոյ, այսինքն Վերապատուելի Տէր Մինասն Թորոսեան, և իւր եղբայրն Վեր. Տէր Սիմէոնն մեծաւ սիրով և խոնարհութեամբ զողջոյն մատուցանեն և խնդրեն գիր ինչ ի Գերյարգելութենէդ։ Իսկ խնդիրքն այս ինչ է. զի (որպէս յառաջագոյն գրեցի) ողորմած հոգի Ստեփաննոս Վարդապետն թողեալ է զկնի իւր զանչնչելի յիշատակ, զպատուղ աշխատանաց երեսնից ամաց, այսինքն զազնիւ, զմեծագին և զյոյժ պիտանի գիրք իմն, յորում աշխատեցաւ գրեթէ զամենայն աւուրս կենաց իւրոց։ Ասեմ աշխատեցաւ. քանզի անխոնջ աշխատանօք զ30 ամս երկասիրեաց ի վերայ նորա։ Եւ այս է Բառգիրքն երկուց լեզուաց, այսինքն Հայկականի և Լատինականի. և է Գանձարան ամենայն բանից, մեծաւ արհեստիւ հաւաքեցեալ ի անթիւ գրեանց հայկականաց, և մեծագունիւ արհեստիւ կարգաւորեցեալ և զետեղեցեալ ի սեպհական տեղւոջ, այսու կարգաւ. քանզի ի նմին՝ նախ դնի բառն հայկաբանական, յետոյ մեկնի հայկաբանօրէն, և ի վկայութիւն բերի հեղինակն և գիրքն, յորմէ արտահանեցաւ բառն, նաև զանազան զգացմունքն, ի յորս առնուի ի զանազան տեղիս։ Զկնի սորա դնին նաև բառք աշխարհականք, որովք առաւել բացատրի գրաբառն, հուսկ յետոյ դնին բառք լատինականք հանդէպ Հայկականին, որպէս վկայէ Վեր. Տէր Սիմէոնն, որ եղև ականատես զամս բազումս, մինչ էր աշակերտ վերոգեցեալ Ստեփաննոս Վարդապետին։ Եւ կարծեմ թէ է այնպիսի գործ, մինչ զի յազգի մերում ոչ երբէք եղև, նաև ոչ կարծեմ թէ լինելոց իցէ, որպէս վկայէ վերոգեցեալ Վեր. Տէր Սիմէոնն. ես թէպէտ ոչ տեսի զայն ցայսվայր, զի է ի Լէհաստան։ Զսա ամենայն յանձնեն, նուիրեն և տեառնագրեն Գերյարգելութեանդ և Մենաստանին մերում, և խնդրեն զի հաճիցէ Գերյարգելութիւնդ ի լոյս ածել զնա ի ձեռն տպագրութեան. և ինքեանք զծախս ճանապարհին արասցեն, մինչև գիրքն հասանիցի ի Մենաստանն մեր. և թերևս

---

1. Տաշեան, Ցուցակ Ձեռագրաց, Հա. Ա. Գիրք Բ. Քիւ 6, էջ 22։

նաև օգնեսցեն այլոց ծախից տպագրեցմանն, եթէ Գերյարգելութիւնդ յանձն առնուցու տպագրել։ Եւ պատճառաւ սորա կարեմք նաև զայս ազնիւ և սակաւագիւտ գրեանս գտանել և ստանալ, քանզի վ[եր]. Տէր Սիմէոնն գնալոց է յայսմիկ ձմեռան ի Լէհաստան առ ի բերել զբաւգիրքն. և (որպէս ի միւս թղթին գրեալ եմ) եթէ կամք իցեն Գերյարգելութեանդ՝ գնացից և ես ընդ նմա անդ, զի որպէս յուսադրեն զիս՝ կարեմ զբազում ազնիւ գրեանս անդէն շահել։ Ամենայն խնդրեմ, և նոքա ի միասին խնդրեն, զի հաճիցի Գերյարգելութիւնդ չուտով յղել զպատասխան գրոյս, որպէս զի կարիցեն բարեպէս տրամադրել զայսմանէ իրէ։ Խաւսցի այսքանս։ Եւ այսու մնամ Գերյարգելութեանդ պատրաստական յամենայնի

Ղուաստազունեղ Ք[րիստ]ոս
Հ. Թէոդորոս Ցովաննիսեան
կրօնաւոր ի կարգէ սրբոյն Անտոնի Աբբայի

յԱմի Տեառն 1740
Դեկտեմբերի 4
ի Ամէնոպոլիս

ՃԲ.

Վախճանեալ Պատրիարգն է Բաղիշեցի Ցովհաննէս կոչոտ։ Ասոր մահուան և տպա յաջորդին զահակալութեան մասին Ջամչեան ևս ճիշդ նոյն կերպով այսպէս կ'արտայայտուի. «ի յաջորդ ամի անդ (1741) եհաս վախճան կենաց յովհաննու «պատրիարգին յամսեանն փետրվարի. և մեռաւ զգաստութեամբ և բարի մահուամբ. «և թաղեցաւ առ դրան եկեղեցւոյ լուսաւորչին. և ի նմին իսկ աւուր զգեցաւ յակոբ «նալեան յարգունի դրան զգեստ Պատուոյ իշխանութեանն, և նստաւ հանդիսիւ «յաթոռ պատրիարգութեան»[1]։

Մեր վաւերագիրը կը յաւելու նաեւ իրր մանրամասնութիւն վերոյիշեալ դէպքին՝ հետաքրքրական կարգադրութիւն մը և անոր մէկ հետևանքը։

Գերյարգելիոյ տեառն տեառն Մխիթարայ Աբբայի Հօր վերոյ

. . . Պատրիարգ կոստանդինիալօլսոյ յօհաննէս վարդապետն ի փետրվարի ամսին անդրափոխեցաւ աստի կենաց ի ժամն լուսաւորչաց և անդ թաղեցաւ. և ի տեղի իւր եղէ պատրիարգ նալօղլու յակօբ վարդապետն։ Արդ՝ յորում աւուր վա[խ]ճանեցաւ պատրիարգն, ի նոյնում աւուր հազաւ զկապայ ի դրանէ. և յօրէ յայնմանէ հրամայեցաւ ամենից եկեղեցաց մինչեւ ի քառասուն օր բաց պատարագ առնել վասն հոգւոյ պատրիարգին։ Բայց ի սուլտանանաստր պատմաճը օղլու կոչեցեալ ղժոխքերանն՝ ասելով օրինազանցութիւն բաց պատարագ կատարելն ի քառասնորդական պահոց, գոց պատարագ արարեալ է. և ի միւսում աւուր կոչեցեալ ի նոր պատրիարգէն առընթերն, զբազում նախատինս ընկալեալ է ի նմանէ. նաև արգիլեալ զնա յաւիտեան յեկե[ե]ցին ոչ զծանուցումն առնել և ոչ զքարոզ տալ. և եղբօր նորա տէր մարտիրոսին չնորհեալ զմի փիլոն նախագահ արարեալ է զնա։ Մարտի 9 փիղ անցուցին ի ուսկուտարու ի պէշիկտաշ, զոր բերեալ եղեւ դեսպանն կարմիր գլխոյն. և ինքն դեսպանն տակաւին է ուսկուտար. և մուշտակի դեսպանն ի մաքրգեղն է . . .

Գերապայլութեան ձերում
Ղուաստազունեղ ծառայ
Ս. տ. ս. Հայր Պօղոս վարդապետ

Յամի տեառն 1741
և մարտի 10
[կ. Պոլիս]

1. Ջամչեան, Պատմ. Հայոց, Հտ. Գ. էջ 824։

ՃԳ.

Կ՝արժէ հրատարակել հետևեալ նամակը, պարզապէս տալու համար Հալէպի մէջ տեղի ունեցած կրօնական բաժանումի անդրանիկ շրջանէն գլխաւոր մէկ բանի կարգադրութիւնները։

Աչվենապայծառ և գերյարգելի տեառն տեառն Աբրահամ Մխիթար Աստուածաբանութեան վարդապետին կեանք երկար

... Թէ քաղաքիս և եղբայրութեան որպիսութիւնն հարցանիջիք, յետ բազում նեղութեան հալածանաց և տուքանաց, ձերին սուրբ աղօթիւք մօտ Գ ամ է որ ի փոքր եկեղեցին սուրբ Աստուածածին յայտնի ուղղափառութեամբ վարիմք. սուրբ Աստուածն թարց խաչեցարիւ, Գ անուն հերձուածոց ոչ յիշեմք. կաթողիկոսին անուան տեղ սուրբ Գրիգոր լուսաւորիչն յիշեմք. ամէն օր ի պատարագ լինի, կիրակիք և տօն աւուրց աւելի լինի.. մեր հալապեցի Ակոբ վարդապետն եպիսկոպոս ձեռնադրեցաւ Բերիոյ և սահակ վարդապետն քիլիսու եպիսկոպոս եղև և տէր մարգարն մէրտինու եպիսկոպոս ձեռնադրեցաւ ի Հալէպ և Գերապայծառ Աբրահամ եպիսկոպոսն՝ կաթողիկոս եղև Հայոց. և քաղաքացիքըն մեր հօճէթ և արզ ալարին սիսու կաթողիկոսին աւրութեան. և ակոբ վարդապետին անուան պէրաթ և ֆէրման խընդրեցինք՝ խքրազ լինելու ի սիսու աթոռէն, և մին մարդ յղեցաք ըստանալ որ ֆրանսացոց յելչիյին ձեռօքն բանն լինելու, և նայ օր օրէ ձգելով պատրիարգէն կաշառ էառ և մեր յղած արզն պատրիարգին տալու, թէ ձեր բանն կու չինէ ձեր ուզածին պէս և նայ... ավէտիք անուան պէրաթն արաւ, մեր արզովն եկ ի հալէպ չար աբեղան պէրաթով զաբթ արաւ աստուածածին եկեղեցին. յետ Բ ամաց մնաց ձեռքն ի օր. Զ քէսայ բրամ վատնեաց մինչ եմուտ եկեղեցին. յետոյ.. կրկին և մեք ի քէսայ բրամ վատնեցաք՝ հօճէթիներու և ֆէթուաներու պուրթիներու մուճալով (?) որ ունէաք առաջմանէ՝ զի աղօթիցեմք ընդ քահանայիւք մերով. որպէս կամիմք սուրբ աստուածն թարց խաչեցարի և Գ անուն ոչ յիշել կրկին պիտուրթի եղև մեզ աղօթել որպէս որ էաք, բայց չար ավետիք աբեղան միշտ հալածում յարուցանէ ի վերայ եղբարց. երբէք ոչ հանդարտի ի չարէ. գիշեր և ցերեկ ի դուռն բանաւորաց է. երբ տեսաք թէ ոչ հանդարտի ի չարութենէ այժմ կրկին արզ արարիմք նորա աւրութեան թէ քան զսիսու կաթողիկոսն ալ առաւել չար և վնասակար է, կամիմք զակոբ վարդապետն պէրաթով ի վերայ մեր զի քաղաքացի յէ և գիտէ որպիսութիւն մեր և յղեցաք արզն մեր վէքիլ եղեալ մարդու և սպասեմք պէրաթին գալստեան...։ Ֆրանսացոց հին յելչիյէն բազում վնաս կրեցաք արզին կողմանէ, որ պատրիարք թէլում արաւ և գմեզ խեղճ ողորմելի արաւ և գերի պատրիարքին...։ Դարձեալ Գերյարգելի հայր իմ միշտ ցանկամք զի ի քաղաքէն մերոյ մին քանին գտանիցի ի ձեր միաբանութեան...։

Գերապայծառ և գերյարգելի հայրութեանդ
Ամենայնի խոնարհագունեղ ծառայ պատրաստական
Գէորգ Քառաքէլեան

Ցամի տեառն 1741
յունեան օգոստոսի
ի Հալէպ

ՃԴ.

Մեր վանական պատմութեան ու նաև ազգային գեղարուեստի կեանքին ի նպաստ հետաքրքրական ու միանգամայն զուարճալի թուղթ մ՝է հետևեալը, որուն առարաջրողն է «պատկերահան Յովհաննէս»։ Այս անձը ծանօթ է արդէն Մխիթարեայ Հասատութեանս, որոյ մէկ աղօթավայրին, այն է Ս. Բենեդիկտոսի մատրան խորանին

համար գծած է, — Հիմնադրիս առաջարկով, — նոյն Սուրբին Նկարը, որ ցայսօր պահուած է։ կը խօսի նաև Ս. Յովսեփեայ պատկերի մը շինութեան մասին, որ անշուշտ վաղբիս Աւանդատան համանուն խորանին պատկերն ըլլալու է։ Սոյն պատկերներէն ոչ մէկն իր վրայ նկարչին անունը կը կրէ։ Ս. Բենեդիկտոսի նկարի մասին Մխիթարայ վարուց կենսագիրները և թէ Մխարանութեանս նախկին արձանագրութիւնները կ'ըսեն արդէն, որ Յովհ. պատկերահանինն է. սակայն կը լռեն բացարձակապէս Ս. Յովսեփեայ նկարի մասին։

Հայ արուեստագէտիս թուղթին մէջ կը գտնենք նաև յիշատակութիւն մը Ղասեմանիի մասին, սակայն առանց անուան, որով չենք կրնար հաստատապէս ըսել թէ ո՞ր Ղասեմանին է. բուն երևելի արևելագէ՞տը (որ գրած է Մխիթարայ մասին այսպէս. «Թէ՛ բարեպաշտութեամբ և թէ գիտութեամբ երևելի անձ մ'է, ինձ ալ մտերիմ բարեկամ[1]») թէ անոր Թոռը Մեսրոպ–Լևոն Ղասեմանի (1702–1782), շարունակողն անոր համբաւին։ Որոշ փաստ մը դեռ չունենալով ձեռքերնիս՝ կը համարինք որ աւելի վերջինս ըլլայ, այն՝ որ Հաւատոյ Տարածման կողմէ իբրև Միսսիոնար երկար տաեն Ալեպը ալ գտնուած է, և հուսկ Հռոմայ մէջ մեծանուն արևելագէտին յաջորդ կը կարգուի, անոր մահուանէն վերջ, Վատիկանեան Մատենադարանի Դրապետութեան պաշտօնին մէջ։

Մեր նամակագիրը թերևս նախորդէն զանազանելու համա՛ր է որ զայս կ'անուանէ «մարսիլիայու մօնսինեօր ասիմանին»։

Գերյարգելի և գերապատուելի տէրութիւնդ ձերում
սիրով և խոնարհաբար աղերս ալն համբուրելով

... վասն սրբոյն պէնէդիկտոսի պատկերի կողմանէ յայտ լիցի Գերյարգելութեան ձերում պատճառն չուղարկելոյս, երբ տիրացու երեմեան ճանապարհորդ եղև թէպէտ պատկերն վերջացուցեր էի, որպէս ինքն տեսաւ, բայց ոչ էր բաւականապէս չորացեր որ փաթթէի և դնէի մէջ դնէի. վասն որոյ հետ մնաց. ետոյ տամպուրաճու տղին հետ կարէի ուղարկել, Սուրբն ովսէփ արքելեց զսուրբն Պէնէդիկտոս, թէ սպասէ մինչև և ես պատրաստիմ ի միասեղ ճանապարհորդ լիցուք, արժանայն նոյն սուրբն Պէնէդիկտոսն հաճեցաւ մնալ և ըսպասել պատրաստութեան սրբոյն ովսէփու որ և միասեղ ճանապարհորդ լիցի։ վասն որոյ և ես որդիական համարձակութեամբ աղաչեմ զամենապատուելի հայ|ր|դ իմ վասն նոյն սուրբ ովսէփա խաղեր ինձ ներումն չնորհես. երկարապէս ըսպասցեցեր վասն սուրբ Պէնէդիկտոսի խաթ[ե]ր, փոքր ինչ ևս համբերել ի պատիւ սրբոյն ովսէփայ։...

Այսօր ալիկուռնաւ գիր արի որ պետրոս կաթողիկոսն ընդ իւր մի եպիսկոպոս, մի վարդապետ և մի տիրացու ծովով ճանապարհ ելած է տեղս գալու. մարսիլիայու մօնսինեօր ասիմանին գրած էր թէ իւրեան տուն պատրաստէ. յաժմս ինքն Ալիկուռնայու վրդանէս եպիսկոպոսին գրած է թէ եկեղեցին տեղ պատրաստէ, ինձ մէկ նեղութիւն և ձանձրութիւնն է դորայ այս եկեղեցին գալն, տարի երկու ամիս պատկերահանութիւն չեմ կարեր աներ կամ եկեղեցնայ ծառայութիւն՝ կամ եկող գնացողաց զահմէթ և խըզմէթ։...

Ցամի տեառն 1741
օգոստոսի 4 |Հռոմ|

Խոնարհագոյն ծառայ
պատկերահան Յոհաննէս

ՃԵ.

Դաժան և անսիրտ արարքի մը նկարագրութիւնը տալէ վերջ՝ այսպէս կը գրէ Հ. Թէոդորոս. «Ի ձեռն վերապատուեցելոյ տեառն տեառն Յակոբ վարդապետին

1. Assemani. Bibliotheca orient. I. 557.

« Երզրումեցւոյ և Առաքելական Միսսիոնարի Հայոց, որ է ի կարգէ Սրբոյն Անդոնի « ժամանեսցէ ի Բէդէր վարատինն ».

Ծ։ Ց։ Ֆ։

Վերապատուելի և սիրելի Հոգևոր Հօր և Հղբօր իմում ի Տէր, բազմաւ սիրով և մեծաւ կարօտիւ մատուցանեմ զՔիսուսաւանդ ողջոյն, և այլն։

... Աստէն ահաւ մեծաւ տագնապին բովանդակ ազգն հայոց, մի գուցէ ապստամբիցի մահաւ ազգն, և զբովանդակ ազգն մեր առաթուր հարկանիցէ, և բնաջինջ առնիցէ։ Աստ ի մեր քաղաքն եկեալ էր կոստանդինուպոլսեցի Տէր Պօղոսն, որ է որդի Արմատացի մղտեսի սարգսի հացագործի. սա աւելի քան զեօթն ամիս աստ եկաց, և ընդ երկուց պայազատ մահաւաց զբարեկամութիւն ըստացաւ ի գեօղ մի, և զբազում բարեկամութիւնս արար նոցա. վերջապէս այժմ մինչ կամեցաւ չուել աստի՝ ծանոյց նոցա զգնալն իւր. և մինն ի ն[ո]ցանէ գերիս աւուրս առ նմա եկաց աստ, և եկեր ընդ նմա, և ի չուելն նորա՝ ուղղաւորեաց զնա մինչև էանց զգիւղ մի, և ի մուրջ եսպան զվերոյասացեալ Տէր Պօղոսն կարի անողորմաբար, և զմի վաճառական Պատի անուամբ առ ի մահ վիրաւորեաց տասամբ հարուածով կացնով, և մազապուրծ գերծաւ ի մահուանէ։ Այժմ կալեալ են զԱւազակն, և եղեալ են ի բանտի։ Ահա այսպիսի բարեկամք են մահառ ազգն՝ ազգին հայոց. որք ի ներքոյ պատրուակի սուտ բարեկամութեան, չանան ըմպել զարիւնն յերակաց Հայոց։ Խնդրեմ ուրեմն, զի ըստ բաղձանաց սրտիս գրիցես և պատմիցես ինձ զկացքն Տէրութեանդ, թէ զորպիսի հանգստութիւն ունիս, և որպիսաբար կեաս այդր, և որքան հայք գտանին այդր. և զիարդ կեան։ Զվեննայի վարուչներն ասեն աւերեալ գոլ. և Պաւարուչն ընդ Ֆռանձուզին մերձեցեալք են առնուլ զվեննայ. Տէր ճիսուս պարգևեսցէ զխաղաղութիւն և զմիաբանութիւն ի մէջ Թագաւորաց Քրիստոնէից։... Զկեղայի Տէր Մինաս Աւագ Էրէցն իջուցեալ են ի պաշտօնէ, և արտաքսեալ ի քաղաքէն, որ ի քսան վեց ամաց հետէ եղեալ էր Աւագէրէց անդ, և զայնքան բարեբարութիւնս արարեալ էր քաղաքին։ Եւ այսոցիկ բնաւից պատճառն է չքահանայ մի Տէր Նիկօղ անուամբ...։

Ծառայ
Հայր Թէոդորոս Յովաննիսեան
Կրօնաւոր և վ. ի կարգէ սրբոյն Անդ. Աբբայի

Ցամի Տեառն 1741
հոկտեմբերի 25, ի Պաշֆալով,
որ այլով անուամբ կոչի Էլիզապէթապօլիս

ՃԶ.

Քմահաճոյ իրաւարարութեան դեր մը, զոր կ'ուզէ ստանձնել Գաղղիա, այն պարագային մէջն էր՝ երբ այլը դաղրած՝ ինքն էր որ դեռ կը շարժէր զէնքը։ Ցիշատակուած « Թէրէզիա »ին կարոլոս Զ.ի Մարիամ–Թերեզա դուստրն է։

Ծ։ Ց։ Ֆ։

Գերապայծառի և Գերյարգելոյ Տեառն Մխիթարայ Աբբայի Հօրդ մերում, մեծաւ խոնարհութեամբ, և ըղձատոչոր բաղձանօք մատուցանեմ զորդիական ողջոյն, և զսէր, և այլն։

... Իսկ ի կողմանէ ընտրութեան կայսեր՝ ասի թէ Ֆրանձուզն կամի զթագաւորութիւնս բաժանել իւրաքանչիւրոցն ըստ արժանաւորութեան. զի Թէրէզիային Թագուհւոյն Միացեալ Աւստրիայն, մասն ինչ ըսլէժիային, բովանդակ մեծ մասնարք, և Գրան-

սիլվանիայն ։ Պաւարին զիմբէբրիումը ։ Ստանիսլաւին զլէհաստան ։ իսկ Սաքսօնին, այսինքն Աւուկուսդուսին զՊօհէմիայն տրիլ կամի, մինչև սակաւ ինչ խաղաղասցին։ Բայց յետոյ, ասի թէ ինքն Ֆրանձուզն պատերազմաւ կամի առնուլ զիմբէբրիումն, և լինիլ կայսր։... Աստ դեռևս թանկութիւն է ուտելեաց և ըմպելեաց. զի յերից ամաց հետէ յոյժ սակաւութիւն եղև յամենայն կողմանէ. մանաւանդ յայսմիկ ամի աստ ի դրանսիլվանիայ՝ ամենևին ոչ եղև գինի, զի եղեամն աւերեաց զամենայն այգիս։ Եւ կարծեմ թէ առաւել թանկանալոց է ցորեանն, վասն զի յայսմիկ ձմեռան ոչ երբէք զրեթէ անկաւ ձիւն յերկինից, այլ այնպէս պարզ է երկինքն, և օդն, որպէս յայնժամ եղև այդր ի վ.ենետիկ, յորժամ սկսան մեռանիլ ի քաղաքիդ յայդմիկ ի chatarէ, և մեք ևս ամենեքեան զգածեցաք ի նմանէ...։ Ահա յայսմիկ տեղւոջ ևս այսպիսի է եղանակն ձմեռան. և սակս ոչ ձիւնելոյն՝ մկունք և այլք զեռունք աւերեն զարտորայս, և զցանեալ ցորեանն սպառեն։ Բաց յայսմանէ չատ չորքօրեայ Ջերմախտութիւն գոյ ի Դրանսիլվանիայ, և մանաւանդ յայսմիկ քաղաքի, մինչ զի այնքան զգուշութեամբս՝ ես ևս Ջերմախտացայ երկօրեայ Ջերմախտութեամբ, և հազիւ զերծայ զկնի երկուց ամսոց. բայց այլք նաև զամ մի կրեն զչորեքօրեայն։ Դարձեալ լուաք ի մերձակայ ժամանակիս, թէ աստ ի Դրանսիլվանիայ յերկուս տեղիս զգածեցեալք են ժանտախտիւ. և կարծեմք վերստին արգելցին ճանապարհքն։...

Նուաստագունեզ ծառայ
Հ. Թէոդորոս Ցովաննիսեան
կրօնաւոր ի կարգէ Ս. Ա. Աբ.

Ցամի Տեառն 1741
Դեկտեմբերի 5
ի Էլիզապէթապօլիս

ՃԷ.

Պատկերահան Ցովհաննէսի աստրագրութեամբ պիտի հրատարակենք հետզհետէ Հռովմէն ղրկուած կարգ մը թանկագին նամակներ, որոնք Ուղղափառ Հայոց առանձին Պատրիարգութեան ծագման քանի մը կարևոր գիծերը բացայայտ կերպով տուած ատեն, ժամանակի թանձր փոշիներէն դուրս պիտի հանեն միանգամայն շողշողուն ակունքներ՝ ի զարդ և ի փայլ Հայ Կաթողիկէ Նուիրապետութեան Պատրիարքական Աթոռոյն։

Գերյարգելի և գիրապատուելի տէրութեան ձերում ունժաւ յարգութեամբ ողջոյն տատուցանեմ

... Եւս յայտ առնեմ որ անդէպից Աբրահամ կաթողիկոսն և Ակոբ այսինքն Հալէպցի եպիսկոպոսն Ամիկուռնա հասած են, Հռօմ պիտի գան. մօնսինեօր ասիմանին գրած են որ իւրեանց համար բաւական բնակութիւն պատրաստէ, որով ցուցանի զի եկեղեցին գալու կամք չունին. ոմանք ֆռանկներուն ինձ ասին թէ մի և նոյն ժամանակ ի Հռօմ Հալպու երեք արքեպիսկոպոսք գտանին, և պատճառ գալուստեան սոցին զոր ինչ կարացի տեղականալ և կամին փափէն իշխանութիւնս առնուլ վասն ձեռնադրելոյ և առաքելոյ ընդ ամենայն ուրեք՝ զմիսիօնարս. եւոյ երբ հասանին տեղս, այլ լաւ վերահասու կու լինիմ և ծանուցանեմ ձեր հրամանուցն։ Դարձեալ այսու յայտ առնեմ գերապատուելութեան ձերում. այսինքն Թօմաճանի որդի յոհաննեսին բանն դեռևս ոչ է բացորոշեալ. քանզի երբ նա ճանապարհորդ եղաւ, յանձն առաւ իւր բանն օզլէնկին և մին հռօմ քահանայի, սա ասիմանին ներհակաց մինն է որ բանսն մտաւ, ուրեմն ետ յոհաննեսի գնալոյն օզլէնկն բովանդակ բանին որպիսութիւնն գրեց և տվաւ քօնչիլիօյին ժողովքին, սոյն ժողովքն հրամայեց թէ Թէպետ Ապպաթէ Միքիթարին կարքն ոչ իցէ վերահաստատեցեալ սուրբ աթոռոն, կարող է լինիլ որ այլում ժամանակի այլ ինչ կարք կամ հաստարակութիւն ի մէջ հայոց՝ ումիմնէ հայրապետէ վերահաստատեալ իցէ, հետևա-

պէս զօրութեամբ նորին վերահաստատեալ լինի վ.էնէտիկու հայոց կարգն և միաբանութիւնն. վասն որոյ վերոյասացեալ հօտում քահանային յաժմս ընդ այլ ումեմն տեղեակ անձամբ բովանդակ փափերու պօլլարիօն ընթեռնուն վասն տեսանելոյ եթէ կա՞ կամ թէ ոչ՝ այդպիսի վերայհաստատութիւն կրնի Հայոց։...

Ցաժմս փափն Հռոմայու դուրս է. սուրբ պետրոսի տօնին դառնալոց է. եթէ տէր հաճեսցի ես սուրբ պետրոսի երկրորդ օրն ալպան դառնալոց եմ ընդ քարտինալ քաբաքին, որ մտած ամսի երկրորդ օրն մեր կուսանաց հանդերձ պիտի տայ այսինքն կրօնաւորական, որ այնուհետև կոչեն յիսուսա և մարիամայ կուսանք. տէր յիսուս իբեանց առաւել չնորհս տայ և միշտ պաշտպանէ զնոսա որ ներկայս և ապագայ եկողքն՝ ճշմարտապէս լինին հետևողուհիք յիսուսի և մարիամու։

Այս ամսոյս մէջն ըստ իմոյ տեղեկութեան սրբոյն Պենէդիքտոսի պատկերն եղեր կու հասուցանեմ, միուս ամիսն տամպուրաճու արութէնին հետ, կամ ճէվահիրճի երեմիայիս յղեցից գերյարգելութեան ձերում։...

Հռոմայ. ամի տեառն 1742
ունիսի 8

Ծառայ
Պատկերահան Յոհաննէս

ՃԸ.

Ուղղափառ Հայոց առաջին Պատրիարքն է նամակագիրս, որ Հռովմէն կը գրէ ուղղակի առ Մխիթար։

Թուղթիս մէկ ակնարկութիւնը կը հայի այն գրոյն՝ որով Մխիթարայ առաջնորդութեան կ՝առաջարկուէր գլխովին Զմմառի Միաբանութիւնը։ Այդ մասին՝ բաց ի Նիկողայոս վարդապետի մեր հրատարակած նամակէն (տես «Մայր Դիւան», Թուղթ Ղ.Ջ) բանասէրք արդէն պիտի գտնեն Լիբանանցի Հ. Պետրոս Ղերսեսեանի նամակը (1741 Սեպտ. 3)[1], իսկ ասկէ առաջ բուն պաշտօնականը՝ զարձեալ Աբրահամ կաթողիկոսէ ղրկուած Թուղթը (1741 Յուլիս 18), հանդերձ առորագրութեամբ նոյն Ուխտի քահանայ և ուխտեալ Միաբանից[2]։

Ա՛ւետապայծառ նշոյլդ իմոյ Մխիթար աստուածաբան վարդապետիդ. Ողջուն

Ցայտ առնեմ սիրելագոյն վերայ գրելոյս. հասի ի Հռոմ օգոստոսի 11, և յոյժ սիրով ընկալեալ եղէ ամենից, յառաջ քան զտեսանելն իմ զվ.եհապետն. զեռ և ոչ եմ տեսեալ. ի հարկէ երկրորդ յուխտն իմ տեսանել զվ.երապատուելիդ, բայց կամիմ իմանալ թէ զինչ գրեցեր վասն որդւոց մերոց ի լեառն լիբանան. զոր յառաջագէմ գրեցի սիրելոյս, և թէ ոչ գրեցեր զբան ինչ ծանոյ ինձ. և թէ այլ բարի բան և գործ յունիս ի Հռոմ կատարիլ վասն օգտի Հասարակաց, եթէ կամիս և պատկանի տառապելոյս՝ գրեսցես ինձ, և ամենայն օրհնեալ հասարակութեան աբբայիդ օրհնութիւն, Ողջոյն և արժանաւոր յարգութիւն մատուցանեմ։ Ողջոյն պարոն Խաչիկին յոյժ սիրով որ է սիրելի եղբայրութեանդ և մեր. զի լուայ թէ ամսնացեալ է. տէր յիսուս պահեսցէ ի ներ[ք]ոյ չնորհաց իւրոց. և ընդ մեզ եղեալք կարօտին աղօթից։

Վերջացուցանեմ սիրով և օրհնութեամբ և եմ պատրաստ ամենայնի ծառայ անպիտան

[Աբրահամ] Պետրոս[Ա]կաթողիկոս

---

1. Թորոսեան, Վարք Մխիթարայ (Ցաւելուած Բ. կարեւոր բուղրք եւ նամակաթիք) էջ 467,
2. Անդ, 462։

Դարձեալ Ողջոյն և օրհնութիւն հօր քրոջս որդոյ տէր Գէորգին որ է անթէփեան. խնդրեմ յիսուսէ զի տացէ նմա սուրբ և բարի վաղճան. զապառնոյն և եւս զներկայն։

գրեցաւ ի մեծն Չոսմ
Ամի տեառն 1742
օգոստոսի 17

ՃԹ.

Ժամանակագրական կարգով կու տայ ահա Յովհաննէս պատկերահան մեր Աբրահամ Պետրոս Պատրիարքի Հռովմ հասնելուն թուականը, գալուն պատճառը և ուրիշ ծանօթութիւններ։

Պատրիարքին հետ գոնուողներէն մին է Նիկողայոս վարդ. Գրիգորեան, որուն մէկ կարեւոր նամակը — որոյ շուրջ զարձեալ կը խօսուի հոս — մեր վաւերաթուղթերու շարքին մէջ հրատարակած ենք, ինչպէս անմիջապէս առաջ ալ յիշեցինք։

Գերյարգելի եւ գերապատուելի Հօրդ իմոյ որդիական սիրով սուրբ ալեւ համբուրեմ

. . . վասն Պետրոս պատրիարքին կողմանէ յայտ լիցի. ամսիս ԺԱին ժամանեց հանդերձ սահակ եպիսկոպոսիւն, նիկողայոս վարդապետն և տիրացու սիմոնն ընդ նմայ. այս երեք անձինքն հալապցի են. քանի եկեր է, քաղաքս որչափ արապներ կան եկին տեսանել զինքն, մօնսինեօր ասիմանն իւր պաշտպանն է և հոգաբարձուն. մինչեւ յաժմս հետու կեցա իւրմէն. ապաքայ եւս այս է միտս. մինչեւ յաժմս զոր ինչ իմացայ իւր հոսմ գալուն պատճառն այս է. ինքն Հալապ եպիսկոպոս էքէն հալապցի տէր ակոբն և տէր սահակն եպիսկոպոս օծեր է. և նոքայ զինքն պատրիարք օծեր են. յաժմս եկեր է որ փափն անօրինէ... և հաստատէ իւր պատրիարքութիւնն ի վերայ հայոց. ինքն զի ուր անուն գրէ՝ այսպէս. Պետրոս առաջին պատրիարք ի վերայ ամենայն Հայոց ուղղափառաց. երկրորդ զոր ինչ կերևի, թէպէտ լաւ զարդարանօք ըսկեստ ունի, բայց յողջ չունի. հազիւ թէ հոսմ հասան զայն ևս պարտօք.... մինչև յաժմս վրդանէս եպիսկոպոսին տունն կերակրին. եւս յայտ առնեմ գերյարգելութեան ձերում. այդ վերոյ ասացեալ նիկողայոս վարդապետն եղբայր պօղոսին ազական է. սա ինձ ասաց թէ իւրեանց լիբանանու վանքի հասարակութիւնն մին գիր գրած են հրամանուդ, խնդրելով թէ կանօնքի և կառավարութեան ներքոյ ընդունիս զնոսա, նոյն գրին պետրոս պատրիարքն ձեռքէ գրած. զի հանդերձ իւր օժարութեամբն է. յայժմ ժ. ամիս կայ որ նոյն գիրն յղած են հրամանուդ...։

Պատրիարքն մին գիր տվաւ ինձ որ վրան զհասնին[1] հրամանուդ գրեմ որպէս գրեցի և փօսդն դրի. հետևապէս զոր ինչ բան հետեւի արժան ծանուցման ծանուցից գերյարգելութեան ձերում, որոյ որդիական յարգութեամբ խոնարհաբար խնդրեմ զՀայրական զօրհնութիւնն

Ամի տեառն 1742 *օգոստոսի* 18
[ի Հռովմ]

խոնարհագոյն ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

ՃԺ.

Սուղ բառերով կու տայ նամակագիրս Պետրոս Պատրիարքի Հռովմայ կեանքէն շահեկան օրագրութիւն մը։

---

1. Հասցէ կը նշանակէ։

Ինչպէս կը տեսնենք այս նամակէն, զմմառեան առաջարկի մասին՝ Մխիթար առ Յակոբ Եպիսկոպոս զրած թուղթէն զատ՝ ուղղակի եւս պատասխանած է ըստ պատշաճողութեան առ նոյն ինքն Պատրիարք. դժբախտաբար մեր ձեռքը չունինք այդ թուղթին օրինակը։

Գերյարգելի և գերապատուելի տէրութեան ձերում խոնարհաբար և սրտիական սիրով ողջոյն

. . . Պատրիարգին ամենայն էհվալին տեղեկացայ եւոյ մի ըստ միոջէ ծանուցից հրամանուդ. վասն յաժմոյս այս ասեմ, որ մին քանի քարտինալի գնաց որոց անձնա[բա]րական գիրեր բերած, սիրով ընկալան զնա ըստ ֆռանկի քաղաքավարութեան. եւոյ փափին գնաց. փափն քան զամէնն առաւել սիրով ընկալաւ զնա, խոսք տվաւ թէ ամենայն խնդիրքն կատարէ, որով յոյժ միխիթարեալ դարձաւ ի տուն. մինչեւ յաժմս իւրեան պալատէն փառք չի տվին, ինքն ոչ խնդրեց, բայց եթէ նոքայ տան [յ]օժառ է առնելու։

Հրամանուդ գիրն ընկալաւ և առաջի իմ ընդերձաւ ասելով, թէ ես նախնէ գիտէի որ Հայր Աբբան այս բանն չիր ընդուներ. բայց վասն հաճելոյ իմ կրօնաւորաց ես եւս ընդ նոցայ ձեռք դրի գրոյն։ ...

Պատկերներն պատրաստի եմ, այսինքն սուրբ ովսէփայ և սուրբ Պէնէդիքտոսի. առաջին եկողի հետ ուղարկեմ. վերստին խնդրեմ հայրական գթութեամբ թողութիւն անես այսչափ երկարելոյն։

Վ.րդանէս եպիսկոպոսն սիրով և յարգութեամբ ողջոյն մատուցանէ հրամանուդ. վերջ առնեմ խնդրելով զհայրական օրհնութիւնն գերյարգելութեան ձերում, որոյ խոնարհագոյն որդի և

Ամի տեառն 1742
սեպտեմբերի 7 [Հռոմ]

Ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

ՃԺԱ.

Թանկագին ու կարևորագոյն նամակներուն շարքը առաջ կը տանի Յովհաննէս պատկերահան, հետզհետէ տալով Հռոմէն մանրամասն տեղեկութիւններ՝ հոն ժամանող Պետրոս կաթողիկոսին նկատմամբ։

Նախ կը հաղորդէ ինչ որ կրցեր է իմանալ կաթողիկոսական անդրանիկ ընտրութեան և անոր յարակից դէպքերուն շուրջ, ապա կը նշանակէ Հռոմի ուղեւորուելուն շարժառիթը, նպատակն ու գտած սիրալիր ընդունելութիւնները թէ՛ Քահանայապետէն[1] և թէ Միրանաւորներէն։

Մեր վաւերաթուղթը բացառիկ կարևորութիւն մ՚ալ կը ստանայ, որովհետեւ հայ եկեղեցական պատմութեան կ՚ընծայէ նշանակելի հետաքրքրական դէպք մը։ Քահանայապետական ունկնդրութենէն քանի մ՚օր վերջ կը տեղարանայ Աբրահամ կաթողիկոս. հիւանդութեան լուրը կը հասնի Սրբազան Հօր, որ այցելութեան կը փութայ երկու Միրանաւորներով միասին։ Առաքելական պալատ դառնալէ վերջն ալ՝ ի նշան հայրական հոգածութեան՝ առանձին հրահանգ մը կու տայ հիւանդին մասին։

Աբրահամ կաթողիկոս այն ինչ կը գտնէ առողջութիւնը՝ մանաւոր ունկնդրութեամբ մը անձամբ կը ներկայացնէ երախտագիտական զգացումները։

---

1. Բենեդիկտոս ԺԴ։

Գերյարգելի եւ գերապատուելի տէրութեան ձերում յոյժ սիրով եւ կարօտիւ ողջոյն

. . . Այն զոր խոստացայ այլ գրովս թէ ծանուցից գերյարգելութեան ձերում, վասն այս Պատրիարքի կոչմանէ ներկայ գրովս կատարեցից և է այսպէս. սա քան զի տարի առաջ ֆէրմանով սուրկուն էին առած երուսաղէմ, սա կերպիւ փող կերցուցեը փաշային և փախեր էր ի լիփանան, և անդ մոտ ի տարի կենալուն ետև հալալու ուղղափառներն ֆէրման հաներ են բթլախ այս պատճառելով, թէ հալալու այէլէթն բազում փող առնելուք ունի երթայ ժողովէ. սա գնացեալ հալալ երկու ուղղափառ եպիսկոպոսի վէքիլներու ներկայութեամբ տէր մարքարն տէր ակոբն և տէր սահակն եպիսկոպոս օծեր է, մինն տիարպէքիրի, տէր ակոբն հալալու, և տէր սահակն քիլիսիու վրայ. ետոյ այս վերոյ յիշեցեալ Գ եպիսկոպոսն զինքն կիլիկիայու վերայ պատրիարք օծած են, ետ այս առ նելոյն... Ի ֆռանչիսկան պատրիի ներկայութեամբ, հանդերձ ուղղափառներու իշխան ներովն ժողովք առարեալ են, թէ Պատրիարքն ընդ իւր սահակ եպիսկոպոսն Հռոմ գան, Պատրիարքն վասն խնդրելոյ փափէն զհաստատուածն և զփալեօն. ետոյ խնդրէ փափէն և ժողովքին բազում գրեաս, որով Սահակ եպիսկոպոսն գնայ բովանդակ քրիստոնէից երկիրն ողորմութիւն ժողվելու. ետոյ այս ողորմութիւնն Գ բաժին անեն, Բ.ըն հալուալ եկեղեցնայ և խեղճ ուղղափառներու օգնութիւն, մինն վասն լիփանանու եղած վանքին, և չորրորդ բաժինն պատրիարքին, և սոյն խորհրդովս ճանապարհորդ եղեալ հանդերձ բազում յանձնա[րա]կան գրերովն հասին տեղս Նախ քան զայս երբ մարսիլիայ հասին գրած են մառօնոց ոմանց թէ իւրեանց տեղ պատրաստիցեն, բայց երբ ալիկուռնայ հասին՝ իմացած և տեղեկացած որ յաժմս ոչ ըոյ խռովութիւն հայոց հիւրանոցն, այլ բնակիչքն կեան խաղաղութեամբ և միաբանութեամբ, գրեցին վ.րդանէս եպիսկոպոսին և եկին տեղս.... Ուրեմն ետ տեղս հասանելոյ նախ իւր գրերն ուղարկեց զանազան կարտինալներու, ետոյ ինքն անձամբ գնաց բարևելոյ զնոսա. յոյժ սիրով ընկալան զնա, ևս առաւել ըսպանեալ քարտինալ պէլլուքան, որ մեծաւ յարդութեամբ սեղան կոչեց իւր պալատն զսա, ... [յ]ետ կարտինալներու՝ փափին մոտ գնաց և փափն յոյժ սիրով ընկալաւ զնա, երբ լսեց իւրեանէ թէ որպէս սուրբ Գրիգոր Պատրիարքն Հայոց ի ժամանակի սուրբ Աէղբեսդրոս փափին եկաւ Հռոմ, և յաժմս ետ Ի և Ը տարոյ եկեալ է առ ոտս սրբութեան իւրոյ առ ի ընկալնուլ զպատրիարքական փալեօն և զհաստատութիւնն պատրիարքութեան իւրոյ, երբ մինչև յաժմս առանց զէն Լթ տարի պատերազմեցաւ ընդդէմ հէրիտիկոսաց, և յաժմս զինուորեցեալ ի սրբութենէ իւրմէ զարցցէ ի յարևելս և այլն, և փափն յոժարութեամբ խոստացաւ կատարել զինդիրս իւր հանդիսաւորապէս և առեալ զօրհնութիւնն նորա զարձաւ ի տուն մեծաւ մխիթարութեամբ: Եւ ետ քանի աւուր նոյն պատրիարքն տկարացաւ . . . փափն լվաւ զտկարութիւնն իւր և եկ ի տեսանել զնա հանդերձ Բ կարտինալիւ, այսինքն պէլլուքան և քարաֆան. թէպէտ առապայէն վար չեկաւ, քան զի պատրիարքի բնակեալ օթևանն բարձր քոլով նեղութիւն էր և անյարմար փափին վեր ելանել, բայց կարտինալներն վեր ելան խագրն հարցանել փափին կոչմանէ. և փափն կես սահեթ եկեղեցնա առաջեւ առապաով կեցաւ և բովանդակ հայքն զոտն համբուրեցին. իսկոյն փափին և քանի կարտինալի հէքիմներն եկան առ ի բշխկել զնա: Ետ քանի աւուր փոքր ինչ առողջացաւ և տօն տօմէնիքոն ընդ իւր գնաց փափին չնորհակալութիւնս մատուցանել. նոյն խոսակցութեան մէջ տօն տօմէնիքոն հասկացոյց սորայ չիքաւորութիւնն և փափն հրաման առաւ փարթ տան, քանի որ տեղս է և արապայ՝ երբ որ խնդրէ... ահա մի ըստ միոջէ ըստ խոստման իմոյ ծանուցի գերյարգելութեան ձերում. եւս յայտ լիցի որ զատկէն ետոյ հասցատ միտն դրեր է վէնէտիկ գալու և անտի գնալ ի յարևելս. բայց Սահակ եպիսկոպոսն կամք չունի յարևելս դարնալ, կամի մնալ այս երկիրներն. և յաժմս լսեցի որ մին քուրտուստանցի նոր ուղղափառ եղած հայ եպիսկոպոս ոմն եկեր է ալիկուռնա, տեղս գալու է, սա եւս վասն մնալու կուգայ եթէ իւրեան փարթ տան....:

Ամի տեառն 1742 հոկտ.ի 6
[ի Հռովմ]

Նուաստագոյն ծառայ
[պատկերահան] Ցոհաննէս

ՃԺԲ.

Ս֊իրանաւորաց ժողովոյն (Concistoro) *մէջ՝ Բենեդիկտոս ԺԴ. մեծ հանդէսով կը հաստատէ Աբրահամ Պետրոսի Պատրիարքական Իշխանութիւնը Կիլիկիոյ Աթոռոյն վրայ։*

Մեր նամակագիրը խնամքով կու տայ մեզ ոչ միայն այդ կարևոր հանդիսին նկարագրութիւնը, այլ նաև պիտանի տեղեկութիւններ նախապատրաստական գործողութեանց մասին։

Գերյարգելի եւ գերապատուելի տեառնէդ իմով որդիական սիրով ողջոյն

. . . Եւ գիրն որ գրեցի գերյարգելութեան ձերում, որով բազում ինչ ծանուցի Պետրոս կաթողիկոսին կողմանէ... ամսիս[1] 26, երկուշաբաթի, փափն Քօնչիսթօռ առաւ. նոյն Քօնչիսթօրին մէջ առաջի 18 կարտինալաց մեծաւ հանդիսիւ հաստատեաց զՊատրիարգութիւնն նորին ի վերայ Կիլիկիոյ. եւ ամենայն Ջէրմանիայի փափն և ամենայն քարտինալք կրկելով համբուրեցին զնա. եւոյ կարտինալ պելլուքան նոյն օրն տարաւ զնա ի սեղան իւր հանդերձ մօնսինեօր Ասիմանիւն, որ ի մէջ քօնչիսդորին վերոյ ասացեալ արարողութեանց թէրճիմանն էր. եւոյ Աստուածածնայ ամենամաքուր յղացման օրն սանթա մարիայ մաճիօր եկեղեցին եւս հանդիսապէս պիտի ընկալնու փափէն զփաթրիարքական փալեօն. մին քանի օր առաջ վերոյ ասացեալ բաներուն, կարտինալ փէթրան սոյն Պատրիարքին վասն ուղղափառութեան զոր ինչ արարեալ և կրեալ է և այլ ամենայն իւր մէրիթօն[2] կարճորէն ըստամփայ անել[3] տվաւ և մատուցին կարտինալաց և այլ ոմանց. վերջապէս յայտ լիցի հրամանուդ որ անունն տարածվեցաւ ի մէջ քաղաքիս, մինչ զի աւիզներով[4] ուրիշ երկիր ծանուցին։...

Եւս յայտ առնեմ որ այս մուտ ժամանակս մարոնոց Պատրիարգն մեռաւ երկու ֆռքա (?) եղեն եպիսկոպոսքն, և արարին երկու Պատրիարք, երկուքն էլ էլլի առաքեր են Հռոմ վասն հաստատութեան, սոյն ազգս ընդ ամենն ԺԲ եպիսկոպոս ունին, արարին այսպիսի խռովութիւնս։...

Ամի տեառն 1742
դեկտեմբերի ա։
[ի Հռովմ]

Խոնարհագոյն ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

ՃԺԳ.

Բրիատոսի Ինոգեան առթիւ Մխիթարեայ շնորհաւորագրոյն պատասխան մ՝է հետևեալը, որ միանգամայն կը ցոլացնէ Կիլիկիոյ մեր Առաջին Դիտապետին տածած յարգանքն ու սէրը առ մեր Ընտ. Հիմնադիրը։

Ամենայարգելի եւ ամենգովելի եղբօրդ իմոյ Մխիթար աբբայինայր ստատուածաբան վարդապետի Ողջոյն

Առաջին և երկրորդ եհաս առ իս գիր, բայց ի տկարութեան և ի սպաղանաց ոչ կարացի գրել. ներեա վասն յիսուսի. իսկ վասն աւետեաց մեծի ծնընդեան Էմանուէլի, յոյժ շնորհակալ եմ։ Խնդրեմ յիսուսէ որ ծնաւ ի սուրբ կուսէ, միշտ ծնցի ի մաքրագոյն սրտի քոյ և քոյոցնոցն։ Իսկ ի մտանել նոր տարոյն, պէսպէս պահպանիչ և գործադրիչ նոր շնորհօք զարդարեսցէ միշտ առ միշտ ամէն։ Բազում բանք գոն խոսիլ ընդ վերա-

---

1. Նոյեմբեր։ — 2. Արժանիք, արդիւնք։ — 3. Տպագրել։ — 4. Ծանուցագիր։

պատուելի եղբայրութեան քում, կրկին ոչ յունիմ ժամանակ. եթէ կամի աստուած բերան առ բերան խօսիլ, յայնժամ լնանի փափաք և իղձ սրտիս։ Խնդրեմ զի ծանուսցես երէմիեա վարդապետին չուտով յղեսցէ իւր եղբօր որդին, եթէ հաճի ինքն բերցէ. զի յետ իմոյ ելանելոյ ոչ կարէ մտանել մանուկն ի Պպրատուն, իսկ յաժմ աստուծով աներկբայ մտանէ. վաղամի սիր[ել]ին իմ պարոն յովանէսն, աղաչայ պետրոսն, համնստ ընկ[եր]ան և նիբօթին, և ևս մերայինքն զօսերբ աշդ համբուրեն։ վ[երջեմ զբանս ժտելով յատուկ յիշել զառաւաւելս ի սուրբ յաղօթս որպէս զմի ի թշնամեաց. ողջ լեր ի փարծանս սրբոյ Նիկողայոս. Ամէն

Պատրաստ ծառայ
Ամենապատուելի Եղբայրութեանդ
Նուաստ
Պետրոս կաթողիկոս Հայոց
Հաստատեալ ի սրբոյ Գահէն

1742
Դեկտեմբերի 22
[ի Հռոմ]

ՃԺԴ.

Թէ լեզուին և թէ պարունակուած այլազան նիւթերուն համար շահեկանութիւն մ'ունի հետեւեալ վաւերագիրը։

Նամակագիրն է Պետրոս Քէլիեան. այն անձն է՝ որ նախընթաց մէկ քանի նամակներու մէջ յիշուած է Աղաչայ Պետրոս անուամբ։

Որմնեալ եղեցի ՅԻսուս Քրիստոս. 1742. դեկտեմբ. 22. ի մեծն Հռոմայէ

Դեր ցարգել Հօրն մերոյ հայրաբբային. և ամենայն միաբանից խոնարհական սիրոյ ողջոյն. անարժան ծառայէտ պետրոսէն

. . . վ[եհայլուստ կաթողիկոսն մեր, որ մեծ չատ առժանաւոր մարդ է, ոչ կասիմ առաւել քանծ զգերայբարձրութիւնտ. ալ թէ ընդ կարգաւորաց մեր հայոց. չատ գօվի և խոնար ու պարկեշդ մարդ մըէ. և չատ գուհ է և գօվասանութեամբ է ամենից մեծաւորաց և կարգաւորաց. նայև ինքն նմանայպէս չատ գուհ է ի վերայ գերյարգելութեանտ և չատ մեծ սէր ունի զալու և տեսնելու զգերյարգելութիւնտ և միչտ ուրախ է ի վերայ ձեր ամենից միեայբանից։ Եւ ամենայն ժամ կու հիչէ զհրամանքներտ. դարձեալ հօս մեծ սիրով ըզսայ կի ընդունէ սրբազան փափն և ամենայն կարտինալք որ և ես մեղաւորս ալ երկու անգամ մինչև ցաժմ էղիլ իմ փափին տունը և զտն համբուրիլ իմ միչնորդութեամբ վ[եհայլուստ կաթուղիկոսին. և հետն միայտեղ էղիլ իմ փափին մօտ. նայև հարկ եղև որ խօսիմ հետ սրբազան փափին լադիննակն, ծուռումուռ որպէս գիտաձայ. վերչապէս օրհնութիւն երկու անգամ և եդ զձեռն գլխուս և զտն համբուրեցի քանիցս անգամ և փառօք ուրախութեամբ ելինք և փափին կառօքն զմեզ մեր օթևան բերին. և զայս ևս ասաց սրբազան փափն թէ ուրախ է և ունի չատ սէր ի վերայ մեր ողորմելի ազգին . . . ։

Պ[ետրոս] Քէլիեան

P. S. Պի գրիմ քիչ մն նոր խապար Դեր ցարգելութեանտ. թէօր սուտ չիլայ նայ առաչին ըզլաւ խապարն. այսինքն թէ բրինձ. լուբգօվիձը. ես գիտեմ զինքըն. նայ կասին թէ չատ հախթութիւն արած ըլայ և գտնըլած ըլլայ ֆրանձուզնուն մօտ են զամենայն

1. Թուան։

զահարան, որն օր կանուցած էգիլ ին բէրէլու Բրական, այսինքն սաքսօնին երկրօղն, և կասին թէ 2 միլիօն գալէր գնորվիլ է օր ամէն մէկ զօլատողին երկ երկու հազար զօլթայ փայ է էկիլ է ու անկի դուս անչափ ալուր և գարի և ամէնայն ցեղ բանը նայն զգանձ ալ կօրած բլան. կարծիմ թէ հոտ այլ լաւ պի լսվի և այլն։

Եւ երկուսում խոպարն մեր երկրէն կուգրին թէ բրուչեսային երկիրն, այսինքն պրանտայուրին հրամանին տակն կէցող ժօղովուրդն գացած բլան Լուդրան և Գալվին. 10000, այսինքն ժի հօգի և 600 գահանայ և Ա գանօնիքն. ու գանօնիքն գարաս գարգվիլ է և մեծ թաքաւորի դուստր առիլ է, գի ինքն ալ մեծ մարդ էղիլ է և մեծ տանէ. չիտիմ թէ խորդ թէ սուտ. աստուած տայ որ սուտ բլայ, մայ նիչաններն սուտի չին. աստուած պէթաուէն պահէ. զիմ ահս ազ իձէր և աս է միշդ աստուած իսգն բարին անէ. ամէն. բաւէ։

ԱԺԵ.

Բէննէդիկտոս ԺԴ. մեծ հանդիսաւորութեամբ կը շնորհէ Պատրիարքական Պալիւմ մեր Աբրահամ Պետրոս Ա. Պատրիարքին՝ իր Առաքելական պալատին մէջ՝ Աստուածածնայ Անարատ Ղազիքեան տօնին։

Մեր նամակագիրը ոչ միայն կու տայ մանրամասն նկարագիրը սոյն հանդիսին, այլ նաև յոյժ կը շահագրգռէ Սրբազան Հօր կողմանէ հղած ընծաներովն ու պատուաբեր արտօնութեամբ մը, որոնք առուգիւ նշաններ են Ազնիւ հայրական բացառիկ սիրոյն, ինչպէս այնքան որոշակի կ'արտայայտուի նամակիս մէջ, մանաւանդ հոն նշանակուած ինչ ինչ աննպաստ պարագաներու միջոց։

Գերյարգելի և գերապատուելի տէրութեան ձերում յոյժ սիրով և յարգութեամբ ողջոյն մատուցանելիս

... Նաեւ հետեւելով առ ի ծանուցանել գերյարգելութեան ձերում գերապայծառ պետրոս պատրիարքին կողմանէ յայտ առնեմ, որ որպէս միուս գրովս ծանուցի աստուած[ածնայ] մաքուր յղացման օրն ընկալաւ փափէն զպատրիարքական փալիօն, միայն թէ ոչ ի Սանթա Մարիայ մաճօռ, այլ փափի պալատն հանդիսաւորապէս առաջի բազմաց կարտինալաց, ետ որոյ փափն ընծայեց սմայ մին պատուական զուֆրու[խ]թ խաչ, մին մատանի և մին պատուական սուրջան, և ընդ իւր տարեալ էր աղաչայ պետրոսն որ առաջի անգամ համբուրեց զօտն փափին. յոյժ սիրով ընկալաւ զնոսա։ Եւս յայտ լիցի որ փափն հրամայեալ էր թէ փոօփականտա որչափ հայու կամ արտու լեզուաւ գրեանք կան, լաւ կազմով կազմեն, որ և արարեալ և պատրաստեալ էին. և երբ պատրիարքն գնաց փափին չնորհակալութիւնս մատուցանել վասն փալիօին, նոյն պատրաստեալ գրքերն և հրամանագիր յղեցեալ աստուածաշունչներուն մէկին ետ պատրիարքին. յաժմս աւարտեցան արարողութիւնքն, բայց սոյն պատրիարքս կայ տկարութեամբ ի օտից և փորու խոստուկի կողմանէ։

Այն որ նշմարեցի միուս գրովս թէ մօնսինեօր պօնան ժողովքին և քարտինալ փէթրային գրեր է, զանազան պատճառաւ անհաւանութիւն տալով վասն սորայ պատրիարքութեան և տեղս հաստատման կողմանէ, որ և առաջ քան զփալիօն տալն փափին ծանուցին, և փափն բարկացեալ ոտնակոխ արար զգիրն նորին ասելով, [թէ] ոք եկեսցէ առ սուրբ աթոռն պարտ է ընդունել զնա, ևս առաւել եկեղեցնայ աշխատաւոր հաւատարիմ որդիքն. բայց կարծեմ սոյն բանս դառնայ ի վնաս նոյն մօնսինեօր պօնային . . . : . . աղաչեա պետրոսին հետն պատկերներն և տնօրինման գիրն կու ուղարկեմ։ Սոյն պատրիարքն իմացաւ այս տնօրինման կողմանէ. ասաց ինձ. Թող մնայ այդ, մի առներ, երբ

ես տեղն գնամ ունիմ իշխանութիւն տնօրինելոյ և օրհնելոյ։ Բայց ես ըստ հրամանի ձերում այնց ըսպասելոյ նորա գալուստեան յղելոց եմ զտնօրինումն, քանզի թէպէտ իւրեան չասի, լինի թէ ունի զիշխանութիւնս այս, բայց կարծեմ ոչ ի յարևմուտս այլ ի յարևելս։

Սոյն Պատրիարքս ունի իշխանութիւն ժԲ քաւչլիէր առնելու. կամի և ասաց աղայչա պետրոսին. Ինձ քաւչլիէր կանեմ. և սա կերևի որ փափաք և կամք ունի լինելոյ սինեօր քաւչլիէր ։ ։ ։

Ամի տեառն 1742
Դեկտեմբերի 22 [ի Հռոմ]

Խոնարհագոյն ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

ՃԺԶ.

Մխիթարայ և անոր Ուխտին հանդէպ տածած ամենամեծ համակրանքն ու յարգանքն է որ կը կարդանք Բահանայապետին առջեւ Աբրահամ կաթողիկոսէ արտայայտուած զգացումներուն և խօսքերուն մէջ։

կը պարունակէ վաւերաթուղթ նաեւ Պատրիարքին ջատագովականը Մխիթարայ հրատարակած Աստուածաշունչին Թարգմանութեան վաւերականութեանը մասին։

Գերյարգելի տէրութեան ձերում որպիսական յարգութեամբ ողչոյն մատուցանեմ

... վասն գերապայծառ Պատրիարգին կողմանէ յայտ լիցի հրամանուդդ, որ հաստատ դիտաւորութիւն ունի վէնէտիկ գալու ոչ այլ աղաքաւ այլ միայն հրամանդդ տեսանելու համար. փափն հարցաւ իրն թէ ո՞ր ճանապարհաւ դառնալոց է ի յարևելս և սա պատասխանեց. Թէպէտ դիւրին է ինձ ալիկուռնայու վերայով գնալ բայց հարկաւորապէս պիտի վէնէտիկ գնամ վասն Աբբա Մխիթարն տեսանելու աղաքաւ. և նա թէ ո՞վ է Աբբա Մխիթարն, սա կրկնեց թէ այն է որ երկու Աստուածաշունչք յղեց Սրբութեան ձերում։ Եւ նորա հրամանուդդ և կռնի մեծ արդիւնքն ի վերայ յազգին հայոց կարճորէն ծանոյց. այդ երկու Աստուածաշունչին մինն իւր ձեռօքն փափն չնորհեց սորայ, հանդերձ այլ զրգերով. իւր հետ եղեալ անձինքն են սոքայ. Սահակ եպիսկոպոսն, տէր Նիկողայոսն և երկու աշխարհական ըսպասաւորք, մինն հալէպցի և միւսն էնկուրցի. թէպէտ եւոյ ի ժամանակին կու ծանուցանեմ եթէ սոքայ իւր հետն կուգան թէ ոչ, քանզի տէր Նիկողայոսն կամի բաժանվիլ վասն ազատաբար ապրելոյ։

Ամսիս Ջ.ին քոլէճի տօնն էր, որոյ աղաքաւ մեծաւ յարգութեամբ սեղան կոչեցին զՊատրիարգն, ուր ետ սեղանին ընդ մօսինեօր մօնդին և մօնսինեօր ասիմանին խոսակցութիւնս եղեր է ի վերայ Աստուածաշունչին, քանզի ասած են նոյն մօնսինեօր մօնդիին թէ Աստուածաշունչն տարբերութիւն ունի մսրատմա? աստուածաշունչէն, և Պատրիարգն ճարտարաբար պատասխանելով նոյն մօնսինեօր մօնդիին և անդ եղելոց ոչ միայն ոչընչացոյց զկարծիքն նոցին, այլ եցոյց նոցա թէ որչափ չանիւ և աշխատութեամբ ներկայութեամբ ի լեզուով Աստուածաշունչի սրբագրեցեալ է և ուղիղեալ ամենայն սըղալանաց. այս պատճառաւ տեսեր է ի Աստուածաշունչ մոտ նոյն մօնսինեօր մոնդին...։

Ադա Պետրոսն մինչեւ յաժմս երբեմն գնալու եղաւ և երբեմն մնալու. և յաժմս մին քանի խընդիրք ունի փափէն վասն որոյ պիտի սպասէ։...

Ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

Ամի տեառն 1743 յունվարի 12
[ի Հռոմ]

ՃԺԷ.

Շատ կարևոր թուղթ մ'է հետևեալը։

Նախ կը տեղեկանանք, որ Բենեդիկտոս ԺԴ. մանաւոր փափկութեամբ կը կարգէ Հռոմայ մէջ մեր Աբրահամ կաթողիկոսը, «առ ի որոնել և քննել զպիսկոպոսուսն և

եկեղեցականաց հայոց, սկսեալ ի «Կրտսերեաց մերոյ վերչին աստիճան» և այլն։ Քահանայապետական այս լուրջ կարգադրութեան պատճառներն են – ինչպէս կ'իմացուի – առ Ա. Գահ հասած կարգ մը աննպաստ լուրեր, որոնք կասկածի ենթարկած էին Հայ կղերականներէ ոմանց ընդունած Ա. Խորհուրդները և Ջնորհագրութեանց օրինաւորութիւնը։ Աբրահամ կաթողիկոսի կատարած քննութիւնը գժրախտ արդիւնք մը կու տայ յանձին Հայ բարձրաստիճան ծանօթ եկեղեցականի մը՝ Սուքիաս եպիսկոպոսին, որոյ ընդունած Խորհուրդները անվաւեր կը հռչակուին. բան այնմ իրր հետեւանք նոր կարգադրութիւններ կ'ըլլան։

Երկրորդ կարեւորութիւն մ'ալ, զոր կը ստանայ մեր վաւերաթուղթը, այն է՝ որ Ա. Գահանայապետը կը պատուիրէ Հռոմի գանուող բոլոր արեւելեան ազգերուն, որպէս զի ամէնքն ալ իրենց զգեստով և արարողութեամբ կատարեն իրենց պատարագը և իրենց միւս ամէն եկեղեցական հանդէսները։

Այս լուսաւոր հրահանգը պէտք է նախամուտ նկատենք տասնեակ մը տարի վերջ Բենեդ. ԺԴ.է հրատարակուած այն հռչակաւոր և յաւերժական յիշատակաց արժանի կոնդակին («Մատուցան ի ժողով յարգելի եղբարց»)՝ զոր ուղղեց «Ա. Միխա« նաբա կարգեալս ընդ արեւելս յաղագս պահպանութեան Միխից եկեղեցւոյն Ջուանց « և այլոց Արեւելեայց» (հրտր. յամին 1755 Մարտի 13)։ Նախամուտ կոչեցինք, որովհետեւ Ա. Հայրն ինքնին այդ կոնդակը տուած տաեն՝ այսպէս կ'ըսէ. « Ջնոյն և մեք « հեղինակութեամբ մերով հաստատեցաք, շարժեալք մանաւանդ ի վճռոյն եղելոյ « յայլում նուագի ի ժողովոյ անտի տարածման հաւատոյ, ի 31 յունվարի յամին « 1702. որ յայնմհետէ բազում անգամ հաստատեցաւ և նորոգեցաւ»։

Հանրական թուղթս հայերէն թարգմանութիւնը կատարած և 1755–ին հրատարակած է ի Հռոմ Մխ. Ուխտէս Հ. Վրթանէս Ալեքեան։ Նոյնը երկրորդ անգամ հրատարակուեցաւ 1914–ի ԲԱԶՄԱՎԷՊին մէջ (տես էջ 379. 417)։

Գերապատուելի և գերյարգելի տեառնդ իմոյ մեծաւ յարգութեամբ ողջոյն մատուցանեմ

. . . Ներկայ գրիւս ոմանս իրս պարտ է ինձ ծանուցանել գերյարգելութեան ձերում, նախ զեռապայծառ Պատրիարգին կողմանէ. նախ յայտ լիցի որ առաջ քան զերկրորդ անգամ անկարծակի սաստկապէս հիւանդանալն իւր, փափն իւրեան իշխանութիւն տալ առ ի որոնել և գտնել զեպիսկոպոսունս և զեկեղեցականս հայոց ըսկսեալ ի միջերուեթենէ մինչև վերջին աստիճան, որ քաղաք, որում անձէ և որոյ ազգաւ առեալ են զկարգն և այլն. արար զքննութիւնս ամենեցուն. բաց ի միուն զամենեքին օրինապէս առեալ են զկարգսն. և այն մէկն իսկոյն հրամանաւ հայրապետին արքելեցաւ պատարագելոյ և խոստովանանք լսելոյ. ետ զատկին պիտի վերստին օրհնէ, տալով նմայ զամենայն սուրբ աստիճանս. և պատճառն է զի օրհնողն իւր առանց ընդունելոյ զկարգ քահանայութեան եպիսկոպոս եղեալ է. այս քանս հոմ ամենայն արեւելեան ազգաց յայտնի է, ևս բազում Ֆռանկաց. բայց տեղդ կարծեմ դեռ ևս չէ լսվաց, վասն որոյ խնդրեմ Ջնասցէ ի ներքոյ կնքոյս Ս[ուքիաս] եպիսկոպոս[1]։

ԵՒս յայտ առնեմ զի փափն հրամայեաց ամենայն արեւելեան ազգաց հոմ եղելոց, զի ամենեքեան իւրեանց ըսկէստիւ և արարողութեամբ առնեն զպատարագն և զայլ եկե-

---

1. Այս դէպքը կը պատմուի նաեւ Ազաչ Պետրոսի առ Մխիթար գրած մէկ նամակին մէջն այսպէս. « ... զսուքիաս եպիսկոպոսն ևս առիւել են ամէ որ ոչ պատարագ կասէ և ոչ խոստովանութիւն լսէ և քէ զպատճառն կամիս գիտել նայ, ասաց հոգւոյր հայրն քէ ոչ է ձեռնադրեալ, սուրկ այսինքն խալպ և անհատատ եպիսկոպոս էղիլ է նայ վօվօր զսուքիաս եպիսկոպոսն ձեռնադրած ըլլայ. վասն որոյ առիւելալ է զատլին ...» (Գր. 1748 Մարտ 23, Հռոմ)։

դեցական արարողութիւնն, մկրտութիւնն, վերջի օծումն, թաղումն և զատկական սրբութիւն առնելն ամէն ազգ իւր եկեղեցին. վասն որոյ ամէն ազգէ մէկ մէկ քուռաթ կարքէցին, հանդերձ քննութեամբ առաջի կարտինալ Վ[իքարին]. վասն մեր ազգի տէր գրիգորն ոչ կամեցաւ յանձն առնուլ քուրաթ լինիլն, վասն որոյ մեր կարտինալն զտեփան վարդապետն առաջ էած. նախ քան զայս, Ջ ամիս կայ որ որդորմամբ և աչխատութեամբ ոսն ոսմէնիքոյին և միջնորդութեամբ կարտինալ կարաֆային հոյն ըստեփան վարդապետն փոփականատայի քօլէճն ի վերայ մանկանց հայոց լէքթոր կացուցեալ էին, բայց առանց եկամուտի. վասն որոյ մեր կարտինալն կամեցաւ տէր գրիգորին փառն սորայ վերայ անել և տէր գրիգորն ճանապարհ դնել ...։

Հոգևոր Տէրն յաժմս յաժմս քօնֆուսմաչէի պատճառաւ դիտաւորութիւնն փոխեց վճռական գալու, այս ամսիս վերջն կամի ճանապարհորդ լինիլ ալիկուռնայու վերայով. իրաւի ճշմարիտն ասեմ հայր գերյարգելի որ եզակի և գովութեան արժան մարդ է, եթէ այլ անձանց և այլ տեղաց այլ և այլ բան լսես չի հաւատաս, այլ գրով երբ ժամանակ ունենամ ծանուցանեմ հրամանուդդ զհատկութիւն սորին։...

Աղայ պետրոն ետ զատկին կամի ճանապարհորդ լինիլ, կարծեմ ինքն գրելոց է հրամանուդդ, եթէ բերէ պատկերներն սորայ հետ ուղարկեմ . . .

խոնարհագոյն ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

Հռոմայ, ամի տեառն 1743, Ապրիլի 13

ԱԺԸ.

Բնականաբար ուղղակի պիտի փափագէինք գիտնալ, թէ ի՛նչ պատճառաւ Աբրահամ Պետրոս Ա. չէ կրցած ի գործ դնել Ս. Ղազար գալու դիտաւորութիւնը։ Հետագայ իր իսկ նամակին մէջ այդ մասին գոհացում կը գտնենք։

Նամակագիրս կը տեղեկացնէ նաեւ առ Մխիթար՝ Ս. Գահէն ստանձնած պաշտաման գործադրութեան աւարտումը։ Յատկապէս դիտել կու տանք հոս, որ Աբրահամու բարձր պաշտօնը լոկ Հռոմայ Հայ Եկեղեցականութեան չի հայիր, վասն զի ան կը տարածուի այսպէս. «ի վերայ ուղղափառաց ոչ միայն ի յարևելս այլ և ի Հռոմ»։

1743 ապրիլի 21 [ի Հռոմ]

Գերյարգելի եղբօրդ իմոյ աբբահօրն
Ողջուն

Երևի թէ զրկեցեալ գոլ փափազօդն ի տեսութենէ փափագելւոյն. զի Սրբութիւն[1] սիրոյ և ցաւակցութեան և խրատական կերպիւ ասաց թէ մի գնար ի վէնէնցիեա, վասն զօրաց որք կան. եւս նազարէթ[2] սահմանեալ են. զի Գ նազարէթն բաւէ զոր կրեցեր. լինի թէ չուտով վերջ լինի, գոյ յոյս տեսանել զգերյարգելիդ կամօքն աստուծոյ. և պատմէ մեր սիրելի պարոն աղաչա պետրոսն զամենայն իր զոր ետես և լուաւ. և յղեց-[ից...][3] զերկու կօնտակն սուրբ փափին. խնդրե[մ..] թար[գ]մանիցէք ի հայ բարբառ և չուտով յղեսջիք ի Հռօմ ի ձեռն ամենապայծառ վրդանէս եպիսկոպոսին, եթէ կամիք յոյժ հաճելի չնորհ է մեզ. էրէմիեա վարդապետն յարիւն թքնէ. դրի քահանայից իսպի-

---

1. Այսինքն Բենեդ. ԺԴ.։
2. Lazaret = Ջգուշարան (ժանտախտի և այլ սարսափելիկ հիւանդութեանց դէմ)։
3. Ցեցակեր բլլալով դժուարընթեռնելի է, ինչպէս նաեւ միւս քառակուսի փակագծեալները։

թալն, հրամանաւ ամենավսեմ վիկարին և նորին կառու. իսկ մանուկն որ երեք ընդ իւր, եմուտ ի գպրատուն սուրբ Հոգովոյն. և զգնացաւ մարտի 25. իսկ կարապետ մանչն յուսանի մօտ սիրելոյն մեր պարոն յովանէսին. զսուրբ աջդ համբուրեն. և ես կատարեցաւ փննութիւնն ամենից եկեղեցականաց պաշտօնից և կարգաւորութեանց, զոր հրամայեալ էր Արբութիւնն և տուեալ գրիւ բացարձակ իշխանութիւն ի վերայ յուղղափառաց ոչ միայն ի յարևելս այլ և ի Հռոմ. բազում ջանիւ կատարեցաւ աստուածով. յոյժ սիրով ողջուն և օրհնութիւն վերապատուելի յովանէս վերդապետին, ծանոյ նմա, յորժամ առողջանայ երէմիեա վարդապետն չուռով գալոց է որպէս և խնդրեաց. և ամենից հասարակութեան գերյարգելոյդ Ողջուն և օրհնութիւն. և եթէ գիտես երբ չունելոյ են գերապայծառն մինաս եպիսկոպոսն և մօնսինեօռն որ է պոնայ, եթէ կամիս գրես ինձ. դարձեալ մեր սիրելի պարոն թաչին ողջուն և օրհնութիւն. չնորհ առնէ եթէ գիտէ ծանուցանէ, վասն չարհացակերի որդի|...| պետրոսին կոզմանէ ուր լինիլն և որպէս կեալն. վերջ տամ բանիս. |խնդրելով| յԱստուածոյ զամենայն երջանկութիւն յար գերյարգելոյս. |և միշտ| ժամեմ զաղօթս ի Հասարակութենէ և Միամ ամենայնի պատրաստ

Նշաւոյ
Աբրահամ Պետրոս Արծիւեան
Ա. Պատրիարգ Հայոց հաստատեցեալ
ի գահէն Պետրոսեան

ՃԺԹ.

Մեր կարծիքով՝ այլևս առուգուած պէտք է համարիլ վանքիս Աւանդատան Յ. Յովսեփեայ պատկերին հեղինակը։ Հետագայ գիրը համոզիչ վաւերաթուղթ մը կը նկատենք այդ մասին։

Գերյարգելի և գերապատուելի տեառնդ իմոյ ջոյժ սիրով և խոնարհաբար ողջոյն

Ցայս առնեմ վերոյ գրեցեալ գերյարգելի Հօրդ իմոյ որ ահա սրբոյն Պէնէդիքտոսի և սրբոյն Ովսէփեայ պատկերքն ըստ տկարութեան իմոյ արարեալ թէսլիմ առի հանդերձ ղութույովն ի ձեռն աղայչայ Պետրոսին որ բերէ հասուցանէ հրամանուդ. խնդրեմ երբ հասանին, ոմն արվեստաւոր կոչես որ առանց սրսէլէմիշ անելոյ Չէրչիվէլի քաշէ. եաոյ հաւկիթի Չէրմկուց տայ Հայր Իկնայտիոսն։

Այտ սուրբ ովսէփի պատկերն վ.րդանէս եպիսկոպոսին յիշատակն է, նրբ նկարէի ինքն ետես և կամեցաւ որ իւր անուամբ ուղարկեմ այտ պատկերն. ևս 3 ոսկի տվաւ վասն փէրվազի. այս 3 ոսկին պարոն պետրոսին տվի որ բերէ հրամանուդ տայ։

Եւս մին Խաչելութեան փոքր պատկեր կայ. վաղուց ժամանակէ Միացեր էր, որ է վերապատուելի հայր անտօնին։...

Խոնարհագոյն ծառայ և որդի
[պատկերահան] Յոհաննէս

Ամի տեառն 1743
Աբրիլի 22 [կ. Պոլիս]

ՃԻ.

Ահարկու և անգութ ինքնակալ Դահմազ Ղուլի խանի կամ Նատրշահի եղեռնալից կեանքէն (1736–1747) զարմանալի և հետաքրքրական դիպուած մը կը լսենք Հ. Պօղոս վ.է։

Նամակին մէջ չենք գտներ Շահին հիւանդութեան անունը, սակայն մեզ կը թուի որ Ջրգողութիւն ըլլայ, որովհետև իր վերջին տարիներուն մէջ ատկէ բռնուած ըլլալը կը հաւաստուի[1]: Անոր կեանքը, ինչպէս յայտնի է, սպանութեամբ վերջ կը գտնէ:

Գերյարգելոյ Տեառն Տեառն Միխրտչոյ Աբբայի Հօրդ մերոյ

... Դահմազդուլին հիւանդացեալ կոչեալ է զբժիշկս. և ոչ ոք գնա կարացեալ է բուժել. և պատրի ոմն քափուճին գնացեալ առ նա՝ բժշկեալ է գնա: Եւ յետ որոյ ա-սացեալ է պատրոյն. Խնդրեա յինէն զինչ կամիս. առ որ պատասխանեալ է պատրին թէ ես զդրամ ինչ ոչ խնդրեմ, զի հրաժարեալ եմ ես յամենայն ընչից. այլ խնդրեմ ի քէն, զի քայքայեցեալ եկեղեցիք մեր ի Թիֆլիս չինեսցին: Եւ ասէ ո՞վ արար զայնս՝ ասէ պատրին՝ Ղալիֆայն որ է հայոց կաթուղիկն: Եւ դահմազդուլի իսկոյն հրամայէ առաձել յինքն զղալիֆայն. և տայ գնա երեք օր և երեք գիշեր կախեալ ճնալ ի թևոց նորա. յետ այնորիկ հրամայէ նմա տալ պատրոյն զ80 քսակ դրամ, եօթն հազար ուղտ՝ եօթն հազար ջորի, եօթն վարիչ եզ, որպէս զի այնոքիւք չինիցին տապալեալ եկեղեցիք պատճառաւ ղալիֆային: Գաղտագի կարգաւորք որք ատի գնացեալք եղեն յերկիրն իւրեանց՝ մեծօք փառօք մտեալք ի վանս և յեկեղեցիս, և տիրապետեալք են գնոսա. և յիշխել ամենից դէմից իւրեանց, որք են 25: Բայց ի Հալէպ խառնակութիւն ինչ եղեալ էգէ, յորմէ արտուղղայք հալածումն յարուցեալք իցեն: Բայց ըստ որում ատտ ասի, և նա ուղղի: ....

Գերապայծառութեան ձերում
Նուաստագունեղ ծառայ
ս. տ. ս. Հայր Պօղոս վարդապետ

Ցամի տեառն 1743
և մայիսի 28
[կ. Պոլիս]

ՃԻԱ.

Միջանկեալ դէպքերով նախ տարաբախտ Յուքիաս կարծեցեալ եպիսկոպոսին յետին կարեկցական պահերը կը նկարագրուին մանրամասն. յետոյ կը յիշատակուին Աբրահամ-Պետրոսի Հռոմայ վերջին օրերու շրջանէն քանի մը դժուարին պարագա-ներ, որոնք կաթողիկոսին կենսագրական պատմութեան հետ ուղղակի աղերս ունին:

Գերյարգելի և գերապատուելի տեառնդ իմոյ յոյժ սիրով և խոնարհութեամբ ողջոյն մատուցանեմք

... ի կողմանէ գերապայծառ Պատրիարքին մերոյ յայտ լիցի հրամանուցդ որ երբ սա Հրօմ եկաւ, մառօնիք, եւս առաւել մօնսինեօր ասիմանն մեծաւ սիրով պատվէին զնա. նաև որպէս այլ անգամ ծանուցի փափն և ոմանք կարտինալք յոյժ սէր ցուցին նմա. բայց գնալու ժամանակն այլ կերպ փոխվեցաւ բանն, ոչ փափին կողմանէ, այլ կարտինալ փէթրան և ասիմանն հանդերձ այլ մառօնիք երես դարձուցին ի նմանէ. այս այս երկու պատճառաւս, մինն Յուքիաս վարդապետին կողմանէ կարտինալ փէթրան հրաման առաւ իւրեան առ ի վերստին ձեռնադրել քահանայ և եպիսկոպոս վերոյիշեալ տէր սուքիասն. և սա դէմ եկաց հրամանի նորին, գնաց և ծանոյց փափին զանազան արքելմունս Յուքիաս վարդապետին կողմանէ, և հրաման էառ ոչ օծել զնա եպիսկոպոս.

1. «La Grande Encyclopédie», Tome XXIV, Paris.

և կարտինալ փէթրան այս բանի վերայ բարկացաւ, բայց դալիանի փուլիթիկայով առանց արտաքսապէս ցոյց տալով. այն օրերն Աւգիաս վ. փոքր ինչ ակարութիւն ունէր. լսելով այս խապարն, սաստկացաւ ակարութիւնն նորին, մանաւանդ չըսպասելով կողմանէ անկաս ի հոգևարութիւն, գնացի տեսանել զնա. մատնիք չըջապատեալ էին զնա. ի Հայոց ոչ ոք կայր անդ. Պատրիարքն ևս հանդերձ քահաննայութ գնաց հայցել զնա առաջ քան մեռանիլն կտակ առաւ փոփականաան վասիս (?) և անդ թաղիլ և կարտինալ փէթրան վէքիլ. պատրիարքն գնաց ի թաղումն նորին հանդերձ եպիսկոպոսօք և քահանայութ. թէպէտ քահանայի կարգիս մեռաւ, բայց թարով իբր եպիսկոպոս արարին զթաղումն նորին. ետ իւրոյ մահվան ումնէք ասին և խոսեցան թէ նախատինքն և տրտմութիւնն ըշտապեցոյց նմա զմահն իւր. բազումք կարծէին թէ չատ փող ունիցեր, բայց ընդ ամէնն հազիւ հազար ուսկութ հասանի. և մեր եկեղեցւոյ ոչ ինչ թողաւ։ Ըւ երկրորդ պատճառն ասիմանին հակառակութեան այս է. Զ. ամիս առաջ խապար եկաւ թէ մատնոց պատրիարքն վաղճանել է և եպիսկոպոսք երկու ֆախա եղեալ Ը պատրիարք արարեալ են. և երկու զանազան էլչի յղեալ են փափին խնդրելով զհաստատութիւն. և փափն ետ քննելոյ զբանն ոչընչացոյց զերկուսին զընտրոգութիւնն և երրորդ ամն ասկան ասիմանին անուանեաց Պատրիարք. ետ անուանելոյն հարցոյց մեր Պատրիարքին զորպիսութիւնն այս երրորդ անձին, և պատրիարքն մտածելով թէ հարկաւոր է ամենայն ոք մեծաւորաց մանաւանդ փափին զճշմարիտն ասել, ծանուցեր է թէ ընտրեալ եպիսկոպոսն բարի և խոհեմ մարդ է, բայց թուրքծած եղբայր մի ունի յոյժ չար և բազում ինաս հասուցեալ է ազգին և աթոռոյն. և այս թուրքն առաւել մերձակայ ազգական է ասիմանին, որոյ ականճն հասանելով, բովանդակ սէրն և քաղցրութիւնն դառն առելութիւն արար ընդդէմ պատրիարքին. այս բանին յայտնվիլն և տարածիլն ի մէջ փոանկաց յոյժ նախատինք և անուան պակասութիւն եղեւ ասիմանին, որոյ ազաքաւ դառնացեալ բորբոքեցաւ ընդդէմ պատրիարքին, թէպէտ սա վերոյասացեալ պատահմանց ոչ խոովեցաւ։ Այլ Հալոզու խապարն յոյժ տըխրեցոյց զինքն՝ ըստ այսմ ամենայնի ոչ համարձակեցաւ փափէն օգնութիւնս խնդրել կամ հրաման առ ի առաքել Սահակ եպիսկոպոսն մուրալ յերկիրն քրիստոնէից, որպէս ըսկիսքն ունէր դիտաւորութիւն. թէպէտ բազում յանձնարարական գրերս եառն իւրեան. նախ քան զզվէլն խնդրեց հրաման փափէն առ ի տանել ընդ ինքեան զօսմանս անձինս, և փափն օժարութեամբ հաճեցաւ. վասն որոյ ակամայ կամօք տարաւ ընդ ինքեան զինէոս եպիսկոպոսն, որ ոչ կամէին գնալ, նմանապէս իւր աշակերտ տէր Նիկողայոսն. զսա յոյժ բարուք արաւ տանելն. եթէ տեսս մնար մեծամեծ խառնակութիւնս աներ վասն անմահացուցեալ բնութեան իւրոյ. փափն բաց ի այն 300 ուսկութէն առելի փող չի տվաւ իւրեան. միայն թէ 318 ամսվան բարթ իւր և սահակ եպիսկոպոսին փէշին տվին, քանի որ քրիստոնէին հողն են կերակրին հանդերձ իւրայնովք. տեսս իւրեան վէքիլ չի թողաւ, որպէս ունին այլ Պատրիարքունս։ Վերջապէս աստուած բարի ճանապարհ տայցէ և օգնական լիցի այս վեհալուստէր Պատրիարքին, զի մեծ աշխատաւոր և արդիւնաւոր է վասն ուղղափառ հաւատի, ինքն բարի վարուք արաքինասէր մանաւանդ յոյժ խոնարհ։

Ակնկալեալ գիր եկաւ իւրմէն. բարեպէս հասեր է անդ հանդերձ ընդ իւր եղեալ անձամբք...։

Խոնարհագոյն որդի և ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

Ամի տեառն 1743, Օգոստոսի 3
[ի Հռոմ]

ՃԻԲ.

Հրաժեշտ առած է այլեւս Աբրահամ Պատրիարք Հռոմէն։ Ինոր բաժանումն այսպէս կը տեղեկագրուի Կարապետ անուն անձէ մը առ Մխիթար. «ի յուլիսի 11ին «գնի զԳ. ժամուն աւուր հինգշաբթէի, ճանապարհեցաւ աստի Գ. արապայով Գեր-

« յարգելի Հոգեւոր տէրն. և ընդ նմին եղեալքն են սոքին. Գերապայծառ սահակ « եպիսկոպոսն, Եւգինէոս եպիսկոպոսն, վերապատուելի տէր մատիրոսն, տէր Նիկո- « դոսն, տէր անտօնն և էնկիւրցի մանուկն առ ի գնալ յալիկուռնա » (Գր. 13 Յունիս « 1743, Հռովմ)։

Նամակս յատուկ ծանուցագիր մըն է նկատմամբ տէր Նիկողայոսի՝ որ Լիվոռնոյի (Ալիկուռնա) մէջ անհաւատարիմ կը գտնուի իր պատրիարքին ու կը զատուի ի սպառ։

Գնդապետ Գիլյարգիի և ասկնայի գովութեանց արժան եղբօրն իմոյ Աբրայ Հօրդ Պղտուն

Ցայտ լիցի սիրելագոյն եղբայրութեանդ. ահա նաւ մի պատրաստեցաւ յանկարծակի վ.օլանդէս որ գնայ ի յաղէքսանդրիա. այնպէս գիտացի թէ աստուած պատրաստեաց օր վերափոխման կուսին. յետ պատարագին մտաք ի նաւ։ Եւ խնդրեմ յաղօթս ի սրբոյ Հասարակութենէ. բայց յայժ վշտացոյց զիս կրօնաւոր տէր նիկողայոսն, զի ապստամբեցաւ յուխտին, և յանջատեցաւ յինէն առանց փորձութեան և անբաւական պատճառի. այս է միայն իւր իղձն որ չըլի սանձարձակ, երկիրն քրիստոնէից կամ յայլ տեղիս, զի գիտէ սակաւ տալիեանէրէն. բերի զհետ իմ իբր թարգման. բնաւ օգուտ ոչ եղև այլ բազում վնաս. վասն որոյ խնդրի որ եթէ գայցէ առ ձեզ, գիտասջիք, ապստամբ և յուխտազանց է թէ կրօնին և թէ իւր կաթողիկոսին. և այսու կերպիւ ծանիցէք. և այս եղեւ ներկայութեամբ ստեփաննոս վարդապետին և տէր յակոբին, զի նոքա շատ խրատեցին և ոչ ինչ օգտեցան, և այսպէս լրբութեամբ պատասխանեալ նոցա ասաց. Մի թէ դուք դատաւոր էք ի վերայ իմ. և հայրութիւնդ եւս չնորք արա հայրական խրատիւ մի թէ և զղջանայցէ և վարձն ի քրիստոսէ առցես. ամէն։ Եւ մի մոռանար զտառապեալս ի լեառն գրիւ քով մխիթարականաւ, և եթէ յիշեցեալ ապստամբն գայցէ առ ձեզ կամ յայլ տեղիս ծանոյ ինձ. ընդ յիս գինէոս եպիսկոպոսն ողջունէ զգերյարգելութիւնդ. հայր յանտօնն և տիրացու մանուկն զսուրբ աջդ համբուրեն, սահակ եպիսկոպոսն տկար է. ոչ կարէ մտանել ի նաւ. Ծնաց ի յալիկօռնայ. գրեցաւ ներ նաւու ի ծովն նաւահանգստի. վերջացուցանեմ սիրով.

Նուաստ ծառայ
Պետրոս կաթողիկոս Հայոց
Հաստատեցեալ ի սրբոյ գահէն

1743 Օգոստոսի 15
[Ալիկոռնա]

ՃԻԳ.

Ուրեմն Աբրահամ պատրիարք Հռովմէն յուլիս 11ին Լիվոռնոյ մեկնելէ վերջ՝ կը թողու և զայն՝ ըստ մեր ներկայ թղթին՝ օգոստոսի 10ին։

Այս անգամ ցուհաննէս պատկերահան սոյն պատրիարքին ի Լիվոռնոյ անցուցած միամսեայ ժամանակի շրջանէն է որ տեղեկութիւններ կը հաղորդէ։

Նամակէս կ'իմանանք նաև Հռովմայ մէջ բոյն դրած աղանդի մը ծագման առաջին լուրը, ինչպէս ակնարկ մ'ալ՝ կուսանի մը շուրջ լսուած սքանչելիքի մը վրայօք։

Գնդապետ գիլյարգիի և ասկնայի տէրութեան քոյր յարգութեան և վեծաւ սիրով ողջոյն մատուցանեմ

. . . կարծեմ լվեալ իցես Հոգեւոր տիրոջ օգոստոսի 10 գնալն Լիվորնայու, նախ քան զգնալն երկու գիր գրեց ինձ, որովք ծանուցաներ թէ հրամանուցդ գրած է նաեւ չնորհակալութիւնս վասն պրեվին[1] թարգմանութեանն և ընկալեալ է զպատասխանն։

1. Breve = կոնդակ

Եւս յայտ լիցի, նախ քան իւր հասանիլն լիվորնայ, մանսինեօր ասխմանն գրած է անդ թէ փափին աչաց անկեալ իբրեւ ապստրեալ ելաւ Հռոմայու, բայց եաոյ փափին գիրն հասանելով անդ, որ մեծ պատուով և սիրով գրած էր պատրիարքին, և տէր ակոբն որինակն առեալ տարածելով ամենայն ներհակքն արիբերան եղեալ են. նաեւ յայտ լիցի որ իւր աշակերտ հալէպցի տէր Նիկողայոսն զաւեալ պատրիարքէն անդ մնացեր է, թէպէտ չանացի և ազաչեցի պատրիարքին թէ այս անձս չի մնայ երկիրն քրիստոնէից, զի սորա ատ մնալն նախատինք է անուան նոյն պատրիարքին և այլն. և յաժմս ասեմ թոյլտուութեամբ աստուծոյ եղև. կամք տեառն օրհնեալ եղիցի։

Նախ քան պատրիարքին տեղէս գնալն լսեցաք, թէ մխլախիմ օղլին նափոլի տեսած են, և պատրիարքն յոյժ ցաւեր այս բանիս վերայ, կարծեմ լվեալ իցէ։

Եւս յայտ առնեմ, տեղս աղանդ իմն ըսկըսեալ, և ըսկսեալ էր տարածիլ յոյժ ծածկաբար, բայց եաոյ ումեմն մեծատան աղախինն յայտնեաց սանթոֆիցօին որոյ գործակալքն մի և նոյն ժամի անկարծորէն բռնեցին զգլխաւորս նոցին և ոմանք բախեան. և աղանդն էր այս, թէ սիրել զաստուած և զընկերս, ոչընչացուցանելով զայլս պատգամս աստուծոյ և եկեղեցւոյ, և վերոյաստգելոյն ամենայն ոք հաւանութիւն ուզեն պարտեր իւր արեամբն հանդերձ երդմամբ գրել։

Մօտերս ի վանքի միոյ մին կոյս մնաւ, և նախապէս ճանաչելով զվարս նորին հրամանաւ կարտինալ վիքարին բացեալ գոհն ի վերայ սրտին երիք կամ և այլ նշանք չարչարանքայն քրիստոսի. ես նոյն վանքի կուսանացն կամեցայ լսել։...

Հաստատապէս ասեն թէ փափն առաջ քան զսուրբ աստուածածնայ ծնունդեան տօնն իւր կարտինալ առնելոց է։...

Խոնարհագոյն ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

Ամի տեառն 1743, Օգոստոսի 31
[ի Հռոմ]

ՃԻԴ.

Հայ կաթողիկէ Նուիրատեսութեան սկզբնական շրջանին վերաբերեալ պատմական ծանօթութիւններ և անցքեր կը լսենք Աբրահամ – Պետրոսէ՝ իր անցած վայրերէն։

Գերյարգելի եղբօրդ իմոյ Մխիթար արքայ հօրդ
Ողջոյն

[Ձեռագիր] 1743 Սեպտեմբեր 25

Յայտ լիցի վերոյգրեցելոյ զի ահա ողորմութեամբն Աստուծոյ հասաք և աղօթիւք հասարակութեան ողջ և խաղաղ ի մեծ քաղաքն յաղէքսանդրիեա, ի սեպտեմբերի 13. և աստի զամ աստուծով ի վանքն մեր. բայց ոչ գիտացի թէ զինչ պատասխան գրեցեր ինձ զոր գրեցի ի յալիկօռնայու, զի յանկարծակի պատրաստեցաւ նաւն ի մէջ ե յաւուր գնալ դատարկ. և ես իբր ի յաստուծոյ պատրաստեցեալ համարեցայ և չուեցի, ասելով թէ գնամ և տեսանեմ զորպիսութիւն ամենից իրաց վանքին և քաղաքին. եթէ հարկն պահանջէ առնիցեմ ըստ պիտոյից և օգտի։ Բայց լուայ թագաւորն Գալլիոյ գրեաց իւր հրեշտակին թէ ի հարկէ պարտիս դարձուցանել զկնկեղեցին Բերիոյ որպէս էրն, և միտ դնել և օգնել Պետրոս կաթողիկոսին Հայոց նոր հաստատեցելոյ ի սրբոյ Գահէն. զի Սրբութիւնն գրեաց և խնդրեաց. և լիցի քեզ այս գործ հարկաւոր և յաւուկ. բարի է յուսալ ի տէր, զի ի վերայ մեր երկրին Գ փաշայ բազում զօրք յարեան. յառաջ քան

զպատերազմին 3 օր, սատակեցաւ փաշան որ էր զօրագլուխ ամենից զօրաց, և կոչէր սէլէման փաշա իսկ աւագ, և բարձեալ տարան զգէշ մարմինն ի Դամասկոս, և զօրքն ամենայն ցրուեցան աստուածով և հանդարտեցաւ լեառն Աստուծոյ զօրութեամբն [,] ոչ կարէ ելանել [.] բայց բազում նեղութիւն և վնաս կրէր երկիրն և ժողովուրդն, և այս մին զարմացման գործ և նշան եղեւ օրհնութեամբ և աղօթիւք սուրբ փափին, ի լուր և ի տես ամենից ի լեառն քէսըրվան.. ցուցանի, զի կռնատակն և ներողութիւնքն վէհին Թարգմանեցեալ արապերէն յառաջադէմ յղեցի ընդ տիրացու սիմաւոնիւ ի վանքն. եհաս ի օգոստոսի 1.ն. կային անդ ի Բերիոյ հալածականք, յակոբ եպիսկոպոսն բերիոյ, քահանայք և ժողովուրդք փախստականք. լուր եղեւ բազմաց թէ օրհնութիւն և ներողութիւնք հասին ի վանքն յիսուսի փրկչին ի սրբոյ յաթոռոյն: ժողովեցան բազումք ի ոտնի այլակերպութեան ի վանքն վասն նոր ներողութեան և օրհնութեան կռնատակի սուրբ փափին, և երկիրն պաշարեցեալ ի չար զօրաց և իբրեւ կատարեցին զամենայն, ասէ քարոզատուն. Որովհետեւ այսքան օրհնութեամբ և պարգեւօք լցոյց զմեզ զսրբազան փափն ի զանձուց սրբոյ եկեղեցւոյ, պարտիմ գոհանալ զաստուածոյ և չնորհակալ լինել ի սրբութենէն, և խնդրել ի յաստուածոյ, յաճումն սրբոյ հաւատոյ, չնչումն հերետիկոսութեանց, բարձ[ր]ացումն եկեղեցւոյ, միաբանութիւն թագաւորաց, և սրբոյ վէհին երկարութիւն կենաց: Եւս աղօթիւք սրբութեան և յաւուրս չնորհիւ խնդրեմք ի յաստուածոյ ազատութիւն երկրին մերոյ ի չար և անօրէն զօրաց, և ասեմք զլիթանիեայն յիսուսի փրկչին մերոյ ի խորոց սրտէ. չերմեռանդութեամբ և լալիւ կատարեցին և արձակեցան. և յետ երից աւուրց եկն աւետիս թէ չարն սատակեցաւ յանկարծ մահուամբ, որպէս յուլիեանոս, ցրուեցաւ զօրքն ամենայն և խաղաղացաւ երկիրն, որպէս էրէկն և առանցն: Դարձեալ և այս թղթաբեր քահանայն է ի սպահան քաղաքէն, նոր յուղարկաւ, գնա ի յուխտ ի Հռօմ, տեսի զսա չնորհաց[1].... և հեզահոգի: Խնդրեմ յիսուսէ զի հաստ[ատուն] մնասցէ սահակ եպիսկոպոսն, գինէոս եպիսկոպոսն, հայր անտոնն, հայր յովսէփն, հայր մատթէոսն որք ընդ իս են յաղօթս խնդրեն և ես ընդ նոցա, ողջ ի տէր ամէն

Պետրոս Ա. կաթողիկոս հայոց
Հաստատեցեալ ի սրբոյ Գահէն

ՃԻԵ.

Մարտիրոսագրութեան մը մանրամասն պատմութիւնը կը դնէ մեր առջև Հ. Մխայէլ վարդապետ. այդ շահեկան տեղեկութիւնը այնպէս կը թուի մեզ՝ որ պակաս մը պիտի լեցնէ Հայ վկայաբանութեան մէջ:

Գերյարգելոյ Աբրոյ Հօրդ վերոյ, տնտեսի տնտեսի Մխիթարեայ Աստուածաբանութեան վարդապետի

. . . Եկեսցուք յայժմ առ նորագոյն ինչ, զի լուաք թէ սակաւ ինչ խումբ պարսկական եկեալ ի սեբաստիա, իշևանեալ ոչ ումեք վնասեն, և զոր ինչ առնուն հատուցանեն, զոմանս փուռս հացագործաց ինքեանց սեփհականեալ, և զոմանս հասարակ քաղաքացւոց թողեալ. ասած լինին թէ մերոյ թագաւորին դէմ ենք եկեալ, որ աստի խմբով սոցին գնալոց է. նաեւ լուաք թէ թահմազն զպասրա, զնինվէ, զքէրքիւտ սեփհականեալ է, է և ի ներքոյ տիգրանակերտի: Դաեւ իբրու 20 օր է, որ աստ երեքտասան ամաց պատանի մի, ազգաւ հայր[2] մարտիրոս անուն մարտիրոսացաւ, զրպարտութեանց հանդիպեալ, իբր

1. Ահկէ վերջ կայ ուրիշ անընթեռնելի բառ մը։
2. Անշուշտ հայ պէտք է ըլլայ։

երկու ամիս ի բանտի կեցեալ, ստիպեցեալ բազմիցս տաճկութիւն, և նա ամենևին հաստատ մնացեալ ի հաւատս. ներկայացուցեալ առաջի վէզիրին, արարեալ զբազում խոստումս մեծութեան, քիւրթ մեծագին, մինչև ցհինգ քսակ դրամ. և նա պատասխանեալ համարձակ դիմօք. Այս զուր է ինձ, թէ բոլոր աշխարհս տաս ոչ հանիմ. թէ ազատելոց ես զիս ազատեա, թէ ոչ՝ հրամայեա սպանանել զիս։ Այսպէս հաւանեցեալ եղեւ վեհս զբլխատել ի պարմախաղաբուն, և անդէն ևս հասաս պաշին իջեալ ի ձիոյ փաղակչական բանիւ երիցս խօսեալ, և դահիճն զսուրն ի ձեռին, յորդորեալ զնա դառնալ. և նա ամենևին ոչ հաւանեալ բանից նոցին, ասացեալ է ի յոտին կանգուն կալով հար զիս. և ապա դահիճն միով հարմամբ հատեալ զգլուխ նորին. զի հայր ի նոյն օր ի չուկայս հաւաքեալ են զդրամս իբրու 40 բոլորի չափ և տուեալ դահճին, զի չուտով հատցէ. և նոյն դահիճն ունելով ընդ ինքեան զբամպակս, թաթաւեալ և թաթախեալ ի յարեան նոյնոյ, հայոց արանց և կանանց առնլով զդրամ, մասնիկ մասնիկ բաշխեալ է երեք օր զնացողացն և կեցողացն չուրջ զմարմնով նորին, և ասեն թէ զգլուխն հայոց պատրիարգն առեալ է, և զմի մատն դաղմատացիք, և ի հանդերձէ արենաթաթախ տակաւ ինչ թերևս առ մեզ ևս հասանի, զի ումեմն յանձնեալ եմ. և զլիակատար պատմութիւն սորին ի յառաւել տեղեակ եղողաց գրել տալոց եմ։ Ցմանապէս երկու ամ յառաջ մի պատանի ևս իբրև զայս ի սեբաստիա եղեալ է. և զայսմանէ ևս ջանամ գրել տալ։...

Գերյարգութեան քում
Պատրաստական ամենայնի
Հայր Մկրտիչ Վ. Սեբաստացի

Ցամի տեառն 1743ին հոկտեմբերի 17ին
գիր երրորդ ի Կոստանդնուպօլսոյ

ՃԻԶ.

Մանր ու զանազան լուրերու ժողովածոյ մըն է հետեւեալը։

Գերյարգելոյդ Աբբայ Հօրդ վերոյ, տևառն տևառն Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի

... Բազումք կարգաւորք գոն, թէ ի լիբանանու, թէ հալէպու, թէ յերզրումու, թէ ելանօզք քահանայք աստ ի յեկեղեցեաց հայոց, թէ դպրատունք և թէ այլք բազումք բաց ի մէնջ աւելի քան զքսան են։ Նաեւ ժողովուրդն յամենայնում աւուր յեկեղեցիս լաթինի լիք են. և ստէպ քաւարան առնել տան մեռանողաց վասն, և երգիչք և սպասաւորքն՝ հայոց կտրիճներն և տղայքն են, ուսեալ զլաթինական եղանակ և լեզու ...։ ի յոմանս եկեղեցիս յամենայնում աւուր չորս և հինգ կարգաւոր պատարագեն. երբեմն և ես երթամ պատարագել և խոստովանութիւն լսել։ Գաղատացի տէր եղիա վ. ի մեծի համարի է. ունի զաշակերտ կարգաւորս և զերիտասարդ աշխարհականս, դաս տայ, աշակերտս հանել ջանայ. ի կիրակէի և ի տօնս յեկեղ[եց]ին սուրբ անդօնի քարոզ տայ։ ի սուրբ պետրոս երբեմն հայոց կարգաւորք, այսինքն պուռսացին, ղալզցին տաճկերէն, և ըստ մեծի մասին պատրի տօմէնիկոսն ջահկեցի հայկաբանօրէն, լաւ քարոզիչ է և ընդունելի յոյժ։ ի ձէզուիթաց եկեղեցին, ինքեանք ճէզուիթք քարոզ տան տաճկերէն, մինն յառաւօտեան, մինն յերեկոյին. և սոքա ի դուռն եկեղեցւոյն եասախճի ևս կանգնեցուցանեն յաւուրս կիրակէից։ Եւ բնաւ եկեղեցիքն թէ ի վերնատունն, թէ ի հրապարակ եկեղեցւոյն լիք հայք, և ֆռա[ն]կք ոչ երևին։ ... Մխայլըմ օղլին այժմ ի դրունս մեծամեծ տաճկաց չրջի ընդ աստղագիտաց նոցին վիճի և յաղթօղ գտանի, և ինքն ի համարի ի նոցանէ ունեցեալ լինի, այժմ զնմանէ այսպէս հռչակեցեալ լսի։...

... ի կողմանէ պատերազմի ոչ ինչ երևելի գործ և զրոյց գոյ. բայց քանի մի հազար պարսիկք խաղաղութեամբ նստեալ են ի սեբաստիա և ոչ ումեք վնասեն, այլ եկեալ են զշահի որդին իւրեանց թագաւոր տանիլ զոր սոքա զօրօք ուղարկեն. և լսեմք

թէ բազումք գլխաւորք պարսից զզուեալք են ի թահմազ գուլէն։ եւ յայլուստ լսեմք թէ գհալէզ պաշարեալ է...։... այժմ ժանտացաւն անօսրացաւ։

Գերյարգութեան քում
Մնամ պատրաստական ծառայ
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

Ցամի տեառն 1743
Նոյեմբերի 22
[Կ. Պոլիս]

Ցետ որոյ եգերեցի զգիրս այս և ծալլէի, հրացանք արձակեցան յերից տեղեաց, և թէ զինչ է պատճառն, եւ ձայն թէ զպարսիկս կոտորեալ են սոքա, և թէ այլ որպիսի կերպիւ և մասնաւորապէս զինչ արարեալ են սոքա ոչ գիտեմք...։

ՃԻԷ.

Հայ բարձրաստիճան եկեղեցականներու դասէն ոմանց տեղափոխութիւնը կը տեղեկագրուի Հնտեւեալ գրոյն մէջ։

Գերարգելոյ տեառն Միխիթարայ Ալբոյ Հօրն իմոյ որդիական յարգուրիւամբ ողջոյն

... Նախնէ լվեալ էի այդ եպիսկոպոսին տեղդ գալն և զաղքատութենէ նորին, բայց ոչ միուս հայերուն որ նորապէս եկեալ են... երկու ստամպօլցի եպիսկոպոսք եկեալ են Լիվօրնա, և ընդ նոցա կուռճի տէր գափրելն, մէկին անունն մէսրօպ և միուսն աթանաս, մինն ի սոցանէ ժամանակ ինչ վանգն կացեր է և յաժմս յոյժ աղքատութեամբ հասեր են տեղն... կամք ունին Հռօմ գալու...։

Նաև եկեալ իսկ է տեղս մըսըրտամու ոմն քահանայ յոհաննէս վարդապետ կոչեցեալ. ինքն կեսարու գեղնն է և աշակերտ Սէրգիս եպիսկոպոսին որ էր Լնկուրու առաջնորդ. այս անձս տեղեակ իսկ է ուղղափառութեան բայց ոչ ուղղաբարապէս վարկեալ է, վասն որոյ յատկապէս Հռօմ եկեալ է առ ի դաւանութիւն տալ և տնորինուին առնելոյ։ փոքր ինչ լինձ յայտնեաց իւր դիտմունքն, զի ետ զատկին կամի վ.էնէտիկ գալ առ ի կրօնաւոր լինիլ ընդ Հայրութեան ձերում (որպէս յուսադրեալ է զինքն տէր ստէփանն), բայց ես այս բանիս դժվարութիւնն փոքր ինչ պարզաբանեցի իւրեան. տարօք 28 ամաց է։

Երկու ամիս կայ որ դրապզընու դազար եպիսկոպոսն տեղիս սուրբ ժողովին դաւանութեան գիր է յղեալ....։

Նախ քան զպատրիարքին գնալն լուաք թէ մխլայիմ օղլուն Նափոլի տեսած են...։

Անարժան որդի և ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

Ամի տեառն 1743 Նոյեմբերի 23
[ի Հռոմ]

ՃԻԸ.

Ինչպէս նախորդ վաւերաթուղթերուն մէջ տեսանք, հետեւեալ գիրն ալ կը պարունակէ նորագոյն մանրամասնութիւններ՝ նոյն ժամանակի ազգային եկեղեցական ձեռնադրութեանց մէջ մերթ տեղի ունեցած անորոշութեանց ու խառնակութեանց շուրջ, որոնք Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ դժբախտ շրջան մը կազմած են։

Մեր նամակագիրը առ Միխիթար կը ծանուցանէ նաեւ Պետրոս Պատրիարքէն հասած նոր լուր մը։

Գիրայրգիի և գիրապատուհի տեառն Մխիթարա Աբբայի մեծաւ յարգութբեամբ խոնարհաբար ողջոյն

. . . Լիվորնայ եղեալ եպիսկոպոսն ամսիս 15 հասին տեղս յոյժ չքաւորութեամբ. եւ մին աւուր ծաղկազարդ գրով զանազան կնտաակս ցոյց ամէն վրդանէս եպիսկոպոսին, քահաննաութեանց և եպիսկոպոսութեանց իւրեանց, թափուցանելով զայն ամենայն գոր հարկաւոր էր ծանուցանելն առ ի խնդրել զանօրինութիւն, բայց մեք՝ նախ քան իւրեանց ժամանելն ալիկուանայու լվեալ էաք բանին որպիսութիւնն, զի կարեի աէր գտփրելն ծանուցեալ էր ամենեցուն Լիվորնայ եղելոց. վասն որոյ հարկաղրեցաք նոցա ասել զնշմարիսն. նաև ունէին մի միայն գիր ըստամոլու վ.իքարէն առ սուրբ ժողովն, որով վ.իքարն ծանուցանէր զամենայն ինչ, այսինքն թէ սոքա երկուսն ի միասին ումեմնէ էնկուրու առաջնորդէ սարկաւարք եղեալ են, եաոյ ոմն Աբէլ եպիսկոպոսէ քահանայ գնացեալ մերց ի սիս յոհաննէս մանդուլ կաթուղիկոսէ կաշառօք եպիսկոպոսք եղեալ են և անտի չրշագայելով այսր և անդր եկեալն ըստամոլ. նախ քան իւրեանց հասանիլն թոխաթցի աէր յոհաննէսն գրած է վ.իքարին թէ այն Աբէլ եպիսկոպոսն ոչ է եպիսկոպոս. սոքա լսելով այս, գրած են նոր օրհնող նոյն յովհաննես կաթուղիկոսին առ ի ստուքիլ. և նա պատասխաններ է թէ յաժմս լաւ մտիս չէ, եաոյ ձեզ ծանուցից թէ ես օրհնեալ եմ գնա թէ ոչ. և սոքա առանց ըսպասելոյ երկրորդ պատասխանոյն անձեր են անատոլի և ումեմնէ պուօխորոն անուն եպիսկոպոսէ վերստին քահանայ օրհնված են: Եւ այս բանիս կաթողիկոսէն գիր եկեր է թէ Աբել եպիսկոպոսն իրաւի եպիսկոպոս է. այս վերոյ ասացեալն ամենայն վ.իքարն իւր գրիւն ծանուցանէ սուրբ ժողովին, նաև ասելով թէ սոքա դիմեցին առ սուրբ աթոռն առ ի առնուլ զանօրինութիւն և արձակումն ամենայն իւրեանց ապօրինաւոր բանից. բայց եթէ հնար իցէ[ր] խնդրեմ սուրբ ժողովին ոչ թուլլ տալ սոցայ առ ի դառնալ ի յարևելս վասն արգելելոյ զմեծ գայթակղութիւնն ի մէջ ուղղափառաց. բայց իւրեանք այս ամենայն վերոյասացեալն ոչ խոստովանին պարզութեամբ. նաև ասեն թէ նոր ճանաչած են զուղղափառութիւնն և ոչ ումեքէ առձակում առեալ են: Սոյնս ասեն առ թեթևացուցանել զ[յ]անձանս իւրեանց, բայց լաւ տեղեակ են ուղղափառութեան, մանաւանդ այն օր վանքէն ելած է որ յաժմս աթոռոս կոչի...:

Պետրոս պատրիարքէն գիր եկաւ վ.րդանէս եպիսկոպոսին, ուր ծանուցանէ իւրոյ երջանկութեամբ հասանիլն ի յաղեկսանդր[իա] և անդր ֆրանսըզի պալեօզէն յոյժ սիրով ընդունիլն ի պալատս իւր. նաև ծանուցանէ ոմն ուսէին փաշա բազում զօրօք գնալ ի լիփանան առ աւերել զվանօրայս, և անդ եղեալքն լսելով զայս, մանաւանդ պատրիարքի վանքն երեք օր և երեք գիշեր մեծաւ աղերսանօք աղօթս արարեալ են. եւ քանի աւուր խապար եկեր թէ նոյն փաշան անկարծակի մահով սատակեր է և իւրային զօրքն ձիրուացան եղեր են: Նոյն պատրիարքն աղէքսանդրու քալեր է կիպրոս և անտի իւր վանքն. սոյն գիրս ոտն աօմէնէքօն թարգմանել տվաւ և ետ կարտինալ քարաֆին և սա փափին ձեռն հասոյց որ յոյժ ուրախութեամբ ընկալաւ:...

Ամի տեառն 1743 դեկտեմբերի 21 [Պատկերահան] *Յոհաննէս*

[ի Հռոմ]

Եպիսկոպոսաց կոնտակքն ցոյց կուտայ թէ ըստ կարգի և արարողութեան արարեալ են եպիսկոպոսք և ոչ լոկ բանիւ:

ՃԻԹ.

Շնորհաւորական թուղթս պիտի հետաքրքրէ գրութեան ձևին և արտայայտութեան կերպերուն համար:

[. . . . .]ևիդ եկեղեցւոյ, սևանդ ձշմարտութեան[. . . .][և Հռետորի
Տեառն Տեառն Մխիթարայ Աբբայի և Ամատուածատրան վարդապետի [1]

Ջյղեալ քարտէզդ ուրախալից, որ վասն չնորհաւորութեան չնորհապայծառ և նշուլագեղ ծննդեան Տեառն մերոյ յիսուսի քրիստոսի սիրով ընկալայ ի դեկտեմբերի 26. և ընթերձեալ ուրախ եղէ ոչ սակաւ. այլ արդ՝ ո՛չ ապաքէն և անուանդ գերազանցութիւն, և աստուածաբանութեանդ քո համբաւ և կրօնիդ արփիաճաճանչ և արփացընծուղ բարեվայելչութիւն և հրեշտակակերպ կենցաղաւարութիւն, և յետին ժամանակս յարուցեալ լուսաւորութիւն ազգին ողորմելի հայոց, աճապարեալ սփռելոցդ զիս՝ զնոյնգունակն ողջոյն և սէր. և զչնորհաւորումն, պայծառութեանդ քո ընծայեալ մատուցանել. քանզի և սէրն մեր, որ հիմնեալ է ի մեզ եզականապէս, վասն որոյ միշտ զտիւ և զգիշեր հայցեմ ի Տեառնէ մերմէ յիսուսէ քրիստոսէ՝ զի զքեզ զեղբայրդ իմ գերազազանից, և զվերապատուելի վարդապետս և զնորընծայ աշակերտս քո ամբորձ և անսասան պահեսցէ. և զքեզ՝ որ որպէս ի հինս գմօվսէս կացոյց ի մէջ ազգին իսրայելացւոց. հանել քեւ ի յեգիպտոսէ յերձուածողութենէ. և ի նորս զլուսաւորիչն մեր սրբազան. դարձուցանել զազգն ողորմելի ի խաւարէ մոլորութեան. միշտ ի ձեռն զանազան անուշահոտ ծաղկանց բուրաստանաց անթառամելիս և միշտ հաստաբոյսս, որք հանապազ զազգն լուսաւորեն, բարձր բազկաւ և հզօր ձեռամբ իւրով կարողացուսցէ և զօրացուսցէ Ամէն։

Ցամի Տեառն 1743
ի դեկտեմբերի 28
[ի Հռոմ]

Վրդանէս վարդապետ
իբր եպիսկոպոս

ՃԼ.

Մեր ընթերցողին կը թողունք՝ անդրադառնալ հետեւեալ ընդարձակ վաւերաթուղթին չահեկանութիւնը։

Նամակագիրը, Պետրոս Ա. կաթողիկոս, մանրամասն կը խօսի երեք գլխաւոր նիւթերու շուրջ, որոնք են. 1°. Իր արկածալից ուղեւորութիւնը դէպ ի կ. Պոլիս. 2°. Յանձնարարութիւն առ Մխիթար՝ Ջուղայեցի քահանայի մը նկատումամբ, որ վնասեակէն անցնելով պիտի երթայ Հռոմ. 3°. Յանձնարարութիւն մը իր անհաւատալիմ ուղեկից Զմմառեան Հ. Նիկողայոսի մասին։

Իսկ Պոլիս ուղեւորելուն նպատակը ուրիշ անգամ մ՝ալ շեշտած էր արդէն այսպէս. «զի օգնեցից Ամատուծով դարձման անկեղեցւոյ և աղբարց և ինձ ֆարման ազատութեան ի յաքսորանաց (1743 Օգոստ. 7. Գր. առ Մխիթար)։

Գերյարգելի Աբրահամ Ողջուն և առաքելական օրհնութիւն

Ցայտ առնեմ մեծաւ սիրով վերոյ գրեցեալ ճշմարիտ և ամենայարգելի եղբայրութեանդ զորպիսութենէն տառապելոյս. զնոյն կրկնեմ յաւելով որք պատահեցան զկնի, վասն զի ոչ ընկալա պատասխան առաջնոյն։ ի ալիկօռնաւ եւս գրեցի գիր, եւու ստեփան վարդապետին ներ յաւուր չուեցման իմոյ. զի խրատ խնդրեալ էի յառաջադէմ եղբայրութենէն և ի սոցանէ եւս ոչ (ոչ) ընկալա պատասխան։ Զկնի հասանելոյս ի վանքն

1. Համակիս վերին մէկ անկիւնը փրցուած ըլլալով՝ վերնագրին մէկ մասը կիսատ է, ինչպէս կէտերը ցոյց կու տան։

յիսուսի փրկչին, յետ բազում նեղութեանց և պատահմանց, ողջ և առողջ ընդ իս եկեալ մեծաւ հանդիսիւ, ասացի Այս է հանգիստ իմ, տալով միշտ գոհութիւն ստեղծողին իմոյ. բայց զի ներ երկրիս հանբաւ իմն, թէ սուրբ փափն ի հազար ոսկի պարգևեր է ինձ, և ոմանք չար բնաւորք խնդրեն զկէսն և ոմանք զմասն ինչ. յոյժ նեղութիւն եղև ինձ և տառապանք, պատասխան առնեցուն թէ սուտ է, և նորա ասեն թէ ի Հռոմայոյ գրեցին ի մեզ. զգիրն ոչ ցոյց ետուն։ Աստուծով և քոյին սուրբ աղօթիւք ազատեցայ. և այս սուտ հանբաւս ոչ գիտացի թէ յուստի ել. իսկ Բերիոյ Բ անգամ ֆարման հանեցին վասն աքսորման վի անձանց ներ ամրոցին յատանու. ողորմութեամբն Աստուծոյ ոչ ոք աքսորեցաւ. չար վարդապետն սրբացի էաս զամենայն արծաթեղէն անօթն Բ եկեղեցւոյ և եղ ի գրաւի զի ի կատար հասուսցէ գչարութիւն իւր. և չատ դրամ ետ բրոնաւորաց. ի զուր աշխատեցաւ, որ յատաջադէմ առելի և անհանոյ էր աստուծոյ. եղև իսկ յայժմ առելի և անհանոյ քահանայից և ամենից ժողովրդոց և մանչ բանդէ ի բանդ. և գիտաց թէ Աստուած գոյ իսրայէլի. իսկ քաղաքացիք ժողովեալ յղեցին ոմն առ իս և հարկաւորեցին զիս սատմոլ վասն եկեղեցեաց և այլ իրաց, զի թագաւորն կալլիացւոց գրեաց առ հրեշտակն իւր, թէ հոգ տարցես վասն բերիացոց որք պատկանին սրբոյ Հաւատոյ և դարձման եկեղեցեաց առ Հայոց յուղղափառսն. զի գրեցին սուրբ փափն և հայոց հաստատեցեալ պատրիարքն ի վերայ յայսմ իրաց. և ես յանձն առի վասն փառացն աստուծոյ և ի օգուտ մերձաւորաց, գնալ թագն(ա)բար և աշխատիլ, առեալ ընդ իս զեկեալն ի Բերիոյ, և մին քահանայ. ելի ի վանքէն ապրիլի 12 ի կերպ աղքատի մուրացիկի, պատառատու և հին հանդերձիւք, և ընկերքն իմ որպէս վաճառականք և փառաւոր ի կերպ յոյժ անծանօթ և մտաք ի նաւ առ ի գնալ ի Դիմաթէ. և եղեւ մրրիկ և ալէկոծում յոյժ սաստիկ ներ ծովու, ի մէջ յազայու և եաֆայու փոքր նաւակն ընկեցին ի ծովն և ծովն զարկաւ և կոտորեաց գնաւակն, զի կամէին նավաւարքն փախչիլ ի ցամաք զի մերձ էր. այլ աստուած ոչ կամեցաւ և պատառեցան ամենայն առագաստք նաւին մինն զկնի միւսոց. և Բ խարիսղ ընկէցին զի մի գնասցէ ի ցամաքն. յայնժամ լցաւ նաւն ջրովն յալեաց և ամենեքեանս որպէս զձկունս ի ներ ջրոյ կայաք. կոտորեցան պարանք երկաթից. թողին ներ ծովու և փախեան. և յետ սակաւ ժամանակի հասան նաւահանգիստ մի անմարդաբնակ և անվայելուչ. օթեցան ի նոյն գիշերն և առաւօտն ելեալ գնացին ի հայֆա, և ելաք ի ցամաք և յանդ գտաք գոմն ծանօթ աստուծով յոյն ազգաւ. ԺԲ ձիաւոր հեծեալ և Բ ուղտ բարցաք ցամաքով, իսկ երկուղն [1] գողոց և աւազակաց մաշեաց զմեզ մինչ որ հասաք ի յազրի. ասեմք աստուծոյ գոհութիւն. և յանդ մնացաք ԺԳ օր։ Դարձեալ մտաք ի յայլ նաւ, կրկին չուեցաք ի Դիմաթէ և տեսաք ներ ծովու մալթացիք և յոյժ երկիւղիւ լցան նաւավարքն, վասն զի յոյնք էին, բայց ոչ ինչ ճնասեցին. յոյժ պատիւ արարին տառապելոյս, յետ ընթեռնելոյ զամենայն վկայականս. իսկ կամօքն աստուծոյ հասաք ի Դիմաթէ յաւուր Համբարձման տեառն մերոյ յիսուսի քրիստոսի. պատարագ հոշակեցի զի ի Դիմաթէ եղեալ եղբարքն յոյնք են, հայ ոչ գոյ. միւս օրն ըմբռնեաց զիս յոտից ցաւն ըստ սովորութեան Ի օր հազիւ կարացի յոտին կնալ, և չուեցի առ յաղէքսանդրիա, և յանդ գտի Ձի զինուորք որք գնան ի յեգիպտոսէ առ ի Բաբելոն. ոչ ոք կարէ ելանել ի տանէն վասն որոյ երկիւղ է նոցա. իսկ յանդ գտի մեծ ահագին նաւ մի թուրքաց. և առի զամառայ մի. այսօր Ի օր է չունի քամի և եղանակ որ ելանէ ի նաւահանգստենէ, յուսալով յաստուած գնամ և զոր ինչ պատահեսցի վասն փառացն աստուծոյ կրեմ. խնդրեմ յեղբայրութենէդ յոյժ աղերսանօք վասն սիրոյն աստուծոյ, զի մին անգամ պատուիրեսցես Հասարակաց սրբոյ կրօնիդ որ ի խորոց սրտէ յաղօթս արասցեն յատկապէս վասն տառապելոյս, զի մեծ սէր և հաւատ հանդերձ յաներկբայ յուսով յունիմ ի վաղուց հեռէ և գիտեմ փորձիւ. զի բերանք հասարակ կրօնաւորաց մերձ են ի յականջս աստուծոյ։ խնդրեսցեն ի յաստուծոյ զի կատարեսցի յիս և ինեւ բարեգուն զկամս աստուծոյ։ իսկ անցեալ ամին ոմն քահանայ Ջուղայեցի գնայր ի Հռոմ, տեսի զնա ի մեծն յաղէքսան-

---

1. Երկիւղ։

դրիա, անուն նորա տէր աստուածատուր որդի տէր յաղէքսանդրի, նորահաւատ և յոյժ ջերմեռանդ. բայց լուա թէ ի վէնէտիկ է. զի այսպիսի անձինք չուտով գայթակղին ի տեսութենէ այլոց բանից. երկնչիմ, եթէ առ ձեզ է խրատեսցես զնա ի ժամանակիս յայսմիկ ներ պատերազմի. հայրն զորդին ոչ ճանաչէ թէ գնա ի Հռօմ լինի թէ ոչ գտանէ սէր և պատիւ զոր յունի ի մտի, կամ լուեալ է և դառնայ վիրաւորեալ և սառն սրտիւ և այլն ըստ խորագոյն խոհեմութեան Հօրդւ։ Դարձեալ վասն մեր Հայր Նիկողոսին կողմանէն որ ի յալիկօռնա բաժանեցաւ յինէն անհնազանդ և ապստամբ գտաւ կրօնին և յուխտին. Ես ամ յեգիպտոս եկաց և ի յայս միջոցիս Դ ե ձ մարչիլի ապրանք առեալ է [յ]երկուց վաճառականաց և յղեալ առ հայր իւր ի լեառն քէսըրվան. և ի վաղճանի փախեաւ յեգիպտոսէ, պատճառելով թէ ժանտաց[աւ]ութիւն գոլ յեգիպտոս և առի զինքն ընդ իս ի Հռօմ. ոչ պատմեաց ինձ և ոչ յումեք յեղբարց. զիր էկ ինձ ի Հռօմ, Դ անգամ ցոյց եառ նմա, ուրացաւ և ասաց թէ ես ուխտեալ կրօնաւոր քահանայ եմ, սուտ գրեն ի վերայ իմ թէ հայրս առևտուր յունի ընդ նոսա, իմ հետ ինչ ունին բան. և ես հաւատացի նմա. և իբրև գիտաց ի յալիկօռնա թէ գնամ ի կողմն եգիպտոսի երկեա[ւ] ի գնալ ընդ իս. և յայնժամ յայտնեալ զանհնազանդութիւն իւր առաջի սահակ, գինէոս եպիսկոպոսաց. ստեփան վարդապետն և տէր յակոբն ներկայ էին. յայնժամ եկի յաստ ճշմարիտ վճռեցի զի տեսի զձեռաց գիրն որ ինքն առեալ և ոչ տեսեալ են գհայրն իւր. խնդրեն յինէն և հաստարակաց զգրամ. նախատինք և այլն եղեալ դրեաց մերոյ. մինն յոյն է պարտատէրն խալրահիմ խլաթ կոչեն. և միւսն ֆռանկ է և յունին վկայք. զի յառ[աջ]ադէմ գրեցի Հայրութեանդ վասն անհնազանդութեան և ապստամբութեան առաքելական հայր Նիկոլին, զի խրատեսցես եթէ գայցէ ի վէնէտիկ, զի ես յարգելի ի քահանայական գործոց զի գիտասցէ հայրութիւն քոյ, մինչև դարձցի. ամենայն գործոց չարեաց դարձցի և հատուսցէ զպարտս իւր հոգևոր և մարմնաւոր. լուա ի յոմանց թէ գնալ կամի ի վէնէտիկ. եթէ գայցէ խնդրեմ վասն սիրոյ եղբայրութեան խրատեսցես զքո հայրական սովորութեամբ՝ կամ գրեսցես նմա ի յալիկօռնայ ի փառս աստուծոյ զի չահեսցի։ Եւ եղբայրութիւնդ առցես ի քրիստոսէ զվարձն յաւիտենական։ Եւ այլ փոր-ձութիւնք և պատահմունք զանազանք ներքոյ և յարտաքոյ աստուծոյ գոհութիւն։ Ճահիմ լիցի ոչ ձանձրութիւն սրբոյ անձիդ. երկարութիւն գրիս զի ի ներ մահճի գրեցի։ Ով մխիթարութեան սրտի իմոյ տրտմեցելոյ. ներ յայսմ կենի և տուն խորհրդոյ փառք գոհութիւն պատիւ և չնորհակալութիւն պարգեւողին չնորհաց. և յանձնեմ զեղբայրդ իմ ի նոյն տուօղին չնորհաց զի եզերեսցէ զվաղչանս և զկեանս մեր ի ներքոյ չնորհաց. և օրհնեալ հաստարակութիւնն յարգիմ ողջունեմ մեծաւ սիրով, և ցօնեմ ի վերայ հոգոց և մարմնոց իւրաքանչիւրոց աստիճանի և չնորհի զօրհնութիւն առաքելական կրկախառն փարմամբ և պարարող սիրով. և մնալով միշտ կարօտ մարմնաւորի տեսութեան և վերջացուցանելով զբանս կրկին օրհնութեամբ, և մնամ միշտ պատրաստական ծառայ յարգելի եղբայրութեանդ։

Ամի Տեառն 1744
Դեկտեմբերի 3
ի մնծն յաղէքսանդրեա

Աբրահամ Պետրոս
Պատրիարք կոչեցեալ
ի սուրբ Գահէն ի վերայ հայոց յուղղափառաց

Ողջուն և օրհնութիւն մեր սիրելի պարոն խաչիկին....

ՃԼԱ.

Իբրեւ նմոյշ ժամանակակից Մաճառահայ լեզուին՝ հետաքրքրական կը համարինք հետեւեալ նամակը, որ պարունակութեան տեսակէտովն ալ զուրկ չէ արդէն կարևորութենէ։

Որ. եղ. ցս. ՚ի՚ս.

1744 Նոյեմ. 30. Լիւիզաբէդն

Գերյարգելի Տէառն Տէառն Մխիթար Հայր Աբբային վերոյ, և բնաւ սիրելեացն մեր ցանկալի հոգևոր հարանց, խոնարհական սիրոյ ողջոյն կու մատուցանեմք վերոյ գրեցելոցն առնից

... Բրական կայ մէկ պատկեր մեծ պղնձէ, որ է 70 խանթըրէ ծանրութիւն նորայ, և է պատկեր սրբուն օհաննէս նէբօմէդէնի. իրաւ որ ես մեղաւորս ալ քալիլ իմ բրական, և զայն մեծ անվանի ջուրն անցիլ իմ, որոյ անունը մօլտաւ կասեն, և զան պատկեր ջրին քնարն է, կարմունճին գլօխը. մայ վաղուց ժամանակէ մօտայցիլ իմ թէ որպիսի մեծ է։ Նայ կասին թէ զան պատկերն աստուծոյ հրամանաւն նուն տեղն դառձուցած ըլայ զդէմն դէպ ի իրեն եկեղեցին, և օլորված ըլայ պօյը ինքն ըսդ ինքեան այսինքն թէ բրուսն գալօվ զանդիհէն, որմէ երեսն դէպ ի բրուսին կանգնած ըլայ նայ պատկերն գերեսն դառձուցած ըլայ բրուսէն և բրուս գալօվ և ասիլ է գբրակայ մեծ անվանի քաղաք, և կօղօպտիլ է զամենայն գանձն և մալն և զամենայն անօթ ոսգէդէն և արձթեղէն, բառնալով 100 արապայ ՚ի և գնաձիլ է. և էտէն կրկին գնաձիլ ին ծանտր հեծել և հասիլ ին զբրուսն ու չատ մարդ կօրիլ է և զամենայն աղէկն ետ դառձուցած ըլան...։

Պ[ետրոս] Քէլիեան

ՃԼԲ.

Հետևեալ նամակին գրիչն է կեսարացի վ֊րթանէս Արքեպիսկոպոս Ստեփանեան[1], որմէ ուրիշ թուղթ մը հրատարակեցինք արդէն (տես ՃԺԹ)։

Մեր նամակագրին մասնաւոր ուշադրութիւնը գրաւողն է Սարաֆեան Սարգիս արքեպիսկոպոսը։ Սա Ամևելքէն վ֊ենետիկ եկած է 1744–ին։ 1745–1747 գ֊ինքը Հռովմ կը գտնենք, ուր 1745 Նոյեմբեր 20–ին Հաւատոյ դաւանութիւն կու տայ, կը ներկայանայ նաև Բենեդ. ԺԴ.ին ու կը կատարէ նաև նոյն քաղաքին մէջ Հայ Միսի ձեռնադրութիւններ. (Սարաֆեանի ընդհանուր գործունէութեան վրայ տե՛ս կհնաագրութիւնը Գալեմքեարեանէ)։

Թէ Սարգիս իր ժամանակի ազգային ըղձանակին մէջ մեծ յարգանք վայելած է՝ կը տեսնենք զայդ Մայրավանքիս դիւանական մէկ ուրիշ անտիպ թուղթէն ալ. Անդրէաս անուն անձէ մը գրուած առ Մխիթար յանձնարարական մ՚է, երբ նա արդէն վ֊ենետիկ ժամանած էր. ահա սոյն պատառիկը. «Մեր ամենապայծառ և գերյարգելի «սարգիս վարդապետի կողմանէ որ եկաւ վ֊ենետիկ՝ յանձնեմ տէրութեանդ, թէպէտ «ոչ է պատեհ մեղաւորիս նորայ կողմանէ բան գրել, տէրութիւնդ քաջ գիտէ որ֊ «քան մեծ անուն և համբաւ ունէր ի մէջ հայոց. եթող յամէնն ի փառս յիսուսի «և մեծ անարգանք կրեաց հայոց ազգէն, մեծ տառապանօք հազիւ նաւ մտաւ» (Գր. 25 փետր.ի 1745. Իզմիր)։

Սարգիս արքեպս.է առ Մխիթար գրուած ինը նամակները, որոնց բնագիրները կը պահուին մեր Դիւանը, հրատարակուած են Գալեմքեարեանի երկասիրութեան մէջ, որուն ի նպաստ օրինակողն եղած է Հ. Մ. Պոտուրեան[2]։

---

1. Տես կենսագրութիւնը՝ Գալեմքեարեանի «Կենսագրութիւն Սարգիս Արքեպս.ի Սարաֆեան»ի մէջ, 207–213. վ֊իննա 1908. Տպ. Մխ.։

2. Անդ էջ 145։

Յայտնապէս կը տեսնուի, որ Մխիթարայ և անոր Հաստատութեան հետ սիրալիր յարաբերութեան մէջ եղած է Սարաֆեան։ Իւր աշակերտը Յովհ. Վ. Նուրտինեան ունի Սարգսի վրայ ոտանաւոր ընդարձակ կենսագրական մը, որ Օրթագիւղի Ազատոնեանց Գիւանէն օրինակուելով հրատարակուած է Գալեմքեարեանի գրքին սկիզբը։ Հոս մէջ կը բերենք հետևեալ մէկ քանի տուները.

Ազաքէն Սարգիս հերքեալ փառս պատիր, 1744
Դիւրեալ խիղճ մատոյն շնորհիւ երկնաժէր,
Հեռացեալ ի սպաս յիրաց անյարիր
Վարէր ի վընէժ կեանս անդորրալիր։

Ուր նա զբաղէր զամանս ի Հայոց
Ընդ որս կենակցեալ ոչ հանէր յոգւոց,
Զի զայնքս խաղաղ նըկատէր ի ծոց
Եկեղեցւոյ մօր ուղղափառ որդւոց։

Սակայն սիրտ նորա յաւէտ զուարճանայր,
Երբ կրթեալ ի վանս կոչեալ Սուրբ Ղազար,

Զոր դէռ տընտեսէր զերիվ քաջ արբահայր
Ցոգնիմաստ Տ՚արզոյ ռաբբին Մխիթար։

Որոց կենակցեալ անկեղծ սիրտ սիրով
Այց առնել միմեանց ըղձային փութով,
Որով սփոփիւր Սարգիս հերճուածելով
Զօտարութենէն ոչ տըրտընջելով։

Նոյն վանաց ողջոյն միաբանք կարգաւ
Զօնէին նըմա շատ սէր շուք անբաւ,
Զորոց զոհ լինէր զովութեամբ բազմաւ
Ցամենայն աւուր՝ ցօրն յորում հանգեաւ[1]...։

Վրթանէս Արքեպիսկոպոսի թուղթը կը տեղեկացրէ նաև Հայ Էջմի տօնակատարութեանց մասին քահանայապետական լուսամիտ կարգադրութիւն մը։

Ա՛ս գիրապատիւ Էղբայր իմ սիրելեալ ի Քրիստոս Մխիթար Աբբայ Հայր

Յիսուսաւանդ ողջոյն մատուցեալ՝ զեկուցումն առնեմ վերոգրեալ գերյարգելութեան քումդ, զի զսիրալրական քարտէզն քոյ ընկալայ։ Եւ յետ երկուց աւուրց հասանելոյ ինձ քարտիզին, եկն եհաս առ իս Գերապատիւ Եղբայր մեր Սարգիս Վարդապետն. և ըստ յանձնարարական քարտիզի քոյ՝ ընկալաք զնա մեծաւ սիրով և բազում յարգութեամբ և ըստ փոքր կարողութեան մերոյ արարաք նմա պատիւս։ Եւ ըստ վայելչութեան անձինն՝ յարդարեցաք զերկուս մեծամեծ սենեակս ամենայն զարդուք և վայելչութեամբ. և այժմ է ի պատուի յոյժ առաջի մեծաւորաց և առաջի մեր ամենեցուն։ Շնորհակալ եմ զքէն յոյժ վասն այդմ ձաշոցի, որ այդչափ աշխատեցար ի յուղարկել զայն։ Բանզի ի հրամանէ սրբազան Հայրապետին պարտաւորեալ մեր աստ՝ առ ի տօնել զտօնս ամենևին ըստ սովորութեան հայոց, և ոչ այլ ազգ, ոչ գտանելով ի մեզ ի պատրաստի խորհրդատետր ըստ հայոց, բարւոք հաշուեցաք մեք աստ եղեալ կարգաւորքս զճաշոց մի ունիլ. և առնել զայն յերիս մասունս և ըստ պատշաճի աւուրն՝ զգիրք և զաւետարանն ի վերայ նորա ընթեռնուլ, և ըստ այնմ վարիլ՝ վասն ոչ ունելոյ մեր զխորհրդատետր հայոց ըստ ամենայն մասի, և զի, մի՛ մեղիցեն քահանայքն զանազան կերպիւ պատարագս մատուցանելով։ Ահա ի մէջ քարտիզիս եղեալ զչնորհակալութեան գիրն՝ աղաչեմ հասուցէք ի ձեռն Պարոն Սահրաթին, և դուք ողջ լերուք ի տէր։

Ցամի Տեառն 1745
ի Նոյեմբերի 13
[Հռոմ]

Գերյարգութեան քումդ
Վրդանէս Վարդապետ
և Արքեպիսկոպոս

---

1. Անդ էջ 48. երգ վեցերորդ։

ՃԼԳ·

Հռովմէն Սարգիս Արքեպս. Սարաֆեանի վրայ ահա ուրիշ նամակ մը ևս.

Գնդյարգելի և գերապատուելի տեառնդ և հօրդ իմոյ որդիական սիրով և յարգուբեամբ սուրբ ազն հառիւրս բեր

... Զայս գիրս անցած չաբաթ պիտի գրէի բայց նոյն օրն հասանելով գեռապայծառ Սէրգիս եպիսկոպոսն ժամանակ ոչ ունեցայ գրելոյ. ահա, ասէր իմ, եկեալ հասեալ այս յարգելի եպիսկոպոսս և հրամանդդ կրկին յանձնար[ար]ութիւն գրեալ էիր ինձ նուաստագունիս, ինչ կարող է տկարութիւնն իմ այսպիսի անձու ծառայել և պատուել, գիա[ր]դ և իցէ ասի իւրեան, թէ ի յամենայն իրս որ համարիցէ զիս յարմար, մեծաւ յօժարութեամբ պատրաստի եմ ծառայել. նախ քան զգալն և ես հասանելոյ խոսեցայ ոմանց մեծաւորաց, թէ որպիսի անձ իցէ կամ որչափ պատուոյ արժան. երեկեան ժողովքի սէքրէթարն մօնսինեօր լէրքարն եկաւ առ ի յարգել զսա յոյժ սիրով, որ ոչ է սովորութիւն առնել այսպիսի յարգութիւն եպիսկոպոսաց Հայոց. ըստէփան վարդապետն գնա ընդ իւր թէրճիմանութիւն. սա ասէ թէ ես տեղս կենալու չեկի, այլ վերստին վէնէտիկ դառնալոց եմ, և ես ոչ գիտեմ թէ իրաւի իւր միտն այս է՝ կամ թէ վասն խոհեմութեան այսպէս խօսի. վրդանէս եպիսկոպոսն ի հասանելն 3 օր կերակրեց հանդերձ իւրայնովք յոյժ քաղցրութեամբ և սիրով. միայն ցաւիմ որ ստեփան վարդապետն ընդ յովհաննէս վարդապետին (որ է աշակերտ սոյն Սէրգիս եպիսկոպոսին) որում ինչ խռովութեան ցանած են և սոյնս հարկաւորապէս յայտնվելոց է։...

Ծառայ Յոհաննէս պատկերահան

Ցամի տեառն 1745 Նոյեմբ.ի 13
[Հռովմ]

ՃԼԴ·

Սարգիս Արքեպիսկոպոս կապադովկեցւոյ մեր Դիւանի նամակներու շարքին մէջ կայ 1746 Յունուար 1 թուակիր թուղթ մը առ Մխիթար, սկիզբը հետևեալ ոտանաւորով.

Ամաւենուդդ | Բարձրադիտակ | Սրբաստեղուն
Բարւոքապէս | Ամատացեալ Ցար | Անշարժուն
Համեղ պտ[ղ]օք | Առատացեալ | Բախչան սիրուն
Ցարաս[աղ]արթ՝ | Բախաքերուն | Գեր կատարուն.
Կրօնիւ մաքուր | Ուղղադաւան, և | Սրբասուն
Չիք քան զքեզ | Եռամիծար այր | Իմաստուն
Ծառ որ կամիմ | Ես յետնեցեալս | Սրտիւ քծուն
Անհատ սիրով | Լիագունիւ ձօնել | զ Ողջուն։

Գալեմքեարեան վերոյիշեալ նամակները հրատարակած ատեն պէտք չէ տեսած այս վերջին թուղթն ի լոյս ընծայել, որովհետև Ծննդեան և Նոր Տարւոյ շնորհաւորագիր մ՝է ան, ինչպէս ինքն ալ բաւականացած է այս յիշատակութեամբ անցնիլ, դնելով լոկ ոտանաւորը։ Սակայն, չենք գիտեր ինչո՛ւ, անոր երկու վերջին տողերը կը պակսին իր հրատարակութեան մէջ, ինչ որ սխալ հետևանքի մը տարած է զինքը՝ երբ կ՝ըսէ. « Առաջին երկու սիւներու գլխագիրներն ընթացիկ՝ իսկ վերջին սիւնը

վերչն վար կարդալով կ'ունենանք Աբբայ Հայր կոչէ Սարգսի[1] ». մենք ամբողջին հրատարակութեամբ կ'ունենանք այժմ որոշ իմաստ մը. « ԱԲԲԱՅ ՀԱՅՐ ԿՈՉԵՑԵԱԼ ՍԱՐԳՍԻՍ ... ՈՂՋՈՒՆ » (վերջին բառ երրորդ սիւն)։

ՃԼԵ.

Այս թուղթը կը ներկայացնէ Ալտրիոյ Մարիամ Թերեզայի շրջանէն մէկ քանի գինուորական գործողութիւններէ զատ հետաքրքրական դէպք մը։

Գևրապատիւ և գերյարգոյ Տէառն իմոյ և Հօր Միխիթարայ վարդապետի և Աբբահօր

. . . վասն պատերազմի ոչինչ այլ, բայց միայն այս լսի, զի թագուհին մեր ժողովէ օր ըստ օրէ զբազմութիւն զօրաց և ոչ կամի հաշտիլ ընդ Բրուսին, թէև ինկիլիզն խնդրեալ իցէ զի հաշտեսցի ընդ նմա։ Դարձեալ վաճառականք մեր, բերին զլուր թէ բրուսն առեալ է ի ձեռաց սաքսին զքաղաքն Լիբձեա, և թէ սպառնացեալ է կործանել զքաղաքն եթէ ոչ տայցեն նմա զերեք միլիօն. և նոքա խոստացեալ են տալ։ Եւ այժմ հասեալ են մերձ այնմ քաղաքին քառասուն հազար սաքս, նաեւ յերկրէն իլախաց երեքտասան հազար, ոչ գիտեմ վասն որր պատճառի։ Ի մերձակայ աւուրս ի կերլայ եղև պանչելիք, զի խաչելութիւն մի մեծ տասն ամաց, որ էր արտաքոյ քաղաքին տնկեալ, որոյ երեսն նայէր դէպ ի յարևելս, այժմ ոլորեալ է ի կիսոյ ի վեր և երեսքն նայի դէպ ի քաղաքն, որ և առնէ զբազում բժշկութիւն այց առնողացն։...

Հայր Մարկոս Իսիգուցեան

Ցամի Տէառն 1746 Յունվարի 5
[Պաչֆալով]

ՃԼԶ.

Վրթանէս եպիսկոպոս՝ իր առ Միխիթար տածած սիրոյն և զգացումներուն հետ՝ կը հաղորդէ միանգամայն բացայայտ կերպով Եկեղեցական Բարձրագոյն Իշխանութեան մօտ Սարգիս Սարաֆեան Աբգեպս.ի վայելած համբաւը։

Տէառն Տէառն Միխիթարայ Աբբայ Հայր կոչեցեալ Գերյարգելոյ
Սիրտ սիրով, և վաղվի կարօտիւ , զիրկլաւանդ ողջոյնն ընծայեմ։

Ի յանցեալ աւուրս ի գրոյ պատկերահան Յօհաննիսին ծանեայ զնիհարիլդ վերստին ի ձեռն դեղնացաւ կրից, որոյ վասն՝ թէ ևս ես իցեմ ախտակից, սակայն թողլով զիմն ի բաց, յաւէտ ցաւեցայ, և ցաւիմ զքէն։ Ուստի չունելով զայլ ինչ հնար, եթէ ոչ միայն զաղօթելն վասն քո, զի բժշկեսցէ Տէր զքեզ ի ախտակրութենէն յայդմանէ աղօթիւք Սրբոց։ Նաև զմերոյս կացութենէ կարես իմանալ, եթէ խորհիցիս զնետին հասակն ծերութեան իմոյ, զոր գրեթէ ըստ ասելոյ ումեմն՝ զերկոսեանն զրկեմ[2], այսինքն զարեզակն և զգերեզմանն։ Աղօթեսցես վասն մեր, զի զելս բարիս պարգևեսցէ մեզ Տէր ցիսուս չնորհիւն իւրով։ Եւ ահա Գերապայծառ Սարգիս Արքեպիսկոպոսն կեսարիոյ, դիմեաց աստ այդր, ընդունեցեալ և պատուեցեալ ի Սրբազան Գահանայապետէն և ի Սրբոյ Ժողովոյն։ Թէպէտ մեք չատ չանացաք զսորա աստ մնալն, նաև մեծաւորք ումանք։ Սա-

1. — Գալեմք. « կենս. Սրբ. Արքեպս. Սարաֆ.է », էջ 207։
2. — Այսպէս ի բնագրին։

կայն ոչ էառ ի յանձն վասն այլոյ բարւոյ դիտաւորութեան, զոր Տէր առաջնորդեսցէ։ Սակայն որպէս գիտես և ճանաչես, արժանաւոր ոմն է սիրոյ և ընդունելութեան, և մանաւանդ ի չառաւիղէ առաջացեալ։ Ուրեմն առ յայժմս յանձնեմ ի յաստուած և ի քեզ, քանզի գիտեմ իսկ, թէ ի պատեհ ժամանակի վերադառնալոց է ատս հրաւիրանաւ մեծաւ։ Եւ եթէ եզականապէս սէր ցուցանիցես նմա, վարկանիմ թէ արժանաւոր իսկ։ Բաւ է։ Ամենայն միաբանից սրբոց ցանգ, ողջոյն և օրհնութիւն մատուցանեմ, և խնդրելով ի նոցանէ աղօթս վասն բարի մահուան իմոյ։ Բաւ է։

Ղուասա ծառայ
Վրդանէս վրդպ. իբր եպիսկոպոս

Ցամի Տեառն 1746 հոկտեմբերի 1
[Հռոմ]

ՃԼԷ.

Հետեւեալը օրինակն է յոյժ շահեկան վաւերաթուղթի մը, զոր գրած է Յակոբ Բ. Նալեան Պատրիարք Կ. Պոլսոյ (1741–1749 և 1752–1764), առորագրութեամբ նաև ժողովրդեան մէկ քանի ներկայացուցիչներուն։

Այս գիրն ուղղուած է առ փերվազեան Մինաս Արքեպիսկոպոս Զմիւռնիոյ, որ արեւելքի շփոթութիւններէն փախչելով՝ իրեն ապաստան ընտրած էր Վենետիկ։ Ան ի սրտէ բարեկամացած էր Մխիթարայ հետ և հրապուրուած՝ անոր Հաստատութենէն։ Փերվազեան իր ծախիք շինել տուած է վանքին եկեղեցւոյ Ս. Աստուծոյ մարմարեայ խորանը, զոր 1737ին կ'օրհնէ և ապա վրան ձայնաւոր պատարագ մ'ալ կը մատուցանէ։ Երկար տարիներ ապրելէ վերջ կը վախճանի ի Վենետիկ 1757–ին ու մարմինը կ'ամփոփուի Ս. Աստուծոյ խորանին առջև իւրակերտ դամբանին մէջ[1]։

Ի

Գերապատուելոյ, Ամենապայծառ, յԱբրահամական աստիճան Արքեպիսկոպոսութեան ժառանգելոյ իբր զգործեան չարտից մաքրելոյ, և որպէս զարծաթ ի բովս ընտրութեան հօրենապատիկ պարգեւելոյ։ Տէառնէ Մինասայ, ձիրով շնորհաց սրբոյ Հոգւոյն պարարտեցելոյ, զԱստուածաբանութեան ներհունացեալ վարդապետի, Երջանկութեան իմոյ վեճի, մանաւանդ բէ Հօր սրբոյ Միաբանական ծնորհագարդի, ըղձալի տեսլեամբ, խանդագին տարփմամբ, Քիւռեղեանէր սէր՝ և ողջոյն Քրիստոսական ձօնեալ ընծայի։ Էջ յընդ ի կնքողաց գրոյս, Սրբոյ Տիրաշշափ Աչոյդ կարօտակէզ սիրով ձամբոյր արդիական մատուցանի։

Արդարև ո՛ մեծարգոյ եղբայր, և ծերունափայլուն Հայր, Աբեսաղոմ երիս [ամս] մնալով ի Գեթսեմանի, առաւել անտեսութեամբ Հօրն իւրոյ Դաւթի վշտացնիւր, քան թէ պանդխտութեամբն յօտար երկրի։ Եւ մինչ դարձաւ յԵրուսաղէմ, զպանդխտութիւնն ի Գեթսեմանի առաւել լաւագոյն համարէր, քան զզրկիլն ի Հօրն քաղցրատիպ դիմաց։ Զնոյն անցս և զմեօք անցեալ թէ վարկանիցէ Գերապայծառութիւնդ, յիրաւի ոչ վրիպի ի ճշմարտութենէ։ Քանզի ոչ թէ զերիս ամս միայն տանջեաց զմեզ կարօտութիւն Սրբութեանդ, այլ զամս երեքտասան, որովք կարօտութեամբք եղջերուահանգոյն տիր ծարաւեցաք Աղբերդ զովացուցչի, և հրով սիրոյդ՝ օն անդր տոչորեցաք։ Որ եթէ յամեցուցեր զչնորհս գալըստեանդ զի նազելի առնէիր, և սակաւ յամեցմանդ նազելի էր։ Վասն որոյ ըստ Երգոյ Հարսինն և մեք ասեմք, եկ ընդ հովանեաւ վիմին առ նախապարիսպն, ցոյց մեզ զդէմս քո, և այլն։ Չի կարի ընդարձակ եղև միջոցն քոյդ հեռացման, բայց առաւել լայնագոյն՝ ի մերոյս տարփման։ Եւ մի ասիցէ Սրբութիւնդ, թէ այսքան միջոցք տապողականք,

1. Թորոսեան, Վարք Մխիթարայ, էջ 364։

ընդէ՞ր զձեզ հարկեցին ի կոչել զմեզ. զի որ սիրէ՝ փութով ընթանայ, և արագ ժամանէ։ Ասեմք, թէ ոչ հաւատացաք զլսելդ, և կամ զի գիտելով նշմարանօք իմիք, թէ սրբութիւնդ վասն խոյս տալոյ յզբաղմանց այդր խուսեցեր, որպէս զի իբրև զողկոյզ ի հունձս և որպէս զցորեան ի չտեմարանս հաւաքելի զքեզ առնէիր, զի յաւ դիպիլ կոչմանդ հարկին, անդանդաղ առ մեզ խոնարհէիր ի ստգտանաց սրտիդ դրդեցեալ, և ա՛ւել, թէ բաւական է, արդ յարեայց, արդ բարձրացայց, արդ խոնարհական զիջմամբ փառաւորեցայց։ Գիտէաք և մեք, եթէ ի տարաղէպ պահու զքեզ կոչէաք, (մինչդեռ սակաւ ինչ լծոյ զբաղմանց կարէիրն ենթարկել) ասելոց էիր, թէ ես վասն այնորիկ զփախուստ առի, զի յուսալին ձեր լծենթարկութեան եղանակն յայլ իմն փոխեսցի, որպէս զի ի գալս իմում յակամայ՝ կամաւ յինէն զձեռս քարշէիք, և զիս ազատ ի զբաղմանց առնէիք. և զայս ի Գերապայծառութեանդ գրոյն ևս ծանեաք, զի յերից աՀաւոյ ի գործն զքեզ ոչ հարկել մեզ գրեալ էիր, ոչ ի հոգևորս, և ոչ ի մարմնաւորս։ Ա՛ւ որ ասեմք, թէ ո՛վ Գերապայծառ, եթէ յայնժամ մինչ ունէիրն զկարողութիւն, ի հարկելն մեր զսրբութիւնդ ի յասացելոցդ ի մինն, յանձն ոչ առեր. և մեք ոչ ճշդեցաք զկամս քո, և մինչ այժմ հաւաստեաւ ծանեաք զփախուստ քո ի զբաղմանց, և զժամանակդ վասն այն անցուցեալ այդր, զի ի լծոյ ազատ մնայիր, որպէս կարեմք յայսմհետէ ստիպել զհայրդ ծերունի, բառնալ զբեռինս որդեկացդ մատղաշագունից, թէ և Հռոմայ Գահին վերադիտօղք յայդմ հասակի ընտրին ի բեռնաբարձութիւն, որպէս զի իբրև զպարզեալ գինիս ի մրրոյ աչխարհի և ըղձից նորա մեռեալք եղիցին։ Բայց մեք ուխտեմք ի ձեռն Գրոյս, զի ի հետս չուղաց կամաց քոց ընթասցուք, և մի բնաւ ի սոսկալեացդ միայն ի գործ զբաղական զքեզ ստիպեսցուք։ Այլ կամք սրբութեանդ եղիցի քանոն և նախատիպ, հայելի և ցուցակ մերոցս կամաց, որպէս զի առ այն նկատելով ուղղապէս գծաւորիցիմք, և օրինակիցիմք և իբր ի հայելւոջ նշմարելով նունաւտիպ երևիցիմք։ Գանզի զի՞նչ վարձք իցեն սրբութեանդ, եթէ բարիքն քո ի հարկէ և ոչ ի կամաց լինիցին. և մի՛թէ պակաս փառք իցեն մեզ զքոյապիսի սրբազան Ծերունիդ ունել աղօթօղ վասն մեր ի սուրբ տեղիսն. որպէս զի բազկացդ տարածմամբ իբրև զոմն այլ երկրորդ Մովսէս զամաղէկացի դևսն ընկճեսցես ոչք ընդ մեզ մենամարտին։ Այո՛ ով Գերապայծառ Հայր մեր, ոչ ստիպեմք, ոչ դրդեմք, և ոչ հարկեմք զսրբութիւնդ ի գործ ինչ արտաքոյ կամաց քոց, միայն թէ լից զվնդութիւնս մեր, բարձ զկարօտութիւնս ի մէնջ. և մեք խնդրեմք ի Ցիսուսէ Քրիստոսէ, զի զբազձանս սրտիդ, որ առ բարին փոյթ ընդ փոյթ լցուսցէ, որպէս զի բազկատարած մշտանուէր աղօթիւք ի սուրբ Գողգոթայ ըստ Տեառն նմանութեան, վասն մեր և վասն քոյ աղօթս և պաղատանս առնիցես, և լսելի լինիցիս առ լաւութեան ըստ ասից զբաննալւոյն Պօղոսի։ Ուստի ըստ այսմ սարասի, և ըստ մտացդ դիտման զխոնարհիլն մեր տեղեկացեալ, անկասկածօրէն հրամայեա՛, և եկ, զի ոչ բռնադատեմք զկամս քո, որ զհոգեկանն ևեթ ունիս ի մտի, և ազգին մերոյ զքոյապիսի յոգնաթիւ աղօթօղս ունել զկարևորութիւն քաջ գիտասցես. և իբրև զԳերունին Բերզէլի՝ արժանի սեղանակցելոյ Դաւթին ճշմարտի զքեզ ծանիցես։ Ի վախճանի դիտմանս կնքեմք զբանս ըստ խնդրոյ քոյ, և աղաչեմք, զի աւուրք միով յառաջ զկարօտս մեր լցուսցես չնորհալի գալըստեամբդ. և սրբութիւնդ ևս զկարօտ քո մեր տեսութեամբ առցես. և մեզ քաւ լիցի թէ ի խորշելեացդ գործոց վերայ զքեզ բռնադատիցեմք. Վկայ լիցի Աստուած ի միջի մերում։ Իսկ որ սակս արևելից կողմանն ունիս զկասկած, Աստուծով անհոգ լեր. զի խաղաղութիւնն ստոյգ է. և թէ ի կողմանէ սրբոյ աթոռոյն Իջմիածնի կամիս տեղեկանալ, դուն բաց. հոգևոր պաշտամամբ հաստատ. միայն թէ ի մարմնաւորաց մերկ. և զայլսն ի գալստեանդ կարես լիապէս իմանալ։ Ողջ լեր ի պարծանս պաշտօնակցի քոյ Յակոբայ Նուաստ Պատրիարգի Կոստանդնուպոլսոյ, (որ ձեռամբս գրեցի). և այլոց յստորև կընքոզաց գրոյս։

[Յակոբ Պատրիարք Կ. Պոլսոյ]

Զօպան օղլու Յարութիւն — Մհի. Սեդրոս — Մհի. Մարտիրոս
Խօճայ Մհքայէլ — Մհի. Պաղտասար

Յամի Տեառն 1747 մայիսի 15
[Կ. Պոլիս]

ԾԼԸ.

Էջմիածնի կաթողիկոսաց պատմութեան պատկանող կարևոր էջեր կը ներկայացնենք յաջորդաբար։

Խնդրոյն առանցքը կը կազմէ Ղազար ԺԱ. կաթողիկոս Ջահկեցի (1737–1748 և 1749–1751)։ *Իրեն դէմ յարուցուած հակառակութեան պատճառը իր իսկ գործերն են։ Պարտաւորուած էր՝ ըրած չարաշահութեան իբրև տուգանք՝ հատուցանել չորս հազար թուման, ու չունենալով բաւարար դրամ՝ «Լսատ զանօթս աթոռոյն Էջմիա-
«նայ զոսկեղէնս և զարծաթեղէնս. զորոց զոմանս վաճառեաց և զոմանս եա տա-
«նիլ ի ծածուկ յայլ տեղի. և տուեալ հարկապետին երկու հազար և հարիւր թու-
«ման, փախեաւ ի Կարին[1]»։*

*Ինչպէս կը տեսնենք՝ զարձեալ չէր կրցած ամրողջութեամբ հատուցանել. ուստի լսելով հարկապետը անոր փախուստը՝ «կալաւ և կապեաց զամենայն միաբանս աթո-
«ռոյն և եդ ի բանտի. կողոպտեաց զամենայն՝ զոր ինչ և եգիտ Էջմիածին. և
«մերկացոյց զաթոռն յամենայն զարդուց։ Եւ զի նոքիմբք ոչ վճարէին բովանդակ այն
«պարտք, կամեցաւ ի տանջանս արկանել զմիաբանսն. և նոցա ի սպառ անճարա-
«ցեալ՝ բողոքեցին առ արքայ, բայց ոչինչ շահեցան։ Ապա անկեալ ի դրունս մեծա-
«մեծաց՝ խնդրեցին փոխ՝ և անհնարին տառապանօք ժողովեալ եառն զամենայն
«հարկապետին և արձակեցին զնա[2]»։*

Այս ծանրածանր չարիքներէն միաբանք մեծապէս նեղուած՝ աստ և անդ թուղթեր կը ղրկեն, որպէս զի ազգը Ղազարու տեղ ուրիշ մը կաթողիկոս դնէ։ Ահա այս կէտէն է որ կը սկսի Հ. Մխքայէլ իր նամակը։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերոյ տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

. . . կաթողիկոսն լուեալ թէ զինքն ոչ կամին գալ աստ, և թէ մին զայլ ոմն ընտրել մինչ ինքն փախուցեալ իցէ ի Շահ Թահմազէն, և չէ կարելի վերստին դառնալ ի տեղ իւր, գրեալ է աստ թէ չէ օրէն մինչ կենդանի է կաթողիկոսն, զայլ կաթողիկոս դնել, ապա թէ ոչ՝ բանադրեմ զձեզ։ Եւ ի Էջմիածնայ կողմն եղեալ վարդապետքն զգիր գրեալ աստ, թէ քանի որ Ղազար կաթողիկոսն նս[տ]աւ, պատիժ պատուհասն ի գլխոյս պակաս չեղաւ։ Վասն որոյ կամ երուսաղէմէ, Գրիգոր վարդապետն, կամ Ցակոբ պարիարգն Կոստանդինուպօլսոյ, յերկուց զմինն, զորն և ընտ[ր]իցէք և ուղարկիցէք մեզ, հաճելի է։ Բայց պատրիարգն չի ուզեր ելանել աստի. ի կիրակէի միոյ, ի յատեան եկեղեցւոյն ողբերգական կերպիւ պատրիարգն ի դիմաց իւրոց ասացեալ է, Ո՞վ Ցակոբ հաբեզայ, ոչ տեսանեմ զքեզ թողուլ զաթոռդ քո զԿոստանդինուպոլիս և գնալ, միայն թէ մեռանիցիմ։ Եւ զՍահակ ահագին նուիրակն վարդապետն մէնգիլով ուղարկեցին առ կաթողիկոսն, թերևս առ ի հաճեցուցանել զմիաս նորին, զի զայլս ընտրիցեն։ Աստ վերստին յայժմ ժանտացաւն սկսաւ արծարծիլ։...

Պատրաստական ծառայ ամենայնի
Հ. Մխքայէլ վ.

Ի յամի տեառն 1747–ին
ի մայիսի 30–ին
[Պոլիս]

---

1. Ջամչեան, Պատմ. Հայոց, հատ. Գ. էջ 838.
2. Անդ.

ՃԼԹ.

Էջմիածնի Ղազար Ջահկեցի կաթուղիկոսին խնդիրը ամենալուրջ հանգամանքի մը տակ կը ներկայանայ մեր այս վաւերաթուղթին մէջ, ուր կը հանդիպինք այնպիսի կարևորագոյն ծանօթութիւններու՝ որոնց մասին կը լռեն Զամչեան և ուրիշներ։ Աբդ, լոկ դրամի և ուրիշ չարաշահութեանց տեսակէտը չէ որ Ղազարու դէմ մեծ հակառակութիւն ստեղծած է, այլ անկէ ժայթքած կարգ մը մոլորութիւններ, որոնք շատ աւելի ստիպողական դարձուցած են որ ժամ առաջ կորսնցնէ իր գրաւած դիրքը ու մեկնի Էջմիածնայ վանքէն։ Այս ամէնը խնամքով կը տեղեկագրէ Հ. Միք. վարդապետ, հաղորդելով միանգամայն՝ թէ այդ տխուր վիճակը ինչ հետևանք ունեցած է և ինչ արձագանգ գտած է ի կ. Պոլիս։

Գերյարգելոյ Աբրայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի

... Ցետ այսորիկ գիտելի է վասն արևելեան կողմանէ։ Որ ի Էջմիածին եղեալ եպիսկոպոսունք և վարդապետք, ժողովով զղազար կաթուղիկոսն բանադրեալ և նզովեալ են, և անընդունակ արարեալ, ով ոք որ ընդունի զնա և կաթուղիկոս անուանէ, և այն նզովեալ եղիցի։ Եղեալ ի վերայ նորա զայսոսիկ ամբաստանութիւնս, թէ ուրանայ գոլ երրորդութիւն անձանց. մարդադաւան է առ քրիստոս. ոչ ընդունի զաստուածածին գոլ կոյս։ Սուրբք ոչ գոն ասէ, եթէ գոն, ահա մինն եմ և ես։ Եւ սաղմոսն դաւդայ ոչ պարտ է ասիլ ի ժամերգութեան, այլ զոմանս աղօթս յիւրմէ շարադրեալ, զայնս յաւաղարէ ասել. և զայլս ոմանս ամբաստանութիւնս, զայս բանք գրեալ առ էրզրումայ առաջնորդն, քրիստիւռ կոչեցեալ, և նա ի յեկեղեցւոջն ընթերցեալ, որ նաև ահաքինն անդ ի յիւր վանքն է. զսոսա կոչեալ են լինել կաթուղիկոս, որն և իցէ, բայց չեն կամեցեալք սպառ։ Կաթուղիկոսն լեալ իցէ անդ. անտի գնացեալ ի պայազիտ ի վանքն թաթէոս առաքելոյն նստեալ. և ասեն թէ նստեալ չահն, որ սպան զթահմազն, կոչեալ է զղազար կաթուղիկոսն առ ինքն։ Եւս ժողովն այն ասացեալ է ի յայն բանադրանաց գրին մէջ, թէ ոչ կոչեսցի կաթուղիկոս, այլ գայթակղոս։ Զայսոսիկ բանքս քերօբէ վ. օրինակեալ է և ուղարկեալ աստ առ էրզրումցի ցօհաննէս վ.։ Զայս բանադրանաց գիրս աստ ևս ուղարկեալ են ի էջմիածնայ առ փաթրիք և առ իշխան սառաֆունս։ Աստ ևս փաթրիքն իւր համախոհ վարդապետօք, քահանայիւք և սառաֆ իշխանօք բանադրեցին և հրատարակեցին յամենայն եկեղեցիս կոնտակօք։ Արևելեան վարդապետք խնդրեն զմինն յերիցս երթալ լինիլ կաթուղիկոս, այսինքն, կամ Գրիգոր վ. Երուսաղէմայ, կամ այս պատրիարքս, և կամ իզմիրու առաջնորդ աղէկսանդր վ. զոր և կոչեցին, որ աստ է. կարծեմ թէ զսա ուղարկեն, որ և է ստամպօլցի։...

Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մխայէլ վ.

Ցամի տեառն 1746ին
Նոյեմբերի 25ին չուէ գիրս։
[կ. Պոլիս]

ՃԽ.

կը շարունակուին Ղազարու կաթողիկոսութեան աղետալի դրուագները։ Բռնի ուժի զօրութեամբ նա կրկին գահ կը բարձրանայ, ինչպէս վերը նշանակած ենք։

Թէև մեր վաւերագրին ակնարկները համառօտ են հոս, սակայն նոյն նամակագիրը իր մէկ ուրիշ անտիպ թուղթին մէջ կը գրէ հետևեալ եղերերգական դէպքերն ալ. «Եւ ևս յայսոսիկ յաւուրս լուայ, թէ զղազար կաթուղիկոսն ի գահ իւր հաս-

« տատեալ են վերատին, և զմիւս պետրոս բլթթիւեն փախուցեալ, և զերեք կամ « ըստ ոմանց զհինգ վարդապետս սպանեալ տուեալ են։ Եւ զմինն ի սոցանէ ի պա« տարագելն յետ սրբացուցման, մինչ հասեալ յայն տեղին ուր յիշէ զկաթուղիկոսի « անունն պետրոսին, հասանին բռնաբարօղք բարբարոսք, գանակոծ առնելով յար« տաքս ձգեն և մահացուցանեն։ Ղազարն աստ զկօնտակ ուղարկեալ առ ժողովուրդ « և առ փախըրքն, և զնա անմեղացուցանելով շղոքրրթէ. յետ ընթեռնլոյն զկօն« տակն ի լուր ամենեցունց, զայակրցիք և աճէմներն զշշնչմունս բարձեալ, թէ և « իբրու գայթագղեալ, թէ զուք սնագլուխքդ էք պատճառ այսմ ազմունքի և սպանու« թեան վարդապետաց ի տուրր Էջմիածին» (Գր. Հ. Մխրայէլ Վ. առ Մխիթար, 1748 հոկտ. 25 չուէ գիրս |կ. Պոլիս|)։

Հ. Մխրայէլ հետևեալ նամակին մէջ կու տայ նաև բառական մանրամասն վկայաբանական տեղեկութիւն մը։

Գիտենք ազգային հալածանքներու շրջանէն ընդհանուր ծանօթութեամբ մը, որ եղած են անձինքներ՝ որոնք նահատակուած են՝ անդրդուելի մնալնուն համար իրենց հաւատքին մէջ։

Ուրախ ենք որ Հ. Մխրայէլ Վ.ի արդեամբը կրնանք հոս ներկայացնել տեղեկութիւններ անոնցմէ միոյն՝ Յակոբ անուամբ քահանայի մը վրայ, ինչ որ վկայի մը որոշ պատկերը կու տայ. թէպէտև ամբողջական չէ, որովհետև նոյնքան որոշ պէտք է ըլլայ անոր վախճանի տեղեկութիւնը, որ դեռ կը պակսի։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերոյ, տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

... Երկու ամիս յառաջ, զազար կաթուղիկոսն, զոր հերքեցին, նզովեցին, բանադրեցին, անընդունակ արարին, և զանունն յիշատակելոյ ի պատարագն ջնջեցին, Նա իշխանութեամբ նոր Շահին վերստին հաստատեցաւ յաթոռ իւր. սկսան ընդունիլ և յիշատակել ի պատարագն։ Զարագունեղ և անգէտ Աթանաս վ. որ գնաց առաջնորդ թօխաթու, անդ և ի ս|ե|բաստիա, զմեծագոյն հալածանս յարուցեալ ուղղափառաց։ Ընդ և վեց ամ յառաջ ընդ յարութիւն վ.ին, որ գնացեալ է առաջնորդ թօխաթու, և ընդ ինքեան տարեալ է զայլ ոմն էտրենեցի վ. աշակերտ վախճանող յօհաննէս պատրիարգին, այն վ. ճգնազգեաց և բարի անձն մի, և անդ վախճանեալ. յարութիւն վ. գնա ի յեկեղեցւոջն թաղել տուեալ։ Եւ յայժմ որ այս աթանասս գնաց անդ, լուեալ թէ նոյն վախճանեալ վ.ն երբեմն ասացեալ է ուղղափառաց, թէ չիտակ է ձեր ճամբան, ինք ևս լեալ իցէ ի ներքուստ ուղղափառ։ Մինչ աթանասն զայս լուեալ է զնմանէ, որք պատմեալ են նմա, յայնժամ սկսեալ է ասել. Այն չունն, այն նզովածն, այն ուրացօղն, ոչ է արժան յեկեղեցւոջն մտալ. բանալ տուեալ զտապանն, չորս և հինգ ամաց մեռելոյն զոսկերս առաջի չանց արկեալ, և զայլ ոմն ուղղափառ ի յէշ եդեալ ի քաղաքն շրջեցուցեալ...։ Ի գաղատիա ևս նոր չարագոյն հալածումն. զի ի թօխաթու գէորգ անուն վ. մի, որ երբեմն ուղղափառ ի տունս պատարագեալ է ի գաղատիա, այժմ գնացեալ անդ զհալածանս գրգռեալ, զտուն մի կոխել տուեալ են, զոէր ստեփան ամուսնացեալ քահանայն, տեղացի, որ յառաջ ընդ այլոց կարգաւորաց փախստական աստ էր, իբրու մի ամ է որ յետս դարձեալ գնաց, և ի ծածուկ կալով հոգայր զուղղափառս, զսա ըմպունեցին, փաշային մատնեցին, 500 բիր ոտացն հարին. Ներկայ գոլով չար վարդապետաց և չարափառ աշխարհականաց դատախազք և անգութք, ասացեալ են. Ոչ միայն ներբանացն այլ ի վերայ ոտիցն մատանց հարէք, որ մատունքն չաղչաղիցին և թափիցին. և ոմն հայ ի վերայ գլխոյն անկեալ, զի մի չարժիցի, և ասէր. Ուրացիր զլեօն. իսկ նա ի յամենայն հարման չիսուս մարիամ կոչէր։

Ի յայսմ գործողութեան նուագի, իրիցկին սորին եկեալ լալագին և կողկողագին

դիմօք արձակել և թոյլ տալ աղաչէր, բաւական է բաւական է ասելով. վ. ասէ, Այն քիչ է տահայ, այնպէս անենք օր ուրիշին խրատ լինի։ Եւ այսու ոչ չատացեալ անգութքն ի բանտ չաւուշին ստիպեն գնալ ուխտ, որ ոչ կարէ քայլել. ստիպեն զամչիով հարմամբ գբոլոր մարմին թէ կանգէ և քայլէ։ Իսկ նա աղաղակէ ոչ կարեմ, և հարմամբ զամչիին զմի ակն ևս խաւարեցուցեալ և ուռուցք մեծագոյն ի վերայ աչացն. և մինչ չկարացին ուխտ տանիլ, վ.ն և այլք անզգամք ի վերայ երկրի քարշելով տարին ի բանտ չաւուշին, պնդել պնդագոյն ի կոճեղս. խաչելութիւնն ի ծոցէ քահանային անկեալ յերկիր. չար վ.ն կոխոտեալ զնա թէ այս ֆրէնկի խաչ է։ Եւ յետոյ գաղտ ումանք ուղղափառք զգրամ հաւաքեալ 25 ղրուշի չափ, տուեալ են զի թուլացուսցէ։ Ի մօտակայ աւուրս եկն ոմն իբրու թէ փախեալ ի գաղատիոյ, որ է եղբօր որդի Սէրգիս աղային, որ նա պատմեալ է զայս ամենայն. և ասացեալ թէ ելած օրս լսեցի, թէ քահանային յոտից մինչև ի մէջկն ուսեցվօրեր է, և աչքն խաւարեալ, դժուար թէ ոտքն մնաց[1]։...

Գերյարգութեան ձերում
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մխայէլ Վ.

Ցամի Տեառն 1748–ին
յունվարի 2–ին
[կ. Պոլիս]

ՁԽԱ.

Հ. Մ. Պռուսլեան ինը նամակներ միայն գտած էր Ս. Ղազարու Գիւանատան մէջ Սարաֆեան Սարգիս Արքեպս.է առ Մխիթար, ի շահ Հ. Գալեմքեարի ուսումնասիրութեան, ինչպէս առաջ ըսինք։ Մենք հոս կը ներկայացնենք դեռ երկու նամակներ։

Թէ Սարգիս ինչ պայմաններու, մանաւանդ թէ ինչ վարպետ ձևերու տակ գրած է զանոնք՝ Մխիթարայ կենսագրութեան մէջ պիտի գտնենք։

Առաջին նամակին մէջ՝ ան Մխիթարայ կը դիմէ Սաղմոսին տպագրութեան հրատման խնդրելու. միևնոյն ատեն կ'իմանանք ձեռք զարկած միւս աշխատութիւնները։ Երկրորդ նամակին մէջ Սարաֆեան կը գրաւի Մխիթարայ կողմէ ստացած առաջին պատասխանով[2]։

Տեառն Տեառն Մխիթարայ գերյարգելի Հօրն մերոյ
Ողջունիւ Ճանկերմ յայտարարութիւն լիցի

Չի կամիմ թէ զսպմոս իմն տպագրիցեմ գոնեայ, առ ի նուազել զթուղթն իմ, որպէս գրեցաւ յառաջն։ Որոյ պատճառն է այս, զի թէպէտ սկսայ զներածումն առ Ջերմեռանդութիւն սրբոյն Ֆրանչիսկոսի սալեզացւոյ, բայց կարի տկարացոյց զիս վերստին, նորապէս գրումն երկուց գրեանց ի միասին։ Ուստի կամիմ զի ժամանակ ինչ ի բաց

---

1. — Ուրիշ նամակի մը մէջ կը գտնենք հետեւեալ պատառիկը. «Ջնոյն քահանայն, որոյ զ500 ըիր հարեալ «ոտացն, յետ որոյ ի բանտ ի կոճեղս պնդեալ, և տակաւին կենդանի գոլով ի բերդի են եղեալ» (Հ. Մխ. Վ. առ Մխ. 1748, յունվ. 28)

2. — Սարաֆեան «1748 տարւոյն, Վենետիկի տպագրողի մը միջոցով, ձեռք բերաւ ճարտարութեամբ Արքահօր նոր շինել տուած տառերուն մայրերը, և բաւական քանակութեամբ գրեր ձուլել տալով, զազատուկ տպագրել տուաւ իրեն խրթմանած մէկ գիրքը։ Նոյն տարին Մխիթար փոքրագիր Սաղմոս տպել տուած էր պատկերներով և զարդագիրներով. Սարգիս հպիսկոպոսն ալ, ճիշդ նման պատկերներ և ծաղկագրեր շինել տալով, նոյն ձեւով ուզեց Սաղմոսը տպել տալ, Ազգայիններէն ոմանք լսելով մեղադրեցին զինքը. նա ալ Արքահօր դիմաց իբր հրաման խնդրելու...», Ա՛ր որ Մխիթար պատասխանած է. «Եթէ կ'ուզես տպել տալ, դուն գիտես, բայց այդ բանը ոչ միայն մեզի կը վնասէ, որ այնչափ փոյթս չէ, այլ նաև քեզի, որով պիտի մեղադրուիս շատերէն և անունդ պիտի կտրէ։ Եպիսկոպոսը Քոյլուսլիքին համարելով զայս, տպագրեց զայն յար և նման Մխիթարայ հրատարակածին։ Մխարանք իմանալով եղածը՝ այնչափ վշտացան, որ խնդրեցին Արքահօրէն տէրութեան ձեռքով դադրեցնել զայն. Մխիթար, փոխանակ անոնց խօսքերէն շարժելու, յանդիմանեց զանոնք՝ հեզութեան և անյիշաչարութեան մէջ պահելնուն համար», խօսելով անոնց հիանալի յորդոր մը, ուր Մխիթարայ հոգւոյն անբծութիւնը արեւու պէս կը փայլի (Թորոսեան, Վարք Մխիթարայ, էջ 399)։

թողեալ զսալեզեանն, տպագրեցուցից զսաղմոսն առ ի տպառել զթուղթն անպիտան։ վասն որոյ խնդրի ի Հայրութենէդ քումմէ խոնարհաբար, զի եթէ ունիցի այս առաջադրութիւն զվնաս իմն՝ թէ հեռապէս և թէ մերձապէս քոյոյ Ցարգելութեանդ՝ ծանուսցես մեզ վճռագիւ[1], զի ի բաց հրաժարեցայց. իսկ եթէ չունիցի այսպիսի ինչ, ներեսցես մեզ առ ի ձեռնամուխ լինել. լինելով քո ողջ յաւէտագունիւ մաքրութեամբ ի պարծանս ստորև գրեցելոյ

Նուաստութեանս

Սարգիս Ար եպսկպս. կես.

Ցամի տեառն 1748
Յապրիլի 1 [վենետիկ]

ՃԽԲ.

Դիրքարգելոյ Տեառն Տեառն Մխիթարայ Աբբայի վերստին Ողջոյն ընծայի հանդերձ յարգուրեամբ

Ընկալեալ իմ զգիր վսեմութեանդ՝ և ծանեայ զկրկնակի փաստն բացատրութեանդ առ ի տպագրել զսաղմոսն։ Եւ մանաւանդ զյետինն փաստից, որ և դիտէր առ ի չլինիլն իմ հարկաւորապէս մեղադրելի։ Ջոր ոչ գիտացի ոյր աղագաւ և յոր վայր լինիլ այս։ Քանզի եթէ վարկանիցի լինիլ այս ի կոստանդնուպոլիս, այսպիսի վարկանումս է ի դերևս։ Որովհետև զոյ նարդեանս անդ Դ տպագրատուն, որոց իւրաքանչիւրքն համայնգամայն տպագրեն հազարաւոր թուով զսաղմոսս թարց մեղադիրք լինելոյ իրերաց։ Եւ բաց յայսմանէ, նաև մինչ ընկալնուն զ քէն յաճախապէս տպագրեցեալսն, բնաւ երբէք ոչ են զտրտունջ ինչ արարեալ զքէն, այլ գրեթէ չնորհակալք լինին յաւէտ։ Ուստի վարկեմ թէ և ըստ չափու արժողութեան՝ և զմեր տպագրեցելոյն լինիցին չնորհակալք, և ոչ թէ մեղադիրք։ Բայց գուցէ՝ աստանօր իցեն այնք մեղադրօղք, այդ է բան այլ իմն հաշուոյ։ Ցաղագս որոյ որպէս յարգելութիւն քո անխայեեր զիս առ ի չլինիլ մեղադրելի։ Չանգունապէս հարկաւորիմ և ես առ ի ծանուցանել Տեառնդ զփաստն իմ, յորմէ ստիպեցայ առ այս առաջադրութիւն, առ ի անմեղադրելի պահել զպատիւն մաքրազանութեանդ։ Քանզի անձն ոմն յերևելեաց գրեալ էր ինձ ի Պօլսոյն մեծէ առ ի տպագրել վասն իւր զսաղմոսս, և ես ոչ մտաբերելով երբէք (թէ և պարտ իցէր) առ ի հարցանել Տեառնդ, թէ ունիցէ՞ր արդեօք այս գործ զվնաս իմն Հայրութեանդ, այլ միայն դիտելով առ այս՝ թէ այս է դիպուկ առիթ իմն վասն սպառելոյ զխափանեցեալ թուղթս իմ, գրեցի առ այն անձն՝ թէ ըստ ամենայնի յօժար եմ առ ի ծառայել, և աստուծով մերձ ընդ մերձ սկսանիմ ի տպագրել, որոյ վասն և պատրաստեցի զոմանս պիտոյս որքան առ տպագրութիւնն։

Ուստի եթէ այժմ դարձուցեալ զբանս իմ գրեցից առ այն անձն, թէ արգելումն եղև գործոյն՝ այս ինչ և այն ինչ պատճառաւ, գուցէ թէ և նոքա չփոթեցեալք յայսմանէ, կամիցին ընդ մեղադրանօք արկանել զՊայծառ անունն Գերայարգելութեան քո, վարկելով յինքեանս թիւրապէս՝ թէ սակս մարմնական շահու իցէ այս լեալ։ Ուստի ծանուցանելով զայս դիպուած քոյոյ Հայրութեանդ, խնդրեմ անբասիրս առնել զմեզ այսմ մասին, զի ես ոչ եմ եղեալ աստ առ ի տպագրել զսաղմոսս և զժամագիրքս։ Վասն որոյ այս այսպէս ծանուցեալ գոլով, վերստին սպասեմք պատասխանւոյ Հայրութենէդ, պահելով ի մեզ ըստ ամենայնի զյարգումն և զհամարումն քոյդ երջանկութեան, որ և յաւէտ պայծառասցիս երջանկութեամբ ի պարծանս Ազգի մերոյ, և ինձ իսկ գլխովին

Որ եմ նուաստագոյն Ծառայ Տեառն

Սարգիս Ար եպսկպս. կես.

Ցամի Տեառն 1748
Յապրիլի 3 [վենետիկ]

---

1. փութով.

ՃԽԳ.

Մայրավանքիս ընդհանուր նորոգութեան պատմութեան բաժնին համար կը զանենք հետևեալ վաւերագիրը, որ որքան կարևոր մեզ՝ նոյնքան հետաքրքրական պիտի ըլլայ անշուշտ ազգայնոց։

Պայծառաւորէն կը տեղեկագրուի Ս. Ղազար կղզեկիս զանգակատան հիմնարկութիւնն ու շինութեան սկզբնաւորութիւնը, որոյ նկատմամբ չկայ մասնաւոր ծանօթութիւն մը Մխիթարայ վարուց կենսագիրներու հրատարակութեանց մէջ։

Աստուածասիրի և սիրելւոյ մեր իմոյ Նուրէ Դատրնիի, և բարեպաշտօն եղբարցդ իմոց ազնուականաց Նիկողայոս Աղայիի, Յակոբ Աղայիի, Յովաննէս Աղայիի և Յարութիւն Աղայիի, բազում սիրով ողջոյն

... Իսկ յաղագս շինուածոց զանգակատան թէ կամիցիք գիտել ինչ, որպէս գրեցի յառաջնում թղթի՝ եթէ հանդերձեալ եմք զհիմն նորա արկանել, նոյնպէս և կատարեցաւ օգնականութեամբ տեառն, և ամենայն դիւրութեամբ՝ յամօրեայ աւուրս յաւարտ հասուցեալ հիմն անդնդախոր և հաստատական, յամսեանն հոկտեմբերի։ Եւ այժմ քարինք տաշեալ կան և ամենայն նիւթ պատրաստական. և սպասեմք քանի մի աւուրս, մինչև պարզևեսցէ տէր զԱքբայհօր մերոյ զկատարեալ առողջութիւն ի դժուարին հիւանդութենէ, որ պատահեաց նմա յաւուրս յայսոսիկ։ Զոր թէ տէր շնորհեսցէ, ակն ունիմք ընդ հուսկ ի զատկիս սկիզբն լինիլ բարձրանալոյ շինուածոյս ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ և ի պարծանս ձեր։ Եւ որոյ շինութիւն խնդրեմ զեղբարցդ իմոց նպաստս. անյապաղ զդրամսն հասուցանել, անսուտ զձեր խոստումն առնելով, որպէս և պայմանեալ ժամանակի լրումնդ պահանջէ, և այնպէս իմոյ և ձեր փափաքանաց առնել կատարումն[1]։...

Ազնուականութեան ձերում
Ցամենայնի պատրաստական

Նուաստ ծառայ
Հայր Վրթանէս վարդապետ [Ասկերեան]

Ցամի տեառն 1749
ի մարտի 20
[Վենետիկ]

ՃԽԴ.

Ս. Ղազարու դիւանի շահեկան թուղթերու մեր հրատարակութիւնը կը հասնի այլևս Մեծին Մխիթարայ մահուան թուականին։

Հետևեալը գուժալից թուղթն է, որով Հ. Եղիա վարդապետ՝ իբր Տեղապահ Աբբայի՝ համառօտիւ կը հաղորդէ մեր քարոզիչ վարդապետաց, տալով տեղեկութիւններ Գերդ. Աբբայիս մահուան շուրջ, ինչպէս նաև անոր հետևանքով ինչ ինչ կարևոր հրահանգներ։

---

1. Հ. Եղիա վ.է առ Հ. Զաքարիա գրուած մէկ նամակէն (որոյ մասին «Այս զիրս ոչ եղև յղեցեալ» գրուած է թուղթին սկիզբը) կը քաղենք հետևեալ տողերը. «Վասն շինուածոյ զանգակատանն ծանիք, զի այժմ մերժ են «յայն բարձրութիւնն հասանել, յորում այնուհետև ոչ կղմնտրով, այլ քարամբ միայն վերացուցանելոց են. և «յարժամ յայն չափն հասանին, դադարին ի շինելոյ մինչև ի գալ ամին, որպէս զի շինուածն հաստատեալ, «պնդեսցի ի վերայ հիման» (Ցամին 1749, ի Մայիսի 11).

Վերապատուելոցդ Հայր Յակոբ վարդապետի
և Հայր Աբգարևս վարդապետի

Ցամի տեառն 1749 Մայիսի 23

Ցիսուսաւանդ ողջունիս յայտ լիցի Հայրութեան ձերում, զի պատճառն վասն որոյ այսքան ժամանակ գիր ոչ եղև յղեցեալ առ ձեզ, այս է, զի Գերյարգելի աբբայ հօր մերում անցեալ ամի դեկտեմբերին որ փարատեցեալ էր, դարձեալ եկն ի վերայ, զորոյ զիարդն ոչ կարեմք այժմ մի ըստ միոջէ պատմել ձեզ։ Եւ թէպէտ մեր քաջ իմաստուն բժիշկն բազում չանիւք պէսպէս դեղ արար, և երբեմն երբեմն ցաւն թեթևացաւ, բայց վերջապէս փոփ բարերար կամացն ստուեծոյ, յապրիլի 27 փոխեցաւ յաստի կենաց։ Եւ եղև մեզ անպատմելի ցաւ որք մնալն մեր յայնպիսի գերազանց չնորհալի բարերար խնամակալ հոգևոր Հօրէ և առաջնորդէ, որ և էր փառքն ընդհանուր ազգիս մերոյ։ Եւ յոյժ բարւոք պատրաստութեամբ և ջերմեռանդութեամբ եղև փոխիլն նորա յաստի կենաց։ Ընկալաւ յառաջագոյն զամենասուրբ Հաղորդութիւնն և զվերջին Օծումն. և ետ մեզ զվերջին օրհնութիւնն և զպատուէրն։ Եւ գրեթէ մինչև ի յետին չնչելն էր զգաստ։ Ձետ այսորիկ արարաք նմա զարժանի մեծահանդէս թաղումն արտասուօք և ջերմեռանդութեամբ. և զուտ օր այգողք արարաք նմա։ Ջկնի թաղման իբրև փոքր ինչ սփոփեցան սիրտք մեր, յետ քանի մի աւուրց ժողով արարաք զամն ի մէնջ կացուցանել մեզ փոխանորդ աբբայի, զի կառավարեսցէ զմիաբանութիւնն մեր ժամանակաւորապէս՝ մինչև ընտրեսցի և կացուսցի ոմն աբբայ հայր։ Եւ ըստ սրբոյ Կրօնիս մերոյ կանոնի և կացութեան՝ նաև ըստ աբբայ Հօրն մերոյ խրատու՝ պալա ձգելով՝ ընտրեաց և ընդունեցաւ միաբանութիւնն զիս լինիլ փոխանորդ աբբայի. և այսպէս յիմ վերայ եղաւ կառավարութիւն հաստարակութեան մերոյ մինչև զնոր աբբայ դիցուք։ Արդ որպէս ի ժամանակս կենդանութեան աբբայ հօրն ամենայն ինչ կազմ և կարգաւորեալ կայր, նոյնպէս և այժմ։ Իսկ զաբբայ ընտրել և կացուցանել այժմ ոչ կարեմք, քանզի պիտոյ է, զի որք արտաքոյ վանիցս են, եկեսցեն՝ եթէ կարասցեն, իսկ որք ոչ կարեն գալ, զհաւանութիւն իւրեանց գրեսցեն առ մեզ։ Եւ քանզի ձեր մնալն այդր՝ յոյժ հարկաւոր է, վասն որոյ պիտոյ է զի դուք գրիցէք զհաւանութիւն ձեր՝ այսու օրինակաւ. Ես հայր այս անուն հաւանիմ և ընդունիմ զնա զոլ աբբայ հայր, զոր երկու երրորդ մասն ժողովոյ միաբանութեան մերոյ ընտրեսցէ։ Դարձեալ վասն հոգւոյ աբբայ հօրն զհինգ հինգ պատարագս մատուսջիք։... Վասն դաղարման ներողութեանց ի սուրբ տարուընն՝ ծանիք զի իրաւի յամենայն աշխարհ որքան ներողութիւնք կան, դաղարին ի սուրբ տարուընն, ուստի զգոյշ լերուք, զի մի յայնմ տարւոջ ևս հռչակիցէք զներողութիւնս խորանաց ձերոց...։ Ցարևելս ի Հայաստան է սաստիկ խռովութիւն և դժնդակ դառնութիւն, մինչ զի եթէ հնար էր, ամենեքեան փախչէին յայնմ երկրէ, զի այժմ երեք շահ նստեալ են ի զանազան տեղիս և պատերազմին։

Ն. Ծ. Հ. Եղիա վարդապետ փոխանորդ

[Վենետիկ – Ս. Ղազար]

ՃԽԵ.

Հ. Ղազար կը նկարագրէ վերոյիշեալ սխուր գուժէն իր և քաղաքին կրած մեծ տպաւորութիւնը։

Վերապատուելոցդ և Յարգելոցդ Հայր Եղիայ վարդապետի
փոխանորդի Աբբայի և Հօրն իմոյ

... Եհաս գիր մի կարի անագան, զոր գրեալ էր Հայր Մարկոսին. և ի գրոյն յայնմանէ իմացայ զլուր ինչ ցաւալի, զի ի յապրիլի 27 խաւարեալ է մեր հայ ազգին արե-

գակն, և հիմնադրողն կրօնին մերոյ, վախճանմամբ մեր Գերյարգելի Աբբահօրն. ցաւ է ինձ և տրտմութիւն անպակաս, զի զրկեցաք յայսպիսւոյ բարեխնամ և բարերար Հօրէ և առաջնորդէ, որ էր փառք և պարծանք և հաստատութիւն ազգին և կրօնին մերոյ...։ Արդ ի լսելն զայս ցաւալի լուրս ամենեքեան տրտմեցան և ափսոսալով բարեպաշտական զթով չարժեցան ի յողբ և ի գութ, և ի պազատանս Աստուծոյ։ Բէպանուշն տեղւոյս, այսինքն Մինաս վարդապետն յաւուր[ս] հինգ հոչակեաց զձայնաւոր պատարագ վասն մեռելի մեծաւ հանդիսութեամբ. նաև զկնի պատարագին յաւուրս հինգ յայգող և հանդիսական թաղումն արար...։ Նաև սէնագոն և Դատաւորն քաղաքիս եւ մատուցանել քահանայիցն, թէ Հայոց և թէ մաճարաց զբազում պատարագս...։ Երկոքեանքս ևս զհինգ հինգ պատարագսն զոր հրամայեալ էր մատուցանել վասն հոգւոյ Աբբահօրն մատուցաք։ վասն սաստիկ ցաւոյս և տրտմութեանս անկեալ դնիմ ի մահճի. մանաւանդ տկարութիւն ստամաքսիս վասն զի ամենևին ոչ ընդունի և ոչ մարսէ զկերակուրն. զոհութիւն և փառք բարերար կամացն Աստուծոյ որ տանջէ զիս զանազան ցաւով և հիւանդութեամբ...։ վասն կտակի տանն աղաչայ Պետրոսին գրեալ եմ լիապէս թէ որպէս հաստատեալ եմ աստ, և եղեալ զբարձրագոյն խաչ մի առաջի դրանն, վասն նշանի և հաստատութեան...

Յամի Տեառն 1749
յուլիսի 2
[Հայաքաղաք]

վերապատուելիդ ձեզաւ յամենայնի պատրաստական
ղուաստագունեղ ծառայ
Հայր Ղազարոս կրօնաւոր
ի կարգէ սրբոյն [Անտոնի] Աբբայի

ՁԽԶ.

Հայաքաղաքին հայազգի դատաւորն է, որ կէս աշխարհիկ բարբառով կը բերէ պաշտօնական ցաւակցութիւնը քաղաքին կողմանէ՝ Մխիթարայ մահուան առթիւ, յայտնելով միանգամայն անկեղծ ու ջերմ համակրութիւն և յարգանք նր. Հօրս յիշատակին և անոր Ուխտին հանդէպ։

Որ. եղիցի. Յիսուս Քրիստոս

Գերյարգելցելոյ և վերապատուելցելոյ
Տեառն Տեառն Հայր Լուիս վարդապետի
և փոխանորդի Աբբայի մեծաւ Քարգուրեաւր ողջոյն

Ձցաւալի և զրօդալի խապարն լըսելով ի կողմանէ Մահուանն մեր հոգևոր սուրբ Հօրն Գերյարգելցելոյ աբբահօրն, խիստ ցաւեցանք և տրտմըվէցանք, որ զրկըվիլինք այսպիսի սուրբ և պատուական Հօրէ և առաջնորդէ, որ էր փառք և պարծանք արընատ ազգիս Հայոց. և մեր Քաղքին կողմանէն վերապատուելի Քահանայքն, ի միասին ընդ ժողովրդեան աղօթք և պատարագ մատուցիլին վասն հոգւոյ լուսաւորեալ հոգի Աբբահօրն, զի պարգևեսցէ Տէր Նմայ զփառս յաւիտենական, և վիճակակցիլ հաճեսցի ընդ ընտրելեաց սիրելեաց իւրոց, զի բարեխօսեսցէ առ Տէր վասն հաստատակ ազգիս Հայոց։ Եւ ևս խնդրինք Աստուծոյ որ այսուհետև միշնորդութեամբ տիրամօր սուրբ Աստուածածնայ, տացէ և պարգևեսցէ ընտրել սուրբ և բարի Աբբահայր, զի կարասցէ սրբութեամբ և իմաստութեամբն իւրով հովուել և կառավարել զայտ սուրբ կրօնը, զի մեր նաձխային լիցի փառք և պարծանք։ վասն որոյ մեծաւ ըղձմամբ կու խնդրինք զվերապատուելութիւնդ և զամենայն միաբանքն, որ սիրով ընդունիք այս մեր քաղաքէն ալ այս առաջին պատուղը...։ Նաևս չնորհակալ կուգա արընատ քաղաքը վերապատուելութեան ձերում ի կողմանէ Հայր Ղազարոսին, որ այս տեղը մեր քաղաքը գալով և այց

առնելով զմեզ անպատմելի ուրախութեամբ լըցուցիլ է, մխիթարելով և յորդորելով զմեզ իւրեան պատուական քարոզութիւններովն։

Այլևս վերջապէս կու խնդրինք միաբան քահանայիքն և ժողովրդեամբն, որ զմեր քաղաքն ի միասին հաստարակութեամբն միշտ աղօթից չի մոռանաք ձեր տէրութեանը սուրբ և աստուածընկալ մաղթանացը մէջ, որ աստուած պահէ և պահպանէ զմեզ ամենայն փորձանաց, թէ հոգևոր և թէ մարմնաւոր, և պարգևեսցէ զսէր և զմիաբանութիւն առ միմիանս ի մէջ ազգիս Հայոց։ Եւ այսու կի մընամ

Ծերյարգելութեան ձերում

Խոնարհ Ծառայ
Խունկիանոս Տանիէլեան
Դատաւոր Հայաքաղաքին

Գրեցի Հայոց քաղաքն
Die 21 7bre 1749

ՃԽԷ.

Հայ Պատրիարքութեանց մէկ յուզումնալից շրջանին՝ Լամբրոնացւոյ Աւետարանութեան տպագրութիւնը արգելքի տակ կ՚առնուի։

Գերապայծառ և Գերաչարգոյ Տէառն Տէառն
Երկիայի վարդապետի փոխանորդի արբայի հանդել ի տէր

... Դարձեալ յայտ լիցի տէրութեանդ վասն նալոդլու յակոբ պատրիարգին, զի հանին զնա ի պատրիարգութենէ, և արարին զնա երուսաղեմի պատրիարգ, և հազիւ առաքեցին զնա յիզմիր, զի անտի գնասցէ ի տեղի իւր, գի ոչ կամէր թողուլ զկոստանդինուպոլիս և ի տեղի նորա եդին զմինաս վարդապետն պատրիարգ։ Եւ յառաջ յարութիւն վարդապետն էր փոխանորդ պատրիարգին մինչև ի գալ նորա, յորոյ ժամանակս եառն տպել զաւետնաբանութիւն լամբրոնացւոյն. բայց յետոյ ամբաստանութիւն եղեալ վասն այսորիկ, արգելեցին վաճառել. այլ ես զմինն գնեցի վասն մերոյ մենաստանի ձեռամբ պետրոս աղային որդւոյ սարգիս աղային։ Եւ առ մինաս պատրիարգն գնացեալ ոմանք ի հակառակորդաց ասացեալ են. Տեսանե՞ս թէ որպէս համարձակ մտանեն և ելանեն ուղղափառքն յեկեղեցիս ֆռանկաց։ Եւ նա պատասխանի արարեալ է եթէ Ոչ կամիմ ես զերկու ազգս ընդդէմ միմեանց յարուցանել։...

Ցամի Տէառն 1749
Նոյեմբերի 5
[կ. Պոլիս]

Նուաստ Ծառայ
Հ. Ստեփաննոս Վարդապետ

ՃԽԸ.

Բենեդիկտոս ԺԴ. Քահանայապետի հայասիրութեան մէկ փայլուն ապացոյցը կը պատմուի հետևեալ թուղթին մէջ։

Բարեպաշտուհի և պարկեշտակրօն մօր իմոյ սրբուհի Խաթունին
և քրիստոսասէր եղբարց իմոց Պետրոսին և Ղուրիէլին

... Սրբազան փափը մէկ օր մը զամէն հայերը կանչեց մէկ մեծկակ ժամու մը մէջ, որ մօտիկ երկու հարուր հոգի կային. ուրիշ ազգէ հիչ մարդ չի թողուց՝ որ ներս մտնէ. ֆարազի պէյեալ ըլլար. դուռը ժամուն եասախճիներ կանգներ էին. ով որ կը խոստովանէր, թէ ես հայ եմ, սալէ զնոսա կը թողէին մտնել։ Ցետոյ ժամու մէջը աթոռ նստաւ սրբազան փափը. կանչեց մեծ սիրով զհայերը իր քովը. թող տուաւ որ անոնք

ամմինքը ուքը պագին, ու զինքը աղէկ մը տեսան. վէ ամմենուն մէկ մէկ մենծ արծթէ միտալ տուաւ...: Ասանկ սրբազան փափ տահայ չէր եղեր, որ հայոց վրայ այսչափ սէր ունենայ: Հռօմայու մէջ պազը հովառտայ մարդիք ֆռէնկին ազգէն՝ պաշչայեցին մասխարայ ընել զպազի խլըխսըզ հայերը: Եւ[ր]բոր աս բանս սրբազան փափին անկաճը հասաւ, չուտ մը սրդողեցաւ, նզովք հանեց, խիստ եասախ ըրաւ, որ մարդ մէկ մըն ալ հայոց ազգին ափեղցփեղ բան չի խօսի: Ասով խանահաթ չըրաւ. չուտ մը ինչխըտար եասախեի կայ նէ, ամմենուն թէմպէհ ըրաւ, որ Հռօմայու մէջ ֆռըլֆռըլ պտըտին. էյէր որ մէյ մը տեսնեն, որ հայոց ազգին լեզու կերկնցնէ, չուտ մը ծեծելով բանեն զընտանը դնեն: Մէկ օր մը մէկ խիսիզ մարդ մը ֆռէնկի ազգէն՝ խենթեցաւ, ելաւ մէկ խեղճ հայ մը մասխարայ ըրաւ. ըսելով. սէլամմալէք. սէլամմալէք: Աս ըսելլինի չես գիտեր ինչպէս՝ ան սահաթը եասախճիները վրայ հասան, բռնեցին, գլխուն ծեծելով զընտանը խօթեցին: Ցետոյ ան խեղճին կնիկը, տղաքը, վէ ազգականները եկան լալով հայոց ուքը ինկան, որ երթան սրբազան փափին իրիճայ ընեն, որ իրենց մարդը ազատուի: Ասոնք ալ ողորմեցան, գնացին իրիճայ ըրին. ամայ միւնքիւն չեղաւ, որ թող տային. զէրէ սրբազան փափը խիստ սրդողեր էր...:

Ցամի Տեառն 1750
Ցունվարի 22
[վ[ենետիկ]

Նուաստ Ծառայ
Մկրտիչ տրուպ վարդապետ

ՃԽԹ.

Ֆրահանայապետանիստ քաղաքին մէջ ուխտաւոր Հայութեան վաստկած բարի անունն ու գովեստները կը լսենք մեր պատկերահան Յովհաննէսէն:

Դիւրյարգելի և գերապատուելի Հայր Եղիայ վարդապետին
յարգուբեամբ ողջոյն մատուցանեմ

... Ըրնունդեան օրերն երբ սուրբ դուռն բացվեցաւ 166 անձինք կային հայք արք և կանայք, ամսիս 18 երբ սուրբ երրորդութեան քօմբանիայի եղբարց թափոռով սուրբ Պետրոս գնացին և երեկոյէ ընդրիս եղև, էին 132. յաժմս կարծեմ չուրջ 110 անձինք են. թէպէտ ըսկսբաննէ սուրբ տարոյն բովանդակ եկողաց երկիրն և անունն գրել կուտամ որ սուրբ տարվան վերջն իմացվի թէ որքան անձինք ուխտավորք եկին... կարճ բանիւ միայն զայս ասեմ, իբաւի այս մինչոցիս հայոց պարկեշտութիւնն և ջերմեռանդութիւնն յոյժ բարի որինակ տվաւ քաղաքացոց, մանաւանդ գովեցան սուրբ հայրապետէն և կարտինալաց, նաև այլոց մեծամեծաց. ևս այսքան բազմութիւն զանազան երկրէ ի միասին բնակեալ՝ ի միջի նոցին խրովութիւն կամ կռիւ չեղաւ. տեղդ եղեալ Սարգիս եպիսկոպոսն սուրբ ժողովին գրած է թէ զատկին կամիմ Հռօմ գալ...:

Ցամի տեառն 1750
յունվարի 31
[Հռովմ]

Խոնարհագոյն Ծառայ
Պատկերահան Յոհաննէս

ՃՕ.

Սարաֆեան Աբգեպս.ի երկոտասաներորդ նամակն է որ լոյս կը տեսնէ հոս: Զայս կ'ուղղէ առ Մելգոնեան Աբբահայր, առաջին ցաջորդ Մխիթարայ, յայտնելով իր սաստիկ զայրոյթը ընդդէմ Անտոնի Պոռթոլի, որուն յանձներ էր իր երկոց տպագրութեան գործը: Սարգիս կը թելադրէ Մելգոնեանը, որ ինքն ալ իր կարգին թողու սոյն տպագրատունը, իր դատին թիկունք ունենալու նպատակաւ:

Գերաւժարութեան քում յայտարարութիւն լիցի
Ողջոյնիս հանդերձ

Անտանելի եղև յամենայնից կողմանց չափազանց ամբարտաւանութիւն անտօնի տպագրչին։ Թողում ի բաց զվատթարագոյն տպագրութիւն ապականեալ, եղծեալ, և պրատղեալ։ Այլ նաև ոչ գտանի կուսական թղթոյ իմիք, որ ոչ ունիցի գքաւասնաւոր գյիսնաւոր, և զհարիւրաւոր պակասութիւն թղթոց։ Եւ այսու ամենայնիւ, ոչ ապաչանաց անսայ, և ոչ յանդիմանութեանց ունկն դնէ՝ յուսալով ի յայն թէ՝ միայն ինքն է տպագրիչ։ Եւ լուեալ եմ խորհրդականապէս ի յիւրայնոց ոմանց, թէ գերյարգութիւն քո խնդրեալ, և առեալ է զգրեանս քո ի նմանէ, իբր ոչ կամելով այսուհետև տպագրել անդ զգիրք ինչ (օշ թէ ճշմարիտ իցէր)։ Վասն որոյ՝ նոյն ամբարտաւանն առաջադրեալ է ինքեան զալ, և ապաչել գերյարգութեան քոյ որպէս առ այս։ Ուստի եթէ իցէ այնպէս և լուայ ի միոյն իւրայնոց՝ ապաչեմ ոչ թեթևապէս անցուցանել զայս նիւթ, ըստ ամենայնի նուաճելով զիստութիւնն պարանոցի նորին ի ներքոյ կանոնաւոր լծոյ իմիք. և կամ թէ ամենևին լքել զտպագրատունն զայն։ Քանզի այնքան բռնացաւ ստահակութիւն նորին, որ անճարացեալ եմ, կամիմ թողուլ այժմ զտպագրութիւն կենդանեացին[1], թէև մատացեալ իցէ պակաս տասն թուղթ, զի եհան զիս՝ ի կէս աւուրց իմոց մանիչն այն։ Եւ զորպէս գոլն այսորիկ իրակութեան ծանուսցես ինձ ի ձեռն յարգելի եղբօր իմիք. բաւ է։

Նուաստ ծառայ տեառն
Սարգիս վարդապետ [Սարաֆեան]
[Աղթեպս. կեսարիոյ Կապադովկ.]

1750 *ի մայիսի* 11
[ՎԷնետիկ]

ՃԾԱ.

Այս թղթով Մելգոնեան Աբրահայր կը ներկայացնէ հրէութենէ քրիստոնէութեան դարձած ու Սարկաւագութեան բարձրացած երիտասարդ մը։

Աս Պատկերահան Յօհաննիսեան վասն յօհաննիս սարկաւագին
յանձնարարական

Զողջոյն յիսուսաւանդ բազում սիրով մատուցանեմք ազնուական եղբայրութեան քում։ Եւ յայտ առնեմք, զի որ զգիրս զայս մատուցանէ, որ բարեբարոյ ոմն սարկաւագ՝ յօհաննէս անուն։ Սա լեալ է որդի եբրայեցւոյ միոյ մեծատան ի գմիւռնիայ քաղաքի։ Եւ ի չափ հասակի ժամանելն իւրում գտեալ է ի մէջ գրեանց հօր իւրոյ զսուրբ աւետարան տեառն մերոյ յիսուսի, և ընթերցեալ զայն գաղտ, շնորհօք փրկչին և լուսով ողորմութեան նորա դարձեալ է ի հաւատս քրիստոսի։ Եւ խոյս տուեալ յերեսաց հօր իւրոյ գնացեալ է յայլ քաղաք և յարեցեալ ի վարդապետ մի հայոց, գնացեալ է ընդ նմա ի սուրբ յԷջմիածին, և անդ ուսեալ զամենայն հանգամանս հաւատոյ, մկրտեցեալ է. և յամս ինչ անդ կացեալ զձեռնադրութիւն ևս ընկալեալ է մինչև ցվեց աստիճանն։ Ուր և զլեզուս մեր ևս բաւուք ուսեալ է։ Երևի ևս թէ հմուտ է եբրայական գրոց բարբառոյն յաճախ ընթերցման պարապելով ի մանկութենէ իւրմէ, աստուածաշունչ գրոց։ Եւ յետոյ բաւուք ճանաչելով զուղղափառութիւնն, խոստովանեալ է ուղղափառ կարգաւորի, և դիմեալ է գալ յարևմուտս և յատկապէս յայդ սուրբ քաղաքդ Չռօմ։ Ինքն է բարեբարոյ քաղցր, հեզ, և ուսումնասէր ոմն։...

[Ստեփաննոս վարդապետ Աբբահայր]

Ձմռի 1750
ի մայիսի 16 *[ՎԷնետիկ]։*

---

1. «Կենդանեաց գիրք»։

ՃԾԲ.

ՄԽԻԹԱՐԵԱՆ տիտղոսն է որ հետևեալ վաւերագրին մէջ ամենէն աւելի պիտի հետաքրքրէ մեր ընթերցողները, և մենք հարկ է որ քիչ մ՝աւելի լուսաբանենք, քանի որ այս առաջին անգամ է որ անիկա յիշուիլ կը սկսի մեր հրատարակութեանց շարքին մէջ։

Ուշագրաւն այն է՝ որ Մեծ Սերաստացի Բաբունապետի մահէն տարի մը վերչ, 1750–ին, կը սկսին անոր որդիք իրենք զիրենք առաջին անգամ ՄԽԻԹԱՐԵԱՆ անուանել, մինչդեռ անկէ առաջ լոկ կը ստորագրէին «ի կարգէ Սրբոյն Անտոնի Աբբայի»։

Շատ արդար էր այդ զգացումը, նկատելով որ անոնք հաւասարապէս կ՝ապրէին իրենց եր. Հօր նշխարաց մօտիկը, որոնք կը հանգչէին նոյն ինքն Մխիթարակերտ Մենաստանին մէջ, որուն ժառանգներն իրենք էին։

Մեր փորը հետազօտութեան մէջ երեք դիտելի կէտեր ունինք։ Մխիթարեան կը կոչէ ինքզինքը ա. Մխիթարայ Առաջին Յաջորդը Գերց. Ստեփաննոս Մելգոնեան Աբբահայր. բ. Մխիթարեան կ՝անուանէ նա իր միանձունքն ալ. գ. Մխիթարեան կ՝անուանուին անոնք ուրիշներէ ևս։

Ձեռքերնիս հոս կարգ մը օրինակներ՝ մի միայն 1750 և 1751 տարիներու շրջանէն.

1. Անտոն եղբօրորդի Մելգոնեան Աբբահօր՝ յամին 1750 Հոկտ. 4 թուակիրով կը գրէ թուղթ մը հետեւեալ խորագրով. «Գերապատուելի և սրբազանի Հոգևորի «հօրդ իմոյ Տեառն Տեառն Հայր Ստեփաննոս Մխիթարեան Աբբայ հայր կոչեցեալ «լոյ...»։ Նամակիս ընթացքին կը կրկնէ դարձեալ նոյն տիտղոսը։

2. Հ. կարապետ Մարտիրոսեան, 1750 Յուլիս 4 թուակիր նամակին տակ կը ստորագրէ Մխիթարեան։

3. Հ. Մկրտիչ, 1750 Նոյեմբեր 20–ի նամակին տակ, զոր կ՝ուղղէ իր Աբբահամ եղբօր, կը ստորագրէ Մխիթարեան։

4. Նոյնը, 1751 Յունիս 3–ին, կը ստորագրէ նոյնպէս Մխիթարեան։

5. Հ. Ներսէս վարդապետ կարնեցի կը գրէ նամակ մը 1751 Յունիս 6–ին՝ այս խորագրով. «Մեծապատիւ տեառն տեառն Հայր Զաքարիայ վարդապետիդ, և «մեծի միաօնարիդ կոստանդնուպօլսոյ, Ներսէս յետնեալս ամենայնի, մեղսաքաւիչ «քահանայ, միայնակեաց մխիթարեան ի տէր ննդալ»։ Նամակին տակ ևս Հ. Ներսէս կը ստորագրէ ինքզինք Մխիթարեան։

6. Յակօբ և Գասպար Ըռաստեան անուններով երկու անձերու ստորագրութեամբ կ. Պոլսէն 1751–ին թուղթ մը կը հասնի այս խորագրով. «Գերյարգոյ և բարու«նապետ ընդհանրական Աբբայ Հայկազեան միաբանից Մխիթարեանց և քաղ ըն«տանի համասնունդ Ստեփաննոս տիեզերածաւալ վարդապետիդ»։

7. Հ. Գէորգ Անթիասցի, 1751 Հոկտ. 23–ին կը գրէ թուղթ առ Մելգոնեան, ստորագրելով ինքզինքը Մխիթարեան։

8. Հ. Զաքարիա վարդապետ Ակնեցի, 1751 Դեկտ. 3–ի թուղթին տակ կը ստորագրէ նոյնպէս Մխիթարեան։

9. Հ. Գէորգ 1751 Դեկտ. 8–ին թուղթ մը կ՝ուղղէ «Գերապատիւ և գերա«մեծար տեառն տեառն Ստեփաննոս Մխիթարեան Աբբայի», և ինքն ալ կը ստորագրէ ինքզինքը Մխիթարեան։

10. Հ. Զաքարիա 1751 Դեկտ. 20–ի թուղթի մը տակ նոյնպէս կը ստորագրէ Մխիթարեան։

11. *Հատ մ'ալ յիշենք եւրոպականներէն.* — *Մ. Ղազարու Հարք* 1763 *Ապրիլ* 9–*ին* (*միշտ* 1773–*էն առաջ*) *միաբանական վկայագիր մը կը գրկեն առ Մ. Դահն երկու մենաստաններու համար, բնագրին մէջ կոչելով իրենք զիրենք «*Congregazione dell'ordine di S. Antonio Abate de' Monaci armeni detti *Mechitaristi*».

Այդ իրրև սկսալ՝ հիմնովին արմատախիլ կ'ըլլայ Վիեննական Հարց «ՅՈՒՇԱՐՁԱՆ»ի տեսութիւնը (*էջ* 5), *թէ* 1773–*ին իրենք առաջին անգամ գործածեր են Մխիթարեան տիտղոսը, ինչ որ բերանացի ևս ամենուրեք տարածեր են՝ թէ սոյն տիտղոսը Մ. Ղազարու վանականներէն առաջ իրենք գործածած են։ Այս թիւր վճիռներէն մոլորեր էր և Թէոդիկ, զրելով այսպէս. «*19 *Մայիս* 1773–*ին* [*վիեն*-«*նական Հարք*] *իրենց նոր կայանին մէջ վանատուն մը բանալու ծրագիրը կը հա-«*տունցունեն և անդրանիկ Աբբահօր անուամբ կ'որոշեն կոչուիլ Մխիթարեան, մինչ «*Մ. Ղազարեանք մինչև այն առեն Վենետիկեան պայազատութեանց։ Գեզ պարկեշտակրօն, և զգօնացեալ բամբիռիդ բարգաւաճելոյ բազմաստեղեան չառաւիղօք՝ ըստ օրհնութեանց լերանց մշտնջե-նաւորաց՝ սրբասէր կողակցիդ Ասկէրօղլու սէրգիս պալըչին, անուանելոյդ ըստ սեպհա-կան անուան՝ նուրի. ողջոյն, և խնդութիւն, և բարեբաստութիւն և յամենայն ինասուց ազատութիւն. կամակարութեամբք մտաց տենչամք պատահիլ։ Ջսոյն մաղթեմք և վասն ամենայն ընտանեաց, և տոհմի, և զարմի՝ առ ի ձէնջ յամօղակցացդ չառաւիղելոյ։ Հասցէ՛ ձեզ օրհնութիւն ի տիեզերանշոյլ սեռակնաձև քառաթեւէն՝ վերբերողէ զվերբե-րիչն բոլորեցունց։ Ցորդեսցին ի ձեզ սահանաբաց անձրևք արփիացնցուղք, որպէս անդ ուրեմն առ նախնեօք՝ վտակք երկնակայլակք Անվկանդ, և անհարթչելի գթասիրութիւն նախախնամութեան տիեզերացունծ հոգւոյն՝ զձեօք յաւերժ փարեսցի, բարեխօսութեամբ ամենայցելու ձեռնտուութեան արգասաւէտ բեղմնաւորողին համասփիւռ ծաղկան՝ տիեզե-րաստած մօր՝ փառաւորեալ կուսի՝ երանածին ծնողի, միաբանութեան մերոյ պաշտպանի։ Որում բարեացասէր գունդք յերկնէ, և յերկրէ՝ ասացցեն ամէն։...*

Այլ յաղագս գալստեան հայր Վրդանէսին այդր, որում յոյժ ցանկացեալդ էք, ձեզ գիտութիւն լիցի, զի աւանիկ զիջեալ յաղաչանս ձեր, եթէ Տեառն կամք իցեն, առաքեմ զնա յայսմ գարնան առ ձեզ, զի տեսջիք և ուրախասջիք, տալ փառս Աստու-ծոյ. և նա ձեօք սփոփեսցի, որպէս բարեպաշտից են օրէնք։ Եւ ասդ՝ կացէք դուք յաղօթս, զի խաղաղութեամբ և խնդութեամբ, և անխոչ յաջողութեամբք հանդերձեսցին ելք նորա աստի, և մուտք նորա այդր։

Գանգի մարդոյ իրս ինչ դնել ի մտի, ի Տեառնէ լինին յաջողուածք նորա։ Զի բազում ինչ դիտեն մարդիկ առնել կամ յառնելոյ զգուշանալ, բայց եթէ ոչ իցէ յաջո-ղութիւն ի Տեառնէ, խափանի դիտաւորութիւն նոցա. զի զամենայն Տէր գործէ. և մեք եմք գործակիցք նորա։ Այսչափ ինչ յաղագս մխիթարութեան ձերոյ ասացեալ՝ չա՛տ լիցի։ Եւ մեք աստանօր զընթացս բանից ի լուութիւն դադարեցուցեալ, առաքեմք բազ-մազեղ օրհնութեամբ ողջոյն Քրիստոսասաւանդ՝ ամենայն որդւոց ձերոց, և դստերաց, և փեսայից, և մանաւանդ հեզահամբոյր առն պայազատի՝ մագըմ Գէորգի՝ մտերիմ բա-

Ի

Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ Յովհաննոս տրուպ Վարդապետ՝ Ընդհանրական Աբբայ միաբանից Վանաց Թորգոմազարի հայկաստերունդ միանձանց Մխիթարեանց՝ բնակելոց ի կալուածս կողմանց եւրոպական աշխարհի՝ ի կայանս ծովապարփակս՝ արձանացեալ առ մայրաքաղաքաւ վենետիկեան պայազատութեանց։ Գեզ պարկեշտակրօն, և զգօնացեալ բամբռիդ բարգաւաճելոյ բազմաստեղեան չառաւիղօք՝ ըստ օրհնութեանց լերանց մշտնջե-նաւորաց՝ սրբասէր կողակցիդ Ասկէրօղլու սէրգիս պալըչին, անուանելոյդ ըստ սեպհա-կան անուան՝ նուրի. ողջոյն, և խնդութիւն, և բարեբաստութիւն և յամենայն ինասուց ազատութիւն. կամակարութեամբք մտաց տենչամք պատահիլ։ Ջսոյն մաղթեմք և վասն ամենայն ընտանեաց, և տոհմի, և զարմի՝ առ ի ձէնջ յամօղակցացդ չառաւիղելոյ։ Հասցէ՛ ձեզ օրհնութիւն ի տիեզերանշոյլ սեռակնաձև քառաթեւէն՝ վերբերողէ զվերբե-րիչն բոլորեցունց։ Ցորդեսցին ի ձեզ սահանաբաց անձրևք արփիացնցուղք, որպէս անդ ուրեմն առ նախնեօք՝ վտակք երկնակայլակք Անվկանդ, և անհարթչելի գթասիրութիւն նախախնամութեան տիեզերացունծ հոգւոյն՝ զձեօք յաւերժ փարեսցի, բարեխօսութեամբ ամենայցելու ձեռնտուութեան արգասաւէտ բեղմնաւորողին համասփիւռ ծաղկան՝ տիեզե-րաստած մօր՝ փառաւորեալ կուսի՝ երանածին ծնողի, միաբանութեան մերոյ պաշտպանի։ Որում բարեացասէր գունդք յերկնէ, և յերկրէ՝ ասացցեն ամէն։...

Այլ յաղագս գալստեան հայր Վրդանէսին այդր, որում յոյժ ցանկացեալդ էք, ձեզ գիտութիւն լիցի, զի աւանիկ զիջեալ յաղաչանս ձեր, եթէ Տեառն կամք իցեն, առաքեմ զնա յայսմ գարնան առ ձեզ, զի տեսջիք և ուրախասջիք, տալ փառս Աստու-ծոյ. և նա ձեօք սփոփեսցի, որպէս բարեպաշտից են օրէնք։ Եւ ասդ՝ կացէք դուք յաղօթս, զի խաղաղութեամբ և խնդութեամբ, և անխոչ յաջողութեամբք հանդերձեսցին ելք նորա աստի, և մուտք նորա այդր։

Գանգի մարդոյ իրս ինչ դնել ի մտի, ի Տեառնէ լինին յաջողուածք նորա։ Զի բազում ինչ դիտեն մարդիկ առնել կամ յառնելոյ զգուշանալ, բայց եթէ ոչ իցէ յաջո-ղութիւն ի Տեառնէ, խափանի դիտաւորութիւն նոցա. զի զամենայն Տէր գործէ. և մեք եմք գործակիցք նորա։ Այսչափ ինչ յաղագս մխիթարութեան ձերոյ ասացեալ՝ չա՛տ լիցի։ Եւ մեք աստանօր զընթացս բանից ի լուութիւն դադարեցուցեալ, առաքեմք բազ-մազեղ օրհնութեամբ ողջոյն Քրիստոսասաւանդ՝ ամենայն որդւոց ձերոց, և դստերաց, և փեսայից, և մանաւանդ հեզահամբոյր առն պայազատի՝ մագըմ Գէորգի՝ մտերիմ բա-

բեկամի միաբանութեան մերոյ։ Ողջոյն տան ձեզ իւրաքանչիւր յանուանէ ամենայն միաբանք մեր։ Ո՛ղջ լերուք ընդ յամայր ամանակս, ի պարծանս միաբանութեան մերոյ։

Գրեցաւ գիրս ի Վէնետիկ ի թուականութեան Տեառն 1750, *ի* 20 *նոյեմբերի*

Ստեփաննոս վարդապետ ՄԽԻԹԱՐԵԱՆ
Աբբայհայր միանձանց հայոց
կարգին սրբոյն Աբբայ Անտոնի

ՃԾԳ.

Կ՚արժէ որ հրատարակենք հոս Հ. Վրթանէսի հետևեալ տեղեկութիւնները, ուր զարձեալ պիտի նշմարենք Հռոմայ մէջ Հայոց ձեռք բերած բարի անունն ու վայելած համակրութիւնը։

Ամենապատիւ և գերյարգոյ տեառն տեառն Ստեփաննոսի
վարդապետի և աբբայ հօր մերոյ

... այսօր յերեկոյ գնացաք յուտել զընթրիս ուխտաւորաց ինն անձինք ևեթ բովանդակ մնծամնծք. և լուային անդ զմեր ոտս, զորոյ մի ըստ միոջէ պատմել չկարեմ այժմ. և ապա արարաւ վասն մեր խրախութիւն այլազգ քան զհասարակացն, ուր ի սպասու կային մնծամնծք, և գլուխ նոցա ամենեցուն երևելի ոմն իշխանազուն եպիսկոպոս, զորոյ սիրոյն և զմարդասիրութենէն ի յընդունիլն զմեզ և ի ծառայել՝ ոչ կարեմ պատմել։ Նոյնպէս և զայլոց մեծամնծացն։ Լուեալ կարտինալ Կարաֆային պաշտպանի ազգին մերոյ եթէ եկեալ են ուխտաւորք հայոց ի յընթրիսն, եկն թօրչիօք և բազում սպասաւորօք, սպասաւորել մերոյ սեղանոյ, և կիսաժամաւ կացեալ անդ, որպէս և այլ իշխանազունք բազումք, սպասաւորէին այնպիսի խոնարհութեամբ, որպէս ոչ ծառայէ արծաթագին ոք ծառայ. և եղև խնդութիւն բազում յոյժ, և ըստ բանի աւետարանին, ամենեցուն որք ի ժողովրդեանն էին աչք ի մեզ հայէին. էր ընդ մեզ և սինիօր լածաբօն, որ առաջնորդէր մեզ յամենայնի. որոյ ազդարարութեամբ ամենեքին միաբան արբաք գինի վասն կենաց կարտինալ կարաֆային, և մօնսինիօր Իրպային, որք ծառայէին մեզ, որք և ուրախ եղեն յոյժ. նոքա ընթերցան զօրհնութիւն սեղանոյ մերոյ և յեզերիլն զգոհութիւնն։ Եւ յեզերիլն յուղարկեցին զմեզ թօրչիօք յեկեղեցին այնր օսբիտալի ուր եդեալ էին զսրբութիւն քառասուն ժամու, և յետ այն, ի տան մեր։ Վաղիւ հանդերձեալ եմք գնալ ի սեղան Պապին։...

Յամի տեառն 1751
յունվ. 3 [*Հռոմ*]

Նուաստ ծառայ
Հ. Վրթանէս Վ. [*Սկեւռեան*]

ՃԾԴ.

Վենետկոյ Հայոց Ս. Խաչ Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը Մխիթար Աբբահօր կենդանութեան ատեն ինչ ինչ պարագաներու մէջ միայն ստիպուած վարեր էին Միաբանութեանն անձինք։ Մելգոնեանի ժամանակն է որ Ուխտս կանոնաւորապէս կը ստանձնէ անոր հոգաբարձութիւնը, որ ցարդ կը շարունակուի։

Հոս պիտի ներկայացնենք նոյն ինքն յիշեալ Գերյ. Նամակագրին հեղինակաւոր տեղեկութիւնները այս սկզբնաւորութեան մասին. ծանօթութիւններ՝ որոնք ստուգիւ նորութիւններ են ի նպաստ անոր պատմութեան։

բեկամի միաբանութեան մերոյ։ Ողջոյն տան ձեզ իւրաքանչիւր յանուանէ ամենայն միաբանք մեր։ Ո՛ղջ լերուք ընդ յամայր ամանակս, ի պարծանս միաբանութեան մերոյ։

Գրեցաւ գիրս ի Վէնետիկ ի թուականութեան Տեառն 1750, *ի* 20 *նոյեմբերի*

Ստեփաննոս վարդապետ ՄԽԻԹԱՐԵԱՆ
Աբբայհայր միանձանց հայոց
կարգին սրբոյն Աբբայ Անտոնի

ՃԾԳ.

Կ՚արժէ որ հրատարակենք հոս Հ. Վրթանէսի հետևեալ տեղեկութիւնները, ուր զարձեալ պիտի նշմարենք Հռոմայ մէջ Հայոց ձեռք բերած բարի անունն ու վայելած համակրութիւնը։

Ամենապատիւ և գերյարգոյ տեառն տեառն Ստեփաննոսի
վարդապետի և աբբայ հօր մերոյ

... այսօր յերեկոյ գնացաք յուտել զընթրիս ուխտաւորաց ինն անձինք ևեթ բովանդակ մնծամնծք. և լուային անդ զմեր ոտս, զորոյ մի ըստ միոջէ պատմել չկարեմ այժմ. և ապա արարաւ վասն մեր խրախութիւն այլազգ քան զհասարակացն, ուր ի սպասու կային մնծամնծք, և գլուխ նոցա ամենեցուն երևելի ոմն իշխանազուն եպիսկոպոս, զորոյ սիրոյն և զմարդասիրութենէն ի յընդունիլն զմեզ և ի ծառայել՝ ոչ կարեմ պատմել։ Նոյնպէս և զայլոց մեծամնծացն։ Լուեալ կարտինալ Կարաֆային պաշտպանի ազգին մերոյ եթէ եկեալ են ուխտաւորք հայոց ի յընթրիսն, եկն թօրչիօք և բազում սպասաւորօք, սպասաւորել մերոյ սեղանոյ, և կիսաժամաւ կացեալ անդ, որպէս և այլ իշխանազունք բազումք, սպասաւորէին այնպիսի խոնարհութեամբ, որպէս ոչ ծառայէ արծաթագին ոք ծառայ. և եղև խնդութիւն բազում յոյժ, և ըստ բանի աւետարանին, ամենեցուն որք ի ժողովրդեանն էին աչք ի մեզ հայէին. էր ընդ մեզ և սինիօր լածաբօն, որ առաջնորդէր մեզ յամենայնի. որոյ ազդարարութեամբ ամենեքին միաբան արբաք գինի վասն կենաց կարտինալ կարաֆային, և մօնսինիօր Իրպային, որք ծառայէին մեզ, որք և ուրախ եղեն յոյժ. նոքա ընթերցան զօրհնութիւն սեղանոյ մերոյ և յեզերիլն զգոհութիւնն։ Եւ յեզերիլն յուղարկեցին զմեզ թօրչիօք յեկեղեցին այնր օսբիտալի ուր եդեալ էին զսրբութիւն քառասուն ժամու, և յետ այն, ի տան մեր։ Վաղիւ հանդերձեալ եմք գնալ ի սեղան Պապին։...

Յամի տեառն 1751
յունվ. 3 [*Հռոմ*]

Նուաստ ծառայ
Հ. Վրթանէս Վ. [*Սկեւռեան*]

ՃԾԴ.

Վենետկոյ Հայոց Ս. Խաչ Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը Մխիթար Աբբահօր կենդանութեան ատեն ինչ ինչ պարագաներու մէջ միայն ստիպուած վարեր էին Միաբանութեանն անձինք։ Մելգոնեանի ժամանակն է որ Ուխտս կանոնաւորապէս կը ստանձնէ անոր հոգաբարձութիւնը, որ ցարդ կը շարունակուի։

Հոս պիտի ներկայացնենք նոյն ինքն յիշեալ Գերյ. Նամակագրին հեղինակաւոր տեղեկութիւնները այս սկզբնաւորութեան մասին. ծանօթութիւններ՝ որոնք ստուգիւ նորութիւններ են ի նպաստ անոր պատմութեան։

վերապատուելի հօր մերում Զաքարիայ վարդապետին
ողջոյն բազում յոյժ

... մուտ արարաք ի հայոց ժամն յաւուր վերափոխման սուրբ աստուածածնին, եւ առաքեցի նոցա քարոզիչ մանաւանդ ի մերոց. և ժողովեալ գրեթէ ամենայն հայոց յեկեղեցին՝ տուաւ նոցա քարոզ յաղագս միաբանութեան՝ յաւուրս երկուս ընդ ժամս ձիգս. այնչափ, մինչև ժողովուրդն լուծաւ, մեղկացաւ, միաբանեցաւ. դարձեալ կարկաւեցաւ բազմապատակ հերձուածն նոցա. և անպատմելի ցնծութեամբ խոյտային. մինչև չժուժեալ յանձինս՝ գրեթէ ամենայն հայք մեծամեծք և փոքունք միաբանեալ եկին ի վանս մեր՝ և արարին միմեանց զհաստարակաց խրախճան՝ ի գրքատան մերում, առ չտանելոյ սեննեկաց զբազմութիւնն. կոչեալ էին ընդ ինքեանս և զերկոսին զեպիսկոպոսունս մեր զմինաս և զսարգիս, ոլք և նոքա պատակառելք էին ի միմեանց և ոխացեալք, և գտան ըստ անօրինելոյ տեառն հաստարակաց քարոզութեանն ներկայք, և տերամբ չհանեցան յոյժ. զի և նոքա հաչտեցան՝ եւ դարձեալ առաքեցի զքարոզիչ մանաւանդ ի ծնունդեան սուրբ աստուածածնին, որ արար նոցա ներքողեան մեծ՝ զսուրբ աստուածածնէն՝ ներկայութեամբ սարգիս վարդապետին և բազմանոք մինաս վարդապետին, զի փափագէր ներկայ գտանիլ և ինքն. բայց՝ ի նախընթաց գիշերին ախտացան երեսք նորա, զի եկն պատահական ուռոյց ինչ և արգելաւ. և ժողովուրդն խոնեցաւ զեկեղեցեաւ. և տեառն գործակցութեամբ մեծապէս չհանալ՝ խոյտային, և փոխեաց զնոսա տէր գրեթէ յայլ մարդ. և ասեն. այժմ իմացաք, թէ ունիք մեք հայքս ի վէնէտիկ զվանք։...

Ցամի Տեառն 1751
Սեպտեմբերի 11
[Վենետիկ]

Նուաստ ծառայ
Ստեփաննոս վրդ. Աբբահայր

ՃԾԵ.

Կը կարդանք հետեւեալ թուղթին մէջ կարեւոր ձեռնարկ մը Երուսաղէմեցւոց քաղաքի հայերուն կողմանէ։

Ցարգոյապատիւ և գերապոյծառ տեառն Յովհաննիսոյ վարդապետի
և Աբբահօր հանդէպ

... ցոյժ ուրախացան և չնորհակալ են մերայինք վասն ընդունելութեանն, զոր արարեալ էք հանճի Աստուածահին...։ վասն արզուհալին պատասխանւոյ ոչ գոյ ինչ տալին բան նոր ի մեծամեծաց...։ խնդրեմ յորժամ գայցէ այսոր առ մեզ հանճի Աստուածահն, առաքեսջիք ընդ նմա զքանի մի պատկեր աչխարհացուցին եզերեցելոյ, և զվանքին պատկերն եթէ եզերեալ է...։ վասն մինաս վարդապետին մեր փլեպանուշին յայտ լիցի, զի նա վասն աղաչանաց քաղաքին եղիսաբեթապօլսեցւոց կայ աստ յաղերս մաղթանաց, և հայցէ ի թագաւորութենէս տալ ինքեանց երկիր արծաթոյ առ քաղաքաւն իւրեանց, այսինքն անդաստանս և գեօղս, որպէս ունին արմենոպօլսեցիքն. և յոժար է վարդապետն տալ ի գին իբրև չիսուն հազար զօլաթայ ի քաղաքին կողմանէ, բայց դժուարին է հաճել զմիտս մեծամեծաց քաղաքիս։ գիանզի այնմ հակառակք կան սակաւք, որք կամին ինքեանք առնուլ զմեծ և զլաւ մասն։ վասն այսորիկ վարդապետն հանապազ երթայ ի դրունս մեծամեծաց, և յայն սակս եղ զիայտ ի տան իւրում վասն ձմերան և ինայ յայս ձմեռն աստ, թէպետ և երբեմն յուսահատեալ կամէր դառնալ յետս։...

Յամի տեառն 1751 նոյեմ. 27
ի Վիեննայ

Անպիտան ծառայ
Հայր Իգնատիոս վարդապետ Խաչատուրեան
ի կարգէ սրբոյն Անտոնի Աբբայի

ՃԾԶ.

Վիեննական Հարց «ՅՈՒՇԱՐԶԱՆ»ի այն էջը (3), ուր Մխիթարեան տիտղոսին շուրջ յիրիւրուածոյ պատմութեան հիմնական սրբագրութիւնն ըրինք, կու տայ մեզ դեռ ուրիշ ամենակարեւոր հարց մը. հիմայ կարգն է՝ որ այդ ալ գտնէ իւր արժանաւոր լուսաբանութիւնը, քանի որ մեր վաւերաթուղթերու շարքը զայս կը բերէ։

Նախ պէտք է գիտնալ, թէ հետեւեալ թուղթին ստորագրողը Նիկողայոս Լեռզար՝ Հաւատոյ Տարածման Ս. Ժողովի Քարտուղարն է, որ կարեւոր հարցումներ կ'ընէ Հայ Մխայեան գրքերու մասին. գոյութիւն ունենալով այս շրջանին՝ Հայ ծէսը լատինականէն բոլորովին զտելու տեսակէտ մը։

Սոյն նամակին մէջ՝ իր գլխաւոր նիւթէն զատ՝ կայ նաեւ խիստ նշանակելի կէտ մը յանձին Գերց. Մելգոնեան Աբրահօր, առ որ այսպէս կ'ըսէ Մոնս. Լեռզար. «Alle quali Ella degnamente presiede» («որոց [Ս. Ղազարու Հարց] ինքնդ արժանապէս նախաբազմեալ է»)։ Մ'ուշ դնել, որ թուղթս գրուած է 1751 Դեկտ. 18-ին։

Բայց տեսնենք ինչ կը գրեն Վիեննական Հարը «Ակնարկ մը Վիեննական Մխիթարեան Միաբանութեան Հարիւրամեայ գործունէութեան վրայ» վերնագրին տակ. «Մխիթարայ մահուընէ տարի մ'ետքը ընդհանուր ժողովով (6 Ապրիլ 1750) կ'ընտրուի Միաբանութեան ընդհ. Աբբայ՝ Հ. Յակոբոս Վ. Մելքոնեան։

«Մելքոնեան իր ընտրութենէն քիչ ետքը ձեռնամուխ կ'ըլլայ երանաշնորհ «Հիմնադրին սահմանած կարգերը փոփոխել. սակայն իւր այս նորածնութիւններով «յառաջ կը բերէ երիցագոյն միանձանց մէջ դժգոհութիւն։ Եօթը տարի կը հետապնդէ ի զուր իւր կազմած Սահմանադրութիւնը Հռոմ հաստատել տալ, մինչև «որ օր աւուր աճող դժգոհութիւնը կը ստիպէ միաբանները՝ ընդհանուր ժողով մը «գումարել։ 1772 Մայիս 25-ին կը բացուի ժողովը. ուր կը հրաւիրուի նաև Աբբահայրը (տակաւին չհաստատուած Հռովմէ[1])...»։ Հանգ կ'առնենք հոս։

Ջանց ընելով մի առ մի հերքումը անհիմն մէջբերումիս՝ որ կը մաքառի յայտնի ճշմարտութեան դէմ՝ կը բաւականանանք ըսել, թէ կարելի չէ չտեսնել մանաւանդ թագուն դիտաւորութիւն մը նկատմամբ փակագծեալին՝ զոր մենք ընդգծեցինք։

Ջենք վարանիր ըսելու, թէ յիրաւի Վիեննական Հարք ծայրագոյն յանդգնութիւն մ'ըրած են, յայտարարելով զՄելգոնեան Աբբահայր իր ընտրութեան թուականէն (1750 Ապրիլ 6) մինչև 1772 Մայիս 25 իբրև «տակաւին չհաստատուած Հռովմէ». այսինքն թէ Մելգոնեանի աբբայութեան շրջանի առաջին 22 տարիներու վաւերական և օրինաւոր իշխանութիւնը յայտնապէս իրեն զլանալէ վերջ՝ տարակոյսի տակ կը թողուն 1772–ի յաջորդող տարիներէն դեռ մաս մը ևս, այդ ամբողջ ժամանակամիջոցին մէջ դեռ Ս. Աթոռէն չհաստատուած նկատելով։

Դժուար չէ իմանալ անշուշտ այդ առեղծուածային շրջանին մէջ լոկ իրենց մէկ արդարացումը հետապնդելու զուր ջանքը։

Ճշմարտութիւնը երևան հանելու և միանգամայն ներկայ Մխիթարեան սերունդէս որևիցէ յարգանք մը մատուցանելու համար հանդէպ Մխիթարայ Լուսահոգի Յաջորդին՝ կը թուենք հոս կարգ մը հեղինակաւոր վկայութիւններ, որոնք ջախջախիչ փաստեր են Վիեննական Մեծ. Հարց տուած սին վճռոյն դէմ։

1. — *Վատիկանու Գիւանապետը մեծանուն* Giuseppe Assemani, *Հռովմէն 1751 փետր. 26 թուակիր թուղթ մը կը ղրկէ առ Մելգոնեան, կոչելով զանիկայ*

---

1. Անդ, էջ 3-4.

«Abbate Generale» — Ընդհանուր Աբբահայր։

2. — Մոնս. Լերգար Բարեուղար Վաւելոցի ժողովոյն, 1751 Մարտ 6–ին թուղթ կը ղրկէ Ս. ժողովոյն պաշտօնական կնիքով, Միաբանական գործերու խնդրոյ մը համար, և կը կոչէ զՄելգոնեան Abbate Generale.

3. — Վաւելոցի Նախագահ Մխիթարեան Բարեաֆեա Միաբանութեան և Ազգիս հանդէպ սիրոյ և բարեացակամութեան թուղթ կը գրէ 1751–ին առ Մելգոնեան՝ Abb. de monaci Armeni... տիտղոսով։

4. — Ուրիշ Նախագահ մը Վաւելոցին՝ Մխիթարեր Վալէնդի՝ իր և ժողովի Բարեուղարին ստորագրութիւններով 1751 Նոյեմբեր 17–ին հարցում մը կ'ուղղէ Աստուածաշունչի տպագրութեան մը մասին առ Մելգոնեան, անուանելով զայն Ab. de monaci armeni...

5. — Վենետկոյ Հասարակապետութեան քով Սրբազան Պապին Դեսպանը Բաղկեղոնի տիտղոսաւոր Արքեպս. Marinus Innicus, իր և բարեուղարին ստորագրութիւններով 1751 Դեկտ. 7–ին հրամանագիր մը կ'ուղղէ առ Մելգոնեան, կոչելով զայն Abbas et Superior actualis Monachorum Armenorum Congregationis։

6. — Պոլսէն Լատինաց Առաքելական Դեր Ապոստակալը Biagio Paolo (ապա Առաք. Ապոկլ.) 1750 Յունիս 15–ին ուրախակցութեան թուղթ կը ղրկէ առ Մելգոնեան։

7. — Ուրախակցութեան թուղթ կը ղրկէ նաև Պոլսոյ Ազգային Մխսխոնաբոց գլխաւորը Եղիա վարդապետ Գաղատացի, 1750 Յուլիս 1–ին, Մելգոնեանի ընտրութեան առթիւ։

8. — Ուրախակցութեան բառեր կը խառնէ Մոնս. Լերգար՝ առ նորընտիր Մելգոնեան Աբբայն՝ 1750 Մայիս 9–ին գրած թուղթին՝ ինչպէս և ուրիշ մէկ երկու թղթերու մէջ։

9. — Կնիք այս ամէնուն՝ իսկականը ծանուցանենք, թէ Մելգոնեան իր Աբբայութեան վաւերական հաստատութիւնը կ'ընդունի իր ընտրութեան օրերէն, այն է՝ 1750–ին, եւ ոչ թէ 1772–ին՝ ըստ քմածին և անհիմն յայտարարութեան վիեննայի Մխիթարեանց «Յուշարձան»ի։

Ընտրութեան և հաստատութեան դէպքը տեղի ունեցած է հետևեալ օրինաւոր կարգով։

Մխիթարայ սգաւոր որդիք կը հաղորդեն եր. Հիմնադրիս մահը առ Ս. Աթոռ, և կը խնդրեն անկէ հրաման՝ նոր Աբբայի ընտրութիւն կատարելու։ Ան այդ ի պատասխան՝ Հաւատոյ Տարածման Գահերէց Մխրանաւոր Վալէնդի՝ իր և ժողովոյն Բարեուղար Լերգարի ստորագրութեամբ՝ 1750 Փետր. 18 թուակիր պաշտօնագրով մը հրահանգ կու տայ Վենետկոյ Հասարակապետութեան քով եղող Քահանայապետական Դեսպանին, Ս. Դազարու Հարց հաղորդելու Աբբայի ընտրութեան հրամանը։

Հուսկ, ընտրութիւնը տեղի ունենալէ վերջ, արդիւնքը կը հաղորդուի ի Հռոմ. և ահա միևնոյն Ս. ժողովը 1750 ԱՊՐԻԼ 25 թուակիր ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԹՂԹՈՎ կը վաւերացնէ Մելգոնեանի աբբայութիւնը[1]։

Դառնալով Մոնս. Լերգարի հետևեալ նամակին՝ կը հաղորդենք որ իտալական բնագրէն թարգմանած է Հ. Անտոն Պաղտասարեան։

---

1. Բնագիրը պահուած է հայերէն թարգմանութեամբ միասին Մայրավանքիս Դիւանին մէջ։

Գերապատիւ Հայր, Տէր սիրելի

Շնորհաւորելով ինձ զսուրբ ծնունդն քրիստոսի, Հայրութիւնդ Գերապատիւ կամեցաւ մատուցանել ինձ զնոր նշանացոյց սիրոյ և մարդավարութեան։ վասն այնորիկ գյատկագոյն շնորհակալութիւնս ինքեանդ մատուցանեմ, ոչ իմիք առաւել բաղձալով, քան առթութեանց ծառայելոյ ի նպաստ անձինդ։

Եւ զոր օրինակ տենչամ փափագանօք գործակից լինիլ ոչչափ ինձ կարելի է հոգևոր օգտին արամեան ազգին, առ որ ունիմ զմի ինչ յատուկ յօժարամտութիւն յաղագս բնական դիւրուսումնութեան նորուն, այսպէս ցանկամ լինիլ ի Գերապատիւ Հայրութենէդ տեղեկացուցեալ, եթէ այդոքիկ Միանձունքդ, որոց ինքնդ արժանապէս նախաբազմեալ է՝ վարին այնոքիւք իսկ գրեամբք եկեղեցականօք, որովք վարին Աղթարհակեաց քահանայքն և Եպիսկոպոսունքն նոյնոյ Ազգին։ Դարձեալ՝ մի՞թէ ի Մենաստանիդ գտանին ձեռագիր օրինակք ժամագրգի, Մաշտոցի, Ջեռնադրութեան գրգի, և այլոց Եկեղեցական գրեանց Հայոց։ Զի մինչ ոչ է ի լոյս ածեալ տպագրութեամբ Արբոյ ժողովոյս, եթէ ոչ կանոնն պատարագին Հայոց, ես ի մէջ առնուի զնպաստաւոր ինչ պարապ աղաչելոյ զԱրբութիւնն Տեառն մերոյ Պապին, ի հաճիլ յանձնել հմուտ և իմացուն անձանց ի Հռօմ զգննութիւն վերոյասացեալ գրեանցն, և դնել զնոսին ի կայութեան լինելոյ տպագրեալք։ Այսոցիկ տեղեկութեանց սպասեալ մնամ առ ի ծանուցեալ ընդունակութենէ և նախանձաւորութենէդ Հայրութեանդ Գերապատիւ։ Եւ հանդերձ բոլորով ճշմարտագոյն պատուազրութեամբ գիս հաստատեմ Հայրութեանդ Գերապատիւ

ի Հռօմ ժը. Դեկտ. ո. չ. ծա. [1751] թվն. քրիստոսի

Ջերմեռանդագունեղ և չնորհապարտ ծառայ
Նիկողայոս Լերգարի

ՃԾԷ.

Մելգոնեան Աբրահօր հետևեալ նամակէն կ՝անդրադարձնենք կարևոր նորութիւններ և մանրամասնութիւններ՝ վանքիս եկեղեցւոյն ու մանաւանդ վենետկոյ Հայոց Ս. Խաչի մատրան պատմութեան համար։

վերապատուելի հօր մերում Գէորգ վարդապետին ողջոյն
և սէր բազում յոյժ

... Զդասն բերաք յառաջ, և զաւագ խորանն տարաք յետս իբր որմայեց. չինեցաք բեմ բարձր հինգաստիճանեան, որձաքարեայ յատակաւ. չինեցաք ի նմա զգերեզման մեծի աբբայ հօր մերոյ ննջեցելոյ, փառաւոր ձևով, յազնիւ և ի գեղեցիկ քարանց, քանդակեալ ի վերայ կափարչին երկնագունի ամպասարասի՝ մեծավարկի, զոտանաւորս վերտառեալս քաջաներբողոս՝ կարդացեալս ի հելլեն բարբառ՝ էփիկռամմայ, որոց սկզբնատառքն վերուստ ի վայր հեգեն զայս բան. ΦΩΝΑΡ ΦΩΣΦΟΡΑΦΟΥ ΑΠΟΣΤΟΛΑΡΙΩΝ ΛΟΓΟΙΟΣ...։ Հայք վէնէտիկու միաբանեալ, բռնութեամբ փոօկուտաթօռաց եառն զհովուութիւն եկեղեցւոյն իւրեանց մեզ. մտաք ի նա ի վերափոխման կուսին, կարգեցի զոմանս ի մերոց քարոզիչս նոցա. եառն քարոզս և զարմացուցին զնա տերամբ... առաջին քարոզքն էին յաղագս սիրոյ և միաբանութեան։ վասն որոյ և ինքեանք աստուածային ազդեցութեամբ ի բաց թողեալ զամենայն խէթ և զդառնութիւն միաբանեցան եկին ի վանս մեր գրեթէ ամենեքեան միախուռն բազմութեամբ՝ եպիսկոպոսօքն հանդերձ, և տեսեալ զծայնաւոր պատարագ մատուցեալ փառաւորապէս ըստ դիտաւորութեան նոցա, արարին ժողովոյն իւրեանց՝ հնգեցունց ի մէնջ ընդ նոսա բազմելով խրախութիւն մեծ ի մերում

գրքատան՝ առ չբաւելոյ այլում տեղւոյ. և կան այժմ խաղաղ և միաբան։... Հ. Ղազարոսն գնաց ի կեղէ. և՛ առաւել յանկեցան ժողովուրդքն, և եաւն զեկեղեցին մեզ։ Ցայսմ ամի եղև ի կոստանդնուպոլիս ժանտամահ անհնարին, մինչև կոտորիլ չորիր մասին մեծի քաղաքին...։ Հ. Ջաքարիայն վասն ժանտախտին բռնութեան՝ փախուցեալ էր ընդ մերոյ ժողովրդեան ի ծայրս կրճից սեաւ Ծովուն՝ ի մայիս ամսոյ մինչև ցնոյեմբեր...։ Ցովհաննէս վարդապետն է գափէչան հայոց եկեղեցւոյն [Վենետիկ], այլ զի կայ յանկողնի հիւանդոտ, վասն այնորիկ զգործ նորա կատարէ Հ. Պօղոսն։...

Ցամի Տեառն 1752
Ցունվարի 15
[Վենետիկ]

Նուաստ ծառայ
Ստեփաննոս վարդապետ Աբրահայր

ՃԾԸ.

Մեծ շահեկանութիւն մ՝ունի Հ. Իգնատիոս Խաչատուրեանի նամակը։

Վիեննայի Հայութիւնը կը յաջոդի իր ջանիւք հովիւ ունենալ Մխիթարեան վարդապետ մը Ս. Ղազարու Միաբանութենէն։ Այս դէպքը տեղի կ՝ունենայ 1752 թուականին, ներկայ Վիեննական Հարց Միաբանութեան Ս. Ղազարէ բաժանումէն 21 տարի առաջ։

Սոյն թղթով Հ. Իգնատիոս վարդապետ ամփոփ տեղեկութիւն մը կու տայ իր առաքելութեան առաջին քայլերուն մասին առ Մելգոնեան Աբրահայր. շատ աւելի հետաքրքրական կը դառնայ այդ գործունէութեան պատմութիւնը՝ ուրիշ մէկ անտիպ նամակին հետևեալ ծանօթութիւններով.

« Եւ ես աստ օգնութեամբ աղօթից ձերոց և շնորհօք տեառն ի վայելչագեղ « մատռան, որ է ի կողմն մի հրապարակի սրբոյն ստեփաննոսի, յամենայն կիրա- « կամուտ երեկոյի, և ի կիւրակէի առաւօտս, և յաւուրս տօնից փառաւորապէս « կատարեմք զպաշտօնն աստուածային. և յետ առաւօտեան ժամուն զմի ժամ քա- « րոզ տամ, և ապա ասեմք զքիւ պատարագ։ Եւ գան յեկեղեցին մեր ամենայն « հայք, և բազում գերմանացիք. և կառք կայսերն, յորժամ ի տուրըն ստեփաննոս « գայ կայսրն, առաջի մատռան մերոյ զկայ առնուն։ Եւ զմայլեալ են յոյժ բազումք « յերգս և յարարողութիւնս մեր, և գովեն և առնեն մեծարանս մեզ առաւզապէս, « և ոչ վասն քաղաքավարութեան» (Հ. Իգնատիոս վրդ. Խաչատուրեան առ Մելգոնեան Աբրահայր, յամին 1752 Ապրիլի 15 ի Վիեննա)։

Դիտելի է, որ Հ. Իգնատիոս Վիեննայի մէջ ձեռք կը զարնէ առաքելութեան « ի խնդրոյ ժողովրդեան ստիպեալ », և այդ հայութիւնը ուղղակի իր կողմանէ մինչև անգամ ջանադիր կ՝ըլլայ որ Մխիթարայ Ռեխտը հոն ունենայ ուրիշ մենաստան մը ևս։ Ահա այս մասին ինչպէս կը գրէ Մելգոնեան առ Հ. Գէորգ.

« Հայք վենացիք և մանաւանդ անտօն աղայն և խօճասար աղայն որդեգիրք « միաբանութեան մերոյ իբրև տեսին զսա [զՀայր Իգնատիոս վարդապետ], « գրեթէ բռնի հրամանաւ սուրբ ժողովոյն սեպհականեցին զնա իւրեանց միսսոնար, « մատուցեալ առ թագուհին մեծ՝ զմուրհակ աղաչանաց՝ տալ նոցա զտեղի ինչ մեծ « և բաւեխառն, շինել զնա մեզ մենաստան, և զեռ չեղև պատասխանի. թէպէտ « պնդեն ոմանք թէ խնդիրն յաջող է..» (Գր. յամին 1752 Ցունուար 15)։

Հետաքրքրական է մեզ գիտնալ, թէ արդեօք ինքն իսկ Մխիթար, Ս. Ղազարէն զատ, այլուր ևս մենաստան կանգնելու որ և է ծրագիր մ՝ունեցած կամ հաղորդած է։

Առ այս, անտարակոյս, պէտք է ապաւինիլ պատմական որոշ փաստերու, առանց որոց անգոր կը մնայ ամէն կարծիք։

վիեննական Ուխտին «ՅՈՒՇԱՐԱՆ»ը կ'ըսէ.

« 1773 Մայիս 19ին կը հաւաքուին ի մի[1], երբ կը յիշեն երիցագոյններուն ոմանք թէ Մխիթարայ ծրագրին մէջ կար Տրիեստ վանատուն մը բանալ, և կ'որոշեն միաբան այս միտքը իրագործել » (էջ 4)։

Թէ Մխիթար Թրիեստ վանատուն բանալու ծրագիրը մ'ունեցած ըլլայ, ինչպէս կը կարծէ ՅՈՒՇԱՐԱՆ, նախ այդպիսի աւանդութիւն մը գոյութիւն պիտի ունենար բուն իսկ Հիմնադրիս Ձեռակերտին մէջ. մինչ դեռ ո՛չ Մխիթարայ անթիւ նամակներուն, ոչ նոյն ժամանակի Մխիթարեան թղթակցութեան և ոչ Մայրավանքիս ժամանակագրութեան մէջ բառ մը կայ։

Թրիեստ վանատուն բանալու, մենաստան հիմնելու մտադրութիւն մը գոյութիւն ունեցած է առաջին անգամ Մելգոնեանի արբայութեան երկրորդ տարին, և հիմնադիր ուզած է ըլլալ կ. Պոլսեցի Հ. Գաբրիէլ Փոքը կոչեցեալ՝ Միաբանութենէս վարդապետ մը, որ եղած է իր ընթացքով անկարգ, ինքնահաւան և անհնազանդ անձ մը։ Մելգոնեան արբահայր այսպէս կը գրէ առ Հ. Վրդանէս Ասկերեան.

« Մինչև ցգարուն աստ է [Հ. Գաբրիէլ փոքը], և պատճառ սպասելոյն է « զնմանութիւն Միխիթարայ արբային բերել. քանզի թուղթ առ թագուհուն առաքեաց՝ « որպէս ականատեսքն պատմեցին, տալ ինքեան զտեղի ի Թռէստ, շինել անդ շի- « նուածս, կառուցանել զտպարանս, զկազմարանս, զդպրատունս. և առ յապայ զմե- « նաստանս գերագոյն քան զմակամտածութիւն առաքելոյն յօդափոխութիւն. և լի- « նել օգտակար ազգին յոյժ յոյժ. և ունի առաջին հիմնադիր մեծի իրագործութեան « իւրոյ զտէր միքայէլն, զտէր դաւիթն, զտէր Ձիվան մարիայն, և զամենայն որ « միանգամ ընդ ակամբք մեզ հայեցին, ընդ որս է և կարապետ վարդապետն » (Գր. յամին 1752 Նոյեմբ. 25)։ Սակայն այդ շարժուածները անյաջող վերջաւորութիւն մը կ'ունենան հակառակ այն տարածուած լուրերուն՝ թէ ձեռք բերուեր են ակնկալուածները. մինչդեռ « այն ամենայն սուտ և հնարք խաբէութեան իթալիան քահանայի, « որ պատրեալ զտէր միքայէլն առեալ է զայնչափ դրամ ի ձեռաց նորա ». (գրէ Մելգոնեան առ Հ. Միքայէլ վրդ. յամին 1753, Յնվր. կամ փետր)։

Հ. Գաբրիէլի այս դիտաւորութիւնը անշուշտ չէր անծանօթ նախկին Թրիեստեան յետոյ վիեննական (երբեմնի վենետկեան) Հայրերուն։ Ուստի պատմաբանօրէն խօսելով՝ Մխիթար չէ այդ ծրագրին յղացողը, այլ կրօնաւորական հոգւոյն անսաստող անձ մը, և խիստ տարօրինակ է՝ օգտագործել ուզել այդպիսի անձի մը ձգտումները, արդարացնելու համար ծագում մը, հակառակ ճշմարտութեան՝ ընծայելով զայն Մխիթարայ։

Ցարգոյապատիւ և գերապայծառ տէառն Ստեփաննոսի վարդապետի և աբբայիօր ողջունիւ ի քրիստոս

Ցաւուրս յայսոսիկ ի խնդրոյ ժողովրդեան ստիպեալ վասն լսելոյ զբանս աստուածոյ, և ի գութ չարժեալ ի վերայ նոցա իբրև ի վերայ ոչխարաց, որոց ոչ իցէ հովիւ, չոգայ առ արհիեպիսկոպոսն մայրաքաղաքիս, և խօսեցայ ընդ նմա վասն պակասութեան տեղւոյ ի լսել զխոստովանութիւն, և հաղորդել, և քարոզել զբանս աստուածոյ. ասաց, բարիոք է խնդիրդ։ Նոյնպէս խօսեցայ և ընդ աւագերիցու եկեղեցւոյ սրբոյն ստեփաննոսի վասն բանիս այսորիկ։ Իսկ նոցա խորհուրդ արարեալ եւսն ինձ զմատուռ մի ի կողմն ինչ հրապարակի սրբոյն ստեփաննոսի, որ է ըստ մեծութեան եկեղեցւոյն հայոց,

1. Այսինքն Ս. Ղազարէն անջատուող Հարք. — Հ. Ղ. Տ.։

որ է ի վէնետիկ. զեղեցիկ և վայելուչ և պայծառ։ Ունի գիսրան մի փառաւոր, և զվերնատուն հանդերձ երգեհոնիւ, և զարդարեալ պատկերօք։ Հոգան զամենայն պէտս ծառայութեան նորա սպասաւորք եկեղեցւոյն սրբոյն ստեփաննոսի։ Եւ սկսայ զառաջին պաշտօն և զպատարագ մատուցանել ի նմա յաւագ հինգշաբաթի աւուր. իսկ զերկրորդն այսօր մատուցի Թիւ, զի չունիմք այժմ զզեստս ըստ հայոց վասն ձայնաւոր պատարագի։ Եւ ի վաղիւն տեառն օգնականութեամբ ասեմք զժամ զառաւօտեան, յետոյ զքառասնորդ, և ապա զթիւ պատարագս։ Ժամասաց եմք չորս քահանայք, ես, կարապետ եպիսկոպոսն, Յովհաննէս վարդապետն և տէր մանուէլն։ Եւ երկու դպիրք են տիրացու Պօղոսն և եղբայր Թովմասն։ Իսկ ժողովուրդք են Թուով իբրև քառասուն։ Այժմ յոյժ ուրախ է ժողովուրդն և միխիթարեալ։ Տէր հաստատուն պահեսցէ և միաբան...։ Յանձն առնելով գիտ և զժողովուրդս զայս ի սուրբ աղօթս ձեր և ամենայն միաբանից... ողջոյն տամ մինասայ արհիեպիսկոպոսին...։

Այս ԻԳ գիր է, զոր գրեմ ի վանս

Նուաստ ծառայ
Հայր Յովնաթիոս վարդապետ Խաչատուրեան
ի կարգէ սուրբ հօրն Անտոնի սրբոյն

Ցամի տեառն 1752
Ապրիլի 1
[Վիեննա]

ՃԾԹ.

Ակնեցի եաղուպ աղա, որ կը յիշատակուի մեր հետևեալ վաւերաթուղթին մէջ, ազգային պատմութեան մէջ ուշագրաւ տեղ մը կը գրաւէ՝ Կ. Պոլսոյ միջազգային մարմիններու առջև վայելած դիրքով և Հայ Պատրիարգական աթոռին շուրջ իր ստանձնած դերով։ Ժամանակակից ազգայնոց մէջ ստուգիւ ճանչցուած է ան իբրև ազդեցիկ դէմք մը, «որոյ հաւասար չէր ոք լեալ ի հայոց մինչև ցայնժամ», կ'ըսէ Զամչեան[1]։

Ցակոբ Նալեանի Կ. Պոլսոյ պատրիարգական գահը վերստին բարձրանալուն պատճառը եաղուպ եղած է, որովհետև երբ սա Երուսաղէմ ուխտի կ'երթայ՝ հոն Նալեան—նոյն ատեն Պատրիարք Երուսաղեմի—«սիրելի եղոյց նմա զինքն, և բազում «ինչ խօսեցեալ ընդ նմա՝ աղաչեաց զնա դարձուցանել զինքն ի պատրիարքութիւն «կոստանդնուպօլսոյ»։

Եաղուպ կը կատարէ անոր թախանձանքը, ինչպէս կը կարդանք հետևեալ նամակին մէջն ալ, հրաժարեցնելով միանգամայն Գէորգ վարդապետը նոյն աթոռէն ու զայն կարգելով Պրուսայի առաջնորդ։ Իսկ Երուսաղեմի պատրիարքը կը դնէ զթոռոմա վարդապետ։

Գերաւսծար Գերյարգելի Ազբայհօր մերոյ և Թաբուևապետի
Ստեփաննոս Վրդպ.ի խնդալ ի տէր

... Մահտեսի եաղուբ աղան եկն յերուսաղէմայ, և եթէ ընդ իւր զնալոզլու յակոբ վարդապետն. և նստաւ փառաւորապէս նալոզլուն պատրիարք յստամպօլ յաւուր պէնտէկոստէին. և իբր զմեսիայ ընկալաւ զնա ժողովուրդն. և ասի ի հակառակաց անտի, թէ զմիաբանութիւն առնելոց է ընդ հոռոմայ եկեղեցւոյն, որով և կաթոլիկութեան վէճն բարցնի. և մինչև ցայսօր լաւ է ընդ ուղղափառաց... Ցաւուրս յայսոսիկ եղեն մեծամեծ հրդեհք յստամպօլ. Առաջինն եղև ի յունիսի 18 ի կէտիկ փաչան, և տևեաց ժամս

1. Պատմ. Հայոց. Հար. Գ. էջ 864.

17. սկսաւ յեռուստ սէտէֆճոց. և այրեաց զամենայն զկէտիկ փաշայն զխաւի լիմանն, և զամենայն դումխափուն, նաև արտաքոյ պարսպին եղեալ տունս զամենայն դումխափուին. և ընդ ամէն այրեցան տունք աւելի քան զչորս հազար. և աստուածածնի ժամն հայոց ազատեցաւ ձեռամբ եաղուպ աղային՝ որ յայնմ աւուր աւելի քան հարիւր քէսէ խարճաց գնելով և փլուզանելով զտունսն մերձակայս ժամուն, զոր թէ ոչ առնիցէր՝ բովանդակ վլանկայն ևս այրիւր... եղև քրիստոնէից յունաց և մանաւանդ հայոց մեծ աղէտ և աննորոգելի ցաւ։ երկրորդն եղև ի յունիսի 25 և սկսաւ մօտ սրմաքէչխանայինն, և այրեաց ևս անդ ի նեղս զօտաս ինչ, և եկն մինչև ի սուլթան պայազիտի մէյտանն. և այրեցան անհամար խանութք և տունք աւելի քան զհազար։ երրորդն եղև ի պախճայ խափուն ի յունիսի 26, և այրեաց միայն զմի մեծ սարայ, և զոմանս տունս։ Այրեցաւ ևս ի թէրսխանան պէյիկ նաև մի։ եւ յամէն օր գտանի ի տեղիս տեղիս մի կամ երկու կամ երեք խունտախ արկեալ առ ի հրդեհս հանել։ եւ առնեն զայս... տաճիկք վասն զթագաւորն փոխելոյ. և երկիւղ մեծ կայ յառնելոյ բռնաւորացն։...

Ցամի տեառն 1752
Յուլիսի 1
[կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հայր Զաքարիայ վարդապետ

ՃԿ.

կ. Պոլսոյ անվերջ հրդեհներու շարքին մէջ եզական երևոյթ մ՝ունի հետագայ կրակը՝ զոր կը նկարագրէ Հ. Միքայէլ վ.։ Սոյն դէպքին շուրջ Հ. Յովհաննէս տրապիզոնցին պատմական կապերու հետ հետևեալ կարևոր մանրամասնութիւններն ևս կը յաւելու՝ այսպէս. «զաւուրս չորեքտասան ոչ է շիջեալ. այրեալ են տունք «աւելի քան զվեցհատասան հազար. վեց եկեղեցի յունաց, և հայոց սուրբ աստուա«ծածնի ժամն. և հայք խոստացեալ են զհնգետասան հազար մաքչիլս առ ի վերստին «շինել։ թագաւորն և վէզիրն ոչ են ներկայացեալ առ շիջուցումն հրդեհին. վասն «որոյ խաժամուժն ասացեալ է. Թէ եթէ թագաւոր ես, ընդէ՞ր ըստ սովորութեան «մերում ո՛չ ներկայանաս հրդեհին. իսկ նա տուեալ է պատասխանի. եթէ այրեցաւ, «ես յիմոց գանձուց տաց շինել վերստին, ձեզ զի՞ փոյթ է. այլ ես գիտեմ զդիտաւո«րութիւն ձեր. բայց գիտասջիք, թէ կեավուրին տամ զթագաւորութիւն իմ, և ձեզ «ոչ տաց »։ (Գրէ առ Մելգոնեան Աբբահայր, յամին 1752 Օգոստ. 4 [կ. Պոլիս])։

կը յիշեցնենք որ ժամանակիս Օսմանեան կայսրութեան գլուխն էր Մահմուտ Ա։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերոյ տեառն տեառն Յովփաննոսի վարդապետի

... Գիտելի է ևս զաղետէ քաղաքիս. յամենայնում աւուր ի յահ և ի դող եմք զելմանէ ապստամբից ընդդէմ մեծ գազանին առ ի բառնալ. ստէպ հրաձգութիւնք և կիզմունք։ ի մէջ ժե աւուրց աւելի քան զօրն, հրակիզութիւնք եղեն. ի տեղիս տեղիս բազմիցս ծրարք կիզման գտանեցան, դիտեն զբոլոր քաղաքն սակաւ առ սակաւ հրոյ ճարակել. օր լինի որ երկու և երեք տեղ հրակիզութեան ձայնք ելանեն։ կէտիւկ փաշայի և դումղափուի թաղերն, մինչև ի ծովեզերն յայֆիւն դարձան. բազում աղէտ և ողորմելութիւնք եղեն, թէ տաճկաց, թէ հայոց և թէ յունաց. բազում անձինք հրակէզ եղեն. քսուրից կորուստ, և կողոպտումունք ընչից. մաներոց տղոց կորուստ. են և որք և հրակիզեալք...։ երկու եկեղեցի յունաց ի դում դափուն. և աստուածածնայ հայոց եկեղեցին, ի ձեռն բազում ղրամոց մազապուրծ զերծաւ ասեն. 3000 տուն այրեցեալ։ Այս մեծն էր. բայց փոքր ստէպ լինին. մեծամեծաց պալատք այրին. ահաւասիկ վէզիրի

տղին զտուն ևս այրեցին։ Ջվէզիրն յաւուրս յայսոսիկ իշուցին, յաքսորս ուղարկեցին. յետ սակաւ աւուրց զէնկիչէրոց աղան ևս յաքսորս առաքեցին...։

Գերյարգութեան ձերում

Ցամի տեառն 1752.ին
յուլիսի 10 չուէ
[կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Միքայէլ Վ.

ՃԿԱ.

Պատմական հարուստ տեղեկութիւններ կու տայ մեզ Հ. Միքայէլի հետևեալ թուղթը։

Նախ՝ Օսմանեան պատմութեան մէջ էջաղուպ աղայի ունեցած մեծ դերը և ապա եղերական վախճանը — հանդերձ լայն ծանօթութիւններով անոր կենաց մասին — կու գան կարևոր պակաս մը լրացնել մեր ազգային պատմութեան մէջ, զայս ճոխացընելով նորագոյն մանրամասնութիւններով։ Նշանաւոր դեր մ՝ունեցած է նաև էջաղուպի աբենակից ու մեղսակից հարազատն Ցակոբ։

Վաւերագրիս մէջ կը յիշատակուին էջաղուպի հետ իրրև գլխատուողներ՝ «Ղզլար աղա և ծառայ սորա սուլէյման աղա»։ Առաջինն է Պէշիր ներքինապետը, և երկրորդը՝ Սուլէյման անուն վրացի գերի մը, որ անօրէն գործիք մ՝եղած էր ներքինապետի ձեռքին մէջ։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ վերոյ Ցնաւան տեառն Ստեփաննոսի վարդապետի

... Մինչ այն հրակիզութիւնք ստէպ եղեն ի յապստամբից և չկնճմունք գոյր թէ զթագաւորն վերցնել կամին, կարդացնօղքն ևս յայս միտ էին, թագաւորն թէպտիր զնաց առ ամենայն կարդացօղս գլխաւորս, և զմիտ նոցա իմացաւ, և զդատախազութիւնն նոցա որ առաւել էր առ ղզլար աղան, և առ ծառայ նորին սուլէյման աղան և առ արբանեակ սոցին, ի հայոց ազգէ եաղուպ աղան։ Ասացեալ են. Եթէ զսոսա վերցնես, դու կարես մնալ, եթէ ոչ՝ դու ևս ոչ կարես կալ։ Եւ հաւատացուցին ինքեան, եթէ զսոսա բառնաս, կաս մնաս մեր թագաւորն ես։ Ուստի թագաւորն փութով և յանկարծ ի գիշերի զղզլար աղան ի ղզղուլէն ուղարկեալ անդ գլխատեցին, և զգլուխն ի յառաւօտեան ի հրապարակի արքունական պալատին ձգեցին ի տեսութիւն ամենից, և զծառայ սորին զսուլէյման աղան ի հրապարակի գլխատեցին. և զեաղուպն կալան եդին ի տանջանս տասն օր. չեռուցեալ թաս ի գլուխն և զայլ անդամս այլ տանջանօք, մինչև տեղեկանալ ամենայն արարից, ընչից, ապարանից, հաշուից. ապա և զսա իբրու կիսամեռ գլխատեցին. և յետ երից աւուրց դահճի տուեալ զարծաթ հայք տարեալ թաղեցին զհոտեալ մարմինն. զսորին զամենայն ինչ, այսինքն զալաւտասարաս տունս, զձիանս, զարդարանս, և զգանձ ի յարքունիս առին. և զայս ամենայն տեսեալ տաճիկք, ափշեալ ասէին. քեայֆիր փատիշահմը օլմուշմըսն։... Եաղուպն չորս ամ յառաջ չօպան օղլի սառաֆին խզմէթքեար էր, խալայեխ մի ունէր, զոր տուեալ է նմա ղզլար աղան, որ լեալ է քոյր սուլէյմանին. չօպան օղլին զայս խալայեխս եայղուպին ի կնութեան տուեալ է, գոլով քոյր սուլէյմանին, ղզլար աղան զսուլէյմանն խիստ սիրելով, զեաղուպն այսքան բարձրացնելոյն սուլէյմանն լեալ. գրեթէ թագաւորութիւնն այն ինքեանք վարէին։ Եաղուպին մէկ տնէն եօթանասուն արապայ կահ և կարասիք հանեցին, որ ի պալաթ էր, 100 քսակ արժօղ տունն։ Նոյն գունակ պէշիկտաշու տունն, և ի տանէն ելեալն, և ի խանէն ելեալ զանձքն։ Միլիոններ ասեն ղզլար աղային և սուլէյմանին, զանձք, ոսկի և արծաթ, ակունք, և ականակուռ ոսկեղէնք և արծաթեղէնք. զարդք և հագուստք

մեծագինք մարդկանց և ձիանց, ասեն իբրու 50 միլիոնի չափ։ Այժմ քննութիւն առնեն սառաֆաց, թէ որք ընդ նոսա ունէին առևտուր, և զայն ևս ժողովեսցեն, և առ յայլ արհեստաւորս այսպէս, ևս առաւել առ ճէւահրճիս և ղոյումճիս. ամենայն հայք յահ և դող են, և գլխակոր վասն այսմ իրի և եաղուպին։ Սա ունի և զայլ լիս եղբայր չաբագոյն, յակոբ անուն, սոցունց անուամբ բարձրացեալ մի ամ ոչ գոյ, եկեալ բնակիլ ի զալաթիա, ի դուլէդաբուն զմի սառաֆի տուն գնեաց. յետ այնորիկ ի ձեռն թախանճանաց և ուժոյ դրամոց աւելի տալով էառ զ[հ]այոց տունսն և միաւորեաց ընդ իւրոյ. և այսպէս դիտէր և զայլոցն առնուլ. բազում ձիանս զարդարուհս պահէր, զբազում սպասաւորս ունէր իբրև չուխաատար. յորժամ ձիով ընդ այլոց հանգանակողաց իւրոց ի յզբօսանս գնայր, առաջի և զկնի, հետի ոտս ընթանային... զերկոսեանն ևս վերուցին այսինքն զեաղուպն և զայս չարաճճիկ յակոբս. զեաղուպն սպաննեցին չարաչար. այս տակաւին ի բանտի է։ Ոչ է յայտ թէ զերծանի։ Ասեն թէ եաղուպն որ յերուսաղեմայ եբեր զյակոբ փաթրիքն, և ինքն երից աւուրց մէջն նստոյց փաթրիքք, հետևաբար զհալածանս յարուցանելոց էին միշնորդութեամբ ղզլար աղային և սուլէյմանին. ի թագաւորէն զհատուհումայի հանել, և յամենայն տեղեաց զուղղափառութիւն բառնալ։...

Գերյարգութեան ձերում

Նուաստ ծառայ
Հայր Միքայէլ Վ.

Ցամի տեառն 1752–ին
յօգոստոսի 3–ին
[կ. Պոլիս]

Ջերևելի զգեստն զգլխարկն մեծածախն [եաղուպին] եասախ արարին, ուժգին վրէժխնդիր են... յուլիս 29, միոյ ժամու գիշերոյն խիստ երկրաշարժութիւն եղև. տևեաց ժամանակ, երկու հայր մերի չափ. սարսափումն տուաւ ամենայնից։

ՃԿԲ.

Հետագայ պաշտօնագրով կ՝իմանանք, թէ Մխիթար իր կենդանութեան կը վարէր վենետկոյ Հասարակապետութեան կողմանէ Ռէվիզօրի (= Դրաքննիչ) պաշտօնը։

Հիմնադրիս մահէն յետոյ նոյն պետութիւնը ներկայ հրովարտակով կը յանձնէ այդ պատուաբեր պաշտօնը անոր ցաջորդին՝ Մելգոնեան Աբրահօր, իշխանութեամբ վարելու ոչ միայն ի վենետիկ՝ այլ և «ի տէրութեանս վնէժականի»։ Սոյն թղթով՝ ի հարկին՝ անոր փոխանորդ կը ճանչնայ իբր գրաքննիչ վ. Մկրտիչ Անանեանը։

Ոըոշ չէ՝ թէ բնագրին այս հայերէն թարգմանութիւնը որո՛ւ գործ է. մեզ կը թուի որ անիկա եղած ըլլայ Հ. Անտոն Պաղտասարեանէ, որ արդէն ասկէ քիչ առաջ ալ կատարած էր ուրիշ վաւերաթուղթի մը թարգմանութիւնը։

Բանասէրը պիտի իմանան ինքնին, թէ ո՛րքան մեծ ու շահագրգռական է թուղթիս պարունակութիւնը, որ միանգամայն կը ցոլացնէ վենետկոյ Հասարակապետութեան որդեզրած կրօնական ըմբռնողութեան և ոգւոյն աստիճանը։

Ցամի տեառն ՌՉՄԲԻԸ. ի ԻԴ Օգոստ.

Գերապայծառ և ևս Գերազանցագոյն Տեարք Ռէֆօրմաթօրք դպրութեանն Պատվայու, զկնի մահուանն Հ. Մխիթարայ Աբբային Միանձանց Հայոց ի կղզւոյն Սրբոյն Ղազարու եղելոց, որ և վարէր զՊաշտօնն Ռէվիզօրի գրեանցն Հայկականաց, նկատելով

թէ հարկաւոր է ստորակացուցանել զանձն ոք ի միջոյ նոցա, որ վարեսցէ զնախանձաւոր և զծանրակշիռ պաշտօնն, զի մի ըստ պատահման ապեսցին գիւրք ինչ, որ իւրք կերպիւ և իմացուածով ի մասին ինչ, թէև չոյժ փոքրագունի, հակառակ իցեն Ուղղափառ Հաւատոյ կամ Պսակաւորաց, և բարի վարուց, կամ ունիցին չինքեանս զոր և իցէ անվայել իւր. իւրեանց գերազանց տէրութիւնքն, չետ քննելոյ զբանն և հարցանելոյ, և գտանելոյ ի մէջ Միանձանցն Աւետեանց նոյնոյ կղզւոյն, թէ ո՞ր իցէ չարմար, ընդունակ, և հմուտ լցուցանելոյ զայնպիսի փափուկ և փոյթևառնդն պաշտօնատարութիւն, մտախորհ եղեն ի կացուցանել, որպէս ահա՝ առաջիկայ գրովս կացուցանեն և բացորոշեն. զի լցուսցէ զայսպիսի պաշտօնս Հ. Սահեփաննոս Մելքոնեան Աբբայն ասացելոց Միանձանց կարգին Սրբոյն Անտոնի Աբբային։ Եւ արդ՝ ուժգնութեամբ առաջիկայ բացորոշութեանս պարտի լինել ժրաջան հոգ, և փոյթ նոյնոյ Ռէվիզօրին տեսանելոյ և ընթեռնելոյ ամենայն ուշադրութեամբ և ամբողջութեամբ զամենայն գրեանս Հայոց ձեռագիրս, կամ յայլ անգամ տպեալս, որք պարտիցին վերստին տպիլ այսպէս յայսմ վաղագի, որպէս և ի տէրութեանս վնէժականի, ուրոյն ուրոյն նայելով՝ եթէ ի նոյն գրեանս գտանիցէ իրս ինչ, որք հակադրեսցին, կամ իցեն որով և իցէ կերպիւ անհամաձայնք կամ Ուղղափառ Հաւատոյ, կամ Պսակաւորաց և բարի վարուց, կամ ունիցին չինքեանս զանվայելուչ ինչ, որպէս ասացաւ. որ եթէ գտանիցին, յայնժամ իցէ պարտական նոյն ինքն Ռէվիզօրն տալ զրոյց իսկական, պատրաստական և հաւատարմական՝ նմին իսկ Պետութեանն յաղագս պատշաճաւոր բացորոշութեանց։ Իսկ յորժամ ի տեսանելն զ ի վերայ ասացեալ գրեանսն, ոչինչ գտանիցէ ներհակ վերոգ|ր|եալ բանիցն, տուեալ լինի հրաման նմին Ռէվիզօրի և մանաւանդ պարտ լինի նմա առնել զվկայական մի իտալական լեզուաւ ի զատ թղթի, յորում զկնի նշանակելոց զօրն և զտաբին, գրեսցէ զայսոսիկ իսկական բանս։

Վկայեմ ես ստորագրեալս թէ տեսի և փորձառեալ հաստատեցի (ըստ որում կամ որչափ ինչ հայի) Ուղղափառ Հաւատն, ի Պսակաւորսն և ի բարի վարս, զգիրքն Արամեան լեզուաւ, կոչեցեալ իտալականաւն, ևն. և ցուցցէ զամբողջ խորագիրն գրքին, զառաջին բանսն սկզբանն և վախճանին. և թէ քանի՞ են հատորքն և ստուարութիւնն։ Ապա ստորագրեսցէ զնոյն վկայականն Ռէվիզօր անուամբ, որպէս և սովոր են առնել այլք Ռէվիզօրք գրեանց, տալով իւրաքանչիւր հաղի ունիլ զնոյն վկայականն մերում Սէգրէթարի՝ յաղագս սովորական հրամանին նորուն իսկ Պետութեանն, զի թոյլ տացէ տպագրողին տպել. բաց յայսմանէ նկատեալ Գերազանց Տէրութեանցն իւրեանց, զի կարէ հանդիպիլ կամ վասն բացակայութեան, կամ վասն ստուար մատենին և երկարութեան գործոցն, կամ վասն պատճառի հիւանդութեան, թէ մենաւոր վերոյասացեալ Ռէվիզօրն չիցէ իւրք կերպիւ բաւական, կացուցին ևս և բացորոշեցին, զի ի սոյնպիսի պարագայս կարասցէ լցուցանել զտեղին նորա ըստ նախագրեալ եղանակաց նոյն վկայութեանց Հ. Մկրտիչ Անանիայի որդի Միանձնականն նոյնոյ կարգի, և առաջակայ Հ. Աբբային յիշատակելոյ, երկոքեան ևս, որք եղեն իսկ ընծայեցուցեալք ի բարեկեցութենէ Միանձանցն վերոյասացեալ Կղզւոյն Սրբոյն Ղազարու։

Պարտի այս գրոյս օրինակն տուեալ լինիլ նոցուն իսկ Ռէվիզօրից վասն իւրոյ անթերի կատարմանն, զոր քաջ իսկ համարի Պետութիւնն լինով եղանիլ յատաքինութենէն, ի բարեպաշտութենէ և յանարատութենէ նոյն Հարցն Աբբայի և առաջակայի ի վեր անդր ակնարկեցելոյ։

Ցոհ. Էմո փոօգուրաթօր Ռէֆօրմաթօր
Բարբոն Մօրոզինի փոօգուրաթօր Ռէֆօրմաթօր
Ալոյիսիոս Մօչէնիկօ, չորրորդ Ասպետ փոօգուրաթօր Ռէֆօրմաթօր
Ցոհ. Հերոն. Զուգգաթօ Սէգրէթար

ՃԿԳ.

Սուլթաններու քաղաքի վերոյիշեալ լուրջ դէպքերու պատմութեան ուրիշ աղբիւր մը կը ներկայանայ մեզ Ասկէրեանի հետևեալ նամակը։

Ազնւապատիւ և գերյարգոյ Հօր մերոյ
Յոհաննուսի Բարուճապետի և Ազբահօր մեծի

... Գերապայծառ մինասայ Արհեպիսկոպոսին մերոյ խոնարհութեամբ զաջսն համբուրելով ողջոյն մատուցանեմ...։ Պատմի ասէին, թէ ի Կոստանդնուպոլիս յաւուրս պայրամին եղեալ է խռովութիւն բազում, սպանեալ են զսիւլէյման աղայ զուրացողն, որ իբրև երկրորդ արքայ տիրացեալ էր ի վերայ երկրին, և զհամախոհ նորա զխըզլար աղասըն և զեախուալ աղան ևս. այլ թէ վասն որոյ իրաց, այսպէս պատմեաց որդի աէտ աղային ասվատուրն։ Վասն կարի իմն զօրանալոյ սիւլէյման աղային, թիկունս ունելով զնա պօստանճիք, բազում յանդգնութիւն գործէին, լուեալ թէ ոմն յիւրեանց ի կալանս է յիսկուտար առ իշխանի տեղւոյն, չոգան առնուլ բռնութեամբ. յընդդէմ դառնալ իշխանին, հարին վիրաւորեցին չարաչար ի գլուխ զիշխանն։ Որոյ զայրացեալ անհնարին ընդ յանդգնութիւն նոցա, թուղթ առաքէ լալագին առ չեխիսլամն, և նա առ թագաւորն երթեալ ամբաստան լինի, եթէ ոչ մի թագաւոր է ի քաղաքիս, այլ երէք, չարախօսելով զսիւլէյմանէն և զխըզլար աղայսըէն։ Հրաման առաքէ թագաւորն, աքսորել զխըզլար աղասըն և զսիւլէյմանն սատակել։ Ցարհամարհել խըզլար աղասըին զհրամանն արքունի, սատակէ զնա թղթատարն և ապա զսիւլէյմանն. և զի կին եախուալ աղային քոյր էր սիւլէյմանին ուրացողի, զբռամբ ածեն և զեախուալ աղան, և սպանեալ զամենայն ինչս նորա առնուն յաւարի. և այժմ զեղբայրն ևս նորա չարչարեն անհնարին, թերևս և սպանցեն։ Գէորգ վարդապետն, որ պատրիարգն էր կոստանդնուպօլսոյ, անկաւ, և արդ նստի նալօղլու յակոբ վարդապետն։...

Ամենապատիւ հայրութեանդ
Տրուպ ծառայ
Վրթանէս վրդ. Ասկէրեանց

Ցամի 1752
յօգոստոսի 25 ըստ նորոյն
[կ. Պոլիս]

ՃԿԴ.

Այս թուղթը կու տայ՝ իբրև յաւելուած՝ հակիրճ ծանօթութիւններ նախընթաց մէկ երկու կարևորագոյն վաւերագիրներու մասին։

Գերյարգոյ Աբրայ Հօրդ մերոյ տեառն տեառն
Յոհաննուսի վարդապետի

... մինչև ցարդ զզլար աղասուն և սուլէյմանին սատակեցելոց ցնցիւղք չարութեան և ընաստս ոչ պակասին, զի մերթ ի համախոհից և արբանեկացն նոցին, ի ձեռս անկանին, ոմանք սպանանին և ոմանք չարչարին, և նոքա զորս կամին մատնեն, թէ այս ինչ մարդոյ այն ինչ գոյ, և այն ինչ մարդոյ այն ինչ. և այսպէս յամէն օր ի դույում-ճընէրուն այս ինչ մարդ և այն ինչ մարդ վերցնեն առ ի քննել, և այսպէս ամենեքեան սրտադող են։

Եաղուպին եղբայրն որ իբրու երկու ամիս էր, որ ի քննութեան և ի տանջանս էր, յաւուրս յայսոսիկ թող տուեալ, բայց խելացնորեալ է ասեն, թէ ի թէքիրտաղ տարին, և ումանք թէ ի յաքսորս ուղարկեցին։ Ցիզմիրու ահագին սահակ վ. ևկն ասաւ ի Պուրսայու աքսորեալքն յակոբ աղան և հաճի պետրոսն յաւուրս յայսոսիկ իթլախ եղեալ ասեն։...

Ցամի տեառն 1752.ին
ի սեպտեմբերի 17–ին չուէ առ վէնայով
[կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Միքայէլ վ.

ՃԿԵ.

Պաշքալովի մէջ Մխիթարեան նախկին առաքելութեան մը բացման նախապատրաստական գործողութիւնները կը պատմուին հետևեալ նամակին մէջ։

Օր. եղ. ցս. Ֆս.

Ապրիլի 12 Պէլիկրատն 1753?

Գերայ Պատուվելի Հայր Աբրահամ իմոյ հոգևոր և մաքուռնաւոր Բադրոնիս
Մեծաւ խոնարհութեամբ ողջուն

Եւ ընդ սակաւ ողջունիս յայտ լիցի Գերայ Պատուվելութեանտ վասն զի Գերհարգելի վարդապետն և հայր ղազարն եղին ի Պէլիկրատն որպէս գրեալ էյի, և ի միասին գնացիլ ինք Գերայ Պայծար Եպիսկոպոսին մօտ, տանելով ևս զգիր մի, զոր գրեալ էր քաղաքն հասարակ Գերայ Պայծար Եպիսկոպոսին և կարդաց, զորին պատասխանեաց այսպէս. իմացայ ըզխնդիրքդն ձեր հրամանուցը, ֆաղաքացոցըն նայև որպէս հոս տեսանեմ որ էկիլ ինք հայ հասարակութեան կամաւըն, և ոչ միայն ի կողմանէյ աշխարհականաց, այլ և քահանայից. և կու գովեմ որ չանք կանէք այպիսի բարի բանի, ահայ ես ալ Գօնֆերմավադ կու անեմ և կու հաստատեմ և կու չընաֆօրեմ և կու օրհնեմ, զի աւելցի այս սուրբ կրօնը. մեծաւ սիրով ընդունեց. նայև ասաց թէյ, զատկին էտև վիզիդացիա պի գայ ան տեղըն և այլըն. շատ կալաճի արինք. աւելի քան մէկ սհադ. գրով ոչ կարեմ գրել, քանզի շատ պի լինէր, թէ ինչ խօսակցութիւն էղիլ էյ. բայց մասնաւոր քիչ բան պի գրեմ. այսինքն վասն ըչզօլանու սէպըն հրամայեց որ տարտ ունէնան որ ըզտղաքըն սօրվէցնուն, որովհետև ունի պարտականութիւն այս կրօնը տըղաք սօրվէցնելու։ Եւ այսորիկ մեր տէր օվանէսը բէրեալ էր ըզգիր մի ներողութեան Գարմիլիդանուն գօնկրէկացիային, որ հաստատէյ մեր քաղաքըն, և այսպէս ներողութեան գըրեանքըն հարկ էյ նախ տանել ար Գերայ Պայծար եպիսկոպոսըն, որ գօնֆերմօվադ անէյ. և ետ այնորիկ կու ըսգըսին ըզգօնկրէկացիան հաստատելու անոր սէպըն, խըրկիլ էր տէր օհանէսըն ըզնոյն գիրըն ար եպիսկոպոսըն, որ հաստատէյ, զորըն տվաւ վարդապետըն եպիսկոպոսին. կարդաց և վար դըրաւ օսդօլին վրայ ըզնոյն գիրըն և այսպէս ասաց թէյ այս ոչ լինի, քանզի ոչ գոյ ի դըրանզիլվանիայ նոյն կարգըն, վասն որոյ ոչ կամիմ տալ թողութիւն. այլ ահայ ունիք այժմըն կրօնաւորաք, և եթէ կամիք հաստատէլու Գօնկրէկացիայ նայ թողութիւն կուտամ, և ասաց հայր ղազարին թէյ, եթէ կամիք կըլաք բէրէլու և հաստատիք գոնկրէկացք և ալլաւ պի լինի հայ ազգին, և այսու անդ ծնաց նոյն գիրըն, տէր օվանէսին. դարձեալ ասաց ևըս թէյ հարկաւոր էյ ևըս ի կերլայ ալ մըտանել սոյն կրօնիս. եթէ հընար է քանի շատ, քանզի կու ճանաչեմ որ բարի պի լինի, մանաւանդ որ տըղաքըն պի սօրվին քրիստոնէական վարդապետութիւնն և այլ բարի բաներ ալ. ասոր վրայ ասի ես թէյ թագաւոր Աստուծոյ ողորմութեամբն ունին հօն ալ. միայն քիչ մըն ժամանակի էտև պի լինի. ասաց թէյ լաւ էյ.

և այսպէսի մեծ զօնզուլացիայով ուրախացուց ըզմեզ։ Վերջապէս ասաց հայր ղազարին թէյ վասըն իմ այսինքն Գերապայծառ եպիսկոպոսին սէպըն աղօթք ունին նայև սուրբ Պատարագ մատուցանեն...։

Կու մնամ
Նուաստ ծառայ
Օվանէս Ոսգէրիչեան

ՃԿԶ.

Մինասայ Էջմիածնի կաթողիկոսութեան վերջին տարուոյն մէջն ենք։ Նշանակուած զէպքերու այս մանրամասնութիւնը կը պակսի Զամչեանի Պատմութեան մէջ։

Ի

Գերապատիւ և Գերյարգոյ՝ գերյարգելի Տեառն Տեառն Յոհաննիսոսի Աստուածաբանութեան վարդապետի և Աբթայի միաբանից Հայոց՝ ողջոյն կարօտանաց

... ի Էջմիածնէ եկն գիր առ աղէքսանդր և առ ահագին սահակ և առ գէորգ վարդապետսն՝ չու առնել խաղալ գնալ ի Էջմիածին. քանզի նամակ կաթողիկոսական այսպէս էր գրեալ. զձեզ յորդորեմ և հրամայեմ գալ ի սուրբ աթոռն. և եթէ պատճառս յօդեսջիք այլազգս՝ լուծեալ էք ի կարգէ ձերմէ, և արգելեալ յամենայն եկեղեցական գործոց։ Ոչքա արք արգոյք ի մէջ ազգին հայոց (որոց յոյսն էր միշտ ի կոստանդնուպօլիս մնալ, մանաւանդ նենգաժոռ գէորգն՝ որ զպատրիարքութիւնն կրկին կամէր առ ինքն ձգել), տեսեալ զայս նամակ խռովեցան յոյժ. և ի սիրտ և յոգի անհնարին վիրաւորեցան։ Չնարս խնդրեցին ազատել զանձինս՝ ի պարտուց աստի յայսցանէ. և չեղև հնար. քանզի սարսափքն միաբերան և ասեն՝ ոչ գոյ հնար. պարտ և պատշաճ է ձեզ զհրաման հայրապետին կատարել, ապա թէ ոչ ընդ բանիւ էք. և մեք ընդ ձեզ խօսիլ խղճմք։ Եւ նոքա ետուն պատասխանի, յետ զատկին կատարել զհրաման Հայրապետին։... Անտանելի տառապանօք հազիւ կարացին զգէորգն վասն այժմոյս ի պուռսա յղել...։

Գրեցաւ ի Կոստանդնուպօլիս
յամի տեառն 1753 ի ապրիլի 14

Նուաստ չնչին
Աթանաս վարդապետ

ՃԿԷ.

Ամբողջացնելու համար Պաշֆալովի Մխ. Առաքելութեան նախապատրաստական շրջանի տեղեկութիւնները՝ կը հրատարակենք հոս հետևեալ նամակը։

Գերապատիւ և Գերյարգոյ Տեառն իմոյ Ստեփաննոսի
վրդպ. և Աբթահօրն իմոյ

... յաւուրս այսոսիկ գնացաք ընդ փլէպանուշին և ընդ Աղայ յօհաննիսին մինչև ի Պէլիկրատն, և ընկալաւ զմեզ սիրով եպիսկոպոսն, և ասաց թէ ընդունիմ զայս կրօնս և կամիմ ևս զի ի կեռլայ ևս մտանիցէք. զգիրն քաղաքին զոր առեալ էի սիրով ընթերցաւ եպիսկոպոսն։ Խոստացաւ տալ զգիր հաստատութեան կրօնին մերոյ երկրիս յայսմիկ և փութով ոչ կարաց, քանզի պիտոյ էր գրել ի վերայ մագաղաթի վասն ապագային։ կարծեմ թէ մինչև ցայժմ պատրաստ է։ Աղայ յօհաննէսին յանձնեցի հոգալ։

Իսկ վասն պատարագելոյ ի մէջ տանն՝ ասաց եպիսկոպոսն յառաջագոյն պատրաստել զընակութիւնն կրօնաւորաց. նախ զդուռն տան ի տէր հանգուցելոյն բանալ ի փողոցին. զի մի ի վանացն արասցեն զել և զմուտ. դարձեալ ասաց լաւագոյն լինէր այժմ չինել զեկեղեցին. նաև զայն ասաց թէ մինչև չինեսցուք զեկեղեցին, կարեմք մատուցանել ի փլէպանիայն. և մեք ոչ ինչ ասացաք վասն փլէպանուչին քանզի ներկայ էր մինաս վարդապետն։ Այժմ կամիմք ընդ Աղա Յօհաննիսին այլ գիր Աղաչանաց տալ գերապայծառ եպիսկոպոսին. միայն սպասեմք զի եղերեսցին բնակարանք մեր. զկնի միոյ ամսոյ բովանդակն եղերի, սակաւ ինչ խարճ առնելով, և յետ այնորիկ մաքրելոց ենք զտունն քարաշէն, և զերկուսն մի առնել վասն ժողովրդեանն. սպասեմք ևս յայցյարաբութեան եպիսկոպոսին, քանզի յայսմիկ ամի յայց առնելոց է թեմին իւրոյ. մեք փութամք պատրաստել զամենայն, միայն թէ տէր կամեսցի...։

Ցամի տեառն 1753
մայիսի 8
[Հայաքաղաք]

Նուաստ ծառայ
Հայր Ղազարոս կրօնաւոր

ՃԿԸ.

Ամենակարևոր ծանօթութիւն մը կ'ընծայէ մեզ հետևեալ վաւերաթուղթը։

Հայ Եկեղեցական Մատենագրութիւնը անտեղեակ էր ցարդ Սահմանոս Լեհացւոյ խմբագրած մէկ անտիպ Մաշտոցին նկատմամբ, որոյ մասին այսպէս կ'ըսէ մեր նամակագիրը. «զորպիսի մաշտոց ոչ ոք ի վարդապետացն մերոց շարադրեաց և ոչ «ուրեք գտանի ի Հայաստան»։

Ջենք գիտեր թէ սոյն կարևոր Մաշտոցը ինչ եղած կամ ուր հանգչած է. զէթ այսքանը յայտնի է, որ վանքիս Ջեռագրատան մէջ չի գտնուիր ան, և ոչ Վիեննայի Միխիթարեանց քով՝ ըստ Տաշեանի Մայր ցուցակին։

Օրհնեալ եղիցի Յիսուս Քրիստոս, Ամէն

Բազմապայծառ և գերապատիւ Տ[էր] իմ
Տ. Հայր պատուական

Կորացեալ անձամբս անկեալ առ ոտս համբուրեմ զգարշապարս Գ. Տ. Ջ. ի հեռուստ իբր ի մոտոյ, և զինդալն ի Տէր քեզ, և ընդ քեզ եղեալ փոքու հօտիդ միշտ և առ միշտ բաղձամ ի վերուստ։ Եւ յետ սակաւ ողջունիս կամիմ աստանօր յայտ առնել Գ. Տ. Ջ. որպէս զի լուսաւոր հոգի Ստեփաննոս Վարդապետն Լէհէցին զբազում գրեանս ի կեանս իւրում շարադրեաց և թարգմանեաց, յորոց զմինն (որ առաւել հարկաւորագոյն է Ծխատէր քահանայից ունիլ) ի սրտէ յանձն առնեմ սրբազան հօրդ իմում, զի եթէ հնար իցէ ի յայտ գայցէ տպագրութեամբ Մենաստանին ձերոյ, զոր յուսամ թէ իցէ շահաւէտ և օգտակար՝ ոչ միայն ազգիս Հայոց, նաև ձերում մենաստանին, որովհետև բաղձալոց են զնա ունիլ գահանայք և երիցունք ամենեքեան, այսինքն զմաշտոցն ասեմ, որ ունի յինքեան զզանազան օրհնութիւնսն ամենայն իրաց որք պահանջին ի վերայ երկրի, զորպիսի Մաշտոց ոչ ոք ի վարդապետացն մերոց շարադրեաց, և ոչ ուրեք գտանի ի Հայաստան։ Ուրեմն յոյժ պատշաճ համարիմ զի ի ժամանակի Գերապատիւ Տ. Ջ. տպագրեսցի և ի յայտ գայցէ։ Ունիմ առ իս զօրինակն նորին գեղեցկապէս ընդ օրինակեցեալ. սպասեմ ուրեմն հրամանացդ՝ եթէ հաճոյ թուիցի, զի յղեցից զնա այդր։ Կաւակառեմ Մենաստանի ձերում զընծայ իմն դուզնաքեայ, այսինքն զգիրք մի ձեռագիր՝ յորում պարունակի Աստղաբաշխութիւն, Մարդակազմութիւն և արհեստ համարոյ, ի վաղեմի վարդապետացն մերոց շարադրեցեալ. ընկալարուք ուրեմն սիրով,

և զխոտան ծառայս ձեր աղօթիւք մի՛ մոռանայք։ Վերջապէս՝ յանձն առնեմ զնուաստութիւնս Հայրական խնամոդ՝ և մաքրափայլ սուրբ մաղթանացդ և այսու ճնամ

Ամենապատիւ Տ. Ջերում
յերկիրն Սիգուլացւոց, ի Գիւղաքաղաքն
Սէնդ մի գլուխն
Ցամի Տեառն 1753 Յուլիս 9

Անպիտան ծառայ
Տ. Սիմոն Թորոսեան
ի տոհմէ ծուածեղեան. Բ. Հ. Ճ.

ՃԿԹ.

Դրանթիլուանիոյ Եպիսկոպոսին կոնդակին Թարգմանութիւնն է, զոր ի վանս ղրկեր Ղ. Ղազար՝ ըստ իւր նախընթաց մէկ անտիպ գրոյն, ուր այսպէս կ՚ըսէ. «Յաուրս այսոսիկ ընկալայ զմեծագոյն գոնտակն օրհնութեան և թողութեան շինելոյ զեկեղեցի և զմենաստան յերկրիս յայսմիկ ի գերապայծառ Եպիսկոպոսէն. զօրինակն գոնտակին յղելոց եմ ընդ Աղաչայ Մարտիրոսին ի վանս մեր» (Գր. առ Մկրտճեան Արք. յամին 1753 Մայիս 29)։

Ջիզիզմունդոս Անտոնիոս Սթօյքա, Պարոն դէ Սալայ, Թոյլտութեամբ Աստուածայնով Եպիսկոպոս Տրանսիլուանիոյ, այսինքն Լուտէլայ. Նախահոգակ Տաճարին Ամեներանելի կուսին Մարիամու Կաստրօագրիոյ, Աթոռանիստ Եկեղեցւոյն Ագրիոյ Կանոնիկոս, Սուրբ Կանոնաց Գիտակ, Սրբասնեալ Վեհափառութեանցն Կեսարականաց և Թագաւորականաց, այժմու երկրին և վեհագոյն Կառավարութեան Թագաւորականի ի Տրանսիլուանիայ մտերիմ խորհրդակից. Սիրեցելոյ մերում ի Քրիստոս կրօնաւորի Հ. Քրիստափորեան Ղազարու՝ ի ճգնաւորական կարգէ Սրբոյն Անտոնիոսի Աբբային, ողջոյն ի Տէր և Հայրական օրհնութիւն։ Խոնարհական խնդրոյդ (մեզ մատուցեալոյ սակաւ մի յառաջ) գիրն՝ ունէր զայս ինչ, Թէ ի մէնջ չնորհեսցի քեզ և քոյոցդ յաջորդաբար եղբարց՝ որք ի գիւղաքաղաքն Արմէն եղիսաբեթուալիս մերոյ Թեմին, ըստ ներքոյ եղեալ՝ վասն այսորիկ մեզ արարեալ աղաչանաց չրջահայեցացն նոյնոյ գիւղաքաղաքի Պետութեանն և Հասարակութեան և քոյոցն, ուժգնութեամբ այլոց մերոց Թղթոց հաւանութեան և ներմուծական գրոց ելելոց ի վերայ այսորիկ, արդէն իսկ են, և կանոնապէս մուծեալք, զի զայն տունն որ ի նոյն գիւղաքաղաքի արդէն ընդ իշխանութեամբ ձերով է, ի ձև Եկեղեցւոյ կառուցանել, զարդարել, ի նմին զՍրբազան պաշտամունս Պատարագաց և ևս զայլ սովորական հանդիսութիւնս Եկեղեցւոյ կատարել, զսուրբ Չաղորդութիւնն յարամիչտ պահել. ոչ նուազ ի տան ձերում զԴպրոցս հասարակս բանալ, և ի նոսին Մանկանց Արամեանց զսկզբունս Քրիստոնէական վարուց, և զարտաքին գրոց մակացութիւնս հրապարակաւ ուսուցանել օրինապէս մարթասչիք. զմեր իշխանութիւնս ևս ի վերայ յաւելուլ հաճիցուք։ Արդ՝ մեք որ ըստ արժանապէս բանի Հովուական պաշտօնիս մերոյ յօժարակամ հաւանութեամբ յայն բերիմք, զոր ինչ Աստուածային փառացն և փրկութեան հոգւոց կարգեալ յաճումն տեսանեմք լինելոց, մտադրագոյնս խոկացեալ զչարժառիթսն, և զծանրութիւնս աղաչանաց քոց նախագրելոց՝ լաւ վարկաք լսելի առնել զայնոսիկ, որպէս և իսկ ուժգնութեամբ գրոցս լսելի առնեմք, զպատշաճաւոր քեզ և քոյոցդ յաջորդաբար նոյնոյ կարգի եղբարցդ չնորհելով իշխանութեան կարողութիւն, որպէս զյիշատակեալ տունն ձեր՝ յայս վախճան կարգեալ, ի ձև Եկեղեցւոյ կառուցանել, զարդարել, ի նմին Պատարագաց նուիրագործութիւնս առնել, զՍուրբ Չաղորդութեան խորհուրդն յարաժամ՝ սակայն վայելչապէս պահել, և զայլ ամենայն եկեղեցւոյ սովորական հանդիսութիւնս կատարել. նմանապէս ի տան ձերում զդպրոցս հասարակս, կամ մակացականս բանալ, և ի նոսին Մանկանց Հայոց զսկզբունս Քրիստոնէական վարուց, այլ և զարտաքին գրոց մակացութիւնս հրապարակաւ ուսուցանել՝ ազատօրէն և օրինա-

այէս կարասջիք և մարթասջիք։ Սակայն կամիմք, և ստուգիւ պատուիրեմք, զի ի նոյն այսպէս ձևացուցեալ՝ ևս և յայլ ապա՝ նորակերտ եկեղեցւոջն, զԲարոզութիւն բանին Աստուծոյ, զմատակարարութիւն սուրբ խորհրդոյն և զայլ հանդիսութիւնս եկեղեցականս, որք ծխակերականք են, կամ լինիցին, առնել ամենևին մի՛ համարձակիցիք, եթէ ոչ ցի՛ր վայր և յո՛րքան ի ձեռն նոյն գիւղաքաղաքի կարգեալ Ժողովրդապետին այսուհետև կայցէք ի վերայ իշխանութեան։ Պարձեալ կամիմք և բացորոշեմք, զի այնք, որպէս ի վերայ դնի, ձեզք բանալի դպրոցք և ուսումնարանք՝ նոյն գիւղաքաղաքի կարգեալ Գահերիցուն, կամ Ժողովրդապետի տեղւոյն ենթարկեսցեն միշտ և ամենևին յամենայնի վերատեսչութեանն, այցարարութեանն և ուղղաւորութեանն։ Իսկ զօրհնութիւնն նոյնոյ այսպէս ձևացուցանելի եկեղեցւոյ ձերոյ, Պատուաւոր Տեառն Մկրտչէլի Դանիէլ՝ Գահակալ եկեղեցւոյն մերոյ Աբբայու Կանոնիկոսին, և բազմիցս ասացեալ նոյն գիւղաքաղաքի Գահերիցուն և Ժողովրդապետին յանձն առնեմք։ Տուեալ եղև գիրս յԱմրոցի մերում Աւվինկիով՝ յաւուր երեսներորդի առաջնորդի ամսոյն Յուլիսի, յամին Տեառն ՌՉԾԴ.ին

Չիզիմունդոս Անտոնիոս
Եպս. Տրանսիլուանիոյ

Ա՛ր հրամանաւն իւրոյ Եպիսկոպոսականի գերաբարձրութեանն
Անտոնիոս Շերեւացի ստորագրեցի.
Վերոյասացելոյ Գերաբարձրութեանն իւրոյ
Մատրանապետ գրեցի

ԾՀ.

Ծիշատակուած կաթողիկոսն է Աղեքսանդր Բ. «մականունամբ Ղարաղաշ[1]»։ Այս բոնի յանձն կ՛առնու Էջմիածնի գահակալութիւնը՝ փոխանակ Նալեանի և Սահակ «Ահագին» անուանեալ վարդապետի, որոնք յաջորդաբար մերժած էին իրենց ընտրութիւնը։ Աղեքսանդր մէկ ու կէս տարի միայն կաթողիկոսութիւն ըրած է (1753 + 1755)։

Իսկ ինչ որ կը տեղեկացնէ անոր մասին մեր վաւերագիրը՝ նորութիւն է Զամչեանի պատմութեան համար։

Նշանակելի է նաև հայ ձեռագիրներ հաւաքելու և ապահովելու մասին Հ. Աս. կերեանի կատարած շահեկան հետազօտութիւնը։

Մեր նամակագիրը իր թուղթին վերջը «Զմայր մաշտոցն դեռ որոնեմ» կը գրէ. արդեօք Ստ. Լեհացւոյն խմբագրած մաշտոցը պէտք է հասկնանք (տես վաւերաթուղթ ՃԿԴ)։ Մենք չունինք դեռ որոշ յայտնութիւն մը, ցորքան չենք հանդիպիր Մելգոնեան Աբբահօր այն նամակին՝ ուր ակնարկուած մաշտոցին նկատմամբ ինք յանձնարարութիւն ըրած է։

Ամենապատիւ հօր մերոյ Տեառն Տեառն Յոհաննիսոսի վարդապետի,
և աբբայ հօր մեծի։ Խոնարհութեամբ բազմաւ ողջոյն։

... Աղեքսանդր կաթուղիկոսն ել գնաց ըստ Էջմիածին ի վերջն սեպտեմբերի. ասեն զսմանէ, թէ ի յուղարկել զսա պատրիարգին և ժողովրդեանն, ասացեալ իցէ առ նոսա։ Զլուսաւորչեան ազգ մեր եղբարք, ոմանք ի մէնջ խռովեցին, կամէի ի վաղուց հետէ առ

1. Ղամչեան. Պատմ. Հայոց Հա. Գ. էջ 865

առաջնորդութեամբ իմով, այսմ դարմանել. այլ այժմ որ հանդերձեալս եմ գնալ, բան եդի ընդ եղբօրս իմոյ, (ցուցանելով զպատրիարգն) գուն դնել այսմ, զոր ինչ ուսուսցէ, և որպէս առաջնորդեսցէ ձեզ, լուիջիք իբրև իմոյ բերանոյ։ Եւ դարձեալ խօսեցեալ է առ իշխանս, թէ ես զգաւանութեանս իմոյ թուղթ գրեցի առ գահն հռոմայ, բայց յերթալս իմում, կամիմ գրել միւսանգամ զլիագոյնն։... Ջիոյթ կալեալ ըստ հրամանի Գերյարգութեանդ, գնեցի զպատեալ գիրս ոմանս, որք ոչ գտանէին առ մեզ. և բաց յայնմանէ զոմանս պիտանի ձեռագիր գրեանս ի գրեանցն մաղաքիայի, որոց առաջինն է Սարգիս չնորհալւոյն մեկնութիւնն կաթուղիկեայց ձեռագիր՝ փառակազմ արծաթազարդ, յորում չատ որոնեալ ոչ գտի զայն վրիպակ բանսն, որ ի տպագրի ածին. վասն ոչ հայելով ի ծախսն, գնեցի զայն 18 խռուչի. մանաւանդ զի յաւելեալ էր յայն և այլ գիրք մեկնութեան կաթուղիկեայց արարեալ ի հնագոյն սրբոց հարց, նշանակելով զիւրաքանչիւրոց անունն։ Երկրորդն մեկնութիւն չորեքտասան թղթոց պօղոսի արարեալ ի յօհաննէ ոսկեբերանէ և յեփրեմէ ասորւոյ։ Երրորդն մեկնութիւն յեսուայ դատաւորաց, թագաւորաց և դանիէլի, հաւաքեալ ի մեկնութեանց սրբոց հարց։ Չորրորդն գիրք եւագրի զվարուց. Հինգերորդն, գիրք նիկիոյ և կոստանդնուպօլսի ժողովոցն, թարգմանեալ. վեցերորդն, Ոսկիփորիկ անուն. գիրք խրատուց և կանոնաց գրեալ վաղնջուց, որ է իբրու բարոյականն Հայոց, յորում են և կանոնք առաքելոց։ Եօթներորդն ձեռագիր չարական մի պատուական, և տօմար և տօնացոյց ձեռագիր։ Զայս ամենայն գնեցի, մեծագոյն մասամբ փոխանակելով ընդ գրեանց, և սակաւ մի ևս դրամով։ Իսկ ի մէջ տպագրեալ գրեանց գընեցի զպօղոս տարոնացւոյն գիրս լի հակառակաբանութեամբ, որ ոչ գտանիւր ի ցանկի։ Այլ և զբուզանդ...։ Ջմայր մաշտոցն դեռ որոնեմ. և զամենայն, զոր միանգամ յանձնեալ է գերյարգութիւնդ ի թղթի, անմոռաց փութամ կատարել։...

Ցամի տեառն 1753 Նոյ. 30 Ամենապատիւ հայրութեանդ
[Կ. Պոլիս] Տրուպ ծառայ Հ. Վրթանէս [Ասկէրեանց]

ՃՀԱ.

Պոլսոյ մէջ պատահած հսկայ հրդեհի մը նկարագրութիւնը կը կարդանք հետեւեալ նամակին մէջ։

Ցարգոյապատիւ և գիրապայծառ տեառն տեառն Յովհաննոսի վարդապետի և աբբայիօր իւնդալ ի տէր

... *ի Թ.երորդ մարտի ի մէջ գիշերի... չոգայ ի սամաթիա. ահա ել հուր մեծ ի գործարանաց տպարարաց, այսինքն պասմաճոց, որք արտաքոյ պարսպի Վլըլանկայի առ ծովեզերբն, և բորբոքեալ ի չնչելոյ սաստիկ հողմոյ հարաւայնոյ այրեաց զամենայն չինուածսն զայնոսիկ, և անտի անցեալ յայսկոյս ի ներքս պարսպին վառեցաւ վաղվաղակի իբրև զժամս ութ, և այրեաց աւելի քան զերեք հազար տունս, յորոց բազումք էին տունք հայոց՝ մանաւանդ ուղղափառաց. զի այրեաց ի պարսպէ անտի, այսինքն ի հիսարտիպէ մինչև ի զընտանտելէն համամն, և մինչև ի մուսալլայ, և ի ճիւճէ չէշմէն, և անդր ևս մօտ յեկեղեցին հայոց։ Բազումքն այրեցան կենդանւոյն ի հուր անդր, և բազումք մազապուր մերկանդամ զերծեալ անկան յաղքատութիւն մեծ։ Անդ էր տեսանել զողորմ աղէտի իբրև զօր դատաստանի գյանկարծակի թշուառութեանն պատուհաս, ծերոց և տղայոց, մանկամարդաց և հիւանդաց, զի կէսք կոխան լինէին և կէսք ի հուր կիզուին վասն գիշերոյն մթութեան և վասն հողմոյն սաստիկ չնչելոյ, և վասն տանց խտութեան և ճանապարհացն անձկութեան։ Իսկ ժանտախտն դեռ կայ մնայ ի պէկօղլու, ուր բազումք մեռան ի փրանկաց և ի յունաց...։*

Ցամի տեառն 1754 Մարտի 13
ի կոստանդինուպօլիս

Անպիտան ծառայ
Հ. Իգնատիոս [Խաչատուրեան]

ՃՀԲ.

Սարաֆեանի այս նամակը կը գծէ անոր կենսագրականէն ծանօթութիւններ։ Հրաժեշտի թուղթ մ՚է՝ զոր կը ղրկէ Լիվոռնոյէն, ուր Հռովմէն հասած էր ինքը։ Իր մեկնումին պատճառը այսպէս կը պատմէ Յովհ. քհնյ. Նուրիկեան.

Այլ որովհետեւ տեսանել ցանկայր
Զաշխարհն հայրենի զիւր այրի ծեր մայր,
Որ զեռ ողջ ւ՚առողջ ի Բիւզանդիա կայր,
Վ՚ասն այն անդանօր մընալ ոչ խոկայր,

Վ՚երջապէս անտի Սարգիս ելանէր,
Ի՚տասի Լիվուռնայ ողջմբ իջանէր,
Ուստրն Հայոց տեղւոյս որ յայնժամ մեծ էր,
Ընդ օտարազանց ըզնա յոյժ յարգէր։

Եւ մանաւանդ զի ոչ եւս զօքելով,
Ոչ տըպագրելով ոչ քարոզելով,
Օգտել իւրայոց ընդ օտարս կելով,
Ա՛ւ ազգ իւր ապա դիմէր փութալով,

Այս լինէր յամին հազար հօրն հարիւր
Որ յիսուն և չորս եւս ունէր ընդ իւր[1]...

Սարգիս Ազրեպս. Հռովմ հասած էր այդ երկրորդ անգամ 1753 Նոյեմբեր 5–ին, ուր վեց ամիս մնացած էր. հոնկէ Լիվոռնոյ մեկնելէ առաջ նախ Ս. Յողո-վէն վկայական մ՚առած էր, ինչ որ լաւ յանձնարարագիր մ՚էր՝ եպիսկոպոսին ներկայացնելու համար։ Ապա շնորհուած էր Ս. Փահանայապետէն ալ իշխանութիւն մը՝ շատ մը տնօրինութիւններ ու շնորհներ ընելու Ազեւելքի մէջ[2]։

Վաւերաթուղթիս մէջ ներողամտութեան խնդիրքը ամենէն աւելի պիտի հայի անշուշտ Սաղմոսի տպագրութեան ջուրջ ունեցած անցեալ իր մէկ սխալին։

Տեառն Տեառն Յոհաննեսոյ Մաքրակրօն Ազբայի
Յիսուսաձիր սիրով ողջոյն ընծայեմ ի Քրիստոս Յիսուս

Ուխանք կենցաղականի մրրկանաց ցայս վայր արդէն հասուցեալ զիս թափառական հայութիւն, ոչ գիտեմ թէ առ ուր միտէ յանկուցանել այսուհետեւ չուառապէս։ Վասն զի եթէ Տեառն իցեն տնօրինեալ կամք ի վաղիւ իսկոյն ի նաւ իմն ելեալ Հօլանդրիան, ակն ունիմք նաւարկել մանաւանդ լիաշնորհ Քրիստոսանօք ձերայիս աղօթից, քան թէ յաջողակ հողմով եւրանօտոսի չնչման։ Ցաղագս որոյ՝ յետ զբարեւաւմնայն իմ ասելոյ Գերընտիր վեհանձնութեանդ ընդ քեւ եղեալ յարգեցեալովք հանդերձ՝ ցաւագնապէս, ապաստան լինիմ ի ձեր մաղթանաց օժանդակումն բոլորովին, որոյ արժանաւորիլն ձեր իմն մեծ համարեալ լինի առ իս, թէեւ անարժան իցեմ ինքնին լրիւ։ Եւ թէպէտ զցարգեցելոյդ ողջունագիր կանխաւ ընկալայ ձեռամբ մահտեսի Մանուկ պատուելւոյն գոլով ի Հռոմ, այլ՝ կիրք ճանապարհորդական ժխորմանց բուռն արարին չզօրել առժամայն գտանել համապատասխանող, զոր և զսա ընդ այլ իմոց տմարդական բարուց բնականաց յուսամ ներման արժանացուցեալ՝ ոչ եւս երբէք էք յիշելոց, և զուցէ ըստ բարեմտութեան ձերում իբր զերախտագէտ ոք և զմտերիմ ի յիշողութեան ձերում պահելոց. և թերեւս մերթ ի ձերն չնորհալի գրոց ձերոց մխիթարելոց։

---

1. Գալէմքեարեան, կենս. Սարգ. Ազբեպս.ի Սարաֆեան. Վիեննա 1908, էջ 54.
2. Անդ, էջ 253.

Եւ եթէ կամք իցէ ձեր հարցանել զչ՛ր վասն չյօժարելոյ իմ գալ ի Հռօմ, ոչ կարեմ առ այս մասնաւորաբար պատասխանել, զի ունի զբազմազան պատճառս բանաւորագոյնս, բայց գիտացէք գիս յաւէտ ուրախագոյն վասն ոչ ինալոյս անդ, և գնալոյս ուր ամաչարեմս արդէն։ Արդ վասն կացիք բարեաւ ասելով վերստին, խնդրեմ ի ձէնջ Թիկնահաս լինել աղօթիւք։

Եւ եթէ աւարտեալ իցէ տպագրութիւն Լօճիգայի կովդինին, աղաչեմ ոչ մոռանալ զմինն առ իս առաքել սեաւ կապով յիզմիր, ձեռամբ կարնեցի պարոն Նահապետին. և հետեւաբար զյետին հատորն բնազանցական. զի զայլ երկուսն ընկալեալ եմ։ Ամենայն միաբանից սրբակրօնից, որք առանձնացեալք կան ի սրբարանդ, սիրով և կարօտիւ ողջոյն ընծայեմ. և յատկապէս իմ Հայր Մկրտչին պատուականի, և սպասեմ տեսանել զնա ի բնուն իսկ հայրենին մեր ի Բիւզանդ. և մի՛ զանգիտասցէ բնաւ, զի առանց հրամանի Սրբազանիդ զոչինչ առնեմ նմա. բաւ է։

Ի Լիվոռնօ
1754 ի յապրիլի 22

Սարգիս Վրդ. և Արքեպս.
Կոստանդինուպօլսեցի

ՃԼԹ.

Հետեւեալ թուղթին ակնարկը կը վերաբերի Պոլսոյ Վենետկեան Դեսպանին, ինչպէս նամակին ընթացքին պիտի տեսնուի արդէն։ Նամակագիրը կը տեղեկագրէ նաև յիշեալ Դիւանագէտին հանդէպ ցոյց տրուած նշանակալից պատուասիրութիւն մը մերայնոց կողմանէ, որ այնքան նախանձ շարժած է հակառակորդներու։

Գերամեծար Տեառն Տեառն Սրբազան քաջ հովուիդ Յովհաննիսի
Աստուածաբանութեան վարդապետի և մեծի Սրբոյդ ողջոյն իւնարմատիւ մատուսցի

ի Կոստ. յամի 1754 ի մայիսի 19

... ի յանցեալ ամսոյն իջուցին ի ծով զիւշամպաւրի նաւ մի, որ ի Թագաւորութեան տանկաց չէր բնաւ տեսեալ ի Ֆէնէր՝ ի տանն ասկէրեանց առ ի տեսանել զտեսիլն զայն զարհուրելի։ Բայց չեղև հնար՝ զի նա թէպէտ կամեցաւ գալ, այլ քափիթանն յղեալ մարդ՝ հրաւիրեաց ի տուն իւր։ Վասն որոյ չկարացեալ զդէմ ունիլ՝ գնալ ի տուն նորա։ Եւ յետ սակաւ աւուր դէպ եղև անցանել արքունի ձիոց ընդ այն, և կոչել մեր զնա հանդերձ երեւելօք նորա. և ցուցանել մեր զարարողութիւնն տանկաց, ընդ որ յոյժ զուարճացաւ անձն նորա։ Եւ յետ անցանելոյն ձիոց պատրաստեցաք նմա՝ (իրաւի) սեղան արքունի. զտունն աւուր յառաջ մաքրելով և զարդարելով որպէս և վայելուչն է։ Եւ ընդ մեր պատիւն այնքան բերկրեցաւ, որ հաստատեաց բանիւ ի կոստանդնուպօլիս չտեսեալ զայնպիսի պատիւ և զսեղան։ Եւ եկաց առ մեզ զօրն ողջոյն. և ապա չուեաց գնաց ի պալատ իւր։ Իրաւի դղրդեցաւ կոստանդնուպօլիս և յոյնք յիմարեցան, և հայք զուարճացան, զի մեծ պատիւ եղև Հայոց, զի բնաւ ի մէնջ չէր արարեալ այսպիսի իր ուրումն դաղմադացւոց ազգին...։ Բայց զայս յատկաբար Դեսպանն մեր արար՝ զի փառաւորեսցի ազգս մեր և յոյնք նախատեսցին. զի քաջ ծանեաւ զյունաց մեզ չկամենալն բարի։ Եւ նա փոխարէնն արար մեզ զմեծ ընդունելութիւն, և առնելոց իսկ է այլևս։...

Ղուաստ անարժան
Աթանաս վարդապետ

ՃՀԴ.

Ջէ նշանակուած նամակիս մէջ փաշային անունը՝ որոյ մասին շահեկան տեղեկութիւններ կը տրուին. և կ՝ենթադրուի անշուշտ նամակիս ընթացքէն՝ որ այստեղ այլազգի փաշայ մը չէ ան, այլ քրիստոնեայ նահանգապետ մը կամ կուսակալ մը։

Գնդապետաժառ և գնդապարգ Տէտան իմոյ
և Աբրահոմ Ստեփանեոս վարդապետի

... հարկ եղև ինձ յայց առնել փաշային երկրիս. և սիրով ընկալաւ և էհարց բազում ինչ, լատիներէն և ուլահերէն. և ես ըստ կարեաց իմոց մեծաւ խոնարհութեամբ ետու պատասխանի. և ասաց թէ ինքն ես պաշտպան լինելոց[է]կրօնին մերոյ։ Ապրէ՛ղարն փաշային ասաց ինձ առանձին թէ փաշայն ես կամի լինիլ եղբայր կրօնին մերոյ. որպէս և է եղբայր յիսուսեան կարգին, և ֆրանչիսկանաց. ուստի ծանուցանեմ գերյարգութեանդ, թէ որպէս կամի գերյարգութիւնդ, և յայնժամ ես յղեմ փօստով զկերպն զրելոյ եղբայր լատիներէն յիսուսեան կարգին, նաև զանուան գրութիւն փաշային. փաշային բերանով իւրով խնդրեաց յինէն բերել ի վէնէտիկու պաէվիարիում կարգին ֆրանչիսկանաց, չորս հատոր խոշոր գրով, սև կողով ոսկեջրած հանդերձ նոր սրբոյք ունկարիայոյ և դրանսիլֆանիոյ. Աղաչայ Պիրոլն ասաց թէ քաղաքն վճարէ զգինն. միայն խնդրեմ հոգալ, քանզի միանգամ ես եբեր Աղաչայ մարտիրոսն, բայց մանր գրով էր և ոչ ունէր զգեղեցիկ տիպ։ Բայց սոյնս եղիցի հաստագոյն թղթով և խոշոր գրով։ Նմանապէս երկրորդ խորհրդականն փաշային խնդրեաց բերել ի վէնէտիկու գալատկերսն աստուածաշնչի հին և նոր կտա[կա]րանի չարչէֆեով ոսկի Թօփուզով. ի ներքոյ իւրաքանչիւր պատկերացն վկայութիւն աստուածաշնչին լատիներէն գրած։ Զգինն այսորիկ ես քաղաքն վճարէ, այսինքն Աղաչայ պիրոլն։ Աղաչայ պիրոլն ես խնդրեաց ինքեան բերել հայերէն գրած պատկերքն Աստուածաշնչին չէրչիվէով։...

Ցամի տեառն 1754
յունիսի 1
[Հայաքաղաք]

Նուաստագոյն ծառայ
Հ. Ղազարոս կրօնաւոր

ՃՀԵ.

Սարաֆեանի ուրիշ մէկ նամակն ահա. կը գրէ այս անգամ Զմիւռնիայէն, ուսկից յետոյ Պոլիս պիտի անցնէր։ Թղթին սկիզբը երկու տեղ քով քովի մաշած ըլլալով՝ կէտէր դրինք։ Հետևելով իր վարուց պատմութեան ու նկատելով մաշած տեղերու միացորդ տառերը՝ կ՝եզրակացնենք, որ յիշեալ Առաքնորդն է Սահակ Ահագին, որ դեռ այն աւեն իր բարեկամն էր, զոր և ինքը կ՝ակնարկէ անշուշտ [կո]քայր անուամբ։

Համբաւաւոր քարոզիչ մ՝ըլլալով Սարգիս արք. Սարաֆեան՝ սոյն քաղաքին մէջն ալ ցոյց կու տայ իր մեծ յատկութիւնը։

Նամակիս մէջ հոն կատարած իր առաքելութեան վրայ կը խօսի, ինչ որ կը յաւելու մանրամասնութիւն մը իր կենսագրականին վրայ։

Տէտան Տէտան Ստեփանեոսի Որբակրօն Աբրայ՝ ուռերիմ և սեր[տ] սիրով
ի Քրիստոս Յիսուս Ողջոյն ընծայեմ

Նաւարկեալ ի լիկօռնայու ժամանեցաք Տերամբ յ30 օրն ի Քաղաքս զմիւռին, և աստ գտեալ զվ[...]կ[..]պե[..] բայր մեր [..]ալ վերստին Առաքնորդ, ընկալեալ եղաք ի սմանէ ի վեր քան զոր վարկէաքն ողջամբ, և ի բնաւից տեղացւոց յոյժ մարդա-

սիրապէս և մեք ևս առ ի չգտանիլ դէպ առ նոսա իբր տմարդի բարեկամ և անողջունա-
տու հիւր, ոչ թողումք ի բաց զմխիթարելն զնոսա յեկեղեցւոջ հոգևորական բանիւք
ըստ կարեաց և ըստ պիտոյին երբեմնապէս, չխուսորելով ամենևին յարքունական պո-
դոտայէ ուղղականէ ի յանգոսնելի ծայրս հակադրականի կողմնականութեան երբէք,
ըստ որում յայտնի իմն է տեսողաց և լսողաց: Եւ լինի թէ ո՛ գիտէ մինչև յերիս ամիս
եթէ Տէր կամեսցի ասա օթագայիմ, զի յիշեցեալ Պետն ոչ կամի թողլատրել փութով
գնալ մեզ ի կոստանդնուպոլիս առ ի զովացուցանել զտապն վաղեմի կարօտութեանց
մերոց. և մանաւանդ թէ ընդ նմա և ժողովուրդքն ըստ մեծի մասին զնոյնն յառա-
ջադրեն մեզ աղաչանօք, առ որս բաց ասելն կոպտութիւն իմն է յոյժ մեծ: Եւ Պատ-
րիարգ յակոբ վարդապետն ևս գրեաց առ մեզ ի ձեռն յիշեցելոյն զգիր սիրոյ և յար-
գանաց. բայց մեք չպատասխանեցաք նմա բան ինչ մինչև ցայժմ. և մի վարկցի այս
լինիլ աղագաւ ըմբոստանալոյ, այլ վասն այլ իրի իմիք՝ որ է մասնաւոր համանկա-
տութիւն ինչ. քանզի ասէ ոմն ի բանաստեղծից այլազգեաց. կեանն օլուր աչըքը չէյ տայէ
տիւչէր խտիղնա: Տեղւոյս ամենայն իրքն և իրակութիւնք վայելեն զբարի յաջողութիւնս,
մեայ միայն՝ թէ սակաւ ինչ երկեցուցանէ զյոգունս չչուկն մահուան, զոր թէև իցէր
նուազ, յուսամ յԱստուած թէ այսուհետև իսպառ սպառելոց է ամենևին: Եւ թէպէտ
զառաջին քստմնիլ տեսանելոցն ոմանք ի մերայնոց զէմպէրէկաբեկից հանդերձ պատրօքն
տեղւոյս վասն մտանելոյ իմ յեկեղեցին Հայոց, իսկ մինչ յարեցան և խօսակցեցան ընդ
մեզ ի ձեռն յաճախ երթևեկութեան, գիշան ի կարծեաց և ի կասկածանաց իւրեանց, և
հետևաբար ունին զիս իբրև զիւրեանս. բայց բոլոր ամբողջ և ուղիղ ուղղափառքն իբրև
տեսին և իմացան զայս՝ գրեթէ ի մեծի ուրախութեան պարուրեալք եղեն, և գոհացան
որ այլապէս ոչ եղև. վասն զի յետ կորուսանելոյ զշահն, հետևիւր յայնմանէ մեծագոյն
վնաս, որպէս յայտ է ինքնին: Օրհնեալ լինիցի տեղւոյս ցովսէփ վարդապետն միսիո-
նար՝ որ է համաձայն մերային դիտմանց, և պատերազմակից է ընդ մեզ ընդդէմ ներ-
հակ կարծեաց ըստ ամենայնի, որոյ վասն առաւել սէր և պատիւ եցոյց և ցուցանէ
միշտ դէպ առ անարժանութիւնն իմ. նոյնգունակ օրհնեալ խոճայ նահապետն ամալա-
բեան, և պարոն Անտրիասն ցաւակիր: Բայց քէօչէ պուճախ քրթմնջլեն ոմանք՝ ի ծա-
ծուկ՝ գաղատացիք ամենայիմալք, բայց զտանին նոցա ըմբերանօղք բազումք, որոյ
վասն և գլխաւորք նոցին գան և գնան առ իս, և մեք չհեմք զնոսա բարոյականաբար,
թէ չունի միաս մտանելն յեկեղեցին Հայոց: Վերջապէս վասն սուղ լինելոյ գրոյս ժա-
մանակի՝ ոչ կարացի յատուկ գրով ինչ ողջունել զՎեհապատիւ Մինաս Արհին զՀայրն
մեր ծերունի և կամ հարցումն առնել զամենայն կերալ բարեկեցութենէ նորին. վասն
որոյ զնոյն պարտաւորութիւնն իմ սոյն գրով ի ձեռն ցարգելութեան ձերոյ վճարել
տենջամ, ընծայելով նմա զփրկչածիր ողջոյնն, և խնդրելով ի նմանէ զսուրբ աղօթս
փոխարէն: Զնոյնն ասեմ և վասն բնաւից համաշունչ միաբանից Սրբոյ Մենաստանիդ՝ ի
մեծամեծաց մինչև ցփոքունս: Պարոն խաչուկ սիրեցելոյն իմ և ձեր՝ սիրով մեծաւ ող-
ջոյն ընծայեմ ի Քրիստոս: Հայր Մկրտչին իմ, և Հայր Վրդանիսին սերտ սիրով ողջոյն
ընծայեմ. բաւ է:

1754 ի յունիսի 17

Սարգիս Վրդ. և Արքեպիսկոպոս
ի Զմիւռնի

ՃԼԶ.

Սարսափելի երկրաշարժի մը նկարագրութիւնը կը կարդանք Հ. Զաքարիայի հետևեալ թուղթին մէջ: Ունի Հ. Միքայէլ ևս նոյնին նկարագրութիւնը, ուր «իբրև ողբվեալ սաղմոսի չափ տեսանց» կ'ըսէ՝ նոյն օր պատահած երկրաշարժներէն միոյն համար, ինչպէս նաև կրկինը կը նշանակէ տեղի ունեցած մահերուն, ըսելով թէ «առնչի քան զհազարս մարդիք վեռան», թերևս միանգամայն առնելով զանազան պահերու մէջ եղածները:

Գերաւեծար գերյարգելի Աբրահոր սերոյ և բարեւնապետի
Տեառն Տեառն Ստեփաննոսի վարդապետի հանդալ ի տէր

... ի սեպտեմբերի 2, եղև չարժ մեծ ի ստամպոլ (յայն օր գրեթէ ոչ բնաւ դադարեցաւ) և կործանեցան և փլան քեաւկիրպինայք. եյտի խուլէին միոյն կէսն վերուստ ի վայր փլաւ, զոր և աչօք տեսի. երկուցն ևս մի մի անկիւնքն ի վերին կողմն փլան. և 2 հովիւք ի փլատակսն կորեան. բազում մինարէից չէրիֆէչէն ի վեր փլան. և ումանք ծռեցան, և կէսք բոլորովին փլան. չարսըն և խաներուն պատերն ճաթռտեցան, ումանք խանք և բաղանիք փլան. սուլթան մէհէմմէտ ճամիսին գրեթէ պէրպատ եղև. բխերիկք բազում փլան. ի ստամպոլ աւելի քան զհինգ հարիւր ոգիս ի փլատակսն կորեան։ Հոդոյ պատառումն չարժմանս այս եղև ի յատապազարն, որ ատապազար բոլորովին ամենայն չինուածովքն և մարդկամբն կորեալ են, և ի տեղին չուր բղխեալ է։ Ցայն ատապազարին կողմանս և այլ գիւղք աւեր եղեալ են, և անհամար ոգիք մեռեալ։ Այս 15 օր է, դեռ չարժն ոչ դադարի. յամենայն օր մի կամ երկու և երեք անգամ փոքր փոքր չարժք լինին։...

Ցամի տեառն 1754
Սեպտեմբերի 17
[կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հայր Զաքարիայ

ՃՀԷ.

Սուլթան Օսման Գ.ի թագաւորութեան շրջանին մէջն ենք։ Նոր մեծ վէզիրը «Հէքիմօղլու Ալի փաշան՝» Բէօթահիայի կուսակալ Հէքիմզատէ կոչուածն է, որ այդ ժամանակին՝ միակն էր իբր արժանաւորագոյնը եպարքոսութեան պատուոյն։

Գալով սաստկասառոյց ցրտութեան՝ բնաւ չափազանցութիւն չի կայ Հ. Զաքարիայի նամակին մէջ, որովհետեւ սոյն եղանակին արտասովոր դէպքը պատմութեան մէջն ալ ակնարկսւած է։

Գերաւեծար գերյարգելի Աբրահոր սերոյ և Բարեւնապետի
Տեառն Տեառն Ստեփաննոսի վարդապետի՝ հանդալ ի տէր

Թուղթ ԽԱ.

... ի Յունվարի 19 եղև դարձեալ զեռնաշարժ մեծ յստամպօլ. և միայն ի պալըքպազարն մասն ինչ ի բերդէ քաղաքին փլաւ։... Սէրգիս վարդապետն՝ որ այտի եկն, և կայ և քնակի ի պատրիարքանոցն մինչև ցայսօր ոչ խօսեցաւ և ոչ խօսի զբան ինչ ընդդէմ մեր. նա մանաւանդ որպէս լսեմ զբարիս խօսի զմէնձ և զվանքէն, երկու և երեք անգամ միջնորդութեամբ մերոց ուղղափառ եղբարց զողջոյն սիրոյ մատուցեալ է ինձ. դեռ չեմ տեսեալ զնա և խօսակցեալ ընդ նմա։ Ի փետրվարի 4 փոխեցին զվէզիրն և զայլ ոմն եդին ի տեղւոջ նորա, այսինքն է զհէքիմօղլու ալի փաշան, որ յամս մեռեալ թագաւորին երկու անգամ վէզիր եղեալ էր. և այս երրորդ անգամ է, որ վէզիր եղև. բայց դեռ ոչ էհաս յստամպօլ, այլ ի ճանապարհի է տրապիզոնոյ գալ այսր. ամենեքեան ասեն թէ երեք անգամ վէզիր եղեալ ոչ զոք գիտեմք։ Ցայս ամ եղև սաստիկ ձմեռն և պաղ. աստ յստամպօլ այնչափ մինչև սառեցաւ ծովն քաղքիխանային. և ի վերայ սառին քայլելով մարդիկ անցին ի խաս քէօյէն ի պալատ։ Հայր Վրթանէսենց տանն առաջի ծովն ևս սառեցաւ մինչև ի դրացեաց տան նոցա մանկունք քայլէին ի վերայ ծովուն և երթային ելանէին ի Ֆէնէռին իսկէլէն։ Ի ուռումէլի և ի յանատօլու ևս որ-

պէս լուաք եղեալ է սաստիկ ցուրտ և ձիւն այնչափ մինչև սառիլ բազմաց ի ճանապարհի։...

Ցամի տեառն 1755
փետրվարի 17
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հայր Զաքարիայ վարդապետ

ՃՀԸ.

Իրրեւ Յառաջաբան — Ջեկուցում պիտի ծառայէ հետեւեալ շահեկան նամակը՝ ընծեղ. ժԴ.ի հռչակաւոր կոնդակին հայերէն թարգմանութեան, որոյ մասին Մելգոնեան կ՝ըսէ ուրիշ թղթի մը մէջ առ Հ. Իգնատիոս. «Մեք թարգմանեցաք և ահա յաւուրս յայսոսիկ տամք նունցին և յղէ ի Հռոմ» (Գր. 1755 սեպտ.ի 9)։

Թարգմանիչն է Հ. վրթանէս Ակէրեան. ու գրքին Բ ճակտին վրայ մատիտով գրուած ծանօթութեան մը համաձայն՝ Ս. Աթոռը զայն տպագրել տուած է տոյն 1755 թուականին ի Հռոմ։ Նոյնը երկրորդ անգամ հրատարակուած է վենետիկ[1]։

Մխ. Մատենադարանիս ստանձնած այս օրինակին վրայ մատիտով գրուած է նաև. «Յովսէփ Ստեփանեան Աղրի եպիսկոպոսէ Եղեսիոյ մայրաքաղաքի առաքեցաւ գիրքս»։

Վերապատուելի Տէառն Հ. Մխիթարի վ.դ.ին ողջոյն սիրոյ ի տէր

... յաւուրս յայսոսիկ, կոչեաց զիս նունցն, և ընթերցաւ առաջի իմ զթուղթ ինչ սուրբ ժողովոյն, յորում յանձնէր մեզ ինքն սուրբ ժողովն, և Սրբազան Հայրապետն հրամայէր, զի մեք թարգմանեսցուք զփոքրիկ գիրք ինչ ի լատինէ ի հայ բարբառ. և ապա տպեսցուք և տարածեսցուք յարեւելս. այս փոքրիկ գիրքս է շարադրեալ ի նոյն սրբազան Հայրապետէն, ըստ կերպի կաթուղիկեայց Գրոց առ միսիօնարս, որք գնան յարեւելս, և կամ միսսիօնարութիւն առնեն ի վերայ այլոց ազգաց. յորում խօսի վերաճռովք, և այլ փաստիւք պարտաւորելով զամենեսին, զի իւրաքանչիւր ազգ ի ընդունեալ և ի թոյլ տուեալ Ումիսի կացցէ և մնասցէ, և զի միսսիօնարք ոչ լինին կարօղք փոփոխել տալ զՎէսս ուղղափառ լինողաց, և զի եկեղեցին սուրբ կամի, զի իւրաքանչիւր ազգ ուղղափառք լինին, և ոչ թէ լաթինք։ Եւ մեծութիւն գրքին է վեց տապաղայ փոքր մի հս աւելի։... Եւ զայս գիրք նախ թարգմանեալք և յղեալք ի հռոմ, և նորա տեսանեն. և ապա տիայն լինի։

1755 յօգոստոսի 23
[Վենետիկ]

Նուաստ ծառայ
Ստեփաննոս վրդ. Աբբահայր

ՃՀԹ.

Իր տեսակին մէջ եզական է հետեւեալ պատմութիւնը։

Յիշեցնենք միայն, որ այդ միջոցին Աւստրիոյ գահակալը՝ ակնարկուած «իմ բարեթոռ»ն էր Մարիամ Թերեզա, իսկ ի Ռուսիա՝ Եղիսաբեթ։

Գալով նամակագիր Մեսրոպ Աբք. Փեահլիա Աբրահեանի՝ սա Հռոմի կը գտնուի 1742–էն ի վեր[2], իր ձեռնադրութեան անվաւեր ըլլալու խնդրոյն լուծումը Ս. Ժողովքէն ընդունելու համար[3]։

---

1. Բազմավէպ 1914, էջ 379, 417։
2. Գալեմք. «Կենս. Սարգ. Աբք. Սարաֆեան», էջ 376։
3. Անդ, էջ 219։

Ընդ բարեկամ և բարերար Աբրայ
Գերյարգելի հօրդ ողջոյն յիսուսաւանից

1755

Ընկալայ զգիր յԱրգելութեան ձերոյ յամսեանն նոյեմբերի, սակայն մին չարաթ մատցեալ էր ի Բոստան։ Այդ կարի չնորհակալ եմ ի ձէնջ, զի զՀայրութիւն ձերոյ անպակաս առնէ յինէն, զի ընկալայ ևս զգիրն զնաստակար ի մօրէ իմմէ գրեալն։ Ուստի զպատասխան նորա եղաք յայսմ թղթի մէջն և դուք ի փառս տեառն առաքեցէք ուր գրեալ է, զի պարտ է մխիթարել զնա բանիւ, զի հրակիզեալ է տունն մեր, հետեւապէս մտածելի է զցաւս սրտի նորա։ Միւս ևս զոչ իմոն միայն գրեմ առ ձեզ, այլ և գրեմ զնովիթմայ[1] զիմն նօթիցիայ[2], վասն զի եկն աստ ոմն վրացի ազգ անուն կօրկի Ծիթելի, ի հոկտեմբերի 12. որ սա իցէ Գանձասպեա Շահ Գահմազի, և իչխան ի տանն Խորասանայ Մաշատ քաղաքին, զի ունէր ընդ ինքեան վկայական գրեալ ի կարգէն կաբուճիցոց ի աստրաբան քաղաքէն։ Այսպէս իբրեւ ուխտաւորական անձնարարական գիր ինչ։ Եւ անտի էհաս ի Պէչ քաղաքն, և անդ էառ յիմբարաթոռէն զգիր ի վերայ մոսկոֆ թագաւորին պատճառաւ վասն բերրելոյ զապրանս և զամենայն տունն նորա, և բնակիլ աստ և անդ յերկիրս ուղղափառաց։ Եւ անտի էհաս ի Հռօմ եկն առ յիս և տեսաք զամենայն վկայականս նորա և զնամակն իմբարաթոռին կնգեալ. աստ այս էր փափագ նորա եթէ պապն ևս առցէ անձնարարական, զի դիւրաւ լիցի իւր նորա, և պապն պատասխանեաց ոչ կարեմ գրել նմա զի թշնամի իմ է։ Դիտելի է, այս անձն աստ պապին ծանոյց եթէ ունի մին միլիոն և կէս մանէթա ռօմանօ և այլք. վերջապէս սա անձն ընդ իմ ուներէր զհաց 34 աւուրս։ Եւ մերայինք հայք լցանեաւ ամենայն նախանձութեամբ, զի կարի տաժանեցաւ ի Հռօմ անուն այս կորկի խանին. վերջապէս տէր յովսեփն դասցոյց զսա անձն և գրաւեաց իբրև առնոյ ի պապէն զգիր վկայական, այսինքն յանձնարարական, զոչ գիտացեալ զկերպն եթէ մնք որով կերպիւ ընթացաք մինչև ընդ պապին խօսեցաք, իսկ նա յետ խնդրելոյ անձնարարականի գրեալ էր զդրամս վասն ճանապարհի. յորժամ լուաւ պապն անկաւ զամենայն իստիման[3] կորկի խանին և եղև խայտառակ Հռօմայեցւոց։ Ուստի յորժամ ես խոսէի ընդ քարտինալ վիքարին, միշտ հարցանէր ինձ ի կողմանէ դրամի, պատասխանէի նմա մին ըստակ և կամ հասատ ոչ կամի, զի ունի, իսկ նա ոչ այնպէս այլ անցոյց ի թիւս աղքատաց զնոյն անձն և այլն. այսպէս ամաչեալ եղ և գնաց կորկինն ի Օլանտայ։ Նաև կամիմ յղել 5 ոսկի մօրն իմոյ, բայց աստ ոսկին է պապական. խնդրեմ խորհուրդ ի ձէնջ եթէ զորն առնեմ, միայն ընդ ձեր կարելի է. ողջ լերուք ի տէր։

1755 *ի սեպտեմբերի* 6
[Հռոմ]

[Մեսրոպ եպս.] Գեհայ արապեան

ՃՁ.

Թուրք պատմագիր Վասըֆ էֆէնտի իր գրուածոց մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի համարած է հետագայ ահռելի հրդեհը՝ զոր այնքան խնամքով մեզ կը տեղեկագրէ Հ. Զաքարիա վարդապետ։

Ըստ Հ. Իզնատիոսի՝ սոյն հրդեհը «եղեւ ի 27 սեպտեմբերի ի 6 պահու գիշերոյն» (Գր. առ Մելգոնեան, 1755 Հոկտ. 9)։

---

1. Նորութիւն։
2. Լուր։
3. Stima = յարգ։

Գերաւեծար գերյարգելի Վրբաձօր մերոյ, և Բարեհաւատկտի
Տեառն Տեառն Յովհաննոսի վ.դ.ի՝ ողջոյն ի Քրիստոս ի տէր մեր

Թուղթ Ժ.

... Ակնէս անուն ծերացեալ մարապետն (որ զմարապետութիւնն առեալ էր ի ձեռաց լուսահոգի Մխիթարայ արբաձօր մերոյ) մեռաւ...: ի սեպտեմբերի 28 եղև եանղըն մեծ և զարհուրելի ի ստամպօլ, որոյ նմանն ի վաղուց չէր եղեալ. և տևեաց ժամս 35 և սկսաւ ի պախճայ խափուէն զայրացեալ սաստկութեամբ հիւսիսային հողմոյ հնչելոյ. և ընդ երկայն գնաց առ զառիվեր լերամբ և առ զառիվայրօքն մինչև մօտ ի յախըր խափուն. և ընդ լայն տարածեցաւ այսպէս, մի ծայրն սկսեալ ի պախճայ խափուէն այրեաց գոռնոս, որ առ պարսպօք Թագաւորական պալատին մինչ ի յայա սոֆիա. և անտի մինչ ի յախըր խափուն. իսկ միւս ծայրն լայնութեան դիմաց առ մահմուտ փաշայինն այրելով և գնորաշէն տունս և զկրպակս հրէից իննն ամսով յառաջն ի հրդեհէ այրեցելոց և չինեցելոց. և առ չուխաճի խանաւն, և առ մահմուտ փաշայի ճամբոնն. և առ վէզիր խանաւն. և առ աթ մէյտանաւն իշանելով առ աւերակօք հրդեհին եղելոյ երկու ամսօք յառաջ ի խատիրկայ իլիմանն. և անտի մօտ ընդ փոքր այայ սոֆիայիւ մինչ մօտ ի ախըր խափուն: Այսոքիկ ամենայն ասացեալ տեղիք այրեցան, այրեցաւ և փաշայ խափուսին, և այլ անբաւ պալատք մեծամեծաց և խօնախք ըրիճալլերուն. և անհամար տունք այլազգաց, այրեցաւ և պաթման սարայներն. մահմուտ փաշային մէրքէմէն. մէնկէնէնոցն. հին ճէպխանէն. մէկ մինարէն սուլթան ահմէթին և այլ բազում ճամիներ: Գրեթէ հինգերորդ մասն ստամպօլու այրեցաւ, և այն ըստ տեղւոյն. իսկ ըստ հարստութեան տանց և ըստ պատուականութեանն գրեթէ կէսն ստամպօլու, զի այրեցաւ ծուծ քաղաքին: ի քրիստոնէից տանց և ոչ մի այրեցաւ. միայն եղև նոցա ընաս ի խանն յայրեցմանէ փէչէներուն որ ի նմին: Ութն օր յառաջ քան զայս մեծ եանղըն, եղև եանղըն ի խուզխունճուխն ի հրէայս. և այրեցան կէս տունքն եալըներուն, և ընդ ներքին կողմն գեղջն բազում տունք, և ընդ ամէնն աւելի քան զհարիւր տունս:...

Ցամին տեառն 1755
Հոկտեմբերի 16
[կ. Պոլիս]

Ղուաստ ծառայ
Հայր Ջաքարիայ վ.

ՃՁԱ.

Սրբուհի Եւփիմէ, որուն ոսկերաց հրաշքով փոխադրութեանը պատմութիւնը կը տրուի հոս, Քազվեդոնէն էր՝ Դիոկղետիանոս կայսեր ժամանակ:

Գերապատիւ և ամենապայծառ տեառն Ա.ն.

Ցայտ լիցի գերյարգութեան ձերում, զի մինչև ցայսօր արգիլեալ կամք ի ռօվինիայ գրեթէ ի մայրաքաղաքն Խստրիայու...: Միանգամ առ տարաւ զմեզ նաւապետն ի մայր եկեղեցին անուանեալ սրբոյն Եւփիմեայ, զորոյ և զմասունսն տեսաք եկեալ այսր հրաշիւք. քան զի յաւուր միում տեսեալ ի քարուտ եզերն սորա հազար ամ յառաջ զմեծ արկղ մի քարեղէն եկեալ ի վերայ ջուրց իբրեւ զնաւակ, փակեալ յամենայն կողմանց. և ազդ արարեալ մեծամեծաց, լծեալ են զբազմութիւն եզանց ի քարշել. բայց չէ լեալ հնար գէթ փոքր մի շարժել զնա: ի միում գիշերի մանուկ մի փոքրիկ միածին մօր իւրոյ տեսեալ է յանուրջս ասել նմա, թէ եթէ ձեր երկու եզինքն լծեսցին, կարէ այն տապան մեծ շարժիլ. և նա թլուատ լեզուաւն պատմեալ մօր իւրոյ, վաղվաղակի լծեալ են զեզինս. և իբր զմի ձու երկոքին եզինքն սկսեալ են արշաւելով տանիլ. մինչև չըրջեալ քարեղէն տապանակն ի վերայ մանկանն, որ առ նովաւ գնայր, չախչախէ զնա, իսկ ցաւագին ծնօղն դիմեալ ի պարփակեալ սուրբն, իսկոյն նորաստեղծեալ է մանուկն,

և ի ձայն մեծ աղաղակեալ, թէ մարմին սրբուհւոյն եւփիմեայ է ի տապանի աստ։ Իսկ քաղաքն ռօվինիայ ըստ անուան իւրոյ է հին և փլփլեալ, և աղբովք լի։ Կայ ի նմա ըստ որում ասացին չորեքտասան հազար արք, և նոյնչափ ևս մանկունք, որպէս և մեք աչօք տեսաք, զի ի հրապարակս նորա հարիւրաւոր մանկունք զմեօք կուտեցան...։

Ցամի տեառն 1756 յունվ. 14
[Ռովինիա]

Նուաստ ծառայ
Հ. Մկրտիչ [Անանեանց]

ՃՁԲ.

Մատենագրական յարգի ծանօթութիւններ կու տայ նամակս, գլխաւորապէս Հռովմայ մէջ տպագրութեան յանձնուած Մծբնայ Հայրապետին գրքին առթիւ։

Գերյարգելի Տեառն Տեառն Յակոբայ Եպիսկոպոսի Աբբայ Հօրդ
ի տէր խնդալ

Ընկալայ զգիր Գերյարգելութեանդ զգրեալն ձերոյ ի մարտի 6 1756։ Արդ ազաչեմ զձեզ, զի բազումք եղեն նեղութիւնք յինէն առ ձեզ հասեալք, զորս բերան իմ վաղվաղակի յայնքան չուտով բառնայք ոչ սակաւ։ Ա՛ւ այն ասեմ վասն հայրական գթութեանց ձերոց ոչ սակաւ ընկալաւ անձն իմ, կարի յոյժ չնորհակալ եմ ի ձէնջ, ոչ սակաւ։ Արդ լուայ յանցեալ չաբաթոջ ի բերանոյ տօն ստեփանի եղբօրն Հայր Մաթէոսի, եթէ Դուք թարգմանեալ իցէք զէնջիքլային. ահա՛ նշան զի պատմեաց ինձ սակաւս, զայն բաչաղմունս յոմանց ոչ էք եղեալ, այսինքն իբրև նորածին երախայքն մեր եթէ ոչ ճաշակեսցեն ի մարմնոյ տեառն յիսուսի ի ժամ մկրտութեան իբրև զրկեն ի կենաց փրկութենէ որ է սուտ։ Այսպէս մինչև ցայս կէտ ոչ յիշեցի և ոչ ծանեալ բնաւին այնպէս յայլոց լուայ, զոր գրեալ էիք լինիլ այսպէս։ Արդ ի վերջն մարտի ամսոյս տպի նոյն էնջիքլիքային, զի Մծբնայ սուրբ Հայրապետն ի գիրքն լինի վերջ։ Արդ վասն համբաւոյ ազգիս մերոյ ասեմ, զի պարտ է ձեզ մանաւանդ, զի գրեալ ծանուցէք առ փրօփականտաֆիստէն առ մօնսինեօր անտօնէլլին, զի նա է գործ ածող, վասն տպման նոյն գրքոյ Մծբնայ հայրապետի և ոչ կամի նա ըստ մերոյ բանի, վասն զի ես ծանուցի նմա եթէ սրբազան հայրապետն զայն գրեաց յառաջ քան զժողովն նիկիոյ, նաև հօրքեռ որդի է սրբազան լուսաւորչիս մերոյ. այսպէս ոչ հաւատայ. և զայլ ի՞նչ կամի դնել յառաջաբանութեանս նոյ[ն] գրքոյ որ ոչ է հաւաստի։ Արդ յոլքան յայտ է, զի ոչ յիշէ զժողովն նիկիու ի մէջ նոյն գրքին իւրոյ, զի յառաջ գրեաց. նաև մինն էր նա 118 հայրապետաց անտի։ Ի փառս տեառն յիսուսի օգնեցէք՝ զի մի սխալմունք ինչ լիցի ի մէջ նոյն սըրբազան գրքոյս մերոյ, և մի լիցի պատճառ կատակմանց ի ներհունաց մերայնոց և այլն։ Արդ իրաւի անբախտաւոր եղև ազգն մեր ի մէջ այլ Քրիստոնեայ ազանց, սակս զոչ տալ նելովս չատագովական խնամս մերոյ համբաւոյս, այլ խոյս տուեալ կրեցաք և կրեմք ծաղրականս հեգմունս յա[յ]լոց ազանց և մանաւանդ լատինացւոց, զի ոչ սակաւ աստ յիշեցին ինձ, ուր է ձեր վարդապետք և աւդօրք՝ գիրք չինողք. և ես պարծեցայ նոցա ասելով յետ սրբոց առաքելոց և յառաջ քան ժողով Նիկիու ընկալաք և ունիմք զայս առաջին աստուածաբանն ցակոբ Հայրապետն և այլն որ է ստոյգ։ Ուստի զայն կոլուտ պատրիարքին տրակն առ ձեզ կամիմ առաքեցուցանել զի ի կրկին ի ձէնջ թարգմանեսցի ըստ հարմարին զի յոյժ տղայաւիւր թարգմանեալ է և այլն։ Եւ այլ ինչ ունիմ գրել առ ձեզ, բայց սպասեմ ըստ պահանջմանն։ Ողջ լերուք հանդերձ միաբանիւք ի պարծանս յաբեթեան մերոյ զարմիս։

Մնամ պատրաստական ըստ ամենայնի
ես ծառայ
ցակոբոս Մեսրոպ
Ակյաէնց Քեահեայ արապեան
չնչին արքեպսկս. Լամբրոնի

1756 ի մարտի 6
[Հռովմ]

ՃՁԳ.

Յաեփաննոս Լեհացւոյ բառգրքին նկատմամբ, որուն շուրջ ասկէ առաջ ուրիշ նամակներ ալ գրաղեցան, Հ. Գէորգ Պաղտատեան հետեւեալ նամակէն առաջ գրած է նոյն տարւոյ մարտ 20–ին առ Հ. Իգնատիոս այսպէս. «Զտետրն բառգրքին բերի «և ետու Հ. Սիմոնին. և յոյժ հաւանեցան ամենեքեան. ուստի խնդրէ յեղբայրու- «թենէդ զի եթէ հնար է ջանասցես ի ձեռս բերել զբոլոր բառգիրքն, կամ օրինա- «կելով, և կամ գնելով. մեր Հ. Յովսէփին կարէ օրինակել։ Զայսմանէ մեզ բարւոք «տեղեկութիւն տայցես մանրամասնաբար»։ Իսկ ուրիշ տեղեակ վարդապետ մը վե- րագրեալ նամակէն վերջ Մայիս 4–ին հետեւեալը կը ծանօթագրէ. «Հ. կարապետն «մեր գրէ առ մեզ թէ բառգիրքն ստեփաննան է ստամպօլ, զոր առաքեալ են ի Լե- «հաստանու տպագրել տալ ստամպօլ. ուստի ո՛րչափ կարէք ջանացէք ի ձեռն բերել «զայն» (Իրեալ առ Հ. Իգնատիոս)։

Հետեւեալ վաւերաթղթէն պիտի իմանանք բառգրքին վիճակն ու գրական արժէքը։

Վ. Հ. Իգնատիոս վրդ.ին մերում կրօնակիից եղբօր
բազում սիրով ողջոյն խնդաւետ ի քրիստոս յիսուս

... Ընկալեալ և զերկուս թուղթս ի բառգրքէն ստեփանոս վարդապետի կամենցա- ցոյ զգրեալսն առ ի ձէնջ, յոյժ զարմացաք, զի ոչ կարծէաք. և թէպէտ գտանին ի նմա սխալանք, սակայն զիաւրդ և է լաւագոյն է քան զվիլօթին, և մեզ ծառայէ վասն լատին բառգրքին, և յայլ պէտս. արդ՝ աղաչեմ զքեզ հ. պատուական, զի չանասցիս ամենայն փութով ի ձեռս բերել զայդ բառգիրքն, եթէ գնելով, և եթէ օրինակելով դու, կամ հ. յովսէփն. այլ և տեղեկասցիս, միթէ բոլորն աւարտեալ է, թէ ոչ, կամ ո՞ւր գտանի, և այլն. արդ՝ այսմ ամենայնի տեղեկացեալ ծանուսջիք աբբահօրն, զի ըստ այնմ հրաման տացէ առնել, որ ինչ պարտ է. այսմ թղթոյ զպատասխանին փութով յղեսջիր առ մեզ։...

Անարժան ծառայ լանպիտան
Հ. Սիմոն վրդպ. Մխիթարեան

Ցամի տեառն Ի. Ջ. Ծ. Ջ. [1756]
ի մարտի ԻԲ

ՃՁԴ.

Շարք մը ժամանակակից պատմական ղէպքեր կը պարունակուին հետեւեալ վաւերաթղթին ալ։

Գիրապատիւ տեառն տեառն Յաեփաննոսի վարդապետի և սրբոյ հօր
մերում բազում սիրով և կարօտիւ ողջոյն

... Եկն այսր ի կոստանդնուպօլսոյ այր ոմն յարգելի վաճառական հաճի արութենի որդի տէօլուէթ անուն. սա պատմեաց մեզ, թէ աղէքսանդր կաթուղիկոսն վախճանեալ. և ընտրեալ են զահագինն ի տեղի նորա. և զսարգիս վարդապետն ի տեղի ահագինին յառաջնորդութիւն իզմիրու։... Զնաչխարհիկ բերդն վարատինու ի վեր քան զմիտս և քան զբան ամրանայ։ Արկին և զայլ հինն նորոգ բերդի ի մեր կողմն, յոր աշխատին անհամար անձինք զձմեռն և զամառն ողջոյն։ Արկանելոց են և զայլ նոր հինն երրորդ բերդի ի մեծի կղզւոջ, որ է հանդէպ վարատինու, ուր են անտառք ուռեաց. և այս ի փառս փրկչին, յամրութիւն հռովմէական սուրբ եկեղեցւոյ, և ի պարծանս քրիստոսասէր-

սակ անյաղթ կայսեր և թագաւորին մերոյ...։ ի պէլրղատ էլ բարկութիւնն աստուծոյ, քանզի ընդդէմ դարձեալ ալայհացւոց, որք էին վաշխառուք, այսինքն իրեք հարիւր վաթսուն մամէլէ է, որ առնէ տասնին երեք յամսեանն. և այսպէս ապականեալ զերկիրն. պօշնախք յարեան ի վերայ նոցա, և նոքա ամրացան ի բերդն. յայնժամ պօշնախքն դարձան ի տունս ի կրպակս, և ի խանս նոցա աւար հարին զամենայն, և եռուն նոցա ընաս յինչսն իբրև յիսուն հազար քսակի. զմի էնտազէ ինկիլիզի չուխայն իսկէռլէթ վաճառէին 2 մարիաշի, որ է 3 լիրէ. և գհօխայն խահվէին չորս փարայ, և այնչափ աղքատացուցին զմեծացեալսն անիրաւութեամբ, մինչ զի անհաւատալի է ի լսել. որ երկու հարիւր քսակի տէրն էր, առանց գօտւոյ սոսկ արեխաւ վարեցաւ ի պէլրղատու. զորոց զմին և մեք տեսաք աստ. որ յայլոց մուրացաւ զմի մարիաշ առ ի գնել գհաց, և ոչ տատակիլ ի քաղցու։ Իբրև այս համբաւ տարածեցաւ ի պօսնա, իսկոյն հաւաքեցան ի պէլրղատ պօշնախք աւելի քան զտասն հազար, և սկսան պատերազմիլ ընդ ալայհացւոց, որք ամրացեալ էին ի բերդի անդ, պօշնախք առին զերկուս պատնէշս բերդին և զերրորդն տկարացան ի յառնուլ։ Այս պատերազմ ոչ դադարեցաւ զամիս և զգիշեր իբրև զաւուրս 55։ Յայսչափ աւուրսն ալայհացիք ի յարքունի ձէպհանայէն ծախեալ էին զպարօթ և զայլ կահս պատերազմի իբրև վեց հազար քսակի. և այս ճշմարիտ է, քանզի ի կոստանդնուպօլսոյ եկեալ թախս էմինի, քննեաց և եգիտ այսչափ պակասեալ յարքունի ճէպհանայէն։ Ի պատերազմի անդ անկան պօշնախք եօթն հարիւր. ի յալայհացւոց սակաւք, քանզի էին ի ներքս բերդն։ Իսկ քաղաքն ամենեւին կործանեցաւ։ Հուսկ յետոյ եկեալ դափուճուպաշի և եէնիչէր աղասի խաղացուցին զպօշնախսն, և զալայհացիս հանեալ արտաքս վարեցին ի պէլրղատու և յամենայն սահմանաց պօսնայու և զգլխաւորաց նոցին զոմանց զգլուխս հատին, և զերեսուն ոգիս ունին ի կալանս, մինչև այլքն վճարեսցեն զինասն տուեալ արքունի ձէպհանէին։... Լուեալ եմք, թէ փորթոգալ ծածկեալ է ընդ հողով ի մեծէ գետնաշարժէ. եթէ ստոյգ է, ծանուցէք մեզ. ողջ լերուք։

Նուաստ ծառայ
Հ. Յովհաննէս վրդպ. պոնտացի

[1]756 մարտի 26
[Վարատին]

ՃՁԵ.

Փանի մը շահագրգռական մասեր ունի վաւերաթուղթս. նախ Մծբնայ գրքին տպագրութեան իրագործման շուրջ. երկրորդ՝ Հռովմ գտնուող Լիբանանցիներուն մասին, և երրորդ՝ վրացի կօրկի խանին արարքներուն վրայ։

Տեառն տեառն Գէորգարգսի Աբբայ հօրդ մերոյ ողջոյն սիրոյ և պատուոյ

Ընկալայ զպանծալի գիր ձերոյ ցարգելութեան ի մարտի 27, 1756, տեղակացեալ ըստ ամենայնի, և մխիթարեցայ ոչ սակաւ զորս ծանուցեալ էք։ Նախ առ այն պատասխան զի յառաջ գրեալ էիք սակս թարգմանութեան էնջիքլիքային և պահել ինձ ի ներքոյ լռելեայն, զոր արարի նոյնպէս մինչ յայլոյ լուայ, և ապա գրեցի առ ցարգելութիւնդ։ Երկրորդ եմ պատրաստ առ ի ծանուցանել ձեզ զվերջանալն սրբազան Հայրապետիս մերոյ ցակոբայ վասն գրքին նորա, որ է վերջին յայսմ մարտի եզերի. և ապա սկսանի էնջիքլիքան. թէպէտ վերջացաւ, բայց զբոլորն նախերգանաց տպեն այժմ. զի ոմն Եպիսկոպոս յազգէն յասորւոց գրեալ է վասն վարուց սրբազան Հայրապետիս նոյն ցակոբայ, լադին և յունաց լեզուաւ զիմն գիրք ի նմանէ հանեալ շարակարգէ ի Բրօբականտան, բայց ոչ գիտեմ եթէ որպիսի գնայ։ Երրորդ զկոլոտ Պատրիարգի կոնտակն յայնժամ թարգմանեալ են ի Հայէ առ իղալի զորս զերկուսն օրինակեալ եմ, այժմ են ընդ յիս։ Իսկ վասն լիբանա[ն]ցւոց այս է. յայնժամ գրեցի առ ցարգելութիւնդ, որ էր ճշմարիտ, զի բնաւին

ոչ մնացին եթէ ոչ մինն ի նոցանէ Գաբրել անուն կրօնաւոր եզակի մնաց ի Հռոմ, և ապա յովսէփ վարդապետ և այլք 4 անձինք գնացին, նաւեալ ի լիվօրնայէ ի լիբանան. որք էին կրօնաւորք. իսկ յերէքն ի նոցանէ դարձեալ եկին ի Հռոմ որք բնակին ի Հայոց յեկեղեցին այժմ: Բայց զայն յուսան որ է անհնարին ասա, բայց զայս մակ զանուն ընկալան ի լադինացւոց կոչելով պիկանթօնի և կալուբբինի և այլն: Վերջապէս ինձ երևի թէ իրք նոցա ի վատն գնայ կարի յոյժ և այլն, զի ոչ ինչ է ի ծածուկ որ ոչ յայտնե|ս|ցի և այլն: Միւս ևս վրացի կորկի խան կոչեցեալն այժմ ի Հռոմ մուրանայ, զի պատճառն է վասն բարձր թրչմանն նորա, և արար զինքն խայտառակ ի Հռոմ: Վասն զի նախ գրեաց առ պապն իբրև ունիլ 3 և կէս միլեօն ըսկուտ մօնէթայ ոսմանօ, և ոչ խնդրել զիր ինչ ի պապէն, եթէ ոչ զիմն յանձնա|րա|րական քարտեզ առ մօսկոֆ թագաւորն, պատասխանեցաւ ոչ կարեալ: Դարձեալ խնդրեաց նոյն կորկին ի պապէն առ ի առաքել զիմն քարտեզ առ նոյն մօսկոֆ թագաւորն զոր առաքեալ էր զնա ի յիմբրա֊թօռէն ի վեննայ պատասխանոյեցաւ ոչ կարել. այսպէս 44 օր ձրի էկեր և էարբ ընդ իս. և ապա չ|մ|բեցաւ գնա. և ապա էնկիւրեցի տէր յովսէփն իբրև ինքենեայ կարող յայնքան զի երկուքն եղեն խայտառակք վասն անխոհեմութեանն և այլն: Եւ այլ յոյժ փափագիմ իմանալ զի այժմ զինչ ապէք և ի կատար ելանելն բառգրքին միւսոյ: Եւ դարձեալ աղաչեմ զձեզ հանդերձ միաբանիւք ձերովք յիշել միով հայր մերիւ և ողջունիւ վասն դիտաւո֊րութեան իմոյ զի տէրն զոր կամի զայն արասցէ ամէն. ողջ լերուք հանդերձ միաբանիւք ձերօք և օրհնեալք:

Գերյարգելութեան ձերում

1756 ի մարտի 27
[Հռոմ]

Յակոբոս Մեսրոպ քէհեա Պրապեան
Արքեպիսկոպոս Լամբրոնի

ՃՁԶ.

Յինչիքլիքա կոչեցեալը (ինչպէս քիչ մը վերն ալ), կը հասկցուի անշուշտ Բենե֊դիկտոս ԺԴ-ի առ արևելեայս գրած թանկագին թուղթը: Հետևեալ մեր վաւերագրին մէջ կը ցուցադրուի վատիկանեան սեմերէն ներս հայկական թարգմանութեան ստացած գնահատութիւնը, ինչպէս նաև ազգերնիս շահագրգռող քահանայապետական ուրիշ կարգադրութիւններ:

Տեառն տեառն Գերյարգելի վերոյ պաճծալի Աբբայ Հօրդ ողջոյն և սէր ի տէր

Յայտ լիցի Գերյարգելութեան ձերոյ, զի յանցեալ չաբաթի գրեալ էի զթուղթ շնոր֊հակալութեան առ մօնսինեօր անթօնելլի, վասն տպման գրքոյն սրբոյն Յակոբայ մծբնայ Հայրապետի: Եւ յետ շնորհակալութեանս տուեալ էի նմա զլոյս, սակս վարուցն և աքանչելութեանց նոյն սրբոյ, նաև գրելն զնոյն գիրքն յարաչ քան զժողովն նիկիու և լինելն նորա նէբոթ յերիցս երանեալ սրբոյս մերոյ Գրիգորիոսի Լուսաւորչի, որ և նշանեալ էի ի մէջ քարտիզին իմոյ զգիրքն մեղրածորան Գրիգորիոսի Նարեկացւոյն, զի եթէ նա գրեալ է վասն նոյնոյ սրբազան հայրապետին մծբնայ աքանչելութեանց և այլն: Արդ այսօր ընկալայ զպատասխան ի նմանէ զարմանալի շնորհակալութեամբ զինէն, և խնդրեալ էր յինէն զգիրքն սրբոյն Նարեկացւոյ, եւտու նորա սերվիթօռին, նաև գրել էր վասն իմ առ ի զնալ առ ինքն, ուստի յորժամ հասի, տեսի զնա յոյժ ուրախ անպատմելի: Նաև զձէնջ արարի զբազում չատագովութիւնս հաւատարիմ և իմաստուն, և ամենապարկեշտ սրբարար, որ է ստոյգ. տէրն պահեսցէ: Արդ նոյն մօնսինեօրն գրելոց է առ ձեզ զի յոյժ պատեցի սաստկութեամբ ասելովս վասն ձեր, զի դուք կարող էք զամենայն խաւարս բերել ի լոյս, ծանուցանելով և թարգմանելով, զի ասա ոչ զոյ ըստ բանին հարկաւորու֊թեան և տեղեակք որպէս վայելէ և պահանջէ իրքս և այլն: Որ և նոյն մօնսինեօրն եղոյց

ինձ այսօր ձերոց Թարգմանեալ զէնջիքլիքային մարգարտաշար նոտր և բոլոր և երկաթագիր տառիւք յոյժ գովելի և չնորհալի զոր մինչև Պասն տեսեալ է, որպէս մասունք պահեն զնա։ Նաև այսօր նոյն մօնսինեօրն պարգևեաց ինձ զբազում գրեանս որք են հարկաւորք ինձ. այլ և նորապէս գրեաց յետ էնջիքլիգային ներկայ Պասն, որք հայկ[.] քահանայք ոչ ոք կարէ այսուհետև հրչակել զերիս պատարագս յաւուր Ծննդեանն տեառն մերոյ փրկչին, որ է տասն Թուղթք դալիանաբար. զսա ևս հարկաւոր է Թարգմանել վասն հարկաւորութեան մերոյ զարմիս և այլն։ Արդ կարծեմ Թէ լաւ եղև վասն Ծիսին մերոյ ոչ կարել պատարագել զերիս որ եղէ ես պատճառ, վասն զի յամենայն Բրիմա կլասի տօնիցն լաթենացւոյ հրաւիրեալ զնամ առ սուրբ Պետրոսի Պապական յեկեղեցի ի դասն չարս եպիսկոպոսաց և մանաւանդ ի գիշերի Ծննդեանն։ Եւ յայսմ ամի հ[իւ]րասի[րե]ցաք ի սանդայ մարիայ Պապական յեկեղեցւոյ և յետ ամենամեծ հանդիսութեան պատարագեցի զմի միայն պատարագ անդ, վասն պատուիրանի էնջիգլիգային, և յայսմ միջոցս ի ալիկուրնա ևս էանց վէճ վասն երիս պատարագին. զայս ամենայն լուաւ պապն վասն այսորիկ գրեաց և այլն. ողջ լերուք ի տէր հանդերձ միաբանիւք ձերօք։

Մնամ պատրաստական ըստ ամենայնի

1756 յապրիլի 3
[Հռովմ]

Յակոբոս Մեսրօբ
Հնչին Արքեպիսկոպոս Լամբրօնի

ՃՁԷ.

Մծբնայ հայրապետին շուրջ է դարձեալ հետևեալը. անշուշտ տպագրութեան գործին հետ ունեցած կարևորութեան համար։

Գերյարգելի Տեառն տեառն Աբրայ Հօրդ մերոյ ողջոյն ի տէր

Ցայտ լիցի ընդ այսու Թղթով եղև երէք զորս գրեցի առ ձեզ, զպատասխան զոչ ընկալայ. բայց զայս գրեցի հրամանաւ մօնսինեօր Անթօնելիին առ ձեզ։ Գանզի յոյժ խնդիր է ի նմանէ վասն վարուցն և աքանչելութեանց և ձեռնադրութեան, նաև զԱզգատոհմն ամենայն սրբոյն Յակոբայ Չօլքեռորդայն մերոյ լուսաւորչին Գրիգորիոսի, նաև յորում ամի ձեռնադրեցաւ և յումմէ զայս ամենայն խնդիր է ի նմանէ և ինձ ասաց գրեսակս ձեր Յարգելութեան և այլն։ Եւ ես ըստ կարեաց իմոց արտահանեալ եմ վասն կենաց և վարուցն նորա ի գրքէն սուրբ Սուրբ Գրիգոր Նարեկացւոյ, և ի Զէնօքէ, և ի Մօսէս Քերթողէ, և ի սուրբ Ներսէս Շնորհալւոյ։ Բայց այսմաւորք և այլք պատմագիրք զոչ ունիմ։ Ուստի մեծ է աղաչանք յինէն և ի նմանէ առ յղել աստ զխնդրեալս որպէս ի վերայ. ի փառս սրբոյն և ի պարծանս զարմիս մերոյ ողջ լերուք ի տէր։

Մնամ ըստ ամենայնի քումմ

1756 յապրիլի 10
[Հռովմ]

Նաւայ Քրիստոսի
Քեհեայ [Արքեպս.] Արապ օղլու հնչին

ՃՁԸ.

Նորէն Յարաքեանի մասին տեղեկութիւն մը։ —

Ինչ յիշուի նաև Նալեանի հրատարակելի մէկ գիրքը ընդդէմ Մխիթար Աբբահօր։ Թէ՛ ասոր և թէ առաջնոյն նկատմամբ Հ. Զաքարիա ևս տեղեկագրութիւններ ունի ապրիլ 18–ի գրով մը։

Ճարգոյապատիւ և գերապայծառ տեառն Յոհաննիսոյ վարդապետի և աբբայ Նօր խոնարհուրեամբ և սիրով ողջոյն

... վասն հայր մաչոցին բազմաց յանձնեցաք գտանել և բերել. սակայն անհնարին եղև ի ձեռս բերել. զի այն գտանի յարևելս ի վանս և յանապատս, զոր ոչ տան արտաքս, նաև ի պատրիարգարանին Թերևս գտանիցի. և զիարդ մարթ է անտի առնուլ զայն, և կամ տալ գրել: Այժմ փոքր մի հանդարտեցաւ քաղաքս ի հրդեհէ...: Դարձեալ աղմուկ անհնարին ի մէջ ազգիս հղև յարարից ահագին սահակ վարդապետին, զի ամենևին հակառակ եկաց Սարգիս վարդապետին, և յայս ամ ոչ երթալ նմա յատեան ելանել. և յետ լինելոյ իւր կաթողիկոս խօսեցաւ ընդ նմա խստութեամբ իբրև ընդ թշնամւոյ. ասէ, որպէս պատմեցին. կամի՞ս երթալ նստիլ յիզմիւրին: Իսկ նա ասէ, կամք ձեր է: Ասէ կաթողիկոսն. երթիցես յիզմիւրին. բայց տացես նախ զձեռագիր մի ինձ, զմիւս յակոբայ վարդապետին, և զերրորդն զրեսցես ի հռօմ առ պապն, եթէ ես սարգիս վարդապետս անարգեմ և նզովեմ զևոն և զպապն, որ այժմ կայ. ապա թէ ոչ չարձակեմ զքեզ անդր, զի մի միւսանգամ փախիցես ի ֆրանկստան: Իսկ նորա խոժոռեալ ընդ բանս նորա, ոչինչ ետ պատասխանի. և ել մեկնեցաւ յերեսաց նորա ի պէշիկտաշ: Եւ յակոբ վարդապետն լուռ ևեթ կայր ընդ բանս կաթողիկոսին: Նոյն յակոբ վարդապետն արարեալ է զգիրք մի ընդդէմ բանից լուսահոգի աբբահօրն վասն երկուց տեսակաց հաղորդութեան, եթէ պարտ է հաղորդել զժողովուրդն յերկոցունց. և զայն տալոց է տպել ի չորեքչաբթի աւուր զատկին, որպէս ասեն բազումք: Եւ սափրիչ յօհաննէսն ոչ դադարի ընդ համախոհից իւրոց պղտորել զմիտս բազմաց:...

յամի տեառն 1756 ապրիլի 13
ի կոստանդինուպոլիս

Ծառայ անպիտան և անարժան
Հ. իգնատիոս վարդապետ մխիթարեան

ՃՁԹ.

Հայկական պահքն վերաբերեալ խնդրոյ մ'առթիւ գրուած է նամակս:

Վերապատուելի Տեառն Հ. Միքայէլ վրդ.ին ողջոյն սիրոյ ի տէր

... վասն չփոթութեան ուղղափառաց, որ յաղագս ուտման ձկան ծանիր. զի իրաւի սոյն այս սրբազան պապս կարի վրէժխնդիր է զի իւրաքանչիւր ազգ զիւր Էջն պահեսցէ, և մի մոցեն ի Էջս Լատինացւոց. ուստի և վասն այսորիկ չարադրեաց զգիրք մի փոքր, իբր գիր առ համօրէն ազգս արևելեցւոց որպէս առաքելոց Կաթուղիկեաց գիրն. յորում պատուիրէ իւրաքանչիւր ազգաց կալ ի Էջսն իւրեանց, հաստատելով և ցուցանելով զայն ի զանազան և ի բազում վճռոց հռօմայ հայրապետաց. և ի սմին ասէ ևս ոչ է արժան հայոց ուտել զձուկն յաւուրս պահոց. այլ պարտին որպէս ազգն սովոր է պահել զպահսն ոչ ուտելով զձուկն, նոյնպէս և ուղղափառ եղեալքն ի նոյն ազգէն ոչ պարտին ուտել զձուկն. և իրաւի պարտաւորէ այս զխղճմտանս, որոց ունին զերկիւղն աստուծոյ: Եւ այս գիրք այժմ տպի ի Հռօմ...:

1756 ի մայիսի 6
[ի վենետիկ – Ս. Ղազար]

Նուաստ ծառայ
Ստեփաննոս վրդպտ. Աբբայ Հայր

ՃՂ.

Մեսրովբ վրեհայ Աղքեպս.ի նամակները կը շարունակեն իրենց այնքան կարևոր պարունակութիւնները: ի մէջ այլոց օգտակար խորհուրդներ կու տայ առ Մելգոնեան, Մխիթարեան աշխարհաբար բառգրքին մէջ նշանակելու համար քաղաք-

Ներու և ազգերու անունները՝ թէ ինչպէս կը կոչուէին ի հնումն և ինչպէս յետոյ, ըստ զանազան ազգաց։

Դերյարգելի տեառն տեառն մերոյ պաճծապի վանահօր Աբրահամ ողջոյն մեծաւ սիրով ի տէր

Ընկալայ զերկուսին գիրս ձարգելութեանդ յապրլի 15։ Իսկ զմիւսն ի նոյն ապրլի 29, և յամի տեառն 1756, և զամենայն զոյս գրեալ էիք հմտացայ վասն սրբոյն Յակոբայ, և մանաւանդ զանթռէչբրիայ գիրքն ծանուցի մօնսինեօր Անթօնէլլիին, նաև զհին այսմաւորի և զհին հարանց վարուց պատմեալսն ցուցաք նմա։ Իսկ նա բաւականեալ ծանուցմանն անթռէչբրիայ գրքին և մերոյ սրբազան քաջ հռետորին Գրիգորիոսի Նարեկացւոյն, և յայլոց հեղինակաց յոյն գրով, իսկ զմիւսն խոյս ետ, վասն զի յորում ամի գրեալք են ոչ են յայտ և յորմէ գրեալք։ Վասն այսորիկ մինչև ցայսօր ոչ կատարեցաւ գիրքն սրբոյն Յակոբայ. և սակս այսր յետս մնաց էնչքլիքան։ Իսկ վասն արգելման երեք պատարագին զեռոն ոչ է հարկ թարգմանել ի հայս ասաց մօնսինեօրն, բայց եթէ կամիկ ես առաքեմ առ ձեզ։ Արդ ոմն կարէ գրով և դեղով պատմել աստ եղեալ կոյ ի մէջ հայոց մերոյ զարմիս...։ Լիբանա[ն]ցի յովսէփ վարդապետն ի դուռն մահու է հասեալ, վասն զի բնթռուո[ա]սացեալ ցաւօք յանցեալ շաբաթի յաւուրն ուրբաթի սկսաւ, և բժիշկն ասեն յոյժ երկարանայ ցաւս այս և երկբայելի։... Վրացի կորկի խան ասացեալն պակասեցաւ աստի, այժմ ի ալիկուռնա փարբանջեալ զնաբէական սուտ զորումն անդ ցանէ։

Արդ յետ ամենայն բանիցս ծանուցանեմ ձեզ, և ոչ միայն ծանուցմամբ այլ աղաչել, վասն զի դէպ է և պատշաճ դնել ի մէջ նոր աշխարհաբար ի ձէնջ տպեցելոյ բառգրքին, ամենայն ճատուկք անուանց, այսինքն վասն քաղաքաց և վասն ազգաց, ի հնումն, իսկ այժ[մ] որպիսի կոչիլ և քանիցս փոփոխեալ ըստ բառբարին զանազան ազանց, այսինքն ըստ հնոյ. մերոյ մասամբ կոչէաք Ագաթանգեան ըստ երեմիայ ՒԱ. 27. և յետոյ Հայկայ Հայկ ըստ խորենացւոյ և այլ պատմագրութեանց թորգոմացիկ։ Նմանապէս վասն քաղաքաց որպէս ի հնումն մաժակ, յետոյ կապաթովկիայ, և ապա չեսարէայ կամ կեսարիայ, և ըստ թուրքաց այժմ կայիսեր. այսպէս Դաւագուլին յետոյ եաթօգեայ, ըստ թուրքաց թօքաթ։ Եւ ըստ հնոյ Գարնոյ յետոյ թէոդոսիբօլի ըստ թուրքաց էրզուրում։ Եւ այսպէս ևս յունաց պատահեալ որպէս ըստ հնումն եունի կամ եունանի և ըստ մերոյ յոյն. և յետոյ վասն որոյ կոչիլ կրէքօ կամ կրէքօ, որ և էլլէնացի, և այլոց ազանց ազգաց և այլն, և մանաւանդ մերոյ զարմիս ձաբէթեան մեծին զամենայն ծանուցանել։ Եւ արդ յետ այսորիկ յոյժ է տարակուսանք ինձ վասն խոսրովայ մերոյ թագաւորին ընդ Անակայ եթէ որպիսի է ազգականութիւնք նոցա միմեանց։ Ջոչ ունելովս պատմագրեանս այսպէս տաժանիմ. զայս և զայլ ծանուցմունք ի յստակաւօլէ կարօտեմ նորագունից իրաց ի ձէնջ տեղականալ և այլն։ Դարձեալ ևս զորքանս գրեանս տպեալ էք մինչև ցայսօր զամենայնս ծանուցանել չնորհս արնէք վասն օգտի և համբաւոյ ձերոյ. ողջ լերուք ի պարծանս մեր և աղաչեմ զձեզ զնոյն աղօթս վասն դիտաւորութեանս իմոյ մի վերջասցի ի ձէնջ մինչև ցայարտումն առ ի ծանուցանել Դերյարգելութեանդ։ Ողջոյն և սէր ամենայն իմաստուն և գառնուկք եղբարց մերոց, և միաբանից ընդ հովանեաւ սուրբերին ձերոյ. Ամէն աղօթից ձերոյ և նոցին, և ընդ նորա տէրն արարածոց հաւատացէ ամէն։

Դերյարգելութեան քում
Ջնչին ծառայ
Յակոբոս Մեսրոբ Քեահեայ արապեան
Ալքեպս. Լամբրոնի

1756 և ի մայիսի 8
[Հռոմ]

ՃՂԱ.

Դէպք մը թրքական պատմութենէ։

Պատուելի և սիրելի եղբարց իմոց՝ հայր աւետիսի, հայր դանիէլի, եղբայր մկրտչի, և եղբայր աւետիսի իւրոցդ ի տէր

... ի սէլանիկ հրէայք սպանին զէմիր մի. իբրև զայն լուան տաճիկք, առհասարակ խռովեցան. այլ զի փաշայ տեղւոյն էր իմաստուն, առժամայն հրաման ետ բերել զէմիրն. սպանեալ առաջի իւր. իբրև հրամանն կատարեցաւ, ետ զնա կշռել. և գտաւ ծանրութիւն նորա վաթսուն օխայ. նոյնժամայն հրաման ետ ըստ կշռոյ նորա կախել զվաթսուն հրէայս ի մեծամե[ծաց][1] անտի. անդ էր տեսանել զձայն հիսայից և զգոյժ անտալա[...]ից։ Ահագին վարդապետն եղև կաթողիկոս. վէզիրն նոր փոխեցաւ. գրեթէ յօր գալստեան իմոյ պէշիքթաշ ի ցերեկի եանղըն եղև. սակայն փութով չիշուցին։ վէնէտիկու էլչին փառաւոր ալայ արար։...

Ցամի տեառն 1756
Մայիսի 19 [կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Մկրտիչ վարդապետ

ՃՂԲ.

Այս թղթոյն մէջ Մծբնայ Հայրապետին վրայօք կը խօսուի զարձեալ։ Հ. Սահակիանոսի խնդրանօք Հ. Մատթէոս Եւդոկիացւոց ձեռք բերած արդիւնքը կը ցուցադրուի թէ՛ այս՝ և թէ յաջորդ նամակին մէջ. և որ աւելի կը շահագրգռէ՝ խնդրոյս շարժառիթները կ'իմանանք նաև վաւերագրէս։

Ս.

Վերապատուելոյ Տեառն տեառն Հայր Մատթէոսի Աստուածաբանութիւնս վարդապետի յազգէն սիւնեաց ողջոյն

Ընկալայ զգրեալդ ինձ ի մայիսի 8. նաև արդէն եհաս ի ձեռն վեհալուստր Նախորդին շնորհալի գիրն ձեր, և թուղթն հաւաքեալ յիշատակութեանց զսրբոյն Ցակոբայ Հայրապետին ի հեղինակաց հայոց. և յոյժ շնորհակալ եմք. զի թէպէտ այս ոչ եղև բաւական համարեալ, սակայն այսու զոնէ տեղեկացեալ ծանեաք զպատշաճաւոր գրեանս նոցին հեղինակաց, և զպարունակեալսն, և են չորս առաջինք այսոցիկն Մովսէսի Խորենացւոյն, Ռուզանդեան պատմագիրքն, հայոց այսմաւուրն, և ճառընտիրն։ Արդ ի չորից այսցանէ գրեանց հարկաւոր է որոշ որոշ զպատմութիւնս նորին սրբոյն յակոբայ ամբողջ օրինակելով գրել զիսկական բանսն ըստ նկարագրին, թէ և երկար իցեն, և լինիցի մեծագոյն տետր. և յեղեալ զբնաւսն յիտալիական բարբառ, հայերէն և իտալերէն ի միասին յղել ուղղակի առ մօնսիյնօր Անդօնելլի ի Հռոմ, որքան չուտով կարիցէ լինիլ։ Եւ ինքն մօնսիյնօր ամենայն սրտի յօժարութեամբ ցուցանելոց է զառատաձեռնութիւն իւր վասն այնքան աշխատասիրութեան գործոյս, զոր և կարէք կատարել ի ձեռն այլոց

1. Այս և յաջորդ կարճագիծք՝ պատռած մասերը կը ցուցնէ։

ձերայնոց. զի դիւրաւ և չուտով կատարիցի, և մի լինիցի ձեզ այնքան ձանձրութիւն: Իսկ և պատճառն թէ վասն էր խնդրէ փութով լինիլ, այս է՝ զի սրբազան Պասքն, որոյ յատուկ գիտութեամբն և հրամանաւն եղև տպագրութիւն ճառիցս այսցդիկ, ստէպ հարցանէ այսմիկ Նախորդի, արդեօք աւարտեալ իցէ: Դարձեալ Գերյարգելի Աբբայ Հօրն մեծաւ յարգութեամբ և չնորհակալութեամբ ողջոյն մատուցանեմ: Եւ յանձն արարեալ զիս աղօթից ձերոց սրբազանից, մնամ

Վ[երապատուութեան] քումդ

Պատրաստական յամենայնի
Նուաստ ծառայ
Ստեփաննոս Վ[արդապետ]

Ի Հռոմ
յամի տեառն 1756
մայիսի 22

ՃՂԳ.

Բ

Վ[երա. և գերյարգոյ Տեառն Տեառն Ստեփաննոսի Աստուածաբանութեան վարդապետի թնդալ ի տէր

Զվեհալուստրի գիրն, և ընդ նմին զըղձալի թուղթն վ[երապատուութեանդ] ընկալեալ, ծանեաք զգրեալսն. և յանձն առաք գլարգելի կամս նորա կատարել: Արդ՝ ունք ի վ[երապատուելի] հարց մերոց, որք այսպիսի գործոյ կարօղք են, ձեռնարկին յօժարութեամբ զգործս զայս առնել. վասն զի ի քաղաքի աստ արտաքոյ մենարանիս մերոյ ի հայս ոչ գոյր ոք որ կարօղ իցէր զայսպիսի գործս առնել: Բայց քանզի իտալական լեզուն ոչ այնչափ յստակ ձևացուցանէ զհայկական գրաբառ լեզուն, վասն այսորիկ ի լատին բարբառ կամեցաք թարգմանել, թուելով մեզ նոյնչափ հաճոյ լինիլ վ[եհալուստր] վ[սեմութեանն՝ լատինականն՝ որչափ իտալականն. թէպէտ նա ի գրի իւրում զիտալականն առաջադրեալ էր մեզ: Եւ ահա ընդ պատասխանւոյն մերոյ գրոյ նորին՝ և ընդ նմա առաքեցաք առ վ[սեմութիւն նորա՝ զգրուածսն երկուց հեղինակաց. այսինքն է, զԹորենացւոյն և զայսմաւուրին՝ թարգմանեալ ի լատին, և զհայերէնն գրեալ ի մէնասին: Եւ մնացին երկուց հեղինակաց բանքն, այսինքն Բուզանդին և Ճառընտրին, որք հետևաբար թարգմանին, և առաքեմք առ վ[սեմութիւն նորա: Եւ թէպէտ հոգամք, որչափ հնար է, փութով աւարտել, սակայն և այնպէս փոքր մի յապաղի՝ յաղագս խրթին և երկարաձիգ լինելոյ բանիցն: Արդ՝ ի թարգմանեալս յայսոսիկ ոչք ոչք բանք երևեսցին անստոյգք՝ զայնոսիկ ընդ մնացեալ հեղինակաց բանիցն բաղդատելով՝ ունի վ[սեմութիւն նորա են թադատել, և զստոյգսն որոշել, զի թարգմանիչքն անստգիւտ թարգմանելոյ աղագաւ՝ զինչ և որպէս գրեալ է, զայն այնպէս թարգմանեցին: Թորենացին չունի զամբողջ պատմութիւն վարուց սրբոյն յակոբայ, այլ այնչափ՝ որչափ գրեցաք: Գերյարգելի աբբայ հայր մեր բազմաւ սիրով զողջոյն մատուցանէ վ[երապատուելութեանդ]: Եւ արդ՝ յանձն արարեալ զիս ս[ր]բազանից աղօթիցդ վերջ տամ բանից իմոց: Եւ մնամ

Վ[երա. քումդ
պատրաստական յամենայնի
Նուաստ ծառայ Հ. Մ[ատթէոս] Վ.:

Ցամի տեառն 1756
Ցունիսի 5
ի Վ[ենետիկ]

ՃՂԴ.

Նկարագրուած հրդեհին տևողութեան մասին Անտոն վարդապետ Մալափարտ կ. Պոլսեցին ալ իր մէկ նամակաւ առ Մելգոնեան կը գրէ[1] *որ 33 ժամ տևած է, ինչպէս կ'ըսէ նաև, թէ «3 բաժին քաղաքին այրեցան, 250 բուռ [փուռ] ընդ նմա»։ Հ. Միքայէլ ալ 35 կամ 40 ժամ տևեց կ'ըսէ*[2]։

Գնրաւաժար գերյարգելի Աբրայոր վերոյ և Բաբունապետի
Տեառն Տեառն Յովհաննոսի վարդապետի ողջոյն ի Քրիստոս ի տէր ևեր

Թուղթ ԿԸ.

Զայս թուղթ վհնայու փօստով կամեցայ գրել առ ձեզ յաղագս կանխագէտս առնելոյ զձեզ վասն անհնարին աղէտից հրդեհին մեծի, որ եղև յաւուրս յայսոսիկ։ Արդ՝ ի յուլիսի 5, սկսեալ յերկրորդ ժամու գիշերոյն, և տևեալ ժամս իբր 40, մինչ ի 7 օրն յուլիսի՝ եղև հրդեհ մեծ և զարհուրելի ի կոստանդնուպօլիս, որոյ նման չէ եղեալ երբէք յայս քաղաք. և այս հրդեհ կրկին մեծ եղև քան զպատճառ խաբուիին, կամ զխօճայ փաշայիին, որ եղև յանցեալ ամին ի սեպտեմբ. 28։ Եւ այրեցան տունք աւելի քան զերեսուն հազար, գրեթէ կէսն (և ըստ ումանց ի կիսոյն աւելին) կոստանդնուպօլսոյ այրեցաւ, այս ստոյգ է, զի աւելի տեղի քան զբովանդակ քաղաքն վէնէտկոյ տամբքն հանդերձ այրեցաւ։ Արդ սկսաւ հրդեհն ի ձիպալիէն ի տանէ հրէի միոյ ի յեալըն, և այրեալ զտունս ինչ՝ անկաւ բոցն ի ներքս ըստ պարիսպն, և սկսաւ այրել զտունս որ առ պարսպօք, և բաժանեալ յերիս առաջս՝ սկսաւ սաստկութեամբ հիւսիսայնին հողմոյ վարելոյ յառաջ խաղալ։ Մինչին առաջն ահագնագոչ ձայնիւ այրելով զտունս ընթանայր զառ ի վեր լերամբք և առ զառ ի վայրօքն մինչ ի վ.լանկայ։ Իսկ աջակողմեան առաջն յառաջ ընթանայր այրելով զտունս՝ որ առ պարսպօք մինչ ի յօտուն խափուն. և անտի ընդ զառ ի վերն դիմեալ հհաս այրելով զտունս ի աղայ խափուսին. և մօտ քերէր առ նոքօք, և հարկանէր բոցն զաղայ խափուսին, թէպէտ տեառն օգնութեամբ չայրեցաւ այն։ Անտի էանց առ էսկի սարային եւևոլլն ի չահզէտէլէրն. և անտի ընդ զառ ի վայրն ի չուխուր չէշմէն, անտի ի կուկան, անտի ի յէշէկ չէշմէն, անտի ի մուսալլայն ի նորոգ չինեալսն վ.լանկայու. անտի ի յեալընըզ էքմէքճին մինչ ի պարիսպն քաղաքին. և անտի առ պարսպօքն մինչ ի յեէնի խափուն ի վ.լանկայ. անտի ի խըրք տիրէկներն. անտի ի տաւուէ փաշան և անդր ևս քան զայն. անտի ընդ զառ ի վերն ի յաւուտ փազարն. և անտի մինչ մօտ ի մեծ խօճայ մուստաֆայ փաշան՝ որ է առ սամաթիայիւ։ Իսկ ձախակողմեան առաջն, (կամ ասացից միւս ծայրն) ի նոյն ձիպալիէն ի ներքս ի բերդէն սկսեալ յառաջ խաղալով էհաս ի փէթրօ խափուսին, ուր Հ. վ.րթանեսենց տունն որ արտաքոյ բերդին՝ զերծաւ օգնութեամբ փէչէից անդադար թրջելեաց յեղբարց և ի բարեկամաց նորա։ Անտի էանց ընդ զառ ի վերն ի սուլթան սէլիմն. անտի ի չարշամպայ փազարն. անտի ի խարայ կէօմրիւկն. անտի ի յեէնկի պախճան, և անտի մինչ ի վերոյգրեալ մեծ խօճայ մուստաֆայ փաշան։ Այսոքիկ ամենայն տեղիք, որք իբր ծիր գրեցան՝ բնաւքն այրեցան, և ըստ սոսա բովանդակ միջոց տեղին նոցայ, և ամենևին չինուած ինչ ոչ մնաց ի նոսա, որ ոչ այրեցաւ, որոց գլխաւորքն են այսոքիկ. այրեցաւ զէյրէկն, սուլթան մէհէմմէտն, սարաճխանան, խշլաներն, էսկիօտալար պաշին, ախ սարայն, աւուտ փազարն, մօլլայ կիւրանին, հօռհօռն, և այլն, որք տեղիք ամենեքին էին իբր մի մի քաղաք։ Եւ ընդ նոսին այրեցաւ հարիւրաւոր ճամիք և փոներ, և անհամար մեծամեծ սարայք մեծամեծաց, զոր օրինակ,

1. 1756 Յուլիս 16։
2. 1756 Յուլիս 27։

ստամպօլ աղասիին, միւֆտիին խօնախն, երկր սուլթաններուն սարայներն և այլք բազումք։ Բայց փոքր մի ի մասնաւորն իշեալ եկեսցուք ի վկայնկայ, յորում վերստին այրեցան ամենայն տունք բարեկամաց մերոց, և տունք զորս հովուէի ես անդ։ Արդ աւելի քան զերբորդ մասն տունք նորոգ չինեալք յանցեալ հրդեհէն վերստին այրեցան։... Իսկ թէ ասացի, զինչ պատճառ եղև, որ այսպէս այս հրդեհ այսչափ մէյտան գտաւ, և ոչ փութով չիշուցին, ասի թէ յայնմ ժամու՝ յորում հրդեհն սկսաւ, ուժաւորք այսինքն զօրապահք իբր արանց վեց հարիւրից ելին ի խասըմփաչայն, և զապիթք ի լինելն գհետ նոցա, և ի չարդելն զբազումս ի նոցանէ զորս գտին, հրդեհն աճեցաւ, և եղև անմարելի։ Եւ այս հրդեհ եղև բնկումն և թշուառութիւն մեծ բնակչաց քաղաքիս մանաւանդ հայոց ազգիս... ամենայն վիշտք եկին հասին ի վերայ քաղաքիս։ Ինձի և ի միւս կողմանէ ժանտամահն ևս օրըստօրէ զօրացեալ զբազումս տապաստ արկանէ։...

Նուաստ ծառայ
Հայր Զաքարիա վ. Ա[լէքսանեան]

Ցամի տեառն 1756 յուլիսի 10
[ի Կ. Պոլիս]

ՃՂԵ.

Թեահեա Արապեան արքեպիսկոպոսէն մէկ քանի տեղեկութիւններ ևս։

Տեառն տեառն բազմայանձնար Աբրայ Հօրդ
հանդերձ միաբանիւք ողջոյն և սէր

Ջեկուցումն լիցի ձեզ, զի յայսմ ամի և յամսեան մայիսի գրեցի առ ձեզ զլիմն քարտեզ, զպատասխան նորա ոչ ընկալայ ի ձէնջ։ Ուստի այժմ իտիպեցայ կրկին ծանուցանել և իմանալ ի ձէնջ զայն վաղճանեալ կարապետ անուն կեսարացի վարդապետէ, որ յետ դարձմանն ի վէնետկ գոլ վաղճանեալ ի Թրիէսդէ քաղաքին, և աստ զլուրն նորա լուայ ոչ ի միոյ այլ ի բազմաց եկողաց, եթէ նոյն վաղճանեալ վարդապետն յետ վաղճանման արար զբազումս սքանչել[ի]ս յայնքան որ կուռաց եղ զլոյս աչացն, վասն այսորիկ փափագիմ իմանալ զայս ի ձէնջ։ Միւս ևս աստ կեսարացի վրդանէս վարդապետէն այսօր երկ օր է որ ընկալաւ զվերջի Ծծումն, յոյժ նուաճեալ յայնքան որ ձայն նորա նուազեցաւ և այսօր բժ[ի]չ[կ]քն ասացին ի վաղն հազիւ ելանէ այլ մեռանի։ Դարձեալ մերձ է վերջանալ հայկաբար Էնջիլքլիքան ի տպարանէ։ Դարձեալ տեսի զվարս սրբոյն Ցակոբայ զոր յղեալ էք առ մօնսինեօր անթօնելլի, զի նա եցոյց ինձ գոլ գործք Հայր Մաթէոսի վասն նորա գոհանամ զձէնջ. զի հարկ եր զարդարիլ նոյն գիրքն սրբոյս մերոյ, ուստի մինչև ցայսօր նոյն գիրքն ոչ վերջացաւ, զի պատճառն է, նոյն մօնսինեօր անթօնելլին առեալ էր յինէն զԳիրքն Սուրբ Գրիգոր Նարեկացւոյ, և ի նմանէ արտահանէ զպատճեն, և ինքն թարգմանէ ըստ բանին նորա։ Դարձեալ ծանուցանեմ ապառնի քարտիզիւ մօնսինեօր Շէյրիմանի ձեռամբ վասն մօրն իմոյ առ ձեզ։

Ողջ լերուք ի տէր. յանցնեմ զիս ի սրբասուն յաղօթս ձեր որպէս յառաջ։
Մնամ ըստ ամենայնի պատրաստական

Ցակոբոս Մեսրոպ Թեահեայ Արապեան
Ընչին վարդապետ

1756 յօգոստոսի 7
[ի Հռոմ]

ՃՂԶ.

փոթորկալից օրուան մը նկարագրութիւնը կը պատմուի Մելգոնեան Աբբահօր կողմանէ։

վկրապատուելի տեառն Հ. Միքայէլ վրդ.ին ողջոյն սիրոյ ի Քրիստոս

... տունն պատուական գեղին լինի յաւուրս յայսոսիկ...։ ի վէնետիկ յաւուրս յայսոսիկ եղև կարկուտ մեծ և էհար ի ծովու եղեալ կղզիս, և զլիտօն և զմալամոք ևն, որպէս և զմեր պարտէզն. և աւելի քան զկէսն խաղողոյն ապականեաց։ ցետ քանի մի աւուր եղև փոթորիկ զարհուրելի ի թերաֆէրմայն սկսեալ ի մեստրայու կողմանց և գնացեալ մինչ ի պատուայ և յայլ տեղիս, և կործանեաց զբազում վանորայս եկեղեցիս տունս. և խլեաց զբազում ծառս մեծամեծս յարմատոյ և տարեալ ընկէց յայլ ուր, յորոց բազումք ևս ոչ գտան. ի պատուայ մնաս մեծ եղև, զի կործանեցան ոմանք չինուածք. և գլեթէ ամենայն տունք վիրաւորեցան. և այն մեծ սալօնն պատուայ կործանեցաւ յերկիր, և ի տեղիս տեղիս բազումք մեռան ընդ փլատակաւ աւելի քան զհինգ հարիւր։ Բայց տեառն ողորմութեամբ ի վէնէտի[կ] ոչ եղև զգացեալ այն փոթորիկն։ ի Նովենթայ մի պարիսպն պարտիզի տան մերոյ կործանեցաւ, ոմանք ծառք կոտորեցան. և ամենայն պտուղք թօթափեցան. այս ստոյգ է, զի ուժգնութիւն փոթորկին անդ ոչ է եղեալ, ապա թէ ոչ զբոլոր տուն մեր յօդս վերացուցանէր, քանզի փքած էր։...

1756 յունուար. 25
[ի վէնետիկ]

Նուաստ ծառայ
Ստեփաննոս վրդ. [Աբբահայր]

ՃՂԷ.

Անծանօթ չէ Հայ Մատենագրութեան առջև Նալեան Պատրիարքի հրատարակած «Գրքուկ կոչեցեալ ձրագ ձմեռատուրեանց» անուն գիրքը, որոյ մէկ քանի գլուխները՝ ընդդէմ Հիմնադրիս ուղղուած են, ու մեծ մասը՝ Ցիսուսեան Մօնֆօրթ քահանային դէմ, պաշտպանելնուն համար մէկ տեսակաւ հաղորդութեան տեսակէտը։

Փութանք ըսելու, որ ներկայ նամակագրին վաւերագրէն զատ, սոյն գրքին շուրջ ակնարկութիւնները կը գտնենք Նուրտիկեանի[1] քովն ալ։ Նալեանի վերջին հիւանդութեան ծանր պահերուն Սարգ. Աղբեպս. Սարաֆեան ստէպ այցելութեան երթալով յորդորած է զանիկա՝ ճանչնալու ըրած սխալը նկատմամբ հրատարակած մատեանին, որ անտարակոյս Միխիթարայ դէմ եղած էր. — ահա՛ ակնարկութիւնները.

Որ և անդէն ի մէջ բերէր
Մատեանն նորին՝ զոր ապակէն էր
Ընդդէմ ուղղոց որ արժան չէր,
Ընդ որս ինքն խակ զգաստ անհամ էր։

Որպէս յայտ է անժանց ոմանց
Թէ նա զայս բանս ոչ շարադրեաց
Ընդդէմ բանից ուղղափառաց
Բայց Քէ հաճիլ Հայոց բազմաց։

Աւ այս ցակոր տայր պատասխան
Թէ տպեալ եմ արդ մի մատեան,

Ժամամբակ ։՝ աղօթից բան,
Ցոր ուղղափառ բազում բանք կան,

Որում Սարգիս կրկնէր անդէն,
Թէ կամքդ յայնմիկ նոյնպէս պարզ չէն,
Որպէս ի միւս գրեանդ յայտ են,
Ցորս անպատեհք յոգնաքիւ են։

Այլ տեսեալ Քէ ունչս առնելով,
Ցխւր վերջին գիրք բաւ Քուելով,
Պատասխանէր պատճառելով,
Սարգիս լբեէր հառաչելով։

---

1. Գալեմք. «Կենս. Սարգ. Արք. Սարաֆեան», էջ 105–106։

Նուրիկեանի այս տողե՛րն ալ կը լուսաբանուին Յովհ. Թովմաճանեանի նամակին պարունակութեամբը։

Գերապատիւ Տէառն Տէառն Ստեփաննոսի Աբբային և վեծի Բարոհեապետին. սրբաւնիւվէր զաչսն հաւրուրկով սիրով ողջունելմ որպիսական ոգով

... պատրիարգն մին գիրք չինեց ընդդէմ հայր աբբային հանգուցելոյն և ընդդէմ մամֆօնին, և թէպէտ չատ աղաչեցի պատրիարգին որ պատմայ չանէ բայց չեղև հնար. և պատճառն այս էր, զի սերգիս վրդն. ի բազում տունս սառաֆաց ասացեալ է թէ պատրիարգն զղջացեալ է առաջի արաց վէմ հաւատոյ և նարեկեան մեկնութեան գլխոցն, իբր թէ այժմ ճանաչեալ է ձշմարտութեան ձանապարհն, և յայնժամ մոլորեալ իցէ. և ևս թէ ահագին սահակ կաթողիկոսն որովհետև զըդ է ընդ սերգիս վարդապետին, ստիպեալ է ի տալել, և վասն այն ևս պատրիարգն այս նոր չինած գրգոյն որ առ ընթերցողիսին մէջն ընդդէմ սերգիս վարդապետին անանուն ոմանք ասելով, թէ ևս գղջացեալ գոլ իցեմ առաջի արած գրգերէս և այլն։ Արդ՝ զայս հաւատոյ հայր սուրբ զի ինձ խոստովանեցաւ զճշմարիտն պատրիարգն, թէ ես իմ կամօքս չարի և բարով չարնէի չըշընէի ասաց ձեռքս. սակայն ասէ ի մէջ իմաստնոցն սովորութիւն է միմեանց հարցմանց պատասխանի տալ. և ես ասացի. այսքան բան ասացեր ես մխիթար աբբային մինէ և նորին հետևողքն չեն կրնար պատասխան տալ. ասաց թէ ես իմ գրգիս մէջն հետևողացն ոչ ինչ բանս ունիմ ընդ նոսայ. բայց եթէ արասցեն ինչ պատասխանի, և մենք ևս ոչ ձանձրանամք պատասխանելոյ, խնդալով այսպէս ասաց[1]*...։*

Ծառայ ամենայնի
Յոհաննէս Թովմաճանեան

Ցամի տեառն 1756 Սեպտեմբերի 1.ին
գրեցաւ ի մայրաքաղաքն
Կոստանդնուպոլիս

ՁՂԸ.

Ազատրօ-Գերմանական պատերազմներու պատրաստութեանց լուրերը կը տրուին հոս։

Գերապատիւ և Գերաւեծար Տէառն Տէառն Ստեփաննոս Աբբայի և վրդ.ի
կարօտիւ սիրոյ ողջոյն

... մեծ պատերազմի պատրաստութիւն ունի Թագուհին ընդդէմ Փռուչեայիին։ Այսօր 80 թօփ քաղաքէն տարին. և յամենայնում աւուր հազարաւոր զօրք անցանեն ի քաղաքէն

---

1. Հ. Ջաքարիայէ Քուղբ մըն ալ առ Մելգոնեան Աբբահայր (Գր. 1756 Օգոստ. 19)՝ սապէս կը տեղեկագրէ Նալեանի այդ հրատարակութեան մասին. «վասն գրգոյն շարադրեցելոյ ի պատրիարքէն ընդդէմ լուսահոգի հօր «մերոյ, զայս ծանիք, զի արդարև շարադրեալ է, և տպեցաւ ևս (զոր ես և կամ մերայինք դեռ չեմասք) և ձրի «պարգևեն։ Արդ՝ յոյժ պարտաւէ ասեն յայնմ գրքի զլուսահոգի հայր մեր և գմիաբանութիւն մեր. այլ և զպատրի «մենթօրին, Քա՛ղ զայն, որ ընդդէմ հաւատոյ բազումս հայհոյէ. այլ և ընդդէմ գլխաւորութեան և քաղկեդոնի «ժողովոյն բազումս հայէ։ Աւսի Քէ այն գիրք ոչ միայն պատրիարքէն է, այլ և մխլէխմօղլուն, և տիպաճի տէր «սարգսին։ Յօհաննէս աղան գրեալ էր այսի առ եղբայր իւր Քօման ասել պատրիարքին, զի խափանեսցէ այն «գիրք, բայց ի զուր, զի արդէն տպեալ էր այն։ Բայց մեր Հ. Մկրտիչն ժեռամբ սէրգիս վարդապետին, և Քօմա«ճանօղլուն ամսով յառաջ Քանաց խափանել տալ գաղումն նորա, առաքելով գնոսա առ պատրիարքն, բայց ոչինչ «օգանեցաք, զի արդէն կէսն տպեալ էր. և զի ոչ անասայր բանից նորա. ուստի և Հ. Մկր. ասաց նոցա, Քուղ՛ք «զի զոր կամի արասցէ յամօք և ի նախատինս իւր»։

առ ի գնալ ի պատերազմ. և ետէր զօրացուսցէ զնոսա. և յայս անգամին յոյս մեծ ունիմք չախչախել զգլուխ անիծածին...։ ... ասեն թէ պուռչեան զամենայն երկիրն իւր փակեալ է և ոչ ումեք տայ ելմտուտ առնել. և թողեալ է միայն զմի միայն ճանապարհ. և ընդ այն անցանեն կամաք իւրովք. և զամենայն կրօնաւորսն եղեալս ընդ իշխանութեամբ իւրով, և զքահանայսն արարեալ է սօլտատս և զօրապետս։ Եւ ասեն քնակիչք վիեննայու թէ յորմէ հետէ կայ այս թագաւորութիւնս և իշխանութիւնս տանն աւըստռայու ոչ երբէք եղեալ է այսչափ հզօր զօրութեամբ, իշխանութեամբ, փարթամութեամբ և զօրօք. և կարօղ է ասեն երկու և երեք հարիւր հազար զօրաց տալ ոռճիկս...։ Լուայ ևս թէ պաղատատու փաշան ինքնագլխաբար դրամ սկսեալ է հատանել։ Եւ ընդ ֆրանսըզու հաշտութիւն առնելն կարի յոյժ հաստատուն է. քանզի ասեն թէ այս թագաւորութիւն այնպիսի թագաւորութիւն մի է, որ ի զանազան ժամանակս պէս պէս փոփոխութիւն ընկալեալ է. ժամանակ մի իտալեացւոց առաջնորդութիւնն յաջողեալ է աստ. ժամանակ մի սպոնիացւոց։ ժամանակ մի ինկիլիզաց. և այժմ աստ զօրացեալ են ֆրանսըզք, վասն այսորիկ ախորժելով իւրաքանչիւրքն ֆրանսըզին արարեալ են զայս մանաւանդ, զի կայսրն զարմիւ է ֆրանսըզ...։

Ն. Ծ.

Ցամի տեառն 1756 Սեպ. 4 ի Վիեննայ — Հ. Գէորգ վրդ.

ՃՂԹ.

Նախ՝ Վիեննայի Ցիսուսեանց վրայ կը խօսուի. յետոյ կ՚անցնի մանրամասն ու լաւ տեղագրութիւն մը տալու աւստրիական մայրաքաղաքին վրայ։

Մնծապատիւ ևարդդ իմոց և վարդապետաց Հ. Միմոնիի, Հ. Գաբրիէլիի, Հ. Ղևդրեասի, Հ. Վրտանեսի, Հ. Յակոբոսի, Հ. Նկոլասի, Հ. Թադեոսի, Հ. Ղևոռնիի, Հ. Դանիէլիի, Հ. Մկսոյսի և Հ. Ղևսնիայի բազում սիրով ողջոյն և գրկախառն համբոյր։

Ըստ որում խնդրեալ էին ոմանք ի գերապատիւ հարցդ զորպիսութիւն քաղաքին Վիեննայու համառօտիւ ծանուցանել, և ըստ որում ես ևս յանձն առեալ էի, աւանիկ կարճ ի կարճոյ ձեզ վերապատուելեացդ գրեմ։... Քաղաքս այս գրեթէ ընդ իշխանութեամբ ձիզուիթաց է, քանզի ունին զերիս վանս, յորս են հարիւրաւոր կրօնաւորք. և զհամարումն զոր ունին, ոչ ոք ի կրօնից ունի։ Գրեթէ բովանդակ դպրատունքն մեծամեծք, ընդ իշխանութեամբ սոցա են. և մանկունքն ուսանօղք բիւրաւորք են. և յորժամ ելանեն ի դպրատանց, իբրև զմեղու ի բեթագաց ելանեն խուռն բազմութեամբ։ Փառի Ֆրանց մի գոյ աստ Ձիզվիթ... այր հմուտ յամենայն մակացութիւնս. խոստովանահայր է թագուհւոյն և խորհրդակից ծածուկ կայսեր. վերակացու է թագաւորական դպրատանն. և սորա խնդրուածովքն թագուհին չինեալ է զայն ահագին դպրատունն ի հիմանց, յորում ամենայն արհեստք և գործք աստեղաբաշխութեան և մաթէմաթի[ի]զայից փայլին. զոր ինչ և կամի կարէ յառաջացուցանել...։ Եթէ զքաղաքէն հարցանել կամիցիք, յիրաւի քաղաք մի է ազատ և անվտանգ, զի որ ձեռն արկանէ ի սուր, հատանեն իրաւամբ զձեռս նորա. ուստի ոչ ինչ երկիւղ գոյ սրոյ և մահուան. գիշեր ցերեկ հաւասարապէս արք և կանայք չրջին ի փողոցի աներկիւղ։ Ի են եկեղեցիք յամենայն ժամ ժողովրդօք, և չերմեռանդութիւն նոցա նմանէ չերմեռանդութեանն գաղատացւոց։ Եւ ունին յոյժ սաստիկ չերմեռանդութիւն արտաքսական. ապարանք բազումք են ի քաղաքիս մեծակառոյց. բովանդակքն փառուայու քարով և սուգայով և ծեփով չինեալ. ըստ արտաքին երևութին յոյժ փառազարդք են և հոյակապք բայց ոչ նմանք վէնէտիկուն. այլ մանաւանդ նմանք են տօլօյու և նովէնթայու մէջ եղած ապարանից։ Ունի զեկեղեցիս փառաւորս և ոսկեզօծս և մեծամեծս, բայց ոչ բազում որպէս վէնէտիկուն, և ոչ մարմարոնեայ այնչափ, որչափ

իտալեայուն։ Քաղաքն մեծ է վաբրչոլին, և ընդարձակ յոյժ. և ըստ կարծեաց իմոց ըստ մեծութեան գալաթեային է, և բազմամարդ է։ Եւ երիվարք և ձիք կառամուտք անհամարք, գեղեցկատեսիլք և յաղթանդամք և ուժաւորք. և ի ներքոյ արեգականն չիք նոցին նմանք ըստ վկայելոյ բազմաց. բայց կեցցէ վասն իմ վէնէտիկն օրհնեալ, որ առաւել է քան զսա յաչս իմ. քանզի ընդ մտանելս ի քաղաքս յայս, տաղտկացայ յոյժ, քանզի համարիմ թէ յամենայն ժամ ի գիշերի և ի տունջեան ի պանդոկի պղնձագործի եմ ի չառաջմանէ կառաց, և փոշին ամպասարաս անդուլ անդադար չուրջ կայ դիզացեալ զքաղաքաւս։ Երբէք ոչ ծառայէ յամառան սևազգեցիցն չրջիլ աստ. իսկ ի ձմեռն անհնարին ցեխք փողոցաց ոչ թողու զմարդն ելանել արտաքս. կանայք նոցա այնչափ համարձակք են որ [ոչ] կարէ պատմիլ. և լաւ լինէր այրական զգեստ զգենուլ. և են քար գայթակղութեան արևելցոց. բայց վասն իւրեանց քաղաքին ոչ այնչափ վասն սովորութեան. և գրեթէ ամենեքին ալք պատերազմօղք են. և այն նրբութիւնն մտաց, և այն քաղցրաբարբոյութիւնն և այն ազնուութիւնն զոր ունին վէնէտիկեցիք աստ ոչ գոցես. և ամենայնիւ իբրև սեռիւ տարբերի ի վէնէտիկոյ. բայց քանզի թրաֆէլրմա[1] է, վասն այսորիկ ընդարձակ է քաղաքն. և ունի հրապարակս բազումս և աղբիւրս և վառակս հանապազաբուղխս. սուրբ ստեփաննոսի ժամն մեծութեամբ նմանէ սան գիւվանի փօլօյին. յիրաւի մեծաչէն է և բարձրաբերձ. բայց կարի յոյժ հնացեալ է. զանգակս ունի քաղցրահնչիւնս. բայց ցանցառ հնչեցուցանեն։ Թողեալ զայսոսիկ եկեսցուք ի պատմել զերկրէ և զթագաւորութենէ սորա. յիրաւի չէն է յոյժ. չեմ տեսեալ չէն երկիր և պղտաբեր քան զսա առաւել. ի թրեստու մինչև ցվենետիկ բիւրաւոր էին գիւղօրէք և գիւղաքաղաք. ամենեքին չինուածովք էին իբրև զքաղաքս։ Լերինք բազումք էին, բայց ոչ իբրև զլերինս Եփրատայ և քիւրտուստանու և մէյրմինու և ուռումգալայու։ Ադա անբոյսք, բայց այսոքիկ զորս տեսի այժմ, լի են տամբ և բնակութեամբ. և վար և ցան անպակաս. թող զի լի են հրահալելեօք ոսկւովք և արծաթօք։ Ասեն թէ այժմ զոր ինչ փարթամութիւն ունի թագուհին, երբէք ոչ է ունեցեալ այն տունն յայլում ժամանակի. և ամենայնիւ զօրացեալ է. տէր յիսուս յաւելցէ և առաւելցէ. բազում ինչ գոն պատմելիք, բայց այժմ անհնար է. ուստի եթէ տեառն կամք հաճեսցի և առ ձեզ դարձայց ողջութեամբ, յայնժամ պատմեցից լիով։... Տեսի աստ զարքունի գրքատունն և հիացեալ զարմացայ ընդ մեծութիւն նորա, ընդ հրաշալի ձևն և ընդ մաքրափայլութիւնն։ Տեսի անդ և զժամացոյց մի հրաշալի ըստ որում բազում չարխիւ պտոյտ տայր և երկրիս բոլորն և աստեղաց բոլորն և կենդանակերպք և աստեղք մոլորք։ Տեսի անդ և զայն հրաշալի չէնքն պղնձեայ յորում ցուցանին ամենայն չարժմունք երկնից մանրազնին, ընդ որս յոյժ ափչեցայ. յիրաւի կարեմ ասել թէ այսպիսի գրքատուն չիք ուրեք, զի ամենայնիւ կատարեալ է. անթիւ են ի նմա ձեռագիրք իւրեանց լեզուին և ֆրէնկէրէն գրեանք ոսկետառք։ Համառօտիւ ասեմ անպատմելի է ամենայնիւ այս գրքատունս. այսօր փոուչին էչչին եղ և գնաց ի վենետայու. և յամենայնում աւուր զօրք անցանեն ձիաւորք և ոտանաւորք. ասեն թէ զլիփրստան կողոպտեալ է փոուչեան. և առեալ է ի վաճառականաց իբրու երեք միլեօն ստակ։ 3 փառի եկն աստ սօլտատի զգեստով փախուցեալ ի փոուչեայէն։ Պատմեմ ոմանց պաշպալովցոց. դեռ ոչ եկին. ընդ գալ նոցա աստուծով ճանապարհորդիմ։ Ողջ լերուք ի տէր։ Ամենեցուն ողջոյն մատուցանեմ սիրով։

յամի տեառն 1756 սեպտեմ. 10
ի վիէննայ

Ն. Ա. Հայր Գէորգ Պաղտատեան
և անարժան վրդ. Մխիթարեան

Մ.

Թէ ինչ դիմումներ կատարուած են Մարիամ Թերեզա կայսրուհւոյն մօտ մեր Պաշպալովի վանատան հաստատութեան համար՝ ահա նամակ մը։

1. Terra ferma = ցամաք երկիր։

Գերապատիւ և Գերաւնիժար Տեառն Տեառն Յովհաննու Պրբայի
և վարդապետի կարօտիւ սիրոյ ողջոյն

... յետ հասանելոյ իմոյ այսր զկնի երկուց եօթնեկաց, էազուհալ եւտու թագուհւոյն տեղեկացեալ բարւոք ելից և մտից տեղւոյս. և զայն էազուհալ գրել եւտու տալեանելվար. քանզի տեղեկացայ որ թագուհին յօժարութեամբ ընթեռնու զտալեանելվարն. և ախորժի և բարւոք հասկանայ: Ես անձամբ կամեցայ տալ և ձեռամբ իմով ի ձեռս նորա անմիջապէս. բայց ոչ յաջողեցաւ, որովհետև յղի է և մերձ ի ծնանիլ. ուստի բարեկամի ձեռօք ի սենեակ նորա յղեցի, զոր ընթերցեալ թագուհին յետ երից եօթնեկաց առաքեաց զէազուհալս առ իշխանս և խորհրդականս մաճառիստանու: Եւ ես տեղեկացեալ գտի զայն տեղին ուր պարտին խորհիլ և վճռել զիմ խնդիրս ըստ յանձնելոյ թագուհւոյն: Եւ անդ հարցեալ գտի զի թարգմանելոյ տուեալ են զիմ մէմօռեալս կէղացւոյ միւսմ, որ անդ Գրագրութիւն առնէ հմուտ բազմաց լեզուաց: Եւ ընդ սմա բարեկամացեալ իմ տեղեկացայ նմա և յայտնեցի նմա զկամս իմ թէ կամիմք պաշվալովու տան մերում ի թագուհւոյն ևս հաստատութիւն առնուլ, և նա ուսոյց ինձ որ ինչ պէտքն էր և սկսայ գրանաշան աշխատիլ... և յետ ոմանց աւուրց ել բանն ի վեր ի խորհրդոյ[1] թէ բարւոք է, կատարեմք զնդիր ձեր: Սոցա կամիլն միևնոյն է ընդ կամեցողութեան թագուհւոյն:... դատաւորք զայս ինձ հասկացուցին և ասացին չինել տալ և զայլ առզուհալ մի և տալ այնմ դատաւորի, որում անկանի այս պաշտօնս, որպէս զի ամենևին ազատ իցէ վանքն մեր յամենայնէ. և մի կարասցեն ժողովուրդք երկրին իւիք կերպիւ ծանրանալ ի վերայ նորա և կամ մինչէթ ինչ առնել: Եւ սորա զկնի այժմ ընթանամ. և յուսամ և զայս չնորհ ընդունիլ ի մօտ ժամանակի, ընդել տալով յամենայն գրոց զտուրս տան մերոյ: Եւ ապա վասն այսոցիկ երկուց պարգևաց տալոց են ինձ թուղթ մի կնքեալ ի թագուհւոյն վասն հաստատութեան տեղւոյն և վասն ազատութեան յամենայն ալքունի տրոց:...

յամի տեառն 1756
Հոկտ. 23 ի վ. ննայ

Ն. Ս. Հ. Գէորգ վրդ.

ՄԱ.

Հ. Գէորգ կը շարունակէ լուրերը Ալեպո–Գերմանի պատերազմին շուրջ։

Գերապատիւ և Գերաւնիժար Տեառն Տեառն Յովհաննու Պրբայի
և վրդ.ի կարօտիւ սիրոյ ողջոյն

... ցաւուրս Բանայիրի բերին աստ զայր մի յաղթանդամ և մեծահասակ, զորս տեսի ես աչօք, և ծնացի հիացեալ և փոքր ինչ ևս զարհուրեալ. քանզի ըստ ծանրութեանն կշռեցին և էր 3 զանդար և 50 ֆունթ. և ամօք է 19. ընդ մինաս վրդ.ին գնացի. որոյ բարձրութիւն է ըստ բարձրութեան Հ. Գրիգորին մերոյ. սա էանց ընդ բազկաւ նորա առանց խոնարհելոյ զգլուխն. մանաւանդ կայր տակաւին միջոց իբրու չորս մատն: Ես ձգմամբ բազկիս ծայրիւն միջամատիս հազիւ հասի ի վերին ծագն հոտոտելեացն ուր միանան յօնք աչաց մարդոյ: Սա օղլանդացի է, և յետ ոմանց չաբաթուց գալոց է ի վ. ննէտիկ: Զպատերազմէ այժմ լուութիւն է քանզի ձմեռն սաստկացաւ և թշնամին վտանկեցաւ. և յետս յետս չոգաւ անարգեալ: Ցիրաւի զօրք մեր յաղթական եղեն միշտ. սակայն զբազում զօրս հանդերձ զօրաւորօք կորուսաք. անձինք մեծազգիք անկան և բազումք վիրաւորեցան. ոմանք ի վ. ննայ մեռան և թաղեցան և ոմանք ի ճանապարհի: Վասն ամենեցուն սոցա զարմանալի հանդիսիւ և չերմեռանդութեամբ և սեւազգեցութեամբ

1. Այսինքն դատարանի խորհրդականներէն։

թագաւորն և մեր թագուհին, հանդերձ որդւովք իւրեանց, մեռելոց կարգ կատարեցին, որ զամենեա[յ]ն մարդ յարտասուս հարին։ Ջայս արարին և յաւուր հասարակաց ննջեցելոց, դնելով ի վերայ սեաւ չալի զզէնս պատերազմաց։ Եւ այնչափ տկարացուցին զթշնամին մինչ զի բազում միջոցիւք ի հաշտութիւն խոնարհիլ կամի. բայց սոքա ամենեքին ոչ կամին։ Ցիննկիլէէոայու եկն աստ իշխան մի խօսիլ ի հաշտութիւն. թագուհին մեր ոչ ետ ավտիէնցայ, քանզի եհարց եթէ յորոյ կողմանէ եկն խօսիլ ի հաշտութիւն. իւր թագաւորին եթէ փոյսեային։ Եթէ իւր թագաւորին կողմանէ եկն, եկեսցէ առ իս, բայց եթէ փոյսեային մի ամենևին երևեսցի առաջի իմ։ Աստուածով դուքս մի ունիմք զօրաց փռաւօն անուն. յիրաւի է պատւօ, զոր ամենեքին սիրեն. և թագուհին որդի իւր անուանէ. այր հմուտ պատերազմի. և օրտուն ասեն եթէ այնպիսի յօրինեալ ամենայն իրօք, մինչ զի յոչ ումեք ժամանակի այսպիսի օտու ունեցեալ է նէմցէն։ Սակայն այս ազգս յոյժ ապերախտ է և կամեցան ոմանք իշխանք լօթռանք առ նախանձու խախք առնել զսա ի պատերազմի. քանզի նոքա որոց անկ էր զզէնս պատերազմի պատրաստել և առաքել ոչ առաքեցին զի յաղթիցի. բայց Աստուած լսելով հանապազօրեայ զաղօթս թագուհւոյն իմացան զնենգութիւն նոցա և պատժեցին և ոմանք ի բանտի կան որք ըմբռնեցան, վասն զի տային ի ծածուկ օգնութիւն կերլեաց փռուսիայէն։ Այնչափ քաջութեամբ մարտնչին զօրք մեր մինչ զի ասացեալ է թագաւորն փռուսեայինն, թէ զարմանամ զիաՀրդ կան ընդդէմ հրոյս արիաբար զօրք տամայինն ավստռային. (այսպէս անուանէ զմեր թագուհին անիծածն). առ այժմ լռութիւն է, վասն զի ձմեռ են։...

յամի տեառն 1756
Նոյեմ. 20 ի վեննայ

Սրբութեանդ Ձերոյ ծառայ
Հ. Գէվորգ վրդ.

ՄԲ.

Յոյն և Հայ վաճառականներու մասին դէպքեր կը պատմուին Հ. Յովհաննէս Լազեանէ։ Այս է Հ. Յովհ. Տրապիզոնցին, որ և կը ստորագրէ Պոնտացի, ևն։

Գևրապատիւ տեառն տեառն Պետիկեանոս վարդապետի և Ազբայրօք մերովք խոնարհութեամբ համբոյր աչոյն

... Լուաք, թէ սրբազան պատն մեր փոխեալ իցէ առ Աստուած... Գրեցիք և զանցս անցեալս ընդ ոմանս՝ վաճառականս յունաց։ Արքունի հրամանաւ սաստիկ փակեալ են Նազարէթք ընդդէմ ընչից. այլ համարձակ վասն մարդկանց. արդ յոյնք ոմանք բերեալ զմուշտակս ի պէլրղատ, և անդ թողեալ, ինքեանք մտեալ են ի Նազարէթ. և ապա զյոլով զբեռինս մուշտակաց ի ձեռն ոմանց պուլղարաց գաղտագողի փախուցեալ են ի մեր կողմն առանց Նազարէթի։ Եւ ի լրանալ ժամանակին, ինքեանք ելեալ ի Նազարէթէն, և բերեալ զմուշտակսն ի յէրսէկ, վաճառեալ են ի տօնավաճառն սրբոյն սեբաստիանոսի։ Ուր յայտնեալ նենգութեան նոցա, զերկուս փախուցօղսն անդէն վազվաղակի ի չորս մասունս հատեալ, կախեցին յանցս ճանապարհաց։ Իսկ զմնացեալսն՝ թուով աւելի քան զտասն երկաթի կապանօք ածին այսր, որոց կատարածն եղիցի սուր և հուր։ Ամին նման և զայլ ինչ լուաք, այլ զստոյգն ոչ գիտեմք. ի մեծ մաճառս՝ ի կողմանս տօպրօջինու հայք ոմանք զմորթս եզանց փախուցեալ ի նազարէթ, հասուցեալ են յազատ գիւղ մի, և անդ թագուցեալ՝ ինքեանք և ինչք իւրեանց։ Իսկ ի յայտնիլ բանին, զտեարս մորթոցն եդեալ ի չղթայս, և ընդ նոսա զամենայն գիւղականսն վարեալ ի տեղին, ուստի փախուցեալ են զմորթսն առանց Նազարէթի, և զգիւղն և զմորթսն, և զամենայն կազմած, և զինչս գեղջն հուրբ դատեալ են, զի մի ցաւ ինչ տարածեսցի ի գեղջէն։...

[1]757 փետր. 25
ի վարատին

Նուաստ ծառայ
Հ. Յոհաննէս վրդ. Լազ.

ՄԳ.

Թրքական սուրբ շահատակութիւններէն էջ մը։

Գերապատիւ և. խոնհմագարդ Տէտաև Տէտաև Հայր Պօղոս վարդապետին իսնարհադիր ողջոյն կարօտաւանաց

... վասն հիւանդութեան չհզատէին՝ մեծ աղմուկ երևի լինիլ ի քաղաքն. և յոյժ ծանր է։ Հացն յոյժ սեաւ է և սուղ։ Միսն յոյժ ցանցառ գտանի։ Տրտունջ մեծ ի քաղաքին։ Օրըստօրէ եէնիչէրի աղասին ժողովէ զապստամբս։ Որքան դատաւորք արթուն են, այնքան առաւել ապստամբք չատ։ Ի անատօլու քիւփէլի առապն քայլէ հանդերձ 700 ձիաւորօք. զչէնս կոխէ, զգիւղս աւերէ. զկառավանս յափշտակէ. և զընդդիմացօղսն ի սուր սուսերի մաշէ։ Ընդդէմ սորա ոչ ոք փաշայ գնաց ի պատերազմ. անձնապաստան ընթանայ. և զայս ի նորոյ լուաք, զի ի սեբաստիայ իբրև արք հինգ հազարք ապստամբեալք ընդդէմ փաշային, կոխեալ զախոռ նորա, զերիվարս նորա առեալ գնացեալ են. և թողեալ զկաղ երիվար մի, և ազդ արարեալ փաշային թէ ահա մեք գնամք, և դու հետևեաց մեզ կաղ երիվարաւ, և հեգնեալ գնա մեծապէս։ Վասն թուան չահի պարսկաց՝ ասեն թէ թագազարդեցաւ ի Թֆլիզ, և խաղաց գնաց ի սպահան. այսպէս հաստատեն. և թէ գնա հաստատեալ իցէ ի թագաւոր՝ մօսկոփ։...

գրեցաւ ի պէկ օղլի 1757 ի յուլիսի 21

Նուաստ ծառայ
Աթանաս վարդապետ [եպիսկոպոս]

ՄԴ.

Յովհաննու երուսաղեմայ յատկացուած տօնը՝ զոր Մեծ Պահոց մէջ կը կատարենք՝ կ՚ենթարկուի վ.աւերաթղթիս մէջ կնճռոտ կացութեան մը, երևան եկած ցայտաւուրքի մը համաձայն, ըստ որում՝ անոր տեղ կը նշանակուի Ս. Յակեբ.ի անունը։

*Ցիշենք սակայն, որ հետագայ ժամանակի մէջ նախանձախնդիր ոգւով ու խիստ դառնացած շեշտով կ՚արտայայտուի Հ. Մկրտիչ Ալգերեան՝ նման յեղյեղուած կարծիքներու դէմ այսպէս. «Թող զի և ոմանք յիմաստակաց առ մեօք՝ կամեցան իմանալ «յայսմ միջոցի աղցից անուամբ Յովհաննու զՅակեբերանն որպէս կրկին տօնեալ, «կամ զիմաստասէրն ի կարգէ յիշատակելեաց ի թիւս տօնելեաց վերածեալ. և այլ «ևս մտահաճոյ կարծիք առ չգիտելոյ զստոյգ պատմութիւն վարուց Յովհաննու երու«սաղեմացւոյ։ Ծանիր և զայս ինչ կարևոր, զի ի հին և յերկաթագիր Շաշոցի «մերում դնի աստանօր ի Գ. շաբաթուս աղցից Մարտի ամսոյ՝ որ օր ԺԹ. յիշատակ «է Յովհաննու երուսաղեմացւոյ։ Յատմոս Ձ՚ԺԵ. կցուրդ. Պատուական է առաչի և. Պօղ. «Ա՚ռ. ի Տիմոթ. Զայս վկայութիւն դնեմ. Ա՚ռետ. Եւ եմ հովիւն քաչ..., որպէս և ի «հին տօնացոյցս գրի. «Շար. Յովհաննու երուսաղեմի հայրապետի. Որ զանչափ... «Եւ սակայն յետին օրինակագիրք հայելով ի սուտ պատմութիւն կուրանալոյ Յով«հաննու որպէս թէ առ արծաթասիրութեան՝ կարի տխմարութեամբ ի բաց բարձեալ «զհին ընթերցուածս յանկաւորս սրբոյ հայրապետի՝ կարգեալ են զայլ նոր ըն«թերցուածս վասն արծաթասիրութեան և կուրութեան... ի գատաստան եկիր... որ «է ամենևին անվայել սրբոյն. վասն որոյ արժան է փոխել զայսոսիկ նորամուտ «հնարս և պահել զնախնեացն կարգաւորութիւն» (Ալգեր. Վրք. Սրբ. Հոր. Բ. էջ 480)։

Գերապատիւ և աւետապայծառ Տեառն Յովհաննոսի եւն.

1757 Օգոստ. 17

... Ջհոռմի փաթրիքն խայտառակաբար սիւրկիւն արարին յանմարդաբնակ տեղիս եգիպտոսի, զտեալ ի նմա ինաս, թէ փռէնկ է. և այն էր սուտ, զի ոչ էր փռէնկ, այլ ուղղափառ...: Այլ ի վեր քան զամենայն հարկաւոր, և մեզ լուսաւորչական և յոյժ բերկրական այս է, զի ես ըստ որում պնտեալ եմ զհետ գտանելոյ զհին գրեանս, գտի զմի թերատ և փոքրիկ յայսմաւուր, գրեալ իբր ի հինգհարիւր ամաց հետէ. յուզեցի զթուղթսն, և գտի ի նմա զիր մի՝ ամենայն ուրախութեան արժանի. վասն զի բազում տրտմութիւն էր մեզ, զի ի մեծ պահուց երրորդ շաբաթու օրն դնի տօն յօհաննու երուսաղէմի հայրապետին, զոր ի յայսմաւուրացն ճանաչեմք ոչ սուրբ, այլ գոռոզ ոմն պատժեալ հրաշիւք. սակայն իրն ոչ է եղեալ այնպէս. զի ոչ է տօնն այն յօհաննու երուսաղէմի հայրապետին, այլ յօհաննու ոսկեբերան հայրապետին, տօնեալ կրկնակի յաղագս ի կոկիսոն հայոց զնա ընդունելոյ ևն: վասն զի յայսմաւուրս այս ընթանալով կարգաւ ընդ շաբաթս մեծ պահուց, նախ դնէ զտօն սրբոյն թէոդորոսի. ապա սրբոյն կիւրղի. և ապա սրբոյն յօհաննու ոսկեբերանին ևն: Ուստի և ի շարակնոցն յերրորդ շաբաթին ոչ դնի յօհաննու երուսաղէմի հայրապետին. այլ սոսկ յօհ. հայրապետին, զոր յուսամ գտանել և յայլ հին յայսմաւուրսն:

Նուաստ ծառայ
Հ. Մկրտիչ վրդպտ. [Անանեանց]

Մե.

Թրիէստի մէջ վանք մը գնուելու դիտաւորութիւնը՝ զոր Հ. Թադէոս կը հաղորդէ՝ ըստ բաւականի շահագրգռող ձև մ'ունի մեր վաւերաթուղթին մէջ: Թէ ինչո՞ւ սակայն չէ կրցած այդ իրագործուիլ՝ ուէ ուրիշ բացատրութիւն մը չգտանք:

Գերապատիւ Տեառն Տեառն Յովհաննոս վարդապետի և Հրաշ Հօր ողջոյն յոյժ

... Զնորագոյն ինչ ևս ունիմ ծանուցանել Գերյարգութեանդ. Մինաս վարդապետն, քեռորդի Հ. Իգնատիոսի կամի և չանայ վասն մեր առնուլ վանք մի ի դռէստ, որ կայ անդ այժմ դատարկ. և ունի զայգիս, և զպարտէզս. և երկու պատարագի մանսիոն վասն երկուց քահանայից կամի հաստատել ի թագուհւոյն, և յաւուրն մի թալէր և յանցանել ժամանակի զայլ չնորհս ևս գտանել ի թագուհւոյն, և ածել անդ զճօռճին զքեռորդի իւր և զանդոն աղայն. ևս և ի կոստանդնուպօլսոյ զոմանս հանդերձ տամբ և որդւովք. և խօսեալ էր վասն այսորիկ ընդ իչխանս քաղաքիս. և նոքա ցուցեալ են հաւանութիւն իբր ի կողմանէ թագուհւոյն: Եւ որպէս ասէ անդոն աղայն կարծեմ թէ կարօղ է յառաջացուցանել զդիտաւորութիւն իւր, եթէ ընկալցի հաւանութիւն ի միաբանութենէս, և վասն այսորիկ գալոց է ևս ի վէնէտիկ խօսիլ ընդ Գերյարգութեանդ մի ըստ միոջէ, վասն այն ևս համառօտ գրեմ: Ջանդոն աղայն ասէ թէ յոյժ բարեկամ է միաբանութեան ձերոյ, և մերձաւոր կարծիք է թէ թողցէ ինչ ի մահուան վանաց ձերոց. կարելի է ևս ոչ գիտեմ: Եւ զի աշխատի հոգւով չափ առ ի առնուլ հրաման հաստատութեան վանաց ի դռէստ, եթէ ոչ ընկալցի հաւանութիւն ի միաբանութենէ, տրտմելոց է յոյժ, զայս համառօտիւ իմացեալ Գերյարգութեանդ և ամենայն միաբանից արասջիք որպէս զիարդ հաճոյ թուիցի... նա ինքն անձամբ եկեալ խօսելոց է ընդ ձեզ:...

Նուաստ ծառայ

1757 Նոյեմ. 12 — *Հ. Թադէոս վարդապետ [Գրիգորեան]*
[վիննա]

ՄԶ.

Կը խօսուի՝ հոս յիշատակուած շրջանին մէջ տեղի ունեցած Թուրք–Արաբ ընդհարումներու և անոնցմէ յառաջ եկած ծանր հետևանքներուն վրայ։

Գերապատիւ և արհեստապայծառ Տեառն Յոհաննիսի
Արբայեօր մերոյ ողջոյն

... Ձժամ մի հոումի վաղնջական նորոգեալ սակաւ մի, և յիմանալ ոմանց ի տաճկաց, և խնդրել խայծ ինչ, և ի չանսալ զոռոզացն յունաց, եւտուն արզուհալ թագաւորին. և նա հրամայեաց փլուցանել. և նոյնժամայն ընչակատարքն հիմնայատակ արարին։... Տաճիկն է ի մեծ վարանս և պատրաստի ի պատերազմ ընդդէմ արաբաց, որպէս հաստատեն բազումք, քանզի ունէին սոքա ի դամասկոս զփաշայ մի սիրելի, և յինքեանս առատաձեռն, զոր թելադրութեամբն աստ եղեալ խզլար աղասիային տաճիկն փոխեաց. և արաբքն այնչափ բարկացան, և գրգռեցին զբնածին ատելութիւն իւրեանց ի թուրքսն, մինչև աւազօրէն համախմբեալ յարձակեցան ի վերայ ուխտաւորացն մեքքէի, որք ասին հաճըլար. և զբազումս ի նոցանէ կոտորեցին, և զբազումս ընդ երեսս անապատի ցանկցիր արարին. որք անդէն անառաջնորդ և անշուր կոտորեցան. և այսպէս եօթանասուն հազար այր ի միջոյ պակաս արարին. և ինքեանք նոյնհետայն յարձակեալ զմեքքէ և զգոռն առին. և ընդ սահմանս եգիպտոսի և մանաւանդ երուսաղէմի և դամասկեայ յարձակ յարձակ խաղացեալ ի տիրել ամենայնի թևակոխեն. վասն որոյ և ուխտաւորքն հայոց դեռ տակաւին նստեալ կան ի յոպպէ, երկուցեալ յերեսաց ասպատակաւորացն արաբացւոց։ Այլ թուրքն զայս ամենայն տեսեալ, նոյնժամայն զարմատ չարեացն զխզլար աղասին եւս գլխատել. և զգլուխն ի դուռն պապայ հիւմայինին դնել. և ապա զինն փաշայ սահմանեաց կազմել զչու պատերազմի ի խաղալ ընդդէմ արաբաց։ Սակայն զայս ամենայն գործէ յառաջատեսութիւնն աստուծոյ յաղազս վախճանին, զորմէ ոչ կամիմ սևամանր հնդկաւ ի սպիտակաղաչաս նկարել։ Մխիթիմ օղլուն այրն անհաւատ՝ արտաքսեալ ի տանէ խուլելեանց, ի տան լուտերականի ի պէյօղլուն յորջացեալ, կայ յանկողինս ի յոգւոց պարզել սպաստան եղեալ, զի իբր հոգեվարք է։...

Ձամի Տեառն 1757 դեկտ. 20
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Մկրտիչ վրդ. [Անան.]

ՄԷ.

Մէկ երկու տեղեկութիւններու հետ կ'ակնարկուին նաև երկու ոսկի կանթեղներ, որոնք Երուսաղէմի տաճարին ընծայուած են Լպանիոյ Ֆերտինանտ Զ (1746–1759) և Բորբուքալի Յովսէփ (1750–1777) թագաւորներուն կողմանէ։

վ. Գերապատուելի և յարգելի Հայր Գեորք վ. արդապետի
յոյժ բազում սիրով ողջոյն

... եգիպտոսէ եկն գիր Փոնդի լազարին, որ զեկուցանէ վասն վէճին որ այսմիկ ամի եղև յերուսաղէմ վասն կախելոյ նոր երկու կանթեղս, 14 անձինք ի կռուի հարկանմամբ մեռան և 100 քեսայ յարևելցիք և ֆրանկք եղին տուքանս և ապա հաշտեցան և ոսկի կանթեղքն որ մինն ի սպանիայու և միւս բուրթուքալու թագաւորաց յիշատակք, նոքա երուսաղէմայ լեալ որ բազում [= հազարս] ոսկւոց արժէին։ Երկրորդ աւիգն ի նոյն գրի. 4 սանճախ եգիպտոսի սպանեալ և ոմանս փախուցեալ և հէքիմ օղլու փաշան

բռնութեամբ ի Պալատէն վայր իջուցեալ։ երրորդ աւիգն. ատմ օղլի ասայտ փաշան ի հալէպ նստեալ հասարակ քաղաքացւոց մեծ բարութիւնս արարեալ. և յոլով սովորական զրկողութեան տուգանսն բարձեալ և հացին լիտրն 6 ստակ արարեալ. և պարագն որ կայր ի վերայ քրիստոնէից սիրով ի վերայ թարգմանութեան եդեալ. և արժանի գովութեան այլ իրս գործեալ։ իսկ ի Հռոմ քաղաքի այսմիկ ամսոյ զանազան անձինք անկարծակի մահուամբ մեռեալք ի մէջ որոց կարծինալ միւսն։...

Նուաստ ծառայ
Յովսէփ եպիսկոպոս [Եղեսիայ Մեսիխանեան]

Ցամի Տեառն 1757 Նոյեմբերի 26.ին
ի Հռոմ ի սրբուհի մարիամ եգիպտացի

ՄԸ.

Թէ որքան մեծ է շահեկանութիւնը հետևեալ վաւերաթղթիս՝ ընթերցողն ինքնին պիտի ըմբռնէ։ Գլխաւոր նիւթն է երուսաղեմի Սուրբ Յարութեան Տաճարի ժամանակակից անցքերը՝ որոնք Զամչեանի Պատմութեան մէջ չեն յիշուած, թերևս աւելի հետագայ ժամանակի պատկանելնուն համար, որովհետև նամակս անմուսկան էր ու կը գտնուէր մեր դիւանի 1757–ի թղթերուն մէջ, թերևս նոյն իսկ անդրադարձնելու՝ թէ սոյն տարւոյն վերաբերեալ գիր մ'է։

Ցոյժ պատկան և անկ համարիմ ասէն ընդ քարտիզիս այսմիկ իմում ճառել զանցսն՝ որք անցին յերուսաղէմ յաւուրս իմ։ Զի ըստ սովորութեան իւրաքանչիւր ամի գայ հասանի ի սուրբ երկիրն կոմս դամասկոսի, այսինքն փաշայն, և պահանջէ զտուրկան տուրսն յերից ազգաց։ ի հայոց առնու ոսկի 3000, ի յունաց 4000 և ի լատինացւոց 5000։ Ցետ այսորիկ պազիրկեան պաշի փաշային՝ որ էր ի հրէից անտի՝ անկեալ ի մահիճս խօթութեամբ մեծաւ չերմախտանայ։ Եւ պատրիարգն յունաց և լատինացւոց ուղարկեն զթարգմանս իւրեանց հանդերձ պարգևօք հարցանել զորպիսութենէն։ իսկ հայք ոչ։ Եւ ոչ յետ բազում աւուրց կինն այնմիկ հրէի խնդրէ չնորհս յառաջնորդէն հայոց, կարել մտանել ի պարտէզ ինչ առնել աղօթս ըստ սովորութեան իւրում։ Զայս պարտէզս գնեալ էր գրիգոր վարդապետն. և չէր պարտէզ, այլ բնակութիւն, յորում գտանիւր ժողովարան հրէից։ Եւ յետ գնելոյ զայն՝ քակտեալ ի պարտէզ դարձոյց։ Եւ իբրև չընկալաւ զխնդիրն՝ խրոխտացեալ գնայ վաղվաղ. և պատմէ առն իւրում։ իսկ այրն քինախնդիր և նենգոտ մտածեալ առ փաշային իւր՝ խօսի ընդ նմա և ասէ. եթէ ունիմ չնորհս առաջի քոյ տէր իմ, լուր ինձ. և նա ասէ, ցի՞նչ։ Ասէ հրէայն. կամիմ չահել զդրամ բազում յոյժ. կոչեա զպատրիարգունս յունաց և հայոց, և ասա ցնոսա. Թէ կամիմ ի վաղիւն յետ երեկոյեան ժամու գալ, և գերեզմանատն յիսուսի նստիլ։ ի համառօտի ասացից. կոչէ փաշային զպատրիարգունս՝ և խրոխտիւ խօսի ընդ նոսա։ Նոքա զարհուրեալ ասեն. տէ՛ր իմ, չէ այդ բնաւ լեալ յազգի մերում, և ոչ յազգի ձերում, զի տեղին այն աղբանոց կոչի. և դու զիա՞րդ կարիցես գալ, և զաղօթս քո մատուցանել։ Ցայ պատասխանի փաշային. լուայ քաջ, Թէ լոյս ելանէ ի գերեզմանէ յիսուսի. ես եկից և առ դրան եդից զաթոռ իմ, և վայելեցից զդոյզն ինչ ի լուսոյ յիսուսի։ Եւ սոքին յուզեալք, չգիտելով տալ պատասխանի, պատճառէին ասելով, Թէ ոչ անկ լինի տէրութեան քում առընթեր լինիլ անդէն, զի մեք զհրոյ տօն կատարեմք. և այլ ինչ չունիմք։ Եւ փաշայն առ ի չինել զկամս նոցա և չգնալ ի գերեզման խնդրէ քսակ 1000։ Եւ զի՞նչ երկարեցից՝ յետ անթիւ արտասուաց և լացից, հազիւ կարեն հաճել զփաշային 100 քսակաւ։ Սոյն սա այսպէս անցանէ։ Եւ յետ այնորիկ ազդ առնէ փաշային պատրիարգաց զի պատրաստեսցեն տեղի ի յեկեղեցւոջ սուրբ աստուածածնայ Գեթսեմանիին. զի գնացեալ վճարեսցէ անդէն։ իսկ նոքա զառաջինն չփոթութեամբ յուզեալք՝ զայլ և զայլ իրս պատճառէին. և հազիւ դադարեցուցին զնա՝ տալով այլևս 50 քսակ։ իսկ պատճառն Թշնամութեան լատինացւոց ընդ յունաց իսկա-

կանն եթէ կամիք այս է. զի ի թաղման տեղւոջ տիրամօր կուսին յետ կոյս խորանին ունէին և յոյնք տեղի. և յաւուրս տօնախմբութեան գնային յուխտ, ընդ իւրեանս տանելով զխորանի զարդարանս: Այլ ձանձրացեալք միշտ ի կրել զարդարանս նոյն խորանին, զամս երկուս այնպէս թողեալ են. և իբր ամրացուցեալք ի յորմունս: փաթերայքն ասացեալ են. ի վեր առէք զզարդս ձեր. և նոքա չեն անսացեալք: Եւ ի չանսալն նոցին՝ ածեալ ընդ իւրեանս լատինք զարս ի դատաւորէն, քանդեալ կործանեալ, հիմնայատակ արարեալ են զզարդս նոցին զեկեղեցականս: Անդէն ազգն յունաց սաստիկ վիրաւորեալք ի հոգի, ի ծածուկ ուխտս արարեալ են. և զարան գործեալ զի և յաւուրս տօնախմբութեան նոցին յարութեան, զայն ինչ արարեալ, որպէս և լուեալ իսկ էք: Եւ յետ այսորիկ հրեշտակապետին զՔերմանն խնդրէ: Զայս եկեղեցիս ի 18 ամաց հետէ չինեալ էր գրիգոր վարդապետն. բայց առանց ֆէրմանի. և ի տեսանելն զգիրն փաշային, թէ չէր ֆէրման, այլ պոյրուլթու՝ ոչինչ համարէ զայն. և զեկեղեցին ի ձեռաց նոցա կամի յետս առնուլ. և զինչ ասացից՝ և վասն այնր առնու քսակ 20. ի վախճանի յաւուրս իմ, յորս ես գտայ անդէն, 120 քսակ տուժանս ետուն հայք. նմանապէս և յոյնք ևս առաւել: Երեկեան օրն զեկեղեցին պէշլթաչու արքունի հրամանաւ հիմնայատակ արարին. որոյ ալագաւ ազգս մեր ի տառապանս գտանի այսօր: Ողջ լեր ի տէր:

Ծառայ ձեր և եղբայր Թովմաճանեան
Մահտեսի յօհաննէս

ՄԹ.

Ջոյգ մը նամակներ՝ որոնք կը տեղեկագրեն Մուստաֆա Գ. ի սուլթանութեան օրերէն ինչ ինչ վայրագ կարգադրութիւններ, որուն մէկ յայտնի ապացոյցը կը տեսնուի մեր Բ. թուղթին մէջ՝ յանձին հելլէն կոյր նուագածուի մը: Ան կը ծանուցանէ Ցունաց կողմանէ կատարուած նոր գրաւումները Երուսաղեմի Սուրբ Տեղեաց մէջ:

Ա.

*Ցարգոյացպատիւ և գնրապայծառ տէառն Յոհաննիսի
վարդապետի և աբբայիօր իտնարհուրնամբ ողջոյն*

Այս Գերսրդ գիր է

... Ցայս նուագ զօրացաւ յոյժ հրաման մեծի քաղաքիս ի վերայ հարկատուաց չզգենուլ փառաւորս, այլ գծուծս, և աղքատացի մինչև ցայսօր ժամանակի. զի և ինքն գոլով դատըզատելի իբրև զհայր իւր, այսինքն ճգնազգեաց ըստ օրինի իւրեանց, ոչ զգենու փառաւորս, և ոչ առնու բնաւ զընծայս, մանաւանդ թէ ցրուէ յիւրոցն, որպէս ասեն, և է անզաւակ. վասն այն դադարեալ է տուրևառութիւնն և սաստկանայ օրըստօրէ թանգութիւն ամենայն իրաց, ևս առաւել հացի, և այլ ուտելեաց, և հացն է սեաւ և փոքր և խառն ընդովք կորեկոյ և այլ իրաց և մոխրով. ուստի ըստ դաւթի զմոխիր որպէս զհաց ուտեմք առհասարակ: Եւ գոհանամք զտեառնէ, զի լսեմք, եթէ յարևելից կողմանս ի տեղիս տեղիս ոչ գտանի և այն, զոր մեք ուտեմք վասն սաստկութեան սովուն:... Այլ վասն իրացն յունաց զինչ գրեցից, զի ոմանք ի մեծամեծաց նոցա կաշառս տուեալ վեզիրին զ600 քսակս դրամոյ՝ առաքեցին հրամանագիր յերուսաղէմ, և առին զտեղիս ինչ, որ էր ի ձեռս լատինացւոց ի ձորն գեթսեմանի, ի բեթղէհէմ, և ի սուրբ յարութիւնն: Կարծեմ թէ վախճան սորա չար լինի յունաց ազգին ի փոփոխել մեծի քաղաքիս. թէպէտ այժմ ոչինչ խօսին ազգքն ֆռանգաց վասն իրացս այսոցիկ: Ի սկիզբն տարւոյս ի 24 յունվ. ըստ նորոյն եկին հասին այսր չորեքին նաւքն դանեաց, այսինքն դանիմարքին,

որոց երկուքն նաւք արքունիք մնծամնծք, իսկ երկուքն փոքր նաւք վաճառականաց, որք բերին զընծայս թագաւորին տանկաց, և ինչս բազումս վաճառի։ Եւ դեռ ոչ մատուցին զընծայսն, քանզի բերեալ էին զայն վասն օսմանին որ մեռաւ. իսկ այժմ սպասեն վերըստին հրամանի թագաւորին դանեաց մատուցանել զայն առաջիկայիս։ Իսկ վասն անկարգութեան և աւերութեան քաղաքիս ամենևին լռեցից, զի և ոչ զծայր ճառից նորա յայսմ փոքր քարտենի կարեմ բովանդակել։...

Ղուռայ անպիտան և անարժան
Հ. Իգնատիոս վրդպ. Մխիթարեան

Ցամի տեառն 1758. փետր. 19
ի Կոստանդինուպոլիս

Մ Ժ.

Բ

Գերապատիւ և աւելիաւժար տեառն Յոհաննեսի արբայծոր վերոյ ոդչոյն ի Քրիստոս

... Թագաւորն երկրիս խելթիւ հայիւ ընդ ասէս, ունի զբնական հակառակութիւն ընդ քրիստոնէից. արար զայնպիսի եասախ զգեստուց, որ ոչ է լուեալ յումեքէ եղեալ յառաջին դարս։ Սով մնծ է յանատօլու, տիարպէգիր գրեթէ ի հիմանց տապալեցաւ՝ յաղագս սովուն կոտորելով ժողովրդեանն. ստամպօլ ևս է նուազութիւն. սակայն գտանի հաց. Թանկութիւն է ամենայնի առաւել քան զվենետիկ։ Չէքիմօղլու ալիփաշայն եկն յիզմիր, կոչեցեալ յարքունուստ։ Տանիմարքայն ի ստամպօլ էլչիութիւն հաստատեաց. բովանդակ թէրճիմաններն հայ են. պաշ թէրճիմանն է քէպէճի օղլու պօղոսն. խթինճին զօհրապօղլուն. մեր խօճասարն ևս յարեցաւ ի թէրճիմանութիւն. փոչնկքն յոյժ նախանձին։ Բէման շօճին նուագածու գերահուչակ՝ ծեր, և յերկուց աչացն կոյր, կոչեցաւ ի պալատ քեռ թագաւորին ի մէջ օրիորդաց՝ անդ էր միայն թագաւորն. կամեցաւ հարկանել զնուագարանն. սակայն թագաւորն արգելեալ, ասէ. կա՛ց. և նա լռեաց. ասէ. ո՞ւր է բնակութիւն քո. ասէ ի խուռուչէշմէ. ասէ. կա՛յ անդ և այլ տուն քրիստոնէից. ասէ. այո՝ քսան և քսանևհինգ։ Ցորմէ՞ ազգէ ես, հա՛յ թէ հոռոմ. ասէ. հոռոմ է ծառայ ձեր։ Ցայնժամ ասէ ցնա ցաստմամբ թագաւորն. այ անհաւատ և հայհոյիչ. ո՞չ լուար զեասախ թագաւորական. որ տակաւին զբարձր և զկարմիր խալփախդ ոչ ես փոխեալ. և նա՝ ի խոստովանիլն զյանցանս, մտի առ շօճին. և առեալ զխալփախն, հարկանէ զգետնի. և դարձեալ դնէ ի գլուխն. և դարձեալ առեալ հարկանէ զգետնի. զայս արար երիցս. և ապա ասէ. ես այժմ դատապարտէի զքեզ ի մահ. սակայն խնայեմ ի ծերութիւն և ի կուրութիւն քո. և նոյնհետայն հրամայեալ ի բանտ պօստանճի պաշխին տանիլ. և մինչ ածէին զնա լալով, յափշտակեաց թագաւորն զնուագարան նորա ի ձեռաց, և սկսաւ հարկանել զթիկունս այնչափ, մինչև խորտակեցաւ նուագարանն. և ապա եդին ի կոճեղս յերես ի վայր՝ չղթայ ի պարանոցս, և յայլ ուր։ Այս պատմութիւն լիցի նչան սաստկութեան եասախին. և այսմ ոչ հաւատային, եթէ նա բերանով իւրով ոչ պատմէր մեզ։... Պատրիարգն կամէր զսարգիս վրդ.ն ի թէքիրտաղէ յառաջնորդութիւն ուղարկել, և ապա յերուսաղէմ յառաջնորդ, սակայն ոչ անսաց, որպէս ընդ նմա խօսեցաք ևս յաղագս այսր...։

Ղուաստ ծառայ
Հ. Մկրտիչ վրդպ. [Ան.]

1758 փետր. 20
[ի Կ. Պոլիս]

ՄԺԱ.

Դրանօթութիւններ Հնդիկ աշխարհին մէջ Անգղիական յարձակումներու մասին։

Մեծի Գերապայծառիդ Բստենփանեանոսի բանիբուն վարդապետի
աբբայիօր ողջոյն բազում

... վասն պատերազմին արեւմտականաց որ ծով և ցամաք վրդովեր են, ոչ միան սոցայ պատերազմն, այլ երկրիս կուսայկալն որ ամի ոչն ՈՋ [?] վասն անբարդաւանութեան ասկին ինկլիզաց եկն ի վերայ կալկաթու, միջոցի երից աւուր էառ զբերթն և աւարեաց զրոլեր քաղաքն, ապա բաց եթող գնաց իւր տեղն, վասն եղև պատճառն որ ինկլիզքն պատրաստի նաւ ունէին ի ծովն Հնդկաց նոյն ամի եկին կրկին իւրեանց քաղաքն առին աւերակ, ապա ոմանք երկրիս զօրապետք սրիկայք միաբանեցան ընդ ինկլիզաց. եկին առան զչանտրնակար, որ էր քաղաք ֆռանսիզաց, որ կարողացան ոչ դիմի կալ վասն սակաւութեան զօրաց իւրեանց. քանտեալ բոլոր քաղաքն աւերակ արարին. ետացեալ զօրքն բանտական արարեալ դրկեցին ուր և կամեցան, ապա յետ ամենայնի ձեռնտուութեան ասպարապետին Գաւառիս։ Գնացին մախսուտապատ քաղաքացիք մատնեցին զկուսակալն իւրեանց ի ձեռն ինկլիզաց, զոր առեալ յետ աւուրց ինչ ըսպանանեալ անյետ արարին ապա. մինչև ցայսօր երկիր վրդովեալ կայ ապա. այժմ լուր կայ որ թագաւորայական կողմանէ մեծ զօրք է գալոց, որ ապագայն աստուծոյ է։...

Ամի 1758 փետրվարի
[Բանկալայ կղզին]

Մնամ պատրաստական ամենայնի
Տէր Յովաննէս Աստուածատրեան

ՄԺԲ.

Տիարպէքիրի մէջ տեղի ունեցած ահռելի սովի մը երեսէն աղեխարշ պատմութիւն մը կը ներկայացնենք։

Գերապատիւ և ամենապայծառ Տիառն Յոհաննու Բստեփանեոսի
մեծի աբբայ հօր ողջոյն

... ոչ երբեք լուեալ և տեսեալն ի քաղաքիս լուեալ և տեսեալ եղև յայսմ ամի ի մասին ուտելեաց, և մանաւանդ հացն, որ եղև գրեթէ 20 կամ 25 տրէմն ստակ մի. և այն բոլորովին սեաւ, և կորեկալից և գարելից և մոխրախառն. ըստ օրինակի կոտորակին, զոր տփով առաքեցի առ ձեզ. և այն ոչ գտանիւր, մինչև բազմախումբ ժողովրդեան խոնիլ առ փուռամբք. և աղաղակաւ և կոծով հազիւ մի կամ երկու հաց ընդունիլ. ոչ կարեմք պատմել զբազմութիւն եասախճիյից, որք սփռեալք ընդ փուռսս հարկանեն զժողովուրդն և զոմանս ի բանտ կռեն։ Ասա այսպէս, իսկ յանատօլու ամենևին է խեղճութիւն, և մանաւանդ ի տիարպէքիր, ուր բազումք սովալլկեալք, անկեալ մեռանէին ի հրապարակի. և չունք զմարմին նոցա ուտէին. և այն զկնի ուտելոյ զմիս մանկանց իւրեանց։ Եկին ոմանք և զտեսեալսն իւրեանց մեզ պատմեցին. ասեն, տեսաք զբազումս ի տիարպէքիր սովամահս ի քաղաքի. և փութով ելեալ արտաքս, տեսաք ի մերձակայ անտառին զկին մի իբր քսանևհինգ ամեայ, զի փարեալ զծառով իւիք կամէր կորզել ինչ. և մօտ գնացեալ տեսաք, զի քաղէր զծառոց կեղևանս, զի կերիցէ. հարցաք զի՞նչ գործես զայդ. ոչ կարաց պատասխանել. զի վասն սովուն ծամելիք իւր աղխեալ էին, և մերձ էր ի գլորիլ։ Տուեալ նմա կոտորակ մի հացի, զօրացուցաք զնա, զի գիտասցուք զանցսն. իբրև բարբառն արձակեցաւ, անկաւ առ ոտս գրաստուց մերոց, լալով թէ ահա մեռանիմ

ի սովէ, ածէք զիս ընդ ձեզ գոնէ ընդ քարշ և ընկեցէք զիս ի տեղի մի, ուր գոից կոտորակ մի հացի։ Բայց զի այս էր մեզ անկարելի, տուաք այր իւրաքանչիւր կոտոր մի հաց և ի բաց արձակեցաք զնա։ Եւ յառաջ խաղացեալ եկաք ի գիւղ մի. և մտաք ի տուն, ուր տեսաք զերկու մանուկ տղայս և ոչ զայլ ոք. ասեմք. ո՞ւր են հայր և մայր ձեր. ասեն. հայր մեր ոչ է աստ. իսկ մայր մեր վասն բազում արտասուաց մերոց գնաց հաց եփել մեզ։ Զայս լուեալ ելաք արտաքս որոնել զմայրն. և գտաք զնա ի յերդնոցն կախեալ զինքն. կտրեցաք զչուանն, սակայն գտաք մեռեալ։ Վազեցաք ի թոնիրն, և տեսաք, զի զերկուս կղմինտս եդեալ է յփել, զի խաբեսցէ զմանկունս իւր։ Իսկ եասանն թագաւորական ոչ դադարեցաւ, որ վասն զգեստուցն. մինչև պատառեցին յաւուրս յայսոսիկ զչնչին խալփախն ևս արուեցին եղբօր հայր մկրտչին։... Սարգիս վրդ.ն յայսմ մեծ պաքի ի խալաթիայ քարոզէ...։

1758 մարտ 20
[ի կ. Պոլիս]

Նուաստ ծառայք
Հ. Զաքարիա և Հ. Մկրտիչ վրդք.

ՄԺԳ.

Հոս պիտի կարդանք Թրանսիլուանիոյ մէջ Նոր Տօմարն ընդունելու շուրջ յարուցուած ժողովրդական շարժումներն ու տարաձայնութիւնները։

Գեռապատիւ և գերագօն, Գերյարգելցկելոյ Ա[ր]քեպիսկոպոս իմոյ
մեծաւ ըղձմամբ զսկսն հաստուրիկով բազում խոնարհութեամբ ողջոյն

... Ցայտ լիցի Գեռապատիւ Տէրութեանդ. քանզի աստ ի քաղաքիս մերում միաբորհուրդ և միակամք ամենեցունց հաւանութեամբն թէ ծերք և թէ տղայք սկսեալ եմք Հռոմայեցւոց տօմարաւն վարիլ ի յայսմ տարւոջ ի տօնէ Տեառն ընդ արաջին, վասն որոյ գրեմ թէ որպիսի կերպիւ սկսեալ են. քանզի ի վաղուց ժամանակէ ցանկալին առ այս։ Եւ այժմ առնելով զհամահաճութիւնն և զկամեցողութիւնն ստորագրութեամբ յատուկ ձեռաց իւրեանց, սկսեալ նախ ի մեծամեծաց մինչև ցփոքունս ըստ կարգի, և յորժամ ի կատար եղև ամենեցունց ստորագրութիւնն, յայնժամ գնացին առ վերապատուելի փահանայս և յայտնեցին զկամս իւրեանց, զոր և նոքա պարտաւորեցան հետևիլ կամաց ժողովրդեանն, և կրկին ևս ընդ նոսին խորհուրդ արարեալ հաստատեցին, զի փահանայ մի, ընդ միոյ ի ժողովրդենէն երթիցեն առ առաջնորդն Թռանզիլվանիոյ, որպէս զի նորին հրամանատուութեամբ սկսանիցէին զյառաջարկեալ խնդիրսն, զոր և երթալով առ նայ յոյժ մեծապէս ուրախութեամբ ընդունեալ է զնոդիրսն, և չնորհեալ է զթողութիւն մանաւանդ տեսանելով զհամաձայնութիւնն ամենեցունց կեղէու ժողովրդեանն։ Եւ առ այս նոյն ժամայն դառնալով առ մերայինս սկսեալ է խօսակցիլ Եպիսկոպոսն զտարաձայնութենէ ժողովրդեանն խաչֆալովու, քանզի առաջնոյն նոքա գնացեալ էին առ նայ խնդրել զթողութիւն, բայց ոչ միակամք և միախորհուրդք ամենեցունց հաւանութեամբն, և թէպէտ նոցա ևս տուեալ էր զթողութիւն, բայց ոմանք զայ[ս]նութիւն Տեառն ըստ հին Գալէնտարին առնելով, և ոմանք ըստ նորոյն, որպէս և իսկ պատահեալ է ընդիմութիւնս այս ի մէջ նոցա, զի ըստ նորոյն, ըստ սովորութեան Բէչկալանիայի փահանայիցն երթալ և օրհնիլ զտունս ժողովրդեանն զորս ոմանք սիրով ընդունեալ են, և ոմանք ընդէմ խօսելով թէ ոչ գոյ այժմ մեր այտնութիւնն. այլ եկեսցուք յորժամ մերն իցէ և սիրով ընդունելոց եմք, և ոչ են թոյլ տուեալ զի օրհնեսցեն զտունս իւրեանց։...

Նուաստ և պատրաստագոյն Ծառայ տրուպս
Տրցւ. Պետրոս Անտոնեան

1758 Ապրիլի 30

ՄԺԴ.

Եղիսաբեթուպոլսոյ Հայերը՝ իրենց քաղաքին հողի օտարացման վտանգը տես-նելով՝ կը խնդրեն Մելգոնեան Աբրահօր միջնորդութիւնը, որպէս զի ինքը Ոսխտիս բարեկամներէն ու պաշտպաններէն դրամական զումար մը հայթայթէ, և անով Հայա-քաղաքի բնակչութիւնը կարենայ գնել իր հողը Մարիա Թերեզա կայսրուհիէն։

Որենեայ եղիցի ցիտուս փրիտոս

Գերապատիւ և Գերխնամատ տեառն տեառն Յակոբեանոս Արտուաժարան վարդապետի, Աբբայ հօր մեր Հայոց միաձեռանց, ի կաթուղիկ սրբոյն անուանի Աբբայի, ևառ. բոլոր վարդապետաց և հաստատակուրեանց մեծաւ խոնարհութեամբ ցիտուտաւանիդ սիրոյ ողջոյն կու մատուցանեմք.

Ընդ սակաւ ողջունիս մեր, նախ գթողութիւն կու խնդրեմք[ենք] որ կու պեզրեցնենք զգերապատուելութիւնդ այս մեր փոքրը գրօվն. Պատճառս այս է որ Աստուծոյ ողորմու-թեամբն կու քալինք մեր Թագուհուն մօտ. այսինքն Մարիայ դէրէզիայինը, և սօլիճի-դալուդ կու անենք այս մեր քաղաքին տէրիդօրիումը որ տայ մէզիկ որ կարենամք խաղաղութեան մէջ հանգչելու, զի ըստոյգ որ մինչև ցայժմ Թագուհունը եղիլ է նայ ամէնը ունացիլիմք քիչ մը հանգիստութիւն, բայց հիմայ լըսելով թէ մեր Թագուհին օգկայ բրիվադ Թագաւորաց կու կամենայ ծախելու կամ թէ ծախել է, նայ մինք տես-նելով և չաղըչելով զմեր ապագայն թէ խուճած պիլայ մեր քաղաքին բանը, թէ որ օգկայ բրիվադ Թագաւորաց ձէրաց տակ երթանք նայ, անոր համար պէտք է օր կաննենք որ մինք արնումք որ մերը ըլլայ և չիլանք օգկանու ձերաց և հրամանի տակ, և որովհետև այսպէս բանի շատ ըստակ պիտվական է. խորդէ օր մեր քաղաքացիքն պիտ կարենային ալ շատ ըստակ ալ Աստուծոյ ողորմութեամբն վար դընելու. միայն յայտնի պիլայ Գերապատուելութեանդ օր ամէնէքեանս պազրկանինք և մեր ըստակն խարնած է արու-տուրի մէջ. և այսպէս պէտք է որ քալինք օգկայ տէղրանք ուրուխ օր գըտնուինք ըստակ շահու, անոր համար տէսնէլով մեր Պ. քաղաքն որ Աղայ մարտիրոսն գօշոգանի աստուծոյ ողորմութեամբն վէնէտիկ կու էրթայ, նայ խնդրէցինք գիրեն հրամանքը, տալով իրեն հրամանուցը ձէրն էրկու ալպայ այս մեր քաղքին մօհրօվն և սուպզրիբձիայօվն և բլէնի-բօգէնձիայեալ քօվն, որ աշխատի և քալէ այդ տեղն ու մեր քաղքին վրայ քիչ մը ըստակ շահու առնէ, և գիտիմք որ Գերապատուելութիւնդ և հասատակութիւնը այտ տեղն շատ բարեկամք և բազրօներ ունի, նայ կու խնդրեմք որ բազրօն ըլլայ Գերապատուելութիւնդ և կաննի այս մեր փոքրը քաղաքիս համար որ զայս բանը հաստատէ Աղայ Մարտիրոսն, որ մինք ալ կարէնանք հաստատ ընալու, և Աստուծոյ ողորմութեամբն զայս մեր դիտա-տորութիւն կատարելու, որ կարենամք թէ մեր փոքրիկ քաղաքն և թէ փոքրիկ վանքն գերապատուելութեանդդ խաղաղութեան մէջ ընալու և բազմանալու, որ բարերարու-թիւնը և բազրօնութիւնը Գերապատուելութեանդդ մինչև որ այս մեր փոքրիկ քաղաքն աստուած հաստատ պահէ չիպի մորանամք, նաև ամենայն ժամանակ պարտական պիլանք մինք ալ ըստ անառժանութեան մերում ծառայելու Պատուելութեանդդ, վերջապէս այլ աղէկ և այլ յայտնի պի յայտնէ գերապատուելութեանդդ։ Աղայ մարտիրոսն զմեր կամքն թէ ինչու համար ունիմք զայս պիտվականութիւնը, ուրեմն կու յանձնիմք զայս մեր խնդրըվածքն Գերապատուելութեանտ և բոլոր հասարակութիւնը ընալով Գերապատուե-լութեանտ և բոլոր հասարակութեան.

խոնարհ ծառայք
և հաւատարիմ բարեկամք սուրբ Կրօնին
Եղիսաբեդեան քաղաքացիքն հասարակ

Գրեցաւ Եղիսաբեդան մայսի 17.ին 1758

Մայր Գիւան

Մժե.

Յովսէփ եպս. Մեւիանեանի երկասիրութիւնը՝ ինչպէս յայտնի է վաւերաթղթէն՝ վկայաբանական գրուածք մ'է։ Ան կը խօսի գլխաւորապէս Ս. Յահակ Պարթև Հայրապետի ժամանակակից Ս. Մարութա եպս.ի վրայ, որուն մեծագործութիւններէն մին եղած է շրջիլ զանազան երկիրներ՝ մարտիրոսաց նշխարներ հաւաքելու ու բերելու իր աթոռանիստ երկիրը՝ Մոփսց քաղաքը, զոր ինքը շինել տալով կոչեր էր մարտիրոսաց քաղաք, կամ որ նոյն է՝ Նփրկեբա կամ Նեփերկերտ, ասկէօրէն Մուրֆարղին, Մուֆարղին, Մուֆարկին, աստերէն՝ մայֆարգին կամ մայֆէրգաղ։ Այդ նշխարները Ս. Մարութա հաւաքած է ի Պարսկաստան և արևելեան և արևմտեան քաղաքները և ճգնաւորաց վանքերու մէջ։ Իր հաւաքած վկայից նշխարներուն թիւն է 280,000[1]։

Գերարգելի Աբբայ հայր Մեւիանեոս վրդպտ.ի յոյժ բազում ողջոյն և սէր

Ընկալայ զգիր զերապատիւ հայրութեան քո, գրեալ սեպտեմբերի 9, զոր ընթերցեալ իմացայ զամենայն և իսկոյն գնացեալ 6 սփութով գնեցի և թէլով կապեցի և ի վերայ նորա որպէս առաջին կերպն գրեցի և նոյն գրքածախին յանձնեցի։ Եւ փափագիմ զի նախ քան զմահն իմ տեսանել զնոյն երկու հատորսն հայերէն տպագրեալք և ի յամենայն յարևելս տարածեալք առ ի մխիթարութիւն և սբսփուռն տառապեալ ազգի մերում որ ոչ ունին ի ձեռն պատրաստ այսպիսի քաղաքական յարացոյց սրբոց մարտիրոսաց որով ընթերցմամբ արիանալ մարթասցին. քանզի միայն ի տօնացուցի ի մէջ ապայից տօնեն մարութայի եպիսկոպոսին որ զմարտիրոսաց քաղաքն շինեաց և ժողովեաց բազում նշխարս հազարաց մարտիրոսաց, և եղ մուրֆարղին. և անուանեաց զանուն նորա Նփրկեա. և այլ ՈՒնացեալ պատմութիւնն ոչ գիտեն, թէ նոյն սուրբ եպիսկոպոսն որում տեղոջէ հաւաքեաց զայնչափ սուրբ նշխարսն և զինչ իցեն անուանք նոյն սրբոց մարտիրոսաց. գոնեայ անուանի գլխաւոր եղելոցն ևս ոչ ճանաչեն, որ եթէ ըստ պատշաճի իմանային զհամայնից վասն յոյժ մեծ պատուով տօնէին նոցա և սերտ ի բերան առնէին զանուանս նոցա, և ամենայն դիպուածոյ և նեղութեան օգնութիւն հայցէին ի նոցանէ, որովհետև գաւառական և քաղաքական սուրբք են։ Բայց ես անբաւսիր առնեմ զազգն իմ վասն չունելոյ նոցա հանգստութիւն ի յարևելս որ այսպիսի իրաց պարապիցին որոնել, և զթագուցեալ գանձն վաթուց սրբոց նոցին բովանդակն յայտ անդիման ամենայն ընթերցողաց առնել. այլ ընդ սակաւիկ պատմութեանց ոմանցն որք ի մէջ այսմաւուրացն գտանի, չատացեալք զայլն ոչ որոնեն և ոչ ինչ զանազանել գիտեն ի մէջ ուղիղ և սղալ պատմութեանց։ Արդ՝ ծանիցէ հայրութիւնն ձեր համառօտ բանիւ. առաջին հատորի ասորւոյ լեզուի հեղինակն Ցօվսէփիոս կեսարացին Պաղէստինեան հռչակաւոր պատմիչն եկեղեցական թուականութեան և ժամանակական պատմութեանց. և հին հեղինակն վաթուց սրբոյն սիմէօնի սիւնակեցւոյ է կոզմայ քահանայն, զոր զկնի հնգետասան ամի վախճանմանցն սրբոյն երկաբապատում գրեաց զվարս նորա. որ և լատինացիք ի հնումն ոչ ունէին զամենայն յիշեցեալսն համանման ըստ ամենայնի. այլ անուն նոյն գրեանցն ունէին և զգրեանս ոչ, մինչև Աստուած այց արար ի ժամանակի վերջին դարի այսմիկ ի լոյս ածիլ ապագրութեան երկու լեզուէ։ Երկրորդ պատշաճ վարկայ զեկուցանել ձեզ զիր իմն, զոր լատինէվար եղեալ է մօնսինեօռ օվէտիօն վասն ոմանց սրբոց, թէ սոքա միայն ոչ է տեսեալ զանուանս առ լատինացիս կամ առ յոյնս. սակայն զկնի ապագրու-

1. Ասկեան «Վարք Սրբոց» Հար. ժբ. 585-619։

թեանն եաես ի հին այսմաւուրս լատինաց կամ ունաց գայլս, և մնացին սորա միայն զոր դեռ ևս ոչ է տեսեալ, այսինքն թէոտօթայ պոռնկի մակեդոնեայ փիլիպպի քաղաքէ։ Եւ ստրատոնիկայ կուսի և սելևկոսի փեսայի նորա չիսցիկո քաղաքէ ի սփռնթէ գաւառի որ է ի յասիայ։ Եւ կարելի էր որ Պօլլանտի գրեանց չինողքն որ յիշեցեալ գրեանքս առ նոսա հասեալ կայ և ըստ աւուրց ամսոց կարգաւորին զվարս սրբոց մարտիրոսաց և խոստովանողաց, գտանել կարիցեն զանուանս համայնից ի բազմաթիւ այսմաւուրս, որս առ նոսա գտանին զանազան հեղինակաց և լեզուաց. և կամ թէ առ ձեզ գուցէ ևս գտանիցի ի հնագոյն ձեռագիր գրեանս զսոցին վարս և գայլոցն։...

Նուաստ ծառայ
Յովսէփ եպսկ. [Մտեփանեան]

1758 սեպ. 16
[Հռոմ]

ՄԺԶ.

Ամիթ քաղաքին (Տիգրանակերտ) մէջ պատահած ահռելի սովի մը համառօտ տեղեկութիւնն է որ կը նկարագրուին հետագայ երկու նամակներուն մէջ։

Ա.

Գերապատիւ տեառն Աբրեայ Հայր Յակիմեանոս Ասուրաժաբանութեան վարդապետի յոյժ բազում սիրով և յարգութեամբ ողջոյն և սէր մատուցանեմք

... զարձեալ յայտ լիցի ձեզ որ դեկտեմբերի 17 աւուրն եկեալ հասին ի հռոմ մեր մխայէլ հոգեւոր տէրն և իմմիրցի յովաննէս եպիսկոպոսն և Լիբանանեան Հ. Ղուկասն, և ընդ նոսա այլ երկու գպիրք մինն կրօնաւոր ուխտեալ, եմուտ ի դպրատունն սրբոյ Ժողովոյն և միւսն առ ի սպասաւորել ի հիւրանոցի մերոյ. և բազում իրս պատմեցին սակս անցեալ սովու և սղութեանն որ եղև յարեւելս, ի մէջ որոց յամիթ քաղաքի գրէ թէ 450 տղայ մանուկ անչափ եղեալք և կորեալք. ուստի ի բողոքել ծնողաց նոցա առ դատաւորս, հրաման ելեալ ի կասկածելի տեղիսն որոնել, որ և իսկ ի միում տան տաճկի 13 գազաթ մանկանց տեսեալ. զեօթն անձն ի տանէ այնմիկ կալեալ ի մէջ հրապարակին սրով զգլուխս նոցա հատեալ։ Եւ այսպէս ի բազում տեղիս զմիս մարդկանց ի սովու կերեալք, թող թէ չանց և կատուից և գրաստուց ոչ միայն կենդանեացն, այլ ևս ի սովու անկեալ մեռելոցն։ Եւ այլ անառանելի իրս, զորս գրելն ոչ է պատեհ. և բաց այսմանէ հոգեւոր սով և հալածանք ի տեղիս տեղիս. և անթիւ բազմութիւնք մեռելոց, ոմանք ի սովու և ոմանք ջերմութեամբ։... Հոգեւոր տէրն մեր և վրդանէս և յովանէս եպիսկոպոսքն և այլք ամենայն բարեկամք յոյժ բազում սիրով ողջոյն մատուցանեն ձեզ և զսուրբ ուխն Ծննդեան և գնոր տարի ձեզ և հասարակութեան ձերում չնորհաւորեն։...

Յամի տեառն 1758
Դեկտ. 23
[Հռոմ]

Նուաստ ծառայ
Յովսէփ եպիսկոպոս [Մտեփանեան]

ՄԺԷ.

Բ

Սրբասնուէնդ և գերազանց Հօրդ մերոյ Հոգևորի, Տ. Տ. Յակոբայ Աստուածաբան վրդպ.ի և վեծի Աբբայի՝ Սրբուհոյ կուսին որդեգրական կրօնին մատուցի ի հեռուստ ատի, վեծաւ կարօտիւ և ըղձալիր սիրով՝ ձամբոյր Սրբազանի Աջոյդ, խնդրելով զաղօթս սրբանուէիս ի քեն մատուցեալս, ինձ և իմայնոց, առատս և օգնական

... Այլ և զքաղաքիս պատահեալ սովն որ յանցեալ ամին եղև, կարծեմ թէ լեալ տեղեկացար պատմութեանն, զոր ոչ երբէք լեալ էաք ի հնոց հարց, կամ ի պատմութեանց զայսպիսի դառն պատուհաս՝ զոր կրեաց ժողովուրդ երկրիս միջագետի, ի պատճառէ մեղաց իւրեանց, որ ստուգիւ մարդն զմարդն եկեր, զորս տեսաք աչօք. թող զայնոսիկ զորս լաք ականջօք, եղեալ ի շրջակայս քաղաքիս. արդարև սարսափելիս և զարմանալիս մտաց մարդկան, յորմէ պատճառէ բազումք ի բնակչաց չեցին յօտար երկիր, թերևս գտանիցեն զյագուրդ, բայց ոչ կարացին հասանիլ ի դիտեցեալ տեղին իւրեանց, այլ ի ճանապարհին սովամահք կորեան և եղեն կերակուրք վայրենի գազանաց. իսկ որք աստ մնացին, զոր ինչ ունէին գոյս ոչ գնով վաճառեալք կերին, և ապա մաշեալք և հիւծեալք ի սովու, նուաղեցեալք մեռան ողորմելի, այնքան որ չորս բաժնի մէկն հազիւ թէ մնաց. բայց ի լրանալ տարւոյն, ողորմութիւն Տեառն ծագեալ ի յերկնից, եւ զառատութիւն ցորենոյ և ամենայն բարեաց, որով յագեցան լիութեամբ ամենայն բնակիչք երկրիս, զոր մշատպազատ գոհութեամբ, անհանգիստ բերանով պարտիմք գոհանալ զտուողէն բարեաց, որ ողորմեցաւ ստեղծուածոց իւրոց։ Գերապատիւ Արքեպիսկոպոս եղբայրս մեր, այս 9 ամիս եղև, որ բերեալ ի մերանու նստուցաք ի տան մերում, սակս սաստկութեան սովոյն, զի ի մերմին ոչ գտանիւր ամենևիմբ հաց, բայց կարի նւազեալ յամենայն զօրութենէ և վատեալ յաչաց տեսութենէ, և իբրու լուծեալ անդամօք, նստի անշրջիկ. ուստի աղօթս խնդրէ յեղբայրութենէ սրբոյ կրօնին, և ի քոյին Տէրութենէ. զի բարի վախճանաւ փոխեալ յաղցաւոր կենցաղոյս, արժանասցի մասին ժառանգութեան սրբոցն որ ի լոյս։ Նաև քանի անգամ գրեցի և խնդրեցի զպատմութիւն Լիսպօնայու մնծի քաղաքին. զի լաք թէ մնծ մասն ընկղմեցեալ է և զայս վասն այն խնդրեմ, զի գամենայն իրս նշանաւորս առդիպեալ ի մերում ժամանակի իբրու 50 ամաց հետէ և այսր, գրեմ պատմագրաբար, յիմացումն յետագայ ընթերցասիրաց, վասն որոյ աղաչեմ, զի գրել տացես ստուգութեամբ և առաքեսցես ինձ, զի և զայն ևս չարայարեցից ընդ այսց պատմութեանց...։

Ցամի Տեառն 1759
Փետրվարի 4 ի Տիգրանակերտ

Ցեռնեալ և նուաստ ծառայ
Ցակոբ անպիտան գպիր
Տէր Պօղոսեան

ՄԺԸ.

Հ. Ցակորոս Ջամչեան հիմնադիրն է Ս. Ղազարու Օրացոյց և գուշակ օդոցի։ Նու տայ հոս ընդարձակ նկարագրութիւնը Պոլսոյ մէջ կատարուած հսկայ լուսավառութեան՝ որ տեղի ունեցած է Մուստաֆա Գ.ի գահեր Հիյպէթ ուլլահ սուլթանի ծննդեան առթիւ։ Այդ հանդէսին ծախք գացած է «աւելի քան զհինգ միլիօն ասակ»։

Գերամեծար գերյարգելի Հրբայծօր վերոյ և բարեւսիրափառ տեառն տեառն Յովհաննիս վարդապետի, ոսկոյն

... Իբր ի 20 փետրվարի, դեսպանն վենետիկու՝ արար հանդէս ի գիշերի յառաջին ժամու՝ հրացանօք և ֆչենկօք ևն: Այդ՝ իբրև սկսանին զհանդէսն, մերձակայ տաճիկքն չիսթեալ, արտաքս զեղանին ի տանէն ֆչենէռով, և տան միմեանց աւետիս թէ ծնաւ որդի թագաւորին: Ցայնժամ և յապարանից թագաւորին՝ զան հասանին բարկութեամբ առ դեսպանն, թէ զինչ է այդ զոր առնէք: Ո՞չ ապաքէն նաւք մեր և թագաւորն իսկ զադարեալ կան ի հրացանից. և դուք զիարդ համարձակեցայք առնել ընդդէմ ֆէրմանի թագաւորին, և կամէին տանել զզլխաւոր թարգմանն առ փաշան: Բայց նորա պատասխանեալ ասեն, թէ մոռացաք, և պարապ զառնանք: Եւ նորա հազիւ լռեալ, զառնան յետս: Զայս պատմեաց ինձ իսրահիմ պէռպէռն, որ ի Թօփղանան, որ և է զրացի դեսպանին վենետիկու...:

Բազումք որոնեն զօրացոյց այսր տարւոյս մինչև ցՅ կամ ցIO փրչ. բայց ոչ գտանեն: Ասէմ ոմն պարսիկ՝ իմաստակ և կարդացօղ և տեղեակ զանազան լեզուաց, զկնի բազում խօսից ևս կապելոյ զբերանս տաճկացն, հարցանէ ցմի ոմն ի նոցանէ, թէ երբ է նէւրուզն (իբր թէ հասարակածն, յորում աւուր պարսիկք առնեն զմեծ հանդէս): Եւ նա հանեալ զիւր իւզլամէն, այսինքն օրացոյցն, ասէ, թէ՝ է յայս ինչ աւուր: Իսկ նա ասէ. ամենեցուն իւր իւզլամէն սղալ է, բայց ի հայոցն, զոր երկու և երեք ամք են, յորմէհետէ չինեցին և նոքա. և նոցայն միայն ուղիղ է. և ոչ գիտեմ թէ կայ աստէն թէ ոչ: Ցայնժամ պօղոս էնիշտէս, հանեալ զօրացոյցն մեր, ասէ. Ցայս ինչ աւուր և յայս ինչ ժամու է նէւրուզն: Այսէ Աճէմն. ահա այդ է ուղիղ, ապա թէ ոչ՝ թէ ըռամազանն մեր, և թէ այլ ինչ, ամենայնն սղալ է:...

Իսկ վասն ծնանմանի քաղաքիս, այսչափ ինչ ունիմ գրել. զի ի մարտի 15, ի մէջ գիշերին ի 6 ժամուն, ծնաւ դուստր թագաւորին, որում յետոյ անուն եդին, հիւպէթ ուլլահ. որ թարգմանի, պարգև աստուծոյ: Եւ ի ժամէ ծննդեանն մինչև ցայգն, վառեցին զբազմաթիւն կանթեղաց և հարկանէին զաւաւլ զուռնայս՝ միայն ի վերնայարկս արքունի ապարանիցն: Եւ ևս վառեցին զկանթեղս միայն ի փաշայ զսփուսին: Եւ յաւուրսն պահուն, այսինքն յառաւօտու եշեթի, որ էր մարտի 4 և ըստ նորոցն մարտի 15. արձակիցին զթօփսն. և կարդաց քարոզ, թէ սկսեցի ծնանման ի ցամաքի, և արասցեն եօթն տիւս և եօթն գիշերս, (յորս յետոյ յաւել թագաւորն և զերիս տիւս և զերիս գիշերս): Այդ սկսան մարդիկ զայնպիսի իրս առնել, մինչև մոռացուցանել զբաբեկենդանն վենետիկու: Եւ թէ զինչ ինչ արարին, գրեցից համառօտիւ...: Եւ մինչչև էր սկսեալ ծնանման, օր ըստ օրէ յաւելուին զայնքան իրս, մինչև զմի փոքրիկ մուկն վաճառէին հինգ փրչ: Իսկ զմեծ մուկն 15 կամ 20 փրչ. և երբեմն 30 փրչ: Եւ ոմն գեղացի ունելով ի ձեռին իւրում զմուկն, չրջեցուցանէր ի փողոցս ի վաճառել, և ասէր. ահ թէ ո՛րքան պարարտ է: Եւ վասն միոյ մկան զմիմեանս ձգէին ի դուռն դատաւորին: Զի ի վաճառէն զմուկն, կատուն գնողին յանիշտակաց զմուկն և տարեալ խեղդեաց:... զմկունսն դնէին ի տօլապս, և սնուցանէին հացիւ. քանզի մկունքն չրջէին և պտտէին զտօլապս, զորոց կախեալ կային չրի խովաններ և կամ այլ ինչ: Զխանութիսն և զդրունս մեծամեծաց և զփողոցս զարդարեցին կանթեղօք, չամաթաթելիով, գեղեցկաչէն ֆէնէռովք և մեծագին իրօք և խեչալի ֆենեռօք և մեծագին դրօշակօք: Իսկ յաւուրս ծնանմային օր ըստ օրէ յաւելուին զմասրախայս: Քանզի ոմանք եղեն ստամալօլ էֆէնտիսի, ոմանք մուհտասիպ. թէվազիքն իւրաքանչիւրքն այլանդակեալ դիմօք: Իսկ էֆէնտին, այլանդակ դիմօք և մորուօք նստեալ յէշ, և երբեմն ի ձի. նոյնպէս և մուհտասիպն: Եւ չրջեալ ընդ փողոցս, կշտէին զհացս և կամ զայլ իրս խանութիցն. և իբր թէ այն պահաս է ի յարդար չափէն, (եթէ ակարքն իրաց ոչ տային նոցա փարայ) զնոցա ոտն ի ֆալախան եդեալ, ծեծէին: Իսկ եթէ տային փարայ, մի ոմն բարձր ձայնիւ ասէր. ալլահֆալէ պիգիմ փատիշահըմըզըն պիր կիւնիւ, պին էթսին: Եւ թէվազիքն աղաղակէին.

ամին։ Ոմն եղեալ մէյմար աղայ, զգեցեալ զչապիկ, և ի գլուխն եդեալ թղթէ քիւլահ, և ի նմա ճրագ, և նստեալ ի ձի այլանդակ դիմօք՝ երկայն և սպիտակ մորուք. և առաջի նորա բազմութիւն քէչէլիլէրից, չրջեալ ընդ փողոցս և եկեալ առաջի խանութից, չափէին զղալաբրըմսն, և ասէին. թէ ընդդէմ ֆէրմանի թագաւորին, կէս կանգուն աւելի դուրս է ելլեր։ Եւ հրամայէր մէյմար աղան քակել զղալաբրըմսն. և սիրոջ դալաբրըմին զարհուրեալ, փութով տայր նոցա զմի փարայ, և ազատէր ի ձեռաց նոցա։ Ապա թէ ոչ քակէին զղալաբրըմսն, զորս յետոյ ամէն ոչ կարէր տալ յարդարել զայն 5 կամ 20 փարայով, որպէս զղալաբրըմսն դերձակի միոջ քակեցին և հանին զմեծամեծ քարինսն, և ի բաց ձգեցին և գնացին ի ճանապարհս իւրեանց։ Եկեն ոմանք[ք] աճէմ էլչիսի իւր թախըմովն։ Ոմանք կուռճի էլչիսի, ոմանք պօստանճի պաշը. զորոց զարարսն եթէ մի ըստ միոջէ գրեցից, ոչ բաւէ երկու տասղաղայ և ոչ ժամանակ։ Շինեցին ի բարձր օթևթ հարսունս տաճկաց յօրինեալս՝ վայելուչս և պաճուճեալս. և խաղացուցանէին ի ճանապարհի տալով զուռնայով։ Նոյնպէս և ոմանք մտեալ ի կերպարանս հարսի և փեսայի՝ հրէից, յունաց և տաճկաց, չրջէին տալով զուռնայով. և խաղային և ժողովէին զգրամս։ Եւ երթային ի գրունս մեծամեծաց, և առնուին պարգևս, և գնային ևս ի գրունս հայոց պատրիարգին, յորս մի ոմն երիցանց տեսեալ զփեսայն և զհարսն հայոց, ասէ. մի՞թէ յաւուրս մեծ պահոց լինի՞ն հարսանիք. և այլ ոմն երէց ձայնէ զմիս երէցն և ասէ. ես և կարդա՛ ի վերայ սոցա զգալոց աւետարանն։ Թէ ի տունջեան և թէ ի գիշերի, անդադար, յամենայն ճանապարհս լսիւր տալով զուռնայ։ Աստ չէնկի խաղայր. անդ հարսնիք։ Եւ մինչ չև էր վերջացեալ մինն, միւսն գայր ի վայր։ Յամենայն կողմանց՝ հահա՝ հիհի։ Եւ ի ճանապարհի ընդ ամենայն տեղիս՝ լոյս. և ոչ կարօտէր ոք ֆէնէռի։ Մանկունք և պատանիք մտեալ ի կերպարանս աղջկանց. և երիտասարդք մտեալ ի կերպարանս կանանց, տալով զուռնայով խաղային չէնկիի պէս ի ճանապարհս, և ի խօնախս, այսինքն ի գրունս աղայից։ Ոմանք ոչ գիտելով զայլ ինչ խաղս, և անճարակ յամենայնէ, մտին ի կերպարանս զրզօփից այսինքն այլանդակ սևադէմ, և իբր ըստ կերպի սատանայի, չրջէին ի ճանապարհի, կանչելով. զրզօ՛փ, զրզօփ. զրզօ՛փ զրզօ՛փ։ Եւ ոմանք ի նոցանէ ի մի ձեռս իւրեանց՝ ունէին հաւօզ՝ լցեալ դահճով. և միւս ձեռամբ առեալ զտահինն՝ նետէին ի վերայ մարդոյ՝ եթէ ոչ տայր զմի փարայ։ Գրեթէ ոչ ոք կարէր անցանել ընդ չարչըն, և ընդ ճանապարհս ինչ. վասն զի եթէ ոք անցանէր ընդ այն՝ մի ոմն կանչէր. օ՛ օ՛։ Եւ զոյգ ընդ նմին մի ըստ միոջէ՝ աղաղակէին օ՛ օ՛։ օ՛ օ՛։ Մինչև մեծամեծաց իսկ, որք ծպտեալ անցանէին, նոցա ևս ասէին, թէպէտ յետոյ արգելաւ։ Բիւրքճիք չինեցին ի քիւրքէ զգայլս, և յանկարծակի արձակէին ի վերայ անցանողաց, և զարհուրեցուցանէին. թէպէտ և այն յետոյ արգելաւ։

Ձկնի եօթն աւուրց տօնանմային, արարին էսնաֆ ալայը. յորս ճէվահիրճիիցն ալայը՝ գերազանցեաց քան զամենայն. քանզի արարին զմի դրօշակ մեծ սոսկ ի մարգարտաց. և զմի դրօշակ սոսկ ի մէրճանից. զմի դրօշակ ևս զարդարեալ՝ ոսկի և ճէվահիր գոտեօք և այլ իրօք։ Արարին և զմի թահտըռավան զարդարեալ ի ոսկի և ճէվահիր գոտեաց, դանակաց, ժամացուցից, և այլ այսպիսեաց։ Ոմանք մտեալ ի կերպարանս պօստանճիի, ոմանք զգեցեալ զփառաւոր զգեստս. և ի ձեռս ամենեցուն, կամ կիւլէպտան և կամ պուհուրտան. մինչեւ անուշահոտութիւնն բուրեալ ի քաղաքն։ Իսկ վարդապետքն ոչ զգեցան զփառաւոր զգեստս, այլ իւրեանց եասախի զգեստիւք, զի մի խոցեսցեն զաչսն։ Եւ յորժամ սկսան յոնաֆ ալայը, և այլ մեծամեծք խաղքն, յայնմհետէ ոչ ոք հայէր յերեսս զրզօփիցն։ Ցայնժամ մի ոմն ի զրզօփիցն ելեալ ի բարձրագոյն տեղի ինչ ի չարչըն, աղաղակեաց և ասէ. զրզօփ ալան՝ զրզօփ. ուճուզ ուճուզ։ Կանայք ամենևին ոչ կարէին ելանել արտաքս, զի սաստիկ եասալ էր. և ոչ ոք ի գիշերի կարէր նաւակաւ գնալ ուրեք։ Եւ զարմանք մի մեծ այս էր. զի յաւուրսն յայնոսիկ՝ ոչ ուրուք քիճն արուներաւ։ Եւ ի սաստիկ դիզանալ ժողովրդեանն և ի կուտիլն, ոչ ուրուք իր ինչ պակասեցաւ. և ոչ գոյր եանքէսիճի։ Եւ վերջապէս, դէր յայտնի զինչ քո, և մի երկնչիր։ Թէ հայ, թէ յոյն և թէ հրէայ, համարձակ չրջէին։ Պարտապանքն իսկ որք ոչ արտաքս ելանէին ի

տանէն, համարձակ չրջէին։ Քանզի այս էր հրաման. արա գինչ և կամիս, բայց միայն զոք մի ծեծեր, մի կռուիր, մի զողանայր. մէկին ըսզին մի դպչիր։ Զի թէ ոք յանցանէր, ոչ գոյր քննութիւն. այլ կամ անդէն սպանանէին բրօք. և կամ տարեալ խեղդէին։... Շինեցին գայնպիսի խէեալի ֆէնէոս, յորս ի պատիլ ֆէնէոսին, երևէին ձկունքն ելևէջս առնել, և իբր տալմիշ ըլլալ և ելլել։ Սոյնպէս և զայլ բազում զարմանալի իրս արա-րին...։ Դեսպանքն զարդարեցին զիւրեանց ապարանսն անթիւ կանթեղօք, և չամաթա-թէլիով և հետաքրքրական իրօք։ Ֆոանսըզ սառային ֆէնէոն փռնկեցաւ և յետոյ չինեցին նորոգ. և էր մեծ բոլորակ զարմանալի չէնք. կանգնեցուցեալ ի վերայ դրան և պատէր ինքնին։

Արդ՝ ի բաց թողեալ զայլսն, գրեցից և զայս. զի ոչ թողուին ննջել ժողովրդեանն. և եթէ ոք ննջէր ի խանութին, յայնժամ զըզօփքն գային հասանէին ի վերայ նոցա. մինն ունէր ի ձեռս իւր փեօստէքի և չուպուխ. և յանկարծակի չուպուխով հարկանէր զփեօստէքին, և միսն աղաղակէր՝ ամա՜ն, ամա՜ն. և ննջողքն զարհուրեալ յառնէին։ Նմանք զըզօփք երկայն պօռուլով կանչէին յակառնջս ննջողին, և դիւահարէր ննջողն։ Թող և զայս, զի ժողովեալ բազմութիւն տաճիկ պատանեկաց՝ զննջողսն առեալ դնէին ի վերայ երկայն վերտիվէնի, և բարձրացուցեալ շրջեցուցանէին ընդ փողոցս, և որք գկնի երթային աղաղակէին մեծաձայն։ Եւ ննջողն զարթուցեալ դիւահարէր. և ոմանք ի ննջողացն՝ ծանրացեալ ի քնոյ՝ հազիւ ուրեմն զարթնուին. մինչև զոմանս շրջեցուցա-նէին և տանէին զրեթէ ի փիացայէն մինչև ի ոիալթօ։ Քանզի բազումք ի բազում աւուրս ոչ երբէք ի քուն մտեալ, ոչ զարթնուին։ Եւ յայսպիսի խաղս, միոյ ուրուն բեկաւ ասեն ոտքն, և ապա արգելաւ այս խաղ։...

Զկնի Պարայ ռօնանմասին, արարին ասէրեա ռօնանմասը, այսինքն ծովու ռօ-նանմա յերիս գիշերս. յառաջին գիշերի արար կէօմբիւկճի պաշին. յերկրորդ գիշերի թօփճի պաշին. իսկ յերրորդ գիշերի թէբսհանայ էմինին, որ գերազանցեաց զառաջինսն։ Բաց ի այլոց իրաց, ի վերջին գիշերի, պատերազմ արարին նաւք ընդ բերդի քրիստո-նէից. և առին զբերդն և թրքացուցին, և այնուհետև վերջացուցին զխաղսն։

Ի յայսմ ասէրեա ռօնանմասին, հասարակաբար երեք սալ էին. ի մինն բովանդակ կանթեղք, չարեալք կամ ըստ ձևոյ բերդի կամ ճամիի և կամ գիր գրեալ. (որպէս և յամենայն գիշերի ի սառայ պուռնին, ի թօփղանան և այլուր, չարժէին զկանթեղս զա-նազան ձևով. երբեմն գիր, զօր մահալլահ կամ էրհէմռուրուլլահ. երբեմն չէքտիրի. եր-բեմք քեօշք. երբեմն ղրալանլըճ գայեթը. երբեմն գալիօն ևն) ի յերկրորդ և յերրորդ և յերրորդ սալն առնէին զգանազան իրքն ֆէնկոք։ Ցանկարծակի ի խաւարի լոյս ծագէր. և իբրև զարհագան լուսաւորէր և տևէր իբրև գկէս չէյրէկ. և ապա խաղային այծք և խոզք և փէչլիվանք և ճամպազք. ամենեքեան չինեալք յօիւսէ և ի ֆէնկէ։ Երբեմն ի ֆէնկէ կազմիւր լոյս բրգաձև։ Երբեմն օձապտոյտ չրջէր բոլորակ ֆշանկն իբր 10 և կամ 12 անգամ։ Ի վերջին գիշերի բերին զփոքրիկ գալիօնս երիս, և գփոքրիկ չէքտիրիս, և չէքէչէվայս. և որպէս գրեցի ի վերոյ, արարին մարտ պատերազմի ընդ բերդին, որ էր ի վերայ սալի. և որք ի բերդին էին, զգեցեալ էին ֆէնկոի զգեստ. և ի վերայ դրօ-շակի՝ խաչ։ Զկնի մարտնչելոյն, ի գալիօնից թօթափեցան ի բերդն, և փոխեցին զդրօ-շակն, և կարդացին ըստ օրինաց իւրեանց։ Եւ վերջացաւ խաղն և ռօնանման։ Հաւայ ֆշէնկիք իբրև զփունջ ելանէին և թօթափէին կանթեղակերպք։ Ցաւուրս ռօնանմայիցն, յայգարանս արքունի, յարտաքին սրահին, զորմով կախեալ էին զմեծամեծ հայելիս մե-ծագինս, և զգրահս ի հին թագաւորաց Մեացեալ։ Եդեալ էին զմորթ ընձուղտ կենդան-ւոյն, լցեալ զմորթին այլ ինչ նիւթով։ Թաթք նորա փտեալ էին։ Դման ամենևին ընձուղտ կենդանւոյն պատկերին որ ի համաստեղութեան։ Թագաւորն հանապազ ծպտեալ չրջէր։ Եւ զարմանք է, զի վառէին ընդ ամենայն քաղաքն և ընդ ամենայն գիւղս, անթիւ և անհամար կանթեղք. բայց ձէթն աժան էր քան թէ յառաջ քան զռօնանման։ Զկնի ռօնանմային գայր զանձ երկաստեք, մինն ի (վէզիր) դանն, և էր ուրուն ազահ և անօրդի տաճկի՝ անուն նորա ալի էֆէնտի. և եղ իբր եօթն քիւփ փայլուն ոսկի։ Միւսն ի վլան-կայ ի տան՝ հալէպ քափու քեահեասըին. և եղ սնտկներով ոսկի։

Ցաւուրս յայսոսիկ ի սահմանս ուզուն չարչըին, ի փոանէ միոջէ հացագործի, յանկարծակի հանեն զեօթն մեռեալս մի զկնի միոյ։ Ջոր տեսեալ զուլլախճիին՝ ըմբռնեն զթէզկեահտարն և զայլսն, և քննեն զիրսն։ Պատասխանեն նոքա թէ մեք ոչինչ գիտեմք։ Չարցանեն, զինչ կերայք։ Ասեն յայս ինչ պախալէ առաք զբրինձ և զսէքմէզ։ Ասէ. այո՛։ Ասեն. արբ և դու ի պէքմէզէն. ըմպէ և նա միամտաբար։ Եւ զկնի երկուց կամ երից ժամուց՝ մեռանի և պախալն։ Ցայնժամ պարպեն զթէսթին և ելանէ անտի օձ մի մեծ մեռեալ։ Ի թօփղանան ձուլեցին զ120 փոքրիկ թօփս. զ60 առաքեցին ի մէքէն ընդդէմ արաբացւոց, և 260 ևս առաքելոց են։ Ձուլեցին և զերկու մեծ թօփս, որոյ գնատակաց չափն է յոյժ մեծ, և յարձակեցին ի թօփղանայէն, և գնատակքն հասանեն մինչև ի քաղկեդոն. գուցէ աւելի։

Ցաւուրս յայսոսիկ իսկ սկսաւ ժանտամահն. զվերջն ոչ գիտեմ։...

1759 յԱպրիլի 29
[կ. Պոլիս]

Ն. Ա. Հ. Յակոբոս վրդ. Չամչեանց, Մխիթարեան

ՄԺԹ.

Եր. Տէր Կոմիտասի գերեզմանին շուրջ անցողակի ծանօթութիւն մը տալէ վերջ նամակագիրը կը տեղեկագրէ նաև Սարգիս Պառաֆեանի և ժամանակակից դէպքերու մասին։

Յարգոյապատիւ և գերապայծառ տեառն Յակիմեանոսի վարդապետի և արբայնօր վեծառ իսնարմուրեաւք և սիրով ողջոյն ի Քրիստոս

... Ֆարակոյն, որ չինեաց զվէմ գերեզմանի տէր Կոմիտասին, կոչեցեալ փոլեազ, զոր բարւոք գիտէ Հ. մկրտիչն, սպասէ թղթոյն նորա և գրոյ վասն զեկուցանելոյ սմա զարհեստ փայլեցուցանելոյ զմարմարիոնն, զի ոչ գիտեն աստ։ Տեղեկասցի այդր և գրեսցէ ըստ կարգի ամենայն պարագայիւք, զի արարեալ սմա զայս բարութիւն ստանայմք զշահ հոգևոր և մարմնաւոր, զոր յետոյ գրեսցուք ի կատարածի ելից իրացն։... Սարգիս վարդապետն [Պառաֆեան] հրամանաւ պատրիարքին եկն ի քիայ կղզւոյն յիզմիրնիայ, և անտի ի Պուրսայ երթալ առաջնորդ լինիլ եւդոկիոյ. և կարծեմք թէ երթայ, զի ոչ ևս կարէ ի կոստանդինուպոլիս գալ, զի մի խռովութիւն ինչ լինիցի ընդ պատրիարքին։ Իսկ արգիլումն զգեստուց հալատակաց տակաւին նորոգեցաւ ի թագաւորէն, զի էրէկ յանգէտս պատահեալ նորա երկուց ի հայոց եգիտ ագուցեալ յոտս զղեղին թէլիկս, հրամայեաց կառափնատել զնոսա. այլ զիջեալ յաղաչանաց ումանց առաքեաց ի թէրսխանան. և ապա հրաման եղև պատրիարգաց պատուիրել ժողովրդոց զգոյշ լինիլ, հնազանդ կալ հրամանի թագաւորին։... Լսեմք, թէ ի կողմանս արևելից ի տեղիս տեղիս գոյ ժանտ ախտ. և մինչև ի սահմանս Կարսայ հասեալ է լէգկի ազգն անօրէն, գերելով և սպանանելով, և աւերելով զաշխարհս հայոց, և չիք ոք, որ հոգասցի կամ ողորմեսցի նոցա։ Եւ որ ողորմելոցն է, նա ևս առաւել խիստ կորուսիչ է։...

Ցամի տեառն 1759 ի յունիսի 19
ի կոստանդնուպոլիս

Ծառայ անպիտան և անարժան
Հ. Իգնատիոս վրդպ. Մխիթարեան

ՄԻ.

Հայ ճարտարապետի մը գլխուն հանդիպածը Մուստաֆա Գ.է։

Գերաւսիժար գերդաստանի Աբբայ Յօր վերոյ Յակոփանեոսի տեառն տեառն Յակոփանեոս վարդապետի, ողջոյն

... Յօգոստոս 11 յաւուր շաբաթու, գնաց թագաւորն ալայով ի պէպէք. բազում ահիւ և դողութեամբ և սասանմամբ ժողովրդեանն ի ճանապարհին։ Եւ նստեալ ի պէպէք, եռես զաւուն մի առ ծովեզերբն ի զանտիլլին՝ մթին կարմիր ներկով, (զի զանտիլլի գեղն է յանդիման պէպէկին)։ Եւ զայն աւուն չինեալ է չէկ սիմոն խալվան, որ էր ճարտարապետ էհնի ճամիին, զոր չինեաց սուլթան մահմուտն։ Քանզի սուլտան մահմուտն, և զկնի նորա սուլթան օսմանն՝ չնորհեալ էին նմա զայն տեղին վասն ճարտարապետութեան նորա։ Արդ՝ տեսեալ զայն աւուն՝ ասէ թագաւորն. ո՞յր է այն տունն։ Ասեն. սիմոն խալֆային է։ Ասէ թագաւորն. զի՞ բնակեալ է կեավուռն ի մէջ տաճկաց։ Առաքեցէք զբանալիս տանն։ Եւ վաղվաղակի ազդեալ տանուտեառն, դատարկացոյց զաւուն. և գնաց նստաւ յօթաքեօյ ի կարմիր տունն, որ հայի ի պօստանն չէօհրէթ օղլուին. և զաւուն զանտիլլին վաճառելոց է։ Ասեն ոմանք, թէ թագաւորն ասացեալ է ցպօստանճի պաշին, թէ տուր 15 քսակ և առ զաւ։ Բայց տանուտէրն կամի վաճառել 18 քսակ։ Արդ մեծամեծքն յունաց՝ որ կամէին չինել զնոր տուն և կամ նորոգել, դադարեցան ի բաղձանաց իւրեանց. և բազումք ի նոցանէ երկնչին ելանել արտաքս համարձակ, մանաւանդ կանայք նոցա։

Գարձեալ եւ հրաման յայքայէն՝ ոչ չրջիլ սոսկ կարմիր ֆէսով. և սաստկացոյց զհին հրամանն, թէ լուայէին մի վաճառեսցեն զծառայ կամ զաղախին։... Ցետրենէ եղեալ է մեծ հրկիզութիւն, և այրեցեալ բովանդակ չարշըն. այլ ապարանք թագաւորին ոչ այրեցան, զի հեռի են ի չարշըն։ Այրգիս վրդ.ն եկն ի կոստանդնուպօլիս։ Լուայ աստէն թէ ի Լեհաստան մեծ բազմութիւն հրէից դարձեալ են ի քրիստոնէական հաւատս. զի ի միջի իւրեանց վիճաբանեալ, ստուգեալ են թէ եկեալ է մեսիայն, զի անցեալ է ժամանակ գալստեան նորա։...

Գրեցաւ ի առնաւուտ գեղն
1759 յօգոստոսի 18

Ն. Ը. Հ. Յակոբոս վրդպտ. Ջամչեանց. Մխիթարեան

ՄԻԱ.

Մէկ քանի տեղեկութիւններու հետ սուլթանական խատութիւններ կը ծանուցուին հեռեւեալ երկու վաւերաթղթերուն մէջ։

Ա.

Գերաւսիժար գերդաստանի Աբբայ Յօր վերոյ Յակոփանեոսի վրդ.ի ողջոյն

Թուղթ ձԺԳ

... Առաքեցաւ սարգիս վարդապետն եկն ի պուռսայ, և այժմ յստամպօլ է. և զկնի քան աւուրց գնալոց է ի թօխաթ ի մանսուրն իւր. տեսի զնա, և երկարս խօսեցայ ընդ նմա. և սիրով ընկալաւ զիս. և ձեզ ևս մանաւանդ Հ. Մկրտչին զողջոյն սիրոյ մատուցանէ։ Վասն քեռորդւոց Նորա պետրոսին խօսեցայ և ընդ սարգիս վարդա-

պետին բաց ի պատանւոյն. և բանն այսպէս որոշեցաւ, զի յետ գնալոյ վարդապետին աստի ապա ելցէ պատանին աստի գալ այդր...: Վասն որպիսութեան քաղաքիս ծանիք, զի թէպէտ ամենայն ինչ յիւրում կարգի կայ (թէպէտ ասան փայն չի կայ, որ ինչ ի ժամանակս սուլթան մահմուտին, սակայն արքայ երկրիս յոյժ առելութեամբ է ընդ ազգէդ իւրոց. մահանայս որոնէ ջնջել զնոսա. վասն միոյ զալայեխի ևս կախել զպաշխափուքեահային պուղտանու պէյին: Զեալրն սիմաուն խալֆային, որ ի խանտիլլին էաւ, և տաճկաց ետ: Եաստին զգենուեաց անառանելի է. ֆէսք ի գլուխս ի մէջ խալփախից սեաւ ներկեցան. նոյնպէս և դեղին թէոլիկք ի մէջ մէստից, զի և զայսպիսիս որոնէ. և վասն այսպիսեաց զոմանս ի քիւրէկն առաքեաց: Եւ ի վերայ այսր ամենայնի և զբազումս ի հայոց և ի հառամոց տաճկացոյց:...

1759
յօգոստոսի 19
[կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Զաքարիայ վ. Ա.

ՄԻԲ.

Բ

Գևրաւևծար գերդարգլի Աբբայէսր մերոյ, և յաբեւնապահ տեառն տեառն Յակոբեանոսի վրդպ.ի ողջոյն

Թուղթ ԺԱ.

... ի ժամանակս տօնանմային, ի բակն լուսաւորչի եկեղեցւոյն՝ յանկեան՝ յորում միանան որմունքն արևելեան և հիւսիսակողման, չինեցին հայք զմի փոքրիկ մատուռ դէպ յարևելս (ծախիւք ուրումն Ջերմենանդի յորում ի մեծահանդէս աւուրս մատուցանեն պատարագս վասն բազմութեան ժողովրդեան, որք կալով ի սրահի և ի բակն՝ որ գկնի աւագ խորանին, տեսանեն զայն պատարագ: Այժմ եկեսցուք ի պատմութիւնն մեր): Զկնի փլուցանելոյ տաճկացն գՀայոց եկեղեցին որ ի պէշէք, համբարձին զգլուխս իւրեանց մերձակայ տաճկին լուսաւորչի եկեղեցւոյն, վասն նորոգ չինելոյ զմատուռն վերոգրեալ: Իսկ հայքն առեալ ումեմն զմի փոքրիկ ժամացոյց, այլոց զոսկի ևն, հազիւ սակաւ ինչ լռեցուցին զնոսա:...

Մատնին կոչեալ զվօյվօտան, տայ նմա զֆէրման, այսպէս. Քրիստոնեայք ի ժամանակս տօնանմային, նորոգեցին զեկեղեցիս իւրեանց: Արդ՝ երթ տես զեկեղեցիսն, զի ուր միայն մէրամէթ եղեալ է, կացցէ այն. և ուր նորոգ ինչ են չինեալ, փլուսցես զնոսա: Եւ վօյվօտան կոչեաց զմեծամեծս յունացն, և եցոյց նոցա զֆէրմանն մատնին, և ասա ասէ. եթէ ամենայն եկեղեցիքն տացեն ինձ, երկու հազարական ոսկի, ես ոչ փլուցանեմ զեկեղեցիսն, այլ չինեմ զմատնին. և եթէ ոչ տացեն, գիտասջիք զի զամենայն եկեղեցիս ձեր փլուցանեմ, որպէս զպէշիքտաչին: Ասեն ումանք, թէ զայս ֆէրման եառն ի ձեռս վօյվօտային, որպէս զի ժողովեսցէ զդրամս: Ամենեքեան յերկիւղի և ի տարակուսանս են:... Ի ժամանակիս սուլտան մահմուտին, մեծամեծքն և ունևորքն ի տաճկաց, այնպէս գնային ի ճանապարհին, որպէս զի երևեսցին արքային, և արքայն հարցցէ զնոցանէ, թէ ո՞ է: Իսկ այժմ այնպիսիքն ի հեռուստ գնան, զի մի երևեսցին, և զի մի հարցցէ ինչ գնոցանէ թագաւորն:

1759 յօգոստ 20:
[կ. Պոլիս]

Ն. Ր. Հ. Յակոբոս վրդ. Ջամչեանց. Մխիթարեան

ՄԻԳ.

Յաւաքիանի կրած վշտերը տեղեկացնելէ վերջ՝ նամակս կու տայ մէկ քանի բաղաբական լուրեր Պոլսոյ անցուդարձէն։

Ցարգոյապատիւ և գերապայծառ տեառն Յակոբիանոսի վրդ.ի և Ալբայնոր խոնարհաբար ողջոյն սիրոյ ի Քրիստոս

Այս թուղթ ՀԳ.երորդ գիր է։

... եղև ինձ քանի մի անգամ երթալ ի տուն սառաֆօղլու Յարգիս վրդ.ին, որ յաւուրս յայսոսիկ հիւանդացաւ դեղին ցաւով, և այժմ յուսամք թէ ողջացի փութով. և զի ակն զերծեալ ի բազում վշտաց ծովու և ցամաքի և ի հակառակութենէ սուտ եղբարց, խնդրէ զմխիթարութիւն ի մէնջ իբրև ի մտերմաց. և որպէս ինքն, նոյնպէս և մեք չգուշութեամբ գնամք յերթևեկութիւն միմեանց վասն հակառակաց։ Ա՛ա պատմէ մեզ, թէ գիարդ այժմ իշխանք հայոց, որոց երևելին կոչի պազրկեանպաշը պետրոս, զղջացան և թողութիւն խնդրեցին վասն մասնակից լինելոյ իւրեանց մեղաց պատրիարքին առ ի աքսորել զսա, և են ընդ նմա զրգռութեամբ, և ի բանի են փոխել զնա յաթոռոյն։ Սակայն Յարգիս վարդապետն առ ի կատարել զհրովարտակ թագաւորին հանդերձեալ է գնալ յեւդոկիայ ըստ կամելոյ պատրիարգին. և դեռ աստ է զչաբաթս ինչ, մինչև տեսցէ, թէ գինչ լինիցի բան ահագին սահակ վարդապետին, զոր փոխեցին ի կաթուղիկոսութենէ, և դնելոց են փոխանակ նորա զյակոբ վարդապետ ոմն աստապատեցի. և է նա այժմ ի կարին ի կարմիր վանս։... Լուաք աստ զմնծամեծ յաղթութիւնս մոսկովաց և գերմանացւոց ի վերայ պրուշաց եղեալ յօգոստոսի 12։... Յաւուրս յայսոսիկ կռիւ եղև ի խասըմ փաշայ ի մէջ թէրսխանացւոց և խաղախորդաց, և անկան վիրաւորք յերկուց կողմանց վասն չարութեան կանանց. և հազիւ հասեալ եէնիչէրի աղասըն դադարեցոյց զպատերազմն, և կալեալ զբազումս և արս 400, զպարտաւորս և զանպարտս խեղդեցին։ Եւ ի վերայ սորա հրաման եղև յարքայէ տաճիկ կանանց զգենուլ ֆէրաճէ փոքր եախայով ի գունոյ միայն կանաչ և կարմիր և դեղին և ֆստըխի և ոչ այլ գոյն։ Իսկ յունաց և հայոց կանանց զգենուլ ֆէրաճէ սեաւ առանց եախայի, և չէտիկ փապուճ կարմիր, ընդ որ ոմանք դժուարացան, և բազումք ի ծաղր և ի ծանակ համարեցան վասն անսովորութեան իրին։...

Ցամի տեառն 1759. հոկտ. 19
ի Կոստանդինուպոլիս

Նուաստ անպիտան և անարժան
Հ. Իգնատիոս վ. Միխիթարեան

ՄԻԴ.

Խիստ ու տարօրինակ հրահանգներ կը տրուին ի Պոլիս՝ Հայոց, Յունաց և Հրէից՝ ազանելեաց մասին։

Գերաւսիժար Գերյարգելի Ալբայնոր սիրոյ Յակոբիանոսի վարպապահի ողջոյն

Թուղթ ՃԻԶ

... Յաւուրս ինչ նախ քան զելս հալածանաց եւ ի թագաւորէ երկրիս եասախ մեծ, զի կանայք հայոց և հռոմոց մի զգեցցին դեղին չէտիկս և բապուճս. և այժմ ամենայն կանայք կարմիր, կամ սեաւ չէտիկս և բապուճս ազանին. և մի ի հայ կանանց վասն ազանելոյ զդեղին իբրև ներկայացաւ առաջի մեծաւորաց, ուրացաւ յերկիւղէն

զհաւատն։ Արանց ևս թէ հայոց, թէ հռոմոց և թէ հրէից սահմանեցաւ, զի ի բաղանիս չընկրուտախ ունիցին յոտս, կամ ի բազուկսն առ ի զանազանիլ ի տանկաց. և այժմ որք ի բաղանիս գնան, չնկուտախս կապեն. ասի թէ այս սահման ի ստամոլոլ էֆէնտիէն է, և ոչ ի Թազաւորէն։ Վասն զի այժմ եդաւ նոր ստամոլոլ էֆէնտի մի, որ յոյժ ոխիօռօզ է. և զամենայն ինչ ի կարգի և ի չափու եղ. և ամենայն պակաս կիւրք բարձան, և ամենայն խարդասանք դադան, զի զբազումս պատժեաց և պատժէ. մինչև և սպէչիարք ֆռանկաց ի խալաթիայ՝ դադան։...

1759
Նոյեմբերի 3
[ի կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Զաքարիայ վ. Ք.

ՄԻԵ.

Հայ կաթ. Նուիրապետութեան պատմութեան համար կարևոր վաւերաթուղթ մ՝է այս, յորում կը ծանուցանէ Նամակագիրը, թէ ինչպէս ինքը Ք. Ժողովքէն վիրաւոր կ՝ընտրուի և իրեն կը հաղորդուի և թէ ինչ հակառակութիւններ կը յարուցուին։

Գերաւսժար և գերյարգելի տեառն տեառն Հայոց Լուսաւորչի վրդ.ին մատուցսի ողջոյն

... կարծեմ թէ լուեալ իսկ ես զընտրողութենէ իմոյ անձինս ի մեծաւորութիւն հայոց ուղղափառաց ի սուրբ ժողովոյն։ Ապակայն կամիմ սակաւուք պատմել քեզ՝ զի իրազեկ լիցիս ամենայնի։ Ցայսմիկ ամի ի սկիզբն սեպտեմբերի ես գտանէի ի սամաթիա. և զՌ անձինս յղէ առ իս վ.լասիոս եպիսկոպոսն՝ և սոխպամբ յոյժ զիս կոչէ ի Թարապիա։ Եւ ես յետ աւուրց առեալ ընդ իս զանոսն վ. և զսահակ վ. գնամ ի Թարապիա։ Եւ եպիսկոպոսն չկամի զնոսա կոչել ի ներքս, այլ զիս միայն. և փակէ զդուռն։ Եւ հանէ զեէքրէթ մի սրբոյ ժողովոյն ի լատին լեզու և ասէ. սիրելի եղբայր. սուրբ ժողովն զքեզ հայոց ուղղափառաց վիքար է կացուցեալ ևն։ Ընդ որ ես հիանամ թէ զիա՞րդ կարելի է այս այսպէս լինիլ։ Վերջապէս խորհուրդ արարաք ի մէջի՝ վաղվաղ յականջս բազմաց չարծարծել՝ զի մի՛ ի Թշնամեաց միաս ինչ աճապարեսցէ ի վերայ։ Դարձայ ի Թարապիայու, և եկի ի պէպէք, և նստայ անդէն զաւուրս 11. և իջի ի տուն և խօսեցայ ընդ փաշարի ուաֆայէլին՝ որ նախ գիտակ էր սոյն տէքրէթիս և նա սիրով չնորհաւորեաց։ Եւ ես վաղվաղ դարձայ ի պէպէք. և յերկրորդ գալստեան իմոյ՝ յոյժամ եկի ի տուն... զայնքան բարուրանս բարդեալ են ի վերայ իմ, թէ փաթէրայք և թէ այլք, և նիւթս ինքնագիւտս և բանս ընդ որս աքանչացայ և չկարէի տալ պատասխանի։ Եւ ի զալ ի տուն վ.լասիոս եպիսկոպոսին անհնման փաթէրայք զայնքան իրս մատուցեալ են ի գլուխ նորա, մինչև և սաստիկ հաւատացեալ՝ առաջին Թշնամի ինձ եղեալ է ոչ միայն բանիւ այլ և գրով։ Եւ քան զայս աւելի աւազելի՝ զի մինչ Թշնամիք կամէին և ձկտէին չինէն զայս Թիթօլօս ամենևին բառնալ՝ վօյվօտան չկարելով զպարսս իւր տարեկանս վճարել՝ խընդրեալ է ի ձեռն տէֆտէրտարին ի վէզիրէ գմին ֆէրման. զի կարասցէ ըմբռնել զհայս ուղղափառս՝ որք մտանեն յեկեղեցիս լատինացւոց՝ և տուժել զնոսա։...

գրեցաւ ի պէկօղլի
1759 ի Նոյեմբ. 15

Տրուպ ծառայ
Աթանաս արեղայ և անարժան եպիսկոպոս

ՄԻԶ.

Դամասկոսի մէջ տեղի ունեցած երկրաշարժի մը տեսեկութիւնը և տաճիկ առասպելի մը գոյութիւնը կը հաղորդուի։

Գերաւեծար գերյարգելի Հիւրայոր մերոյ Յակոփաւենոսի վրդ.ի ողջոյն

Թուղթ ՃԻԹ

... Շարժ մեծ եղեալ է ի կողմանս սիւրիոյ. և վասն չամ, այսինքն դամասկոսի քաղաքին ասի, թէ յոյժ մեծ վնաս եղեալ է նմա ի շարժէն. ամենայն ճամիք նորա փլեալք են. և ընդ նոսա նաև այն մեծ ճամին, զորմէ ասի զոլ չինուած նորա ըստ ամենայն բանի նման չինուածոյ այգր եղեալ եկեղեցւոյ սրբոյն մարկոսի և մինարէն նորա կոր-ծանեալ, զորմէ առասպելարանն տաճիկք ընդ այն իշանել Քրիստոսի յաւուրն, յորում գալոց է առնել զընդհանրական դատաստան: Այլ և անբաւ տունք այնր քաղաքի փլեալք, և որք յոտին երևին մնացեալք, բնաւքն ճաթռտտեալք, և կասկածելիք ի բնակիլ. և անհուն մարդիկ մեռեալք ի ներքոյ փլատակաց: Այն շարժ եղեալ է և ի Թրիպոլիս, ի յանթաքիայ և ի Այազայ և յայլուր յայնս կողմանս. ուստի տաճիկք ստամպօլու ամե-նեքին սասանեալ կան:...

Դեռ հալածանքն նոյն է. և ոչ կարեմք չըշիլ ի խալաթիայ. և ժամք ֆոռանկաց փա-կեալ կան վասն ուղղափառաց:...

1759
Դեկտ. 30 [ի կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Զաքարիա վ. Ա.

ՄԻԷ.

Ահա պետական ներքին շարժում մը, որ և պատճառ կ'ըլլայ ժողովրդեան ահա-բեկումին: Մահու չափ կը տուժեն և երեք հայեր կախաղանին վրայ:

Գերաւեծար գերյարգելի Հիւրայոր մերոյ Յակոփաւենոսի վրդ.ի՝ ողջոյն

Առակցութիւն ՃԻ թղթոյս

... պատահեաց դիպուած ինչ... ժողովեցան ամենայն կարդացօղք ի տաճկաց և րիճալք ի ներքս անդ ի պալատ թագաւորին վասն իրաց ինչ. (և ասի թէ այն իրն է այս, զի ի միոյ չէհզատէէ, որ յաշորդն է ներկայ թագաւորիս, ծնեալ է արու մանուկ մի, և ներկայ թագաւորս կամեցեալ է զայն մանուկ սպանանել. և ի հակառակիլ հօր մանկանն, մեծ չփոթ ինչ եղեալ է ի ներքս անդ ի պալատն). և իբրև խորհուրդն այն յամեաց ժամս ինչ, չարսըցեք յերկիւղէ թէ փոխեն զթագաւորն չփոթս ինչ յարուցին, և սկսան զսնտուկս իւրեանց ափալ թափալ ի պէզեստէնն կրել և փախստ առնուլ և զհաց ի փառնց յափշտակել. յայսմ չփոթէ հալխին մեծ երկիւղ եղև յստամպօլ. և ապա ի միւս օրն որոնումն եղև յարքունուստ փախստէից, և զսնտուկսն զառաջինն ի պէզես-տէնն կլոզաց, և զերիս ի հայոց ազգէ առաջի կրպակաց իւրեանց կախեցին[1], յորոց մինն էր անկոթօղլուն, և զչորս հայս ևս ի քիւրէկն առաքեցին, և ամենեքին ի դողու-թեան են այժմ և բազումք թագուցեալք...:

1760 յունվարի 16 [կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Զաքարիա վ. Ա.

---

1. «Ի գոյութեմբէ չարշն յերեւելի տեղիս, և էին սոքա սամաքիացիք անկոթօղլու զարբէլը... և Քոզին կալ կախեալ զաւուրս չորս ի նշանակ ամենեցուն. և եղեն զիր գրեալ ի վերայ լանջից երեցունց. առաջնոյն գրեալ այսպէս, թէ արժանի է պատուհասիս, որ առաջնորդ լինի և պատճառ ապստամբութեան, երկրորդին՝ թէ արժանի է, որ չափշտակութիւն հացի առնէ, երրորդին՝ թէ արժանի է որ զաղմուկ արկանէ ի մէջ ամբոխին ի շուկայն» (Գր. Հ. Իգնատիոս առ Մելգոնեան, կ. Պոլիս 1760, յունվ. 19).

ՄԻԸ.

Հնդկաստանի առաքեալ Ս. Ֆրանչիսկոս Քաւերեանի սուրբ մարմնոյն շուրջ կը տրուի հոս զարմանալի տեղեկութիւն մը։

Գերապատիւ և. ամենապայծառ տեառն Յակոբեանոս արքային Ս.

... այսօր վասն ճիզվիթաց լուաք ի ճէնէռալէն Ֆրանչիսկանաց, զի ի կօա քաղաքն հնդկաց անկեալն ընդ տէրութեամբ լօսիտանիոյ թշուառութիւն մեծ կրեցին ճիզվիթքն, քանզի ունէին գհոյակապ և զբազմագանձ եկեղեցի մի, ուր էր մարմին սրբոյն Ֆրանչիսկոսի քաւերեանի. արդ՝ զսոյն եկեղեցիս ընդ այլոց առին ի ճիզվիթաց ամենայն գանձիւքն արժեցելովք զբազում միլիոնս. և եռուն զնոսա Ֆրանչիսկանաց չիզօլանթից. և որ հիացման արժանի է, այս է, զի զզգաստ ճիզվիթական հանեալ ի յանձնէ սրբոյն քաւերիոսի վասն սաստիկ առելութեան ճիզվիթաց, զգեցուցին նմա զսքեմ չիզօլանթից, ի ճմլումն և ի թալկացումն սրտի չիսուսեանց. յորմէ երևի թէ և զճիզվիթսն չարաչար արտաքսեցին։

1760 Մարտ 21 [Հռոմ]

Նուաստ ծառայ
Հ. Մկրտիչ [Ալանեանց]

ՄԻԹ.

Էրզրումի և իր գաւառին, ինչպէս նաև Տիարպէքիրի հայկական կեանքի շուրջ տեղի ունեցած տխուր դէպքերու մանրամասն նկարագրութիւնը կը գտնենք վաւերաթղթիս մէջ։

Գերապգելի Հօր իմում Հայր Աբրահամ, սրբագործ սուրբ ալն ճամբութիւմ ծնրադրութիւնամբ, և կարի յոյժ կարոտիւ և ամենամեծ սիրով ողչոյն մատուցանեմ և խնդրեմ զօրհնութիւնդ

... բազում հանդէպք վիշտք նեղութիւնք և զանա|զան տանջանք պաշարեցին ինծ և բոլոր խոտրջոյ ժողովրդեան իմոյ և նահանգին նորին, որ ոչ կարեմ գրով ծանուցանել հայրութեան ձերում. իրաւի եղեալ եմք որպէս զմոլորեալ հաւք։ Նախ ծանիք որ մեր ախզխայու փաշան սպանեցին հերու թագաւորի հրամանաւ, էրզրումու խպրահիմ փաշան եկաւ նստաւ ի տեղի նորա. այնքան սաստիկ զուլում երաւ յերկրի մերում, որ բոլոր աղքատքն իբր հրով այրեց ի ձեռն մեծամեծ հարկապահանջութեան և սալիանի, այնքան անողորմաբար հարկանէր զառն աղքատաց՝ որ անսգայ քարերն և փայտերն իբր գուլային և կաղաղակէին ի միասին. ոչ եզ մնաց ոչ տաւար և ոչ տան աշխայ, բոլոր վաճառուեցան, ես մէկ քանիմ օրով յառաջ յելայ գիւղէն եկի էրզրում, յետևէս բոլոր գիւղն յելան և քոչեցին. Ջ տուն էրզրում եկին. Ը տուն իսպիր գնացին, և միւսքն, ոմանք կիւմիշխանայ գնացին և ոմանք այլ տեղիս, և ես եղկելիս իմ ձեռաց մարդն յղեցի խոտրջուր յեկեղեցւոյս զարդն և գրգերս ժողովել տուի, մնաց դատարկ գիւղն...։ Էրզրումու որպիսութիւն եթէ կամիք հարցանել նայ՝ ծանիք՝ քան զգիւղօրեայքն այլ յառաւել վատթար եղև, միշի թուրքերն չափէ ի դուս գազանացան, որ մարդ տնէն դուրս յելնել ու չուկայն երթալ չի կարել, զբէ կսպանեն, չարսու և թուքեան բոլոր գոցուեցան, չատ պէզրկեան սպանեցին և բարկն տարաւ։ Մանաւանդ որ երեք գազանաբարոյ փէյտահ եղան, մէկն ժամադուան մահալան և նոյն կողմն գաւթ էրաւ իբրև գերի, մէկն թարվէզու դուան կողմն, և մէկն էգնկու դուան կողմն։ Այսպէս չրջապատեալ պաշարեցին զքաղաքն. մնացին գաւունքն ի մէջ գայլոց. քաղաքիս մէջ ևթ յանձմ

կայր այսինքն մահտեսի գասպարի որդի խոճայ մովսէսն, սորայ տունն աւիրեցին, ի դուռն տան, հաճեցան գինքն սպանանել, հազիւ փախեաւ ընտանեօք գնաց քաղաքին մի կողմն թագեաւ, գնացին զօրպաներն տունն խորտակեցին շատ բարիքն տարան հաճեցան տունն այրել սմանք թուրքերն ոչ թողին այրելոյ. և ինքն դեռ ևս է ի թագստեան հանդերձ ընդանեօք, և մեք քահանայքս ամենեին մէկ տնէն միւս տունն ոչ կարեմք գնալ...։ Այլ և եթէ կամիք հարցանել զբան ինչ ի սահակ վարդապետէ որ մակ անուամբ կոչի ահագին. ձեզ յայտ է որ սայ եղև կաթուղիկոս, մնծաւ զարդիւք եկաւ ի կարին քաղաքն նստաւ բոլոր ամ մի, ոչ գնաց ի աթոռ իւր, ասելով եթէ անդ չչմիածինն գոյ չամախեցի յակոբ վարդապետ որ նախ քան զիս գնացօղ կաթուղիկոսքն թիւնօք մահացոյց. ուստի և ես սակս յերկիւղի ոչ գնամ ի յաթոռն. երկուասան վարդապետ առաքեաց չչմիածինն նոյն յակոբ վարդապետն բերել էրզրում իւր քովն. ասաց չատ կաթուղիկոս թիւնեցիր ինծ ալ այնպէս կէնէս. զայս ասաց ու մատանին մատանէն հանեց նորա մատն անցուց և օրհնեաց կաթուղիկոս յղեաց աթոռն, և ինքն անկաւ ի կաթուղիկոսութենէ. եղև ծայր և նախատինք ի մէջ հայոց ազգին. նոյն յակոբ կաթուղիկոսն գնաց աթոռ նստաւ. տարին չկրցաւած էրէւանու խանն վէրուց բանտն դրեց. Ի քէսայ բստակ տուքանք առաւ, այժմոյս այլվի յերկիւղի մէջ է։ Դարձեալ պարսից յերկիրն այժմոյս այնպիսի բան չկայ որ գրեմ, խաղաղութիւն է այժմ, միայն թէ թագաւոր չունին. խաներն իւրաքանչիւրն իւր քաղաքն տիրել և նստել են։ Լակզին մեր ախլցխայի բոլորն չրջապատեց. փաշան ազգաւր առաւ վրան սաֆար գնաց նայինք։ Էրզրումու աժնութիւնն եթէ կամիք իմանալ, ցորէնին սումառն Լ զռուշ. գարին Գ զռշ. միսն հօխէ Լ փրչ. էգան միսն հօխէն Գ փրչ։ Դարձեալ յայտ ամի դէրպէնդիրցի յուղափառ յանձ մի եկաւ ինծի քով. բերան առ բերան գանազան բաներ պատմեց որ հիացաք, ասելով եթէ անցեալ տարին որ յայժ սղութիւն եղև դէրպէնդիր, ցորէնին սումառն Ձ զռշի ծախուեցաւ, նայ այլ եօՀ զռուշի տունն, Ձ զռուշի ծախէին Ա սումառով ցորէնի կուտային, բազումք անօթի Ջարդուեցան, և բազումք իւրեանց տղայքն մօրթեցին կերան, անձին մէկն ալ որ էր քրիստոնեայ, կառնէ իւր կինն դէպի էրզրում գոգայ թէ երթամ հացի հասանիմ, կնոջ ծիծն ալ մէկ մատղաշ մանուկի ունին եղել իւրեանց զաւակն, սգքայ քալելով գուգան մէկ յեպտանի լեռամ տակն անօթի կու նուաղին, յետոյ այրն կնոջ կասէ. Օվ կին մեք զժոխքն երթալուն կերթանք էկէ այս մեր մանուկն մօրթենք ուտեմք. կինն գուլայ կաղա[զա]կէ այրն չի անսալ կնոջ լացին. յետոյ կինն կասէ. Մի յառաջի յաջացս մօրթել. համբերեայ ես փախչիմ հեռու քարի յեաև անցնիմ որ տղայիս ձայն չլսեմ. կերթայ քարի յեաև կանցնի մէմալ նայի որ սարէ ի վայր մէկ վայրի այծմ վայելով վազվազակի հասնի յայս կնոջ քովն. կինն չուտով այծուն գլխէն կու բանէ տանի էրկան կու տայ տան կազաւէ. այծն մօրթին կուտեն. այս հրաշքն ալ այսպէս եղև։ Այժմոյս նոյն քաղաքն աժնութիւն է Աստուծոյ գոհութիւն։ Հայր իմ էլրու յղեցի Ա. արձաթատատ աւետարամ, որ բոլոր դպլամայ արծաթ էր ամենեին բաց տեղ չունիր. ի միասին ևս մէկ մեծ հին գիրքմ...։

Ցամի տեառն 1760
Մայիսի ԺԳ

Նուաստ ծառայ
Տէր Յակոբ տէր Ղազարեան
անարժան քհնյ. ի խոտրջրոյ
գրուեցաւ գիրս ի կարին քաղաքի

Դարձեալ ծանիք. Չալպայ մինչև որ գայ հասանի Ղարս ամսին սինօան, պաշիպօշ Լաւանան պաշարեց, յերկիր յամենայն աւիրեց իբր չէնլիք չթողեց, բազում գարչելի բաներ էրաւ, մանաւանդ բասէնու յերկիրն։ Ոչ փաշայ կայ ոչ դաւաւոր։

Այս թուխթն դեռ ևս չէի ծալել և գմռել. ախլցխայու մարդ էհաս ասդ էրզրում, ասելով թէ լակզին մեծապէս պաշարեց և սխլաթ էրաւ քաղաքին, միայն Աստուծոյ։

ՄԼ.

Մէկ քանի քաղաքական դէպքերու քով՝ նաև հետաքրքրական է Միխիթար Աբբահօր Հռովմայ մէջ ուր բնակած ըլլալու մասին յայտնուած կարծիքը մը։

*Դերասպատիւ և ամենապայծառ տեառն Յակոբեանոսի արքեպի
ոդչոյն խոնարհական*

... ի թունուզէ պէշ մի տաճիկ թէքիրտաղցի հարուստ յոյժ՝ փախուցեալ ի սպանեալ ի բարկութենէ փաշայի տեղւոյն, որ կամէր գլխատել զնա վասն զրկանաց արաբելոց, ընկալաւ չնորհս ի թագաւորէն, և նորա յանձնարարութեամբ առաքեցաւ ի Նափօլի մեծաւ պատուով. ընդ որում խուզեարօղլու ստեփանն բազում անգամ խօսեցաւ, որպէս պատմեաց մեզ. սա կամէր նախ գալ ի հռօմ. աստի ի վենետիկ. ի վենետիկէ ի վենայ, և ի վենայէ ի կոստանդնուպօլիս. սակայն նափօլիթանքն չկամեցան, այլ գրեցին ի ստամպօլ, զի ուղիղ նաւաւ յղեսցեն զնա անդր։ Դարձեալ աստ համբաւին թէ թագաւորն առնկաց առաքեաց վասն երից փաշայից գլխատել զնոսա. երկուքն ի նոցանէ փախեան ի կողմանս վենետիկեցւոց. մինն ապստամբեալ ժողովեաց զգլխով իւրով քսան կամ երեսուն հազար զօրս. և արձանանայ նոքօք հանդերձ ընդդէմ թագաւորին, խնդրել զվրէժ քինուն արդարութեան։ Զայս լուր նախ ֆրէնկքն ասացին, սակայն ես ստեցի, բայց յետոյ եկն գիր ի ստամպօլէ, յորում այս պատմութիւն ճառի, որպէս և գրեցի։ Տէր Գէորգն... գնաց բնակեցաւ ի փոնթէ սիսթօն... սակայն և անդ նեղի, զի ոչ ունի զգրութիւնն զոր ունէր ի հայոց ժամն, այլ և պարտի պահել զկանոն տեղւոյն, մանաւանդ յաւուրն մի ժամ առնել ի միասին զմտածական, քանզի այս է տեղի ինչ հասարակաց չինեալ իբրև զվանս, ընդ կառավարութեամբ սփօլոզից որք են փիարիսթայքն, որ մտեալ իբրև պանդխտաք բնակին պարկեչտ քահանայք, ևն, ուր և կարծեմ բնակիլ Միխիթար աբբային, յորժամ եկն ի հռօմ...

1760 Հոկտ. 4 [Հռովմ]

Նուաստ ծառայ
Հ. Մկրտիչ [Անանեանց]

ՄԼԱ.

Յովսեփոսի պատմութիւնը «ՑԱՂԱԳՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀՐԷՒՑ ԸՆԴ ՀՌՕՄԱՑԵՑԻՍ ԵՒ ԱՒԵՐՄԱՆՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ՏԱՃԱՐԻՆ ՀՆՈՑ» լոյս տեսած է Էջմիածին 1787 թուականին, ձեռամբ Յակիմանոս Լեհացւոյ, որ լատիներէնէ ի հայ թարգմաներ է։ Ցպագրութեան ճիշատակարանին մէջ կ'ըսէ. «Էր սա թարգմանեալ ի վաղիչուց ժամանակաց ի ևսիևի վարդապետացն մերոց ի մեր լեզու և ի գիր», սակայն Էնկլիմուրի և այլ հէներու ասպատակութեամբ ուրիշ շատ գրքերու հետ այդ ալ ջնջուած է. ուստի Լեհացին հարկ տեսեր է կրկին թարգմանել և հրատարակել (էջ 494)։

Հետագայ մեր վաւերագրին մէջ, այսինքն յիշեալ տպագրութենէ 27 տարի առաջ, կը տեսնենք ուրեմն որ մեր նամակագիրը Ա֊թանաս եպս. Ալաքելական փոխանորդ Հայ կաթուղիկեայց ի կ. Պոլիս՝ ի ձեռին ունի Յովսեփոսի սոյն պատմութեան հայ թարգմանութիւն մը, որուն տպագրութեան խնդրով Ջերմօրէն կը զբաղի, և ինչ որ կը տեսնուի՝ ապարդիւն կը մնայ։ Բայց ի՞նչ եղած է Ա֊թանաս եպս.ի ունեցած հայ թարգմանութիւնը՝ չենք գիտեր։

Մեր Մատենադարանին ունեցած Լեհացւոյ տպագրութեան օրինակին սկիզբը կը գտնուի թղթիկ մը, ուր մեր Հ. Բառնաբաս Իսայեան մի առ մի նշանակեր է Եւսեբիոսի մօտ գտնուած պատառիկներուն ու Լեհացւոյ օրինակին միջև իր կատարած համեմատութեանց էջերը, յայտարարելով վերջնոյս համար՝ թէ «գրեթէ նովին շարադրութեամբ եահանաց» առեր է։

Գերշարգելի և Գերաւեժար Տեառն Տեառն Յակոբայեանոսի Արտուաժարանութեան վարդապետի և մեծի արքային ողջոյն կարօտանաց

... Ունիմք ի ձեռին պատրաստ զգործն բոլոր իբր թարգմանեալ՝ յովսեպոսի փլաւիանոսի երբայեցւոյն. և զայս գիրքս վաճառական ոմն հայ կամի տպագրութեամբ ի լոյս ածել, և զբոլոր ծախսն ինքն կամի առնել. և յետ տպելոյն գհազար գիրք. գհինգ հարիւրն չնորհելոց է էջմիածնայ, և գհինգ հարիւրն երուսաղեմայ։ Գիրքն ի ձեռին իմում է, և հաճոյից իմոց թողեալ էջմիածնայ նուիրակին և երուսաղեմայ. կամէին զգիրք գայս յղել ի ամսդէրտամ, և նոր տառիւք տպել. որպէս և գօրինակսն տառից փոքերց գտանես ի սոյն քարտիզիս, զորոց և գխոչորսն ունի պարտն առաքելն ի ամսդէրտամ։ Եւ ես զառաջինն ի տեսանելն զտառսն հաւանեալ յոյժ՝ կամեցայ յղել անդ զգիրքն, բայց ապա բարւոք գմտաւ ածեալ՝ ասեմ. սա միանգամ է տպելոց, և ի մէջ ազգի մեծ յիշատակ լինելոց։ Ի ամսդէրտամ ոչ գոյ այր հմուտ և բանիբուն՝ յապաւել գգիրքն ի սխալանաց տպագրութեան կարօղ. գուցէ բազում սխալանք անցցեն, և գիրքն անօգուտ լինիցի։ Վասն որոյ կոչեցի գվերակացուն այսր գրքոյս, և գմիտս իմ յայտնեցի նմա, և նա էջմիածնայ նուիրակին. յորմէ և ամենայն վարդապետք իմացեալ՝ ուրախ եղեն, և կամեցան թէ այնպէս լինիցի։ Մանաւանդ և գրեցաւ յէջմիածին։ Արդ՝ եթէ կամիցիք՝ գայս ասեմ համաոտիս՝ յղեցից զգիրքս գայս առ ձեզ. և աւետարանի մեկնչի տառիւք տպեսջիք. ունի գիրքն երկու հարիւր քսան և ութ պատկերս գեղեցիկս յոյժ, զորս և կամիմք, զի ի քէրխանան ցուքիայի ի նորոյ փորեսցին, որպէս և պատկերք ձերոց աստուածաշնչին...։

Գրեցաւ ի հոկ. 20
1760 [կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Աթանաս վարդապետ անարժան եպիսկոպոս
[Մերասեան]

ՄԼԲ.

Մելգոնեան տեղեկութիւն մը կու տայ «գաբիտան փաւլօ մարաշլի» անուն «դուբսանտ»ի վրայ առ Հ. Մ. Ալանեանց։

Վերապատուելի Տեառն Հ. Մկրտիչ վարդապետին ողջոյն սիրոյ ի տէր

... Անուանի դուբսանտ մի իշկեաւօն ազգաւ անուն գաբիտան փաւլօ մարաշլի, որ երկերիւր ընտիր իշկեավօնաւ ի ծովու առնէր գդուբսանտութիւն դրօշակաւ մալթէզի ընդդէմ տանկաց։ Այս յետ առնելոյ զայս արուեստս զամս մեծասան [մեծասան?] ի սոսկումն տանկաց և փարիսարոսաց, մինչև երբեմն թագաւորի տանկաց կոչել զսա ի ծառայութիւն իւր խոստմամբ մեծութեան. և միանգամ ևս ինկիլիզի թագաւորին կոչեալ զսա յիւր ծառայութիւն. և սորա յանձն չառեալ. հուսկ յետոյ ձանձրացեալ յայնմ պաշտօնէ առանձնանայ ի մանեօթս. և գրէ գիր քէօրֆէզի ճեներալին, տալ ինքեան զներումն. (զի յանցաւոր էր սոցա, զի ընդդէմ կամաց սոցա առնէր զայն արուեստ) զի դարձցի յերկիր իւր առ ընտանիս իւր. և ճէնէրալն գրէ առ Սինաթօն, և սինաթօն յօժարակամ ներեալ կոչեաց անմիջապէս ի վէնէտիկ առանց գնալոյ ի տուն իւր, և այժմ ի նազարէթն է

սա, և տեսի և խօսեցայ ևս ընդ սմա։ Սորա ակն այնչափ է ներգործեալ ի բարբարոսս և ի տաճիկս, զի ընդ լսելն թէ գաբիտան փաւլօն է, թողեալ զնաւսն բազում անգամ փախուցեալ են. և սա անաչխատ գնացեալ զնաւսն առնու։ Ցառաչնում ամի ղուրսանտուեէան իւրոյ զեօթն փարփարութիւն զամպէքս և ֆրղաթայս ծովասոյզ առնէ և յայսմանէ ահն մտանէ ի նոսա։ Սա ոչ միայն ի ծովու, այլ և ի ծովեզերեայ ցամաք հարկանէ և գերէ բազում անգամ. ուստի մինչև ցայժմ իբր վեցհարիւր կին գերի տաճիկ վաճառեալ և հազար երկուհարիւր և աւելի գերի արու գերի վաճառեալ, թող զսպանեալսն ի ծովու և ի ցամաքի...։ Այս այր է երկայնահասակ և գեղեցիկ և ահեղ կերպարանաւ և դեռ իբր քառասուն ամաց...։

1761 ի մարտի 28
[Ս. Ղազար]

Նուաստ ծառայ
Ս[տեփանոս վրդպտ.] Ա[բահայր]

ՄԼԳ.

Նամակագրիս ակնարկած յոյն պատրիարքին հետաքրքրական կնիքը չգտանք վաւերաթղթիս մէջ։

Գնդապետաց գնդապետի Աբրահամ վերոյ և յաթուղնապետի տեառն տեառն Յակիմեանոս վարդապետի ողջոյն

Թուղթ ԻԳ.

Ցայնմ ամի յապրիլի 19 ծնաւ դուստր սուլդան մուստաֆային, նմա եդին չահ սուլթան։ Եւ քանզի ծնաւ ի բամազանին 15, վասն այսորիկ զտօնականան արարին զկնի պայրամին, զի սկսան ի մայիսի 6, և արարին Ի տիւ և Ի գիշեր։ Ցայսմ տօնանմայի, խօնախքն տաճկաց գերազանցեցին զապարանօք դեսպանաց ֆռանկաց։ Էր խոնախ զոր քսան հազար մառչէօք զարդարեցին, և էր՝ զոր 25000աւ. ի մեծ պահոցս փոխեցին զպատրիարգն յունաց, բանիւք վարդապետն յունաց։ Եւ ես առաքեմ ձեզ յայսմ թղթիս կնիք պատրիարգին յունաց, արժանի տեսութեան, զի տեսջիք թէ զորպիսի կնիքս ունին. քանզի չեն թողեալ զնշան մեծութեան ինչ, զոր չեն եդեալ ի կնիքս իւրեանց։ Զմի կնիքն ի գործ ածեն ի ստորագրութեան ողջանագրից և վկայականաց, ևս։ Զերկրորդն ի գործ ածեն և դրոշմեն ի վերայ ծալեալ ողջունագրաց։...

Ցամի տեառն 1761 ի մայիսի 19
[Կ. Պոլիս]

Ն. Ա. Հ. Յակոբոս վարդապետ
Ջամչեանց. Մխիթարեան

ՄԼԴ.

Այս երկու թղթերը Խոտրջրի և Կարնոյ ներքին շարժումներու վրայօք տեղեկութիւններ կը հաղորդեն։

Առաջինը կը նկարագրէ Խոտրջրի հայ ժողովուրդի գաղթն ու տառապանքը՝ տեղական բնիկ բարբառովը։

Ս.

Գնդապետի Հօր իւռում Հայր Ղ[ուտիան] վարդապիտ...

... մեր Խոտորջուրն էր գիւղայ քաղաք, զորս Թուով էր Դշ տուն, անցեալ օգոստոսի ամսոյն բոլորն ելեալ ի գիւղէս քօչեցին իւրաքանչիւրն մէկ յերկիրմ գնացին, որ

ամէնեին մէկ տուն և կամ մէկ մարդի չմնաց ի մէջ գիւղիս՝ որ եղև իբրև անապատ սակս մեծամեծ և անասնելի հարկապահանջութեան, այն դառն աղքատն ծեծ ղռուչ խա- րաճ տուաւ, թող գիտչային սալիանն։ Երկրորդ, հուսկ յետոյ եղկելիս ելայ մէկ քահա- նայիւք, եկեղեցւոյս զարդն զոր ինչ որ կայր բոլոր սկեստով և պատկերներով. նոյնպէս գրեանքս՝ որ ի հայրութենէ քումէ ընկալեալ էի, և յայլմէ տեղէ, սոքա ամենեքեան ընդ այս քահանայի տարաք վայրաբնակ տեղ մի ի ծերպս վիմի պահեցաք, և թողեալ գնացաք թաղթուտ, բոլոր ձմեռն անդ մնացաք. յերբ մեծ պասին գարձաք և եկաք տեսանել գգրեանս և զայլ բարիս, անձրևն իջել էր, բոլոր գրեանքն և պատկերքն թրջել էին, եղեալ էին որպէս զթուղի, յոյժ ցաւեցայ, դեռ ևս ցաւիմ մեծամեծ ցաւօք։ Երգրուտ այնքան բազմացան չարաճճիկ զօրպէններն՝ որ հնարք չկար գիւղէն մարդ մտանել քաղաքն, իս- կոյն կոպանեալին և զինչս նորա կառնէին։ Ատաղ արարին՝ ահաւ բոլոր տարիմ է, օրն Գ՚ հօխայ յրտխի հայոց իրիցներուն կառնուն, մեր ուղափառ քահանային մէկն բռնեցին չատ ստակ տուքանք տուին, կրակն յնկել է երգրուտ կայրէ. ոչ ալգրկեան մնաց և ոչ տուն, բոլորն յէլան քաղաքէն։ Մեր քերօբէ վարդապետեան տարի և Բ ամիս եղև որ կիւ- միչխանայ նստել է՝ վասն ահին, ոչ կարէ գնալ երգրուտ, նոյնպէս և տրապիզոն հիմնա- չիրջ եղև իսկի անուն մի տալ։... Պարձեալ մեր փաշան եկաւ մեր օլքեան՝ այսինքն բերթ աքրակն. համչէնու մէկ զօրպէմ Զ թուանքչիով բերից քոնդ, և ինձ տարաւ առընթեր իւր ասաց ժողովուրդ վասն էր թողիր որ քոչեցին. ասացի թէ վասն ծանր խարաճին քոչեցին և լազին. ասաց ահայ այս զօրպէն հովիւ կու դնեմ գրեայ ժողովրդեանտ որ կրկին յետս դառնան՝ ապա թէ ոչ քեզ կու տանջեմ. ասի նոքայ իմ գրով չեն գալ. յետոյ ենք մէկ քանիմ տուն զօրով բերեց. դեռ ևս Գ բաժինն դուսն են ըստամպոլ մարդ գրկեց...։

Մնամ պատրաստական յամենայնի

Ցամի Տեառն 1761 յունիսի 2
[կարին?]

Նուաստ ծառայ
տէր Յակոբ Տէր Պ՚ազարեան

ՄԼԵ.

Բ

Գերարգելի Հօր իմում Հայր Աբրոյիդ, Բսանփաւնոս Աստուածաբանութեան վարդապետիտ, Աբբագործ Սուրբ այրս ծերապրութեամբ Յամբուրիմ...

... Այս է մեր խնդիրքն որ գրես Հոսմմայ Սրբազան Սուրբ փափին որ ի վերայ Բ քահանայից, այսինքն Տէր ըստեփանին և Տէր յովսէփին ի կէտ մահուան լիակատար ներողութեան տալու հրաման յղէ, քանզի կարի յոյժ հարկաւոր է, ծանիր փոքր յերկիր չէ, սոսկ գիւղն մեր խստրշուր Գ՚ տուն է, թող մօխրկուտ և կարմիրքն, որք սոքա պաշ- խայ գիւղօրեայք են. ի միջի սոցա ներողութիւն տալու հրաման մեայն անարժանս ունիմ և այլ ոչ ոք. ապայ թէ ես մեռանիմ ինձ ով տացէ ներողութիւն, կամ եթէ անարժանս այլ քաղաք, կամ այլ գիւղ գնացի այս քան բազմութեան ժողովրդեան ով տացէ ներո- ղութիւն...։ ...մեծ որուտու[մ]ն անկաւ ի կարին քաղաքի, քանզի սաստիկ հրաման եկն ի Ստամպոլու թագաւորէն ի վերայ Խպրահիմ փաշային ասելով, եթէ վաղվաղակի զօր- պէնեուն գլուխն կտրես ու ինձ յղես՝ ապայ թէ այնպէս գիտացիր որ՝ ոչ թէ միայն քոյ գլուխտ կու կտրեմ այլ և ուստերօք և դստերօքն քոյ չարդեմ զձեզ, բոլոր սոյ և սօքն ձեր վերջացնեմ, սայ ըստ ինքեան ոչ կարաց յառաւել յերկիւղէն գնաց քիւրտիստան քօլօզ անուն կոչեցեալ քիւրթ պէկիմ իւրեան ասզեաւորն բերեց՝ մատնչեցան ընդ մի- միեանց. զօրպէնեներն յաղթեցին փաշային և քօլօզին, քանզի քաղաքին մէկ կողմն բոլոր տիրապ[է]տեր էին, և զարաճիհանամ օղլուն տունն իւրեանց ամպրոց արարեալ էին. զայն

տանն միջէն արձիճ թապլէին փաչին, քօլօղին ճարն հատաւ վազեց առ փաչան ասաց, այլ ճար չկայ մեզ կու Չարդին հրաման տուր որ երթամ կրակ տամ, առեալ հրաման ի փաչայէն ես զգուշաճիով եկն նոյն մահալան տնէ տուն ծակելով լաղում կարելով գնաց նոցա ճէպխանան գտաւ և կրակեց բոլորն ըմբռնեցին և կոտորեցին. այժմոյս յոյժ խա-ղաղութիւն է կարին քաղաքն և բոլոր նահանգն նորա...:

Նուաստ ծառայ
Տէր Յակոբ Տէր Ղազարեան

1761 օգոստոսի 19
[Խոտորջուր]

ՄԼԶ.

Մխիթարայ երկու դաստիարակ կուսաններու կողմանէ սքանչելիօք առ յիշո-ցատու ոմն տրուած մէկ պատուհասը կը պատմուի նր. Հօրս կենսագրութեան մէջ[1]: Տե՛ղն է որ հոս հրատարակենք անոր վաւերաթուղթը:

Վկայապատուելի Տիառն Հ. Մկրտիչ վարդապետի ողջոյն սիրոյ ի տէր

... Հ. Յակոբոսն[2] ևս գրեալ էր զգիր մի ի սեբաստիոյ, յորում պատմէ զընդունելու-թենէ իւրմէ զոր գտեալ է առաջի բազնկցւոց և սեբաստացւոց. և գրէ ևս զայս ինչ, եթէ իբր քսան ամ յառաջ այր ոմն Թամզարացի եկեալ ի սեբաստիա կնաւ իւրով և միով ուս-տերով և միով դստերաւ բնակի ի վարձու ի տան կուսանացն մանասէի և մարիամու դաստիարակաց լուսահոգի հօր մերոյ: Այրս այս լեալ է կարի յիշոցնատու. ուստի յաւուր միում ի գտանիլ միայնակ ի տանն, գան երկու սպիտակ աղաւնիք, և թառին ի տանն յուրեք տեղւոջ, և բարբառեալ առ այրն ասեն. այր դու մինչև ցերբ ոչ դադարիս ի հայհոյելոյ ի տան մերում, զի մեք եմք մարիամ և մանասէ կուսանքն. եթէ ոչ դադա-րեսցիս յայսմ հետէ, կործանեմք զտունս ի վերայ քոյ. զայս ասացեալ թռուցեալ անյայտ լինին: Եւ այրն զարհուրեալ ելանէ արտաքս ի տանէ և պատմէ զայս այլում. այլ ոչ դադարի ի չար սովորութենէն: Ուստի զկնի սակաւ ինչ աւուրց ի միում գիչերի յանկարծ կործանի տունն. և մեռանի այրն և երկոքին զաւակք իւր ի ներքոյ փլատակին. իսկ կին նորա յայնմ ժամու գտանի ի քուն առ թոնրիւ, և գերծանի ի պատուհասէն: Զայս լուեալ է Հ. Յակոբոսն ի յականատես վկայից՝ ի սեբաստիայ:...

Նուաստ ծառայ
Ստեփաննոս վրդպ. Աբբահայր

1762 ի մարտի 20
[Ս. Ղազար]

ՄԼԷ.

Ն. Պոլսոյ ծանօթ հրդեհներէն մին:

Գերաւժար գերդաստիկի Աբրահամ մերոյ Ստեփաննոսի վարդապետի ողջոյն

Ի մայիսի 22... եղև եանղըն մեծ ի ստամպօլ. և տևեաց հրդեհն ժամս 24: Եւ հուրն ի հանդիպոյ զահրէճիլէր քաբուսիի սուլթան պայազիտին ի կրպակէ նախընճիի միոյ որ ի տիւան եօլին. և անտի փոքր մի ընդ կրունկս ընթացեալ ընդ արևելակողմն

---

1. Տե՛ս Ագոնցի «Վարք Մխիթարայ», էջ 28:
2. Հ. Յակոբոս Ջամչեան:

այրելով էշ ընդ զառ ի վայրն ի մանկըռ թաղաւիխանան. և անտի ընդ թաղըլը խուլիով ի չուխաճի քէրխանան. և անտի ի նշանճին. և անտի ընդ տափարակն ի ժամն հայոց աստուածածնի մինչ ի հիսար տիպին: Դարձեալ ի նոյն կրպակէն նախըլճիին տարածեցաւ հուրն ընդ արևմուտս մինչ ի սրմաքէշխանան, այրելով յերկուց կողմանց զչինուածս տանց և կրպակաց տիւանեօլիին. և անցեալ առ կողմամբ սրմաքէշխանային, էշ հուրն ընդ զառ ի վայրն ի ֆիլ եօխուշին. և անտի մօտ ի ճիւճէ չէշմէսին ի տափարակն. և անտի մինչ ի հիսար տիպին: Այրեաց զայն ընդարձակ վայր թաշան թաշիին և նշանճիին զառիվայրօքն և զառ ի վերօքն և տափարակաւն մինչ ի հիսար տիպին: Ընդ ամէնն այրեցան տունք աւելի քան զեօթն հազար, և կրպակք անհամարք, և ճամիք բազումք: Այրեցաւ և տունն ներկայ վէգիրիս՝ որ էր ի հիսար տիպին. և տէր պահեաց զվլանկայ և զխումխաբուն զթացեալ յաղետս քրիստոնէից. և տունք որք այրեցան, բնաւքն էին տունք տաճկաց, միայն առ եկեղեցեաւ սուրբ աստուածածնին տունք քրիստոնէից իբր չիսուն ոմանք այրեցան, և ոմանք փլուզան. իսկ ժամն սուրբ աստուածածնին թէպէտ աշխատութեամբ հիւսանց հայոց ոչ ի սպառ այրեցաւ, սակայն ի տեղիս տեղիս սաչախք դրունք և որմունք կիզան, զորս և գործակցութեամբ վէգիրին ընկալեալ հրաման ի թագաւորէն, չինեցին, ծախեալ զանհուն դրամս:...

1762 Յունիսի 19
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Զաքարիա Վ. Ա[լէքսանեան]

ՄԼԸ.

Հայ եպիսկոպոս Թիֆլիզցի Գրիգոր վարդապետի ղէպ ի Հռովմ ուղևորութիւնն ու նոյն իսկ անձը կը նկարագրուի, ուրիշ մէկ երկու տեղեկութիւններու հետ:

[Ա. Մելգոնեան Աբբահայր]

Յաւելուած գրոյն գրելոց ի Հ. Մկրտ. 1762. Օգոստոս 7

... Վասն Թիֆլիզցի Գրիգոր վարդապետին ծանիք, զի յայսմ չորեքշաբթի եկն հասս ի Հռոմ ի հայոց ժամն, որ օր չորրորդ էր ամսոյս. եկն ընդ ճանապարհ պատուայու արապայով և չորս ձիովք, և երկու սպասաւորօք. կառքն և ձիքն էին իւր. սակայն աղքատին, և զկնի երկուց կամ երից աւուրց վաճառեաց: Գնացաք յայցելութիւն նորա. և խօսեցաք բազում ինչ. ունի վարկումն մեծ զՄխիթարեանց: կամէի, ասէ, հանդիպիլ ի վենետիկ, բայց վասն ձիոցս և կառացս արգելայ. բայց տեսցուք ասէ յետոյ աստուած զինչ յաջողէ. զի առ այժմ ոչ գիտեմ զինչ պարտիմ առնել: ինքն ճանաչէ զմինաս վարդապետն մեր, զսերգիս վարդապետն, զարմարմինդ ղազար ամենայն սարիւք, զաբէլ վարդապետն զձեռնադրիչն աթանաս վարդապետին. և հաստատէ թէ աբէլ վարդապետն ստոյգ եպիսկոպոս էր, և վասն միոյ ձիոյ լայն զրպարտանս կրեաց, որպէս և Մխիթար աբբայն պատմէր մեզ. ինքն կեցեալ է բազում ամս յէջմիածին. և ձեռնադրեալ է եպիսկոպոս ի կաթողիկոսէն սըսոյ. է ծեր իբր վաթսուն ամաց, ալեօք սպիտակ, հասակաւ երկայն, մարմնեղ և զօրեղ. բարուք հանդարտ և ծանր. սակայն է տգէտ և եօղունճայ և գեղացնատեսակ. խօսուացքով դուպաթճայ, իսկ հաւատովք չընչին գոյ, եթէ ոչ է ուղղափառ, կամ ոչ է այնչափ...: Դաւ յայտ երևի այսր լինիլ փախստական. քանզի որպէս այսօր եկն ոմն ի ճէռմանիայէ, ասէ թէ երկու ամիս յառաջ որոնէին ի կողմանէ թագուհւոյն զհայ եպիսկոպոս մի, որ ընդդէմ այնր թագաւորութեան յանցուցեալ էր լեզուաւ. կամէին պատուհասել. յանցանելն մեր բազում ընկերօք կալան զմեզ, թէ գոյ ի ձեզ հայ եպիսկոպոս մի յանցաւոր թագաւորութեան. կալան զմեզ զամենեսին. եդին յարգելանս մինչև քննեցին և տեսին զի մեք հայ ոչ էաք, և արձակեցին: Արդ յայնոսիկ կողմանս յայսոսիկ յաւուրս այլ հայ եպիսկոպոս ոչ գոյր բաց ի սմանէ, յորմէ յայտ է

և այլ որպիսութիւն սորա...։ Սա ոչ է նորոգ եկեալ յարևելից. այլ ամաք բազմաք կացեալ ի լեհաստան, ուստի և կապայն է կոճակաւոր, որպէս ֆէնկ փրէլաթից...։ Դարձեալ, է աստ գրեթէ յերեսուն ամաց հետէ հրէայ մի ստամպօլցի եղեալ քրիստոնեայ կոչեցեալ սինեօռ անտօնիօ գօսթանցի. ձեռի հայոց ժամուն, և փրօփականտայի մայիս թրօ վասն եբրայական լեզուին. այր խորամանկ, և պաշտօնեայ սանթօֆիցին...։ Լուայ զկործանուսն մոսկովու թագաւորին, զի բանտարկեցին զնա, և ի տեղի նորա թագաւորեցուցին զկին նորա, պատճառաւ զի կամէր լօթռան առնել զմոսկովսն. և զի զատոյց զնոսա ի դաշնագրութենէ նէմցէին. և արար միաբանութիւն ընդ պուռչին թշնամւոյն մոսկովաց. ուստի յետս կոչեցին զզօրսն յօգնութիւն պուռչին...։

[Հ. Մկրտիչ Անանեանց]

[ի Հռովմ]։

ՄԼԹ.

Բերայի Ս. Աստուած և Ս. Երրորդութիւն եկեղեցիները՝ հանդերձ իրենց վանքերով, ինչպէս նաև ուրիշ մեծամեծներու տուներ՝ ահարկու հրդեհի մը ճարակ կ՚երթան։ Յանառամահն ալ կը մասնակցի իր աղէտներով։ Ահա առ այս՝ երկու թուղթեր։

Ա.

Գնարանծար և գերդարգելի նդեար իմում
Տէառն Տէառն Հայր Միրտիչ վարդապետիճ ողջոյն

... յայսմիկ գիշերի ի հինգերորդ ժամու գիշերոյ՝ յանզգուշութեան խոհարարի սրբոյն անտօնի ի տեօրթ էօլ աղըզ՝ բորբոքեցաւ նախ աչխանայն։ Ապա վաղվաղակի յետ ոչ ամբողջ այրելոյն զսուրբ անտօնի վանսն, էանց ի տուն մուրատճայենց անտօն վ. տես դու զդժբախտութիւն աչխարհիս. զի թոռունք մուրատճայի ըմբռնեալ ի մահ՝ տարաժամ՝ էին յանկողնի. և անտօն վարդապետ փախուցեալ ի յօրթագեղ. նոյնպէս և ոմանք ի նոցանէ. և անշահք մնացեալք ի տան. վասն որոյ կանայք և մանկունք մազապուրծ լեալք, տունն ամենայն աղխիւք յաճիւն դարձաւ։ Յետ այնորիկ սուրբ անտօնի եկեղեցին հանդերձ վանուք այրեցաւ։ Ապա ի սաստկանալ բորբոք հրոյն, էանց առ մեզ, և զմեր եկեղեցին սուրբ Երրորդութեան հանդերձ տամբք և վանուք յաճիւն դարձոյց։ Ես ոչ զատ ի տան. մեր կարապետն ծերացեալ յոյժ հազիւ կարաց զանձն ապրեցուցանել, և զոմանս ինձ հարկաւորս. այրեցաւ տունն հանդերձ աղխիւք։ Ապա յառաջ ընթացեալ հրոյն մինչև ի Սարայրն օսմանցոյն՝ գերկու կողմանս յաճիւն դարձոյց. ղողեցաւ քաղաքն ամենայն, զի այնպիսի անցք ոչ երբէք պատահեալ էր մերոյս պէկօղլուի։ Բայց վայն այս էր՝ զի ամենայն ֆրէնկք՝ յահէ ժանտամահու փախուցեալք ի գիւղօրէս, ոչ ոք գտաւ սատարիչ առ ի զտունս պահել, և մինչև նոքա ի գիւղից իջին ի քաղաքն, ահա այն գեղեցիկ պէկօղլին՝ գտաւ դարձեալ ի յաճիւն։... ոմն ի խանից զուլխանին ելն ի կոստանդնուպօլիս. և յետ երից ամաց՝ յաւուրս յայսոսիկ հարաւ ի ժանտամահէ և մեռաւ... ասեն թէ միայն ի մէջ միոյ տոպրակի եղեալ զակուսն. և օրպիսի ակունք, սպիտակ էլմաք, և կարմիր եաղուտք, կչռեցին. և էր կշռոց երկուտասան օխայից. թող զսպիտակ տիւլպէնտս՝ որ աւելի քան զ1000 քսակս, և զայլ զգեստս բևեղեայս գործեալս ի հնդիկս։ Զայս ամենայն յարքունիս առին...։

Ձնչին ծառայ
Աթ[անաս] վ. և անտրժան եպս.

ի սեպտեմբերի 20, 1762
[ի Ն. Պոլիս]

ՄԽ.

Բ

Գևրաւևծար գևրյարգևլի Աբրայ ձօր մևրոյ Յատիաևնոսի վարդապետի ողչոյն

Թղթ. ՃԿԶ

... ի հոկտ. 1 եղև եանղլն մեծկակ ի պէկ օղլուն ի տեօրթեօլ աղզլն. և այրեցան տունք իբր 50, յորոց յոլովքն էին տունք ֆրանկաց և թէրճիմանաց՝ տունք հարուստք և մեծամեծք պարապք ի տանուտեարց. զի վասն ժանտամահին էին փախուցեալք ի գիւղօրէս. և վասն այն եղև նոցա ընաս յոյժ մեծ, թող զընասն ի եաղմաճոց: Ել հուրն ի վանից սրբոյն անտոնի որմնակցի մուրատճայենց տան Հ. Յովսէփին մերոյ: (Աս՛ի արկեալ գոլ հուրն անդ ի սախըզցի աշճիէ նոցա, որ երկու ամսօք յառաջ էր աշճի և սպասաւոր ճէւահիրճի ֆրէնկի միոջ քիրաճիի մուրատճայենց, յորմէ վասն անզգամութեան արուաքսեալ՝ մտեալ էր ի սուրբն անտոն. և ոխայր ֆրէնկին այնմ այրել զտունն ի վերայ գլխոյն, զոր և արարն իսկ.) և անտի էանց հուրն ի տուն մուրատճայենց ի ճամէքեան սուֆան նոցա ի վերին խաթըն, և սկսաւ զօրանալ, և այրել զվանքն սրբոյն անտոնի, և զտունն մուրատճայենց ի վեցերորդ ժամու գիշերոյն, և անտի էանց ի հանդիպոյ եղեալ տունսն նոցին յայն սօխախ, և սկսաւ փչմամբ հարաւային հողմոյ այրել և ընթանալ. և այրեաց յերկոցունց կողմանց նոյնոյ սօխախին զամենայն տունս մինչև ի կրպակ սըղըր խասապին մօտ տաճկի սարային խալաթիոյ: Այրեցան երկոքին ժամքն ֆրանկաց, այսինքն ժամն սրբոյն անտոնի և ժամն սուրբ երրորդութեան: Այրեցաւ և սարայն նմմեղ դեսպանին. այրեցաւ և բնակարան աթանաս վարդապետին մերոյ, և եղև նմա ընաս ոչ սակաւ...:

1762, Հոկտ. 13
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Ջաքարիա Վ. Ա.

ՄԽԱ.

Այս շատ հետաքրքրական թուղթը կը տեղեկագրէ մեզ՝ ընդ մէջ կղեմէս ԺԴ.ի և մեր նամակագրին՝ վատիկանու մէջ տեղի ունեցած հարցուպատասխանի մը:

Եղ. Աբգէն (յետոյ Հ. Յակոբ) յանձնարարութեամբ Հ. Մ. Ալնանեանցի՝ իբր թարգման կ՛ընկերանայ Լիւոռնոյէն Հռոմ եկող ջուղայեցի իգնատիոս անուն քահանային, սա՛ր իսկ թախանձանօք, երբ սա Ս. Քահանայապետէն ունկնդրութիւն ընդունած էր:

Գևրյարգոյ և ամենապատիւ տեառն Յակոբայ Աբրեայ խնդալ

... ի վճարիլ հարցմանցն որ զքահանային, դարձոյց զերեսս իւր ի դէմս իմ, և ասէ ցիս. ապաքէն դու ի վենետկոյ ես: Եւ ես ասեմ, այո՛ հայր սուրբ, եմ կրօնաւոր վանից սրբոյն Ղազարու որ ի վէն": Ասէ պապն. գիտեմ ես զվանս սրբոյն Ղազարու, և գնացեալ եմ անդ. է այն մենաստան գեղեցիկ և վայելուչ: Եհարց դարձեալ. քանի միաբանք կան այժմ: Ասեմ ես. աւելի քան զյիսուն: Ասէ սրբազանն. ունի՞ք նորընծայս: Եւտու պատասխանի. են նորընծայք, են և վարժարանեցիկ, և այլ միաբանք իւրաքանչիւր կարգի և աստիճանի: Եհարց քահանայապետն. և իւ կևայք: Ասեմ ես. դոյզն ողորմութեամբքն պատարագի զոր հիմնեալ են բարերարք միաբանութեան մերոյ, և այլ

փոքր ինչ ազատ ողորմութեամբք չնորհեցեալովք ի բարերարաց առաջին Աբբային մերոյ հիմնադրին, որ եղև սկզբնաւորիչ և ծաւալիչ ուղղափառութեան ի մէջ ազգին մերոյ: Ասէ պապն. գիտեմ ես զայն ձերունի Աբբայն. էր նա այր բարի և երևելի: Կրկնեաց. նա դարձեալ. և մի՞թէ ստանա՞ք դուք ինչ: Ասեմ ես. մեք անհատ միանձունքս ոչ եմք կարօղ ստանալ անձանց և ոչ գլխով մի. այլ ամենայն ինչ մատակարարի մեզ ի կրօնին: Ասէ սրբազան պապն. ուրեմն վարեք զկեանս կատարեալ հասարակութեան: Եւ ես ասեմ. այո՝ հայր սուրբ այդպէս է: Եւ յաւել մատուցեալ եհարց դարձեալ պապն. է՞ քո աստ և այլ ընկեր: Եւ ես ասեմ այո՝ հայր սուրբ, և նա է գլխաւոր գործակալ գործոց կրօնիս մերոյ: Ասէ պապն. ո՞չ այն են գործք կացութեանց ձերոյ կրօնին: Ասեմ. այն իսկ են: Դարձեալ եհարց պապն. և գիա՞րդ կան այլ միաբանք ձեր: Ասեմ ես. ամենեքին ողջ են. և փափագին համբուրել զսրբազան ոտս և ընդունիլ զօրհնութիւն սրբութեան ձերոյ: Յայնժամ սրբազան քահանայապետն համբարձեալ զաջ իւր, օրհնեաց և ասէ. օրհնեալ եղիցին ամենեքեան. և դու առաքեսջիր նոցա զօրհնութիւն իմ:...

Ի Հռոմ 1763 յունվարի 8

Նուաստ և անպիտան ծառայ
եղ. Առսէն Ալիկեան
կրօնաւոր Մխիթարեան

ՄԽԲ.

Հնախօսութեան պատկանող փոքրիկ նիւթ մը, որ կը հայի վենետկոյ Տոժերու աեփական տարազին:

Վերապատուելի Տնաւռ Հ. Մկրտիչ վարդապետի ողջոյն սիրոյ ի տէր

... Տօժն ընտրեցաւ, և այն մեր փրօգուրաթոռ մօչինիկօն. եղբայր իւր և երկոքին որդիքն եղեն գաւալիէր: Կինն եղև և ընտրեցաւ դքսուհի առանց եղջեր, այսինքն թագի, բայց ըստ այլ զգեստեղինաց և հանգամանաց, և զմասնաւոր քող իմն արկանելոյ զգլխոցն ի նշանակ դքսուհւոյ, ընկալաւ գիշխանութիւնն և զպատիւն. և չդնելն գեղջիւրն ի գլուխ, վասն այսորիկ է զի մի՛ ի հանդէսս թագաւորականս, յորս տօժն սէնաթիւ ելանէ, հարկ լիցի և կնոջն ընդ նոսա հանդիսակցիլ: Ունի զքառակ թիւ օրիորդաց ընկերակցեալ միշտ ընդ իւր, որպէս այլք թագուհիք, զաւարբերութիւն գօնտօլային և էչէկաց ի գնալն ուրեք. և ինքեան զմասնաւոր գօտիէ: Մինչև ցայժմ մի կամ երկու եղեալ են այսպիսի դքսուհիք աստ. այս եղև երկրորդն կամ երրորդն:...

1763 յունվարի 23
[Ս. Վազար]

[Ստեփանոս վ. Մելգոնեան Աբբահայր]

ՄԽԳ.

Կարևորագոյն տեղեկութիւն մ՛է նը. Տէր Կոմիտասի Յովհաննէս զաւկին նկատմամբ, ինչ որ անծանօթ կ՛երևի իւր կենսագրին Յակոբ վ. Մազարեանի, երբ վկայեն զաւակները թուած աստեն՝ կը գրէ լոկ. «Երկրորդին անունն էր Յովհաննէս, որ ապա թարգմանի պաշտօն ունեցաւ ի Ղևսպօլիս» («ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԿՈՄԻՏԱՍԱՑ ՔԱՀԱՆԱՅԻ ՔԻՕՄԻՒՐՃԵԱՆՑ». Պոլիս 1912, էջ 87): Զի յիշատակուիր նաև Տ. Կոմիտասայ Երանացուցման առթիւ Գեր. Տ. Փրանկիսկոս Ազաճանեանէ նոր հրատարակուած լատ. երէն վարքին մէջ (Տպ. Հռոմ, 1929): Այս նիւթով ուրիշ դրագողներ ևս չունին ակնարկուած ծանօթութիւնը:

Յարգոյապատիւ և գերապայծառ տէառն Յակոբայ Եպիսկոպոսի
վարդապետի և տեղեակ ձեր խոնարհութեամբ և սիրով ողջոյն ի Քրիստոս

... Գուցէ լուեալ է ձեր և զմահ Յակոբայ կաթողիկոսին հայոց, և այժմ խորհին դնել փոխանակ նորա զարբահամ վարդապետն զառաջնորդն զմիւռնիայ...: Որդի երանելի տէր Կոմիտասին յօհաննէս Թարգմանն Եգապօլիսի սպանիոյ անկեալ ի բարձանց տան իւրոյ զամիսս չորս կրեաց գհիւանդութիւն կատորաւածոց ոսկերացն և վերաց մարմնոյն, և բազում համբերութեամբ տարեալ հանգաւ ի տէր յաւուր սրբոյն գէորգայ ի յապրիլի 23, ըստ հնոյն, որպէս և հայր նորա կատարեցաւ յաւուր տօնի գեմետրեայ վկային, և գնասցէն ետ թաղել գնա ի տանիմա մարիա...

Ցամի տեառն 1763, Մայիսի 19
ի Կոստանդնուպոլիս

Ծառայ անպիտան և անարժան
Հ. Իգնատիոս վարդապետ Մխիթարեան

ՄԽԴ.

Իբրանանու Աղտոնեան վանքի պատմութեան կը պատկանին հետեւեալ ծանօթութիւնները: Տէր Գէորգը, որուն կը վերագրուի Հռովմայ Աղտոնեան մենաստանին վերաշտութիւնը և նաև կնիքի շարադրութիւնը, նախկին Մխիթարեան Հ. Գէորգ Աղեքսանդրին է:

Գերշարդոյ և ամենապատիւ տէառն Յակոբայ Եպիսկոպոսի Աբբայի խնդալ

... գաղաւացի տէր յովսէփն յաղագս յառաջ տանելոյ գիրակութիւնն ճիերձեանց պօղոսին, բազում երթևեկս առնելով ի սանթօֆիցն եղև բարեկամ սեբա ընդ հայր գրիգորին լիբանանցւոց բնակելոց ի մերձակայ գնեալ տանն...... յաղագս վերոյիշեալ տան Հ. Գրիգորին զայս ևս ծանիք, զի սա կամեցեալ ըստ ամենայնի նմանիլ մեռօնիթաց, եդ ի մտի գնել զվերաշտութիւն, կամ գմակագիր ինչ ի վերայ դրան տանն. այլ քանզի անձամբ չէր բաւական առ չարաշրութիւն նորին, տէր գէորգին յանձնեաց չաբաղրել, զոր և արարն օրինակ զայս. Ի Կեսարացւոց և Ամասիոյ լիբանանցւոց. և ընդ կարգօք ձօրն աւետեաց գիւղաքաղց. զոր սահացան յիւրեանց կարաւաժս յարդար գնոց. զաւև ցուցցի ընդ կառաչ բառս ձաշուիւ գրոց: Եւ ի հանդիպել հայերէն ոտանաւորիս ետ գրել գնոյն բան նաև ի լատին լեզու: Իսկ ի միջի փորագրեցին գնորագիւտ կնիքն կամ առ մայն կրօնին լիբանանցւոց, գնացեալ ի նոյն տէր գէորգէն, յորում պարունակին պատուար քաղաքի, եկեղեցի, դուռն, լեառն, ծառ (և ի վերայ այս բան. որպէս զմայրս լիբանանու բազումք եղիցին) չղթայք, արծիւ, երիք գաւազանք, և եպիսկոպոսական թագ...

Ի Հռոմ, ի Նոյեմբերի 19, 1763

Տրուպ և անպիտան ծառայ
Ասէն Ասլիկեանց
կրօնաւոր Մխիթարեան

ՄԽԵ.

Էջմիածնի Միմէօն կաթուղիկոսի կողմանէ Պոլիս զրկուած պաշտօնական գիր մ'է այս վաւերաթուղթը, որով Նուիրակ կը կարգէ զԳաբրիէլին վարդապետ, այսինքն թէ «վէրինլութեան թուղթն է», ինչպէս թուղթին տակ ուրիշ մը աւելցուցած է:

Ի՛



ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Ողառայ Տէր Սիմէօն կաթուղիկոս և ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց, Առաքելականի Եկեղեցւոյս Քրիստոսի, և Տիեզերականի մեծի Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի։ Ցորմէ սիրով և կարօտիւ և Քրիստոսասկանաւ Ողջունիւ ծանիր սիրելիդ իմ Յարութիւն Աստուածաբան վարդապետ։ Ջի գիտես իսկ, և քանիցս գրեցաք ևս թէ՝ զրամից յոյժ պակասութիւն ունիմք վասն ներկայիս չինուածոցն ծախուց, և հասարակ պակասութեանցն Սրբոյ Աթոռոյս. և յուստեքէ զեկս ինչ ոչ ունիմք. առ այս ի կարին մարդ յղեցաք, զի զքանի մի ուղտս գնիցեն վասն քարակրութեան և այլ ինչ պիտանաւորութեան. և զայլս ոմանս հարկաւոր պիտանիս գործածելիս առնիցեն. ընդ նմին և գրեցաք ևս անդ ոմանց բարեկամաց, զի եթէ կարելի իցէ՝ զգինս առնլեացն տայցեն, և զչափաւոր դրամս ևս մեզ տայցեն. և մեք փութացաիւ ի պօլիսդ տացուք իւրեանց։ Որ և՝ ահա ի յԱրապկերցի մուրտիկենց Մահտեսի Փիլիպպոսի եղբայր Պարոն Առաքելէն առաք զչորս հազար դուռչ դրամս նաղտ ձեռամբ մեր Պարոն Մելքոնին, և մեր Տէր Պետրոսին, զորս հասուցին մեզ ձեռամբ մեր համքայ նուիրակ Ստեփաննոս վարդապետին, և փութացայի գիր տուաք որ ի Պօլիսդ դու սիրելիդ մեր ուստի և իցէ ի Գանձանակաց և ի նուիրական արդեանցն Սրբոյ Աթոռոյս, հասուսցես ի վէզիրխան բնակեալ Ակնայ կամրկալ գեղջէն մահտեսի Կարապետի որդի Խոճայ Յակոբին. յետ ժԱ օր վարտային, որպէս և Աբրահամ վարդապետ եղբօրն մերոյ ևս ծանուցաք։ վասն որոյ՝ հարկադրութեամբ գրեմ սիրելւոյդ զի առանց պատճառի և թարց զանցառութեան յուստեքէ և իցէ հարկիւ հոգացեալ տայցես զայդ վերոգրեալ դրամդ, որ մեք աստ առաք. և զփոխիցայագիրսն առնուցուս ի նմանէ և ընդ քեզ պահեսցես հանդերձ առ քեզ գրեցեալ բարեագրովն մերով։ Գիտեմ զի զնարճս Ֆէրմանացն և զգինս առնլեացն ի հոգալդ ոչ այնքան մնայ դրամ ի քեզ, սակայն ի Գանձանակաց և յայլ յուստեքէ և իցէ պարտիս հոգալ և տալ անպատճառ։ Գրեցաք ևս յառաջ քան զայս զորքանութիւնս խարճեցելոց դրամիցդ քոց. զի այն ի քեզ իբր ղավզ մնասցէ ի միամտութիւն քեզ։ Բազմիցս գրեցաք և կրկին ևս գրեմք զի զգիրդ և զորպիսութիւնդ ի մէնջ անպակաս արասցես, զի այն է բարին։ Իսկ և զմէնջ, կենցաղավարիմք Աստուծով կերպիւ իւրք՝ չունելով քան զկարն վիշտ, թէպէտ ունիմք զպակասութիւնս չատս՝ զորոց գրեալ եմ յառաջ։ վասն այսորիկ գրեմ քեզ, զի մի գուցէ ի վատային անդր անցուցանիցես, և կամ ցաւեցուսցես ի տալդ զդրամս զայս, զի գիտես որ մեծ ամօթ է մեզ և անուանաբեկութիւն՝ սառաֆեն դռթա. ի. ին ի. ռ. ովն առնուն յետոյ ի մէնջ որպէս և պայմանագրեցին ևս, հարկիւ սիրով և թարց գլխացաւութեան և յամեցուցման տայցես՝ և զզրեանսն առնուցուս ի ձեռացն։ Ջայս գիր չուտափոյթ գրեցաք, վասն զի ի կալնոյ վայելկ էին յղեալ վատային. և մեք ևս յերևան էաք ի տես խանին մերոյ, որովհետև ի հիւանդութենէ էր ելեալ։ Գրեցաք յառաջ թէ՝ որպէս պատրաս կենցաղավարել ընդ Պատրիարքին. և վասն մատանւոյն թէ առ մեզ դարձուսցես. և վասն ԲՌ. զռուչին թէ՝ Մօսէս վարդապետն ոչ ետ մեզ. և խընդրեցաք զորպէս գնալն ձեր ընդ Գրիգոր վարդապետին ի մասրաֆպարութիւնն ձեր, և զայլս այսպիսիս, զորոց զպատասխանին չուտով խնդրեմ. և լեր ողջ սիրելիդ իմ ի տէր։ Գրեցաւ ի ՌՄԺԳ [1764] թուին ի յունիսի ամսոյ ժԵ. ումն, և ի Լուսանկարն Աթոռս Սրբոյ Էջմիածնի։

Յետոյ լուսանցքին վրայ առ ի շեղ գրուած է հետևեալը.

Որպէս և յառաջ ևս գրեցաք քեզ, և դարձեալ գրեմ, զի զոմանս իրս հարկաւորս խնդրեցաք ի Վաբրահամ վարդապետէն, զի առնուցու. վասն որոյ ահա պատուիրեմ քեզ. որոց զգինան ևս տացես Վաբրահամ վարդապետին. հալբաթ։

ՄԽԶ.

Նալեան Պատրիարքի հրաժարման և անոր յաջորդ Գրիգոր Գ.ի ընտրութեան շուրջը կը դառնան հետևեալ պատմական վաւերագիրները։

Ա.

Գերաւեծար գերյարգելի Վբրայ ձօր վերոյ
և բարեւնապետի տեառն տեառն Յակոբեանոս վդպ.ի, ողջոյն

Թղթ. Խ[Ը]

... Ի մայիսի 14, ցակոբ պատրիարգն կոստանդնուպօլսոյ, յետս եկաց ի պատրիարգութենէ. և եղ փոխան իւր զգրիգոր վարդապետն երուսաղեմայ պատրիարքին վէքիլն. զի սարգիս վարդապետն հրաժարեցաւ ի լինիլ պատրիարք։ Նոյնպէս և սամուէլ վարդապետն, թէպէտ բազումք զնա խնդրեալ են, այսինքն զսամուէլ վարդապետն, սակայն նա ասացեալ է. ես ձեզի ձեռք չեմ իտար. քանզի ընդ լինիլս պատրիարգ, փէշին իրեք տէրտէր աստուածածնայ ժամուն, դին կուտամ։ Դարձեալ, եթէ մէկի մը համար իրմէ ընէք թէ տէրտէր ըրէ, մարիկ ընօղ մարդ չեմ. խաթիրներնիդ չնե [չեմ] նայիր։ Դարձեալ, ինչպէս մեծին խաթիրը, նոյնպէս աղքատին խաթիրը կը նայիմ. աչառութիւն չեմ ըներ։ Լյէր ասանկ ձեռք կուտայ ձեր բաժին է, ըրէք իս պատրիարգ։ Ապա զվերոգրեալ գրիգոր վարդապետն, որ հեզ և միամիտ ոմն է, զնա արարին պատրիարգ։ Բայց մինչ չև էր զգեցեալ նորա զկապայ, ժողովուրդն ոչ կամէր զնա, զի բազումք ասէին թէ՝ և նա յօհաննէս պատրիարգին չըրախն է. զի յօհաննէս պատրիարգին չրախներըն՝ ամէնքը կաթոլիկ են։

Ապա ի մայիսի, 26 յաւուր շաբաթու՝ զգեցաւ կապայ վերոգրեալ գրիգոր վրդ.ն և եղև պատրիարգ կոստանդնուպօլսոյ։ Ասեն բազումք, թէ յակոբ պատրիարգն ի տալն իշխանութիւն Գրիգոր վարդապետին, ասացեալ է նմա բազում բանս. և զայս ևս, լալով. ես աս աթոռուս զաթոռը համար, շատ մարդու տուն քակեցի, շատ մարդու զարար տվի. աճա՛ստուածոյ ահեղ սիմանը ինչ ճուղապ պիտի տամ։ Ձեզ տեսնեմ թէ ինչպէս պիտի կառավարես զեկեղեցին ևն.։

1764 ի յունիս 19
[Կ. Պոլիս]

Ն. Ի. Հ. Ցակոբոս վ. Ջամչեանց
Մխիթարեան

ՄԽԷ.

Բ

Գերապատիւ և առաքինապայծառ տեառն Յակոբեանոսի ևն.

... յաթանաս վարդապետէն գիր առի, յորում գրէ զայս նոր, զի հայոց պատրիարգն յոյժ հիւանդացեալ է. ուստի եկեալ են յամենուստ բազմութիւնք եպիսկոպոսաց. բազումք չհանացեալ են լինիլ պատրիարգ ոչ վասն սնափառութեան, որչափ վասն հալածելոյ

զուղղափառն. սակայն հիանալի գործն այս է, զի պատրիարգն կոչեալ է զբազմութիւն հալիկոզոսաց, իշխանաց և քահանայից, և յայտ ամենեցուն արտաքոյ ամենայն ակնկալութեան, կոչեալ առ ինքն զգրիգոր վարդապետն վէքիլ երուսաղէմի, առեալ է զգաւազան և զմատանին գիւր, և արկեալ գնովաւ փիլոն չքեղ, լուիլու ամենեցուն ասացեալ է. կեցցէ գրիգոր վարդապետն պատրիարգ կոստանդնուպօլսու, ընդ որ յայտուշ հարեալ ամենեցուն, չգիտելով զայլ ինչ առնել, սկսեալ են և նոքա գնոյն ասել, և իսկոյն տարեալ են առ վէգիրն. և սա ազդեալ թագաւորին, պատմեալ է զամենայն. և թագաւորն հաստատեալ է գնա գլուխ հայոց ազգին. իսկ նալօղլուն հրաժարեալ ի պատրիարգութենէն գնացեալ բնակեալ է ի իւսկիւտարու վանքն: Բայց զմեր սէրգիս վարդապետն ոչ են թողեալ դառարկ, զի վասն լինելոյ նորա երիտասարդ, կացուցեալ են նմա զսարգիս վարդապետն իբրև դաստիարակ, և զվէքիլութիւնն երուսաղէմի տուեալ են նմա, որ է մեծ լօխմայ: Իսկ գրիգոր վարդապետին որակութիւնն այս է. զի է կէնճ, սամաթիացի, ծանօթ ուղղափառաց և ուղղափառութեան. հանդարտ բարուք և սիրօղ խաղաղութեան: Իսկ թէ պատրիարգն ընդէ՞ր արար զայս, յայտնի է, զի երկու են պատճառք, մի զկնի մահուան իւրոյ մի ծնցի աղմուկ և կոթծանուածն ազգին. և երկրորդ, զի մի գուցէ լինիցի պատրիարգ ոք յիւրոց առելեաց, կամելով վրէժ խնդրել ի նոցանէ ի կենդանութեան և ի մահուան. յաւելեալ լինի և այս, զի լինելով ինքն փառասէր, կամեցաւ առնել զայս, զի զարմացուսցէ զամենայն վասն իւրոյ քաջութեան, ոչինչ լինելով ինքեան յայլուստ ինաս, գիտելով զի ինքն ոչ էր ապրանաց...:

Նուաստ ծառայ

1764 յուլիս 7 — Հ. Մկրտիչ Անանեանց

[Հռոմ]

ՄԽԸ.

Իբր եզբակացութիւն հետագայ նամակին՝ կ՚անդրադարձնենք, թէ Ս. Ղազարու Միաբանութեան համար շատ հին է՝ ի Հռոմ Ղեխտիս վանատեղի մ՚ունենալու ծրագիրը: Ինչ որ նոյն առեն անգործադրելի մնացած է՝ իրականանալ սկսան կամաց կամաց ժամանակի ընթացքին:

Գէրյարգի

Տեղին դիտեալ ի մէնջ ի ստանալ ի Հռօմ, է ի մօնթէ գաւալլօն ի մին յեօթանց բլրոցն հռօմէականաց, ուր վասն գերազանցութեան տեղւոյն և օդոյն, պարն և այլք ոմանք ի մեծամեծաց ունին զկայանս: Տեղին մեր հայի ի հեռուստ առ պալատն պատկան, որպէս ի նկարագրէն տեսանէք: Ընդ պողոտայն որ առաջի մերոյ տեղւոյն, անցանէ ստէպ պարն հանդիսիւ. սոյնպէս և այլ մեծամեծք: Շուրջանակի զնովաւ են բնակարանք մեծամեծաց, և վանորայք կրօնաւորաց և կուսանաց. սակայն մեզ ոչ տան նեղութիւն, և ոչ մեք նոցա, վասն զարմանալի կերպիւ որոշելոյ ի միմեանց, և առ միմեանս չկատարելոյ նայիլ. ուստի մեր տեղին ամենեին է զերծ ի հայեցուածոց աշխարհականաց և մանաւանդ կանանց: Շինուածն է հին և վայելչական. ուստի որմունքն ոլք ի վերայ ճանապարհին, են իբր կիսաւերք. սակայն ոչ տան ինաս. իսկ ի միջին կողմանէ բոլոր շինուածն է հաստատուն և բարի, վասն լինելոյ նորոգեալ և յօրինեալ ի յապաթէ ֆառսեմբիլն: Տունն է երկու զաթ. վերին զաթն է զարդարեալ պիտանի և զեղեցիկ կարասեօք. իսկ ներքին զաթն ինչ ոչ ունի, որ վասն այժմուս լինի մեզ բնակարան բաւական չորից և հնգից, ունելով զտեղի մատուռի, սեղանատան, խոհանոցի, և այլ ամենայն պիտանաւոր տեղւոց. իսկ ի ներքոյ ներքին զաթին ունի զբազում մաղազաս և գետնատունն, ըստ սովորութեան Հռօմայ: Ունի տեղին ի շինուածին և ի պարտիզին զուխն և

գինն ապրիւրս Ջուրց չաւրուանովք հանդերձ, որոց Ջուրն գնայ անկանի ի ստորին անկիւն պարտիզին յայրիւրն, յորմէ կարեն ըմպել անցաւորք։ Պարտէզն անգամ մեծ է իբր երկու և զուչէ աւելի ևս քան պարտէզն որ առաջի մերոյ նորընծայարանին, յօրինեալ պէսպէս ծառովք, բուսովք, ծաղկօք և չաւրուանօք, որ երևի իբրև զդրախտն աղենական, որ մերոց է յայժ հարկաւոր, ի վերջն նորա կայ քեօշք ինչ, յոր կարէ ոք զկնի շրջելոյ ի պարտիզին, հանգչել։

Երկայնութիւն տեղւոյն, որ բաղկացուցանէ զպարտէզն և զբնակարանն է իբր 100 կամ 110 քայլ բնական. իսկ լայնութիւնն սոցա է իբր 50 կամ 55 քայլ. զմեծ մասն երկայնութեանն ունի պարտէզն, որպէս ի նկարագրին երևի. իսկ նայեացք բնակարանին մեծ մասամբ նայի ի հարաւ ի վերայ պարտիզին, որոյ առաջն է բաց և ազատ, ուստի և օդն է զարմանալի. և փոքր մասամբն նայի յարևելս ի վերայ ճանապարհին. ընդդէմ որոյ ի միւս կողմանէ ի ճանապարհին կայ որմն պարտիզին իշխանի ուրուք։ Բայց ի հիւսիսոյ կողմանէ կցին ի բնակարանն տունք ինչ փոթձելիք, որք են հինք, ցածք, և զանհակականք, որպէս զառնոս գեղացւոց, զորս ըստ ժամանակին կարեմք քակտել, և ի տեղի նոցա կանգնել եկեղեցի ինչ, որ լինիցի զարմանալի գրիւք, զորմէ այժմ ոչ է ժամանակ խօսելոյ։ Իսկ երկայնութիւն այսց տանց է իբր 25 կամ 30 քայլ, և լայնութիւն նոյնչափ, կամ ըստ համեմատութեան։ Իսկ չէնքն տանն ի մէնջ բնակելւոյ, ոչ է պատշաճաւոր՝ այլ երևի իբրև զհասարակ տունս վէնէտիկու, պարզ և հին որմովք և պատուհանօք։ Այդ՝ զմեծութեան և զչինուածոյն ասացի, զի մի տեսլէն կարծելով մեծ ինչ, ըստ այնմ զգինն ածեցուսցեն. ուրեմն առաւել գնեմք զտեղին և զդիրքն, քան զչէնքն։ Ուրեմն մտածեալ ոչ գնութեականութիւնն, ոչ կարեմք գառնել զայլ տեղի ի հոսմ լաւագոյն քան գնա. մանաւանդ մտածելով զայլ յարմարութիւն ինչ արտաքին, ոչ յագիմ գովելով զտեղին, այսինքն է անթիւք թագք գոն ի հոսմ, որք ոչ ունին զվաճառանոցս մերձակայ ինքեանց. ուստի ի պիտոյ լինելն ինչ, մանաւանդ ի գիշերի, պարտ է վեր ի վայր չրջիլ. սակայն մեր տեղին է յայնպիսի դիրս, յորմէ քայլ մի յառաջ գնացեալ գառնես զվաճառանոցն գայն համբաւաւոր կոչեցեալ մազել տէ քօռվի, լի ամենայն տեսակ բարեօք, որպէս աշչէնսիօնն վենետիկու. առ մեօք կայ և աքանչելի սիւնն տրայեանեան. և յամենայն տեղի ուր կամիմք գնալ ի մեր տեղւոջէն անկանի մօտակայ և դիւրահաս։ Մերձ է այնմ և գամպիտօլիօն և սանթա մառիա մաճիօռն, և փիացայ տի սպանիայն և փօռթա փիայն և նորընծայարանն յիսուսեանց ևն։...

1764 սեպտ. 11 [Հռոմ] Հ. Մկրտիչ Ա[նանեանց]

Մխթ.

Յառաջեան իր երկար լռութիւնը կը խզէ ողջունի նամակաւ մը, խօսելով նաև Պոլսոյ Հայ Պատրիարքարանի շարժումներուն և նաև իր մասին։

Ի

Տեառն Տեառն Յովհաննոսի Արքակրօն Աբբայի Հայոց՝ Յարգուելի և Ողջագուրուելի ընդ Քիւուսաձիր Ողջունի և Միոյ ընծայեալ մատուցանի ի Տէր

Հռոմ. 8, 1764 ի Պօլիս

Մերթ ընդ մերթ յընկալնուիմ իմ զպատուական աւանդն երկնաձիր Ողջունի քոյոյ պայծառութեան՝ ի ձեռն մտերիմ միակրօն հպատակելոց քոց, նոյնն համարեալ լինիւր յաչս իմ իբր սիրայորդոր ընծայ իմն բարեվայել և զուարթարար, և ի վեր քան զոսկի

սովերայ և քան զսպագիօն հնդկային. ուստի յաւերժ չնորհապարտ լինիլ դատիմ զքաղցրահամբոյր եղբայրսիրութենէդ քումմէ անհատականէ, և խնդրեմ յԱնհատատոս ազբերէ սիրոյն առ ի յաւէտ պրկեալ պնտեալ անլոյծ և անխզելի պահել զշղկասն իրերացս սիրոյ։ Եւ զգիարդն բարեյաջող կացութեան Գերյարգելի Պայծառութեան ձերոյ, և ընդ հովանեաւ ձերով պարածածկեալ մաքրակրօն եղբարց միաբանից՝ լսեմք միշտ ի քոյոյնոց առժամայս աստանօր նչանեհացեալ երջանկափառիցն, որոյ վասն զուարճացեալ բերկրիմք հոգւով չափ ևս քան զևս. բայց medispiace[1]. զի Հայր Մկրտիչ Պետ՝ սիրագունն իմ յատկե[ա]լ չէ ի միջի ոչ այդր առ ի բախացուցանել զՀամեղբայրութիւնն ձեր, և ոչ այսր առ ի արգահատել զառանձնականութիւնն իմ ճոխաբանութեամբ իւրով. բայց վշտագնիմ յոյժ, զի որպէս ոգինն յոգունք, թէ նա ինքն իցէ առիթ՝ ցարդ ևս յամեցման և կատարունակման երկրորդ հատորի բառարանին, և հաւատամ այնպէսն լինիլ, զի ի մանկական տիոց հետէ մինչև ցայժմ խիստ չատ հաշարի է, որ ի փորձոց գիտեմ և կամի թէ յամենայն ուրեք զիւր հաշարի լինելոյն նչմարանքն ներապատրէ։ Իսկ եթէ արդէն լեալ իցէ դարձ նորա բարեաւ ի Սուրբ մենաստունդ, ազդ արասջիր նմա, թէ կաթողինն քո Սարգիս վրդ. կարօտանօք ողջունէ զքեզ, և բաղձահարի իսկ՝ միւսանգամ տեսանել զքեզ, ուր և կամիցի նոյն ինքն Ամենայն յուրեքն, եթէ հաճելի իցէ ինքեան։ Եւ զգիարդն պատրիարքականի փոփոխման տեղւոյս, և զիմ խղճալուոյ ճողոպրիլն յայնմանէ չնորհիւ Տեառն, թէև հրաւիրուեմ յորդորուեմ և հրապուրուեմ իցէր չափազանցօրէն, ևս զմահունէ Պայտեան յակոբկանն, և զյաջորդելոյ նմա Գրիգոր վրդպ.ի ուրուեմ՝ ըստ իմս վարկման ցարդ ևս գրեալք են Պայծառութեան քո լիալիր, ուստի ոչ է ճահ երկրորդաբանելն վերստին. բայց սոյնս լինիցի մեծութեան քումմ արդեան novita[à][2]. զի Աբրահամ պետ առաջնորդ զմիւռնոյ՝ աչխարհածուփ, որ և էր Սեռականագոյնն ի հակառակորդս, մեծաւ հրաչափառութեամբ՝ Հաթտի հիւմայիւնով. և գրես թէ՝ հաւանութեամբ իսկ երկաքանչիւր կողմանց բոլոր ազգի մերոյ՝ աքսորեցեալ եղև ի բուն իսկ գաւառ իւր յԱստապատ, որոյ նաև տուն քարշեաց և քարշէ տակաւին ընդ իւր հետևաբար զինքնանման զեղծագործս ոմանս, այլ ի Տեառնէ եղև այս, և է աքանչելի յաչս մեր. քանզի Սրբազան Քահանայապետն Կլեմէնդիոս արագ արագ, և լու ի լու պատժեաց զնոսա աքանչելապէս։ Եւ էֆիմէրա գրեանքն իմ հասին առ իս, թուով 195. և զծախսն վճարեցի Հայր Ջաքարիա սիրելւոյն մեր զոուշ 45, փրկ. 15։ Եւ յոյժ յոյժ չնորհակալ եմ զՋէնջ՝ վասն ոչ անխայելոյ վասն իմ զաշխատանս ձեր. բայց զկէսն չնորհակալութեան իմոյ պահեալ ունիմ առ իս առ ի վերահատուցանել Տեառնդ՝ մինչ ի թէսկէրէջ նչանագրեցեալ գրեանքն հասցին առ իս։ Չանուրց մաքրափայլ կրօնաւոր եղբարց կրօնաստանիդ Սրբոյ՝ ի մեծամեծաց մինչև ցփոքունս, ուրոյն ուրոյն ողջոյն և Օրհնութիւն ընծայեմ ըստ պատուոյ և ըստ արժանաւորութեան ի Քրիստոս Ցիսուս, և Սրբազան աղօթից նոցին ծարաւեցե[ա]լ կարօտիմ իսպառ, և մնամ յաւէտ կաթողնեալ և սրտակաթ ի սէր տեսութեան ձերոյ. Որ և եմ իսկ

Նուաստագոյն ծառայ Տեառն
Սարգիս վրդ. և այլն։

Ի Սուրբ Լուսաւորչի Եկեղեցին
որ ի Կոստանդինուպոլիս, 1764 հոկտ. 8

Տեառն Հայր Մատթէոս, և Տեառն Հայր Վրդանէս Արհիապանծ վարդապետաց՝ սերտ Սիրով Ողջոյն և յարգուն ընծայեմ ի Քրիստոս Ցիսուս։

1. կը ցաւիմ։
2. Նորութիւն։

ՄԾ.

Երուսաղեմի մէջ երկու բարբիներ կը հետազօտեն, թէ արդեօք Քրիստոս աշխարհ եկած է թէ ոչ դեռ։ Այս խուզարկութեան ծանր հետևանքները, զորս և ազգովին կը կրեն հոն, կը պատմուին ահա հետևեալ վաւերագրին մէջ։

Կայ և թաթար խանի մասին տեղեկութիւն մը։

Գերապատիւ տեառն տեառն Յակիմեանոս վրդ.ի և Աբբայ հօր վերուստ հաստատեալ ուխտոյ ողջոյն

Թուղթ ժ.երդ.

ի 8 հոկ. 1764

... Պատմի ևս թէ յերուսաղէմ երկու գլխաւոր խախամք քննեալ զգիրս իմացեալ են զի անցեալ է ժամանակ գալստեան մեսիային. վասն որոյ եկեալ է մինն այսր հարցանել և իմանալ. եթէ կարիցեն աստ եղեալ ոաբբիք յուցանել թէ դեռ չէ եկեալ մեսիայն, ապա թէ ոչ ուրեմն այն է մեսիայն զոր քրիստոնեայք ընդունին։ Իսկ սոքա մահադեղեալ զնա, գրեցին առ երուսաղէմի հրէայս, զի և զմիւս խախամն սպանցեն մարթանօք։ Եւ նոքա արարին այնպէս, այլ բանն ոչ ծածկեցաւ, զի իմացաւ չէխն. 10000 դուչս խնդրեաց ի ծածկեալ զգործն, զոր ոչ կամեցեալ տալ հրէից և գչէխն ի տան յոր մտեալ էր, և գտեալ գգչէ խախամին, սպանին, և գքանի մի սպասաւորս նորա որք ընդ նմա էին։ Այս ևս յայտնեցաւ, վասն որոյ գբազումս ի գլխաւորաց հրէից սպանեալ զմեացեալսն ամենայն ազգորեցին յերուսաղէմ. և նաև հրէից, որ երթայր յերուսաղէմ, ոչ գնաց յերուսաղէմ, այլ ոմանք ասեն թէ ի սելանիկ կ[աք] ի սաքէթ երթալոց է. այլք թէ յետս դառնալոց. և կէսք, թէ ի խաֆայ մնասցեն հրէայք։ Եւ այս ինչ հանդիպեցաւ, զի թագաւորն հազարացոց գրեաց առ թաթար խանն գալ ի կոստանդնուպոլիս. իբրև թէ կամի ի մեծագոյն պատիւ ասագութեան հաստացանել. և յելանել նորա ի ճանապարհ գրեաց առ եղբայր նորա կալնուլ զաթոռ նորա, և եղև այնպէս, զի ընդ անցանել նորա ըստ սահման իւր, և ընդ հասանիլ նորա ի սահման հազարացոց առաքեցաւ յաքսորս. և թագաւորեաց եղբայր նորա ընդ նորա, որոյ էր ի սկզբանէ անտի թագաւորութիւնն. և սորա ապստամբութեամբ ասեն ժառանգեալ զթագաւորութիւնն։...

Նուաստ ծառայ

Հոկտ. 8 1764
[Պոլիս]

Հ. Թադէոս վրպտ. [Գրիգորեան]

ՄԾԱ.

Թուրք կառավարութեան և ներքին բնակչութեան միջև եղած դէպքերու շուրջ դժբախտ տեղեկութիւններ կը տրուին։

Կը պատմուի նաև Ալէնեցիներու կողմանէ եղած շարժումը և իրենց կրած հետևանքները՝ յաջորդ երկու թղթերուն մէջն ալ։ Անպակաս է նաև խռովութիւնը Հայ Պատրիարքարանին մէջ։

Ա.

Գերապատիւ և Գերայարգ Տէառն Տէառն Աբրահամ Հօր վերոյ Յառիսաձնոս վրդպ.ի բազում խոնարհութեամբ ողջոյն աչառմարդոյր

... Թագաւորն յոյժ բարւոք վարի այժմ, և ամենեքին գովեն զիմաստութիւն նորա. միայն թէ նախչի աղան որ միշտ առ թագաւորին էր, և հանապազ բարեխառնէր զօրէնս և զհրամանս նորա, մեռաւ յաւուրս յայսոսիկ, և ամենեքին լացին զմահ նորա մանաւանդ հայք և յոյնք: Հացն էր հօթանասուն արամն ստակ մի, և յաւուրս յայսոսիկ է 85, որոմն ստակ մի: Վէզիրն զհանոյս թագաւորին չհանել կամեցեալ զիրս եասախին հոգացաւ խստագոյն ևս պատուիրել. իսկ թագաւորն յաւուր միում յորժամ չրջէր ընդ քաղաքն ծպտեալ, զինչ է այս ասէ ցվէզիրն զի ծառայք իմ կապկանման չրջին ընդ քաղաքն: Եւ անտի սակաւ մի ընդարձակեցաւ նաև ի կողմանէ եասախին: Ակնեցիք բողոք կալեալ առ թագաւորն վասն էմիրի միոջ վասն չարութեանց նորա, և առեալ ոստիկան ի թագաւորէն զթուղնաճի պաշին նորա, սպանանել ետուն զէմիրն. բայց յետոյ բազմութիւն էմիրներուն չարուցեալ ի ձեռն կնոջ միոյ լեզուագարի, որ իբրև մայր մեռելոյն անձամբ խօսէր յառենին, կալան զարս չորս երևելիս յակնեցւոց անտի որ ի կոստանդնուպօլիս, և գլխատեցին ի դուռն արքունի: Վէզիրն ի չրջիլն ծպտեալ ետ կշռել զմիսն զոր կին մի առեալ էր ի մսավաճառէն, և գտաւ կշիռն պակասեալ յօխայէն 15 տրամ. և ասաց ցկինն ցուցանել զկրպակ մսավաճառին. իսկ տէր կրպակին իրազեկ եղեալ խոյս ետ անտի. և եկեալ վէզիրն ի կրպակն եգիտ ի նմա մսավաճառ գթուրք մի երիտասարդ անձնեայ, և նա էր տարաչխարհիկ օտար նորոգ եկեալ ի կոստանդնուպօլիս, և մտեալ ի կրպակն իբրև խալֆայ. յայնժամ հրաման ետ վէզիրն կախել զնա ի կրպակի անդ իւրում վաղվաղակի, իսկ նա յերկիւղէն առժամայն անկաւ և մեռաւ: Վասն որոյ կախեցին զնա ըստ հրամանին արկեալ չուան ըստ անութ նորա: Ղորանխոս պատրիարգին ի վերայ քրիստոնէիւն էր ի մէջ հայոց, և կաթուղիկոսն հրաման առաքեաց դնել կոստանդնուպօլիս զայլ ոմն իբրև նուիրակ իւր բաց ի պատրիարգէն, և էր ասեն յանուանէ նշանակեալ զաբրահամ վարդապետն զառաջնորդն իմմիրու. ընդդէմ կացին պատրիարգն և պատրիարգականք նորոգ նուիրակութեանն և նուիրակին այնմիկ. և խստացաւ բան պատրիարգականացն և ֆերմանով և չաւուշով վտարեցին և առաքեցին զաբրահամն որ ակն եղեալ էր պատրիարգութեան կոստանդնուպօլսի յերկիր և յաչխարհ իւր:...

Ձամի տեառն 1764
Հոկտեմբերի 16
[կ. Պոլիս]

Ղուսաս ծառայ
Հ. Անանիա Ձամպազօղլու

ՄԾԲ.

Բ

Գերաւսիծար գերյարգելի Աբրահամ հօր վերոյ Տէառն Տէառն Յառիսաձնոսի վարդապետի ողջոյն

Թղթ. ՃՂԴ

... Յաւուրս յայսոսիկ հատին զգլուխս չորից ի յակնցոց՝ որոց ոմանք էին սառաֆք, և ոմանք հացագործք. զերիս ևս զայլս ի յակնցոց խնդրէին սպանանել. բայց նոքա թագեան, և ոչ եկին ի ձեռս: Պատճառն սպանման սոցա էր այս, զի ի զաւառն ակնայ նախիալ (այսինքն գլխաւորն էմիրներու) ոմն ընդ ոմանց էմիրից բազում չարիս և վնասս հասուցանէր նոցա. զորոց իբրև ատ ի ստամոլ եառ[ն] ակնցիք (գլխաւորքն այնք գլխաւեալքն) արզուհալս թագաւորին. սա առաքեաց անդ զիւր թուղնաճի պաշին առ ի

վերահասու լինիլ չարութեան նախիպին։ Զոր իբրև լուան էմիրք ստամպօլու և այլոց քաղաքաց, իբր զօտպայք յարեան յուին ի ստամպօլ, և արգուհալս արգուհալի վերայ տուեալ թագաւորին, արկին զահ ի նմա. մինչև և նա հարկադրեալ. Նախ առաքեաց զգլխաւեալսն զայնոսիկ ի քիւրէկն, և յետ երկուց աւուրց ի յառաւել զրգռիլ էմիրեցն, էհան ի քիւրէկէն, և էհատ առաջի դրան սարային զգլուխ նոցա։ Դարձեալ յաւուրս յայսոսիկ, արքունի հաթթիշէրիքն առաքեցաւ յաքսորս ի յստամպօլու ի յէջմիածին ի պատրիարքէ քաղաքիս, աճէմ աբրահամ վարդապետն, որ երբեմն էր առաջնորդ իզմիրու։ Պատճառն այս եղև, զի սա տարի մի է, որ թողեալ զառաջնորդութիւնն իզմիրու աստ էր, և ջանայր ինքն լինիլ պատրիարք ստամպօլու. բայց իբրև ետես թէ զայլ ոք արարին, և ոչ զինքն, և ինքեան հրամայեցաւ երթալ յէջմիածին, խորհեալ ընդ իւրոց համախոհից[1]... գրեաց կաթուղիկոսին, զի զնա դիցէ ի ստամպօլ ինքեան վէքիլ, որպէս գոն ի ստամպօլ վէքիլք այլոց աթոռոց, այսինքն է երուսաղէմայ, սուրբ կարապետի, ևն, որով կարասցէ մնալ ի ստամպօլ, և իբրու երկրորդ պատրիարք գործել զոր և կամիցի։ Եւ կաթուղիկոսն ևս գրեաց ըստ կամաց նորա աստ ի ստամպօլ ամիրայից և պատրիարքին, բայց նոքա ոչ հաճեցան ընդ այս, ուստի իբրև տեսին թէ խռովութիւնս յարուցանէ վասն այսր... աբրահամն, արքունի հրամանաւ առաքեցին զնա յաքսորս անդ ի յէջմիածին...։

1764 Հոկտ. 18
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Զաքարիա Վ. Ա[լէքսանեան]

ՄԾԳ.

Ա՛յս կարճ վաւերաթուղթը մեր ազգային եկեղեցական պատմութեան մէկ շատ կարևոր հարցը կը շօշափէ, և որ անշուշտ կարևորագոյն և աւելի յարգի կը դառնայ՝ որքան երբ նկատուի հեղինակին մէջազգային արժէքն ու համբաւը։

Աստեմանիի կարծիքն է մեր Ա. Գր. Լուսաւորչայ Հռոմի ուղևորութեան մասին. խնդիր մը որ շատ թերուղիմ տեսութեանց առիթ եղած է մեր մատենագրութեան մէջ ժամանակի ընթացքին։ Երևելի հեղինակիս յայտնած կարծիքը կու գայ աւելի զօրացնել Հ. Յ. Ալգերի (այժմ մեր Գերդ. Աբրահայր) փաստերը (տես Բզմ. 1914 էջ 274–286)։

Գերապատիւ և. ամենապայծառ տեառն Յոհաննեսի ևն.

... յաղագս դաշանց գրքի բանին, զոր գրեցիք տեղեկանալ... ունիմ զայն ի մտի, բայց միջոցքն պակասին, զի պարտ է տեղեկանալ զայն ի ձեռն աստեմանիին, որ... և ոչ կամի զպայծառութիւն այլոց արևելեան ազգաց, բայց եթէ զիւրոյ ազգին...։... Թէպէտև հարցանելն իմ ցնա վասն այնր զրոյ դաշանց՝ է ընդունայն. զի ոչ գոյ այնպէս գիր և ոչ իսկ այն պատմութիւն զալստեան լուսաւորչին ի հռոմ համարի առ սոսա ստոյգ. յառաջին տարւոջ, յորժամ գնացաք առ աստեմանին, բան եղև վասն այսր խընդրոյս, և նա ասաց. ամենևին ոչինչ յիշատակ գոյ առ լատինացիս վասն այնր գալստեան. և թէ կարէ լինիլ թէ լուսաւորիչն ընդ տրդատայ գնացեալ է ի ստամպօլ, որ կոչեցաւ նոր հռոմ, ուրեմն լսելով յեաազայից, թէ գնացին նոքա ի հռոմ, կարծեցին թէ այն իցէ հին հռոմ, ևն. զայս յայնժամ ասաց ցմեզ աստեմանին։...

Նուաստ ծառայ
Հայր Մկրտիչ Անանեանց

ի հռոմ 1765 փետր. 28

1. Հ. Իգն. 1764 Հոկտ. 19-ին գրած մէկ քղթով կ'ըսէ, որ «համախոհ ևմ ամենայն պարսկաձայք հանգերձ վարդապետիւն, որ գաւազանը կիւզկ կոյ»։

ՄԾԴ.

Զուարճալի դէպք մը... Պոլսոյ մէջ մինարէի մը խաչանիշ գագաթը։

Գերայարգ և գերապատիւ Տէառն Տէառն Աբրոյ Նոր վերոյ Ստեփանեան վարդապետի ողջոյն ազաւաւրեայր

... Մահառաջմամն երբեմն երբեմն զօրանայ ի քաղաքիս և երբեմն մեղմանայ, յաւուրս յայսոսիկ անդէն զօրացաւ. անկաւ նաև ի տէօրթիօլաղըն...։ Ի թէրսխանան որ է հանդէպ ֆէնէրին ուր մերքն բնակին այժմ, մեռան աւելի քան զ70 մարդիկ...։ Յաւուրս յայսոսիկ ի մէջ երկու և երեք ամսոց երիցս եանղըն անկաւ ի տէօրթիօլաղըն, և միանգամ ևս ի ստամպօլ, բայց չիջուցին վազվազակի. այլ երեք աւուրբք յառաջ մօտ առ մեզ ի մէջ այվան սարային և պալաթին անկաւ հրդեհ յութերորդ ժամու գիշերոյն, և տևեաց ժամս հինգ, և էր գիշերն գիշեր շաբաթու, և ամենայն այրեցեալ բնակարանքն էին բնակարանք հրէից որք արտաքոյ ամրոցին. և ամենայն շաբաթացեալ հրեայքն որ անդ, որք և ոչ ի նաւակս ելանեն յաւուրս շաբաթուց, զեղան ի նաւակս, և թի ևս քաշեցին։ Յաւուրս յայսոսիկ խաչանիշ նշան մի երևեալ ի գլուխ մինարէի միոջ որ ի պալաթ, և տևեաց զաւուրս բազումս, մինչև հռչակեցաւ բանն ընդ ամենայն քաղաքն, և յոյնք սկսան երթալ յուխտ սքանչելեաց նշանին, և այնչափ սքանչելիս և զարմանս յաճախեցին, մինչև եասախճիս կացուցին տաճիկք ի փողոցս յոյս երևէր նշանն, և հարկանէին զքրիստոնեայս որք հետաքննին լինէին հայիլ ի նշանն, և այնպիսի ապտակ հանին միում ի յունացն մինչև դէմք հարեցելոյն ի թիկունս դարձան։ Այլ յետոյ իրացն ստուգութեան ի վերայ հասաք որ այսպիսի էր. հնացեալ ժամանակաւ մահիկն լուսնին զոր դնեն ի գլուխ մինարէին, և կոչեմ ալէմ, զերկոսին ծայրս նորա կապեալ են թելիւ ընդ միմեանս զի մի անկցի, որով մահիկ լուսնին եղեալ է այսպէս ☽. և յանցանել ժամանակաց նոյն մահիկն առաւել ևս հնանալով իջեալ ի վայր ի վեր ելեալ է ցիցն, յորոյ ի ծայրն հաստատեալ կայր մահիկն, այսպիսի օրինակաւ, —☽—. և ահա խաչն իջեալ յերկնից որ այժմ է ի կրպակ դարբնոյն, յարմարել զնա ըստ առաջնի յօրինուածոյն իւրոյ. զայս ամենայն տեղեկութիւն իրացն ստուգութեան առաք ի թարգմանէ նէմցէյու դեսպանին, զոր առաքեաց դեսպանն եասախճիով տեղեկանալ զորպէսն աքանչելեացս։ Գողք, ումանք ասեն 22, և այլք 16, եկեալ են այտի, այսինքն ի վէնէտիկու ի կողմանս յայսոսիկ. և նախ յիզմիր կողոպտեցին զեկեղեցիս մինչդեռ մեք յիզմիր էաք, և յաւուր յորում հանդերձեալ էաք մեք մտանել ի նաւ առ ի գալ ի կոստանդնուպօլիս, յեկեղեցւոյ Ֆռանչիսքանցւոց գողացեալ էին զթախտըմ մի ծանր սպասուց պատարագի ընդ այլոց արծաթեղինաց, և մեզ ցուցին պատրիքն զծածկոցն սկուռն զոր թողեալ էին գողացօղքն զզգեստն նորա։... Ի կոստանդնուպօլիս ի բազում եկեղեցեաց գողացան բազում ինչ, ևս ի միջէն զսրբատուփն սուրբ հաղորդութեան, լցեալ զսուրբ նշխարսն ի վերայ սեղանոյն։ Այլ յաւուրս յայսոսիկ երկու և երեք ի նոցանէ ի ձեռս եկին, և են այժմ ի թին ըստ խնդրոյ դեսպանին վէնէտկոյ, բայց ընկերք նոցա տակաւին ոչ յայտնեցան։...

Ցամի տեառն 1765
ի մարտի 20 [Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Անանիա վարդապետ [Ճամպազօղլու]

ՄՏԵ.

Հայն է Յաւուրաքի օղլուն. սա վաստկելով Մուստաֆա Գ.ի համարումը՝ բարձրացած էր իշխանութեան. բայց իր աղետաւոր գործունէութեամբը չարաչար վերջ մը կ՚ունենայ, ինչպէս լաւ կը նկարագրուի մեր հետագայ թուղթին մէջ։

Գերապատիւ և գերաշուրջ տեառն տեառն Յակոբայեան վարդապետի և արբայնոր մերոյ ողջոյն խոնարհական

... զտաւուրաքի օղլուն՝ որ զուլահի և զպուղտանի պէյութիւնն ի ձեռին ունէր, իբրև գլուխ նոցա կամ իբր երկրորդ թագաւոր ի վերայ նոցա յետ մուստաֆային. որ և ի ձէրութեան տաճկաց նորանոր մալիքեանէից գտիչ և հնարիչ էր իբր բարերար թագաւորութեանն. որ չնչին սայլանկողին 30 քէսէ միրիի տալ կարգեաց, և զուլալէի և զպուղտանի կողմանց ոչխարսն անձին սեփականեաց գնել և վաճառել յանհնարին ճնաս և յողբումն հովուաց, որ ի պատճառս կարգադրութեան իւրոյ ի նոյն կողմանս թէ այսչափ միայն լինիցին վաճառականք և ոչ աւելի՝ ետ սպանանել աւելի քան զյիսուն եէնիչէրս. որ և զցորեանս նոյն կողմանցն ինքն գնէր և վաճառէր յանհնարին կատաղութիւն նաւավարաց. որ խորհէր ևս տալ սահմանել յաւուրս յայսոսիկ զնոր թուղթ հարկի՝ անուանեալ չէլէպի խարաճի, ուխտն ոսկնոց. որ զինքն և զամենայն ինչս իւր նուիրեալ էր թագաւորին, թէ քո եմ ես և ամենայն ինչ զոր ունիմ, զայն ստաւուաքի օղլուն կալեալ խեղդեցին և կախեցին առաջի տան իւրոյ որ ի յառնաւուտ գեղն. և յետ կողոպտելոյ զպալատին տունն, և զայս տուն յորոյ առաջի կախեցաւ, ի հիմանց քանդեալ կործանեցին զայս զառնաւուտ գեղի տունս, և զմարմինն նորա ընկեցին ի ծով, թէպէտ և բազումս աշխատեցան կին նորա առնուլ զմարմին նորա. իսկ ի կողմանէ ընչից, ի տանց նորա հանին եօթն հազար քէսէ ըստակ. իսկ պատուական և դժուարագիւտ քարանց և ազգի ազգի ընչից և զարդուց չիք չափ որպէս պատմեն գրեթէ որպէս զեաղուպն. և ինչսն որոյ վասն կախեցաւ՝ գրեալ և եղեալ ի վերայ կլիծոց նորա այս էր՝ թէ ինասապարտ է թագաւորութեանս, գրկիչ և կեղեքիչ մեծի և փոքու որ ի կողմանս ուհլահի և պուղտանի։ Ի քննել և ի յուզել զինչս ստաւուաքի օղլուին գտանեն առ նմա զթէզպէէ մի, զոր ոմանք ասեն կազմեալ յականց պատուականաց 700 քէսէնոց, և այլք ի մարգարտէ. զոր ի ճանաչելն ոմանց թէ այս է թէզպէէն սիւլէյմանին, քննեալ հարցանեն ցստաւուաքին թէ ուստի եկն այս ի ձեռս քո, և նա ասէ ի մառնի մուսայէն... յայնժամ կալեալ զմուսայն, և ստիպեալ ասել զճշմարիտն, պատասխանէ թէ առի ի ճէվահիրճի ալէքսանէն. յայնժամ ապա կալեալ զիչերայն և զճէվահիրճի ալէքսանն քննեն ի վերայ բանիս, իսկ նա պատասխանէ թէ յիրաւի այնպիսի ակունք կամ մարգարիտք մի մի եկեալ են ի ձեռս իմ և վաճառեալ եմ, բայց ոչ երբէք եկն ի ձեռս իմ այնպիսի թէզպէէ կազմեալ, վասն որոյ և չէ իմ բնաւ վաճառել զայնպիսի ինչ. և մինչև ցայժմ երկոքին սոքա են ի կալանս. այլք ասեն թէ ոչ վասն այսր բանի, այլ վասն ունելոյ ընդ ստաւուաքիին առևտուրս են սոքա ի կալանս...։ Կարձեալ յաւուրս յայսոսիկ ըմբռնեալ զպատանի մի գեղեցիկ չոբեքտասանամեայ, յոյն ազգաւ որդի արայիճիի, և ստա վկայելով բազմութեան տաճկաց թէ բանս եղ առաջի մեր պառնալ ի տաճկութիւն, և ի չկարելն յաղթել նմա հաւատանեն զգլուխ նորա ի սեպ. 13...։

1765 սեպ. 20
[Կ. Պոլիս]

Կուաստ ծառայ
Հ. Մեսրոպ Վ. Արդապետ Մխիթարեան

ՄԾԶ.

Հայ պատմագէտներուն ուսումնասիրութեան նիւթ մը կը ներկայանայ Հ. Անանիայի հետևեալ թուղթը։

Գերապատիւ և Գերայարգ տեառն տեառն Յակոբեանց վարդապետի Աբբայ հօր մերոյ ողջոյն աչառամբոյր

... յաւուրս յայսոսիկ զնաւակ մի մանիօթ աւազակաց, որ գաւով առեալ էր ի մօտ աւուրս և զնաւ մի ինկիլիզի ի ձեռս բերեալ ճաֆէր ալէյն երեր ի կոստանդնուպոլիս, և զինկիլիզի նաւն ընդ նմա, և կախեցին զնաւապետն նաւակին ի նաւակին իւրում հանդերձ չղթայիւքն յոտին.... Որդի մի ի զարմէ թագաւորացն հայոց որք թագաւորեցին ի Կիլիկիայ, ճնացեալ է ասեն ի մոսկովաց երկրին, և նա անդ հասեալ ի հազարապետութեան պատիւ ի մէջ զօրացն մոսկովաց, ի ժամանակին յորժամ նորապսակ թագաւորն մոսկովաց առաքեաց զօրս թիկունս օգնականութեան նէմցէյին ընդդէմ փրուսիեայինն, սա բազում արուեստիւն քաջութեան ցուցեալ է ընդդէմ թշնամեացն. և ի դարձին և յառաջ իսկ սիրելի եղեալ յաչս թագաւորին, խնդրեաց ասեն ի նմանէ թիկունս օգնականութեան դառնալ ի աէրութիւն թագաւորութեան իւրոյ։ Յայնմհետէ թագաւորն մոսկովաց խորհեալ և թոյլտուութիւն խնդրեալ վասն բանիս այսորիկ, այլոց թագաւորաց բարեկամաց իւրոց, ի գալ ամարանս եթէ հանդարտեսցի խռովութիւն վրացն ընդ տաճկաց, թագաւորեցուցանելոց է ասեն զսա ի տեղւոջ իւրում։ Ոչ գիտեմ զճշմարտութիւն պատմութեանս, և չեմ հասեալ յիրացն հաստատութեան ի վերայ. միայն թէ պատմողն զսոյն անձամբ խօսակից և ճանապարհորդակից էր պատգամաւորին, զոր առաքեալ էր թագաւորն մոսկովաց առ այլ թագաւորս։...

Նուաստ ծառայ
Հ. Անանիա Վ.դպ.

Ցամի տեառն 1765
ի Նոյեմբ. 13
[Կ. Պոլիս]

ՄԾԷ.

Քրիստոնեական հաւատքի համար նահատակուող Հայ մարտիրոսի մը նոր վկայաբանութիւնն է որ մէջտեղ կ՝ելլէ, ինչ որ պիտի հետաքրքրէ մեր բոլոր հայորդիները։

Գերապատիւ և գերայարգ տեառն տեառն Յակոբեանց վարդապետի և աբբայ հօր մերոյ ողջոյն խոնարհական

... Ցաւուրս յայսոսիկ նահատակեցին զպատանի մի իբր ի 15ն փետր. որ էր իբր 25 ամաց որպի առն հերձուածողի, զորմէ բազում խնդիր եղև ի մէջ ուղղափառ եղբարց, թէ արդարև արժան իցէ համարիլ զնա մարտիրոս թէ ոչ. բայց առիթ գլխատման այս եղև, զի ի բազում ժամանակաց բաղձալով պատանին մտանել ի յայսմ սօֆիան և տեսանել, զոր իմացեալ ոմանց տաճիկ բարեկամաց նորա, և միաբանեալ առանձինն, խաբանօք յորդորեն և ածեն զպատանին ի նոյն տեղի, իբր թէ ոչինչ կասկած վտանգի կայցէ. և ապա յետ մուծանելոյ զնա ի ներքս, ասեն ցնա գնել ի կողմն մի գխալփախն ի գլխոյ, որպէս է սովորութիւնն, զոր գիտէ և Հ. Զաք. իբր զի մի օտար տաճիկք ճանաչելով զհայութիւն նորա բարկասցին. և ապա ասեն ցնա թէ և դու ի ծունկս ֆիջեալ

արա զաղօթս քո ըստ օրինաց քոց, զի մի օտարածեւութիւն քո առ մերով ծնրադրութեամբս զգացուսցէ այլոց զհայութիւն քո և կրեսցես զընաս. և նորա հետևեալ խաբէական խրատուց նոցա և այնպէս չրջեալ ընդ ամենայն ճամին, ի դառնալն խնդրէ զխալփախն, զոր թագուցեալ ընկերացն պատասխանեն, թէ յետ միանգամ դաւանելոյ զՀշմարիտ կրօնն առաջի այնչափ բազմութեանն, զիարդ կամիս յառաջին կուրութիւն քո դառնալ ևն. և գաղտակ բարձեալ ի տեղւոջն թէ արք եղբարք ոչ տեսիք դուք արդեօք զերկրպագութիւնս սորա ի ճամիի անդ, և արդ աւասիկ կամի դառնալ անդրէն յառաջին կրօն իւր, և վկայս ժողովեալ ամբոխիւ ածեն յատեան վէզիրին, վկայելով թէ դարձաւ ամենայնիւ ի մահմէտականութիւն, և ի քննել վէզիրին և ի բացատել նորա, և ի պատմել զխաբէութիւնս նոցա զոր անագան ծանեաւ, յայնժամ և վէզիրն դառնայ և յորդորէ զնա խոստմամբ մեծամեծ պարգևաց և իշխանութեանց և ի չառնուլ նորա յանձն, հանէ զնա ի բաց յերեսաց իւրոց, և կոչէ առաջի զվկայսն և քննէ զվկայութիւն նոցա. և յետ այլոց բանից հարցանէ ցնոսա. զինչ խոստմանս պարգևաց և իշխանութեանց արարիք դուք նմա որով յորդորեցաւ ի տաճկութիւն, պատասխանեն նոքա ոչինչ. յայնժամ ասէ ցնոսա, արդ գիտացի ստուգիւ զի սուտ վկայէք ամենեքին զառնէն. զի ես այնչափ պարգևօք և իշխանութեամբ ոչ կարացի համոզել զնա, և դուք զիարդ հաւանեցուցիք առանց իրիք ակնկալութեան, վասն որոյ ոչ կամիմ ես զաւուրս սրբութեան անպարտ արեամբ չաղաղել, (զի էին աւուրք ռամազանի). այլ տարայք զդա առ խազէաքէրն կամ առ այլ ոք, և առեալ տանին զնա առ խազէաքէրն, և առեալ զիլաճն նորա, տարեալ գլխատեն զնա, որ բազում հաւաչանօք խնդրէր յաստուծոյ զներումն տգիտութեան իւրոյ, որով հետևեցաւ զառաջինն խաբէական խրատուց տաճիկ բարեկամացն[1]*:...*

1766 *մարտ* 23
[Կ. Պոլիս]

Նուաստ ծ[առայ]
Հ. Մե[սրոպ] Վ. Մե[ծարեան]

ՄԾԸ.

Քահանայապետական կոնդակ մը ահա, որով ներողութիւնները շնորհուած են ժամանակին ի Պոլիս՝ յանուն Սուրբ Խաչի հաստատուած Հայ կաթողիկէ եղբայրութեան մը:

Կղեմէս ԺԴ. Քահանայապետ

Ցաւերժական յիշատակ: Զի որպէս լու եղև մեզ՝ եթէ ի քաղաքին Կոստանդնուպօլիս կանոնական օրինօք կամք են հաստատել գեղբայրութիւն ինչ հոգևորական և բարեպաշտական, վասն արանց և կանանց ի քրիստոս հաւատացելոց հայկազուն ևեթ ազգին յանուն ամենասուրբ Խաչի, և եթէ եղբայրութեանս եղբարք և քոյր յօժարին մտադիր ի կիր առնուլ զբազմապիսի գործս բարեպաշտութեան և սիրոյ: Մեք առ օրինօք առնուլ եղբայ-

---

1. Ի լրացումն այս վկայաբանութեան՝ կը գտնեմ Մելգոնեանի առ Հ. Մկրտ. Ադանանց գրած նամակէն (1766, *մայիս* 20) հետևեալ մասերը ևս. «Ի բամազանի տաճկաց ի փաքլավայ կիւնիւ, ումն պատանի, ազգաւ հայ իբր 25 ամաց խաչէր անուն կեսարացի, արուեստիւ սուաճի, գաղտ ուղղափառ և անուն Հօրն առաուր հայ... զնացեալ ի տեառնէն այսո սոփիայ ճամին, մանուանդ վասն արուեստին իւրոյ ես իբր թէ պատկանեալ ինչ արուեստին իւրոյ առցէ: Այրդ ի մտանէլն ի ներքս բան բանից այնց առնկաց հաննալ է ի գլխոյն զխալբախն, և զգօտին իւր փաթուեալ ի գլուխ... զինի առանձնելոյ [ևն.] խաչէրն խնդրէ զխալփախն իւր ի տաճկէն, որ պահեալ էր զխալբախն ընդ քղանցին: Պատասխանի տան տաճիկքն, հաշա, դու տաճկացար: Ասէ խաչէրն. թողէք զշախան, Ասէն, նաբալ շախայ. դու տաճկացար: Ասէ խաչէրն. այդ է բարեկամութիւն ձեր. ոչ ապաքէն դուք ինձ այսպէս և այնպէս խօսեցայք. իսկ ընդէր այժմ զներհակն առնէք ևն»:

բութեանս զհաստատութիւն ըստ օրինակի այլոց եղբայրութեանց, և առ ի բազմարդիւն աճելութեամբ յառաջադէմ լինել օր քան զօր՝ ապաւինեալք ի մարդասիրութիւն ամենակալին աստուծոյ և ի հեղինակութիւն երանելի առաքելոցն պետրոսի և պօղոսի, չնորհեմք զլիակատար ներողութիւն ամենեցուն՝ որոց միանգամ մտանեն յայսմհետէ ի նախաճառեալ եղբայրութիւն արք և կանայք ի քրիստոս հաւատացեալք ի նախայիշատակեալ ազգէն, եթէ յաւուր մտից իւրեանց ճշմարիտն սրտիւ զղջան և խոստովանեալ հաղորդին ի սուրբ խորհրդոյն։

Նոյնպէս զլիակատար չնորհեմք ներողութիւն եղբարց և քերց եթէ յարդիս գրելոցն, և եթէ որոց ըստ ժամանակի հանդերձեալ են գրիլ յայն եղբայրութիւն՝ յոր և իցէ վայրկեան ժամու իւրեանց, եթէ նմանօրինակ զղջան, և խոստովանեալ ընդունին զսուրբ հաղորդութիւն. կամ եթէ զայն առնել ոչ զօրեն՝ զեթ զղջմամբ զանունն յիսուսի բերանով՝ թէ հնար է, ապա թէ ոչ՝ չերմեռանդն սրտիւ կարդան յօգնականութիւն։

Եւ ևս չնորհեմք առ ի մարդասիրութենէն աստուծոյ, նոցունց իսկ եղբարց և քերց գրելոցն յայժմու ժամանակի և ըստ ժամանակի յայնմիկ եղբայրութեան գամենայն մեղաց իւրեանց լիակատար ներողութիւն և զթողացուցումն, իմա ցորչափ ի բովանդակ սրտէ զղջան, և խոստովանեալ ընդունին զսուրբ հաղորդութիւնն, որք միանգամ ամ ըստ ամէ բարեպաշտութեամբ յայց ելանեն յեկեղեցին կամ ի մատուռն, և կամ յաղօթարանն նախայիշեալ եղբայրութեանս՝ յաւուր գլխաւոր ծնի նոցա, (զոր նոցին իսկ եղբարցն է անկ որոշել միանգամ, և ի կարգաւորեալ առաջնորդէ տեղւոյն առնուլ զհաստատութիւն, սկսեալ զօրն ի նախընթաց երեկոյէ մինչև ի մուտս արևու յաջորդ աւուրն), և անդանօր ջերմեռանդ մաղթանս առ աստուած մատուցանեն վասն միաբանութեան քրիստոնեայ թագաւորաց, վասն արմատախիլ բարձման հերձուածոց, և վասն պայծառութեան կաթուղիկէ եկեղեցւոյ։

Եւ ևս զեօթնամեայ ներողութիւն, և նոյնչափ քառասունս չնորհեմք դարձեալ նախասացեալ եղբարց և քերց՝ որք նմանապէս անկեղծութեամբ զղջացեալք խոստովանին, և ընկալեալք զսուրբ խորհուրդն՝ գնան յայց եկեղեցւոյն կամ մատուռն և կամ աղօթարանին եղբայրութեան, և ըստ պահանջելոյ աւուրն անդանօր աղօթս առնեն ի չորս այլ պարապոյ աւուրս տարւոյն, կամ յոչ պարապոյ և կամ ի տէրունականս, (զոր անկ է դարձեալ նոցունց իսկ եղբարցն՝ ըստ որում և վերագոյնդ ասացաւ՝ ընտրել միանգամ, և յառաջնորդէ անտի ընդունելի լինել)։

Իսկ որոց քանիցս անգամ ներկայ գտանին պատարագացն, և այլոց աստուածային պաշտամանց, որք ըստ ժամանակին մատուցին կամ կատարեսցին ուրանօր և է՝ յեկեղեցւոյն կամ ի մատուռն և կամ յաղօթարանի եղբայրութենէնս, և կամ ի հրապարակական կամ յառանձնական ժողովս այնր եղբայրութենէն. և կամ թէ զաղքատս ընդ յարկաւ ժողովեն, կամ խաղաղութիւն ի մէջ թշնամեացն արկանեն, կամ արկանելոյ լինին պատճառ, և կամ չանան. և ևս այնոցիկ՝ որք առ ի նպաստել, և ի փրկել ի գերութենէ զառ ի քրիստոս հաւատացեալս, կամ զարգելեալս ի բանտի, և կամ առ ի գերցուցանել յայլ ինչ և է վտանգից, վշտաց և յաղետից՝ զողորմութիւն բաշխեն և կամ ժողովեն ի նոյն պէտս. դարձեալ և այնոցիկ՝ որք զմարմինս անթաղ մեռելոց եթէ եղբարց և քերց (եղբայրութենէնս), և եթէ զօտարացն յուղարկաւորեն ի գերեզման, և կամ ըստ ժամանակին ընթացակից լինին որ և է թափօրոց (որ պարտի լինել ի հրամանէ առաջնորդին). և կամ ընկերին՝ երբ տարեալ լինի սուրբ հաղորդութիւնն ի հանգիստաւոր թափօրի, կամ երբ առ հիւանդս ածեն, և յայլ որ և է տեղի, և որով և իցէ օրինակաւ այն լինի. կամ՝ եթէ խափանին զայս առնել՝ ի հնչել զանգակի ի նշան այնր, մի անգամ ևեթ ասեն զտէրունական աղօթքն, և զհրեշտակական ողջոյնն, և կամ նաև հնգիցս զնոյն զայն ասեն աղօթս Հայր մեր և Ողջոյն, վասն հոգւոց ննջեցեալ եղբարց և քերց եղբայրութենէնս, և կամ զմոլորեալ զոք դարձուցանեն ի ճանապարհ փրկութեան, և ուսուցանեն տգիտաց գպատուիրանս աստուծոյ, և զորս կարևորքն են առ փրկութիւն, կամ զոր և է այլ գործս կլսնի կամ զողորմածութիւն կատարեն, նոյնչափ անգամ ըստ միոյ միոյ ի նախայիշատակեալ գործոցն՝ զոր առնեն, չնորհեմք ըստ սովորական ձևոյ եկեղեցւոյն զվաթսունս

օրեայ թուլացուցումն յապաշխարանաց եղելոց ի վերայ նոցա, և կամ յինչ և իցէ պարտուց յապաշխարութեան կարգի:

Եւ զայսոսիկ ներողութիւնս, զթողութիւն մեղաց, և զթողացուցումն ապաշխարանաց մարթ է ըստ շնորհելոյ մերոյ՝ ի կարգի օժանդակութեան մերձեցուցանել նաև ի քրիստոս հաւատացեալ հոգւոց՝ որք սիրով միացեալք ընդ աստուածոյ, փոխեցան յաստեացս:

Այս ամենայն նախաճառեալք յառաջիկայս մեր կոնդակ լիցին ընդունելի և վաւեր ընդ համօրէն ժամանակս առ յապայս:

Բայց կամիմք, զի եթէ այլ ինչ ներողութիւնք մշտնջենաւոր կամ առժամանակեայ՝ որոց չիցէ անցեալ ժամանակ, շնորհեալ իցեն նախայիշատակեալ եղբարց կամ քերց՝ որ նախագրեալսն առ ի մէնջ ի գործս վարեն, արդի աւանդեալքս յոչինչ համարեսցին: Իսկ եթէ նոյն եղբայրութիւնն կանխաւ պատուաստեալ իցէ յայլ աւագ եղբայրութիւն, կամ յետ այսորիկ կամիցի պատուաստիլ, և կամ որով և իցէ այլով պատճառաւ միասցի, կամ որպէս և գիւրդ և է օրինակաւ կացուսցի, նախագիծս՝ և որ և է առաքելական կոնդակք ոչ իւիք բնաւ նպաստեսցեն նոցա, այլ յայնմհետէ նովին իսկ գործով յոչինչ գրեսցին:

Տուաւ ի Հռոմ ի Սուրբն Մարիամ՝ Աւազ անուանեալն ընդ կնքով ձկնորսի, յամի տեառն 1766 ի 24 մարտի յամին ութերորդի քահանայապետութեանս մերոյ

Կարտինալ Անտոնելլի

Տեղի ✠ կնքոյ

Վկայեմ և ես քարտուղարս ստորագրեալ, զի բառ առ բառ ընդօրինակեալ է իմ զայս կոնդակ, որպէս և գտաւ արձանագրեալ ի սմին արքեպիսկոպոսական և վիքարական դիւանի յիններորդ գիրս, յութերորդ թղթահամարի. և է այս անկեղծ օրինակ՝ յորոյ ի հաստատութիւն

Յովհաննէս Փօլլարօ Քահանայ՝ Քարտուղար
Արքեպիսկոպոսական և Վիքարական

Գրեցաւ ի Բերա այսինքն Պէկօղլու, Կոստանդնուպօլսոյ
1807 ի 4 Դեկտեմբերի

Եղիք

Այս կոնդակ խաչի եղբայրութեան թարգմանեցաւ ի լատինէ ի հայ՝ ի խնդրոյ եղբարց ձեռամբ Հ. Ս. Սօմ. մինչ էր ի Պօլիս յամի տեառն 1809:

ՄԵԹ.

Վաւերագրիս ստորագրող Միսրանք որ Մաճառստանի մեր վանատունը երթալու համար Թրիեստէ կ'անցնին, զմայլելով այս վերջնոյս ներքին և արտաքին զարգացման վրայ՝ ընդարձակ տեղագրութիւն մը կ'առաքեն առ Մելգոնեան Աբբահայր։ Իրենց կողմանէ խորհուրդ կու տան, նկատելով շատ մը նպաստաւոր պայմաններ, որպէս զի Միսրանութիւնս ամէն ուրիշ տեղերէ առաջ՝ Թրիեստի մէջ ապահովէ վայր մը։ Նոյն ատեն չէ իրագործուած այդ առաջարկը, բայց այդ կանխագիտութիւնը ծառայած է օրուան Թուականէն վեց տարի վերջ Ս. Դազարէ արտաքսուող երկու միաբաններու, այն է Հ. Ա. Պապիկեանի և Հ. Մ. Գասպարեանի, որոնք իրենց առաջին կայան հաստատեցին Թրիեստը և հոն սկսան իրենց անջատ գործը։

Այս Թուղթին մէջ կը խօսուի նաև Պիղատոսի դատավճիռը կրող մագաղաթի մը գտնուելուն վրայ, որ անշուշտ բոլոր քրիստոնէութիւնը, ամբողջ աշխարհը պիտի հետաքրքրէր՝ եթէ իրօք մէջտեղ ելլէր այդ բնագիրը։ Նամակագիրը կ'ըսէ որ անոր օրինակութիւնը միասին ղրկեր է առ Մելգոնեան, բայց մենք չգտանք զայն։ Այսկայն ունինք ի Զեռագրատան վանացս գրչագիր մեծկակ Թուղթ մը՝ (խմբ. Իդ. թիւ 10) հետևեալ խորագրով. «Ճշմարիտ Պատկեր և օրինակ Ագիրս դատաստանին «ընդդէմ Քրիստոսի, որ ի վեհեալ ի ներքոյ երկրի ի վեմ քանդակեալ գտաւ և ըստ «այնմ գաղափարի՝ զՊատճէն օրինակագրեցաք[1] առանց այլայլութեան, որ է այս«պէս...»։ Ինչպէս կը ծանուցուի Թուղթիս ստորոտը՝ ասիկա հրատարակուած է ի Ս. Բեղրպուրկ 1784 յունիս 8.ին, և ատոր ընդօրինակութիւնն է մեր այս ունեցածը։ Արդեօք 1765.ի նամակատուփէն ելած մեր անթուական հետևեալ վաւերագրին ակնարկածը սկզբնական բնագի՞ր ծառայած է իրմէ 20 տարի վերջ լոյս տեսնող մեր գրչագրի բնագրին. հնախօսական քննութեան կարօտ հարց մ'է այդ։

Գերապատիւ արբոյ Հօր վերոյ իտնարմուրեամբ Համբուրեմք զայ

Ի մայիսի 16, իբր ի 15 ժամու հասաք ի Թրեսթ...։ Ցերկրորդ աւուր հասանելոյ մերոյ ի Թրեսթ, այսինքն ի շաբաթու՝ ներկայացաք Վիքարի եպիսկոպոսին խնդրել հրաման պատարագելոյ..... եպիսկոպոս քաղաքիս է Ջերմեռանդ անն և սրբակաց, որոյ և դէմքն ցուցանէ. զորոյ զպատարագն տեսաք յօր պէնտէկոստէի։ Եւ սաքրիստան եկեղեցւոյն ուր պատարագեաց՝ պատմեաց թէ յաւուրս յայսոսիկ ի գնալ եպիսկոպոսին ուրեք երիվարաւ, անկեալ է երիվար նորա, ընդ նմին և ինքն, և ոչինչ վնաս լեալ է նմա։ Այլ և խօնախ աղաչայ խաչատրին պատմեաց՝ թէ երիս խնդիրս առաջարկեալ է եպիսկոպոսն սրբազան աթոռոյն և կայսեր. 1. զի յաւագ հինգշաբթի և յուրբաթու և շաբաթու հրէայք բնակեալք ի քաղաքիս՝ փակեալ կացցեն, և մի երևեսցին ամենևին. 2. զի յամենայն հրապարակական հանդէսս և թափօրս, նոյնպէս փակեալ կացցեն և մի երևեսցին. 3. զի քրիստոնեայք մի լիցին ծառայք և աղախնայք։ Եւ ասացեալ է եպիսկոպոսն՝ եթէ ընկալցին զխնդիրս զայսոսիկ՝ կացից յեպիսկոպոսութեանս, ապա թէ ոչ՝ հրաժարիմ և գնամ դարձեալ ի վանս իմ, զի խիղճս ոչ տանի, զի է կրօնաւոր ի կարգէ Կարմելիտացոց. այժմ սպասէ պատասխանւոյ։ Վերոյասացեալ սաքրիստանն զայս ևս պատմեաց՝ թէ չորս ամօք յառաջ յոյժամ եկն այս եպիսկոպոս յայս քաղաք, ցանկացեալ է տեսանել զմարմին սուրբ եպիսկոպոսին Կարապետի, և բացեալ են գտապանն, և տեսեալ են զմար-

1. Ձիկայ օրինակողին անունը։

մին նորա ողջ անարատ, և անապական ըստ ամենայն մասանց որպէս նորոգ թաղեալ։ Եւ խօնախ աղաչայ խաչատրին պատմեաց թէ ի գալ ամի բանալոց են զատապանն, և հանդիսիւ մեծաւ դնելոց են յհկեղեցւոջ. և գոյ կարծիք սրբացուցանելոյ։ Այլ զի այս քաղաք թրեսթու ապշեցոյց զմեզ. վասն այն պատշաճ վարկաք մանաւանդ աղաչանօք յիշեցուցանել Գեր. հօրդ մերոյ զայս ինչ։ Լսէաք այդրէն գովուբիւնս զթրեսթէն, այլ այժմ աչօք տեսեալ, և գրեթէ ընդ ամենայն կողմն շրջեալ՝ ասեմք միաբերան, թէ և ոչ ի կէսն է զոր լսէաք, զի այնչափ ընդարձակեալ և մեծացեալ է, և գեղեցկացեալ շինուածովք, տամբք, ապարանօք և եկեղեցեօք, զորս չինեալ են, և օր ըստ օրէ չինեն և չինելոց են ցամաքեցուցանելով գծով, և հատանելով զլերինս, զորս և անձամբ գնացեալ տեսաք, մինչ զի և բնակիչքն զարմանան, և ասեն թէ այս ոչ է թրեսթ, այլ այլ քաղաք. և յետ ոչ բազում ամաց լինելոց է երկրորդ վենէտիկ։ Ի շինուածս յայսոսիկ հազիւ նշմարի քանի մի կղմինար. վերուստ ի վայր առ հասարակ քարամբք չինեն զորս ի լերանց հատանեն, մինչև զախոռս ևս. և բովանդակքն ալա մօտա և ալա ճէրմանիա։ Եւ այնչափ վայելուչ և ընդարձակ փողոցս և հրապարակս արարեալ են, մինչ զի ոչ յագին տեսանողք։ Թողումք ասել զանպատմելի վայելչութիւն պարտիզաց և այգեստանաց և զլերանց, զորս որչափ և տեսցէ ոք՝ ոչ չատանայ. այլ և օդն պատուական և ջուրքն զորս արուեստիւ ի լերանց ի քաղաքն բերեալ չատրվանօք բղխեցուցանեն, ազնիւ յոյժ։ Եւ այնպէս վաճառուց տեղի է՝ զի և աղաչայ խաչատուրն ասաց՝ թէ ընդ ամենայն կողմն հանապազ երթան ապրանք ի թրեսթէ։ Ի կողմանէ բարեաց՝ բարելից է յոյժ, զի անդադար գայ եթէ ընդ ծով, և եթէ ընդ ցամաք. և յամենայն օր լինի պազար, ոչինչ պակաս գրեթէ քան զչաբաթ աւուր պազարս այլոց քաղաքաց։ Բազմամարդ է յոյժ. և պէշն բաղդատեալ թրեսթու ոչ երևեցաւ մեզ ինչ։ Վերջապէս ըստ ամենայնի զբօսալի է. և յետ ոչ ասեմք բազում այլ զկնի երից և չորից ամաց լինի իբրև զմի ի մայր քաղաքաց։ Զայս ամենայն գրեցաք ոչ դիզաբանութեամբ, այլ ճշմարտութեամբ. և խօսելով ընդ միմեանս ասացաք և ասեմք, զի եթէ յառաջ քան թէ յայլ ուրեք փութով որչափ հնար է ձեռն արկցէ Հասարակութիւնն, հաճութեամբ ձերով տեղի մի ստանալ աստէն ընդ որ կոյս և հաճի, զոր և ձրի տան որպէս և աղաչայ խաչատուրն ասաց, ոչ զղջանայ հասարակութիւնն, և եթէ ոչ կարծեմք թէ մեծ զղջումն լինի յետոյ, և ոչ կարեմք գտանել. մանաւանդ զի ձրի տալն ևս ոչ տևէ ընդ երկար որպէս երևի. զի զկնի չորից և հնգից ամաց՝ ծածկի այս երկիր շինուածովք։ Ուստի յոյժ յարմար երևեցաւ մեզ այս տեղի, զոնէ ստանալ և նշանել զտեղի առ այժմ. և եթէ կամի տէրութիւն ձեր՝ կարէ ցամաքաւ զաւուրս երկուս գալ ի թրեսթ միանգամ տեսանել, կամ զորս և կամի՝ առաքել զի տեսցեն. յուսամք թէ սուտ ոչ ելանեմք։ Զայս համարձակեցաք գրել բարի թուելով մեզ ծանուցանել որ օգտակար երևեցաւ միաբանութեան։... Խօնախ աղաչայ խաչատրին պատմեաց՝ թէ ի քակել ուրեք զորմունս ինչ՝ գտեալ եղև ի տապանի միում գրեալ ի վերայ մագաղաթի եբրայեցէրէն դատավճիռն պիղատոսի որով դատապարտեաց ի մահ զփրկիչն. զօրինակ նորա իտալերէն թարգմանեալ ըստ ամենայնի եբեր և ընթերցաւ առաջի մեր. իսկ ես աղաչեցի զի տացէ ինձ օրինակել և առաքել զօրինակն այդրէն. և նա ասաց թէ յօժար սրտիւ տամ. յետոյ ասաց թէ վարպետի միում տաց զի լաւ գրով օրինակեսցէ, և զայն առաքեսցես։ Ահա առաքեմ զայն, և ի նմա գրեալ կայ նաև եղանակ գիւտի նորա։...

Ղուաստ ծառայք

Հ. փիլ[իպոս], Հ. վ[արդ]ան Ագոնց] և Հ. Բարս[եղ]
անարժան վարդապետք

ի մայիսի 19
[թրիեսթ]

ՄԿ.

Ամառնային շրջանի մէջ ի Պոլիս պատահած հակայ և զարհուրելի երկրաշարժի մը անբացատրելի աղէտներն ու սարսափը մանրամասնօրէն կը պատմուին մեր վարդապետներէն՝ հետևեալ չորս նամակներուն մէջ։

Ա.

Գնրատպատիւ Տեառն Տեառն Յակոբեանոս վարդապետի և Աբբայ ձօր վերուստ հնդոյ ի քրիստոս

... Ջսոսկալի և զահագին գետնաշարժէ, որ եղև աստ..... ես զմասնաւոր ինչ գրեցից...: Նախ լուաք թէ ի կողմանս Իզնիմիտոյ ուռուցեալ ուրեք երկիր պատառեցաւ ի միոյ կողմանէ. և ջուր ժահահոտ իբրև զգետ յորդեալ խաղաց: Լուայ ես թէ ի իսկիւտար ի դաշտի յարածիլ իւրեանց, պատառեալ երկիր եկուլ զ15 երիվարս: Ի կողմանս Վլանկայու կաթնավաճառ մի ընդ անցանիլն՝ ձիով հանդերձ միաց ընդ փլածով պատի, և մեռաւ: Իսկ եթէ չարչըի քարաշէն կրպակաց խաներուն, պէզէստէնին և մեծամեծ ապարանից և մզկիթաց, այսինքն ճամիից հանդիպեալ ընդոսն, ոչ գրչաւ և ոչ լեզուաւ հնար է պատմել: Միայն վասն չարչըի և այլ որ ինչ յարդունուստ պարտ է չինիլ 36000 քսակ թահմին եղև:... Ցառաջ քան զաւուրս ինչ եղև անց[ր]և սաստիկ ի խալաթեայ և ի կոստանդնուպոլիս, և զի պախեճ խաբուսուին դրան անդք փակեալ էր յաւերածոց, դիզացաւ ջուրն աւելի քան զկանգուն մի ընդ ճանապարհս. 2 երիվարք և այր մի խեղդեցան: Իսկ ի յօրթագեղ յաւուր յայնմիկ ամենևին ոչ տեղեաց անձրև: Բայց յաւուրն երկրորդի նոյն յորդութիւն անձրևոյ եղև ի յօրթագեղ, և ի կոստանդնուպոլիս և ոչ կաթիլ մի անձրևոյ տեղեաց:... օրըստօրէ սաստիկ ընթանալքն յառաջին գետնաշարժէն, փլանին: Վէզիր խանը, զօֆճի խանը, և այլ քանի մի խանք, և սուլթան մուստաֆա ճամիսին գրեթէ հիմնայատակ եղեն. յալարանս թագաւորին ևս ոչ սակաւ ընաս եղև: Եւ այնչափ երկիւղ և սոսկումն անկաւ ի սիրտս մարդկանց մինչև բազմաց ի բազում աւուրս վրանօք ի բացի բնակիլ: Լյան պարտէզք և պօստանք բացօթէից:...

Ցամի տեառն 1766
յունիս 5
[Կ. Պոլիս]

Ն. Ցառայ
Հ. Թադէոս վրդ. Մխիթարեան

ՄԿԱ.

Բ

Գնրատպատիւ և Գնրաշարգ Տեառն Տեառն Յակոբեանոս վարդապետի Աբբայ ձօր վերուստ ողջոյն աչառնարհոյր

... իբրև սկսայ զպատարագն մինչչև էի ասացեալ զսուրբ աստուածն, անկարծ ուրեմն անհնարին գոռմամբ երկրի, որոյ ձայնն լսելի լինէր իբրև զձայն որոտման ամպոց, և մառախլապատ խառնակեալ օդոցն առ հասարակ ծածկեաց զտեսութիւն պատուհանիցն իբրև զծուխ լի փոչւով, և սկսաւ թնդալ երկիրն, և ամենայն տունն յորում էաք դողալ սասանիւր ի հիմանց իբրև զտերև մի ծառոյ: Ցայնժամ թողեալ զպատարագն դարձայ առ ժողովուրդն և խաչակնքեալ ի վերայ նոցա ասեմ մի երկնչիք, և դարձայ անդրէն ի պատարագն, և իբրև տեսի եթէ տակաւին ոչ դադարեցաւ, երկրորդ անգամ դարձայ և արարի նոյնպէս, և տեսեալ թէ ոչ դադարէ, այլ հետզհետէ առաւել ևս զօրանայ չարժումն և դղրդիւնն անհնարին, և այնպիսի չարժէ, զի ի կործանումն է չարժումն, ասեմ ցնոսա մի կայք, ելցուք արտաքս, ասեմ ելէք, այլ նոքա ապշեալ իբրև անշունչ անզգայ ոչինչ իմանան, և ոչ լսեն, ոչ գիտեն թէ ուր են, և գինչ է, և են ուշաթափեալ ամենեքին. և էաք ի փոքրիկ սենեկի անդ աւելի քան զերեքտասան ոգիս: Իբրև տեսի թէ կործանումն է կատարածն չարժմանս այսորիկ ասեմ ցնոսա երթիցուք, և ես չուրջառուին

պատարագի ելի արտաքս քան զդուռն սենեկին, և նոքա տեսեալ թէ ես ելանեմ արտաքս թէպէտ ոչ գիտեն թէ զինչ է, սակայն սկսան գալ զկնի իմ ուր և երթայի, և իշի ի վայր ի գաւիթ տանն և սանդուղքն տանն ընդ որ իջանէաք խլխլեալ ամենեքին, իսկ ի չարժմանն այնմիկ մի աստիճանացն յայսկոյս և մին յայնկոյս տարուբերեալ ծփէին իբրև ի մէջ մրրկեալ ալեաց ծովու. և առ ստորոտովն վէմ մի մեծ որձաքար թաւալեցուցեալ կայր, և որ անկեալ ընդ սանդուխսն հարցի ընդ վէմն ընդ այն չէք փրկուիթիւն. սակայն աստուծով ես առաջի և նոքա զկնի իշաք անվնաս ամենեքին ի գաւիթն. սակայն հայեցայ և ի գաւիթն զի էր արարեալ յամենայն կողմանց ի քարակոյտ որմոց, որոյ քարինքն իբրև զտերևս ծառոց թօթափէին, և չէր ուրեք տեղի փախստեան, ապա աճապարեցի և ելի արտաքս նաև ի գաւիթ անտի ի յընդարձակ տեղի մի, և եդեալ եմ ի մտի կալ ի միջոցին, զի թէպէտ նաև անդ այնպիսի քարակոյտ որմունք կան յամենայն կողմանց, սակայն հեռի են ի միջոցէ անտի, այլ յերթալն մինչև անդ մասամբ իմն ի կոխելոյս ի վերայ քոանցից հանդերձիս, և մասամբ իմն ի չարժմանէ երկրին սայթաքեալ անկայ, և թէպէտ հարի զքարի և սակաւ մի վիրաւորեցայ, սակայն անվնաս, և իբրև անկայ ես անկան նաև նոքա որք էին ընդ իս, այլ յարուցեալ զնացի կացի ի միջոցի անդ, և նոքա որք գային ընդ իս եկին և կացին առ իս. և յետ այսր ամենայնի տակաւին ոչ դադարեցաւ նոյն միանգամ սկսեալ չարժումն անընդհատ, և հայեցեալ տեսանէաք, զի կործանէին ամենայն որմունք չուրջանակի, և ասուն յորում էաք ծածկեցաւ ի փոշւոյ կործանմանցն։ Կայր առաջի մեր վէմ մի մեծ, զոր ասեն պինէկ թաշը, և այն ահագին վէմն թզաւ չափ ոստուցեալ բարձրանայր յերկրէ և իջանէր։ Կործանեցաւ սենեակն յորում պատարագէի. կործանեցան և այլ բազում կողմանք տանն. սակայն չնորհօքն աստուծոյ ոչ ոք մեռաւ ի մէջ, բայց միայն փոքրիկ մանուկ մի յարութիւն աղային երեք ամաց ստեփան անուն, զոր ոչ էին զարթուցեալ ի քնոյն և ննացեալ էր ի սենեկի անդ յորում ննջէին նոքա ամենեքին ի միասին։...

Յամի տեառն 1766
Յունիսի 7
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Անանիա վրդպ.

ՄԿԲ.

Գ.

Գևրաւևժար Գևրյարգևլի Աբբայ Հօր մևրոյ և րաբուևապետի տևառն տևառն Յաևիաևնոս վ.արդապետի, ողջոյն

Թղթ. 22.

Ի մայիսի 1, գրեցի համառօտիւ. բայց այժմ վերստին գրեցից զերկրաշարժութենէ քաղաքիս. քանզի ի մայիսի 22 յերեքշաբթի, ի տասներորդ ժամուն, իբր զկնի կիսոյ ժամուն զկնի ծագման արևուն, եղև գետնաշարժութիւն մեծ։ Բայց յառաջ քան զայս երկրաշարժութիւնս, բազում աւուրք յառաջ, եղանակն և օդն էր յոյժ այլանդակ և անյարմար. քանզի օդն էր անմաքուր և ծանր. գալչ և ջերմ իբր աւուրք օգոստոսի, մինչև մեզ երկնչիլ թէ այս եղանակ գուշակէ զգետնաշարժութիւն. բայց ոչ գուշակէաք զայսպիսի մեծն, որ տեսեաց առնուազն երեք րոպէք. և սկսաւ այսպէս։

Յառաջ քան զշարժն ծովն գնաց յետս յետս յափն կուսէն ի ըստամպոլ։ Իսկ ի կղզիս, ասեն ականատեսքն, թէ իբր 100 կանգուն յետս յետս գնաց ծովն. մինչև ձկանց ինալ ի վերայ հողոյ. և ապա դարձաւ անդրէն ծովն առ ափն կոյս, և բարձրացաւ աւելի քան զյառաջն։ Արդ ծովն ի գառնալն, գարձաւ որոտմամբ երկրիս, և ընդ նմա եղև գետնաշարժն եկեալ յարևմտից, որ ցնցեաց ուժգին և ընդ երկար. և զկնի բազում անգամ

ցնցելոյն իբր սկսաւ մեղմանալ, սակայն անընդհատ վերստին և աւելի ուժգնութեամբ դողացոյց զերկիր ընդ երկար. և մինչդեռ մեղմանալ կամէր, ահա աւելի ուժգնութեամբ վերստին և ընդ երկար ցնցէր և դողացուցանէր, և վեր վեր կը նետէր զչինուածս, մինչև յուսահատիլ ամենեցունցս: Արդ բովանդակն տեսեաց գրեթէ 5 րոպէս. բայց ոչ հաւատացօղքն, որք ասեն թէ եթէ տեսէր 5 րոպէս, փլուցանէր զամենայն չինուածս. բայց հաստատեն թէ տեսեաց երիս րոպէս: Ի չարժմանէս այնքան չինուածք փլան, մինչև փոչեաց երևիլ իբրև զմառախուղ ի վերայ սատմպօլու: Զկնի այսր մեծ չարժմանս, դարձեալ ցնցեաց: Նանց սակաւ ինչ և դարձեալ բաղխեաց. և գրեթէ կէս ժամ, գուցէ աւելի. սրթս սրթս չարժէր: Կարճեալ ի 20 ժամուն ուժգինս ցնցեաց, իսկ մանր մունր բազում անգամ: Ցերկրորդ աւուր՝ դարձեալ քանի անգամ, բայց մանր մունր: Մինչև ցօր գրելոյս, գրեթէ անթիւ անգամ ցայգ և ցերեկ լինէր ասէին բազումք...: Արդ յառաջին գետնաշարժութենէն, որքան տեղիք փլան, ի սկզբան անդր ոչ այնքան երևեցան. քանզի թէպէտ փլան բազում մինարէք, ծխնելոյզք, գմբէթք և խանք, սակայն զկնի աւուրց յորժամ սկսան քակել զսախտածսն՝ գտան չքնաստեալ գրեթէ և ոչ մի կերտուած որ ի կրէ և ի քարէ: Իսկ փայտեղէն չինուածքն թէպէտ ոչ փլան, սակայն ամենեքին ընկասեցան: Ի սամաթիա անթիւ տունք, իսկ ի եէտի խուլէն, գրեթէ բովանդակ չինուածքն թէև փայտեղինք, կործանեցան սպանմամբ բազմաց անծանօթից:

Ձէվահիր պէզէստանն, թէպէտ ոչ կործանեցաւ, սակայն ասեն թէ խուրտուխաչ եղեալ է: Պ. յումճու չարչըին գմբէթքն, գրեթէ զամենայնն փլուցին. իսկ ոչ փլուցեալքն՝ չեն առանց որոգայթի: Կործանեցաւ զոֆճիենց խանն, և որ հանդէպ նորա: Փլան գըմբէթքն խալբախճոց և սրբխճոց: Վնասեցան և ընդ մասին փլան ամենայն խանքն, բաց ի նոր խանից, զոր չինեաց այս սուլթան մուստաֆան:

Բնակիչքն վէզիր խանին, եւեալք յօտայէն իւրեանց և ի փախչիլն, անկաւ ներքին գմբէթն որ առաջի դրան, և սպան զնուն մարդկանց: Ոմն տիրացու գէորգ անուանեալ (ոչ նիկոմիդացին, որ եղև փեսայ կրակ գրիգորին, այլ այլումն) որ տեղեակ էր բազում լեզուաց, մանաւանդ տաճկաց, որ և զօրացոյցն մեր թարգմանեալ, ետ թագաւորին, ըստ հրամայելոյ նորա, սա ի փախչիլն և յեւլանելն յօտայէն իւրմէ, ճամի ընդ կամարաւ դրանն և ընդ նմա մանուկ մի ևս. քանզի այս գէորգ ագալ էր և նստէր ի վէզիր խանն.... փլաւ և փոքր խան մի, յորում եղեալ արապ աղախինք, փախեան և ելին արտաքս ի փողոցն և անդէն փլաւ որմն խանին և սպան զամենայն աւելի քան զտասն անձինս, ընդ նոսին և զլոյծ մի եզանց: Ի բազում տեղիս, ի բառնալն զփլուցեալսն, գտան բազում գէշք մարդկան, թէպէտ և ուր ուրեք գտան ոմանք կենդանի...: Իսկ ի դալաթիա գետնաշարժն եղև մեծ և երկայն որպէս ի ըստամպօլ, սակայն որպէս երևի չէ այնքան բռնութեամբ իբրև զնորայն. որպէս և նորայն, չէ այնքան բռնութեամբ իբրև զսամաթիոյ և զգալատին: Արդ ի դալաթիա ընկասեցաւ պէզէստէնն, դուշունլու խանն, և բազում գմբէթաչէնք և որմունք: Վնասեցաւ և եկեղեցին ճիզուիթաց և խուլէ նորա: Ի դալաթիա դուլէէն անկեալ է մեծ քար մի: Իսկ փայտեղէն չինուածքն գրեթէ ամենեքին ընկասեցան. եկեղեցին երրորդութեան ի տեօրտեօղաղըէն, ընկասեցաւ աներևոյթապէս:

Բայց ո՞ւր դիցուք զերկիւղն, զոր տան միմեանց ժողովուրդքն. քանզի ուր երթայ ոք, լսէ զբօթս. ոմն թէ՝ կըսեն քի՝ տահա բան չատ պիտի ըլլայ. ոմն թէ՝ կըսեն քի չատ արուն պիտի ըլլայ. ոմն թէ, չըհեղեղ պիտի ըլլայ. ոմն թէ կէնէ մէկ մեծ զէրզէլէ մը պիտի ըլլայ. ոմն թէ յայս ինչ օր՝ ինչ որ ըլլալու է նէ, պիտի ըլլայ:... Ի սկիզբն, բազումք վրանաւ նստան ի պարտէզս, ի պօստանս և ի լերինս. իբր թէ՝ աճա՞պ ո՞ր տահաթ գետինը պիտի անցնինք կամ պիտի մեռնինք: Արիւն ամենեցուն ցամաքեցաւ:

Պարութխանան որ ընդ մէջ մախըրքէօյին և ստէֆանոյին, բովանդակ փլաւ: Ուստի առ այժմ ամենայն որմնադիրքն անդ և ի ըստամպօլ զպէզէստէնն չինեն, վասն որոյ այլ տեղիք այժմ դադարեալ կան...:

1766 յունիսի 18
[Ա. Պոլիս]

Հ. Յակոբոս վրդ. Ջամչեանց
Մխիթարեան

ՄԿԹ.

Գ.

Գերապատիւ և գերայարգ տեառն տեառն Յովհաննու վարդապետի և արբոյ հօր մերոյ ողջոյն խոնարհական

... *ի մայիսի* 22ն, *ըստ նորոյն, յառաւօտու ի տասն ժամուն եղև այնպիսի երկրաշարժ, զորմէ՝ ականատես գոլով երկուցն ևս, վկայեաց ոմն թէ առաւել է այս քան զշարժն փոռթուգալին, առաջին գործ երկրաշարժիս էր շարժել որպէս յայտ է. երկրորդն և ահաւորն էր զոռացուցանել ի ներքոյ երկրի, որպիսի է որոտումն ամպոց ի յերկինս, մինչև ոմանց զառաջինն այնպէս համարիլ թէ որոտումն լինի. երրորդն էր վեր ի վայր կործանումն քաղաքիս առ հասարակ: Տևեաց ըստ ոմանց* 4. *ըստ ոմանց* 6. *և ըստ ոմանց այլ աւելի թաթիքէս. ի վայրկենի դադարման շարժին ոչ երևիւր քաղաքն ի փոշւոյ աւերակացն, ի նոյն վայրկեանս շարժին կործանեցաւ ահաւոր ճամին սուլթան մէհէմմէմին բովանդակ, մնալով ի ներքոյ ըստ ոմանց* 300 *անձանց, և ըստ այլոց նուազ իբր* 60: *Երկրորդ կործանեցաւ վէզիրխանն մնալով ի ներքոյ ըստ ոմանց* 40, *իսկ ըստ այլոց և ևս աւելի անձանց. կործանեցաւ չիչէճիլէր խանն մնալով նմանապէս ի ներքոյ բազմութեան անձանց, խախտեալ ըստ ամենայնի քանդեցաւ ըստ մասին զօֆճի խանն. եղծեալ քայքայեցաւ առ հասարակ ճէվահիր պէզէստէնն. խախտեալ մնասեցաւ ըստ մասին սանտալ պէզէստէնն. խախտեալ ճեղքեալ անպիտանացան ամենայն կամարք խույրմճոց և որ չուրջ գնդօք. և ի համառօտն փութացեալ, բաց ի եէնի խանէն, այլ ամենայն խանից կէաք կործանեցան, և կէաք ճեղքոտեալ և մնասեալ կասկածելի եղեն առ բնակութիւն. նմանապէս ի մզկիթաց անվնասն ըստ ամենայնի է միայն մզկիթն որ ի մէջ չարչըին: Ջէահիրնէ խաբուի մզկիթի՝ զվերին մասն գմբէթին հանդերձ գագաթամբն ի վեր ոստուցեալ և հատեալ, գլխի վայր վերստին դարձուցանէ յառաջին տեղին, ի զարմացումն տեսողաց. մինարէից գրեթէ կէսն կործանեցաւ, մնացեալքն մնասեցան, սակաւք են անվնասքն. ի վաճառանի ամենայն քարաշէնք ստամպօլու ըստ մեծագոյն մասին կործանեցաւ և որ ինչ մնացին մնասեցան և կարօտին նորոգութեան. պարիսպք քաղաքին ի բազում տեղիս կործանեցաւ, և ի բազում տեղիս ևս ճեղքեալ թեքեցան. ի փայտակերտից հազիւ զմին ի տասանց եթող ողջ և անարատ. եկեսցուք ի սամաթիայ, որոյ յերկոսին կողմանս դրանն կործանեցան պարիսպքն, յորոյ ի կողմն կայր աղբիւր ջրոյ, և ջաղացք ցորենոյ ողք կործանեցան ընդ պարսպին, և մնացին ի ներքոյ աւերակին ջրկիրքն, և ձիք ջաղացքին և այլ անձինք և մանկունք պատճառաւ ջրոյն, ի միւս կողմն էր բեռնակրաց, յորոց ոմանք մնացին ի ներքոյ և բազում ձիք բեռնակրաց... ի ներքս սամաթիոյ, սկսեալ ի դրանէ նորա մինչև ի եէնի խուլէն բոլորովին եղև աւերակ, և հազիւ ոչ միայն ի քարակերտից, այլ և ի փայտակերտիցն զմի ի հարիւրոց գտցես ողջս. կործանեցաւ մին ի եէնի խուլուէէից, և մին ևս կործանեցաւ և քայքայեցաւ պարութխանան. ի խալաթիայ սակաւ գտցես տունս անվնասս, այլ ոչ որպէս զսամաթիային. քարակերտք խալաթիոյ ևս բազումք կործանեցան և մնասեցան, այլ ոչ որպէս զկոստանդնուպօլսին. մնասեցաւ չարաչար խալաթայ պէզէստէնն, մնասեցաւ չարաչար և մեծամեծ ճեղքուածօք ընկալաւ խուռչունլու խանն... ընկալաւ ճեղքուածօ երևելիս այլ անվնասս խալաթայ խուէչին. խուռչունլուի խուէչն ըստ մասին կործանեցաւ. մնացեալն ևս քակելի է... յետ նոյն չարժին եղև այնպիսի սաստիկ անձրև, զի ի յորդութենէ ջուրց ի պախճայ խաբուն խեղդեցաւ ձի մի, որ կապեալ կար անդր, զի առ ի չգոյէ անցից ջուրց յաւետակացն կուտելոց անդր, դիզացաւ ջուրն իբրև զգետ: Արդ մինչև ցայժմ տևէ երկրաշարժն, թէպէտ ոչ նովին սաստկութեամբ. և յաւուրս յայսոսիկ ի վերստին շարժելն,

փլուցանէ զմասն ինչ պարսպին մեացելոյ ողջ յառաջնում նուագի և մեան ի նեղքոյ նորա ի գործաւորաց և ի չինողաց անտի ոգիք իբր 250. և ընդ ամենայն մեռեալք ի գետնաշարժէ ոմանք ասեն 3000, ոմանք 4000 և ոմանք աւելի. չատ լիցի ասեն եթէ յետ 20 ամի մեծ ինչ է թէ հկեսցէ յառաջին աստիճան, որպէս ասեն ամենեքեան։...

1766 յունիս 21
[կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Մեսրոպ վրդպ. Մխիթարեան

ՄԿԴ.

Թանի մը կարճառօտ լուրեր զանազան աղէտներու և դէպքերու։

Գերապատիւ և Գերաշնորհ Տէառն Տէառն Յակոբեանոս վարդապետի Ղբրեայ Ձօր վերոյ ողջոյն աչառմարեցր

... յաւուրս յայսոսիկ օգոստ. 5 յաւուր երեքշաբթի մօտ ի կէս աւուրն... եղև սաստանութիւն մեծ երկրորդ առաջին մեծագունին... ոչ միայն սաստանութիւն երկրի եղև յաւուրս յայսոսիկ, այլ և որոտալ երկնից և թօթափիլ կայծականց արտաքոյ քան զսովորականն, և զի քնակիչք տեղւոյս չէն այնչափ տեսեալ զայնպիսիս, բազումք որք ապրեցան յերկիւղէ սաստանութեանն վճասեցան յերկիւղէ կայծականց, թող զհարեալսն ի կայծակնէ։... ժանտամահն տակաւին չէ զօրացեալ, սակայն սկսաւ ծայր տալ աստ և անդ, այլ յանցեալ ամին յառաջիկայ ժամանակիս զօրացեալ էր յոյժ...։ Յաւուրս յայսոսիկ իշխանն Կիպրոսի ապստամբեաց ի թագաւորէն, և զպարգևսն որ գայր թագաւորին ի դամասկոսէ գանձս իբրև հարիւր հազարի յափշտակեցին ի ճանապարհին, և ասեն թէ այն ևս ի ձեռն իշխանին կիպրոսի եղեալ իցէ. և աստի ի թագաւորէն գնացին և պաշարեցին զկիպրոս, և զամենայն արուարձանս նորա անցուցին ի սուր սուսերի, յառնէ մինչև ցկին, ի փոքրկանց մինչև ի մեծամեծս, այլ զամրոցն տակաւին ոչ կարացին առնուլ, այլ հատին զանցս ջրոյն. և ճաֆէր պէյն պատերազմեալ նաւու կալաւ նաւս ինչ իշխանին կիպրոսի զորս ինքնագլխութեամբ արկեալ էր նորա ի ջուր։ Ընկալայ և զոսկի տալոյ կանոն Հ. Դաւթի Պօղոսեան, կրօնաւորի Մխիթարեան, այսպէս գրեցի, զի նա այսպէս ոտիւք չափեալ է զստորագրութիւն իւր ի կանոնին. չնորհ ունիմ զաշխատասիրութենէն...։

Ցամի տեառն 1766
Օգոստ. 15
[կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Անանիա վրդպ. Մ[խիթարեան]

ՄԿԵ.

Եր. Տէր Կոմիտասայ մեծ Համբաւին պատկանող փոքրիկ տեղեկութիւն մը։

Գերյարգելի Տէառն Տէառն Յակոբեանոսի վեցի վարդապետի և արժանաւոր Ղբրեայ Մխիթարեան վիճաբանի խնդալ ի քրիստոս յիսուս

Ձանաչելով զիս իբրև փրկեալ և ազատեալմայ վերոյգրեալ Գ. Հ. ի կապանաց մեսսիօնարութեան՝ ոչ պակասիմ ի չնորհակալ լինելոյ զինամոց չնորհաց Գ. Հ. որով երջանկապէս ազատ գրեալ, և չուեալ ի վարատինոյ գնացի ի Յուլվօվ առ ի տեսանել

դրարեկարգութիւնս մերայնոցն տեղւոյն, և թէ հնար ինչ իցէ մնալ անդ՝ մինչև ի մահ. բայց ոչ դադարեալ դարձայ ի վիեննայ. և հաստատեալ աստ՝ ըստ առաջին կացութեան ապրիմ գժուարութեամբ ծերութեան և աղքատութեան իմոյ ըստ ամենախնամ հաձոյից բարերար կամացն աստուծոյ: Եւ որովհետև ի գալն իմ աստ՝ գտի զՊարոն Յօհաննէսն մօռնհայիմեան քուրիերն կայսերական կենդանի, որ ցանկայր ունել զպատմութիւն երանելի տէր Կոմիտասին վասն ցուցանելոյ արքունւոյն զարմութիւն ազգին միոյ թոռան նորա և քեռորդւոյն Պարոն Յօհաննէսին մօռնհայիմեան (որ որբացեալ ի հօրէ և ի մօրէ գտանի աստ՝) և հոգալոյ նորա հաց յարքունուստ, պարտաւորեցայ գրել և թախանձանօք մնծաւ հայցել ի Գ. Հ. զի յանձն առեալ զաշխատանս վասն գթութեան և ողորմութեան հաձեսցի յղել օրինակ մի կամ հայերէն կամ իտալերէն վերոյասացեալ պատմութեան ընդունիմք, որ գայցէ աստ. և զծախս, զոր ունիցի՝ ի յառնուլ և յղել զայն՝ հաձեսցի գրել. զի մնծաւ չնորհակալութեամբ վճարեալ լիցի ում և կամեսցի Գ. Հ. եթէ ընդունելի լիցին խնդրուածքն իմ, որ պարտաւորեալ նուիրեմ զանձն ծառայութեան Գ. Հ. զոր ինչ հաձեսցի հրամայել ինձ:

Եւ յանձն արարեալ գիս հաձոյական աղօթից Գ. Հ. զսուրբ աշն համբուրեմ. և Գ. Հ.

Մնամ
Նուաստ ծառայ
Յովհաննէս Աբիմանեան
քահանայ անարժան

Յամի տեառն 1766 դեկտ. ի 13
ի Վիեննայ

ՄԿԶ.

Հրդեհի մը ծնունդն ու տխուր հետևանքները:

Գնդապետ գերդաստանի Հայրոյ հօր մերոյ և բարեկենսատիրոջ տեառն տեառն Յովհաննու Վարպետի, ողջոյն

Թղթ. Ղ.Ը.

... ի նոյեմբ. 19 ի չաբաթ գիշերին, որում լուսանայր յիսնակաց բարեկենդանն, և եղև հրկէզ արտաքոյ գրան զումղափուին: Եւ հուրն ի տանէն, որ էր առաջի աղբերն. և աղբիւրն էր մերձ գրան պարսպին զումղափուին, ուստի եղեն մնծամեծ աղէտք. քանզի ոչ արքունի գիշուցանօղքն կարէին ելանել արտաքս, և ոչ արտաքոյ եղեալքն կարէին մտանել ի ներքս և փախչիլ ի կրակէն: Եւ յայնմ մնծի դաշտավայրի՝ ոչ մնաց տեղի ապաստանի, զի ի շնչելոյ ուժգին և սաստիկ բօրեազին, մնացին Բ կամ Գ տունք. և այլն ամենայն այրեցան: Ուստի փախչէին դէպի ծովն. և ոչ ևս անտի կարէին փախչիլ, քանզի և զայեխանախքն և նաւակքն այրեցան. և բազում նաւակաց տեարքն չէին անդ, զի էր գիշեր. վասն որոյ բազումք այրեցան. և ոմանք ևս ալք և կանայք արկանէին զինքեանս ի ծովն և անդ խեղդեցան: Ոմն արկեալ զինքն ի ծովն, և գնացեալ նստեալ էր ի վերայ զարամփովին, որ առ ափամբ ծոցոյն զումղափուին (որպէս յայտ է գիտողացդ, և անդէն թացեալ զբէպէն, նա դարձեալ ընկղմեալ զբէպէն ի ծովն, պատեալ է զանձամբ, և այնպէս ազատեալ է զինքն. (եթէ ի ցրտոյն ոչ վնասեցաւ):... Արդ բնակիչքն արտաքոյ գրան զումղափուին էին բազումք՝ օտալեզուք. և գրեթէ ամենեքին աղքատք: Իսկ այժմ մերկ և մազապուրծ պրծեալք ի կրակէն, եղեն ամենեքին տասն աղքատ. և անկեալ ի չուկայս, և գրանէ ի դուռն, մուրանան: Պատրիարքն հայոց ժողովեաց բազում դրամս վասն նոցա. դարձեալ հարուստ քարակոփքն աղքատացան, զի այրեցաւ և անչահացաւ մեծագին մարմարոնեայ քարինքն գերեզմանացն տաճկաց: Նոյնպէս մրգավաճառքն և

այլ ամենայն վաճառականք և արհեստաւորք ազգատացան, զի ոչ կարացին փախուցանել ինչ։

Ասեն թէ ի հնդստան եղեալ է մեծ երկրաշարժութիւն, և ծովն բարձրացեալ և արկեալ է գնաւսն ի ցամաք. և կոխեալ է զգեղս ինչ. ընդ ամէնն իբր 1000 և աւելի անձինք մեռեալ են. դեռ որոշակի զստոյգն չիմացայ։...

1766 դեկտ. 18
ի ըստամպօլ

Ն. Ւ. Հ. Յակոբոս վրդ. Զամչեանց. Մխիթարեան

ՄԿԷ.

Հրդեհ մը ևս ի Պոլիս։

Գերապատիւ և գերարգոյ Տեառն Տեառն Յովհաննու վարդապետի
Աբբայ ՚որ վերոյ ողջոյն աչառնամբոյր

... երկու պէյլիկ նաւք ելին յառաջոյ թէրսխանային, և կացին ի բացի գնալ ի խըշլայ փոխանակ ռօնանմային որ դարձեալ եկեալ էր ի քաղաքս ըստ սովորութեան. և ի գիշերին դիպուածով իմն անկաւ հուր ի միում ի նաւացն, և այրեալ պարան խարսխին սկսաւ նաւն գնալ աստ և անդ, և յերկոսին ափունս ծովուն նաւք բազումք բորբոքեցան աւելի քան զտասնևւութ. բայց ի խնամոցն աստուծոյ, ոչ էր հողմ սաստիկ յայնմ գիշերի, և ոչ գոյր ճէպխանայ ի նաւսն, և միայն վեց այլ նաւք բաց ի նոյն պէյլիկէն այրեցան գլխովին, իսկ այլք ըստ մասին ինչ. արկին հուր նաւքն նաև ի տունս տունս որք մօտ էին ի ծով, և այրեցան իբրև երեսուն և քառասուն բնակարանք, այլ ոչ յաոաչեաց հրայրեացն որչափ կարծեցեալ լինէր, զի նէթ չէր օգնեալ տեառն, մարթ էր կոստանդնուպօլսի և խալաթիոյ այրել միանգամայն։ Այրեցաւ և քէօշք թագաւորին որ ի յայնալը խաւաթ։ Ցերկրորդում աւուր բազում ֆէրմանս արարեալ խնդրեաց թագաւորն գնաւապետն պէյլիկին այրեցելոյ պատուհասել զնա. բայց ոչ գտաւ, զի առժամայն մինչդեռ տակաւին բորբոքեալ վառէր նաւն չոքաւ թագեաւ այրն։ Այլ յերրորդումն աւուր ծնաւ թագաւորին արու մանուկ մէհմէտ անուն, և ի պատիւ երեսաց նորա չնորհեաց ասեն թագաւորն գյանցանս նաւապետին։ Եւ որպէս թուի, թագաւորն ոչ կամի առնել ուրեմն ռօնանմայ, սակայն մեծամեծ ի պալատս իւրեանց առնեն զհանդէս խրախութեան որդւոյ թագաւորին։ Ասեն թէ ձէզայիրն բացեալ է պատերազմ ընդ վէնէտիկեանց, և աստ էլչին վէնէտկոյ արգել գնաւսն վէնէտկոյ որ աստ էին զի մի՛ գնասցեն, մինչև անտի հրաման ինչ լինիցի։...

Ցամի տեառն 1767
Յունվարի 14
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Անանիա վրդպ. Մ[խիթարեան]

ՄԿԸ.

Ասիկա է ականատես հայ ծանօթ անձնաւորութեան մը խոր յարգանքն ու համարումը դէպի Մխիթարեան Ուխտը։

Ի

Վկայապատիւ և Գերյարգոյ Հօրդ աբբայի Յակոբեանոս վրդ.ի բազում սիրով ողջոյն և խոնարհական համբոյր աջոյն

Ցայտ լինի գերյարգութեանդ, զի ի վաղուց հետէ ըղձայի յղել առ գերյարգութիւնդ զգիր մի ողջունի։ Սակայն գոլով ի բազմադիմի զբաղմանց ի միջի և պէսպէս դեգերանաց՝ վասն այնորիկ անկարացայ բերել ի լրութիւն զիղձ սրտի իմոյ։ Եւ ահա առ այժմ վերին յաջողութեամբ դէպ եղև մեզ այսու գրով ի յայտ մատուցանել նաև արտաքուստ զսրտի մտօք չնորհսն, զոր ունիմք առ ազնութիւն այսքանեաց բարերարութեանց և երախտեաց Մխիթարեան վանաց. թէպէտ բովանդակ ազգ մեր արամեան պարտական է երախտագիտութեամբ աղօթս առ աստուած ուղերձել վասն սեպհական պաղոց բարեաց, զոր միշտ վայելէ ի բարերէր և յարգաւանդ պարտիզէ յայդմանէ, սակայն այսու ամենայնիւ առաւել իմն և զիս համարիմ, ընդունելով զմասնաւոր ճաշակումն արգասեաց անուշից, և զայս հանապազ, անօթով ասեմ՝ ոչ ամաչեմ՝ ընտրութեան, պատուելի աստուածազգեաց խոստովանահարցս Իգնատիոսիւ, զորմէ լուայ, եթէ միւսանգամ հանդերձեալ իցէ նահանջել ի վանսդ. և առ այն տրտմեցայ և տխրեցայ յոյժ յոյժ ոչ միայն ես, բայց և ազգս ողջոյն, որոց որչափ պաղաբերն իցէ, վկային ամենեքին. երանի թէ լինէին աստ քանի մի քահանայք ի վանացդ որպէս զհ. իգնատիոս խոհական բարեվարժ գոլովագութ և յանձանձիչ։ Ջայս ասեմ և վասն օգտի և որ ի տէր պարծանաց վանացդ. քանզի թէ ի տեղի այսորիկ աստուածարեալ անաչառ առանց ամօթոյ մշակիս կարօղ իցէ գերյարգութիւնդ առաքել աստ զսմին նման կենդանագիր արս, ստոյգ չունիմ ինչ ընդդիմաբանել։ Վասն Գերյարգութեանդ և ընդհանուր միաձանցդ հանապազօր աղօթս և պատարանս առ քրիստոս աստուած մատուցանեմ բոլոր ընտանեօքս հանդերձ, որպէս և ես համօրէն ընդելեօքս հանդերձ մաղթեմ զարժանաւոր աղօթս գերյարգութեանդ և ամենայն առաքինասէր միաձանցդ. յանձն արարեալ զիս և զիմայինս ամենայն աբբայական օրհնութեանդ, մնամ ըստ ամենայնի պատրաստական

Գերյարգութեան քում

Ցամի տեառն 1767
փետր. 7
ի Կոստանդնուպոլիս

Նուաստ ծառայ
Մխայէլ Տիւզօղլեան

ՄԿԹ.

Պէսպէս հետաքրքրական դէպքեր կը պատմուին այս թուղթին մէջ։ Հետաքրքրական է թուրք ազրիւսահատաքին եղեռնալից արարքը, ինչպէս նաև յանդգնութիւնը ինքնակոչ և կեղծ «քաւոլիկոս»ի մը՝ Պոլսոյ ապահիական Գեսպանատան և այլ մեծամեծաց մօտ ըրած չարաշահութիւններուն համար։

Գերապատիւ տեառն տեառն Յակոբեանոս վարդապետի
Աբբայ հօր մերոյ ողջոյն աչառնաւրհոյր

... Ցաւուրս պայրամի տաճկաց, չէօփճի մի տաճիկ մտեալ ի սովորական տուն մի տաճկի բառնալ զաղբիս, և եհաս մանուկ մի փոքրիկ ի գաւիթ տանն զարդարեալ ոսկւով և մարգարտով և հայեցեալ այսր անդր և ահա ոչ ոք էր որ տեսանէր, յանկարծ ուրեմն

խցեալ զբերան մանկանն, և զինեալ էարկ ի բուֆէն, և եդեալ ի վերայ զաղբևս տանն եւ գնաց ի բաց թողեալ և զդուռնն տանն, և էր մանուկն միամօր մօր իւրոյ. իբրև ժամք ինչ անցին ի վերայ, ձայնէ մայրն զմանուկն և ոչ ոք էր որ պատասխանէր, իջեալ ի գաւիթն և ահա բաց են դրունքն, կորեաւ ասեն մանուկն, և սկսան թէլլալս կանչել աստ և անդ ընդ ամենայն քաղաքն կոստանդնուպօլսի: Չէօփճին մինչ չև թէլլալքն սփռեալք ըմբռնեցաւ ի չարիս իւր, զի ի գնալն մինչև ի տեղի իւր, ի ճանապարհին թողեալ ի դուրս արիւնն ի սէփէթէն, ասէ ցնա ոմն. Ձի՞նչ է այդ այր դու զի արիւն հոսէ ի սէփէթէդ, և նա ասէ. ի տուն մի հաւ մորթեցին, և թոռիայ համարեալ մինչդեռ ես զաղբիւսս առնուի արկին և զհաւն ի սէփէթէն. և հարցանօղն համոզեալ ի բանից անտի սկսաւ ընթանալ զճանապարհ իւր, բայց կաթիլք արեանն ոչ վերջանան ի փողոցացն. և իբրև էանց ընդ բազում փողոցս յորս ոչ մի, և ոչ տասն հաւու կաթիլք արեանն օգտէին, դարձաւ չտապով զհետ մտեալ չէօփճիւլին և ժողովեալ զոմանս ի տաճկաց բանի ետ առնուլ ի վայր զսէփէթէն, և հանեալ զմանուկն, և կալեալ զչէօփճին տարան առ դատաւորն: Իբրև ետես դատաւորն զմանուկն կայտառ, հրամայեաց լուանալ, և մաքրեալ և եդեալ ի կողմանէ ետ ծածկել որպէս թէ ի քուն իցէ, և կոչեալ զմայր մանկանն, սա է ասէ մանուկն քո, և նա ասէ իմ է, թող ասէ դատաւորն և մի զարթնուցու ի քնոյ անտի. և ապա ի խրատական և ի մխիթարական բանից զորս խօսէր դատաւորն, ապա ուրեմն իմացաւ զանցսն կատարածի մանկանն. և եգիտ չարագործն զարժանին պատուհաս: Ի խուչումճի չարչըն տօլանտըրճիք ոմանք միաբանեալ իբրև 50 և 60 քսակի վաճառս առեալ յԷսնաֆէն կորեան ի միջոյ. վասն այսր պատճառի և ափտըրահման չէլէպին տային մեր վ. Հ. Անտօնին եմուտ ի բանս, զի բազումք ի վաճառականացն ի ձեռս նորա էին աւանդեալ զվաճառն, սակայն հրաման եղ ի թագաւորէն զի գոցի ամենայն ստացուած վաճառականացն, և գտին զամենայն ամենայն իրօք, և ոչ եղև ումեք ինչս:... յաւուրս յայսոսիկ եկն և այտի ի քաղաքէն նապօլի քաւալիէռ մի, և եկեալ առ դեսպանն սպանիոյ ի տէօրթիօլաղզըն և ցուցեալ զքաւալիէռական և զսուտ վկայական թուղթս իւր, նստաւ ի պալատան դեսպանին, սակայն դեսպանն գրեաց թուղթ առ թագաւորն վասն քաւալիէռիս այսորիկ ծանուցեալ և նմին իսկ քաւալիէռին, թէ ես վասն քոյ գրեմ առ թագաւորն, և նա ասէ, այո՝ նաև ես իսկ ինքնին գրել ունիմ առ նա. գրեաց և ինքն ևս և ետ ցդեսպանն առաքել ընդ իւրում թղթին: Ցայնմ միջոցի մինչ չև եկեալ էր անտի պատասխանի թղթոցս այսոցիկ, սա հանապազ ուտէր ի սեղան դեսպանին, և ընդ ամենայն մեծամեծաց ֆռանկաց և դեսպանաց ելևմուտս առնէր իբրև զմի ի մեծամեծ քաւալիէռաց սպանիոյ, և աւուրք էին աւուրք բարեկենդանի և ի պալօյս և ի խաղս առաւել գտանէր: Ցաւուր միում ի խաղս ինչ թղթոց կորոյս 100 ոսկի, զոր վճարելոց է ըստ օրինաց նոցա ի միջոցի քսանևչորս ժամու. յայնմ [= «յայնժամ» պատիւր վրան մոռցուած կ'երևի] գնացեալ եբեր 100 ոսկի չիլ զէրմահպուպ և եկն համարեաց ումեք որ ոչ էր ի խաղացողաց անտի, ասէ ցնա այլն, ընդէ՞ր համարես ինձ զսոսա, ասէ քաւալիէռն, մի՞թէ և ոչ դու յորթախից նոցա լցես, զոր քաջ գիտէր քաւալիէռն զի չէ, ասէ ցնա այլն, չեմ. ասէ քաւալիէռն, յորժամ գտից զնա ինքն նմա համարեցից զսոսա, և ժողովեալ զոսկիսն դնէ անդրէն ի ծոց իւր: Նաւ փոխով և քանի մի քսակի ակունս և մարգարիտս ի վաճառականաց տեղւոյս, յորոց և մի էր և անտօնն եղբայրն մեր վ. Հ. Գաբրիէլին, յորմէ էառ 1700 ղուռչի մարգարիտս, էառ և 100 ղուռչ փոխ ի մեծաւորէ ժամու սուրբ աստուածածնին. և հանեալ ի ծոցէն զոսկի ժամացոյց իւր ետ ի գրաւ, ասէ մեծաւորն, ոչինչ պիտի ինձ գրաւական ի քէն, ասէ քաւալիէռն, ոչ այդպէս է, ես կամիմ զի ամենայն ինչ իմ լինիցի սաղ. յետ քանի մի աւուրց առաքեաց առ մեծաւորն սպասաւոր, և խնդրեաց զժամացոյցն վասն այնր երեկոյի, զի յայսմ երեկոյի երթալ ունիմ ասէ ի պալօն այս ինչ դեսպանի, և ամօթ մեծ է երևիլ անդ անժամացոյց. և յայնմ երեկոյի առեալ ի նմանէ և զժամացոյցն, և ի վճարել պալօյին անյայտ եղև այրն ընդ առաւօտն. և յետ երկուց աւուրց եհաս պատասխանի թղթոյ դեսպանին թէ ես ոչ գիտեմ և ոչ առաքեցի այդր զայդպիսի այր: Ցուզակս առաքեցին զկնի, և գտին զնա ի պօղազին ի չանաք քալէսին ի կերպարանս նաւավարի, և զամենայն

առնալ մարգարիտն և զայլ այնպիսիս գալն ի մէջ վաւրեացն, և բերին անդրէն զքաւալիէն ի սէօղթիւլաղդն, և որչափ հնար էր զամենայն ինչս վաճառականացն տուժեալ, առաքեցին զքաւալիէն առ թագաւորն սպանիոյ։...

Ցամի տեառն 1767
Ապրիլի 5
[կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Անանիա վրդ. Մ[խիթարեան]

ՄՀ.

Հ. Ց. Ջամչեան կը տեղեկագրէ Գումգարուի հայոց Մ. Աստուածածնին եկեղեցւոյն հաստած փորձանքը՝ հանրածանօթ բռնութեանց հետևանօք։

Գերաւեհժար գերյարգելի Աբբայ հօր վերոյ և բաբռնապետի տեառն տեառն Յակիմեանոս վարդապետի ողջոյն

... Յուլիսի 29 ըստ հրամանի թագաւորին փլուցին զառանց հրամանի չինեալսն յեկեղեցւոջ սուրբ աստուածածնին, որ ի գումղափուն։ Քանզի ոմանք տաճիկք եւուն արգուհալ թէ հայք չինեալ են գնոր ինչ յեկեղեցւոջ. և յանկարծակի եկն ստամպօլ էֆէնտիսին ալայով յեկեղեցին, և ընդ նմա դատախազքն. և չգտեալ ինչ ասէ. ի վաղիւն եկից և քննեցից։ Ապա գան և քննեն ըստ հին հեօճէթին, և գտանեն զի առաջի խորանի ուրուք փոխեալ զտախտակն և չինեալ են քարեղէն։ Եւ դարձեալ զաչխանային և զմի օտայ ևս աւելի քան զչափն չինեալ (անչահք ինչ). և ապա եղև ֆէրման զի զչինեալսն արտաքոյ հէօճէթին փլուսցեն։ Եւ ապա փլուցին փուքով ի յուլիսի 29։ Եւ ուր ուրեք ձեռնասել է ի փլուցանելն, զձեռսն նորոգեցին. (բայց ոմանք հոչակեցին սուտ, թէ զփլուցեալսն նորոգ չինեալ են)։ Զպատճառն բազումք բազում ինչ ասեն. բայց ստուգագոյնն այս է. քանզի ի ստամպօլ մերձ այնր եկեղեցւոյն բնակի ոմն տաճիկ անուն նորա ահմէտ պէյ՝ եղբայր Նուրի պէյին։ Սա ունէր պարտք աւելի քան զ800 ղուրուշս ումեմն սառաֆի։ Եւ ի սպիտել սառաֆին, ահմէտ պէյն խնդրեալ է ի պատրիարգէն զ800 ղուրուշ, զի ունիմ գմեծ պիտոյս, ասէ։ Իսկ պատրիարգն (ի յազատիլ ի ձեռաց նորա) առաքէ զոմանս առ Նուրի պէյն եղբայրն ահմէտ պէյին. և ասեն. եղբայր քո խնդրէ ի մէնջ զդրամս, բայց եկեղեցին մեր աղքատ է, և պատրիարգն ոչ կարէ տալ ինքնին մինչև ոչ իմասցին ի՛ր անձինք, և դարձեալ, պարտ է մեզ՝ թագաւոր տալ չրջել եկեղեցւոջ մինչև իմանալ ժողովրդոց ամենեցուն թէ ժողովեն զդրամս վասն ահմէտ պէյին. եթէ այսմ իրի հաւանիք, արասցուք։ Պատասխանէ Նուրի պէյն. երթայք, անհոգ կացէք. ես հոգամ։ Ապաքէն առաքէ առ եղբայր իւր սաստիւք, թէ ո՛չ ամաչես, ևն։ Ապա ահմէտն պէյն առաքէ լուր առ պատրիարգն թէ՝ օսսուն կեավուռ ևն. տես թէ ես զի՞նչ արարից քեզ և եկեղեցւոյդ, ևն։ Ապա սակաւ սակաւ խօսելով մի մի ընդ տաճկաց, թէ զի՞նչ է այս, զի հայք չինեն նոր իրս յեկեղեցւոջ, և ոչ ոք խօսի, և այս է ընդդէմ հաւատոյ մերոյ, ևն, մինչև զրգռել զբազումս և տալ արգուհալս և փլուցանել զայնս։ Դատախազքն հարիւրաւորք։ Եւ փլուցին զխորանն որ ի կողմն պատրիզին, զաչխանան ուր զմատաղն եփեն և զմատաղայ մի։ Այժմ լռութիւն է. զկատարածն տեսցուք։... Ժանտացաւն սկսաւ բորբոքել օրըստ օրէ...։

1767 Օգոստ.ի 1
[կ. Պոլիս]

Ն. Ս. Հ. Յակոբոս վ. Ջամ. Մխիթարեան

ՄՀԱ.

Առաջին ակնարկութիւնը Պոլսոյ Գրիգոր Գ. պատրիարքին նկատմամբ ըլլալու է։ Երկրորդ մասով Ցոյն Պատրիարքարանի ներքին խռովութիւնը կը պատմուի։

Գերաւեծար Գերյարգելի Աբբայ Հօր վերոյ և բաբունապետի տեառն տեառն Յակոբեանց վարդապետի ողջոյն

Թղթ. ձեր.

Օգոստոսի 14 յաւուր ուրբաթու, (ասեն և հաստատեն) թէ պատրիարգն Հայոց վերստին կապայ զգեցեալ է, քանզի հայք կամէին փոխել զնա՝ իբր թէ նա եղև պատճառ կործանման եկեղեցւոյն։ Իսկ նա տուեալ առզուհալ՝ նոր ֆէրման առեալ, և զգեցեալ կապայ, վերստին նստաւ յաթոռ պատրիարգութեանն։ Ի ձեր թուղթս գրեցի թէ ոմն տաճիկ ալէյ խնդրեալ է ի պատրիարգէն իբր 800 ղուշ. և ի չտալն նորա, էր կործանեալ զեկեղեցին։ Բայց ոմանք ևս ասեն թէ ոչ վասն 800 ղուշիցն արար, զի չէր կարօտ այնքան դրամոց, այլ՝ հայքն արարեալ են նմա այլ ինչ, և նա վասն վրէժխնդրութեան իւրոյ արար զայն։ Բայց հայքն հանին զձայնն Ըձ ղուշիցն ի ծածկել գմիւսն։

Շուրջ ի սկզբան օգս.ի, ժՌ մէտրօփօլիթքն յունաց ժողովին ի միասին առնել զխորհուրդ փոխելոյ զպատրիարգն յունաց։ Քանզի ի կոստանդնուպօլիս հանապազ նստին երկոտասան մէտրօփօլիթք առ պատրիարգին, և զթեմս իւրեանց կառավարեն փոխանորդօք իւրեանց. առեալ են ինքեանք զհասն ի թեմից իւրեանց։ Արդ՝ պատրիարգն յունաց իմացաւ զծածուկ ժողովէն մէտրօփօլիթացս. և ինքն ի ծածուկ ետ արզուհալ թագաւորին վասն ԺՌ մէտրօփօլիթացն։ Իսկ թագաւորն ընթերցեալ զառզուհալն, ոչինչ տայ պատասխան։ Ապա զկնի աւուրց ինչ տան արզուհալ զպատրիարգէն, և մէտրօփօլիթքն ոչ գիտելով թէ պատրիարգն տուեալ է արզուհալ։ Ջկնի տալոյ նոցա զարզուհալն, առաքէ թագաւորն առ փաշայն. և ի փաշայէն գայ ֆէրման առ պատրիարգն, թէ վաղվաղակի և փութով Բժ.ան [երկոտասան] մէտրօփօլիթքն չուեսցեն ի թեմս իւրեանց, և մի՛ նստցին ի կոստանդնուպօլիս։ Եւ պատրիարգն յունաց իսկոյն հրամայէ նոցա երթալ ի թեմս իւրեանց, տուեալ նոցա մէօհրէթ զաւուրս աւուրս։ Ապա ելին չուեցին ի թեմս իւրեանց. և այժմ չկ մէտրօփօլիթ ի կոստանդնուպօլիս, բայց եթէ գոցի մանզուլ եղած, այսինքն եթէ չունիցի թեմ, այն չէ փոյթ։...

1767 յօգոստ. 18 ի կոստանդնուպօլիս

Ն. Ա. Հ. Յակոբոս վրդ. Զամչեանց. Մխիթարեան

ՄՀԲ.

Տապանագիրն է մեր Հ. Թադէոս վարդապետ Գրիգորեանի, որ Օրթագիւղի մէջ մեռած է՝ ժանտամահէ բռնուելով։

Գիտեմ զայն՝ որ վերջն աշխարհին
Առնուլ միոյն՝ թողուլ միւսին.
Ով աղէտից, անհնարին
Աստ գերկոսեան՝ գեղբարսն առին

Ոչ զաւեցին՝ ոչ մին թողին
Ոչ Յովնաթան՝ ընդ Սաւուղին,
Այլ Թադէոս ընդ Ալտոնին
Մին ոսկերիչ էր առաջին

Միսն ի հարանց՝ սուրբ զազարին
Մխիթարայ՝ վարդապետին.
Յամենայնի՝ գովեալ էին,
Լուսին արև ընտիր էին.
Ամ երկոքեան՝ մի առօրին
Անզաւակիլ՝ մօրըն ցուցին.
Հարան ի սուր՝ ժանտախտ մահին
Անկան ի լերինս՝ օրթագիւղին։

Ակտէֆճի Գրիգորի որդւոյ Հ. Թադէոս վարդապետ Մխիթարեան, որ ննջեաց ի Քրիստոս յամի տեառն 1767, յամսեանն սեպտ.ի քառասուն և երկու յամի իւրոյ հասակի։

ՄՀԳ.

կարնոյ և Նորշէնի Հայ ժողովրդին թշնամի զօրքերէ կրած տառապանքներուն մէկ փաթրիկ տեղեկութիւնն է։
Թուղթիս հասցէն է առ « Տարօնացի Հ. Պօղոս ևն »։

Գերապայծառ և Գերյարգելի Տէառնդ Տէառնդ Յակոբեանց Աբբայ Հօրդ մերում և հաւատոյ հարց՝ և արբակենցաղ (այդր եղելոց) կրօնաւորացդ ևն. ևն.

... ի յամի Տեառն 1766 խնուսոյ փաշային և կարնոյ քաղաքի փաշայի քէհային՝ բազում զօրօք ի յամսեանն փէտրուարի ի ներ բազմութեան ձեանց՝ չրջապատեցին զերկիրն մեր, և յաւար հարին զամենայն գիւղօրայսն, և մերկացուցին յամենայն ընչից. և զմեզ համայն Նորշէնու եղեալ ժողովրդովք մերկացուցին իբրև զմեր[կ] ի մօրէ ծնեալ՝ ի չեխկանց բլուրն. և մեզի ձեռք մի զգեստ տարին, և զայլսն լռեմ, քանզի ձանձրութիւն է չրամանուցդ. և մեր մերկացեալ յամենայն ընչից գնացաք ի մուշ. և Դ. ամիս ևս իբրու ի բանտի մնացաք ի մուշ չրջապատեալ զմեզ զօրքն նոցա. և զկնի այս քանից անցից, Լէզկու փաշայն սպանաւ ի զօրաց մերոց, և գարձեալ ի բազմանալ զօրաց նոցին՝ գթաղաքն ևս առին, և բազում չարիս հասուցին մեզ. և յետոյ Աստուծով զերծեալ յայսմ վտանգէս՝ կրկին գարձաք ի Նորշէն, և մինչև յայսմ գարնանս մնացաք՝ և սակս հարկապահանջութեան ոչ կարացաք տևել, եւեալ եկայք խռուլու համայն տամբք մերովք. և յօդունցիք հանդերձ տէր յարութիւնիւ գնացին ի յալաշկերտ. և ձեր գիւղի կէսն այլ, և Նորշէնու կէսն գնացին ի յալաշկերտ...։

Յամի Տեառն 1767 Հոկտ.ի [գրեալ] [Վարդան քահանայ]
կարին
Յամի տեառն 1768 ի մայիսի 24 [ընկալեալ]

ՄՀԴ.

Պատմութեան ծանօթ է Յիսուսեան Ընկերութեան ունեցած երբեմնի ծանր օրերը։ Մեր նամակագիրը սոյն անցքերը կը տեղեկագրէ Մելգոնեան Աբրահամ, Հռովմայ մէջ Ուխտիս համար վայր մը ստանձնելու առաջարկով։

Գերապատիւ և Գերաւուժար տեառն տեառն Յակիմեանոսի վարդապետի և Աբրահամի կարօտիւ սիրոյ ողջոյն և համբոյր ասէ

... Գերյարգելի, յայտնապէս տեսանեմ, և կարի մօտ երևի, որպէս և բազումք գուշակեն ընդունն ճիզվիթաց..., և տեսանի յօրէ յայսմանէ ևս չրջիլ այս ի բերանս Գարտինալաց ոմանց ի Գոնկրէկացիոնս, գօլով պապն զէրձիարօ ճիզվիթաց, և նէ֊փօթն նոյնպէս, և սկրըթարիօ տի սթաթօն առաւել քան զնոսա, ի բառնալ սոցա ամենայն ինչ վեր ի վայր լինի առանց կարծեաց. և ընդեն ի սպառ զանուն նոցա յաշ֊խարհէ... անհաւատալի իմն է տեսանել զփոփոխութիւն սոցա ի ծայրէ ի ծայր, որ երբեմն աշխարհի տիրէին, այժմ ի հուսկ իսկ ի յատուերաց իւրեանց երկնչին, և սկսան տկարանալ, և զաղքատութիւն մեծ ցուցանել ի տօնախմբութիւնս և յհկեղեցիս. և ի մեծամեծաց երկրիս հեռանալ. ևն։ Զայս ամենայն զրեմ միայն վասն այսորիկ, զի յօր֊դորեցից զձեզ առ ի հաճիլ, և առաքել զոմանս ի միաբանիցն աստ առ ի հիմնել զմի փոքրիկ օսփիցիօ, որպէս զի ի պակասիլ սոցա աստի, կարող իցեմք ունիլ զոնէ զմինն ի բնակութենէ նոցա վասն մեր... ով հաւատայր յետ փօնթուգալին արտաքսիլ ի Ֆրան֊սայու, և յետ Ֆրանսայու ի սպանիայու, և յետ սպանիայու, ի նապօլու և ի չիչիլեայէն. և յետ սոցա կան արտաքսելիք և ի փառս փիաչէնցայէն և յայլոց։ Ուստի լաւ լինի յայժմէն պատրաստել, որպէս զի ի մերձենալն կարիցէք իբրև ճանաչեցեալք և կարևորք, պահանջել և խնդրել։ Լուայ ի բազմաց, զի եթէ էաք կամ ի Ֆրանսայ, կամ ի Սպա֊նիայ, կամ ի Միլիւիայ, և կամ ի Նաբօլի, կարի դիւրին էր զմինն ի տեղեաց նոցա տրօքն և կէլիրոնն չնորհել մեզ։ Գիտեմ զի էին տեղիք վասն ձեր դժուարաձեռն թէպէտ Նաբօլի էր վայելչայարմար, սակայն էանց, և չիք այլևս հնար, զոնէ մի կորուսանէք զառիթն երկրիս, բաւական է թէ իցեն երկու անձինք յանուն ձեր ի միում անկեան բնա֊կեալք, և ի լինիլ առիթին ի յայտ եկեալք...։

Գրեցաւ ի Հռոմ 1667
ի դեկ. 5

Անարժան ծառայ
Հ. Գէորգ [Պաղտասարեան]

ՄՀԵ.

Հ. Յակիմանոս վարդապետ Ագռնցի (յետոյ Ընդհանրական Աբբահայր) հօրա֊քոյրն է որ կը գրէ առ ինքն, քահանայական ձեռնադրութեան առթիւ։ Նամակը թէպէտ ուղղագրական սխալներով, սակայն կ'արժէ ներկայացնել հաս՝ իր տեղա֊կան բարբառին ու գողտրիկ զգացումներու պարզութեան և արտայայտութեան կերպին համար։ Թուղթիս մէջ կիրարկուած եւրոպական կէտադրութեան ձևը (; : .) զանց րրած ենք։

Օրհնեալ եղիցի Յիսուս Քրիստոս. փառաւորեալ է Կոյսն Մարիամ Մայրըն նորայ։

Միրզի Հայր Սրեփանոս և գարագի Նէրսէ Ողջույն ի Քրիստոս

Ընկալա և ընթերնելով գրած փափակելի գիրըտ իմացա կրօնաւորական որպիսութիւնդ, բօլանդակ տունուտեղօվըս, ազգականներօվըս, բարեկամացմօվըս խընտացա ու ուրախացայ։ Շնորհօքն Աստուծոյ ես գավկըներօվըս քոյ Մաքրափայլ աղօթիւքն մինչև այս ժամանակըս կայնք և առողջինք ամենեքեանըս, վօրօնք խօնարհաբար և մեծ փափակմամբ ողջույն Միրով ձէրքըտ համբուրելով կումաուցանեն։ Դէ օր խըսմադ չունացա Մարմնավօր հանդրպելու հետդ Գարագի Որդեակ իմ, գըրածէդ ինձի աւպէս ութվէցեցավ ինչպէս տէսնուի, հանդրպէի, Մարմնավօր հերուիմ մօտէդ լըման է, բայց հօգօվս մօտիկիմ. գէրա Չօրքուրտիմ. հայցելով միշտ և հանապազ ի Տեառնէ փրկչէն, որ պահէ գքեզ ամէն դիվական փորցութենէ. երանիէ քեզ Որդեակ որ ըստ ասացելույն Սուրբ Ավետարանին հետևելիս. եթէ ոչ ոք թօղցէ զՀայր և զՄայր ոչ է ինձ արժանի, թօղելով հօգի և պատրանք Աշխարիս, ի մէջ Դրախտին կիբընակիս, ամենավին միտք պէղքէ անէլու, զի որ համբերեացէ խոպար նա կեցցէ. Աստուած չնորքըտ ավէցընու որ Աստվածպաշտութենանդ մէջ զօվելի ընդ կրօնավօրսըն ի փարըս Աստուծոյ և ի պարծանս մեր ընտրեալ լինիս, և Սուրբ աղօթից մէջ անարժանս ալ յիշես, ես ալ ըստ կարեացս զօրա անմոռանալի պիլամ զիմ ծուր ու մուր աղօթիցս մէջ զՏէրն աղաչելով։ Գերյարգելի և Պատուելի Աբբահօրըն խօնարհաբար չնորհականիմ, ոտը և ձեռքն կուհամբուրիմ որպէս Մարիամ Մակտաղենացին գՔրիստոսի, որ աւպէս Հայրախնամ աչօք կիհաէ վրըտտ, բարի Սըրտօվը կիկարավարէ և ամենաբարութիւն կիուսուցանէ, Յօհաննու Ավետարանչուն ըստ ասացելույն նըմանէ. Ես եմ որթն ճշմարիտ, և Հայր իմ մշակէ և ամենայն ուր որ բերէ զպտուղ, սըրբէ գնայ զի առաւել ևս պտղաբեր լիցի։ Յուսամ ի Տէր, որ ամենեքեանդ բերիք զպտուղ ըստ Մարկոսի, ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր, Հայրըն երկնաւոր արատապէս հատուսցէ ձեզ ըստ գործոց ձերոց, Գերյարգելի և Պ. Աբբահայրն ալ կարնա ասէլու, ահա ես և մանկունք իմ, երանավէտ ձայնը արժանի լինիք լըսէլու, եկայք, Օրհնեալք, Հօյր իմոյ, և ժառանգեցէք անիսբար ուրախութիւն, զօր պատրաստեալէ սիրելեաց ևուրոց. ավելի պակաս կիխնդրեմ թօղութիւն չնորհիս այս սակաւ գըրույս, և ավարտելով կումընամ.

Ցարգելութեանդ
Գարագի Հօրքույր Ուլխաթուն Ագօնց
յիմայ Աննայ Թօրոսի Բաստագաստան

Դիսմինիս 16 Xbris
Ann. 1767

ՄՀՋ.

Այս նամակագիրը ծովհաննէս վրդ. Թաստպասեան, գրութեանս թուականին «ընտրեալ եպիսկոպոս Մարտինու», յաջորդն է Մելգոն Մարգար Թուխմանեան եպս.ի նոյն վիճակին։ Այս թղթով ցոյց կու տայ Մխիթարայ գործին հանդէպ իր ունեցած մեծ յարգանքն ու համարումը։

Էրիցս յարգելի Առնիանոս Աբբային և սուրբ միաբանութեանդ ողջոյն ի տէր

Ցանցեալ ամօոջ իտալեան գրով Հայրութեանդ ծանուցի, որպէս թէ սուրբ Հայրն մեր Մարգար վարդապետն մատուցեալ ըստ սովորութեան զսուրբ պատարագն յառաւօտուն

Հոկտեմբ. վերջին. և յերեկոյին կատարեալ զնախատօնակն ամենից սրբոց, եղև յանկարծակի հոգէվար, զոր քահանայքս օծեցաք և ի հինգերորդ ժամու աւանդեաց զիւր հոգին։

Ցետոյ Նոյեմբ. 29, հաւաքեցին յեկեղեցին կղերիկոսքն և ժողովրդապետն. և եղեալ ի միջի զսուրբ նշանն և սուրբ զԱետարանն և նախ մատուցեալ նախ զպաղատանս առ սուրբ Հոգին, ընտրեցին ամենեքեան միաբան զմեղաւորս։ Զոր ընտրութիւնն և ես ապաւինեալ յաստուածային օգնութիւնն, և յաղօթս եղբայրութեան ձերոյ և ամենից սրբոց ընդունեցի։

Ահա զայս ինչ երիցս մինչև ցայսօր գրեցի սուրբ ժողովոյն և երկիցս սիրելութեան ձերում, որպէս զի և դուք հոգասջիք զմեզ աղօթիւք և գործով ստիպելով զասացեալ սուրբ ժողովն. յայտնել մեզ փութով գկամս իւր. և վասն ձեռնադրութեանս ծանուցանել մեզ։ Եթէ ոք գտանեցիւր որ եկեալ առ մեզ ձեռնադրեցէր զմեզ, այլ լինէր յոյժ մեծ ողորմութիւն. բայց զայս ոչ կարծեմ կարելի։ Իսկ եթէ կամի զմեզ հրովարտակաւ իւրով առաքել յուրեք, մեք հնազանդ եմք ամենեւիմբ և ի կամաց նորա կախեալ եմք։

Դարձեալ խնդրեալ էի ի ձէնջ յայտնել մեզ եթէ կարելի է զմի ոք ի վարդապետաց ձերոց առաքել առ մեզ որ լիցի ընդ իս իբրև օգնական։ Դարձեալ եթէ կամք է, զի առաքեցիք առ ձեզ զերիտասարդ մի ընտրեալ, որ ի ձէնջ առաջնորդեալ ժամանակ մի դարձցի առ մեզ, հոգալով մեք վասն ծախուց նորա, զի մի լիցի ձեզ ծանրութիւն. և զայս յայտնեսջիք մեզ։ Վասն հասանելոյ գրգուկիս և վասն տպագրութեան նորա, մինչև ցայժմ սպասեմ պատասխանւոյդ։ Եւ յանձնելով զիս և զհամօրէն աստի եղեալ քահանայս հոգունակ սիրոյ ձերում, Ամեմ

Նուաստ ծառայ
Յոհաննէս վարդապետ Թասլազեան

1767 դեկտ. 16
ի մէրտին

ՄՀԷ.

Հետագայ թուղթը կը ցուցնէ թէ կղզեկիս եկեղեցւոյն մէջ երգեհոն մը դնելու գաղափարը ելրբ, ինչպէս և որմէ սկսեր է։ Բայց թէ ինչո՛ւ իրականացած չէ՝ անծանօթ կը մնայ ինձ։

Վերապատուելի տեառն տեառն Հայր Ալեքսեաս, և Հայր Ղևոնդէս վարդապետաց մերոց, ողջոյն յոյժ բազում սիրով և կարօտիւ

... Յաշողութիւն մի յաջողեցաւ աստուածով չինել տալոյ եկեղեցւոյ մերում զերգեհոն մի ընտիր յոյժ և փառաւոր, որպէս երկնէաք ի բազմաց հեռէ ի վերայ դրանն. և մի ասիցէք թէ ոչ ունիմք հարկանող. զի և զայն եթէ տարակուսիք առաքեսցուք աստի, և եթէ ունկնդիր չունիմք ասիցէք, մեք եկեսցուք յունկնդրութիւն։ Արդ՝ քօռիէտով գրեցէք ինձ զպատասխանի թղթոյս վազվազակի, և թէ քանիով լինի յոյժ ընտիրն ամենայն զարդու և յօրինուածով իւրով իմացուցէք. և հրամանաւ Գերյարգելի աբբայ հօր մերոյ որպէս գրեալ եմ առ նա մի ըստ միոջէ, հաստատուն գրոյց արարէք թէ սկսանիմք գշինութիւնն, և ես աստի զծախսն աստուածով անվրէպ առաքեցից, զի հազար հինգ հարիւր դուռչ գրեթէ ի ձեռին իմում ունիմ, և քան զսոյն աւելի քան զերկու հարիւր դուռչի խօսք առեալ եմ. այլ եթէ յապաղիցէք գշինութիւնն ոչ լինի, զի տուօղն զգրամն կամի յաւուրս իւր պարգևել զեկեղեցւոյ զերգեհոնն ընտիր, և ոչ եթէ զծախս երգեհոնի, վասն այնորիկ եթէ դուք ոչ կամիցիք չինել անյապաղ, հարկաւորի տալ այլուր, և ես դաշնադրեալ եմ ընդ նմա զի յորժամ սկսանիցէք լինիցին զերգեհոնն, մեք յայնժամ առաքեսցուք զծախսն. վասն այնորիկ մի յապաղէք, այլ վազվազակի ընդ առնուլ թղթոյս

տեղեկացնել զամենայն ծախս նորա, գրեցէք զգին յոյժ ընտիր և փառաւորին, թէև լինիցի աւելի քան զնազար վեցհարիւր դուչս. և թէպէտ փոքր է եկեղեցին մեր, սակայն գոլով ի մէջ օտար ազգաց, եթէ անարգ լինիցի երաժշտական նուագ չարականաց և երգոց մերոց, ոչ է ի դէպ. և զի տուօղն և չինօղն նորա այնպէս կամի, և դուք մի՛ անարգէք զառաւելութիւն տուողին, և գիտեմ զի ոչ անարգէք: Եւ զտիսէնիօ ճակատու երգեհոնին ըստ ամենայն զարդուց իւրոց յօրինել տուք տիսէնիատօռի ի վերայ թղթոյ մերոյ, և ի միջին և յերևելի տեղւոջ տեղի նշանակեսջիք ուր գրեսցի անուն չինել տուողին և առաքեցէք, զի ցուցից տեսան գործոյն: Եւ բաց յայսմանէ խնդրեմ զի գրեսջիք թէ որչափ դրամով չինեալ լինի յատուկ եկեղեցւոյն մէռմէռ քարամբ, և ինչ ինչ որ պիտանի է եկեղեցւոյ, նշանակեսջիք, ինչ ինչ հազար դուչի, ինչ ինչ հարիւրի, ինչ ինչ յիսունի, ինչ ինչ տասնի, ևն...:

Ցամի տեսան, 1768
Մայիսի 30
[կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Ամմպազօղլու Հ. Անանիա վրդպ. Մ[խիթարեան]

ՄՀԸ.

Լիւրանանու Հայ վանքին պատկանող փոքրիկ բայց կարևոր վաւերաթուղթ մը կը հրատարակենք: Հռոմի կը գրկեն իրենց աշակերտները, անշուշտ առանձին բնակարանի մէջ. իսկ անոնց մեծաւորը Հ. Գաբրիէլ՝ Ս. Ղազարու երբեմնի միաբան մ'է:

Վերապատուելի Տեառն Տեառն Հ. Մկրտիչ վարդապետին
կարօտիւ սիրոյ ողջոյն

... ի Լիւրանանու եկին արդ չորք, և չորս ևս ի Նազար[է]թին են, ընդ ամէնն ութն անձինք, երեքն մանկունք փոքրահասակք իբրև գմերսն նոյն կերպիւ զգեստաւորեցեալք չալիւ, և վեցքն մեծագոյնք, յորոց երկուքն աշխատաւոր եղբարք են, և մինն քահանայ որ է Գալէճցի Հ. Կարապետեան գաղատացի: Եւ երեք մնացեալքն են ուխտեալք իբր վարժարանցիք, գան ասա առ ի զարգանալ և ձեռնադրիլ, են. այժմ ընդ ամէնն Պետրոսիւն են չորեքտասան. թող զայլսն որք գալոց են հասել հուսել, աստի անտի: Եւ գեղեցիկն այն է զի յայսմ ամի մեծաւոր արարեալ են զհայր Գաբրիէլ որ ասա, սակայն դեռ ոչ արարին փուլլիքար. և սպասեն Հ. Կարապետին և մնացելոցն:...

Պրեսյա ի Հռոմ, 1768
Յունիս 5

Աներժան ծառայ
Հ. Գէորգ [Պազտասարեան]

ՄՀԹ.

Կ. Պոլսոյ Հայ կաթողիկեայց ուրոյն կազմակերպութեան փորձերը կը պատկերէ Հ. Յակ. Ջամչեանցի հետևեալ կարևոր վաւերագիրը:

Գերաւսիծար Գերյարգելի Եղբայր Հօր մերոյ և տեառնմպետի
Տեառն Տեառն Մանիսաճնոս վարդապետի, ողջոյն

Թղթ. ՃԼԳ.

Ի մարտի 7, Գերա. Աթանաս եպիսկոպոսն ժողովեաց զքահանայս, և զեպիսկոպոսս և զվարդապետս ի տուն իւր, և հրամայեաց դնել ի տունս զդումպարայս, յորում արկցեն

չաբաթէ ի չաբաթ, զմի մի փարայ տանուտէրն և ընտանիք նորա, որք կարօղքն են։ Զայս յառաջ ևս հրամայեալ է իմ ձեզ, ասէ, և այժմ վերստին հրամայեմ ձեզ առնել այսպէս, զի ունիմ զբարի դիտաւորութիւն իմ։ Իսկ դիտաւորութիւնն նորա է առնել զգումար դրամոց (իբր զատապելայ սնտուկն), զի եթէ պիտոյ լիցի վասն ուղղափառ հաւատոյ առնել ծախս ինչ, առձեռն պատրաստ գտցի։ Եւ զկնի ետ ստորագրել քահանայից զթուղթ մի, յորում հաստատեալ են զիւր եղբարս լինել իշխան ուղղափառաց. վասն այսր, զի եթէ հանդիպեսցի տալ ինչ վասն ուղղափառաց, և մանաւանդ վասն ուղղափառ կարգաւորաց, սոքա յարուցեալք չատագովեսցեն զնոսա աստ և անդ ի յաւետեանս։ Այնպէս և ի լինել դիպուածոյ իրիք վասն ուղղափառաց, սոքա հոգալոց են։ Եւ այս իւր իշխանքն ստորագրեալ են ի միում թղթի. և զայն թուղթ պահեալ է առ իւր Աթանաս վարդապետն։

Ցաւուրս յայսոսիկ կոչեաց պատրիարգն զոմանս ի վերոգրեալ իշխանացն, և ասէ. լուայ թէ ձեր անձինք ի ձէնջ միաբանեալ են և ստորագրեալ, զի ծառայելով ի դրունս մեծամեծաց, կամին զաթանաս վարդապետն առնել պատրիարգ փոխանակ իմ։ Արդ՝ այս այսպէս է՞, թէ այլապէս։ Պատասխանի տուեալ են. հայր վարդապետ, այո՛ միաբանեալ եմք և ստորագրեալք. սակայն ոչ վասն այդր պատճառի, այլ՝ վասն այս ինչ և այն ինչ պատճառի. մանաւանդ զի միաբանեալ եմք ի գրել ի Հռոմ, և տալ նիզամ այսմ բանի, այսինքն թէ հայոց ժամ մի երթայք (քանզի ընդ այս բանի և պատրիարգն յոյժ դժուարացեալ է)։...

Ապա ոմանք յիւր իշխանացն իբր և անձինք, չոգան առ Աթանաս եպիսկոպոսն, և խնդրեցին զթուղթն յորում ինքեանք ստորագրեալ էին. տեսանել թէ որպիսի կերպիւ գրեալ է։ Իսկ Աթան. եպիսկոպոսն ի սկզբան ոչ կամեցաւ տալ, սակայն ապա ետ։ Զոր ընթերցեալ, ասեն. այս թուղթ յորժամ անկցի ի ձեռս պատրիարգին, կամ զանգատեսցեն զմէնջ առ եպարքոսն, յայնժամ մեզ ինաս լինի. զի գրեալ կան ի սմա բանք ինչ որոգայթաւորք։ Եւ ապա պատառեցին զնոյն թուղթն։...

1768 ի յունիսի 10 [Կ. Պոլիս]

Ն. Ա. Է. Յակոբոս վրդպ. Ջամչեանց Մխիթարեան

ՄՋ.

Գնէյ. Մելգոնեան Աբբահօր օրհնութեան օծուն մէկ նամակը առ երևելին Տիւզեան Միքայէլ աղա, որ ի նշան սիրոյ և բարեկամութեան Ալխտիա՝ նուիրեր էր վանքիս եկեղեցւոյն երկու արծաթաձոյլ բազմատեղն աշտանակներ։

Ի

Ցիսուսի Քրիստոսի ծառայ՝ Պետիկոնոս վարդապետ Մելգոնեան՝ առաջնորդ հաւատոյ ուխտի միանձանց հայոց Մխիթարեանց. բարեպաշտօն և ազնուական մեերմին ի Քրիստոս՝ Միքայէլի աղայի ուղղաբերձեան [Տիւզօղլու], ողջոյն քրիստոսասանդ, հանդերձ երկնառաք օրհնութեամբ ի յաստուածընկալ սուրբ նշանէն, ի յաստուածածնի ամբիծ կուսէն, ի սրբոց առաքելոցն գնդից, և յամենայն երկնագումար խմբից, անեսսութեամբ հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի, և որոց սոցուն սակի են։

Զքեզ ծանեայ՝ ի հարուստ ամանակաց սերտեալ ի բարեպաշտութիւն, և աստուածակոյս կողմանն նախանձայոյզ, արդարութեան հանդիսին ստացիչ. լուսոյ ճշմարտութեան արծարծիչ. մտաց խաբէութեան վարատիչ. որում ի ձահ պատահեցուցեր չհաւրկու լինել եկեղեցւոյն քրիստոսի՝ միշնորդաւ գործոյ արծաթաձոյի՝ կրկին ճրագաց բազմաստեղն աշտանակաց՝ գործելոց քերուբ. ընծայեալ զնոյն եռանդեամբ կամաց բարեմտին

սրտի. յաղերս ընծայից ի մեր եկեղեցի. ի միչտ յիշատակ՝ յիշատակաւոր տանդ բարեկրի. որք եկեալ ժամանեալ ողջ և անարատ՝ գրաւեցան ի մեր ձեռն. մանաւանդ թէ ի գանձ պահեստի տանն Աստուծոյ. զորս տնտեսեսցուք ի գործ լուսաբարութեան մերոյ տաճարի՝ յոր երևելի տարեկան տօնի՝ եւ արդ ընկալեալ զայս նուէր առատ ի քոյին բարեպաշտութենէ, պարտաւորիմք գքեզ ի կարգ բարերարաց միաբանութեան մերոյ կրկին արձանագրել. աղօթիկեր եղեալ յաճախ խնդրուածովք՝ լնուլ գքեզ և զքոյսն տեառն Աստուծոյ՝ օրհնութեամբ մեծաւ նահապետացն առաջնոց. ընդ աբրահամու մեծանալ. ընդ իսահակայ զօրանալ. ընդ յակոբայ բարգաւաճիլ. ընդ յովսեփայ սքանչանիլ. ընդ մովսէսի հրաշանալ. ընդ բեսէլիէլի հոգեկրիլ, ընդ սողոմոնի զգօնանալ. ընդ զօրաբաբելի առ վհհիւ շնորհս գտեալ, ի թշնամեաց ազատեալ, ի վշտաց ճողոպրեալ. զեկեղեցին Քրիստոսի շինութեամբ խնդացուցեալ. յորմէ գքեզ և զքոյին կողակցաւ և զամենայն որդւովք, և զհամօրէն ընտանեօք՝ շնորհ, ողորմութիւն և յաւիտենական փրկութիւն, որ է օրհնեալ ի յամենայն յաւիտեանս. ամէն։

Գրեցաւ նամակս օրհնութեան ի վենետիկ
ի վանս սրբոյն Ղազարու, յամի տեառն 1768
օգոստ. 15 ի փառս ամենափրկչին

[Ստեփանոս վրդ. Մելգոնեան ԱԲԲ.]

ՄՋԱ.

Ցանր արկած մը կը կարզանք այս թուղթին մէջ՝ ծանօթ Աստեմանի ընտանիքին համար. բայց և զմեզ կը շահագրգռէ՝ որովհետև Հայ գրոց և ձեռագիրներու կեանքին ալ կը պատկանի։

Վկրտպատուհի Տէտան Տէտան Հօր Մկրտչի և Վարդապետի կարօտեալ սիրոյ ողչոյն

... Ցանուցանեմ եղբայրութեան քում զանցսն ասսիմանեանց, որոց պատահեցաւ դժբախտութիւն մի կարի զարմանալի, և ընդ ամենայն ազգս հռչակելի և յամենայն դարս պատմելի։ Ուրեմն սոքա իսկոյն հարս մի առին հռոմայեցի նշանաւոր իւրեանց նենօթին, և հազացան տալ թիթօլօ Գօնթէսսայ Աստէմանի... վասն ածելոյ զսա ի բնակութիւնն վաթիկանին, (քանզի հարսն է ... նէփօթի փափին) սկսան յօրինել զբնակութիւնսն, և զարդարել. որոյ պատճառաւ զոր ինչ ունէր մօնսինեօռ ասսիմանին, բարձին անտի ուր էրն և եդին՝ ի թաւանն վաթիկանին, և մանաւանդ ի յայնոսիկ սենեակս վերին կողմանն ուր ոչ գոյ բնակութիւն։ Ուրեմն յանկարծակի իմն ոչ ոք գիտէ, հրդեհեցան այսոքիկ աղխամախք, և այրեցան բովանդակք մինչև չմնալոյ և ոչ ասել մի։ ի մէջ որոց այրեցան և հայոց գրեանքն զոր ունէր ասսիմանին. և մանաւանդ այն ձեռագիր ձառընտիրն որ էր հայոց ժամուն, զոր տեսի ես զոր ոմն... տուեալ էր յանուն վադիկանին, և գտաւ ի մէջ գրոց նորա. որպէս և իցէ ընդ նոցա էին քառասուն հազար վօլումի և բովանդակք այրեցան, թող և զայլ աղխամախսն. և վադիկանին ոչ այլ ինչ ինձաս եղև բայց եթէ որմունքն և թաւանն և վերնատունն. և զսոցա մուխն ասի իբր ստոյգ իմն թէ եռես ի հեռաւոր ի 20 ժամու և կիսոյ. պատն որ գբօսնոյր ի մօնթօգաւաղն ասելով զժամ, և եռես գմուխն և առաքեաց զձիաւորս. քանզի մօնսինեօրն բնակէր ի պալատիզի իւրում ալլա Լօնկարա։ Ո՛րպէս և իցէ ոչինչ յիշատակ մնաց ասսիմանիին, բայց եթէ արծաթեղէնքն։ Խոմանդակ Հռօմ կան զարմացեալք. և ոչ եմք հասու եթէ որպէս եհաս անդ հուրն. ինքեանք ասեն կայծակի գործ...։

Գրեցաւ ի Հռօմ 1768
ի սեպ. 3–ին

Անարժան ծառայ
Հ. Գէորգ [Պաղտասարեան]

ՄՁԲ.

Էջմիածնի վանքին պարսպի շինութեան և Տաճարին մասնական նորոգութեան առթիւ՝ Սիմէոն կաթողիկոս թուղթ կը ղրկէ առ Ցարութիւն վրաց, դրամական օգնութիւն խնդրելով։

Ի՛

ԿՀԻՋ

Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ Տէր Սիմէօն կաթուղիկոս և Ամենայն Հայոց Պատրիարք ամենայն Հայոց, Առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, և մեծի Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի։

Ցորմէ սիրով և կարօտիւ, և սրբոյ Աթոռոյս Շնորհիւն ծանիր սիրելիդ իմ Ցարութիւն Աստուածապան վարդապետ, զի ահա յաջողմամբն Աստուծոյ, աւարտեալ զՊարիսպն Սրբոյ Աթոռոյս հանդերձ այլովք հարկաւորօք շինուածովք։ վերստին ի սոյն ամի՝ վստահացեալ ի յողորմութիւն նոյնոյ տնօրինողին Աստուծոյ ձեռնարկաք ի տանիսն Աստուածակերտի Տաճարիս նորոգել, որ և ահա առաջի դասուն Ահեակ դասու տանիսն աւարտեալ ի միւս դասն ձեռնարկաք, զի գիտես զհնութիւն, որք չուրք մտեալ ի ներս կաթնին, վասն որոյ հարկաւոր համարեցով քան զայլսն՝ ձեռնարկաք Աստուծով։ Գրեմ զի ուրախասցիս և ծանուսցես օրհնեալ ժողովրդեանն՝ զի և ևս արիասցին ի տուրս, ի մասնակցել այսպիսւոյ բարեգործութեան։ Եւ գիտես որ դրամ պիտոյ է այսպիսւոյ մեծագունի յառաջադրութեան։ վասն որոյ՝ փօլիս ալարաք ի պօլիս ի վերայ Զաքարիայ վարդապետին. և գիտէաք որ նա ոչ կարէ տալ զայնքանն։ Սակայն՝ այնու մօք արարաք, զի և դու օգնեսցես։ վասն որոյ՝ զրեմ սիրելւոյդ մերոյ, զի ի հասանել գրոյս առ քեզ, երեք հազար դուռչ հասուսցես չուտով առ Զաքարիա վարդապետն, և զովզ առնուցուս ի նմանէ, և նա զփօլիցայն տուեալ մեզ զրեսցէ. զի և մեք յաւուկ զովզ տացէ քեզ. մինչև մեր զովզն առ քեզ հասցի. գնորանն իւրեան տայցես։ Զայս հարկաւոր գիտացեալ ի վերայ քոյ. ողջ լեր։

Գրեցաւ ի Իմմիլ թուին, ի սեպտեմբերի ժե. և ի լուսանկարս սուրբ Էջմիածին։

|Սիմէոնէն կաթուղիկոս Ամենայն Հայոց|

ՄՁԳ.

Հ. Զաքարիա յոյժ շահեկան թղթով մը կը ծանուցանէ առ Մելգոնեան՝ Ֆրանսայի թագաւորական Գրատունէն Պոլսոյ վրայով դէպի Մ. Ղազար ուղեւորող վեղարաւորի մը պաշտօնական հանգամանքը. միանգամայն սոյն արքունի գրատան հայ ձեռագիրներու կեանքին շուրջ տրուած կարեւոր տեղեկութիւններ, նշանակելով այդ առթիւ վանական ուշագրաւ դիտաւորութիւններ։

Գերյաւետեան Գերյարգելի Հայրապետ մերոյ
Տեառն Տեառն Յակոբայ Արքեպիսկոպոսի վրդպ.ի ողջոյն ի Քրիստոս

Թուղթ ՄԾԴ.

... քարուճին պատրի ոմն ֆրանսըզ՝ անուն յովսէփ առաքեալ ի գրքապետէ ֆրանսըզ թագաւորին, եկեալ էր այսր ուսանիլ զհայերէն լեզու, որպէս զի յետոյ երթեալ ի ֆրանսայ թարգմանեսցէ զհայ գրեանս զեղեալս անդ ի թագաւորական գրքատան: Այս պատմէր թէ բազում ձեռագիր գրեանք հայոց կան անդ՝ իբր երկու հազար կտորք, և քանի մի ևս հին ձեռագիր աստուածաշունչք: Արդ այս պատրի չգտեալ աստ զլաւ ուսուցիչ, ահա չուէ գալ այդր, որպէս զի ի մէնջ ուսցի զհայ լեզուն. զոր ուսումն կարծեմ լաւ կարէ առնել նմա մեր Հ. Վ.րթ. որ ըստ մեծի մասին կայ ի Վէնէտիկ: Վասն սորա գիր յանձնարարական գրեալ է առ ձեզ նաև աստ եղեալ ֆռէնկ Վ.իքարն, որ և աղաչեաց զիս, զի և ես գրեցից ձեզ առնել նմա զայս շնորհ ուսուցանելոյ զհայ լեզուս: Ես կարծեմ, եթէ արասցուք նմա զայս շնորհ, բազում բարիք ծագին մեզ. մի՝ զի ի դառնալ նորա ի ֆրանսայ՝ կարէք ընկերակցել ընդ նմին զոմն ի մէնջ, (զոր օրինակ զՀ. Մինասն), զի զձեռագիրս հայոց անդ եղեալս քննեսցէ, և այլն: Եւ երկրորդ՝ թերևս այսու աւթիւ ծանօթս լիցուք մեք ֆրանսըզ թագաւորին, որով և ըստ ժամանակին մենաստան մի ևս անդ ստասցուք: Ուստի խնդրեմ, զի յամենայն սրտէ հոգ տարջիք ուսուցանել պատրուն գհայ լեզուն ի հասանել նորա այդր: Ցուսամ թէ այսու լնանին փափաքք մեր Հ. Մինասին, և որոց նորա սակի են ի գառանել զձեռագիր աստուածաշունչս, զոյմէ գրէ Գերյարգ. ինձ յայսմ թղթիդ՝ ունիլ հոգս առձեռն բերելոյ զերկու ձեռագիր աստուածաշունչս...:

1769 փետրվարի 12
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Զաքարիա Վ. Ա. Մ.

ՄԶԴ.

Աստրիոյ Յովսէփ Բ. կայսեր դէպի Հռովմ ուղեորութեան շուրջ պատմական համեղ և հետաքրքրական դրուագներ կը կարդանք հետևեալ երեք թուղթերուն մէջ:

Ա.

Գերապայծառ և վեհափառ տեառն տեառն Յակոբայ վրդ.ի և արքայիդ ողջոյն և սրբազան ակոյն համբոյր

... մեր կրանտուգան հոմ գնաց, նաև իմբերադօրն ևս գնաց, ի քաղաքէս բազում գարտինալք անցանեն ամենայն փառաւորութեամբ. պատճառ իմբերադօրին գնալոյ այս է ասեն, որովհետև բարմայի տուգան բանադրած է և բօրդօկալն խռովէ որպէս և սբա-նիան և նաբօլին. գնաց իմբերադօրն հաշտութիւն առնել անձամբ, որպէս զի կարասցէ առնուլ զաղջիկն բօրդօկալին և տալ գքոյր իւր բարմային. և զայս ստիպէ առնել թագուհին վասն խիղճմտանացն. քանզի պատմեն աստ, թէ կօվերնադօրն տեղւոյս գրեալ է մեռեալ իմբերադօրին գանկատս բազում վասն եպիսկոպոսի միոյ երկրիս, և իմբերադօրն հրամայեալ է աքսորել զնա. և տեղւոյս իշխանն առաքեալ է սօլտաթս մինչ էր յանկողին եպիսկոպոսն, և այնպէս անարգաբար տարեալ մինչև արտաքոյ քան զիւր տիօչեզին, և ապա ասացեալ նմա զհրամանն կայսեր գնալոյ ի հոմ. եպիսկոպոսն վաղվաղակի առեալ թուխթ ի ձեռին բանադրեաց գրով զկայսրն, զիշխանն քաղաքիս, և զպատճառ եղօղն զսօլտաթսն որք կատարեցին զհրամանն և զմասնակից եղօղս, և ամրացոյց յամն բոլոցին

յայտնապէս և չուեաց ի հոսմ. ժողովրդոյն տեսեալ և բերան ի բերան գնացեալ էհաս ականջս իշխանին. և իշխանն առ ի պարտաւորել զեպիսկոպոսն աւելի ևս գրեաց կայսերն զամենայն ինչ լիապէս. և ասէն իբրև ընթերցաւ զայն գիրն իշխանին իսկոյն յանկարծակի անկաւ մեռեալ ի գիրկս որդւոյն. վասն որոյ թագուհին խիղճմտանք առնելով կամի հաշտութիւն ընդ սուրբ եկեղեցին, զի ըստ կանոնաց ամենայն թագաւորք են ի բա[նադրանս]. ևն։ Նաբօլի քաղաքն այն տունն ամենասրբոց լիթանիային որ ասէ, զի զքշնամիս սրբոյ եկեղեցւոյ խոնարհեցուցանել հինիցիս, փոխեալ են արակցելով այսպէս, զի զքշնամիս սրբոյ եկեղեցւոյ զտաճիկս և զհերետիկոսս խոնարհեցուցանել է ևն, որով յայտ առնեն զինքեանս թշնամի եկեղեցւոյ և երկնչին աղաչանացն ժողովրդեանն. զի խիղճմտանք իւրեանց վկայեն. լուայ զի թօսքանային կածեթան արգելեալ են վենետիկ, գիրուն ծանոյ ինձ. դարձեալ լուայ զի կայսրն ի ճանապարհի կամելով երկու հաւկիթ, բախեաց զտուն միոյ գիւղացւոյ, և ի բախելն իւր գեղացին ելանէր արտաքս և կայսրն խնդրեաց ի նմանէ զվերոասացեալ ձուն. նա պատասխանեաց ոչ կարեմ առնել զայդ, զի գնալոց եմ որոնել կնքահայր մի վասն կնքելոյ զմանուկն իմ և ոչ գիտեմ առ ո՞ գնացից. պատասխանէ կայսրն, ես եղէց կնքահայր նմա. գեղեցին լուեալ զայս ասէ և ես գնացից որոնել զքսընդրեա[լ]ն քոյ. յայնժամ կայսրն գրէ թուխթ մի առ իշխանն տեղւոյն այսպէս. ես իմբեռադօր յուսեփ երկրորդ յանձնեմ քեզ մկրտել զայս և լինիլ կնքահայր ի տեղի իմ ամենայն պարագայիւք. և տուեալ գեղացւոյն ասէ, գնա առ իշխանդ և ցոյց նմա զայս գիր և նա մկրտէ ի տեղի իմ. և գրեալ էր ևս տալ մանկանն աւուրն մի դօլերս մինչև ի մահ. և ինքն չուեաց ի ճանապարհ իւր. իշխանն զառաջինն ոչ հաւատայր քանզի ոչ ոք գիտէր թէ կայսր գնայր ի հոսմ, բայց յետոյ ստուգեալ զիրսն, մկրտեաց զմանուկն ամենայն փառաւորութեամբ յանուն կայսերն. դարձեալ ասեն յորժամ էհաս ի պօլօնեա ոչ ոք ծանեաւ զնա. քանզի գնաց ի լօգանտա ուտել իբրև պարզ օֆիցիալ. բայց ի լօգանտան տեսանելով զի սպասաւորքն հանեն վասն նորա բօսատա և գաւաթ ոսկի, զարմանային. և իբրև ելանէր ի կառս խնդրեաց թուխթ. և գրեաց ճենեռալ բալավիճինիին և իշխանին քաղաքին այսպէս. յովսէփ երկրորդ իմբերադօրն անցանելով ի քաղաքէդ ողջունէ ևն, և այնպէս բացեալ ետ լօգանտատեառն զի հասուցանիցէ նոցա. իբրև ընթերցաւ և իմացաւ թէ կայսրն է վաղվաղակի յանկաւ յոտս նորա. բայց նա թեւաւ գնաց և այսու կերպիւ իմացան. և կամէր գալ ի ֆիօրենցայ և ոչ կարաց վասն ոչ գտանելոյ ձիանս, քանզի աւուրք յառաջ քարտինալք անցեալ էին և առեալ էին զձիանս. վասն որոյ ընդ այլ ճանապարհ գնաց, և ամսուս 15.ին էհաս հոսմ. գկայսերական զգեստքն իւր բերին տեղս և մայր իւր բազում ինչ առաքեաց վասն կայսերն որպէս զի ցուցէ փառաւորութիւնս...։

Ֆիրէնցէ 18 Մարտ
1769

Նուաստ և անպիտան ծառայ
Մխայէլ Մուրատեան

ՄՁԵ.

Բ

Վերապատուելի Տէառն Տէառն Հ. Մկրտիչ վարդապետին
կաթողիկոսական սիրոյ ողջոյն

... Թերևս լուեալ է ձեր մինչև ցայժմ, թէ կայսր, որդին մեծի թագուհւոյն եկն ի հոսմ յանծանօթս ի 15ն մարտի յաւուր չորեքշաբթի ի տասնումէկ ժամու առաւօտուն։ Թէպէտ ընդ բոլոր ճանապարհն եկն առանց զինքն յայտնելոյ ումեք, սակայն չև ևս եկեալ հասեալ ի հոսմ հրատարակեալ էր գալուստ նորա. քանզի մայրն նորա նունցիին ծանուցեալ էր զորմէ ի տան պռաչճեանօյի փրինչիփէին գանկատեաց ասեն զմօրէն իւրմէ. քանզի ինքն կամէր և ախորժէր յանծանօթս կալ. և յանծանօթս չրժիլ ընդ բոլոր հոսմ

և ընդ չրջակայսն. և լուր զախորժելին, երբ եմուտ ասեն ընդ դուռն քաղաքին որ կոչի porta del popolo, պահապանն հարցեալ իցէ զկայսերէն, եթէ երբ հասանիցի, և նա պատասխանեալ է, թէ ոչ է այնչափ հեռի. և ապա անտի առաջնորդութեամբ կնոջ միոյ գնացեալ է ի թոչնիթայ տի մօնթէն, ուր կայր եղբայր նորա օթեւանեալ. և ի կամիլն մտանել ի ներքս, հազիւ հազ, յետ այնչափ սպասեցուցանելոյ դռնապանին զնա թոյլ տուեալ է, և այն այսու ոճիւ. զի ի հարցանելն թէ երբ գայցէ իմփէռաթօռն, ցուցեալ է նա զերկուս ծրարս թղթոց, թէ յայսոսիկ յայտնի լինին. և պատճառելով թէ տալոց է զայնոսիկ ի ձեռս մինիսթրոյին և կոանտուգային, մտեալ է ի ներքս, և անցեալ ընդ ամենայն սենեակս առաջնորդութեամբ սպասաւորի միոյ հասեալ է ուր ննջէր եղբայրն նորա, և զարթուցեալ զնա, և զգամարերսն, իսկոյն հրապարակեցաւ ընդ քաղաքն, թէ պէտ կարծեաք գիտէաք թէ գալոց է, ուստի և անհամար անձինք սպասէին այսր անդր և առ դրան քաղաքին, բայց որովհետև փոքրիկ գալէսով միով եկն, և էանց ընդ մէջ ժողովրդեանն, ոչ ոք կարաց ճանաչել զնա։ Ուստի յետ մտանելոյ նորա ի պալատն, իսկ և իսկ հրապարակեցաւ և ղղրդեցաւ քաղաքն ամենայն։ Եւ իսկոյն փութիփէչք հանդերձ մաճառոմոյով առաքեցելով ի Գօնգլաւէն գնացին ի յարգել զնա. սակայն նա ոչ ընկալաւ զնոսա, տալով զայսպիսի ինչ պատասխանի, թէ կայսր ի վեննայ նստի, և որ եկեալն է, նա է իշխանն պռոսպուռ. և այսպէս յետս դարձոյց զնոսա, յոյս տալով տեսանել զամենեսին ըստ ժամանակին եթէ տէր կամեսցի։ Այնպէս յետս առաքեաց և զգունդս զինուորացն, և զօրապետացն որք գնացին կալ ի սպասու նորա. և այսպէս ոչ երբէք կամեցաւ և կամի, զի հրաժարակեսցի և ճանաչեսցի իբր կայսր։ Այլ ախորժի յոյժ զի չրջեսցի ընդ բոլոր քաղաքն ազատապէս։ Բայց քանզի ժողովուրդն Հռոմայեցւոց անհամբեր է յայսպիսիս, ոչ այլ ինչ լսի յամենայն անկիւնս քաղաքին ուր երևի, բայց եթէ վիվա իմփէռաթօռ։ Մանաւանդ ի նոյն աւուրն յետ միոյ ժամու բիւրք բիւրոց կային առաջի պալատի նորա և գոչէին, վիվա իմփէռաթօռ, և նա երաց զպատուհանն, և երկիցս շնորհակալ եղև նշանացի, և ի բարձրացուցանելն նոցա գբարբառս իւրեանց յերկրորդումն, ձեռօք նշան տայր զի հանդարտեսցին։ Ո՛հ է հնար լիով պատմել զզարմանալիս որք եղեն յայսոսիկ աւուրս ի Հռոմ, զամենայն ինչ մոռացան, ոչ զՊապ յիշեն և ոչ զԳօնգլաւվն, զսմանէ խօսին, և զսմանէ պատմեն, և զսա հաճեցուցանել խորհին։ Բայց յուրախութենացն զորս յամենայն երեկոյի ի զանազան պալատս փոխնիփէչից առնեն և արարին (թէպէտ սկսեալ էին տասն աւուրբք յառաջ վասն կոանտուգային որ կայր ի Հռոմ իշխանք քաղաքիս առնել մեծամեծ չէնայս) սակայն ի գալ կայսերն, աճեցուցին յոյժ յոյժ, ոչ միայն զչէնայս և զգօնվէռսացիօնս, ամենայն պայծառութեամբ, և չքեղաշուք մեծութեամբ, այլ և զընդունելութիւնս արքունիս։ Ընդ բոլոր օրն չրջի ի տեսանել զհնութիւնս որ ի քաղաքիս, և ցերեկոյին հրաւիրի եղբարն ի պալատ փոխնիփէչից, ուր գիտաց և գերաժշտութիւնս երգոց և զզարմանալիս վայելեն. սակայն յայսմ ամենայնի զիւրեանց չերմեռանդութիւնն ոչ թողուն ի չինութիւն հռոմայեցւոց. ի չորս ժամու գիչերոյն դառնան նոքա ի տունս իւրեանց, ուր հռոմայեցիք մինչև ցուվն և ցինն ժամ գիչերոյն յամեն։ Երկիցս և երիցս խոստովանեցան և հաղորդեցան իբրև զայլ մարդիկս կալով ի մէջ ժողովրդեան, և ոտօք գնացին առ սուրբն պետրոս։ Անցոյց զանցոյց զամենեսումբք զօվէռսացիօնն զոր արար տօռիային, ուր ներկայացուցին և զսանն իւր առ կայսրն սանահայր, լի ակամբք պատուականօք...։

Գարտինալքն Գօնգլավին արարին նմա չնորհս ինչ որ ոչ երբէք յիչի արարեալ ումիք. զի յաւուրն երկրորդի գալստեան նորա յետ ճաշու ժամուն գիտաց եթէ մտանելոց էր ի Գօնլավն գարտինալ սփինօլան, եկն իսկոյն առ ի տեսանել զչէրէմօնիան, և եկաց առ դրան գօնգլավին, և իբրև տեսին զնա գարտինալքն, կալան զձեռանէ նորա և եղբօրն, և մուծին ի ներքս. և այս եղև ի խնդրոյ ալպանին և միլանէզ գարտինալաց և եկաց անդ ընդ գարտինալաց իբրու ժամ մի, և չրջեցաւ ընդ բոլոր Գօնգլավն, բազում ուրախութեամբ իւրով, և գարտինալացն. ի մէջ անբաւ զարմանալի զրուցաց ասացելոց անդ, է և այս, զի երբ ալպանն ասացեալ է, տեսեալ գոլ զբազում Գօնգլավս, և Գօնգլավն վասն լամպէրթինին տեսեալ գոլ վեց ամիս, նա պատասխանեալ է ներկայութեամբ ամե-

նեցուն. ոչ լինէր ծանր կալն նաև տարի մի ամբողջ, միայն գոցի այլ ոճի լամպէրթին, որ ընդ իշխանս քրիստոնէից վարեցաւ խաղաղութեամբ:

Ցիրաւի ափշեցոյց զՀոօմ իւրով իմաստութեամբն և խոնարհամտութեամբն և ընտանեկան կենցաղավարութեամբն, և ի վեր քան զամենայն իւրով պարզամիտ ջերմեռանդութեամբն: Ուստի ոչ յագին հոօմայեցիք օր ըստ օրէ գովաբանելոյ զնա, մանաւանդ խորհին առնել նմա պատիւս նորոգս և զարմանալիս: Ցետ զատկիս պատրաստեցին ի պատիւ նորա լուսաւորիչ զկաթողիկէն սրբոյն պետրոսի, և ի բերդն առնել հրաձգութիւնս պէսպէս, ամբարձաձիգ և օդաթռիչ փամփշտովք, և ապա երկուս աւուրս ձիարշաւութիւնս կատարել ի Գօռսն, իբրև ի բարեկենդանի. և ի մեծի պատրաստութեան է վենէտիկու էլչին առնել հրապարակական ֆէստին մի ի պատիւ նորա: Ջնոյն և գօռսին և պռաչանն և այլք:... Եթէ ոք կամիցի պատմել զարարս նորա որ ի Հոօմ, և ի ճանապարհի զհաւատս գրոց պարտ է լնուլ. ուստի ձանձրոյթ լինի գրողին և լսողին:...

Լուր ինչ ի գօնգլավէն ոչ գոյ. բայց միայն զայս ասեն առ հասարակ թէ արդէն զպապն ընտրեալ են, սակայն սպասեն գալստեան այլոց գարտինալաց, այսինքն է երկուց սպանեօլից և երկուց նէմցէից և նմանեաց, առ ի հրատարակել և հաւանութեամբ նոցա. և այն է գարտինալ ստօփանին, բայց զնշմարիտն ոչ ոք գիտէ:...

Խոնարհագոյն և անարժան ծառայ
Հ. Գէորգ [Պաղտասարեան]

Գրեցաւ ի Հոօմ 1769
ի մարտի 25

ՄՁԶ.

Գ.

Վերապատուելի Տեառն Տեառն Հ. Միքիթիչ վարդապետին
կարօտիւ սիրոյ ողջոյն

... Խմփէռաթօռն տակաւին ի նէապօլիս է, և կռանտուգան ի վաղուց գնաց ի Ֆիրէնցայ: Տօրիան արար ֆէստին մի որ ոչ էր եղեալ ի Հոօմ երբէք նմանն, վասն զի ի մէջ երից աւուրց գքառակուսի բակն փալացին իւրոյ ղէպ ի գօռսն որ չուրչանակի ունէր զկալարիայն, բազմութեամբ գերանաց անդ անտառասարաս տնկեցելոց և հաստատեցելոց, հաւասարեաց յատակի փալացին, և բացեալ դրունս ի կալարիայէն միացոյց զբակն ընդ փալացին և յօրինեաց զնա իբրև մեծ ինչ սալայ, զոր զարդարեալ խսկոյն հայելեօք, և գունագոյն երանգօք և նկարօք և մետաքսեայ զարդուք և ածոտովք, արար տեղի պարելոյ և ֆէստինի, յորում ի չորս անկիւնսն բարձրացոյց և տեղի երաժշտաց, միագոյն հանդերձիւ զարդարելոց. թող զայլ ամենայն սպասսն և զպատրաստութիւնս, ուր աքանչացոյց զամենայն օտարս և զեկս: Այսու յաղթեաց մեծութեան ֆէստինի այլոց հոօմայեցւոց և վենէտիկու էլչուն: Գօնգլավէն նոր ինչ լուր ոչ գոյ, բայց եթէ լսի թէ չփոթութիւն մեծ կայ ի մէջ Գարտինալացն մերոց և ֆրանսայու:...

Խոնարհագոյն ծառայ
Հ. Գէորգ վարդապետ անարժան

Գրեցաւ ի Հոօմ 1769
ի յապրիլի 8.ին

ՄՁԷ.

կղեմէս ԺԴ.ի Քահանայապետական ընտրութեան և անոր հրատարակութեան լուրը կը տրուի:

Վ[ե]րապատուելի Տ[ե]ռաք Տ[ե]ռաք Հ. Մկրտիչ վրդ.ին
կարօտիւ սիրոյ ողջոյն

Շնորհօք սուրբ հոգւոյն և աղօթիւք արժանաւորաց՝ աւանիկ խաղաղութեամբ և միաբան ընտրութեամբ, յերեկոյի հինգշաբաթի յորում լուսանայր ուրբաթն, տարածեցաւ ընդ ամենայն քաղաքն թէ Միաբանեալ է մեծ մասն զարտինալաց առնել զպապն, ուստի և յառաւօտուն իսկ և իսկ, ի 20 մայիսի, ի հնգետասան ժամու աւուրն, յորում ներկայ գտայ և ես, աւետիս ընկալաւ ամենայն ժողովուրդն Հռօմայեցւոց, թէ ունիմք մեք զսբբազան պապ, զգարտինալն կանկանէլլի, ի չորեքտասաներորդ կղէմէս Պապ. անդ էր ուրախութիւն տիեզերական, մանաւանդ առաջինն եղև որ ի պատուհանէն ծափ զծափի հարկանէր գարտինալ ոէծծօնիգօն զարմացմամբ ամենեցուն։ Ուրեմն յետ ճաշուն իսկոյն իջուցին աֆոռով և վիվայով ի սուրբն պետրոս, և արարին զմեծ հանդէս երկրպագութեան Գարտինալաց. որում երիցս արարին ըստ կանոնաց զերկրպագութիւնն, ոտից նորա և ձեռաց նորա. և ապա գրկախառն համբոյր տալով։ Այսօր նա ինքն սկիզբն արար գրել թուղթս ձեռամբ իւրով ամենայն թագաւորաց երկրբիացւոց։...

Դրեցաւ ի Հռօմ 1769
ի մայիսի 21

Անարժան ծառայ
Հ. Գէորգ

ՄՋԸ.

Ս. Ղազար առաքուած Նարեկի օրինակի մը բաղդատական ուսումնասիրութեան մասին կը խօսուի նախ։

Երկրորդ մասով կը ստանանք շատ օգտակար և հետաքրքրական ծանօթութիւն մը «սրտի դպրոցի անկում» կոչուած հիւանդութեան մը և անոր ժողովրդական բժշկութեան մասին, որ ասկէ գրեթէ մէկուկէս դար առաջ ի գործ կը դրուի եղեր։ Տեղեկութիւն մը՝ որ յատկապէս պիտի շահագրգռէ ընդհանուր բժշկական գիտութիւնը։

Գերաւեծար գերյարգելի Աբրայ հօր վերոյ և բարեւնապետի
տեառն տեառն Յակիւանեոս վարդապետի, ողջոյն

Թղթ. ձԼ.

... Առաքեցի զմի նարեկ ի վանս, զոր ետ անտուն եղբայրս։ Եւ թէ վասն էր, ծանիք, քանզի մուրազոլու Գասպար սաւաքին ասացեալ է անտուն եղբօրս, թէ ի սուրբն կարապետին վանքն կայ հնագոյն ձեռագիր նարեկ, զորմէ ասեն լինել ձեռագիրն նոյն սրբոյն։ Եւ ես առաքեցի անդր զմի նարեկ տալագրեալ, և զտարբերութիւնսն նշանեցին անդէն, և առաքեցին առ իս։ Կայ ևս նոյնպէս հնագոյն ձեռագիր մի յէջմիածին, որոյ և զտարբերութիւնսն տալոց եմ բերել։ Արդ՝ որպէս կարծեմ, կայ և ի վանքն աբբայ հօրն լաւ ձեռագիր նարեկ, և կայ իսկ. և խնդրեմ ի քէն զի և դու զտարբերութիւնսն նորա տացես բերել ինձ։ Իսկ անտուն եղբայրս՝ չկարելով բացասել այնպիսի երևելի առն յազգի մերում, խոստացեալ է կատարել զայն։ Վասն որոյ էառ զնարեկ մի անկազմ. և ազա չեաց զմեզ առաքել ի վանս, և բաղդատել ընդ ձեռագրին և զտարբերութիւնսն նշանել ի տալագրեալն. և ապա զնոյն տալագրեալ նարեկն, անդրէն առաքել յետս առ մեզ։ Եւ մեք զայն նարեկն առաքեցաք ի վանս, զի եթէ հնար է, կատարեսջիք զխնդիրսն նոցա։ Բայց յորժամ բաղդատեալ և կատարեալ զամենայն, և գեղեցիկ կազմեալ դնիցէք ի նաւն, փութով մեզ ծանուցէք, որպէս զի յառաջ քան զտալն մեր նոցա զնարեկն, պատճառ իւիք խնդրեալ ի նոցանէ, առցուք և մեք զօրինակն նարեկայ որ ի սուրբ կարապետին։...

թէ որպէս ուղղեն զանկեալ դրգալն սրտին, այսչափ ինչ կարեմ գրել: Ումանք հաւատան այսմ, և ումանք ոչ հաւատան: Ումանք ի չհաւատացողացն հաւատացին ի փորձն: Ումանք ի հաւատացողացն զարհուրին ի տեսանելն զուղղելն. քանզի ուղղիչքն դրգալին սրտին ոչ դեղ տան և ոչ դեղ գիտեն, բայց միայն թէ զկնի ուղղելոյն, դնեն եախը անդէն զի պնտեալ մի ևս անկցի: Իսկ ուղղելն՝ այսպէս առնեն. նախ մատամբն նայի և քննէ զկուրծն. և ճանաչէ զանկեալն, զի տեսանէ զոսկրն ի ներքս մխեալ, և ապա՝ որպիսի և իցէ իւղով չփէ սակաւ ինչ զկուրծն. և ապա ի թիկանցն երկու ձեռօքն ի վեր ուղղէ զկուրծն երկիցս և երիցս. երբե[մ]ն և սաստիկ զանձն նորա. և ահա ուղղեցաւ գրգալն: Եթէ պիտոյ է, և զքամակն չփէ. այսպէս առնէ երեք օր անօթի փորանց: Ումանք ի տգիտացն զայն տեսեալ, արարին ոմանց. բայց ձնասեցին: Իսկ գիտունքն բժշկեցին զոմանս: Նշան անկման դրգալին՝ նմանին նշանաց օստոուքցիօնին. քանզի որոյ դրգալն սրտին անկեալ է, երբե[մ]ն երբե[մ]ն սրսռայ ի թիկանցն. կերեալ կերակուրն ետայ ի սրտին իբրև զքար կամ իբրև զցից. երբեմն բսխէ: Ինքն ևս իմանայ զի ի սիրտն մտանէ իբր թէ ոսկր ինչ: Օրըստօրէ նիհարանայ. դեղք բժշկաց ոչ օգնեն նմա: Զայսոսիկ գրեցի հարևանցի զի ոչ գիտեմ զիսկն և ոչ զարուեստն, զի ըստ այնմ գրեցից մի ըստ միոջէ զուղիղն: Պատճառք անկման դրգալին սրտին այս են. զի անկանի երբե[մ]ն յամբառնալոյ զծանրագոյն ինչ. երբե[մ]ն ի ձկտմանէ ի վեր. երբե[մ]ն յանկմանէ վերուստ ի վայր: Երբեմն ևս ի յօրանջմանէ անկանի. զոր օր. անկանի աղիքն կամ պորտն մարդոյն: Դեռ ոչ կարեմ գրել աւելի քան զայս:

Ի կողմանէ քաղաքիս, երբե[մ]ն և ցանցառակի պատահին նուազ երկրաշարժութիւնք: Մինչև ցայսօր լուաք զերիս կամ զչորս անձինս մեռանիլ ի ժանտամահէ:...

Ցամին 1769 ի յուլիս 1
ի Ղալաթիա

Ն. Ա. Հ. Յակոբոս վրդպ. Ջամչեանց
Մխիթարեան

ՄՋԹ.

Երեք Մխիթարեան վարդապետներ որ Հնդկաստան կ՝ուղևորին՝ Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքին և Ազրիի վրայօք տեղագրական ծանօթութիւններով իրենց տպաւորութիւնները կը գրեն:

Գերապատիւ աբբահօր վերուստ տեառն Ղուկասիանոսի բարեհաճական ձարտուրիւ ազգի՝ ողջոյն ի Քրիստոս

... Այս քաղաք [Ալեքսանդրիա Եգիպտոսի] հեռի է ի մսրայ չորից աւուրց ճանապարհաւ, յոր գնան նաւակաւ ընդ գետ. դիրք քաղաքին տափականիստ է, և ծովեզերեայ. ունի զերկու նաւահանգիստ, մինն, որ հին կոչի, է տաճկաց, յորում են մեծամեծ նաւքն մսրայ. իսկ միւսն ի քրիստոնէից. յորում ի մտանել մեր անդ, էին իբրև 25 նաւք, բայց հասարակօրէն լինին իբր 50 կամ 60 և աւելի ևս. ցորչափ անդ էաք, յաւուրն մի կամ երկու, և երբեմն հինգ նաւք մտանէին անդ. չինուածք քաղաքին գրեթէ առ հասարակ բարձր են և յանուաշ քարանց. և ունին զառանիս. են ի նմա բազում յայնք և հրէայք: Այրք քաղաքին են թխադէմք, և ըստ որում տեսաք, ոչ ունին առնեն զչար, այլ մանաւանդ մարդասիրութիւն ցուցանեն. և եթէ ակն ունին ընդունել յումեքէ զբարերարութիւն, առնեայն սիրով իբրև ստուկ ծառայեն: Այն է չերմ քան զվենետկոյ, մինչև յամեանն մայիսի զառանիլ անդ ձմերուկ. սակայն յամառան հանապազ շնչէ հողմն հիւսիսային արևմտեան, որով զովանայ օդն...: Այս քաղաք [Ազրի] ծովեզերեայ է. և ունի հանդէպ իւր ի կողմն հարաւոյ զկառն կարմրեղոս, որ ձևացուցանէ գնաւահանգիստ քաղաքին, յորում ի մտանել մեր անդ, էին երեք նաւք փռանկաց, մին ինկիլիզի, և երկուքն փռանսըզի:

Ունի քաղաքն զպարիսպ և զբերդ՝ չինեալ ի վաղ ժամանակաց, և այժմ ըստ մասին քայքայեալ։ Շինուածք են ի քարանց, և են իբրև զչինուածս բերդից։ Են ի նմա չորս եկեղեցիք. մին ֆրանչիսկեանց, միւսն մաոնուց, երրորդն հերձուածող յունաց, իսկ չորրորդն ուղղափառ յունաց, զոր նորոգ չինեալ էր իշխան քաղաքին Խօճայ Իլրահիմն՝ ծախեալ ի չինութիւն նորա իբրև զվաւասուն քէսէ. որոց և յաւակն է ի մարմարիոնայ քարանց, զոր գտեալ են ի պեղելն զերկիր. այս եկեղեցի յառաջագոյն ամ ըստ ամէ տայր չէխին հինգ հարիւր դահեկան. իսկ ամօք ինչ յառաջ առաջնորդն հերձուածող յունաց խոստացեալ է չէխին, թէ տաց քեզ ամ ըստ ամէ հազար դահեկան, եթէ զեկեղեցին ուղղափառաց տացես ինձ. իսկ չէխն ասացեալ է նմա. ոչ այդպէս. այլ դու և նա ևս տաջիք ամ ըստ ամէ հազար դահեկան, և իւրաքանչիւրն կալցէ զիւր եկեղեցի. ապա յայնմ հետէ երկոքին ևս տան հազար դահեկան։ Զայս լուեալ պատրիարգին կոստանդնուպօլսոյ՝ նզովեալ է զառաջնորդն հակառակօղ, և յաքսորս առաքեալ, յորում և մեռեալ է ի նզովս։ Բնակիչք քաղաքին ըստ մեծի մասին են ուղղափառ յոյնք. իսկ ի միացելոց՝ ոմանք են մաոնիթք, և ոմանք յոյնք հերձուածողք. իսկ տաճիկք արաբացիք սակաւ են և յանարգ գործս պարապեալ. են ևս ոմանք ի հայոց աղքատք. և սոքա ամենեքին առ հասարակ խօսին արաբացւոց լեզուաւ. և ամենեքին սարբխլը են մեծամեծ սարբխով, և ոչ են թխադէմք իբրև զաղէքսանդրացիս։ Եկեղեցականք տեղւոյն ոչ տան զխարաճ։ Իշխան քաղաքին չէխ է. և է իբրև թէ ընդ իշխանութեամբ փաշային սէրտեյի, որ է սիդոն, զի տայ նմա հարկս։ Ինքն գրեթէ ոչինչ առնէ ի քաղաքին. այլ փոխան իւր կացուցեալ է ի վերայ քրիստոնէից զբարերարն մեր։ Ող քաղաքին ջերմ է գրեթէ ըստ ջերմութեան օդոյն աղէքսանդրիոյ...,

Ի յագրի ի 3 յուլիսի 1769 — Ղուաստ ծառայ Հայր Մանուէլ [Խմիւրզէ], Հայր Սուքէաս [Ադամալեանց] և Հայր Մխայէլ [Ջամչեան]

ՄՂ.

Վերոյիշեալ նամակագիրները այս անգամ ընդարձակ թղթով մը կը նկարագրեն Մարոնիտ կուսաստանի մը տուած իրենց այցելութիւնը և հոն ունեցած իրենց առանձին տեսակցութիւնը համբաւաւոր սրբակեաց կուսանի մը հետ, որ և Աստուծմէ յայտնութիւններ ու տեսիլներ կ'ընդունի եղեր. անոր շուրջ կը պատմեն նաև սքանչելիքներ։

Կը տեղեկագրեն նաև Լիբանանու Անտոնեաններէն իրենց եղած հիւրասիրութիւնը։

Գերյարգելի Աբբահօր վերաւոր Տէտան Տէտան Յովհաննէսի բարեհնասկահի հանուարհական համբուրիւ ափոյն՝ ողջոյն

... Ապ՝ յետ կալոյ մեր ի պերութ աւուրս երկուս, եկն ի լեռնէ անտի ի վանացն կրօնաւորաց եղբայր ոմն ընդ Ջրեպանի վանացն, և հանդերձեալ էր յերկրորդում աւուր դառնալ անդրէն, վասն որոյ կալաք զէշս ի վարձու հնգետասան փարայիս, և գնացաք ընդ նոսա ի լեառն։ Ցանցանել մեր ընդ լերինսն՝ տեսաք վանորայս բազումս կրօնաւորաց և կուսանաց և զբազում եկեղեցիս, զոյին անդ և վանք մի փրանկիսկանաց և վանք մի յիսուսեանց։ Եւ առ ճանապարհաւն ընդ որ մեք անցանէաք էր վանքն մաոնիթ կուսանաց յորում է կոյսն այն՝ զորոյ սրբութենէն բազում ինչ լուեալ էաք այդր ի մաոնիթ վաճառականէն. և խոտորեցաք անդ տեսանել զնա և օրհնել ի նմանէ մեք երեքեանս և եղբայրն այն. իսկ Ջրեպանն յառաջ էանց և գնաց։ Իբրև տեսին զմեզ կրօնաւորքն որք անդ արտաքոյ վանացն ունէին բնակութիւն, առեալ տարան զմեզ առ եպիսկոպոսն վերակացու և խոստովանահայր կուսանացն։ Որոյ տեսեալ զմեզ՝ և հարցեալ թէ ուստի՞ էք,

բազում մարդասիրութեամբ ընկալաւ զմեզ. զի լուեալ էր զվանաց մերոց. և էր ինքն այր ճգնազգեաց և քաղաքավար յոյժ։ Եւ ի խնդրել մեր ցուցանել մեզ զկոյսն, ասէ. քառասուն օր է յորմէ հետէ անկեալ դնիւր ի մահիճս, և փոքր միւս ևս մեռանէր. և այժմ փոքր մի առողջացաւ. արդ՝ տեսից եթէ հնար է՝ ցուցից ձեզ այսօր։ Եւ յետ պահս ինչ խօսելոյ ընդ մեզ՝ առեալ տարաւ զմեզ ի սենեակ մի, յորում պատրաստեալ էր սեղան, զի ժամ էր ճաշու. էր անդ և այլ ոմն եպիսկոպոս, ընդ որոց բազմեցաք ի սեղան։ Իբրև ուտեաք, էառ եպիսկոպոսն այն խոստովանահայր կուսանացն բաժակ ի ձեռին, և էարբ վասն կենաց գերյարգութեանդ։ Ցետ սեղանոյն գնացեալ եպիսկոպոսին առ կոյսն՝ եկն և ասէ. թողութիւն արարէք, զի տկար է յոյժ կոյսն և ոչ կարէ երևիլ այսօր։ Եկայք այսր ի դառնալ ձերում յաւուր շաբաթու. և յուսամ զի կարէք տեսանել։ Եւ ելեալ մեր անտի հասաք ի վանս կրօնաւորացն հայոց ի մտանել արևուն բազում աչխատանօք ընդ ճանապարհն զառ ի վեր և առապար։ Եւ ել ընդառաջ մեր մեծաւոր վանացն հանդերձ ամենայն կրօնաւորօքն. և ի տեսանել զմեզ՝ ասէ. մեծամեծս լուեալ եմ զձէնջ և բազմաց ամաց հետէ ցանկայի տեսանել զոմանս ի ձէնջ. և արդ՝ ելից Աստուած այսօր զփափագ իմ։ Ընկալաւ զմեզ բազում սիրով և եցոյց մեզ բազում մեծարանս առաւել քան զոր ակն ունէաք. և էր ինքն այր ճգնազգեաց՝ պարզամիտ՝ և խոնարհ յոյժ. բազում անգամ տգէտ զանձն խոստովանէր առաջի մեր, և ողբայր յաղագս պակասութեանց կրօնի իւրեանց, մանաւանդ յաղագս տգիտութեան և յաղագս չքաւորութեան։ Ցրտնջէին ևս զհայր գրիգորէն իւրեանց որ ի Հռոմ, եթէ ծախեաց ի զուր դրամս բազումս, և պատճառ եղև ցրուելոյ մերոյ։ Այլ և որպէս լուաք յայլոց, յոյժ ճնշէին զնոսա եպիսկոպոսունք իւրեանց, վասն զառանելոյ սոցա ի նոցանէ, զի յառաջագոյն էին ի միասին. և թէպէտ այժմ կամին կրօնաւորքն միանալ ընդ նոսա, բայց նոքա ոչ յանձն առնուն։ Արդ՝ ննջեցաք անդ զայն գիշեր. և յառաւօտու մատուցեալ անդ պատարագ՝ կամէաք ելանել ի վանս կաթուղիկոսին. բայց ոչ եթող մեծաւորն, այլ բռնադատեաց ի ճաշ։ Եւ յետ ճաշուն ելեալ գնացաք, առեալ ընդ մեզ զքօլէճցի Հ. Պետրոսն։ Եւ իբրև հասաք ի վանս անդ բազում աչխատութեամբ՝ որ չինեալ էր ի զագաթ բարձրագոյն լերին, և յանդիման եղաք առաջի կաթուղիկոսին, զարմացաւ յոյժ ընդ անակնկալ գալուստ մեր։ Եւ յետ պատմելոյ մերոյ թէ որպէս եղև մեզ դիպել ի կողմանս յայնոսիկ. և յետ բազում ինչ քաղցրութեամբ խօսելոյ նորա ընդ մեզ, արար մեզ ընթրիս, և կերաք ընդ նմա։ Եւ յետ ընթրեացն իբրև կամեցաք հրաժարիլ, բռնադատեաց կալ ևս անդ գոնէ մինչև ի վաղիւն. և յոչ կամիլն մեր՝ արձակեաց բազում օրհնութեամբ։ Իջեալ մեր անտի յայնմ երեկոյի ի վանս կրօնաւորացն՝ և ննջեալ անդ դարձեալ զայն գիշեր, յառաւօտու յարուցեալ հրաժարեցաք ի նոցանէ. և մեծաւորն գրեթէ լալով արձակեաց մեզ. զի փափագէր կալ մեզ անդ աւուրս ինչ։ Ի դառնալ մերում չոգաք ի վանս կուսանացն. և տեսաք զի զբաղեալ էր յոյժ եպիսկոպոսն. քանզի յայնմ աւուր հանդերձեալ էր գալ անդ պատրիարգն նոցա։ Բայց քանզի անդ էր կրօնաւոր ոմն յիսուսեան հալէպցի եղբայր կուսին այնորիկ, որ և տեսեալ էր զմեզ յառաջնում աւուր և գիտակ էր խոստման եպիսկոպոսին, գնացեալ խօսեցաւ ընդ եպիսկոպոսին, և տարեալ զմեզ ի խօսարանն՝ ազդ արար գալ կուսին, որոյ եկեալ և կացեալ յետոյ վանդակին՝ ծունր եդ ի տեսանել զմեզ, և սկսաւ մեզմ ձայնիւ խօսիլ արտասուց բարբառով։ Եւ ի խնդրել մեր խօսիլ առ մեզ բանս զհոգևոր իրաց, խօսեցաւ բանս սքանչելիս և առածս զարմանալիս որք զսրբութիւն նորա գուշակէին. և որպէս լուաք յեպիսկոպոսէն, բազում յայտնութիւնս և տեսիլս ընդունի յԱստուծոյ, և խօսի բանս մեծամեծս զոր մեծամեծ աստուածաբանից միայն է խօսիլ, ըստ օրինակի կուսին զորոյ զվարսն պատմէր մեզ Գերյարգութիւնդ։ Պատմեցաք նմա վասն վանացն մերոց և վասն Գերյարգութեանդ, այլ և վասն Վ. Հ. Մատթէոսին։ Եւ նորա լուեալ խնդրեաց օրհնութիւն ի Գերյարգութենէդ, և ազօթս ի միաբանութենէ մերմէ, և մասնաւորապէս և Վ. Հ. Մատթէոսէն։ Գրեաց և թուղթ մի առ Գերյարգութիւնդ արաբացւոց բարբառով ի ձեռն գրագրի. զի կացեալ նորա յետոյ վանդակին՝ ասէր, և գրագիրն առ մեզ նստեալ՝ գրէր, զոր առաքեցաք ընդ այսմ թղթի։ Լուաք ևս զի ունէր նա յառաջագոյն ի մարմնի իւրում զվէրս. և ազօթիւք նորա տպաւորեալ էր Աստուած զայնս ի կոյս մի պարզամիտ

յայնմ մենաստանի, որ էր դուստր տիւրզէի։ Խնդրեցաք և զնա տեսանել. զոր գնացեալ կոչեցին. և կացուցեալ յետոյ վանդակին՝ բացին զձեռս նորա, որք կապեալ էին կտաւով. և տեսաք վէրս ի ձեռս նորա հանդերձ չորացեալ արեամբ։ Սակայն նա ոչ գիտէ զպատճառս վիրացն այնոցիկ, այլ կարծէ եթէ ցաւ է բնական. իսկ և այլք ոչ պատմեն նմա վասն նորա պարզմտութեանն և մանկութեան. այլ յորժամ կոչեն զնա ի ցուցանել այլոյ, եթէ քահանայք են կամ կրօնաւորք, ասեն ցնա. երթ առ նոսա, զի արասցեն աղօթս ի վերայ քո, և բժշկեսցիս ի վիրաց քոց։ Իսկ եթէ են աշխարհականք, ասեն. եկեալ են որք որք գիտեն զբժշկութիւն, երթ առ նոսա, և ցոյց զվէրսդ, զի թերևս տացեն սպեղանիս և բժշկեսցիս։ Ցետ խօսելոյ մեր ընդ կուսին՝ իբրև կամեցաք հրաժարիլ, բռնադատեցին ի ճաշ, և ապա արձակեցին։...

Ցամի տեառն, 1769 յօգոստոսի 22
ի Հալէպ

Նուաստ ծառայք
Հ. Մանուէլ, Հ. Սուքիաս և Հ. Միքայէլ

ՄՂԱ.

Ներկայ վաւերագրէն կ՝իմացուի որ Հայ գաղթականութեան հիմը կը դրուի ի Թրիեստ ճիշդ այս թուականիս, յորում հայասէր կայսրուհին Մարիամ Թերեզա անուղղակի հրաւէր և դիւրութիւն կու տայ հայոց՝ գալու բնակելու Հոն։ Ճիշդ այդ վախճանին համար է որ ան նախապէս կը հաստատէ մեր նամակագիրը իբր Թրիեստ քաղաքի հայ քահանայ։

Գերյարգելի Տէառն Տէառն Յովհաննոսի վեծի վարդապետի
և արժանաւոր Հրոյշի խնդալ ի տէր

... կայսերուհին ազատ կացոյց զքաղաքն Դրիէսդէին վասն բազմամարդ առնելոյ զնա, այսպէս առ այս վախճան խորհեցաւ հաստատել ի Դրիէսդէ և զհայ քահանայ մի, զի զուցէ եթէ իցեն յազգէն հայոց, որք կամիցին գալ, և բնակիչ լինել ի Դրիէսդէ, վասն պակասութեան քահանային մի արգելցին ի գալոյ. վասն այսորիկ ահա առաքեաց զիս ի Դրիէսդէ տալով ինձ զերկու հարիւր ֆիօրինս եկամուտ յամին բացի ողորմութենէ պատարագին մինչև զերիս ամս. զի տեսանելով, թէ յաճախիցին հայք ի գալ ի Դրիէսդէ ի մէջ այսչափ ժամանակիս, ունիցիմ միշտ զայն երկու հարիւր, կամ աւելի ևս եկամուտն։ Արդ տեսանելով Գերյարգելութեան ձերոյ զհաստատութիւն աստ հաց մի մշտնջենական քահանայի միոյ մերոյ գալստեամբ ազգայնոց ի Դրիէսդէ, հաճեսցի ուրեմն աղաչեմ ըստ նախանձու բարեաց իւրոց օգնել առ այս, և գրել յարևելս առ միաբանս Գերյարգելութեան ձերոյ, զի յորդորեսցեն զմերայինս առ ի գալ, և հան[գ]չիլ ի Դրիէսդէ ցուցանելով նոցա զազատութիւնն, զպատշաճաւորութիւնն վաճառականութեան և զդիւրագին ապրուստն տեղւոյն, ունելով և զմխիթարութիւնն իւրեանց հոգևոր որչափ ևս ապրիցիմ. և յետ մեռանելոյն իմոյ կարեն ապահով լինիլ մերայինքն ունիլ ի քահանայ իւրեանց ոմն ի միաբանից Գերյարգելութեան ձերոյ՝ ծանուցանելով իմ՝ ի ժամանակի իւրում դրանն կայսերական զարդիւնս վանականաց Գերյարգելութեան ձերոյ ի յղել զհայս աստ՝ և զարժանաւորութիւն լինելոյ ի ձմերայնոց աստ՝ ի քահանայ հայոց։...

Նուաստ ծառայ Ցօհաննէս արիման
քահանայ անարժան

1769 ի սեպտեմբերի 12
ի Դրիէսդէ

ՄՂԲ.

Այս վաւերագրին մէջ յատկապէս դիտելի է Մխիթարայ մեծութեան և իր Միաբանութեան ծրագրին ուղղութեան գովքը յօգուտ Եկեղեցւոյ և Ազգիս։

Բաց աստի՝ հոս կը յիշատակուին Սոյն Հայ կաթողիկոսէն տրուած հրահանգներուն ազգային ընդհանրները՝ իրենց պարագաներով։

Գերյարգելի արբանօր մերոյ տեառն տեառն Պետիանեանոս բարեւնապետի հաւատարիմ աչօյն ողջոյն ի Քրիստոս

... Ուղղափառ ոմն ի յունաց ազգէ՝ սակաւ ինչ վարժեալ յաստուածաբանական իմաստս՝ յետ խօսելոյ ընդ մեզ տաճկերէն ի վերայ նուրբ ինչ խնդրոց աստուածաբանութեան, և ընդունելոյ զլուծումն տարակուսանաց, բազում անգամ երանի ետ, և ասէ, զլոյս պայծառ և անչէջանելի ծագեալ է ազգիդ, հայոց բարեւնապետն Մխիթար. իսկ սոքա [Լիբանանցիք] այժմ ոչ կամին լուսաւորել, այլ ցանկան մնալ ի խաւարին տգիտութեան իւրեանց։ Եւ այն ոմն յուղղափառ յունաց, որ իբրև թէ սիրահարեալ է ի վերայ մեր, վարժ ի փիլիսոփայութեան, այր խորհրդական և երևելի յիմաստս գիտութեան, յետ խօսելոյ ընդ մեզ բազում անգամ, յաւուր միում ասէ, պարզև մեծ շնորհեալ է Աստուած ազգիդ ձերոյ, զոր եթէ թողցեն ելանել ի ձեռաց իւրեանց, արհամարհեն զշնորհսն Աստուծոյ։ Պատուի քահանայ մի զարմացեալ ի վերայ... նոցա, ասէ, այժմ կարօտ են նոքա ուսուցանողական անձանց. և զիա՞րդ այսպէս վարին ընդ ձեզ։ Եւ ոմանք ևս ասեն. յանկան ուղղափառ հայք առնուլ զմի յեկեղեցեացն հայոց, և զիա՞րդ թողուն զձեզ, որովհետև ինքեանք ոչ գիտեն՝ ոչ զլեզու և ոչ զերգս հայոց։... Պատճառ զալստեան կաթուղիկոսին [Սոյ] ի Հալէպ՝ այս է, զի յերկուտասան ամաց հետէ երեք վարդապետք յաւիշտակեալ ի միմեանց զառաջնորդութիւն հալպոյ, բազում խռովութիւնս յարուցեալ են ի քաղաքիս. և մին ի նոցանէ, որում անուն է գաբրիէլ վրդպ. որ առաւել քան զայլս կալեալ զառաջնորդութիւն, բազում ամս ոչ է առաքեալ զտարեկան հասոյթս առ կաթուղիկոսն սըսոյ. վասն որոյ յանցեալ ամի եկեալ կաթուղիկոսն ալքունի հրովարտակաւ ի հալէպ, ընկեցեալ է զնա յառաջնորդութենէ։ Եւ ինքն մինչև ցայժմ նստեալ է ի քաղաքիս պատճառաւ ժողովելոյ և վճարելոյ զպարտս ժամու, քանզի ժամն հայոց պարտական է քսան քէսէ. և ազգն ևս պարտական է քսան քէսէ, զոր արկեալ է ի վերայ նոցա գաբրիէլ վրդ.ն ի պատճառ հալածանաց, զոր յարուցեալ է ի ժամանակին, յորում դարձեալ են յուղղափառութիւն երեք քահանայք և մի ևս սարկաւագ։ Արդ կաթուղիկոսն ժողովեալ իբրև 18 քէսէ յաղքատ ժողովրդենէ վասն վճարելոյ զպարտս ժամուն, յինքն է զրաւեալ զամենայն, զոր և առաքեալ է լո[ւ]մայափոխութեամբ յայլ քաղաք. և այսու ևս ոչ չառացեալ չաբաթ ի չաբաթէ պէսպէս պատճառ հնարեալ՝ զհետ է հաւաքելոյ զդրամս, որով և տագտակալի եղեալ է ամենայն ժողովրդեան, ոչ միայն վասն անյագաբար ժողովելոյն, այլ և վասն անկարգաբար խնդրելոյն, զի աւելի խնդրէ յանարգէն, և սակաւ ի մեծատանէն։ Ցիւրաքանչիւր ամսեան ասէ, թէ յետ ամսոյ միոյ գնամ, այլ չունի միտումն գնալոյ. ի միում կիւրակէի, որ էր սեպտեմբերի 10, հրաժարական ողջոյն ետ ժողովրդեան ի մէջ եկեղեցւոյ՝ առ ի ժողովել զծախս ճանապարհի. և յետոյ սկսաւ չինել տալ գաթոռ փառաւոր ոսկիապատ, զոր դնելոց է կամ յեկեղեցւոջ և կամ այլուր առ ի ժողովել զդին նորա. գաբրիէլ վարդապետն ընկեցեալ յաթոռոյ գնացեալ է ի կոստանդնուպոլիս. և ի ձեռն մուրաբօղլու քաստալ աղային ջանայ չարիս հասուցանել կաթուղիկոսին։ Իսկ զպարտս ազգին՝ ոչ գոյ որ վճարեսցէ. վասն որոյ և մեծ չփոթութիւն և տարակոյս է ի մէջ ազգին. և չեն ձեռնհաս դիւրութեամբ վճարել զիրսն։... Ցաւուր միում պարոն յովսէփն (նախ քան զհիւանդանալ իւր) ի խօսելն ընդ կաթուղիկոսին բանք

ինչ եղեալ են վասն միաբանութեան հայոց, իսկ կաթուղիկոսն նմա ասացեալ է. եթէ Թողեալ զԼեռնականսն [Իբանանցիք] լիցիս միայն ի կողմն վէնէտիկեցւոց, դիւրաւ մարթ է լինիլ. բայց ցորչափ ունիս զլեռնականսն, անհնար է: Իսկ պարոն Յովսէփն տայ պատասխանի, ունիմ զվէնէտիկեցիս, իսկ զլեռնականսն Թողուլ զինչ հարկ է, և այսու բանիւ խափանեալ է խօսքն:...

Ցամի տեառն 1769
ի սեպտեմբերի 22 ի Հալէպ

Նուաստ ծառայք
Հ. Մանուէլ, Հ. Սուքիաս և Հ. Միքայէլ

ՄՂԳ.

Մանր մունր լուրեր՝ ազգերու երկրատիրութեան հաշիւներու շուրջ:

Գերապատիւ Աբբայ Հօրն խնդում բազում խոնարհութեամբ և սիրով ողջոյն ի Քրիստոս Յիսուս

... երկրորդ օրինքն և սրտիքն հպարտացեալ յաղթութեամբ մոսկովին, պղտորութիւնս բազումս յարուցանեն, և զօրքն կայսեր ի յառաջել կուտեն. և կայսրն անձամբ վերստին մայիսի վեցին գալոց է ասա. և ասի յառաջել գնալոց. և նշան պատերազմի երևի ընդ մոսկովին, զի բազում չարիս հասոյց, քահանայից կրօնաւորաց և կուսանաց և եկեղեցեաց են. և տաճկին աւելի քան զմիլեօն քրիստեան գրամով տուաք և ասեն թէ այսու դաշամբ, զի դարձուսցէ զպէլգրադան առ կայսրն, նաև որչափ երկիր առեալ է մոսկովն ի տաճկէն, որք յառաջ կայսերն եղեալ էր թափեսցէ ի ձեռաց մոսկովին և իւր լիցի: Նաև ասեն թէ կայսրն զփեսայն իւր զբրինձ ալպերքին կամի թագաւորեեցուցանել ի լեհ. որովհետև է որդի թագաւորին լեհցւոց: Եւ եռապատիկ պատրաստութիւն է անօթոյց պատերազմի: Իսկ յաղագս այնորիկ թէ կոստանդնուպօլիս առցի, և թագաւորութիւն տաճկաց բարձցի, այս բնականաբար անհնարին է, զի ոչ ոք յինքնակալաց Թողու այսմ լինիլ... զի տակաւին աստի հեռի գոլով մոսկովն, այնչափ ամբարտաւանին, մինչև ասել ումանց, թէ գնէմցէն և զմաճառն մինչև ցստնդեայ մանուկն ի սուր սուսերի մաշել. և սմին իբր ի գիշերի ծննդեան սպառազինեալ գնացին յեկեղեցին ուղղափառքն, զի մի գուցէ ըստ ձայնիցն յանկարծակի կոտորեսցին ի նոցանէ. այս եղև ասա...:

Ցամի տեառն 1770
ապրիլի 26
[Պաչպալով?]

Նուաստ ծառայ
Հայր Կարապետ վրդ. Մխիթ. [Մարտիրոսեան]

ՄՂԴ.

Զանազան վայրերու մէջ գտնուած հայ ձեռագիրներու մասին օգտակար ծանօթութիւններ կու տայ Հ. Միք. Ջամչեան:

Գերյարգելի աբբահօր վերուստ տեառն տեառն Յակոբեանոս յաբեւնապատի համբուրիւ ողջոյն ողջոյն ի Քրիստոս

... Ա՛ռ պարոն անբանիսին աներոյ պարոն պօղոսին եղբօր պատ. Հ. Աստուածատուրին զտի գաւառարան մի երկաթագիր իբր 800 ամաց. և եառ զայն ովսաննայինն բերել ի վանս: Ա՛ռ պարոն աղասիին փեսայակցի մղտսի ստեփանին հօր պատ. Հ. Պե-

տրոսին գտի զմեկնութիւն Յովհաննու աւետարանին երկաթագիր 600 ամաց, զոր արարեալ է նանայի ասորւոց վարդապետի, և ապա թարգմանեալ ի հայս: Ես կարծէի թէ այն էր պարոն աղասիին, բայց այն է հէքիմ ծատուրին, զոր և ետ ինձ առաքել ի վանս, և ես ետու ովսաննային բերել ընդ իւր: Բաց յայսմանէ ետ ինձ հէքիմ ծատուրն գիտորդա-տետր մի ձեռագիր իբր 500 ամաց, բայց ոչ կամեցաւ առաքել զայն ի վանս, զի գուցէ (ասէ) գնացեալ իմ ի վանս՝ տաց զայն ձեռամբ իմով: Ի գնալն մեր ի լիբանան գտաք առ հայ կրօնաւորս զմեկնութիւն մատթէի աւետարանին ողջոյն անսխալագիր, զոր արա-րեալ է ներսէսի չնորհալւոյն. և այն էր գրեալ ի վաղուց: Բազում ականատեսք պատմեն, թէ բազում ձեռագիրք են ի վանս, որ ի լեառն պշնոյ յիրկրին երևանոյ, և ի լերինն աղբատոյ, և յայլևայլ տեղիս, մանաւանդ ի վանս ճուղայու: Այսեն բազումք թէ կաթո-ղիկոսն հայոց տպարան է բացեալ յէջմիածին՝ տպել զպատմագիրս հայոց, նաև զայլ գրեանս:...

Որպէս գրեալ եմ յայլ թուղթս եկն ի պասրա վարդապետ մի ի նախավկայի վանուց որ ի հին ճուղայ, և ժողովեալ աւելի քան զ400 թուման սաղտ փող՝ թող զայլ պէսպէս ոսկեղէն և արծաթեղէն զարդս, կամեցաւ գնալ ի ճուղայ նոր: Պարոն Յակոբանոսն ասաց ինձ, եթէ կամիս գրեա զգիր մի առ առաջնորդն ճուղայու առ միքաիլ վարդապետն, զի գտեալ ի ճուղայ զձեռագիր պատմագիրս առաքեսցէ մեզ. քանզի բազում պատմագիրք գտանին անդ: Եւ ես յանձն առեալ գրեցի զգիր մի խրթին յոյժ, զորոյ օրինակի առեալ պարոն ստեփաննոսն եցոյց միում ի հայոց՝ թէ զայս գտի ի հին ձեռագիրս: Իսկ նորա զարմացեալ ընդ խրթնութիւն նորա, ասէ՝ թէ զայս գիր գրեալ է նարեկացին, կամ այլ ոք ի նախնի հարց հայոց: Իբրև ասաց նմա պարոն ստեփաննոսն, թէ զայս գրեաց վար-դապետն մեր, ասէ, այս առաւել է քան զամենայն:... Բայց թուղթն ոչ գնաց ի ճուղայ, զի փոխեցաւ միաբք վարդապետին չերթալ ի ճուղայ...:

Ցամի տեառն 1770 ի մայիսի 11
ի Պասրա

Նուաստ ծառայ
Հ. Միքայէլ Զամչեանց

ՄՂԵ.

Կարևոր տեղեկագրութիւն մ՝է՝ Անտոնեան Միաբանութեան այս թուականիս մէջ անցուցած կեանքին շուրջ:

Դիրատպատիւ աբբահօր վերուստ տնառն տնառն Յակիմեանոս թարգմանչապետի հայրենւոյ ագոյն ողջոյն ի Քրիստոս

Ցաւուրս յայսոսիկ եկին երկու կրօնաւոր քահանայք ի լեռնէն լիբանանու. անուն մեծին անդրէաս, և անուն միւսոյն մատթէոս. սոքա եկեալ ի պասրա ի յունիսի 6 գնա-ցեալ էին առ կաւոնեղիոս եպիսկոպոսն: Իսկ նորա ազդ արարեալ ստեփան աղային ասէ, ես չունիմ սոցա տեղի, ուր դիցուք գնոսա. եթէ կամիս՝ իշցեն ի տան քում առ վար-դապետին: Եւ նորա առաքեալ զորդի իւր զաղայ պետրոսն առ եպիսկոպոսն՝ ասէ. նախ հարցուք զվարդապետն. եթէ հաճոյ իցէ նմա, գնասցեն անդ: Եւ աղայ պետրոսն (որ է ամաց չորեքտասաներից) առանց ծանուցանելոյ ինչ՝ առեալ եբեր գնոսա ի տուն իմ: Եւ ես բազում մարդասիրութեամբ ընկալայ գնոսա, և հանգուցի գնոսա՝ հոգացեալ զամենայն պիտոյս նոցա. և որ ինչ էր ի ձեռին իմում արարի նոցա և առնեմ ճշմարիտ և անկեղծ սիրով. և ետու ես նոցա զտասն պատարագիս...: Ցանուցին ինձ զվախճան գալստեան իւրեանց, այսինքն է ժողովել զդրամս ի պէտս վանացն իւրեանց, և ի վճարումն պարտուց իւրեանց: Հինգ ամօք յառաջ (ասաց Հ. Անդրէասն) ես, և հայր աբբահամն առաքեցաք ի մենաւորաց մերոց և ի կաթուղիկոսէն յայս վախճան. հայր աբբահամն գնացեալ ի հնդկաստան և ես յայլ կողմանս. և յետոյ առեալ ընդ իս զհայր մատթէոսն եկի ի պաղ-

տատ. և անտի ի սպահան, ի սպահանու ի շիրաս, և ի շիրասու աստ: Զայս ասացեալ եցոյց ինձ զգիրսն վկայականս, մինն ի մեծաւորէն Հռոմայ, երկրորդն ի մեծաւորէն լիբանանու (յորս գրի, թէ վասն շինելոյ մեր զվանս ի հռոմ՝ անկաք ընդ մեծամեծ պարտիւք. և դարձեալ գրի, թէ վասն աղքատութեան մերոյ՝ ոչ է մեզ հնար պարապիլ յիմաստութիւնս, վասն որոյ խնդրեմք յաստուածասիրացդ ողորմիլ մեզ ևն.): Երրորդն գիր օրհնութեան ի կաթուղիկոսէն... և չորրորդն է յընդհանրական քննչէ առաքելոյ ի պապէն ի լիբանան հինգ ամօք յառաջ վասն միաբանելոյ զերկու ուղղափառ կաթուղիկէ եպիսկոպոսունս հռոմոց՝ որ ի լիբանան. (իբր զի յընտրելն զկաթուղիկոս հռոմոց, ոմանք միումն հաւանանեալ, և ոմանք այլումն՝ բաժանեալ է կաթուղիկոսութիւն նոցա, և վասն այսորիկ առաքեալ է պապն զքննիչ յորոշել գիրսն): Սա գնացեալ ի լիբանան պատահի հայ կրօնաւորացն. և տեսեալ անդ զմանկունս ոմանս յուսումն պարապեալ, հարցանէ նոցա, թէ ուստի՞ է ապրուստն ձեր. և նոքա ասեն, ոչ ուստեք, բայց եթէ ի լերանց անտի, և այն սակաւ յոյժ՝ մինչ ոչ կարել լիով յուսումն պարապիլ: Եւ նորա խորհուրդ առեալ, ասէ, առաքեսջիք զոմանս յայլևայլ կողմանս աշխարհիս, որպէս մատռնիքն առնեն. և յուսամ թէ բազում ինչ կարէք ժողովել ի պիտոյս կարօտութեան ձերոյ ի դիւրութիւն ուսման: Յայսմանէ յորդորեալ նոցա առաքեալ են զհայրն աբրահամ ի հընդկաստան, և զհայրն անդրէաս յայլ կողմանս. և այժմ յայս կողմանս ևս ընդ հ. մատթէոսին: Զայսոսիկ լուեալ իմ ի նոցանէ, ես ևս զովեալ զյօժարութիւն նոցին, ուրախացայ ընդ նոսա, և խոստացայ ևս ձեռնտու լինիլ նոցա որչափ հնար է ինձ. և ամենայն սիրով ծառայել յօժարութեան նոցին...

Նուաստ ծառայ
Հ. Մկրտիչ Զամչեանց, վարդապետ

Ցամի տեառն 1770 ի յունիսի 8
ի Պասրա

ՄՂՁ.

Ջրհեղեղ մը՝ բառին կատարեալ իմաստովը, որ տեղի ունեցեր է այս թուականին՝ Պաշալալովի և շրջականերու մէջ՝ Ցօն գետի և այլ ջուրերու ողողումով ու եռամսեայ յամառ և յորդահոս անձրևներով: Ներկայ վաւերագիրը ընդարձակ և հետաքրքրական նկարագրութիւնն է այդ երևելի աղէտալից դէպքին:

Վերապատիւ աբբայ հօրն իմոյ բազում սիրով և խոնարհութեամբ ողջոյն ի Փրկատոս Քիւռւս

... զպատկերն ջրհեղեղին մեք ասէին ականատես եղաք...: Աճումն ջրոյն սկսաւ ի գիշերի ծննդեան տեառն, ի միում գիշերի այն ահագին ծովանման գետն թունայ մի մարգապօյ բարձրացաւ, որ չէ բնաւ եղեալ, յեսոյ դադարեցաւ այնպիսի սաստիկ աճումն, այլ յաւուրն թզաչափ և մատնաչափ աճէր մինչև ցհոգեզալստեան երկրորդ օրն և ելից զամենայն դաշտս, զգիւղօրէ անթիւս տապալեաց. այլ մեզ մինչև ցայն օր էր խաղաղութիւն, լսէաք միայն զտառապանս այլոց, զփախչիլն ի լերինս, զանասնոց կտտրածս և ցաւեաք միայն: Բայց յերկրորդում աւուր հոգեգալստեան յանկարծակի ի չորից կողմանց պաշարեաց զմեզ ջուրն և եմուտ ի քաղաքն հեղեղօրէն. երկիրն ոչ կարէր օգնել ծծելով զջուր, և յառաջոյ կողմանէ արգելեալ էր անցք ջրոյն վասն բարձրութեան ջուրցն սաւային, թիսային և մօրուչին. ով ամենակարող տէր. զկարդ դիւրին է նմա ի միում վայրկենի զաշխարհս ամենայն կորուսանել. սաստիկ է հրդեհն, այնպէս կարծէի, բայց ջրոյն բռնութիւն անցանէ զանցանէ զնովաւ, զի ի հրոյ կարես փախչել, այլ ի ջրոյ որ չուրջ չուրջանակի պատեալ է, ո՞ւր կարես փախչել. աստ էր տեսանել զանհնարին աղէտս տարակուսանաց ամենայն մարդկան, մայրն զզաւակն մատղաշ առեալ ի տանէ ի դուրս

փախչէր, ի մէջ Ջրոյն կացեալ, հայր զհնարս խորհէր ազատելոյ զկին և զաւակ իւր և ոչ գտանէր. վաճառականք ողորմելիք տարակուսեալք ոչ գիտէին զինչ առնել, այսքան ապրանք, ուր կարէին փախուցանել. ոմանք ի հինգ տեղիս փախուցին զկահ կարասի իւրեանց, զկին և զորդի և անդ զկնի հասանէր Ջուրն. յամենայն աչս արտասուք և յամենայն բերանս ողբ. ոչ էր հնար բարեկամ ընդ բարեկամի խօսիլ, իսկոյն արտասուք յերկոցունց աչաց յորդէին, նմին իրի առ միմեանս կացեալ ոչ կարէին խօսիլ. եթէ ոք տեսանէր միայն զձառագիմութիւն դիմաց, զդեղնութիւն երեսաց, զցամաքութիւն և զչորութիւն շրթանց ամենայն մարդկանց իսկոյն անտի մակաբերէր զներքին աղէտս տարակուսութեան նոցա. ոմանք ի բաց թողեալ զտարակուսութիւնն, ծախէր բազում դրամս, բերել տայր հողս և զտամբն լնոյր, զի մի մտցէ Ջուրն ի ներքս, այլ Ջուրն ի յատակէ տանն ելանէր, և ընդ վայր լինէր աշխատանքն և ծախն. ապա զինչ արասցեն, ամենայն ոք կարօղն է գնեաց նաւս և նաւակս և բիօռայս, և ծածկեցին իբրև զկուռք կահեօք և կարասեօք և ընտանեօք մտին ի ներքս որպէս նոյ ի տապանն. բայց ուր կարէր զտանիլ այնքան նաւ, նաւակ, սալ, և բիօռայ բաւական ամենեցուն. հինգ ֆօրինղնոց բիօռան երեսուն և եօթն և քառասուն ֆօրինդով տային, միայն թէքնէն, և ոչ գտանիւր, ես բերել ետու յայլ ուստէքէ երեսուն և եօթն ֆօրինդով, և ծածուկովն ամենայն եղև ինձ եօթանասուն ֆօրինդ. լալով և վճարելով կրկնապատիկ հարիւրապատիկ խնդրէին մարդիք նաւակս և ոչ գտանէին. ապա գային արտասուաթոր աչօք աղաչէին զինքեանս, և կամ զմի սընտուկ ի նաւն առնուլ ևն.: Արդ մինչև ցայս վայր եկեղեցին մեր բաց էր, և ժողովուրդն գայր նաւակաւ և փոքր մի մխիթարէին: Ես սպասէի ֆօռէրին հրատարակել աղօթս պաղատանս առնել, իբրև տեսի, թէ ոչ առնէ, այլ ի յորդորէն ոմանց ասացեալ է, թէ Աստուած հրաշս ոչ առնէ, ես հրամայեցի իմոյ ժողովրդեան յամենայնում աւուր տեսանել զպատարագ, և յերեկոյին գայ ժողովիլ յեկեղեցին, և առաջի սրբութեան ասել զամենայն սրբոց գլխիանիան ձայնիւ և զայլ պաղատանս առնել. այլ քանզի եկեղեցին աղքատ է, ոչ կարէ աւուրս բազումս սրբութիւն դնել, զկնի միոյ շաբաթու հաստատեցի... շաբաթ մի ամբողջ պահս պահել. յաւուր ոտնի մարմնոյ և արեան ի պահս էին ամենայն մեր ժողովուրդ, և կարծեմ թէ ոմանք նէմցէք ևս, և յետոյ ժողովրդոք խօսատացաք հետի երթալ յուխտ ի մարիաշնէ. և յայսմ շաբաթ աւուր եթէ կամք տեառն լին[ի]ցի, երթամք: Եւ այս ամենայն վասն ազատելոյ զմեզ ի Ջրոյ, և ի հիւանդութենէ, որ զկնի ցամաքիլ Ջրոյն ի գարշահոտութենէ լինիլ կարէ սէկսէկս հիւանդութիւնք, ի գետնաշարժութենէ, ի կայծակահէ և ի մրրկէ: Նէմցէքն խուռն գային յեկեղեցին մեր. և այս Ջերմեռանդութիւն մեծ չինութիւն եղև, և մեծ անուն հայոց ազգին: Ֆօռէրն տակաւին ոչ զարթնոյր, լսէր զտուռունջս ժողովրդեան և անփոյթ լինէր. յետոյ ժողովեցան մաճիստռաթն, և հրամայեցին ի նախատինս նորա կարգել աղօթս և խնդրուածս. և նա ստիպեալ կատարեաց զխնդրուածս նոցա. և յետ նոցա ըստացքն ևս սկսան թափօր առնել. և հսկումն ի գիշերի, ևն.: Արդ յև ևս աճիլ Ջրոյն մեք ևս ընդ հայր սիմոնին մտաք յայլոյ նաւս, զի մերն չև էր եզերեալ, և ապա ի մերն մտաք, և եկեղեցին փակեցաւ, և ոչ էր հնար պատարագել անդ վասն Ջրոյն, զի Ջուրն ի վեր քան զաստիճանս բեմիցն չորս մատ ի վեր էր: Բարձաւ ատեան և դատաստան. արհեստաւորք լուեցին, դադարեցան վաճառք. բիացան սուգ զգեցաւ, և ոչ ոք էր որ գնէր, և ոչ որ վաճառէր. բարձաւ ուրախութիւն ի պանդոկաց հրամանաւ մաճիսթռաթին. ուր աստ կերակրոց խոհումն, կամ սեղանոց զարդարանք. ուր աստ ամօթ և պատկառանք կանանց և աղջկանց ի փողոցի մինչև ցսրինս ի Ջուրն գալչին լալով: Եւ կամ ուր տեսանիւր զարդարել կանանց ևս մեծամեծաց. ուր յզբօսանս երթալ, և ոչ մի ինչ յայսպիսեաց երևէր, այլ խաւար և մութն տրտմութեան և տարակուսանաց. բայց այսու ամենայնի տակաւին մի անցուկ ճանապարհ էր, ընդ որ ի քաղաքէն կարէր ելանել ոք. և բազումք ելին ի քաղաքէն ի լերինս և յանտառս, և անդ կամէին բնակիլ մինչև տեսցեն զկատարածն. և անդ ևս ոչ գտին հանգիստ, զի աւազակք յարեան, և թալանէին զնոսա. ապա վախեան ի բարձրաբերց քաղաքս, և մինչև ցայժմ անդ են և ոմանք դարձան: Ձեռ այսորիկ փակեցաւ և այն անցք, ընդ որ անհնար էր ձիով կամ կառօք անցանել. և փակեցաւ քաղաքն չուրջ

չուրջանակի, և ցորեան և ալիւր և այլ ինչ ի գիւղօրէից ոչ կարէին բերել. և սակաւացաւ հացն հոգևպահ. և աստ էր տեսանել զկականս աղքատաց, և ով կարէր ողբակից չի լինիլ նոցա. աստուածաշունչն իբր զարմանալով ասէ, և չնչին փայտի հաւատան մարդիք զանձինս. իսկ աստ ոչ փայտի, այլ եղէգան... Ջուրն ինն մարդապօյ բարձրացաւ ի հասարակ ընթացից. ի պարտիզի եկեղեցւոյս մարդապօյ և կէս բարձր էր Ջուրն, և ի հին տունն և յաշխանան եմուտ Ջուրն. և մեք ի բիօղան ի քաղաքամիջի բնակէաք, և հայր սիմոնն ձկնորսութեան պարապէր ի բիօղայէն. և աւելի քան զերեսուն ձկունս որսաց և կարէր հազարաւորս որսալ, այլ ես այնչափ թողի, զի լիցի կատուաց կերակուր զի երկնչէի ուտել. ի փողոցս քաղաքին վըխտային ձկունքն, զի զեղան ի թունայէն ձկունքն և մտին ի քաղաքն վասն առատ և պարարտ կերակուրս գտանելոյ: Ինն հարիւր տուն ի հիմանց տապալեցաւ, և ոչ մնաց և ոչ մի տուն, յորում ոչ իցէ վնասեալ Ջուրն. կամ ի մի կողմն փլոյց, կամ ի մի կողմն ծռեցոյց, և կամ ճայթռածս եւս. սակաւ տուն և տեղի մնաց ի քաղաքիս, յորս ոչ եմուտ Ջուրն, բայց ընդերկրեայ անցիւք զհիմունս տանց կակղացոյց և վնասեաց. ես հնգետասան օր ի բիօղան բնակեցայ և յետոյ մտի ի տուն փախուցեալ ի գարշահոտութենէ Ջրոյն և ի յանձրևոյ. զի գրեթէ ամիս երիս անդադար անձրևէր. իսկ հայր սիմոնն յետ ութուտասան աւուր. զի եկեղեցւոյ և տան կահքն էին ի բիօղան, և չէր հնար միայն թողուլ: Այժմ չնորհիւ տեառն ի տուն բնակիմք, բայց չև են կարգաւորեալ կահք տան. և դեռ ունի Ջուրն զփողոցն որ յանդիման եկեղեցւոյս, և կարմունճով գան յեկեղեցին, և սակաւ սակաւ նուազի Ջուրն: Բայց այնպիսի ինչ արար Ջուրն քաղաքիս, որ մինչև ցյիսուն ամ յառաջին աստիճանն ոչ կարէ գալ քաղաքն:... այժմ աչօք բացօք տեսի, զի Ջուրս այս յոր պարտէզ և եմուտ զամենայն բոյս և զամենայն ծառս չորացոյց, և զհողն այնպէս վատացոյց, մինչև ոչինչ կարէ բուսուցանել, և եթէ բուսուսցէ ես վտիտ յոյժ, և մարդիք որք առ հարկի ի մէջ Ջրոյն գայլէին, խոցիւք և վիրօք ելից զմարմինս նոցա. զՋրհորս ապականեաց:... այժմ լուայ թէ թիսայ գետն ես պակասի, և է անցք դէպի Թմշուար...:

Ցամի տեառն 1770 յուլիսի 18
[Պաշպալով]

Նուաստ ծառայ
Հ. կարապետ վրդ. Մխիթ.

ՄՂԷ.

Եր. Տէր կոմիտասի համանուն թոռը մեր նամակագրին միջոցաւ մայրավանքէս կը խնդրէ՝ որ իրեն զրկուի իր պապուն մասին կենսագրական ծանօթութիւնները:

Գերաւժար Գերյարգելի Արքայօր վերոյ Տեառն Տեառն Յովհաննոսի վրդպ.ի ողջոյն

... Ի աստ պատանի մի՝ 22 ամաց թոռն երանելի տէր կոմիտասին՝ որ և նա ըստ անուան պապուն իւրոյ կոչի կոմիտաս, և Ֆռէնկերէն կոզմաս, զի է տիլօղլանի Անապէլիի էլչուն. որոյ հայրն յօհաննէս, զոր քաջ ճանաչէ մեր Հ. մկրտիչն, էր թէրճիման նոյնոյ էլչիի: Այս պատանի այժմ ի խնդիր է չարադրել զվարս պապոյն իւրոյ երանելի տէր կոմիտասին. և լուեալ թէ ի վանս մեր կայ չարադրեալ ի մեր վ. Հ. Մատթէոս վ. խնդրէ մեծաւ ազերսանօք զօրինակ մի այնր չարադրելոյ ի Հ. Մատթէոսէն: Ապա խնդրեմ և ես ընդ նմա, զի տաջիք օրինակել զայն. և առաքեսջիք այսր տիսփացիօյով. զայսմանէ և մեր Թօմայ աղայն սեղբոսեան ունի գրել կամ առ ձեզ և կամ առ եղբայր իւր յօհաննէս աղայն: Խնդրէ և զայս. զի յորժամ օրինակեալ զայն առաքեսջիք այսր, գրեսցէ Հ. Մատթէոսն և զայս բան թէ ի հաւատարիմ պատմչաց և ի պէսպէս ձեռագիր թղթոց հաւատարիմ անձանց գրողաց զվարս նորա, լուեալ կամ առեալ չարադրեցի. և թէ կարելի է, զիցէ ես զանուանս և զհանգամանս պատմչաց և ձեռագիր թղթոյն: Խնդրէ

ևս գկտորակ մի թղթոյ գրեալ ձեռամբ Գերյարգութեանդ յորում իցէ գրեալ. թէ ահա ըստ խնդրոյ ձերոյ եատու օրինակել ի բուն գրքէ չարադրողին ի մեր վանքն զվարս երա- նելոյն. և առաքեցի ձեզ։ Եւ այս ամենայն է առ ի հաստատութիւն և ի վկայութիւն վարուցն երանելոյն ընդդէմ թերահաւատից։...

1771 Ապրիլի 26
[կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Զաքարիա վ. Ա. Մ.

ՄՂԸ.

***Զամչեան Հ. Մխ.** իր զոյգ ընկերներուն համառօտիւ կը հաղորդէ առած ծա- նօթութիւնները Դամասկոսի, Հալէպի և այլ քաղաքներու մէջ տեղի ունեցած քա- ղաքական արշաւանքներու, ինչպէս նաև Տիարպէքիրի մահտարաժամին, Տիգրիսի յորդումին և Պասրայի արտասովոր ոօթին մասին։*

Մեծարգոյ հարցդ և համառնուէդ սիրելի եղբարցդ՝ վերապատուելի տեառն տեառն Հայր Մանուէլ վարդապետի, և վերապատուելի տեառն տեառն Հայր Յուքիտ վարդապետի ողջոյն և խաղաղութիւն ի Քրիստոս

1771 յօգոստոսի 10

... Ալիպէյն մսրայ հասեալ ի վերայ դամասկոսի՝ և ընդ քսան և հինգ բդեաշխս պատերազմ տուեալ առեալ է զքաղաքն ստուգիւ. և այժմ ասեն, թէ դառնայ ի վերայ Հալպոյ. և որպէս ոմանք ասեն. մերձ է հասանիլ և պաշարել զայն։ Եւ զայլ բազում քաղաքս առեալ է ասեն՝ ձեռնտուութեամբ չէխին ազրիոյ, յոր ելաք մեք զառաջինն ի նաւու։ Ասեն ոմանք, թէ նաև հերակլն առեալ է զաղէխայ։ Իսկ ի վերայ պատերազմին՝ որ ի մէջ հիւսիսայնոյն և հարաւայնոյն ամենևին ձայն ինչ ոչ գոյ. ոչ յաղթութեան և ոչ պարտութեան, և ոչ իսկ հաշտութեան։

Անտանելի մահտարաժամ տիրեալ է ի տիարպէքիր. ուստի և բազումք յերկիւղէ մա- հու փախուցեալ են անտի գալ ի պաղտատ. և ի ճանապարհի մեռեալ են իբրև 160 ոգիք։ Իսկ փաշային պաղտատայ զայն լուեալ՝ արգելեալ է զնոսա երկու աւուրբք հեռի ճանա- պարհաւ զի մի եկեսցեն ի պաղտատ։ Բայց այսու ամենայնիւ հիւանդութիւն մեծ և բազում անկեալ է ի պաղտատ. և ոչ գիտեմ՝ ժանտամահ է՝ թէ այլ ինչ. այսչափ միայն լսեմք՝ թէ յաճախեալ է անդ հիւանդութիւնն։

Տիգրիզ գետն զեղաւ՝ և լցոյց զանապատն պասրայու. և թէպէտ ի սկզբան կալան զայն. այլ ի յորդիլ ջուրցն յուսահատեալ՝ թողացուցին՝ մինչև ինքն դադարեցաւ։ Եւ յայնմանէ բազում հիւանդութիւնք անկան ի պասրայ և բազումք ևս մեռան. և այժմ ի մէջ ասպուոց յաճախեալ է յոյժ հիւանդութիւնն։ Ցուն ոչ գոյ, ուր չիցէ հիւանդութիւն. ի միումն երկու, ի միումն չորս. ըստ այսմ և յայլս. նոյնպէս և ի մէջ Հայոց։...

Յայսմ ամի այնչափ սաստկացաւ ոօթ Չերմութեան քաղաքիս՝ մինչև բազմաց նուաղիլ և ընչասպառ մնալ՝ մանաւանդ ի շնչել հարաւային հողմոյն, զոր շալկի կոչեն։ Ընդ ոօթոյն և խժային գիշերութիւն անտանելի և աւմկութիւն ձիւթային և թուլութիւն անզօրանալի. որով այնչափ նուաղեալ եմ, մինչ գրեթէ ոչ գիտեմ ուր եմ, և զինչ գրեմ, և զիարդ գրեմ... ի գրելս իմ զայս թուղթս եթէ զամենայն քրտունս իմ ի մի ժողովէի՝ կարծեմ թէ աւազան մի չորս կնուի։... ոմանք ասեն, թէ մեք յերկուտասան ամաց հետէ այսպիսի ոօթ չէր պատահեալ ի պասրայ։...

[Պասրա]

Նուաստ ծառայ
Հ. Մկրտչէ Զ[ամչեան]. վ. Ա.

ՄՂԹ.

Հետևեալ արժէքաւոր պատմական տեղեկութիւնները, ինչպէս դիւրին է գուշակել, հայթայթուած և ապա ծառայած են իրը զրական առաղձներ կամ նախանիւթեր՝ հոչակաւոր Հ. Ջամչեանի էռահատոր «Հայոց Պատմութեան»։

Բաց աստի ինքը նամակագիրը մատնանիշ կ՚ընէ նաև այն գլխաւոր աղբիւրները՝ որոնք իրեն օգտակար եղած են «վաղուան սրբոյն Պետրոսի» գործին պատրաստութեանը։

Գերյարգելի աբբայ հօր իմոյ տէրտէր Յովհաննոս րաբունապետի համբուրիւ ազոյն ողջոյն ի Քրիստոս

... Ընկալայ ընդ այսմ թղթոց և զպատմութիւն ժողովոյն հայոց գրելոց ի վեր. Հ. Գրիգորէն և ժողովոյն քաղկեդոնի գրելոյ ի վ. Հ. Պետրոսէն... տիրապէս խնդրեալն իմ պակասէր ի նոսին՝ այն ինքն են անուանք պատմողաց զայնոսիկ ժողովսն հայոց կարնոյ, Շիրակվանայ, Տարսոնի, Սբսոյ և Աղուանայ։ Եւ պատճառ խնդրելոյս է. զի հայք զայսոսիկ ժողովս բաց ի տարսոնի ժողովոյն ոչ ընդունին աստ. և ծիծաղին ևս և ծաղր առնեն. ոմ է ասեն, որ զնոսին պատմէ, ևն։ Ուստի և յաւուր միում ի խօսելն իմ ընդ վրացւոյ միում անցաւորի՝ մեղադրէր զկէմէս, թէ զինքնահնար ժողովոց պատմութիւնս առնէ։ Ա՛ա կարի իմն ներհակս խօսէր ի վերայ սրբոյն պետրոսի։ Եւ ի բռնադատիլն յընդունիլ թէ պետրոս է վէմ հաւատոյ և եկեղեցւոյ՝ որպէս ասաց քրիստոս, դու ես վէմ ևն. պատասխանեաց. անդ դուն ասէ նշանակէ զամենայն առաքեալս. որպէս ասէ յորժամ տէրն ասաց ՚երուսաղէմ... որ կոտորէիր ևն, ամենայն բնակչացն ևս ասաց։ Եւ ի խօսիլն նորա զայս ես ծիծաղեցայ. Ծանեայ՝ ասեմ, զի յակոբեան ես դու. և նա ասէ զիարդ. և ես յետ ծանուցանելոյ նմա ասացիցն ևն. զի՞նչ ասես. արդեօք յորժամ քրիստոս գնայդ ևն. ասաց ցերուսաղէմ, միայն զբնակիչս ասաց, թէ միայն ցքաղաքն. և կամ միանգամայն։ Եւ նա ոչ գիտաց պատասխանել. ապա ես ասացի նմա. եթէ քրիստոս միայն ցբնակիչս ասաց, ուրեմն և բանքն քրիստոսի (դու ես վէմ) միայն առ մեռասանսն ուղղեցան ըստ հանգիտութեանդ։ Իսկ եթէ միայն ցքաղաքն ասաց, ապա և այն բան միայն առ պետրոս վերաբերի։ Ապա եթէ միանգամայն թէ ցքաղաքն և թէ ցբնակիչս ասաց, այս վասն այսորիկ միայն կարէ այսպէս իմանիլ ըստ ենթադրութեանդ՝ զի բնակիչքն երուսաղէմի՝ ի մէջ քաղաքի պարունակէին. ի նմա չրջէին, գնային, գային, ուտէին, ննջէին, զմարգարէս կոտորէին, և զառաքեալսն քարկոծ առնէին։ Ուրեմն ասեմ եթէ և այն բանն քրիստոսի առ պետրոս և առ միւս առաքեալսն ևս միանգամայն վերաբերէր ըստ այսմ քոյ հանգիտութեանդ, հարկ է՝ զի առաքեալքն պարունակեսցին ի պետրոս. իսկ դու ասեմ ե՞րբ մտեր յորովայն նորա և յաղիս նորա չաղեալ զտաս առաքելոցն համբուրեցեր ևն։ Եւ ի լսելն նորա զայս՝ գոյն երեսաց նորա չրջեցաւ. և ի թոթովելն նորա ասեմ. մի՛ ինչ չփոթիր, զի ես փառաւորագոյնս ևս գրեալ եմ զայս բանս ընդդէմ աստուածին քոյ յակոբայ։ Եւ եթէ ասեմ զայդ օրինակդ ոչ թողուս ի ձեռաց հանդերձ աստուածովդ քով՝ ոչ հանեմ զքեզ յաղեացն պետրոսի։ Իսկ եթէ ասեմ ծակես զորովայն նորա՝ իժ կոչեմ զքեզ։

Այսպէս խօսեցայ ընդ նմա. զի կարի իմն չարութեամբ և անզգամութեամբ խօսէր։...

Տրտմեցայ յոյժ վասն փոխման Հ. Ցակոբէն, որ պայծառ սիւն էր աղօթից ի վանս մեր։...

Ընդդիմագրութիւնն նալօղուին մինչև ցայժմ երկու հատոր եղև քառածալ թղթով՝ զորս ետու կազմել. քանզի թախանձէր ստեփան աղայն՝ առնուլ ընթեռնուլ զնոսին. և ես կասկածելով՝ թէ տեսր ինչ մի անկցի ի ձեռս այլոց կազմել ետու. և ապա էառ զայն ստեփան աղայն. և զտիւ և զգիշեր ոչ թողու ի ձեռաց իւրոց։ Մի հատոր ևս լինի ի վերայ

պետրոսի. զոր եթէ տէր կամեսցի. սկսանիմ յետ զատկին. զի այժմ ի պատրաստութիւն քարոզի պարապիմ, զոր ի մօտոյ սկսանիմ։ Ընդդիմագրութեանն անուն եղի ի ճակատ գրքոյն վաճառի որբոյն Պետրոսի և յաչերսից նորա. և Յունարի սրբոյն Լևոնի։ Եւ կարծեմ թէ բաց յերից անտի երկու հատոր ևս արտադրին՝ մինն վասն յաջորդաց, և միսն վասն տումարին։ Եւ մի հատոր ևս ի սոսին յաւելեալ վասն քաղկեդոնի ժողովոյն։...

Առ այս գործ բազում անգամ պիտոյացաւ ինձ մեկնութիւն ոսկեբերանին, որ կայր ի վանս փառոց. բայց ոչ գիտեմ զի՞ եղև. զի յետ գնալոյ կուռնելիոս եպիսկոպոսին ոչ ևս երևի այն ի վանս. և ստոյգ է՝ թէ նա ոչ տարաւ ընդ իւր զայնչափ ծանրութիւն։ Կարծեմ թէ ևն. զի և ի խնդրել ի նոցանէ զայլ գիրս՝ յոյժ դժուարաւ տան։ Իսկ զկէսմէսն զտի այլուստ. թէպէտ և այն միայն վասն վկայութեան սուրբ հարցն պիտոյանայ ինձ, և պիտոյասցի ևս յետոյ վասն տումարի լևոնին ևն.։ Իսկ ձեռագիր աստուածաբանութիւնն կարի իմն պիտոյացաւ ինձ, մանաւանդ ձառն ի վերայ հաւատոյ... նաև ձառն ի վերայ երրորդութեան. քանզի յաւարտիլ սոցին՝ ի վերայ բղխման հոգւոյն սրբոյ ևս կամիմ գրել, եթէ տէր կամեսցի. թէպէտ ժամանակ ևս ոչ գոյ, ոչ միայն վասն երթևեկութեան, այլ յաւէտ վասն այսորիկ՝ զի յաշխան և ի ձմեռն մինչ ի զատիկ քարոզելոյ պարապիմ։ Իսկ յամառան ջերմութիւն ոտիցն ոչ թողու։...

... պասքայածինք ողջոյն բթամիտ են և անմասն յիշողութեան, մինչև յետ հազարից կրկնելոյ զբան մի՝ հազի[ւ] տպաւորեն յուղեղն իւրեանց...։

Նուաստ ծառայ
Հ. Միքայէլ Չ[ամչեան] վ. Ա.

ի սեպտեմբերի 13 1771
ի պասքայ

3.

Տէր կոմիտաս նահատակի գերդաստանին վերաբերեալ նոր տեղեկութիւն մը առ։

Գերյարգելի Տէառն Տէառն Յակոբեանոսի վեհի վարդապետի
և Աբբայ Հօր գտուրք ուղի համբուրեմ

Որպէս գիտէ Գերյարգութիւն ձեր, թէ է ոմն ի վիէննայ յազգէ մերմէ կայսերական քուռիէր Յովհաննէս Մօռնհայիմ անուամբ, որ է եղբայր կնոջ որդւոյ միոյ երանելի տէր կոմիտասին. սա յետ մեռանելոյ որդւոյ տէր կոմիտասին և կնոջ նորա, և մնալոյ որդւոց նոցա որբացեալ, ետ բերել զմի յորդւոց քեռ իւրոյ՝ (որ է թոռն տէր կոմիտասին) ի վիէննայ, և չանայ հանել նմա հաց ի կայսերէ, և ցանկայ ունել ի ձեռս զպատմութիւն տէր կոմիտասին, զի նովաւ ցուցեալ զզարմ քեռ որդւոյն դիւրեսցէ հանել զհացն. վասն որոյ գրեալ առ իս խնդրեալ է յինէն գրել առ Գերյարգելութիւն ձեր. զի վասն սիրոյ երանելի տէր կոմիտասին հաճեսջիք յղել ինձ օրինակ մի ի պատմութեանց նորա, որ լինիցի խաւերէն, և թէ ոչ, գոնեայ հայերէն, զի կարացից առաքել զայն ի վիէննայ, զի չաջողեսցի խեղճ թոռան երանելոյն հաց ինչ չարքունուստ, և հաճեալ ընդ այս բարերարութիւն երանելոյն եղեալ միոյ արենակցոյն՝ բարեխօս լիցի վասն մեր. զոր և յանձն արարեալ բազում սրտի առատութեան Գերյարգելութեան ձերում մեզ պատասխանւոյ գրոյս, խնդրելով զներումն վասն աշխատութեանց հասուցելոց այսու առ Գերյարգելութիւն ձեր։ Եւ յանձն առնելով զիս հաճոյական աղօթից Գերյարգելութեան ձերում մեզ չամենայնի պատրաստական

Նուաստ ծառայ
Յովհաննէս արիման քահանայ անարժան

1771 Հոկտեմբերի 21
ի Դրիէսդէ

ՅԱ.

Լուսիոյ զօրաշարժը դէպ ի Թուրքիա. – այս՝ առաջին մասով։

Վաւերագիրս կը հաղորդէ նաև որ Ալեսքիոյ կայսրը մասնաւոր հրովարտակով կը վերցնէ կարգ մը Յունրերու տօները, տալով այս բարձման պատճառները։ Ուրիշ կարգադրութիւններ ալ կ'ընէ. ոսկւոյն այս ամէնէն՝ յառաջ կու գան նաև վէճեր ու դիմադրութիւններ մահառներուն մէջ։

Գերապատիւ և գերյարգոյ տեառն տեառն Յովհաննոսի վարդապետի Այբուհոր վերուստ խոնարհական հաղորդ թղթոյն

... Ցաւուրս յայսոսիկ լուայ յարժանահաւատ արանց, եթէ մոսկովք անցին գԹուրնան, և գնան պաշարել զվ.խոհին, և յետ այնորիկ ծնայ երթալ յէտրէնէն և ի ստամպօլ. բանակն Թուրքաց ցիր և ցան եղեալ փախստական գնան յերեսաց մոսկովին խումբ խումբ իւրն գերամակս եգանց. ուր հինգ հազար, ուր տասն հազար և ուր քսան հազար. և զայս պատմեցին ինձ ականատեսքն, որք գան ի ստամպօլու։ Պատմեցին ևս եթէ ոմանք տաճիկք ասացեալ են. էյէր քի մոսկով կիավուր կէլիրիսէ, պիզտա պիզիմ էվիմիզին քարշընտա պիրէր հաչ տիքէրըզ, խրիշէրտայ տօմուզ պօղազլարըզ, պիզտայ կիավուր օլուրըզ։ Ցայժ վատ երևի բանն Թուրքաց, զի յայժ նուաճեաց գնա մոսկովն, պաշարելով զանցսն սեաւ ծովուն և ուռումէլիին. նաև որպէս լուայ վաչան մսրայ ապստամբեալ, առեալ է զերուսաղէմ, զդամասկոս և զշրջակայսն, և այժմ պաշարեալ է զհալէպն (աւաղ ափսոս մեր ազգին, որ ոտից կոխան եղեալ նեղութիւնս մեծամեծս կրեն. յայժ զանկութիւն է ի ստամպօլ և առաւել ևս լինելոց է...) խոնարհեալ ընկճեալ կան աւետեան տաճիկքն... մի միայն մխիթարութիւն մնացեալ է տաճկին նէմսէն, որ յայժ բարեկամութիւն ցուցանէ նմա, տալով նմա զզահրէս, նաև յաւուրս յայսոսիկ առեալ է նմա յիսուն հազար խանթար պարսէթ. և այժմ ևս երկու նաւք պարսէթով գնան ի տաճկաստան. ուստի ամենայն տաճիկքն գնա գովեն և ասեն. պիզիմ իմիտաթօաըն պիր կիւնի ալլահթալէ պին էթսին. գըլըճընի առւմանընա գէսկին էթսըն. այլ որպէս Թուի ի նշանաց, այս ամենայն վարդապետութիւն է, և ոչինչ գործէ մոսկովն առանց կամաց կայսեր, վասն զի նախ քան զանցանել մոսկովին զԹունան հրաման եկեալ էր առ զէմինու զօմէնտանդն, զի գացի գայլ ճանապարհ փշտայի՝ առանց գնալոյ ի ստամպօլ, ուրեմն գիտէր Թէ մոսկովն անցանելոց էր զԹունան։ Կայսրն միշտ ի պատրաստի կայ. հանապազ զօրքն առաքին ասա ի շրջակայս, և մանաւանդ, յառտիալն, և ի բերանս ամենեցուն է, եթէ պարտիմք առնուլ զպէլըրդասն. խորհուրդ Թագաւորի է, և ոչ ոք կարօղ է իմանալ. զայս ծածուկ պահէլս հնարեաց այժմու կայսրս, որ յայժ օգտակար է իւրոյ Թագաւորութեան, յաւուր միւսմ խոստովանահայրն կայսեր հարցեալ ցկայսրն. եթէ զինչ խորհուրդ ունի յաղագս պատերազմին, որում առեալ է պատասխանի կայսրն. կարո(՞)ղ ես խորհուրդ պահել զի մի գիտասցեն այլք. ասէ խոստովանահայրն կարեմ պահել. պատասխանի ետ կայսրն և ասէ, կարեմ և ես խորհուրդ պահել, և ոչ ումիք յայտնել, և ոչ յայտնեաց նմա։ Ասեն եթէ մինչև չորս հարիւր հազար զօրք ունի այժմ ի պատրաստի ի վերայ ոտից...։ Ջոծնս սրբոցն յայսմ ամի եբարց կայսրն յերկրէն իւրմէ. բաց ի տէրունական տօնից. և ի ե տօնից աստուածածնայ, սրբոցն պետրոսի և պօղոսի և սրբոյն ստեփաննոսի նախավկային և ամենայն սրբոց. ընդ տօնի սրբոցն պետրոսի և պօղոսի հրամայեաց և զամենայն առաքեալսն տօնել, և ընդ նախավկային զամենայն մարտիրոսս. Ննունդն Քրիստոսի Բ օր, Ջատիկն Բ օր, Հոգեգալուստն Բ օր հրամայեաց տօնել։ Պատճառ բարձման տօնիցն է, զի յաւուրս տօնից առաւել մեղք գործին քան յայլ աւուրս. զի արհեստաւորք հագիւ սպասեն զի տօն լիցի. ոմանք պատարագ տեսանեն և ոմանք ոչ, և իսկոյն գնան ի մե-

խանայս, հարբին, զեղխին, չնան ևն. և փոխանակ պատուելոյ զԱստուած, առաւել բարկացուցանեն, և մի ևս, զի որովհետև յերկրի իւրում բազում կռոմներ և սպայիս ունի. և սոքա զստորադրեալս իբրև զգերիս ի գործ ածեն. ի շաբաթու զԳ աւուրս պարտին տեարց իւրեանց գործել. և ի մնացեալ աւուրսն ինքեանց, և պիտի երբեմն զի ի շաբաթու Բ և Գ տօնք լինին. և այսպէս ոչ մնայ նոցա և ոչ մի օր ի շաբաթու. ուստի յոյժ անտանելի նեղութիւնս կրէին գիւղականք. վասն այսորիկ եբարց զայն, զի հանգիստ լիցի նոցա. մաճառքն ոչ ընկալան զայս տէգոէթս, և դեռ ի վիճի կան. վասն այսորիկ և մեք տակաւին տօնեմք. այլ ի բերդն և յայլ չրջակայս արտաքոյ մաճառաստանի հանդիսացուցին զտէգոէթն. և ոչ տօնեն. բազում և այլ ինչ կարգադրութիւնս արարեալ է, թէ ի վերայ հեղեցականաց ուղղափառաց և թէ ոացից... իսկ յաւուրս կիւրակէից կամ տօնից ընդ մեծ պատժովք հրամայէ ոչ բանալ զխանութ ոչ մսավաճառի, ոչ էքմէքճիի ոչ պաքալի և ոչ մեխանայի. նաև ոչ ոք կարէ ելանել ի ճանապարհ, կամ կառօք անցանել ընդ քաղաք մի կամ գեօղ։...

Նուաստ ծառայ Հ. Սիմոն վարդապետ
Կրօնաւոր Մխիթարեան

Ցամի տեառն 1771 Նոյ. 22
[Եղիսաբեթուպոլիս]

ՅԲ.

Ռուս – Թրքական պատերազմը, Մեսիլինէի առումը և ուրիշ ընդհարումներ բազմաթիւ մանրամասնութիւններով պատմուած են հետևեալ երեք թուղթերուն մէջ, որոնցմէ առաջին երկուքը տարբեր անձերէ գրուած բայց անստորագիր են։

Ա.

Ից Գերապատիւ Հայրդ իմ Յունի. բարուն. ողջոյն ի Քրիստոս Յիսուս

Իբրև յաջողութեամբ հասաք մեք ի միքօնօ, լուաք ի հիւսիսային ազգէն, և ի հռոմոց երկրիս. եթէ գնացեալ են հիւսիսային ազինք նաւուք ի մեսիլինէ. յորում վայրի չինէին տաճիկք քանի մի պատերազմական նաւս. և այրեալ են զնոսա. և զ25 չայխայս գտեալս անդ, բեռնաւոր ելս լի ամենայն բարութեամբ գերեալ են։ իսկ թուրքն բնակք երկրին ժողովեալ են տալ պատերազմ ընդ նոսա. բայց յաղթահարեալ փախուցեալ են ի բերդն։ և ազգն հիւսիսոյ գնացեալ ի ցամաք անդր, յափշտակեալ են զամենայն թնդանօթից բերդին, գտեալս արտաքոյ. և զամենայն չէնս աւերեալ. և ամենայն թնդանօթից բերդին խիցս արկեալ, դարանեալ են յետս. բայց մի ի նաւուցն հիւսիսայնոյ ի պատերազմին կարի լիս յառաջ կոյս ի ցամաք դիմեալ, անկանի ի ցամաք ի վերայ կողացն. և ի ջանալն բազումս այլ նաւուց. և ի տկարանալն ազատել զնա ի ցամաքէն, զամենայն գտեալս ի նաւին, հանին արտաքս. և թողուն զնաւն այնպէս։

Հիւսիսայինքն եկեալք ի նաւ մեր, ասացի, եթէ յետ քանի մի աւուրց, ժամանեմք երթալ ի ռատօս, յորում չինեն թուրք զայլ չորս ևս նաւս, առ ի այրել զնոսա։

Երթալոց են յաւուրս յայսոսիկ և ի սախըզ և յայլ իմն բերդ, առ ի գերել և գերփել և զնոսա։ Ամենայն առմատայն նաւուց հիւսիսայնոյն, և զօրքն ըստ մեծի մասին են ի փարօս կղզին. և ըստ պիտանաւորութեան զան և երթան։

Աստ ի բոլոր առչիփէլակօն է պանտերային մոսկոֆին։ Արժանի ողբոց ինչ պատմեն յոյնք բնակք երկրիս, զոր չհաւատայի, եթէ ականջալուր և ականատես չէի. զի ասեն, թէ զառաւ այս ազգ հիւսիսոյ բարբարոսագոյն իբր զառաջիկ. զի և ի քրիստոնեայս չինայէ գերել գերփել. զի ըմբռնէ զարս և զկանայս քրիստոսադաւանից, եթէ յունաց և եթէ

թորգոմեան ազանց. չարաչար գանէ և տանջէ, ցուցանել զթագուցեալ ինչս իւրեանց: Իսկ նոքա ապաչէն, և զսրբոց պատկերս առաջի արկանեն, և աղաղակեն թէ քրիստոնեայ եմք. այլ նոքա ոչ ամաքին. կդեբէն, ասելով. եթէ և դուք ի տանկաց անտի էք: Ուստի յանհնարինս այժմ ոդքան յոյնք վասն իւրեանց կոբստեան, ոչ միայն ի տանկաց, այլ և ի հիւսիսային ազգէն. ոյք կանխաւ ամբարտաւանութեամբ տօն ուրախութեան կատարէին, վասն գալստեան հիւսիսայնոյն, այժմ ի սուգ վարակեալ ոդբս յօրինեն և վայս անձանց կարդան: Ջամենայն ստացուածս և զինչս յունաց զոբս գտանէ աստ ի կղզիս՝ յափշտակէ յանխնայ:... Ունին ըմբռնեալ գեբի կանայս հնդիկս և զտղայս, և վաճառեն ի հինգ զուտուչ: Ջերկու և գերիք եպիսկոպոս յունաց աքսորեալք ի կոստանդնուպօլսոյ կանխաւ ի մեսիլինէ՝ յայն անցան սպանանեն չարամահ հարաւային ազգ առ կատաղութեան սրտից իւրեանց: Ցառնուլն գմեսիլինէ, և ի գերելն զչաղխայս գտեալս անդ, գերէ և գերկուս ի հայոց որք էին ի միում ի չայխայիցն, և զամենայն զինչս նոցա յափշտակեալ և յաւարի առեալ, և մերկ և պատառատուն զգեստուք թողուն աստ ի միքօնս, որք պատմեցին մեզ, եթէ խուշունկն զօրէն անձրևոյ տեղային ի մեր նաւն, և մեք առ աչին յափսիթերս յերկիր անկեալ կայաք, և այնպէս ազատեցաք հազիւ ի պատուհասիցն զուտչունից: Պատմեցին մեզ երկու գերեալ հայքն զգործ պատերազմին միտիլինու, որ եղև. եթէ ընդ երեկս իբր ի 24 ժամու աւուրն՝ եկին վեց նաւք մեծամեծք ի հիւսիսայնոցն, և մտին ի ներքս ի նաւահանգիստն կոչեցեալ փօրեազ իլիմանի, որ է յետին կողմն միտիլինու. և անտի մինչ ի մէջ գիշերն անընդհատ արկանէին խումպառայ ի մէջ քաղաքին, և յետ այնր զադարեցին մինչ ի լուսանալ առաւօտուն: Եւ ընդ առաւօտն վաղ քաջ եկն նաւ մի մօսկովի ի բերան բուն նաւահանգստին մեսիլինու. և անտի նշմարեաց և քննեաց, որ ինչ անդ ի նաւահանգստին կայր, և դարձաւ ընդ կրունկն. և ահա յետ երկուց ժամուց տեսաւ բանակ նաւուց անհամար բազմութեան, որոյ չէր թիւ, որ իբրև գերամս աղաւնեաց ձագախառն երամովին գայր, գալով գայր և մերձենայր, եկն եկաց սար առեալ հանդէպ քաղաքին ի բերան նաւահանգստին՝ չմտեալ ի ներքս: Իբր 15 նաւք մեծամենք կրկին մեծութեամբ քան զմերն, և իբր 40 նաւք իբրև զմերն. և այլք մանր և խոշոր անթիւ. սոքա աստի. և նոքա, որք ի փօրեազ իլիմանին անտի ի քթթել ական հանին արտաքս զբազմութիւն մարդկան, և զինդանօթս ի վերայ լերանց հանդէպ բերդին. և միահամուռ ամենեքեան ձեռն ի գործ արարին ի գործ պատերազմին. հարաւայինք ի ներքուստ ի բերդէն, և սոքա արտաքուստ ի լերանց և ի նաւուց: Ասստկացաւ մարտ պատերազմին. և երկարեցաւ վախճան զոբծոյն. զի յերկուց կողմանց քաջ գտեալ, ոչ վաղվաղակի թիկունս դարձուցին միմեանց. բայց բազում աւերածք գործեցան ի տանիկ քան ի մօսկով:

Ապա ի հասանիլ 20 ժամու աւուրն, լքաւ զերծաւ սիրտ տանկին. զհայրենի սովորութիւնն բնիկ խնդրեաց ի ձեռն առնուլ. ուստի որ արտաքոյ բերդին էին, դարձուցին զթիկունս, և ի բերդ անդր արարին զանձինս ապաստան. թողին լքին զամենայն քաղաքն, միայն զանձինս ապրեցուցանել մարթասցին:

Եւ մի ի նաւուցն հիւսիսայնոյն դիմաց ի ներքս ի նաւահանգիստն. եկն մերձեցաւ ի բերդն. և անդ հանդէպ բերդին անհոգս էարկ խարիսխ և նստաւ, ոչինչ զանգիտեալ ի թնդանօթից բերդին. և ինքն դադարեցաւ այլևս ի պատերազմելոյ: Եւ առաքեաց քանի մի ի զօրաց իւրոց արտաքս. երթեալ և անկել խաչանիշ դրոշմն մօսկավեան ի նուրզ չինեալ նաւուն տանկին. որք չև ևս էին իշուցեալք. որք էին երկու գառավէլայ, և մի չէքտիրի: Եւ ապա դադարեցաւ պատերազմն:

Ամենայն թօփճիք էին հիւսիսայինք. իսկ այլք ամենեքեան խուվաթք, և ժողովածուք աստի, և անտի որք ի չունէ փախուցեալք: Ապա սփռեցան զօրքն հիւսիսայնոյն ի քաղաքամէջ անդր. և զոր գործեցին չարիս, ոչ գրիչք բաւեն նշանակել և ոչ թուղթք բովանդակել. քան զչուն քան զխոզ վատթարագոյն գտեալ. նանրացեալ ի խորհուրդս իւրեանց. ոչ ի ծեր խնայեալ և ոչ ի տղայ ևն.: Արկին ձեռս կապտել կողոպտել. ոչ ի տանիկ, յոր չէին ձեռնհաս, այլ ի քրիստոնեայս, ի հայս և ի յոյնս ողորմելիս քան զհայս: Եւ ըստ վերագոյն գրելոցս, թէպէտ զանձինս քրիստոնեայս խոստովանէին սոքա,

և եղկելի կանայք, աղջկունք և մանկունք ի պատուհանից տանց զպատկերս սրբոց և աստուածածնայ արտաքս բերեալ, ցուցանէին նոցա. ի սէր նոցա լալագին արտասուօք ողորմ հառաչմամբ մորմոքէին, պաղատէին չար ինչ չառնել անձանց իւրեանց. զսակաւիկն ետացեալ յընչից իւրեանց, ի պէտս ապրուստից յայս դառն կարօտութեան ժամանակիս, չխուել, չառնուլ, չբառնալ. թէպէտ սոքա զայս ամենայն պաղատէին, թէպէտ և յոտս աղտեղեալս նոցա զհամբոյր չրթանց իւրեանց մատուցանէին նոցա, որք ի չմարդիս համարեալ էին, սակայն ոչինչ օգտէին. այլ նոքա կծանէին, կապտէին, կողոպտէին. և յոր ձեռնհաս էին՝ ոչ զանց առնէին, և ի խորհրդոց իւրեանց և ի կամաց չարութեան ոչ զիջանէին։ Փանդեցին, աւերեցին զերկիրն, և զցանկալի ցանկալի ընչից պերճութիւն և զճոխութիւն յանձինս գրաւեցին, առին գնացին յիւրեանս, և ոչ թողին ինչ՝ զոր նկատեցին աչք իւրեանց. և զամենայն չայխայս զտեալս անդ կապեցին իւրեանց եզտկս, և հեռացան մերժեցան հարուստ մի և հասին ի զէթին պատունուն։ Անտի դարձեալ արձակեցին նաւ մի ի քաղաքն, երթայր յոխորտանօք՝ եհաս եկաց անդ մօտ ի քաղաքն, էարկ հուր ի նաւսն. այրեաց հրդեհեաց զամենայն գեղեցկութիւնն և զամրութիւնն նորաչէն՝ տաճկին. եկաց հանդիպոյ, տեսին և զուարճացան տեսարանք նոցա, խայտացին և ծափս հարին ի վերայ թշուառութեան առելեաց իւրեանց, և մխիթարեցին զանձինս իւրեանց չարեօք նոցա։ Դարձան ապա առ իւրեանս, և ցուցին զոր գործեցին. թողին և այնպէս զքաղաքն, և գնացին յոր և կամեցան։ Այս անդք առանն միտիլինու։ Գօնսուլն ֆռանսայու որ ի միտիլի՝ հազիւ հանդերձ կնաւ իւրով, զգեստուքն որ ի վերայ ասեն մարթացաւ զանձն ապրեցուցանել ի փառօս կղզին, անդ ապաւինիլ առ ժամանակ մինչ, մինչև տեսցէ զկատարած գործոյն՝ յոր վճարեսցի, թողեալ զամենայն ինչս ի յափշտակութիւն նոցա։

Հայ ոմն պէյօղլուցի Ճնկլիկ մականուանեալ՝ բարձեալ յակքսանդրու ի նաւ ֆռանսզի աւելի քան զհարիւր հազար դինարաց բեռինս բրնձոց և խահվէից և խնկոց տանէր ի կոստանդնուպոլիս, զոյոյ զառաջս առեալ հիւսիսայինքն, յափշտակեն զամենայն ինչս նորա, և տանին ի փառօս ի զօրապետն իւրեանց ի օղլօֆ, և զհայն ընդ նմա, և նա տայ նմա եօթն հազարաց ինչս ի ձեռս նորա, և զայլս առնու առ իւր, և թուղթ մի ի ձեռս հայոյն իբր առյապային վճարել. որ զայս օրինակ բազմաց ասեն արարեալ, և նա անդ այնպէս դնգելեալ կայ՝ հնարս ինչ գառնել, բայց ամենևին չիք յոյս։ Եւ այլ քանի մի հայոց այս անդք դիպեալ են, որք այժմ դեգերին անդ ողբալով։ Իսկ յունաց անթիւ և անհամար այսպիսի անդք. վասն որոյ թէ որչափ այժմ անիծանեն և հայհոյեն զնոսա, տկարանամ ընդ գրով արկանել։ Տեսի և խօսեցայ ընդ բիւրս ի յունաց. չգոի չտեսի զոք, որ բարիս խօսէր զնոցանէ, կամ ցանկացօղ լիցի նորա գալստեանն։ Ամենայն կղզիք ապականեալ են արիւնհեղութեամբ և զրկանօք ի ձեռաց արանց ամպարշտաց, որք իբր ջաւագովք հիւսիսայինոյն՝ աներկիւղ յումեքէ՝ զոր կամին կողոպտեն, զոր ցանկան պղծեն, և ընդ որ զչարին սպանանեն. չիք որ քննէն, չիք որ դատէն։ Ամենեքեան սոքա զգեստուրեալ զօրէն խալիճնճիի տաճկին, զոյգ մի փիշտօֆից ի մէջս, և եաթաղանն առընթեր, և զսուր երկսայրի առ զօտեամբ. և փօշի կարմիր՝ կանաչ՝ սպիտակ իւրաքանչիւր ըստ իւրեանց հաճոյից ի գլուխս։

Այսեն եթէ այժմ անթիւ բազմութիւն ի հիւսիսայնոյն նաւուք, և ժե նաւ գործիք պատերազմականք խումպառաչք. կիւլլէք և այլ ինչ։ Այժմ ասա զամենայն երկիր զոր առնու մօսկօֆ՝ աւերէ քանդէ թողու այնպէս և դառնայ յետս, և ոչինչ փոյթ է նմա սիրել, իբր զի չունի ասեն հրաման։ Նաւուցն ֆռանսզի ամենևին ոչինչ ակնածեն, ըստ հաճոյից քննեն, հային, արգելեն տանիլ ինչ կերակրեղէն ի տաճիկ. և բազում անգամ ևս առնուն ի նաւուցն զոր ինչ և կամին. այլ ի նաւս ինկիլիզին և ֆլէմէնկին բազում ակնածութեամբ գնան, աչք խըթեն, թէև տեսանեն գնոսա լի ամենայն բարութեամբ բրնձոյ և ցորենոյ, թողուն գնոսա տանիլ, զորոց մինչև մեք տեսաք աչօք մերովք, որ գայր յակքսանդրու լի բրնձովք էն. զոր քննեցին՝ տեսին և աչք խըթեցին։ Փոքր մի ևս վէնէտիկեան նաւուցն ակնածեն, այլ ոչ այնչափ։ Այս անդք են այժմ յայսոսիկ վայրս։...

ՅԳ.

Բ

Պատմեցից ինչ ինչ սքանչելի՝ ի պատիւ երեսաց այնմ, որ քաջ՝ հիւսիսականին է զակատեալ ի սէր. զոր աչօք իմովք տեսի և սքանչացայ, որ դիպաւ ի 5 դեկտեմբերի. զի իբրև զանցեալ զսաստ հասաք ի քառայ պուռնու անուանեալ լեառն, յանկարծուստ ինձ երևեցաւ փոքր նաւ մի մոսկոֆեան պայրախով ի թիկանց լերին, որ պարզեալ զառագաստն՝ գալով գայր օձայ ի մեզ. զոր ընդ տեսանելն մեր խաբուտանն՝ փութացաւ եդ պայրախ, և արկ թնդանօթ մի խումպառայով. և երկուցեալ թերևս ի նաւարտակաց ծովուն անտի ոք իցէ մոսկոֆեան պայրախով. և ինքն կազմեցաւ ի մարտ պատերազմի, զի մի՛ անհոգս՝ զոցի անպատրաստ. զամենայն պատրաստութիւն պատրաստեցաւ՝ թնդանօթից, թիւֆէնկից, փիշտոֆից՝ սուսերաց և զինուց, զամենայնն ալէստայ եդեալ ի միջի. ապա հրաման ետ ամենայն ումեք՝ եթէ ճանապարհորդաց և եթէ նաւավարաց ելանել ի վեր արտաքս, զի բազմութիւն երևեսցի:

Գայր նաւն մոսկոֆեան յոխորտանօք, յորում էին աւելի քան զերեսուն և քառասուն ոգիք. մերձեցաւ և անց զառաջեաւ մերով ճոխանալով, զնաց մեկնեցաւ ի մէնջ հարուստ մի. զարձեալ՝ փօճալամիշ արար՝ դարձաւ ընդ կրունկն՝ եկն մօտեցաւ ի մեզ ի թիկանց մերոց, բարբառեցաւ ընդ մեզ փողովն, ողջոյն ետ մեզ և եհարց ինչ ինչ. ապա հեղան զեղան ալիք տասն անտի ի նաւակն իւրեանց՝ զալ քննել և տեսանել զնաւն մեր, եդին ի նաւակն և զթիւֆէնկս բազումս և զէնս. և գաղեցին ընդ քէլէով իւրեանց, և ինքեանք զոյգ մի փիշտովով ի մէջսն և սուր առընթեր կախեալ, գային կատաղաբար առ մեզ. և յաչաց նոցա հուր ցայտէին: Իսկ խաբուտանն մեր հրամայեաց ամենայն նաւավարաց՝ առնուլ թիւֆէնկ ի ձեռս և դնել փիշտոֆ ի մէջս և կախել սուր առ զստեամբ. և պար առեալ շար ի շար կանգնիլ ի կողմն՝ ուստի ունին ի վեր ելանել. և ոչ թողուլ զոք բաց ի մէն միոյ միայնոյ ի վեր ելանել մտանել, և եթէ տեսանէք զնս պարսել զփիշտոֆ, հարէք և զամենեսին և խնայէք: Իբրև ամենեքեան այսպէս պատրաստեցան կարգեցան, և կացին կազմ իւրաքանչիւր յիւրում կայի, ահա և նաւակն եկն եհաս՝ մերձեցաւ ի նաւն մեր: Այլ նոքա զհասանիլն և զեղանիլն ի մեր նաւն մի առնել խնդրէին. թողին ամենեքին զնաւակն առանց պարանաւ ինչ հաստատելոյ՝ կէսք յայս ինչ պարան ձեռն արկեալ, և կէսք յայլ ինչ, ոմն յայս և ոմն յայլ ձեռնամխեալ՝ ի վեր անդր սողալ զեռալ սկսան. ձայն եառն ի վերուստ խիզախմամբ նաւավարքն մեր՝ կացին հակառակ նոցա չելանել ի վեր բաց ի միոյ միայնոյ. այլ նոքա հեստեցին բանիցն սոցա, նախատինս համարեցան անձանց իւրեանց զայս. զի գողոց և աւազակաց սակս են այս օրէնք ասեն. և յերկուց կողմանց ջեռան և բորբոքեցան և անկան զբանիւք. նոքա ի ներքուստ անտի սողալ ի վեր խնդրէին, և սոքա ի վերուստ զթիւֆէնկս ուղղեալ սպանանել սատակել ձեռն արկին. բարձրացաւ աղաղակ չփոթի և աղմկին, եհաս ի վերայ խաբուտանն ի փուխայէն, արարին խաղաղութիւն ի մէջի, արգել բաց ի միոյ միայնոյ ի վեր ելանել. նոքա թէպէտ և զայրացան և կրճտեցին զատամունս իւրեանց, այլ զի չէին ինչ ձեռնհաս լռեցին, և մի միայն ի նոցանէ ել ի վեր. բայց և նորա հատաւ զոյն յերեսացն և բան ի բերանոյն. չփոթեցաւ յանձն իւր և չգիտէր զինչ խօսիլ. սկսաւ թօթովել և կակազել ինչ ինչ, և ոչ ծանուցաւ ըստ օրինի զոր խօսէր, ոչ առ ազիտութեան լեզուին այլ առ խառնուածեան սրտին. ուստի և վաղվաղակի կարճեալ զբանն՝ էջ ի նաւակն, ելին և գնացին առ իւրեանս մտմտալով:

Ցայսմ վայրի ահա երևեցաւ ի քառայ պուռնուն ի ներքոյ լերանցն վօլիկ մի տաճկի, յորում էին աւք իբր երկոտասան, տեսին զնա մոսկոֆեանք և ուղղեցին զնաւն ի վերայ. զոր օրինակ յարձակիցի կատու մի ի վերայ մկան՝ այնպէս յարձակեցաւ ի վերայ նորա. համարեցաւ զնա փափկիկ պատառ մի ծամաքեալ ի բերանի իւրում, միայն կլանելն

առաջի կայր նմա. գնաց եհաս մօտ մեղմիկ օդով՝ և արձակեաց թնդանօթ մի զկնի. և նա ոչինչ համարեցաւ և գնայր զճանապարհ իւր. սա երկրորդեաց և երեքկնեաց զայն, և նա ոչ ինչ հոգացաւ զայնմանէ. սա աստուստ կատաղեցաւ և զայրացաւ, և վարէր գնաւն սաստկութեամբ ի վերայ. իսկ նա աճապարեաց անդէն, պարզեաց զամենայն առագաստսն, և թիւքն առագաստից և թիանց վարութեամբ տեղի տայր։ Մոսկոֆեանք զայն տեսեալ՝ մակոյկովն վազեցին ի վերայ. մօտեցաւ մակոյկն ի վ֊ջլիկն և սկսան մարտ պատերազմի. քաշացան երկոքին կողմանքն և մարտեան թիւֆենկով և փիշտոֆով. և տեղի ետ հիւսիսականն. դարձան ընդ կրունկն մոսկոֆեանն ի նաւն. և անտի դարձեալ սկսան մարտ պատերազմի թօփով յերկուց կողմանց, և երկարեցաւ մարտն իբր երեսուն ժամս. և որպէս թուի անկան բազումք ի հիւսիսայնոյն քան ի միւսմէն. իսկ վ֊ջլիկն մերձեցաւ ի ցամաք անդր, և թիկունս եգիտ, և անտի սկսան և արտաքուստ արձակել թօփս և թիւֆէնկս. և գիշերն եհաս ի վերայ. իսկ հիւսիսայինն տկարացեալ այլ ևս՝ ունայն դարձաւ յետս. իսկ նա ազատեալ ի ձեռաց նորա՝ գնաց զճանապարհ իւր՝ ի սքանչացումն մեր ամենեցուն, որք ի զննին կայաք, զի չէր այնքան հեռի ի մէնջ. այլ որպէս սուրբ զազարու վանքն և սան սէռվլօն։

Լուսանցքին եզերքը հորիզոնաձև գրուած կայ նաև հետևեալը, առանց նշանի մը՝ թէ ուր պէտք է մտնել։

Այլ սոքա չէին բուն մոսկոֆք, այլ յոյնք մոսկոֆեան պայրախով և նոցա հպատակք։

Գրեցաւ յամի 1771 ի դեկտ. 8

ՅԴ.

Գ.

Գերյարգելի Հոգևոր հօր իմոյ, և վեհապատիւ Հայրապետի Տեառն Տեառն Յովհաննու Վրդպ.ի վեհաւ իսոնարհութեամբ ողջոյն սիրոյ

... Վասն պատերազմաց յայտ լիցի. զի ստուգիւ լուաք, թէ երկու ամսով յառաջ՝ եհար մոսկովն զառաճիկն առ բուգուրեչո քաղաքաւն չարաչար իբրև զհարիւր հազար. ցիր և ցան արար. և գերեցոյց հանդերձ փաշայիւն բազումս. և զպատերազմական անօթս յոլովս գրաւեաց, և զկէս մի հալածական արար զղանոբաւ. և առանձինն զ24 առատալայ լի առասանօք և խայիշիւք էառ ի տաճկէն։ Ապա հարցանելով մոսկովն ցփաշայն, թէ առ ինչ բերեալ իցէ զայնչափ առասանս և խայիշս։ Պատասխանեալով ասէ ստուգութեամբ, թէ առ ի գերել և կապել զմոսկն։ Վասն զի չունէր այժմ ի մտի ընդհարկանիլ ի կռիւ անպատրաստ գոլով։ Սակայն խաբեալ յիմոց պօյերից անկայ ի ձեռս թագաւորին զօրօքս, որոյ կամ առաջի։ Ցայնժամ հրամայեաց մոսկովն նոքիմբք առասանօք կապել և տանել գնոսա գերիս աւելի քան զվ. հազար տաճիկս. և մինչ լսի, թէ մոսկն հարկանէ և վանէ չարաչար զթուրքն։... Նոր տէկուէթ եկն ի սրբազան պապէն ընդ ամենայն երկիրն թագուհւոյն, որով լուծանէին և տնօրինին ամենայն տօնք ընդ բոլոր տարին, բաց ի կիւրակէից և ի տէրունականաց, զոր և ի մեր եկեղեցին հրատարակեցաք[1]։...

Անպիտան ծառայ
Հայր Բարսեղ Նազարեան
ի կարգէ սրբոյն Անտ. վրդպ. Մխիթարեան

1772 Յունվ. 8
Յերիսաբեթուպօլիս

---

1. Այս «նոր տէկուէթ»ը որ – բան նամակագրին – Սրբազան Պապէն է՝ կու գայ կերպով մը հաստատելու Ալեաբիոյ կայսեր հրովարտակը և միանգամայն արգիլելու այդ տոքիւ յարուցած վէճերն ու դիմադրութիւնները (տես ՅԱ. վաւերաթուղթ, էջ 270)։

ՅԵ.

Մխիթարեան Նամակագիրը կը սրբագրէ Ֆրանսացի Գաբրիէլ անուն վեղարաւորին պատրաստած Լատին–Հայ բառարանի մը ընծայական թուղթը, որ պիտի մատուցուի Ֆրանսայի Թագաւորին։

Ընդհանրապատիւ տեառն տեառն Աբբահօր մերոյ խոնարհական ողջոյն

1772 փետր. 6

... փառաւոր անն ի գաբուէինաց Գաբրիէլ անուն, ուսեալ զլեզուն հայոց, արարեալ էր գրառարան ի լատին լեզուէ ի հայ բարբառ իբրև զվիլօթն. և հանդերձեալ էր երթալ ի գաղղիա, և հրամանաւ արքային տպագրել զայն. զթուղթն ընծայութեան բառարանին առ Թագաւորն գաղղիացւոց, որպէս օրէն է առնել և տպագրել ի ճակատս գրոց, եւ ցիս և ինդրեաց յինէն սրբագրել զայն ըստ մերում ոճոյ. և ես սրբագրեալ զայն ըստ կարի իմում, իբրև եւս նմա, նա այնչափ հաւանեցաւ ընդ այն, մինչև ոչ յագէր յընթեռնոյ զայն. և անմոռանձ յերեսս իմ առաջի այլոց զովէր և համբաւէր. և ասէր. տեսանէ՛ք զայս կարգաւոր, գիրագոյն քան զիս է յարհեստս ճարտասանութեան. և ես կամաւ զայն այնպէս սրբագրեցի, զի նա զայն յատաջագոյն քան զիս այլոց հայոց ուսեալ էր սրբագրել, և նոքա հրաժարեալ էին. և ասացեալ. զայդ գործ կարօղ են առնել միայն կարգաւորքն վենէտիկեան սուրբ զազարու մենաստանին։...

Նուաստ ծառայ
Հայր Դանիէլ վրդպ.

ՅԶ.

Պապային կառավարութիւնը Հրէից ձեռքն ըլլալուն հաւաստիքներ և ծանօթութիւններ նշանակուած են։

Գերյարգելի արքահօր իմում տեառն տեառն Յովհաննու բառնուպետի Համբուրիւ ոչոյն ողջոյն ի Քրիստոս

... Տէր գրիգորն բազում ուրախութեամբ և յաւէտ բազում աւետեաք յորդորէ զիս ընդ իւր միաբանիլ յայն խորհուրդ՝ զոր ի ծերութեան իւրում ենթադրէ։ Ի թիֆլիզ ասէ կայ եկեղեցի մի փառաւոր, և այժմ այն եկեղեցի ոչ է ի ձեռս նոցա, այլ կամ դատարկ է, և կամ ի ձեռս յունաց, զի հերակլն բարկացեալ ի վերայ փառաւոր՝ արտաքսեալ է զնոսա ի թիֆլիզու. և թէպէտ յեռոյ կոչեալ է զնոսա յեռս, բայց զեկեղեցին ոչ է տուեալ ի ձեռս նոցա։ Ար՛ղ ասէ ես ունիմ ի թիֆլիզ մեծ բարեկամ գյոյն մի ուղղափառ՝ որ այժմ է սիմանպէչի, և սիրելի յաչս հերակլի։ Եւ այժմ գրեցի (ասէ) ևն, զի եթէ զայն եկեղեցի մեզ տայցէ՝ գնամ անդ և բազում հոգևոր չահ ընծայի ժողովրդեան...։

Կարծեմ թէ ի վերայ իշխանութեան հրէից ասա եղելոց ինչ ոչ եմ գրեալ Գերյարգութեանդ. ուստի քանի ինչ ի վերայ այնր ես գրեցից։ Տէրութիւն և իշխանութիւն քաղաքիս ընդ կառավարութեան է ի ձեռս հրէից, մանաւանդ ի ձեռս գլխոյ նոցա՝ որ ասի եաղուպ։ Եւ թէ որչափ է իշխանութիւն սորա կարէք իմանալ ի հնգից. նախ՝ զի յորժամ միասէլլիմն քաղաքիս իշխանութիւն առեալ ի փաշայէն պաղատանաց եկն ասա,

ի գնալն առ նա եաղուպին՝ ասէ ցնա միասէլլիմն. քաղաքս քոյ է, և իշխանութիւն իմ ի ձեռս քոյ. այլ խնդրեմ զի ի կառավարելդ զքաղաքս՝ հովանաւորութիւն քո մի պա-
կասեսցի յինէն։ Երկրորդ՝ զհաճութեան սորա կախեալ է արկանել կամ նստուցանել զմիասէլլիմն։ Երրորդ՝ որչափ ինչ գնան ի պաղտատ թէ դրամքն և թէ այլ ինչ՝ որ հա-
ճութեամբ և ձեռօք պարտին գնալ։ Չորրորդ՝ առանց հրամանի սորա ոչ կազմի և ոչ գնայ կարաւան ի հալէպ։ Հինգերորդ՝ առանց հրամանի սորա ոչ կարէ նաւ մի գնալ ի հնդկաստան, և ոչ նաւն անգղիացւոց։ Ցորժամ հարցանեն անգղիացի նաւապետաց՝ թէ երբ գնայք՝ պատասխանեն՝ եաղուպ գիտէ, նորա հրամանին սպասեմք ևն.։ Այս այր թէ-
պէտև այսչափ բարձրացեալ է, բայց կարի իմն խոնարհ է աշխարհօրէն։

Դրամք տեղւոյ ըստ որում հասարակօրէն ի գործ ածին են սկքգէն ստամպօլու՝ բաց ի պաղտատու մաղրէն, զոր ֆլուղ անուանեն։ Այս ամենաթչուառ ֆլուկ երբեմն բար-
ձրանայ և երբեմն իջանէ ըստ արժողութեան. երբեմն քսան ֆլուղն լինի մին տանիմ, (որ թէպէտ միայն անուն է, բայց հաւասարի կէս փարայիւ ստամպօլի) և երբեմն 15 մին տանիմ, և երբեմն տասն մին տանիմ։...

Նուաստ ծառայ
Հ. Միքայէլ [Ջամչ.]

Ի փետրուարի 8, 1772
ի պասրայ
ընդ հալէպ

ՅԷ.

Հ. Պետրոս Ջուղայեցի Մարտիկենց Մելգոնեան Ազբահօր յանձնարարութեամբ հմտօրէն կը տեղեկագրէ առ Հ. Միք. Ջամչեան՝ Ֆաղկեդոնի և Հայ ժողովքներու պատմիչներու շուրջ մատենագիտական բազմաթիւ աղբիւրներ։

Ի բանաւոր անդաստանի քրտնավաստակ վշակիդ՝ ըղձացեալ առ ի յիւեև դիպել անհատական բարօրութեանց՝ տեսեալ տեսեալ Հայր Միրայել վարդապետիդ ողջոյն խնդալից

... Երեք ինչ յանձն եղեն ինձ գրել առ վերապատուութիւնդ. մի՝ պատմիչ ժողովոյն քաղկեդոնի. երկրորդ՝ պատմիչք ժողովոցն հայոց. և երրորդ՝ պատմութիւն յովհաննայ պապուհոյն. զորոց մի ըստ միոջէ ըստ հրամանի Գերյարգելւոյն գրեցից.

Պատմութիւն ժողովոյն քաղկեդոնի և յաւելեալն ի նա, մեր վ. Հ. Նիկողայոսն էր գրեալ և ոչ ես։ Պատմիչք այնր ժողովոյ բազումք են յամենայն ազգս. իսկ ես զո-
մանս ի մէջ բերից։ Ի յոյնս պատմէ եւագր. գիրք Ա. գլ. Ը. ի հայս՝ սահակ մռուտ եպիսկոպոսն տայոց՝ որպէս պատմէ վարդապետն վարդան զանձակեցին՝ ի բանն որ յա-
ղագս թղթոյն փոտայ առ տէր զաքարիայ կաթուղիկոս ձագացի։ Եւ ի լատինս բազումք ևս և մեր բիւլվարտ ի ճառն յաղագս խորհրդոյ մարդեղութեան. վիճ. Դ. զարտուղութիւն պատմական երկրորդ հատուած Ա. յորմէ օրինակեալն է որ առ քեզ կայ։ Ժողովոցն հայոց պատմիչք բազումք են։ Ջժողով սուրբ Լուսաւորչին յէջմիածին. պատմէ տէր յով-
հաննէս օձնեցին ի պատմութեանն մանազկերտի ժողովոյն։ Զարիստակեայն յէջմիածին. կանոնագիրքն։ Ջմնծին ներսէսին. օձնեցին ի նոյն տեղ". տէր յովհաննէս գառնեցին յիւ-
րում պատմագրութեան. և կանոնագիրքն։ Ջմնծին սահակայ յաշտիշատ. օձնեցին ի նոյնն։ Ջսրբոյն յովսեփայ ի շահապուհանի. կանոնագիրքն։ ՋԳիւտայն կամ զմանդակունւոյն ի դատապարտութիւն գրոցն թէոդորոսի և դիոդորի. Կղեմէս կալանն ի պատմ. հատ. գլ. Ը. հմր. 5. ի յունաց։ Ջբաբգէնի ի քաղաքու դաշտի օձնեցին ի նոյնն։ Ջբաբգէնի Բ. ի դվին. սիւնեցին ի թուղթն իւր. տէր յովհաննէս գառնեցին ի նոյնն։ Սամուէլ քահանայ կաթուղիկէն անւոյ ի ժամանակագրութեանն իւրում։ Եւ կիրակոս վարդապետն Գան-
ձակեցի աշակերտն Վանական վարդապետին ի պատմագրութեան իւրում։ Ջներսէսի

աշտարակեցւոյն. կանոնգիրքն: Զաբրահամու աղբաթանեցւոյն ի դվին. ուխտանէս եպիս-
կոպոսն ուռհայի. եէր յովհաննէս ի նոյնն. Կիրակոս գանձակեցին ի նոյնն: Զեզրի
քառասնակերտացւոյն ի կարին. յովհաննէս եպիսկոպոսն տարօնու. եէր յովհաննէս ի
նոյնն. սամուէլ անեցին ի նոյնն. Կիրակոս գանձակեցին ի նոյնն: Զյովհաննու օձնեցւոյն,
ինքն իսկ ի նոյնն. եէր յովհաննէս ի նոյնն. սամուէլ անեցին. Կիրակոս գանձակեցին:
Զսիոնի բիսոնիեցւոյն. կանոնգիրքն: Զգաբարիայ ձագացւոյն ի չիրակաւան. Յահակ
եպիսկոպոսն տայոց, մականուանեալն մուշ. Վարդան վարդապետն գանձակեցի ի պատ-
մագիրութեան իւրում: Զժողովն անւոյ յորում ընկեցին զեէր Վահան յաթոռոյն. Պատ-
թէոս վանաց երէց ուռհայի ի տարեգիրս իւր, սամուէլ անեցին. Կիրակոս գանձակեցին:
Զժողովն անւոյ՝ որ ի սակս տեառն պետրոսի գետադարձին. մատթէոս վանաց երէց
ուռհայի՝ ի նոյնն. Կիրակոս Գանձակեցի: Զժողովն քեռոյ. Ներսէս չնորհալին՝ ի վի-
պասանութեան նախնեաց՝ (այսմ չեմ ես անձամբ տեղեակ՝ այլ ի գրուածոց մեր վեր.
Հայր Իգնատիոսին ասի): ԶԳրիգոր տղայի ի տարսոն: Գործք ժողովոյն և թուղթք տեառն
Գրիգորիսի, Ներսեսի. և Գրիգոր տղայի և Կիրակոս Գանձակեցին: Զժողովն որ ի մեծն
հայք վասն տօնելոյ զտօնս ըստ ամսոյ ևն. Կիրակոս Գանձակեցին: Զկոստանդնի ի սիս
առաջին. Կիրակոս Գանձակեցին: Զկոստանդնի ի հռոմկլայն. Կիրակոս Գանձակեցին:
ԶԳրիգորի անուարգեցւոյն ի սիս. Բ. Ձաղընտիրն. ի կալանէ յիշատակեալ. Զկոստանդնի
կեսարացւոյն յաւանայ. նոյն Ձաղընտիրն ի կալանէ յիշատակեալ: Զժողովն ի մեծ
հայք՝ յորում ի բաց կացին յաթոռոյն սսոյ. Թումա ոմն վարդապետ պատմաբան, ժա-
մանակակից յոհաննու որոտնեցւոյն: Զժողովն յէջմիածին՝ յորում ընկալան զգլխաւո-
րութիւն եկեղեցւոյն հռոմայ. և զժողովն ի կարին յորում ի բաց եկաց յաթոռոյ տէր
սահակ ահագինն. չունիմ ի պատմագրաց ինչ ցուցանել՝ զի յայսմ դարու են եղեալ, և
թէ գրեաց ևս ոք զանցս ժողովոցս, չև ևս էհաս ի ձեռս մեր. ուստի և ի հաւաստս պատ-
մողացն է ապաստան:...

ի վենետիկ յամի տեառն 1772
մարտի 23

Նուաստ ծառայ
Հ. Պետրոս վ. կ. Մ.

ՅԸ.

*Գաթեաղ յայժ շահեկան տեղեկութիւններ Ցէր կոմիտաս վկայի փառաւորու-
թեան մասին, ուր կը փայլի միանգամայն Միաբանութեանս կոզմանէ ի սկզբանէ եղած
ամենամեծ յարգանքը: Վաւերագիրս կը յիշատակէ նաև երր. վկային տապանագրին
յօրինողի որոշ անունը (Հ. Մկրտիչ Ալնաեանց): Կը հաղորդուի նաև երանելւոյն
գերեզմանին վրայ արդարօրէն պատուհասեալի մը ծանր ղէպքը:*

Գերապատիւ Գերյարգութեանդ աղչոյն խոնարհական

1772 ի մայիսի 18

... Ցայսոսիկ աւուրս ընդ յովսէփ աղային փափազօղութենց, որք սաստիկ բարե-
կամք են Գերյարգութեանդ, և միաբանութեան մերոյ, և ինձ, և երախտաւորք յայժ,
չոքայ յուխտ գերեզմանի երիցս երանելւ տէր կոմիտասին. և վասն միաբանութեան
մերոյ՝ եւտու օրհնել զգերեզման նորա տասն քահանայիւք...: Եւ յետ օրհնութեանն,
ի գուես անկեալ առ գերեզմանաւ նորա, աղօթս հոգեհատաչս վասն միաբանութեան
մերոյ, և վասն իմ և վասն երախտաւորաց մերոց մատուցի առաջի նորա: Եւ յետոյ ապա
գՀայր մկրտչեան գեղեցկահիւս ուռնաւորս գերեզմանի նորա ընթերցայ. և ուրեք ուրեք
ի մեկնելն իմ զբանս նորա, քահանայի գերեզմանականք որք առընթեր իմ կային,

ծանեան զվարի բան լինելս[1]։ Եւ իբրև տեսի, զի ի միոյ յանկ[ե]անց գերեզմանի նորա հատուածս ինչ հատեալ էր, հարցի զքահանայ մի գերեզմանական, և ասեմ. ո՞ զայն արար. և նա ասէ. մանուկ ոմն մահմետական։ Բայց ես յայլոց լուայ. զի քահանայ ոմն յիւրայնոցն զայն արարեալ էր. և ի լուալիսն ի հոգալ զպէտս որովայնին, ի գարշելիսն անդ՝ չարաչար պատժեալ, մահազրաւ լեալ է։... ասա բարեկամք մեր լուեալ պատմեն մեզ, թէ ի հռօմայու խնդրեալ են ի ձէնջ, իբրև ի ճշմարիտ վկայից՝ զվարս ւղէր կոմիտասին. և ուրախանան ընդ փառաւորութիւնս մեր, և ընդ այնպիսի վարկմունս նոցա ի վերայ մեր. զայսպիսեաց և մեզ հարցանեն իբրև զճշմարիտ գիտօղս...։

[կ. Պոլիս] Նուաստ ծառայ
Հայր Դանիէլ վրդպտ. [Տէր Գրիգորեան]

ՅԹ.

Պատմիչն արք.ի այս թուղթը՝ իր կեանքի վերջին օրերուն յայտագիրը կուտայ։ Ակնարկած նախորդ գիրը չունէր մեզ մանաւոր կարևորութիւն մը։

Վերստին յայտարարութիւն գերյարգութեանդ՝ ձանդևրձ ողջունիւ և սիրով ի Քրիստոս Յիսուս

1772 Սեպտեմբերի Դ ի Կոստանդնուպոլիս

Անցեալ փոստիւն ծանուցաք Վեհանձնութեան քումդ, թէ ձեռամբ Էրարտօ Խիէչ կոչեցեալ անձին, որ է ի Վիէնայ, և միջնորդութեամբ Փէթրօ Զաքարիայինի, որ է աստ՝ հասանելոց է առ քեզ մերթ հազար ղուշ. և մերթ աւելի կամ պակաս, որ է իմ դրամն. և ծանուցաք հրամանուցդ, թէ առեալ զայնս պահեսցես ի քեզ, մինչև ցհասանիլն իմ աստուածով ի յայդր կողմանս։ Եւ այժմ զնոյնն կրկնեմ քեզ, զի վասն Աստուծոյ՝ առանց ձանձրանալոյ կատարիցես զինդիրս մեր։ Վասն զի գուցէ ոչ կարիցեմ զայլ գիր ինչ գրել քեզ աստուստ, վասն նաւարկելոյս, որ ի մէջ սեպտեմբերի ամսոյս լինելոց է. և երևի թէ, դէպ ի Մարչիլիայ նաւելոց եմք, առ ի չգտանելոյ ուղղագնաց նաւ առ Վնէժդ. և այսու ամենայնիւ ողջ լիցիս ի Տէր՝ հանդերձ քոյայնովքդ, զորս ողջունեմ սիրով, բաւ է։

Փափազեան մահտեսի Ստեփան սիրազնոյն մերոյ՝ ողջոյն և օրհնութիւն ընծայեմ

Նուաստագոյն ծառայ Տեառն
Սարգիս Վրդպտ, և այլն

կնիք

1. Կ'ուզէ անշուշտ ըսել. Ձանձրացած՝ ինչ որ ես վարդը պիտի ներկայացնեմ. այսինքն թէ՝ անգրագիտութեան կախած կամ գանգատած տեղս՝ որ մեկէ մը անարգուելէ է. ըստ մտաց յաջորդող դէպքին։

ՅԺ.

Մեր նամակագիրը կ՝ամբողջացնէ իր կարևոր ծանօթութիւններով Պատրիարքեան արքի կենսագրականը։

Գերապատիւ և Գերարգոյ Տէսաի Տէսաի
Պատրիարգաց վրդպ. Արքայ Հօր մերոյ ողջոյն ազաւաւրեալ

... Պարգիս վարդապետն եւ ասեր Ֆրանսըզի նաւով որ գնալ ունէր ի Մարսիլիայ, յաւուր երեքշաբաթի ի 18 սեպտեմբերի. և անտի գնալ ունի ի Հռոմ, և անտի ի Վէնետիկ. սակայն խնդրեաց ի մէնջ զհանդերձ կրօնի մերոյ վասն իւր և վասն փոքրաւորի իւրոյ՝ ծպտիլ նոսա ի ճանապարհին, բայց մեք պատճառելով զպատճառանս ոչ տուաք, զի մի տացուք տեղի ամբաստանութեան չարափառաց՝ ասել թէ սոքա փախուցին գնա, և փախուցանեն զայսպիսիս զգեցուցանելով նոցա զհանդերձս իւրեանց. և այլ ևս անպատշաճութեանց մարթ էր ծագել զորս ոչ զգացուցաք նմա, վասն որոյ կարծեմ խաթերմայ եղև զմէնջ սակաւ մի։ Ի ճանապարհէն գրեաց թուղթ առ ընտանիս իւր ասե, և բաժանեաց նոցա զամենայն գիտո և գկարասի տան իւրոյ. և ի թղթոյ անտի իմացան զգնալ նորա ասեր, զի յաւազ քան զայն և ոչ ընտանիք և քոյր իւր գիտէին. մինչև պատրիարգն իսկ յանցեալ չարաթուն, առաքեաց և որոնեցին գնա յանգէստ յօրթաքէօյ և ի թառապիայ, և ոչ գտաւ։ Եւ բազում բարեկամք նորա ի հակառակորդաց ողբան զգնալ նորա, որպէս ի հարիկ խնդան թշնամիք նորա։...

Յամի տեառն 1772
Սեպտ. 29 [Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Ալնանեան վրդպ. Մ.

ՅԺԱ.

Հուսկ իր անձին շուրջ ինքը Պարգիս արքե. Պատրիարքեան կու գայ նախընթացները հատուցանելու և նաև հաղորդելու իր կենսագրութեանը վերջին մասերը։

Տէսաի Տէսաի Պատրիարգի Արքայի
սիրով և կարօտիւ ողջոյն ի Քրիստոս Յիսուս

Գանիկէ վսեմութիւնդ, զի իբր երկու ամսով յաւազ երկու գիր մի գնի միոյ ի կոստանդնուպօլսոյ յղեցի յարգութեանդ, վասն գրամոյն իմոյ, որ անցանելոց էր այդր, և ի քեզ հասանելոց փոսթովն վիէնայու ձեռամբ փէթրօ Զաքարիային, մերթ հազար հինգ հարիւր դուշ. և մերթ աւելի կամ պակաս. որոց բովանդակն լինելոց է իբր տասն և մէկ հազար դուշ, կամ սակաւ մինչ աւելի կամ պակաս. և ակն ունիմ թէ գայդմանէ ծանուցանելոց ես ինձ ի Հռոմ ի ձեռն գրութեանդ մի ըստ միոջէ հաշուին հանդերձ։ իսկ եթէ զարդենական կացութենէ մերմէ կամիս տեղեկանալ՝ ծանիր. զի ըստ հաշուի հին տումարին, ի տասն և ութ աւուրն սեպտեմբերի ելեալ մեր ի կոստանդնուպօլսոյ. և ի միջոցի քսան և չորս աւուրց՝ անվնաս հասաք ի նաւահանգիստն Մարսիլեայու. և այս երեք օր է որ կամք ի նազարէթին նորին. և ըստ ծխոյ տեղւոյս մինչև ի լրանալ երեսուն աւուրց պարտիմք մնալ աստ, և ոչ աւելի։ Եւ զկնի ելանելոյ մեր ի նազարէթէն, կամիմ իբր հնգետասան աւուրս մնալ աստ ի Մարսիլիայ, առ ի հրվել ի քաղաքի և սա-

կաւ ինչ զբօսնուլ. և ապա եթէ տէր կամեսցի ելանելոց եմք ի ճանապարհ կամ ծովու և կամ ցամաքով աճապարել ի լիկուրնայ, և կամ ի Չիւիթայ Վէքքհա, և անտի աստուծով ի Հռօմ: Եւ բաց յայսցանէ առ այժմս զայլ ոչ ինչ ունիմ զեկուցանելոյ երջանկութեանդ. միայն թէ զաղօթս խնդրեմ ի մաքրակրօն եղբայրութենէ ձերմէ, առ ի տեսանել միւսանգամ զմիմեանս, և հրճուիլ Տերամբ: Նաև ի մէջ գրոյս եղեալ գիրն հասուսցես Սեղբոսեան Յօհաննէս աղային ուր ուրեք և իցէ: Վերջապէս համայն միաբան եղբարց մեծաւ կարօտիւ ողջոյն սիրոյ ընծայեմ. ընդ որոց նաև փափազեան մահտեսի Ստեփանին, առ որ ունիմ խօսել վասն անցիցն Ասկէրեան Պարոն Յարութիւնին. ողջ լեր ի Տէր բաւ է:

1772 ի Հոկտեմբերի ԻԵ
ի Նազարէթն Մարչիլիայու

Ամենանուաստ Ծառայ Տեառն Յիսուսի
Սարգիս վրդ. և Արքեպիսկոպոս
Կոստանդնուպօլսեցի

Ընդ իս եղեալ Հայր Յօհաննէս աշակերտն իմ
մեծաւ յարգանօք ողջունէ զձեզ:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ա.

«Տէր կամիտասին տղան առողջապէս կարէ այժմ չըլլիլ. և աւուրն մին ճուլի թօչակ եղև նմա ի սրբազանէ պապէն[1]»։ (Ձեռամբ քահանայ առ Միխիթար Աբբայ. 1720, Նոյեմբերի 23 [Հռոմ])։

բ.

Վասն վարուց և պատմութեան յակոբու առաքելոյն, թէ որպիսի գիտես կամ լուեալ ես յորժամ գնաց սպանիօլի յերկիրն, ինչ անցք կամ հրաշագործութիւն եղև, զերայ աստ խնդրեցին ծառայէդ. և ես յորոնեցի ձառընտրին մէջն որ մեր եկեղեցին կայ երկաթագրով յոյժ հին և վաղուց գրեալ[2]. գոի վարքն առաքելոյն, բայց մին թուղթ կտրած էր։ Գերարգութիւն ձեր բազում վարուց և սրբոց և պատմութեանց տեղեակ է. ասեն սպանեօլներն թէ յորժամ առաքեալն յակոբ էհաս այնմ գաւառի, որ մեք ասեմք եզր Աստուածածնին, երևեցաւ նմա սուրբ կոյսն ի վերայ միոյ սեան և մխիթարեաց ասելով թէ անուան իմոյ տեառնագրեալ աստ տաճար մի, և չինեաց առաքեալն, և յետոյ դարձաւ երուսաղէմ և եռես կոյսն և գլխատեցաւ ի հերովդեսէ որպէս գրեալ է. ես ծանօթութիւն տայ իտալիանի գիրն որ ի մէջ գրիս է. ողորմած հոգի վարդապետն ասէր. ես լսած եմ և ոչ գիտեմ հաւաստի զոր վկայեմ. նոյն ժամանակին չինեաց առաքեալն թաթէոս յուրհայու աստուածածնայ եկեղեցին արևելս. և առաքեալն յակոբ արևմուտս։ Ջայս վերոգրեալ և խնդրեալ պատմութիւնս որպէս գիտես կամ լուեալ ես, գրեսցես վկայելով թէ ինչ գրքի մէջ, կամ հեղինակն։ (Ստեփանեանց արեղայ առ Միխիթար աբբայ յաւիկ 1722 յունիսի Իդ, ի վեցն Հռոմ)։

գ.

Սպահան միրվէյիս օղլին[3] թէպէտ վազ ուրեմն պաշարեալ էր. զկնի Ջոզայ առնլոյն և գերեալոյն աւելի քան գքսան աղջկունս, որոց մինն է չէհրիմանենց աղջիկն, և կողոպտելոյն զկնի,

1. Այս տեղեկութիւնը հետեւեալ հարցը կը գնէ մեր առջեւ. Տէր Կամիտաս, ըստ իւր կենսագիրներուն, ունեցած է հինգ տղիկ և երկու մանչ զաւակ՝ Ղահապետ և Յովհաննէս անուններով. առաջինը 1708.ին մեռած է ի Հռոմ, իսկ երիցորդը՝ Ղաբրիէլ մէջ քարգմանի պաշտօն ունեցած է։ Այդ մեր 1720 քառական նամակաւ յիշատակուածը ո՞ր էր. անշուշտ չէր կրնար Ղահապետն ըլլալ, քանի որ սա արդէն 1708.ին վախճանած է, Պիտի ըսենք ուրեմն որ Յովհաննէսն է, որ և Հռոմ ապաստանած էր Հօրը նահատակութենէ վերջ (տես Summarium super dubio an constet de martyrio [Gomidæ de Carbognano], էջ 207).

2. Դժբախտաբար չէ յիշատակուած այդքան քանկագին ճառընտրի մը բուն քառականը մեր վաւերաթուղթին մէջ, ինչ որ հետաքրքրական էր, զիտնալու համար թէ ինչ ասոնցմանէ հնութեան տարբերութիւն կայ ասոր և ապագիական աւանդութեան գլխաւոր հիմ ծառայող Ընտրացիմ զանուած հայ ճառընտրին մէջն՝ որ գրուած է յամին 1054. (Ակգերեան՝ Վարք Սրբոց. Հտ. գ. էջ 303).

3. Միրվէյիզ այդ ժամանակի Պարսից արեւելեան ազատանից զօրաց գլուխն ու առաջնորդն էր։

ասեն ևս սպահան առաւ. նմանապէս ևս լէկզին զբազում գիւղս և զգաւառս պարսից աւերեաց և զբազում հայս ի սուր սուսերի մաշեաց: (Գաբրիէլ վ. Թէոդուսպոլսեցի առ Մխիթար Աբբահայր, թուին 1722. օգս. 26 [տեղի?]):

դ.

Սամաքիայու սուրբ Գէորգայ ժամն սկսան շինել՝ որ մինչև կատարի, 100 քսակ հազիւ բաւականանայ ասեն. և այսու եղև վեց ժամ շինեցեալ հրամանաւ այս վէգիրիս. այսինքն աստուածածնայ, լուսաւորչին, պալատու, սուրբ Գէորգայ, Թովղափոյուն, դաւրքէօյին. վասն ամենեցուն գնաց ասեն մինչ 300 հօրթակ ստակ. և յամենեցուն առնուն զդրամս կամայ և ակամայ[1]: (պ. վ. Տայի սիմեոնեան առ Մխ. Աբբայ, բուդջի քրիստոսի 1722. յունվարի 13. ի Պալարնայ):

ե.

Գէորգ վ. ի թոխաթ էր մինչև ցա(յ)ժմ (բայց անընդունակ յուղափառաց), զի հայք զնա մնծաւ ազաչանօք տարան ի վանքն նորաշէն, և անդ եկաց ժամանակ մինչ, ի մերձակայ աւուրս այլազգիքն այրեցին զվանքն (քանզի ի շինեցմանէն մինչև ցայս վայր պահէին զոխս, նաև կամէին քակտել զՊազարճուխի և Սուրբ Գառասնից ժամն, բայց բազում փողով հազիւ զերծուցին, և հայքն երկու և երիք օր զոռեցին զկրօնականն և զեկեղեցիսն, իբր թէ կամին առնու(լ) զվրէժս ի տաճկաց, և այնքրիկ անմտացան զի վերստին կամին շինել զվանքն: (փ. վ. առ Մխիթար Աբբահայր. 1723, Սեպտ. 11 [տեղի?]):

զ.

Ցարևելից կողմանէ յայտնի ոչ ինչ լուր գոյ. սուս է օրթալխն. բայց ի ծածուկ ասեն թէ պատերազմ ի վերայ սղնաղին հայոց է. ասեն թէ վայրագոյն և վոքրագոյն մասն սղնախին հնազանդեալ են այսու պայմանաւ տալով գնարկ, բայց ոչ գոլով ի մէջ ինքեանց թուրք, յետոյ 6000 թուրք թողեալ են որպէս պաշտպան զի մի ընտսլցին յայլոց. բայց զկնի ոմանց աւուրց ձեռք ձգեալ են առ ի կողոպտել զինչս, զորդիս և զկանայս, յետոյ կսկծեալ սիրտն հայոց յանկարծ յառեալ սրակոտոր արարեալ են զբնաւս տաճկունս և փախեալ ի մեծ սղնախն. վասն այսորիկ վեց փաշայ թային եղեալ է գնալ ի վերայ նոցա: (Հ. Միքայէլ վ. Սեբաստացի առ Մխիթար Աբբահայր. 1726 Յունիս 1, Կոստանդնուպոլիս):

է.

Նոյս ընդ վերապատուելոյ Տէր Յակոբին առաքեաց գերագոյն Հայրութեան ձերոյ (Ստեփաննոս վ.ն յԱվիկոնենայ) 60 հատ սրբոյ Լուսաւորչայ միտալ. ևս մին հատ արծաթեայ: (Պատասխան բառնեայ Տիգրանակերտեան առ Մխիթար Աբբահայր. 1724 Հոկտ. 21 Յունուար):

ը.

Նոյս բազում խռովութիւն գոյ այս դեհս, բնաւ ստոյգ զրոյց չգայ Կոստանդինուպոլսէ, մինչև ի Բաբիլոն ձատախտանայ և ասքառ կրուի միշտ թէ ծովով և թէ ցամաքով. ծովով նավքն կու

1. Ա.Հմէտ Գ.ի կայսրութեան ժամանակն է:

գայ մինչև ի Աքանդրունայ. անտի ընդ ցամաք գնան մինչև ի Պէրաձուկ, եփրատ գետովը իջանեն ի Բարիլոն. քանզի Հասան փաշան սաւառներ է և տղին տուած է զչզօր փաշայութիւնն, ոմանք ասեն թէ ամրվէչիկն մինչև ի Համատան եկեր է, կամի զԲարիլոն առնուլ, որ անդի մինչ ի Մաքուն և ի Մատինան գնալ զվէգն առնուլ, չանգն և դիւտաւորութիւնն այն է: Եւ ոմանք ասեն թէ Բարիլոնն արաբացիքն բոլորած են, թէ որչափ քարավան անցանի զամէն կթալանեն: Եւ Թիֆլիզու բնաւ ստոյգ գրոյց չգայ, ոմանք ասեն զկնի Ի՛ն անգամ առնելոյ թուրքին, դարձեալ ձամն առեր է, և այսչափ ասքար և փաշայ չարդեր է. ոչ գիտեմք որպէս լինելոց է, բնաւ չեն ասեր թէ ում հետ սաֆար պիտի առնեն, Մօսզօվի անուն չեն տար. և այնչափ ասքար կառաքեն: (Տէր Մարգար առ Մխիթար. 1724 Մայիս 16, Սքանտար):

ի.

Եթէ կամիս իմանալ որպիսութիւն այսմ կողմանց ոչ է կար ի գիր արկանել վասն աւերմանց Արարատեան աշխարհին, ևս առաւել Թիֆլիզու ապստամբաց քաղաքին, որոյ գրաւեալ եղև ի ձեռն այլազգաց և գերիք անթիւ ի ազգէն վրաց և հայոց ևս և ի պարսից կանայք և աղջկունք մանկունք և երեխայք, որոյ ի տեսանելն որպիսի աղէտ և կսկիծ հասանէր, ոչ թէ միայն ի սիրտս արանց ողորմածաց և հաւատացելոց այլ քարացեալ և անխիղճ այլազան սեռից, որոյ նոյն ինքն ամենակարող Քրիստոս զգինս արեան իւրոյ խնայեցէ և այց արասցէ այգոյն զոր տնկեաց աջ իւր: (Չախչախիւլ առ Մ. Աբբայ. 1724 մայիս 22 [անդի?]):

ժ.

Արդ գնացի հայոց ժամն առ ի տեսանել զվ.յդանէսն և զսահէթչին, ուր ժողովեալք ի միասին, զկնի այլոց բանից ի մէջ բերին զբան տօնացոյցին, ժամերգութեանն և պատարագին, ումն ասէր այսպէս և ումն այնպէս. իսկ մինչ յիշեցաւ անուն քո զկնի խաչատուր վարդապետին, թէ նոքա միայն կարօղ են ի ձեռն բազմազան աշխատութեանց ուղղել զայն ամենայն, եթէ սուբբ ժողովն հրամայեսցէ. յայնժամ վեր թռեաւ տէր Սահփանն և ասաց, եթէ Մխիթար վարդապետի ձեռացն անցանի, նա կու ֆռանկացուցանէ զհայոց ժամակարգութիւնն: Եւ ես պատասխանեալ ասացի թէ սղալաբար իմացեալ ես, զի Մխիթար վարդապետն է բոլորովիմբ ընդդէմ այդպիսի կարծեաց, և ջանք նորին է բառնալ զտարաձայնութիւնն և սերմանել զսէր և զմիաբանութիւն, ոչ խնդրէ զիւրն, այլ զօգուտն հասարակաց, քանզի է ցանկացօղ փրկութեան հոգւոց, և վասն այնորիկ առեալ է զանձն իւր ի աշխատանս, ոչ ջանայ թէ այլք հետևիցին կարծեաց և արարքութեանց իւրոց, այլ սղալսէ այցելութեանն Աստուծոյ, որով զարթուցեալ սուբբ ժողովն՝ հոգայցէ սրբագրել, ուղղել, կարգաւորել և կանոնաւորել, զի ընթանայցեն ամենեքին այնուհետև համակերպաբար. եթէ դու զմի կողմն նկատիցես, նա նկատէ զտասն. և թէ դու զփ, նա զհազարն: Ամենեքին եղեն ջատագով բանիցս այսոցիկ..... պատճառն է այս, զի խանգարիչքն յարևելեան ասեն, թէ Մխիթար վարդապետն է ի կողմն հայոց. և յարևմտեանն ասէ, թէ ֆռանկացուցանէ, ուրեմն ես ի մէջն, որ ի յայլ խառնուրդին՝ երևիս ի ձախն. և ի ձախն խառնուրդին՝ երևիս ի յայնն՝ իմ սիրականս: (Յօհաննէս եպս. առ Մխիթար Աբբահայր, 1724 մայիս 27, ի դարն Ս. Օնոփրիոյ, ի Հռոմ):

ժա.

Եւ թէ վասն նորաչէն եկեղեցոյն մեր հարցանես, որ եղեր դու պատճառ չինման նորա, քոյին մաքուր ազօթիւքն հասին ի յաւարտն բարձրացչէն կաթուղիկէիւ, և կամարայարատ, վասն քոյին սուբբ խրատուն բօվանդակ ժողովուրդն չարժեցաւ և բազում աշխատութեամբ աւարտն հասինք... և թէ հարցանես վասն աղջիկ ազայոցն՝ մինչև ցայժմ կու ուսանին ըստ կարեաց մերոց ԺՀ աղջիկ

տղայ լաւ կու կարդան։... Ի կէղեաւն խօճայ Սօղոմոն ինքն իւր ընչիւքն ամենայն խարճով, քարէ եկեղեցի չինեց կէղեաւն։ (Տէր Յովհաննէս Պաչվարովցի[1] առ [Միխիթար]. 1724 Յուլիս 8, [Պաչվարով])։

ժբ.

Սոյն օր փափն[2] նախ քան զծագելն արեգականն եկն ի պուքայ վ.երիկնան, և ըստ սովորութեան իւրում ճեաց անդ մինչև ժԸ ժամ աւո(ւ)րն և եկեղեցին դարտակ պահեն, զի այսպէս առնէ օրն մի յեկեղեցի գնայ որ ծխաւոր են և կանօնականք, հետ նոցա ասէ ժամակարգութիւնս և քննէ զամենայն ինչս։ Եւ մեր հայքն թողուն մտանելն ի ներս. այսօր աստ եղեալ ամենայն հայքն ներկայ էին փափի ժամերգութեանն, և վերջապէս իւր պատ(ա)րագին։ Ցոյս գոյ թէ մին օր ևս մեր եկեղեցին գալոց է։ Ամենայն օր չրջագայի ի յեկեղեցիս, ի յիւանդանոցս և ինքն անձամբն սպասաւորէ. զանթիւ տեղս, զտօշակս և զանկողինս կիզել ետ և զվերակացուս փոխել. անձամբն լսէ զխոստովանութիւն. տայ զօծումն վերջին։ Ջսրբութիւն առնէ, զձեռնադրութիւն և տեառնագրէ զեկե(ե)ցիս։ (Պաղտասար քահանայ Ադրաճամեան Տիգրանակերտեան առ. Մխ. Աբբայ. 1724 Հոկտ. 22, Հռոմ)։

ժգ.

Վասն աւարտման չինւածոյն[3] յոյժ ուրախ եղէ մինչ լուայ, վասն որոյ ասեմ. չնորհաւոր չինւած եղիցի, որում նստիս բարով և վայելեսցես երջանկաբար հանդերձ սրբակրօն միաբանիւքդ, և տէր տացէ գերարգութեանդ զկեանս առողջս և ապահովս, որով կարողանայցես աճեցուցանել չնորհիւ Տեառն զչինւածն հոգևոր՝ և բարձրացուցանել, և առ գագաթ կատարելութեան հասուցանել, զի լինիցի տեղի ապաւինի և ժողովարան ազգին մերոյ փեռեկտեցելոյ, գոլով ի նմա բնակիչքն հովիւք զւարթունք, որ յամենայնում տեղւոջ և ժամանակի ջանայցեն խնդրել և կեցուցանել զկորուսեալսն, որպէս և յուսամք։ (Ցօնան եպս. Սեպաստիոյ առ Միխիթար Աբբայ. 1724 դեկտ. 2. ի Սուրբ Ծնօթիխոսն ի Հռոմ)։

ժդ.

Սրբազան վ.եհապետն[4] եկն յեկեղեցին մեր։ Ջիրաց զանազանաց զմին կէս ժամ խօսեցաք և համբուրեցաք զուսս նորա։ Եպիսկոպոսք ընկալան զհինգ հարիւր ներողութիւնս, քահանայք զեր.եքհարիւր ներողութիւնս, և աշխարհական(ք) ամենեքին՝ ոլք գտան ներկայք՝ թէ ոլք և թէ կանայք ընկալան զհարիւր ներողութիւնս։ (Խալատուր վարդապետ առ Միխիթար Աբբայ, 1725 մարտ 10. Հռոմ)։

---

1. Պաչվարովցի Տէր Յովհաննէս սոյն քաղաքին ևրէց քահանան է, որ և գրելով եկեղեցւոյ կանգնուելուն համառօտ ցիշատակարան—պատմութիւնը՝ քանդակել տուեր է զայն անոր կողմնակի մէկ գրան վրայ։ Տաճարին չինութիւնը, յանուն Սուրբ Երրորդութեան, սկսած է 1723-ին։ Շինութեան «գործակից եղան, ինչպէս կ'երևնայ – կ'ըսէ Գովրիկեան – բոլոր ժողովուրդը՝ մեծամեծք ու փոքունք, արք և կանայք, ոմանք գրամ տալով ու ոմանք ձեռաց աշխատութիւն մատուցանելով» («Հայոց յեղիսաբեբուդիա Դրաճիկոնեից». Վիեննա, 1893, էջ 27)։ Այս ամէնը որոշ է Տէր Յովհաննէսի առ Միխիթար գրած նամակին մէջ, որ միանգամայն եր. Հիմնագրիս բարոյական ամենամեծ ազդեցութեան և ժողովրդեան առջև անոր վայելած համբաւին փառաւոր փաստաթուղթ մ'է։

2. Բննդիկտոս ԺԳ.։

3. Կ'ակնարկէ վանքին Ներքնծայարանի և այլ կարևոր շինութիւններու։

4. Բննդիկտոս ԺԳ.։

ժե.

Այսօր փետրուարի ութուտասներորդին [ի Զանթա] հրաւիրեաց ի ճաշ. գնացի։ Տանկաց նաւերն լսեցաք թէ ի Մօթօն է, գնալոց են ի պատպատիա առ ի վրէժխնդրութիւն էփռաթօռի նաւուցն, զորս առեալք են զի նաւ բարբարոսքն, զմին ի մերձաւոր ժամանակիս, գնան տանկի նաւերն, զի վերադարձուսցին զառեցեալ նաւսն էփռաթօռին. լուաք թէ բազումք հայք գոյն ի նաւսն, որք եկին ի վէնէտիկ։ (Միքայէլ վ. Սեբաստացի առ Մխ. Աբբայ. 1725 յուլիս 23 [Զանթա])։

ժզ.

Զգիրն զայն որ ի մայիսի 15 գրեալ էիր էհաս ինձ, յուլիսի 7. 1725. և եւս վերապատուելի Պօղոս վ. և ծանեայ զգրեալսն ի նմին. այսինքն զառաքիլն վերապատուելի Մխէէլի վարդապետի և յետոյ վերապատուելի Ստեփանոսի վարդապետի և զչորից անձանց ի Հռոմ գնալն, և խաղաղութեամբ ի վանս դառնալն, և տէր խաղաղութիւն պարգեւեսցէ. նաև զչինիլն վանուց և զնորոգիլն որմոց պարսէզի և զայլս բանս աջողմանց մենաստանին և յոյժ ուրախացայ...։ ի կողմն կարմիր գլխոյն կարի յոյժ խռովութիւն գոն և վրդով ընդ ճերմակ գլխոյն. և ոմանք ասեն հայք ևս ընդդէմ եղեալ են ճերմակ գլխոյն, և այս ոչ է փոյթ մեզ այնքան ով տէր իմ, բայց ցաւն խեղճ ազգին մերոյ աճէմի են մեծագունեղ, զի զգերեալս կանայս, և աղջկունս և մանկունս հազարներով բերել ոչ դադարին այսր, և այլ տեղիս տանիլ ոչ նուազին...։ Նաև այժմ ճերմակ գլուխն ժԲ հազար ձիի միս ուտող բերաւ այսր, և յղեաց ի կողմն կա(ր)միր գլխոյն։ (Պետրոս վարդապետ 1725. յուլիս 25 [առ Մխիթար?] [տեղի?]։

ժէ.

Իսկ վասն զբաղմանց չինուածոյն և առաքման քարոզչացն հայցեմ ի Տեառնէ՝ տալ զերջանիկ եզերումն։ Ցարութիւն արքեպիսկոպոսն ժԲ օր է որ ի Հռոմայ չէաց, և կարծեմ թէ այժմ հասեալ կայ ի տեղդ։ (Յօհաննէս Եպս. Սեպաստիոյ [առ Մխիթար] 1726. յունիս 15, ի փօլբէսխսրն [Հռոմի])։

ժը.

Կարի սաստիկ է և կանուխ սկսաւ, ի Լուսաւորչէ ի վեր մինչև ցայս ժամ օր ըստ օրէ սաստկանայ [մահառաջամբ]...։ Նաև ի բազում տեղիս տարածեալ է, թէ յԱնդրիանուպոլիս, թէ յԻզմիր, թէ ի Պուրսայ և ի յայլս շրջակայս, ուստի դադմատացիք, յոյնք, նաև հայք, հրէայք և տաճիկք ի հեռակայ տեղիս փախեալք, անդէն ևս ըմբռնեալք։ Բոլոր պալատից դրունքն փակեցեալք. միայն փոքրիկ ծակ մի թողեալք, անդէն տուրևառութիւն խօսից և թղթոց լինի։ Ճերմակ լսթին պալատն ևս անկեալ է ժանտամահն։ Ցառաջ քան զայս երկիցս անգամ, երկերկու օր մեծ որոտմունք և հեղեղ անձրևք եղեն. մինչ զի ի տեղիս տեղիս մարդիկք ևս խեղդեցան, և բազումք ասացին թէ ի յամառնային ժամանակին այսպիս անձրև չեմք տեսեալ, վասն որոյ ասեն ոմանք թէ յայսմանէ պատճառեալ զոլ մահն։ (Հ. Միքայէլ վ. Սեբաստացի առ Մխ. Աբբայ. 1726 Օգոստ. 3, կ. Պոլիս)։

ժթ.

Ի հեծելազօրացն հարցանիցէ տէրութիւն քո՝ բազում անց և դարձ գոյ, բայց մին գլխաւոր կաիւ ոչ գո(յ), բայց միայն Սըղնախի հայերուն միշտ վանան [?] մին փոքր սըղնախ առին, մին

Եհ կոյս ապաշխարող աղջկունք գերի առին և Թաւրիզու մինչև յԱրզրում գեղօրէքն ի փախստի են ի լերինս վասն երթևեկողացն. Արզրում սղութիւն հացի գոյ և հարկապահանջութիւն. բայց առ և առուրն լաւ է, շատ հոգ չեն քարշեր։ (Նիւսէս քահանայ կարապետեան Բադկցի առ Մխ. Աբբայ. 1726 Նոյեմ. 1. ի Կոստանդնուպոլիս)։

ի.

Ցայտ լիցի սիրով, զգիր վերապատուելութեանդ ընկալայ, և զի որպէս լուայ ի քէն, թէ հասուած ժանտամահութեան գոյ ի Կոստանդնուպոլիս և յայլս տեղիս ներ տէրութեան տաճկաց, նոյնպէս և աստ լաւ, թէ շարժ մեծ եղեալ է ի փալերմա, և աւելի քան զի անձինս մեռեալք են կործանմամբ չինուածոցն։ Նաև գոյ կասկած խռովութեան և պատերազմի ներ իշխանացն արևմտեականաց։ (Յօնան եպս. Սեպաստիոյ առ Մխ. Աբբայ. 1726 Նոյեմ. 21, ի Փօլրհսիսրն [Հռոմ])։

իա.

Վրդանէս եպիսկոպոսն մին փառաւոր յարգութեան և չնորհաւորութեան գիր գրեաց առ կաթուղէտ կաթողիկոսն, մին ոսկի միտալ որ արժէր 9 ուսկոթ, և զայլս 2 միտալս արծաթեայ. և յանձն առաւ յայս էնկիւրեցիս [Կիւրակոս], որ անմիջապէս իբրու դեսպան գնալոց է և յանձամբն մատուցանելոց է զյիշեցեալս առ կաթողիկոսն Հայոց։ Եւս զայս իրս շատ ժաման(ա)կ էր որ յորքան խօսս հանդիպէր, ասէի եպս.ին. ահա պատշաճ ժամու եղև. յուսով բարւոյ վաղճանի։ (Պատասար քահանայ Աբրահամեան [Տիգրանակերտցի] առ Մխիթար Աբբայ. 1727. մարտ 19, ի Հռոմ. յեկեղեցւոյ Հայոց)։

իբ.

Նազիաս եպիսկոպոսն ողջունէ զքո հրամանքն, և ունի զայս ի մտի, այսինքն, խնդրել ի քէն զի քահանայ կրօնաւորս՝ ինքեան օգնական ի հոգևոր գործողութիւնս, քանզի է խոստովանահայր ի սուրբն Պետրոս հաստատուն վճռիւ, և այն Չանացաւ առնել անուամբ կարգի սրբոյն Անտոնի, մի գուցէ ընդ պակասիլ եպիսկոպոսացն հայոց, կորուսցեն հայք զտեղին զայն, զոր աշխատանօք բազմօք հազիւ ընկալան։ Երկրորդ՝ կալաւ զպաշտօն ներհմտացուցանելոյ զմանկունս ի գիր, ի լեզու, և ի ժամակարգութիւնս հայոց ի գօլէջն, չաբաթն Բ անգամ, գնալով անդ զնի միջօրէին։ Երրորդ՝ կալաւ վերչապէս զհոգաբարձութիւն Ս. Մարիամ եգիպտացւոյն, ունի և զպաշտօն խոստովանահայրութեան ի նմա, և դիտաւորութիւն մերն է՝ ձգել գիրկաւէտ պաշտօնքս զայսոսիկ ի ձեռն կրօնաւորաց հաճեստաբարոյից և գիտաց Աստուծոյ խնդրողաց, ևս առաւել անմահ գովով կրօնն, ոչ տեղն կորուսանի, և ոչ պաշտօնեայն հաւատարիմ պակասիցի։ Աստ՝ տեղ և պաշտօն ունիլն է ձեզ ևս յոյժ օգտակար, զի թշնամիքն խորշելով՝ ոչ համարձակին այնքան արձակօրէն չարախօսել, և այլն։ (Յօնան եպս. Սեպաստիոյ առ Մխ. Աբբայ. 1727 Դեկեմբ. 22 [Հռոմ]. ի Ս[ուրբ]. Մ[արիա] Ե[գիպտացի])։

իգ.

*Ի Թօխաթ մինչև ցայժ[մ] ոչինչ մարմնական արդիւն եղև. աստ ևս կարծեմ թէ սակաւ լինելոց է, զի զբազումս տուգանս վասն հալածանաց տուեալք են, և զծանր հարկս և զհասկս ի պատճառս չարժեցման զօրացն, և զի յաւուր Ծննդեան Տեառն ես միայն զԵս[= զերկուս] պատարագս հազիւ կարացեալ առնել, զի տակաւին ի Բազնիկ էի (զի նախ անդ իջևանեցայ, և զնի 20 աւուրց ապա գնայի բռնութեամբ քաղաքացւոցն ի քաղաք) վասն զի յայնմ գիշերի 2000 զինուորք իջևա-

նեցան, և փակեցաւ եկեղեցին։ Եւ ոչ ոք կարէր ի տանէ ի դուրս ելանել. բրօք և բռնութեամբ զփափուկս կերլիս խնդրէին. և այսպէս բազմիցս յայս Բ Գ ամն կողոպտեցեալք գոլով ի զօրացն՝ աղքատացեալք են բազումք, թէպէտ վասն հալածանաց զոչինչ տուգանս են տուեալք։ (Ստեփաննոս Վ. Եպիսկ[ոպոսի] Պետրոսեան առ Մխիթար. 1728 փետր. 3, ի Կեսարիա)։

իդ.

Պարձեալ՝ լուայ զեզերումն և զլրումն հոյակապ, կամարակազմ, վիմաշէն և քարայատակ եկեղեցւոյն[1], և կապարածածուկ փոքրիկ աշտարակին ձերոյ, և գխորհրդատուր երիս բեմսն, և գնուագարանս հանդիսականս, զորս արարեալ էք, և կարի մեծ եղև ուրախութիւնն իմ։ (Հայր Թեոդորոս Յով[ն]անիսեանց առ Տէր Յօհաննէս. 1728 Յունիս 23, ի Վենետոսաձի Ս. Ղազարու)։

իե.

Յայտ լիցի քոյին վերոյգրեալ գերապատուելութեանդ. փօթէքէզ թագաւորն[2] կամեցեր է Գ ազգին քահանայի, եպիսկոպոսի, կաթողիկոսի ըզգեստը չինել, ժամակարգութիւննին թարգմանել, խորհրդատեարին մեծութեանը թուղտ լինա, մէկ երեսն լաթիներէն, մէկ երեսն հայերէն. Ստեփան վարդապետին հետ խօսեցա. նա կու յօժարի կոր անելու ամա այսչափ բանը մէկ մարդ ոչ կարէ հաստատ գրել, հայերէնը ես պիտի գրեմ, այլ գիր գրօղ չիկա, այս չափ բան գրելու ժամանակ չունիմ. շատ խորհեցայ որ այս գրեանքը եթէ հրամանուդ ձեռօքն լինա նէ կարելի է յաւաջանալ... հոմմերէն թարգմանօղ գտանք. թագաւորն ծէ ճուլի. խօսք արանք որ լաթինէվար յունարէն գրէ... ըզգեստ մի եպիսկոպոսական ունէշի ամենայն ինչ հաստատ առին, յունաց ըզգեստ չինեցին, ասոր(ւ)ոց ըզգեստ այլ գտա նոյն ձևով կու չինեն. այս բաներս թագաւորն յանձներ է Ֆրանչիսկանին բրէֆինչելին[3], նա այլ գիս յանձնեց որ հոգամ Ա. ճաշու գիրք մի, Ա. մաշտոց մի, Ա. երկու էչով աւետարան մի։ (Աւգիս [Աւգուստինոս?] եպիսկոպոս Բիւզանդիացի առ Մխ. Աբրայ. 1729 Մայիս ԻԴ, ի վեժն Հռոմ)։

իզ.

Այս ամի հոկտեմբերի 21 զաղաչայ Պետրոսն [Գօխոցեան] ըստ իր այլ նամակին հաստատեցին Պիրով, այսինքն գլուխ իշխանաց և դատաւոր ժողովրդեան. եթէ յատուկ գիր գրիցես նմա շնորհաւորիցես գիւր պիրովութիւնն՝ խիստ ախորժ թուի նմա։ (Հ. Մանուէլ Կոստանդեան առ Մխիթար. 1730 հոկտեմբեր 18. ի Պաշուպով)։

իէ.

Ի սեպտեմբերի 1, զինուորք տեղւոյս զ70 զրօշակս պատրաստեալք իբրև զ800 հոգիք պատրաստեալք՝ ամենայն պատրաստութեամբք ի վերայ դատաւորաց յարելոցք լեալք իցեն, և մին ի նոցունց՝ երթեալ առ մատնին ծանուցեալ՝ և մատնին և այլք դատաւորք նախ քան զնոսա վառեցեալ զինուք ի նոցանէ զբազումս ըմբռնեալք կալան, և օր ըստ (օրէ) ըմբռնեն և կախեն,

---

1. Պաշպալովի նորաշէն եկեղեցւոյն մասին կ'ակնարկէ։
2. Յովհաննէս Ե. Քազաւոր Փորդուգալի (1706-1750)։
3. Provinciale = գաւառական մեծաւոր։

խեղդ[ե]ն և գլխատեն. և յամենայն օր մեկ, երկու և երեք անգամ դունտախ գտանին ձգեցեալ ի ցերեկի, որպէս զի հրդեհիցի ստամպօլ[1]: (Հ. Պ[օղոս] վ. [Կ. Պոլսեցի Սիմոնեան] առ Մխիթար. 1731, սեպտեմբերի 7. ի ստամպօլ):

իը.

Մաբ խուսէֆ հռչակաւոր ուղղափառ կաթուղիկոսն նեստորականաց աստ է, և ի վաղիւն ելանէ ի ճանապարհ գնալ յԻլպով, և անտի ի Վիէննայ, և անտի ի տեղդ, և ի տեղէդ՝ ի Հռոմ. և աստ յոյժ մեծարեցաւ ի վանականաց և ի հրեշտակաց, մանաւանդ ի մերմէ հրեշտակէ. ապա պատշաճ է պատուիլ նա և ի մէնջ երբ յայդր լինիցի. զի անտանելի է կրեցեալ հալածանսն ի դմանէ սակս հաւատոյ որպէս և գիտէք ի վաղուց ժամանակաց, յորս ոչ միայն լուսաւորեաց զաիրրանակերան և զնինուէ, այլ ևս չրջակայ վայրս, մինչև ի հասանիլ ի Հալէպ, ի Դամասկոս, և ի Բաբիլօն. և ես ի մանկութենէ լսէի զդուրա գործն. և արդ յատկաւ աչօք տեսանելոյ զանձն արժանի եղէ: (Հ. Յակոբ [Կարինցի Ներսեհեան] առ Մխիթար. 1731 յունիսի 15. ի Կ. Պոլսոյ):

իբ.

Զայս նոր լուր լուաք, զի տաճկունքն ի մէջ իւրեանց ասացեալք են, թէ ղըզլպաշի թագաւորն զհամարձակութիւն տուեալ է մօգրօվին ղէպ ի Հինտիստան եղեալ իւր երկրացն տիրել: Եւ այս տաճկացն իցէ ընդդէմ. և երևեալ իցէ սոցա վերստին աւերիլ ընդ նմա: (Հ. Պ[օղոս] վ. առ Մխիթար. 1832. յունիս 13. ի Վլաթիա):

լ.

Կոստանդինուպօլիս սաստիկ մահ է ընկած, որքան ժամանակ է մինչև ցայժմ, դեռ ևս գոյ, որովհետև էլչիներն երկիւղէ մահուան փախած են...: Ղզլպաշին պատերազմի որպիսութիւնն մինչև ցայսօր ճչմարիտ բան ոչ գոյ. միայն ոմանք ասեն թէ հաշտութիւն և խաղաղութիւն է. և այս իմայ որ զզլպաշի էլչին ստամբօլ առաջագոյն բանսն էր, այժմ խանած են և մեծագոյն պատուով ուղեվորած առ իւրայինսն, և մի ևս էլչի նորագոյն է եկած ստամբօլ, այսպիսեօքս յայտնի նշան է հաշտութեան: (Յակիմ Յակոբեան առ Մխիթար. 1732 Հոկտ. 12. Իզմիր):

լա.

Արդ տեղիս որպիսութիւնն, նշան վատ երևայ, զի օր ըստ օրէ իրրև պատիժ երևայ, զի այլազգի դատաստանն վերացեալ է, առաւել նեղութեան և ճգանաց միջի են ազգն հայոց, իրրև իսրայելացիք ի ձեռս փարաւոնի: Չի բազում մարդիկք տնով չևեցին աստի, ոմանք գնալով Իզմիր, ոմանք ի Կոստանդինուպօլիս, և ոմանք ի տրապիզոն, ոմանք զըըմ և ոմանք այլ ուրեք. իսկ մնացեալքն այլ հնար որոնեն չունելոյ: (Հ. Յակոբ առ Մխիթար. 1732 դեկտ. 10. [Կարին?]):

լբ.

Լուսաւորչայ ժամն սկսան ի դեկտ. 13... և կապուտիկն գրագիր է ի վերայ մշակաց, որք վասն չինութեան եկեղեցւոյն բանին: (Հ. Պ[օղոս] վ. առ Մխիթար. 1732 դեկտ. 24. [Կ. Պոլիս]):

---

1. Սուլթան Մահմուտ Ա.ի ժամանակն է:

ՀԹ.

Լուսաւորչայ ժամն չինեցին. ողորմութիւն ժողվելու համար չեն խօսիր,... Լուսաւորչա ժամն խիստ պայծառ եղաւ. երկու քովը քար է, օրթան քավկիր որ ստամալու մէջը անանկ ժամ չիքայ. 120 քէսէ ստակ գնաց պէլքի. 80 քէսէն գաղիթները կերան. ասօր կօրէ ողորմութիւն կը ժողվեն...: Եթէ ըստամալու էհվալըն հարցանես սղութիւն է. 60 տրէմ հացը մէկ ըստակ է. չէ թէ ցորէն չի կայ. ցորէն գոհութիւն Աստուծոյ շատ է. նահաթի տաճիկը անիրաւացաւ. օչխարի միսն 6 փարա. ան ալ առատութիւն չունի. խուզին եօթ փարա, ան ալ գլօխը ձիերըն հետ է. քանի կերթա ըստամալ գէշ կլա աղէկ չիլար: (Տիրացու վարդան առ Հ. Պետրոս [Կ. Պոլսեցի Նուրուզեան]. յաւիւն 1733 Մայիսի 28. [Կ. Պոլիս]):

ՀԺ.

Ասա զմիսն իբրև զձուկն համարելով անխտիր ուտեն, և զձուն իբրև զձիթապտուղ վարկելով համարձակաբար ուտեն: Եւ ի սկզբան պասին յաւուր հինգշաբաթի սկսան բազումք ուտել զկովու և խոզու միս, և այսօրիկ զորս կերին էին տուէլք և ոչ չօքսաներն, այսինքն լաթինք, զի սոքա ոչ միայն ոչ ուտեն զմիս, այլ և բազումք զձուն ևս ոչ ուտեն. իսկ ի հայոց յայլում պասոջ ոմանք կերեալ իցեն միս, և ոմանք զձուն. բայց յայսմ պասիս ոչ ոք ի հայոց եկեր զմիս, այլ սակաւ ոմանք կերին գհաւկիթ, իսկ ես զարապուշա հնտեղէն ուտելով, ևս և ընկուզ, գրեթէ բոլորովին չորացայ, կանաչեղէն ոչ գտանի այժմ, ձուկն այնքան լաւ չէ: (Եղիա վարդապետ առ Մխ. Աբեայ, յաւիւն 1733 մարտի 23. [Պզկրատ]):

ՀԼ.

Գիտեմ զի վասն հաշտութեան թագաւորաց քրիստոնէից աղօթէք, սակայն խնդրեմ զի չառնակիցէք, և մանաւանդ վասն առողջութեան և բարձրացուցման անուան մերոյս կայսերն, տէր Յիսուս ինքեան արու զաւակ պարգևեսցէ, և այլն. չահ Թահմազղուլի խանն տակաւին ոչ է հաշտութիւն արարեալ ընդ թուրքաց, նա և ոչ առնէ և զոր ինչ ասեն ի կողմանէ հաշտութեան սուտ է. և գօրքն մօսկօֆու տակաւին ի ներքոյ տանծկայու է: Լէհու էլչին գնաց ի ստամպօլ: (Եղիա վարդապետ առ Մխ. Աբեայ, յաւիւն 1734 մայիսի 7. [Պզկրատ]):

ՀԽ.

Թամա գմբեցին վրոբականթեան ըսկըսեցան տրպել արտպի, յառաջ քան աւարտիլն եթէ գտանիցեմ այլ առնելոց եմ, եթէ ոչ սպասեմ, ի յաւարտիլն նոր տպագրածին առնելոց եմ, խնդրեմ որ այս արտպի գրգերն իբրև զլոմափողն ընդունիս յիշատակ... գերյարգելի յարութիւն արևի եպիսկոպոսին ողջոյն մատուցանեմ: (Առքիաս եպիսկոպոս առ Մխ. Աբեայ, յաւիւն 1734 մայիսի ԺԵ. [Հռովմ]):

ՀԼ.

Ի վերոյգրեալ այս ամին [1734] և ի յուլիսի ամսոյ հնգին վճարի ինալն իմ աստ լման ե ամն, ի յորէ յորմէ մտեալ եմ աստ: Որոյ վասն գրեմ, այսինքն օրէնն է ստորագրելոցն ծանուցանել մեծաւորին իւրոյ, զի եթէ պիտոյ իցեմ և հաճութիւն վէհիդ, գրիցէ աստ եղեալ վերապատուելի տէր Մինասի Խնկանոսեան որ աստ վարդապետ ևս յորչորչի, նաև հաստատեցաւ ի տեղւոյս եպիս-

կոպոսէ փլէպանուչ վերակեցու և հոգաբարց քահանայ ևն.: Նաև գրիցես տեղոյս իշխանացն որ և գլխաւոր իշխանացն որ աստ Պիրօվ յորջորջէն, և է ազնիւ անձ ի մէջ բնաւից... թէպէտ տէր մինաս խնկանոսեանն ունի ընդ իս յոյժ սէր և ոչ կարի զելն իմ աստի, և ընդ նմա նաև իշխանք և ժողովուրդք տեղոյս...: Նոյն պղնձեա տախտակի պատկերաց վասն որ գրեալ էի, գիտասցէ տէրդ իմ, որպէս որ ունիմք ի վանքն զոմանս փրվածու երկաթէ գրչով գրեալ և փորեալ, զանազան սրբոց պատկերս զորս ի թօրգօլայի մէջն անցուցեալ տալի մրով...: Ցեղս յոյժ ահալիցք են բնաւք ազգ և ազինք ի կողմանէ պատերազմին որ ընդ աքաղաղին, և զամենայն ինչք ախք և կարասիք կրեցին բնաւք ի հաստատ բերդօրայքն, միայն մերկք մնացեալք են բնաւքն: (Հ. Մանուէլ խուպեսարեան առ Մխ. Աբբայ, յամի 1734 մայիսի 26, ի պաշուալովու: գրեցեալ որ այժմ կոչեցաւ հիսափեթրափօլի):

ղը.

Աստ այլևայլ լուր բօթալից բազումք գոն մինչև ցայժմ, և ոչ մնաց մի տուն զորս ոչ փախուցանէին զկահս և զկարասիս իւրեանց, և միայն ես խելայեղս սրտասղնդեալ միշտ հրամայէի տանն տէր ովանէսին ասելով, թէ ոչ կարիմ իշուցանել և ոչ մի կլայեկ տէբսեստանն ի տանէ իւրեանց, և նոքա հնազանդեալ խօսիցս ոչ կալան և ոչինչ, և այս եղև հիացումն և զարմացումն բազմաց, և բազումք սրտբշացեալք ասիսոան, թէ զիա՞րդ մեք յիմարացեալք այսքան զրամք մխսելով առաքեցաք զմեր թանկ հագուստն, և զապրանս որ ոչ գիտեմք զստոյգն պատերազմի ի վերայ մեր: Եւ մինչև ցայժմ ոչ մնաց ոք ոչ ի մէջ կոօֆից, ոչ ի մէջ նեմէչ կոչեցեալ ազնիւ անձանց որք ոչ մուծին զաղէկս, և զգէստս իւրեանց ի ամրագոյն բերդօրայս, և խաժամուխք տեսանելով թէ իշխանք այսպէս առնել կամեցան, համարելով թէ ուրեմն գիտիցեն զբօղալից իմն լուր, և ինքեանք ևս սկսան կրել զախս իւրեանց ի բերդօրայս: Եւ տեղիս սեռն տեսանելով զարարքս զայս յոյժ սրտմտեալ է, և ասեն թէ կամի արտաքս ելանել մին քանի բերդօրայ չրջագայելով, զի յորդորեսցէ մանաւանդ զզիւղացիս որպէս զի պակասելովն նոցին, ոչ անկցի թանկութիւն ցորենոյ և գինւոյ և այլ ամենայն ինչ պտղոց, զի նոքա են աշխատաւորք, հնձօղք և կթօղք ևն.: (Հ. Մանուէլ խուպեսարեան առ Մխ. Աբբայ, յամիսի 1734 յուլիսի 5. ի պաշուալով հիսարէրի):

ղբ.

Ի յունիսի 30 Քրիստոֆօլոն ի կարգէն յիսուսեան առ Աստուած փոխեցաւ, և հայոց կուսանքն և աշխարհականք ալք և կանայք զմեծ կոծ արարին, և լացին կականօք այնքան, մինչ զի դուռն եկեղեցւոյն փակեցեալ եղև, զի մի ձայնք նոցա ի յականջս այլազգեաց հասանիցին: Եւ ցաւ սոքա փոխարկեցեալ իցէ նոյնոյ կարգին: (Հ. Պ[օղոս] վ. առ Մ. Աբբայ, յամիսի 1734 յուլիսի 7. ի ստամպօլ):

ղգ.

Ցանցելում շաբաթոջ եպիսկոպոսն գրոչմն տուաւ լաթինացւոց երեխայից և հայոց, և ի պատճառս մերայնոց չատ դժուարութիւն կրեցի մինչև ուսուցի զոմանս իրս հարկաւորս...: Ջերեվան առեալ են կարմիր գառակն և փախստան խանն: Եւ եթէ միշնորդք ոչ կարիցեն զերկոսին թագաւորն հաշտեցուցանել, գիտասջիր, զի մեծագոյն արիւնահեղութիւն լինելոց է յերկուստ կողմանց. նաև ութնհազար զինուորօք էվճէնիօն գնալոց է իտալեայ, և բրինձ ալիքսանդր, նաև այլ ոմն իշխան ի յրևէնեայ ընդդէմ փահսիզին: Մօսկօֆն և կարմիր գառակն յամենայնէ սրտէ կապակցեալք են ընդ կայսերն: Մօսկօվի զօրքն ի լէհաստան կարի յոյժ նուաճեցուցեալ են զապստամոն լեհացւոց: Մոսկոֆի ուէճինան զեպիսկոպոսունսն, նա և զմեծամեծսն հրաւիրեալ է ի թագաւորանիստ քաղաքն իւր ասելով, թէ գոն ոմանք իրք եկեղեցականք ուղղելիք, եկայք ուղղեսցուք գնոսա: (Ե[ղիա] վ. առ Մխ. Աբբայ, յամիսի 1735. [Պակրատ]):

խա.

Ինդրէ անդօն վարդապետն մալաքարտեան, զի իբրև զմի ի մէնջ ճանաչիցի եղբայր մեր, որպէս գնաչատուր վարդապետն ճանաչի, և ազօթից մերոց մասնակից լինիցի: (Հ. Պ[ողոս] վարդապետ առ Մխիթար, յամի 1735 և սեպ. 25. [կ. Պոլիս]):

խբ.

Զարևելէ այսպէս լուաք, զի կարմիր գլուխն ըզզարս առեալ էջէ, և զէրզրում պաշարեալ՝ զմարդիս սեղեացն այնոցիկ, որք ոայէք էին օսմանցոց, յղեալ են յէջմիածին, և ըստ խորհրդոյ գալիքային տալ նոցա զտեղ և զերկիրս, առանց պահանջելոյ ի նոցունց այսքան ամ զհարկ վարել և ցանել զերկիրս, և զերկիրն չէն առնել: (Հ. Պ[ողոս] վարդապետ առ Մխիթար, յամի 1735 և սեպտ. 24 (ի տան վրդաեանանց). [կ. Պոլիս]):

խգ.

Եկն լուր փօթաւոր ի յարեւելից, որ էր այս, այսինքն կարմիր գլուխն զօրսն օսմանցւոց հնարիւք քարչեալ է ի յայնպիսի տեղի՝ յորմէ տեղւոջէ ի յեօթն փաչայից երկուքն և 180 հազարաց զինուորաց 10 զհազարն հազիւ զերծեցեալք են, առանց կահի և կարասի և զինու, և ցնաչելքն ի տապաստի անկեալք են: Եւ այս լուրս մինչ եկն ի ստամպօլ ի միւսում աւուր քշեցեալ եղև մատնին...: Վասն էրզրումայ ասեն թէ փախուցեալք փաչայքն ի կարմիր գլխոյ եկեալք ի յէրզրում ժողովեալք են. մտեալք ի բերդն և երեք խէնտէկ փոռնալք են չուրջ զբերդիւ: (Հ. Պ[ողոս] վարդապետ առ Մխիթար, յամի 1735 և յունիսի 27 (ի տան եզակաւն բարեկամին). [կ. Պոլիս]):

խդ.

Վասն էրզրումայ լուայ, զի տաճկունքն մտեալք են ի բերդն և զայէսն ի գիւղօրէնն յղեալ են. և կարմիր գլուխն եկեալ զայնոսիկ զամենայն քշեալ տարեալ է ի յէջմիածին, և անդ ցրուեալ է զնոսա ի գիւղօրէս առ ի զործել զերկիրս, և քան մի ամ ոչ գիտեմ, որպէս ասացին, ոչ տալ նոքա տասանորդ երկրին ումեք, և զայս պատուէր հայոց կաթուղիկոսին է տուեալ սերազգեր կարմիր գլխոյն: (Հ. Պողոս վարդապետ առ Մխիթար, յամին 1735 օգոստոսի 13 (ի տան եզակաւն բարեկամին. [կ. Պոլիս]):

խե.

Եկն առ իս հրամանուցդ աւետեաց գիրն ի կոչմանէ մինաս եպիսկոպոսին գալն, յոյժ ուրախացայ որ է մեզ վազումի բարեկամ, յառաջին անգամն հոտմայու գառնալն եկն ի յեզիպտոս, նոյնժամայն ծանօթացանք. ևս եղբոյս է ծանօթ և բարեկամ: (Սուքիաս ևպս. առ Մխիթար, յամի 1736 սեպտ. ի ԻԲ. [Հռոմ]):

խզ.

Անցելում ամի որքան ահ և երկիւղ կրեցաք վասն պատերազմին պարսից, զի մերձեցաւ որ պաշարէին էրզրում: Բայց այսմ ամի զժուարագոյն եղև քան զանցեալն, զի հասարակ քաղաքիս

գոյ զպատիժ իմն, այսինքն ժանտամահ սաստիկ, զի աւուրն մէջ իւրաքանչիւր քահանայ գնամք չորս կամ հինգ հիւանդ տեսանելոյ։ (Հայր Յակոբ առ Միսիթար, յամի 1736 սեպտ.ի 12. [Իզմրուռ?])։

իէ.

Են այժմ [հայք անմիաբանք] ի յայնքան մեծի նեղութեան, զոր ունին ի յունաց վասն երուսաղեմի սուրբ յակոբին... եւտուն յարքունիս զբազում գանձս զի սուրբ յակոբ ի ձեռս իւրեանց միասցէ, ոչ եղև, զի եդին զոմանս ի բանտ մահու. և յղեցին սաստիկ հրամանաւ թագաւորին բերել տալ զէհտուհնէրնիֆի[1] ի յերուսաղէմայ, որպէս զի տեսցէ... և համեմատեցուսցէ զնա ընդ փիլթուկին թէ իցէ նման օրինակեցեալն ընդ օրինակին. ապա թէ ոչ՝ կտրեսցէ ընդ մէջ զայլայլօղսն արքունական գրոյն, և զմասն նոցա ընդ կեղծօղսն դիցէ. քանզի յոյնք ամբաստան եղեն զսոցանէ առաքաց [այս վերջին բառ ծածկագրութիւն է], թէ սոքա այլայլեալք իցեն զէհտնէհրնիֆի [զհատտը չէրիֆ] արքայական և այլն։ (Զէմպիրեքճի տիրացու վարդան առ Միսիթար, յամի 1735 դեկտ. 25. [կ. Պոլիս])։

իը.

Ուրախ եղէ լսելով զգնալն Գերյարգութեանդ ընդ նորընծայից ի Նովէնթայ...։ Աստանօր մեծ պատրաստութիւն զոյ պատերազմի։ Զ4 մեծամեծ նաւս կազմեն, և զ4 կալերս։ 150 մեծ արաբայ թօփ, պարանք, և առագաստք, և այլք կահք նաւուց եկին ի թռիեսթու, որպէս զի նոքօք զարդարեցին նաւք տեղւոյս։ Նաև 40 կամ 50 վենայու նաւք լիք էին թօփովք և կիրլէիւք եւն.։ Թէպէտ արտաքուստ ոչ է հաւաստի կերպ և եղանակ պատերազմին։ Նաև աւելի քան զ100,000 զինուոր ունի ի պատրաստի։ Կայսրն[2] ոչ է աստ, բայց ի վիճիլիայի համբարձման գալոց է։ (Հ. Թ. Յովաննիսեան առ Միսիթար, յամի 1737 Մայիսի 29. [Եղիսաբեթուպոլիս?])։

իթ.

Զնիշն, զոր էառ տուէչն՝ զնա վերստին առին սոքա և ենթարկեալքն, որք գնացին ըստ զօրաց տուէչին՝ զերծան՝ և որք մնացին՝ գերի վարեցան ի տաճկանց։ Զօրքն այլազգեաց գնացեալք առ օզուն՝ կամեցեալք են առնուլ զնա ի ձեռաց մուշտակին՝ բայց ամենեքին կոտորեցեալք են ի մուշտակի զօրացն։ Եւ ասի լինել յայսմիկ ձմեռան հաշտութիւն։ (Հ. Պօղոս վարդապետ առ Միսիթար, յամիսն 1737 հոկ. 31. [տեղի?])։

ֆ.

Իսկ զթարգմանութիւն գրեթէ ամենևին առնել ոչ կարեմ, սակս ահի և երկիւղի, զոր կրեմք ի ձայնից պատերազմականաց. քանզի մերթ ասեն թէ աստի մտանէ տաճիկն և անտի թաթարն. մերթ թէ աստի Պօնաւալ ուրացօղն, ընդ Խազօցիին որդւոյն. և անտի ամենայն ազգք տեղացիք, այսինքն թէ մաճառք, թէ օլախք, և թէ սասք. արդէն իսկ կրճտեն զատամունս իւրեանց ի վերայ հայոց, և սպասեն զի միայն դիցէ զոտն իւր տաճիկն ի դրանսիլվանիայ, զի իսկոյն յարձակիցին ի վերայ մեր և կենդանւոյն խողխողիցեն զմեզ։ Թէպէտ լուաք թէ Ֆրանձուզն ասացեալ իցէ տաճկին, զի առնիցէ զնաղաղութիւն ընդ Գաւօլոսի կայսերն. ապա թէ ոչ՝ ինքն անյապաղ ելցէ ի վերայ նորա։ Եւ յայն սակս լուաք թէ տաճիկն յղեալ իցէ ի վեննա զերկուս փաչայս բազում ջորիաբեռն ոսկւով և արծաթով. (Հ. Թէոդորոս Յովաննիսեան առ Միսիթար, յամի 1737 դեկտ.ի 10, ի Կիլիզապեր քաղաք)։

---

1. Ծածկագիր է այս բառս, պէտք է կարդալ գհատտը չերիֆ։
2. Կարլոս Զ.։

ՃԱ.

Ղաև այս օրերս լուաք ասա, թէ մօսկօֆն ի ներքոյ օգոյու խորտակեալ զառաջիկս, իբրու 15 հազար առապաստ անկեալ, և այլք վիրաւորք բազումք, ետացեալքն ի փախուստ դարձեալ: Ղաև պօնտալի ուրացօղի խորհրդականն, զոր ինչ ապստամբական գրեանք ի գլխաւորէ զօրավարէ սոցին գրեցեալք առ նա, առեալ զամենայն փախեալ և եկեալ ի վիէնա առ կայսրն, և զմեծ պատիւ գտեալ է: (Հ. Միքայէլ վ. Սեբաստացի առ Միսիթար, յամի 1738 յունվարի 4, ի պէլրդատու):

ՃԲ.

Ղաև լուայ զմահն յարութիւն եպիսկոպոսին, ըստ կարեացս յիշեմ ի պատարագս և ի յաղօթս. սա ութ օր յառաջ է վախճանեալ քան զքահֆայեցի ոհաննէս եպիսկոպոսն որ ասա, զորմէ ի 1 փետրվարի գրեցի: Այս մեռանօղք բազումք գոն, ևս առաւել ի մէջ զօրաց, լինի յաւուրն 20 և այլ աւելի. յորժամ ի դուրս ելանեմք, զչորս և զհինգ ի միասին տանին ի թաղել, և հիւանդութիւնք բազումք. երևի թէ անհոչակելի մահ գոյ ասա: Ղաև լուայ թէ ի գարնանս ունիք զդիւանաւն սկսման չինուածոյն: (Հ. Միք. վ. Սեբաստացի առ Միսիթար, յամի 1738 փետր. ի 15, ի պէլրդատու):

ՃԳ.

Կամէի տեղեկանալ, թէ արդեօք առաքիք իցեն զտեղի ինչ ի Բատաւա և թէ որով կերպիւ. և քանի՞ անձինք և ո՞ւք իցեն գնացեալք անդ: (Հ. Թեոդորոս Ցովաննիխանեան առ Հ. Միքայէլ վարդապետ, յամի 1738 մարտի 4, ի Յէրիզապէրապոլիս):

ՃԴ.

Ի կողմանէ պատերազմին օր ըստ օրէ զօրանայ ահն տաճկին, ահա ի մօտակայս սոցին աւար հարկանեն այրեն, սպանանեն, գերեն: Ի վարչէն սոցին փախեան ի ներքս. չորս և հինգ օր հեռի ասա ի կողմն պօսնայու, հերու զմի բերդակ առեալ են սոքա. այժմ, զնա ասեն ֆիֆի տաճիկ պաշարեալ է. իսկ ի մէջն 300 անձինք սոցա կան. և ասեն կամ զայս պաշարելոց են, կամ զպատիմ. այսր բազմադիմի զրոյցք գոն. լրտեսք բազումք. ևս առաւել ասա արգելեալ վաճառականն տաճիկներն: Ի սոցանէ երևելի գործ մի ոչ լսեցաք և ոչ տեսաք. այլ գառանայք սոցին զվնաց և զեօթն տաճիկս բերին ասա. և բանք սոցին ապազայ է, այսինքն ասեն զալոց են բազում զօրք, այժմ ասա ներկայիս սակաւ. նաև ապրելիքն նուազ և թանկ... նաև ասաի առնք ոմանք վասն երկիւղին սկսան ի ներքսագոյն քաղաքս չուել, ոչ ի հայոց: (Հ. Միք. Սեբաստացի առ Միսիթար, 1738 մարտի 15, ի պէլրդատ):

ՃԵ.

Ի գամբօյէն երկու օր է բարի լուր յաղթութեան մերայնոց զօրաց լուաք, բայց սակաւ էր, այսօր հաւաստերևս եղև, վասն այսորիկ զայս սակաւս գրեմ աւետալուրս, զի 50000 տաճիկք անկան ի սուր և ի ջուր, մերձ օսմանայու, և մերն 16000 անկեալք, մեծ մասն հեծեալք և կառանաթէոք նախ սակաւ մնացեր է թէ սոքա յաղթեալք լինին, բայց յայլոյ ծայրէ մէկ փերինչիսէ մի

իւր զօրօք և լէհու զօրն իբրու 30000 բնաւն քաչապէս պատերազմեալք յաղթեր են զթշնամին. նաև զկարմունջս նոցին կտրեալ, նաև մեր զօրացն 600 վիրաւորք ևս գոն։ (Հ. Միք. Սկր. առ Միխրար, յամին 1738 յունիսի 12. [պիկիրատ])։

ՃԸ.

Ի կողմանէ պատերազմին, մինչև ցայս ժամ մեծ և երևելի բան մի ոչ արտակայացաւ. թէպէտ յառաջ զրեցի զկոտորմանէ տաճկաց յիսուն հազար. և սոցա 16 հազար ոչ էել այնպէս. այլ յոյժ սակաւ յերկուց կողմանց, բայց տաճիկ[ք]ն փախեան թողլով զախս իւրեա[ն]ց։ Ցետ քանի մի աւուր միացեալ և բազմացեալ վերստին եկեալ են տաճիկքն և դիպեալ են պատերազմաւ. անկեալ են վեց հազարի չափ. զ24 դրօշակ և զերկու տաւուլ, կալեալ ևս սոքա ի տաճկաց, յետս քարշեալ տաճիկք և սոքա ևս յայլ կողմ, մերձ ղռչօվայու. ասեն թէ ձՈ են տաճիկ։ Ջօլք քրիստոնէից երկու ամիս, որ այն կողմն են, զթուրքն յիւրեանց հողէն ոչ կարացին հանել տակաւին...։ Աստ երկու անգամ տօնանմայ արարին. առաջինն մեծ յառաջ քան զկէս օրն հանդիսական հաւաքումն ի յաթոռական եկեղեցին, ձայնաւոր պատարագ, թէ տէում[1]։ Ի կէս աւուրն ձէնըրալն քաղաքիս զմեծ սեղան զօ-րագլխաց արար. ի գաւիթ պալատին իւրոյ մինչև ձ. թօփ արձակեցան։ Ցերեկոյին ի 24, ի նաւուց, ի բերբէն 250 թօփ արձակեցան և ի զինւորաց երեք հազար թէֆէնկ, այս ամենայն երեք անգամով։ Երկրորդում աւուր մեք ևս զձայնաւոր պատարագ և զքեզ աստուած զովաբանեմք ասա-ցաք։ Այս եղև յուլիսի 15. 9 դպիր էին, տաճկին, որ սոյն յաղթութիւնս արեր էին[?]։ 15. մէկ անգամ ևս դպեր են տաճկին. վերստին յաղթեալ նոցա, որոյ վասն աստ ի 21 յուլիսի վերստին յերեկոյին թօփով չէնլիկ արարին։... Նաև ի դմշվար և իւր նահանգ մահ գոյ. անտի երթևեկու-թիւն ոչ լինի ուրեք։ Մերայնոց բնաւից ողջոյն։ (Հ. Միք. Սերաստացի առ Միխրար, յամին 1738 յունիսի 26, ի պէլրղատ)։

ՃԻ.

Ի քաղաքիս այսմիկ այնքան չփոթ ահ և երկիւղ գոյ ի տաճկէ, բազումք փախստեայք լինին, նաև հայոց մնացորդն, բաց ի պարոն Ձանազիզէ, և յայլոց ախքատաց ի հայս սերընդէ։ Սոցա մեծ զօրաց մասն էանց գնաց ի վեր, մասն աստ տիւ և գիշեր զպարիսպն պահպանեն։ Տաճիկն մերթ երևի և մերթ անյայտ լինի. տաճիկն մինչև ի պէլրղատ տիրեալ զամենայն տեղիս։ Շուրջ զեկեղեցեաւ մերով է գոմ արջառոց սայլից և արապաճոց. զգերեզմանատունս մեր նաև զպարտէզ յափշտակեալ, գմեռեալս իւրեանց թաղեն, զպտուղն և զբոյս պարտիզին յափշտակեցին, նաև զբնակութիւնն մեր։ (Հ. Միք. վ. առ Միխրար, յամին 1738 սեպտ. ի 20, ի պէլրղատ)։

ՃԼ.

Այս ամ ձմեռն կանուխ սկսաւ 12 նոյեմբերէս, սկսաւ երկիրն և ջրերն սառիլ, և ի 20էն սկսաւ ձիւնել տիւ և գիշեր մինչև ցայսօր։ Աղէտն և կասկածն քաղաքիս վասն մահուան անպատմելի է, բազումք և բազումք յամենայնում աւուր մեռանին, չանտամահիւ մեռանօղք ի գողակախաց ի սնազոյն սայլս եղեալ տանի յարտաքս ձգէ. ի վերայ որոյ զկարծիս ունին և տեսանեն, կենդան-ույն դնեն ի նոյն սայլ, յայնկոյս թանայու ձգեն, թէ և չէր մեռանելոց, անդէն մեռանի, յաղագս անզգամանութեան։ Բազումք աղէտք են, զորոց չէ ժամանակ պատմելոյ. մեք ևս ի յահ մեծ եմ, պարոն Ձանազիզն ի չաբաթ երեք ծո[մ] և պահս պահէ յաղագս այսր իրի, և ճաշ բանտարգել-ցելոց արար, և ողորմութիւն բաշխ[ե]աց, նմանապէս և այլք հայք առնելոց են, որք ունին զկա-րողութիւն։ (Հ. Միք. վ. Սերաստացի առ Միխրար, յամին 1738 նոյեմբ. ի 22. ի պէլրղատու)։

1. Լատինաց «Ձքեզ Աստուած զովաբանեմք» երգն։

ՃԲ.

Նոյնա վրդ. երեք ամ կացեալ զ30 անձինս թաղեալ, հայր յակոբն երկու ամ զ9 անձինս թաղեալ, իսկ ես 13 ամիսն զ41 թաղեալ։ Թող նաև զերկիւղն թշնամւոյն, որ մինչ ցարդ կրեմք, զի ի մօտակայ ժամանակիս մինչև ի վարուչն եկին տաճիկք և զամենայն գիւղօրէս տիրեալ և խարաճ առնուն։ Եւ գրեալ են աստ մարշալին եթէ դուք ևս ելեալ պահանջիցէք զհարկս ի գիւղից, գիտասջիք, որ կրկին հատուցանելոց էք. նաև զամբ ի ներքոյ պէլրղատու. զի գիւղօրէքն բոլոր մեզ ոչէ են։ Դևան թանկութիւն քաղաքիս նեղէ զմեզ, զի մի ձուն 4 սօլտի է, և գայլսն թողում ճառել։ Դևան ժանտամահն սարսափեցոյց զմեզ. յայժմ սակաւ ինչ թուլացեալ։ (Հ. Մխ. վ. Սեբ. առ Մխիթար, յամիսն 1738 դեկ.ի 13, ի պէլրղատ)։

Ի.

Ջիշուառական կացութենէ քաղաքիս, մի ըստ միոջէ ոչ կարեմ գրել, թէ զմեռանողաց, թէ զթանկութենէ, թէ զկաշառակուր իշուանաց[1] և կառավարչաց և զանփութութենէ նոցին, թշնամիք խաչին ի մերձակայ սահմանս սորին, և խազ խազան, զամենայն գիւղօրէս սոցին հարկաւոր ինքեանց արարին. միանգամ աստի իբրու ԲՌ գառանայ և հեծելազօր գնացին յուրեք, ուր գոյր մի փաշայ զօրօք, յանկարծ կոխել զնոսա, նոքա իմացեալ, սոքա զոչինչ արարեալ յետս դարձին։ Ցամենայն աւուր պէսպէս զրոյց ահարկական ելանէ ի կողմանէ անօրինաց։ Եւ ի տագնապի եմք։ Աստ ասեն թէ զինեսայն կայսեր ուղարկեալ են այդր յերկիր թօսկանայ առ ժառանգն, բայց տէր գալուստի ազգն դէմ կայ և ոչ կամի. այլ զմարտ տալ կամի։ (Հ. Միքայէլ Սեբաստացի առ Մխիթար, յամիսն 1739 Յունվարի 24, ի Պէլրղատ)։

ԿԵԵ.

Մեծ պատրաստութեամբ տաճիկքն, թէ ի սեաւ ծովն և թէ ի ճերմակ ծովն, այսինքն թէ ի ցամաքէն և թէ ի ծովէն ելեալ գնացին ապրիլի ամսոյն։ Հին վէզիրն քշեցին և զնոր վէզիր յղեցին ի պատերազմ ի վերայ արծաւին, սակայն ասեն թէ թարց հրկբայութեան խաղաղութիւն լինելոց է յայսմ ամի..... ժողովուրդքն զբազումս նեղութիւնս և զվնասս կրեալ են և կրեն միշտ ի ձեռս զինուորաց և լէվէնտից..... յապրիլի 4, ի սապահ նամազին ի յիզմիր մէկ մեծ գետնաշարժութիւն եղեալ է, ի ֆռէն մահալլէսին բազում տունք փլեցեալք են, և ի ներքոյ նոցին բազում մարդիք մնացեալք են, և յայլ տեղիս ևս բազումք. մէկ ճամի բոլորովիմբ վլեցեալ է, և չորս և հինգ մինարէ անկեալ է։ (Հ. Պետրոս առ Մխիթար, յամիսն 1739 Մայիսի 5. [Կ. Պոլիս])։

ԿԲ.

Աժմն ոչ եմ ի քաղաքն Վհննայ, այլ լօքսնբուրկ, ուր սովոր է կայսրն ամենայն ամ գնալ անդ և զբօսնուլ զորսորդութիւն, և պատճառ գնալոյն իմոյ է, զոր կոմսն քինկքսէք բերեալ է ընդ իւր երկու տաճիկք, որոց ուսուցանելոյ զքրիստոնէական վարդապետութիւն ընդ իւր էառ գիս.....։ Եւ վասն պատերազմին այս ամիս բազում պատրաստութեամբ գնացին, և ամենայն ելեքտօրներն ըստ պարտաւորութեան զօրք ետուն. և զօրագլուխն է Չենէրալ Վալիսն[2] որ է յոյժ

1. Անշուշտ խիաճ հասկնալու է։
2. Պարտպատ է կայսերական բանակին։

հմուտ պատերազմի...։... Ռունաց երկիրն մահաւայրաժամն օր աւուր սաստկանայ աժմն ամենայն ելք Ռունաց քոցեալ է։ (Պ. Դաւիթ Ցովաննիսեան առ [քահանայ ոք Միաբանութիւնն, թերևս իր քահանայ եղբօր] յամին 1739 մայիսի 31, [Լիւքսեմպուրկ])։ [կը գրէ առանձին նամակ մ'ալ առ Մխիթար յամին 1739 յուլիսի Դ. ձիշդ միևնոյն բաներըը])։

կգ.

Ցառ բոլոր հայք և քաղաքս և ես իսկ փութամք ելանել աստի, եթէ գտանեմք զճար. երեք օր է որ տաճիկն պ[ա]շարեալ է, նաւերն սոցա փախեալ ի ներքս կոյս, կարմունչք բարձին, զօրքն սոցա այսօր անյայտ եղև. ժամ առ ժամ տաճիկն զօրանայ տեղ կալնու և զթօփս դնէ. ի քաղաքիս այսմիկ ամենեցունց գոյն երեսաց կորեալ, և սիրտք անկեալ, տեսէք զկացութիւն քաղաքիս, տա֊կաւին ի մէջ քաղաքիս գունտ հրացանի ոչ անկեալ, բազմութիւն տաճկաց մեծ ահարկութիւն պատճառէ։ (Հ. Միք. Սնր. առ Մխիթար, յամին 1739 յուլիսի 28, ի Պէլգրատ)։

կդ.

Կէս սէհէթ Բէլըրղատու յառաջն տաճիկն չատըրով անթիւ բազմութեամբ նստեալ է. նչանն նոցա այնպէս երևի թէ պաշարելոց են քաղաքս։ Գանգի թօփ դրեր են տեղիս նաւերուն հետ պա֊տերազմին. ու այլ պատրաստութիւն ունին ու բերուն ներ սոցա զումպարայ նետեն։ (Հ. Յակոբ [Հրզրումցի] առ Մխիթար. յամին [1739]. [Պէլգրատ])։

կե.

Յորեկ և գիշեր լացի և ողբի մէջ էի, զի ներ բնակարանն մեր սասանէինք. երբեմն թօփին գուլուլան որոտալով անցանէր, երբեմն տանն վրայէն երբեմն քովէն. եկեղեցին նմանապէս պատա֊րագի ժամանակ... ոմանց թևն տարաւ և ոմանց գլուխն. դարձեալ ժողովուրդն բոլոր մնացին տեղս և փոքրաւորն, զի քաղաքապետն ոչ թողու... աստուած կենդանութիւն պարգևէ ձանէզիզ սպային զի տարաւ ի տուն իւր, մին առանցին օտայ տուաւ յուսադրելով զնս. մերձ տան սորա եկեղեցին մատուցանեմ զպատարագն, զի սակաւ ինչ հեռի է թօփն ի տանէ սորա։ Եւ ժողովուրդն միսիթարեցան, զի հասարակն խոստովանեցան և առին զսրբութիւն...։ Դարձեալ լսեցինք զլուր իմն բարի, թէ քրիստոնէից զօրքն մեծ յաղթութիւն արարեալ են ընդդէմ տաճկաց, քաղաքէս մին ղօնախ հեռի. բայց աստ եղեալ զօրքն տաճկաց պատերազմին ընդ սոցա. անդադար ջանան զբերթն առնելոյ... բազումք մեռան ներ քաղաքիս, զի թօփն հասարակ անկանի ուր ուրեք։ (Հ. Յակոբ առ Մխիթար, յամին 1739 Օգոստոսի 1. [Պէլգրատ])։

կզ.

Վասն Պէլգրատին մինչև ցայժմ ոչ եղև լուեալ մեր թէ տաճկունք մտեալք եղեն ի նա, այլ թէ ևս ի վարիչն ոչ գտանին. ի նոյեմբերի եղև այս ինչ, զի թագաւորականք նաւքն եկին ի ճերմակ ծովէն, որոց մինն սկսաւ այրիլ, և ի այրիլն նաւուն այրեցաւ և պարան երկաթին, և այրելով նաւն գնացեալ առաջի տան Սերքիս պաշուն, ուր հրացանք գոլով լիք պարպեցեալք են, և նաւն չարժեցեալ յուժէ նոցա գնացեալ խոեցաւ ի այս դաբուն, ուր ինքն բոլոր այրեցաւ և անտի մինչ ի եէնի դաբու ամենայն տունք այրեցան, ուր և տունն սէրէֆճի գրիգորի այրեցաւ։ (Հ. Պողոս վարդապետ առ Մխիթար, յամին 1739 դեկտ. 9. [Պոլիս])։

կէ.

Ուպրը տիրէքտօռ իշխանս ի չաբաթն երկու օր կերակրէ զիս ի սեղանի իւրում։ Սա յաւուր միում յանձնեաց ինձ գրել այդր, տալ տեղեկութիւն եթէ զիտէք, թէ պարսիկ, այսինքն Գուլի-խանն գնացեալ յարևելս յաղթեալ և հարկատու արարեալ զայն թագաւոր. և այժմ ունի ընդ տաճկին զտարաձայնութիւն. ասա այսպէս լուեալ է, արդեօք ճշմարիտ է այս, կամի տեղեկանալ այդր։... Դևս յանցեալ ամսոջ ի խռուանթու իբրու հազար անձինք անցեալ գնացին ի պէլրղատ առ ի քանրել, և կարի թանկութիւն է անդ։ Ջքաղաքն զտաճիկն ունի, և զքաստէլն իմիէռաթօռն, ի մօտակայ օրերս լուաք թէ տաճիկքն երկիցս եէրիչ արարեալ են ի վերայ քաստէլին, բայց հրա-մայօղն կայսերին զհրացանսն ուղղեալ առ նոսա պատերազմիլ կամեցեալ է։ Յետոյ փաշան տաճկաց եկեալ անմեղադիր զինքն ցուցեալ, թէ առանց իմոյ հրամանի, էնկիչէրիքն գլուխ վերուցեալ են. ասեն թէ Իմ տաճիկք զոն ի պէլրղատ. Պարշ ասեն, որ է մթագոյն և անյայտ, և թէութիւնն ոչ ծանուցեալ։ (Հ. Միք. Սերաստացի առ Միսիթար, յամին 1739 դեկտ. 14, ի Լէսսէք)։

կը.

Յաւուրս յայսոսիկ եղև նեղութիւն հացի՝ զի բազումք եղեն, զի մէկ և երկու օր առանց հացի մնացին. և յետոյ դառաւուրք չրջագայեցան նաև ինքն թագաւորն՝ զոմանս ծեծեցին հացագործոց, և զոմն կախեցին. և թէպէտ այժմ զտանի հաց, սակայն մեծ մասն ի մէջ հացին գարի և կորէկ է քան թէ ցորեան։ Իսկ եթէ գտանիցի միս որ վաճառի հանդիսապէս՝ ոչ կարէ ուտիլ. և եթէ կամիցիս ուտել զուտելի միս, 18 կամ 20 փարայ հազիւ կարես առնուլ. և այլք ուտելիք սմին սարասի են։ (Հ. Պօղոս վ. առ Միսիթար, յամին 1740 ապրիլի 30, [տեղի?])։

կթ.

Այլք լուրք նորագոյնք զպատերազմաց ոչ լսին այժմ. զի ասեն հաւաստի խաղաղութիւն գոլ աւերմամբ Պէլկրատին։ Մինչև ցայժմ ոչ լուաք զնոր քահանայապետէ, արդեօք կարգեցին զնոր Պապ թէ ոչ։ Դ,մանապէս մինչև ցայժմ ոչ եդին զնոր մաճառ Եպիսկոպոս ի վերայ դրանսիլվա-նիոյ։ Դ,մանապէս հայքն ասէին, թէ յայսմիկ ամսոջ հաւաքեսցին ամենայն քահանայք հայոց, և ամենայն դպաւուրք նոցա, և իշխանք ի Կեղայ առ ի առնել զժողով վասն իրաց իւրեանց և վասն ընտրութեան Հայոց Եպիսկոպոսին։ (Հ. Թեոդորոս Յովաննիսեան առ Միսիթար, յամին 1740 ի մայիս 1, ի Գրուժի)։

հ.

Ի 4 մայիսի ուրախութեամբ եւի ի յէսսէքու ընդ գափիտանի միոյ գալ այդր գովացիայ եր-կրոյն... մինչ հասաք աւուր և կիսոյ ճանապարհ ի քաղաք մի որ կոչի չինքուէ քէզայ, գտաք անդ եկեալ խումբս զօրացն, որ ընդ որոց չուելոց էր։ Գոլով գլխաւոր հրամայօղն գալուին, ոչ ընդունեաց զիս տանիլ ընդ ինքեանց, մնացի անդ խեղճ և ողորմելի... մնացի անդ աւուրս չորս... և ցնրեալ թէ զինչ լինելոց է ինձ, գտի զոմն վաճառական որ գնալոց էր ի պուտիմ, գնացի ընդ նմա անդ. և մինչ հասաք անդ երեք և կիսոյ աւուր ճանապարհ, զիս արգելեցին ոչ մտանել ի քաղաքն, այլ դառնալ յետս...։ Վերջապէս գաղտագողի մտի չէնս, և իբրև զգող և զպատժա-պարտ. և մնաց քսուրն իմ ի դուռն ի յաւուրս ութ, ի ձեռն ոմանց մինչնորդաց հինգ ֆօրինթ ծախս գնալով զերծուցաք և 15 օր մնալով ի տան ումնք ի տեղւոջ իմիք այնպիսի, որ վատթա-

բազոյն է քան զբնակութիւն հաւուց մերոց ի սուրբ ղազար... յետ այսորիկ գողութեամբ մտի ի քաղաքն, ի վանդն Ֆրանչիսկանաց։ (Հ. Միքայէլ [Սեբաստացի] առ Միխիթար, յամին 1740 յունիսի 1. ի Պուտիմ)։

Հա.

Աստէն ուրախութիւն եղև այլազեաց և հրացանք արձակեցան ի միւսում աւուր, յետ ելման զօրապետից, թէ փալանքն պէլկռատու եկն։ (Հ. Պօղոս վ. առ Միխիթար, յամի 1740 յունիսի 28. [տեղի?])։

Հբ.

Ցոյժ ուրախացայ... ևս վասն Ջրհորոյն [վանացս] զորմէ ճառեալ էր հայր թօմաս վարդապետն, թէ արհեստիւ զգործի ինչ չինեցեալ է, մինչ զի միով չարժմամբ եղեալ ջուրն ի բազում տեղիս տարածի, և ընթանայ, և այնու դիւրութիւն եղեալ է եղբարց մերոց։ (Հ. Պետրոս առ Միխիթար, յամին 1740 յունիսի 28. [տեղի?])։

Հգ.

Ցաւուրս յայսմիկ մեր ամուճային դեսպանն եմուտ մեծաւ փառօք ի պալատ իւր, և տակաւին ոչ հասկանեցեալ եղև՝ յորում ծնացեալ եղև յաղթութիւնն։ Ամենայն ուտելիք են թանկագինք. և բազումք անձինք զուրկք են ուտելոց զմիս. և քամի սայեաղի բոլոր մի վաճառի։ Օգոստոսի 15 մի պատանի 8 ամեայ տաճկացուցեալ և հասեալ ի 18 ամ նահատակեցեալ եղև ազգաւ հայ։ (Հ. Պետրոս վարդապետ առ Միխիթար, յամին 1740 օգոստ.ի 17. [տեղի?])։

Հդ.

Ցայտ առնեմ ներկայ գրիս գերապայծառ մինաս եպիսկոպոսին բարեպէս հասանիլն հանդերձ ընկերօքն ամսոյս 23.ին։ ([Պատկերահան Յովհաննէս առ Միխիթար, յամին 1741 մարտի 25, [Հռոմ])։

Հե.

Ի գառնի կիրակէին ի յէնկիւրի Գ ժամն ուղղափառաց հակառակներս փաշային մարդովն կոդեցին անկարծակի ի ժամանակի ժամասացութեան, և այնու բազում մարդիկք վնասեցան, 4, 5 կին յղի տղայ անցուցին, և այլք ոմանք սակաւ ինչ վնասեցան, այս է ի կողմանէ ուղղափառաց, և զջորս եկեղեցին հակառակորդն առեալ տիրապետեցին, և ապա երկուշաբթի գառկին անկարծակի չարաչար պատուհասեցաւ այն վարդապետն, որ նախ ուղղափառ էր, և սա եղև հաճախոհ և առաջնորդ հակառակորդաց. և սա գնացեալ խոստացաւ փաշային 15 քէսէ. և 5 տուաւ և յետ տիրապետելոյն եկեղեցեացն պատուհասեցաւ, և փաշան ոչ թողուց թաղել զնա մինչև էառ զտասն քէսէն ևս. և ընդ սմին ևս պատժեցան մէկ հայ քահանայ. կինն փաշային ուտեցեալ սատակեցաւ, և չորս չուխատար նորին պատուհասեցան և սատակեցան...։ Ֆէրման եղև, որ զառեալ ստակս ի յուղղափառաց եւս տայցէ, և ի վերայ եկեղեցեաց հաստատապէս տիրապետեսցին ուղղափառք։ (Հ. Պետրոս վրդ. առ Միխիթար, յամին 1741 մայիսի 7. [ի. Պոլիս?])։

ՌԶ.

Նա ևս Պրանսիզն և փարփիշեան միաբան են պատերազմին. դէմ նամսայիս կամենին վենայ յափշտակել. թագուհին պէզպուրք նստեալ է վասն երկիւղին. նա ևս այժմ զէմին ոչ գոյ երկիւղ ի կողմանէ տաճկին, զի անդ եղեալ զինուորքն հանեալ են, և յղեալ ընդդէմ պարսից: (Հ. Յակոբ առ Մխիթար, յամին 1741 սեպտեմբերի 16, [տեղի?]):

ՌԷ.

Երեկոյեան օր, բաղրիքն[1] ծանուցումն արարեալ է ժողովրդեան ասելով, թէ ուղղափառաց վարդապետքն 60 քսակ զրամ տուեալ են, և առնլոցք լուսաւորչաց և սուրբ գևորքայ ժամսն. ես այսուհետև ոչ կարեմ առնել զպատրիարքութիւն, որպէս գիտէք և ոչ կարմիք [պիտի ըլլայ «որպէս... կամիք»] արարէք: Աբրահամ վարդապետն որ էր ի Հալէպ՝ զնա կաթուղիկոս արարեալ Հալէպու և մինչև յայժմ 6 եպիսկոպոս ձեռնադրեալ է: (Հ. Պօղոս վրդ. առ Մխիթար, յամին 1741 Հոկտ. 30, [կ. Պոլիս?]):

ՌԸ.

Աբրահամ վարդապետն, որ ի լեառն մասոնոց՝ ի վերայ բերայ կաթուղիկոս եղեալ է. ևս վկց եպիսկոպոս ձեռնադրեալ է: Նաև զայս լուր լուաք, զի էջմիածնայ կաթուղիկոսն պատճառ եղեալ է չէհրիմանցոց տալոյ զրազումս տուգանս վասն ուղղափառ հաւատոյ. ևս չէհրիմանցիք ցուցեալք են զինքեանս արդարս և զնա անիրաւս առաջի չահին. և ի չահէն արժանահաս պատիժ և պատուհաս եկեալ առ նա, զի զինքն և զամենայն միաբանսն նորին ի չխտայս եղեալք զնոսա տարեալք են ի խորին խորասանն: Եւ այսպէս ևս լուայ, զի հալէպեցի ուղղափառքն մինչ ինքեամբք առին զմի եկեղեցի ի ներհակաց ի յերկրի իւրեանց, մինչդորդութեամբ դատաւորաց՝ այլ և աստ առին զթէբրման, զի ինքեամբ զնիցեն իւրեանց զուղղափառ առաջնորդ. որպէս անդ եղեալ ուղղափառ յոյնք արարեալ են վաղուց: Թէև հալէպցիք խնդրեցին ի պատրիարքէն և ինքն ոչ լուաւ նոցա, զի ինքն զնիցէր նոցա զուղղափառ առաջնորդ ըստ ում խնդրէին նոքա: Եւ յետոյ ի ձեռն միջնորդաց ի վերայ գաղատեալ: Եւ ըստ այսմ երևի և ասի, թէ ուղղափառաց կամ տրի երկու եկեղեցի ի կոստանդնուպոլիս, կամ իւրաքանչիւրոց եկեղեցեաց կէսն. և կամ սիւնհաթոսիւ ի միասին ճարակիլ և միաբան լինիլ ներհակքն ընդ ուղղափառաց. և բնաւ այնուհետև ոչ գնալ ի յեկեղեցիս լաթինաց յազգէն մերմէ, որպէս զի մի ասիցի ի մէջ այլազգեաց, թէ հայք ֆռանկք եղեալ են: (Հ. Պօղոս վրդ. առ Մխիթար, յամին 1741 Նոյեմբերի 15, [կ. Պոլիս?]):

ՌԹ.

Դարձեալ ուրախացայ լսելով վասն Հայրապետին [առ Բենեդ. ԺԴ. Քահանայապետ] մատուցեալ ընծային[2], նոյն Հայրապետն օժարութեամբ ընդունի այդպիսի ընծայս, քանզի ես երբ հանդիպայ Պօլոնեայ, տեսի որ մեծ և գեղեցիկ գրքատուն մէ չինել կու տայ վասն հասարակի օգտութեան և իւր անուան մեծութեան. վասն որոյ բազում կարտինալք և մեծամեծք բազում և պատուական գրեանս ընծայեցին իւրեան. և ինքն զամենեսին պօլոնիա կու առաքէ... յաժմս նափօլու բազում ըսպանեալ զինուորք գան փախի երկրէն անցանեն և գնան տեղն: (Պատկերահաւն Յոհաննէս առ Մխիթար, յամին 1742 փետր.ի 24, [Հռոմ]):

---

1. Յակոբ Նալեան Պաղրիքք:
2. Կ'ակնարկէ Մխ. Աբրահոր ապած Աստուածաշունչը:

ձ.

Ցայսմիկ ամի ի գաղաւթայ չորք եկեղեցիք ուղղափառաց գնդուն աւետն հաչակեցին հանդիսապէս ի դեկ. 25։ (Հ. Պօղոս վ. աս Մխիթար, 1742 ի մարտի 20, [կ. Պոլիս?])։

ձա.

Ցայսմիկ միջոցի հաղմով պատերազմաց ամբոխեցելոց՝ երկիւղ գոյ ոչ միայն ի գօրաց թշնամեաց, այլ նաև ի մերայնոց, զի մի՛ ապստամբիցեն և խուխցեն են. ..... այժմ գալով ես ի սիպին՝ զի անդ գվ[եր. Տէր մինասն կերլացին, և ասաց թէ գնալոց է ի Լ[էհաստան յայսմիկ ամսեան, վասն բարգրգին Տէր Սահակն վարդապետին Լ[էհաստանեայց, (զորմէ գրեալ էի Վերյարգելութեանդ) և ասաց թէ զիս առանելոց է ընդ ինքեան, և անտի գալոց եմք ի միասին ի վ[էնէտիկ։ (Հ. Թեոդորոս Յովաննիսեան աս Մխիթար, յամին 1742 Ապրիլի 17, ի սիպին քաղաք)։

ձբ.

Դեր նախընթաց աւազ չափեցին զվէգիրն[1] փոխեցին և ագռոռեցին, և եղին զայն վէգիրն[2], որ ի ժամանակի հուեէմէ հալածանացն վասն ուղղափառութեան՝ էր ի յիշխանութեան, ևս էր աղայն սառուֆ սեղբոսին, և զսա կոչեաց, զի գայցէ փութանակի ի յերուսաղեմայ, և լինիցի պազիրկեան պաշի ինքեան, որպէս էր նախ։... այս վէգիրն զբազումս ըմբռնեաց և ասաց թէ ի ձեզ զբազումս ապրանս զոն ելեալ վէգիրն. և իրաւի այսու զանթուելի ապրանս գտաւ, և մինչև ցայժմ բազմաց զառնչանս տայ, զի զճմարիտն ասիցեն։ Այնքան անթուելի զանձս հաւաքեալ է անիրաւաբար ելեալ վէգիրն, մինչ զի լսօղքն ոչ հաւատան, բայց է իրաւի, ուստի ըստ չափու անիրաւութեան գտաւ պատուհասն, զի ասեն թէ ի յակսորն ինքն զմիսն ինքեան կոծեալ է, և այնու տանջի հանապազ։ (Հ. Պետրոս վ. աս Մխիթար, յամին 1742 ի մայիսի 29. [կ. Պոլիս?])։

ձգ.

Ցայժմ ի ըստամպօլ ի մեծի ուրախութեան է, զի հէքիմ օղլու իպրահիմ փաշան, որ վէգիր եղև, սկսաւ ապրուստն առատանալ, և թանկութիւն իրացն բառնալ, և զպատերազմն որ ընդ կարմի[ր] գլխոյն հետ մատերազմն լինելոց էր՝ զանց ըրին, ուստի և այսու թէ թագաւորն և թէ իշխանքն և թէ այլք ժողովուրդքն են միշտ ի յուրախութեան։ (Հ. Պետրոս վ. աս Մխիթար, յամին 1742 յունիսի 23, [կ. Պոլիս?])։

ձդ.

Աստուածային նախախնամութիւնն յայտնապէս երևեցաւ ի վերայ քրիստոնէից որ 16000 հրէի տուն երվեցաւ, այսքան տաճկի տուն այսքան չարսու բազար որ կասեն էթէ տուն էթէ բանուր օղայ 82000. եկաւ ֆռանկի հայի մահլին դէմ առաւ. աստուածային նախախնամութեամբն հօլն վեր ելաւ դարձուց դէպ յետ զինչ ասեմ բոլոր յոյսերնիս հատաւ, պատրաստեցաք որ մտնեմք նաւ, տէրն յինքն ազատեաց. 48 սահաթ երեցաւ։ (Անդրեաս աս Մխիթար, յամին 1742 Օգոստոսի 10. Իզմիր)։

---

1. Հէքիմզատէ Ալի փաշա։
2. Խոջայ Հասան փաշա։

ձե.

Երկու Ֆրանսըզի պէյլիկ կէմի եկաւ յաստ, և զփաշա էլչին բերաւ, և չատ զընծայս չնորհեաց թագաւորութեան և միչտ թօպս արծաներն [= արձակեն] ի յանցանելն թագաւորին և վէզիրին, և այսպէս զուրախութիւն առնեն։ (Պետրոս վարդապետ առ Միխրար, յամիսն 1742 Հոկտեմբերի [թիւն մնաց սպառուած]. [կ. Պոլիս])։

ձզ.

Ի քաղաքս և արտաքոյ բազումք են հիւանդութիւնք և բազումք ևս մեռանին. երեք կարտինալ մեռան, մեր հիւրանոցն ժԲ անձինք հիւանդացան հանդերձ Պատրիարգիւ և վրդանէս եպիսկոպոսովն. Պատրիարգն առողջացաւ, բայց տակաւին վրդանէս եպիսկոպոսն կեայ ի մահիճս...։ Վասն գերապայծառ Պատրիարգին կողմանէ զոր ինչ գրով կամ ներփակեալ փոքրիկ գրովն ծանուցեալ էիր իմացայ. սորա ճանապարհորդ լինիլն ոչ է վասն յաժմոյս, երբոր լինի ես հրամանուցդ գրիւ ծանուցանեմ։ Ողևանի կողմանէ ես իւրեան կու խոսիմ ըստ ժամանակին. յաժմս փափն իւրեան իշխանութիւն տալաւ քննել հոօմ եղեալ զեպիսկոպոսս և զքահաննայս, թէ ուր կամ որպիսի կերպիւ ձեռնադրեալ են, որոյ աղաքաւ Հռօմ եկեալ են, ինչ գործի վրայ են կամ ինչ արդար պատճառ ունին ոչ դառնալ ի յերկիրն իւրեանց. ետ կատարելոյ զգործ քննութեան պարտի ծանուցանել փափին զամենայն ինչ. դեռևս ոչ է ըսկսեալ առնել զքննութիւնս վասն ներկայ հիւանդութեանց աղաքաւ։ (Յովհաննէս Պատկերահաւ առ Միխրար, 1743 փետր. 9. [Հռովմ])։

ձէ.

Ջուեր ոլդի իմ աբրահամ, որ երբեմն կացեալ եղև ի մենաստանն մեր՝ սա ընդ յակօբին, որ կոչի չիլինկիր, գնացեալ եղև անատօլու առ Աբէլ անուն եպիսկոպոս առ ի ձեռնադրիլ քահանայ. որ եպիսկոպոս երբեմն եկեալ է ի տեղս և զարձակուեաւ առեալ է. վասն այսորիկ մինչ գնացեալք են սորա, այսինքն աբրահամն և չիլինկիր յակօբն, եղիա վարդապետն վասն սոցա զմի գիր վկայական տուեալ է, որպէս զի ըստ այնմ գրոյ ձեռնադրիցէր զնոսա. և ձեռնադրեալ է։ Ցետ ձեռնադրութեան իմացեալք են, թէ աբէլ վարդապետն ոչ լեալ իցէ եպիսկոպոս, բայց զինքենէ ասացեալ է, թէ ես ի սիսայ կաթուղիկոսէ առեալ եմ զեպիսկոպոսութիւն։ Եւ վասն այսորիկ ճանապարհ արար՝ գնացեալք ի սիս, և հարցեալք են նմա, թէ դուն իցես ձեռնադրեալ եպիսկոպոս զԱբէլ անուն վ.ն. որոց պատասխանեալ է թէ ես աբէլ անուն եպիսկոպոս չեմ ձեռնադրեալ. և զայս լուեալ ի յողբ և ի լաց անկեալք են. և որոյ խոստացեալ զընծայ՝ յորմէ ձեռնադրեցեալք են ի մէջ գիշերի սկսեալ զամենայն աստիճան առեալք են. և ի յառաւօտու ևս եպիսկոպոսի[1] ձեռնադրեցեալք են։ Եւ աստ եկեալք մինչ պատմեալք են ի յառնուլն զաստիճանս՝ մինչահատաբար աստիճան առեալք են՝ համբաւեցեալք եղեն։ Ուստի ևս ըստ ոմանց գնացեալք ի յուսկուտար՝ դարձեալ ձեռնադրեցեալք են։ Աստ վէքարն, յորում աղաղակեցին սոքա, զի զգիր տնօրինման բերել տայցէ սոցա ի պապէն. ասաց նոցա ոչ լինի։ Եւ խնդրեցին ի նմանէ ոչ վերապահեցեալ մեղաց առնել զնոստովանութիւն. և չնորհեաց նոցա. և զկնի սրբոյ զատկին գնան ի հռօմ, զպարտս արարեալ աբրահամն մինչև 80 դուռչ. նաև ի ճանապարհ պիտոյ է դրամ՝ աստ հոգալոցք են։ (Հ. Պօղոս առ Միխրար, 1743 մարտի 13, [տեղի?])։

---

1. Թերևս եպիսկոպոսէ կամ եպիսկոպոսէ։

ձլ.

Հայր զազարն պատմեաց թէ տեղդ լուեալ էք թէ ասա նորաձեռ հաւատս ելեալ է, և յոյժ կասկածանք կայ տեղդ վասն սորայ. թէպէտ իրաւ է որ եղեւ սակաւ ինչ վրդովմունք, սակայն ոչընչացաւ. և բանն էր այսպէս, որ ունէք խելագարք ըսկսեալ էին իրբ մէկ ընկերաքրցութիւն յառաջ ածել որ էր ոչինչ բան, և անուն ընկերաքրցութեանս է Ֆ Ֆռայի մաւուր, որոյ վերջաւորութիւն էր կոչմունք ուտել և ըմբել և խնդալ, ընդհանուր որ ոչ վայելէ հաւատոյ, և սակաւ ինչ նշան կախարդական կայր. զայս յայտնուեցաւ. Թագուհին պատժեաց զամանս ի բանդ զամանս ի մեծութենէ և ի ծառայութենէ իւրմէ. և ամէն բովանդակն ոչընչացաւ. ամենեին չի լսվիլ։ (Պ. Դաւիթ Յովաննիսեան առ Միխրար, յամին 1743 յունիսի վե. վխենեայ)։

ձբ.

Ղախ քան պատրիարքին[1] չուելն Լիվորնայու, սահակ եպիսկոպոսն ակարացեալ էր բայց եռոյ արողջացեալ և գնացեալ է ընդ նմա. տեղս ասն ասմէնիկան նոյն պատրիարքին անէնթոն է։ Ելս նոյն գրովս ծանուցի հրամանուցդ թէ փափն[2] 24 կարտինալ պիտի անէ...։ փափն այս ամիսս որպէս սովոր էր դուրս վիլլեճատուրա[3] չի գնաց վասն մահի չոշորդին. ոչ միայն հոամ այլ ամենայն քաղաք և գեղուրայս զաներն սօլատաթներով նային. ոչ միայն այս, այլ զանազան տեղիս ըսպանեօլի բազում սօլատաթներ կան։ (Պատկերաձան Յովհաննէս առ Միխրար, յամին 1743 հոկտեմբերի 12, ի Հռովմ)։

ղ.

Լուաք թէ Աբրահամ կաթուղիկոսն գմեծագոյն հալածանս կրեալ է, և թէ ժողովուրդքն երկու հարիւր քսակ ճուրուշ տալոցք են. ասեն թէ զհարիւրն վճարեալք են, և զմիւս հարիւրն ոչ կարելով վճարել ցիր և ցան եղեալք են։ (Հ. Ղազարոս առ Միխրար, յամին 1743 հոկտեմբերի 22, [եղիսաբեթուպոլիս])։

ղա.

Եւ վասն Բաղրիա[ր]քին... խիստ վատ խապար լսեցի. որ գրիլ էր հոօմայու տիրացու յովսէփին, թէ գնածիլ է լիբանան լեառն և մեծ խրօվութիւն ելիլ է ի վերայ ուղափառած, այսինքն հերետիկոսներն և հալածիլ ին զուղափառքն, և 200 քիսայ փող ճուրուշ առիլ ին. և գիրեքտուն ալ կամէցիլ ին առնելոյ. և չին քնացիլ ու շատ չարչարանք և նեղութիւն քաշիլ ին ուղափառքն, և այնպէս ամենեքեանն ի փախուստ իղիլ ին։ (Աղաչայ Պետրոս [կր գրէ միշտ անուանը Պրքէլի՝ վրաց պատիւով] առ Միխրար, յամին 1743, նոյեմ. 20. Էչիզաբէրն)։

ղբ.

Վասն իսկէլէին զորմէ գրեալ ես թէ նորաչէն քարամբք չինելոց ես, և թէ քան զառաջինն ընդարձակագոյն լինելոց է՝ տեղին որ առաջի դրանն է, և յոյժ բարւոք լինի ով տէր իմ, և

---

1. Աբրահամ Պետրոս Ա.ի։
2. Բենեդիկտոս ԺԴ.։
3. = Գիւղաքնացութեան։

տէր աստուած յաջողութիւն պարգևեսցէ[1]։ (Հ. Պետրոս վ. առ Միսիթար, յամին 1744 փետր. 3 [տեղի ?])։

ղգ.

Երանելի տէր Կոմիտասին պատմութիւնն զոր գրեալ է տէր անդօնն մուրատչայեան, տուեալ է ի ձեռս սպասաւորի մասէլի թարգմանին, զի կամ ընդ փօստի, կամ ընդ նաւու ուղարկիցէ այդր, թերևս մինչև ցարդ հասեալ իցէ այդր, և թէ ոչ՝ վերստին կարէ օրինակել և ուղարկիլ[2]։ (Հ. Միքայէլ վ. առ Միսիթար, յամին 1744 փետր. 5. [կ. Պոլիս])։

ղդ.

Ջներքոյ գրեցեալն փորել տուի ի վերայ գերեզմանի իւրում [այսինքն տիրացու Կարապետի].

Այս է տապան դիր հանգստի. մաքրակենցաղ սրբասիրի
ուշիմագոյն խոհեմ դպրի բարեհամբաւ կարապետի
կոչեցեալոյ դախտաճողլի. ի քաղաքէ ղրասլըզօնցի.
եկեալ ի Հռօմ յիմաստ վարժի Յանիւ մեծաւ ի նոյն ծաղկի
բայց ոչ տևեալ տհաս կտրի. փոխեալ ամօք տասն և ութնի
հաւատարիմ գտեալ լինի պատկերահան յովաննիսի
որ ետ դնել զարձան քարի ի վերայ իւրոյ բարեկամի
Թվին և այլն.

(Ցովհաննիս պատկերահան առ Միսիթար, յամին 1744 մարտի 14. [Հռոմ])։

ղե.

Ով վերապատուելի Հ. Մատթէոս ուսուցիչ իմ ծանիր, զի գտի ես զօրինակ մի վարուց տէր կոմիտաս մարտիրոսին, յորում լիասլէս մի ըստ միոջէ պատմէ զամենայն, ուստի եթէ կամիս ծանո թղթով. և ես օրինակեցից և յղեցից։ (Պետրոս? առ Միսիթար, յամի 1745 ի ապրիլի 20. [տեղի ?])։

ղզ.

Այսօր գափիտան փաշան բարակ արմատայով, այսինքն չէքտիւրիներով, ֆրխաթաներով զանազապաշներով ելաւ գնաց, ասեն գնալ ի սեաւ ծով, ի ղռիմ, առ ի չինել զօղու քաղաքն։ (Հ. Միքայէլ առ Միսիթար, յամին 1744 մայիսի 9. ի կ. Պոլիս)։

ղէ.

Ջնոր լուր ինչ ոչ լուայ աստէն, եթէ ոչ միայն զայս, թէ կամեցեալք են ոմանք թունաւորել զթագուհին[3], *որք և եղեալք են այլակերպեցեալք ի զգեստս մահմադականս, որպէս զի մի լինիցի կասկած զնոցանէ*։ (Հ. Թեոդորոս Մխիթարեան առ Միսիթար, յամին 1744 մայիսի 14. ի Թրիեստ)։

---

1. Կղզեկիս մասին կը խօսի։

2. Ս. Ղազարու Ձեռագրաց մէջ չունինք Անտոն Մուրատչայեանի գրած եր. Կոմիտասի պատմութիւնը. չի կայ նաև այլուր ոևէ յիշատակութիւն մը, թէ երբ Ուխտս ատացած է զայն թէ ոչ։

3. Մարիամ Թերեզա Աւստրիոյ։

՟ր՝

Ասա լսեմ թէ յայժ մեծ կառապած առեալ է Բրինձ Լուրգամիչն Հիսպանեացւոց, քանզի կառորեալ է զիմ սպանիօլս և զմեծ սէրմպէր կենդրայն նոցա։ Իսկ և զայն Գաղղն վիրաւորեալ է առ Նէապօլսիս։ Գարձեալ ասեն մեծ պատերազմի գոյ պատերազմի։ (Հ. Թէոդորոս Մեծոփաշցի առ Մխիթար, յամի 1744 Յունիսի 26, ի Վիեննայ)։

՟ղբ՝

Մի հօսմի քահանայ, ընդ անցանելն ի գաւթ եկեղի ճամիէն, տեսեալ խումբ մի, յորում մի սօխայ կամ ասվրիչ, խօսի զունայն պատմութիւնս, կամ գերազոյ մեկնութիւնս, քահանային ևս կանգնեալ մոխ դնէ (զի սովորութիւն է, որ բաց ի ճաճկաց կարեն և այլք ազգք կանգնիլ լսել.) յետոյ զկնի ամենք ճաճիկք հարցեալ քահանային, լսեցեր որպիսի բան խօսի, քահանայն պատասխանեալ թէ բոլորն ունայն և սուտ է, յայնժամ ամբոխ արարեալ ճաճիկք կալեալ ածեալ առ դատաւորն, և անտի առ չաուշպաշէն, և անտի առ վէզիրն. առաջի ամենեցուն քահանայն զնոյն բան ասացեալ. յաղագս այսորիկ վճիռ հատեալ եղև մերձ նոյն տեղւոյն յորում վէճն սկսաւ, գլխատել զնա։ Եւ վասն սորա վճռ եմուտ ի մէջ ուղղափառաց մերոց, թէ սա արդեօ՞ք մարտիրոս եղև, թէ անխոհեմ գործոց պատուղ է։ Դաւ այս ինչ գիտելի է, որ անաւօլուի բանն բուսեր է, զի ի ծանրագոյն հարկապահանջութեանց ասպատակութեանց և կողոպտմանց ի յարգրումայ, ևս առաւել ի սեբաստիու, ի Թօխաթու և յայլոց տեղեաց փախչին և գան. նաև ի պարսից կողմն ևս այնպէս, լէկգին մէկ դիհէն, պարսիկք մէկ դիհէն, ճաճիկք մէկ դիհէն. լէկգին ի կողմանէ սոցա է։ Ասեն ևս թէ պարսիկք կամ քիւրան կոխեալ են զԹօխաթ։ (Հ. Միք. վ. առ Մխիթար, յամին 1744 յուլիսի 28. [կ. Պոլիս])։

՟ձ՝

Վրդանէս եպիսկոպոսն իւր էնկուրցի աշակերտն քահանայ օրհնեց, հանդերձ մին այլ էնկուրցի փրօփականտայի տղի հետ։... վասն չինութեան և կարգաւորութեան տանս այսմիկ թվի թէ նեռհակն պատահի. վասն որոյ բարւոք թվի ինձ հեռանալ աստի և հոգալ զփրկութիւնն հոգւոյ իմոյ, քան թէ անօգուտ աշխատիլ...։ Պատերազմի կողմանէ յայտ լիցի. մերձ 3 ամիսուկէս է որ երկու էսկեար միմեանց դէմ նըստեր են անպատմելի վնաս հասուցանելով հասարակ ամենեցուն գողանալով կողոպտելով և աբշտակելով... այս օրերս ասեն թէ նեմսէն պիտի եւ դառնայ իւր երկիրն և Նափօլու թագաւորն դառնայ Նափօլի, որ է պատճառ այսու ամենայնի վնասի և չարութեանց։ (Յովհաննիկ պատկերահան առ Մխիթար, յամին 1744 սեպտ. 12. [Հռոմ])։

՟ձտ՝

Թագուհին[1] է ի նեղութեան, վասն զի Պրանտապուրկն 90000 զինուորք մտեալ է ի Պօհէմիա, և ի Ռէնումէն մինչ դարձեալք են զօրքն իւր, առ ի գալ յօգնութիւն ընդդէմ Պրանտապուրկին, յանցանելն զգետն Ռէնում կոչեցեալ՝ զմեծ կառորած առեալք են Ֆրանձուզքն զօրաց թագուհւոյն։ (Հ. Թէոդորոս Մէոփաշցի առ Մխիթար, յամին 1744. սեպտ. 19. ի Բէդրօվարատին)։

---

1. Մարիամ Թերեզա Աւստրիոյ։

ձբ.

Այս [գաղատացի Ստեփանն] փափաքի քահանայ լինիլ. վրդանէս եպիսկոպոսն յառաջադրեալ էր ոչ ոք օրհնել այսուհետև պատճառելով զծերութիւնն իւր, վասն յաժմոյս նոյն ըստէփանն ըստէփանոս վարդապետէ դաս առնէ առ ի պատրաստիլ քննութեան։ Լվայ թէ հալէպցի տէր Նիկողայոսն տեղդ եկեալ է և անդ աւել պակաս խօսի վասն իւր պատրիարգին[1]. ոչ ոք չի հաւատայ բանից նորին, զի ամենեքեան սուտ և զրպարտութիւնք են. աստուած դորա լոյս տայ. մօտերս գիր եկաւ պատրիարգէն, փափին սուրբ ժողովքին և ոմանց կարտինալաց. անունն յոյժ բարի և հաճելի է առաջի մեծաւորաց. միայն ասիմանն և եղբօր տղան ներհակ են իւրեան։ (Ցովհաննէս պատկերահան առ Միխիթար, յամին 1744 դեկտ. 9. [Հռոմ])։

ձգ.

Աստէն Ֆռէնկ քահանայք ի մերձակայ գիւղս բնակօղք, նաև Ֆռանչիսկանք, և ևս ձէզուիթք հրաւիրեն զիս երբեմն երբեմն ի մեծ տօն աւուրս զլատիներէն ձայնաւոր պատարագ ասել յեկեղեցիս իւրեանց, որովհետև գիտեմ (ասեն) զլեզուն լատինական։ Վասն որոյ... աղաչեմ, զի եթէ գրիցէք վասն երկիցս պատարագելոյն, զայս ևս առակցիցէք. քանզի նաև կղեմէս և Վիլլօթ ի Հայաստան բազմիցս հայերէն ասէին զպատարագ...։ Ցետ այսորիկ ծանիք, զի իբրև եհաս գիրն զերյարգելութեանդ ի ձեռս իմ, և ընթերցայ՝ իսկոյն որոնեցի զառաղարանս իմ, և երէկ օրինակեցի զերգն Երանելոյն Տէր Կոմիտասին։ Ասեն թէ այրն[2] թագուհւոյն ի 25 սոյն ամսոյս պսակելոց է ի կայսր։ Բայց մանաւանդ ոչ կամին ճանաչել զնա՝ նաև իբրև զթագաւոր աւստրիոյ, պօհէմիոյ, և մանաւանդ, այլ միայն զթագուհին մինչև ցայրեունս Ցովսէփին որդւոյն իւրեանց։ Նաև թէ որդին որ այսուհետև ծնցի ի կայսերէն՝ մի ունիցի զառաւելութիւն ինչ իշխելոյ յայսոսիկ երկիրս։ Եւ ևս, զի կայսրն ոչ օգնեսցէ նոցա, յորժամ տաճիկն յարիցէ ի վերայ նոցա. որպէս նաև նոքա ոչ օգնեսցեն նմա ի բարձրագոյն երկիրս կայսերութեան։ (Հ. Թէոդորոս Մէտիւշցի առ Միխիթար, յամին 1745 յուլիսի 24. ի շանցն Բենդօվարատինոյ)։

ձդ.

Անցեալ շաբաթն փափին[3] հրամանաւն չորս կարտինալք ժողով արարին վասն տեղս եղեալ միսիօնարաց խնդրեալ բանիցն համար. ետ քանի աւուր սոցայ ասին թէ ահա սուրբ Հայրապետն չնորհեաց ըստ խնդրոյ ձերում, վասն որոյ պատրաստութիւն տեսէք, երբ տէքրէթն կատարի ճանապարհօրդ լինիք. և սոքայ ի վերայ այս բանին մեծ ուրախութիւնս արարին...։ Զայն զօր այլ ճանապարհաւ լսեցի է այս, թէ ըստամալ եղեալ լաթին միսիօնարքն ոչ ոք իշխանութիւնս ունեսցին ի վերայ Հայոց, խոստովանութիւն սրբութիւն տալու. եթէ պատահիցի թէ ոմն Հայ ի կէտ մահվան կամիցի խոստովանիլ պատրոյ, այս լինիցի ներկայութեամբ Հայ միսիօնարի. և թէ Հայ միսիօնարքն կարող լինին ի յեկեղեցիսն պատրոց քարոզ և պատարագս ասել, խոստովանանք լսել և այլն. եկեղեցի խնդրելն ասլ չունի։ (Ցովհաննէս պատկերահան առ Միխիթար, յամին 1745 օգոստոսի 7. [Հռոմ])։

---

1. Աբր. Պետրոս Ա.։
2. Ֆրանկիսկոս–Յոսէփոնոս Լոռէնայ։
3. Բենեդ. ԺԴ.։

ՃԼ.

Սուրբ Թէոդորոսի պլոխն և այլ մասունք բստաւոյլի ուղղափառաց փախն[1] չնորհեաց իւ բեանց[2] [ոմանց հայ միսիօնարաց] որ առանն։ (Ցովհ. պատկերաձաճ, յամին 1745 անպտ. 11. [Հռոմ])։

ՃԶ.

Մեր կարծինալ Քարաֆային կոմմանէ վ֊ըպանէս եպիսկոպոսն և ես խօսեցաք Սարքիս եպիս֊կոպոսին, թէ մեռաւչէ տեղս իբրև ձեռնադրող եպիսկոպոս և մնծաւոր. յանձն չառաւ ասելով թէ անհնարին է մնալն իմ տեղս, հարկ է ինձ վ֊նեաթիկ դառնալ, զի անդ գիրք պիտի տպել տամ ի յոգուստս յազգին մերոյ և այլն. իրաւի այսչափ եպիսկոպոսք եկին տեղս. սորա նման գրոց հմուտ և կարդացող ոչ ոք տեսի. փափն և ամանք կարծինալք որոց մոտն գնաց յոյժ սէր և ընդունե֊լութիւնս արարին իւրեան։ (Ցովհ. պատկերաձաճ առ Մխիթար, յամին 1745 դեկտ. 18. [Հռոմ])։

ՃԷ.

Լուաք թէ չահ Թահմազն, որ զէջմիածին մերկացուցեալ և զկաթուղիկոսն[3] կապանօք ընդ իւր տարեալ, յայժմ դարձուցեալ է ի յաթոռ իւր. աստ զգիր օրհնութեան ուղարկեալ, զնուիրա֊կութեան տալոքն խնդրեալ, փողէ թափթփեցան. 30. 40 քսակ ճէրիմէ տուանք, պարտուց մէջ ենք։ (Հ. Միք. վրդ. առ Մխ., յամին 1746 Յունվ. 4. [Պոլիս])։

ՃԸ.

Ի վերափոխման պահուց չարտաւն, մի վարդապետ հայոց տանկացաւ։ Ցետ ոմանց աւուրց զղջացաւ զձևն փոխեալ, բմպտնեցին և գլխատացին. ասեն թէ փաթրիքն լեալ իցէ առիթ այսմ. վասն որոյ հակառակորդաց նախատակոծ եղև։ Այս վարդապետս էր պալաթցի ներսէս վարդա֊պետին պատասխանու առաջնորդին աշակերտ։ Սա գոլով աստ, միշտ գնաց մի, այսինքն զպաշտօն մի կամ զառաջնորդութիւն յուրեք, կամ գնուիրակութիւն, գկօնտակ մի խնդրեալ, որով որպէս ժողովարար չրջիցի, չէ տուեալ խստութեամբ և սաստիւ վարեալ և արտաքսեալ. և նա ի բար֊կութենէն գնացեալ զայն ուրացութիւնն արարեալ։ Եւ ոմանք ասեն թէ խաբանօք ըստ առաջնորդի տեղւոյ միոյ իբրև աթոռակալ և փոխանորդ ուղարկեալ, որ իբրև գնայցէ անդ իբրև սիւրկիւն արգելեալ լիցի։ Եւ զայս դաւաճանութիւնս լուեալ ոմն ի բարեկամաց այս վարդապետիս մինչ մտանելոց էր ի նաւ և գնալոց, ծանուցեալ է թէ ուր գնաս, վասն քոյ այս բան գոյ։ Ասեն վասն այսր բարկացեալ գնացեալ տանկացեալ է։ Ցաճախք բազմաց հայոց ասէին. ահա ձեր պարապաչն ճանապհով գմեզն գոլ ճչմարիտ, ինքնայօժար եկն ի հաւատ։ Բայց դառնալովն և մեռանելովն եբարց զայս նախատինք։ (Հ. Միք. վրդպտ. առ Մխիթար, յամին 1746 Հոկտ. 10. [Պոլիս])։

---

1. Բննդ. ժԻ.։
2. Այսինքն Հայ միսիօնարներէ ոմանց։
3. Կազար։

ձբ.

Լուաք թէ շահ թահմազն զէջմիածին կողոպտեալ և ամայացուցեալ, զոչ ինչ թողեալ, և կաթուղիկոսն ի յարգրում փախեալ. և անտի գալ ասա ասեն։ (Հ. Մխ. վրդ. առ Մխիթար, յամին 1747 Յունվ. 9. [Պոլիս])։

ձդ.

Տաճիկն ի վիսին և ի նիշն 80000, այսինքն ՁՌ հոգի ժողովեալ են, և ասեն ոմանք ի վերայ պանադին, ոմանք ի վերայ մեր յարձակիլ պատրաստին... Տաճիկք բերեալ են զմիջահասակ հայ կին մի երեվանցի ի Պէլրզատ, և հայք կամին ազատել զնա, բայց ոչ կարացին աւելի ժողովել, քան զ100 ղուշ.։ Իսկ զին նորա է 300 ղուշ. վասն որոյ ազաչեմ, զի երեվանցի պարոնայք տացեն զառաջ ողորմութիւնս, և յղիցեն աստ վասն ազատութեան կնոջն այնորիկ։ (Հ. Թեոդորոս վեհ. տիրացի առ Մխիթար, յամին 1747. փետր. 11. ի շանցն Բէդրօվարատիոյ)։

ձդա.

Լուաք թէ պետն պարսից[1] զհայոց ազգն ի ներքոյ այն տէրութեան եղելոց չարչարէ և տանջէ և կեղեքէ զապրանս նոցին, որպէս զԱզար կաթուղիկոս և զԷջմիածին կողոպտեալ. և կաթուղիկոսն ի յարգրում փախեալ է։ (Հ. Մխ. վ. առ Մխիթար, յամին 1747 ի մարտ 23. [Պոլիս])։

ձդբ.

Ամսիս 21, երեք կարտինալք վախճանեցան. մինն Աքվավիվա, որ էր ըսպանիու և նափօլու թագաւորաց էլճի. միւսն կարտինալ փէթրան, երրորդն՝ քօրամպոնի. 15 ժամուց մէջ երէքն վախճանեցան. թէպէտ երկար ժամանակ էր որ հիւանդ էին։ (Պատկերահան Յովհաննէս առ Մխիթար, յամին 1747 մարտի 25. [Հռոմ])։

ձդգ.

Վասն հայոց կաթուղիկոսին եկն լուր աստ, թէ Շահթամազն փախուցեալ է յԷջմիածնայ, և նստուցեալ է ի տեղոջ նորա զմի Չահուկ վարդապետ. ուստի Կաթուղիկոսն եկեալ այժմ ի քաղաքն Կարնի, և գրեալ է փաթրիկին[2] թէ ունիմ ընդ իս զբազում մաստունս. բայց ոչ ունիմ զտեղի բնակելոյ. առաքեա առ իս զոմանս վարդապետս՝ զի եկեալ օգնեսցեն ինձ։ Իսկ փաթրիկն յղեաց զերկուս վարդապետս, որոց մինն մերձ ուղղափառութեան է և կոչի Ահազին. և միւսն աթանաս, որ զբազում ճնաստ ետ գաղատացուց։ (Հ. Թոմ. վ. [Սեբաստացի Թեոդորոսեան] առ Մխիթար, յամին 1747 մայիսի 1. [Պոլիս])։

---

1. Թահմազ Գուլի խան։
2. Յակոբ Բ. Պաթրիարքի Կ. Պոլսոյ։

ՃԺԹ.

Լուաք թէ գլուխն պարսից[1], որ զէջմիածինն կողոպտեաց, զազար կաթուղիկոս փախեալ է ի կարնի նստեալ, և ի տեղի սորին զՋահկեցի կարգաւոր մի եդեալ. և զազարն ասա կամէր գալ. ասա եղեալ վարդապետք և իշխանք զգիր գրեցին ոչ գալ, այլ երթալ ի վանդ մի նստիլ, և զաւրեստ նորին տալ. և զահագին նուիրակն որ ասա ի տեղի կաթուղիկոսին բնարեալ ուղարկին յէջմիածին, երթալ առնուլ զոր ինչ փախուցեալ է, այսինքն զաջն և զայլս կահս ի զազարէն, թևրևս երթալ ինքն այսինքն ահաքինն կարիցէ նստիլ։ Ահաքինին մէկ արեգան միջնորդիւ միով խնդրեալ էր գիս տեսանել և զարձակումն առնուլ. ես չրջաբանութեամբ հետացուցի, թէ քանի որ վարդապետի քովն է ուղղութեան վարդապետութեան գրոց պատասխի և յորժամ ինքնագլուխ քաղցիչ լիցի, բարի վարուց և ճշմարտութեան քարոզող լիցի։ (Հ. Միքայել վ. առ Միսիթար, յամին 1747 մայիսի 20. [Պոլիս])։

ՃԺԱ.

Ի յանցեալ տարւոջ էմուտ սադայէլն ի փաթրիկն[2] որով հալածեաց զմեզ. յետոյ էմուտ ի ծ[ն] ևսկեպոսսն ի էջմիածնում, որովք բանադրեաց զկաթուղիկոսն հայոց[3]. և յետոյ էմուտ ի կաթուղիկոսն որով բանադրեաց զպատրիարգն. զի լուաք թէ երբ լուան իշխանքն սոքայնցին ընթեռնուլ զգիրն զայն ինքեան. և այժմ գոլով փախստական գնացեալ ի Խսկիւտար բնակի։ (Հ. Թադէոս վ. առ Միսիթար, յամին 1747 դեկտ. 13. [Պոլիս])։

ՃԺԲ.

Մեծ կռիւ և չխուճ գոյ ի մէջ... վասն կաթուղիկոսութեանն, զի ասեն թէ երգրումայ քիւթիւռ պետրոս վ. առաջնորդն և ահաքին սահակ վ. գնացեալ շահին[4] 200 քսակ դրամ տուեալ, զքիւթիւռն կաթուղիկոս կացուցեալ, և զղազարն ի տեղւոջէն փախուցեալ։ Աստ աճամներն և կեսարացիք ի վերայ փաթրիքին[5] խրոխտան, թէ դու ես կամակից ես այսմ բանի։ (Հ. Միքայել առ Միսիթար, 1748 մարտ 1. [Պոլիս])։

ՃԺԳ.

Եթէ զորպիսութենէ քաղաքիս հարցանիցես, ամենևին վատ է. յամենայն ժամ ի մէջ երկիւղի եմք. եէնիչէրի աղայն և պօստանճի պաշին փոխվեցան. լազերն և եէնիչէրիներն ի պալաթիա զմեծ աղմուկ արարին ընդ միմեանս... մեծ պարոնն [Թագաւորն][6] ի մեծի երկիւղի և ի զգուշութեան է. յայսմ ութօրէիի աւելի քան զ1000 անձինս խեղդեցին և ոչ դադարին հանապազ ի խեղդելոյ զբիւրբիրիներն։ Եթէ ի կողմանէ թանկութեան հարցանիցես, ամենայն իր այժմ սղացաւ։ Կայ երեք ամիս, որ մսին քարչն 14 բարայ էր, և այժմ 17 բարայ. նոյնպունակ և այլ ամենայն իր։ (Սարգիս տի մուրատ առ Միսիթար, 1748 Մարտ 30. [կ. Պոլիս])։

---

1. Ալիշահ Պարսից։
2. Յակոբ Բ.։
3. Պազար։
4. Ալիշահ։
5. Յակոբ Բ.։
6. Մահմուտ Ա.։

ԱԺԲ.

Ի յանցեալ ամս ի գարնանային եղանակի, եկին ի յարևելեան կողմանց այնչափ գունդագունդ բազմութիւն յոյժ մարախաց, մինչ զի իբրև զամբ թանձրամած արգելին զճառագայթս արեգական, և սփռեալ ի գաշտս և ի յարտորայս սպառեցին զամենայն խոտ դալարի։ Իսկ ի յամի յայսմիկ, ի յուլիսի ամսոյն եկին ի չէնս, նաև ի փոքրիկ բուրաստանն մեր, և մեք գնացեալ ծնծղայիւք և զանկակօք փախուցաք. նաև ֆօռն բազմութեամբ ժողովրդոց՝ հանեալ զսրբութիւնն եղ ի թափօր։ (Հ. Ալիպրևաս [կ. Պոլսեցի Բուզայեան] առ Մխիթար, 1748 օգոստ. 3. [տեղի?])։

ԱԺԲ.

Զձակոբ պատրիարգ փոխեցին յաւուր զաւակի յարութեան տեառն, ըստ Հայոց ի մարտի 26, և նստուցին զպրոխորօն կոչեցեալ վարդապետն[1], և զնա աքսորեցին։ Եւ յետ վեց աւուր[2] զպրոխորօն վարդապետան ևս իջուցին յաթոռոյն, և նստուցին զմինաս վարդապետն[3] յաթոռ պատրիարքութեան որ էր առաջնորդ սրբոյ կաթողիկէին։ Իսկ մինաս վարդապետն առ այժմ ոչ է աստ[4]. եղին փոխանակ նորա զյարութիւն վարդապետան[5] արբեցող. մինչև եկեսցէ ի տուրբ կարապետէն մինաս վարդապետն։ (Պարգիս տի մուրատ առ Մխիթար, 1749 ապրիլի 20. [Պոլիս?])։

ԱՒ.

Դրեալք էիք թէ... զանկակատունն[6] եզերեցաւ մինչև ի տեղի զանկակին, և թէ սկսանիմք զպատրաստութիւն տեսանելիք ընտրութեան վասն[7]։ (Հ. Պետրոս վարդապետ առ Հայր եղիա վարդապետ փոխ. Ադրեայի, 1749 սեպտ. 20. [Պոլիս])։

ԱԻԱ.

Մայասուլի... նուսխայի բանն այս է. ամ տրամ մի մէտիքամէնթա քռեօլօ, զի այսպէս կոչի իտալերէն. և երկու օնցա ջղախոտի չուր վարդէջրի նման հանած, որ իտալերէն կոչի աքուա փիանթաճինէ. և երկու օնցա վարդեջուր. խառնեա զսոսա ի միմեանս յանօթ մի և ջերմացո ոչ կարի, այլ եղկ լիցի, և լաթի կտորով քսէ այն գնատացեալ մայասուլն։ Եթէ յոյժ սաստիկ է ցաւն, յաւուրն մի և երկու կամ երեք անգամ. իսկ յորժամ մեղմանայ ցաւն, յաւուրն մի անգամ բաւական է[8]։ (Հ. եղիա փոխ. Ադր.ի առ Հ. Թովմաս, 1750 փետր. 23. [Վենետիկ])։

---

1. Սիլիսարացի Պրոխորն վարդապետ, որ Էրուսաղէմէն եկած էր զէպքէն ոչ շատ առաջ.
2. Իսկ ըստ Զամչեանի Պատմութեան՝ «Յօթներորդում աւուր», (Շար. Գ. էջ 863).
3. Ակնեցի.
4. Այդ ժամանակները կարին կը գտնուէր.
5. «Կոստանդնուպօլսեցի ի Պալատայ՝ զաշակերտ Յովհաննու Կոլոսի». (Զամչ. Պատմ. Հայր. Գ. էջ 863).
6. Ս. Ղազարու.
7. Կ'ակնարկէ Մխիթար Աբբահօր յաջորդի ընտրութիւնը, մեռած բռլալով Հիմնադիրը հինգ ամիսէ ի վեր.
8. Աւելորդ չհամարեցայ նշանակել այս դեղագիրը՝ որ կրնայ հետաքրքրել մեր Հայ բժիշկները.

ՃԻԵ.

Ղանիէլ Հ. Զաքարիայ վարդապետ, զի ողորմութեամբն Աստուծոյ յաջողութեամբ կաթուղիկէն զանգակատան մերոյ կատարեցաւ, և ընդ ամէնն գնաց 8000 լիրէ արծթեայ։ Եւ այժմ մերձ են և զծեփն եգերելոյ։ Եւ վկնի ումանց աւուրց բերելոց են և զզանգակսն։ Ի բերանս ամենեցուն չըջի զանգակատունն մեր և զանգակքն ամենեքեան. զարմանան, և ամենեքեան զովեն. և գրեթէ ոչ ոք յոգի անանձկով։ Եւ զայս ամենայն գրեցի որպէս զի ծանուսցես և Պետրոս աղային և Յարութիւն աղային։ (Մելգոնեան Աբրահաշէր առ Հ. Զաքարիա, 1750 Յուլիս 14. [վ.ձեռագիր])։

ՃԻԶ.

Զզանգակատունն յաջողելով ամենն, ամենայն վայելչութեամբ կատարեցաք, և զանգակս երիս նորս մեծամեծս կախեցաք ի նմա, քաղցրաձայնս յոյժ, որպիսի սակաւ գտանի ի քաղաքիս։ (Մելգոնեան Աբր. 1750 Օգոստ. 8. [վ.ձեռագիր])։

ՃԻԹ.

Ասի, թէ նաև յակոբ վարդապետն նալօղլին պատրիարքն մնռնալ է յերուսաղէմ։ Դարձեալ ծանուցանեմ և զայս, զի զպատակիր լուսաւորեալ հոգի Աբբայհօր մերոյ բերեալ այսի եղեալ են օր մի ի բակն հայոց պատրիարքական եկեղեցւոյն սուրբ աստուածածնին. և տեսանօղքն եկին պատմեցին. և իբրև ցուցաք զայն, զոր Վերյարգութիւնդ առաքեցեր զօճեի սարգիս աղային, ասացին, թէ ըստ ամենայնի այսպէս էր։ Եւ դեռ գնելոց են ի վաճառողէն, և ոչ գիտեմ ուր զետեղելոց են։ (Հ. Զաքարիա վրդպ. առ Մելգոնեան, 1750 Սեպտ. 11. [Պոլիս])։

ՃԼԵ.

Ցունիսի ամիսն եկին տեղս մին քահանայ կրօնաւոր լիբանանու վանքէն և ընդ նմայ ոմն հալէպցի քուրքճի գրիգոր և այլ իմն ճէզվիթ, առ ի հաստատութիւն ընկալնուլ սուրբ Աթոռէն նոր ուղղափառ Պատրիարքին[1] (որպէս ընկալան զնդիրս իւրեանց)։ (Պատկերահան Յովհաննէս առ Մելգոնեան, 1750 Յունիս. 3. Ալեպ)։

ՃԼԶ.

Թագաւորն եասախ արար, ոչ ոք խաղող առեալ կարիցէ դնել ի տան իւրում զգինի, այլ ի դուրսէ եկեալ նաւուցն գնիցեն, որոց պէտք է։ (Հ. Միք. վ. առ Մելգոնեան, 1750 Հոկտ. 20. [Պոլիս])։

ՃԼԸ.

Լիբանանու նոր Պատրիարքին[2] կողմանէ մին ճէզվիթ, մին հաբեղայ և մին հալէպցի աշխարհական եկեալ էին առ ի հաստատութիւն խնդրել սուրբ գահէն, որպէս նոյն ճէզվիթ[ի] ձեռօք

---

1. Որ է Յակոբ Բ. Պետրոս Բ. Պատրիարքը։
2. Նոյն։

ընկալան, և յաժմս ոմն ոմսէփ անուն արքեպիսկոպոս եկաւ վասն նոյն խնդրոյն, եկաւ այս մօտ որերս ձեռնադրութիւն պիտի անէ քօլէճի տղոց. ինքն մին հեզահոգի և հանդարտ բնութեամբ անձ է, եդէսու Արքեպիսկոպոս է։ (Պատկերահան ցովհաննէս առ Մելգոնեան, 1750 դեկտ. 6. [Հռոմ])։

ձիր.

Ուրախ լեր, զի ստացաք զճշգրիտ գաղափար հայկական արարողութեանց և ըստ այնմ յաջողեցաւ առնել զձայնաւորն... եղև չինութիւն և ուրախութիւն ամենեցուն, ընդ որ հիանան իտալացիքս լցեալ զմայլմամբ և ջերմեռանդութեամբ։ Եւ եղև սկիզբն սորա ի սուրբ սուեփանոսի նախավկայի տօնին, և ի տօնի սրբոյն անտօնի աբբայիին, ևս քան զևս փառաւորագոյն մատուցաք զնոյն, առաջակայութեամբ և կայթմամբ և սրտատրոփ ցնծութեամբ Մինաս վարդապետին, Սարգիս վարդապետին և մեծամեծ հայոց քաղաքիս, և անհամար բազմութեան իտալացւոց խռնելոց յաղագս Աստուածեան տօնին։ Եւ մինաս վարդապետն ցնծալից սրտիւ ընծայեաց մեզ զմեծագին չուրջառ իւր, ընդ նմա և զվակասն և զեմիփորոնն և զարծաթի կամարն հանդերձ ամենայն կազմածովքն։ (Մելգոնեան առ Հ. Զաքարիա վրդ., 1751 մարտի 19. Վենետիկ)։

ձիք.

Ջարարողութիւնս պատարագի որպէս զձայնաւորինն, նոյնպէս և զթուոյն ամենայնիւ հոգացաք լինիլ ըստ հայկական ծիսի. և վաղու ևս սկսեալ եմք վարիլ նովաւ, մեծաւ խաղաղութեամբ և հաճոյ թուելով ամենայնից, եթէ հայոց, և եթէ իտալացւոց։ Նոյնպէս և ի զգեստս ձայնաւորին վարիմք ամենայնիւ ըստ հայկականին մինչև ցսաղաւարտն ևս։ Ուստի եթէ իցէ ոք, որ կամիցի չուրջառ չինել կազմածովք, կարէ չինել և զսաղաւարտ։ Այլ և զտօնս սրբոց և զընթերցուածս և զաւետարանս պատարագին, յօրինեալ կարգեցաք ամենայնիւ ըստ հայկականին, ի բաց քերելով զամենայն եկամուտ։ Այլ և զդասն ի մերձակայ աւուրս անցուցանեմք յառաջոյ կողմն աւագ բեմին, ի ներքս խաղացուցեալ զաւագ բեմն։ (Հ. Վրթանէս վրդ. [Ասկերևան] Առ առաքել Մելգոնեանի առ Հ. Զաքարիա վրդ., 1751 յունիս 16. Վենետիկ)։

ձլ.

Ֆիլիս բովանդակն քանդեցաւ, քանզի վասն քիւրտի նստեալ է անդ սարը ապտրահման փայտայն, սպանանօղն զսարը պէկ օղլուն, և հանապազ չարդէ զքիւրտս. զանթիւ զօրս սփռեալ է ի վերայ տանց քիլիսուն պահել զնոսա. և զկէսն քիլիսուն քանդեալ է ի բնակութիւն զօրաց, և ինքն բոլոր քիլիսն է իբրու մօտայ կղզին վէնէտիկու։ Զանթիւ մեծամեծս քաղաքին սպանանէ, կարծիս առեալ թէ քիւրթին կողման չատագովք իցեն։ Զհազար քիւրտս հնարիւք մուծեալս ի քաղաքն սպան. հաշտիլ կամեցան քիւրտքն տալով զ30 քսակս արծաթոյ, սակայն ոչ կամեցաւ։ Չրաման եհան զի ոչ ոք ի զօրաց իւրոց ռամազան պահեսցէ։ (Հ. Գէորգ [Պաղտատեան] առ Մելգոնեան, 1751 Օգոստ. 8. [Պոլիս?])։

ձլա.

Վասն բազմանալոյ անձանցն, և վասն ոչ բաւելոյ մեզ գօրոյին, քակեցաք զաւաք բեմն, և յետ կոյս տարաք, և զգօրոյն առաջի սեղանոյն չինեցաք և եղև յոյժ վայելուչ, թէպէտ դեռ բոլորովին ոչ է եզերեալ։ (Մելգոնեան առ Հ. Միքայէլ, 1751 Օգոստ. 13. [Վենետիկ])։

ՃՂԲ.

Յաղագս թիւ պատարագին ուրախ լեր, զի ի վայրկ սկսաք մատուցանել ըստ արարողու-թեանց հայոց լրատէս. անխառն ի յարարողութեանց այլոց ազգաց, որպէս վճիռ է քահանայա-պետացն հռոմայ...: Ջաւագ խորանն առաքք յետս գեաղեալ առ արմով. և զդասն բերաք յասալ ըստ հայոց. չինեցաք բեմ բարձր հինգաստիճանեան. և արարաք յոչ և յահեակ աւագ խորանին յորմն ի ներքս՝ երկուս փոքր պատուհանս վայելուչս, սատուգայագարգս[1], վարագուրածիգս. մինն ի խորհրդանոց կամ ի յընծայարան և միւսն միւռոնանոց: Եւ առաջի սոցա փոքրիկ սեղանս մար-մարիոնեայս, պայծառափայլս և չորընկալս[2]:

ՃՂԳ.

Չրակիզութեան մնծագնոյ, 14 ժամ և այլ աւելի տեւել ի յաթոռազարէն սկսեալ, չուրջ զսատաճեանայիւ ճարակեալ, գեչկիչէլնոց օտարլարն և գհալէմնոցն համանգամայն կիզեալ: Եւ ի նոյն չաբաթոջ ևս երկու անգամ հրակիզութիւնք մանկք լեալ: Երիսամնէից առնց կամ կրը-պակաց ոչ ինչ վնաս, այլ առեկաց եղեալ...: Նոր փաթիրքն[3], որ ի յանցեալ ամսեան ի մատնոց կարգէն գհայր յօհաննէսն, որ ազգաւ հայ էր, ըմպանել ետ ի թին, յաւել ևս ըմպանել զորդի սեբաստացի և բոքնէրցի տէր մկրտչէի կախեցելոց ի ժամանակս տէր կոմիտասի նահատակու-թեան, զիղճուկ տէր յակոբն, որ և սա չրջէր վասն ի ժանտացաւոց ըմպանելոց հոգալ գհար-կաւորութիւն հոգեաց նոցին. ուղարկեաց ի թին: (Հ. Միքայէլ վ. առ Մելգոնեան, 1751 Օգոստ. 16 Յարուեալ. [Պոլիս]):

ՃՂԴ.

Ասա եղեալ լիբանանցի Պօղոս վարդապետն խնդրէր պակաս ի գնոյն իբր 3 խոշ. զբառգիրք մի (պատճառելով զաղքատութիւն) վասն իւրեանց լիբանանու կաթուղիկոսին[4]. և ես ի դիմաց գեր-յարգութեանդ ձրի ընծայեցի կաթուղիկոսին զբառգիրք մի ասելով նմա՝ գրել առ կաթուղիկոսն, թէ աբբայհայրն ընծայէ, զոր օրինակ և երանեալ հոգի աբբայհայրն մեր ընծայեաց յառաջ քան զսա նստեալ կաթուղիկոսին գրեանս բազումս: (Հ. Ջաքարիա վրդպտ. Միսիրարեան առ Մելգոնեան, 1751 Նոյեմբ. 22. [Պոլիս?]):

ՃՂԵ.

Լուաք ասա, թէ երկու լիբանանցի կարգաւորք եկեալ են ի յանքօնա, կալնուլ զեկեղեցին առ ի չինել զմնաստանիկ, գոնեայ երկուց և երից բնակք: (Հ. Միք. վ. առ Մելգոնեան, 1751 դեկտ. 21. [Պոլիս]):

ՃՂԶ.

Ի վերջին աւուրս յունիսի հրդեհ մեծ անկեալ է ի կոստանդնուպոլիս ի կէտիկ փաշայի կողմն, և այրեալ է բովանդակ դումդաբուն մինչև յեկեղեցին աստուածածնի հայոց. և թիւ այ-

---

1. Ի բառէն Stucco = կճաշաղախ:
2. Անուշադրութեամբ մը գանց եղած է նշանակել նամակագրին անունն ու թուականը: Շատ հաւանօրէն Մել-գոնեանէ է:
3. Գէորգ Պաարխարք:
4. Յակոբ Բ.ի:

բեցեալ տանց գրեալ է 5256. և բազում չչուկ և կասկած երկիւղի անկեալ է ի վերայ ամենեցուն վասն ապստամբութեան զօրաց տաճկաց։ (Հ. Իգն. Խալատեւրևաց առ Հ. Աճդրեաս և Հ. Յով-հաննէս [Սերաստացի?], 1752 յունիս 30. Վիեննա)։

ձլէ.

Առաք զիտիվիլէճիոնն ամենայն մասամբք և հրովարտակօք. և կացուցին զմեզ ռիվիզօռ ի կողմանէ թագաւորութեան և ինգուիզիթօռ՝ ի կողմանէ սանթօֆիցին, մերով տեսութեամբ և հրա-մանաւ տպիլ ամենայն գրեանց հայոց ի բոլոր վէնէտիկեան իշխանութեան։ (Մկրտչեւաց առ Հ. Վրթանէս, 1752 Սեպտ. 1. [Վիեննա])։

ձլը.

Վաղն հետ յօհաննջանին գնամք վանքն չերթօզայ, զարմանալի գեղեցկաչէն վանք է, այս վանքին հիմնարկօղն ազգէն հայոց յովանէ անուամբ[1]. պատկերն հին պահեալ ունի յիշատակ նորա, մեծ բակին մէջ մին հաւուզ գոյ շատ գեղեցիկ չէն. անցեալ ամի հարցի քանի է ծախն 16 հազար ուսկուէ և այլ ըստ կարգի։ (Սանիանենս արհղայ առ Մկրտչեւաց, 1752 Հոկ.ի 6. Լիվոռնայ)։

ձլբ.

Ինքնայօժար կամօք նուիրեցի ի վէնէտիկ հայոց կրօնաւորաց բնակելոց ի կղզին սրբոյն ղա-զարու վանիցն զկազմուած եպիսկոպոսական զգ[ե]ստոյցս, բաց ի թագէն, զոր ընծ[այեա]լ է իմ սրբոյն եկեղեցւոյն սրբոյն մարկոսի Աւետարանչին...։ (Ակնցի Միհաս վրդ. արքեպս., յաւիլի 1753 յաւուր ևաւտի. Վիեննա)։

ձիզ.

Ոչ ոք փաշայ ընդդէմ դառնայ նորա[2], մինչև զթագաւորն իսկ ի հիացումն ածեալ է։ Զբո-վանդակ այսմ կողման զքիւրտիւստանն պատերազմաւ ինքեան հնազանդեցոյց. և ի վերայ նոցա կացոյց փաշայ զոմն որ տայ ինքեան ամ ըստ ամէ չորս միլեօն, այսինքն է ութն հազար քէսէ. և անուն նորա հռչակեալ է յամենայն կողմն աշխարհի, և այժմ եւ ի քաղաքէս ալայով հազար հինգ հարիւր մայր վրանաւ ի պատերազմ ի վերայ սինճար տաղին, որք նեղեն զերթեւեկս, և բա-զում քսակս խոստացան տալ նմա զի մի եկեսցէ պատերազմաւ ի վերայ իւրեանց, բայց նա ոչ կամեցաւ։ (Հ. Գէորգ առ Մկրտչեւաց, 1753 ի մայիսի 3. ի պաղտատ իսաի)։

ձիւա.

Կաթողիկոս Մինաս վարդապետն առ Աստուած փոխեցաւ, և զաղեքսանդր վարդապետն խա-բաճեան[3] զքաջ քարոզիչն սամաթիայու արարին կաթողիկոս, և գնալոց է յէջմիածին։ (Հ. Զա-քարիա առ Մկրտչեւաց, 1753 Յուլիսի 12. [Պոլիս])։

---

1. Այդ ակնարկուած վանքը՝ «չերթօզայ» (= կարքուսեան) կը գտնուի Բիգայէն 10 քիլոմէթր հեռու գտնուող Գալէչի կղզուած ժիքնինիներու հովտին մէջ. հիմնադիրն է Պետրոս որդի Մխիթարի անուամբ հայ վաճա-ռականի մը 1366.ին։ Ուսաի ա՛չ Յովհաննես, ինչպէս սխալմամբ կ՛ըսէ մեր նամակագիրը, որովհետև Լիվոռնոյի պատմութեան մէջ չի կայ այդպիսի բան մը։

2. Ահմէտի։

3. Աղեքսանդր Բ. Կաթուղիկոս։

ձխբ.

Կաթուղիկոսն վախճանեցաւ, բայց ոչ թէ իւր մահաւամբն՝ այլ թիւնով սպաննեցին, մեծ վրդովմունք եղև ի մէջ հայոց, ի մէջ Էրզրումու յաստիճանացն քարոզեալ և ծանուցեալ էրաւ ասելով, եթէ այն չէջմիածնայ նստող զազանքն այն յարին սրբոյն, այսուհետև ոչ նոցա նուիրակն թողուք մեր յերկիրս և ոչ յերկրէ մերմէ կաթուղիկոս չգնեք մինչև որ յարմատախիլ լինին և այլն[1]։ (Տէր Յակոբ Վազգենեան առ Մելգոնեան, 1753 յունիս 17. Էրզրում)։

ձխգ.

Ցերեկեան աւուրն ամենայն իշխանք հայոց կնքոք իւրեանց հաստատեցին զկաթուղիկոսութիւնն քարոզչեան ազէքսանդր վարդապետին՝ յաւրհնութիւն կոստանդնուպօլսեցւոց, և ի սրտմտութիւն փէթխանացւոց։ Ջահագինն՝ սիմոնակալ չինեցին. և գչիք ամենապիղծ սիմանասն զըլավուզ։... Ջզէօրգն՝ որ երբեմն փաթրիկ եղև ի կոստանդնուպօլիս՝ որ այժմ առաջնորդ պատասայու, թիւնեցին, բայց նա գոլով աճէմ ֆէնթպազը՝ իմացեալ վազվազ գերծաւ[2]։ (Աբաւեան աբեղայ առ Մելգոնեան, 1753 Օգոստ 1. Պոլիս)։

ձխդ.

Վասն Լիբանանացւոց՝ ծանիր, զի միաբ ունին մին տեղի ըստանալ ի Հռոմ, նաեւս կամին հաստատել զիւրեանց կարգն։ Սակայն յոյժ աբսոսամ գնոսայ վասն պակասութեան գիտութեանցն... և վասն այսր պատճառի որ մին գիտութիւն մտցէ ի մէջ իւրեանց՝ երկու ուխտեալ պատանեակ ի նոցանէ Բրօբականդայ Պօլէճն գրին, որ գկնի ուսանելոյն իւրեանց ծառայիցեն ինքեանց, այսու պայմանաւ։ Ընճաղ չեմ կարծեր թէմՂ ըռնել տան։ (Ծառայ և եղբայր Միսբահուրեանն Յօհաննէս Թովմաձեան, առ Մելգոնեան? 1754 մայիսի 10. Լիվորնօ)։

ձխե.

Ի կաթուղիկոսէն[3] եկն նամակ, զի յետ բազում նեղութեան հասեալ ի 3 մարտի, և ձեռնադրեալ ի վեցն՝ կաթուղիկոս, և ի յԻն ձեռնադրեալ ինքն զեպիսկոպոսունս բազումս. և ասէ ի նամակի յետ բազում օրհնութեանցն՝ սէր ունիլ ընդ միմեանս և միաբանութիւնս առնել։ Ուստի յօրէ յայնմանէ՝ յորմէհետէ եկն նամակն, վարդապետքն հայոց միշտ գրեթէ գմիաբանութեան քարոզն ասեն։ (Աբաւեան վրդ. ուսչի Սիմոնեան առ Մելգոնեան? 1754 ի կ. Պոլիս, յունիս 1)։

ձխզ.

Սկսաք զարդարել և յօրինել զգլխատունն մեր ծախիւք մինասայ արհիեպիսկոպոսին մերոյ, որ յօժարամտագոյնս ստիպեաց զմեզ ի նոյն։ (Մելգոնեան առ Հ. Իգնատիոս, 1754 Յունիսի 8. Վենետիկ)։

---

1. Այս ամէն մանրամասնութիւնները կը պակսին Զամչեանի Պատմութեան մէջ։
2. Ճոյնպէս։
3. Ագեքսանդր Բ.։

ձիւկ.

Աստ ի հալէպ երկու եկեղեցի գոյ, որոց իշխանութիւնն և տէրութիւնն ի ձեռս հայոց է։ Սակայն սորա միոյն որ կոչի աստուածածնայ և է փոքր ի հին ժամանակաց ոչխուփլիգային[1] է լեալ, որպէս ի նշանաց, ի գերեզմանաց և ի քարանց գրոչելոց տալեան տառիւք յայտնապէս երևի. զսա ի վաղուց ժամանակաց ձգեալ վէնէտիկցիք փախուցեալ են։ Այժմ յայսոսիկ աւուրս կալզու պալեօզն վէնէտիկցոց եկն աստ և բնակեցաւ որպէս այլոց թագաւորաց պալեօզն։ Սա ընդ իս բարեկամ էր. յորժամ առ նա գնացի և խօսեցայ, իմացայ զնորհուրդ նորա զի կամի յետս առնուլ զեկեղեցին։ Եւ ես խնդրեցի մեզ տալ։ (Հ. Գէորգ վրդ. առ Մկրտիևան, 1754 յունիսի 31. ի Հալէպ)։

ձիւր.

Ջպատակերն Աստուածաշնչին ձեռամբ իմով ետու փաշային[2] ի դիմաց Գերյարգութեանդ, և մեծապէս շնորհակալ եղև. պարգևեաց մեզ ամենայնիւմ տարւոջ հինգ հազար լիրայ աղ մենաստանին մերոյ։ վասն պէտէվիարիումին յոյժ ցաւեցաւ զի ոչ ես յղեալ. և ես ասացի թէ նոր տպեն. և ասաց թէ բարւոք է, միայն յորժամ եզերի տիպն յղեսցէ Գերյարգութիւնդ ի Պէյն. խոշոր գրով լինիցի և հաստագոյն թղթով կարգին սրբոյն պօնաւէնդուրայի Օպսէրվանցիա. որպէս յառաջագոյն գրեալ եմ. մաճառու պաշտպան սրբոց ևս լինիցի յետոյ։ Վերստին փաշային խնդրեաց վասն եղբայրութեան. և ես պատասխանեցի թէ Գերյարգութիւնդ սիրով ընկալեալ է և յղելոց զգիր եղբայրութեանն լատիներէն. յոյժ շնորհակալ եմ ասաց։ Զկերպն եղբայրութեան ճիզվիթաց ոչ կարացի առնուլ, բայց մինօրիտականաց և ֆրանչիսկականաց առի։ (Հ. Ղազարոս առ Մկրտիևան, 1754 Սեպտ. 20. [Հայաքաղաք])։

ձիք.

Թագաւորս այս այժմեան գտեալ է ի մեծամեծ հատորս գրոց ի կարգս կայսերաց հռոմայեցւոց նստեալ երեք կայսր ազգաւ հայ։ Գտանի աստէն կնիք (սիկքէ) Լէոն թագաւորին Հայոց։ (Հ. Սահակ [Խաչատուրեան] առ Մկրտիևան, 1754, Հոկտ.ի 26. [տեղի?])։

ձճ.

Ցերիկեան աւուրն գնացաք կառօք յուխտ սրբոյն Լէօրոլտոս թագաւորին, և պատարագեցի անդ ականատուս սկսուալ և ասղնեզործ զգեստիւ. տեսի յեկեղեցին անդ զթագաւորն և զթագուհին, մինչև առաքեցին զսպասաւոր մի զկնի մեր տեղեկանալ թէ ուստի իցեմ ես, և տեղեկացեալ տարան զլուր առ թագուհին։ (Հ. Սահակ Խաչատուրեան առ Մկրտիևան, 1754 նոյեմբեր 16. [տեղի?])։

ձճա.

Սարգիս վ. [Սարաֆեան] աւելի քան զմի ամիս է, որ աստ ժամանեաց, փաթրիքն[3] սիրով առընկալաւ, վասն նորին զբարի ծանուցմունս արար ժողովրդին. ի մասնաւորն ոչ մտանեմ, զի

---

1. Վենետկոյ Հասարակապետութեանը կ'ակնարկէ։
2. Փաշա ըսելով անշուշտ կ'իմանայ քաղքին զօտաւորը։
3. Յակոբ Բ. Նալեան Պատրիարք։

այլևայլ խօսին, ինքն ևս քարոզէ, և թէպէս ի մօտերս ի յուսաւորիչ գայ. և առ մեզ ոչ գրարի և ոչ զչար լսեմք ի նմանէ։ Ցեա սորա գիտելի է զի ի 13 դեկտեմբերի, թագաւոր քաղաքիս[1] մեռաւ, և ի նոյն օր եղբայր սորին Օսման[2], ի տեղի նորին կացուցաւ խաղաղութեամբ և յետ վեցից աւուրց մեծահանդէս և փառաւոր հանդիսացուցումն թրակապութեան նորին եղև։ Ի միւսում աւուրց ևս հրաւիրութիւն. մահմուտ չալաւն և բազումք առնք այրեցան. առաջն և վեց ժամ տեւեաց հրակիզութիւնն. և գիւղավաճառաց պանդոկք և կրպակք մինչև ցայժմ փակեալ կան։ (Հ. Միքայէլ առ Մկրտիչեան, 1755 յունվ. 1. [Պոլիս])։

ՃՃԲ.

Մինասայ Արհի եպիսկոպոսին Գերապայծառ վարդապետին մերոյ, որ և եա յանցեալ ամառան յօրինել սուրգայիւ, և գեղեցիկ պատկերօք զառաջառաղ գրգառան, խոստանալով կատարել և զայլն ամենայն, բարւոք առնէք գրել երբեմն զգիր առանձին ի միխիթարութիւն նորա։ (Մկրտիչեան առ Հ. Խգնատիոս, 1755 փետր. 18. [Ս. Պ.ազար])։

ՃՃԳ.

Նոր թագաւորն զվէզիրն վերոյգ[3], որ զայնքան դժրդմունս եհան վասն զգեզաւոյ և ձևոց, որ կարծիւր գոլ ի թագաւորէն, բայց ոչ էր այնպէս, այլ ի վէզիրէն, վասն այսմ ուրախացան ժողովուրդք։ (Հ. Միքայէլ առ Մկրտիչեան, 1755 փետր. 21. [Պոլիս])։

ՃՃԴ.

Վասն ցրտութեան եղելոյ ասա ի վէնէտիկ ծանիր, զի մեստրայու մինչև ի վէնէտիկ եկին գալելով մարդիք ի վերայ ծովուն սառուցելոյ. և ոչ այս միայն այլև սայլիւ բերէին զբեռինս ի վերայ ծովուն իբր ի վերայ ցամաքի։ Այլ և ի բազում տեղիս վասն անցից, զաոչինալեօթան[4] բերէին և բեկանէին զսառն, զի կարասցէ անցանել նաւ, նաև բազում չաֆիք սառեցան ի ցրտոյ։ (Մկրտիչեան առ Հ. Ջաքարիա, 1755 ապրիլի 12. [Ս. Պ.ազար])։

ՃՃԵ.

Ի մէջ ռամազանին մնացեալ չորս օր պայրամին բացեալ էին զխորագոյն կէրիզն չարսըին առաջի խալփախեցոց. և յանցանելն ընդ այն չէրիէճճին, այսինքն դատաւորն մահմուտ փաշային ձիով, ասացեալ են նմա հայք ումանք. էֆէնտի մի անցաներ, զի ոչ կարես և նեղ է անցքն. և ի ոչ լսելն նորա և յանցանելն և ի խրտնուլն ձիոյն, նախ ինքն, և ապա ձին զկնի նորա անկան ի մէջ աղտեղութեան աղբին. և թաղեալն յաղբն սատակեցաւ, և ձին զերծաւ. և այսպէս մուպարէք օրեր նոցա աղբոտեցան, ասեն, թէ ի նմին աւուր զանիրաւ դատ ինչ արարեալ է, և վասն այն պատուհասեցաւ ի տեառնէ։... Ի յուլիսի 10 յաւուր պայրամին եղև եանղըն մեծ յստամպոլ իբրև ժամս ժգ, սկսեալ ի խատիլլիմանէն և վերջացեալ ընդ զառի վեր լերինն մինչև յետկոյս սէֆֆոց և այրեցան տունք հարիւրաւորք բնաւքն ի տաճկաց։ (Հ. Ջաքարիա առ Մկրտիչեան, 1755 յուլիսի 14. [Պոլիս])։

---

1. Մուստաֆա Գ.։
2. Օսման Գ.։
3. Այսինքն Օսման Գ. մէջառղէն վերցուց զԱլի փաշան։
4. Arsenalotto = Գործաւոր կամ զինուոր նաւաբանի։

ՃՀԳ.

Ի պէլրդատ և ի վիտին մեծամեծ աղմուկք յարուցեալ են ի մէջ զօրաց տաճկաց. ի վիտին սատակեալ են ի միմեանց աւելի քան 2000ք։ Իսկ ի պէլրդատ եէնիչէրիք բռնութեամբ գրաւեալ յինքեանս զբերդն, հալածեցին զփաշայն, և մարտ եղեալ թօփով, և թիւֆէնկիւ կռուին ընդ քաղաքին, որոց հրացանից ձայնք զտիւ և զգիշեր ոչ դադարին։ Բայց այժմ ի թազաւորէն եկեալ երիք փաշայք բազում զօրօք անդրէն դարձուցին զբերդն և սկսան սատակել զապստամբսն զայնոսիկ. և ի սահմանացն Պէլրդատու վարել զամենայն ալակալիցիս։ (Հ. Յովհաննէս առ Մելգոնեան, 1755 Յուլիս 18. [տեղի?])։

ՃՀՀ.

Ծանիր զի խոտրջրցի տէր յակոբն գրեալ էր մեզ, թէ յուսամ հասուցանել ձեզ ևս զայն օրհնեալ պատկերն աստուածածնայ հասանխալայ վանիցն, հրաշագործ առ լուսահոգի հայրն մեր զինդրեալ վկայութիւնն. եթէ հասցի ի ձեռս ձեր, գիտէք զինչ զգուշութիւն առնել պարտիք, և որպիսի զգուշութեամբ մեզ հասուցանել։ (Մելգոնեան առ Հ. Միքայէլ, 1755 սեպտ. 6. [Ս. Ղազար])։

ՃՁԲ.

Ի Լիսպօնայ, որ է մայրաքաղաքն փորթօկալու, չարժ եղեալ և բազում տունք փլեալ, և յետոյ երկիրն յերիս տեղիս պատառեալ, և անտի հուր ելեալ և այրեալ զբոլոր քաղաքն, և իբր 130000, այսինքն հարիւր երեսուն հազար մարդիկ այրեալք և բովանդակ նաւքն արքունիք պատստականք ի յիլիմանն խորտակեալ և ևս յայլս յոմանս քաղաքս ևս չարժք և կործանմունք լուաք։ (Մելգոնեան առ Հ. Միքայէլ, 1755 դեկտ. 20. [Ս. Ղազար])։

ՃՁՔ.

Հայրութիւնդ ոչ գիտէ եթէ ի Հռօմ զինչ անցան ի միջի մերում Հայոցս, վասն արարողութեանց մերոց, վասն զի լաղինացիք յոժարեցան յոյժ հաւանեալ, որպէս արար զէքրէթ Պապն։ Իսկ մերայինոց գծուցքն ընդիմանան, զի որպէս կամէ նոցա յեկեղ[ե]ցին հայոց առնէ, որպէս անգլուխ անդամ ոչ միաբանեալ միմեանց։ Արդ մեք յայնքան որ հրամանաւ Պապի խոխանորդին բարցաք ջուրն ի բաժակէն ըստ արարողութեանց մերոյ մասանց, և ըստ Ս[իսի]ն մերոյ, իսկ նոքա ոչ մինչև ցայս կետս։ Միւս ևս գտի ի Հռօմ զիմն նամակ զոր գրեալ է յոհաննէս կոլոտ կոչեալ Պատրիարքն ի Բոլին կոստանդինոսի. գրելով առ քարտինալ Պէլլուքաս և ողջոյն տեառն Պապին, որ յոյժ իմաստութեամբ, որ անդ է տեսանել զամենայն, ըստ հաւատոյ մասանց յոյժ հաւանեալ լաղինացիք աստ, և ես զնա այժմ ունեցայ Հայ գրով և լադին, զոր գրեալ է յամի տեառն 1738 ի դեկտեմբերի 4։ (Վեսրոպ եպս. Գևոնեա Աւտալեան առ Մելգոնեան, 1756 յունվարի 30. [Հռոմ])։

ՃՂ.

Աղէքսանդր կաթուղիկոսն ստուգապէս վախճանեցաւ և այժմ ընտրեն կաթուղիկոս զԱհագին Սահակ վարդապետն. թէպէտ և ոչ կամի երթալ վասն ահի օրհնած աղին։ (Հ. Իգնատիոս առ Մելգոնեան, 1756 փետր. 15. կ. Պոլիս)։

ձկա.

Ցաւուրս յայսոսիկ եկեն մնծամնծ հրդեհք ի կոստանդինուպոլիս վասն մեղաց մերոց, մին եկն ի սամաթիայ[1] ի ծովրուեօղն. եւ հաւր ի տանէ մէհանէին ուզուն եօրիին, որ և փութով կամեցեալ փախչիլ ընդ պատուհանն անկաւ ի փողոցն, և անդէն մեռաւ խորտակմամբ գագաթան իւրոյ, և թոռն նորա ութամեայ այրեցաւ ի նմին սենեկի։ Եւ այրեցան տունք բազումք յունաց և հայոց, և մի միայն տուն ուղղափառի պիլէզիկճի երեմիայինն[2]։ Ցետ աւուրց ինչ[3] եկն հրդեհ մնծ ի յօթագեղի եալըն, ուր այրեցան իբրև երկուտասան տպարանք հայոց մնծամնծաց որպէս ասասին և ծերունւոյն, և այլոց։ Ցետ ութ աւուր եկն դարձեալ հրդեհ մնծ ի մանդըր տառապեանացն, և այրեաց մինչև ի թաւուշեան թաղըն. և այրեցան բազում տունք և տպարանք տանկաց...։ Թուի թէ յայս երկուս տարիս ոչ ինաց տեղի ի կոստանդինուպոլիս, որ ոչ այրեցաւ...։ Ի 14 մարտի ըստ նորոյն հանդիսացաւ կաթուղիկոս հայոց Ահագին Սահակ վարդապետն յամենայն ձայնաւոր պատարագս, որք մատուցան բաց ի նոյն օրին, զի յայլ աւուրս կիւրակէից աղուհացից ծածկեալ մատուցանի։ Եւ վասն Սարգիս վարդապետին ասեն թէ տալոց են նմա գառաջնորդութիւն զմիւռնոյ։ (Հ. Ինճատիոս առ Մկրտնեան, 1756 մարտի 19. կ. Պոլիս)։

ձկբ.

Մեսրոպ վարդապետն գրեալ էր ի Հռոմայու, թէ ի մարտի ամսոյս եգերի տպագրութիւն քրքին Մծբնայ, և սկսանին զչէթէրայ Լինչքլիքայն[4] տպել, զոր մեք թարգմանեցաք։ (Մկրտնեան առ Հ. Միրտիչ [Անանեանց], 1756 մարտ 22. [Ս. Ղազար])։

ձկգ.

Պիլէզիկճի եսայիին տղան տիրացու պօղոսն գնացեալ առ պատրիարգն խօսեալ է վասն բազմաց. և զկնի ասէ ցնա պատրիարգն. զինչ ասեն Մխիթարեանքն, վասն անարգական բանից եղելոց ի նարեկամեկնիչն զՄխիթարայ աբբայի։ Պատասխանեալ է, ասեն, թէ ոչ հաւատամք, թէ նա իցէ եղեալ զբանն զայն։ Ընդ որ պատրիարգն յոյժ հաճեալ է։ Եւ ասէ, Բանն աս չէ. այժմ ոմանք գնոր գիրք մի ևս արարեալ են ընդդէմ նոյն աբբային. և ստիպեն գիս տալ տպագրել. արդ քեզ որպէս թուի։ Պատասխանեալ է. Դու բարւոք գիտես տէր. սակայն յոյժ պատշաճաւոր է խափանելն. ասէ. տեսցուք՝ մէկ բան մի կանեմք։ Եւ չարադրութիւն այսր գրքիս է ստոյգ. որպէս և զայլ գիրք մի արարեալ է պէսպէս յօհաննէսն և զամպուռն, զորոյ զմին գնեցի վասն վանուց և ընթերցայ, յորում նախատէ յոյժ զաբբայ հայրն մեր։ Իսկ զտպարան սարգիս վարդապետին արգելեալ է պատրիարգն յառաջանալ, որպէս և նոյն փաթրիկն ցտիրացու պօղոսն ասացեալ է։ (Հ. Միրտիչ առ Մկրտնեան, 1756 մայիսի 14. [կ. Պոլիս])։

ձկդ.

Ցաւուրս յայսոսիկ եկն եմուտ ի կոստանդինուպոլիս և Մուստա[ֆ]այ փաշայ վէզիրն. և այժմ ի խաղաղութեան է քաղաքս. և հացն սպիտակացաւ, և առատացաւ ամենայն ինչ ողորմութեամբ

---

1. «ի փետր.ի 28» (Հ. Ձաք. առ Մկրտ. 1756 Մարտի 19)։
2. «Այրեցան տունք աւելի քան զյիսուն». (Անդ)։
3. «ի մարտի ԻԲ.» (Անդ)։
4. Ընդհանրական թուղթ.

տեառն։ Վասն հայր մաշտոցին յայտ լիցի, զի հոգացայ յոյժ այսր անդր հարցանելով, և անհնարին եղև զտանել զնա ասա. այլ զտանի ասեն՝ այն ի վանս ինչ արևելից՝ յանկիւրիայ, և յայլ տեղիս։ Իսկ զտպագրեալ հասարակ մաշտոցն, զոր ունիմք և մեք ի վանս, վաճառեն յոյժ ծանրագին։... Բայց ի թղթոյ անտի բառգրքին ստեփան վարդապետին ոչ գոյ ասա, այլ ի լեհ գտանի։ (Հ. Իգնատիոս առ Միքայէլ, 1756 մայիսի 17. կ. Պոլիս)։

ձկե.

Զմի թուղթ օրինակի բառգրքին Ստեփան վարդապետին առաքեցի ձեզ ընդ հայր Գէորգ Վարդապետին։ Զձեր խնդրեալ հայոց զհայր մաշտոցն ստէպ հարցեալ այսր անդր ոչ ուրեք գտաք, բայց զտանի ասացին զայն ի վանս հայոց յարևելս յանկիւրիայ, և այլուր. և զայն ևս ոչ տան արտաքս, որպէս լուաք յոմանց։ Վասն ասա զոր միայն զեպիսկոպոս օրհնելոյ կարգն, զմեռաւոր և զեկեղեցի օրհնելոյ. և ոչ գոյ ինձ ժամանակ օրինակելոյ զայն։ (Հ. Իգնատիոս առ Հ. Սիմոն [կ. Պոլսեցի Աստուածաբանաւ], 1756 մայիսի 17. կ. Պոլիս)։

ձկզ.

Ցաւուրս յայսոսիկ առեալ զնորընծայս գնամք ի Դուվենիայ ի զբօսանս։ Սկսաք չինել զտօնատան զրքատան փառաւոր։ Տուաք ևս չինել ի վերայ կարեաց սենեկաց զայլ նոյնչափ տեղիս, յոր մտեալ լինի ի վերին սրահէն, և ի վերայ այնորիկ թարաց, տեղի զբօսանաց, որպէս էր հին թարացն առաջի մեծ պատուհանին, զոր աւերեաց լուսահոգին և զայլ փոքր չինեաց։ (Մկրտիչեան առ Հ. Միքայէլ, 1756 յունիսի 5. [Ս. Ղազար])։

ձկէ.

Արդ էնջիքլիքան ասա սկսաւ տալել ի փրօփականտա 1756 ի մայիսի 17։ Դևս հրաման է ի պապէն որք ամենայն ազգք յեկեղեցին իւրեանց պատարագեսցեն և ոչ ի լաթին, որպէս ես այժմ պատարագեմ ի մեր եկեղեցին ի մայիսի 18։ (Մեսրոպ եպս. Քեահիա Ալտպեան առ Մկրտիչեան, 1756 յունիսի 8. [Հռոմ])։

ձկը.

Զվէմն մարմարոնեայ երկաթագիր տառիւք չքնաղս քանդակեալ, և զքանդակսն սևափայլ դեղովք լցեալ՝ եղաք ի ճակատ եկեղեցւոյս ի յիշատակ յաւիտենական առ յապաղ եկելոցն։ Այլ ի լրումն պատմութեանս և զվիրգիլեանն բանահիւսութիւն զ ի նմա քանդակեալն աստէն տուղեցից. «Եկեղեցիս փոքրատառոյ՝ Լուսաւորչին հոգւոց մերոց, յիշատակ է ազգիս հայոց. յիւրեանց արդեանց ւ ստացուածոց, ալէլրղատի հատուածական ի նայիսս պանդխտելոց»։ (Հ. Յովհաննէս վրդ. առ Հ. Ալիպրեան, 1756 յունիսի 23. [Նայսոց?])։

ձկթ.

Կալլիացին ընդ արծուոյն դաշնադրեալ է բազում մասամբ և պայմանօք, ուստի արծիւն այժմ ոչ է ընդ անկլային, մանաւանդ ներհակ ևս է նմա. մօսկւա ևս է ընդ սոսա։ Կալլիացին դուստր տալոց է արծուոյ որդւոյն, և դեռ չէ տուեալ։ Արծիւն ընդ պրուչին գրգռեալ է ի մարտ, օգնական ունելով իւր ի կալլիացւոյն իբր յիսուն հազարից։ Եւ ընդ այս պայմանադրութիւն յահի են եւ

բոլեան մանր պետութիւնք։... Նմանիր զի առնն Ֆիէսոլի յայսոսիկ աւուրս վաճառելոյ վերայ է, և յայժ յուսամք մեք գնել գնա, զի գնացեալ անտաղ գայն ընդ յոհաննէս ապային, և յայժ հաւանեցայ ընդ այն, զի ամենայնիւ վայելուչ էր, և թէ վեց հազարաւ կարասցաք գործել գնա, մեծ ինչ է, զի ամէն ոսկն հազար խնդրէ[1]։ (Միքայելեան առ Հ. Միքաէլ, 1756 ի սեպտ. 6. [Ս. Ղազար])։

ՃԻ.

Բարւոք գրեաց ձեզ հայր Մկրտիչն, գնայն գրեմ և ես վասն նկարի պատկերաց Տիրամօրն պատրիարգին[2], զորմէ խորհեալ է յոհաննէս ապային ընծայ առ գայն նմա ի մէնջ. ասեմ, թէ այսուհետև անպաժան է նա բարեհամութեան մերում, զի անգնդջ հայհոյիչ, և անարգիչ գառաւ առաւծոյ և սրբոց նորա և գլխոյ եկեղեցւոյն և յուսահատի հօր մերում իբրև գնեան երեսել չարութեամբ ի ժամանակի մերում։ (Հ. Խրիմեան առ Միքայելեան, 1756 սեպտ. 15. Կ. Պոլիս)։

ՃԻԱ.

Ջկազմուածս ընկուզի պատառհանից գրքատանն սկսաք, զորոյ ծախուցն եթէ գիչն վճարեսցէ եպիսկոպոսն ըստ խոստմանն՝ մեծ ինչ է. այլ և կամիմք բաւն արկանել գչինուածոյ ջրհորոյն մեծի. ուստի որ ինչ գոյանի ի ձեռս ձեր հաւաքեալ փութով յղեսջիք։ (Հ. Դրիգոր [Գանագեցի] առ Հ. Միք. Հ. Խգ. Հ. Ջաքար, Հ. Միքաէլ [տուղր Ճառատրակաց], 1756 Հոկտ. 11. [Ս. Ղազար])։

ՃԻԲ.

Ջմուստաֆայ փաշայ վէզիրն փոխեցին և սպասոր եցին ի առաւս կղզին։ (Հ. Խգ. առ Միքայելեան, 1757 յունվ. 17 Կ. Պոլիս)։

ՃԻԳ.

Ջմուստաֆայ փաշան զվէզիրն ընկէց ի վէզիրութենէն... սուլթան օսմանն, և զառաջի փաշան հալալու ընտրեաց ի վէզիրութիւն, և այժմ խեամախայ այսինքն վէքիլ վէզիրի նստեալ կայ յըստամպոլ և սպասեն առաջի փաշային։ (Հ. Ջաքարիա վ. Ա. առ Միքայելեան, 1757 Յունվ. 19. [Կ. Պոլիս])։

ՃԻԴ.

Ախազին սահակ վրդ.ն ընտրեալ ի կաթողիկոս էանց յիւսկիւտար յաւուրս յայսոսիկ երթալ ի կողման կարնոյ, թէպէտ և դժուարին երևի երթալ նմա, քանզի աւեր են կողմանքն արևելից։ Իսկ պատրիարգն մեր յակոբ վրդ.ն ծանր հիւանդ կայ ի ձեռս բժշկաց... հիւանդութեամբ իմն, որ վէրէմ կոչի։ (Հ. Խգ. առ Միքայելեան, 1757 մայիս 18 ի Կ. Պոլիս)։

---

1. Մինչև գրեթէ 35 տարի առաջ Ֆիէսոլի գիւղի այդ շէնքը կը ծառայէր Մայրավանքիս իբր ամարանոց, մինչ յետոյ փոխանակեց անոր Ս. Ջէնոն գիւղը, իսկ Ֆիէսոլ կը մնայ իբր հասութաբեր կալուած Ուխտիս։
2. Կ'ակնարկէ զՅակոբ պատրիարք Ղալհանը։

ՃՀԼ.

Զարալը օղլու սևաստու փաշային բազում զրկանս և կոտորածս արարեալ ի Թօխաթ, և ապըս-տամբեալ ի Թազաւորէն. զօրս ի վերայ կարգեցին, և յաղթեալ գնա, բերին զգլուխ նորա յաւուրս յայսոսիկ ի կոստանդնուպօլիս: Դարձեալ արապ խատըմ մի երբեմն մեծ պաշտօնեայ ի սառային տաճկաց և յաղագս յանցանաց սիւրկիւն արարեալ, ապստամբեցաւ. և զօրաժողով եղեալ իբր տասն հազարօք, հարուածս մեծամեծս հասուցանէ տաճկաց, մինչև զհաճըլարսն կոտորեաց, և զայլ բազում չարիս արար, վասն որոյ և տաճիկք ի հոգս են: ([Հ. Մկրտիչ Ալեանեան] առ Մելգոնեան, 1757 մայիս 19. [կ. Պոլիս]):

ՃՀԶ.

Շինուած զրքատան վասն չկարելոյ բուսուցանել զանցեալ ծախսն, յայսմ ամի անգործ մնաց: (Հ. Գաբր. վրդ. առ Հ. Մկրտիչ Ալեանեան, 1757 յունիս 22. [Ս. Ղազար]):

ՃՀՀ.

Ցետ պայրամին եմուտ խորհուրդ ի մէջ այլազգեաց վասն ապստամբութեան, և գտան ուրեք ուրեք այնպիսի ոմանք, և ի խեղդ մահու վճարեցան. և զի մի արտունջ նոցա զօրասցի՝ եղև եա-սախ խալփախից և անկարգ զգեստուց հրէից և քրիստոնէից:... Գիտեմ զի քան զմեզ աւելի բարւոք իմացեալք զհրաշալի յաղթութիւն Թագուհւոյն ընդդէմ պատնէշպուկաց, և զազատութիւն բրակայ քաղաքի բոլեմիոյ: (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1757 յուլիսի 15. ի կ. Պոլիս):

ՃՀՂ.

Ցետս մի հնարեցին հայք, զոր տան ամենեցուն ձրի, յորում գրեալ կայ պատմութիւն ինչ հանդերձ կարճ վիճաբանութեամբ. իբր Թէ սուրբն Կերսէս Լամբրօնացին զկնի տարսոնի ժողովոյն՝ ի կոստանդնուպօլիս գնացեալ դեսպան, յաղթեալ է բոլոր վարդապետաց յունաց, չատագովեալ զմոլորութիւնս հայոց, որոց բովանդակն սուտ է և զրպարտական, զմին ի նոցանէ առի և առաքեմ ի վանս: (Հ. Մկրտիչ առ Մելգոնեան, 1757 յուլիս 19. [կ. Պոլիս]):

ՃՀՃ.

Զայս բառարանս [Ստ. Ոսկեայ Լեհացւոյ] տեսի ես ի ստանիսլաւ քաղաքի, լիագոյն քան զմեր սակաւ ինչ, է ի հայէ առ լատին, և ի լատինէ ի հայ լեզու, ստուարութիւն է յայսմաւուրին չափ:... ողորմած հոգի Տէր գրիգոր ըզուանջայու Աւագէրէցն նման էր սակաւ ինչ կերպարանօք և բարուք հօրս մերոյ ողորմած հոգի Մխիթար Աբբային, վասն զի զայս սքանչելի այրս ոչ միայն ողբաց ազգն հայոց այլ և առ հասարակ սարմատացիք, ռուզք, յոյնք, հրէայք, տաճիկք, մինչև չուարեալ մնացի ընդ առն մեծասքանչ համբաւոյն: (Հ. Սահակ առ Հ. Մկրտիչ Ալեանեան, 1757 յուլիսի 20. [տեղի?]):

ՃՃ.

Արդէն լուեալ էր զմեռանիլ սուլթան օսմանին իւրով հիւանդութեամբ, և թէ ի նմին օրի ի 29 հոկտ. նստաւ փոխանակ նորա սուլթան մուստաֆան որպէս սուլթան ահմէտին բազում խաղաղութեամբ...: Ոչ սակաւ փոփոխութիւն եղեւ մեծամեծաց ի թագաւորէն վրէժ առեալ վասն եղբօր իւրոյ զնզակորայս լինելոյ կամակցութեամբ նոցա ընդ առաջնոյն: (Չ. Լգն. առ Մկրտչեան, 1757 Դեկեմբ. 18. կ. Պոլիս):

ՃՃԱ.

Յամին 1757 հոկտեմբերի 29 ի 4 ժամուն նախ քան զկէս գիշերն մեռաւ տանկայ թագաւորն սուլթան օսմանն, և ընդ առաւօտն ի 30 հոկտ. բերեալ զսուլթան մուստաֆան զ42ամեայն զորդին սուլթան ահմէտին նստուցին ի տեղի նորա խաղաղութեամբ առանց ճիկ հանելոյ ումեք ի յուժգուրայ. և ի նոյեմբերի 23.ին յաւուր հինգշաբաթի գնաց յէյիպ, և ընդ մէջ ածաւ թուր, և թագաւորեաց ութսնութեամբ ամենեցուն: (Չ. Զաքարիա առ Մկրտչեան, 1757 Դեկեմբ. 19. [կ. Պոլիս]):

ՃՃԲ.

Վասն եզրափակման սիրոյն ծանիք, զի է այն գործած հնդկաց եկեալ ի հնդկաստանէ. և է լեալ սա սիրոս վաչկատից զզբլուպաշի. այլ և տանկաց. և ի սատակել թահմազին եղեմայ արարեալ. և ազգքն նորա ոչ են հասարակ ոսկր, այլ փղոսկր. իսկ փայտն է անփուտ և անգիւտ, զորոյ երկու սիւնակն ութսիւք խնդրեալ, խլեցին յայլ չինուած և ի տեղի նորա գայլ փայտ եդին[1]: (Չ. Մկրտիչ Ամենեան առ Մկրտչեան, 1757 Դեկեմբ. 19. [կ. Պոլիս?]):

ՃՃԳ.

Ցառագս պատերազմի այսչափ ինչ լսեմք առ ժամանակօքս, զի ասեն նէմցէք զբերդն ըշվայնից, երկու անգամ զրոհ տուեալ ի վերայ և անկեալ են ի նէմցէից մինչև յառնուլ զքաղաքն 6000 զինուորք, և հանեալ են ի քաղաքէ աստի երկու միլեօն ոսկի, կէս միլեօնի մէթերդ և զէնք պատերազմի յամենայն տեսակաց անհամար. և զայս քաջութիւն արար նաւաշտի սպարապետն: Ապա յետ այսորիկ առին և չպուասլավ. յետ այսր պատահեալ միմեանց զօրք թագուհւոյն ընդ զօրաց պուշին կոտորեալ են զ5 գլխաւոր զօրագլուխս և 20000 զօրս, առին և զքաղաքն բոխք և պաշարեալ են արդ զքաղաքն նայս: (Չ. Թադէոս վրդ. [կ. Պոլսեցի Գրիգորեան] առ Մկրտչեան. 1757 դեկտ. 9. [փերթվարատիճ]):

ՃՃԴ.

Ի կողմանէ պատերազմաց միշտ անպակաս է զրոյց. յանցեալսն թագուհին յաղթեաց բանակի պրուշին որ էր քառասուն հազարաց. և էառ զամենայն կահ կարասի նորա. և մնաց պրուշին

---

1. Այս հնդկական փղոսկրազարդ զգեցիկ գահը կը գտնուի ցայսօր ի Ս. Ղազար Լորա Պայրընի սենեակին մէջ:

երեսուն հազար միայն, և յայսոսիկ աւուրս լուաք, թէ պրուչն նոյն երեսուն հազարաւ յուսա-հատաբար յարձակեալ ի վերայ բանակի միոյ թագուհւոյն յաղթեալ է նմա։ (Միգռնեան առ Հ. Իգն., 1757 դեկտ. 21. [Ս. Ղազար])։

ձձև.

Թագաւորն տաճկաց[1] ի բազմաց հետէ հիւանդ էր ախտիւ քանքռենայի և խուրսախ վէրէմիյի և յանդգոյշ կալն վտանգեցաւ և հոկտ. 29 ի 5 ժամու գիշերոյն մեռաւ, և ի տեղի նորա նոյնհետայն նստուցին զորդին սուլթան ահմէտին զանուանեալն սուլթան մուստաֆայ...։ Ի մահուանն առաջ-նոյն... ոչինչ չփոթութիւն ծագեցաւ։ Բայց զարմանք մեծ այս են, զի յառաջագոյն միւնէճիմքն գուշակեցին, թէ սուլթան օսմանն ոչ կատարեալ զամս երիս, մեռանելոց է։ Եւ զկնի նորա գալոց է թագաւոր որ զաւուրս 75 կամ ըստ ումանց 90 նստեալ յաթոռ մեռանելոց է։ Եւ զկնի յառնելոց է չփոթութիւն մեծ ի մէջ տաճկաց և հուսկ յետոյ յաղթեալ թագաւորեանքն նստուցանելոց են երրորդ թագաւոր, և նա թագաւորելոց է ամս 25 և ապա վերջանալոց է թագաւորութիւն ի տաճկի։ Այդ առաջինն կատարեցաւ և երկրորդն երևի նոյնպէս կատարիլ։ (Հ. Մկր. Ալեանեան առ Միգռնեան, 1757. [տեղի?])։

ձձզ.

Նստաւ սուլթան մուստաֆան ի կիւրակէ և թուր կապեաց ի եՇ.բթի մեծաւ հանդիսիւ և նոյնժամայն փոխեաց զբազումս, որպէս զսիլիհտար աղայն, զզլաւր աղասին, զխափուտան փա-շայն և զհէքիմպաշէն ծովահեղձոյց արար. փոխեաց և հեղձոյց զայլս պալատականս. բայց աս-տաքոյ է խաղաղութիւն մեծ։ (Հ. Միքաիէլ առ Միգռնեան, 1757. [տեղի?])։

ձձէ.

Ի գլխոյն հրամանէ ամենեքեան սևազգեցեալ գծուծ չրջին, մինչև բժշկաց լատին[աց]ւոց եղև զգենուլ զգեստ հարկաւոր հպատակի։... Այսօր տանէրէցն հայր Միքայէլեան տէր յովաննէսն եկեալ ի տունօրհնէնք ի 17 յունվարի ըստ նորոյն, ասաց՝ թէ այսօր մեռաւ մխալյիմօղլու գէորգ վար-դապետն։ (Հ. Իգն. առ Միգռնեան, 1758 յունվ. 19. ի կ. Պոլիս)։

ձձը.

Խնացաք ևս զտալ սուրբ ժողովոյն պաշտպան կրօնիս մերոյ զկարտինալ սփինէլլին։... վասն որպիսութեան քաղաքիս զայս ծանիք, զի յոյժ թանկութիւն է այժմ ամենայն իրաց, մանաւանդ հացի, որոյ ոչ միայն քառասուն տրամն է մէկ ստակ, այլ և այնքան սեաւ և խառն ի կորեկէ, ի գարւոյ, ի մոխրոյ և յայլոց հատից, մինչ զի ոչ կարէ ուտիլ, և ասի, թէ մինչև ցայսօր չէ եղեալ յստամոլոլ այսպիսի սղութիւն. իսկ յանաւօրու աւելի է սղութիւնն քան որ յստամոլոլ, մինչև լսեմք թէ ի տիրապէտիր զմի չունն մի ոսկի վաճառեն ի յուտել։ Բաց ի սղութենէ տեղւոյս գոյ և եասախ անտանելի ի կողմանէ զգենուլեաց ամենայն ռայէից՝ մանաւանդ խալփախից, ուստի գրեթէ ամենեքին այժմ դնեն խալփախս թաթարի ի գլուխս իւրեանց. մերոյն ևս մորթն այնչափ փոքր և նուազ է, մինչև ծաղրական իմն է զոր կրեմք ի գլուխս մեր։ Իսկ ալըշվէրիշ ոչ միայն

---

1. Օսման Գ.։

ոչ գոյ քաղաքացւոց ընչից իւրեանց, զորմէ արասանչ է ի բերանս ամենեցուն, այլ և ոչ գրեանց մերոց վաճառելեաց: Լուաք և զմահ հօր մերոյ մինասայ արքեպիսկոպոսին, և զֆալիա լինելն պարան նահապետին...: (Հ. Ջաքարիա առ Մելգոնեան. 1758 փետր. 19. [կ. Պոլիս]):

ՃՁ.

Պատկերահան պարոն յովհաննէսն ի Հռոմ առ Աստուած փոխեցաւ ի փետրվարի[1]: (Մելգոնեան առ Հ. Ջաքարիա, 1758 ապրիլի 4. [Ս. Պատար]):

ՃՂ.

Այժմ մեր հայր Մկրտիչ վարդապետն[2] *առողջ է յոտիցն, և առան գնա յաւուրս յայսոսիկ ի Նաալբզաբան սամաթիոյ, ուր եկաց իբրև չաբաթս երիս, և գնաց ընդ իս յոխտ ի գերեզման երանելի տեառն Կոմիտասայ: Աստաֆօղլու սարգիս վարդապետն, զոր դնս ոչ եմ տեսեալ, յայսմ ամի կարգեցաւ քարոզիչ յեկեղեցւոջ սուրբ յուսաւորչին, և հռչակեցաւ ի քաղաքիս քաջ բանասաց, մինչև ընթացան ի լսել զքարոզ նորա խուռն բազմութիւնք, ընդ որս և յոլովք յուղղափառաց և ոմանք ի ֆռանգաց գնացին և հաճեցան: Թէպէտ և յոմանց լուայ ասել, թէ ոչինչ օգուտ է քարոզ նորա, այլ մանաւանդ վնասակար, զի բազումք պատրեալ ընդ պաճուճազարդ բանս նորա իբրև ուղղափառի թուլանան և հովանան ասեն ի մերոց և վաղվաղակի կործանին. և այսպէս ահա ի բազմաց բամբասի նա, թէ զի՞ է, զի դարձեալ յերկրէ քրիստոնէից եկն եմուտ ի մէջ հայոց. եթէ էր նա քաջ ուղղափառ, գայս ոչ առնէր, ասեն:* (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1758 Ապրիլ 18. ի կ. Պոլիս):

ՃՂԱ.

Ի կոստանդնուպոլիս է ծայրագոյն փէսատ և կասկած փոխելոյ զմեծն: Թանկութիւն եղև ամենայն իրաց. և անթիւ անձինք կամին փախչիլ ի ֆռէնկիստան...: Չիամայեցաւ արուեստաւորաց չինել զալատան արքունի որ ի յետրենէ. և յղէ զբազում նաև պարութիս ի խառայ էֆենդի. կասկած այնպէս է, իբր թէ տաճիկն կամի բանալ զպատերազմ...: Պատրիարքն չինեաց զգիրք մի տաճկերէն, և եղև մեծամեծաց հայոց անախորժելի. և արարին սինողոս այրել զամենայն. բայց պատրիարքն ընդդէմ կայ: (Հ. Մկրտիչ առ Մելգոնեան, 1758 յունիս 19. [կ. Պոլիս]):

ՃՂԲ.

Աստի չուեաց քէֆէլի պարոն Պետրոսն Մահտեսի Ղազարեան՝ դէպ առ ձեզ,... և ընդ նմա առաքեցի զչորս պատկերս, զորս ողորմած հոգի պարոն Յովաննէսն եթող յիշատակ ի կենդանութեան իւրում, և զկնի մահուան նորին ընկալայ ի ժառանգից իւրոց տալով զձեռագիրն իմ, թէ ընկալայ ի կողմանէ Պերյարգելի Աբբայ Հօրն: (Յովսէփ Քահանայ Գրիգորեան առ Մելգոնեան, 1758 Օգոստ. 26. Հռոմ):

---

1. Կարեւոր նկատեցինք յիշել սոյն քառականը՝ պատկերահանին ունեցած այնքան շահեկան քրքակցութեանց համար՝ զորս հանրութեան ալ ներկայացուցինք:
2. Անանեանց:

ձղգ.

Անցեալ չաբաթոջ ակն գիր մի ի հալապու քրքճի գրիգորին գրեալ ապրէլի 16 աւուր ի յօսէփէ որդւոյ իւրոյ, որ համառօտ բանիւ գրէ այսպէս. Զկնի որոյ քիլտանցոց Արհի եպիսկոպոսն չուեաց ի հալապոյ տասնապատիկ եղև գրկանք և տուգանք և սողն քան զոր առաջ էին և ամենայն աւուր իբր 40 անձինք ի քրիստոնէից մեռանին ի սովու, մի մասն ի մէջ տանց և 3 մասն ի փողոցս և ի հրապարակս, և ի տաճկաց առաւել ևս. և մանկունք աւելի յոյժ քան զչափ հասեալս մեռանին. ուստի վասն բազմութեան նոցին վանդակաւ բարձեալ զդիակունս նոցա և տանել զչորսն և զհինգն ի միում գերեզմանի թաղեն. ուստի ի չրջիլն ի մէջ մեծագոյն չուկայից մեծ զգուշութիւն պիտոյ է, զի մի ոտիւք կոխիցեն զնուազեալսն ի սովու և զմեռեալս և զանկեալս ի վերայ ճանապարհի, և այլն։ (Յովհ. եպս. առ Հ. Դրիգոր վարդապետ, 1758 Օգոստ. 26. ի Հռոմ)։

ձղդ.

Պիտուած ինչ ցաւալի հանդիպեցաւ յաւուրս այսոսիկ ի պէյէկրատն, վասն զի բոլոր ծածուկն եպիսկոպոսանիստ պալատին և առագաստն մեծաչէն և հոյակապ եկեղեցւոյն այրեցաւ, և բովանդակ զանգակքն հալեցան. թէպէտ ի ներքուստ ոչ եկեղեցւոյն և ոչ պալատին ամենևին վնաս ինչ ոչ եղև, զի զարմանալի քարաշէն և կամարաձև չինուածք էին։ Բայց այսու ամենայնիւ այսպէս ասեն, մինչև 40 հազար մաճրու վնաս եղև և այժմ, զ[երապայծառ] եպիսկոպոսն մինչև ի ձմեռան կամի վերստին ծածկել զառագաստն այլ առաւել ամրագոյն քան զառաջինն։... Լուաք ասա վասն ընտրութեան սրբազան պապին, թէ է պապ կարտինալն պատուայու Գարլօ ռէձօնիկօ վէնէտիկու։ Յոյժ ուրախացաք, մանաւանդ Հ. կարապետն մեզ լիապէս գրեաց, թէ որպիսի ուրախութիւն եղև ի վէնէտիկ։ Ինձ թուի գերյարգելի զի այժմ յոյժ բարւոք լինէր մեզ ունիլ զբնակութիւն ի հռոմ, և տեսական առնել զկացութիւն կրօնին մերոյ։ (Հ. Ղազարոս առ Մկրտչեան, 1758 Օգոստ. 28. [եղիսաբեթուպոլիս])։

ձղե.

Էրէկեան օրն Ամենասպայծառ Աստուածածնի եկեղեցւոջ որ է մերձ բօրթօ բօրօլօյին եղև ըստ հին սովորութեան Գափէլլայ փոփական, և անդ գումարեցաւ մեծահանդէս ժողովն առաքելական Պալատին. և զկնի կարտինալական ձայնաւոր Պատարագի, հրեշտակն Նապօլոյ թագաւորի եկն հանդիսիւ ընծայեաց սրբազանին զերիվարն և 12000 գրուէ վասն հարկի սիկիլեայ կղզոյն. և ասեն ի ոտնի սրբոց Պահապան հրեշտակաց Պապն կարտինալ առնելոց է գիւր նիփօան և զեպիսկոպոսն Պատուայու և այլ ոմն ընդ նոսին։ (Յովհ. եպս. առ Հ. Գէորգ, 1758 սեպտ. 9. ի Հռոմ)։

ձղզ.

Պատրիարքն առ նախանձու զսուտ ֆօղլու սէրգիս վարդապետն, որ երբեմն այդր էր, յաքսորս առաքեաց ի կիպրոս կղզին, ի սեպտեմբերի 8, (զոր Հ. Մկրտիչն ոչ գիտէ, զի ելեալ էր աստի)...։ Պատճառն սիւրկիւնին նորա երկու են գլխաւորք։ Մինն նախանձն պատրիարքին, որով նախանձէր ընդ ընդունելութիւն նորա ի բազմաց. ընդ քարոզն, որով զովիւր ի բազմաց, և ընդ հռչակն նորա, որով հռչակիւր գով գիտուն, զի... կամի զի ինքն միայն գոյր յերկրի իմաստուն. ուստի և ընդ գիտութիւն հրէի և տաճկի նախանձի։ (Հ. Զաքարիա առ Մկրտչեան, 1758 սեպտ. 13. [Կ. Պոլիս])։

ՃԿԵ.

Վ֊ան սարգիս [սառաֆեան] վարդապետին ապստամբանն որ եկն ի 9 սեպտեմբ, ի պատերազմին նախանձաւէ ֆէրմանաւ ի սամսոն առաքն, գիտեմ, զի յուշք, ընդ որ ամենեքեան ցաւեցան յայժ ուղղափառք և հայք. և ասեն թէ ամենք ի սառաֆից առնուց են զիմիտխան առ ի չեռս պատճառ ցանելոյ, եթէ ոչ ձեռագ ի ճանապարհի, զի երկնչիմք թէ կորուսցեն, և անչափ արասցեն: Ճանապահան փոքր մի պատրեցաւ. բայց թշուառութիւն քաղաքիս վասն պակասութեան առլեաւ ուռեան վաճառի օր ըստ օրէ յաճախէ, որոյ պատճառ գնեն գերկրորդն արքայի, գորմէ և արանջեն յայժ և խնդրեն գկորուստ նորա: (Հ. Իգն. առ Մկրտոնեան, 1758 սեպտ. 18. ի Կոստանդնուպոլիս):

ՃՂԲ.

Ցաւք և հիւանդութիւնք տակաւին յաճախեն ի քաղաքիս և ժանտախտն կատարէ գմեռս, և ծագիկն զազարս, որոց ոչ գոյ թիւ... գրեթէ ոչ միոց տան, յորում ոչ իցէ սգր և կսկիծ վասն պէսպէս տառապանաց: Իսկ վասն աքսորման սառաֆօղլու Յարգիս վ֊արդապետին գրեցի միանգամ, զի տարան գնա չգիայակապ ի կողմանս Կիպրոս կղզւոյն բնակարգել լինել անդ: Այլ այժմ ամենք յուղղափառաց գալա ի մէջ իւրեանց միաբանեալ Ջանան յետս դարձուցանել գնա առնլով գիթէլեան, բայց երկնչիմ գուցէ իմացեալ պատերազմին հասուցէ գինի նորա զվճիռ մահու. քանզի ի հայոց կողմանէ ոչ ոք կայ նմա օգնական: Ցաւուրս յայսոսիկ լուաք զուրախալի լուր յաղթութեան թագաւորին ի վերայ պատշաց: (Հ. Իգն. առ Մկրտոնեան, 1758 նոյեմբ. 18. ի Կ. Պոլիս):

ՃՂԳ.

Ասեն թէ սարգիս վարդապետն այժմ ի սախըզ է, և առեալ են վասն նորա զգիր ազատութեան, բայց միայն թէ կացցէ ի սախըզ: (Հ. Յակոբոս վ. Ջամչեանց առ Մկրտոնեան, 1758 դեկտ. 18. [Կ. Պոլիս]):

ՃՄ.

Ի դեկտեմբերի 23 եղև եանդրն մեծ յատամնոյ ի չաթլատը խափան՝ սկսեալ այրել ի չորրորդ ժամէ գիշերոյն մինչև ի քառասնմիերորդ ժամ տունչեան, և այրեցան տունք աւելի քան զերկու հազարս, յորս էին ճամիք բազումք, զոր օրինակ քիւչիւկ այա սօֆիան, և այլք նմանք նմին, և մեծամեծ սարայք բազումք. եւ հուրն ի խօնախէ թաւուխճի պաշին. և այրեալ զտունս՝ որ շուրջ զչաթլատը խափուցովն զտափարակաւն առ պարսպօք քաղաքին, դիմեաց ապա առ զառիվերն մինչ ի կռնակ սէտէֆճոց, և եկն վերջացաւ վերին ծայրըն եանդրնին առ պարսպօք սուլթան սալթայի կէտիկ փաշային, և ստորին ծայրն ի մէյտանն խառըրդայ իլիմանին: Եւ թէպէտ չայրեցան տունք քրիստոնէից, սակայն քէսատութիւն տեսուրոյ յատելով սկսաւ ի վերայ առաջնոյ քէսատութեանն: (Հ. Զաքարիա առ Մկրտոնեան, 1759 Յունվ. 2. [Կ. Պոլիս]):

ՃՆԱ.

Ասի թէ մերձ է յաւուրս յայսոսիկ լինիլ զաւակ թագաւորի երկրիս. ուստի և սկսան առնել պատրաստութիւնս ուռնանմայի, սակայն խստութիւն եասախին դեռ օր քան զօր յաւելու և ոչ

նուագէ և տէր երկրիս[1] խոռ աչօք է ընդ ֆռանկս և ընդ դեսպանս. և եհան հաթթիչէրիֆ, ասե և յամենայն երկիր տէրութեան իւրոյ, թէ մի ոք ի յունաց, ի թաւշանից, ի հայոց և յայլոց ազգաց ոայէից իմոց բնիկ յերկրէ իմմէ եղելոց դարձցի ի կրօնս ֆռանկաց, և ընդ թևօք նոցա մտեալ և թէրճիման գրեցեալ ազատ համարեսցի զինքն, այլ ամենայն բնիկ ծնեալք յերկրի խաբեաս տայցեն, և սկսան կալնուլ զյոյնս և զթաւշանս գֆռանկացեալսն, որք և փոխեալ զզգեստս սկսան առնուլ խարեաս. այս եղև ի դեկտ. 23։ (Հ. Ջաքարիա առ Մկրտիճան, 1759 յունվ. 19։ [կ. Պոլիս])։

ՈՀԲ.

Լսեմք վասն սառաֆօղլու սարգիս վարդապետին լինիլ ի հիւանդութեան ի քիայ կղզւոջ, որ է սախըզ. և դեռ յաքսոռս է, և ասեն, թէ չէք նմա հնար դառնալոյ ի կոստանդնուպոլիս։ (Հ. Իգն. առ Մկրտիճան, 1759 փետր. 17. ի կոստանդնուպոլիս)։

ՈՀԳ.

Այսմիկ չաբաթօջ սրբազան Պապն[2] Գառն Աստուծոյ օրհնեաց և բաժանեաց, զի 9 ամաց հետէ ոչ էին օրհնեալ. և սկիզբն ամսոյս այսորիկ եկն եհաս ի Հռոմ անտուն եպիսկոպոսն զլճոց ազգէ զոր աւելի քան զհազար ամ է ոչ ոք եպիսկոպոս այնմիկ ազգէ ի Հռոմ եկեալ էր. այլ ասեն այս է առաջինն զկնի եփեսոսի սրբոյ ժողովոյն ի Հռոմ դիմեալ։ (Յովհաէլ եպս. առ Մկրտիճան, 1759 ապրիլ 21. [Հռոմ])։

ՈՀԴ.

Ասի զգիր քո ցանկալի գրեալ առ իս ի սամաթիա քաղաքէ մեծի մասին պարծանաց վասն երանելւոյն [Տէր կոմիտասայ] առաքելի անդ լինելոյ մարմարիոն քարամբ քանդակագործ զարդարելոյ, և քոյդ աշխատութեան կցորդ և պատճառ գոլոյ։... կարծեմ, թէ ի վաղուց հետէ լուր մահուան զաբուխան իրիցուն հասեալ իցէ յականջս ձեր. զի իբր թէ յանկարծ անհաղորդ մեռաւ. գիտես դու զնա, թէ զիարդ վերակացութիւն առնէր գերեզմանի երանելւոյն, և զանձէր զդրամս հանապազ, և կեղծաւորէր առ երեսս ուխտաւորաց, պատմելով զվարս և զգաղնչելիս նորա, և կատարէր զկարգ մարտիրոսաց։ (Հ. Իգն. առ Հ. Միրտիչ, 1759 յուլիս 19. ի կոստանդնուպոլիս)։

ՈՀԵ.

Ի ժողովմանային քրիստոնեայք նորոգեցին զժամս իւրեանց. արդ՝ զալէքքաւշու ժամն ոչ միայն նորոգեցին, այլ և փոքր ի մեծագուցին։ Բայց ահա յաւուրս յայսոսիկ զայն ժամ ալէքքաւշու հրամանաւ թագաւորին ի հիմանց փլուցին տաճիկք վասն ոչ տալոյ հայոց չուխատարի միոյ գկըռծոնս, որպէս եառն այլոց տաճկաց, և այն զի չուխատարն խնդրէր զմի քսակ դրամ։ Եւ իբրև իմացան թէ չուխատարն արգուհալ է արարեալ թագաւորին վասն ժամուն, թէպէտ խարեցին իբր երեսուն քսակ, զի արգելցի բանն փլուզանելոյ զժամն, բայց ոչ կարացին։ (Հ. Ջաքարիա առ Մկրտիճան, 1759 օգոստ. 1. [կ. Պոլիս])։

---

1. Մուսաֆա Գ.։
2. Կղեմէս ԺԳ.։

ՌԿ.

Ընդ աւուրս այսոսիկ սառաֆօղլու Սարգիս վարդապետն թոյլտուութեամբ պատրիարգին եկն աստ ի տուն իւր իբրև ի ծածուկ առ ի հոգալ զգեստս ինչ իւր. և հանդերձեալ է գնալ յեկղեկիայ լինիլ առաջնորդ քաղաքին: (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1759 Օգոստ. 19. ի Կոստանդնուպոլիս):

ՌԼ.

Վասն ահագին սահակ վարդապետին լսեմք, թէ գալոց է ի Կոստանդնուպոլիս հրաժարեալ ի կաթուղիկոսութենէ. և ասէ Սարգիս վարդապետն [Սառաֆեան], թէ չարիք մեծամեծք եկեսցեն ի վերայ ազգիս ի գալ նորա աստ, քանզի բարկութեամբ գայ, և ոչ ունի ինչ երկիւղ յումեքէ: Մանաւանդ յարուցէ զկռիւ ի վերայ պատրիարգին, և բազում դրամք խաղացեն ի զուռն առնին: Եւ նա ինքն Սարգիս վարդապետն հիւանդագին կայ ի մահճի յետ զեղին ցաւոյն ըմբռնեալ ի ջերմանէ. և քանի մի աւուրք են, զի ոչ կարացի երթալ տեսանել զնա: (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1759 Նոյեմ. 19. ի Կոստանդնուպոլիս):

ՌԼ.

Կարծեմ մինչև ցարդ լուեալ ես զյաղթութիւն տաւունին ընդ պրուշին. զի պրուշն խորհեցաւ նենգել տաւունին և կործանել զնա, և ինքն նենգեցաւ. զի ծանուցեալ տաւունին զխորհուրդս նորա, աճապարեաց և զնաւմբ մի քսան հազարաց նորա ի մէջ առեալ, յետ կուտելոյ իբր վեց հազար մի ի նոցանէ, զչորեքհարիւր հազարն կենդանւոյն անձնատուր գերի կալաւ ամենայն զինուք զարդուք, կահիւք և կարասեօք նոցա. և այս ի մեծագոյն ուրախութիւն օգոստականաց, և ի միջաբենկութիւն փրուսեանց: (Մելգոնեան Աբբ. առ Հ. Մկրտիչ, 1759 դեկտ. 8. [Ս. Ղազար]):

ՌԽ.

Դեռ նստի [Սարգիս վ. Սառաֆեան] ի տան քեռ իւրոյ, և ոչ խառնի ինչ յեկեղեցւոջն հայոց, և երթայ անդր երբեմն իբրև անցաւոր և օտար. ոչ պատարագէ և ոչ քարոզէ. և կարծեմ թէ զայս ձմեռն աստ ձմերէ մինչև տեսցէ, թէ զինչ լինիցի յազգիս և ի քաղաքիս: Ո՛չ կարէ ասել, թէ ոչ երթամ յեկեղեկիայ, զի այնու պայմանաւ եկն աստ, ապա թէ ոչ լինի ընդդէմ արքունի հրամանի: Եւ ոչ կամի յօժար սրտիւ երթալ վասն խզճի մտաց. վասն այսորիկ յերկարէ օր քան զօր զգնալ իւր: Ասէ, եթէ միաբանեալ ոմանք յուղղափառաց տային ինձ գաղտ իբր 2000 դրամ յապրուստ, այսօր յարուցեալ չուէի աստի ի վէնէտիկ: (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1759 դեկտ. 15. ի Կոստանդնուպոլիս):

ՌԾ.

Գուցէ լուեալ է ձեր այդր թագաւոց եօթն հազարաց, որ կամելով փոխել զխանն թագաւոց մերոյ գաւառին, բռնացեալ բազում ինչաց հասուցին բազմաց քաղաքաց, մանաւանդ յերկրէն պուղտանաց գերեցին անհամար գերիս յիշխանաց և ի սոսկականաց, մինչև կամեցան ասպատակ նոցա անցանել ի Լէհաստան, և անտի ևս կողոպտել. և բազումք յիշխանաց և ի պարոնաց մինչև ի եաչ քաղաքէն փախստական եղեալ մազապուր ի Լէհաստան մտեալ ի բերդորայս ամրանային և երկիրն սկիզբն արար թանկութեան: Եւ մեր տեսեալ զայս ամենայն, զի չէր հնար ուրեք ամ-

բանալ յօտար երկրի, յանձնելով զմեզ կամացն Աստուծոյ լաւ համարեցաք դառնալ առ ժամանակ մի թաքչիլ ի կողմանս ուրեք։ Եւ երկու ամիս ճանապարհ արարեալ ահաւոր և սարսափելի, մինչև բազում անգամ ողորմութեամբն Աստուծոյ զերծանիլ ի մահուանէ, եկաք ի կեռլէ քաղաք։ (Հ. Յովհաք առ Միգոնեան, 1759, 8. [Կեպտ.? տեղի?])։

ւմժւս.

Քաղքիս տէրն ալ մէկ նասխ քրիստոնեայ աւազ մարդ մի է. թիւրլիւ թիւրլիւ եասախներով կու չարչարէ զիւր քրիստոնեայ ռայէները. իրեն կէօրէ ալ գտեր է մէկ ըստամալօլ էֆէնտիսի մի, որ ան ալ քրիստոնէից հասիմ է։ Հիմակ կնքատոց չէտիկ բապուեը կարմիր հանգցնել տուին. հրէայ-ներուն մաւի չէտիկ բապուեը թէ կնքատոց և թէ էրկէկ մարդոցը վերցուցին, անոնց ալ սև հագցնել տուին։ (Մեծ թագուհի մայրաքաղաք առ չէչիլիա կոչս և. քոյր նորա և. սրբուհի քատրն, աբբա-հաւ, յայտնիւեն, բուհաս, տէր Պետրոս և Հ. Մկրտիչ, 1760 ցունվ. 10. [կ. Պոլիս])։

ւմժր.

Լուաք զի ի մեծէ երկրաշարժէ եղելոյ ի դամասկոս և ի պէյրութ, և ի սայտայ և յերուսա-ղէմ, բազումք մեռան, և չինուածք կործանեցան։ Լուաք և զյայլմուխիւնս թագուհւոյն ի ձեռն քաջ զօրագլխի իւրոյ Տաւունայ ի սաքսոնիայ։ (Հ. Իգնատիոս առ Միգոնեան, 1760 յունվ. 10. [կ. Պոլիս])։

ւմժգ.

Գիր առի Հ. Զաքարիայէն վ.էննայով, յորում գրէ զայսոսիկ, որ գկնի։ || Շարժ մեծ եղեալ է ի կողմանս սիւրիոյ. և վասն շար, այսինքն դամասկոսի քաղաքին ասի, թէ յոյժ մեծ վնաս եղեալ է նմա ի շարժէն, ամենայն ճամիք նորա փլեալք են, և ընդ նոսա նաև այն մեծ ճամին, զորմէ ասի, գոլ չինուած նորա ըստ ամենայն բանի նման չինուածոյ այդր եղեալ եկեղեցւոյ սրբոյն մարկոսի, և մէն մինարէն նորա կործանեալ, զորմէ առաստպելաբանէն տաճիկք ընդ այն իջանել քրիստոսի յաւուրն յորում գալոց է առնել զընդհանրական դատաստան։ Այլ և անբաւ տունք այնր քաղաքի փլեալք, և որք յոտին երևին մնացեալք, բնաւքն ճաթռտեալք, և կասկածելիք ի բնա-կիլ, և անհուն մարդիկք մեռեալք ի ներքոյ փլատակաց։ Այն չարժ եղեալ է և ի Թրիպոլիս, ի յանթաքիայ, և ի սայտայ, և յայլուր յայնս կողմանս. ուստի տաճիկք ստամպօլու ամենեքին սա-սանեալ կան։ (Միգոնեան առ Հ. Մկրտիչ, 1760 փետր. 16. [Ս. Ղազար])։

ւմժդ.

Սառաֆօղլու Սարգիս վարդապետն աղաչեցեալ յոյժ յիշխանաց մատոյց զպատարագ ի Լու-սաւորչի եկեղեցւոջ յուխերոյդ աւուր յայտնութեան. և ապայ ի խնդրոյ սառաֆաց ակամայ կամօք պատրիարգին հրաւիրեցաւ յեկեղեցին պալատու, և սկսաւ տալ գքարոզ ի չորեքշաբաթի օրէ պահոց սրբոյն սարգսի. և խուռն յամենայն կողմանց երթան ի լսել գքարոզ նորա։ (Հ. Իգն. առ Միգոնեան, 1760 փետր. 19. ի կոստանդնիւպօլիս)։

ՃԺԸ.

Ընդ սառաֆօղլու Աթրպիս վարդապետին չկարացաք խօսիլ, զի նա ի պատառս եկեղեցին է ի Խ.օրեայ քարոզութեան. և բարի համբաւ նորա հնչէ ընդ ամենեցսին բերանս։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1760 մարտի 19. ի Կոստանդինուպոլիս)։

ՃԺԹ.

Ի վեննա մեծ պատրաստութիւն գոյ հարսանեաց որդւոյ թագաւորին. և ասեն անտի գրեամս ժողովէ թագաւորին ի ծախս հարսանեաց. 8000 մարչիլ մաճառաց երկիրն պարտի առլ. 2000 արտիալ։ Բայց այժմ լուաք թէ մեծ յապաղութիւն արարեալ է ձենալ Լատեան վարդապետին, զի հաւրեալ ընդ 16000ի, զրազգամս սպանեալ, և զրազգամս ի գերի վարեալ. միայն 600 ճողոպրեալ են. կալեալ են և զմեծ ճենաւոն Ֆօգէդ, և զայլ փոքր ճենաւոս պատուի։ (Հ. Թադէոս վրդ. առ Մելգոնեան, 1760 յունիս 4. [Կիպրոսարքեպիսկոպոս?])։

ՃԻԱ.

Թագաւոր քաղաքիս[1] ոչ գիտեմ որպէս զօրացոյց մեր տեսեալ՝ նա թարգմանել ի տաճկական լեզու, և զի նորա մինչեմիմ, կամ ասացից էվիմէրիւէսի բանից մայիլ են. կարծեալ է, թէ այնպիսի ինչ իցէ, բայց յորժամ ոչ է գտեալ ի նմա զինդրելին իւր, ասացեալ է. Լաւ է ըստ հաշուին լուանին. բայց յայլ բանս օտարոտի իմն գրոյցս բարբառի։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1760 Օգոստ. 19. [Կ. Պոլիս])։

ՃԻԲ.

Ընդ աւուրս ընդ այնոսիկ սկսաւ այսր անդր տարածանիլ ժանտ ախտն, և այլ պէսպէս ցաւք բազմացեալ ի քաղաքիս զօրանան օր ըստ օրէ։ Մանաւանդ տուրուտութիւն ոսկերչաց, և ակնագործաց ի չուկային գրեթէ ամենևին դադարեալ է, և ամենևքեան ի վարանս տարակուսանաց չուարեալ կան և ոչ գիտեն թէ զինչ արասցեն...։ Եւ լուաք վասն միոյ ուրումն նախարարի, որ ի կողմանս փոքունն ասիոյ, թէ բազում զօրօք վտարանջեալ կամիցի գալ ի կողմանս յայսոսիկ, իսկ այժմ լուռթիւն է վասն նորա. քանզի կարծեմ թէ հաճեցին աստի զմիւսս նորա. և դարձաւ գնաց, ուր և երթալոց էր։... վասն աւերման և կործանման տրապիզոն քաղաքին գրեցի միանգամ, և այժմ գնոյն գրեմ, թէ նա գրեթէ ի սպառ կործանեցաւ վասն երկպառակութեան զօրացն, որ ի ներքս ի բերդն և որ արտաքս, որպէս պատմեցին քաղաքացիք նորա. նոյնպէս սկսեալ է աւերութիւն և ի կողմանս կիւմիւշխանայի։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1760 Օգոստ. 19. ի Կոստանդինուպոլիս)։

ՃԻԳ.

Վասն գրքոյ Յովսեպոսի Փլաւիանոսի եբրայեցւոյն գրեցի առ գերյարգելին վասն տպագրութեան, զոր սմա ի մեծ վաճառականաց ծախիւք իւրովք կամի տպել. և զ500 յայնց վախճք արար

1. Տրապիզոն Գ.։

էջմիածնայ, և զ500 երուսաղեմայ: Ուստի տեարք նոյն գլխոյն կաթուղիկոսն և երուսաղեմայ պատրիարգն. և աստ ի կոստանդնուպոլիս նոցին փոխանորդքն: Եւս յոյժ կամի պատրիարգն տեսանել զայրիսն սոյն գլխոյս: Ուստի և զամենայն թէութիւնս գրեցի աբբայ հօրն: (Արանաս եպիսկոպոս առ Հ. Մկրտիչ, 1760 Հոկ. 20. [կ. Պոլիս]):

ՈՀ.

Վասն սատաֆօղլու սարգիս վարդապետին գիտելի է, զի յաւուրս յայսոսիկ տեսաք զմիմեանս, և մատուցի նմա զողջոյն ձեր, և յետ բազում խօսակցութեանց հարցի զմատաց իւրոց, և ասաց, թէ ի նոյն միտս եմ անցանելոյ ի կողմանս յայդոսիկ, բայց ընամ յուսով ի մօտոյ առնուլ զդրամս ինչ իբրև հազար դահեկան ի պատրիարքէ աստի վասն տուգանաց և ծախուց, զոր սպառեցի ի հալածմանս իմ: Եւ ապա անցեալ յեւդոկիա, ուր սահմանեալս եմ երթալ յառաջնորդութիւն արքունի հրովարտակաւ, անտի յուսամ փութով և դիւրութեամբ իշանել ի միջերկրեայ ծովեզր, ուստի տեառն յաջողելով ակն ունիմ միւսանգամ տեսանել զարևմուտս: Արդ՝ զայս խորհուրդ իւր խնդրէ ունել ի ծածուկ վասն ահի հակառակորդաց և հայցէ զօգնութիւն աղօթից ձերոց: Փառք և գոհութիւն տեառն, զի առ այժմս փոքր մի պատրիարքն գիշեալ յառաջին բնութենէ, և օգնականք բազում են սարգսի վարդապետի ի մեծամեծաց հայոց: (Հ. Իգն. առ Միգոնեան, 1760 Նոյեմբ. 19. ի Կոստանդնուպոլիս):

ՈԻԱ.

Վասն լիբանանու կաթուղիկոսին[1] ծանիր, զի ոչ բարձին զկաթուղիկոսութիւնն ի նմանէ, այլ մանաւանդ զինդիրսն նորա կատարեցին, և պատուով առաքեցին զնա ի տեղի իւր. թէպէտ նախ յաչաց մեծամեծաց հանին զկաթուղիկոսն ոմանք հակառակորդք... ուստի և բան ևս եղև բառնալ զկաթուղիկոսութիւնն ի նմանէ. բայց հասու եղեալ խեռութեան հակառակորդացն, արտաքսեցին զնոսա ի հայոց ժամէն, և զկաթողիկոսն պատուեցին ընծայիւք, տալով զմի արծաթի փատուր սրբատուփ, և զմի ձեռք զգեստ եկեղեցական, և հարիւր սկուտ ի ծախս ճանապարհին, այլ և զմի մասունք արծաթի ոսկեով: (Միգոնեան առ Հ. Ջաքարիա, 1760 Նոյեմբ. 22. [Ս. Ղազար]):

ՈԻԲ.

Ցայսմիկ երեքշաբթի օրն ել մի ֆէլման, զի ամենայն ոսկերիչք, ի հայոց և թէ յունաց՝ թողցեն զխօրուս, թէ ծերք իցեն, և թէ երիտասարդ, թէ ամուսնացեալք և թէ ոչ. այնպիսի խռովութիւն գոյ այսօր ի մէջ հայոց, զոր ոչ կարեմ պատմել. ոմանք կամին թողուլ զքաղաքն և փախչիլ, ոմանք զկէտիկ, ոմանք զօտան: (Արանաս եպս. առ Հ. Մկրտիչ, 1760 դեկտ. 20. [կ. Պոլիս]):

ՈԻԳ.

Վասն արևելեան լրոց ծանիր, զի թագաւորին[2] գնալն յետաձգեալ ստուգեն. միայն սպասէ զաւակին ծնանելոյ, եթէ իցէ ստոյգ: Եւս ֆէրման գնացեալ է ի ստամպօլու յետուստաղէմ, փլուզ ցանել զամենայն եկեղեցիս քրիստոնէից հայոց, յունաց, փրանկաց ևն.: Եւ այս է ողբալի, թէպէտ կարծեմ թագաւորն ոչ հասանի դիտման իւրում, զի ֆէլլահքն ոչ թողուն որպէս թուի բազմաց,

---

1. Մելքայէլ Պետրոս Գ. Գասպարեան Բերիացի (1758–1780):
2. Մուստաֆա Գ.:

զի իւրեանց հացն յայնցանէ է։ Եւ կարծեմ թագաւորին էհէյն են. նաև ի թէքիր ասպը եղեալ ժամն ֆրէնկաց առեալ է փլուցանել։ (Մկրտիչ ասր Հ. Մկրտիչ Պճռնեան, 1761 Յունվ. 10. [Ս. Պ.ագարի])։

ՈՀԹ.

Իմացայ որ գՀ. Մկրտիչն ի Հռոմ կարգեալ են առ ժամանակ մի ի վերայ հայ ուսանողաց գօլէճի փրօփականտային, և թէ ունի ընդունելութիւն առ մեծամեծս սուրբ ժողովոյն...։ Հրաման եւ յարքայէ երկրիս գրգռմամբ խույսումեի պաշտն թողուլ խույսումեոց գիշխիկ ունողաց՝ դմօրութ. և թողին բազումք գրեթէ ամենեքին։ (Հ. Զաքարիա ասր Մկրտիչեան, 1761 Յունվ. 12. [Կ. Պոլիս])։

ՈՀԶ.

Վասն սառաֆօղլու սարգիս վարդապետին յայտ լիցի, զի յաւուրս յայսոսիկ խօսեցայ ընդ նմա. և նա պատմեաց ինձ, և ասէ, թէ ոչ ես երթայց ի թօխաթ, այլ ի տեղի իմ գնելոց են զահագին սահակ վարդապետն. և ես այժմ ի խնդիր եմ առնուլ զրամս ի պատրիարգէ վասն ետուն հալածման, և ի մոից աթոռոյ Եղոկիոյ ըստ չափու տարւոյ մերոյ. և յուսամ կուտել ընդ ամենայն իբրև զչորս տասանդս առ այժմ։ (Հ. Իգնատիոս ասր Մկրտիչեան, 1761 Յունվ. 19. Կոստանդնուպոլիս)։

ՈՀԿ.

Վասն պատերազմաց հաստատեան ասա, թէ ստուգապէս տաճիկն յառնէ ի վերայ Վենետիկեացոց, ուստի ի բազում տեղեաց լուաք, թէ զվէնէտիկու էլչին ըմբռնեալ եղեալ են ի էֆեսիոս։ Իսկ զառաւօտին ասա սկսան ասել զներհակն գրեցելոց ի գերյարգութենէդ, այսինքն թէ կացուցեալ են զնա ձէնէռալիսիմօ բացարձակ. այսինքն անկախ ի ճէնկ տիվանիէն վէնայու. և զյովսէփն ընդ երեսուն հազարաց մաճառից յղին ի պատերազմ. սակայն ի ներքոյ կառավարութեան տաւունին. յորոց յայտ է թէ ամենայն ինչ է անստոյգ։ (Հ. Մկրտիչ ասր Մկրտիչեան, 1761 Մարտ 28. [Հռոմ])։

ՈՀԼ.

Վասն տօնանմայի քաղաքիս (վասն նորոգ ծնեցելոյ չահ սուլթան դստեր թագաւորի), գուցէ գրեալ են այլք, զի յայս նուագ առաւել եղև քան զառաջինն փառազարդութիւն դրանց ապարանից մեծամեծաց, և տեսեալ զաւուրս երեք, և տուաւ համարձակութիւն ամենեցուն առհասարակ առնել ուրախութիւն յամենայն տեղիս։ (Հ. Իգնատիոս ասր Մկրտիչեան, 1761 մայիսի 19. Կոստանդնուպոլիս)։

ՈՀԼՀ.

Ընկալայ զգիր գերյարգելութեանդ. և իմացայ զէութիւն իրաց։ Սակայն ասես թէ թարգմանութիւնն յովսեպոսի ճառից խանգարեալ իցէ. մերքն չունին ժամանակ իբր ի նորոյ թարգմանել զբոլոր գործն։ Մի վասն այսորիկ խորհիցիս հայր պատուական. զի չէ որպէս կարծեսդ. թարգմանութիւնն յուսամ թէ չունի հարկ այնպիսի մեծի սրբագրութեան, զի մեք ասէին՝ որքան է մերս կայ՝ յետ ըստ ամենայնի թարգմանելոյն՝ ընդ հայր զաքարիային վերստին սրբագրեցաք։ Եւ եթէ ի տեղիս ոմանս պատահմամբ սխալ ինչ անցեալ իցէ՝ նոյնն յաչաց վրիպմանէ պատահեալ՝

կարէ յապաւիլ դիւրապէս։ Բայց այս չէ այնքան փոյթ. այլ տակաւին դրամոյ խօսակցութիւնն ոչ բացորոշեցաւ՝ որում ես փափագիմ, զի կարօղ լինէի միանգամ զգիրքն ընդ դրամոցն յղել առ ձեզ։ (Արանաս վրդ. և եպիսկոպոս առ Մկրտիչ Ալանեանց, 1761 յունիսի 20. [կ. Պոլիս])։

ՈՒԻԲ.

Ջաստուածածարանին բանսն ես իմացայ մանաւանդ վասն երանացուցանելոյ զլուսահոգի հայրն մեր, որ վասն մեր իրաւի մեծ ինչ է, եթէ յաջողեսցի։ (Մկրտիչ առ Հ. Մկրտիչ, 1761 օգոստ. 22. [Ս. Պ.ազար])։

ՈՒԼ.

Վասն ժամերգութեանց գրեանց, որք աստ յօրինին, ծանիր, զի չարունակ Հ. Վ.րթանէսն պարապեալ է յայն. և գործն ոչ է թեթև որպէս գիտես. մինչև ցայժմ ժամագիրք և չարականն եղեալ են ամենայն նօթայիւք. այժմ պարապի ի կազմութիւն ծանացուցին և ճաշոցին ի միասին ըստ ժամերգութեան մասին. և այնք ես մօտ են յեզերիլ. յետ սորա սկսանի զնոյն ճաշոցն ըստ պատարագի մասին որ ես փութով եզերի, զի ամենայն նօթայի պատկանեալքն նախ եղեալ են ի մասին ժամերգութեան և ի ծանացուցին...։ Իմացաք և զբան վիճարութեան քոյ, չնորհաւոր լիցի. ճարեցից ես անձն փոխանակ քոյ այդր, զի դու ազատեալ երթիցես ուղիղ դէպ ի ստամպօլ, բայց մի՛ միայնակ, զի ոչ վայելէ աստիճանիդ նորոյ, այլ տաց քեզ զերկու ընկերս, զՀ. Անտոնն մեծ ի զրագիր սրտապարար, և զՀ. Յովսէփն աւտիթօռ քեզ, և զթօմաճանն քահանայ յաւելից ի վերայ երկուցն։ (Մկրտիչ առ Հ. Մկրտիչ, 1761 դեկտ. 5. [Ս. Պ.ազար])։

ՈՒԼԱ.

Վասն տպագրութեան յովսեպոսի գլքոյն (կարծեմ թէ գրեալ է իմ առ ձեզ) ծանիք, զի այն դադարեցաւ առ այժմս ի տպագրելոյ. և թէ տպագրեսցի ոչ ևս տպագրի ձեռամբ մերոյ. և թէ յետ ժամանակաց աղաչանք ևս լիցի. ես ոչ առնում յանձն. ուստի ուրախ լերուք, զի այն բեռն բարձաւ ի մէնջ։ (Հ. Զաքարիա առ Մկրտիչ Ալանեանց, 1762 յունվ. 15. [կ. Պոլիս])։

ՈՒԼԲ.

Ցոյնք քաղաքիս հրամանաւ պետաց, իւրեանց եպիսկոպոս ընտրեցին, որ ձեռնադրելի է ի զանդայու ի սանթամաւրայի, և ի քեօրֆուի եպիսկոպոսաց յարքեպիսկոպոսութիւն ի վերայ նոցա. և զիւրոյ եպիսկոպոսութեան հաստատութիւնն առնլոց է ի ստամպօլոյ պատրիա[ր]գէ իւրեանց։ (Մկրտիչ առ Հ. Մկրտիչ Ալանեանց, 1762 յունվ. 23. [Ս. Պ.ազար])։

ՈՒԼԳ.

Սառաֆօղլու սարգիս վարդապետն, որ երկու ամ է՝ որ ի պալատու ժամն էր և անդ քարոզէր, փոխեցաւ անտի ի խալաթիայ ի ժամն լուսաւորչին կարգաւորմամբ պատրիարգին, բայց պալատցիք դժուարեալ ընդ այս՝ յարուցին աղմուկս ոչ սակաւս. ուստի և պատրիարքն զաւագ երիցու նոցա և զայլոց երկուց երիցանց գարզն տուեալ առաքեաց ի քիւրէկն. և ընդ այս այլ քահանայք և մեծամեծք պալատցոց զժգոհեալ սկսան խօսիլ պատրիարքին։ (Հ. Զաքարիա առ Մկրտիչ. 1762 փետր. 1. [կ. Պոլիս])։

ՌԻԹ.

Գոյ այժմ ի սատմպօլ ի ՄԿ հակառակորդաց նաև կռիւ մի մեծ, և այս է վասն ընտրելոյ զառաջնորդ երուսաղէմի, զի առաջինն՝ որ էր Թարսս վարդապետն՝ մեռաւ։ Այլ՝ պատրիարքն իւրայնովք և բազում աշխարհականաք ընտրեցին զմին առաջնորդ երուսաղէմի. իսկ ամիրայքն չհաւանեալ ընտրութեան պատրիարքին՝ ընտրեցին զայլ ոմն, և ջանան փոխել զպատրիարքն. ուստի և նա ոչ գիտէ գինչ գործէ առ ի հաճոյանալ նոցա։ (Հ. Ջաքարիա առ Մկրտչեան, 1762 փետր. 15. [Կ. Պոլիս])։

ՌԻԶ.

Վասն պատերազմաց ծանիր, զի սաքսօնիա զօրքն Թագաւոյն ի դիմի հարեալ զօրացն պրուչի և եղբօր Թագաւորին պրուչից, յապՀալ են և փախստական արարեալ զեղբայրն պրուչին զօրօքն իւրովք, զբանակն առեալ, և զամէն հազար կալանաւորեալ։ Ասեն ևս Թէ զեղբայրն պրուչին վիրաւորեալ ի բազուկն։ (Մկրտչեան առ Հ. Մկրտիչ, 1762 յունիս 12. Ս. Վազար)։

ՌԻԸ.

Ի լիբանան եղեալ յունաց պատրիարքն, եպիսկոպոսք և այլովք ոմամբք եկն ի Հռոմ վասն ընդունելոյ զարձակումն նզովիցն, որով նզովեցին զնա ի լիբանան ի կղզիանէ պապին, վասն չհնազանդելոյ կարգաւորութեանց սոցա. և միանգամայն վասն արդարացուցանելոյ զինքն։ (Հ. Մկրտիչ առ Մկրտչեան, 1762 յունիսի 19. [Հռոմ])։

ՌԻԼ.

Սա[1] եկն ի կոստանդնուպօլիս ի լինիլ մեծաւոր. քանզի եկն հրաման ի սրբոյ ժողովոյն հանել վանել զամենայն կարգաւորսն սրբոյն անտոնի վանուց, որպէս և եղև իսկ. և ի տեղի նոցա զայլ նոր կարգաւորս հաստատել հանդերձ մեծաւորաւ, որ եղև փառբէ Հիվան կրիզոսթօմոն։ (Աբահաս եպս. առ Մկրտչեան, 1762 յունիս 20. [Կ. Պոլիս])։

ՌԼՐ.

Իմացայ զգալուստ հայ եպիսկոպոսին կոչեցելոյ Թիֆլիզցի Գրիգոր վարդապետ...։ Հ. Գրիգորն... իսկապէս գնաց գմեծ օտալար մի մերձ ի սանթօֆիցն առ սուրբ պետրոսիւ. ունի աւելի քան զյիսուն օտայ. և պարտէզ անհուն. ունի կէլիր տարին 180 սկուտս, գնաց զայն տասնըչորս հազար տուգաթ։ Ասկայն տեղին է իսկզ. և օդն գրեթէ մահաբեր. և երկնչիմ Թէ այն լիցի լիբանանեցւոց ի կործանումն։ Դառ էառ ի փափէն զՊռէվի, զի արասցէ զայն՝ վանք, և չինեսցի ի նմա եկեղեցի, և կոչեսցէ զանուն նորա Լուսաւորիչ։ (Հ. Մկրտիչ Ամ. առ Մկրտչեան, 1762 յունիս 24. [Հռոմ])։

---

1. «Փառբէ Հիվան կռիզոսթօմօ»։

ՌԼԲ.

Չմոզզովաց թագաւորն նոր լոթրան և թանձր պրուչեան կալան, և կայ այժմ յարգելանս, և կին նորա որ է մեռեալ թագուհւոյն քեռ դուստրն, թագաւորէ այժմ։ Այս դիպաւ նմա վասն երից. նախ զի ի դաւանութեան մոսկովեան հաւատոյն ոչ եկաց. այլ զլոթրանութիւնն հանդիսացոյց ոչ միայն յանձն իւր և յոմանս, այլ ի բոլոր թագաւորութեանն կամեցաւ մուծանել։ Երկրորդ՝ ստեաց երդմանն կալոյ ի հաշտութեան ընդ տանն աւստրիայու։ Երրորդ, ձեռնտու եղև Թշնամւոյ մեծի տանն աւստրիայու և մոսկովու։ (Մելգոնեան առ Հ. Միրտիչ Ա՛ն. 1762 Օգոստ. 7. [Ս. Ղազար])։

ՌԼԳ.

Լուայ ևս թէ թագաւորն բանտարկեալ նախ ունեցեալ է ևս զկամս բաժանիլ ի թագուհւոյն, և գայլ կին ածել. ուստի այսմ ևս գիտակ գոլով թագուհին, աճապարեաց հոգալ զբան առն իւրոյ ունելով և գայլ պատճառանս։ Եւ գրեաց առ թագուհին Ճէրմանիայու, թէ ընդ քեզ եկք են.։ (Մելգոնեան առ Հ. Միրտիչ Ա՛ն. 1762 Օգոստ. 14. [Ս. Ղազար])։

ՌԼԴ.

Վասն յունաց եպիսկոպոսին որ է ի նազարէթն, ծանիր, զի լուայ թէ ձեռնադրօղքն սորա, որք էին եպիսկոպոսքն քեօրֆէզու և քէֆալօնիայու, ծածուկ բանադրեալ են ի պատրիարքէն ստամպօլու. ուստի ի առաքելն յունաց առ պատրիարգն ստամպօլու զգիր, զի զհաստատութիւնն իւրեանց եպիսկոպոսին տացէ, նա գրեալ է, թէ ոչ ինչ է եպիսկոպոսութիւն սորա, զի բանադրեալ էին ձեռնադրօղքն։ Եւ սոքա պաղեցան յոյժ իւրեանց եպիսկոպոսէն, և դարձեալ գրեալ են գիր առ պատրիարգն ստամպօլու, և սպասեն թէ գինչ լուր գայ։... Թագաւորին տաճկաց երեքամեայ դուստրն մեռեալ է։ (Մելգոնեան առ Հ. Միրտիչ, 1762 Սեպտ. 1. [Ս. Ղազար])։

ՌԼԵ.

Խմացայ... ևս վասն Լիբանանեցւոց, և գնեալ տեղւոյս նոցա, և հալալու նոր հաստատեալ վիգարին. որով լիբանանու հայոց կաթողիկոսն ամենևին թարմատարի։... ասես ստոյգ, թէ տաճիկն պատրաստի ընդ ծով և ընդ ցամաք ի պատերազմ. և թէ զօրքն խնդրեալ իցէ գայս։ Եւ թէ հրաման տուեալ է ժողովել զօրաց ի սէլլրղատ։ Եւ ի պօսնա պատրաստութիւն կերակրոց դնէ. և ստոյգ ոչ լինի գիտացեալ թէ յոյր վերայ չարժի։ Սոքա ևս ասա ծածուկ պատրաստութիւն նաւուց տեսանեն։ (Մելգոնեան առ Հ. Միրտիչ Ա՛ն. 1762 Սեպտ. 11. [Ս. Ղազար])։

ՌԼԶ.

Վասն պատերազմաց... լուայ թէ ֆրանսզն և սպանեօլն հաշտեալ են ընդ ինկլիզին. և այսպէս ՚ի նոց միայն ռէճինան ընդդէմ պռուչին, զի ի մոսկով ևս լսի թէ չփոթութիւն գոյ։ Իսկ տաճիկն ասեն, զզօրսն զորս յայլևայլ կողմանս առաքեալ էր յետս կոչեաց։... Վասն տաճկական պատերազմին գրեցի վերագոյն. և զի այն երևոյթն պատրաստութեան պատերազմի ասեն լինիլ վասն պարըշին, այսինքն մինչև կատարեսցի այն դաշնադրութիւն, և յորժամ եղև այն պարիշն, վերջացոյց պատրաստութիւնն, զայսմանէ այլևայլ խօսին։ (Մելգոնեան առ Հ. Միրտիչ Ա՛ն. 1762 Սեպտ. 25. [Ս. Ղազար])։

ՌՀԵ.

Ի սառամոլու գիր առի, յորում գրի. ի խալեի հրէայս խարէութիւն գտեալ արտաքսեցան ի տարապհանութէ աւելի քան զհազար, և ի տեղի նոցա հայք յաջորդեցին. և գիւզօղլու միքայէլ աղայն խալեի պաշի արարին։ Թագաւորին դուստր մի ծնաւ և արարեալ են ուրախութիւն հինգ։ (Մկրտիչ առ Հ. Մկրտիչ, 1763 յունվ. 22. [Ս. Ղազար])։

ՌՀԶ.

Զանքառաիմ կոչեցեալ խանն ըսպահանու եկեալ Ճղ. ասգնարով, բոլոր անասիստանն յաւար հարկանելով և իւր պետութեան ենթակայ առնելով, եկն և հաս ուռմիայ, այժմոյս ուռմիայ չրջապատեալ են զօրքն և ինքն նստեալ է ի քաղաքն Թաւրէզ... մեր խօտրջոյս Ի տալ Թաւրէզու էկին, նոքայ ստուգապէս պատմեցին։ Սահակ վարդապետն որ մակ անուամբ կոչիր ահագին, յանկարծակի մահուամբ մեռաւ, ոչ խոստովանութիւն և ոչ սրբութիւն և ոչ կտակ. Ըձ քսակն յելաւ։ (Տէր Յակոբ Տէր Ղազարեան քահանայ ի խոտրջոյ առ Մկրտիչ առ Մկրտիչ, 1763 մարտ 17. [Խոտրջուր])։

ՌՀԷ.

Յաւուրս յայսոսիկ ասա առաջի լիտային գոյր պէյլիկ նաւ մի, որ սպասէր մտանել ի յիլիմանն. և յանկարծ յարեաւ հողմն սաստիկ արևելեան և նաւն գոլով յոյժ հին և չհանդուրժեալ բանութեան հողմոյն խորտակեցաւ, և իբր չորս հարիւր անձինք հեղձան ի ծովն ալք և կանայք և տնվորք մտեալ ի նա ի զանազան տեղեաց գալ ի վէնէտիկ։ (Մկրտիչ առ Հ. Զաքարիա, 1763 մարտ 19. [Ս. Ղազար])։

ՌՀԸ.

Լինելի ոճծն է մեր բրօգուրաթօռ մօչինիկոյն, որ սոիպեալ յեղբօրէն յանձն էառ զոճծութիւնն, զի ինքն ոչ կամէր. բայց զի մի տրամեցուսցէ զեղբայրն զիշաւ։ Սորա զամենայն ծախսն, իւր եղբայրն տեսանէ վասն պատուոյ տանն, և այն գաւաերութիւնն, որ անկանի ինքեան, տայ միւսմ եղբօրորդւոցն և ինքն ապաթիի զգեստ զգենու։ Այլ այն կարծիք, թէ զամուսնացեալն ոչ առնեն ոճծ, և թէ եթէ իցէ ամուսնացեալ հրաժարիլ պարտի, անհիմն կարծիք է։ (Մկրտիչ առ Հ. Մկրտիչ, 1763 ապրիլ 10. [Ս. Ղազար])։

ՌՀՁ.

Ընդ մեռանիլ երկրորդի արքայի ռահիտ կոչեցելոյ իւրով մահուամբ, որ եղև ի 8 ապրիլի ըստ նորոյն, ի բանտ արկան երիք լումայափոխքն նորին անուանիք, և դեռ ի բանտի պաստանճիպաշիին կան, և ինան յետ պայրամին տալ զհամար տուրևառութեան, զի ասի թէ պահանջի ի նոցանէ 18000 [տ]աղանդ արծաթոյ, և կարծեմ թէ մահ ևս լինիցի միում ի նոցանէ, որ երբեմն աշակերտ էր միւայիմիին։ (Հ. Իգնատիոս առ Մկրտիչ առ Մկրտիչ, 1763 ապրիլ 19. կ. Պոլիս)։

ՈՀԲ.

Ի յիսմիր եղև եանղրն մեծ և յոյժ աղետալի, որով գրեթէ երրորդ մասն քաղաքին այրեցաւ, բովանդակ տունք ֆրանկաց և պալեօզից և որք առ ծովեզերեք տունք էին, այրեցան. և ընդ նոսին անհամար ըզգակք ֆրանկաց և վաճառականաց. այրեցեալ է և չարսը փազարն և կէսն մատամայ խանին. այլ և եկեղեցին ճիզվիթաց և վանքն ցուքուլանդաց: Նաև ի յատամպօլ այս է, ի յիւս կիւտար եղև եանղրն մեծ ի սեպտ. 1. և այրեցան տունք աւելի քան զ3000 հազար, սկսեալ ի ծովեզրէ մինչ ի գագաթ լերինն ընդ հարաւ: (Հ. Ջաքարիա առ Մելգոնեան, 1763 Սեպտ. 14. [Կ. Պոլիս]):

ՈՀԳ.

Վասն ոսկեզօծ աթոռոյ պատմութեանն ծանիր, զի այսպէս եղեալ է իրն: Նահապետ կաթուղիկոսն ուրֆացի գրեալ է զգիր ողջունի,... առ իննոջենցիոս պապն երկոտասաներորդ: Եւ սոյն պապս վասն ընտանութեան առաքեալ է զայն փառաւոր աթոռն հանդերձ կղեմէսի աթոռովքն փառաւոր կազմելովք ի ստամպօլ առ խաչատուր վարդապետն, որ յայնժամ լեալ է ի ստամպօլ հանդերձ պատուիրանագրովք, զի անձամբ առեալ տարցի զաթոռն զայն և զգրեանս յէջմիածին յընծայ կամ ի պարգև առ նահապետ կաթողիկոսն. և խաչատուր վարդապետն կատարեալ է զհրամանն ընկալնելով ի նոյն կաթողիկոսն ի պարգև զփիլոն մի մոռ խումաչէ. և դարձեալ ի ստամպօլ: Եւ այս տանիլս աթոռոյն եղեալ է չուրջ 1699 կամ 1700 թուին: (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ, 1763 դեկտ. 3. [Ս. Ղազար]):

ՈՀԴ.

Ծանիր Հ. Իգնատիոս, որովհետև ասես թէ բասենցի յարութիւն վարդապետն նուիրակն նորոգ կաթուղիկոսի սիմոնի է ուղղափառ և ջատագով միաբանութեանս, տես թէ հնար է ձեռամբ սորա զբասենի վանից աստուածածնի պատկերն ծաղկեայ պատմուճանաւ զհրաշագործօն առ լուսահոգի աբբահայրն մեր ի ձեռն բերել, եթէ զայսպիսի ինչ արասցէ այդ վարդապետն, մեծ ինչ առնէ միաբանութեանս մերում: (Մելգոնեան առ Հ. Իգնատիոս, 1764 ի փետր. 5. [Ս. Ղազար]):

ՈՀԵ.

Հ. Մատթէոսն խնդրէ, եթէ գտանիցի՞ ի հոսմ պատմութիւն երանելւոյն տեառն Կոմիտասայ նահատակին ի հայ կամ ի ֆրանկ լեզու. զօրինակ մի առձեռն բերցես և առաքեսցես: (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ Ալանեանց, 1764 ի փետր. 11. [Ս. Ղազար]):

ՈՀԶ.

Խնդրուածքն Հ. Մատթէոսին ոչ կարէ կատարիլ. զի աստ նորա և ստուերն ոչ գոյ. բայց միայն տեսի ես ի յալպան յայսմ գիւղագնացութեան ի տունն Պօլօնիացի դեսպանին զպատկերն մերոյ տէր Կոմիտասին ձևով հայ տէրտէրի, հանդերձ խաւուխով, զի կայր առաջի ատենին վէզիրի, և տայր պատասխանի. գիրք իբրև ողջունագրիս, և զարմացայ, բայց այն ոչ էր արարեալ աստ, այլ ի ձէումանիա: Եթէ կամի զնոր ինչ զտէր Կոմիտասէն, ի ստամպօլու պիտի, զորմէ ես ինչ ինչ գիտեմ ի տոյգ տեղեաց հրաշք զարմանալի, զորմէ թէ ունիցիմ ժամանակ, գրեցից յետոյ: (Հ. Մկրտիչ առ Մելգոնեան, 1764 փետր. 1[8?]. [Հռոմ]):

ՃՄԲ.

Պատրիարք քաղաքիս յակոբ վարդապետն ի բազում ժամանակաց հետէ կրէր և կրէ հիւանդութիւն ինն վտանգաւոր. և արար յաւուրս յայսոսիկ գինի, ընդ որ ամենայն սաստմոլ քրիստոնեայք և անհաւատք պանչեցան և պանչեանան. և անուն իւր կրկնապատիկ փառաւորեցաւ, և զոր արարն այս է. զի ժողովեաց ի պատրիարքարանն զամենայն վարդապետս և զիշխանս հայոց, և հրաժարեալ ինքն ի պատրիարքութենէ, հաւանութեամբ նոցա կացոյց պատրիարք զգրիգոր վարդապետն զվէքիլն երուսաղէմի, որ թէպէտ չէ այնչափ գիտական և բանիբուն, բայց է անվնաս և ըստ իմիք չատագով ուղղափառացս դասուն, զորոյ գիտացեալ հաղնիլն ի վէգիրէն և ես աչօք տեսի։ Իսկ ինքն յետ նստուցանելոյն զնա յաթոռ իւր սիրով մնձաւ գնաց ի յիւսկիւտար ի վանքն որ անդ առ ի զգեղօրայս առնուլ վասն հիւանդութեանն. այս եղև ի մայիսի 25 և 26։ (Հ. Ցաքարիա առ Մկրտոնեան, 1764 յունիսի 1. [կ. Պոլիս])։

ՃՄԺ.

Մկրտիչ կաթուղիկոսն լիբանանու գրեաց առ փրօփականտային, թէ խնդրեմ ի ձէնջ զայս չնորհ, զի որչափ ալումնօ հայ մանկունք գայիս ձեռնադրելի լինիլ թեմէ, յղեսցին առ իս, զի ես ձեռնադրեցից. և սոքա արարին ժողով, և ի ժողովի անդ՝ ել հաւանութիւն. և ըստ այնմ արարին ասէգրէթն, զի միշտ յղեսցին այսպիսիք առ նա։ (Հ. Մկրտիչ Ա՛. առ Մկրտոնեան, 1764 ի Հռոմ ի 2 յունիսի)։

ՃՄԺ.

Պատրիարգն երկրիս[1] յոյժ հիւանդացաւ, և բազում եպիսկոպոսք ի պէտպէս քաղաքաց եկին և կուտեցան ի կոստանդնուպոլիս... կոչեաց պատրիարգն զբազում եպիսկոպոսս և զիշխանս եկեղեցաց. և յետ բազում քննութեան, կոչեաց ինքն զվէքիլն երուսաղէմի զգրիգոր վարդապետն, և առաջի ամենեցուն եդ նմա զգաւազան իւր և զմատանի, և էարկ զփիլոն գանձամբ. և ողջունեաց զնա կոչելով զնա կեցցէ պատրիարգ կոստանդնուպոլսոյ. զնոյնն արարին վարդապետք և իշխանք. և առեալ տարան առ եպարգոսն. իսկ եպարգոսն ծանոյց զայն արքային, և արքայն հաստատեաց զնա վեհ ազգին, և եկն նստաւ յաթոռ. իսկ հինն հրաժարեցաւ, և գնաց նստաւ ի վանսն իւսկիւտարու... սորա [Գրիգոր պատրիարքի] իբր կառավարիչ կացուցաւ մեր սարգիս վարդապետն, քանզի գոլով նա երիտասարդ հասակաւ, բարւոք է ունել նմա զծերունազարդ ոք ի կառավարել զնա։ Եւ ինքն, այս է սարգիս վարդապետն կացուցաւ ի տեղի նորա վէքիլ երուսաղէմի։ (Ագաւնաս եպս. և վիք. առ Մկրտոնեան, 1764. ի կոստ. ի յունիսի 2)։

ՃՄԻ.

Ի սաստմոլ ի վէգիրէն նորոգեալ է եասախն և սաստկացեալ. ոչ միայն զսեաւս զգենուլ որպէս արդէն զգենուին, այլ և զնոյն սեաւն անպաճոյճ զգենուլ. և զխալփախի մորթն նեղ, և ըստ քիպրիթճիի առնել ևն.։ (Մկրտոնեան առ Հ. Մկրտիչ, 1764 յունիսի 9. [Ս. Ղազար])։

---

1. Յակոբ Ղալեան Պատրիարք։

ՄՏԲ.

Յառաջագոյն քան զիս գրեցին ձեզ այլք վասն մահուան յակոբայ վարդապետի պատրիարքի քաղաքիս, և թէ դիմեալ փառաւորապէս թաղեցին զնա ի գերեզմանս պէյօղլիի առ գերեզմանի Չուղայեցի յակոբ կաթուղիկոսին. և անդ ի մէջ բազմութեան ամենայն ազգաց ասաց զներբո- ղեան սառաֆօղլու սարգիս վարդապետն իբրև զժամ մի ի զարմացումն ամենեցուն...... եա- սան խալփախից դադարեաց ամենեքին: (Հ. Խրիատիւս առ Միգոնեան, 1764 օգոստ.ի 19. ի կ. Պոլիս):

ՄՃ.

Մահատարաժամն առաջիկայ տարւոյս չար է և մինչև ցայժմ սաստկացեալ է յոյժ. մեռեալքն անթիւ են և անհամար, ի միոջէ տանէ որ ծանօթ էր, և ես գնացի անդ անգամ մի, ելին մեռա- սան ոգիք... բազումք մեռան, և բազումք ասա անդ ի գիւղօրէս փախեան, և բազումք ի դրսեցւոց դարձան գնացին յերկիր իւրեանց: Թաթարխանն յաւուրս յայսոսիկ եկն ի Կոստանդնուպօլիս, և բազումք ի մարդկանց նորա կոտորեցան, մինչև անկաւ ահ և ի սիրտ խանին և հանդերձի դառնալ յետս վաղվաղակի: Բայց հիւանդութիւն տարւոյս ունի զերկու մասնաւոր յատկութիւնս, առաջին՝ զի բազումք յախտացելոցն ողջանան, և երկրորդ զի բազումք ի չափ հասելոց և ի ծերոց մեռանին քան թէ ի նորահասից և ի մանկանց: (Հ. Ալեանիա վրդ. առ Միգոնեան, 1765 Յուլիսի 17. [Կ. Պոլիս]):

ՄԿ.

Ասեն թէ և զվէզիրն փոխելոց է վասն բազմաց անհաճոյ գոլոյն, և բազում գաղտնի խռո- վութիւնք և ամբոխմունք են ի քաղաքիս, մինչև Թուղթս սպառնալեաց գրել և արկանել ի փողոցս և ի մզկիթս թէ այրեմք զբովանդակ քաղաքս. և Թազաւորն[1] ևս ծպտեալ հանապազ չրջի այսր անդր զբազում զրամս ծախելով ի պարզև ամենայն խօլից, զի ինքն յանկուցէ զսիրտս նոցա, և զի զգուշութեամբ պահպանեսցեն զքաղաքն ի հրաձգողաց և յապստամբաց: Ջանասահն որպէս լսեմք օրըստօրէ պակասի: (Հ. Մկրտչ վրդ. առ Միգոնեան, 1765 օգոստ. 17. [Կ. Պոլիս]):

ՄԿԱ.

Յաւուրս յայսոսիկ երիք և երիք գիշեր ոճանմայ եղև վասն նորածին դստեր Թազաւորին, և յամենայն գիշերս ոճանմային անպակաս էր եանղլենն ասա և անդ, այլ ոչ տևեաց. սակայն յերկրորդում գիշերի ոճանմային եղև եանղլենն ի խալաթիայ ի խուլէխափուն, և յայնմ գիշերի տագնապ մեծ եղև յամենայն բնակչաց խալաթիայ զի հուրն միանգամայն զօրացաւ յանկարծակի, և ծառացեալ բոցոյն փայլեցոյց առ հասարակ զամենայն երեսս բնակութեանց տեղւոյն. և մէխա- նայքն բազումք և մեծամեծք, և բնակարանքն խիտ և բազմայարկ, և մէխանաճքն ոչ գտան ի պատրաստի, զի փակեալ զդուրս մէխանայիցն էին ի խնջոյս ոճանմային: (Հ. Ալեանիա առ Մի- գոնեան, 1766 Յունվ.ի 20. [Կ. Պոլիս]):

---

1. Մուստաֆա Գ.:

ՈՀԳ.

ՅՐՇ.ի իբր ի 15 ժամուն ծնաւ դուստր սուլթան մուստաֆային, որում եդին անուն Պէհան սուլթան։ Եւ հրամայեցաւ լինիլ ծնանումայ զերիս տիւս, և զերիս գիշերս. և սկսան ի յունվ.ի 4էն։ (Հ. Յակոբոս Զամչեանց առ Մկրտիչ Աճեանեան, 1766 յունվ.ի 20. [կ. Պոլիս])։

ՈՀԴ.

Պետրոս վարդապետեան՝ չըրախն սարգիս վարդապետին եմուտ ի նաւ իգմիրու գնալ յիգմիր, և անտի ի վենետիկ. բայց նաւն բեկեալ ի ծովու մազապուրծ գերծաւ ի մահուանէ և դարձաւ ի ըստամպոլ. բայց այժմ պատրաստեալ է վերստին երթալ ի վենետիկ։ Եթէ գալ այդր առնուլ զպատահանեալս տպագրութեանն։ (Հ. Յակոբոս Զամչեանց առ Մկրտիչ Աճեանեան, 1766 փետր. 15. [կ. Պոլիս])։

ՈՀՊ.

Յայսոսիկ աւուրս մեռաւ և մօնսինեօր Շէրիմանն, իբր յանկարծօրէն, և եթող զիւրն զամենայն երկուց նեբօթիցն կրասեր եղբարց զօնիէ Լօրէնցօյին, որ ի վենէտիկ. և մեաց նա որ ի հռօմ մնրկ և անյոյս։ փոքր պատուով գնաց, որովհետև ոչ ունէր եթող ինչ որ իբրէր ըստ սովորութեան երկրին, սպասաւորացն ինչ ոչ եթող, և զրագրին իւրոյ միանգամ միայն տաս տասուերկու սկուտ եթող զի տացի և այլ այսպիսի մխքին մխքին տրամաբաշխութիւնս։ Ցանիր և զայս, զի մօնսինեօռ մսսիմանին յայսոսիկ աւուրս օրհնեցաւ ի գաւտինալ Տեօդէն եպիսկոպոս ինփարթիպուս[1], կարի խնդութեամբ բազմաց։ (Հ. Գէորգ Պաղտատեանց առ Հ. Մկրտիչ Աճեանեանց, 1766 ի դեկ. 26. ի հռօմ)։

ՈՀԶ.

Ի գիշերի որում լուսանայր յունվարի 8 ԵՇ.ի, փոնկեցաւ պէյլիկ զալիօն մի, ղըզլա կոչեցեալ, որ էր խարըսխեալ յանդիման պալըխլըին. և այնու վառմամբ, գնացեալ անկաւ ի վերայ նաւուց, և այրեաց զնաւս ինչ, մի ի նոցանէ լի էր ցորենով։ Իսկ յայրեցեալ նաւուց մին գնաց և անկաւ ի վերայ քեօշքին պալատանն՝ այնալը խաւախ կոչեցեալ. և այրեաց զայն, զոր և յայսմ ամի նորոգեցին...։ Իսկ այրեցեալ նաւն արքունի, գնաց ի ճիպալին և անդ այրեաց զբազում տունս հրէից։ Ի յունվարի 10, յաւուր շաբաթու, իբր ի 21 ժամու, ծնաւ սուլթան մուստաֆային արու զաւակ. անուն եդին նմա, սուլթան մէհէմէտ. իսկ ծնանման չարարին. զի քարոզ կարդաց վասն ծնանմանն լինել ի թագաւորէն՝ հիւմայէ, այսինքն ձագայ։... Կարձեալ ի գիշերի, որում լուսանայր Գ.Շ.ի յունվարի, 13[2]։ Եւ զկնի չարժին եւ հողմն սաստիկ։ Ասեն թէ յայսմ գիշերի ի 11 կամ յ12 ժամէն մինչև ց13 ժամն եւեալ է կամարաձև լոյս ինչ, որոյ մի ծայրն էր ի վերայ արքունի պալատին, այսինքն սառա պուռնուին, և միւս ծայրն դէպի էիւպ կամ ի խաքեօյ։ Ոմանք թէ և մի ծայրն դէպ ի պօղազ իչին։ Ասեն թէ և ի յունվարի 14 ևս, ի նոյն ժամու եւեալ է նոյն լոյսն. սակայն կայր և լոյս լուսնին։ (Հ. Յակոբոս Զամչեանց առ Մկրտիչ Աճեանեան, 1767 յունվ. 14. [կ. Պոլիս])։

---

1. Տիոդոսաւոր եպիսկոպոս։
2. Երկրաշարժի վրայ է խօսքը։

ՌԿԹ.

Զերկու փառաւոր եալըս հոռոմոց ի թառապիայ, և զմի յառնաւուտ գեղն հրամանաւ թագաւորին քակեցին ի հիմանց, վասն զչափն անցեալ փառաւորութեանն, և վասն չինելոյն ի հալի տեղւոջ ընդդէմ թագաւորական եասախին։ Եւ զմի հոյակապ նորաշէն բաղանիս ի հիսար նոյնպէս քակեցին ի հիմանց, զի սպանին զոմն սպասաւորք բաղանեացն և ի բաժանելն զինչսն սպանելոյն կռուեցան, և իմացեալ կալան և պատուհասեցին ըստ արժանեացն։ (Հ. Աւետիս առ Մկրտոնեան, 1767 Յունիսի 14. [Կ. Պոլիս])։

ՌԿԼ.

Նաւիկէլլային ասապ մէլքիթներն գնեցին զտուն մի հանդերձ պախչայով աժան գնով, փակար անելով[1] երկու հազարէն պակաս, և եթէ կամիս գիտել զտեղին, կարեմ տալ հասկացուցանել այսպէս, կայ ի գլուխ ճանապարհին որ երթայ ի գօլօսէօն ի յաջակողմանն, հանդերձ չահնիչիրով և բազում պատուհանօք հայեցելովք ի վերայ ճանապարհին։ Եւ այժմ ճուստար կանեն[2] զտունն և ըզպախճան։ (Հ. Գէորգ առ Հ. Մկրտիչ Ա՛. 1767 Մայ. 24. [Հռովմ])։

ՌԿՂ.

Ի հոկ. 16, ուրբաթ, տաճիկքն վերստին եռուն արզուհալ զտանցն հայոց. և ել ֆերման. և ըստ ֆէրմանին ի հոկ. 19 ՌՇ.թի ի զալաթիա մէհկէմէն կոչեցին զդատախազ տաճիկսն, և զհայ տանուտէրսն. և ասեն. հայքն հնազանդին հրամանի թագաւորին մերոյ. և դուք ևս հնազանդիք թէ ոչ, քանզի ֆէրման եղև, զի, տաճիկքն տէյէր փահասընա տացեն զգինս տանցն, և առցեն զտունսն. արդ՝ տանք զգինն տանցն և առնո՛ւք զտունսն, թէ զհեօճէթեան տանցն, տացո՛ւք ցհայ տանուտէրսն։ Իսկ տաճիկքն ոչինչ պատասխանի եռուն. ուստի և եռուն զհեօճէթեան ցհայս։ (Հ. Յակոբոս Ջամչ. առ Մկրտոնեան, 1767 Նոյ. 30. [Կ. Պոլիս])։

ՌԿՔ.

Ձուզէփիէ Սիմոնիթօ Աստէմանին որ էր գլխաւորն Վաթիկանու, տամլայով հիւանդացաւ, և յետ հնգից և վեցից աւուրց ննջեաց ի տէր։ Եւ յաջորդեաց ի տեղի իւր, Նէփօթն նորա մօնսիսնեօռ Էվօտիօն։ (Հ. Գէորգ Պապտ. առ Մկրտոնեան, 1768 Յունվ. 16. [Հռովմ])։

ՌԿՀ.

Ի փետրվարի 7 փլուցին զմի եկեղեցին հայոց որ է Էլիպ։ Ջպատճառն ասեն թէ զի ոչ եռուն Բ ոսկի չօրպաճիին կամ այլում, և նոքա եռուն արզուհալ և եռուն փլուցանել. դեռ զստոյգն չիմացայ։ Եւ ասեն թէ այն եկեղեցին ունի զփէնչէ, սակայն տակաւին փլուցին։ (Հ. Յակ. Ջամչ. առ Մկրտոնեան, 1768 փետր. 15. [Կ. Պոլիս])։

---

1. Pagare = վճարել։
2. Aggiustare = նորոգել։

ՌՃԱ.

Ի մայիսի 21 չարաթի, փլուցին և վեհեկեցին սրբոյն Եղիայի ի յԱչիոզ. զի այս եկեղեցի չէ չինեալ ֆէբռանով, կամ թէ մասն ինչ նորա առանց ֆէբռանի է չինած։ Իսկ վեհեկեցին զոր փլուցին ի փետր. 7 կամին առ չինել, զի այն ֆէբռանով չինեալ էր ասեն, բայց սպասմամբ փլուցեալ են, ասեն։ Լուայ թէ սկսեալ են չինել, սակայն վերստին փլուցեալ են։ Բայց այս իրաւ է ասեն, զի առաջիկ կամին գհայսն հանել յչիոզն։ Եկին ի թէքիրտաղու ի հայոց և ի յունաց ի կոստանդնուպոլիս, քանզի յոյնք խնդրեն ի հայոց զառեղի ինչ, զի այն էր եկեղեցւոյն յունաց, բայց հայք առեալ են ասեն։ Սակայն պատրիարգն յունաց ոչ կթող առ արգահատ առ թագաւորս այս, զի մի և յունաց եկեղեցին փլուսցի։ Իսկ յոյնք ասեն. մեր ժամը թող փլչի, թէ քան հայոցը փլչի. սակայն պատրիարգն արգել։... Ի յունիսի 13 ծնաւ դուստր թագաւորին անուն նորա Հաթիչէ սուլթան. և արարին չորս գիշեր՝ ալրիա ասնանանաստ։... (Հ. Յակոբոս Չարխ. առ Մկրտչեան, 1768, յունիս 30. [Կ. Պոլիս])։

ՌՃԲ.

Իսկ թէ չինչ պէտս թողեալ էր մեզ գայն Աղտոն պապն, գոր և հաստատեալ էր Հ. Թադէոսն. և այժմ վասն այնր դիտաւորութեան առաւ մեզ այն ի ժառանգաց նորա. այս է, զի՝ 500 դրուշովն չինեսցի երգեհոն մի եկեղեցւոյդ մերոյ. որ թէ այժմ ոչ յաջողեսցի չինել, նշանակեսցի ի սէֆթէր վանիցն, զի առ ապա չինեսցի, և յայլ պէտս ոչ կարէ ի կիր առեալ լինիլ այն դրամ։ (Հ. Զաքարիա առ Մկրտչեան, 1768 սեպտ. 14. [Կ. Պոլիս])։

ՌՃԳ.

Պէյօղլուն Ֆրանկին աստուածածնա ժամուն իգին տրվին. կը շնվի կոր քեավկիր լաւ գեղեցիկ պինա ցըքեցին. մեր հայոց էյիպի ժամն բըլուցին մէկ քանի առճկի արգահատ տալովը։... Օգոստոսի 25ին վէզիրը բօխէց թագաւորը համզա բաշան վէզիր ըրաւ սիլիհտարութենէ ելավ առաջ իրէք թուղ առավ թագաւորին առչի ախճըկանը նիշանածն էր. ան ախջիկը մեռավ հիմա այսրն բաշասիյէր անկից էկավ ազէկ ճէօմերտ է չատ օսկի տաղըթմիշ կընէ կոր պախչիյ տալով անթին ասեին։ (Պօղոս Իճճիի Միքայէլեան առ Սահիան որդի իւր, 1768 սեպտ. 17. [Կ. Պոլիս])։

ՌՃԴ.

Ի վենետիկ եկն լուր յայսմ չաբաթու էտիթօն ազգուպլիքային վասն կրօնաւորաց առ հասարակ, արգելլով զի մի ունիցին կախումն ի ձէնէռալացն։ Ի 24 տարվէն ոչ ոք կրօնաւոր լիցի ևն.։ (Հ. Գէորգ Պատր. առ Հ. Միքայէլ Ալի. 1768 սեպտ. 17. Հռոմ)։

ՌՃԵ.

Ասա բազում ինչ անցանեն ի վերայ եկեղեցականաց մանաւանդ կրօնաւորաց. և բազում արքունի կարգադրութիւնք եղեն և լինին գնդօք. և մեք գոլով ֆօրէսդիէր[1] մինչև ցայժմ մեզ ոչ դիպաւ ինչ երևելի ասէրամբ։ (Մկրտչեան առ Հ. Զաքարիա, 1768. [Ս. Ղազար] Վոկտ.)։

---

1. Օտարական։

ՌՀԶ.

Թաթարխանն եկն եմուտ ի ըստամպօլ ի հոկտ. 17 և չուեաց ի հոկտ. 29։ Եւ նորա բանիւ Լիվօռ պէյն՝ կապայ հագաւ և եղև ուլահ պէյի։ Այս այն պէյն է, որ յառաջն էր թարգման թագաւորին, և էր որդի գլխատեալ թարգմանին, և եղև պուղտան պէյի. իսկ այժմ եղև ուլահ պէյի, քանզի թաթարխանն խնդրեալ է ի թագաւորէն առնել զսա ուլահ պէյի։ Ասէ ցնա թագաւորն. ո՞չ սա է նա, որ մինչ պուղտան պէյն էր, նորա աւրաստանութեամբն զքէն դու մանզուլ եղեր ի թաթարխանութենէդ։ Պատասխանի ետ թաթարխանն. այժմ չէ ժամանակ վրէժխնդրութեան, զի այժմ պիտոյ է ինձ այր (պանա ատամ լազըմ տըր), զի ժամանակ պատերազմի է։ (Հ. Յակ. Ջամչ. առ Հ. Միք. Ջամչ. և քեռորդիի Ստեփան, 1768 դեկտ. 18. [կ. Պոլիս])։

ՌՀԼ.

Կարծեմ լուեալ է ձեր զմահն պապին[1], որ եղև յերեկոյի գէր հինգշաբթուն, ի չորս ժամու գիշերուն յանկարծակի, ի սաստիկ գիրութենէ և յանձկութենէ. և յայսմ հետևեալ շաբաթու յաւուր չորեքշաբաթու մտանելոց են Գարտինալքն ամենեքին ի զօնզլաւն։ (Հ. Գեորգ Պաղտ. առ Հ. Մկրտիչ Ա՛ն. 1769 փետր. 11 Հռոմ)։

ՌՀԽ.

Ասեն, թէ տակաւին յամելոց է ընտրութիւն պապին. քանզի քսանևչորս ճիզվիթեան գարտինալք գոն որք մահուչափ երդուեալք ոչ հակին խնդրոց թագաւորաց։... գրեաց եղբայր պարոն Յովակիմին Նազարեան յանցեալ շաբաթն թէ ի պատրաստի են և ի կամս, զՄուրատեան տէր Միքայէլն առնել ժողովրդապետ [Լիվոռնոյի]։ Եւ յայսմ շաբաթոջ գրէ թէ արդէն հաստատեցին բանս ընդ նմա, և գալոց է ի յալ[ի]կուռնայ ի Ֆիօրէնցայու յայսոսիկ աւուրս ընդ փիզայու եպիսկոպոսին, և հաստատելոց են զնա ինքեանց ժողովրդապետ. և սա ևս ի բաղձացողացն է լինիլ անդ ժողովրդապետ։ (Հ. Գեորգ Պաղտ. առ Հ. Մկրտիչ Ա՛ն. 1769 մայիս 6 Հռոմ)։

ՌՀՔ.

Լուայ, թէ ձայն ելեալ է վէնէտիկ, թէ զմենաստան սրբոյն անտոնի՝ որ այդր ի քասթելն է գնելոց են պատրի արմէնիքն։ Թէ իրաւ ելեալ է այս ձայն, և թէ ոչ, չգիտեմ. միայն թէ ես լաւ համարիմ, զի թէ կարելի իցէ, գնեսցուք. և մեր լիցի այն պատուական և ընդարձակ տեղի։ (Հ. Զաքարիա Ա. առ Մկրտիճան, 1769 յունիս 15. [կ. Պոլիս])։

ՌՀՀ.

Արդ՝ տեսաք զգովեալ Թրիէսթն ի մերայնոց, որ է քաղաք բազմամարդ իբր զվէնէտիկ. թէպէտ և փոքրիկ. և են ի նմա ապարանք ըստ չինուածոյ ապարանից վէնետիկեան գիւղից, է պայծառ, և լի զանազան ազգաց վաճառականօք. հանապազորդ աշխատին մարդիկ պէսպէս արուեստաւորօք

---

1. կդեմէս ժ.Գ.։

և ազգի ազգի մեքենայիւք ի չինուածս. և ի մեծացուցանել զքաղաքն հաւանելով զկերինս, և զայլ պանչելի յօրինուածս առնելով քարամբք ի ծովու և ի ցամաքի ըստ հնարաւորութեանն։ (Հ. Անտոն Իւզգարտաչևաւ առ Մելգոնևաւ, 1769 Յուլիս 9 [Թրխևսբ])։

ՈՀԱԲ.

Յուլիսի ամսեանն սխալցըխոյ մեծ վրդովմունք էղև էշմիածնայ մէկ երկու վարդապետ էկել էին ըստամպօլու ֆէրման էին հանել 11 քէսայ ըստակ փաշային արևին էկէղեցիք փակեցին սխալցըխացի պողոս վարդապետան յօհաննէս վարդապետան կօրեցի ազբ ըստէփանն ազբ յակոբն այս Գ կարգաւորն բռնութեամբ տարան էշմիածին։ 5 պատրի կար նոքա ալ քրիշեցին նարխմանու քօղն պարտէզ անուն գիւղ մի կայ այն տեղն մինչ Թարլքիս գահայ այնպէս կեցել են պատրոցն գիրն այս գրիս հետն գրի ըստամպօլ գրկեցի... Թէ իմանաս անցնել տարին մեր քաղաքին կողմանէ ալ կար յունան մի կա էշմիածին նա էկաւ որ պիտիր խառնակութիւն անէր։ (Գուկաս սաղաչիկ Գրիգորևաւ առ Հ. Պօղոս, 1769 օգոստ. 13. Էրզրում)։

ՈՀԲ.

Ի յօգոստոսի 22, երևեցաւ գիսաւոր աստղ մի երկայնաձուա ձգեալ յարևելից յարևմուտս՝ առ հայկ համաստեղութեամբ. որ և ունի ընթացս յարևմտից յարևելս իբր զմոլորակաց միշտ ի խոնարհ առ հարաւակողմն խոտորելով. և ոչ ունի զայծաձաւթիւն. այլ Թխագոյն երևի։ (Հ. Զաքարիա Ա. առ Մելգոնևաւ, 1769 սեպտ. 14. [կ. Պոլիս])։

ՈՀԳ.

Ի կողմանէ պատերազմին զայս նորոգ լուր լուաք... Թէ մոսգովն նախ առեալ է զհողին և գերեալ զամենայն ժողովուրդն որ ի նմա, և զամենայն հայս. ապա և ազգն Թուրքաց յօգոստոսի 15 առաջնորդութեամբ լէհին զերիս աւուրս զայնպիսի մեծ մարտ տուեալ է մոսգովին, մինչ զի և ոչ վեց անձինք կարացեալ են փախչիլ ի պատերազմէ...։ Դարձեալ աղաչայքն ասեն հաստատելով, Թէ կայսրն ունի զմեծ պատրաստութիւն փոյթ ընդ փոյթ մարտի, բայց չգիտեն, Թէ յո՞ր վերայ կամի արձակիլ. արդեօ՞ք ի վերայ տաճկին, Թէ ի վերայ մոսգովին։ (Հ. Անտոն Իւզգարտաչևաւ առ Մելգոնևաւ, Նոկտ. 6, 1769. [Պաշպալով?])։

ՈՀԴ.

Զգրքատունն սկսաք չինել, և է մերձ յեզերիլ, և այն ծախիւք հասարակութեան։ (Մելգոնևաւ առ Հ. Միք. Զաւէ. 1769 Նոյեմբ. 18. [Ս. Ղազար])։

ՈՀԵ.

Վասն քաղաքին մաշկադու ծանիր, զի չունէր ինչ պատուականութիւն առ ի ծանուցանել հղբայրութեանդ։ Բնակիչքն են արաբացիք, բայց ոչ բռնաւորք։ Շինուածք տանցն այնպէս բաղդատին չինուածոցն պասրայու, որպէս փարախ ոչխարաց մեծամեծ ապարանից։ Վասն տօթոյ քաղաքին այսչափ ինչ ծանիր, զի յաւուրս յայսոսիկ ի բուն ձմերան մարդիկ մերկ չրջէին ի քաղաքին. և մեք ևս նեղէաք ի տօթոյն յոյժ։ Իսկ յամարան որպէս պատմեն որք միանգամ զփորձ

առեալ են, է իբրև զննոցն բաբիլոնի. վասն որոյ ի դիպիլն քո տօթոյն պասրայու՝ յիչեա զտօթն մաչկաթու։ ի նաւին՝ բաց ի հասարակաց վչտաց նաւարկութեան, նեղէր զմեզ յոյժ, այլ և զաՀենայն ուղեկիցս մեր՝ անցկութիւն տեղւոյն և հուն գարշութեան ամենայն ազգ գազանաց և անասնոց զորս լցեալ են ի նաւն։ (Հ. Մաևուել և Հ. Սամակ առ Հ. Միք. Զամչեան, 1770 փետր. 7. Մաչկաթ)։

ևն.

Շաբաթով յառաջ երևեցաւ ընդ սահմանաւ հայկ համաստեղութեան գիսաւոր աստղ մի անտուստ ըստ նմանութեան անօսր և լուսաւոր ամպոյ. մարմինն նման է հասարակ աստեզաց, պարածածկեալ ամպանման ցաւատեալ գիսով. օր ըստ օրէ մեծանայ, և չարժի ի հիւսիսակողմն. այժմ է ընդ երկրաւորաւ։ Եւ յասելն իմ ընդ հայկիւ և ընդ երկրաւորաւ, կարծեօք ասեմ. ըստ վեր ի վերոյ զննութեան իմոյ։... Սիմոն կաթուղիկոսն բացեալ է տպարան յԷջմիածին. այժմ եկն ոմն յԼչմիածնէ, և ըստ որում տեսեալ էր պատմեաց թէ նորոգ տպեցին զտումարագիրք մի՝ զոր արարեալ է Սիմոն կաթուղիկոսին։ (Հ. Միք. Զամչեան առ Մկրտիչեան, 1770 յունիսի 1. ի Պասրա)։

ևև.

Ի յունիսի 27, եղև եանդըն ոչ փոքր ի ստամոլ ի փիէթրօ խափուսին ընդ զառ ի վերն մինչ ի յորմունսն սուլթան սէլիմին. և ըսկսաւ հրդեհն ի յեալըներէն. և էանց ընդ բերդն ի քաղաքն. և այրեցան տունք իբր երկու հարիւրք...։ Ի յունիսի 29 տեսաք յերկինս զգիսաւոր աստղ մի մեծագին, որոյ գէաք միգապատք իբր զճառագայթ կային զիւրեաւ. և ընթանայր ի հարաւոյ ի հիւսիս առնելով յաւուրն ընթացս չափ միոյ կենդանակերպի, կամ ասացից, ընթացս՝ որչափ առնէ արեգակն ի միում ամսոջ։ Եւ տեսաք այսպէս աւուրս հինգ. և այլ ոչ երևեցաւ...։ Ջանտախտն օր ըստ օրէ երթալով երթայ և զօրանայ, և այս մանաւանդ ի խալաթիայ։ (Հ. Զաքարիա Ագ. առ Մկրտիչեան, 1770 յուլիսի 15. [Կ. Պոլիս])։

ևնր.

Այն գիսաւոր աստղն մեծագին և մեզ երևեցաւ աւելի քան զհինգ օր, և անյայտ եղև։ (Մկրտիչեան առ Հ. Զաքարիա, 1770 օգոստ. 22. [Ս. Ղազար])։

ևնթ.

Պատերազմունք և խռովութիւնքն որպէս երևին ոչ են վերջանալոց չուտով. քանզի յաւուրս յայսոսիկ պատմեցաւ, թէ մոսկովն զմեծ յաղթութիւնս արարեալ է հագարացւոցն զի պատահեալ նոցա առ հուրթինով՝ անհնարինս կոտորեալ է զնոսա, զ40 հազարս ի նոցանէ գերի վարելով, և զ150 թօփս՝ և զբովանդակ օրտուն յափշտակելով. իսկ զմնացեալսն առ հասարակ ի գետն թուսնայու խեղդելով. և հազիւ վէզիրն ընդ թաթար խանուն մազապուրծ ազատեալք, և ապա դիմեալ քաշուեեամբ ի վերայ պէնտէրին յառնուլ, յորմէ զօրքն տաճկաց զարհուրեալք գդրօշակն սպիտակ բացեալ անձնատուր լինին, բայց նա չէ մտեալ ի ներքս յաղագս ժանտամահուն։ (Հ. Անտոն Իչգարտաչեան առ Մկրտիչեան, 1770 օգոստ. 29. [Պաչպալով?])։

ՃԳ.

Գան հետ ի մատրաստս իբրև երկու ժամու երկու բլրաձև լերինք՝ մին մեծ և միսն փոքր, յորոց վերայ գան եկեղեցիք ուխտատեղիք սրբոյն Թովմայի առաքելոյն, ի բազմաց հետէ ի մոխ ունէին ասանել զմեզ անդ. այլ վասն յոյժ գրպտանաց իւրեանց, ոչ ժամանեցին ասնել մինչև ցայն օր։ Ասսի յայնմ աւուր խորհեցան ի միասին պարոն յովհաննէսն և պարոն մկրտչէն, և առեալ տարան զմեզ ի լեառն մեծ, ուր տեղի նահատակութեան է, ասեն, սրբոյն Թովմայի։ Ի գագաթ լերինն էր եկեղեցի մի յորում էր հրաշագործ պատկեր սուրբ աստուածածնին, և խաչ մի փորագրեալ ի վերայ վիմի. զորմէ, ասեն, փորագրեալ ի սրբոյն Թովմայէ։ Եւ անդ նստան հանգազ փառի մի օգոստինեան։ Ի սորէ լերինն մինչև ի վեր արարեալ է սանդուխս ընդարձակս ի կոփածոյ վիմաց, այլ և կամարք մի մեծակառոյց ևս ճանապարհաւն՝ հանգուցեալ պարսն պետրոսն ոսկանեան՝ ի դիւրութիւն ուխտաւորաց. յորոց ի չինուածս ծախեալ է երեսուն հազար ոսկի։ Եւ քանզի հետս ի վերայ մուխ գիշերոյն, ոչ ժամանեցաք երթալ ի լեառն փոքր, ուր տեղի աղօթից է սրբոյն Թովմայի. այլ եկեալ ազաք ի լոյսն անուանեալ տեղոջ առ փառի մի վրանկիսկեան, ուր գոյ եկեղեցի չինեալ յանուն սուրբ աստուածածնին։ Եւ յառաւօտու յարուցեալ՝ եկաք անտի ի մելափօռ ի սուրբն Թովմաս, ողջոյն տալ եպիսկոպոսին...։ Իսկ վասն քաղաքին մատրաստս՝ ծանիք, զի է այն ի սկզբանէ ընդ տէրութեամբ անգղիացւոց. և ունի բերդ ամրակառոյց ըստ ամրոցացն եւրոպիոյ։ Ունէին փառիքն կախուչինք յառաջագոյն յամրոցի անդ զեկեղեցի մեծակառոյց, և բնակարան ընդարձակ. որոց և զպէտսն տային անգղիացիքն ամ ըստ ամէ։ Այլ ի լինիլ առաջին պատերազմին Գաղղիացւոց ընդ անգղիացւոց յառաջ քան զամս ՅՐ, յառնուլ գաղղիացւոյն զմատրաս, և յանդրէն դարձուցեալ յետ ամաց ինչ, աւերեալ էին անգղիացիքն զեկեղեցին կախուչինաց, և հանեալ զնոսա յամրոցէ անտի, որպէս և զայլ օտարազգիս. զի կարծիս ևս առեալ էին եթէ նոքա արգելեալ էին ի ժամանակի մատրին՝ պատերազմիլ ուղղափառաց յամրոցէ անտի ընդ գաղղիացիս։ Եւ քանզի ունէին փառիքն և զայլ եկեղեցի մի արտաքոյ բերդին ուր այժմ բնակութիւնն է հայոց, անդ գնացեալ բնակէին։ Այլ զայն ևս առեալ են այժմ, և արաբեալ հիւանդանոց զինուորաց, մինչև չինեսցեն զհիւանդանոց։ Առեալ էին ընդ այնմ և զեկեղեցին հայոց, բայց այժմ անդրէն տուեալ են նոցայն։ Եւ փառիքն գնացեալ բնակին այժմ արտաքոյ քաղաքին ուր ունէին յառաջագոյն գփոքրիկ եկեղեցի մի, զոր այժմ ընդարձակեալ են։ Եւ անդ երթան ուղղափառքն մեծաւ աշխատութեամբ՝ տեսանել պատարագ ի կիւրակէս և ի տօնս։ Օդն մատրաստս, ըստ վկայելոյ բազմաց, բարեգոյն է քան զօդն բանգալու. բայց տօթն յամառան փոքր մի սաստիկ քան զնորայն։ Կերակրեղէնքն ոչ այնչափ դիւրագին են։ Բնակիչք քաղաքին են անգղիացիք, հայք և այլ քրիստոնեայք յայլոց ազգաց, մահմետականք հնդիկք, և կառավարք բազումք յոյժ, որք ունին մեհեանս բազումս արտաքոյ բերդին ի բնակութիւնս իւրեանց, զորոց զմին՝ որ մօտ բերդին՝ աւերեալ էին անգղիացիքն, որպէս և զայլ ամենայն բնակութիւնս, որք չուրջ զբերդաւն էին. և այժմ չինեալ են փոխանակ այնր զայլ նորոգ ծախիւք իւրեանց. զորոյ զառաջին քարն հիման եղեալ է կուպեռնաթօռն ինքնին։ Քաղաքն մատրաս է բուն տեղի դալէմքարին...։ Ի գալն մեր ի մատրաս՝ խռովութիւն և աղմուկ մեծ էր ի մէջ ամենայն վաճառականացն հայոց. քանզի տուեալ էին գրեթէ ամենեքին առն միում մեծատան ի հայոց անտի ի բերդս գաւառին հնդկաց դրամս յոլովս իբրև ԽՋ հազար ոսկի. զի ի գալ նաւուս նորա ի մատրաս և ի վաճառել զինչսն, առցէ իւրաքանչիւր զբաժին դրամոց իւրոց։ Այլ ի գալ նաւուն և ի վաճառելն զինչսն, տեսին զի և ոչ զչորրորդ մասն դրամոց իւրեանց կարէին ի ձեռս բերել։ Վասն որոյ ի բազում աւուրս խորհուրդ խորհէին՝ գառանել հնարս և ողջոյն ի ձեռս բերել, առանց ելանելոյ ի դատաստան։ Չուսկ յետոյ խորհեցան, զին հատանել նաւուն ի միջի իւրեանց. և անդրէն առաքել առ տէր իւր. զի եթէ նա անդրէն առցէ գնաւն, վճարեսցէ զպարտս նոցա ողջոյն. ապա թէ ոչ՝ ինքեանք լցեալ անտի ինչս՝ բերցեն և վաճառեսցեն։ Ագարին Թուղթ և ստորագրեցին ամենեքին։ Բայց քանզի փեսայ աւն այնորիկ որ վերակացուն էր նաւուն, ամաւ միով յառաջ նենգութիւն ինչ գործեալ էր ընդ պարոն յովհաննէսին, ըստ թելադրելոյ ոմանց ի հայոց անտի հակառակորդաց պարոն յովհաննէսին, ինքն պարոն յովհաննէսն ոչ միաբանէր ընդ խորհուրդս նոցա, և ոչ ստո-

թագրէր Թղթոյն, այլ զպարտս իւր ողջոյն պահանջէր յառնէն։ Եւ այրն այն վարանեալ տառապէր յերկուսեաք ի բազում աւուրս, զի եթէ զնորայն վճարէր ողջոյն, նոքա ամենեքին զչարէին, և իւրաքանչիւր զիւրն պահանջէր ողջոյն. իսկ եթէ ոչ, երկնչէր մի գուցէ ելցէ ի դատաստան և զխոր-հուրդս ամենեցուն ցրեսցէ, և ինքն արկանիցի ի բանս։ Վասն որոյ աստ և անդ ընթանայր, գրազումս ի մէջ արկանէր, և ինքնին երթեալ առ նա՝ ներումն հայցէր։ Սակայն և նա այնպէս ոչ գիշանէր։ Հուսկ յետոյ եկն առ մեզ այրն, և յաղերս անկեալ խնդրեաց, երթալ մեր և միջ-նորդել առ պարսն յովհաննէսն վասն նորա։ Մեք զառաջինն անդ ոչ յանձն առաք, մի գուցէ նա ոչ գիշցի և վայրապար լիցին բանք մեր. բայց քանզի զիորձ առեալ էաք բարեկամութեան նորա որ առ մեզ, քաջալերեցաք, և գնացեալ միշնորդեցաք։ Այն ինչ բանքն ի բերան մեր էին, ոչ ևս եթող պարսն յովհաննէսն խօսիլ մեզ. այլ յետ պատմելոյ մեզ զարարմունս առն, ասէ. եթէ թա-գաւոր ոք գայր և խնդրէր յինէն զայդ, ես ոչ գիշանէի. բայց որովհետև խնդրէք դուք, ոչ կարեմ կալ հակառակ, այլ զոր ինչ և ասէք առնեմ, թէ և գիտացից եթէ կորիցեն ամենայն դրամք իմ։ Եւ յերկրորդում աւուր ի գնալ առ նա առն, ստորագրեալ էր Թղթոյն։ Եւ այրն ի բազում ուրա-խութենէն գնացեալ հուչակ հարկանէր ի քաղաքին, եթէ յաստուծոյ եղև զալուստ նոցա այսր. և գիտեմ զի աստուած վասն իմ երեր զնոսա աստ յայսոսիկ աւուրս. և եկեալ չնորհակալ լինէր զինէնջ բազում գոհութեամբ...։ (վերնագիր՝ Գերյարգելի Աբրահամ Տէառն Տէառն Յակոբեանոյ բարեւսիրակամ՝ խոնարհական համբուրիւր աչոյն՝ ողջոյն. – Ստորագր. Նուաստ ծառայ Հ. Սու-քիաս վրդպտ., Յամի տեառն 1770 ի հոկտ. 20 ի Բանգալա. ի կալկաթա)։

ՈՂԱ.

Զգիսաւոր աստղն՝ ըստ որպիսութեանն զոր գրես, տեսաք աստ և մեք, որ և սակաւ աւուրս տեսեալ, այլ ոչ ևս երևեցաւ։... Գրքատուն մեր ըստ ամենայնի կատարեցաւ ի նոյն ամին յորում և սկսաւ։ (Մկրտչեան առ Հ. Միք. Զամչ. 1770 Նոյեմբ. 28. [Ս. Ղազար])։

ՈՂԲ.

Ի նմին տարւոջ գրատուն մեր ըստ բոլորին կատարեցաւ ի ձև և ի գոյն կարմրերանգ վայե-լուչ։... Զոր ինչ խնդրէք ի Թուղթս Հ. Սուքիասին առաքեմք ի ժամանակի իւրում. քանզի առ այժմ դժուարին է վասն չփոթման հակառակ հողմոց, որք շնչեն ընդդէմ միմեանց. քանզի հիւսիս ցրտութեամբ սառոյց և կորոյս զհարաւականսն՝ և զբազմութիւնն ակաւիցն ի հող, և զլաստիցն գումար ի ջուրս, և երթալով երթայ և սաստկանայ, և փոթորկի. իսկ հարաւ ճնշեալ մահացոյց տապովն հազարս բազումս ելլադացիս ի պեղոպոնիդա՝ յառաջին վանից մերոց գաւառի. և հազար մի՝ ի քաղաք Հ. Աբեղիքին և Հ. Գրիգորին. ուր մօտ կորեաւ ի շնչմանէ հիւսիսոյ գումարտակ լաստիցն։ Շնչեաց հիւսիս, և եհաս մինչև ի կիրճս օղակաց՝ մօտ ի չտեմարանս և ի գլուխ հա-րաւոյ։ Լսեմք և զեգիպտոս պսակաւորեալ և ընդարձակեալ։ (Մկրտչեան առ Հ. Մաևուէլ, 1770 Նոյ. 28. [Ս. Ղազար])։

ՈՂԳ.

Ցաւուրս յայսոսիկ այն վաղ ուրեմն հուչակաւոր աբբայն մովսէս, որ ի յուղղափառաց վե-րադարձաւ ի հայս, և եղև քարոզատու վարդապետ և եպիսկոպոս ի մէջ նոցա ամս իբր վեշտասան (զորմէ կարծեմ գրեալ եմ առ ձեզ յառաջ քան զ19 ամ), վասն չնչին իմն պատճառի ի պատրիարքէն ընդ նմա անցելոց (այսինքն վասն զգուշացուցանելոյ պատրիարգին զնա չդեգերիլ ի տունս ինչ անբարեհամբաւս), իբրև եմուտ ի կասկածանս, թէ գուցէ առաքեսցի յաքսորս, ուրացաւ զհաւատն և եղև մահմէտական ի նախատինս բոլոր հայոց և մանաւանդ հակառակորդաց, և կոչեցաւ չեխ Սուլէյման էֆէնտի։... ժանտամահն այսր տարւոյ եղև յոյժ սաստիկ. և մինչև ցայսօր դեռ ևս

ոչ դադարէ։ ի յարգումն քաղաք և ի մեծամեայ նահանգս նորա եղեալ է, ասեն, գեանաշարժ մեծ, և բազում չինուածք ի յարգումն և ի բոլոր բաւէն գաւառն կործանեալք են. և կարմիր վանքն իսկ գեանակուռ եղեալ է. այս էր գեանաշարժ բնական. բայց և բարոյական գեանաշարժ ազգաց ազգաց ընդ միմեանս բազմելոց բազում ինչ լեալ լսի յայնս կողմանս։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1770 Դեկտ. 15. [կ. Պոլիս])։

ՌԽԲ.

Աստ ի հռոմ յամենեցունց քարոզի թէ մոսկովքն փախստեայ եկին և քայքայմամբ նուաց հազիւ հասին ի մալթայ, և անտի ի լիվոռնոյ, ոչ միայն ի բերդից պօղազի ստամպօլուն հարեալք և թօփօտեալք, այլ և ի բիւրաւոր մանր ֆուլիպայից սրով և թֆանկով յարձակելոց ի վերայ. յորոց փախեան ասեն մոսկովքն. գոն մոսկովաց յայսոսիկ կողմանս է անսխալ... Հէնուայն նոցա գալոց է ի հռոմ, և պալատն է պատրաստական։ (Հ. Գէորգ Պաղտ. առ Հ. Մկր. Ալ. 1770 Հոկտ, դեկտ. 22. [Հռոմ])։

ՌԽԳ.

Կատարեալ որպիսութիւն այնր գեանաշարժի եղելոյ ի գաւառին Լրգրումայ՝ զորմէ գրեցի յանցեալ թղթիս, այսպէս է լեալ, զի յայնմ գեանաշարժէ պարիսպն Լրգրումայ քաղաքին փլեալ է ի բազում տեղիս. չորս կամ հինգ գիւղք բաւանու գաւառին գեանակուռ են եղեալ. և կարմիր վանքն բոլորովին կործանեալ և հաւասար գեանոյ լեալ։ Խուլէլիօղլու աբրահամ աղային ըստ խոստման իւրոյ (որպէս գրեալ եմ առ ձեզ) եւս մեզ գհարս և գմարս ոսկանայ գրոցն, զորս ըստ ժամանակին առաքեցից առ այդր։ Բայց յայսմ գիտելի է՝ Նախ այս, զի որպէս տեսի, ոչ մի տեսակ գրոց են այնոքիկ, այլ երեք և չորք, մեծք միջակք և մանունք. որոց բազումք ի հարցն ժանկուռ տեալ կան. և ոմանք ևս խանգարեալք։ Երկրորդ, եթէ ոսկանայ գրոցն խալիպներն այսինքն հալքն և մարքն ընդ նոսին իցէ, դեռ ոչ գիտեմ, զի չփորձեցի։ Եւ երրորդ կան ընդ այսոցիկ գրոց նաև բազում պատկերք չարականին ոսկանայ ի կապարի ձուլեալք (որպէս յիշեմ թէ ունիմք մեք այդր զմի հատ ի յայնց պատկերաց). և այլ բազում պատկերք կոպիտք և մարդագիրք և ծաղկագիրք և ծաղիկք և կուբղայք փորագրեալք աստ ի ստամպօլ, զորս տեսանէք ի գիրս տպագրեալս ի ստամպօլ։ (Հ. Զաքարիա Ա. առ Մելգոնեան, 1771 Յունվ. 1. [կ. Պոլիս])։

ՌԽԴ.

Պարոն յովսէփին գրեաց ինձ թուղթ ի հալպայ. յորում գրէ, թէ գիշատեալ սպանին գկաթուղիկոսն սրսոյ առաջի եղբօր իւրոյ։... Ընդ գրոյ պարոն յովսէփին գրեաց առ իս և պարոն յակոբն աներ պարոն յովհաննիսին՝ գիր մի, յորում գրէ, թէ սեբաստիացն տիրեցին հալպու. և զոր ինչ միանգամ կամին՝ առնեն աներկիւղ ամենեսին. և խռովեալ են զքաղաքն ողջոյն զցանկալին հալէպ, մինչև ոչ լինել ումեք հնար չրջիլ համարձակ ի փողոցս։ (Հ. Միք. Ջամչ. առ Հ. Մանուէլ և Հ. Սուքիաս, 1771 Յունվ. 7. ի Պասրայ)։

ՌԽԵ.

Սեբաստիացն հալպու բազում չարիս գործեալ էին ի հալէպ, և այնչափ զօրացեալ մինչև ոչ ումեք քրիստոնէի հնար լինել երևել ի փողոցի. իսկ այժմ եկեալ փաշայ մի՝ զհարիւրս ի նոցանէ հալեալ է ի ցից. և զայլ բազումս յայլ մահուամբ կորուսեալ. որով և խաղաղացեալ է քաղաքն. և սոքին բարձեալ է. և այս պատմեցաւ ի նոցանէ, որք ի կատարել այսր ամենայնի էին ի հալէպ։ (Հ. Միք. Ջամչ. առ Հ. Մանուէլ և Հ. Սուքիաս, 1771 Յունվ. 27. ի Պասրայ)։

ւղղ.

ի դեկտեմբերիս և յառաջ, այնքան չեր էր օդն, մինչ զի ի յունվարի մէկն բերի ի չէնկէլ գեղէն զմի խնձոր նորոգ հասեալ, և երկու սալոր կարմրացեալ։ Խնձորն էր ըստ չափու մեծ ընկզոյ։ Ահա այսքան չեր էր եղանակն. իսկ չէնկէլ գեղն է յանդիման քուռու չէշմէին ի մասին անատո-լու, ուր հարցաք զպարտիզպանսն. և ասացին թէ մինչև ցայսօր չիք մեր տեսեալ այսպէս։... Թագաւորն մեր սուլթան մուստաֆան ունի զերկուս եղբարս, այսինքն սուլթան պայազիտ և սուլ-թան օհրան։ Արդ ի յունվարի 24 ել. սուլթան պայազիտն մեռաւ...։ Ի յունվ. ի 5 կիր. ի հետևեալ գիշերի եղև հրկէզ ի էնիքեօյ. և այրեցաւ ի քեօյպաշիէն մինչև մեծ տանն աբիկենց. և այրեցան բազում տունք և եկեղեցիք. բնաւք յունաց։... (Հ. ցակ. Ջամչ. առ Մելգոնեան, 1771 յունվ. 30. Վայտարիա)։

մղր.

Մտեալ ի նաուն ի 1770 ի յուլիսի 28, յաջողութեամբ տեառն հասի ողջամբ ի կալկաթա ի սեպտեմբ. 5, գերծեալ ի բազում վտանգաց ծովուն և գետոյն Գանգէսի։ Ի գալն իմ ի բազում թշուառութեան տեսի զերկիրն բանգալու ողջոյն, նախ՝ վասն սաստկութեան սովուն եղելոյ առ երաշտութեան որ տևէր տակաւին մինչև ի գալուստ իմ. յորմէ մեռան հոգիք ըստ ումանց՝ քսան միլիոն [?] և ըստ ումանց՝ երեսուն [?][1], և դիակունք մեռելոցն անկեալ դնէին յամենայն փողոցս քաղաքիս կալկաթու հանապազ և մինչև ցարդ երևին տակաւին։ Երկրորդ՝ վասն պէսպէս հիւան-դութեան և մահուան երևելեաց բազմաց իսկ։ Երրորդ՝ յաղագս գլխովին պակասութեան տուրևա-ռութեան վաճառականաց, վասն բռնացեալ տէրութեան անգղիացւոց, որք նուաճեալ ունին ընդ իշխանութեամբ զերկիրն բանգալու ողջոյն և զայլ երևելի կողմանս աշխարհին հնդկաց և զշահն խնգեանք տանին։... Վասն երկրիս և մանաւանդ վասն քաղաքիս կալկաթու ծանիք համառօտիւ, զի առաւել քան զսոդոմ և զգոմոր է։... Օդ երկրիս վատ է յոյժ և մանաւանդ քաղաքիս կալկա-թու. յորս յաճախեալ են պէսպէս ախտք ցաւոց. յորոց գլխաւորք են ախտն ծիւրական և ուռոյցք ևն. յորոց բազումք մեռանին։ (Հ. Աւրքիաս առ Մելգոնեան, 1771 փետր. 20 և 26 ի Բանգալա, ի կալկաթա)։

յ.

Լէհու երկրէն եկան մին քէնի հայ վաճառական որ մինն կոչի պեռնարտ պոկտանովիչ որ զսա կայսրն կոչեցեալ կայսերական խարչով որ ձիւեան քէր կայսրին առմատային խիստ ունէոր մարդ է և խիստ հարկիք ունի կայսրին քոլը է թագուհուն քոլը մեծ համարձակութիւն ունի բո-վանդակ քօլէէն և մեծամեծաց քոլը և մին ոսկի մէտալ կախեց վիզին կայսրն և տվաւ նօպիլ-թութիւն զսա խիստ բարի և հեզ անց է և դատի որ մեր ազգին համար խնդրվացք անէ կայսրէն և թագուհէն, իրաւի լաւ գործօն էր որ լինէր հարկաւոր մին քահանու ի պէտ որ ֆանտամէնդով բան մի կլար ազգին մերոյ և այսմ ժամանակիս պատրաստվէր օթէվան հայոց ազգին զի որքան զզվացէն տանկի երկրէ տակաւ ժամանակիս բազմութիւն լինէր և երէվեր ասէն հայոց ի մէջ աւս-տրիայու բայց և վարդապետք և եկեղեցականքն լինէր ի ձեր վանքէն։ (Անտոն Շէնիբիդուվեն առ Մելգոնեան, 1771 փետր. 20. վիեննա)։

---

1. Ուրիշ քուղթի մը մէջ հերքուած ու սրբագրուած են այս թիւերը։

ՃԽԱ.

Ի փետրվարի 18, ի գիշերին՝ յորում լուսանայր օրն երկշաբաթի յետ բախտախոռանին եղև եանղրն մեծ ի խալաթիայ, որով յանիւն դարձաւ բոլոր խալաթիայ։ Ակսաւ եանղրնն ի կրպակէ դաֆէսճի տաճկի միոյ՝ որ էր ի յարբունի ճանապարհն թօփխանային... և զի յոյժ սաստիկ էր ձիւնախառն հողմն հիւսիսոյ՝ որ յայնժամ շնչէր, վասն այն անկարելի եղև շինուցանել զերդևէն, որ ոչ միայն յաչ և յահեակ, այլ և յեակոյս և յառաջ կոյս ընթացեալ զազանաբար կիզոյր և լափէր զշինուածն զամենայն մինչև ի խարաքեօյն, ի յանորք խափուն և մինչև մերձ դուլէխափուին։ Այրեցաւ լուսաւորչի ժամն՝ միասով միայն միջին ժամն որ էր քեաւկիր պինայ, քէմէրալթին, դուլէխափուսին և ամենայն տափարակն խալաթիայու։ Այրեցան և ամենայն եալը անկն խալաթիայու սկսեալ ի կրպակաց խազախորդացն քիրէճդարուին մինչև ի դուրշունլու մաղազան ներփակաբար... միայն միայն... քանի մի տունք ի փարմախլափուն...։ Քանի մի տունք և կրպակք տաճկաց ի դուռն թօփխանային։ Եւ քանի մի տունք հայոց և տաճկաց ի դուլէդափուն... վերջապէս ի բոլոր դալաթիայ ապրեցան ի հրդեհէ միայն տունք իրր քառասունք, և այլն ամենայն այրեցաւ։ Եւ ով կարէ գրով արձանագրացանել զազէտ ժողովրդոց... և զխղճութիւն ազգասաց և զկորուստ ոչ միայն տանց, այլ և ընչից նոցա, և գմնառանիլ անձանց ոչ սակաւուց։... Այո ի սառաֆոլլու սէրգիս վարդապետէն զայն չորս զրուչն, զոր դուք այդր տուեալ էիք աշակերտին նորա գաղատացի պետրոս վարդապետին...։ Ընդ ամենն որպէս ասի, այրեցան ի խալաթիայ տունք աւելի քան զհազարս. և անուրք՝ աւելի քան զերիս հազարս, զի գրեթէ յամենայն տունս կային ի վարձու անուրք երկուք և երեք։ (Հ. Ջաք. Ակնբ. առ Մելգոնեան, 1771 Մարտի 1. [կ. Պոլիս])։

ՃԲ.

Եղև յաւուրս յայսոսիկ հրդեհ մեծ և սարսափելի ի խալաթիայ, որով յանիւն դարձաւ բովանդակ խալաթիայ և ամենայն եալը տունք նորա. սկսեալ ի թօփխանի դրանէն մինչև ի խարայ քեօյն և մինչև ի խուլէդափուն. այրեցաւ և լուսաւորչի ժամն հայոց և եկեղեցիքն հոռոմոց։ (Հ. Ջաք. Ակ. առ Հ. Միք. Ջամչ., 1771 մարտի 1. [կ. Պոլիս])։

ՃԳ.

Ի մայիսի 1 եղև եանղրն մեծ ի ստամպոլ ի պախչայ խափուն սկսեալ ի դրանէ նոյն պախչայ խափուին մինչև ցպարիսպն արքունի պալատին՝ քերելով զպալատուն վէզիրին. և այրեցան անբաւ տունք տաճկաց և մեծամեծ խօնախք իրիճալից նոցա. և վայրն որ այրեցաւ, էր իբրու կրկնապատիկն խալաթիոյ։ Ընդ նոսին նաև եալը քեօշկին և սէֆէթճիլէր քեօշկին թագաւորին, որք էին արտաքոյ պարսպի քաղաքին։... Ի սմին [մայիս] ամսոջ եղև եանղրն մեծ նաև ի պուռսա քաղաքն օսմանցոց. և լուաք թէ այրեցաւ գրեթէ կէսն քաղաքին, և չարսըն նորա բովանդակ. զորմէ ասեն գոլ պատուական քան զչարսըն ստամպօլու։ (Հ. Ջաք. Ակ. առ Մելգոնեան, 1771 մայիս 30. [կ. Պոլիս])։

ՃԴ.

Ջուրն տիգրիզ գետոյն առաւել ևս յորդեցաւ ըստ ասելոյ ոմանց, մինչև զօրինակ իմն ովկիանոսի ձևացուցանել յանապատն պասրայու դէպ ի պաղտատ։ Եւ յայսմանէ սակաւիկ մի գիշեր օր քաղաքիս, ի յանախութիւն հիւանդութեան։ Ասեն թէ ի տիարպէքիր կատաղեալ է մահտաւժամն մինչ գրեթէ ամենայն բնակչաց ևս փախչիլ ի տեղւոջէն։ Ցորոց և բազումք լաստիւք

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅՈՒՇԱՐԱՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԷՋՄԻԱԾԻՆ